ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԴԱՒՐԻԺԵՑՒՈՅ

ՍԱԿՍ ԴԻՊՈՒԱԾՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ԳԱՒԱՌԻՆ ԱՐԱՐԱՏԱՅ ԵՒ ՄԱՍԻՆ ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ

ՍԿՍԵԱԼ Ի ՌԽԱ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՄԻՆՉ Ի ՌՃԺԱ Թ.

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

1896-ՌՅԽԵ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԴԱՒՐԻԺԵՑՒՈՅ

ՍԱԿՍ ԴԻՊՈՒԱԾՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ԳԱՒԱՌԻՆ ԱՐԱՐԱՏԱՅ ԵՒ ՄԱՍԻՆ ԳՈՂԹԱՆ ԳԱՒԱՌԻ

ՍԿՍԵԱԼ Ի ՌԾԱ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՄԻՆՉ Ի ՌՃԺԱ Թ.

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

1896—ՌՅԽԵ

A π/32981

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

I· ՅԱՌԱՋԱԲԱՆ — *Հեղինակի կենսագրութիւնը, գրած պատմութիւնը, պատմութիւնը գրելու դրդող պատճառները, պատմութեան ոճը, պատմութեան մէջ յիշատակուած Թանկագին քարերի մասին. Ա. և Բ. ձեռագիր օրինակների մասին. երկու ձեռագիրների համեմատութիւնը և համեմատութիւնից հանած եզրակացութիւնը, Ա. ձեռագրի մէջ եղած յաւելուածները և պատմութեան հրատարակութեանց մասին.* . . . . . . Ա

2· ՑԱՆԿ ԳԼԽՈՑ . . . . ԺԱ

3· ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ 3

4· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ 5

5· ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱԹԱՆԱՍ ԴՊՐԻ 672

6· ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՒԵՏԻՔ ԵՐԷՑԻ 673

7· ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ 675

8· ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ՁԵՌԱԳԻՐ ԵՒ ՏՊԱԳԻՐ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ· 695

9· ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂՂԵԼԻՔ . . . . —

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաքեալ[1] վարդապետի պատմութեան երկրորդ տպագրութիւնը, որ 1884 թ-ին լոյս է տեսել Մայր Աթոռիս տպարանում ամենակարճ ժամանակամիջոցում տարածուելով, սպառուել էր. կարիք էր ըզգացուում այդ հետաքրքիր եւ դիւրաւ հասկանալի պատմութեան երրորդ տպագրութեան, ուստի եւ անցեալ 1895 թ.-ի վերջում, հրամանաւ ազգիս Վեհափառ Հայրապետի, այն ժամանակուայ տպարանական վարչութիւնը ձեռնարկեց 1884 թ.-ի տպած օրինակից արտատպել այն անփոփոխ: Տպագրութեան երկու երրորդ մասն արդէն պատրաստ էր, երբ վարչութիւնը փոխուեցաւ եւ որովհետեւ գրքի երկու երրորդ մասի տպագրութիւնից յետոյ չէր կարելի անել այն, ինչ որ հարկաւոր էր մի լիակատար հրատարակութեան համար, մենք կարեւոր համարեցինք այս համառօտ յառաջաբանով, յատուկ անուանց ցանկով եւ գլխաւոր ձեռագրի ակնյայտնի տարբեր ընթերցուածների ցուցակով գոնէ փոքր ինչ դիւրութիւն տալ ընթերցողներին:

Առաքեալ վարդապետն ապրում էր տասն եւ վեցերորդ դարու վերջերում[2]: Նորա ծննդեան տարին յայտնի չէ ոչ իւր պատմութիւնից եւ ոչ ժամանակակից պատմագիրներից. սակայն իւր գրած յիշատակարանից երեւում է, որ նա պատմութիւնը գրելիս եղել է «ողորմելի ծեր հասակով», «ցաւագար մարմնով», «տկարացած» եւ սպասելիս մահուան հրաւէրին: «Այլ դիպեցաւ

---

1. Հեղինակն իւր պատմութեան մէջ կոչում է իրեն Առաքեալ (էջ 440, Գլ. ԼԲ.). Աթանաս դպրի և Աւետիք երէցի ձեռագրերի յիշատակարանումն յիշուած է նոյնպէս Առաքեալ:

2. Առաքեալ պատմագրի մասին կարեւոր տեղեկութիւնները քաղեցինք նորա ընդարձակ յիշատակարնից, որ տպուած է գրքիս վերջում (էջ 666—671):

պատահիլ ինձ այս գործ ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի, նաեւ յոյժ ցաւագար մարմնով, եւ ի լուսոյ աչքս պակասեալ եւ ի ակնտութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպէս եւ յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ եւ մահու հրաւէրք անձնեքեան հանդէպ աչացս եկեալ կացեալ եւ սպառնալիք զհետենին եւ քան զեւս ի վերայ իմ յաճախեալ»։

Նա պատմութիւնը վերջացրել է հայոց ՌՃԺԱ թ.-ին (փրկչ.1662 թ.), երբ արդէն «ողորմելի ծեր» էր. այդ հիման վրայ եթէ ընդունելու լինինք նրա զառամեալ ծերունի հասակն ամենապակասն 60—70 տարեկան, ուրեմն պէտք է նա ծնուած լինի տասն եւ վեցերորդ դարի վերջերում։

Մահուան տարին յայտնի է պատմագրի տապանաքարից, որ գտնւում է Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը՝ Եփրեմ կաթուղիկոսի գերեզմանից քիչ հեռու հարաւարեւելեան կողմում։ Տապանաքարի արեւմտեան ճակատի վրայ երկաթագիր տառերով փորագրուած է. «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետին ՌՃԺԹ թուին[1]». ուրեմն նա մեռել է փրկչ. 1670 թ.-ին։

Նա ծնուել է Ատրպատականի Թաւրէզ քաղաքում, որի համար կոչւում է Թաւրիզեցի կամ Դաւրիժեցի. բայց սնուել, մեծացել եւ սովորել է ս. Էջմիածնում առ ոտս Փիլիպպոս կաթուղիկոսի, եղել է ս. Էջմիածնի միաբան, ծերութեան օրերն անց է կացրել Մայր Աթոռում եւ թաղուել է միաբանից շարքում. «Իսկ նուաստս եւ տրուպս յամենեսին Առաքեալ կոչմամբս՝ սպասաւոր Բանի, գոլով իմ տեղեաւ ի քաղաքէն Թաւրիզու, եւ յաշակերտութենէ սոյն Տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, եւ ի միաբանութենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ Էջմիածնի, որ եւ աստէն իսկ սնեալ եւ վարժեալ եւ յաւուրս ծերութեան ժա-

---

1. 1884 թ. հրատարակութեան զեկուցման մէջ սխալմամբ մահուան տարին նշանակուած է ՌՃԺԸ թ.։ Անձամբ ստուգելով տապանաքարի վրայ մահուան տարին նշանակուած գտանք ՌՃԺԹ թ.։

մնմնեալ՝ նաեւ ակն ունիմ զի ընդ հովանեաւ սորին ամփոփիլ ի հող, զի թերեւս որ ի սմա խորհրդակատարութեանցն լինիմ հաղորդեալ»:

Իւր պատմութեան Լ-երորդ գլխից իմանում ենք, որ ինքն Փիլիպպոս կաթողիկոսի ձեռնասուն աշակերտն է եղել եւ նորա հրամանով իբրեւ ս. Էջմիածնի նուիրակ գնացել է «Յունաց աշխարհը», շրջել է արեւելքի եւ արեւմուտքի զանազան քաղաքներում եւ գիւղերում. օր. Ամասիայում, Սեբաստիայում, Ուրհայում, Ապահանում (էջ 414): Իբրեւ իւր ժամանակի նշանաւոր, աշխատասէր եւ հայոց պատմագիրներին տեղեակ անձնաւորութեան՝[1] Փիլիպպոս կաթողիկոսը յորդորեց նորան այնուհետեւ գրել ժամանակակից կարեւոր դէպքերն ապագայ սերնդի համար:

Առաքել վարդապետը գրում է վաթսուն տարուայ պատմութիւն, սկսած հայոց ՌԾԱ թ.—ՌՃԺԱ թ.[2] (փրկ. 1602—1662 թ.) պատմելով մանրամասն իւր ժամանակ Շահաբաս թագաւորի եւ այլ պարսիկ խաների ձեռքով Հայաստանում կատարուած աղէտալի դէպքերը, քրիստոնեաների գերուիլը, եկեղեցական կարգերի նուազիլն եւ պակասիլն, ս. Էջմիածնի անշքանալն եւ աւերուիլն եւ ժամանակակից կաթողիկոսների վիճակը, մեծ մասամբ իբրեւ ականատես եւ կամ անմիջապէս ականատեսներից քաղելով տեղեկութիւններ իւր երկար ճանապարհորդութեան ժամանակ: Նա աշխատել է կարողացածի չափ իւր պատմութիւնը լիակատար եւ ճիշդ կերպով գրել առանց մի որեւէ բան խնայելու. «Յուսով յանձն առի զայսպիսի յոքնաշխատ եւ բազմերկ եւ զտաժանելի գործս եւ աւուրս յոլովս

---

1. Այս մասին Զաքարիա սարկաւագն իւր պատմագրութեան Գ-րորդ հատորի Գ-րդ գլխում յիշատակում է հետեւեալը. «Թաւրիզեցի Առաքել վարդապետն, որ տեղեակ էր ամենայն պատմագրաց, որ և արար զպատմութիւն աւերման աշխարհիս Արարատեան ի մեծ Շահաբասէն»։

2. Սխալմամբ Ոսկանի և 1884 թ. հրատարակութիւնների վրայ տպուած է ՌԾԴ—ՌՃԺԲ. պէտք է լինէր ՌԾԱ—ՌՃԺԱ թ. որովհետև իւր պատմութիւնը վերջացրել է Հայոց ՌՃԺԱ թ. (= 1111 թ.) տալով վաթսուն տարուայ պատմութիւն, եթէ հանելու լինինք 1111-ից 60=1051 (ՌԾԱ).

ի սմին դեգերելով եւ ի յոլով երկիրս եւ յաշխարհս շրջագայելով ի խնդիր գրուցաց պատմութեան»:

Ժամանակի նկատմամբ աշխատել է ճշգրտապատում լինել եւ կարեաց չափ ճիշդ որոշել պատմած դէպքերի թուականները[1]: Չնայած իւր ըզգոյշ բնաւորութեան, այնու ամենայնիւ կասկածելով, որ կարող է իւր պատմութեան մէջ թերութիւններ ունենալ, նա ներումն է խնդրում ընթերցողներից, «Իսկ թերին եւ թիւրն եւ այլ սոյնպիսիքն յիմրս տգիտութենէ եւ ի տկարութենէ, վասն որոյ աղաչանօք խնդրեմ ի ձէնջ ներումն»:

Դաւրիժեցին վաթսուն տարուայ պատմութիւնը գրում է ինն տարուայ մէջ մեծ նեղութեամբ, սկսելով հայոց ՌՃ թուականից: Չորս տարուայ ընթացքում՝ մինչեւ հայոց ՌՃԴ թ. (Փրկ. 1655 թ), գրում է միայն մի մասը: Այդ միջոցներում, երբ Փիլիպպոս կաթուղիկոսը վախճանում է, թողնում է իւր յոգնաջան աշխատանքը, «Տեսանելով զյոքնակի վտանգն եւ զմտատանջ երկն աշխատանաց»: Երկու տարով ընդհատած գործը շարունակում է հայոց ՌՃԷ թ. (Փրկչ. 1658) Փիլիպպոս կաթուղիկոսին յաջորդող Ջուղայեցի Յակոբ Դ. կաթուղիկոսի յորդորմամբ եւ աւարտում է ՌՃԺԱ թ.-ին (Փրկչ. 1662) ս. Էջմիածնում:

Որպէս զի իմանանք թէ ինչ պատճառներից դրդուած գրեց իւր պատմութիւնը, մէջ բերենք պատմագրի խօսքերը.

Ա. «Զի ոչ կարացի զերծանիլ ի հրամանէ հայրապետին (Փիլիպպոս կաթ.), թէպէտ եւ բազում միջնորդօք յայտարարեալ խոստովանեցայ զիմն տկարութիւնն, ոչ զոլ բաւական սյսմ իրագործութեանս:

Բ. «Ի հարկելոյ մեծահոգ եւ երկայնամիտ հայրապետիս Տեառն Յակոբայ կաթուղիկոսի ...:

Գ. «Ինձէն իսկ տեսանելով զաւերս հայաստան աշխարհին, եւ զնուազիլն մերոյս ազգին. եւ զչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր

---

1. «Զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեանն և զթուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց թուականի պատմեցաք»: Նախադ. Հեղ. էջ 3.

սիրտ իմ՝, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին:

Դ· «Զի հայելով ի յոլովութիւն յանցանաց ···· իբրեւ զլուսոյ այրւոյն արկի ի զանձանակն Տեառն, Թերեւս սովաւ զտայց ներումն աններելեաց իմոցս պարտեաց»:

Առաքեալ վարդապետի ոճը շատ պարզ եւ դիւրըմբռնելի է· պատմութեան մէջ պատահում ենք ժողովրդական դարձուածքների եւ բառերի· շատ բառեր եւ գրուած են ժողովրդի արտասանութեան համեմատ: Իսկ Թանկագին քարերի մասին եղած պատմութիւնը, ինչպէս կը նկատի ընթերցողը, բոլորովին ռամկական ոճով է գրուած: Իւր պատմութեան 595*-երորդ էջում նա պատմում է, որ իւր գրածն չէ այդ, այլ Երուսաղէմ գնալիս Հալէպում պատահել է մի ակնագործ եւ միեւնոյն ժամանակ ակնավաճառ հայ քահանայի, տեղեակ Արաբացոց, Օսմանցոց, Փռանկաց, Հոռոմի եւ Ջհտի լեզուներին, եւ այդ քահանան հարուստ տեղեկութիւններ է տուել նորան Թանկագին քարերի տեսակների եւ նոցա նշանակութեանց մասին* [1]*: Առաքեալ վարդապետը խնդրում է քահանային, որ Թանկագին քարերի մասին ունեցած տեղեկութիւնները գրի եւ տայ իրեն. քահանան կատարում է նորա խնդիրը եւ նա էլ ըստանալով քահանայից՝ կցում է իւր պատմութեան. իսկ մի մասն առաջուց ունենում է իւր մօտ:*

Այժմ դառնանք Առաքեալ վարդապետի պատմութեան ձեռագիր օրինակներին: Մայր Աթոռի մատենադարանում կայ միայն երկու օրինակ նոցանից, որ եւ նշանակում ենք Ա եւ B գլխատառերով:

Ա· Ձեռագիրն է Թիւ 1714 *(ըստ Կարինեանցի ցուցակի* 1672*), նիւթը հասարակ Թղթից, ունի տախտակեայ կազմ՝ դրսից պատած ծաղկադրօշմ կաշով, ներսից ներկած կտաւ, լաւ պահպանուած է· սկզբից եւ վերջից ունի եր-*

1· Հանգուցեալ Քերովբէ Պատկանեանը Կայսերական գիտութեանց Ճեմարանի յանձնարարութեամբ Պետերբուրգում 1873 Թ·ին Թարգմանաբար հրատարակել է ռուսերէն Առաքեալ վարդապետի յիշատակած Թանկագին քարերի վերաբերեալ տեղեկութիւնները· „Драгоцѣнные камни, ихъ названія и свойствія по понятіямъ армянъ въ XVll вѣкѣ. Пет. 1873“.

կու երկու մագաղաթեայ պահպանակներ․ որի վրայ երկաթագիր գրերով գրուած կայ Սաղմ․ Դաւթի ԺԸ գլխի 6—11 տների մեկնութիւնը, կարող է լինել 12 կամ 13-րդ դարու գործ․ ունի 451 թերթ․ դատարկ թուղթ յիշատակարանից յետոյ 14, իսկ առաջ 2․ սկզբում էլ 2․ տողերի թիւն 23․ բոլորագիր, մեծութիւնը 20×15 սանտիմ․ գրութիւնը միասին 13,5×9 սանտ․ սկզբնատառերը երկաթագիր եւ կարմիր թանաքով․ չունի լուսանցքազարդեր, միայն սկզբում կայ մի պարզ խորան, որից յետոյ անմիջապէս սկսւում է պատմութիւնը․ գրիչն է Աթանաս դպիրը, որի գրած յիշատակարանը կայ հեղինակի յիշատակարանից յետոյ[1]․ գրուած է Հայոց ՌՃԺԲ թ․-ին (Փրկչ․ 1663) Արարատեան երկրի Նարըի «գիւղաքաղաքում»:

Բ․ Ձեռագիրն է թիւ 1713 (ըստ Կարինեանցի ցուցակի 1671), թուղթը լաւ տեսակից, ունի տախտակեայ կազմ․ դրսից պատած է ծաղկաղրօշմ կաշով, իսկ ներսից կտաւով․ սկզբից եւ վերջից ունի երկու երկու մագաղաթեայ պահպանակներ, վրան երկաթագիր գրերով Ղուկ․ Աւետարանի Թ․ գլխից հատուածներ․ պարունակում է 417 թերթ, դատարկ թուղթ սկզբից եւ վերջից 3․ տողերի թիւն 23, գիրը նօտր, մեծութիւնը 21,6×15 սանտ․ գրութիւնը միասին 14×8 սանտ․ սկզբնատառերը երկաթագիր՝ գրուած կարմիր թանաքով, լուսանցքազարդեր նոյնպէս չունի, միայն սկզբում Ա․ ձեռագրի նման ունի կարմիր թանաքով գծուած պարզ խորան: Ինչպէս Ա․ ձեռագրում այնպէս եւ այստեղ խորանից անմիջապէս յետոյ գրուած կայ․ «Պատմութիւնք ժամանակաց՝ հաւաքեալ ումեմն Առաքեալ անուամբ վարդապետի, որում Տէր ողորմեսցի»: Վերջում հեղինակի յիշատակարանից յետոյ կայ ընդօրինակողի յիշատակարանը, որից իմանում ենք որ ձեռագիրն ընդօրինակուած է Աւետիք անունով մի երէցի ձեռքով Երեւանում «ի դուռն սրբոյ Սկեղեցւոյս, որ կոչի կաթուղիկէ» Հայոց ՌՃԺԵ թ․ (=Փրկչ․ 1666 թ․):

Ա եւ Բ ձեռագիրների մէջ կան մի քանի տար-

---

[1] Էջ 672․

քերումթիւններ[1]. երկու ձեռագիրների մէջ տեսնում ենք նոյնանման, բայց բնագրի գծից տարբեր գրչով ուղղուած բառեր, լուսանցքներում աւելացրած նախադասութիւններ: Այդ նախադասութիւնները համեմատելով՝ տեսնում ենք, որ Ա. ձեռագրի լուսանցքում աւելացրած բառերը կամ նախադասութիւնները չեն կրկնւում Բ.ի լուսանցքներում եւս, այլ մտած են բնագրի մէջ, բայց եւ Բ.-ի լուսանցքներումն աւելացրածները մտած են Ա.-ի մէջ. ուստի չենք կարող ասել թէ Բ. ձեռագիրն ընդօրինակուած է Ա—ից, մանաւանդ որ ձեռագիրը գրողի յիշատակարանից երեւում է, որ երկուսն էլ առանձին ընդօրինակուած են մայր ձեռագրից. միայն այս յաւելումների համեմատութիւնը տեղիք է տալիս կարծելու, որ խնամքով սրբագրուած են այդ ընդօրինակութիւնները, իսկ որովհետեւ Առաքել վարդապետն իր պատմութեան ընդօրինակութեանց առանձին ուշադրութիւն է դարձրել, (Էջ 673 յիշ. Ա. երէցի) եւ ինքն էլ այդ ժամանակ դեռ կենդանի էր, ուստի հաւանական է, որ հէնց իրեն ձեռքով եղած լինին այդ սրբագրութիւնները:

Եթէ ընդունելու լինենք, որ այդ սրբագրութիւններն եղել են հեղինակի գրչով, պիտի ընդունենք եւ որ նոյնանման գրչով գրած, բնագրի գծից բոլորովին տարբեր, Ա. ձեռագրի ԾԵ գլխի (տպագրի մէջ ԾԶ[2]) նօտր գրով աւելացրած վերջին կտորն. «Թվին ՌՃԺԵ ի սեպտեմբեր ամսոյ վախճանեցաւ Պարսից թագաւորն երկրորդ Շահաբասն ....» մինչեւ սոյն գլխի վերջը. «գրին յամենայն տեղիս», հեղինակն իր ձեռքով է աւելացրել երեք տարուց յետոյ, որովհետեւ Ա ձեռագիրն գրուած է հայոց ՌՃԺԲ թ. իսկ այդ աւելացրած կտորը վերաբերում է հայոց ՌՃԺԵ. թ.-ին: Բ. ձեռագրում այդ կտորը նոյն նօտր գրով աւելացրած է, բայց ոչ ամբողջը, այլ մի մասը՝ մինչեւ «... անուանեմք երկրորդ Շահսէֆի»:

---

1. Այդ տարբերութիւններն նշանակուած են Առ. վարդ. պատմ. 1884 թ. հրատարակութեան լուսանցքներում. որոնք նոյնութեամբ տպուած են և սոյն հրատարակութեան լուսանցքներում.

2. Տես վրիպակների ցանկը.

Աւելի հետաքրքիր է Ա ձեռագրի ծԾ գլխից յետոյ (տպ. ծՋ [1]) աւելացրած մի գլուխ առանց գլխահամարի, որի վերնագիրն է, «Պատմութիւն անցից հրէից ազգին եւ Սապէթայ անուն ջհտին .... հետեւեցան»: Այս ամբողջ գլուխը, որ գրուած է նօտր գրով, ընագրի գրչից բոլորովին տարբեր, բայց նման երկու ձեռագիրների սրբագրութեանց եւ Ա ձեռագրի ծԾ գլխի (տպ. ծՋ) վերջը աւելացրած կտորի գրչին, կայ միայն Ա ձեռագրում, իսկ Բ ձեռագրում բոլորովին չկայ: Որ այս գլուխն աւելացրած է յետոյ, դորա համար կարող ենք բերել հետեւեալ ապացոյցները. ա) Այդ գլխում յիշատակուած պատմութիւնը վերաբերում է Փրկչական 1667 թ.-ին, այն ինչ հեղինակն իւր պատմութիւնը վերջացրել է Փրկ. 1661 թ.-ին: բ) Այդ գլուխը Ա ձեռագրի նիւթերի գլխակարգութեանց մէջ չկայ. գ) Ամբողջ գլուխը գրուած է ընագրի գրչից բոլորովին տարբեր գրչով. դ) Եթէ հեղինակի ձեռով գրուած մայր ձեռագրում լինէր այդ գլուխն, այն ժամանակ Բ. ձեռագրում անպատճառ կը լինէր արտագրուած:

Թոյլ ենք տալիս կարծելու, որ այս ամբողջ գլուխը հեղինակի ձեռքով է գրուած. ա) Որովհետեւ նոյնանման գրիչ ունի ինչ որ երկու ձեռագիրների սրբագրութեանց գրիչն. (եթէ միայն այդ սրբագրութիւններն կատարուել են հեղինակի ձեռքով). բ) Պատմուած է այն ոճով եւ ուղղագրութեամբ, ինչ որ ամբողջ պատմութիւնը. գ) Այդ թուականին—Փրկչ. 1667 թ-ին հեղինակը դեռ կենդանի էր, իսկ նորա կենդանութեան ժամանակ ուրիշ անձնաւորութիւն չէր կարող աւելացնել այդ գլուխը:

Բ. ձեռագիրը գրողի յիշատակարանից [2] իմանում ենք, որ հինգ օրինակ ընդօրինակուած է հեղինակի ձեռագիր օրինակից եւ ոչ թէ մէկը միւսից. իսկ թէ յետոյ էլի ընդօրինակութիւններ են եղել հեղինակի ձեռագիր օրինակից կամ մէկը միւսից, այդ մեզ յայտնի չէ: Հինգ օրինակներից մեզ յայտնի են միայն վերեւ յիշատակուած Ա եւ Բ ձեռագիրները. իսկ թէ որտեղ է մայր ձեռագիրը եւ միւս ընդօրինակու-

---

1. Էջ 651.
2. Էջ 673.

թիւնները՝ անյայտ է առ այժմ: Եթէ ստոյգ լինի, որ վերեւ յիշատակուած գլուխն աւելացրած է հեղինակի ձեռքով, այն ժամանակ գոնէ հեղինակի ձեռքով գրուած մի ամբողջ գլուխ կունենանք, որը թանկագին կը լինի մատենագրական տեսակէտից:

Ոսկանի հրատարակութեան մէջ չկան վերեւ յիշատակած յաւելուածները. ինչպէս երեւում է այդ յաւելուածները չեն եղել այն ձեռագրում, որից Ոսկան վարդապետն արել է իւր հրատարակութիւնը:

Համեմատելով Ա եւ Բ ձեռագիր օրինակները, գալիս ենք այն եզրակացութեան, որ իւրաքանչիւրն առանձին վերցրած՝ ունի իւր արժէքն ու նշանակութիւնը, որովհետեւ մէկը միւսից չէ ընդօրինակուած, այլ առանձին առանձին ընդօրինակուած է մեզ անյայտ մայր ձեռագրից. ոչ մի բան չէ աղաւաղուած ուրիշի ձեռքով, այլ ինչպէս հաւանականօրէն ասացինք, սրբագրուած են եւ պակաս բառեր կամ տողեր լրացրած հեղինակի ձեռքով. բայց Ա ձեռագիրը երեք տարով առաջ է գրուած Բ. ձեռագրից, դորա համար եւ 1884 թ. հրատարակութիւնը արել են այդ օրինակից:

Մի քանի խօսք եւս Առաքեալ վարդապետի պատմութեան հրատարակութեանց մասին:

Առաքեալ վարդապետի պատմութեան առաջին տպագրութիւնն եղել է Ամստերդամում՝ «տպարանում սրբոյն Էջմիածնի եւ սրբոյն Սարգսի զօրավարի». փրկչական 1669[1] թ. յունվարի 1-ին. «Սրբագրութեամբ եւ ընչիւք Ոսկանի վարդապետի Երեւանեցւյ»[2]: Ոսկանի հրատարակութիւնը եւ մեր ձեռքը եղած երկու ձեռագիր օրինակների տարբերութիւնը նկատուած է 1884 թ. հրատ. լուսանցքներում. այդ տարբերութիւններից երեւում է, որ Ոսկան վարդապետն իւր ձեռքի տակ ունեցել է կամ մի այլ ձեռագիր օրինակ եւ կամ «սրբագրեալ ուղղեաց ըստ քերականութեան

---

1. Մահուան տարին եղել է 1670 թ. ուրեմն կարող է տեսած լինել այդ հրատարակութիւնը.

2. Տես Ոսկանի հրատարակութեան վերջում եղած յիշատակարանը.

արհեստի՝ զաղաւաղեալն ի գրչաց անհմուտաց եւ անոպայից արանց բանաստեղծից»[1]:

1874 Թ. Բրոսսէ գիտնականը Պետերբուրգում հրատարակել է իւր թարգմանութեամբ ֆրանսերէն լեզուով Առաքեալ վարդ. ի Պատմութիւնը. «Livre d'Histoires, composé par le vartabied Arakıel de Tauris.» Ուղիղ տասը տարուց յետոյ—1884 Թ.-ին Վաղարշապատում լոյս է տեսել Առաքեալ վարդապետի պատմութեան Բ. հրատարակութիւնը Մայր Աթոռիս մատենադարանի Ա. ձեռագիր օրինակից (գրիչ Աթանաս դպրի), համեմատութեամբ Բ. ձեռագրի եւ Ոսկան վարդապետի հրատարակութեան: Այս հրատարակութեան ժամանակ հրատարակիչը ձեռագրի քերականական ձեւերը եւ ոճերը փոփոխել է ըստ իւր հասկացողութեան. այդ պատճառով Ա. ձեռագիրը նոյնութեամբ ընծայելու, այսինքն քերականական ձեւերը, դարձուածքները եւ բառերը վերականգնած լինելու համար համեմատեցինք ամբողջ ձեռագիրն այս Գ. հրատարակութեան հետ եւ այդ տարբերութիւնները մանրամասն նշանակեցինք գրքիս վերջում:

Ղ. սարկաւագ

20-ն Օգոստոսի, 1896
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

---

1. Տես Ոսկանի հրատ. վերջում տպած Ոսկանի կենսագրութիւնը, էջ 637.

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Գլուխ — Երես

Ա. Յաղագս տառապանաց՝ զոր ունէին կաթուղիկոսքն ի հարկապահանջութենէ բռնաւորաց . . 5

Բ. Յաղագս գալստեան Սրապիոն վարդապետին ի ս. Աթոռն Էջմիածին և լինելոյ կաթուղիկոս . . 8

Գ. Յաղագս գալստեան Շահաբասայ թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց, և ունելոյ զամենայն, և վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր 14

Դ. Յաղագս առաջին գալոյ Ջղալօղլոյն, յորոյ պատճառէ քշեաց շահն բոլորովին բովանդակ զերկիրն Արարատու, և զնորին մերձակայ սահմանակից երկիրն ընդ նմին 37

Ե. Յաղագս քշելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայոյ յերկիրն Պարսից 57

Զ. Վասն երկրորդ անգամ գալոյն Ջղալօղլի Սարդարին, և պարտեալ լինելոյն և դառնալոյն . . 71

Է. Յաղագս յայտնելոյ Ջալալոյն և սաստիկ սովուն և մարդակեր գայլոցն, և այլ ևս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի . . 79

Ը. Յաղագս առման քաղաքացն Գանջայու և Շամախւոյ 93

Թ. Թէ որպիսի պատճառանօք կոչեաց Շահաբաս զթագաւորն Վրաց առ ինքն, և հնարիւք դաւեաց զնոսա 98

Ժ. Միւս ևս պատմութիւն դաւաճանութեան Շահաբասին, զոր միւսանգամ արար ընդ թագաւորին Վրաց 102

ԺԱ. Պատմութիւն և պատճառ աւերման աշխարհին Վրաց, և մահուան Լուարսափ թագաւորին նոցա, որ եղև ձեռամբ առաջին Շահաբասին . . . 106

ԺԲ. Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազի թագաւորին Կախէթու ի նոյն Շահաբասէն . . 143

ԺԳ. Պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս թագաւորէն . . . 147

Գլուխ — Երես

ԺԴ. Միւս ևս պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայոց յառաջին Հաճարաս Թագաւորէն

ԺԵ. Վասն էր ոչ գոյ ոչխարաց Քողաւ յաշխարհին, որ Արաղստան կոչի 171

ԺԶ. Պատմութիւն վասն Նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, թէ որպէս գտեալ և հանեալ եղև նա ի Փռանկաց, և թէ որպէս տարեալ եղև յԱսպահան քաղաք 178

ԺԷ. Թէ որպէս կամ յինչ պատճառէ տարան յԱսպահան քաղաք զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և զքարինքն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի . 198

ԺԸ. Յաղագս հարիւր թուման մուղադայլին զոր շահն ետ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին . . . 214

ԺԹ. Պատմութիւն կաթուղիկոսութեան և փախըստեան Սահակ կաթուղիկոսին 229

Ի. Վասն հակառակութեան Սահակ կաթուղիկոսին, զոր արար ընդ սուրբ Էջմիածնի և ընդ Մովսէս կաթուղիկոսին 238

ԻԱ. Պատմութիւն առաքինագործ արանց, Սարգիս եպիսկոպոսին և Տէր Կիրակոսին, որք եղեն սկիզբըն շինելոյ և հաստատելոյ անապատաց։ Որովք և պատճառք ամենայն բարեկարգութեան, վանօրէից, և եկեղեցեաց և նոցին բնակողաց . . 249

ԻԲ. Այլ ևս պատմութիւն վասն սոյն մեծ անապատիս . 260

ԻԳ. Պատմութիւն վարդապետութեան և վարուց սըրբոյ վարդապետին Պօղոսի 266

ԻԴ. Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան Տեառն Մովսէսի։ Ընդ որում և յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։ 244

ԻԵ. Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան Տեառն Փիլիպպոսի, յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և յայտնելոյ նշխարաց նոցին։ 314

ԻԶ. Վասն նորոգութեան անուանի վանօրէից, և շինութեան բազմածախ և մեծավայելուչ եկեղեցեաց։ 347

ԻԷ. Վասն նահատակութեան Տէր Անդրէաս քահանային . 354

ԻԸ. Պատմութիւն նեղութեանց և վշտաց, զոր կրեցին Հայ ազգաւ քրիստոնեայքն, որք բնակեալք են ի քաղաքն Իլով 363

Գլուխ — Երես

ԻԹ. Թէ ո՞րք և որպէս եղեն պատճառք գտանելոյ զոճս և զճխտութիւնս արտաքին գրոց, և զարուեստս քերականութեան, և նորոգեալ սփռեցին ի վարդապետս Հայոց, որ բնաւին բարձեալ և անհետ էր լեալ 390

Լ. Պատմութիւն վասն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի Աջոյն 414

ԼԱ. Շարադրութիւն կաթուղիկոսացն մերոց առեալ և սկսեալ ի սրբոյն Ներսիսէ Կլայեցւոյ, և կարգաւածեալ և հասուցեալ մինչև ցժամանակս մեր . 432

ԼԲ. Կարգ վարդապետաց սկսեալ ի Գօշէ Մխիթարայ գաւազանաւն որ իջանէ յԷջմիածնի դասատունն . 440

ԼԳ. Թէ վասն որոյ պատճառի զհայազուն քրիստոնեայս հանին ի քաղաքամիջէն Ասպահանու և տարեալ յեզր քաղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին 442

ԼԴ. Պատմութիւն վասն ազգին Եբրայեցւոց բնակելոցն յԱսպահան քաղաքի. և այլոց ևս Եբրայեցի ազգին, որք են բնակեալ ընդ իշխանութեամբ թագաւորութեանն Պարսից, թէ վասն որո՞յ պատճառի դարձուցին յիւրեանց օրինացն ի կրօնս Մահմետի 458

ԼԵ. Վասն շարժման մեծի քաղաքին Թարվիզու. . . 481

ԼԶ. Պատմութիւն վասն գերեզմանին և ոսկերացն Վարդ պատրկայ 486

ԼԷ. Յաղագս շարժին որ եղև ի Վան քաղաքին, և իւրում շրջակայ երկրին 489

ԼԸ. Պատմութիւն և պատճառք կողոպտելոյ զանուանի վանքն Վարագ կոչեցեալ. և տանելոյ զաւագ սուրբ Նշանն ի բերդն Խօշաբայ, և դարձուցանելոյ անտի ի Վան քաղաք 494

ԼԹ. Վասն գնալոյ Հուսէյն աղային ի Ջուլամերկ . . 504

Խ. Պատմութիւն վասն սատակման պիղծ Զօմարին . 506

ԽԱ. Պատմութիւն վասն սատակման Սուլէյման բէկին . 512

ԽԲ. Պատմութիւն վասն պարոնութեան Իբրահիմ բէկին և դարձի սրբոյ Նշանին ի Վան քաղաք . . 519

ԽԳ. Պատմութիւն վասն Նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետին որ յայտնեցաւ ի ժամանակս

Գլուխ — Երես

յետինս որ ի հին Ջուղայ պահեալ կայր ի վաղուց ժամանակաց 522
ԽԴ. Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսի 526
ԽԵ. Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ 532
ԽԶ. Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ քրիստոնէին 542
ԽԷ. Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին 547
ԽԸ. Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին 552
ԽԹ. Յաղագս սքանչելեացն Աստուծոյ, որ եղեւ ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուան իւրոյ ուրացաւ 556
Ծ. Յաղագս մասնական հրկիզութեան, որ եղեւ ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին 561
ԾԱ. Պատմութիւն Օսմանցւոց Թագաւորաց. Օսման օղլու կարգն այս է, որ կոչի Խոնդքար . . . 566
— Կարգ Օսմանցւոց Թագաւորացն. 570
— Վասն Օսմանցւոց Թագաւորաց (թէ ո՞յք են մի զկնի միոյ 571
— Այլ եւս բան վասն Օսմանցւոց Թագաւորացն . 578
— Այլ եւս բան եւ կարգ Օսմանցւոց Թագաւորացն . 581
ԾԲ. Ազգաբանութիւն Պարսից Թագաւորացն . . . 584
— Անուանք ականց 586
ԾԳ. Վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց 588
— Այս է գիրք չոհարներուն որ կան ի վերայ աշխարհի՝ թէ յոր տեղացս հասլ կու լինին նախ եւ առաջին ալմաստն 596
— Այլ եւս բան վասն փանզահրին . , . . . 602
ԾԴ. Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննէս վարդապետին 605
ԾԵ. Բանք համառօտք նշանակեալք Թուականաւ ի սկզբանէ մինչեւ ցմեր ժամանակս 620
— Պատմութիւն անցից հրէից ազգին եւ Սապէթայ անուն ջհտին, որ ասէր թէ ես եմ քրիստոսն փրկիչ հրէից ազգին. եւ արդ՝ եկի եւ յայտնեցայ՝ զի փրկեցից զնոսա, եւ այլոց իրակութեանց, որք սոցունց հետեւեցան 651
ԾԶ. Պատճառ առնելոյ զգիրս պատմութեանց յորում եւ յիշատակարան առնողին 666

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻԿԱՅ ԳՐՈՑՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ (Հեղինակին) *

Պատմութիւն անցից հարուածոց, որք եկին ի վերայ աշխարհիս Հայոց ի յետին ժամանակիս ի Թագաւորէն Շահաբաս կոչեցելոյ և ի Նորին ազգէն որք են Պարսիկք։ Նաև յաղագս անշքանալոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի և Նորին կաթուղիկոսացն։ Այլ և վասն աղաւաղելոյ կարգաց և կրօնից քրիստոնէութեան։ Ընդ սոցին և այլ ևս բանք պատմութեան դիպուածոց քաղաքաց և գաւառաց, որք պատահեցան ի Թագաւորաց և յիշխանաց և ի կաթուղիկոսաց և յայլոց, գտցես աստ բաժանեալ ի գլուխս գլուխս ըստ բերման ժամանակին։

Այլ և գիտելի է, զի ըստ պահանջելոյ հարկին աստանօր պարտ է գնել զԹուականն իբր զհիմն, և ապա յարել ի նոյն զպատմութիւն որպէս զշինուածս, ըստ օրինի պատմագրաց· բայց քանզի ազգս մեր յաւարառուաց և ի գերչաց և ի հարկապահանջողաց ցիր և ցան եղեալ են, կոշկոճեալ և կաշկանդեալ, տառապեալ և կապեալ յաղքատութեան որպէս յերկաթս՝ ըստ Սաղմոսին, և հազիւ ամենայն ոք զապրուստ իւրոցն կենաց հայթայթէր, ոչ գտաք գիտող այր այնպիսի, որ զի ընդ պատմութեան և զԹուականն ևս ծանուցեալ էր։ Բայց մեր յոլով աշխատութեամբ խոյզ արարեալ՝ զորս գտաք, կարգեցաք ընդ պատմութեանն և զԹուականն ևս, և զորս ոչ գտաք, առանց Թուականի պատմեցաք և դու ընկալ զայս այսպէս առանց մեղադրելոյ և յիշեա՛ յաղօթս քո զաշխատօղս ի սմա։

Երկու ձեռագիրներում Հեղ. նախադրութիւնից առաջ գրուած է.

* «Աւգնեա մեզ Աստուած Փրկիչ մեր. վասն մեծի փառաց անուան քո: Մի՛ մեզ տէր, մի՛ մեզ. այլ անուան քում տուր զփառս, վասն ողորմութեան եւ ճշմարտութեան քո: Հոգին քո սուրբ եկեսցէ առ մեզ եւ լուսաւորեալ զմիտս մեր կատարեսցէ զսկսեալս ի մեզ, ի փառս եւ ի գովեստ սրբոյ երրորդութեանդ ամէն»։

ԳԼ. Ա.

Ցաղագս տառապանաց՝ զոր ունէին կաթուղիկոսքն ի հարկապահանջութենէ բռնաւորաց:

Արդ ի ժամանակս յետինս՝ յորում նուազեցան ազգքն, որք էին քրիստոնէական հաւատոյս պաշտօնեայք, և զօրացան ազգքն, որք էին մահմետական կրօնիւք. ի կողմն[1] արևելեան՝ Պարսիկք և ի կողմն[2] արևմտեան՝ Օսմանցիք, որք առին զհռչակաւոր քաղաքն զԿոստանդնուպօլիս յազգէն Հոռոմոց ՋԲ. թուին Հայոց։

Եւ յետ առնլոյ Օսմանցոցն զԿոստանդնուպօլիս՝ և ևս մեծացան և զօրացան, և ձգեցաւ իշխանութիւն նոցա յարևելից կողմանէ[3], և եհաս մինչ ի Թարվէզ. քանզի Օսմանցւոց փաշայք նստէին ի Թարվէզ և յԵրևան և ի Գանձայ, և ի Շամախի և ի Դամուրղափուն

---

1 Ոսկ. ի կողմանս։—2 Նոյն. ի կողման։—3 Նոյն. յարևելս կոյս։

և մինչև ի Խուղափրին [1] ունէին ընդ իշխանութեամբն իւրեանց։ Նաև զՎրաստուն [2] աշխարհն ընդ ձեռամբ և հարկատու էին արարեալ։ Եւ ի ժամանակս յայս՝ էր կաթուղիկոս սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տէր Առաքեալ ի նոյն գեղջէն Էջմիածնի. այր բարեսէր և պահացող և պարկեշտ և բարեձև յամենայն իրս, ի գործս և ի բանս և ի հանդերձս, որոյ վարեալ զկաթուղիկոսութիւնն ի կեանս իւր՝ յաւելաւ առ Տէր։

Յետ սորա եկաց կաթուղիկոս սուրբ Էջմիածնի տէր Դաւիթ, և սա ևս ի նոյն գեղջէն Էջմիածնի, իբրև էառ սա զկաթողիկոսութիւնն, վարէր ըստ բերման ժամանակին և ըստ իւրում կարի, որ և յամս ինչ վարեաց, բայց մինչդեռ էր կենդանի և յիշխանութեան կաթուղիկոսութեան, ձեռնադրեաց ինքն միւս ևս կաթուղիկոս, որում անուն էր Մելքիսէթ, որ էր գաւառէն [3] Գառնոյ, ի գեղջէն որ ասի Աղջոց վանք. զսա ձեռնադրեաց այնու յուսով, որպէս զի լիցի ինքեան օգնական, իսկ նա եղև խռնդակն և հակառակ նմա, որպէս և զկնի պատմութիւնքն ցուցանեն։ Եւ Դաւիթ կաթուղիկոսն՝ որ զՄելքիսէթն օրհնեաց [4] կաթուղիկոս, սմա ասեն երկուս պատճառս։ Ոմանք ասեն յաղագս օգնելոյ և ընկերելոյ ինքեան օրհնեաց, քանզի հարկապահանջութիւն այլազգեաց ծանրացեալ էր ի վերայ քրիստոնէից՝ որք կեղեքէին զկեանս նոցա, որև ի կաթուղիկոսէն ևս պահանջէին ինչս յոլովս. և նա զորս կարէր՝ տայր, և զորս ոչ կարէր՝ հալածական լինէր և թաքչէր ի պահանջողացն, և այսպէս հալածական և դաղտագողի կենօք կացեալ ի ժամանակս ինչ, որոյ ձանձրացեալ ի տառապելի կենաց՝ որ հանապազ փախ-

---

1 Խուզաֆրինն, Ա.–Ետէ+ երեց. խուրաաֆրին.—2 Ոսկ. Վրացտուն.—3 Նոյն. չէ+. գաւառէն.—4 Նոյն. ձեռնադրեաց.

չէր և Թաքչէր՝ մատախոհ եղև ի սրտի իւրում առնել զոմն ընկեր ինքեան զի լիցին միմեանց օգնական և վշտակից, զի Թերևս կարիցեն երկոքեանն՝ ոմն յայս կողմն և ոմն յայն կողմն շրջագայել և պատրաստել ինչ, առ ի բաւական լինելոյ կարեաց և պակասութեան կաթուղիկոսարանին։ Ոմանք ասեն [1] այսու պատճառաւ օրհնեաց Դաւիթն զՄելքիսէթն կաթուղիկոս, զի լիցի օգնական ինքեան։

Իսկ այլք ոմանք ասեն թէ Մելքիսէթ կաթուղիկոսն էր այր փառամոլ և հետևող նախագահ իշխանութեան, յորոյ պատճառէ բաշխէր առատութեամբ ինչս ամենեցուն, և զամենեցուն զսիրտսն հանգուցանէր առ ինքն. [2] և զամենեսեան առնէր ինքեան բարեկամ ըստ նմանութեան Աբիսողոմայ. որպէս զի օգնեսցեն ինքեան և կամակից լիցին լինել նմա ի կաթուղիկոս, որ և ետ ինչս բազումս իշխանի տեղւոյն առ ի լինել կաթուղիկոս։ Իսկ իշխանն յետ առնլոյ ընչիցն, բռնադատեաց զԴաւիթ կաթուղիկոսն հարկիւ, զի օրհնեսցէ զՄելքիսէթն. իսկ Դաւիթն անճար եղեալ թէ կամայ՝ և թէ յոչ կամայ օրհնեաց զՄելքիսէթն կաթուղիկոս։ Ոմանք այսպէս ասեն [5]։ Արդ թէ այսպէս և թէ այնպէս՝ եղեն երկու կաթուղիկոսք միոյ աթոռի ի միում ժամանակի։

---

1 Ոսկ. ասեն թէ.—2 Նոյն. չէ+. և զամենեցուն զսիրտսն հանգուցանէր առ ինքն.—5 Նոյն. չէ+. ոմանք այսպէս ասեն.

Գլ. Բ.

Յաղագս գալստեան Սրապիոն վարդապետին ի ս. Աթոռն Էջմիածին եւ լինելոյ կաթուղիկոս։

Թէպէտ եղեն երկու կաթուղիկոսք, որպէս որ ասացի՝ [1] զի թերևս թեթևացուսցեն զպարտսն, և ևս առաւել բազմացուցին, զի մինչև ցարդ մի էր կաթուղիկոսն, և մի էր մախող, այլ այժմ եղեն երկու կաթուղիկոսք և երկու մախողք։ Արդ եթէ ի ծախելոյն նոցա և թէ ի հարկապահանջութենէ ժամանակին, և թէ յայլ ինչ պատճառէ, սակայն բազմացաւ, բարդեցաւ [2], դիզացաւ պարտքն ձեռամբ նոցա ի վերայ սրբոյ աթոռոյն Էջմիածնի, և ասեն թէ մինչ ի ԾՌ. ղուռուշ եհաս պարտքըն, և ոչ կարէին վճարել։ Եւ յորժամ լինէր որ գային տուողք պարտուցն և խնդրէին զիւրեանց տուեալ պարտսն, նաև թագաւորական և իշխանական հարկա-

1 Ոմն. որպէս ասացաւ։—2 Նոյն. չիք. բարդեցաւ։

հանքն, յորժամ եկեալ [1] պահանջէին զդիմոսական (գլխահարկ) հարկսն, և կաթուղիկոսքն ի չքաւորութենէ [2] ոչ ունէին դոյք առ ի վճարել: Վասն որոյ հանապազ ի փախստեան և ի թաքստեան կային, և ոչ կարէին ի միում տեղւոջ կալ աւելի երկուս կամ երիս, և կամ լուսով տունջեան ի շինէս յայս՝ ի միւս շէնն երթալ, այլ ի գիշերի երթային. և յոյժ ողորմելիք էին կեանք նոցա յայնմ ժամանակին՝ որպէս և պատմեն տեսողքն, որոց անճար լեալ ի նեղութենէ վշտացն և ի ծանրութենէ հարկացն հանապազ ի տարակուսի կային, զի թերևս հնար լիցի փրկութեան և ի բազում ժամանակս խորհելոյ և մտայոյզ լինելոյ յաղագս խորհրդոյս այսմիկ, ապա [5] երկոքին կաթուղիկոսքն կամօք իւրեանց և ամենայն խորհրդակցաց իւրեանց, առնեն եզրակացութիւն խոկմանց իւրեանց՝ այսպիսի իմն յեղանակաւ [4]. որպէս զի գրեսցեն նամակ մեծարանաց սիրոյ և ողջունիւ [3] առ մեծ վարդապետն Արապիոն, որ էր առաջնորդ քաղաքին Տիգրանակերտու, զի եկեալ վճարեսցէ զպարտքն, և էր գրեալ ի նամակին, թէ ահա մեք մերովք կամօք ի բաց կամք ի կաթուղիկոսութենէս, եթէ դաս և վճարես զպարտքն, քեզ լիցի աթոռն և կաթողիկոսութիւնն:

Եւ էր վարդապետն Արապիոն տեղեաւ ի քաղաքէն Ուրհայոյ բարեպաշտ ծնողաց և յոյժ մեծատան զաւակ, որ զկնի մահուան ծնողացն մնացին ինչք բազումք և ստացուածք յոլովք վարդապետին [6], որոյ սիրեցեալ զկեանս սուրբս և զվարս առաքինիս, հետևեցաւ սուրբ գրոց ընթերցման, և եմուտ յաշակերտու-

1 Ուկ. չէ+. յորժամ եկեալ.—2 Նոյն. չէ+. ի չքաւորութենէ.—5 Նոյն. չէ+. ապա.—4 Նոյն. եղանակաւ.—3 Նոյն. չէ+. սիրով և ողջունիւ.—6 Նոյն. չէ+. վարդապետին.

թիւն մեծ վարդապետին Ղուկասու Կեղեցւոյ՝ որ էր գլուխ ամենայն վարդապետաց ժամանակին, և կացեալ յաշակերտութեան նորա և եղև այր կատարեալ ամենայն իմաստութեամբ և Աստուածաշունչ գրովք. զորոյ զարժանաւորութիւնն տեսանելով Ղուկաս վարդապետին, և ամենայն[1] ժողովրդոց, որք[2] վկայեցին առաջի Ղուկասու վարդապետին, վասն որոյ ետ նմա գաւազան վարդապետական ի Համիթ քաղաքի ի մերում Թուականիս ՌԼԵ. ի փետրվար ամսոյ Ի. որ ի քարոզել Բանին կենաց աղբիւրաբար ոռոգանէր զպաքեալ ոգիս ժողովրդոց, և ժողովուրդքն ամենեքեանք հաճեալ և հաւանեալ նմա[3] կացուցանեն զնա առաջնորդ քաղաքին իւրեանց: Եւ նա ըստ բանի առաքելոյն զպաշտօնն իւր փառաւոր առնէր՝ քանզի ըստ հանդիսի երկնայնոցն էր ժամակարգութիւն նորա, գեղեցիկ և պատշաճաւոր կարգաւորութեամբ երգօք և եղանակօք, զանձիւք և մեղեդիւք, Թագաւորօք և ալէլուիւք: Իսկ դաս և քարոզ իբր զսովորական գործ արարեալ իւր հանապազօր Թարց իմէք հեղգութեան ասէր զդասն և զքարոզն: Այլև ժուժկալութեամբ և պահօք անցուցանէր զկեանս իւր իբր զանապատաւորս: Որոյ իմաստութեան և առաքինութեան համբաւ ելեալ հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս: Վասն որոյ դիմեալ գային առ նա յամենայն աշխարհաց ի մանկանց եկեղեցւոյ[4] ցանկացողք իմաստութեան, առ ի յուսումն սուրբ Գրոց, և նա իբրև զջուր աղբեր կենդանւոյ՝ զպասքումն ամենեցուն զովացուցանէր, քանզի կարգեաց դասատուն գրոց աշակերտաց՝ և ուսուցանէր զամենեսեան, որք մտանէին յաշակերտութիւն նորին. յորոյ աշակերտացն բազումք եղեն արք երևելիք և անուանիք:

---

1 Ոմն. չիք. ամենայն.—2 Նոյն. չիք. որք.—3 Նոյն. չիք. նմա.—4 Նոյն. չիք. ի մանկանց եկեղեցւոյ.

Յորոց էր Կեսարացի Գրիգոր վարդապետն՞ այր գիտնական նրբից և արտաքնոց, և յաղթող ախոյեան ընդդէմ մաքառողաց ճշմարտութեան, եթէ մերասերից և եթէ այլոց ազգաց։ Եւ Բարսեղ վարդապետն մեծահոգի՝ որ զկնի Սրապիոն վարդապետին, նա [1] նստաւ առաջնորդ քաղաքին Տիգրանակերտու, այսինքն Համթայ։ Եւ Յովհաննէս վարդապետն Ուրհայեցի, որ եղև Ուրհայոյ առաջնորդ, որ աստեղաբաշխութեան և ամենայն համարողական արհեստի էր քաջ հմուտ։ Եւ Տարօնացի Արիստակէս վարդապետն, որ էր կատարեալ գիտող երաժշտական երգոց և եղանակաց։ Եւ Յովսէփ և Յովհաննէս վարդապետքն ի Հզուոյ։ Եւ միւս Յովհաննէս վարդապետն ի Քաջբերունւոյ՝ այսինքն յԱրճիշոյ։ Եւ Մովսէս կաթուղիկոսն ի Սիւնեաց աշխարհէն, որ եղև լուսաւորիչ արևելեայ մասին աշխարհիս. և նորոգող սուրբ Էջմիածնի՝ զորոյ զարդեանց զպատմութիւնն առնելոց եմ յառաջիկայդ։

Եւ զի՞ ևս երկարեցից, էր սուրբ վարդապետն Սրապիոն երևելի և փառաւոր յաչս ամենեցուն, ոչ միայն ի մէջ մերոյ ազգիս Հայոց. այլև Հոռոմոց և Ասորւոց, և մահմետականաց, որ ոչ տկարանայր առ նա գործ՝ զոր ինչ և կամէր կենցաղական։ Յաղագս որոյ գրեցին առ նա երկոքին կաթուղիկոսքն նամակ ողջունի և սիրոյ, և ասեն ահաւասիկ մեք տկարացաք, և ոչ ևս կարեմք վճարել զբազմութիւն պարտուցս՝ յոր խորասուզեալ ընկղմեցաք, ահա [2] մեք մեզէն մերովք կամօք ի բաց կամք ի կաթուղիկոսութենէ և ի տիրողութենէ [5] ս. Աթոռոյս, արդ քեզ շնորհեալ է ամենայն՝ որպէս և եսդ արժան, կաթուղիկոսութիւնն և աթոռն.

---

1 Ոսկ. չէ. նա։—2 Նոյն. վասն որոյ։—5 Նոյն. ի տիրութենէ, իսկ Ա.–Նորէ. Երէց. ի տէրութենէ։

արդ խնդրեմք ի քէն մի՛ անփոյթ առնիցես գալ ի փըր-կութիւն մեր, և մանաւանդ ի վերականգնումն ծեր և և հոգևոր ծնողին քում սրբոյ աթոռոյն Էջմիածնի։

Իսկ վարդապետն Սրապիոն իբրև լուաւ զանուն ս. Էջմիածնի յօժարեցաւ ի գալ. ոչ թէ յաղագս կաթուղիկոսութեան և փառաց, քանզի նա փառաւորեալ էր յԱստուծոյ և ի մարդկանէ, այլ վասն փրկութեան լուսափիւռ աթոռոյն, վասն զի ցաւեաց նմա, իբր որդւոյ հարազատի ի վերայ ծերացեալ ծնողի։ Վասն որոյ ելեալ ի Տիգրանակերտու և Ճանապարհ արարեալ ի վերայ քաղաքին Վանայ, եկեալ հասանէ ի վերին աշխարհս Հայոց ի գիւղաքաղաքն Ջուղայ, որ էր մեծ և երևելի շէնն այն ի ժամանակին յայնմիկ ի մէջ արեւելեայ աշխարհիս, զի տակաւին ոչ էին վարեալ յաշխարհն Պարսից յայնմ ժամանակի, և եկեալ անդ ի Ջուղայ դադարէ, և համբաւ գալստեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, որև լուեալ կաթուղիկոսացն երկոցունց, և առեալ զոմանս յիւրեանց խորհրդակցացն զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց Թառայ՝ և զմիւս Մանուէլ եպիսկոպոսն Խորվիրապայ, և զԱստուածատուր եպիսկոպոսն Գեղարդայ, և զոմանս ի մարմնաւոր ազգականաց իւրեանց, և եկեալ հասին ի գիւղն Ջուղայ, յորում և վարդապետն Սրապիոն եկեալ կայր. և յետ անցանելոյ աւուրց ինչ՝ յառաջ արկին բան յաղագս գործոյն, որոյ սակս և բերեալ էին զվարդապետն, և այն ինչ մինչդեռ ի խօսն կային, և բանն ի մէջ նոցա յառաջանայր, թշնամին արդարութեան և հակառակն ճշմարտութեան բանսարկուն, որ հանապազ փեռեկտէ զեկեղեցին Քրիստոսի, յանկարծակի էարկ ի մէջ նոցա երկպառակութիւն և խռովութիւն, քանզի արքն՝ որք կաթուղիկոսեանք էին, ոչ հաճեցան ընդ սուղ ինչ եպերական բանս վարդապետին, վասն որոյ և

տարալին շփոթ և աղմուկ, որև Հաւուց Թառայ Մանուէլ եպիսկոպոսն իւրովք իսկ յոտին կացեալ ի հանդիսի անդ բարձրաձայն աղաղակաւ աղմուկ շփոթի էարկ ի մէջ նոցա, և խանգարեաց զասել և զլսել, յորոյ անհեթեթ ներգործեալ իրակութեանց վերայ խոժոռեալ ամենեցուն՝ որոց նստէին, տաղտկացեալ ի բաց լքին զամենայն, և իբրև զատեալս միմեանց երևեալ՝ տրոհեալ անջատեցան ի միմեանց, իւրաքանչիւրք ըստ կամաց անձանց իւրեանց։

Ուստի յարուցեալ կաթուղիկոսքն և այք իւրեանց գնացին ի գաւառն Սիւնեաց ի վանքն Տաթևու։ Իսկ վարդապետն Սրապիոն անդէն ի Ջուղայ կացեալ աւուրս ինչ, իբրև զբարձրաբարբառ աւետարանիչ նորոյ Սիոնի, հանապազօր ուսուցանէր և լուսաւորէր զամենեսեան լուսափիւռ վարդապետութեամբ, առ որ հաճեալ և հաւանեալ Ջուղայեցւոցն և ամենայն արևելեայց ուրախացեալք օրհնութիւն ի բարձունս վերառաքէին։

Որոց առեալ զվարդապետն ածին ի բարձրագահ Աթոռն ի սուրբ Էջմիածին, և ժողովեալ զամենայն ժողովուրդ երկրին զեկեղեցականս և զաշխարհականս, և եղեալ սիւնհոդոս մեծ, և այնպիսի մեծախումբ հանդիսիւ ձեռնադրեցին զվարդապետն Սրապիոն կաթուղիկոս ամենայն Հայոց և յաջորդ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, ի թուականութեան մերում ՌԾԲ․ յօգոստոս ամսոյ ԺԴ․ և յաւուր ձեռնադրութեան նորա, մակադրեցին զանուն նորա Գրիգոր ըստ կոչման սուրբ Լուսաւորչին, զի թերևս աղօթիւք նորին և սա ի վերջինս արփիաւորեսցէ զհայազունս՝ որպէս և նա ի նախկինն, որ յաւուրս մեր կատարեցաւ այս խորհուրդ և մտածութիւն։

Գլ. Գ.

Յաղագս գալստեան Շահաբասայ Թագաւորին Պարսից յաշխարհս Հայոց, եւ ունելոյ զամենայն, եւ վարդապետին Սրապիոնի դառնալոյ անդրէն ի տեղի իւր:

Իսկ կաթուղիկոսքն երկոքին՝ Դաւիթ և Մելքիսեթ, և այլքն որք ընդ նոսա, իբրև տեսին՝ թէ ոչ եղև միաբանութիւն ի մէջ ինքեանց և Սրապիոն վարդապետին, և մանաւանդ թէ [1] փոխանակ միաբանութեանն խռովութիւն ևս անկաւ, ելեալք ի Ջուղայոյ գնացին ի վանքն Տաթևու, և անդէն զտեղի առեալ աւուրս տասն, խորհէին՝ խոկային, երկնէին; զի գոնեա հնար իմն գտանիցի. զի մի՛ ի կաթուղիկոսութենէն զրկիցին, այլ մնասցէ կաթուղիկոսութիւնն ի ձեռս իւրեանց, և այլ իմն կերպիւ զերծցին ի ձեռաց պարտատուաց: Խորհեցան խորհուրդ՝ և ոչ տերամբ ըստ գրեցելումն, ի կորուստ անձանց իւրեանց, ի կործանումն և ի տապալումն աշխարհին, և ի ջնջումն ազգին իւրեանց, քանզի սահմանեցին հաստատութեամբ

---

1 Ուղ. չէ. թէ.

ի միջի իւրեանց զի գնասցեն ի Սպահան առ Թագաւորն Պարսից՝ որում [1] անունն էր Շահաբաս։

Եւ պատճառ գնալոյ սոցա առ շահն [2] այս էր, զի հաւաստեաւ և ստոյգ գիտէին, թէ շահն պատրաստեալ է գալ ի յաշխարհս Հայոց, քանզի յառաջ քան զսոսա բազումք ոմանք յաշխարհէս Ատրպատականի իշխանք և կողմնակալք մահմետականք և քրիստոնեայք, գնացեալ էին առ Թագաւորն Պարսից, վասն զի յոյժ չարաչար նեղութեամբ նեղէին զնոսա ազգն Օսմանցւոց ծանր հարկապահանջութեամբ, և կեղեքմամբ զրկէին և կողոպտէին, և հաւատոց կուռէճութիւն (խստութիւն) առնէին, և այլ բազում տառապանօք չարչարէին, ոչ միայն զազգս Հայոց, այլև զազգն Վրաց և զՄահմետականաց, և վասն այնր նեղութեան գնացին առ Թագաւորն Պարսից, զի թերևս նովաւ դիւրութիւն [5] գտցեն զերծեալք ի ծառայութենէն Օսմանցւոց։

Ղազի խան անուն ոմն յազգէն քրդաց՝ որ էր մեծ իշխան և կողմնակալ աշխարհին Մարաց, նեղեալ յազգէն Օսմանցւոց, զի կամէին սպանանել զնա օսմանցիքն, և յինքեանս զրաւել զիշխանութիւն նորա, վասն որոյ և նա [4] առաքեաց զհաւատարիմն իւր՝ որ Խան-Աւդալ ասէին, առ շահն, զի եկեալ փրկեսցէ զինքն, և ինքն լինիցի ի կողմն շահին։

Սոյնպէս և միւս իշխան յազգէն Մարաց՝ որում ասեն [5] Ուլամայ օղլի Հայրաթբէկ, սա ոչ թէ զայլս առաքեաց, այլ ինքն [6] գնաց առ շահն։ Նաև Թագաւորքն Վրաց ունէին կամք, զի Պարսիկք ունիցին զաշխարհս. քանզի ոգւով չափ վշտացեալք էին յՕսման-

---

1 Ոսկ. չէ+. որում անուն էլն։—2 Նոյն չէ+. առ շահն։—
5 Նոյն. գդիւրութիւն ինչ։—4 Նոյն. չէ+. վասն որոյ և նա։—
5 Ոսկ. և Ա-եր. երէց. ասէին։—6 Ոսկ. և Ա-եր. երէց. ինքնին։

ճւոց՝ ոչ միայն վասն նեղութեանց Օսմանցւոց, այլ մանաւանդ վասն ըմբռնմանն մեծ Սիմոն խանին թագաւորին իւրեանց՝ զոր ըմբռնեալ Օսմանցիքն տարան ի Ստամբօլ և անդ սպանին, այլև զթոռն սորա ևս խաբով տարան ի Ստամբօլ և զնա ևս սպանին։ Այլև այս [1] Թագաւորացս Վրաց յոլով պատանդք կային առ Թագաւորսն Պարսից, որ էր դուստր և որդին վերոյ ասացեալ Սիմօն խանին Թիֆլիզու, Նաև որդին Աղէքսանդր Թագաւորին Կախեթու՝ որում անունն էր Կոստանդին։ Նաև եղբայր Աթաբէկ իշխանին Սոմխէթու՝ որում անունն էր Թահմազղուլի։ Եւ այլք յոլովք յազգէն Վրաց առ Թագաւորսն Պարսից։

Իսկ յաշխարհէն Աղուանից՝ և յազգէն Հայոց գնացին Սարուխան բէկն և իւր եղբայր Նազարն ի յՍսկանապատ գեղջէ. Օղլան քէշիշն և իւր եղբայր Ղալաբէկին ի Հաթերք գեղջէ։ Ջալալ բէկն իւր եղբօր որդւովքն ի Խաչենայ։ Մէլիք Սուջումն ի Դիզակայ. Մելիք Փաշիկն ի Քօչիզ գեղջէ. Մելիք Բալէն ի Բրիտիս գեղջէ. Մելքիսէթ եպիսկոպոսն ի վերին Զակամայ ի Մելիքզատայ գեղջէ. Մելիք Հայկազն ի Քշտաղս երկրէն՝ ի Խանածախ գեղջէ։ Այլև չորս գեղ ի Դիզակա երկրէն միահաղոյն չուեցին և գնացին յերկիրն Պարսից, և շահն բնակեցոյց զնոսա ի քաղաքն Սպահան։ Այլև [2] երեք մասն ի ժողովրդոց՝ դաշտ կոչեցեալ տեղին՝ որ է ի գաւառին գողթան՝ մերձ յԱգուլիս՝ գնացին յերկիրն Պարսից, և շահն զնոսա ևս բնակեցոյց ի քաղաքն Սպահան։ Եւ է պատճառ Դիզակեցւոց և դաշտեցւոց գնալոյն՝ ծանր հարկապահանջութիւնն, կեղեքելն և կողոպտելն և կուռէճութիւն առնելն, և անխնայ սպանանելն զքրիստոնեայսն։

---

1 Ոմն. չէ. այս.—2 Նոյն. չէ. Այլ...ի քաղաքն Սպահան.

A III 32981

Եւ եղեալ են ամենեքեան յոյժ չքաւորք, և պարտատէրք, և մնացեալ են անճար։ Վասն որոյ փախուցեալ գնացին յերկիրն Պարսից։ Զանուանս արանցս՝ զոր յիշեցաք, ամենեքեան էին արք նշանաւորք. սոքա և առաւել քան զսոսա յոլովք գնացեալ էին առ շահն, զորս գիտէին կաթուղիկոսքն, այլ տեղեկացեալք էին թէ շահն հաւատեաւ գալոց է յաշխարհն Հայոց վասըն որոյ և նոքա ևս կամեցան գնալ, զի [1] մտերիմք երևեսցին առաջի շահին, գուցէ թերևս դիւրութիւն և օգտութիւն ինչ գտանիցեն ի նմանէ՝ [2] նեղութեանց և պարտուց իւրեանց։

Ցայնմ ժամանակի ի վրաւ ամենայն խորհրդոց, Դաւիթ կաթուղիկոսն և Խորվիրապայ Մանուէլ եպիսկոպոսն մնացին յաշխարհս Հայոց։ Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն, և Հաւուց թառայ Մանուէլ եպիսկոպոսն, և Գեղարդայ Աստուածատուր եպիսկոպոսն ելեալք ի Տաթևու պատճառանօք իմն գնացին յաշխարհն Պարսից. և եղև իբրև նոքա ճողոպրեցան ի մասն բաժնի երկրին Պարսից, և անյապաղ փութացան ի գնալ մինչև հասին ի քաղաքն Սպահան, և երևեցան Շահաբաս թագաւորին, և զեկուցին նմա զխորհուրդս իւրեանց։ Իբրև զայն լուաւ շահն և ծանեաւ, ցնծացաւ ի յոգի, բերկրեցաւ ի միտս, զուարթացաւ ի մարմին, զի մեծ եղև նմա ուրախութիւն յաւուր յայնմիկ քան զամենայն աւուրս կենաց իւրոց, և ըստ խորամանկ բարուց իւրոց Շահաբաս սկսաւ մեծարել և պատուել զնոսա տրօք և պարգևօք երևելեօք, և օր ըստ օրէ կոչեալ զնոսա առ ինքն՝ խօսէր ընդ նոսա ըստ մտաց նոցա, և զսիրտս նոցա յինքն յանկուցանէր և զինքն նոցին հաւատարիմ և բարեկամ ձևացուցանէր, և խօս-

1 Ուղ. չէ. զի մտերիմք...գուցէ. — 2 Զէ. ի նմանէ.

տանայր մեծաց բարեաց հասուցանել զնոսա, և այնքան սնոտի և պատիր խաբէութեամբ կեղծաւորեալ զինքն նոցին մտերիմ ցուցանէր, մինչ զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ. և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ: Եւ իբրև գիտաց թէ՝ ճշմարտիւ և սիրտք նոցա այնպէս է՝ որպէս և բերանով խօսէին, ապա հրաման ետ զօրավարաց իւրոց պատրաստել զզօրսն առ ի գնալ. և իսկոյն վաղվաղակի կատարեցաւ հրամանն: Խաղայ այնուհետև ամենայն զօրքն [1] գալ ի Թարվէզ ի վերայ զօրացն Օսմանցւոց. որք անդէն բնակեալ էին և ունէին զԹարվէզ և զգաւառս նորա:

Եւ յորժամ շահն ել ի Սպահանայ գալ ի Թարվէզ՝ զ՚ ի վերոյ յանուանէ յիշեցեալ զարսն զամենեսեան ընդ իւր էառ, և փութագնաց և օդապարիկ երիվարօք ելեալ ի Սպահանայ վաղվաղակի ի սակաւ աւուրս հասանէ [2] ի Թարվէզ, բնաւ ոչ գիտացեալ զօրացն Օսմանցւոց զգալն Պարսից. քանզի ոչ թէ ի բազում, այլ ի սակաւ աւուրս եհաս ի Թարվէզ: Իսկ ի հասանել Շահաբասին ի Թարվէզ, աջողակ գտաւ գործն առաջի նորա. վասն զի տէրն Թարվիզու՝ որում անունն էր Ալիփաշայ, [3] որ իշխան էր ամենայն զօրացն Օսմանցւոց, որք պահապան էին աշխարհին, փաշայն և զօրքն ամենայն ԻՌ. ժողովեցան և ի միասին գնացին ի գաւառն Սալմաստայ ի վերայ նախկի յիշեցեալ քուրդ պարոնին՝ Ղազի խանին, վասն զի յայտնի եղեալ էր Օսմանցւոցն՝ որ Ղազի խանն բաժանեալ է ի միաբանութենէ Օսմանցւոց, և միաբանեալ է ընդ Պարսից, և զհաւատարիմ իւր զԽան-Աւդալն առաքեալ է առ շահն. վասն այսո-

---

1 Ուկ. և Ա.-Եփ. Երեց. զօրզք.—2 Ուկ. հասանին.—3 Նոյն. զօրաժողով արարեալ արանց իբրև ԻՌ. աց գնաց.

րիկ ժողովեցան զօրքն Օսմանցւոց՝ և գնացին ի Սալմաստ ի վերայ Ղազի խանին։ Իսկ Ղազի խանն նախ քան զհասանելն զօրացն Օսմանցւոց, ել ի Սալմաստայ և գնաց յՈրմի գաւառ և եմուտ ի յանառիկ բերդն՝ որ ասի Գօզարչին ղալասի, որ է ի մէջ ծովակին Որմւոյ և անդ ամրացաւ։ Իսկ Ալի-փաշէն և զօրքն Օսմանցւոց եկեալ ի Սալմաստ՝ տեսին զի Ղազի խանն գնացեալ էր յՈրմի, և [1] նոքա ոչ գնացին յՈրմի, զի կամեցան նախ զայն երկիրն Սալմաստու՝ և զբերդն ընդ իւրեանց իշխանութեամբ գրաւել և ապա գնալ յՈրմի ի վերայ Ղազի խանին, և քանզի էր ամուր բերդ մի՝ յերկրին Սալմաստու՝ որում անէն՝ Ղառնիեարուխ, և շուրջ զնովաւ յարդարեցին պատերազմ, և մինչև ցերիս ամիս կացին անդրէն [2] զօրքն Օսմանցւոց՝ և պատերազմէին [3] ընդ բերդին և ոչ կարացին առնուլ։

Յաւուրս յայսոսիկ՝ յորում Օսմանցիք ի վերայ Ղառնիեարուխ բերդին պատերազմէին, եկն շահն և եհաս ի Թարվէզ, եթող զքաղաքն և անցեալ եկն ընդդէմ զօրացն Օսմանցւոց։ Իսկ Օսմանցիք իբրև զգացին զգալն Պարսից, և իմացան ստուգիւ թէ շահն ինքն է, քանզի յառաջ համարեցան թէ զօրապետ ոմն իցէ, և իսկոյն թողեալ զպատերազմն բերդին, դարձան և եկին մերձ ի գիւղն Սօֆիան, և անդէն ի դաշտին Սօֆիանու խմբեցան ի պատերազմ յանդուգն բախմամբ։ Եւ ի նմին պատերազմի երևելի քաջութիւնս գործեաց Ուլամայ օղլի Հայքաթ բէգն, զի քսան գլուխ եբեր առաջի շահին յայնմ պատերազմի, և իբրև զգիշախանձ և անյագուրդ գազան՝ յաւել ևս և եմուտ ի պատերազմն, և վասն առաւել արշաւանացն և աշխա-

---

1 Ուղ. իսկ. — 2 Նոյն. և Ա-եփ. եբեց. անդէն. — 3 Ուղ. պատերազմեալք.

տանացն խոնջեալ էր երիվար նորա. և զօրացն Օսմանցւոց պատեալ շուրջ զնովաւ ըռըմբափակ արարին զնա ի մէջ իւրեանց՝ և անդէն հարեալ սպանին զՇայբաթ բէգն, և զայն տեսեալ զօրացն Պարսից երկիւղակիր լեալ զանգիտէին, որով սուղ ինչ պարտեալ երևիւր կողմն Պարսից: Եւ իսկոյն կոչեալ շահն առաջի իւր զմեծ խանն Զըլֆիղար՝ և քաջալերեալ արիացոյց զնա՝ և հրաւիրեաց ի պատերազմն. իսկ նա ի քաջալերանաց շահին զօրացեալ[1] եմուտ ի հանդէսն ի մէջ պատերազմին և հարեալ խորտակեաց զօրեղ զօրութեամբ զզօրսն Օսմանցւոց: Եւ զայն տեսեալ զօրացն Պարսից առհասարակ յամենայն կողմանց դիմեալ ի վերայ՝ հարեալ ի սուր սուսերի ջնջեալ առհասարակ զամենեսեան տապաստ դաշտացն արկանէին, և մնացեալքն փախստեամբ կորնչէին:

Իսկ Ալիփաշէն իբրև ետես զպարտութիւն իւրոյ կողմանն, և զայն ևս թէ ստուգիւ շահն ինքն է, էառ ընդ իւր զորդին իւր՝ և եկեալ անկաւ յոտսն շահին, և աղաչէր վասն ազատութեան: Իսկ շահն սիրով և գթով ընկալաւ զնա՝ և մեծաւ պատուով պահէր առ ինքն, և ընդ իւր տարաւ ի Սպահան:

Եւ յետ վանելոյ պատերազմին եկն շահն՝ և եմուտ ի Թարվէզ. և կալեալ տիրեաց քաղաքին և ամենայն գաւառացն: Եւ զբերդն որ էր ի մէջ քաղաքին քարայատակ արարեալ քակեաց ի հիմանց զբովանդակն[2] կացեալ անդէն աւուրս ինչ մինչև զամենայն երկիրն նուաճեաց ընդ ձեռամբ, կարգեաց իշխանս և գործակալս յամենայն սահմանս նորա:

Իսկ մնացեալ զօրքն Օսմանցւոց, որք ի քաղաքէն

---

1 Ա-եփ. երեց. զօրացեալ զօրութեամբ.—2 Ոսկ. չէ. զբովանդակն.

Թարվիզու փախեան և որք ի պատերազմէն զերծան, գնացեալ ժողովեցան ի քաղաքն Նախչուան։ Եւ ընդ զօրացն Նախչուանու խորհեցան խորհուրդ, թէ Թագաւորն Պարսից վասն այսմ աշխարհիս եկեալ է, և զիարդ և իցէ վերջն այն է, որ նա առնլոց է զաշխարհս զայս ի ձեռաց մերոց։ Արդ՝ նախ քան զգալն նորա մեք կողոպտեալ և աւարեալ յափշտակեսցուք ի գեղօրէից գաւառիս որքան կարեմք և առեալ գնասցուք։ Եւ այս խորհուրդ յայտնեցաւ գեղականաց գաւառացն, և մանաւանդ Ջուղայու․ զոր յաւէտ վասն Ջուղայու էր խորհուրդն այն, վասն որոյ ամենեքեան ելեալք ի բնակութեանց և ի շինամիջէ փախեան․ և ելին ի լերինս՝ յայրս՝ և յամուր վայրս տեսանել զվերջն թէ որպէս լինելոց է։

Եւ լուրս այս հասեալ եղև առ շահն ի Թարվէզ, յաղագս որոյ կարգեաց զօրավար զՂրաղ Սուլթանն և բազում զօրօք առաքեաց ի պահպանութիւն գաւառականացն Նախչուանու։ Եւ նա եկեալ եհաս ի Ջուղայ։ Իբրև զայն տեսին Օսմանցիք խափանեցան ի խորհրդոց իւրեանց։ Բայց թէպէտ ոչ առաւել՝ այլ զոր ինչ և կարացին Օսմանցիքն կողոպտել ի մերձակայ գեղօրէիցն, կողոպտեալ աւարեցին՝ և ժողովեցան ի Նախչուան։

Իսկ բնակիչքն Նախչուանայ եթէ սպայազօրք, և թէ ռամիկք՝ իբրև լուան զառումն Թարվիզու՝ և զվանումն որ անդէն զօրացն, և զայն ևս՝ որ հանդերձեալ են Պարսիկք գալ ի վերայ իւրեանց, իբրև զջուր լեալ յերկիր հեղան, լքան ի սիրտս, և լուծան ի ձեռս։ Իսկ այն զօրքն Օսմանցւոց, որք փախեան ի Թարվիզու և եկին ի Նախչուան, ոչ կարացին մնալ անդէն՝ և կալ ընդդէմ, այլ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ ի սիրտ և յոգի, հապճեպ տագնապաւ ելին ի Նախչուանայ՝ և ժամանեալ անկանէին ի քաղաքն Երևան։ Եւ ի հարա-

ւային կողմն բերդին Երեւանայ կից ընդ նմա պատեցին պարիսպ և շինեցին միւս եւս բերդ, և մտին ինքեանք ի ներս պատերազմական զինուք։

Եւ ի տագնապելի յաւուրս յայսմիկ, ազգն Օսմանցւոց՝ որք պարտք էին տուեալ Դաւիթ կաթուղիկոսին և Մելքիսէթ կաթուղիկոսին, կալան զԱրապիոն կաթուղիկոսն և ի նմանէ պահանջէին զինչս իւրեանց՝ ասելով, պարտք մեր ի վերայ Աթոռոյն է՝ որոյ դու այժմ յաջորդ ես և կաթուղիկոս, և քեզ հարկէ զի դու վճարեսցես մեզ։ Եւ նա թէպէտ բազում բանս արդար[1] իրաւամբք տայր պատասխանի նոցա,[2] սակայն նոցա ոչ լինէր լսելի։ Նաև կամէին զնա եւս առնուլ ընդ ինքեանս ի բերդն, բայց ողորմութիւնն Աստուծոյ օգնեաց. զի ոմանց յոլով և ոմանց սակաւ ետ ինչս՝ և զերծաւ ի ձեռաց նոցա, որ ոչ առին ի բերդն, և մնաց ի գաւառին մինչև եկն շահն յԵրեւան։

Եւ անտի ի Թարվիզու Շահաբաս նախ քան զինքն առաքեաց զՋըլֆիղար խանն ի Նախչուան կալ անդէն, և տիրել քաղաքին մինչ ինքն գայցէ, որ և գնացեալ Ջըլֆիղար խանն՝ արար այնպէս։ Եւ եկեալ մերձ բերդին Նախչուանու բանակ եդեալ նստաւ, այնքան մերձ, որ թէ թֆանք (հրացան) ձգէին հասանէր։ Յաղագս որոյ ասացին բարեկամքն Ջլֆիղար խանին ցնա, թէ զգուշութեամբ պահեա զքեզ՝ զի մի Օսմանցիքն թֆանքով հարցեն զքեզ։ Որոց արարեալ պատասխանի ժըպտելով՝ և զՕսմանցեօքն եպերանս առնելով, թէ թֆանք նոցա յաչս իմ պատահեսցի։ Ապա յաւուրն երկրորդի առաքեաց պատգամս առ իշխանս քաղաքին Նախչուանու, թէ մի ձգէք թֆանք կամ նետ, զի ես սակաւ արամբք գամ առ ձեզ խօսիլ ընդ ձեզ բանս ինչ իրա-

1 Ոսկ. ձեռ. արդար.—2 Նոյն. ձեռ. նոցա.

ւամբ և դատաստանաւ։ Եւ առեալ ընդ իւր այս քսան՝ ելեալ ի բանակէն հետևոտս գնաց ի քաղաքն, և հասեալ ի դուռն քաղաքին նստաւ անդէն, իբրև ժողովեցան առ նա ամենայն իշխանք քաղաքին. յայնժամ Զըլֆիղար խանն սկսաւ ասել իշխանացն Օսմանցւոց. արդ ուրո՞յ յուսոյ և կամ որո՞ւմ աւուր սպաս կալեալ մնայք, զի ո՛չ թէ ես եմ եկեալ պատերազմիլ ընդ ձեզ, և կամ թէ նման ինձ խան մի, այլ ինքնակալ թագաւոր բազում զօրօք եկեալ զհայրենի աշխարհն իւր խնդրէ։ Եւ դուք որո՞վ զօրութեամբ կարէք ընդդիմակայել և պատերազմիլ ընդ նմա։ Արդ՝ բանս բարեկամի ասեմ ձեզ, զի ինձ այսպէսն գոլ բարի թուի, և թէ ձեզ ևս բարի թուի՝ արդէն իսկ ելէք դուք ամենեքեան ձերովք ընտանեօք և ընչիւք և խաղաղութեամբ գնացէք, և մի յամառեալ դիմադարձիք և պատերազմիք, զի մի գուցէ յաղթեալ պարտիցիք՝ և մատնիցիք դուք ի սպանումն, և ընտանիք ձեր ի գերութիւն, և ինչք ձեր յաւար։

Յայնժամ հաւանեալ բանից նորա իշխանքն և ազգն Օսմանցւոց, խնդրեցին ի նմանէ աւուրս ժամադրեալ՝ յորս ելանիցեն ի քաղաքէն, և խանն արար այնպէս։ Այնուհետև սկսան ամենայն ազգն Օսմանցւոց ելանել ի քաղաքէն Նախչուանայ՝ և բանակ եդին ի կողմն ինչ քաղաքին՝ մինչ որ ամենեքեան ժողովեցան անդ։ Եւ մինչ ելանէին Օսմանցիքն ի քաղաքէն, յայնժամ[1] եկին զօրականք ի զօրացն Ղզլպաշին՝ և կացին ի դրան քաղաքին, միայն զթֆանք եղեալ զէնն առնուին յՕսմանցւոց՝ և ո՛չ այլ ինչ, և բաց ի նմանէ[2] զամենայն ինչս և զզէնս իւրեանց առեալ Օսմանցւոցն գնային։ Եկին բազում արք ի զօրականաց քաղաքին առ խանն

---

1 Ոսկ. չէ. յայնժամ։—2 Նոյն. յայնմանէ.

Ջըլֆիղար, և ասացին. սոցա ոյք ելանեն ի գնալ՝ ոչ են բնիկ բնական ի քաղաքէ աստի՝ վասն որոյ և գը-նան, իսկ որ մեքս եմք[1] բնական ի քաղաքէս եմք, և ոչ կամիմք գնալ աստի, մինչև ցարդ տէրութիւն և իշ-խանութիւն խոնդքարին էր, նմա ծառայէաք, արդ՝ ո-րովհետև եղև տէրութիւն և իշխանութիւն Շահաբա-սին՝ կամիմք աստէն կալ և մնալ՝ և նմա ծառայել: Եւ առ այս բան յոյժ հաւանեցաւ խանն, սիրով և գթով ընկալաւ զնոսա՝ և հրամայեաց այնպէս լինիլ, որև ե-կեալ զինուորացն վաղվաղակի հանին զՕսմանցւոց ձեռն յինքեանց, և հարթեցին զերկայն մօրուսն իւրեանց՝ և զգեցան զկերպս Ղզլպաշի, և եղեն որպէս զբազմաժա-մանակեայ Ղզլպաշք: Այլև հրամայեաց խանն ելանել մունետիկ՝ և բարձրաձայն քարոզել ի մէջ քաղաքին, թէ այսուհետև եղև տէրութիւն և իշխանութիւն[2] և աշ-խարհակալութիւն շահին. ով ոք սիրէ զշահն կացցէ աստ անհոգութեամբ. և ով ոք կամի գնալ՝ գնասցէ խաղաղութեամբ զճանապարհս իւր: Եւ կացին այսու աւանդութեամբ մնացեալ ալք քաղաքին. մինչ որ եկն շահն ինքն ի Նախչուան:

Եւ ինքն շահն մինչ էր ի Թաւրէզ՝ յոյժ շուտա-փոյթ ճեպով յարդարեաց զամենայն ուղխութիւն կող-մանցն այնոցիկ: Եւ իսկոյն հրամայեաց սպայապետաց իւրոց զի չու արարեալ գնասցեն դէպ ուղիղ ի քաղաքն Նախչուան:

Եւ ի գալն յորժամ հասին ի գիւղաքաղաքն Ջու-ղայ, ամենայն բնակիչքն Ջուղայու բազում, և զանա-զան, և պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հոգացեալ ելին ընդ առաջ շահին, որպէս վայել է թա-գաւորի: Իշխանք՝ և ծերք, և երիտասարդք՝ ի զարդ և

1 Ոսկ. չէ. որ եմք. — 2 Առեր. Երեց. չէ. իշխանութիւն:

ի շէնս ոսկէհուռն սխրատեսիլ հանդերձից պճնազարդեալք ընդ առաջ ընթանային։ Եւ նորաբողբոջ դեռահաս մանկունք սկի բաժակաւ զանուշահամ, և ազնիւ գինի մատուցանէին։ Լուցեալ մոմեղինօք և խնկօք և կնդրկօք քահանայք և մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով յարմարական ձայնիւ նուագէին։ Եւ զճանապարհս անցից ալքայի զարդարեցին. և յեղէրէ գետոյն մինչև ցապարանս խօջայ Խաչիկին արկին փայանդազ առալթուր թագաւորին, պատուական և վայելուչ կումաշս, որոց վերայ էանց թագաւորն՝ և գնաց ի տուն խօջայ Խաչիկին։ Եւ ի տան անդր, խոջայ Խաչիկն ոսկի սկուտեղ լցեալ ոսկւով եդեալ ի ձեռն որդւոյ իւրոյ մատոյց առաջի թագաւորին, նոյնպէս և ամենայն մեծամեծքն Ջուղայու մատուցին ընծայ, որպէս վայել է թագաւորի։ Եւ զաւուրս երեք եկաց անդ շահն, և Ջուղայեցիք պատուեցին զնա համազամ կերակրօք և ծաղկեհամ գինեաւ։

Իսկ վէշապն անդընդային Շահաբաս՝ որ իսկզբանէ զբարս օձի ունի [1] բնաւորեալ յինքեան [2] ընդդէմ քրիստոնէից, իբրև տեսանէր զայնքան հարստութիւն՝ և զբարեվայելչութիւն քրիստոնէից՝ մախայր. և զգայռէր ի սրտի՝ թէ զիարդ պատճառ և ժամ գտցէ նենգել զնոսա [3]։ Բայց առ ժամն ծածկեալ զթոյնսն առ երեսս սրտահաճուկ լինէր։

Եւ յետ երից աւուրց ելեալ ի Ջուղայոյ գնաց ի Նախչուան և մտեալ ի քաղաքն տիրէ Նմա առանց պատերազմի, և բնաւին իսկ թարց աշխատանաց, և կացեալ անդէն աւուրս սակաւս, և կարգեաց իշխանս և գործակալս յամենայն սահմանս նորա։

Եւ ինքն շահն յառաջ ելեալ ամենայն բանակաւն

---

1 Ոսկ. ունիւր։—2 Ա–եփ. երեր. յինքն։—Նոյն. Նոցա.

իւրով զեռալ՝ խաղալ՝ գնալ ի վերայ քաղաքին Երևաւանու. և իբրև եհաս յԵրևան, պատեալ պաշարեաց զբերդն շուրջանակի. և ամենեքին առանց իմիք վտանգի և աշխատանաց նստեալ կայր ի վերայ նորա, քանզի գշրջակայ երկիրն ընդ իւրով իսկ հրամանաւն ունէր գրաւեալ՝ որ էր չէն և լի ամենայն բարեօք՝ ուստի լցեալ լինէր ամենայն պիտոյք բանակին Պարսից, մարդկան և անասնոց. և այսպիսի հանդարտութեամբ զտեղի առեալ կայր. էր զի երբեմն խստագոյնս պատերազմէր, և էր զի թուլագոյնս. և էր երբեմն զի բանս խաղաղութեան դաշանց և ուխտի՝ սուտ երդմամբ և պատիր բանիւք ի ներքս ի բերդն առաքէր, զի զբերդն միայն նմա տայցեն և ինքեանք առեալ զստացուածս իւրեանց խաղաղութեամբ գնասցեն յաշխարհն իւրեանց։ Բայց զօրքն Օսմանցւոց ոչ առնուին յունկն զբանս շահին, այլ տակաւին տևէին յուսով՝ զի գուցէ յուստեքէ[1] ժամանիցէ փրկութիւն նոցա։

Եւ յաւուրսս յայսոսիկ հրամայեաց շահն զօրացն Պարսից գնալ յերկիրն Արարատու՝ և յամենայն շրջակայ գաւառս նորա, հանել յամենայն տեղեաց արս՝ որ ասի ըռադաթ, եթէ ի քրիստոնէից իցէ, և եթէ մահմետականաց, որոյ և իցէ ազգաց,[2] ժողովել և բերել ի բանակն Պարսից, զի ընդ[5] զօրացն Պարսից մարտակից լիցին, զսիբայն քշել և այլ գործակցութեամբ օգնական լինիլ զօրացն Պարսից։ Եւ ի ժամ պատերազմին յորժամ երիշ (յարձակումն) առնէին և կամ զսիբայն ի վեր քշէին, զքրիստոնեայսն յառաջ խաղացուցեալ ընդդէմ հրոյ և սրոյ մատուցանէին, որովք կոտորեալք լինէին ազգն Հայոց յերկուց կողմանց՝ յառաջուստ յՕսմանցւոց՝ և յետուստ ի Պարսից։

1 Ոսկ. ուստեք.—2 Նոյն. չէ+. որոյ և իցէ ազգաց.—5 Նոյն. չէ+. ընդ.

Եւ յորժամ էառ շահն զԹարվէզ՝ և մինչ ինքն ևս անդ էր, անտի առաքեաց զԱմիրգունայ խանն ի Գանջայ՝ զի կացեալ անդ զդէմ ունիցի Օսմանցի զօրացն, զի մի յանկարծակի եկեալ վտանգ ինչ հասուսցանիցեն բանակին Պարսից։ Եւ նա գնացեալ ի Գանջայ եկաց ամիսս երկուս, և իբրև գիտաց թէ տկար են Օսմանցիքն՝ և ոչ կարեն զայն առնել, յայնժամ յերկրէն[1] Գանձակայ՝ ուր և կարաց հասանիլ, հրոյ ճարակ տուեալ և սրով մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ եած յԵրեւան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին Պարսից։

Այլև մինչ նստեալ էր շահն ի վերայ Երեւանայ բերդին և պատերազմէր, յայնժամ ետ զԵրեւանայ երկիրն Ամիրգունայ խանին՝ և զնա կարգեաց խան երկրին այնմիկ։

Եւ յորժամ եկն շահն յԵրեւան՝ ամենայն բնակիչք երկրին եկին յերկրպագութիւն և յողջոյն թագաւորին, և ընծայաբերք լինէին ըստ կարի իւրեանց։ Որև կաթուղիկոսն Սրապիոն եկեալ ընծայիւք երևեցաւ առաջի թագաւորին, և ի հարցանելն շահին թէ ո՞վ ոք է, և ուստի՞ է, պատասխանեալ եղև թէ կաթուղիկոսն է Հայոց՝ և է յերկրէն Համթայ։ Իսկ շահն անտես արար զնա՝ և ոչ խօսեցաւ ընդ նմա. վասն զի ոչ ընկալաւ զնա, զի կամէր զՄելքիսէթն կարգել կաթուղիկոս, որ ընդ իւր ունէր։ Եւ Շահխէվան (շահին սիրող) էր ձևացեալ[2]. իսկ Սրապիոն իբրև ետես թէ ոչ ընկալաւ զինքն շահն, ելեալ յԵրևանայ գնաց ի Ջուղայ՝ զի անտի գնասցէ ի տեղի իւր։

Եւ յաւուրսն յայնոսիկ հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբասն, կոչեաց զԴաւիթ կաթուղիկոսն,

---

1 Ուղ. զերկիրն։—2 Նոյն. ձե. շահիսևան էր ձևացեալ.

և զՄելքիսէթ կաթուղիկոսն առաջի իւր՝ և ասաց. սովորութիւն է թագաւորաց և կարգ, նաև յայտնի է ձեզ թէ որպէս երկիրս յառաջն Օսմանցւոց էր, և այժմ մեր [1] եղև, սոյնպէս և ամենայն ինչք և ստացուածք նոցա՝ որ անտէր մնացեալ են, պարտի լինիլ արքունական, այսինքն միրիմալի։ Արդ առ ձեզ գոն բազումք գանձք Օսմանցւոց՝ զոր դուք պարտք առեալ էք ի նոցունց, և պարտիք վճարել առանց իմիք պատճառի, քանզի պարտք են, [2] և վճար գանձուցդ ի գանձարանս արքունի պարտի լինիլ՝ քանզի ստացուածք Օսմանցւոց է. որպէս զերկիր նոցա կալաք, սոյնպէս և ամենայն ինչք նոցա միրիմալի պարտի լինել։ Եւ յորժամ դուք վճարէք ի գանձարանս արքունի, ես տաց ձեզ զթուղթ ազատութեան դիւանաւ և դատաստանաւ՝ թէ ես առի զամենայն գանձսն՝ զոր պարտ էին դոքա, և մի՛ ոք լիցի պահանջող ի սոցունց՝ զի ինձ վճարեցին։

Այս կաթուղիկոսքս վասն պարտուցն փախեան և ապաւինեցան ի շահն, զի թերևս շահն զնոսա ազատեսցէ ի պարտատեարցն. արդ այժմ շահն ինքն յառաջ ածեալ պահանջէ ի նոցունց զպարտքն, արդ այս [5] է օգնութիւն շահին յո՛ր ապաւինեցան նոքա։ Եւ կաթուղիկոսքն գիտացին զի ո՛չ զերծանին ի ձեռաց նորա. քանզի ծանեան զագահութիւն նորա, թէ կամայ և թէ ոչ, վճարեցին զամենայն պարտսն Շահաբասին ում ումեք և պարտ էին։ Եւ ի պատճառս այս յիշեալ եղև և Մրապիոն կաթուղիկոսն, վասն որոյ ասաց շահն ընդ կաթուղիկոսացն, ահա ես զոմն ի ծառայից իմոց այս անուն առաքեմ զկնի այնմ կաթուղիկոսին, և դուք ևս պատրաստեցէք զոմն այր ի ձեր կողմանէ, զի ընդ իմում առաքեալ առնս երթիցեն՝ և հասցեն նմա. և

---

1 Ա–Եր. երեց. մեզ. —2 Ո–ն. չէր. են. —5 Ա–Եր. երեց. այս.

որքան անկ է նմա առեալ բերցեն։ Եւ ի պատճառս այս, կաթուղիկոսքն զոմն ի պաշտօնէից իւրեանց ուղեւորեցին ընդ Թագաւորական ծառային զկնի Սրապիոն կաթուղիկոսին։ Եւ նոքա գնացեալ ի Ջուղայ գտին զՍրապիոն կաթուղիկոսն, ըմբռնեցին զնա, և արարին ի կալանս[1] և պահանջէին ի նմանէ գանձս յոլովս, Եւ նա թէպէտ ըստ կարին տայր, նոքա այնու[2] ոչ շատանային. այլ բարս տմարդիս և անագորոյնս յինքեանս բերեալ, ածեալ զՍրապիոն արկին ի վտանգս չարչարանաց՝ հարուածոց և գանից. և զպատուելին զայն այր՝ արարեալ յոյժ անպատիւ, մինչև ի գռեհի ի հրապարակի կախեալ յոտից բրածեծ առնէին զնա ուժգին՝ աւուրս յոլովս։ Իբրև ետես Սրապիոն թէ յոչ ուստեքէ դոյ ակնկալութիւն փրկութեան, բազում գանձս առեալ փոխ և ետ նոցա, մինչև լցան աչք նոցա գանձիւք և կաշառօք ըստ նմանութեան Յուդայի՝ և ապա թողին զնա։ Եւ նա զերծեալ ի նոցունց իբրև զգառն ի բերանոյ գայլոց, հազիւ ուրեմն ճողոպրեալ ի ձեռաց նոցա ելեալ ի Ջուղայոյ գնաց ի Վան քաղաք, թախծեալ ոգւով, և տրտմեալ սրտիւ, անմխիթար ոգով, և դառն հեծեծանօք. և անտի ի քաղաքն Ամիթ։ Եւ եկեաց տարի մի, և յերկրորդումն տարւոջ՝ վախճանի աստի մահուամբ՝ և յաւելու ի Տէր հանգստեամբ։ Եւ եղև վախճան սորա ի մերում թուականիս ՌԾԵ. ամի յապրիլի ամսոյ ԻԳ. և հանգուցին զնա ի տապանի անդէն յԱմիթ քաղաքի։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի՝ և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի ամէն։

Իսկ շահն մինչ նստեալ ի վերայ բերդին Երևանու պատերազմէր, ոչ դադարէր յաւերելոյ զաշխարհս, և գերելոյ զազգս Հայոց. քանզի առաքեաց զօրագլուխս

---

1 Ոսկ. ի կալանի.—2 Նոյն. չէ. այնու.

բազում զօրօք ի կողմն Արզրումայ որք գնացեալ աւերեցին զերկիրն Բասենու, և զԽնուսայ՝ և զդաշտն Արզրումայ՝ և զայլս ուրեք կարացին հասանել, քանդեալ՝ աւերեալ՝ այրեալ՝ և ապականեալ զերկիրն և զշէնսն, և զինչս և զստացուածս կողոպտեալ, և զարս սպանեալ, և զկանայս և զմանկունս գերեցուցեալ բերին յԵրևան ի բանակն իւրեանց։

Նոյնպէս և յերկիրն Արճիշու առաքեաց զօրս՝ որք գնացեալ արարին ըստ վերոյասացելումդ աւար և գերութիւն և ապականութիւն ազգին Հայոց ի ժամանակս ձմերայնոյ։

Այլև ի սոյն ժամանակի մինչ նստեալ շահն ի վերայ բերդին և պատերազմէր, եկն Ալահվէրտի խանն ի Շիրազոյ յԵրևան առ շահն, յորոյ գալստենէ բազում օգտութիւն եղև ազգին Պարսից։ Եւ շահն առաքեաց զԱլահվէրտի խանն ի վերայ քաղաքին Արծկէոյ, և պատճառ առաքելոյ զսա յԱրծկէ այս է։

Յորժամ էր Թուականն Հայոց ՌԽԹ. մեծ Սիմոն խանն Թագաւորին Վրաց ապստամբեցաւ յՕսմանցւոց տէրութենէն, և կոտորեաց զբերդապահ Օսմանցիսն. որք կային յերկիրն Վրաց։ Վասն որոյ հրաման եղև ի Սուլթան Մահմատ խոնդքարէն ի վերայ Ջաֆար փաշային՝ որ իշխան էր Թարվիզու, ժողովել զօրս բազումս և գնալ ի վերայ Սիմոն խանին։ Եւ ըստ հրամանաց Թագաւորին գնաց Ջաֆար փաշայն բազում զօրօք ի վերայ Սիմոն խանին։ Եւ եղև զի ըմբռնեալ եղև Սիմոն խանն ի ձեռս Օսմանցւոց, և Ջաֆար փաշայն ետ զՍիմոն խանն փաշայի միոյ, որում անունն էր Մահմատ փաշայ, տանել ի Կոստանդնուպօլիս առ խոնդքարն. և իբրև հասոյց այն Մահմատ փաշայն զսիմոն խանն առ խոնդքարն, և խոնդքարն պարգևեաց նմա խիլայ, զփաշայութիւնն Արզրումայ, և զՎանայ փաշայութիւնն ևս նմա

արփալըղ։ Եւ ըստ հրամանաց Թագաւորին եկեալ Մահմատ փաշայն յԱրզըրում վարէր զփաշայութիւնն։ Իսկ քաղաքն Վան և այլ շրջակայ ղասաբէքն, (գաւառ) ոչ հաճեցան յայս գործ, քանզի ծանր թուեցաւ նոցա թէ Վան քաղաք իւրովք բերդորէիւք այնքան նուաստացաւ՝ որ լիցի Արզրումայ արփալըղ, վասն որոյ և ոչ կամէին հնազանդիլ Մահմատ փաշային։ Իսկ Մահմատ փաշայն ելեալ յԱրզրումայ եկն ի Վան քաղաքն, և հաւանեցուցեալ զնոսա ի կամս իւր հնազանդեցոյց։ Եւ ելեալ անտի զի և զշրջակայ ղասաբէքն ևս հաւանեցուսցէ, և շրջելով կարգաւ մինչ և եհաս յԱրծկէ։ Իսկ իշխանն Արծկէոյ որում անունն այլուի Մահմատ փաշայ էր, ոչ կամեցաւ հնազանդիլ. այլ յործամ լուաւ զգալ նորա ժողովեալ զօրս բազումս, և կերակուրս յոլովս և մտեալ ի բերդն ամրացաւ, և ոչ հնազանդեցաւ՝ զի բերդն ամուր էր։ Իսկ եկող Մահմատ փաշայն պաշարեաց զբերդն և մարտ եդեալ ընդ նմա հզօրեղապէս մարտնչէր։ Եւ միւս Մահմատ փաշայն որ էր ի մէջ բերդին յաղագս զպատերազմն ի բաց մերժելոյ յինքենէ, խորհուրդ արարեալ ընդ համախոհս իւր, և առաքեաց զայս ոմանս յիւրոց հաւատարմաց՝ որ գաղտագողի գնացին Հասանին [1] առ շահն, որ յայն աւուրսն շուրջ զբերդիւն Երևանայ նստեալ պատերազմէր։ Առ որ հասեալ արքն ասեն ցնա. Թագաւոր, յաւիտեան կեաց, Մահմատ փաշայն՝ որ կայ ի բերդին Արծկէոյ, կամի շահիսէվան լինել և տալ զբերդն շահին. իսկ Վանայ փաշայն ոչ կամի զայս, այլ եկեալ պատեալ է զբերդն, և կամի յինքն գրաւել։ Վասն որոյ առաքեաց զմեզ Մահմատ փաշայն առ տէրութիւն քո, և խնդրէ ի քէն, զի զօրս առաքեսցես յօգնութիւն ինքեան զի փրկի ինքն, և զերկիրն և զբերդն տացէ զօրավարին քում։

---

1 Առեփ. Եբեց. Հասին.

Իսկ հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս հրամայեաց Ալահվէրտի խանին առնուլ զզօրս բազումս և գնալ յայն գործ. Եւ պատուիրեաց նմա, թէ տացեն զբերդն և զերկիրն քեզ, բարւոք է, տիրեսցես երկրին՝ և նստցիս ի բերդին. ապա թէ խաբէութիւն ինչ առնիցեն ընդ քեզ, և դու զոր ինչ վնաս կարիցես առնել նոցա, արասցես. և յետոյ զերկիրն գերեցուցեալ դարձցիս այսրէն։ Իսկ Ալահվէրտի խանն ելեալ յԵրևանայ գնաց յԱրծկէ. և Մահմատ փաշայն, որ զբերդն պատեալ էր իբրև լուաւ զգալ խանին, չուեալ անտի և գնաց յերկիրն Մշու։ Եւ խանն եկեալ յԱրծկէ սպասէր թէ բերդի միջի եղեալ Մահմատ փաշայն եկեալ առ ինքն զխոստմունքն կատարեսցէ։ Իսկ նա ո՛չ եկն առ խանն՝ և ո՛չ ետ զբերդն. այլև պատրաստեցաւ ընդ խանին ի պատերազմ։ Եւ խանն երիշ արար ի վերայ բերդին, և փաշայն զօրօք ելեալ ի բերդէն փախստական արարին զզօրս խանին՝ յառաջնում նուագին. և յերկրորդում նուագին՝ որ [1] կամէին երիշ առնել ի վերայ բերդին, կացոյց խանն դարանակալս՝ [2] պատուիրեաց դարանակալացն, թէ դուք ղօղեալ կացջիք ի դարանի այդր, և մեք գնացեալ կռուիմք ընդ բերդին՝ և յելանել բերդականացն մեք փախստական լինելով առաջի նոցա հեռացուցանեմք ի բերդէն։ Յայնժամ դուք յարուցեալ յետուստ կողմանէ և մեք յառաջուստ ի մէջ առեալ կոտորեսցուք զնոսա։ Իբրև այսպէս արարին, ի մէջ առեալ կոտորեցին զելեալ զօրսն ի բերդէն. և Մնացեալ զօրքն, որք ի մէջ բերդին էին փակեցին զբերդն և ո՛չ ետուն խանին։

Իբրև ետես խանն զամուր միտս բերդականացն թէ ո՛չ տան զբերդն, դարձաւ ի բերդէն՝ և յարձակեցաւ ի

---

1 Ուղ. յորժամ։—2 Աւել. Երեց. և.

վերայ գաւառաց աշխարհին, և զամենայն երկիրն Արծկէոյ հաւասար աւերեաց, և հրդեհ արկեալ այրեաց. և զամենայն արու արս կոտորեաց՝ և զինչս, և զստացուածս՝ զուստերս, և զդստերս և զկանայս յաւար և ի գերութիւն առեալ: Եւ եղեալ անտի եկն յարճէշ՝ և ի Բերկրի, և ի Վան. և յամենայն գաւառս նոցա արար այնպէս: Եւ որպէս տէր և իշխան գաւառին՝ որ առանց ահի և կասկածանաց շրջեսցի ի գաւառի իւրում, սոյնպէս և սա շրջէր, և քանդէր, և աւերէր զաշխարհսն, յորս և հասանէր: Եւ բազում աւուրս կացեալ ի տեղիսն. վասն զի ոչ ոք էր, որ կարէր ի դիմի հարկանել նմա: Եւ զոր ինչ կամեցաւ՝ և կարաց առնել՝ արար: Եւ ժողովեալ զամենայն գերեալսն, և հօրանս անդէոց, և ջոկս ոչխարաց, և երամակս ձիոց, իբրև մեծ և յորդեալ հեղեղ զամենեսեան վարեալ ածեալ բերեալ հասուցին յԵրևան ի լիութիւն բանակին Պարսից: Արդ՝ յայսմիկ[1] պատճառէ գնաց Ալահվէրտի խանն յԱրծկէ. որով գերեցան այսքան անձինք քրիստոնէից. զորոց թիւն ԻԳՌ. ասեն գոլ՝ թող զսպանեալսն:

Բայց զօրքն Օսմանցւոց որք էին ի մէջ բերդին Երևանու, որոց գլուխ էր Սայիտ փաշայն, և Սուլէյման փաշայն որդի Խտըր փաշային, քաջութեամբ զդէմ կալեալ արքային, և զօրացն Պարսից պատերազմէին. և դիմակաց եղեն յամիսս Ը. և յիններորդում ամսեանն՝ անճար մնացեալ ետուն զբերդն. քանզի մտախոհ եղեալ Օսմանցւոցն տեսանէին զի ոչ ուստեքէ գոյ նոցա ակնկալութիւն օգնութեան. ոչ ի քաղաքացն, որք շուրջ զիւրեամբք են՝ և ոչ ի Դրանէ թագաւորին իւրեանց, քանզի Դուռն թագաւորին խառնակ էր: Զի Սուլթան Մահմատ խոնդքարն մեռաւ ի նոյն ամի. և սորին որ-

1 Ոսկ. յայսպիսւոյ.

դին Սուլթան Ահմատն՝ զոր Թագաւոր կարգեցին՝ էր տղայ հասակաւ երկոտասան ամաց, Թագաւորն էր նոր, և այն ևս տղայ։ Այլև իշխանքն ոչ ունէին ընդ միմեանս սէր և միաբանութիւն, և ընդ տան Թագաւորին մտերմութիւն։ Այլև ապստամբ Ջալալիք բազումք և յոլովք էին յարուցեալ ի մէջ աշխարհին՝ որք աւերէին զքաղաքս և զերկիրս Թագաւորին. և նոքա այնու էին պատաղեալք՝ և ոչ կարէին օգնել զօրացն՝ որք յԵրևան։ Զայս Ջալալոց անուանքն յիշեալ եմք յառաջիկայդ ի մէջ ճառին, որ վասն սորին գրեալ եմք. և զորպիսութիւն Ջալալոցս գիտասցես զայն ճառն ընթեռնըլով։ Եւ համդերձ վերոյասացելովք պատճառովքդ և այլ ևս յոլովից նեղութեանց վասն [1], զոր կրեցին զօրքն Օսմանցւոց՝ որք պաշարեալք կային ի մէջ բերդին Երեւանու, նեղեալ և անյոյս լեալք յօգնողաց և ի փրկողաց՝ վասն որոյ [2] ետուն զբերդն զօրացն Պարսից։

Եւ յորժամ էառ շահն զբերդն, հրաման ետ մունետկաց քարոզել և հրատարակել ի մէջ բանակին Պարսից և Օսմանցւոց։ Հրաման է ի մեծ արքայէն Շահաբասայ, որ ոք սիրէ զայս աշխարհս՝ և զշահն, և կամիցի կալ ի հայրենիս իւր՝ սիրով կացցէ, և ի շահէն պատիւ և ընդունելութիւն գտցէ ըստ արժանւոյն. և որ ոք գնալ կամիցի յազգ և ի ժողովուրդ իւր, խաղաղութեամբ երթիցէ իւրովք ընչիւք և ստացուածովք։ Եւ Մայիտ փաշայն եղև շահիսէվան և խնդրեաց ի շահէն զիշխանութիւն և զվերակացութիւնն Իմամուռուղին. և ընկալաւ ի նմանէ զխնդրելին իւր. և գնաց ի Խորասան ի սպասաւորութիւն Իմամուռուղին։ Եւ Սուլէյման փաշայն խնդրեաց ի շահէն գնալ յազգ իւր. որև հրամայեաց շահն գնալ նմա։ Եւ նա ել ի գնալ՝ և ընդ

---

1 Ուխ. չէ+. վասն.—2 Նոյն չէ+. վասնորոյ.

նմա հինգ հազար հեծեալ՝ և բազում ևս ժողովուրդ։ Իսկ դիւանման զօրքն Պարսից գունդս գունդս ընթացեալք զհետ նոցա գաղտագողի գնացիւք ժամանեալք բախէին ի վերայ նոցա, զորս հարեալ սպանանէին, և զորս փախուցեալք ցրուէին և զինչս նոցա կողոպտեալ՝ դառնային ի բանակն իւրեանց։

Արդ այս ամենայն որ գործեցաւ ի Թագաւորէն Պարսից. և լուեալ ազգին Օսմանցւոց և Թագաւորի նոցա, որ ի Կոստանդնուպօլիս. միաբանեցան և նոքա՝ և շարժեցան ի գործ արութեան ելանել և զթշնամեաց ի դիմի հարկանել։ Որև կարգեցին զոմն գլուխ և սարդար, որում անուն[1] էր Սինան փաշայ՝ զոր մականուամբ Ջղալօղլի կոչէին որ գումարեաց զօրս բազումս՝ որովք ելեալ ի Կոստանդնուպօլսէ դիմեալ գայր յաշխարհս արևելեան։

Այլև յետ առման բերդին՝ հրամայեաց շահն թէ որքան ժողովուրդք որք ղարիպական են և պանդուխտք, և այնք ևս որք ի գերութենէ ազատեալք են, եթէ քրիստոնեայք իցեն, եթէ մահմետականք, եթէ Եբրայեցի. զոր բերին խաներն, որք գնացին յասպատակութիւն և յաւարառութիւն յիւրաքանչիւր գնացեալ տեղիսն։ Եթէ Ամիրգունա խանն որ եբեր ի Գանջու երկրէն։ Եթէ Ալահվէրտի խանն, որ եբեր յԱրծկէոյ, և յԱրճիշոյ, և ի Բերկրու, և ի Վանայ։ Եւ թէ[2] միւս խաներն,[3] որք միւսանգամ բերին յԱրճշու, ի Մանազկերտու, յԱլաշկերտու, և ի Մակուայ։ Եթէ միւս խաներն որք բերին ի Կարսայ, ի Կաղզուանայ, ի Բասենու, յԱրզրումայ, ի Խնուսայ. և զայլս զամենեսեան՝ որք յայլ ուստեքէ լեալ էին. զսոսա զամենեսեան հրամայեաց զի խոյզ արարեալ գտցեն յերկրին Երևանու. զամենե-

---

1 Ոմն. անուամբ.—2 Նոյն. եթէ.—3 Նոյն. խանքն.

սեան վարեսցեն յաշխարհն Պարսից։ Որ և փութով կատարեցաւ հրամանս այս. զի որքան [1] կային այնպիսի ժողովուրդք, զամենեսեան վարեալք քշեցին յաշխարհն Պարսից։

Այլև յորժամ շահն էառ զԹարվէզ՝ և մինչ անդ ի Թարվէզ էր. հրաման արար զանդ եղեալ ղարիպականսն քշել յաշխարհն Պարսից. և արարին այնպէս։

Եւ յորժամ ելեալ [2] ի Թարվիզու եկեալ էանց ընդ Նախջուան և եկն յԵրևան. լուան ղարիպականքն Նախջուանու թէ շահն զղարիպականսն Թարվիզու քշեց [3] տարաւ ի Պարսից աշխարհն։ Լաւ իմն գործ զայն ինքեանց համարեցան. ոմանք ի նոցանէ եկին յԵրևան և ծանուցին շահին թէ մեք ևս շահիսէվան եմք՝ և կամիմք գնալ յաշխարհն Պարսից։ Եւ շահն վասն հաճելոյ զմիտս նոցա՝ և զնոցին նման անմտացն պատրելոյ. հրամայեաց խլլաթ (պարգև) տալ նոցա [4] և ետուն հինգ խլլաթ. և կարգեաց ի վերայ նոցա վարիչս՝ որք տարան զնոսա ևս յաշխարհն Պարսից»

Եւ այս ամենայն եղեալ է ի մէջ երկուց ամաց. վասն զի գալն Սրապիոն կաթուղիկոսին յէջմիածին և լինելոյ կաթուղիկոս. և ի նոյն ամի գալն շահին և առնելոյ զԹարվէզ՝ և զՆախջուան՝ և զԵրևան, և դառնալոյ Սրապիոնին ի տեղի իւր, և այլ բանք՝ զոր յայսմ ճառի պատմեցաք, ի մէջ երկուց ամաց եղեալ է, որ էր Թուականն մեր ՌԾԲ և ՌԾԳ։

---

1 Առեթ. երեց. և.—2 Ոսկ. ել.—3 Նոյն. քշեալ.—Նոյն. չէ. նոցա.

Գլ. Դ.

Յաղագս առաջին գալոյ Ջղալողլւոյն, յորոյ պատճառէ քշեաց շահն բոլորովին[1] բովանդակ զերկիրն Արարատու և զնորին մերձակայ սահմանակից երկիրսն ընդ նմին։

Եւ յետ կատարելոյ այս ամենայն[2] գործոց և իրակութեանց՝ զորս արար շահն, չուեալ այնուհետև յԵրևանայ ամենայն բանակաւն իւրով յառաջ խաղաց գնալ ի վերայ քաղաքին Կարսայ առնուլ և զայն ևս։ Եւ իբրև եհաս ի գաւառն Շիրակվանայ, և ընդ բազում համբաւոյ գալոյ Ջղալօղլւոյն, զոր հանապազ բերէին գնացեալ լրտեսքն[3], անդէն եկին այլ ևս լրտեսք՝ և բերին ստոյգ համբաւ թէ, ահաւասիկ եկեալ Ջղալօղլին եմուտ ի գաւառն Կարնոյ՝ որ է Արզրում։ Իբրև լուաւ շահն զայս համբաւ, դարձոյց զերեսս իւր՝ և

1 Ոսկ. զբոլոր։—2 Նոյն. այսց ամենից։—3 Նոյն. չէ. զոր հանապազ բերէին գնացեալ լրտեսքն։

եկն յԵրուանդակերտն հին, որ այժմ ասի Աղջաղալայ։

Եւ զօր ի վաղ[1] ժամանակաց ունէր ի մտի գքշել ազգին քրիստոնէից՝ և զաւերելն աշխարհին Հայոց՝ անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց։ Քանզի գիտէր ի միտս իւր՝ թէ ոչ կարէ պատերազմաւ զդէմ ունիլ Սինան փաշային՝ այսինքն Ջղալօղլի Սարդարին. վասն որոյ հրամայեաց զամենայն բնակիչս աշխարհին Հայոց, եթէ քրիստոնեայս, եթէ հրէայս, եթէ մահմետականս, քշել յաշխարհն Պարսից։ Զի եկեալ Օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ։ Եւ ոչ գտցի կերակուր և ռոճիկ և այլ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն Օսմանցւոց։ Նաև տարեալ ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատուք՝ ծառայք. և հողագործք մինչև ցյաւիտեան։ Եւ նա մինչ ի վարանս խորհրդոց կայր, լուաւ թէ Ջղալօղլին ել[2] ի Կարնոյ. յայնժամ կոչեաց առաջի իւր զմեծամեծս երկրին Հայոց՝ և զինքն կեղծաւորաբար ցաւակից ցուցանելով ազգին Հայոց. ասէր ընդ մեծամեծս և ընդ աւագսն Հայոց։ Լուայք թէ եկեալ է Ջղալօղլին՝ և ահաւասիկ գայ մտանէ յերկիրս ձեր անհուն զօրօք։ Նաև ի մերս կողմանէս անթիւ են զօրք. և գիտէք՝ զի բազումք գոն ի սոսա յերկոսին կողմանս յայսպիսում ժամանակի արք դառնացողք հոգւով՝ ելուզակք, և աւազակք, և սրիկայք, և զորոց ոչ գիտեմք զոմն և զուստին. գուցէ ոմանք ի նոցանէ որք[3] անփոյթ արարեալ իցեն զկենաց իւրեանց՝ և զհրամանաց իշխանաց, յանկարծակի ի վերայ բախեալ հարկանիցեն զմասն ինչ երկրի՝ և զժողովրդեան ձերոյ՝ կամ ստացուածոց՝ կամ ընտանեաց, աւարումն արարեալ՝ առեալ ի բաց ճողոպրիցին, և լինիցի ժողովուրդն

1 Ուղ. վաղուց.—2 Աւետ. Երեւ. ելաւ.—3 Նոյն. չէ+. որք.

ձեր ի կորուստ և ի գերութիւն։ Վասն որոյ ողորմեալ ձեզ՝ հնարիմ փրկել զձեզ այսու կերպիւ. զի գաւառականք՝ և բնակիչք երկրի ձերոյ ելեալք ի տեղեաց իւրեանց սակաւ ինչ յառաջ խաղացեալ գնասցեն աւուրց ինչ ճանապարհ. և մեք աստէն զդէմ կալեալ պատերազմիմք [1] ընդ Օսմանցիսն. և եթէ մեզ տացէ Տէր, յայնժամ դառնայք ի տեղիս ձեր՝ և լինիք մեզ ի ժողովուրդք, և եթէ նոցա տացէ Տէր, մեք զանց արարեալ գնամք, և դուք դառնայք ի տեղիս ձեր՝ և լինիք նոցա ի ժողովուրդք։ Զայս իբրև ասաց շահն ընդ աւագանիսն Հայոց՝ որոց գլխաւորի անունն Տէր Յովանէս՝ որ պերճական մակադրութեամբ անուանէին աղայ տէր տէր։ Եւ նոքա ծանեան զդաւաճանեալ նենգութիւնն, և ոչ հաճեցան ի բանս նորա, այլ պատճառելով պատճառս, մատուցեալ առ նախարարս շահին ասացին։ Ահա ժամանակս աշուն է. քանզի յետ տօնի սրբոյ խաչին էր, յորժամ քշեցին զերկիրն, ամենայն բնակիչք երկրիս չունին պատրաստութիւն ճանապարհիս գրաստ և այլ բեռնակիր, առ ի բառնալ զստացուածս և զմանկունս. զի թէպէտ ժիրքն և կարօղքն հետիոտս գնայցեն. իսկ ծերքն և մատաղ մանկտիք ոչ կարեն գնալ։ Վասն որոյ խնդրեմք յարքայէ այժմ ներել մեզ. այլ զայդ հրաման յաջողելովն Աստուծոյ ի գարունն կատարեսցուք. զայս տսէին, զի թերևս անցցէ ժամն ի նոցանէ,

Իսկ աւերիչն աշխարհաց՝ և վատնիչն քրիստոնեայ ազանց՝ բնակարանն Նեսարայ՝ Թագաւորն Շահաբաս ոչ անսաց բանից Հայոց։ Այլ կոչեաց զնախարարս իւր առաջի իւր, և կարգեաց ի նոցանէ վերակացուս՝ և վարիչս բնակչաց երկրին, իւրաքանչիւր գաւառաց՝ իւրա-

---

1 Ոսկ. չէ+. պատերազմիցիմք.—2 Նոյն. լինիցիք.

քանչիւր իշխան իւրովք զօրօք վարող և քշող ժողովրդեանն։

Եւ զԱմիրգունայ խանն՝ յատուկ քաղաքին Երևանայ և երկրին Արարատու, և նորին մերձակայ մասնաւոր գաւառացն։ Եւ հրամայեաց նոցա շահն, ուր և կարասցեն ձեռն արկել, արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամենևին շունչ կենդանի, եթէ քրիստոնեայ և թէ մահմետական, զհաւանեալսն [1] բանիւ, և զոչ հաւանեալսն [2] և զստունգանողսն հրամանաց թագաւորին, սրով՝ և մահուամբ՝ և գերութեամբ։

Եւ զօրապետացն՝ յետ ընդունելոյ զայսպիսի զաշխարհակործան և զսաստիկ հրաման ի թագաւորէն, ելեալ իւրաքանչիւր զօրավար իւրով գնդաւն՝ դիմեցին յիւրաքանչիւր հրամայեալ գաւառսն աշխարհիս Հայոց. և իբրև հողմնախառն հուր ընդ եղէգն ընթացեալ, հապճեպ տագնապաւ վաղվաղակի զամենայն բնակիչս գաւառացն կորզեալք յիւրաքանչիւր բնակութեանց, և արտասահման արարեալ յիւրաքանչիւր տեղեաց, իբրև զջոլիրս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ [3] հասուցին ի գաւառն Արարատու, և զլայնանիստ դաշտն նորա լցին ծագէ ի ծագ. քանզի ի ստորոտէ լերանցն Գառնւոյ մինչ ի յեզրն Երասխայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին. իսկ զերկայնութիւնն դովիմբ կըշռեաց դու, բայց ես ասեմ աւուր միոյ ճանապարհ. և յայլուր տեսի՝ որ հինգ աւուր ճանապարհ էին գրեալ։ Եւ էր նոր փոխեալ թուականն Հայոց և մտեալ ի ՌԾԴ. յառաջնում ամսեանն Հայոց Նաւասարդի. որ քշեցին

1 Ոմն զհաւանողսն։—2 Նոյն. հաւանողսն։—3 Նոյն. չէ. բերեալ.

զերկիրն։ Եւ Պարսիկ զօրքն, որք գնացին ի քշել զերկիրն. ուստի և հանեալ զժողովուրդսն քշէին, եթէ ի գեղօրէից և թէ ի քաղաքաց, զամենայն շէնս, զտունս և զբնակութիւնս հուրբ այրեալ անխնայաբար հրկէզ առնէին։ Այլև զհամբարս խոտոյ և զյարդի՝ ցորենոյ և զգարւոյ և զայլ[1] պիտոյից, զամենայն այրեալ վատնէին։ Այսպէս աւերեալ թափուր արարին զաշխարհն վասն զօրացն Օսմանցւոց՝ 'զի մի՛ մնասցէ ինչ ռոճիկ նոցա, և վտանգեսցին նոքա։ Այլև եղեալ ժողովուրդքն զայն տեսեալ սրտակտուրք լիցին, և մի դարձցին յետս։

Արդ՝ զօրքն Պարսից որք կարգեցան վարիչք ժողովրդեանն. մինչ վարեալ զժողովուրդսն բերեալ հասուցին ի դաշտն Էջմիածնի, Շահաբասն ի յԱղջաղալէն էր. և Սարդարն Օսմանցւոց Ջղալօղլին իւրովք զօրօքն եհաս ի Կարս։ Եւ Շահաբասն գիտէր, որ[2] ոչ կարէր դէմ յանդիման պատերազմաւ դիմակայիլ Օսմանցւոցն, զանգիտեալ ի բազմութենէ նոցա, վասն որոյ[3] դարձուցեալ զերեսս իւր չուեաց ամենայն բանակաւն իւրով՝ հետևեալ զհետ բանակի ժողովրդեանն դէպ յերկիրն Պարսից։ Նաև զօրք Օսմանցւոց չու արարեալ հետեւեցան զկնի բանակին Պարսից։ Եւ եղեն երեք բանակք մեծամեծք և անհունք. առաջին՝ բանակն ժողովրդեանն, երկրորդն՝ բանակն Պարսից, Երրորդն՝ բանակն Օսմանցւոց։ Եւ այնպէս դիպեցաւ պատահումն՝ զի յորժամ չուէր բանակ ժողովրդեանն, իջեալ բանակէր ի հանգըրուանս նոցա Շահաբասն զօրօքն Պարսից. և ի չուելն նոցա բանակէր ի նոյն տեղին Ջղալօղլին զօրօքն Օսմանցւոց, և այսպէս զհետ միմեանց կրնկնակոխ գնալով գնացին, մինչև հասին ժողովուրդքն և Պարսիկքն ի գեղն Ջուղայ, և Օսմանցիքն հասին ի Նախչուան։ Եւ

---

1 Ուղ. այլոց. — 2 Նոյն. զի. — 3 Նոյն. չէ+. վասն որոյ.

այնուհետև ոչ թողացուցին Պարսիկքն ժողովրդեանն զկայ առնուլ՝ և ոչ ժամ մի, այլ կարի սաստիկ տագնապաւ նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով գանելով, և զոմանց զունչս և զականջս հատանելով, և զոմանց զգլուխն կտրեալ ի ձող ցցէին,[1] որպէս զեղբայր Առաքել[2] կաթուղիկոսին, որում անունն էր Յօհանջան, զսորա և զայլոյ ումեմն առն[3] զգլուխն կտրեցին, և ի ձող ցցեցին յեզր գետոյն Երասխայ. վայսոսիկ և առաւել քան զայսոսիկ[4] խոշտանգանս կտտանաց ածէին ի վերայ ժողովրդեանն, ի յահ և յերկիւղ ժողովրդեան և տեսողացն, զի փութանակի անցցեն զգետն: Զայս ամենայն վտանգս ածէին ի վերայ ժողովրդեանն խորամանկ ազգն Պարսից յահէ Օսմանցւոց, որք զկնի նոցա գային. վասն զի հայէին Պարսիկքն ի բանակն ժողովրդեանն զի անթիւք էին, նոյնպէս և յիւրեանց բանակն հայէին, զի յոլովք էին, և մինչ յանցանել այսքան բազմութեանս ընդ գետն, աւուրք բազումք ի վերայ անցանէին: Երկնչէին ի զօրացն Օսմանցւոց, թէ մի՛ գուցէ յայնքան աւուրսն յանկարծակի բաղխեալ ի վերայ բանակին Պարսից բեկումն ինչ և վնաս առնիցեն իւրեանց[5] և կամ զժողովուրդն յափշտակեալ ի նոցանէ յետս դարձուցանիցեն, և չար առաջարկութեան նոցա խափանումն լիցի: Վասն որոյ տագնապաւ ստիպէին զժողովուրդն անցանել զգետն:[6] Եւ ի բազմութենէն ոչ բաւ էր նոցա նաւ կամ տուփ որով անցցեն զգետն, թէպէտ և յայլ տեղեաց այլ ևս նաւս բերին, և անդէն ևս յոլով տուփ շինեցին, սակայն բանակն ժողովրդեանն՝ և բանակն Պարսից յոլովք էին, և տակաւին ոչ լինէր բաւական: Եւ ի զօրացն

---

1 Ուղ. ցցելով:—2 Նոյն. Առաքելոյ.—3 Նոյն. չէ. առնն.—4 Նոյն. զսոսա.—5 Նոյն. չէ. իւրեանց.—6 Նոյն. ընդ գետն.

Պարսից՝ որք վարիչք էին կարգեալք ժողովրդեանն, շրջապատեալ զժողովրդեամբն պահէին՝ զի մի՛ ոք փախիցէ, այլ և փայտիւ գանեալ՝ հարեալ՝ բեկեալ՝ մղեալ ի գետ անդր լնուլին. և այսպէս վտանգն և վիշտն սաստկանայր ի վերայ ժողովրդեանն։

Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին [1] յառաջ զանհուն գետն տեսանէին իբրև զծով՝ որ խեղդէր, և յետուստ զսուրն Պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր. և [2] առհասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաչաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ. և ձայն լալեաց, և հառաչանաց, ճչանաց, վայոց, կսկծանաց, մորմոքանաց ընդ միմեանս խառնեալ գոչեցուցանէին ուժգին աղաղակաւ. իսկ ողորմութիւն և փրկութիւն ոչ ուստեքէ էր։

Աստանօր կարի հարկիւ պիտոյ եղև մերում ժողովրդեանն հինն Մովսէս՝ և նորին աշակերտն Յեսու առ ի փրկել զնորս Իսրայէլ ի ձեռանէ երկրորդիս Փարաւոնի, և կամ դադարեցուցանել զուղխս յորդահոսան և լայնատարած գետոյն մեծի, և ոչ եղև գտեալ. քանզի յորդութիւնք մեղաց մերոց փակեցին ընդդէմ մեր զդուռն ողորմութեան գթածին Աստուծոյ։

Եւ անողորմ զօրացն Պարսից վարեալ զժողովուրդն լնուլին ի գետն, և նոքա ի մէջ գետոյն ևս քան զևս բազմացուցանէին զձայն աղաղակին [3] և զողբոցն [4] ի վտանգէն։ Եւ ոմանք ի նոցանէ կալեալ զեզերս նաւացն, և ոմանք զտփոցն, և ոմանք զագիս ձիոց՝ և զեզանց, և զգօմշոց, և ոմանք իւրովի լողեալք անցանէին։ Եւ որք անհմուտք էին լողելոյ և անզօրք, ծերք և պառաւունք, տղայք և աղջկունք, և մատաղ մանկտիք լցեալք

---

1 Ուն. ը՛. հայեցեալ.—2 Նոյն. որք.—3 Ուն. աղաղակաց.—4 Նոյն. ողբոց.

էին յերեսս ջրոյն. և գետն առեալ տանէր զնոսա իբրև զխռիւ ի ժամանակս գարնայնոյ. և գետատար մարդով ծածկեալ էր երեսն գետոյն, և թէպէտ անցին, որք անցինն, այլ բազումք այնք էին՝ որք հեղձմամբ ջրոյն մեռան։

Եւ հեծեալք ոմանք ի զօրացն Պարսից՝ որք ունէին ուժեղ ձիս, և ինքեանք այք արի և կարող, շըրջելով ի մէջ քրիստոնէից տեսեալ նկատէին զուստերս և զդստերս քրիստոնէից, և որոց հաւանեալ սիրտք իւրեանց, եթէ կանանց, եթէ աղջկանց, և եթէ տղայոց. էր զի խաբէին զտեարսն, թէ տուր՝ զի վասն քո անցուցից ընդ գետն յայնկոյս, և իբրև անցուցանէր, ո՛չ դնէր անդէն ի գետնի, այլ առեալ երթայր յո՛ և կամէր։ Եւ այլք գողութեամբ առեալ տանէին։ Եւ այլք յափշտակութեամբ և սպանութեամբ առեալ ի տեարցն տանէին։ Եւ բազումք մարք [1] զտղայս և տեարք զհիւանդս ի ճանապարհին ընկեցիկ արարեալ լքեալ [2] թողեալ գնային, վասն անհանդուրժելի և անըմբերելի վտանգին, որ ժամանեալ էր ի վերայ նոցա։ Եւ միանգամայն ասեմ՝ զի թշուառութիւնք՝ և արհաւիրք անտանելիք հասին ի վերայ ազգիս մերոյ, և ոչ բաւեմ թէ որով տարազու հիւսեցից ողբս դամբանականս և աշխարանաց ի վերայ բեկման հայկական սեռիս, որք այսքան չարակրութեանց եղեն ընդունակք։ Զի թէպէտ ըստ սարասի հնոյն Իսրայէլի լինէին վարեալք գերի ձեռամբ երկրորդիս Բաբելացւոց, այլ ոչ գոյր Երեմիա, որ խրատէր, և ո՛չ Եզեկիէլ, որ լուսաւորէր, և ո՛չ Յեսու կամ Զօրաբաբէլ՝ որ զդարձն առաջնորդէր, այլ եղեալք իբրև զհօտ անհովիւ ցրուեալք և հալածեալք առաջի գայլոց պատառողաց և զիշատող գազանաց, որք

---

1 Ոսկ. Մարդիկ.—2 Նոյն. ընթ. լքեալ.

վարէլին բանութեամբ։ Եւ նոքա երթալով երթային, և լային, որք բարձեալ տանէին զսերմանս իւրեանց։

Իսկ յաջորդ աւուրն, ոչ եղև տեսանելի՝ որ[1] ասէ, գալով եկեսցեն, և ցնծասցեն, վասն զի ոչ եկին և ոչ եղև ցնծութիւն, այլ անդէն մնացին ուր և տարեալ արգելլին այսինքն, յաշխարհն Պարսից։

Եւ եղև զի ամենայն ժողովուրդն էանց զգետն, էանց ընդ նոսին խառն և բանակն Պարսից։ Եւ մինչ ցայս վայր Ամիրգունայ խանն էր քշող ժողովրդեանն, և յայնմ վայրի Շահաբաս հրամայեաց նմա գնալ ընդ իւրում բանակին։ Եւ կարգեաց վարող ժողովրդեանն զԽալիֆալու Էլիազ սուլթանն, և հրամայեաց նմա փութով և ճեպով վարել զժողովուրդն՝ և հեռացուցանել ի զօրացն Օսմանցւոց՝ և հասուցանել յերկիրն Պարսից։ Եւ ինքն շահն ամենայն բանակաւն Պարսից ընդ արքունի ճանապարհն, այսինքն ընդ Ջաղահն յուղի անկեալ գնացին ի քաղաքն ի Թաւրէզ, բայց զժողովուրդն ոչ ընդ նոյն արքունի ճանապարհն տարան ի Թաւրէզ վասն երկիւղին Օսմանցւոց՝ զի մի գուցէ զկնի ժամանեալ յափշտակիցեն ի Պարսից[2]։ Այլ հրամայեաց շահն Էլիազ սուլթանին, զի ընդ նեղ և նուրբ և ընդ դժուարին վայրս տարցէ՝ ընդ որ ոչ կարասցեն գնալ բանակն Օսմանցւոց զկնի նոցա։ Եւ նա չուեցուցեալ զժողովուրդն տարաւ ընդ ճանապարհս ձորոյն՝ յորում[3] գետն Երասխ գնայ զգնացս իւր, ընդ դժուարին ել և էջս լերանցն, և ձորոցն, և ընդ կածան տեղիսն։ Եւ բազում[4] տառապանօք և չարակրութեամբ անցին զդժուարին վայրս լերանցն. և անցուցեալ զժողովուրդն զդժուարին վայրօքն, տարան յերկիրն, որ ասի Թա-

---

1 Ուն. որ.—2 Նոյն. յինքեանց.—3 Նոյն. որով.—4 Նոյն. բազմօք.

ռումխալխալ, և Ահար, և Մուշկուն, և ի մերձակայ վայրս սոցա, և անդէն զետեղեցուցին զնոսա ամիսս ինչ վասն սաստկասառոյց և դառնաշունչ ցրտոյ ձմերան՝ որոյ սակս ոչ կարէին գնալ։

Իսկ ի հասանել քաղցրաշունչ օդոյ գարնայնոյ, զայլ ոմն իշխան կարգեցին վարիչս ժողովրդեանն՝ որում անունն էր Աբութուրաբ բէկ, որ վերստին սկսաւ վարել զժողովուրդն մինչև տարեալ հասոյց ի քաղաքն Սպահան։ Եւ անդէն՝ որք քաղաքացիք էին, ի նմին քաղաքի զետեղեցուցեալ բնակեցուցին, և որք շինականք էին և գեղականք՝ ի շրջակայ գաւառսն քաղաքին Սպահանու բնակեցուցին՝ ի Լնջան, և յԱլնջան, ի Գանդիման, և ի Ջղախոռ, ի Փարիայ, և ի Բուրվարի. և [1] անդէն բնակեցան, և կացին [2] մինչև ցայսօր։ Քանզի արքն հին, որք յաշխարհէն Հայոց էին գնացեալ և գիտէին զվայելչութիւն աշխարհին Հայոց, նոքա մեռան անդէն. և որք անդ ծնան, և սնան, և վարժեցան, նոյն աշխարհին և հաճեցան և ընդելացան, զի նովաւ վարժեցան. վասն որոյ անդէն կացին և մնացին մինչև ցայսօր։

Այլև յայսմ ժողովրդենէս Հայոց՝ զոր տարան ի Սպահան։ հինգ հարիւր տուն բաժանեցին և տարան ի Սպահան, հինգ հարիւր տուն բաժանեցին և տարան յերկիրն Շիրազու, և անդ բնակեցուցին։ Քանզի Ալահվէրտի խանն, որ էր տէր Շիրազու՝ խնդրեաց ի Շահաբասէն շնորհել նմա մասն ինչ յազգէն Հայոց վասն բարեմտութեան և հաւատարմութեան ազգին Հայոց, զի լիցին նմա ի ժողովուրդ. և Թագաւորն շնորհեաց նմա զխնդիրն, և նա տարեալ բնակեցոյց ի գաւառն Շիրազու։

Դարձեալ դարձցուք ի սկիզբն պատմութեանս մերոյ. զի յորժամ հրամանաւ Թագաւորին հանդերձեցաւ

---

1 Ոմն. չէ. և.—2 Նոյն. մնացին.

Ամիրգունայ խանն քշել զերկիրն Արարատու, առաքեաց զմասն ինչ ի զօրաց իւրոց ի գաւառն Գառնւոյ՝ զի զնոսա ևս չուեցուսցեն, ածցեն, խառնեսցեն ի չուս ժողովրդեանն։ Իսկ գնացեալ զօրքն նախ մտեալ ի նոյն ինքն ի գիւղն Գառնի, և ոչ ըստ հրամանաց Թագաւորին առնէին, այլ որպէս զգերեվարս և աւարառուս սկսան յափշտակել զինչս և զզաւակս քրիստոնէից։ Եւ զայն տեսեալ բնակչաց գեղջն ձայն տուեալ միմեանց՝ և արարեալ ամբոխ մեծ, սրով և բրով՝ քարիւ և փայտիւ հարեալ վիրաւորեալ կառափնատեցին զնոսա՝ և ի բաց վարեցին յինքեանց, և ինքեանք անդէն կացին անհոգ իբր ի ժամանակս Մօրկայ, և ոչ փախեան յայլ ուրեք. և ոչ գնացին առ խանն ծանուցանել զյափշտակութիւն նոցա։ Իսկ հալածական զօրացն գնացեալ առ Ամիրգունայ խանն՝ սկսան ամբաստան լինել զժողովրդենէն՝ և մեծամեծ վնասս ի վերայ նոցա յօդել։ Որոյ սրտմտեալ բարկութեամբ մեծաւ, առեալ ընդ իւր զօրս յոլովս եկն ի գաւառն Գառնւոյ, և նախ զնոյն Գառնւոյ գեղջ զարսն ըմբռնեալ էարկ ի խոշտանգանս չարչարանաց հարմամբ գանից, և հատմամբ յօդից, և իսկոյն չուեցուցեալ ետ ի ձեռս զօրականաց իւրոց տանիլ խառնել զնոսա ի չուս ժողովրդոցն ի մեծ բանակն։ Զոր և տարեալ խառնեցին ի չուս ժողովրդեանն, որք ընդ նոսին գնացին յաշխարհն Պարսից։ Եւ անդէն ի Գառնի ազդեցին Ամիրգունայ խանին, թէ կան և այլք գիւղք ի գաւառիս Գառնւոյ, որք ամրացեալք են յամուր վայրս լերանց երկրիս՝ յայրս և ի ծերպս քարանձաւաց։ Եւ յանուանէ յիշեցին զՄանուէլ եպիսկոպոսն Հաւուց Թառայ վանիցն, և զԱստուածատուր եպիսկոպոսն Գեղարդայ վանիցն, թէ մտեալք են յայս նիշ այրս և անդ ամրացեալք։ Քանզի սոքա երկոքին եպիսկոպոսքս, յորժամ լուան զքշելն երկրին, հոգացին զպէտս կարեաց

կարեւոր իրաց [1] կերակրոց և ըմպելեաց, և առեալ զայս ոմանս ի մերձաւորաց իւրեանց կարգաւորս և աշխարհականս՝ և նոքումբք երեալք գնացին ի ձորն Գեղարդայ՝ և մտեալ յայր մի քարանձաւացն դադարեցին։ Քանզի բազումք գոն ի ձորն Գեղարդայ փորուածուայրք և ամրոցք ի հին ժամանակաց։ Եւ ի լսելն զայս Ամիրգունայ խանին առեալ զզօրսն՝ որք ընդ իւրն էին՝ և եկն ի ձորն Գեղարդայ, և ինքն եկեալ եկաց առաջի այրին յորում էին եպիսկոպոսքն. և ձայնեալ ի բարձունս խօսէր ընդ նոսա խաղաղութեամբ գալ ի հնազանդութիւն հրամանաց Թագաւորին։ Իսկ նոքա բանս տգեղս անարգանաց, հայհոյանաց, և [2] եպերանաց անտի ձայնեալ ասէին խանին, այլ և զքար և զնետ արձակեալ ձգեցին դէպ առ խանն։ Իսկ խանն իբրև ետես թէ խաղաղութեամբ ոչ գան ի հնազանդութիւն, յայնժամ հրամայեաց իւրոց զօրացն՝ զոր ինչ կարեն առնել արասցեն։ Եւ ի զօրականաց խանին արք ոմանք քարագնացք ելին ի գլուխ լերինն, յորում էր այրն, և ունելով զժայռս քարանցն իջին մինչ ի կողմն ինչ դրան այրին հնարաւոր գնացիւք։ Եւ եկեալ ոմն ի քարագնաց տաճկացն եկաց ի դուռն այրին՝ յորում էր Մանուէլ եպիսկոպոսն, և հայեցեալ ի ներքս ետես զեպիսկոպոսն նստեալ, և բարբառով տաճկաց նախ ողջոյն ետ եպիսկոպոսին իսկ եպիսկոպոսն ոչ կարաց պատասխանել ինչ՝ այլ [5] ափշեալ մնաց, և տաճիկն արիացեալ սրտով և գործով՝ եմուտ ի յայրն, և իսկոյն զվաղակաւորն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր, արտաքարշեալ եհար՝ և սպան զեպիսկոպոսն անդէն. և կտրեալ զգլուխն էարկ ի վայր առաջի խանին։ Եւ ապա այլոց ևս զօրացն Պար-

---

1 Աւետ. Երեւ. չէ. իրաց.—2 Նոյն. չէ. և.—5 Աւետ. Երեւ. քանզի.

սից արիացեալ փութանակի ելին յայլն, և զայլ ևս ընկերս եպիսկոպոսացն կալեալ իջուցին ի վայր առաջի խանին, և սպանին զամենեսեան անդէն։ Եւ ապա ի նոյն ձորն մեծաւ յուզմամբ խոյզ արկեալ ուռնեցին՝ և զամենայն[1] գաղթականսն, որք ի խոռոջս և ի ծակս վիմացն թաքուցեալք էին՝ զամենեսեան գտին, զինչս նոցա աւար հարին, և զոմանս ի նոցանէ կոտորեցին, և զոլս թողին կենդանի՝ տարեալ խառնեցին ի չուս բուն բանակի ժողովրդեանն։

Արդ՝ աստանօր յայտնի իսկ երևեցաւ արդար դատաստանն Աստուծոյ՝ որ բաժանէ մինչև ցորոշումն շնչոյ՝ և[2] ուղղոյ՝ և օդոյ ի վերայ երկուց այսց եպիսկոպոսացս, որք գնացեալք ի Սպահան բերին զազգն Պարսից՝ որք աւերեցին զաշխարհս Հայոց, և ինքեանք ևս նոցին սրովն սատակեցան, զի յորս յուսացան՝ նոքին եղեն ինքեանց[3] սատակիչք։ Ըստ գրեցելումն յօրէնսն, «Որով և մեղանչէ ոք, նովիմբ և տանջեսցի»։ Ո՛չինչ օգտեալք յունայն առաջարկութեանց իւրեանց, և յամբարիշտ գործոց իւրեանց, այլ մնացին պարտական Աստուծոյ արդար դատաստանին, յաղագս աւերման աշխարհին Հայոց՝ և կործանման ազգիս, և կորստեան անմեղ անձանց, և այնքան անպարտ արեանց հեղմանց, և խաւարման սրբոց եկեղեցեաց, և այլ ազգի ազգի չարաչար պատահմանց, և զկնի ամենայնի ինքեանք ևս սատակեցան սրովն Պարսից։

Յետ այսմ ամենայնի ժողովեաց խանն զամենայն զօրս իւր՝ և գնաց ի վերայ այլոց ևս գաղթականաց ի նոյն գաւառին Գառնւոյ, և զորս ոչ կարացին առնուլ՝ թողեալ ի բաց գնացին, և զոլս կարացին առնուլ՝ աւար

---

1 Ոսկ. զամենեսեան։—2 Ա-Եփ. Երեց. չէ. և։—3 Նոյն. իւրեանց։

հարին, և սպանին՝ և վարեալ տարան ընդ իւրեանս. և գնալով գնացին մինչև հասին ի մեծ ձորն՝ զորոյ զանունն Քօռադարայ ասեն. և Թէպէտ բազումք կային անդէն ի ձորն այրք և ամրոցք, յորում Թաքուցեալք էին քրիստոնեայք, Թողեալ զայլսն զամենայն՝ դիմեցին ի վերայ անուանի այրին՝ որում Նախըշխան այր [1] ասէին. զի վասն ամրուԹեան նորին բազումք էին անդ ժողովեալք արք և կանայք քրիստոնեայք, անձինք իբրև հազարք: Եւ զճանապարհս այրին զգուշուԹեամբ պահէին քրիստոնեայքն: Իսկ զօրացն Պարսից Թէպէտ բազում ժամս մարտ եդեալ կռուէին նետաձգուԹեամբ և Թֆանկօվ, սակայն ոչինչ կարացին ստնանել, քանզի յոյժ բարձր էր ի ներքուստ կողմանէ: Եւ ապա չարահնար ազգն Պարսից հնարեցին զայլ իմն հնարս, և բաժանեցին ի զօրացն իւրեանց արք երկերիւրք [2] ելին ի ձորէն, և գնացին ի գլուխ քարափանն, և [3] վասն զի քարափունքն և վէմք ձորոյն էին ի վերայ միմեանց գօտի [4] գօտի: Եւ կապեալ զբազում պարանս ընդ իրեարս և այնպէս [5] իջուցանէին զմիմեանս, և այսպէս իջուցանելով զմիմեանս գօտէ ի գօտի, և գօտէ ի գօտի [6] մինչև հասին ի գլուխ գօտւոյն՝ յորում էր այրն, և անդ բերեալ [7] ագուցին չորս մարդոյ երկաԹի զրահս՝ և արարին զնոսա երկաԹապատս յոտից մինչև ցգլուխս, և ի մէջս իւրաքանչիւրոցն կապեցին չորս և հինգ Թուրս, որպէս զի ի բեկանել միոյն պատրաստ լիցի միւսն, և եդին ի ձեռս նոցա սուսերս մերկս, և կապեցին ի մէջս իւրաքանչիւրոց նոցա երկու և երեք պարանս զի ի հատանել միոյն կալցէ զնա միւսն: Եւ ապա յանբաւ բարձրուԹենէն ի վայր կախեցին զնոսա՝ մինչև իջեալ հա-

1 Ուղ. չէ+. այր։ —2 արս երկերիւրս։ —3 Ա.-էջ. Երէց. չէ+. և։ —4 Նոյն. և։ —5 Ուղ. չէ+. այնպէս։ —6 Նոյն չէ+. գօտէ ի գօտի։ —7 Ա.-էջ. Երէց. բերին։

սին յայրն, և մտին ի մէջ այրին և դիմեալ ի վերայ արանց և կանանց մերկ սուսերօքն սկսան անխնայ կոտորել զնոսա՝ որպէս զգայլս, որ մտեալ ի մակաղատեղս խաշանց կոտորէ Թալց անխայելոյ: Եւ ողորմելի քրիստոնէիցն տեսեալ զանողորմ սուրն Պարսից ի կոտորել զինքեանս, սկսան ի ձայն բարձր աշխարանաց, գուժի, աղաղակի, կականաց լալ՝ և ողբալ՝ և կոծել զկորուստ անձանց իւրեանց: Եւ ամբոխեալ և աղմկեալ իբրև զխռովեալ ծով յուզմամբք զմիմեամբք ել և ելս առնէին, և ի կողմանէ ի կողմն դիմեալ զերծանիլ հնարէին, և տեղի փախստեան ոչ գոյր. և արանցն, որք պահէին զճանապարհս դրան այրին, լուեալ զաղաղակն և գիտացեալ զեղեալն, Թողեալ զպահպանութիւնն, և առ գուԹս ընտանեացն իւրեանց [1] դիմեցին ի ներքս ի յայրն՝ առ ի փրկել զընտանիսն: Եւ յարտաքուստ կուսէ Պարսիկքն իբրև տեսին զգնալ պահապանացն, ժողովեալք ի միասին մտին ի յայրն, և սկսան սատակել զքրիստոնեայսն մարդախողխող սրովն, ի դրանէ այրին մինչև ցբուն իսկ ներսի [2] յանկիւնս այրին, իբրև զխոտահար զամենեսեան ջարդեալ ի վայր Թափեցին: Վասն զի զարուսն և զպառաւունսն և զոչ հաճոյսն իւրեանց սպանին, և ծովացաւ յատակ այրին արեամբ քրիստոնէից՝ և ամենայն քարինքն ներկեցան: Եւ զստնդեայ մանկունս ի դրկաց մարցն խլէին և յայրէ անտի ի վայր ձգէին: Եւ ոմանք կանայք՝ և տղայք և աղջկունք՝ որք մնացին ի սպանմանէն, իբրև տեսին զինքեանս մատնեալս ի ձեռս անխրաւ մարդադէմ գազանաց՝ որ վարեն զնոսա ի գերուԹիւն՝ և պէսպէս աղտեղուԹեամբ ապականեն զսրբուԹիւն նոցա, վասն որոյ լաւ համարեցան [3] զսրբուԹեամբ

---

1 Ոսկ. չէ. իւրեանց.—2 Նոյն. յանկիւնս.—3 Նոյն. և Ա-եր. երեց. համարեալ.

մահն իւրեանց քան զապրուստ սուղ ինչ ժամանակեայ կենաց, որ[4] այն ևս մեղօք և չարակրութեամբ․ բազումք ի նոցանէ պատէին զերեսս փակեղամբ և ձորձով իւրեանց և յանբաւ բարձրութենէն ի յայրէ անտի ի վայր արկանէին զինքեանս[5] և մեռանէին։ Եւ վասն զի ի մէջ ձորոյն էր մայրի անտառախիտ ծառոց, և ոմանք յայնց՝ որք զինքեանս ի վայր արկանէին յայրէ անտի՝ եկեալ պատահէին ծայրից ոստոց ծառոց և արգելուին ի նոսա, ոմանց ևս ընդ փորն մտեալ ի քամակն ելանէր ճիւղն, և ոմանց ի սիրտն մտեալ ի թիկունս ելանէր։ Սոքա ևս այսպիսի տաժանելի և դառն մահուամբ վըճարեցան։ Իսկ զմնացեալս ի նոցանէ գերի արարեալ տարան, և զինչս և զստացուածս նոցա աւարեալ յափշտակեցին, և բաժանեցին յիւրեանս ի լիութիւն ինքեանց։ Եւ զօրացն Պարսից ելեալ անտի առեալ ընդ իւրեանս զամենայն գերիսն՝ եկին ի բուն բանակն Պարսից։

Եւ զայս ամենայն լսելով և գրելով մեր, ճմլին սիրտք մեր, և գալարին աղիք որովայնի մերոյ, և աչք մեր վտակս արտասուաց թորեալ իջուցանեն, վասն եկելոյ հասելոյ թշուառութեանս ժողովրդեանս մերոյ։ Եւ ոչ բաւեմք աստանօր՝ թէ որո՞վ օրինակաւ՝ և կամ որո՞վ տարազու ողբս առեալ աշխարեսցուք ի վերայ բեկման ազգին և աշխարհին մերոյ, յաղագս որոյ ել հրաման մահաբեր ի բերանոյ երկրորդ Սաբիւռոսին և շունչ հրախառն յըռնգաց նորին՝ և եկեր զեղեռնափայտս Լիբանանու, քանզի անմարդաբնակ արար միահաղոյն զամենայն և զյուռթի աշխարհս Հայոց։ Վասն զի ի քշելն զերկիրս՝ ո՛չ թէ զմի կամ զերկու գաւառս վարեաց ի պարսկաստան, այլ զբազումս։ Եւ[1] սկսեալ ի սահմա-

1 Ոսկ. և Անեց. Երեց. որ.—2 Նոյն. չէ. ինքեանց.—3 Ոսկ. չէ. և.

նայն Նախչուանու և անցեալ ընդ Եղեգաձոր, առ եզերբ Գեղամայ, և Լոռւոյ, և զՀամզաչիման գաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զՋարիշատ, և մասն ինչ ի գեղօրէիցն Կարսայ, և զձորն Կաղզւանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու, և զՍալամաստու, և զԽոյայ, և զՈրմի,[1] և որ ինչ պանդուխտք և ղարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Թաւրիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և զԵրևան քաղաք, զերկիրն Ղրխբուլաղայ, զԾաղկունեաց ձոր, զԳառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և զԲասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճէշոյ, և զԲերկրու, և զՎանայ. աւարով և գերութեամբ բերեալ էին յԵրևան, և ընդ սոսա քշեցին և տարան:

Արդ՝ զայս ամենայն գաւառքս՝ և ոյք ընդ սոքօք էին հրամայեաց շահն, որ[2] քշեցին և տարան յաշխարհն Պարսից, և արար աւերակ և անմարդաբնակ զվայելուչ աշխարհս Հայոց:

Որ և այժմ տեսանեմք զարգաւանդ և զբերրի զհողս զարտ և զանդաստանս սորա, և զաւերակս բազմապատիկ գեղօրէիցն և զմեծանիստ աւանացն:

Նա և զաւերումն և զտապալումն և զքայքայումն զանառիկ և զամուր և զհաստահեղոյս վիմարդեամբք և կրով մածուցեալ զանմատոյց բերդօրէիցն:

Եւս առաւել զմեծափառ և զհռչակաւոր վանօրայսն, զտեղի և զհանգստարան սրբոցն Աստուծոյ:

Եւ զերկնանման և զբարձրաբերձ և զգմբէթաշէն կոփածու և հաստահեղոյս վիմօք կառուցեալ զեկեղեցիս աշխարհիս Հայոց: Ցորում յօրինեալ զանազան և

---

1 Ոսկ. չէ. զՈրմւոյ.—2 Նոյն. զոր.

պէս պէս նկարս և տեսակս շուշանաց և կենդանակերպից, գեղեցիկ յօրինուածովք քանդակեալք ի վէմս՝ պէս պէս հնարակերտութեամբ։ Որոց ձեւն և դիր շինուածոյն և սիւնքն և ախաւեղագէսք [1] կամարացն ազգի ազգի, և լուսանցոյցքն և դրունքն, և ամենայն ինչ խորհրդական։

Նա և զբարեհամ և զականակիտ զմշտահոսան աղբերականս ջուրցն։ Եւ զկարկաջահոս ծիծաղախիտ յաւէտընթաց յառաջախաղաց վտակս ջուրցն, որ ի գլխոց ձիւնաբարդ սպիտակափայլ բարձրաբերձ լերանց առ ի ստորև հոսեալ իջանէ ի դաշտ անդր և զշինութիւն նոցին մատակարարէ։

Նա և զքաղցրաշունչ և զառողջարար և զկենդանապարգև զօդ և զհողմն սորին։ Եւ զայլ ամենայն վայելչութիւնս սորա տեսանելով հեղձամղձուկ եղեալ փղձկիմք՝ և հարեալ յարտասուս ողբամք և աշխարեմք՝ զի անապատ եղև վայելուչ և քաղցր աշխարհս մեր։ Եւ ազգ և ժողովուրդ մեր խլեալք ի տեղեաց և անջատեալք ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց, և յօրհնեալ յերկրէ, որ լի է նշխարօք սրբոց Աստուծոյ, և ոռոգեալ արեամբ սրբոց վկայից՝ և օրհնեալ քարոզութեամբ սրբոց առաքելոց՝ եղեն վտարանդեալք և տարամերժեալք յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու, որ և թշնամիք հոգւոյ և հաւատոյ, և արեան ծարաւիք մարմնոյ։ Որք և անդէն օր աւուր առ սակաւ սակաւ նուազին, ոմանք մահուամբ և կորստեամբ, և ոմանք հաւատոյ ուրացութեամբ, որք դառնան յանօրէն օրէնս պղծոյն անապատի։

Եւ յաղագս երկնանման և աչքնասարաս եկեղեցեաց զի՞նչ ասացից՝ որք ի խաւարի մնացեալ և ի

[1] Ուղ. ախաւաղագէսքն (սեան գլուխ)։

բնակչաց Թավուր եղեալ՝ մերկացեալ ի զարդուց՝ եղեալ հանդիսանք համբաւոց և ջայլամանց ըստ Եսայեայ տեսանողի, որջք աղուեսուց և Նապաստակաց, մակաղատեղք խաշանց և անդէոց, բոյնք Թռչնոց և աւերաբնակ բուոց։ Փոխանակ օր աւուր նորոգման, օր զհետ աւուր խարխալեալ և քայքայեալ աւերեալ փլուզանի. փոխանակ բուրման խնկոց անուշից՝ լցեալ ողբովք՝ լռեալք ձայնք փառաբանչաց, և կատարմունք տօնից տարեկանաց, և մատուցմունք փրկական պատարագաց։

Արդ՝ պիտոյ է մեզ աստանօր հինն Երեմիաս, զի ողբասցէ զնորս Իսրայէլ. վասն զի ըստ քերթողահօրն Մովսիսի ողբերգակի, ոչ ևս դառնայ առ մեզ փեսայն, այլ անդարձ գնացիւք հեռացաւ ի մէնջ։ Արդ՝ կարդասցուք զանուն ազգիս մերոյ վայքաբովլթ, քանզի բարձեալք են փառք յԻսրայէլէ ըստ ի հնումն ասացելումն։

Դարձեալ՝ դարձցուք ի յոճ նախկին պատմութեան մերոյ, ի բանն՝ զոր հասուցաք զՋղալօղլին ի Նախչուան, և զշահն տարաք ի Թարվէզ։ Արդ՝ շահն գնաց ի Թարվէզ՝ և անդ ձմերեաց զօրօքն Պարսից, քանզի հեռացաւ ի նմանէ ահն Օսմանցւոց։

Իսկ Ջղալօղլին՝ որ գայր զկնի բանակին Պարսից, յորժամ եհաս ի Նախչուան՝ լուաւ թէ շահն զտարեալ ժողովուրդսն անցուցեալ ընդ գետն Երասխ և[1] տարաւ յաշխարհն Պարսից։ Նաև զՋուղայեցիսն զամենայն վարեալ և տարեալ է, և զշինուածսն հրդեհեալ։ Եւ մեծաւ զարմացմամբ հիացեալ ապուշ մնաց, թէ զիա՞րդ վաղվաղակի ի սուղ ինչ աւուրս զայդքան մեծամեծ գործ կարացին կատարել Պարսիկք։ Վասն որոյ պատրաստեաց լրտեսս երկուս՝ և հրամայեաց նոցա գնալ մինչ ի Ջուղայ տեսանել և իմանալ զիսկն բանից և բերել նմա համբաւ

---

1 Ոռ։. չէ+. և,

ճշմարիտ։ Իսկ լրտեսացն գնացեալ տեսին զամենայն ըստ ասացելումն բանին զրաւեալ, նաև շինուածքն Ջուղայու հրդեհեալք, որ տակաւին ծխէին խանձողքն, և անտի դարձան առ Ջղալօղլին, թէ ստոյգ են ամենայն ասացեալքն։ Նա անդէն մտախոհ եղեալ Ջղալօղլին ի սրտի իւրում, ոչ գնալ ընդ ճանապարհն Ջուղայու և անցանել զգետն [1] Երասխ և մտանել զհետ Պարսից։ Նախ՝ զի կասկած կրեալ և երկուցեալ ի հնարից Պարսից, զի [2] մի գուցէ դարձցին ընդ կրունկն և յանկարծակի բաղխեալ ի վերայ Օսմանցւոց փակեսցեն ընդդէմ Երասխայ և ձորոցն՝ և կոտորեսցեն։ Երկրորդ՝ զի զտարեալ ժողովուրդսն ընդ այլ ճանապարհ ուղևորեցին, ընդ որ ոչ կարեն գնալ ծանր բանակն Օսմանցւոց՝ թէ կամեսցին։ Երրորդ՝ զի նշանաւոր օր դարձի նոցա՝ որ [3] Ղասում գիւնի ասեն՝ մերձեալ էր։ Զայսոսիկ և որ սոցին նման խորհեալ՝ ոչ գնաց յայնժամ ի Թավրէզ, այլ չուեալ ի Նախչուանայ, և մերձ գեղջն Աստապատու էանց զԵրասխն՝ և գնաց ի քաղաքն Վան [4] բանակաւն իւրով, և անդ ձմերեաց մինչ ի գարունն։

1 Ոսկ. չէ. ընդ գետն։—2 Նոյն. զի։—3 Ոսկ. զոր։—
4 Աստ. երեց. ամենայն բանակաւն։

ԳԼ. Ե.

Յաղագս քչելոյ զամենափարթամ գիւղաքաղաքն Ջուղայու յերկիրն Պարսից:

Եւ արդ յետ այսց ամ՛ոց զոր պատմեցաք՝ որ գործեցաւ ի Շահաբաս Թագաւորէն ընդ աշխարհս և ընդ ազգս Հայոց՝ զոր վարեաց յաշխարհն Պարսից։ Ժամ է այսուհետև պատմել մեզ վասն մեծի և անուանւոյ գիւղաքաղաքին Ջուղայու, զի զնախկին ամբարեալ դառնութեան Թոյսն և զչարակնութիւնն, որ վասն Ջուղայու քողաբորբեալ ունէր ի սրտի իւրում շահն, աստանօր պատճառ գտեալ արտայայտեալ երևեցոյց՝ քանզի բերեալ յինքեան զխորհուրդն նախահաւոյն իւրոյ Սաբիւռոսի։ Վասն զի որպէս պատմեցաք ի նախկին ճառին՝ թէ կարգեաց շահն ի զօրացն Պարսից չուեցուցանողս ազգին Հայոց, և առաքեաց յամենայն երկիրն Հայոց որք հանին և չուեցուցին. սոյնպէս և արար Ջուղայու։

Քանզի կոչեաց առաջի իւր զհանիս Թահմազղուլի
բէկն, որոյ վասն յառաջագոյն պատմեցաք, թէ եղբայր
է Աթաբէկին, և տուեալ էր սա պատանդ յազգէն Վր-
րաց, Թագաւորացն Պարսից, որ առ նոսին մնեալ՝ ու-
րացաւ զհաւատն։ Եւ այժմ շահն կոչեաց զայս Թահ-
մազղուլիս առաջի իւր, գրեաց նոմոս (հրովարտակ)
հրամանի և ետ ցնա, և հրամայեաց նմա գնալ ի Ջու-
ղայ և միահաղոյն քշել զնոսա՝ և ոչ թողուլ ի նա բնա-
կիչ՝ և ո՛չ զմի։ Եւ Թահմազղուլին ելեալ յերեսաց ար-
քային, սրընթաց արշաւմամբ շեշտակի աճապարեալ ի
Ջուղայ, և կոչեալ զաւագանիսն և մեծաւ ցասմամբ
սպառնացաւ նոցա, սարսռելի և տաժանելի մահուամբ
կորուսանել զնոսա՝ թէ ո՛չ առժամայն և վաղվաղակի
զհրամանս թագաւորին կատարեսցեն։ Այլ և զնոմոս
հրամանաց թագաւորին հանեալ առաջի ամենայն ժո-
ղովրդեանն ընթերցան, յորում գրեալ էր թէ՝ հրաման
է ի թագաւորութենէս մերմէ ձեզ Ջուղայեցւոցդ ելա-
նել ի տեղեաց ձերոց և գնալ ի Պարսկաստան աշխարհ։

Եւ յետ այնորիկ հրամայեաց Թահմազղուլի բէկն
ելանել մունետիկ՝ որ է ջառչի, և կանչել ի մէջ շինին
Ջուղայու յամենայն տեղիս։ Հրաման է ի մեծ թագա-
ւորէն Շահաբասայ, ձեզ ամենայն բնակչացդ Ջուղայոյ
ելանել ի բնակութենէ ձերմէ և գնալ յաշխարհն Պար-
սից։ Արդ՝ մինչև ցերիս աւուրս ձեզ ներումն լիցի, որ
ելանէք, և ով ոք յետ երից աւուրցն աստ գտցի, զինքն
սպանանեն և զընտանիս [և զինչս նորա գերեն. այլ և
թէ ոք փախիցէ կամ թաքիցէ, որ ոք զայնպիսին ցու-
ցանիցէ, ապրանքն նորա՝ ցուցողին լիցի՝ և գլուխն՝
թագաւորին։ Եւ զայս հրաման միշտ հրատարակեալ գո-
չէր մունետիկն և ահացուցանէր զամենեսեան, և յահէ
սպառնալեաց մահուան ոչինչ զանգաղեցին Ջուղայեցիքն՝
այլ առժամայն կատարեցաւ առ նոսա հրաման թագա-

ւորին և պատրաստեցան յելանել: Բայց վասն փութով
և յանկարծակի ելանելոյն ոչ գտանէին գրաստ և բեռ-
նակիր անասուն, յոյժ վտանգէին ժողովուրդքն, զի ինչք
և ստացուածք նոցա ցրուեալ և[1] անկեալ կայր առաջի
իւրեանց. և ոչ կարէին բառնալ ի տանիլ առ ի չգոյէ
գրաստուց: Եւ զոր ինչ կարացին բառնալ՝ բարձին, և
զոր ոչ կարացին բառնալ՝ իւրաքանչիւր ոք պահուստ և
թաքուստ արարեալ թաղեցին: Բայց ընչից նոցա յո-
լովքն ի կորուստ և յափշտակութիւն գնաց, քանզի ոչ
միայն այն զօրքն՝ որ ընդ Թահմազղուլի բէկին էին
եկեալ՝ նոքա միայն հարկէին զժողովուրդն վասն փու-
թով ելանելոյ, այլ և բազումք ի մահմետականացն՝ որք
ի շրջակայ գեղօրէիցն գային. և որք ի զօրացն Պարսից՝
որք ի բուն բանակէն իւրեանց յառաջեալ գային և
խառնեալ լինէին ընդ զօրացն Թահմազղուլի բէկին, և
օր աւուր յաւելանային Պարսիկքն ի մէջ Ջուղայու: Եւ
գումարեալ մահմետականացն ի միասին, էր, որ՝ տասն,
էր որ՝ քսան, էր որ՝ երեսուն մտանէին ի տունս քրիս-
տոնէիցն, զնոսա ստիպէին ելանել և գնալ, հարկանէին
սաստիկ հարուածով, այլ և յընչիցն և ի կարասեաց
ինքեանք յափշտակէին, որոց միտք իւրեանց հաւանէին՝
և զայլսն ցրուէին, որ այլք յափշտակէին, և այսպէս
յափշտակումն և կորուստ էր ընչից քրիստոնէից:

Եւ ի դառնագոյն չարեացն Պարսից, զոր ածէին ի
վերայ ժողովրդեանն, հարկանել և կեղեքել և հարստա-
հարել, անճարակ լեալ ամենայն բնակչացն Ջուղայու
ակամայ կամօք իւրաքանչիւր ոք ելին ի գնալ: Եւ թէ-
պէտ կարողքն մարմնով՝ և կամ որք ունէին գոյք
ստացուածոց, նոքօք հանդերձէին ի գնալ, բայց որք էին
տկարք, այսինքն տնանկք, և այրիք, և ծերք, ոչ կա-

---

1 Ոսկ. և.

րէին ի գնալ, աղաղակ բարձեալ աղիողորմ ձայնիւ արտասուօք և աշխարական կականիւ առհասարակ ողբային։ Ոմանք զտունս և զյարկս, ոմանք զընտանութիւնս և զհայրենիս, ոմանք զեկեղեցիսն, ոմանք զնախնի հարց գերեզմանս և զդամբարանս, և ոմանք զանկարութիւն մարմնոյ առ ի գնալ՝ լային և ողբային. և յորդ արտօսր յաչաց հեղուին, ոչ ոք էր, որ ողորմէր նոցա և օգնէր՝ քանզի փակեալ էր դուռն ողորմութեան գթածին Աստուծոյ ընդդէմ նոցա։

Եւ զբանալի եկեղեցւոյն՝ զոր վերին Կաթան ասէին՝ առին քահանայքն, և յորժամ ելին ընդ դուռն պարսպին Ջուղայու, և ի հասանելն առաջի եկեղեցւոյն, որ անուամբ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ Ջուղայու. իբրև հայեցան, և տեսին զԱստուածածնին եկեղեցին, և բազում քրիստոնեայք եկեալ խառնեցան ընդ քահանայսն. որ և նոքա ևս բերին զբանալիս տանց իւրեանց, և ի միասին զաղաղակ բարձին աղիողորմ ձայնիւ, փղձկեալ սրտիւ և արտասուալի աչօք դառային՝ և լային, և աղաղակելով կանչէին ընդդէմ Աստուածածնին, և ասէին. ով սուրբ Աստուածածին, այսոքիկ բանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ՝ և տանց մերոց քեզ յանձն լիցի. և դու դարձուսցես զմեզ ի տեղիս մեր յօտար երկրէն ուր տանին։ Եւ զայս ասացեալ արկին զբանալիսն ի գետն, և մրմռքալով յոլով ժամս ձայն բարձեալ լացին. և ապա գնացին։

Եւ այսպէս ժողովուրդքն Ջուղայու հարուստք և չքաւորք ելին ի Ջուղայոյ՝ և գնացին յեզր գետոյն Երասխայ առ ի անցանել զգետն, և անդէն բանակեալ զետեղեցան մինչև ամենայն ժողովուրդքն ելին ի գեղջէն՝ և ժողովեցան ի ժողովետղն յեզր գետոյն։ Եւ յորժամ սպառեցաւ գալն ժողովրդեան. յայնժամ հրաման եղև ի Պարսիցն առ ժողովուրդն, թէ անցէք զգետն։ Եւ

յաւուրս յայսոսիկ Թագաւորն Շահաբաս հասեալ էր ի Ջուղայ և բանակեալ յափն գետոյն Երասխայ. և յայնմ ժամու իբր Թէ առ ի յողորմել և յօգնել ժողովրդեանն Ջուղայեցւոց, Թագաւորն Շահաբաս հրամայեաց զօրապետաց իւրոց զի և նոքա հրամայեսցեն իւրեանց զօրացն՝ զի օգնեսցեն ժողովրդեանն՝ և անցուսցեն յայնկոյս գետոյն երիվարօք և ուղտուք։ Եւ ի յանցուցանելն հեծելոցն Պարսից զժողովուրդսն քրիստոնէից, որոց և հաւանէին սիրտք իւրեանց, եթէ կանանց՝ եթէ աղջրկանց՝ եթէ տղայոց՝ եթէ ապրանաց, որոց և հաւանէին՝ առեալ գնային ուր և կամէին, և տեարք նոցա ոչ կարէին գնալ զկնի նոցա՝ և նոքա գնային ի կորուստ և ի գերութիւն։ Եւ որք տկարք էին Թափեալք լինէին ի ջուրն և ծփալով և ճչալով գնային ընդ երեսս ջրոյն. և յոլովք հեղձնուլին ի ջուրն՝ և մեռանէին։ Եւ յերկու կողմն յեզերս գետոյն ցրուեալք էին դէշք և դիք մարդկան խեղդելոց ի ջրոյն։ Եւ այսպէս տառապանօք անցին ժողովուրդքն զգետն Երասխ, և սակաւ ինչ յառաջ գնացեալ բանակեցան մինչև ամենեքեան ժողովեցան ի բանակետղն։

Եւ ի նմին ի տագնապելի աւուրսն հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս, նորագոյն չարիս խորհեալ վասն Ջուղայու, կոչեաց առաջի իւր զնոյն Հանիս Թահմազղուլի բէկն և հարցանէր՝ Թէ յետ հանելոյ քո զբնակիչսն Ջուղայու՝ այրեցե՞ր զշինուածս նորա. իբրև պատասխանեալ եղև ի նմանէ՝ Թէ ոչ էր հրամայեալ մեզ ի Թագաւորէն՝ վասն որոյ և ոչ այրեցաք։ Եւ անդէն յետ բազում մեղադրանաց՝ հրամայեաց իսկոյն դառնալ յոլովք զօրօք և այրել զամենայն շինուածս զտանց և զայլոց յարկաց։ Որոյ շեշտակի հասեալ ի Ջուղայ բազում հրոսակօք և առեալ ի ձեռս իւրեանց ջահս լուցեալս և զամբարս եղեգանց, և նաւթիւ կազ-

մեալ լապտերս, և սկսան այրել և հրդեհել, և քանդել զառաստաղս և տապալել զշինուածս որմոց։ Եւ ոչ բնաւ թողին յարկ ծածկեալ կամ շէն, այլ յաւեր և յապականութիւն դարձուցին։ Իբրև կատարեցին զչարեաց գործս իւրեանց, դարձան և եկին ի բուն բանակն՝ և յանդիման եղեալ արքայի պատմեցին՝ թէ եղև տէր զոր հրամայեցեր։

Այնուհետև հրամայեաց շահն Թահմազղուլի բէկին թէ մի՛ ևս թողուսցուս զժողովուրդն Ջուղայու նստիլ, այլ վարեալ և տարեալ հասուսցես ի Թարվէզ, և նորա եկեալ իսկոյն չուեցոյց զժողովուրդն յետեղէն (ի տեղւոջէն) յորում բանակեալ կային։ Եւ ի յօրն և ի ժամն յորում բառնայր իւրաքանչիւր ոք զբեռն իւր, երկինք և օդք իւր ի միասին խռովեցան ի վերայ ժողովրդեան քրիստոնէից՝ քանզի խառնակեցան ամպք՝ և խռովեցան օդք, և մթացան երկինք, հնչեցին հողմք ուժգնակի, փայլատակեաց կայծակն մեծաւ ճայթմամբ, տեղացին ձիւնախառն անձրևք, և հարեալ տանջեցին զքրիստոնեայսն։ Եւ որք էին կարողք մարմնով կամ զրաստիւ՝ գնացին, իսկ տկարքն յետ աւուրց ապա եկեալ հասանէին բազում տառապանօք և չարակրութեամբ. և բազում վշտիւք և տաժանմամբ բերեալ հասուցին ի քաղաքն Թարվէզ։

Եւ անդէն ի Թարվէզ չարք ոմանք ի չար գանձուց սրտից իւրեանց խօսեցան զբանս չարս վասն Ջուղայու ընդ չարին Թահմազղուլի բէկին. վասն զի յիշեցին թէ տակաւին կան ի Ջուղայ մնացեալ ժողովուրդք, զի յոլովք ոմանք փախստականք եղեալք ի լերինս և ի ձորս, և այլք պատճառեալք են զտկարութիւն, և ոմանք զծերութիւն, ոմանք զաղքատութիւն, և այլք այլ ինչ պատճառանօք ոչ եկին՝ այլ անդէն մնացին՝ և այժմ կան ի Ջուղայ։ Եւ ի լսելն զայս Թահմազղուլին զայ-

րացաւ յոյժ սաստիկ բարկութեամբ, բայց ոչ կարէր չար ինչ առնել՝ զի ոչ էր ձեռնհաս, և թողին մնալ մինչ ի գարունն։ Եւ ի սկսանիլ գարնանն՝ պատրաստեաց զայր ոմն երևելի յիւրոցն արանց՝ որում անուն կոչէին Համդամ աղայ, յոլով զօրօք, այլ և զհրովարտակ հրամանի առեալ ի թագաւորէն ետ ի ձեռս նորա և առաքեաց ի Ջուղայ՝ բերել զմնացեալ ժողովուրդն։ Եւ եկեալ Համդան աղայն ընդ իւր[1] զօրօք ի Ջուղայ՝ կոչեաց զմնացեալ ժողովուրդն առաջի իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա սաստիւ և բռնութեամբ, եթէ հնազանդեալ անսայք հրամանաց թագաւորին ելէք ձերովք ընտանեօք և ստացուածովք զի ի միասին երթիցուք, և թէ ոչ կամիք գնալ, զարուս և զկարողս ձեր սրով կոտորեմք՝ և զինչս և զընտանիս ձեր ի գերութիւն առնումք։ Այլ և գնացեալ ի լերինս և ի ձորս ի տեղիս փախստէիցն գտին զփախուցեալսն, և բերին ի Ջուղայ, և յինանց երկրորդում կիրակէի երկուշաբաթ օրն չուեցուցին ի Ջուղայոյ՝ և ուղևորեցին դէպ ի Թարվէզ։ Եւ անցուցեալ զայնու բերեալ հասուցին առաջին բանակին ժողովրդեանն ի քաղաքն Ղազբին։ Եւ ընդ նոսա զետեղեցուցին անդէն ի քաղաքին Ղազբինու և ի գեղօրայս նորա վասն ցրտոյ ձմերանն, յորոյ պատճառէ ոչ կարէին գնալ։[2] Եւ ի շնչել հողմոյն գարնայնոյ վերստին վարեցին զնոսա մինչև տարեալ հասուցին ի քաղաքն Սպահան՝ և անդէն բնակեցուցին զնոսա՝ տուեալ նոցա տեղի շինութեան· որք շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարանօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և

---

1 Ոմն. չէ. ընդ իւր.—2 Նոյն. չէ. յորոյ պատճառէ ոչ կարէին գնալ.

յօրինեալ ի ծաղիկս ոսկւոյ և լաջվարդի՝ և պէս պէս երանգաց ակնախտիղ տեսողաց։ Սոյնպէս շինեցին և զեկեղեցին հրաշագան յօրինուածովք ըստ արժանւոյն փառացն Աստուծոյ, երկնանման խորանօք, և գերամբարձ կաթուղիկէիւք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ոսկւով և լաջվարդով, տնօրիկանօք Տեառն և պատկերովք սրբոց։ Եւ ի գլուխ կաթուղիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ զնշան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պսակ՝ և ի պարծանս քրիստոնէից։

Եւ ժողովուրդքն Ջուղայու նաև ամենայն հայազունք՝ որք գնացին ի քաղաքն Սպահան, և անդէն բնակեալ մնացին՝ բազում ունի պատճառ։ Վասն զի Թագաւորն Շահաբաս էր բազմահանճար՝ և խելացի, նախահոգակ. հնարեցաւ բազում և պէս պէս հնարս վասն ազգին Հայոց՝ զի մնասցեն յաշխարհն Պարսից, զի թէ ոչ էր այնպէս հնարեալ՝ ոչ մնային։ Նախ՝ զի ինքն Շահաբաս առնէր սէր ընդ ազգին Հայոց՝ և մեծարանս նոցա. և մանաւանդ ընդ Ջուղայեցւոց, որոց գլխաւորի անունն էր Խօջայ Սաֆար, և սորին եղբօրն՝ խօջայ Նազար և որդւոց սորին, Մէլիք աղայ, և Սուլթանում, և Սարֆրազ։ Եւ հանապազ ինքն շահն գայր ի տունս նոցա, ուտէր և ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա[1] առանց խտրելոյ. որպէս սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից. այլ և ինքն շահն կոչէր զնոսա ի տուն և ի սեղան իւր, և պատուէր ընդ մեծամեծս իւր. այլ և պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս առնել։ Երկրորդ՝ զի զԹագաւորական հարկն, զոր տային քրիստոնեայքն, թեթև առնոյր՝ որպէս և քրիստոնեայք ախորժէին։ Երրորդ՝ եթէ դիպէր կագ և կռիւ և խռովութիւն ինչ քրիս-

---

1 Ոռն. չէ. զկերակուրս նոցա.

տունէից ընդ մահմետականաց, և կամ այլ ինչ գործ դատաստանի՝ եթէ մեծ և եթէ փոքր, զքրիստոնեայս իրաւացուցանէր և զմահմետականս դատապարտէր: Չորրորդ՝ յորժամ զքրիստոնեայս բերեալ հասոյց ի Սպահան և ի գեղօրայս նորա, բազում մահմետականս արտաքսեաց ի տեղեաց և ի բնակութեանց իւրեանց. և զտունս և զանդաստանս նոցա ետ քրիստոնէից: Հինգերորդ՝ յօժար կամօք հրամայեաց եկեղեցիս շինել յամենայն տեղիս, ի Ջուղայ և ի գեղօրայս, նաև ի մէջ բերդի քաղաքին, մեծանիստ և բարձրաշէն. և այնքան յօժարութեամբ մինչ զի և ինքն յորդորէր զքրիստոնեայսն շինել զեկեղեցի: Եւ յաւուրս մեծամեծ տօնից՝ Յարութեան և Համբարձման և յայլսն. գայր յեկեղեցիսն՝ և ուրախանայր ընդ քրիստոնէից: Վեցերորդ՝ զամենայն կարգ և զաւանդութիւնս քրիստոնէական համարձակութեամբ կատարէին քրիստոնեայքն. զկոչնակ հարկանել, զժամ կոչել.[1] և զՋրօրհնէքն մեծախումբ հանդիսիւ առնել, այլ և ինքն շահն ևս գայր ի Ջրօրհնէքն և խրախանայր ի տեսութիւնն: Եւ զմեռեալսն խաչալամով[2] և ձայնիւ շարականաւ հանեալ ի քաղաքէն անցուցանէին ընդ մէջ շուկային՝ և տանէին ի Թաղել՝ և ոչ ոք ի պարսից ազգէն եպերանաց և հայհոյանաց բանս ասէր: Եւ այսու օրինակաւ բազում և պէս պէս կերպիւ հաճեցուցանէր շահն զմիտս քրիստոնէից՝ որովք մնացին յաշխարհն Պարսից: Եւ այնքան համարձակութիւն ետ շահն քրիստոնէից մինչ ի հրապարակս և ի շուկայս, թէ հանդիպէր կագ և կռիւ քրիստոնէից ընդ մահմետականաց, համահաւասար զմիմեանս հարկանէին՝ և հայհոյէին առանց երկիւղի: Ընդ որոյ վշտանային ազգն Պարսից՝ և նոցին

---

1 Ուղ. չէ. կոչել:—2 Նոյն. խաչվառով:

կարդացողքն և մեծամեծքն. մինչ զի ընդ շահին ասացեալք էին. Թէ ընդէ՞ր այնքան Թոյլ տաս քրիստոնէից համարձակիլ, և կամ ընդէ՞ր ոչ դարձուցանես ի մոլար օրինացն այն, ի ճշմարիտ օրէնս Մահմետի։

Իսկ ի տեսանել շահին զվշտանալն սրտից նոցա՝ յայտնեալ էր զխորհուրդս սրտի իւրոյ նոցա՝ և ասացեալ էր. դուք ընդ սուտ ինչ մնոտի սէրն իմ, զոր առնեմ ընդ նոսա, մի՛ վշտանայք՝ և մեղադրէք ինձ, զի ես բազում ծախիւք, ջանիւք և հնարիւք հազիւ Թէ կարացի բերել զնոսա յայս յաշխարհ. ոչ Թէ վասն օգտի նոցա՝ այլ վասն օգտի մեր՝ զի աշխարհս մեր շինեսցի՝ և ազգն մեր յաւելցի։ Եւ այժմ եԹէ զմարդիկս ազգին քրիստոնէից որք յաշխարհէն իւրեանց եկեալ են՝ և այժմ կան, եԹէ զամենեսեան զնոսա մասն մասն կոտորեալ յօդ յօդ բաժանէք, ոչ ոք ի նոցանէ դառնայ յօրէնս մեր։ Նա և այլքն խրտուցեալ սկսանին մի մի Թաքնաբար փախչիլ՝ և դառնալ յաշխարհն իւրեանց. և վաստակն մեր լինի ընդունայն։ Եւ վասն այնորիկ առնեմ ես զայս սէրս ընդ նոսա. զի այսու կապեալ ճայցեն յաշխարհս մեր, և նոցին հին մարդիկքն, որք յաշխարհին Հայոց ծնեալք են և եկեալ աստ՝ նոքա ամենեքեան մեռանին. և ի նոցանէ ծնեալքն՝ որք յայս աշխարհս ծնանին, նոքա ամենեքեան առանց մեր կոչելոյ և աշխատելոյ [1] ինքեանք ինքեանց յօժարուԹեամբ գան յօրէնս մեր։ Արդ՝ եԹէ դուք ևս կամիք զօգուտն ազգին մերոյ՝ դուք ևս արարէք որպէս և ես առնեմ։ Եւ ապա նոքա հաճեալ ի բանս շահին, և գովելով զիմաստուԹիւն նորա գնացեալք են ի բաց։

Եւ այս բանս Շահաբասին՝ զոր ասացեալ է ընդ մեծամեծս իւր՝ այժմու ժամանակիս լցեալ կատարե-

---

1 Ու. չէ+. աշխատելոյ.

ցաւ [1] յաւուրս մեր. վասն զի արքն հին՝ որք յաշխարհին Հայոց ծնեալք էին, և անտի եկեալ յաշխարհն Պարսից՝ մեռան նոքա ամենեքեան. և թէպէտ ունէին ի մտի դառնալ յաշխարհն իւրեանց՝ և ոչ կարացին վասն վերոյասացեալ պատճառացն, նա և ոչ թողուին Պարսիկք։ Իսկ ի նոցանէ ծնեալքն՝ որք յաշխարհին Պարսից ծնան, անդէն և սնան, և այնմ աշխարհին հաճեցան. վասն որոյ կան ի նմին և մնան, և թէպէտ ոմանք ի նոցանէ արք երկիւղածք և բարեբարոյք կամին գնալ յաշխարհն Հայոց, ոչ թողուն գնալ Պարսիկք։ Եւ ոմանք ի նորաժամայն զաւակացն քրիստոնէից՝ թողեալ զլուսապայծառ հաւատս քրիստոնէութեան, դարձան՝ և տակաւին ևս դառնան յանօրէն [2] օրէնս Մահմետի վասն թերահաւատութեան և գողութեան և բոզութեան իւրեանց. և միաբանեալ ընդ Պարսից ի նեղ արկանեն զքրիստոնեայս բազում և պէս պէս հնարիւք։ Եւ մանաւանդ այնու՝ զի տան կաշառս Մահմետականաց՝ և կացուցանեն սուտ վկայս, և քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս Մահմետականս ի դատաստան, և պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ և հնարել կարեն։ Ցոմանց թէ պարտք պարտիս ինձ, հատո՛ զպարտսն քո։ Եւ յոմանց թէ ազգական քո եմ, ամենայն ինչ և ստացուածք քո ինձ հասանի՝ տո՛ւր ինձ։ Եւ այլ զրպարտութիւն, զոր ինչ կարեն հնարել։ Եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողացն, թէ որովհետև նա եկեալ է յօրէնս Մահմետի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց։ Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս և [3] տան ուրացողացն այնոցիկ։ Եւ ոչ թէ զթեթև ինչս, այլ մինչ ի հինգ հարիւր

1 Ոսկ. կատարի. —2 Նոյն. չիք. յանօրէն. —3 Նոյն. չիք. և։

թումանի տունն՝ անիրաւ խրատամբս այսուիկ իրաւացուցեալ գրանս ուրացողացն, յափշտակեցին զժառանգութիւնս քրիստոնէից և ետուն ուրացողացն. զոր մերով աչօք տեսաք։ Այլ և ի մեռեալ քրիստոնէից ազգականացն ոմանք ուրացողք յետ դրուելոյ յինքեանս զտունս և զամենայն ինչս քրիստոնեայ մեռելոյն, եկին տիրեցին ինքեանց. զորդիս և զդստերս և զաղախնեայս մեռելոցն։ Եւ ժողովուրդքն Ջուղայեցւոց թէպէտ բազում աշխատեցան ի դրունս իշխանաց դեգերելով վասն փրկութեան տղայոցն, և [1] ոչ եղև, վասն զի ամենեքեան Մահմետականք գոլով՝ ի կողմն ուրեանց հակէին։ Եւ դու այսու երկու բանիւս՝ զորս վասն օրինակի գրեցի քեզ՝ զամենայն կիրս վտանգիցն ի մետ ածեալ գիտասցես՝ զոր կրեն քրիստոնեայքն ի յօձաբարոյ ազգէն Պարսից։

Եւ որպէս ասէ Գիրն աստուածային, թէ վախճանեցաւ Յովսէփ և ամենայն եղբարք նորա և ամենայն ազգն այն. եկաց այլ թագաւոր՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ, և ասէ ցազգն իւր. եկայք, հնարեսցուք ինչ ազգին Իսրայէլի։ Ըստ այսմ օրինակի պատահեաց [2] և մերոյս ազգի՝ զի թագաւորն Շահաբաս՝ թէ որքան վըշտիւք տարեալ էր զազգն Հայոց յաշխարհն Պարսից, գիտէր զայն ամենայն վիշտն՝ զոր ինքն էած ի վերայ ազգին Հայոց՝ յաղագս որոյ և գթայր, և ողորմէր ի վերայ Հայոց՝ և սէր [3] ցուցանէր. և [4] թէպէտ սուտ և սնոտի և ոչ ճշմարտութեամբ, սակայն սէր ցուցանէր. վախճանեցաւ նա, և ամենայն իշխանք և արք ժամանակին այնմիկ։

Եւ զկնի Շահաբասին թագաւորեաց թոռն նորին

---

1 Ոսկ. չէ. և.—2 Ոսկ. պատահեցաւ.—3 Նոյն. զսէր.—4 Նոյն. չէ. և.

Շահնէֆի, և նա ևս միջակօրէն անցոյց ընդ ազգին քրիստոնէից. քանզի ոմանք ի նախարարաց Շահաբասին կային տակաւին առաջի նորա՝ որք յուշ առնէին նմա զկարիքն Շահաբասին, որ [1] ընդ Հայոց ազգին. այլ և զբարեմտութիւնն Հայոց՝ որք ունէին ընդ նախնիս նորա, և յայսմ պատճառէ թեթև կային ազգն Հայոց ի վշտաց. վախճանեցաւ և Շահնէֆին և ամենայն արքն նախնիք: Իսկ զկնի Շահնէֆոյն թագաւորեաց նորին որդին՝ զորոյ անուն կոչեցին դարձեալ Շահաբաս՝ ըստ անուան հաւոյն իւրոյ. վասն որոյ զսա կոչեմք երկրորդ Շահաբաս: Սա թէպէտ լսէր զխրակութիւնս՝ որք անցին ընդ ազգին Հայոց, այլ ոչ էր աչօք տեսեալ. նաև ոչ սորին նախարարքն՝ որք կային գործակալք թագաւորութեան սորա: Վասն որոյ ոչինչ փոյթ ունէին զազգէն Հայոց՝ կամ հոգալ՝ կամ ողորմել՝ այլ այն միայն էր նոցա փոյթ՝ զինչ և իցէ պատճառանօք դարձուցանել զՀայս ի կրօնս Մահմետի: Վասն որոյ յարեան ի վերայ քրիստոնէից արք արեանարբուք, անօրէնք, զեխք, և շուայտք, արք՝ որք զմարմնոյ ցանկութիւն և զփափկութիւն բարերջանիկ կեանս համարին. ոմանք, որք յազգէն Հայոց ուրացեալք էին, և ոմանք որք բուն Պարսիկք էին, նեղէին և բռնադատէին, զարշեցուցանէին և բռնութեամբ վարէին ընդ քրիստոնէից: Այլ և ի զաւակացն քրիստոնէից, որ ոք և հաճոյ թուէր աչացն Պարսից՝ եթէ տղայ՝ եթէ՝ աղջիկ՝ եթէ հարսն՝ բռնութեամբ յափշտակէին և տարեալ ի տունս թագաւորին, և անուանէին թագաւորական ծառայ, և ոչ ևս դարձուցանէին առ տեարս իւրեանց. և դարձուցանէին ի հաւատոցն Քրիստոսի ի հաւատն Մահմետի: Նախ՝ վասն պիղծ գործոց իւրեանց. և երկրորդ՝ զի յաւելումն լիցի

---

1 Ոսկ. չէ. որ.

Թագաւորական ծառայից և ազգին Պարսից. և երկրորդ՝ զի զկնի ժամանակաց ի պատճառէ այսց տարեալ զաւակացս, գերումն և գերփումն և յափշտակումն լինէր տանց և տեղեաց՝ ընչից և ապրանաց յետնամնայ ընտանեաց նոցա՝ քրիստոնէից։

Եւ մինչև ցայսօր և [1] ցժամանակս, [2] յորում հասաք, ոչ գիտէին Ջուղայեցիքն, նա և ամենայն հայազուն ազգն այն՝ որք կային յաշխարհին Պարսից, զօձաբարոյ նենգժոտութիւն ազգին Պարսից, որ առ ինքեանս։ Եւ արդ ծանուցեալ հեծեն, յոգւոց հանեն, հաշին և մաշին, զի թերևս զերծցին յաշխարհէն Պարսից՝ կամ յայտնի և կամ ի ծածուկ գնալ յաշխարհն Հայոց՝ և [3] ոչ կարեն։ Քանզի ոչ տան թոյլ Պարսիկքն ելանել յերկրէն իւրեանց, որպէս Եգիպտացիքն՝ զազգն Իսրայէլի։ Մինթէ նոյն բարձրեալն բազուկ՝ և հզօր ձեռն Տեառն և զսոսա հանցէ՞ աստի, որպէս զնոսա անտի՝ մաղթանօք մեծաց նախնի նահապետացն և Մովսիսի մարգարէին. և մեծի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի։ [4]

1 Ոսկ. չէ. *ցայսօր և*.—2 Նոյն. *ցայս ժամանակս*.—3 Նոյն. չէ. *և*.—4 Առեթ. երեց. յաւելու այս Նախադասութեան. Զգծագրող *սորին յիշեցէք, զԵրևանցի Աւետիս երեց, այս պատմագրէս երրորդ գիրք եմ գրեր*.

Գլ. Ձ.

Վասն երկրորդ անգամ գալոյն Ջղալօղլի Սարդարին, եւ պարտեալ լինելոյն եւ դառնալոյն։

Եւ յորժամ եհաս Ջղալօղլի Սարդարն ի Վան· և զետեղացաւ անդէն իւրովք զօրօքն· քանզի զամենայն զօրսն իւր հրամայեաց դշլաղ տալ ի վերայ բնակչաց երկրին· և բաժանեցին զամենայն զօրսն յերկիրն Վանայ և յամենայն շրջակայ գաւառս նորա։ Իսկ զօրքն, որք նստան դշլաղ ի վերայ երկրին, իբրև զգազանն տեսլեան Դանիէլի՝ կերան, և մանրեցին· և զմնացորդսն ոտից կոխան արարին· փոխանակ շինելոյ զերկիրն՝ աւերեալ քայքայեցին՝ և ի վերջին թշուառութիւնն հասուցին, թէ անողորմ կեղեքելով՝ և թէ այլ պղծագործութեամբ։

Եւ Ջղալօղլին իբրև ետես թէ շահն յԵրևանայ երկրէն դարձաւ ի Թաւրէզ՝ և երկիրն Երևանայ անտէր մնաց· զոմն ի նշանաւոր արանց՝ որում անունն էր Օ-

մար աղայ, կարգեաց զլուխ՝ և ընդ նմա զօրս բազումս, և առաքեաց յերկիրն Երևանայ՝ զի տիրեսցէ երկրին. և նա եկեալ բնակեցաւ ի Նախջուան՝ և պահէր զերկիրն: Իսկ շահն՝ որ էր ի Թարվէզ, իբրև լուաւ զայս գործ՝ և նա ևս առաքեաց զԱմիրգունայ խանն բազում զօրօք ի վերայ Օմար աղային. որ եկեալ մարտեաւ ընդ Օմար աղային և սպան զնա՝ և կոտորեաց զզօրս նորա. և զբազումս ի զօրացն ձերբակալ արարեալ կենդանի, և զայսոսիկ զկենդանի կալեալսն՝ և զգլուխս սպանելոցն առաքեաց ի Թարվէզ առ շահն, և ինքն արձանացեալ նստաւ ի տեղի Օմար աղային ի Նախջուան՝ և պահէր զերկիրն որպէս և հրամայեալ էր նմա շահն:

Եւ Ջղալօղլին կեալ ի Վան քաղաքի, անդէն անցոյց զցրտասառոյց եղանակս ձմերան, իբրև եհաս ի ժամանակս գարնայնոյ. եհան զամենայն երամակս երիվարաց, զիւրն և զբանակին իւրոյ յարօտ ի վերայ կանաչի՝ զի զգարնան Թալչևն առցեն երիվարքն: Իսկ հանճարեղն ի խորհուրդս չարեաց Շահաբաս՝ որ յայնմ ժամանակի նա ի Թարվէզ էր, կազմեաց զԱլահվէրտի խանն զօրօք բազմօք՝ և առաքեաց ի Վան ի խնդիր երիվարաց Սարդարին, այլ և զոր ինչ առնել կարիցէ արասցէ: Եւ Ալահվէրտի խանն ելեալ ի Թարվիզու յանկարծ և յանկարծելի իմն աւուր `եհաս ի գաւառն Վասպուրականի՝ այսինքն Վանայ: Եւ նախ քան զամենայն գործ՝ եհաս ի վերայ ժողովոյ երիվարացն Օսմանցւոց՝ և ի նոցանէ զորս ի յարձակի եգիտ՝ աւար հարեալ տարաւ ի բանակն իւր, և զորս եգիտ ի շղթայս և յոտնակապս, զամենեսեան ջլատեաց և կոտորեաց՝ և ինքն ի մէջ երկրին բանակ եդեալ և արձանացեալ նստաւ:

Իբրև ետես Ջղալօղլին եթէ Ալահվէրտի խանն եկեալ զայս ինչ գործեաց, հանդերձեալ պատրաստեաց

և նա զօրս բազումս՝ և կարգեաց նոցա զօրագլուխ զՎանայ փաշայն։ Եւ յորժամ եհաս օր մարտին, ելին ընդդէմ միմեանց պատերազմիլ ի մէջ դաշտին յանդիման Վանայ բերդին, որ և Ջղալօղլին ինքն նստեալ ի վերայ պարսպի բերդին հայէր ի վերայ մարտկացն՝ զի ոչ կարի հեռի էր ի բերդէն անդի պատերազմին։ Իբրև խառնեցան երկոքեան կողմանքն ի միմեանս, եղև անդէն սաստիկ գործ դառնութեան և անհնարին կոտորուածք, զի իբրև զհող և զքար անկեալ կային դիք մարդկան ընդ երեսս դաշտին։ Եւ պարտեցաւ կողմն Օսմանցւոց՝ և զօրացաւ կողմն Պարսից, և արարին փախստական զզօրսն Օսմանցւոց մինչ ի դուռն Վանայ բերդին։ Որ և ի հալածելն զՕսմանցիսն, երկուք ոմանք Պարսիկք զհետ մտեալ Օսմանցւոց և վարելով հասուցին մինչ ի դուռն բերդին, և ի մտանելն Օսմանցւոցն ի մէջ պարսպին, մտին և Պարսիկքն. և անդէն ի մէջ երկուց պարսպացն՝ զօրս առեն սիրհաճ, զմի Պարսիկն կալան Օսմանցիքն և տարան։ Իսկ միւս Պարսիկն անդէն սպան զայր մի Օսմանցի՝ և էառ յինքն զգլուխ Օսմանցւոյն։ Եւ ապա էառ նոյն պարսիկն ինքն զդաստառակն իւր՝ ձգեաց ընդ երկինս ի վեր, և ի ներքուստ կողմանէ ածեալ ինքն զսուսերն իւր՝ և հատեալ յերկուս բաժանեաց զդաստառակն իւր առաջի զօրացն Օսմանցւոց՝ և առաջի Ջղալօղլւոյն, զոր իւրով աչօքն ետես Ջղալօղլին քանզի նստեալ կայր ի վերայ պարսպին մերձ տեղւոյն այնմիկ։ Եւ ի տեսանելն զայն՝ Ջղալօղլւոյն, զդաստառակն իւր եդեալ ի վերայ աչաց իւրոց յարտասուս հարեալ ելաց, քանզի ծանեաւ յոգի իւր զբեկումն իւրոյ ազգին՝ և զյաջողութիւնն Պարսից։ Եւ Պարսիկն որ՝ հարեալ Թրոմն իւր եհատ զդաստառակն իւր ելեալ ի պարսպէն գնացեալ խառնեցաւ ի գունդն իւր, ի զօրսն Պարսից։

Եւ յետ փախնելոյ Ալահվէրտի խանին զզօրսն Օսմանցւոց, եկեալ այնուհետեւ ի մէջ երկրին յաւարել եւ յապականել, ըստ ասացելումն Ցեառն, թէ նախ զհզօրն կապիցէ՝ եւ ապա զտուն նորա աւար հարկանիցէ, սոյնպէս եւ սա արար, քանզի զամենայն համբարս ցորենոյ եւ զայլ պտղոց, եւ զխոտոյ եւ զյարդի, եւ զշինուածս տանց զամենայն այրեցին հրով։ Ուր եւ կարացին՝ հասանել զամենայն[1] բնակիչս գաւառացն՝ որք եւ անկան ի ձեռս՝ զարիսն կոտորեցին՝ եւ զայլսն գերեցին։ Եւ մեծ բանակ արարեալ եթէ զմարդ եւ եթէ զանասունս, միահաղոյն վարեալ, ածեալ, բերեալ հասուցին ի Թարվէզ ի լիութիւն ազգին Պարսից։

Իսկ Ջղալօղլին իբրեւ ետես զայսպիսի մեծ բեկումնս։ Եկեալ ի Վանայ, եմուտ ի նաւ եւ ծովով գնաց յԱրծկէ՝ եւ անտի ի Խնուս եւ անտի յԱրզրում, եւ նստաւ անդ. եւ կոչեաց առ ինքն զամենայն շրջակայ իշխանս, եթէ զկողմանցն Վրաց, եթէ զկողմանցն Մարաց, ընդ որս էր եւ մեծ իշխանն ազգին Մարաց՝ որոյ անունն էր Միրշարաֆ. եւ այսպէս զամենայն կուսակալս եւ զկողմնակալս սահմանացն այնոցիկ ժողովեաց ի քաղաքն Կարնոյ՝ այսինքն յԱրզրում։ Եւ հրամայեաց նոցա զի իւրաքանչիւրք[2] իւրեանց զօրօքն պատրաստք լիցին ամենայն կազմուածովք եւ պատերազմական գործեօք, զի յորժամ ինքն Ջղալօղլին ի Վան հասանիցի, եւ նոքա եւս անդր գտանիցին՝ զի խառնեալ ի միասին գնասցեն ի Թարվէզ պատերազմել ընդ Պարսից։

Ապա եկեալ Ջղալօղլին ի Կարնոյ եկեալ ի Տիգրանակերտ, որ է Համիթ. եւ անդ եւս զկայ առեալ հոգայր զպատրաստութիւն պատերազմին, եւ ժողովէր ինքեան զզօրս ամենայն Միջերկրեայ գաւառաց, զԱսիոյ եւ զՄիջագետաց։

---

1 Ոսկ. չէ. զամենայն։—2 Նոյն. իւրաքանչիւր ոք։

Յորում ժամանակի մեծ և անուանի փաշայն՝ զոր Նասիֆ փաշայ ասէին, որ էր ինքն ի քաղաքէն Բերիոյ՝ որ է Հալապ, և սա ևս եկն ի Համիթ առ Ջղալօղլին. և ի միասին հոգային զհոգս պատերազմին, զի և սա համապատիւ էր Ջղալօղլույն։ Ապա երկոքեան ժողովեցին ի վերայ ինքեանց զամենայն զօրս աշխարհին Օսմանցւոց՝ և ելեալ ի Տիգրանակերտու եկին միւսանգամ ի Վան, և անդ ևս ժողովեցին զՔրդստանայ՝ և զԱրզրումայ կողմանցն զօրսն ի վերայ իւրեանց. և եղեն մեծ և անթիւ բանակ։ Եւ [1] ելեալ ի Վանայ ուղղեցան դէպ ի Թարվէզ, և հասին ի սահմանս նորա մերձ ի գիւղն, զոր Սօֆիան ասեն, և անդ ի դաշտին յարդարեցին զպատերազմ, և պարտեցան զօրքն Օսմանցւոց։

Քանզի բազմահնարն Շահաբաս, զզօրսն Պարսից բաժանեաց ի չորս գունդս, զգունդն առաջին ետ ի ձեռս Ալահվէրտի խանին, և հրամայեաց նմա, զի դէմ յանդիման և աներևս եղցէ ի պատերազմ ընդ բանակին Օսմանցւոց։ Իսկ զայլ երիսն ետ երից նախարարաց իւրոց, զմինն Ղառչղայ խանին, և զերկրորդն ետ Զլֆիղար խանին, և զերրորդն՝ Փիրպուտաղ խանին. և սոցա հրամայեաց զի թաքնաբար դարանակալք լիցին յերից կողմանց։ Իսկ ինքն շահն իւրովք ծառայիւքն ի գլուխ հեռի լերանց ղօղեալ դադարեալ կայր։

Եւ յորժամ եհաս պայմանեալ օր մարտին, ելեալ Ալահվէրտի խանն իւրով գնդաւն և երևեցաւ դէմ յանդիման զօրացն Օսմանցւոց, և ի տեսանել զնոսա Օսմանցւոցն, կարծեալ յինքեանս թէ միայն այն է զօրքն Պարսից՝ որք երևին, վասն որոյ ուրախութեամբ ի վերայ դիմեցին՝ և սկսան պատերազմիլ։ Յայնժամ կողմն Պարսից վաղվաղակի ըստ պայմանելոյն իւրեանց բարձ-

---

[1] Ոսկ. ձե. Ա.

բացուցին զծուխ նշանին, և ի տեսանել դարանամուտ Պարսիցն զծուխն, փութանակի ելեալք յիւրաքանչիւր տեղեաց, դիմեցին ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ և ի չորից կողմանց ի մէջ փակեալ կոտորեցին, դիաթաւալ արարեալ զամենեսեան տապաստ արկին դաշտին։ Եւ եղև անհնարին աղէտ և օր դառնութեան։

Եւ Սարդարն ի մէջ իւրում բանակին կայր, բայց վշտագին ցաւօք իբր զկին ծննդական պաղատաւոր երկօք և ոչ առնոյր ժոյժ և դադար ի միում տեղւոջ, այլ վարանեալ սրտիւ հայէր, և դիտէր զճանապարհս մարտիկ զօրացն՝ թէ [1] գուցէ գտանիցի ոք, որ եկեալ բարի համբաւաբեր նմա լիցի՝ և ոչ գոյր։

Կայր և մերձ Սարդարին մեծ պարոնն Քուրդ Միրշարաֆն՝ զոր կանխաւ յիշեցաք, և նա դիտաց յոգի թէ պարտեցաւ կողմն Սարդարին, վասն որոյ ոչ եկն համբաւ. և ջանայր, և հնարէր, զի կերպիւ ինչ հեռասցի ի Սարդարէն՝ զի թերևս փախիցի։ Եւ սկսաւ ասել ցՍարդարն կեղծաւոր բանիւ և գթով, խնդրեմ ի վեհական տէրութենէ քումմէ, զի և ինձ տացես հրաման մտանել ի պատերազմ. զի թերևս պատեհեցայց ի պատերազմի անդ՝ շահին։ Եւ ի բազում խնդրելոյն հրամայեաց գնալ, իսկ Միրշարաֆն իբրև հեռացաւ ի բանակէն, դարձոյց զերեսս դէպ ուղիղ յաշխարհն իւր, ուր և գնաց անդառնալի։

Եւ զօրքն Պարսից յաղթեցին զօրացն Օսմանցւոց և դարձուցին ի փախուստ դէպ ի բանակն Օսմանցւոց՝ և ինքեանք զկնի հալածելով և կոտորելով, մինչ բերեալ լցին ի մէջ իսկ բուն բանակին՝ որ և ի մէջ այնմ բանակին մտին Պարսիկքն և կոտորէին զՕսմանցիսն. և Ղառչղայ խանն գնացեալ մերձ առ վրանն Սարդարին

---

[1] Ոտ. վր. թէ.

էզարկ թրով զշրջապատ վրանի Սարդարին, եհատ՝ և ընդ մէջն անցեալ գնաց. և ոչ ոք կարաց ընդդէմ ելանել նմա։ Եւ մինչև ցերեկոյ ոչ դադարեցաւ գործն արիւնահեղութեան, զորս կոտորեցին, և զորս փախուցին, և զորս ձերբակալ արարին՝ և ածին առաջի շահին, քանզի ասէին. երեսուն և չորս անուանի իշխանք ըմբռնեալք եղեն, Փաշայ, Քէհիայ, Դուլար Աղասի, Սանջախ բէկի. և այլք յոլովք։

Իբրև կառ գործն զկատարումն իւր ըստ ասացելումս օրինակի, և տեսեալ Ջղալօղլույն թէ պարտեցան զօրքն իւր՝ և ոչ ևս կարէ միւսանգամ կազմել ռազմ և պատերազմիլ, նաև մնացեալ զօրքն իւր գաղտագողի յետս փախչէին։ Մտախոհ եղեալ՝ թէ մի գուցէ ինքն ևս ըմբռնեսցի ի ձեռս Պարսից՝ խորհեցաւ զի դարձցի անդրէն ի Վան քաղաք։ Եւ յայնմ գիշերի ելեալ Սարդարն և ամենայն զօրքն իւր սկսան յետս դառնալ, և իբրև այս այսպէս եղև, ամենայն ոք զապրուստ անձին իւրոյ ջանայր, և փութայր հապճեպ տագնապաւ՝ զի ինքն քան զընկերն իւր կանխաւ փախիցէ, զի մի՛ գուցէ յետուստ ժամանեսցեն Պարսիկք՝ և կոտորեսցեն զինքեանս։ Եւ յայսմ տագնապելի փախստեանս պատճառէ թողին զամենայն ինչս իւրեանց, զկահ և զկարասիս, զուղտս և զգրաստս, զմթերս կերակրոց, և զգանձս սնդկով, և սապատով. քանզի զճրագունսն վառեալ թողին և զվրանսն կառուցեալ՝ որպէս կանխաւ կառուցեալ էր, այնպէս թողին[1], և զամենայն ինչ զոր ունէին յինքեանց ի բաց լքին, և դարձուցեալ զերեսս ի յետս ճեպէին ի փախուստ, և մինչև ցլուսանալ այգուցն ոչ մնաց և ոչ մի։ Իսկ ի լուսանալ առաւօտին ծանուցեալ եղև զօրացն Պարսից փախուստն Օսմանցւոց. իբրև զե-

1 Ուղ. չէ. այնպէս թողին.

կուցին Շահաբասին, յայնժամ հրամայեաց զօրացն Պարսից մտանել ի բանակն Օսմանցւոց և աւար հարկանել, որք և առ ժամայն[1] յափշտակեալ իւրացուցին ի լիութիւն անձանց իւրեանց, և դարձան ուրախութեամբ ի Թարվէզ և անդ զետեղեցան շահն և զօրքն իւր։ Իսկ Սարդարն ելեալ ի Սօֆիանայ՝ գնաց փախստեամբ մինչ եհաս ի Վան քաղաք, և անտի մտեալ ի նաւ եանց զծովն և գնաց ի Համիթ և անդէն մեռաւ։ Պատերազմն ի Հոկտեմբերի քսան և հինգն եղև, և ինքն գնաց ի Համիթ՝ և[2] մեռաւ՝ ի Փետրվարի ամսոյ վեցն։ Ասի ևս յոմանց թէ ինքն զինքն դեղակուր արար վասն ամօթոյ պարտութեանն։

Արդ՝ գալն Ջղալօղլի Սարդարին երկու անգամ եղև, առաջին գալն ի սկզբան ՌԾԴ. թուին, յորում նոր էր մուտ Նաւասարդի ամսոյն՝ որ եկն ի Նախչուան, և անտի գնաց ի քաղաքն Վան։ Եւ երկրորդ գալն այս է՝ որ եկն ի Սօֆիան և յաղթեցաւ՝ և դարձաւ, ՌԾԵ. թուին, ի սկիզբն տարեմտին ի ժամանակս առաջնոյ[3] աշնան։

Եւ ի շարժմանէ այսց երկուց տիեզերակալացս՝ որք զարթուցեալք են ի պատերազմ, եթէ Սարդարն՝ որ եկն յարևմտից, և թէ շահն՝ որ ի կողմս արևելից՝ թէ որքան աւերումն և քանդումն եղև աշխարհի, թէ ի գալն և թէ ի դառնալն, թէ որքան ծանրաբեռն հարկապահանջութիւն եդեալ ի վերայ ժողովրդեանն և բռնութեամբ առին, նոյնպէս և զսուրսուսաթն՝ որ զկնի զօրացն բերել տային, և թէ զօրքն՝ և ի ձմեռն ելիվարօքն իւրեանց ղշլաղ տային, կամ զքանդումն տանց և այգեստանաց, և զկոխումն արտորէից՝ և զհանումն համբարաց՝ ցորենոյ և զայլ սերմանեաց, և աւարումն,

---

1 Ա—Եա. Եչեց. իսկոյն. — 2 Նոյն. չէ+. և. — 5 Նոյն. առաջին.

և յափշտակութիւն ընչից և ստացուածոց, զուստերաց և զդստերաց, և սպանումն անպարտ անձանց, զորս ի յայտնի և զորս ի գաղտնի, և զայլ ամենայն չարիսն զոր ածին ի վերայ աշխարհի. մեզ ոչ գոյ կար թուելոյ, այլ այնմ, որ թուէ զբազմութիւն աստեղաց, և ստեղծ զայնքան անձինս որք մատնեցան անողորմ և մարդադէմ գազանացն այնոցիկ։

Գլ. Է.

Յաղագս յայտնելոյ ջալալոցն եւ սաստիկ սովուն եւ մարդակեր գայլոցն, եւ այլ եւս աւարառութեանցն՝ որք ժամանեցին ի վերայ աշխարհի:

Եւ ի մէջ երկուց տիեզերակալացս այսոցիկ, այսինքն շահին և Ջղալօղլուն, ամայի մնաց երկիրն Արարատու իւրովք մանաւոր գաւառօքն. քանզի շահն գնաց ի Թարվէզ՝ և ոչ է[1] ձեռնհաս. և Սարդարն Օսմանցւոց մեռաւ, և ինքեանք ի մէջ իւրեանց[2] ի խռովութեան կան,[3] զի ոչ են[4] միաբանք։ Վասն որոյ պարոնայք ոմանք՝ որք խրախուսեալ յուսային ի զօրութիւնս անձանց իւրեանց, գային և տիրէին երկրին Արարատու՝ այսինքն Երևանայ։ Որպէս պարոնն՝ զոր Քանաքըռու Մահմատ ասէին, եկեալ տիրացաւ աշխարհին։

---

1 Ոսկ. էր.—2 Նոյն. ինքեանց.—3 Նոյն. կային.—4 Նոյն. էին.

Եւ զկնի սորա այլ ոմն Ջալալի փաշայ՝ զոր Թօփալ Օսման փաշայ ասէին, որ էր Ջիալ փաշայի որդին՝ սա եկեալ մարտեաւ ընդ Քանաքըռու Մահմատին ի գաւառին Կոտէից. որ այժմ ասի Ղըխբուլաղ՝ մերձ ի գիւղն Առինճ. և փախոյց զՔանաքըռու Մահմատն։ Եւ ինքն Օսման փաշայն հաւաքեալ առ ինքն բազում արս սրիկայս՝ արար իւր զօրս իբրև հազարաց և կալեալ իւր կայան զգիւղն Կարփի՝ և անդ նստէր. և զձմեռն զայն անդ ձմերեաց։ Յուստի առաքէր զզօրս իւր ի շըրջակայ գաւառս և ի գիւղս բերել ինքեանց և անասնոց իւրեանց կերակուրս։ Եւ գնացեալ այքն՝ յոր շէն և մտանէին, ոչ շատանային բաւականաւն, զի յետ հոգալոյ զկերակուրն՝ աւելորդաց ձեռն արկանէին, քանզի կալեալ զարսն կախէին, զոմանս յոտից՝ և զոմանս ի բազկաց և զոմանս յերկուորեաց, և անողորմ գանիւ հարեալ բրածեծ առնէին՝ մինչ անշունչ լեալ իբր զմեռեալս դառնային. և ոմանք ևս ի տանջանս մեռանէին։ Ոմանց զականջս կտրէին, և ոմանց ընդ քիթն նետ հարեալ շրջեցուցանէին։ Եւ այսպէս չարաչար տանջանօք չարչարէին ցուցանել նոցա համբարս ցորենոյ և գարւոյ. զարանս և պահարանս գանձուց և ստացուածոց։ Եւ զյատակս տանց և զայլ շինուածոց փորեալ բրբրէին վասն գիւտի ընչից, և փլուցեալ զորմս և զծածկոյթս յարկաց յուզէին՝ և ուռնէին ինչս. և յայսմ պատճառէ աւերութիւնս բազումս գործէին։ Եւ նախ զգիւղն Կարփի այսպէս արարին, և զայր մի ի նոյն գեղջէն՝ վասն պահանջելոյ ընչից բազում աւուրս ի բանտի և ի կապանս պահեցին. յոլով օրինակաւ տանջեցին, և յետոյ սպանին՝ և ընդ մէջն յերկուս հերձեալ կախեցին զորմով ի վերայ ճանապարհին յահ և երկիւղ տեսողաց զանցառականացն։

Եւ գնացեալ ոմանք ի Ջալալոցս այսց ի մեծափառ

ուխտն Ցոհանավանք. յորոց տեսլենէ բնակիչք վանիցն ամենեքեան փախեան, բայց զոկար և զհիւանդ աբեղայ մի կալան՝ և խնդրէին ցուցանել դարան և պահարան։ Եւ յաւուրս երիս կախեալ զաբեղայն ի բազկացն՝ ծե-ծէին. և [1] իբրև ոչ եցոյց պահուստ ինչ՝ զայրացեալ Ջալալոցն որպէս զգազան կատաղի՝ իջուցեալ ի բազկացն յերկուորեացն կախեցին և չարաչար տանջէին. և [2] նա անճար մնացեալ եցոյց նոցա զդարանն, և մտեալ ի ներքս ի դարանն կողոպտեալ յափշտակեցին զամենայն ինչսն, և զկնի՝ զաբեղայն ևս սպանին՝ և արկին ի խոր մի վանիցն։ Եւ անտի ի դարանէն հանին բազում ինչս, եթէ շուրեղէն, եթէ պղնձեղէն, եթէ անօթք, խաչ, սկիհ, շուրջառ, բուրվառ և գրեանք, որք էին ամենեքեան պատուական գրեանք վարդապետականք։ Այլ և էին ի դարանի աստ սրբութիւնք վանիցն. որ էր վարշամակ երեսացն Քրիստոսի, և մասն ինչ ի փուշ պսակէն Քրիստոսի. և աջն սրբոյն Ստեփաննոսի նախավկային։ Եւ այլ ևս սրբութիւնք և սուրբ նշանք, զորս առեալ զամենեսեան Ջալալիքն՝ և տարեալ կորուսին. և զանուն գլխաւորի սոցա, Արդուռահման Մուսալիմ ասէին։

Եւ ի գիւղն Ուշական կալեալ զայլ ոմն այր կա-խեալ յերկուորեացն տանջէին ցուցանել պահուստ, և զայն տեսեալ միւս գեղականացն առեալ զընտանիս իւ-րեանց փախեան ի գաւառն Գեղարքունի։ Եւ այսպէս արարին զամենայն շրջակայ զգիւղսն և զգաւառսն կար-փու։ ԶԱպարանու երկիրն, զԴրխբուլաղայ երկիրն՝ զծաղկունուց ձորի երկիրն, զԳառնու ձորն, զՈւրծայ ձորն և յայնկոյս գետոյն Երասխայ՝ զՄահաթայ երկիրն՝ զԿողբ և զԱղջաղալէն։

Ոմանք յայսմ Ջալալոցս գնացին ի գաւառն Գառ-

1 Ովէ. ժե. 4. — 2 Նոյն. ժե. 4.

նւոյ և գտին փորածու այր մի, յորում բազում քրիստոնեայք յահէ նոցա փախուցեալք թաքեալ կային։ Եւ էր այրն այն գետնափոր և մեծ. որոյ միայն[1] մուտ կայր, և ոչ յայլ ուստեքէ ծակ կամ շնչահան կամ հովամուտ, որ[2] ի վաղեմի ժամանակաց յիշխանաց փորեալ և կազմեալ էր վասն իւրոց ինչ պիտոյից. և արդ աղքա մտին անդ և թաքեան յահէ Ջալալոցն։ Իբրև եկին Ջալալիքն և գտին՝ և ի բազում աւուրս մարտընչէին, և ոչ կարէին առնուլ զայրն զայն։ Ապա արարին հնարս. զի բերին հուր, և վառեցին առաջի դրան այրին, որպէս զի ծուխ հրոյն մտեալ ի յայրն վտանգեսցէ զնոսա, որք ի ներքս իցեն. և ի վերայ հրոյն արկին ժահահոտ պէշ ինչ՝ զորոյ հոտն տանէր օդն ի ներս ի յայրն։ Եւ էին յայրին մարդիկք բազումք իբրև հինգ հարիւր կամ ևս աւելի. և վասն խաւարչտին և նսեմութեան յարկին[3] ճրագունք էին վառեալ։ Եւ ի ժահահոտութենէ գիշոյն, զոր արկեալ էին ի վերայ հրոյն՝ որ ի յայրն մտանէր՝ սկսաւ ապականիլ օդն, որ ի մէջ այրին. և քարինքն ամենայն քրտնեցան՝ և հոսէին ի քարանցն քրտունքն որպէս զջուր. և ճրագունքն ամենայն սկսան նուազիլ մինչև ամենևին շիջան, և մարմինք մարդկանցն սկսաւ ուռիլ և բշտիլ և դեղին ջուր հոսիլ. և ամենեքեան շնչարգելք եղեալ նուաղեցան, և թուլացեալ թալկացեալ անշնչացան իւրաքանչիւր յիւրում տեղւոջ և առհասարակ արք՝ և կանայք ծերք և տղայք՝ և մատաղ մանկտիք ի միասին[4] մեռան. և ի նոցանէ ոչ ոք ել արտաքս։ Եւ Ջալալիքն, որք զդուռն այրին պահէին. գիտացին թէ ոչ հնազանդեցան նոցա, գաղթեալ արքն՝ որք ի մէջ այրին վասն որոյ[5] երկմիտ

---

1 Ա–եր. Երէց. չիք. մուտ։ —2 Ոսկ. և։ —3 Նոյն. այրին։ — 4 Ոսկ. չիք. ի միասին։ —5 Նոյն. չիք. վասն որոյ։

եղեալք ի տարակուսի կային։ Եւ յայժամ կալան Ջալալիքն զայլ ոմն այր ի նոյն գաւառէն՝ և բռնադատէին ցուցանել զապրանս. և նա յահէ սպանմանն ասաց, եկայք ընդ իս զի գնասցուք ի Քոռադարէն՝ և անդ ցուցից ձեզ զապրանս։ Իբրև նոքա գնացին, յայնժամ նախախնամութեամբն Աստուծոյ արք ոմանք որք ի նոյն դարանէն ելեալ էին յառաջագոյն, և վասն իւրեանց ինչ գործոյ գնացեալք էին յայլ ուրեք, ի նմին ժամու եկեալ ի հեռաստանէ դիտեցին թաքնաբար զդուռն այրին՝ զի ոչ կայր անդ ոք. ապա եկին ի դուռն այրին, տեսին զայս ամենայն եղեալ և փութացեալ զհուրն ի բաց ցրուեցին. և վառեցին ճրագ՝ և մտին ի ներքս ի այրն և տեսին զամենեսեան իբրև զմակաղեալ ոչխարս յիւրաքանչիւր տեղիս մեռեալ՝ հայր զորդւով՝ և մայր զդստերբ՝ և եղբայր զեղբարբ՝ զմիմեամբք զիրկս ածեալ և մեռեալ։ Եւ փութացեալ նոցին նախ՝ զընտանիս իւրեանց արտաքս քարշեալ ձգեցին ի դուրս ի յայրէն և ապա՝ զայլս, որքան կարացին արտաքս բերին. և զորս արտաքս՝ բերէին, և հոգ տարեալ սպասաւորէին, զձիւն և զջուր ի վերայ հեղուին, շնորհօքն Աստուծոյ կենդանանային, և այսպէս զբազումս արտաքս բերեալ ապրեցուցին ի դառն մահուանէն. բայց զորս ոչ կարացին արտաքս բերել, ամենեքեան մեռան այսպիսի մահուամբ։ Եւ որք ելեալ ի դարանէն ոչ ևս կարացին կալ ի տեղին յահէ Ջալալոցն, այլ փութանակի մեկնեալք ի տեղւոյն փախեան յայլ ուրեք ապրեցուցանել զանձինս։ Եւ այսպէս զամենայն գեղօրայս գաւառացն Արարատու յաւեր և յապականութիւն դարձուցին. և ի կերակրելի սերմանեաց և ի բնակչաց թափուր արարին։

Եւ ապա խորհեցան Ջալալիքն գնալ յերկիրն Գեղամայ՝ որ է Գեղարքունի, քանզի գիտէին թէ անդ են համբարք ցորենոյ և գարւոյ, և ջոկք ոչխարաց և ան-

դիոց, որ է պախրէք՝[1] յոլովք գոն։ Վասն որոյ յոլովք ի զօրացն Ջալալոց ելեալ գնացին յերկիրն Գեղամայ. և զբազում գիւղս կողոպտեալ աւար հարին։ Եւ բացեալ զհամբարս նոցա զցորենոյ և զգարւոյ, և նոցին տեարց ձեռօքն բարձին նոցին անասնոցն, և զնոսին կոլան պահակ՝ որ է կոռ, վարող և քշող բեռնակիր անասնոցն, որովք բերէին զցորեանն ի բնակարանս իւրեանց։ Այլ և կանայս, և տղայս գերացուցին[2] բերին ընդ ինքեանս. որպէս զի տեարք գերեացն արծաթ և ոսկի վասն նոցին դնոցն բերեալ դարձուսցեն զգերիսն. և իբրև ըստ բաղձանաց սրտից իւրեանց զոր ինչ և կամեցան, արարին. և ապա չուեցուցեալ զգերեալ կանայսն և զտղայսն, և պահակ կալեալ արամբքն բարձեալ նոցին զդրաստուցն և եզանցն զամենայն բեռինսն. և զբազմութիւն անասնոցն՝ որք էին ջոկով ոչխարք՝ և պախրէք և երամով ձի՝ վարեալք բերէին։ Իբրև եկին երկուց աւուրց ճանապարհ՝ և զի էր գործառնութիւնս այս ի ժամանակս ձմերայնոյ, այլ և ձմեռնն այն ծանրաձմեռն և ձիւնամեծ էր, վասն որոյ բեռնակիր անասունքն ամենեքեան վաստակեալ մնացին ի ճանապարհին, և ի թանձրութենէ և ի յոլովութենէ[5] ձեանն ոչ կարէին գնալ։ Յաղագս որոյ զմնացեալ դրաստուց բեռինսն բաժանեցին շալակ շալակ. և շալակեցուցին գերեացն արանց և կանանց և տղայոց. և այսպէս անցուցեալ զսարն՝ հասուցին ի Կարփի գիւղն։ Բայց թէ որքան դառն աղէտիւ վտանգ էր ողորմելի ժողովրդեանն՝ որք պատահեցան այսմ գործոյ. զի զօմանց զձեռս և զոտս և զունչս տարաւ ցուրտն, որք յօդաթափք եղեն ի մասանց մարմնոյ։ Եւ այլք ի շընչմանէ ցրտասառոյց դառնաշունչ[4] օդոյն սառուցեալք

---

1 Ոսկ. պախրէ։—2 Նոյն. գերացուցեալ։—5 Նոյն չիք. ի յողովութենէ։—4 Նոյն. չիք. դառնաշունչ։

անդէն իսկ ի ճանապարհին մնային՝ և մեռանէին.[1] և[2] այլք ոմանք ասէին վասն կանանցն, որք զցուրտն շալակեալ ունէին ի բազում վաստակոյն խոնջեալ և ի ցրտոյն նքողեալ պակասեալ ի զօրութենէ և վհատեալ ի կենաց ոչ կարէին գնալ. նստէին շալակովն ի վերայ ձեանն և մնային և մեռանէին: Եւ այսպէս՝ որք մեռան ի ճանապարհին. մեռան, և որք մնացին՝ զամենեսեան բերեալք հասուցին ի Կարին. զոմանս վաճառէին արծաթոյ. և զոմանս պահէին ի ծառայութիւն գործոց իւրեանց: Եւ Ջալալիքն կացին այսպէս մինչ ի գարունն՝ և հասին մերձ յաւուրսն Համբարձմանն: Եւ ապա ելեալք անտի գնացին յերկիրն Ախլցխու. և անդ ևս զայն գործ կատարէին:

Եւ ոչ միայն այս Ջալալիքս այսպէս առնէին. գոյին և այլք Ջալալիք՝ ոմանք յոլովք՝ և ոմանք սակաւք. որ ի տեղիս տեղիս զկայ առեալ և որջացեալք էին՝ զայսպիսի գործս գործէին: Այլ և ի քրիստոնէից ազգէ՝ այլք ոմանք, որք ոչ ունէին զերկիւղն Աստուծոյ յինքեանս. իբրև տեսանէին թէ այլազգիքն որպէս առնեն. ինքեանք ևս սկսան այսպէս առնել. վասն զի աչօք տեսին և սրտիւ յօժարեցան. եթէ յայտնի յափշտակութեամբ՝ և թէ գաղտնի գողութեամբ այնպէս առնէին. քանզի երկիրն անտէր և ամայի էր յաշխահակալ բռնաւորաց. և ամենայն ոք զախորժակս կամաց իւրոց կատարէր: Արդ՝ որպէս պատմեն տեսօղք ժամանակին, զի բնաւ ոչ գոյր նշոյլ բարութեան յաւուրսն յայնոսիկ բաց ի թշուառութեանցն, որպէս պատմեցաք, և տակաւին ևս պատմելոց եմք: Վասն զի Թագաւորն արեւելից Շահաբաս զօրօքն Պարսից զբաժին արևելեայ

1 Օրին. մնացին և մեռան: — 2 Նոյն. ասա պակասէ այն հատուածն. և այլք ոմանք . . . մնային և մեռանէին.

աշխարհիս յաւէր դարձոյց։ Սոյնպէս և Ջալալիքն՝ որք ի մասն բաժնի արևելեայ երկրիս գերագոյն քան զնոսա աւերիչք և ապականիչք։ Եւ Սարդարն Օսմանցւոց նոցին զօրօքն ի Միջերկրայս՝ սկսեալ ի Կոստանդնուպօլսէ մինչ ի յԵրևան քաղաք աւերեցին. սոյնպէս և Ջալալիքն, որք էին յաւուրսն յայնոսիկ ի կողմանս երկրին Օսմանցւոց, գերագոյնք քան զնոսա աւերիչք։ Եւ սոքա էին արք անուանիք՝ և յաղթողք՝ և քաջ պատերազմողք՝ և անպարտելի ախոյեան։[1] Եւ զի էին Ջալալիքս այսոքիկ բազումք, վասն որոյ հարկաւոր համարիմ շարադրել զանուանս նոցա, որով մարթասցիս վերահասու լինել աւերման աշխարհաց՝ որ ի նոցունց եղև.[2] Թէ որքան եղեալ է և զոր ինչ լուաք յականատես պատմողաց՝ զայն գրեմք։

Նախ Ղարայ եազիճին բազում հեծելօք, որ ի ՌԽԼ. Թուին ամպստամբեցաւ ի Թագաւորէն, և եկեալ յՈւրհայ քաղաք եմուտ ի բերդն, և ամրացաւ։ Եւ հրամայեցաւ ի Թագաւորէն ի վերայ սորա Սարդար գալ. և Սարդարն եկեալ ԽՌ. մարդով ոչինչ կարաց ստնանել դարձաւ։ Եւ ապա Եազիճին ելեալ ի բերդէն՝ և այլ ևս զօրս ժողովեաց ի վերայ իւր, և նոքօք սկսաւ աւերել զաշխարհս, և նախ զՈւրհոյ քաղաք և ապա զայլս՝ զԹօխաթ, զՍեբաստիա, զԲուրսայ, զԱնկիւրիայ, և այլ ուր և հանդիպեցաւ։ Եւ զխարաջն (գլխահարկ) զոր հանապազ Թագաւորն առնոյր ի ժողովրդոց, այս Եազիճիս զերկու տարւոյ խարաջն ինքն էառ, և իւրոց զօրացն ռոճիկս բաժանեաց։

Հուսէյին փաշայ՝ ՌԽԸ Թուին ապստամբեցաւ ի Թագաւորէն։ Քօսայ Սաֆար ՌԽԸ. Թուին ապոտամբեցաւ։ Ահմատ փաշայ ՌԾ. Թուին ապստամբեցաւ։

---

1 Ոսկ. չէ. ախոյեան.—2 Նոյն. եղեն.

Ինջաղան ՌծԳ· Թուին ապստամբեցաւ։ Ցուլալրղստին ՌծԴ· Թուին ապստամբեցաւ։ Թաւուլն ԺԲՌ· մարդով ՌԽԲ· Թուին ապստամբեցաւ։ Այս Թաւուլիս եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք։ Մահմատ փաշայ ԻՌ· մարդով։ Մանօղլի։ Ջանփօլատօղլի Ալի փաշայ։ Սորին եղբայրն՝ զորոյ անունն ոչ գտաք, Քօռօղլի, այս այն Քօռօղլին է, որ բազում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աշղներն եղանակեն։ Գզիրօղլի Մուստաֆայ բէկ Ռ· մարդով· և սա ևս ընկեր է Քօռօղլույն՝ զոր յոլով տեղիս ի մէջ իւր խաղին զսա յիշէ։ Միւս Մուստաֆայ բէկ։ Ղա-րաղաշ։ Պալուճասիպ։ Եօլայ սըղմաղ, Թանըրի Թանի-մազ։ Գօկապախան Չըփլախ։ Քեասաքեաս։ Քըլու։ Ղա-րասահաթ։ Աղաջդանփիրի։ Սոքա ամենեքեան Ջալալիք էին որք ոչ հնազանդէին Թագաւորին. և ոչ ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշ-խարհակործանք. և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշին-ուածսն հրդեհեալ այրէին։

Ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև ցԵրևան քաղաք· ի Բաղդատայ մինչև ցԴամուրղափուն, զսպի-տակ ծովու մէջն և զսեաւ ծովու մէջն. այս եղերքս՝ զորս ծրագրեցի. զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և յապականութիւն դարձուցին։

Եւ յայսմ պատճառէ հողագործք և երկրագործք՝ որք յիւրաքանչիւր տեղիս գոյին, յերկիւղէ և յահէ սոցա փախուցեալք ի բերդս և ի դղեակս, և ի փապարս լերանց ամրանային. և ոչ կարէին առնել զերկրագոր-ծութիւն, վասն որոյ սերմանել և հնձել և կալ և կուտ բարձաւ ամենևին և սկսաւ լինել սղութիւն հացի և ամենայն ուտելի իրաց և ոչ գտանիւր. և թէ ուրեք ուրեք ևս գտանիւր, և այն ևս ծանր գնոյ։ Եւ ի ժա-մանակի սղութեանս այս եկն մարախ յընդհանուր Մի-

ջերկրայս և ահար միանգամայն զամենայն երկիրս և եկեր զխոտ, զբոյս, և զայլ կանաչ՝ որ երևիւր։ Յորոյ յետադայ եղև սով սաստիկ. և բնաւին ոչ երևիւր հաց և կերակուր և այլ ինչ ուտելի։

Եւ յայսմ ժամանակի եղեն ցիր և ցան ազգն Հայոց և գնացին իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց գտանել տեղի կելոյ և ապրելոյ։ Ոմանք յՈւռուհայի, ոմանք ի Բուղդան, ոմանք ի Լէհ, ոմանք ի Կաֆայ, ոմանք ի Ծովեզերսն Պոնտոսի, ոմանք ի Թարվէզ և յԱրտաւէլ՝ և ի գաւառս սոցա։ Զի յազգէն Հայոց՝ որքան զարիպականք կան յասացեալ գաւառս, յայս ժամանակիս և յայս[1] պատճառէս են գնացեալ։ Եւ Շահաբաս Թագաւորն՝ որ ի Հայոց ազգէն այնքան բազում[2] քրիստոնեայս քշեաց և տարաւ յերկիրն Սպահանայ և Ֆահրապատու, նոքա ամենեքեան յայս ժամանակիս էին եկեալ՝ զոր շահն տարաւ։

Եւ ըստ ասացելումս ի ժամանակի սովիս՝ որք ցրուեցան և գնացին, և որք մնացին ի միջերկրայս, ի չգոյէ հացի՝ սկսան ուտել զկենդանիս՝ զարջառս՝ և զոչխարս։ Եւ ի սպառել սուրբ կենդանեացն՝ սկսան ուտել զանսուրբ կենդանիս՝ զձի, և զջորի, և զէշ և զայլ անսուրբ կենդանիս. մինչև զշուն, և զկատու, և այլ ինչ որ ի ձեռս անկանէր վասն կարեաց կերակրոյն։ Եւ իբրև այն առաւել սաստկացաւ սովն, սկսան ուտել զմեռեալս՝ և ոչ Թաղէին՝ այլ ուտէին. քանզի զօրացեալ էր ի վերայ աշխարհի սովն։ Եւ բազումք ի բազում տեղիս զկենդանի մարդս ըմբռնէին և ուտէին։

Որպէս պատմեցին մեզ Թէ յերկիրն Արարատու ի գիւղն որ կոչեն Ուշական, այր մին արարեալ էր վիհ ինչ ի մէջ տան իւրոյ Թաքնաբար, որ զայր զարիպական

---

1 Ո-ն. յայսմանէ.—2 Նոյն. չէ. բազում.

խարեալ բերէր ի տուն իւր և սպանեալ պահէր ի վիհն յայն՝ և յաւուրս յաւուրս[1] սակաւ սակաւ ուտէր. զոր յետոյ իմացան բնակիչք գեղջն՝ և հալածեալ փախուցին ի գեղջէն։

Եւ ի գիւղն՝ զոր Բջնի ասեն, ճանապարհորդք ոմանք՝ որք[2] ընդ այն անցանէին,[3] տեսանէին զի ծուխ ելանէր ի տանէ միոյ. և նիշ արարեալ գնացին ի տունն՝ տեսին կանայս երիս ի տանն՝ որ կառուցեալ էին պոյտն և եփէին կերակուր. իբրև ի վեր առին զխուփն՝ տեսին ձեռս և բազուկս և այլ միս մարդոյ, որ եփէին զի կերիցեն։ Իբրև բռնադատեցին զկանայսն խոստովանել զայն. յայնժամ նոքա զստոյգն ասացին, թէ վասն հարկի սովուն՝ որ ոչ ունիմք ինչ զի կերիցուք, վասն որոյ զանցորդ մարդիկս, որք ընդ այս անցանեն,[4] խաբելով բերեմք ի տուն՝ և սպանեալ եփեմք և ուտեմք։

Այլև յԱրգլում քաղաքի սմին օրինակաւ այսպիսի գործ եղեալ էր՝ զոր տեսողքն պատմեցին ինձ, թէ կանայք չորք միաբանեալ էին. և ի տան միում արարեալ ինքեանց բնակութիւն, որ մի և երկու ի նոցանէ աւուրց յաւուրս ելեալ արտաքոյ շրջէին և խաբէին զմարդիկ պատրողական բանիւք՝ և բերեալ ի տուն, ըմբռնեալ զմարդն սպանանէին, եփէին և ուտէին։ Եւ եղև ի միում աւուր զի զայր ոմն տարան ի տուն, և մինչ կամէին ըմբռնել զայրն՝ և այրն իմացեալ զխորհուրդս նոցա փութանակի ի բաց ոստեաւ, զերծաւ ի ձեռաց նոցա և փախուցեալ ել ի տանէն, և գնացեալ առ փաշայն, որ իշխան էր քաղաքին և[5] ծանոյց նմա. և իշխանն հրամայեաց զինուորաց գնալ ընդ առնն՝ և ըմբռնել զկանայսն. և զինուորացն գնացեալ ըմբռնեցին

---

1 Ուղ. օր ըստ օրէ.—2 Նոյն. չէ+. որք.—3 Նոյն. անցանելով.—4 Նոյն. չէ+. որք ընդ այս անցանեն.—5 Նոյն. չէ+. և.

զկանայսն։ Ապա սկսան խուզել զտունն, իբրև մտին ի ներքսագոյն տունն, տեսին ԻԴ. գլուխք մարդոյ՝ զորս սպանեալ և կերեալ էին. և զինուորքն բռնադատէին և խոշտանգէին զկանայսն ասել ստուգիւ զգործս իւրեանց. և նոքա պատմեցին թէ վասն վտանգի սովուս խաբանօք բերեմք զմարդիկս աստ՝ և սպանեալ ուտեմք։ Եւ կալեալ զկանայսն տարան առ փաշայն. և փաշայն հրամայեաց սպանանել զչորեսին կանայսն. և այնպէս արարին [1]։

Եւ մերձ Բասենոյ երկրին է գաւառ մի, զորոյ զանունն Խալիեազի ասեն՝ որ այժմս անբնակ է գաւառն այն. ուստի էր այր ոմն հաւատարիմ և բանագէտ. սա պատմեաց թէ ի ժամանակս այս սովիս՝ տղայք երկուք առ մեզ բնակէին՝ զի մեզ գոյր ցորեան ուտելոյ։ Եւ եղև օր ինչ, որ ոչ երևեցան տղայքն. և եկն առիս կարծիք՝ թէ մի գուցէ անկան ի ձեռս մարդակեր արանց՝ և կերեալ եղեն, և վասն ահի մարդակեր արանցն առի ընդ իս արս երկուս ևս, քանզի և ես երկնչէի միայն գնալ առ նոսա, և գնացի ի կարծեցեալ տեղին, ուր էին ժողովեալ բազում սովալլուկ մարդիկք արք և կանայք՝ յորոց գոյր կարծիք մարդակերութեան։ Իբրև մտի ի տունն հարցի ցնոսա՝ և նոքա յուրաստ եղեն, և էր թոնիրն ի վառ և պոյտն ի վերայ, յորում եփէին կերակուր. և առեալ ի բաց զխուփն հայեցայ ի մէջ պուտկին՝ տեսի զոտն տղային, ապա եկեալ եղբայր տղային և [2] ասաց՝ թէ զեղբայրն իմ մորթեցին և կերին. և այդ նորին ոտն է։ Եւ ես յետ բազմաց կսկծանաց՝ առեալ զմնացեալ տղայն տարայ ի տունս մեր՝ որ ապրեցաւ։ Այլ և սոյն այր ասէր՝ թէ տեսի զի երկու պառաւ կանայք՝ ոյք կալան զփոքր աղջիկ մի, խեղդեցին և կերին, և ես զայս ծանուցի Սարգիս անուամբ

---

1 Ոսկ. չէ. և այնպէս արարին։—2 Նոյն. չէ. և։

առն միոյ. և նա սպան զերկոսին պառաւսն։ Եւ բազումք ի բազում տեղիս այսպէս արարեալ էին. որսացեալք զմարդիկ և կերեալ։

Եւ ոչ միայն զայլ օտար մարդ ուտէին՝ այլ և արք և կանայք զզաւակս իւրեանց կերեալ են։ Որպէս լուաք թէ յերկիրն Սեբաստիոյ ոմանք զզաւակս իւրեանց կերեալ են։ Այլ և յայլում գաւառի կին ոմն զիւր երկու որդիս և զմի դուստրն կերեալ է։

Եւ ոմանք հարկեալք ի կարեաց սովուն ելանէին՝ և շրջէին ի շինամիջին և վասն պակասելոյ զօրութեան, ճնշեալ՝ և մաշեալ, և նքողեալ ոչ կարէին գնալ, անկանէին ի շինամիջի և յանցս ճանապարհաց և յանկիւնս որմոց և մռնչելով և նուալով և հեծելով[1] մեռանէին։

Եւ ոմանք եկեալք միաբանէին արք Ժ. և Ի. և Լ. և գնային ի գեղջէ ի գիւղ և յերկրէ յերկիր խնդրել կերակուր և ոչ կարէին գտանել, զի իբրև զԱստուածառաք պատուհաս ի վերայ ընդհանուր աշխարհի սփռեալ էր սովն, ըստ բանի մարգարէին, կոչեաց սով յերկիր նոցա և զամենայն զօրութիւն հացի եբեկ։ Էր զի ոմանք ի նոցանէ հասանէին ի շէնս, և էր զի ի ճանապարհին[2] մեռանէին։

Եւ ի դիականց մեռելոցս այսոցիկ կերին վայրի գազանք և անընդելք կենդանիք, մանաւանդ թէ գայլք. և ուտելով զմեռեալս, սովորեցան և զկենդանի մարդ ևս ուտել՝ զոր մարդագայլ ասէին։ Եւ այնքան սովորեցան և համարձակեցան գայլք ի վերայ մարդոյ մինչև զկենդանի մարդս պատառէին և ուտէին։ Եւ յայսմ պատճառէ երթևեկութիւն գնացից ճանապարհաց խափանեցաւ յահէ մարդագայլոցն։ Եւ այնքան վստահացան

1 Օրին. չիք. հեծելով.—2 Նոյն. չիք. ի ճանապարհին.

գայլք ի վերայ մարդոյ՝ որք գային ի մէջ շինին և մտանէին ի տունս, և որում և պատահէին եթէ յանկողնի ննջեալ տղայի, և թէ ի մէջ օրօրոցի, և թէ ի գիրկս մարցն, ի վերայ արձակէին և բռնութեամբ կորզեալ ի գրկացն և յօրօրոցէն յափշտակեալ՝ առեալ[1] փախչէին՝ և տարեալ ուտէին։ Այսմ գործոյս տեսողք յոլովք և բազումք[2] գոյին, որք զիւրաքանչիւր տեսեալն պատմէին գործս զարմանալիս և սարսռելիս։ Որ և այնմ ժամանակեան գայլատար մանկանցն բազումք գոն այժմ՝ որք եղեալք են արք կատարեալք և ծերացեալք, որոց ի գլուխն և յերեսն և յայլ տեղիս մարմնոյն տեսանի ակք վիրացն պատառոտեալ և գիշատեալ զոր արարեալ են գայլքն՝ որոց ի հարցանելն մեր վասն գիշատելոց տեղեացն, պատասխանեն թէ գայլն յափշտակեալ տարաւ զիս յուտել և ժողովեալ արանց բազմաց ազատեցին զիս ի բերանոյ գայլոյն։

Եւ եղև սով այս ի մէջ երկուց մեծ ծովուցն, այսինքն Սպիտակ ծովուն, և Սեաւ ծովուն ի մերձակայ գաւառացն Կոստանդնուպօլսոյ մինչև ի գաւառսն Թարվիզու, ի Բաղդատայ մինչև ի Դամուրղափուն, այնքան եզերացս մէջն եղև սովն և սատակացաւ, այնքան որ զշուն և զկատու և զայլ անսուրբ կենդանւոյ, և զմարդոյ միս կերան մարդիկ, որպէս և պատմեցաք։[5] Եւ եղև սկիզբն սովուս ի ՌԾԵ. թուին, յայսմ ամի թոյլ էր սովն և ոչ էր խիստ, իսկ ի մտանելն ՌԾԶ. թիւն, և ի ՌԾԷ. կարի սաստկացաւ, և ի մտանելն ՌԾԸ. թուլացաւ և ի ՌԾԹ. բարձաւ բնաւին ողորմութեամբն Աստուծոյ ամենախնամողին՝ որ ոչ իսպառ բարկանայ ստեղծուածոց իւրոց՝ և ոչ յաւիտեան պահէ ոխս, որում փառք յաւիտեանս ամէն։

1 Ոսկ. չէ+. առեալ.—2 Նոյն. չէ+. և բազումք.—5 Նոյն. չէ+. այնքան որ . . . պատմեցաք.

Գլ. Ը.

Յաղագս առման քաղաքացն Գանջայոյ եւ Շամախւոյ:

Յետ երկրորդի գալստեան և դառնալոյ Ջղալողլի Սարդարին, որ եկն ի Սօֆիան և պատերազմեցաւ ընդ Պարսից և պարտեալ դարձաւ ի Համիթ և մեռաւ։ Թագաւորն Պարսից Շահաբաս ամենայն զօրօքն իւրովք կայր ի Թարվէզ քաղաքի զձմեռն զայն՝ իսկ ի շնչել հողմոյն հարաւոյ՝ ի ժամանակս գարնան ժողովեաց զամենայն զօրս իւր՝ և գնաց ի վերայ զօրացն Օսմանցւոց՝ որք տակաւին էին ի քաղաքին Գանձակայ՝ որ է Գանջայ, յորում ամի էր Թուականն մեր ՌԾԵ. և ի հասանելն անդր շրջապատեալ զբերդն նստաւ ի վերայ։ Եւ զերկիրն ամենայն զրաւեալ ընդ իւրով իշխանութեամբն և պահէր ի խաղաղութեան, հրաման արարեալ իւրոց զօրացն մի՛ զոք խուել՝ և մի՛ զոք բռնադատել ի բնակչաց երկրին, ուստի լցեալ լինէր

ամենայն պիտոյք նոցա՝ մարդկան և անասնոց։ Եւ ինքն շահն ուշ եդեալ գործոյ պատերազմին՝ զի առցէ զբերդն պէս պէս հնարիւք։ Երբեմն սիբայ բարձրացուցեալ ի վերուստ ծեծէին. երբեմն ի ներքուստ զկատակս պարըսպացն փորեալ նաղմ առնէին, և զայն լնուին բարութով հրդեհէին, և զպարիսպն ի վեր առեալ ընդ երկինս ցնդէին։ Եւ երբեմն սուտ երդումն և դաշն խաղաղութեան գրէր շահն՝ և առաքէր ի մէջ բերդին, թէ դուք ամենեքեան ձերովք ընչիւք և ամենայն ընտանեօք ելեալ գնացէք յաշխարհն ձեր՝ և մեք ձեզ ինչ ոչ մեղանչեմք, միայն թէ զբերդն տո՛ւք մեզ։ Իսկ զօրքն Օսմանցւոց ոչ տային՝ այլ երկայնամտեալ համբերէին, և քաջութեամբ պատերազմեալ դիմակայէին։ Իսկ Պարսիկ զօրքն ոչինչ կրէին վտանգ՝ կամ կերակրոյ կամ ցրտոյ և կամ ի շրջակայ թշնամեաց՝ և կամ յայլ իրաց, այլ կային առանց պակասութեան և հանապազ պատերազմէին։ Եւ մինչ ետես շահն թէ սակաւ ինչ երկարի գործ պատերազմին՝ ձուլեաց անդէն երկուս թօփս մեծամեծս, հզօրս և ուժգնաբաղխս որոց ի ձգելն կարի փլուցանէր զպարիսպ բերդին. և սովաւ յոյժ վտանգ լինէր Օսմանցւոցն։ Ի վերջոյ ամենայն պատերազմին՝ բնակիչք բերդին զօրքն Օսմանցւոց հայէին շուրջ զինքեամբ, զի ոչ յուստեքէ գոյր նոցա օգնական՝ ոչ յիւրեանց շրջակայ քաղաքացն, նաև ոչ ի դրանէ թագաւորին իւրեանց. զի Ջալալիք բազում կային ի մէջ երկրին Օսմանցւոց՝ զորոց զանուանսն յանցեալ ճառիդ յիշեցաք, և նոքա այնու էին պատաղեալք։ Այլ և փաշայն Գանջայու անկեալ էր ի պատերազմին՝ որոյ անունն էր Ջընջիլղուան Ալի փաշայ։ Այլ և նոր ձուլեալ թօփն կարի փլուցանէր զպարիսպն. վասն որոյ յամենայն կողմանց ի նեղ անկեալք ետուն զբերդն Պարսից։ Իբրև էառ շահն զբերդն Գանձակայ՝ տիրեաց ամենայն

երկրին և կարգեաց անդէն իշխեցող զոմն՝ որում անունն էր Աղսադ Մահմատ խան։

Եւ մինչև ցայժմ առ ինքն ունէր շահն զԹոռն Աղէքսանդրու Թագաւորին Կախէթու զԹամրազն. և այժմ արձակեաց զնա գնալ յաշխարհն իւր հայրենի, տուեալ նմա հրաման իշխանութեան տիրել իւրոյ հայրենի աշխարհին՝ և վարել զգործ Թագաւորութեան իւրոյ։ Բայց կալ ի միաբանութեան և ի հնազանդութեան Թագաւորութեանն Պարսից. և Թամրազն գնաց ի Կախէթ ի հայրենիս իւր, վարէր զիշխանութիւն Թագաւորութեանն, և կայր ի հնազանդութեանն Պարսից։

Այլ և ոմանք ասացին թէ յետ առնլոյ շահին զԳանջայ, կային ի գաւառին Գանջայու Մահմետական հաւատով ազգ մի. զոր ինքեանք էլ անուանեն, և զանուանն այս էլիս Ջէկիրլու ասէին. որք էին դաւանութեամբ և կրօնիւք Օսմանցւոյն՝ զոր Սունի ասեն։ Հրաման արար վասն սոցա շահն ժողովել զամենեսեան ի մի վայր ի տեղի ինչ՝ որ էր տեղի հեղեղատի, որոյ մուտն նեղ էր՝ զոր պահէին Պարսիկք. և որքան դէպ ի ներքս երթայր լայնէր [1] և շուրջանակի բարձր փուլ, յորմէ ոչ կարէին ելանել և փախչիլ։ Հրամայեաց շահն զնոսա զամենեսեան անդէն ի սուր սուսերի մաշել՝ զայս և զկանայս, զծերս և զտղայս. և մինչև ցմատաղ մանկունս կոտորեցին, և բնաջինջ արարին։

Իսկ Թագաւորն Շահաբաս յետ առնլոյ զբերդն Գանձակայ և տիրելոյ ամենայն երկրին, սկսաւ ճանապարհ ելանել և գնալ ի կողմանս Վրաց, ի քաղաքն Թիֆլիս։ Էառ ընդ իւր և զմնացեալսն ի զօրացն և յազգէն Օսմանցւոց՝ որք մնացին ի կոտորմանէ բերդին։ Խաբեաց զնոսա պատրողական բանիւք տուեալ նոցա

---

1 Ուղ. լայնանար.

քոյս մնոսի՝ ասելով՝ եկայք դուք զկնի բանակին իմոյ, զի մի՛ դուցէ ելուզակ մարդիկք վնաս ինչ առնիցեն ձեզ, այլ ի մերոց զօրացս կարգեցից ձեզ զօրս պաշտպանս, զի խնամելով և հովուելով տանիցեն[1] մինչև հասուցանիցեն ի սահմանս երկրին ձերոյ: Եւ այսպիսի պատրանօք առեալ տարաւ զնոսա ընդ իւր. և հասեալ ի գաւառն Ախստևու և[2] բանակեցաւ ի ձորն՝ զոր Ինջայու ձոր ասեն՝ ի վերայ ջրոյն: Եւ անդէն հրամայեաց զօրացն Պարսից կոտորել զամենայն մնացեալսն յազգէն Օսմանցւոց՝ և աւար արարեալ զինչս և զստացուածս և զկանայս և զմանկունս նոցա: Եւ արարեալ կատարեցին ըստ հրամանաց շահին՝ զամենայն:

Յետ այսորիկ Շահաբասն ամենայն բանակաւն իւրով չուեալ յերկրէն Ինջայու գնաց ի քաղաքն Թիֆլիս, խաղաղութեամբ եմուտ՝ և խաղաղութեամբ ելեալ գնաց, զի միաբանութիւն էր ի մէջ Պարսից և Վրաց:

Ելեալ շահն ի Թիֆլիսու գնաց ի գաւառն Գեղամայ և բանակեցաւ անդէն բանակն արքունի. և ինքն Շահաբասն իջևանեցաւ ի տան մելիք Շահնազարին, որ էր ի գիւղն Մազրայ, բնական ի նոյն գեղջէն: Եւ էր մելիք Շահնազարս յազգէն Հայոց՝ և հաւատով քրիստոնեայ, իշխան հզօր և փառաւոր, որ արար հիւրընկալութիւն շահին՝ որպէս վայելէ թագաւորի՝ և էր ինքն բարեկամ և մտերիմ և արգոյ առաջի թագաւորին: Վասն որոյ և թագաւորն պատուական և ազնիւ զգեստուք շքեղացուցեալ խիլայեաց. և պարգևեաց նմա զիշխանութիւն մելիքութեան գաւառին, և այլ ևս դաստակերտս և գեղօրայս ետ նմա եւ եղբարց նորա: Եւ հաստատուն նոմոս գրեաց և կնքեաց թագաւորական կնքով և ետ նոցա զի անփոփոխ լիցի ժառանգու-

1 Ոսկ. տանիցեն զձեզ:—2 Նոյն. չէ. և:

Թիւնն այն նոցա և զաւակաց [1] նոցա յազգէ յազգ մինչև յաւիտեան։

Եւ անտի յարուցեալ կամկար [2] գնացիւք եհաս ի Թարվէզ ամենայն զօրօքն իւրովք, եկաց մինչև եմուտ ի միւս տարին. յորում էր Թուականն մեր ՌԾՁ. ապա առեալ զամենայն զօրս իւր գնաց ի վերայ Շամախւոյ՝ և նստաւ ի վերայ բերդին, շրջապատեալ և պաշարեալ զնա։ Եւ որպէս պատմեցաք վասն Գանջայոյ՝ նովին օրինակաւ պատերազմեալ ընդ Շամախւոյ էառ զնա յՕսմանցւոց։ Եւ զզօրսն Օսմանցւոց սրով կոտորեաց. և զընտանիս և զինչս աւարեալ յափշտակեաց։ Եւ կարգեաց ի նմա իշխան զՋլֆիղար խանն, և ինքն չու արարեալ բանակաւն իւրով գնաց ի Թարվէզ։ Եւ ի մտանելն ի Թուականն ՌԾԷ. գնաց շահն ի Սպահան քաղաք։

---

1 Ռմկ. զաւակի։ — 2 Նոյն. կամնար։

Գլ. Թ.

Թէ որպիսի պատճառանօք կոչեաց Շահաբաս զԹագաւորն Վրաց առ ինքն. եւ հնարիւք դաւեաց [1] զնոսա:

Ի ժամանակս Թագաւորութեան Շահ-Թահմազին՝ որ էր Թագաւոր ազգին Պարսից. և եղև զօրանալ այս Շահ-Թահմազիս և բռնանալ ի վերայ այլոց ազգաց՝ որք շրջաբնակ են [2] զինքեամբ, որ և բռնացաւ ի վերայ ազգին Վրաց և էառ պատանդս ի Թագաւորաց նոցա: Ի Թագաւորէն Թիֆլիսու՝ որ էր մեծ Սիմոն խանն, զդուստր նորա և զեղբայր նորա: Եւ ի Թագաւորէն Կախէթու, որ էր Աղէքսանդրն՝ զորդի նորա, որում անունն էր Կոստանդին: Այլ [3] և գոյին այս Աղէքսանդր Թագաւորիս այլ ևս որդիք երկու՝ Դաւիթ՝ և Գօրգի, որք երկոքին կային առ հայրն իւրեանց յԱղէքսանդր: Իսկ Կոստանդին, որ տուեալ եղև պատանդ Թագաւորին Պարսից ՇահԹահմազին՝ մնաց անդէն՝ և սնաւ առ

1 Ոսկ. գրաւեաց. — 2 Նոյն. շրջաբնակք էին. — 3 Նոյն. չէ+. այլ.

նոսա, մեծացաւ՝ և եղև այր երևելի ի դրան Թագաւորին. քանզի դարձուցին զնա ի քրիստոնէական հաւատոյն ի կրօնս մոլար առաջնորդին, Մեռաւ Շահ-Թահմազն՝ և Թագաւորեաց որդի նորա Շահիսմայէլն տարի և կէս՝ և սպանին զնա: Յետ նորա Թագաւորեաց եղբայր նորա Շահխուտաբանտայ ինն տարի: Յետ նորա Թագաւորեաց սորին որդին աշխարհակալն Շահաբաս: Եւ Կոստանդինս այս մնաց մինչ ի ժամանակս այս Շահաբասիս, և յորժամ եկեալ[1] շահն ի Թարվէզ՝ և ի Նախչուան՝ և յԵրևան. և գրաւեաց զնոսա ընդ իւրով իշխանութեամբն, այս Կոստանդինս ընդ շահին էր:

Եւ յաւուրսն՝ յորում էր Շահն յԵրևան և պատերազմէր ընդ Օսմանցիսն՝ որք կային ի մէջ բերդին Երևանու: Հարուստն ի խորհուրդս չարեաց Շահաբաս խորհեցաւ, զի և զԹագաւորսն Վրաց անցէ առ ինքն, վասն որոյ առաքէ նոցա կոչնականս զ' ի նոցանէ տուեալ պատանդսն՝ յորոց մի է[2] այս Կոստանդինս՝ որ[3] առաքեաց կոչնականս զինքն[4] իւրում հօրն Աղէքսանդրի: Եւ զՀանիս Թահմազղուլին, որ էր եղբայր Աթաբէկին, զոր նախադոյն յիշեցաք՝ առաքեաց կոչնական Գօրգի Թագաւորին Թիֆլիսու: Եւ Գօրգի Թագաւորս էր որդի մեծ Սիմոն խանին, որ յետ ըմբռման Սիմոն խանին, զայս Գօրգիս կարգեցին ի տեղի նորա Թագաւոր: Եւ շահն, որ առաքեաց կոչնակս առ Թագաւորսն Վրաց՝ յիշեցոյց նոցա և ասաց, եթէ հաստատուն կայք ի վերայ կանխադոյն դաշանցն, զոր նախնիքն մեր պայմանեալ հաստատեցին, պարտիք աշխատիլ՝ և գալ յօգնութիւն մեզ՝ որ կամք ի պատերազմիս Թշնամեաց:

Իսկ Թագաւորքն Վրաց առ այսմ գործ վարանե-

1 Ոսկ. եկն: — 2 Նոյն. էր: — 3 Նոյն. զոր: — 4 Նոյն. չէ. զինքն:

ցան, քանզի ո՛չ կամէին գալ, բայց զկնի բազում խոկ-
ման և մտածութեան յանձն առին զգալն, ո՛չ թէ[1]
յիւրեանց կամաց՝ կամ յանգիտութենէ, այլ յանճա-
րակութենէ։ Վասն զի ոչ են ինքնակալք զի ընդդէմ
կարիցեն կալ Օսմանցւոց և Պարսից՝ այլ են տկարք և
անզօրք. վասն որոյ հարկէ զի միում ի սոցունց ընդ
ձեռամբ լիցին։ Յառաջ ընդ ձեռամբ էին Պարսից ի
ժամանակս Շահթահմազին. իսկ Լալա փաշէն, որ էր
Օսմանցւոց Սարդար՝ եկեալ կալաւ զքաղաքսն Վրաց՝ և
շինեաց ի նոսա բերդորայս՝ և կարգեաց ի բերդսն ենկի-
չարիս. քանզի փախոյց զՍիմոն խանն։ Եւ յետոյ միւս
զօրավարն Օսմանցւոց Ջաֆար փաշէն եկեալ ըմբռնեաց
զՍիմոն խանն՝ և առաքեաց առ խոնդքարն՝ ի Կոստանդ-
նուպօլիս[2] և անդ սպանին զՍիմոն խանն, և զթոռն
նորին. և այսպիսի պատճառաւ ի բաց կացին Վրացիք
յազգէն Օսմանցւոց։ Եւ արդ շահն պահանջէ ի սոցունց
գալ ի հնազանդութիւն. և պատճառս յօդէ զկանխաւ
դաշնադրութիւնն՝ որ ի ժամանակս նախնեացն եղեալ է։
Եւ սոքա ոչ թէ վասն դաշնադրութեանն՝ և ոչ թէ յան-
գիտութենէ՝ և ոչ թէ կամաւ՝ այլ յանճարակութենէ.
զի մի՛ գուցէ շահն աւարտեալ զպատերազմն Օսմանցւոց,
դառնայցէ ի վերայ Վրաց. խորհեցան այնու հաճել
զկամս նորա՝ զի թերևս այնուիկ դարձուսցեն զնա յին-
քեանց, զի մնայցեն ի խաղաղութեան. և զայն ոչ գի-
տէին թէ յապագայն նորին ձեռամբն է լինելոց կորուստ
և գլուխ ինքեանց՝ և ազգին իւրեանց։

Արդ երկոքին Թագաւորքս Վրաց Աղէքսանդր և
Գօրգի՝ ելեալ եկին յԵրևան, տեսին[5] զշահն։ Իսկ
շահն՝ որպէս բնաւորեալ գոյ յազգն նոցա խորաման-

---

1 Ոսկ. չէ. թէ. — 2 Նոյն. չէ. ի Կոստանդնուպօլիս. — 5 Նոյն. տեսանել.

կութիւն, յառաջագոյն սիրով և մեծարանօք ընկալաւ զնոսա, և խիլայեալ պատուեաց՝ զի հաճեցուսցէ զմիտս նոցա և զտեսողացն յինքն. և խաղաղութեամբ պահեաց մինչ որ էառ զբերդն Երևանայ։

Եւ ապա ըստ դիւթական և ըստ կախարդասար արհեստին իւրեանց դեղ ինչ մահարար ջամբեցուցեալ է Գօրգի Թագաւորին՝ զի յետ սուղ ինչ աւուր մեռցի. և Գօրգի Թագաւորս առ ժամուն ոչ է գիտացեալ զայսպիսի հնարակերտութիւնս, զոր առ ինքն ներգործեալ է շահն։ Եւ զկնի այսմ իրագործութեանս սիրով և պարգևօք արձակեաց շահն զԳօրգին գնալ ի տեղի իւր։ Եւ նա ելեալ յԵրևանայ գնաց ի Տփխիս՝ ի քաղաք իւր, և ի սակաւ աւուրս կեցեալ մեռաւ, ըստ ներգործելոյ և ըստ բաղձանաց շահին։ Եւ ազգն և իշխանք՝ որք տեղւոյն էին՝ թագաւորեցուցին ի տեղի Գօրգոյն զորդի նորա զլաւասափ՝ մանուկ տիօք։ Արդ՝ զրաւ Գօրգի Թագաւորին այսպէս եղև ներգործութեամբ շահին։

Իսկ զԱղէքսանդր Թագաւորն կալաւ շահն առ ինքն և ոչ եթող գնալ. այլ ընդ իւր տարեալ շրջեցոյց այսր և անդր. և խնդրէր ի նմանէ պատանդս։ Եւ սակս այսորիկ Աղէքսանդր յանհնարս անկեալ եթէ կամաւ և թէ յակամայ բերեալ զթոռն իւր, որում անունն էր Թամրազ՝ մանուկ տիօք՝ ետ ի պատանդ շահին, ապա շահն հրաման ետ նմա գնալ. և Աղէքսանդր արձակեալ ի շահէն գնաց ի տեղի իւր, և թոռն նորին Թամրազ մնաց ի դուռն շահին. և Թամրազս էր որդի Դաւթին, որդւոյ Աղէքսանդրիս։

Գլ. Ժ.

Միւս եւս պատմութիւն դաւաճանութեան Շահաքասին, զոր միաանգամ արար ընդ Թագաւորին Վրաց:

Վերոյասացեալ Թագաւորն կախէթու Աղէքսանդր իւրով կամաւն տուեալ էր զԹագաւորութիւնն իւր որդւոյ իւրում Դաւթի, և Դաւիթն վարէր զիշխանութիւն Թագաւորութեանն: Իսկ միւս որդին Աղէքսանդրու Գորգի ոխացաւ ընդ այն՝ և սպան զեղբայրն իւր զԴաւիթ՝ զի ինքն լիցի Թագաւոր: Եւ Աղէքսանդր հայր նոցին կենդանի էր՝ ոչ ետ զԹագաւորութիւնն Գորգոյ՝ այլ ինքն զլաւեաց՝ և ինքն վարէր զԹագաւորութիւնն:

Զայսու ժամանակաւ խորամանկն ի հնարս չարեաց Շահաքաս, խորհեցաւ զնոր իմն հնարս կործանման և երկպառակութեան արկանել ի մէջ Թագաւորութեանն քրիստոնէից: Կոչեաց առաջի իւր զկանխաւ ասացեալ զուրացողն Կոստանդին՝ զորդին Աղէքսանդրիս, որ առ շահն էր, և խօսեցաւ ի սիրտ նորա ըստ ախորժակաց նորա և ըստ հաճոյից, և ասաց նմա: Ա՛ռ ընդ քեզ

զօրս ըստ բաւականի ի մերոց զօրացս՝ զոր տամ քեզ՝ և գնա յերկիր քո հայրենի, և հնարեալ սպանցես զհայր քո զԱղէքսանդր՝ և զեղբայր քո զԳօրգի, զի դու լիցիս թագաւոր ի տեղի հօր քոյ՝ և վարեսցես զքո հայրենի թագաւորութիւնն։

Բայց այժմ եթէ ի մէջ մերոյ ազգիս և թէ անդ ի մէջ Վրաց ազգին, մի՛ ձևացուսցես ի սակս գնալոյդ քո, թէ գնամ յաշխարհն իմ զի անդ կեցից,[1] այլ ձևացուսցես զքեզ և երևելի պատճառ զայս խօսեսցիս առ ամենայն ոք. թէ առաքեալ է զիս շահն այսու զօրօքս՝ զի գնացից ի Շամախի առնուլ զնա, և ի ժամանելն քո յերկիր քո՝ որ ոք և յաջողեսցի քեզ զայն արասցես, եթէ սպանումն հօր և եղբօր քոյ՝ և թէ առումն Շամախւոյ։

Արդ՝ զայսպիսի պատուէր ընկալեալ օձն դարանակալ, ելեալ զօրօք գնաց յերկիրն Կախէթու առ հայրն իւր Աղէքսանդր, և յայնմ ժամու ոչ կարաց դաւել՝ զի կարծիս անկաւ ի միտս Վրաց՝ տեսանելով զանուղղայ գործս նորա, որ և ինքն ի նմին ժամու պատրուակեաց զմթերեալ խորհուրդս սրտի իւրոյ։ Եւ յաղագս զինքն ուղիղ և անմեղ ցուցանելոյ և հաճելոյ զմիտս Վրաց, ի զօրաց հօր իւրոյ, յազգէն Վրաց յոլով զօրս էառ ընդ իւր և ելեալ գնաց ի վերայ Շամախւոյ։ Եւ ազգն Վրաց յոյժ կամէին զկորուստ նորա, վասն որոյ ի ժամ պատերազմին յետս յետս կային և ոչ հաւատարմաբար պատերազմէին, զի գուցէ յայնմիկ պատերազմի ձեռամբ Օսմանցւոցն լիցի կորուստն նորա։ Իսկ չարն Կոստանդին ծանեաւ զայս իրակութիւն յոգի իւր, և զայն ևս գիտէր թէ զօրօքն Պարսից ոչ կարէ յաղթել զօրացն Օսմանցւոց, և մինչ ի խմբի պատերազմին մարտնչէին

---

1 Ո–ւ. կացից.

ընդ Օսմանցւոցն, թողեալ լքեաց զգործ պատերազմին՝ և փախեաւ դէպ ուղիղ յաշխարհն Պարսից՝ և գնաց առ շահն: Եւ Օսմանցիք առեալ ի մէջ՝ զմնացեալ զօրսն Պարսից, իսպառ կոտորեցին զնոսա, և աւար հարին զամենայն ինչս նորա:

Իսկ շահն կրկին անգամ ետ զօրս կոստանդնին իբրև ԼՌ. և կրկին առաքեաց ի հայրենի յերկիր իւր՝ նովին դիտաւորութեամբ: Եւ իբրև եհաս կոստանդին ի հայրենի յերկիր իւր, ձևացուցանէր զինքն իբրև զղջացեալ յուրացութենէն, և կամի վերստին դառնալ ի քրիստոնէութիւն, վասն որոյ իբր զբարեպաշտ ոք յօժարեցաւ սրտիւ ի շրջագայել յեկեղեցիս և ի վանորայս Վրաց, և այսու հնարիւք ժողովեաց զբազում անօթս յեկեղեցեաց անտի, խաչ՝ սկիհ՝ բուրվառ՝ և այլ, զոր ինչ կամեցաւ և յետոյ զամենայն զանօթսն զայնոսիկ խորտակեաց, և բաշխեաց ռոճիկս զօրացն Պարսից՝ որք ընդ իւր եկեալ էին: Իբրև զայն տեսին ազգն Վրաց՝ ի սիրտ և յոգի խոցեցան՝ և իսկոյն կամեցան՝ բառնալ զնա ի կենաց. և խորհուրդ արարեալ ընդ Աղէքսանդրի հօր նորա զի սպանցեն զնա իսկ Աղէքսանդր յապաղէր յայս գործ, և տակաւին մտավարժ էր վասն կատարման ելիցն: Եւ մինչ Աղէքսանդր յայսմ խոկման կայր՝ յայտնեցաւ այս խորհուրդ կոստանդնի, և կոստանդինս փութացաւ նախաժամայն և սպան զհայր իւր զԱղէքսանդր՝ և զեղբայր իւր զԳօրգի, և ի ձեռն իւր դրաւեաց զիշխանութիւնն, և բռնացաւ ի վերայ երկրին:

Յետ այսորիկ դարձեալ գումարեաց կոստանդին զզօրսն իւր, և զերկրին՝ որ յազգէն Վրաց, և նոքումբք ելեալ գնաց ի վերայ քաղաքին Շամախւոյ: Իբրև աւուրց ինչ ճանապարհ գնացին, յանժամ միաբանեալ զօրքն Վրաց՝ մինչ զճանապարհայն գնային՝ յարեան ի վերայ կոստանդնի սրախողխող արարեալ կտոր կտոր յօշոտե-

ցին զնա՝ և բարձին զչարն ի միջոյ։ Իսկ զօրքն Պարսից՝ որք ընդ Կոստանդնու եկեալ էին, սաստիկ խոժոռեալ ընդ այն, կամեցան յառնել ի պատերազմ ընդ զօրացն Վրաց։ Իսկ զօրքն Վրաց ցուցին զթուղթ ինչ գրեալ, իբր թէ ի շահէն առաքեալ առ նոսա առնել զայն, որով պատասխանեցին Վրացիքն Պարսից՝ թէ հրամանաւ շահին արարաք զայս, և ապա թուլացան կողմն Պարսից՝ և ոչ պատերազմեցան, այլ ցրուեալք ի միմեանց գնացին յազգն իւրեանց և ի տեղիս։ Եւ եղև առաջին և երկրորդ գալն և սատակումն Կոստանդնիս այսորիկ ի թուականութեան մերում ՌԾԴ. թուին։

Իսկ զիշխանութիւն թագաւորութեանն Կախէթու ընկալաւ յիւր հրաման, հարսն Աղէքսանդրու-կինն Դաւթի, և այս յաղագս երկուց պատճառաց։ Նախ՝ զի այնպէս կամեցան իշխանք աշխարհին, զի կին էր Դաւթի, որում տուեալ էր Աղէքսանդր զթագաւորութիւնն։ Եւ երկրորդ՝ զի մայր էր Թամրազին՝ որ էր մնացեալ ժառանգ թագաւորութեանն, իբրև զաւանդապահ պահելով զթագաւորութիւնն որդւոյ իւրոյ Թամրազին՝ որ տակաւին ի պատանդի կայր առ շահն։ Որ և զկնի առման բերդին Գանջայոյ որպէս յառաջագոյն նշանակեցաք, առաքեաց շահն զԹամրազ ի Կախէթ՝ որ եկեալ թագաւորեաց ի տեղի հարց իւրոց։

Եւ պատճառ առաքելոյ Թամրազիս ի Կախէթ այս է, զի Շահաբասն յորժամ իւրով հնարաւոր ներգործութեամբն սպանանել ետ զպապն Թամրազիս երեքին որդւովքն նորա իբերաց ձեռօք, և մնաց տեղին նոցա ունայն՝ և Թամրազս էր ժառանգ տեղւոյն՝ և կայր առ շահն ի պատանդի. վասն որոյ զնա առաքեաց։ Այլ և քաջ գիտէր շահն՝ զի թէ յազգէն Պարսից առաքեսցէ իշխող աշխարհին Կախէթու, ոչ ընդունին իշխանքն Կախէթու, վասն որոյ զԹամրազս առաքեաց։

ԳԼ. ԺԸ.

Պատմութիւն եւ պատճառ աւերման աշխարհին Վրաց, եւ մահուան Լաւասափ Թագաւորին նոցա, որ եղեւ ձեռամբ առաջին Շահաբասին:

Յորժամ դարձաւ Գօրգի Թագաւորն Վրաց յԵրեւանայ՝ եւ գնացեալ եհաս ի Թիֆլիս՝ ոչ ապրեցաւ. այլ փութով մեռաւ, քանզի դեղեալ էր զնա Շահաբասն, որպէս ի վեր անդր պատմեցաք:

Եւ իշխանքն Վրաց կարգեցին ի տեղի Գօրգի Թագաւորին զնորին որդին՝ Թագաւոր, որում անունն էր Լաւասափ, ի տիս տղայութեան: Եւ եղև զի հրամանաւ Լաւասափ Թագաւորիս կարգեցաւ այր ոմն ի վերայ քաղաքին Թիֆլիսու ի գործ մովրովութեան. որում այժմ տարուղայ ասեն. և էր մովրով կարգեալ այրս, այր հանճարեղ բանիւ և կորովի խորհրդով, և խելամուտ ի գործս իւր, այլ և հսկայաձև, և [1] ուժընդակ քաջ, պատերազմող և անպարտելի

---

[1] Առէ. չէ. և.

ախոյեան. որ ի կողմն՝ յոր և միաբանէր՝ զմիւս ներհակ կողմն յաղթէր. և զընդդիմակաց զօրսն իբրև զբանջար կոտորեալ ընդ երեսս դաշտաց թափէր, որոյ քաջութիւնն յառաջիկայդ ի բազում տեղիս լինի յիշեալ [1], յորոց զհաւաստիս իմանաս: Այլ այլս այս մովրով՝ ոչ էր ինքն ազնիորդի, և կամ իշխանազունն՝ և յերևելի յազգէ՝ այլ ի հասարակ և ի խոնարհ ազգէ՝ զոր ազգն Վրաց գլեխի ասեն: Կայր և քոյր մի այս մովրովիս՝ Նորահաս կոյս՝ չքնաղ և գեղեցիկ, բարետեսիլ և բարեյօդդիրք մարմնոյն և հասակին:

Իսկ թագաւորն Լաւասափ զարգացեալ եհաս ի չափ հասակի հնգետասան և վեշտասան ամաց աւելի կամ պակաս. յորում ժամանակի շարժումն ցանկական մասին զօրանայ ի մարդն՝ և ընդ իւրով իշխանութեամբ գրաւեալ յածեցուցանէ: Ի սոյն ժամանակի թագաւորն Լաւասափ հաճեալ ի քոյրն մովրովիս՝ մոլեգին շաղաշարութեամբ սիրէր զնա՝ և խաղայր ընդ նմա ի ծածուկ. բայց ոչ էին զուգաւորեալք. այլ էին կոյսք երկոքեանն՝ Լաւասափն և աղջիկն: Եւ գործս այս թէպէտ ի ժամանակս ինչ մնաց ի ծածուկ՝ այլ յետոյ յայտնեցաւ. ըստ հրամանաց Տեառն, թէ ոչինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի. որ և յետոյ եհաս յականջս մովրովին լուրս այս: Այլ և ոմանք՝ որք էին նախանձաւորք և ոխակալք ընդ մովրովին՝ որդիք չարեաց և յուզողք խռովութեանց. յիշեցին զայն առաջի մովրովին, և երեսծեծանք արարին նմա, և մովրոմն յայսմ պատճառէ վշտացեալ ոգւով չափ. և թախծեալ սրտիւ, զմահ անձին խնդրէր և ոչ գտանէր: Եւ զկնի բազմաժամանակեայ տրտնջանաց, որ ի ծածուկ. տրտնջէր մովրոմն [2] ապա յայտնի և համարձակ ընդ ամենեսեան խօսէր,

---

1 Ոմն. յիշեցեալ. — 2 Նոյն. չէ. տրտնջէր մովրովն.

և ասէր. Թէ ես սպանելոց եմ զԼաւասափ. քանզի ո՛չ կարեմ տանել զայսպիսի նախատինս՝ որ ընդ երեսս իմ ասեն. զի ամօթալի առակ եղէ ի մէջ աշխարհի։ Իսկ իշխանք և մտերիմք Թագաւորին Լաւասափու իբրև լսէին զբանս մոլորովին. երկուցեալ խուսափէին ի նմանէ. քանզի գիտէին, թէ կարող է առնել գործով, զոր և բանիւ ասէ։ Վասն որոյ ի դիպող և ի պատշաճաւոր ժամու աղաչէին զԼաւասափ ողոքանօք և մաղթանօք՝ ի բաց կալ յայնպիսի գործոյ, որ ոչ իսկ բնաւ վայելէ Թագաւորական անուան։ Նա և բանք սպառնալեացն մոլորովին մի՛ գուցէ թէ գործովք արդիւնասցին։ Եւ ի բազում Թախանձանաց իւրոցն բարեկամաց, Լաւասափ ասաց. ո՛չ կարեմ ի բաց կալ ի կուսէն յայնմանէ, քանզի ոգւով չափ սիրեալ եմ ես զնա. բայց որովհետև այդպէս ասէք. ահա որպէս և գիտակ իսկ էք, զի ոչ ես կին առարեալ եմ՝ և ոչ կոյսն այն այր, արդ՝ խօսեցարուք զնա օրինաւոր կարգօք ինձ ի կնութիւն. և դիք զնշան զի արասցուք հարսանիս. և բարձցի տրտունջն ի ձէնջ։ Եւ ի բանս յայս Լաւասափին հաճեցան իշխանքն ամենեքեան. նա և մոլորովն իսկ. և ուրախացեալ փառս մատուցանէին Աստուծոյ՝ զի բարձաւ խռովութիւնն ի միջոյ. և այսու բանիւ եդին զնշան աղջկանն այնմիկ վասն կնութեան Լաւասափու։ Իսկ եղբայր աղջկանն մոլորով՝ յոյժ ուրախացեալ ընդ գործն այն՝ և գոհանայր զԼաւասափէն. ասէր զինքն ծառայ և պաշտօնեայ նմա, և թէ զանձն իմ և զկեանս եդեալ եմ ի ճանապարհս և ի հրամանս նորա. որովհետև ո՛չ արհամարհեաց զանտոհմութիւնս իմ, զի ինձ որդի զլեխի ասէին. այլ այնչափ հաճեցաւ յիս՝ մինչ որ զքոյրն իմ էառ ի կնութիւն և ի թագուհութիւն ինքեան։

Իսկ բիրտ և հպարտ և ինքնահաճ ազգն Վրաց՝ որ զտոհմաթիւս և զնախնի հարց սեռս քննեն՝ և խու-

զեալ ուռնեն. ոչ հաճեցան ընդ այս բան։ Քանզի կանայք իշխանացն՝ և ազնիւորդւոցն՝ և Թաւատացն, որք էին մեծազգիք և դստերք իշխանաց յառաջն և արդեանս ժամանակի, կին և մարք իշխանաց։ Ընդ սոցին և արք ոմանք ևս, ոչ բնաւ հաճեցան՝ և ոչ եղեն կամակից այսմ գործոյ. քանզի երևելի կանայքն ասէին արանց և որդւոց իւրեանց, զիա՞րդ մարթի մեզ՝ որ եմք դստերք այս անուն ազնիւորդեաց. և կանայք և մարք այս անուն իշխանաց՝ գնալ յերկրպագութիւն և յողջոյն միոյ՝ որ դուստր է գլեխի առն միոյ շինականի։ Արդ՝ եթէ հաւանեցուցէք զԹագաւորն դառնալ յայդմ խորհրդենէ՝ և առնուլ իւր զկին ի դստերաց Թագաւորաց՝ բարւոք է. ապա թէ ոչ այսպէս՝ մեք ևս ոչ կամիմք գնալ յողջոյն և յերկրպագութիւն գլեխի աղջկան միոյ. զի ծանր է մեզ գործդ այդ, և եթէ կամիք արձակեցէք զմեզ ի կնութենէ ձերմէ, և այլ կին առացէք։ Եւ եղև այս շփոթ և աղմուկ և խռովութիւն մեծ և անփարատելի ի մէջ ազգին Վրաց զբազում աւուրս։ Եւ որքան հնարէին կողմն հաւանողացն ոչ կարէին ի հաւան ածել զանհաւան կողմն. վասն որոյ յանհնարս անկեալ խաղաղասէրքն անկանէին յոտս Լաւասափին, և աղաչէին. զի Թերևս խաղաղութեամբ արասցէ ելս իրացն։ Իսկ Թագաւորն ևս անճար մնացեալ առ այսմ. ասաց նոցա դուք գիտէք. և իշխանքն առաքեցին յերկիրն Պաղիանու և զդուստրն Պաղիանու Թագաւորին նշանեցին վասն կնութեան Լաւասափին։ Եւ այսու պատճառաւ ի բաց եկաց Լաւասափ ի մովրովի քուերէն։

Եւ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին զմի ունէր բնակեցուցեալ յինքեան ի զօրացն չար այսոց. և արդ՝ այսն այն առաջին, զեօթն այլ այսս չարագոյնս քան զինքն առեալ ընդ ինքեան, եկեալ բնակեցաւ ի մովրովս յայս. և եղև սորայս վերջինն չար քան զա-

ռաջինն։ Վասն զի փռնգայր իբրև զպատերազմասէր երիվար, և գոչէր իբրև զառիւծ. և շնչէր իբրև զհրաշունչ վիշապ ի վերայ Ղաւստափու և խնդրէր սպանանել զնա յաղագս երկուց պատճառացս։ Առաջինն՝ վասըն նախկի խայտառականաց քեռն իւրոյ, և երկրորդ՝ վասն վերջին անարգանացն նմին. և խնդրէր, զի զիարդ ի դէպ ինչ գտցէ, զի հարեալ սպանցէ զՂաւստափն։

Իսկ իշխանքն մտերիմք՝ և ցաւակիցք բարեկամքն զգուշանային, և պահէին զՂաւստափն. և զգուշացուցանէին զնա՝ զի պահեսցէ զինքն ի մովրովէն։ Այլ և խրատէին զնա զի սպանցէ զմովրով։ Եւ իբրև հաստատեցին իշխանքն և Ղաւստափն ի մէջ իւրեանց զխորհուրդ սպանման մովրովին, այսու դիտաւորութեամբ, յաւուր միում ի զինարբու խրախութեան արքունին բազում գինի մովրովին՝ զի գուցէ փոքր ինչ լուծցի ի զօրութենէ, որպէս զի դիւրաւ սպանցեն զնա։ Իբրև եհաս ժամն՝ ել Թագաւորն արտաքս, և յիշխանացն ով ոք գիտակք էին նոքա ևս ելին մի մի արտաքս. և կոչեցին առ Ղաւստափ զոմն դահիճ, որ հրամայէր նմա Ղաւստափ գնալ ի ներքս և սպանանել զմովրով։ Եւ ի ժամուն մինչ ընդ դահճին զայն խօսէր. լուաւ զայն բանն ոմն ի ծառայիցն մովրովին, որ էր յառաջընթաց փայեկ նորին, զոր ասեն շաթր. և իբրև զթռչուն թռուցեալ ի ներքս ի տուն անդր ուր էր մովրով՝ և ասաց նմա. ահաւասիկ գան առ ի սպանանել զքեզ. քանզի այսպէս հրամայեցաւ վասն քո ի Թագաւորէն։ Իսկ մովրով՝ իբրև լուաւ, ի սաստիկ երկիւղէն այնպէս եթող զնա զինին որպէս թէ ո՛չ իցէ բնաւ արբեալ զինի։ Եւ էր յայնմ ժամու գօտելոյծ և գլուխ ի բաց նստեալ. և ի տագնապէն այնպէս բոկոտամբ՝ և գօտելոյծ՝ և գլուխ ի բաց՝ ի վեր ոստեալ ի տեղւոյն ընթացաւ յախոռ երիվարաց Թագաւորին. ուր արքունի երիվարքն

կապեալք կային՝ քանզի մերձ էր։ Եւ զի ինքն Մովրով փորձիւ գիտէր թէ յերիվարացն, որ ոք է փութագնաց և արընթաց՝ էարկ դանդանավանդ (սանձ) ի բերան երիվարին. և ի ներքս ի յախոռի անդ հեծաւ ի վերայ երիվարին ջլով միայն առանց թամբի, վասն երկիւղի մահուան՝ զի մի՛ ըմբռնեալ սպանցի, և այնպէսի հեծեալ յերիվարն ել արտաքս ի յախոռէն, թոյլ տուեալ զերասանակ երիվարին և մտրակեաց զնա՝ զի առեալ զինքն փախիցէ։ Իսկ օդապարիկ երիվարն այն. իբրև զերկնագնայ թռչուն առեալ զնա ընթացմամբ գնայր ո՛չ իբրև ի վերայ երկրի, այլ իբր ընդ երեսօք օդոյ։ Եւ թէպէտ բազումք ի զօրաց Լաւասափին ելին յերիվար և ընթացեալ զհետ. ո՛չ ոք ի նոցանէ կարաց հասանել՝ բաց յերկուց ոմանց։ Իսկ Մովրով խօսեցաւ ընդ նոսա կալ՝ և զտեղի ունիլ պահ մի. իբրև կացին նկօղքն. սկսաւ խօսիլ ընդ նոսա Մովրով բանս մաղթանաց, որպէս զի մի՛ ըմբռնեսցեն զինքն՝ այլ թոյլ տացեն նմա գնալ. և այնքան խօսեցաւ մինչև էարկ զգութ և զողորմ ի սիրտս նոցա՝ ո՛յք ո՛չ ըմբռնեցին՝ այլ թոյլ ետուն։ Եւ նա անցեալ գնաց ի քաղաքն Թիֆլիս. ի գիշերին եմուտ և ի նմին գիշերին ել. էառ ընդ իւր զայր ոմն թարգման, զի ինքն ո՛չ գիտէր զայլազգեաց լեզուն։ Գնաց ի գաւառն Ախստեւու առ Սուլթանն Ղազախաց՝ որ նստէր ի նմին գաւառի, և ծանոյց նմա զամենայն անցուածս իւր՝ և խնդրեաց ի նոցունց առաքել զինքն առ Շահաբասն։ Եւ նոքա լցան անպատում ուրախութեամբ՝ պատրաստեցին յինքեանց արս յոլովս. և առեալ զնա հասուցին առ շահն՝ որ էր յայնժամ ի Ղըզլաղաճ անուանեալ տեղին՝ որ է յերկրին Շամախու։

Եւ Ղազախ զօրականքն՝ ո՛յք տարան զՄովրով՝ յանդիման կացուցին Շահաբասին. և շահն խօսէր ընդ Մովրովին՝ և հարցանէր զովն և զուստին և զվասն էրն՝

և մովրով ամենայն հարցուածոց տանէր զպատասխանի կարգաւոր խօսիւք։ Նա ասէր. եթէ ընդ հովանեաւ տէրութեան քոյ ընկալեալ ընդունիցիս զիս, ես բազում գործոց և իրաց պիտոյանամ ի ծառայութիւն քո։ Նա կացեալ ժամանակս ինչ անդէն շահն իւրով բանակաւն. և ապա չուեալ անտի դէպ ի Սպահան. տարաւ ընդ իւր և զմովրովն. և օր աւուր յառաջ խաղալով հանդարտութեամբ գնացին, մինչև հասին ի Սպահան։ Նա յամենայն դիպօղ ժամու շահն խօսէր ընդ մովրովին և տեղեկանայր ի նմանէ զորպիսութիւն աշխարհին՝ և ազգին Վրաց, զամրութիւն երկրին, և զիմաստութիւն թագաւորացն, և իշխանացն, զբազմութիւն ազգին, և զքաջութիւն զօրացն. և այլ զոր ինչ կամէր։ Նա կացին անդէն ի Սպահան. էանց այն ամն՝ և մտին յամն երկրորդ. ասէ շահն առ մովրով. ահա անցին աւուրք յոլովք, արդ՝ որո՞վ կերպիւ յօդեսցուք զպատճառս՝ որպէս զի այնու պատճառաւ զօրաժողով լեալ գնասցուք ի վերայ ազգին Վրաց։

Իսկ մովրով յամենայնի կամէր զայն քէնն առնուլ ի Լաւասափէն, որ վասն վատանունութեան և անարգանաց քուերն[1] էր. որոյ սակս և եկեալն իսկ էր՝ ըստ նմին ճանապարհի և կերպի խօսեցաւ՝ և տուն ետ Շահաբասին՝ և ասաց։ Է Լաւասափին քոյր մի թագաւորազն, նորահաս կոյս չքնաղագեղ և գեղեցկատեսիլ, և ամենայն որպիսութեամբ վայելուչ, որ վայելէ ոչ ումեք՝ բայց միայն տեառն իմում արքայի. արդ՝ խնդրեա զնա քեզ ի կնութիւն և յետ գալոյ կուսին զմայրն եւս խնդրեսցես պատճառաւ կուսին. և յորժամ եկեսցէ մայրն՝ զմայրն եւս արգելցես աստ պատճառաւ կուսին. և նոքօք դիւրին է որսալ զԼաւասափ ի կորուստ։ Արդ՝

---

1 Ուղ. քեռ.

եթէ այս խորհուրդ այսպէս առցէ զկատարումն՝ բարւոք է. զի դիւրին է և հեշտ. և եթէ ոչ լուիցեն, և ոչ տացեն զաղջիկն քեզ, յայնժամ չտալն նոցա եղիցի քեզ պատճառ գնալոյ ի վերայ նոցա։

Իսկ անմիթար կամարարն սատանայի՝ երկրորդ սաբիւռոսս այս Շահաբաս՝ յետ ընդունելոյ զայսպիսի խըրատս ի մովրովէն. գրեաց առ Լաւասափ և առ մայր նորա վասն քեռ Լաւասափին թուղթ սիրոյ և ողջունի. որ ի վերոյ ունէր բանս իբրև զկեանս. բայց ի ներքոյ լրիւ հրաւէր մահու։ Եւ գոյութիւն բանի թղթոյն էր ըստ այսմ օրինակի։

Կամիմք ճշմարտութեամբ՝ զի հաստատուն և անդրդուելի լիցի թագաւորութիւնն մերս և ձերդ. և սէր և միաբանութիւն երկուցս ազանց Պարսից և Վրաց. և մեք զամենայն իշխանաց և աշխարհաց կողմանցդ այդոցիկ զվերակացութիւն յանձնեսցուք ի ձեզ. զի դուք հոգայցէք՝ և վարիցէք զթագաւորական իշխանութիւն հիւսիսական կողմանցդ՝ և [1] մեք զայլ ևս կողմանս հոգասցուք։ Եւ սմին այսմիկ միաբանութեան նշան և պատճառ լիցի այս. զի զօրիորդ դուստրդ ձեր բերիցէք առ մեզ։ Նախ զի լիցի կատարումն գործոյս այսորիկ նշան և շաղկապ միութեան երկուց ազանցս. երկրորդ՝ դշխոյ և թագուհի [2] ամենայն ազգին արեաց։ Արդ ըստ այսմ օրինակի գրեալ զթուղթն առաքեաց յաշխարհն Վրաց ի քաղաքն Տփխիս առ Լաւասափ՝ և առ մայրն նորա։

Իբրև ընթերցան զգիրն, ծանեան զի թելադրութեամբ և թշնամութեամբ մովրովին դաւաճանութիւն էր ամենայն բան թղթոյն։ Ոչ զինքեանց դընելն և ոչ զաղջկան տալն կամեցան. քանզի ասաց

---

1 Ոսկ. *իսկ*. 2 Նոյն. *լիցի*.

մայրն Լաւաստիին. ի ժամանակին՝ յորում էիր յԵրևան քաղաքի ի պատերազմի. կոչեցեր զմեզ առ քեզ բարեկամութեան պատճառաւ. և մեք անկեղծ սրտիւ իբրև ի ճշմարիտ բարեկամ և ի թագաւոր եկաք առ քեզ. և դու զգործ թշնամւոյ գործեցեր ընդ մեզ. քանզի դեղով զայրն իմ սպաներ՝ և զիս խայտառակեցեր. արդ՝ մեք, որ զայսպիսի գործս տեսաք ի քէն. զիա՞րդ վստահացուք միւսանգամ գալ առ քեզ։ Արդ՝ եթէ ստուգիւ զհաստատութիւն և զհանգիստն մեր կամիս, որպէս ասացեր, մի՛ նեղեր զմեզ՝ և մի՛ խռովեցուցեալ վրդովեր զխաղաղութիւնն մեր, այլ թող զմեզ կալ ի հանդարտութեան, զի այս փոքր իշխանութիւնս մեր բաւական է մեզ ի պէտս կարեաց մերոց. ողջ լեր։ Եւ պատասխանիս այս նկեալ առ Շահաբասն մինչ էր ի Սպահան, յորում ինքն և մովրովն խորհէին և խոկային զօրհանապազ զաւեր աշխարհին Վրաց՝ և զանկումն թագաւորութեան նոցա։ Եւ զպատգամս՝ զոր նախ գրեաց առ նոսա շահն. երկիցս և երիցս կրկնեաց. և առաքեաց առ Լաւաստի և առ մայրն նորա. զի թերևս կամ զԼաւաստի կամ զմայրն և կամ զքոյրն ածցէ յիւր ձեռն՝ և ոչ կարաց։

Յետ երիցս անգամ գնալոյ և գալոյ պատգամացն՝ իբրև ոչ եկին. այնուհետև զերեսս իւր դարձուցեալ շահն դէպ յաշխարհն Վրաց. ժողովեալ զզօրս իւր չու արարեալ ի Սպահանայ ընդ իւր ունելով զխրատատուն չարեաց և զաշխարհաւերն զմովրով. և [1] եկեալ ի Սպահանայ կամճար և հանդարտ գնացիք հասին մինչև յերկիրն Ղարաբաղու ի քաղաքն Գանջայ. և անդէն զտեղի առեալ կացին զամառն։ Եւ ասէր շահն ընդ մովրովին, արդ՝ անցին ի վերայ ժամանակք բազումք Ե՞րբ

1 Ոսկ. չէ+. և.

լինիցի զի տարցես զմեզ ի Վրացտուն. պատասխանեաց ասէր մովրովն, տակաւին համբերեա՛ զի արդ եւս ոչ է ժամանակ, և յորժամ եկեսցէ ժամանակն, ես ինքնին յուշ առնեմ քեզ գնալ անդ։ Եւ զայս վասն այն ասէր մովրովն թէ ոչ է ժամանակ՝ զի ամառն անցցէ և ձը-մեռն եկեալ ի վերայ հասցէ՝ և ծառք մայրեացն տե-րեւաթափք լիցին, զի դիւրին լիցի զօրացն Պարսից ձի-ով խաղալ մտանել յաշխարհն Վրաց։ Այլ և ազգն Վը-րաց՝ որք փախուցեալք և ամրացեալք և գաղթեալք ի-ցեն յամուր վայրս և ի փապարս և ի դժուարին տեղիս աշխարհին, ի խստութենէ ցրտոյ և ձեան ձմերային ժա-մանակին, և ի նեղութենէ սովու և այլ կարեաց, ոչ կարասցեն տեւել ցրտոյն և կալ յամրոցսն, այլ դարձցին ի բնակութիւնս իւրեանց ի ձիախաղաց տեղիսն, որպէս զի դիւրին լիցի զօրացն Պարսից յափշտակողաց և ա-ւարչաց խաղալ ձիովք և առնուլ յաւարի զնոսա։ Որ և առ յապայն կատարումն գործոյն ըստ օրինակի Նախա-գոյն խորհրդեան նորա կատարեցաւ։

Իսկ ազգն Վրաց իբրեւ լուան զգալն շահին ի վե-րայ իւրեանց, սկսան մտախոհ լինել վասն ելից իւրացն, և խորհեցան զմիաբանութիւն առնել ընդ իրեարս եր-կոքին թագաւորքն. Լաւասափ՝ որ էր տէր Թիֆլիսու և Քառթլայ. և Թամրազ, որ էր տէր Կախէթու և Գրիմայ, որպէս զի իրերաց օգնականութեամբ կարաս-ցեն դիմակայիլ Պարսից։ Եւ ի պատճառս այս՝ առաքե-ցին Լաւասափ և իւրքն ի Կախէթ՝ և կոչեցին զԹամ-րազ ի Թիֆլիս վասն միաբանութեան։ Իսկ Թամրազ՝ զի զվնաս բաժանման և զերկատութեան բազում ան-գամ կրեալ էր. Նա և զվիշտ և զթշնամութիւն ազգին Պարսից՝ որ յոլով անգամ արարեալ էին նմա, գիտէր. հոգւով չափ յօժար էր ի միաբանութիւն։ Վասն որոյ յարուցեալ եկն ի Թիֆլիս. որոյ գալն եղեւ ուրախու-

թիւն անպատմելի Լաւասափին և իւրոցն։ Որ և արա-րին ուխտ և դաշինս լինել միաբան և միախորհուրդ. և զանձինս դնել ի վերայ իրերաց՝ և մեռանիլ վասն ան-ուանն Քրիստոսի։

Յաւուրս յայսոսիկ, որ եկն Թամրազ ի Տփխիս, լուեալքն շահին զոր ինչ լուան և տեսին, գնացեալ տա-րան զհամբաւն Շահաբասին։ Եւ կամայօժար կամարարն անկելոյ արուեստին Շահաբաս առեալ նիւթ ի նմանէ, նորագիւտ հնարս կործանման և երկպառակութեան առնէ Թագաւորութեանն քրիստոնէից։ Քանզի մինչ էր ի Գանձայ քաղաք զետեղեալ իւրովն բանակաւ, սկսաւ աստի ևս առաքել Թուղթս պատրանաց և խաբէու-թեան, որպէս յառաջագոյն ի Սպահանայ. սոյնպէս և այժմ աստի. որ ի վերայ ունէր ողջոյն, սէր և խաղա-ղութիւն, և ի ներքոյ պատրանս և խաբէութիւն և նեն-գութիւն. գոնեա՛ զի յերկոցն զմինն արկցէ ի ցանցս իւր. կամ զԼաւասափ, կամ զմայրն, և կամ զքոյրն, և ո՛չ կարաց։

Եւ նորագիւտ հնարն այս էր. զի զԹուղթն պատ-գամաց՝ զոր յայտնի առաքէր, ընդ նմին ծածկաբար միւս այլ Թուղթ ծածկեալ խորհրդոց և նենգութեանց գրէր առ Լաւասափ և առ Թամրազ ծածուկ ի միմեանց։ Եւ առ Լաւասափ գրէր Թէ մի հաւատար դու Թամրա-զիդ՝ և մի միաբանիր ընդ նմա՝ զի դա Թշնամի քո է՝ և կամի բարեկամութեամբ դաւել և սպանանել զքեզ՝ և տիրել աշխարհին քում, որպէս ինձ ծանուցեալ է զայս խորհուրդ. արդ մինչդեռ չես սպանեալ՝ փութա-ցեալ դու սպան զնա՝ և [1] դու տիրեսցես երկրին քում և նորա. նա և ես քեզ օգնական եմ. եթէ զօրք պի-տոյանան քեզ՝ և Թէ գանձ. զի ինձ գոյ յօժարութիւն.

---

1 Ոռէ. զի.

զի դու տիրեսցես երկրի նորա։ Այնպէս և ըստ այսմ օրինակի գրէր և առ Թամրազն ծածուկ ի Լաւասափէն. դու սպան զԼաւասափ՝ և դու տիրեսցես երկու աշխարհին։ Երեք անգամ առաքեաց առ նոսա զայս թղթերն [1] զյայտնին և զգաղտնին ի միասին. և Լաւասափ և մայրն իւր ոչ ինքեանք գնացին, և ոչ զաղջիկն առաքեցին։

Իսկ զծածուկ թուղթսն՝ որ վասն միմեանց ընկալեալք էին Թամրազ և Լաւասափ՝ պահեալ ունէին առ ինքեանս. և տակաւին մտավարժ լինէին իմանալ զճշմարիտն և զսուտն։ Եւ ի խնամոցն Աստուծոյ երկոքեան թագաւորքն յայտնեցին զխորհուրդս զայս միմեանց, նա և ցուցին զթուղթսն՝ զոր առաքեալ էր նոցա շահն։ Եւ ի տեսանելն իմացան՝ և ծանեան ստուգիւ զթշնամութիւն շահին՝ որ առ ինքեանս։ Եւ փոխանակ թշնամութեանն սէր անխզելի և բարեկամութիւն անքակտելի հաստատեցին ի միջի իւրեանց։ Վասն զի Լաւասափ զքոյրն իւր՝ զոր խնդրէր շահն՝ ետ ի կնութիւն Թամրազին. զի նախկին կինն Թամրազին մեռեալ էր։ Եւ արարին անդէն հարսանիս Թամրազին և քեռ Լաւասափին՝ որում անունն էր Փարի։ Յետ հարսանեացն՝ Թամրազ և Լաւասափ գնացին ի Մցխիթայ՝ որ է աթոռ և պատրիարքարան իւրեանց, և կըրկնակի երդուան, միաժամ և միախորհուրդ լինիլ և պատերազմիլ ընդ Պարսից։ Եւ ի լինիլն այսմ ամենայնի, թղթաբերքն Պարսից՝ որք յայտնի եկեալ էին, և լըրտեսքն, որ ի ծածուկ, գնացեալ պատմեցին շահին. և նա ի խոր խոցեալ լինէր ի սիրտ և յոգի։ Զի ինքն քանիցս անգամ խնդրեաց զաղջիկն, և այսքան զօրօք վասն նորա եկն. ինքեան ոչ ետուն, այլ ետուն [2] Թամրազին։

---

1 Ո–կ. զայսոսիկ թուղթս. — 2 Ն–յն. չէ+. ետուն.

Կոչեաց զՄովրովն և ասէ ցնա՝ այս ամենայն զօրօքս ածեալ բերեր զմեզ մինչև ցայս վայր. և զաղջիկն, զորմէ ասէիր, ահա տեսեր զի ոչ ետուն ինձ՛ այլ Թըշնամւոյ իմոյ, որ և ծառայից իմոց հազիւ թէ հաւասարի։ Արդ՝ ծաղր և այպն կատականաց արարեր զիս ամենայն աշխարհի. և եթէ ոչ տարեալ մուծցես զիս յաշխարհն Վրաց, և ի ձեռս իմ գրաւեսցես զերկիր նոցա. գիտեա դու յանձն քո՝ զի չես մնալոց կենդանի. այլ յօդ յօդ բաժանելոց է մարմին քո ամենայն։ Եւ Մովրով ետ պատասխանի՝ եթէ ոչ տարայց զքեզ յերկիրն յայն՝ այդպէս առնես. և եթէ տարայց քեզ զի՞նչ առնես։ Ասէ ցնա շահն, ամենայն խորհրդական և նախկին նախարարաց իմոց բուն իսկ գլուխ՝ և նախապատիւ՝ և գերագոյն քան զամենեսեան դու ես լինելոց։ Եւ խրատովն Մովրովի համբերեցին մինչև ի Դեկտեմբերի ամիսն, մինչ ի յաւագ տօներն.[1] որ եկեալ եհաս ձմեռնային ժամանակն՝ և ցուրտն սաստկացաւ. և եկեալ ձիւնն կալաւ զգլուխս լերանցն՝ և զճանապարհս փախստեանն։ Եւ ի յամրոց մտեալ արքն՝ նեղեալք ի ցրտոյ իջին ի շէնս և ի գիւղօրայս. և տերևք ծառոցն թափեցան, որ ամենայն տեղի աչաց ակներև տեսանելի եղև։ Ապա ասաց Մովրովն ցշահն. արդ՝ ահա այժմ գնասցուք յաշխարհն Վրաց՝ զի այժմ է ժամանակն, և չուեալ ի Գանձակ քաղաքէն եկին ի սահմանս Կախէթու՝ որ է երկիր Թամրազին։

Եւ ճանապարհ երկրին Կախէթու ի մէջ ձորոյ մըտանէր՝ ընդ որ անցանէին՝ և ապա մտանէին յերկիրն. և էր այն նեղ և նուրբ և դժուարին վայրք. իսկ երկու կողմունք ձորին բարձր և քարավէժ լերինք, և մացառուտ և թաւ մայրի, ընդ որ մարդ և ձի ոչ կարէին

1 Ուղ. տօնսն.

գնալ։ Զոր Թամրազ և Լաւասափ եկին բազում զօրօք կալան զկլրճս ձորոյն՝ և կանգնեցին պարիսպ ամուր քարիւ և փայտիւ. և ի ներսի կողմանէ շինեցին տեղի պատերազմի, ուստի ի ներքս կալով ինքեանք պատերազմեսցին ընդ թշնամեացն՝ որք արտաքոյ։

Եւ բանակն Պարսից յարձակ վայրի հանդէպ ձորոյն բանակեալ էր։ Իբրև տեսին թէ Վրացիքն կալան զանցս ճանապարհին, անճար եղեալ ի տարակուսի մնացին։ Եւ շահն դարձեալ կոչեաց զմովրով և սպառնացաւ նմա մահ. նա և մովրովն ինքն ևս մնաց ի տարակուսի։ Եւ յետ երկուց աւուրց ասէ մովրովն շահն. խորհեալ իմ՛ գտի ի կողմն ուրեք ճանապարհ. բայց երկուց աւուրց ճանապարհ հեռի է աստի. այլ և պիտոյ է կացնաւոր և բահաւոր և մրճաւոր, որ զմայրին կոտորեն և զդժուարին տեղին հարթեալ դիւրեն։ Իբրև լուաւ զբանս զայս շահն մեծաւ ուրախութեամբ ցընծացաւ՝ և հրամայեաց զօրաց իւրոց առնուլ բազում կացին և բահ և այլ ինչ գործի, և գնալ ի տեղին և բանալ ճանապարհ. և նոքա գնացեալ կոտորեցին զմայրին՝ և դիւրեցին զդժուարին տեղիսն՝ և բացին ճանապարհ. և եկեալ ծանուցին շահին թէ եղև զոր հրամայեցեր։

Եւ շահն հրամայեաց բանակին իւրոյ. զոր օրինակ մինչ ցայնժամ կազմեալ հօրեալ կառուցեալ էին զվըրանքն՝ և ուղտ և բեռնակիր անասունքն, և օրտու բազարչիք՝ և այլ ամենայն ինչ, որպէս յառաջն կային, սոյնպէս կացցեն ի տեղիս իւրեանց. որպէս զի համարեսցին Վրացիքն թէ տակաւին անդ են զօրքն Պարսից։ Բայց միայն մարտիկ զօրքն Պարսից իւրեանց պատերազմական զինուքն և երիվարօքն զանխուլ և թաքուն եղեալ գնասցեն, ընդ բացեալ ճանապարհն մտցեն յերկիրն Կախէթու։ Յայնժամ եկին պատերազմական զօրքն Պարսից

և գնացեալ ընդ նոր բացեալ ճանապարհն մտին յերկիրն Թամրազին՝ և հասին ի շէնս և ի գիւղս. և սկսան կոտորել զազգն Վրաց անխնայ: Իսկ Թամրազ և Լաւասափ, որք նստէին զօրօքն Վրաց ի բերան ձորոյն, ոչ գիտէին զարարմունսն Պարսից. մինչ յանկարծակի տեսին զայր մի գլուխն և մարմինն վիրաւորեալ և հասակն ամենայն արեամբ թաթաւեալ, որ փախուցեալ ի սպանմանէն Պարսից և եկեալ գուժկան և համբաւաբեր վասն գալոյն Պարսից և մտանելոյն յերկիրն Վրաց: Եւ ի լսելն զայս Թամրազին և Լաւասափին՝ և որոց ընդ նոսա, ափշեալ յիմարեցան՝ և ոչ այլ ինչ կարացին առնել. ոչ ստացուածք կամ ապրանք բառնալ՝ և բնաւ ոչինչ: Այլ և իւրաքանչիւր ոք զընտանիս և զկարևոր սիրելիս իւր առեալ ընդ ինքն [1] հազիւ թէ ի մեկնակի ձիոջ հեծեալ հապճեպ տագնապաւ աճապարեալք ի բաց փախչէին, զի մի անկցին ի ձեռս Պարսից: Արդ՝ յայսմ պատճառէ Թամրազն և Լաւասափն աստի փախուցեալք անկանէին ի Թիֆլիս, և անտի ի Գօրի. և անդ ևս ոչ կարացին կալ, այլ ընդ ճանապարհն Կօլբայու անցին զլեառն Կովկաս՝ որ է Ելբրուզ սարն և գնացին ի Պաշիաչուխի աշխարհն: Վասն զի մայրն Լաւասափին դուստր էր Պաշիաչուխի թագաւորին. վասն այսորիկ Թամրազն և կինն իւր՝ և Լաւասափ և մայրն իւր, և այլ ընտանիք սոցա փախուցեալք ի Պաշիաչուխ՝ զերծան ի ձեռաց Պարսից:

Եւ զօրքն Պարսից՝ որ ի միւս կողմանէ եկեալ մըտին յերկիրն Թամրազին, եկին մինչև ի բերան ձորոյն, զոր կապեալ էին Վրացիքն, քակեցին զկապն՝ և բացին լայն և ընդարձակ ճանապարհ, ընդ որ եկին բանակն Պարսից՝ մտին յերկիրն Թամրազին. և անդէն բանա-

---

1 Ուղ. ինքեանս.

կեցան և կացին մինչև յաւուրս յիսուն՝ և ոչ ելին յերկրէն։ Եւ այնքան աւուրս՝ որ կացին անդէն, թէ զինչ գործեցին, բերան ոչ բաւէ խօսել և ոչ լեզու ճառել, դու մտօք խորհեալ խելամուտ լեր· թէ զորքան անպարտ անձինս քրիստոնէից սրախողխող արարեալ վիրաւորեցին կամ թէ գլխովին իսկ սպանին· և զանմեղսն գերեցին և խայտառակեցին· և զինչս և զստացուածս յափշտակեցին, և զշինուածս հրդեհեալ այրեցին և քանդեցին, և զեկեղեցիսն քակեցին, զսեղանն սուրբ՝ և զնշան սրբոյ խաչին կործանեցին։ Եւ զգերեալսն պահէին ի մէջ բանակին առ իւրեանս· և պէսպէս վշտօք տառապեցուցանէին՝ ցրտով և մերկութեամբ՝ քաղցիւ և ծարաւով՝ և այլ բազում կերպիւ։

Եւ յորժամ եմուտ Շահաբաս յերկիրն Կախէթու և ետես թէ փախուցեալք են Թամրազն և Լաւասափն և մնաց երկիրն և ժողովուրդքն ի ձեռս իւր։ Յայնժամ հանճարեղն ի խորհուրդս չարեաց, և այլ ևս աշխարհաւեր հնարս ներգործեաց, քանզի հրամայեաց յամենայն գաւառս և ի գիւղս Կախէթու մունետիկք շրջեսցին՛ և քարոզեսցեն բարձր ձայնիւ ի բազում աւուրս՝ և ասասցեն թէ հրաման է ի հզօր և ի խաղաղասէր և յաշխարհաշէն թագաւորէն Շահաբասայ, զի ամենայն բնակիչք աշխարհիս Կախէթու, եթէ իշխանք, եթէ հեծեալք, եթէ արուեստաւորք, եթէ ռամիկ ժողովուրդք, և ամենայն ոք, որ ելեալ ամրացեալ է ի լերինս, և ի մայրիս, ի բերդս, և յամենայն ամուր տեղիս, դարձցին, և եկեսցեն ի տեղիս և ի բնակութիւնս իւրեանց՝ և կացցեն ի խաղաղութեան և մի կրեսցեն զերկիւղ և զկասկածանս ինչ ի զօրացն Պարսից· քանզի հրամայեալ է նոցա թագաւորն· մի զոք նեղել՝ և մի զոք խռուել ի ժողովրդենէ աշխարհիս, որք գան ի հնազանդութիւն շահին՝ և լինին Շահիսէվան, ոչ լինի նոցա վնաս ամե-

նեւին, այլ կեան ի խաղաղութեան։ Իսկ ովք յամառեալք զիմաղարձ լինին հրամանաց Թագաւորին, առաքելոց է Թագաւորն ի վերայ նոցա զօրս բազումս, ովք զամրոցն նոցա առեալ աւերեսցեն, և զինքեանս սպանցեն, և զընտանիսն գերեսցեն, և զինչսն յափշտակեսցեն։ Արդ՝ ելէք ի յամրոցաց, և եկէք ի հնազանդութիւն, և լերուք շահիսէվան, և կացէք ի խաղաղութեան։ Եւ յիշխանաց և ի նշանաւոր արանց ով ոք յառաջեալ վաղագոյն գայցէ, շնորհելոց է նմա Թագաւորն զփառս և զպատիւս՝ և զպարգևս բազումս, և զպետութիւն իշխանական։

Իսկ բնակիչք երկրին Կախէթու իբրև լուան զբանս քարոզութեան մունետկացն, ոմանք պատրեալք հաւատացին, եկին և եղեն շահիսէվան։ Ոմանք յերկիւղէ սպանութեան և գերութեան եկին և եղեն շահիսէվան։ Ոմանք վասն բազմօրեայ կելոյն անդէն ի մէջ երկրին Պարսիցն, անճար մնացին, եկին և եղեն շահիսէվան։ Ոմանք տեսին զի զայս անուն ամրոց առին, և զայն անուն ամրոց առին, և արարին զսպանութիւն և զգերութիւն ընդ բնակողաց ամրոցին, ահաբեկ և երկիւղալիցք եղեն, թէ[1] մի դուցէ և[2] ինքեանց ես այնպէս պատահիցի, վասն որոյ ելեալ յամրոցաց՝ եկին և եղեն շահիսէվան։

Այլ և հրամայեաց շահն վասն շահիսէվան եղելոցն զի բնակեցուսցեն զնոսա յիւրաքանչիւր շէնս և ի տեղիս, և յուսով և քաջալերութեամբ մեծաց բարեաց խօսեսցին ընդ նոսա. և զանուանս նոցա զարանց և կանանց, ուստերաց և դստերաց, և ամենից ընտանեաց գրեսցեն ի քարտիսի, և առ ինքեանս պահեսցեն Պարսիկք։ Այլ և կացուցին ի վերայ նոցա պահապանս ի զօրացն Պար-

1 Ոչ. չէ. Թէ. 2 Նոյն. չէ. և.

սից յամենայն տեղիս՝ զի մի գուցէ ոք ի նոցանէ փախիցէ յայլ ուրեք։ Բայց խաբէին զնոսա և ասէին. վասն այնորիկ կարգեմք ձեզ պահապանս՝ զի մի ոք ի Պարսից արանց զձեզ նեղիցէ, կամ զինչս ձեր յափշտակիցէ։ Եւ ով ոք եկն ի շահխնէվանութիւն, այսպէս արարին որպէս պատմեցաք։

Եւ որք ոչ եկին, այլ մնացին յամուրս իւրեանց, եկին Պարսիկքն ի վերայ ամրոցաց նոցա, և զբազում աւուրս պէս պէս հնարիւք մարտ եդեալ ընդ ամրոցացն մինչև յաղթեալ առնուին, և սուր ի վերայ եդեալ անխնայ կոտորէին, իբրև պաշտօն բարի մատուցանել Աստուծոյ համարէին, ըստ վկայութեան Տեառն։ Ապա զինչս և զստացուածս կողոպտեալ յաւարի առնուին, և զմնացեալ կանայս և զմանկունս նոցա գերեալ ածէին ի բանակն իւրեանց. Եւ որպէս ասացի, յաւուրս յիսուն կացեալ անդէն, ոչ մնաց ամրոց՝ որ ոչ առին. և կամ տեղի, որ ոչ աւերեցին, և միահաղոյն յաւեր և յապականութիւն դարձուցին զամենայն և զյուռթի և զբազմամարդ աշխարհն Կախէթու և Գրիմու։

Եւ զԿախէթու և զԳրիմու[1] *եկեղեցեաց անօթսն և զսրբութիւնսն, խաչ՝ և սկիհ՝ և աւետարան՝ և բուրվառ՝ և շուրջառ՝ և զայլ անօթս և զսրբութիւնս, որք էին մեծածախք և ծանրագինք, և զանազան յօրինուածովք ակամբք և մարգարտովք յօրինեալք, հրամայեաց շահն վասն նոցա՝ զի մի խորտակեսցեն, այլ տանիլ ի քաղաքն յԱսպահան և դնել ի գանձարանն արքունի. և կայ անդէն ի գանձարանին արքունական մինչև ցայսօր. որ բազումք ի մերոց ազգացս վկայեցին՝ գոլով ականատեսք այնց սրբութեանց։ Այլ և զանկար պատմուճանն Քրիստոսի ընդ այլոց սրբութեանց անտի տարեալ են,*

---

1 Ո-ն. չէ. զԿախէթու և զԳրիմու,

և կայ ի նոյն գանձարանին յԱսպահան քաղաքի. որ դեռ ևս լոյս վառեն առաջի նորա, և այսմ խօսիցս ասողքն, ինքեանք և իւրեանց աչօքն տեսեալ էին, և էին արք հաւատարիմք։

Յետ բազում աւերութեանց աշխարհին այնորիկ չուեալ անտի և եկեալ ի սինօռ երկուց աշխարհացն Կախէթու և Քառթլայ՝ և անդ բանակեցաւ շահն. և հրաման արար իւրոց զօրացն մի նեղել՝ և մի խուել զոք ի բնակչաց աշխարհին Քառթլայ, և զօրացն Պարսից՝ եթէ պիտոյասցի իր ինչ՝ որ կարէք է մարդկան և անասնոց, գնով գնեսցեն ի գաւառականացն. և ըստ կամաց վաճառողին տացեն զգինն։ Այլ և հրամայեաց շահն՝ զի ելցեն մունետիկք և շրջեսցին յամենայն գաւառսն Քառթլայ՝ և աղաղակելով քարոզեսցեն թէ. հրաման է ի մեծ և յաշխարհաշէն Թագաւորէն Շահաբասայ, զի աշխարհս Քառթլայ ամենայն գաւառականօք իւրովք՝ իշխանօք և ռամկօք իւրովք ի խաղաղութեան և յանդորրութեան կացցեն. և ամենեքեան որք ելեալ են ի բերդ և յամուր տեղիս, վասն երկիւղի զօրացն Պարսից, այսուհետև մի երկիցեն, և մի կասկածանս ինչ կրիցեն. այլ իջցեն ի բնակութիւնս իւրեանց՝ և կացցեն ի գործս իւրեանց և ի շինարարութիւնս և եղիցի սէր և խաղաղութիւն, և երթևեկութիւն ի մէջ ազգին Պարսից և Վրաց. քանզի զաշխարհս Քառթլայ իմ գիտեմ, և ոչ աւերեմ վասն իմ և վասն Լուարսափայ Թագաւորին. վասն զի զնա ինձ որդի, և եղբայր և բարեկամ գիտեմ. և յորժամ գայցէ նա զնորին աշխարհն յինքն յանձնելոց եմ՝ և ես գնամ յաշխարհն իմ։ Արդ եթէ կամեսցի Լուարսափ Թագաւորն՝ և գայցէ այսպէս առնեմ, և թէ ոչ գայցէ ահաւասիկ մօվրովն՝ որ է յաշխարհէս Քառթլայ և յազգէն Վրաց՝ որ և ահա ընդ մեզ է, զաշխարհս Քառթլայ տամ մօվրովին՝ և ես գնամ յաշխարհն իմ։

Այլ և պատուիրեաց շահն մովրովին, զի և նա յիւ-
րոց ծառայիցն առաքեսցէ յամենայն տեղիս աշխարհին՝
զի ըստ սմին օրինակի խօսեսցին առ ամենայն բնակիչս
գաւառացն առ ի հաւատացուցանել զնոսա։ Նա և սնո-
տի և պատրողական յուսով զմովրովն ևս խաբեաց ա-
սելով. Լաւասափն թէ գայցէ և թէ ոչ՝ քեզ տամ զիշ-
խանութիւնն Քառթլայ. որ և ծառայք մովրովին այնպէս
խօսէին ընդ գաւառականացն։ Եւ այսպիսի օրինակաւ՝
սուտ և պատիր բանիւք խաբեցին զամենայն գաւառա-
կանսն՝ որ ոչ պատերազմաւ և ոչ խռովութեամբ, այլ
սիրով և խաղաղութեամբ ածին զամենայն գաւառա-
կանսն ի հաւանութիւն՝ և իջուցին յամրոցացն, և բնա-
կեցուցին ի գիւղօրայսն։ Ուստի լցեալ լինէր ամենայն
պիտոյք բանակին Պարսից՝ մարդկան և անասնոց, և
ոչինչ կողմանէ ունէին վտանգ զօրքն Պարսից։ Այլ յա-
մենայն կողմանէ կային ի խաղաղութեան և յանդոր-
րութեան։

Բայց բնակիչք աշխարհին Քառթլայ երկիւղիւ կաս-
կածանս կրէին՝ եթէ գուցէ ո՛չ գայցէ Լաւասափն և ի
պատճառէ այնմ քինու, հրամայեսցէ շահն իւրոց զօ-
րաց յաւարել և ի գերել զաշխարհ տէրութեան Լա-
ւասափու. և զայս բան զօրքն Պարսից ևս ասէին և
խօսէին ընդ գաւառականացն. այլ և ասէին՝ եկայք
դուք ևս գրեցարուք շահիսէվան՝ զի մի մատնիցիք ի
գերութիւն, որպէս զժողովուրդն Կախեթու՝ զի որք
գրեցան շահիսէվան, ոչ մատնեցան ի գերութիւն։ Եւ
յայսմ պատճառէ բազումք յաշխարհէն Քառթլայ եկին
և գրեցան շահիսէվան. և որք գային ի շահիսէվանու-
թիւն՝ իւրեանց և ամենայն ընտանեաց անուանս գրէին
ի քարտիսի, և առ ինքեանս պահէին Պարսիկք։ Եւ
զգրեալ շահիսէվանսն բնակեցուցանէին յիւրաքանչիւր
տեղիս՝ յուսով մեծագոյն բարեաց և խաղաղութեան։

Եւ մինչ նստեալ կայր շահն ի մէջ սահմանի երկուց աշխարհացն՝ արար միւս ևս նոր հնարս. քանզի զմի ոք յիւրոց խորհրդակցացն՝ որ էր մեծագոյն իշխան և փառաւոր նախարար՝ որում անունն էր Սարու խօջայ՝ կարգեաց զնա հրեշտակ խաղաղութեան. և սիրոյ նամակաւ առաքեաց ի Պաշխաչուխ առ Լաւասափ. և գիր պատգամացն էր ըստ այսմ օրինակի։

Յարեաց արքայէ Շահաբասէ բազում սիրով ողջոյն հասցէ արքայիդ Վրաց Լաւասափու. բազում անգամ գրեցաք առ քեզ սիրով՝ և ցուցաք զմեր սրտի բարեկամութիւնն որ առ քեզ, բայց դու ո՛չ անսացեր և հաւատացեր բանից մերոց։ Արդ՝ ահա ի գործոյն ի միտ ա՛ռ և հաւատայ որպէս և տեսանես զի զերկիրն Թամրազին աւարեցի. իսկ զքոյն ահաւասիկ շէն և ամբողջ պահեալ եմ վասն քո. և սպասեմ գալստեան քո։ Արդ՝ մի դանդաղիր ի գալ. և մի անմիտ և անհանճար խրատտուաց լսեր. և զքեզ ի թագաւորութենէդ զրկեր, քանզի ոչ ունիմ ոխս և նենգութիւն յիմում սրտի ի քոյդ կողմանէ, որպէս և դու ոչինչ բնաւ վնաս գործեալ ես առ իս։ Այլ զգալն քո յաղագս այնորիկ խընդրեմ, զի որպէս նախնեօքն մերովք էր միաբանութիւն ի մէջ երկուց ազանցս, սոյնպէս կամիմ զի և ի մեր ժամանակս լիցի. և մեք զամենայն կողմն հիւսիսային՝ որ յայսկոյս է գետոյն Երասխայ, յանձնեսցուք ի քեզ. զի դու լիցիս վերակացու և հրամանատար ի վերայ ամենայն իշխանաց կողմանցս այսոցիկ. որպէս զի քո զայս կողմն հոգալով՝ և մեք անհոգ եղեալ զմիւս կողմանն հոգասցուք և թշնամեաց զդէմն կալցուք. ողջ լեր։ Զայս թուղթս գրեալ ետ ցՍարու խօջայն. և այլ բազում բանս և հնարս խարդախութեան՝ զոր ամբարեալ ունէր յիւրում սրտին՝ բանիւ պատուիրեաց նմա. թէ որով հնարիւք և իցէ հաւանեցուսցէ զԼաւասափ գալ առ

շահն։ Իսկ Սարու խոջայն գնացեալ ի Պաշիաչուխ՝ յանդիման եղեալ Հաւասափու մատոյց զողջոյնն և զթուղթըն, իբրև ընթերցան զթուղթն՝ գիտացին զի ամենայն բանքն պատրանք են․ ո՛չ հաւանեցան թէ՛ Հաւասափն՝ թէ՛ մայրն՝ թէ՛ քոյրն՝ և թէ Թամրազն։ Թէպէտ Սարու խոջայն բազում և զանազան կերպիւ յորդորէր զՀաւասափ, սակայն ո՛չ հաւատացին։

Զկնի աւուրց ինչ՝ պատասխանի արարին բանից շահին՝ ըստ այսմ օրինակի։ Թէ ճշմարիտ է բանքն քո՝ և ստուգիւ կամիս, որ ի մեր մէջն բարեկամութիւն լինի․ ահաւասիկ նշան սիրոյ քո և խաղաղութեան այն լիցի․ զի դու չէն և ամբողջ թողցես զաշխարհն մեր և ժողովուրդքն մեր յիւրաքանչիւր տեղիս կացցեն և դու փոխանակ քո ի քոյոց իշխանաց զմի ոք թողցես այդր՝ որպէս զի զամենայն սէր և զմիաբանութիւն և զդաշնադրութիւն, զոր դու կամիս, միջնորդութեամբ նորին հաստատեսցուք ընդ քեզ․ և դու ելեալ յաշխարհէն մերմէ գնասցես․ և մեք եկեալ տիրեսցուք աշխարհին մերոյ՝ և կացցուք ընդ քեզ ի սէր և ի միաբանութիւն․ ողջ լեր։ Յետ բազում հնարաւոր խօսից՝ Սարու խոջայն իբրև ետես թէ ոչ հաւատացին․ առեալ զթուղթն Հաւասափու՝ և եկեալ առ շահն ծանոյց նմա զամենայն բանս և զհաստատուն միտս նոցա։

Յետ լսելոյ Շահաբասին զայս բան պատասխանւոյ, չուեաց ամենայն բանակաւն և եկեալ ի վերոյ քան զԳօրի ի վերայ ճանապարհին, որ գնայ ի Պաշիաչուխ, և անդ ի վերայ ճանապարհին բանակեցաւ։ Պատճառ յայսմ տեղւոջ բանակելոյն այս է՝ զի թէ ոք յազգէն Վրաց իշխան կամ ռամիկ՝ թէ կամիցի փախչել և գնալ ի Պաշիաչուխ, մի կարասցէ գնալ։

Եւ ապա ևս առաքեաց շահն զՍարու խոջայն

կրկին անգամ [1] առ Լաւաստի բանիւ և գրով՝ զի Թերևս պատրեալ գայցէ և ոչ եկն։

Ցաւել երկրորդ անգամ առաքել զնոյն Սարու խոջայն առ Լաւաստի՝ և ոչ եկն։

Եւ ի բազում գալոյն և գնալոյն ձանձրացան Լաւաստի և իւրքն. յայսմ վերջին նուագիս գալոյն՝ արարին գործ անարգանաց ընդ Սարու խոջային՝ զի մի ևս առաքեսցէ առ նոսա շահն հրեշտակ։ Եւ անարգանաց գործն, զոր արարին այս էր՝ զի զամենայն ինչս նորա յափշտակեցին, և բնաւին մերկացուցին ի զարդուց և ի զինուց, ի հանդերձից և յերիվարաց, մինչ զի և զձիորին ևս զոր ինքն հեծեալ էր, առին. և զինքն հետևակ արձակեցին ի գնալ, և պատուիրեցին մեծաւ սպառնալեօք մի՛ ևս յաւելուլ ի գալ. և այսպիսի անարգութեամբ Սարու խոջայն եկն առ շահն։ Եւ շահն երկայնամտեալ համբերէր ի տեղւոջն. և մտավարժեալ խոկայր ի խորհուրդս չարեաց և նենգութեան Լաւաստիին և Թամրազին։

Մինչ շահն այսպէս վարանեալ կայր՝ և ոչ գտանէր ելս իրացն, ի սոյն աւուրս այր ոմն ի քաղաքէն Տփխիսոյ գործունեայ չարեաց՝ և ուղղի անիծից՝ շարժեալ ի դիւաց ըստ ազդեցութեանն սատանայի, ելեալ ի Տփխիսոյ և եկն ի բանակն արքունի՝ և ծանոյց շահին, Թէ խնդիր է տէրութիւն քո բերել զԼաւաստի. արդ՝ եթէ սուրգիւ կամիս և հնաս ոչ առնես, ես գնացեալ ածից զնա առ քեզ։ Եւ ի վերայ այսր բանի առնելն, մեծ զարմացումն կալաւ զշահն. եհարց ցայրն Թէ դու զիա՞րդ կարես բերել զնա. և այրն ասաց. մեք ազգականք եմք Լաւաստիին, քանզի նա ինձ սան է ի կնքաւորութեան կողմանէ. և ի մէջ մեր մեծ հաւա-

---

1 Ուղ. կրկնակի.

տարմութիւն ունիմք առ միմեանս. վասն որոյ գիտեմ զի նա հաւատայ բանից իմոց։ Իսկ շահն ի վերայ այսր բանի անպատում ցնծութեամբ լցեալ եղև. զի գործ զոր ինքն բազում աշխատութեամբ ջանայր՝ և ո՛չ լինէր. և որում ի յոլով ժամանակաց ցանկայր և ոչ հասանէր, արդէն յոյժ դիւրութեամբ լինի. վասն որոյ խոստացաւ առնն այնմիկ բազում գանձս և բազում պարգևս՝ և բազում ևս փառաց հասուցանել, եթէ բերցէ զԼաւասափն։

Իսկ չարաբաստ այրն այն վատշուէր՝ որ եղև պատճառ կործանման թագաւորութեանն քրիստոնէից, գնացեալ ի Պաշխաչուխ առ Լաւասափ և առ Թամրազ՝ և աւուրս բազումս խօսեցաւ ընդ Լաւասափին հաւանական և մեղկացուցիչ բանիւք, մինչ որ թուլացոյց ի պընդութենէ զմիտս նորա։ Բայց Թամրազ՝ և մայր և քոյր Լաւասափին՝ և ամենայն հաւատարիմք նոցա ո՛չ հաւանէին բանից առնն, այլ քամահէին, քանզի գիտէին ստուգիւ, թէ կախարդասար հնարքն է շահին։ Բայց այրն սատանայաբնակ՝ որպէս զօձն Եւայի՝ հակեալ դարձոյց զմիտս Լաւասափին գնալ առ շահն։ Իսկ մայրն Լաւասափին, և քոյրն, և Թամրազն. և իշխանքն, և ամենայն բարեկամքն լային արտասուօք և ողբային, և ասէին. մի մատներ զքեզ ի ձեռս թշնամւոյ քո, զի նա քո թշնամի է և ոչ բարեկամ. և ի կորուսանել զքեզ ջանայ։ Եւ Թամրազն ասէր. մի հաւատար անհաւատիդ այդմիկ և խորամանկ գազանիդ, զի դա զկորուստն մեր ջանայ։ Իսկ միտք Լաւասափին՝ բանից չարեաց արբանեակ առնն առաւել հաւանէր, քան թէ բանից բարեկամաց իւրոց։ Եւ զայս առնէր ամենեցուն պատասխանի՝ թէ ահաւասիկ շահն եկեալ և նստեալ կայ ի մէջ մերոյ երկրին, և խնդրէ զիս առնել զխաղաղութիւն. և թէ ոչ գնացից, զամենայն երկիրն աւերեալ

ապականէ և զեկեղեցիսն քանդէ, և զքրիստոնեայսն սպանանէ, և գերէ, և այս ամենայն լինի ի պատճառս իմ. քան թէ կեցից ի ժամանակս ինչ խղճմտանօք՝ և այնքան անձանց պարտական, լաւ է ինձ գնալ առ շահն և զաշխարհն ամենայն ազատել. զի մի լիցի իմով պատճառաւ աւերումն աշխարհի. յուսալով յԱստուած դընամ առ նա ուղղութեամբ, և անդէն զինչ և պատահեսցի ինձ, եթէ մահ և եթէ կեանք, եղիցի կամք Տեառն օրհնեալ:

Արդ՝ այսպիսի բանդագուշեալ խելօք ոչ լուաւ Լաւասափ բարեկամաց իւրոց, այլ հաւատաց բանից և երդման շահին, ելեալ ի Պաշխաչուխէն գալ առ շահն: Եւ յորժամ բերին զաւետիս գալստեան նորա առ շահն՝ ոչ գիտէր թէ որով եղանակաւ ցնծասցէ սիրտ նորա:

Եւ յորժամ եկեալ Լաւասափ մերձ եղև բանակին Պարսից՝ շահն ինքն ելեալ ընդ առաջ նորա ամենայն իշխանօք և զօրօք, և ի տեսանելն միմեանց սիրով և խնդութեամբ և բազում շուք դնելով ողջոյն տային իրերաց: Իսկ որ շահն էր ցնծայր ի սիրտ և յոգի իւր, զի մեծ եղև նմա օրս այս քան զամենայն աւուրս կենաց իւրոց. զի կատարումն եղև չար կամացն, զոր ի բազում ժամանակաց բաղձայր: Եւ որպէս սովորութիւն է խորամանկ և օձաբարոյ ազգին Պարսից, և մանաւանդ այս շահիս՝ բազմահնար վիշապիս, զառաջինն՝ բազում սիրով և մեծարանօք ընկալաւ զնա. և հանապազ սուտ և սնոտի պատրողական բանիւք ըստ հաճոյից կամաց նորա խօսէր, մինչև հոմբաւն այնպէս տարածեցաւ յամենայն աշխարհն Վրաց՝ թէ շահն, որ խնդրէր զԼաւասափ, ոչ վասն այլ ինչ պատճառի էր, քան թէ վասն սիրոյ և միաբանութեան:

Ապա չուեալ անտի իւրով բանակաւն շահն գնաց ի Տփխիս, տարաւ ընդ իւր և զԼաւասափ՝ և պահէր

զնա իւր հաւասար մեծաւ փառօք, և հանապազ խօսէր ըստ ախորժակաց մտաց նորա՝ բանս հաճոյականս նմա, և զինքն հաւատարիմ ցուցանէր նմա։

Այս Լաւասափ՝ ի ժամանակին յորում նոր նստեալ էր Թագաւոր, և զկնի ամաց ինչ, և չորս և հինգ ամաւ յառաջ քան զշահի գալն, եղև երբեմն ի կարգս զրուցաց պատմութիւն զպապէն Լաւասափիս զՍիմոն խանէն, զոր ըմբռնեցին Օսմանցիք, տարան ի Ստամբօլ սպանին և անդէն Թաղեցին, որոյ վերայ եռաց արիւնն Լաւասափին՝ և ըղձացաւ առ ի բերել զնշխարս պապուն իւրոյ զՍիմոն խանին և ի հայրենի գերեզմանատունս իւրոց՝ Թաղել ընդ այլ ևս նախնեացն և ընտանեաց իւրոց։ Եւ իբրև տեղեկացեալ եգիտ զարս ոմանս՝ որք գիտէին զտեղին՝ յորում Թաղեալ կայր նշխարք Սիմոն խանին ի քաղաքին Կոստանդնուպօլսի։ Եւ իսկոյն զգիտող զարսն զայնոսիկ առաքեաց առ ի բերել զնշխարս Սիմոն խանին. և նոքա գնացեալ ի Կոստանդնուպօլիս՝ հանին զնշխարս նորա և բերեալ հասուցին ի Թիֆլիս։ Եւ ի գալ արանցն՝ որք բերին զնշխարս Սիմոն խանին՝ պատահեցաւ յայսմ ժամանակիս զի շահն ի Թիֆլիս էր, որ և գիտաց շահն Թէ զնշխարս Սիմոն խանին բերին. և լցեալն խորհրդով և խարդախութեամբ սատանայի, որ այնքան Թշնամի է քրիստոնէից, մինչ զի և արեան նոցա ծարաւի է՝ որ սպանմամբ և գերութեամբ կենդանեացն ոչ շատացաւ, արդ այժմ ընդ ոսկերաց մեռելոյն ևս արար Թշնամութիւն, վասն զի սաստիկ հրամանաւ հրամայեաց իսկոյն բերել առաջի իւր։ Եւ իբրև կատարեցաւ հրամանն, ասաց. զսա ես առաւել պատուեմ և փառաւորեմ քան զձեզ, զի դուք ոչ գիտէք զարժանաւոր պատիւ Թագաւորաց, և կամիմ առաքել զսա յիմամուռզէն՝ զի ընդ նախնեացն մերոց Թագաւորաց և պետաց փառաւորեսցի։ Արդ՝ այսպիսի կախարդասար բանիւք առաքեաց զոս-

կերսն Ոլիմոն խանին ի Պարսկաստան, և ո՛չ եթող թա-ղել ի հողն Վրաց, և ո՛չ ոք գիտաց թէ զինչ արարին կամ ուր տարան և այսպէս անյայտ արարեալ կորուսին։

Եւ յայսքան ժամանակս՝ որ եկաց շահն ի Վրաց-տուն, ընդ իւրով իշխանութեամբն գրաւեաց զամենայն աշխարհն։ Բայց զերկիրն Թամրազին զբովանդակն՝ յայտ-նապէս արար զի լիցի ընդ իշխանութեամբն Պարսից՝ իբր թէ թրոյն իւրով առեալ զայն, վասն որոյ առա-քեաց զզօրս ի Պարսից՝ որ շինեցին յերկիրն Թամրա-զին զբերդորայս՝ և կացոյց ի նոսա զօրս ի Պարսից, և զՍէլիմ խանն, և զՓէքար խանն, և զԲէքդաշխանն կար-գեաց անդէն իշխան և զօրագլուխ՝ զի պահեսցեն զեր-կիրն ընդ իշխանութեամբն Պարսից։

Եւ զբնակիչսն Կախէթու և Գրիմայ սպառեաց, զո-մանս սպանմամբ, զոմանս գերութեամբ. և որք մնացին և գրեցան շահիսէվան հրաման արար վասն նոցին զա-մենեսեան արտասահման առնել և քշել տանիլ ի Պարս-կաստուն։ Եւ կարգեաց ի վերայ այսմ գործոյ զիշխանս և զօրս որ առաջին գրոմն և թղթոմն, որ գրեցին զանուանս նոցա և առ ինքեանս ունէին, այն գրոմն սկսան քննել զամենեսեան ընտանեօք իւրեանց, և զամենայն զնոսա իւրեանց ընտանեօք և ստացուածովք յիւրա-քանչիւր տեղեաց հանել. և զօրս հանէին բերեալ բնա-կեցուցանէին յափն Կուր գետոյն՝ ի տեղին, որ անուա-նի Ղազբին. քանզի անդէն սահմանեցին բանակետղ, այսպէս արարին մինչև զամենայն շահիսէվան գրեալքն հանին։ Եւ յորժամ եղև զբաւ հանելոյն՝ նոյն գրոմն և մատենիւն չուեցուցեալ անտի՝ և քշեցին տանիլ յաշ-խարհն Պարսից, և բերեալ հասուցին մինչև ի Ղազբին քաղաք. և անտի տարան ի քաղաքն Ֆահրապատ։ Յոր-ժամ հասուցին ի Ֆահրապատ, զոմանս ի նոցանէ ի մէջ Ֆահրապատու քաղաքին բնակեցուցին, թէ ի Վրաց և

թէ ի Հայոց, թէ ի Մահմետականաց, թէ ի Ջհտաց, և զայլս բազումս ի նոցանէ բնակեցուցին ի գեղօրայսն, և ետուն սոցա ամենեցուն զտեղիս տանց և այգեստանաց՝ և անդաստանաց. Եւ այսու կերպիւ աւերեաց զաշխարհն Վրաց՝ Կախէթու և Գրիմու, և տարեալ եկից յերկիրն Ֆահրապատու:

Բայց գնացեալ ժողովուրդքս այսոքիկ ոչ աճեցան[1] յաշխարհին յայնմիկ, վասն զի ոչ էին ընտելք գէջ և դաժան, շնչարգել և մգուահոտ օդոյ երկրին. նա և ոչ ուտելեաց և ըմպելեաց, և այլ կենցաղավարութեան երկրին: Վասն որոյ սկսան կոտորիլ և մեռանիլ. և ի սակաւ ժամանակս այնքան կոտորեալ մեռան, հազիւ թէ ի տասնէն մէկն մնաց: Եւ այնք, որք մնացին՝ յետ ժամանակաց ի հիւանդութեանց և ի ցաւոց ճնշեալք և մաշեալք և ցաւագարեալք եղեն, որ ոչ կարէին գործ ինչ մարմնական գործել յօգուտ կենցաղավարութեան իւրեանց: Նա և ի պանդխտութենէ և ի նժդեհութենէ եղեն աղքատք և չքաւորք՝ և զոր ինչ ունէին վաճառեալ կերին. և ի պատճառէ չքաւորութեան բողոք բարձին ազգն Վրաց առ շահն, որ յաւուրսն յայնոսիկ ի Ֆահրապատ էր, վասն չքաւորութեան և սովուն զորս կրէին: Եւ շահն պատասխանի արար նոցա, թէ ուրացէք զձեր հաւատն, և լերուք օրինօքն Մահմետի, և ես տամ ձեզ յոլով ինչս, որով ապրիք՝ և ուտէք: Եւ նոքա հարկեալք ի կարեաց սովուն՝ արարին զհրամանս շահին, և եղեն Մահմետականք. և շահն ոչ ետ նոցա զինչս յոլովս ըստ իւրում խոստմանն՝ այլ ստեաց, քանզի խաբեաց զնոսա: Բայց իւրաքանչիւր անձինք, եթէ մեծաց, եթէ փոքունց ետ զմէն մի դահեկան, և արձակեաց ի տունս իւրեանց:

---

1 Ա–եր երէց. աճեցին.

Արդ՝ որք գովեն զայս շահս թէ քրիստոնէասէր և աշխարհաշէն և խաղաղարար թագաւոր էր, այս է նորա քրիստոնէասիրութիւնն, որ զամենայն աշխարհն քրիստոնէից՝ զՀայոց և զՎրաց աւերեաց, և զամենեեան սպառեաց սրով և սովու և գերութեամբ. և զմնացեալսն վարեալ տարաւ ի Փահրապատ և յԱսպահան, որ նոքա ևս օր աւուր անդէն սպառին պէս պէս կերպիւ։ Եւ ով ոք որ գովել կամի զնա, թող յառաջ հայեցեալ նկատեսցէ զարարեալ գործս նորա, զոր արար ընդ քրիստոնէից՝ և ապա գովեսցէ զնա։

Արդ՝ որով օրինակաւ պատմեցաք, զոր արար շահն ընդ ժողովրդեան, որք գրեցան շահիսէվան ի Թամրազի երկրէն, սոյն օրինակաւ և արար ընդ ժողովրդեանն, որք գրեցան շահիսէվան ի Լաւասափի երկրէն։ Վասն զի ի վերայ նոցա ևս [1] կարգեաց զօրս և զզօրապետս՝ որք առաջին գրովն և քարտիսիւն չուեցուցին յիւրաքանչիւր տեղեաց և վարեալ տարան ի Պարսկաստան։ Բայց զայս ժողովուրդս, որք էին յերկրէն Քարթլայ ոչ տարան ի Փահրապատ, այլ տարան յԱսպահան և բնակեցուցին ի սար գիւղօրայսն Ասպահանու. ուր և զազգն Հայոց բնակեցուցեալ էին։ Եւ այժմ յարդեանս ժամանակիս՝ որ է թուական մեր ՌՃԼ. յորում գրէաք զպատմութիւնս, այս Վրացիքս ամենեքեան դարձան ի հաւատոցն իւրեանց ի կրօնս Մահմետի, և այնքան կուռէձք և դահիճք էին քրիստոնէից, որ ի պատահիլն մեր նոցա ի ճանապարհի ուրեք՝ զբարեն մեր ոչ առնուլն, մեղք համարելով իւրեանց զբարև առնուլն։ Այլ և հայհոյեալ անարգեն զհաւրս և զնախնիս իւրեանց՝ թէ նոքա անհաւատք էին և անհաւատ մեռան. այլ և ի վերայ նոր հաւատոյն իւրեանց գոհանան զԱստուծոյ»

1 Ուղ. չէ. ևս.

Թէ այս է ճշմարիտ հաւատ՝ զոր այժմ ստացաք։ Այլ և յայսմ Վրացի ժողովրդեանս՝ ի ժամանակին՝ յորում նոր բերին յԱսպահան, բաժանեցին մասն ինչ և յառաջ խաղացուցեալ տարան յերկիրն Շիրազու՝ և յերկիրն, զոր անուանեն Ասուփաս։ որ և սոքա ևս սպառեցան պէս պէս կերպիւ, և մնացեալքն ամենեքեան միահաղոյն դարձան յանօրէն [1] յօրէնսն Մահմետի։

Զայսու ժամանակաւ՝ յորում շահն ի Տփխիս էր և առ ինքն ունէր զԼաւասափ. վասն որոյ խնդայր և բերկրեալ զուարճանայր, զի ըմբռնեաց զնա ի ցանցս իւր։ Բայց վասն Թամրազին տրտմէր, զի ոչ կարաց ըմբռնել, որ և վասն նորա խոկայր ի սեննեակ սրտի իւրոյ ի խշտին Բէհմոլթայ՝ թէ զիարդ կարասցէ կորուսանել զնա։

Վասն որոյ և յաղագս նորա հնարէ այսպիսի իմն որոգայթ, զի հաւանեցոյց զայր ոմն և առաքեաց ի Պաշիաչուխ, եցոյց նմա զամենայն ճանապարհս հնարից՝ պատուիրելով պնդապէս՝ թէ որով և իցէ օրինակաւ սպան դու զԹամրազն թէ յայտնի և թէ ի ծածուկ։ Եւ զայս այր, որ առաքեաց ի ծածուկ սպանանել ըզԹամրազն Թաքուն և գաղտնի յամենայն նախարարաց իւրոց արար՝ որ ոչ ոք գիտէր։ Եւ այրս այս գնացեալ եհաս ի Պաշիաչուխ. և յաւուրս ինչ եղ և մուտ արար ի տեղիսն ուր էր Թամրազն, և դիտեալ նկատեաց զամենայն ինչ, զճանապարհն և զտեղին, ուր ի գիշերի ննջէր Թամրազ. քանզի տեղին էր վերնատուն, որ փայտեայ սանդխով ելանէին և իջանէին։ Եւ յաւուր միում ի ծածուկ և անգիտելի ումեք՝ այրն այն սպաս կալեալ հսկեաց զգիշերայն, զի թերևս գտանիցէ դիպող ժամ առ ի սպանանել զԹամրազն, և ի հասարակել զի-

---

1 Ոսկ. չէ. յանօրէն.

շերոյն՝ գիտաց թէ ամենեքեան ննջեալք են, նա և զգիշերապահ արքն՝ որք են քեշիկչիքն, ննջեալք են, եկեալ այրն այն զանխուլ և թաքուն. և ընդ փայտեայ սանդուխն ել ի վերնատունն, ուր ննջէր Թամրազ, և ետես զի ի կողմն մի վերնատանն ննջեալք էին ոգիք երկու ի միում անկողնի, և ի միւս կողմն ննջեալք էին այլ ևս ոգիք երկու ի միում անկողնի։ Եւ սոքա, որք ննջեալք էին ի վերնատանն ի միում անկողնի, էին Թամրազ և կինն իւր, և ի միւսում անկողնոջն էին երկու աղախնեայք՝ որք վասն սպասաւորութեան մերձ առ նոսա ննջեալք էին ի միում անկողնի։ Իսկ այրն, որ եկեալ էր վասն սպանութեան, ոչ կարաց ստուգիւ վերահասու լինիլ, թէ որ ոք ի նոցանէ իցէ Թամրազն. վասն որոյ խորհեցաւ թողուլ զգործ սպանութեան յայնմ գիշերի և գնալ, և յառաջիկայ աւուրսն դիտեսցէ՝ և ստուգիւ ի վերայ հասցէ, թէ որ ոք ի նոցանէ իցէ Թամրազն. և ապա եկեալ անվրէպ զնա հարեալ սպանցէ։ Եւ զայս խորհուրդ Աստուած էարկ ի սիրտ առնն այնմիկ՝ և դարձոյց զնա՝ որպէս զի մի սպանցի թագաւորն քրիստոնէից, այլ և զխորամանկ չարութիւն շահին յայտնեալ՝ զնա խայտառակեաց. Արդ՝ այսու խորհրդով այրն դարձաւ ի վերնատանէն. և սկսաւ իջանել ընդ փայտեայ սանդուխն ընդ որ ելեալն էր, և մինչ իջանէր այրն, նորին ինքեան թուրն՝ որ զմիջով իւրով ածեալ ունէր այրն՝ հարաւ ի սանդուխն, յորմէ հնչեաց ձայն, և ի ձայնէն արթնացաւ շունն քեշիկչոց՝ և սկսաւ հաջել առ այրն. և ի հաջելոյ շանն արթնացան պահապանքն, և տեսին զայրն և շրջապատեալ ըմբռնեցին զնա. և որք տեսին զայրն, զահի հարեալ ապուշ մնացին ամենեքեան։ Եւ ի վաղիւն Թամրազն և այլք յիշխանաց կոչեցին զայրն առաջի իւրեանց՝ և հարցմամբ տեղեկանային. և այրն զամենայն ստուգութեամբ խոստովանեցաւ, թէ

շահն առաքեաց զիս, թէ գնացեալ սպանցես զԹամրազն։

Յայնժամ Թամրազն ի խորոց սրտէ հառաչելով ասաց. արդ՝ տեսէք եղբարք, զի շահն զերկոսին որդիսն իմ յինէն առեալ տարաւ առ ինքն՝ և արար ներքինիս, և զմայրն իմ տարեալ կորոյս ի խորին Պարսկաստան. և այժմ զերկիրն իմ բնաւին աւերեաց՝ և զամենայն ժողովուրդն իմ և զազգն գերեալ տարաւ, և ես զգլուխ իմ միայն առեալ փախուցեալ կամ ի պանդխտութեանս, և նա այնու ամենայնիւ ոչ շատանայ. այլ դեռ ևս ջանայ ի հեռաստանէ սպանանել զիս. արդ՝ նա որ այսքան ջանայ սպանանել զիս՝ և ես որո՞վ յուսով համարձակեցայց գնալ առ նա։ Եւ ամենեքեան որք տեսին զայն գործ՝ և լուան զբանս Թամրազին, իրաւացուցանէին զխօսս նորա։ Եւ Թամրազ ողորմեալ առնն՝ ոչ սպան զնա. այլ արձակեաց, որ գնաց զճանապարհս իւր։ Բայց ինքն ոչ ևս վստահացաւ կալ ի Պաշխաչուխ, զի մի գուցէ այլ ևս որոգայթս հնարեսցէ նմա շահն, այլ ելեալ անտի գնաց յերկիրն Դադիանու՝ և հեռացաւ ի շահէն։

Արդ՝ զորպէսն ամենայն չարահնար գործոց, զոր արար շահն ընդ աշխարհին Վրաց, չէ կար մեզ ճառել, զի ի վեր է քան զճառ բանից, քանզի զողջ ամ մի՝ եկաց նա ամենայն բանակաւն Պարսից՝ անդ յաշխարհին Վրաց. և զկնի ամին խորհեցաւ ելանել յաշխարհէն Վրաց և գնալ յաշխարհն Պարսից։

Բայց ի վարանս և յուզմունս խորհրդոց կայր շահն թէ զիա՞րդ կարասցէ կորուսանել զԼաւասափ։ Եւ յաղագս այսորիկ բանս եդ նախարարաց իւրոց ասել ընդ Լաւասափու, թէ որովհետև բարեաւ և յաջողմամբն Աստուծոյ եկիր դու ի տեսութիւն շահին. և եղև սէր և միաբանութիւն ի մէջ ձեր, արդ՝ յաղագս հաստա-

տուլթեան սիրոյ և ուխտի դաշանցն, նա և վայելուչ է և պատշաճաւոր, որովհետև շահն ելանէ ի գնալ յերկրէն քումմէ, պատեհ է քեզ գնալ ընդ նմա երից և չորից աւուրց ճանապարհ որպէս զուղևոր՝ ընդ նմա[1] մինչև ի սահմանս երկրի քոյ. և ապա դարձցիս յաթոռ քո։ Եւ զայսպիսի բանս շահն ինքն ևս ասաց ի կարգս գրուցաց ընդ Լաւասափին. և Լաւասափ քանզի ոչ ունէր կեղծաւորեալ խորամանկութիւն ի սրտի իւրում, որպէս յատուկ է քրիստոնէից, հաճեցաւ առնել զասացեալն նոցա։

Եւ յորժամ չուեաց շահն ի քաղաքէն Թիֆլիզու, էառ ընդ իւր և զԼաւասափ ըստ յառաջագոյն կարգեալ պայմանին իւրում։

Եւ յորժամ գնացին երից և չորից աւուրց ճանապարհ նոր իմն բանս եդ շահն նախարարաց իւրոց ասել ընդ Լաւասափու։ Որովհետև այսքան աւուրց ճանապարհ եկիր՝ և յոյժ բարւոք արարեր, արդ՝ խնդրեմք զի մի թուեսցի քեզ ծանր, այլ ևս յառաջել և գալ մինչև ի քաղաքն Գանջայ, զի անդէն ի Գանջայ եդեալ է շահն ի մտի իւրում կոչել առաջի իւր զամենայն իշխանս կողմանցս այսոցիկ, զՇամախու և զԵրևանայ, և զամենեսեան կամի կարգել, զի կացցեն ընդ իշխանութեամբ քով. և զքեզ վերակացու և հրամանատար ի վերայ ամենեցուն՝ զի քո հրամանաւ արասցեն զամենայն. զոր ինչ և առնելի է։ Եւ այսմ ևս հաւանեցաւ Լաւասափ և գնաց ընդ շահին մինչև ի Գանջայ։ Եւ անդէն ի Գանջայ իբրև անցին աւուրք յոլովք ոչ երևեցաւ նշան բանից ասացելոց նախարարաց շահին. այլ և ո՛չ երևի նշան և նշմարանք արձակման իւրոյ։ Յայնժամ գիտաց Լաւասափ յոգի իւր թէ հնարիւք հանին զնա յերկրէն իւրմէ՝ և ոչ ևս

---

[1] Ոմն. ձե. ընդ նմա.

թողուն գնալ յերկիր իւր. վասն որոյ ի մեծի տրտմութեան և ի վարանս խորհրդոց կայր Ղաւսասփ, և թէպէտ խորհէր՝ այլ ոչինչ կարէր առնել զհնարս փրկութեան։

Այլ և բազմարուեստ հնարագործ այրն Շահաբաս ի ննջաւոր կարծիս իւր խորհեալ թէ մի գուցէ կամ ի գիշերի, կամ ի տունջեան՝ դիպող ժամ գտեալ հնարիւք իմն փախիցէ Ղաւսասփ։ Եւ ի սակս այսմ կարծեաց արար նոր ևս հնարս ըստ այսմ օրինակի. զի շահն պարգևեաց Ղաւսասփին զմէկ հատ ջղայ՝ զոր ի գլուխս իւրեանց հարուն (դնեն) իշխանք. և էր յոյժ ազնիւ և պատուական, գեղեցիկ և մեծագին։ Եւ ընդ պարգևել ջղային՝ պատուիրեաց սիրով Ղաւսասփին թէ, յարաժամ ի գալն քո առիս՛ եդիցի սա ի գլուխ քո, և Ղաւսասփ ևս այնպէս առնէր հանապազ ի գնալն իւր առ շահն։

Եւ զկնի աւուրց ինչ հրամայեալ է շահն գողոցն իւրոց՝ զոր հանապազ ընդ ինքն պահէր, քանզի բազում այրս, որ բազմահնար գողք էին, վասն պէս պէս հնարից առ ինքն պահէր շահն. որպէս և այժմ ահա արար, վասն զի պատուիրեաց նոցա զանխուլ և թաքուն ի գիշերի մտանել ի վրանն Ղաւսասփու և գողանալ յատուկ զայն ջղայն և այլ ևս ինչս, և գողքն արարին որպէս ուսան ի շահէն, զի գողացան զջղայն և զյոլովս յընչից նորա։ Եւ յաւուր միում յորժամ կոչեցին զՂաւսասփ առ շահն ըստ հանապազորդ կոչմանն, և ի գալն Ղաւսասփու և ի բազմիլն՝ ոչ էր ջղայն ի գլուխ նորա որպէս յառաջն լինէր։ Եւ ի տեսանելն զնա շահին՝ իբր անգէտ գոլով հարցանէր. ընդէ՞ր զջղայն ոչ եդեալ ես ի գլուխ քո. իբրև լուաւ թէ գողացեալ են. յայնժամ շահն ի չքմեղս ելեալ և իբր բարեկամ և ցաւակից զինքն ձևացուցեալ մորմոքայր և ափսոսայր։ Եւ

ապա դարձուցեալ զբանս իւր առ նախարարս իւր՝ որք անդ կային. բարկանայր նոցա և յանդիմանէր՝ և մահ սպառնայր, և ասէր. ընդէ՞ր ոչ բարւոք հոգաբարձութեամբ և հպատակութեամբ արարիք ծառայութիւն սմա, և այնքան անհոգ և պղերգ էք, մինչ զի գողք եւս մտանեն ի վրան սորա և առնեն զգողութիւն, և մանաւանդ զայնպիսի իսկ երևելի և պատուական ինչ. և զայս ասէր վասն Ջղային։ Եւ ապա ասաց՝ արդ՝ մի գուցէ միւսանգամ եկեալ գողոց գողանայցեն այլ եւս ինչ յընչից սորա յաղագս անհոգութեան ձերոյ. և լինիցի մեզ կրկին ամօթ։ Արդ՝ պատրաստեցէք դուք այս քաջս և զգոյշս, զի յամենայնի գիշերի գիշերապահք պահպանութեամբ պահեսցեն զվրանն սորա շուրջանակի՝ զի մի վնաս ինչ պատահիցէ սմա, ապա թէ ոչ՝ զձեզ զամենեսեան բնաջինջ առնեմ։ Յետ ընդունելոյ նախարարացն զայսպիսի սաստիւ հրամանս, այնուհետև կացուցին պահապանս շուրջ զնովաւ՝ որք ի տուէ և ի գիշերի պահէին զնա զգուշութեամբ։

Զայսպիսի հնարս գործեաց շահն՝ և կացոյց ի վերայ Լաւասափին պահապանս, զի մի գուցէ փախիցէ, և այսպիսի պահպանութեամբ բերեալ հասոյց ի Թարվէզ, և տարաւ ընդ իւր ի Ղազբին, և ի Ֆահրապատ, և յԱսպահան, և անտի առաքեաց ի Շիրազ քաղաք ունել զնա ի պահեստի, և անդէն եւս կարգեալ ի վերայ նորա պահապանս, որք պահէին զգուշութեամբ։

Եւ եղև՝ զի յետ յոլովից ամաց եկին դեսպանք ի Ռուսաց Թագաւորէն վասն սիրոյ և բազում գործոց. և ընդ աւուրսն այնոսիկ գնացեալ էր շահն ի գաւառն Ասպահանայ՝ և նստեալ կայր ի վերայ գետոյն, զոր անուանեն Աւիքուրան և կամէր զջուր գետոյն այնորիկ բերել և խառնել ի գետն Ասպահանայ. քանզի ջուրն Ասպահանայ սակաւ է, և բազում արուեստաւորք և գոր-

ծաւալք գործէին ի ճանապարհս ջրոյն, և ինքն ևս շահն յայսմ պատճառէ անդէն զետեղեալ կայր։ Եւ դեսպանքն Ռուսաց յայսմ տեղւոջ եկեալ հանդիպեցան շահին՝ և ընդ յոլով խնդրուածոցն, վասն Լաւասափին ևս խընդրեցին, որպէս զի դարձցի ի տեղի իւր և կացցէ ի հրամանի և ի հնազանդութեան շահին։ Եւ խորամանկն խորհրդով Շահաբաս խնդութեամբ ընկալաւ զբանն զայն, և յօժարութեամբ և աչալրջութեամբ յանձին կալաւ կատարել զխնդիր զայն՝ առաքել զԼաւասափ ի տեղի իւր. և այսպիսի կերպիւ հաճեցուցեալ զդեսպանսն՝ ուղևորեաց յերկիր իւրեանց։

Յետ անցից այսոցիկ՝ կոչեաց շահն առաջի իւր զիշխանն, առ որ յանձին կայր Լաւասափ, ասէ ցնա. Է՞ կորստեան և սպանման արժանի դու՝ ընդէ՞ր թողեալ ես զԼաւասափ կեալ կենդանի մինչև ցժամանակս այս. զի այժմ սոքա եկեալ խնդրեսցեն զարձակումն նորա. ապա եթէ ոչ փութանակի եկեալ բերցես զհամբաւ կորստեան նորա. դու քոյովքն հանդերձ բնաջինջ լինելոց ես։ Իսկ իշխանն առեալ զայսպիսի հրաման վաղվաղակի հասանէր ի քաղաքն Շիրազ, և ձևացուցանէր զինքն առ Լաւասափ սիրոյ և խաղաղութեան աղագաւ եկեալ։

Եւ յաւուր միում եղին ի միասին Լաւասափ և իշխանն ի զբօսանս յեզերս գետոյն, յորում և սկսան ըղձուկն որսալ, և նախ Պարսիկ իշխանն էառ ի ձեռս զվարմն զի կազմեալ արկցէ ի գետն յորս ձկանց, և ինքն իւրով կամօքն անյարմար կազմեաց և թիւր և թեք ձըգեաց ի գետն, երևեցուցեալ զինքն որպէս թէ ոչ գիտեմ։ Իսկ Լաւասափ ոչ ունելով զկարծիս ինչ ի մտի և ոչ ունելով խիղճ զանձնէ, յինքն էառ զվարմն ի ձեռանէ իշխանին. որպէս թէ ինքն այլ ևս լաւագոյն արկցէ զվարմն ի գետն. և մինչ զգլուխն կորացուցեալ և խո-

նարհեալ ի վերայ վարմին յարդարէր զվարմն ի ձեռին իւրում, յետուստ կողմանէ Պարսիկ իշխանն հանեալ զսուրն զոր զմիջով իւրով ածեալ ունէր, ածեալ բախեաց յանկարծակի ի վերայ պարանոցի Լաւասափին, յորմէ բախմանէ գլուխ Լաւասափին անջատեալ՝ յինքենէ թռուցեալ անկաւ ի բացեայ։ Եւ նոյն Պարսիկ իշխանն առեալ զգլուխ Լաւասափին բերեալ ի Նախկին ասացեալ տեղին, յԱւկքուրան կոչեցեալն, ի բանակն արքունի՝ և եբեր առաջի շահին։ Եւ շահն ի տեսանելն զգլուխն՝ և յիմանալն թէ Լաւասափին է, ի դաժանութենէ սրտին իւրոյ շարժեցաւ ի ցասումն և ի բարկութիւն ի վերայ գլխոյն, անարգէր, և հայհոյէր, և քամահանօք հարեալ այսր և անդր ձգձգէր։ Եւ յոլով ժամս այնպէս անցուցեալ ընդ գլխոյն ի ցասմանէ սրտին, և ապա կալեալ զականջէ գլխոյն ձգեաց ի բացեայ՝ և ըզգլուխն գլորեալ երթայր զառ ի վայր, քանզի զառ ի վայր էր տեղին։ Արդ՝ այսպէս եղև զրաւ կենաց Լաւասափ Թագաւորին Տփխիսու, զի չարահնարն Շահաբաս այսպիսի օրինակաւ կորոյս զնա, և զնորին աշխարհն գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ։

Գլ. ԺԲ.

Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազի Թագաւորին Կախեթու ի նոյն Շահաբասէ:

Մինչ կայր Թամրազ Թագաւորն յերկրի իւրում ի Կախէթ՝ և վարէր զիշխանութիւն իւր խաղաղութեամբ, և կայր ի հնազանդութեանն Պարսից, զի տակաւին չէր եկեալ շահն յաշխարհն Վրաց՝ և փախուցեալ զԹագաւորսն և աւերեալ զաշխարհն՝ զոր ինչ յանցեալ ճառիդ պատմեցաք։ Այլ կայր Թամրազ յիւրում երկրին՝ և շահն ի Պարսկաստան, առաքեաց շահն առ Թամրազ և խնդրեաց պատանդ, և նա առաքեաց զմի յորդւոց իւրոց, յաւել շահն միւսանգամ խնդրել պատանդ, և Թամրազ առաքեաց զմիւս ևս որդին. յաւել շահն երրորդ անգամ խնդրել պատանդ. և Թամրազ առաքեաց զմայրն իւր։ Իսկ շահն զերկոսին որդիսն Թամրազին արար ներքինի, զի մի ընծայեսցի ի նոցանէ զաւակ՝ զի մի գուցէ լիցի ժառանգ Թագաւորութեան նոցա։ Իսկ ըզմայրն Թամրազին յես խորին Պարսիկս առաքեաց ի Շիրազ քաղաք առ Իմամղուլի խանն, ունել զնա ի պահեստի։ Եւ այսպէս հրամանաւ Շահաբասին կայր ի պա-

հետի մայր Թամրազին, որոյ անունն էր Մարիամ, բայց յետ ժամանակաց վկայեաց Քրիստոսի աստուածու-թեանն և նահատակութեամբ կատարեցաւ վասն Քրիս-տոսական հաւատոցս ի նոյն Շահաբասէ, այսպիսի պատ-ճառաւ։ Վասն զի կային այլ ևս մեծ ազգի կանայք յազգէն Վրաց յերկիրն Պարսից՝ գերեալք ի Պարսից։ Սոյնպէս և որդիք սոցա գերեալք էին ի Պարսից, և կարգեալք էին ծառայք Թագաւորին մեծ և առաջին Շահաբասին, զի վասն մեծ ազգութեան սոցա հանա-պազորդ սպասաւորք և առաջիկայք կացուցեալ էին զնոսա Թագաւորին։ Եւ յաւուր միում շահն բանս ինչ խօսից խօսեցեալ է ընդ ծառայիցս այսոցիկ, և ի մէջ փորձ ի փորձ խօսիցն ասացեալ է նոցա. Թէ ընդէ՞ր զմարսն ձեր Թողուք մնալ ի քրիստոնէութեան՝ որոյ կատարումն է կորուստ, և ոչ առնէք հաւատով և կրօ-նիւքն Մահմետի՝ որոյ կատարումն է վայելչութիւն ար-քայութեան։ Եւ ծառայքն ասեն, բազում անգամ ա-սեմք, և ոչ դառնան. ասէ արքայ. ընդէ՞ր ոչ դառնան։ Իսկ ծառայքն, քանզի [1] յերկիւղէն անճար մնացին և ոչ գիտեն [2] Թէ զինչ պատճառս յօդեն, կամ զինչ տա-ցեն պատասխանի։ Բայց ոմն ի նոցանէ ասացեալ է. ոչ Թէ գիտութեամբ այլ անգիտութեամբ. յորժամ ասեմք մարց մերոց Թէ տաճկացեք, նոքա ասեն մեզ՝ մայր Թամրազին քրիստոնեայ է՝ մեք ընդէ՞ր տաճկանամք։

Յայնժամ խորամանկն Շահաբաս, զայս բանս ի սրտի իւրում պարուրեալ է [5] , և [4] յետ աւուրց ինչ զոմն յիշխանաց իւրոց առաքեալ է. զի կամ դարձուսցէ զդիդօփայն (մայր Թագաւորի) ի քրիստոնէութենէ յօ-րէնս Մահմետի, և կամ չարաչար մահուամբ կորուսցէ։

---

1 Ոսկ. չէ. քանզի։—2 Նոյն. մնացեալ և ոչ գիտացին։ 5 Նոյն. չէ. է։—4 Նոյն. չէ. և։

Եւ իշխանին գնացեալ ի Շիրազ քաղաք, և մերձ կացեալ ի դուռն դիդօփայլին կոչեաց զնա, և առանց երես տեսանելոյ յետուստ կուսէ դրանն խօսեցաւ ընդ նա՝ և ասէ։

Հրաման Թագաւորին այսպէս է, զի հարկ է քեզ տանջանալ· եթէ յօժարիս յոյժ բարի է, և թէ ոչ յօժարիս, լեզուովդ մէկ բան [1] ասա և սրտովդ պահեա զքո հաւատն· առ յաչս մարդկան ձևացո՛ իբր թէ եղեր օրինօքն Մահմետի, և ի ծածուկ պաշտեա զքո հաւատն, զի և մեք մնասցուք ազատ ի խղճմտանացն՝ որ ի քոյդ կողմանէ· զայսպիսի բանս ասէր իշխանն, և լայր նման դահճին Հերովդի· որ գնաց գլխատել զՅովհաննէս Մըկըրտիչն։

Իսկ դիդօփայլն ասաց ի ներքուստ· դու իմ եղբայր, և իմ որդի, ընդէ՞ր թաքուն խօսիս ընդ իս, եկ յանդիման խօսեաց· զի ես Թագաւորի դուստր եմ, Թագաւորի կին եմ, Թագաւորի մայր եմ, և ես իսկ անձամբ իմով՝ Թագաւորութիւն վարեալ եմ յետ առնն իմոյ՝ մինչ որ տղայն իմ զարգացաւ, սակայն անցաւոր և ընդունայն է մեծութիւն աշխարհիս· եթէ Թագաւորն քո բովանդակ արարածոցս տէր լինի, և զամենեցուն Թագաւորութիւնն ինձ տայ, ես ոչ ուրանամ զՔրիստոս Աստուածն իմ, և ոչ փոխանակեմ ընդ սիրոյ նորա՝ զոր ունիմ առ նա· և դու զոր ինչ առնելոց ես՝ դու գիտես։

Կային ընդ դիդօփայլիս երկու քահանայք Վրացիք և այլ ևս ծառայք և աղախնեայք, դարձաւ դիդօփայլն առ նոսա և ասաց՝ եթէ զիս անդամ անդամ յօշեն՝, ես ոչ թուլանամ ի սիրոյն Քրիստոսի և ոչ դառնամ ի նորին հաւատոցն, իսկ զձեր օգուտն դուք ընտրեցէք·

---

1 Ոմն· չէ· մէկ բան·

և նոքա առ հասարակ գոռալով լային. և ողբային ըղձկուիլն լուրեանց ի բարեփառ տիկնոջէն։

Եւ ապա յետ բազում խօսից ողոքանաց և սպառնալեաց՝ իբրև ետես՝ եկեալ իշխանն զհաստատուն միտս նորա, հրամայեաց երկաթի ճանկօք խզրատել զմարմին նորա՝ և կարի վիրաւորել. և նա գոհանայր զԱստուծոյ և արտասուօք հայցէր ինքեան համբերութիւն ի Տեառնէ։

Յետ այսորիկ հրացուցին զսաղաւարտ պղնձի և եդին ի գլուխ նորա. և ոչ այնու կարացին հաւանեցուցանել զնա։

Եւ ապա բերին երկաթեայ բահ, որով զերկիր փորեն, և զայն բահն սաստիկ հրացուցին և եդին ի մէջ ստեանց դիղօփայլին. ի վերայ կրծիցն և սրտին. և նա այնու աւանդեաց զանուշահոտ հոգին իւր առ Աստուած.

Եւ մինն ևս ի քահանայիցն մարտիրոսացաւ անդէն ընդ նմա, և այլքն ցրուեցան։

Այս դիղօփայս յառաջագոյն պատուիրեաց թէ յորժամ սպանանեն զիս, զմարմին իմ մի ընկենուք արտաքս ի տեսութիւն ռամկաց, բայց յետոյ փոշիմանեալ ասաց. ես որ վասն Քրիստոսի հաւատոցն մարտիրոսանամ, զմարմին իմ զոր ինչ և կամին արասցեն։ Եւ յորժամ սպանին՝ զպատուական նշխար մարմնոյն ընկեցին արտաքս կերակուր լինել շանց և գազանաց։ Բայց Աստուած փառաւորեաց զնա երկնաւոր նշանօք. վասն որոյ, Ֆռանկ պատրիկքն, որք կային ի քաղաքին, գողացան զպատուական մարմին նորա, զկէսն պատեցին մաքուր կտաւօք, խնկօք և զմռօք՝ և ուղարկեցին ի Ֆռանգըստան, որ անդէն պատուի մեծաւ փառօք։ Սոյնպէս և զմիւս ևս զկէսն պատեցին մաքուր կտաւօք, խնկօք և զմռօք և տարան առ որդին նորա Թամրազ յաշխարհն Վրաց. և նա անպատմելի խնդութեամբ լցեալ գոհութեամբ մեծաւ փառաւորէր զՔրիստոս Աստուածն մեր,

որ արժանի արար զմայրն իւր վկայական մահուան. և ասաց, սոյին բարեխօսութեամբն զմեր Թագաւորութիւնս Աստուած հաստատուն պահեսցէ. և եւ պատուով յեկեղեցին իւր: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա ողորմեսցի Տէր ամենայն քրիստոնէից: Եղև նահատակութիւն դիւցափայլս ի մերում Թուականին ՌՀԴ. ամին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն:

ԳԼ. ԺԳ.

Պատմութիւն նեղութեանց՝ զորս կրեցին ազգն Հայոց յառաջին Շահաբաս Թագաւորէն:

Ազգս Հայոց՝ որք մատամբն և կամօքն իւրեանց կուրացուցին զաչս իւրեանց, զի ինքեանք կործանեցին զԹագաւորութիւնն իւրեանց՝ նենգութեամբ և անհնազանդութեամբն իւրեանց, և եղեն ոտից կոխան, և ծառայք և գերիք այլոց ազգաց և Թագաւորաց, և ի ժամանել նեղութեանց իրիք ի վերայ ինքեանց, իբրև ոչ գտանեն օգնութիւն յուստեքէ, անճար մնացեալ փախստական լեալ ծողոպրին այսր և անդր:

Արդ՝ եթէ յայսմ պատճառէ: և թէ կանխաւ պատմեալ մեծ սովին և Ջալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղեաց, ի հայրենի բնակութեանց և յաշխարհաց, և տարադէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր և ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն աշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդնուպօլիս և ի քաղաքս, որք շուրջ են զնովաւ, յՈւռումէլի, ի Բուղդան, յերկիրն Խլախաց, ի կղզին Կա-

փայու, ի ծովեզերսն Պոնտոսի։ Այլ և բազումք՝ յաշխարհն Ատրպատականի, յԵրևան ի Գանջայ, ի Թարվէզ՝ յԱրտաւէլ, և ի շրջակայ գաւառս սոցա։

Եւ յազգէն Հայոց ժողովուրդք, որք եկեալ զետեղեցան յաշխարհն Ատրպատականի, մեծ և առաջին Շահաբասն Պարսից Թագաւորն զամենեսեան զնոսա վարեալ քշեաց, տարաւ յաշխարհն Պարսից, զկէս բաժին մի ի Ֆահրապատ, և զկէս բաժին մի յԱսպահան քաղաք և ի գաւառս նորա։ Եւ զայս գործ, որ զազգն Հայոց քշեաց և տարաւ, ոչ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց, այլ գտի հաւաստեաւ բազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, նա և ի յիշատակարանաց գրոց՝ զորս ընթերցայ, զի եօթն և ութն անգամ որիշ որիշ զկնի միմեանց քշեալ և տարեալ է։ Եւ զյոլովս ոմանս յայսմ [1] յԱսպահան տարեալ ժողովրդենէս, առ ներկայ աւուրս յայնոսիկ զետեղեալ բնակեցուցին ի Փուլթկայն՝ որ է քարվանսարայ, զոր և Գէչգունի քարվանսարայ անուանեն։ Եւ այս ժողովուրդքս ոչ ի միասին եկեալ էին, այլ որիշք ի միմեանց, վասն որոյ և երկու դասք էին, միոյ դասուն պետ և գլուխ կարգեալ էր շահն զայր ոմն ի նոցունց ի վերայ նոցա մելիք, որում անունն էր Մուրատ, զոր մականուամբ Ղըրխեալան ասէին նմա, և միւսում դասուն մելիք էր կարգեալ Յովսէփ անուամբ այր ոմն, զոր մականուամբ Ղարաբաշ մելիք ասէին։

Եւ ազգն Հայոց՝ որք եկին յԱսպահան, զատ ի Ջուղայեցւոց և յԵրևանցւոց ամենեքեան չքաւորեցան, վասն զի որպէս յայտ է ամենեցուն, զի յԱսպահան քաղաքն ամենայն ինչ՝ թէ ուտելի և թէ զգենլի և թէ այլ ինչ, ամենայն ծանրավաճառ և թանկագին է, և յայսմ

---

1 Ոսկ. ձե. յայսմ

պատճառէ այս եկեալ ժողովուրդքս չքաւորեցան՝ զի զոր ինչ ունէին վաճառեցին և կերան։ Եւ մանաւանդ առաւել չքաւորեցան այս յիշատակեալ երկու դասք ժողովուրդքս, որք վասն չքաւորելոյն և սովելոյն իւրեանց այսր և անդր գնացեալ և առ որում և պատահեալ ծանուցանէին զչքաւորութիւն իւրեանց, և մանաւանդ իւրեանց վերակացու Պարսիկ իշխանին, և զինուորաց նորին, վասն զի շահն զմի ոք յիւրոց իշխանացն՝ նոցա վերակացու կարգեալ էր, առ ի գիտել և իմանալ զամենայն անցուածս բանից և գործոց նոցա, այլ և մի գուցէ թէ ելանիցեն յԱսպահանայ և գնասցեն յերկիրն Ատրպատականի՝ և կամ յայլուր։

Եւ եհաս համբաւ չքաւորութեան նոցա առ շահն ի ձեռն վերակացու իշխանացն՝ որոց էին անուանք, աւագագունին՝ Աղաշահար, և երկրորդին՝ Ուղուրլու բէկ, զորս աղաչեցին քրիստոնեայքն ծանուցանել զչքաւորութիւնն իւրեանց՝ շահին, և խնդրել ի նմանէ ինչս առ ի պարէնս պիտոյից, կերակրոց և այլ կարեաց իւրեանց։ Եւ իշխանքն ծանուցին. վասն որոյ կոչեաց շահն զերկու դասու ժողովրդեանս մելիքներն, և զայլս ոմանս ի նոցունց, ասաց նոցա. տամ ես ձեզ զգանձս և զինչս ի գանձարանէ թագաւորական, առ ի պատճառս կելոյ և ապրելոյ ձեր. բայց պայման դնեմ և այն պայմանաւն տամ։ Եւ պայմանն այս է, զի զոր ինչ և տամ փոխ տամ ձեզ երեք ամեայ ժամանակաւ, զի յետ երից ամացն դարձուցանիցէք ի մեզ, և զայս փոխս ոչ թէ շահով և տոկոսեօք տամ, այլ առանց շահի տամ փոխ. զի դուք այնու առեալ գանձիւն առեւտուր արարեալ շահիցէք, և նորին շահն եղիցի ձեզ պարգևեալ՝ զի մի մնայցէք ի մէջ նեղութեանց. այլ պատճառ ձեզ առիւտրի շահելոյ և կելոյ նովաւ, և զկնի լրման երից ամացն զգլուխ պարտուցն դարձուցանիցէք անդրէն ի գանձա-

րանս Թագաւորին. զի այդ Թագաւորական գանձ է, որում ոչ է հնար կորնչելոյ և ոչ փողի միոյ. և յորժամ վճարիցէք զամենայն, առէք ձեզ գիր ազատութեան և վճարման՝ այսինքն զգաբս։

Արդ՝ ամենայն ոք ի ձէնջ, որ ոք և առցէ ի Թագաւորական գանձէս, յորժամ բերցէ զառեալ գանձն՝ և վճարեսցէ ի գանձարանս Թագաւորին, եղիցի ազատ. և եթէ իցէ ոք, որ ոչ վճարիցէ զառեալ գանձն, այլ կերեալ և վատնեալ և կորուսեալ իցէ զդրամն, և ոչ ունիցի ինչ զի տացէ, արդ[1] այնպիսին, փոխանակ գանձին, կամ դարձցի յիւրոց հաւատոցն յօրէնս Մահմետի, և կամ զորդին և զդուստրն տացէ առ ի լինել Թագաւորական ծառայ։ Եւ զսոցին ևս զգինն յայտ արար. զգինս ուստերաց չորս Թուման ասաց, և զգինս դստերաց երեք Թուման. զի որ ոք ոչ ունիցի զդրամ առ ի տալ՝ փոխանակ չորս Թումանի զորդին տացէ, և փոխանակ երեք Թումանի զդուստրն տացէ,

Եւ այսու պայմանաւ ետ շահն այս երկու դասուց ժողովրդեանս չորս հարիւր Թուման. զի մինչև ցերիս ամս առևտուր արարեալ շահեսցին, և յետ երից ամաց դարձուսցեն ի գանձարանս Թագաւորին։

Իսկ արբշիռ, և անագորոյն, և անիմաստ, և անասնաբարոյ ազգս Հայոց՝ ո՛չ ի սկիզբն խորհեցան, և ո՛չ ի վերջն հայեցան՝ Թէ զի՛նչ է լինելոց վերջ գործոյս այսորիկ. այլ իբր անբան և անմիտ անասուն գոլով՝ գնացին և առին զԹագաւորական գանձն, որ էր որպէս զմահարար Թոյնս օձի, և պատճառ նոցին կորստեան. և ոչ եղեն մտախոհ, Թէ որպէս զփուշս օձի է գանձն այն մահացուցանող։ Այլ երկոքին մելիքն իւրեանց ժողովրդովքն առին զԹագաւորական գանձն, Ղարաբաղ մե-

---

1 Ոսկ. ձե. արդ.

լեքի ժողովուրդքն առին երեք հարիւր Թուման, Ղըրխ-եալան մելիքի ժողովուրդքն առին հարիւր Թուման, և լաւ իմն գիտ բարւոյ համարեցան զայն անձանց իւրեանց։

Եւ յամին, յորում ետ շահն զգանձս զայս ժողովրդեանն Հայոց՝ էր Թուականն մեր ՌՃԼ. և հասին մինչև ի Թուականն ՌԿԲ, և յայնժամ շահն, որ անմոռաց ունի զյիշատակս չարեաց ի միտս իւր՝ յիշեաց զայն. և խնդիր արար տուեալ գանձին։ Իսկ առօղք գանձին եղնաբարոյ ազգն Հայոց՝ ո՛չ միայն ոչ շահեցուցին, այլ և զգլուխն ևս կորուսին, զի ոմանք ի չքաւորութենէ. և ոմանք յանհանճարութենէ, և ոմանք յանտեղեկութենէ առևտրոյ քաղաքին՝ կերան և վատնեցին, ցրնցխեցին, և կորուսին զտուեալ գանձն Թագաւորին։

Եւ զՈւղուրլու բէկն, որ վերակացու էր ժողովըրդեանն, դարձեալ կարգեաց շահն ի վերայ նոցա. զի զԹագաւորական գանձն առեալ ի ժողովրդենէն յանձնեսցէ ի գանձարանս Թագաւորին, որոյ եկեալ զօրականօք նըրատեալ ի վերայ ժողովրդեանն ճշդիւ պահանջէր զգանձն, իսկ ժողովուրդքն զեղեալ գործն պատասխանէին Թէ ոչ ունիմք, զի չքաւորք և աղքատք էաք և առ ի վտանգէ սովուն՝ զամենայն կերեալ վատնեցաք։

Եւ վերակացու իշխանն իւրովք զօրականօքն հանապազօր բռնադատէին զժողովուրդսն, և չարչարէին, կախէին, հարկանէին, բանտարգել առնէին. և էին ժողովուրդքն ի մէջ մեծի նեղութեան, և Թէպէտ ոչինչ ունէին, և զոր ինչ ունէին, զայն ևս ի ծախս զինուորացն վատնեցին. զի մասն ինչ տային ի ծածուկ կաշառս՝ և մասն ինչ տային յայտնի մուհլաԹանայ (միջոց ժամանակի). և մասն ինչ ի պէտս կերակրոց զինուորացն և երիվարացն, և այլ ևս յինչ պատճառէ վատնեալ սպառեցին, և եղեն իսպառ աղքատք և չքաւորք։

Իսկ Ուղուրլու բէկն իբրև ետես Թէ ոչինչ կարաց առ-

նուլ ի Հայոց, ապա ծանոյց Թագաւորին զչքաւորութիւն ժողովրդեանն. վասն որոյ հրամայեաց շահն կոչել զժողովուրդսն Հայոց առաջի իւր, խօսեցաւ ընդ նոսա՝ և ասաց, դուք մի համարիք և ամբաստանողք լինիք զինէն, թէ ես թագաւորական բռնութեամբ և իշխանութեամբ խնդրեմ և առնում ի ձէնջ գանձ, այլ դատաստանաւ և իրաւամբք խօսիմ, զի ես ձեզ փոխ ետու զգանձն զայն, և այժմ զնոյն փոխ տուեալ գանձն խնդրեմ ի ձէնջ, և ոչ թէ նոր ինչ խնդրեմ, այլ զիմ տուեալ փոխն՝ և զայն առանց վաշխից և տոկոսեաց խնդրեմ զգլուխն միայն։ Արդ՝ եթէ այս բանք իրաւամբք թուի ձեզ՝ տո՛ւք զառեալ փոխն ձեր, ապա թէ ոչ՝ ահաւասիկ դատաւորք և դատաստանք գոն ի քաղաքի աստ, ես և դուք երթիցուք ի միասին ի դատաստան առ դատաւորս, և զոր ինչ հրաման ելցէ ի դատաւորաց ընդունելի լիցի ինձ և ձեզ. և յոր կողմն և խօսէին՝ կողմն Հայոց պարտեալ գտանիւր։

Եւ զբազում աւուրս ժողովուրդքն Հայոց՝ զբազում իշխանս բարեխօս արկեալ առ Թագաւորն արզայով (աղերսագիր) և բազում աղաչանօք խնդրեցին ի Թագաւորէն զթալ ի տառապանս չքաւոր և աղքատ ժողովըրդեանն, և ներումն առնել և թողուլ զպարտսն զայն, և նա ոչ կամեցաւ ներել։

Իբրև կարի ստորանկեալ խոնարհեցաւ կողմն Հայոց, ժողովեցին զամենայն զուստերս և զդստերս իւրեանց ժողովուրդքն, և ածեալ կացուցին առաջի Թագաւորին ասելով. վասն զի ոչ ունիմք դրամ զի տուեալ ի պարտս Թագաւորին վճարեսցուք. զուստերս և զդստերս մեր տամք Թագաւորին, որպէս և յառաջագոյն սահմանադրեցաք։ Ընդ ուստերաց և դստերաց՝ զորս հարք նոցա ածեալ էին՝ և առ գութ աղետի նոցա եկեալ էին և ամենայն ազգականք նոցին, մարք, և եղբարք և այլք,

ուք միադումար կային և բարձրակական ողբովք և արտասուօք լային՝ որ զտեսողացն ամենեցուն զսիրտ և զաղիս մորմոքմամբ ճմլեցուցանէին։ Զոր տեսեալ Թագաւորն յայնպիսի յողբս և ի հառաչանս՝ հրաժարեցաւ յառնլոյ զտղայն և [1] ոչ էառ. և յայսմիկ գործոյ՝ որ ոչ էառ Թագաւորն զտղայն, երկուս ասեն պատճառս. ոմանք ասեն թէ տեսեալ, զարտասուս ժողովրդեանն երկեաւ յԱստուծոյ, վասն որոյ ոչ էառ, և ոմանք ասեն ոչ էառ զտղայն զի զժողովուրդսն զամենեսեան միահաղոյն դարձուցէ ի տաճկութիւն։ Եւ յետին կարծիքս յիրաւ գոլ թուի երկու վկայութեամբ. նախ՝ զի բարկացաւ ի վերայ Ուղուրլու բէկին, որ զնոսա ածեալ էր՝ և ասաց. զի՞նչ օգուտ է մեզ յածելն քո զտղայն, զի կամիմ ես զամենեսեան դարձուցանել ի տաճկութիւն։ Երկրորդ՝ զի վճիռ եհատ և ասաց՝ եթէ վճարեսցեն զամենայն փոխն՝ բարի է, եղիցին ազատք, և թէ ոչ վճարեն, դարձցին յիւրեանց հաւատոցն՝ և եղիցին հաւատոյն Մահմետի, և ես զառեալ պարտսն նոցա՝ շնորհեմ նոցա, և ի վերայ այնր այլ ևս ձիրս պարգևաց բաշխեմ նոցա. զայս վճիռ հատեալ՝ ասաց, և ստիպեաց առնուլ զպարտսն, որով [2] երևի թէ յետին կարծիքն իրաւի է։

Իսկ զինուորացն յետ ընդունելոյ զայսպիսի հրաման ի Թագաւորէն, սկսան յոյժ ճշդիւ խնդրել ըղպարտսն ի քրիստոնէից, կախէին, հարկանէին, բանդարգել առնէին, և բազում կերպիւ նեղէին. զի թերևս ի վտանգէ նեղութեանն դառնայցեն ի հաւատոցն. և [3]

1 Ոսկ. չէ. և ոչ էառ . . . և յետին կարծիքս յիրաւ գոլ թուի երկու վկայութեամբ. նախ զի.

2 Նոյն. չէ. որով երևի թէ յետին կարծիքն իրաւի է։

5 Նոյն. իսկ.

ժողովուրդքն տեէրին, և տանէին ամենայն վշտացն, և ի հաւատոց ոչ դառնային։ Եւ այնուհետև ողորմելի ժողովուրդքն Հայոց՝ որդւովք և ընտանեօք շրջէին ի պողոտայս և ի փողոցս քաղաքին առ ամենայն ոք լալով և ողբալով՝ զի թերևս յուստեքէ լիցի հնար օգնութեան կամ փոխով և կամ ողորմութեամբ։

Եւ շրջակայելով գնացին ի վանօրայս Փռանկաց, որք են ի մէջ քաղաքին Սպահանու. և ոմն եպիսկոպոս յազգէն Փռանկաց, եկեալ էր յայնմ ժամանակի յՍպահան, և բնակէր ի վանքն Փռանգաց՝ որոյ Հուսինիայ անուն կոչեն։ Եւ էր այս եպիսկոպոս այր երևելի և փարթամ՝ զոր բազում անգամ կոչեալ զնա շահն առ ինքն և խօսէր՝ և զսէր առնէր ընդ նմա։ Եւ այս եպիսկոպոս իբրև ետես զարտասուսն Հայոց՝ և հարցեալ տեղեկացաւ ամենայնի, խօսեցաւ ընդ նոսա յուսադրական բանիւք՝ և ասաց. մի երկնչիք, այլ հաստատուն կացէք ի վերայ քրիստոսական հաւատոցն ձերոց, և ես զոր ինչ ունիմ տամ ձեզ՝ ոչ թէ փոխ, այլ վասն սիրոյն Քրիստոսի, և նորին հաւատոցն. և դուք տո՛ւք շահին, և վճարեցէ՛ք զպարտսն ձեր և ի հաւատոց ձերոց մի դառնայք։ Իսկ ժողովուրդքն Հայոց արտասուօք օրհնէին զԱստուած և զեպիսկոպոսն, և շնորհակալութեամբ գոհանային զնմանէ. զի ի մէջ անհնարելի նեղութեանցն յօգնութիւն ժամանեաց նոցա։

Որ և ըստ իւրում խոստմանն ետ եպիսկոպոսն զանձս երկուց դասուց ժողովրդեանն, ձեռամբ Ղարապաշ մելիքին՝ նորին դասուն երկու հարիւր թուման զուտ արծաթի դրամ։ Եւ միւսում դասուն, որոց էր գլուխ Ղրխեալան մելիքն, և այլ ոմն քահանայ Բաղդասար անուամբ՝ այր հանճարեղ և իմաստուն և հաստատուն ճշմարտութեամբ և հաւատովն Քրիստոսի, սոցին ձեռօքն ետ սոցին դասուցն յիսուն թուման զուտ ար-

ծախի դրամ. որ և երկոցունց դասուց ժողովրդոցն տալեալ ետուն վերակացու իշխանին ի վճարս պարտուց իւրեանց. և վասն մնացորդաց պարտուցն խնդրեցին աւուրս ինչ ներել, զի զայն ևս գտեալ յուսամքէ վճարեսցեն։

Եւ որպէս զՔրիստոսի մատնիչ Յուդայն, որ բաժանեալ անջատեցաւ ի գնդէ երկոտասանիցն, այլք երկու յազգէն Հայոց՝ և յայսմ ժողովրդենէ ի դասուց Ղարապաշ մելիքին, միոյն անունն Բաղդասար և միւսոյն Ալիջան, եղեն արբանեակք սատանայի և ամ ան չարին, հակառակք եղեն քրիստոնէից և ասեն. եթէ տաք մեզ իւրաքանչիւրոցս տասն տասն Թուման ի գանձէդ, զոր ետ Ֆռանկ եպիսկոպոսն, բարի է՝ ոչինչ ասեմք, և թէ ոչ տայք, գնամք առաջի իշխանացն, նա և Թագաւորին իսկ, և ասեմք. սոքա գնացեալ Ֆռանգ դարձան, վասն այնորիկ ետ սոցա եպիսկոպոսն զգանձս. զոր բերեալ ետուն ձեզ։ Իսկ միւս այլքն աղաչէին և ասէին. այժմ ներեցէք մեզ՝ զի զայս գանձս տամք ի պարտս Թագաւորին, զոր ահա ձերով իսկ աչօք տեսանէք՝ թէ որպէս կարի ճշդիւ պահանջեն յարդեան աւուրս, և յետոյ ի մէնջ յամենայն ժողովրդենէս ժողովեմք և տամք ձեզ՝ որպէս և կամք ձեր հաճի։ Եւ նոքա ոչ եղեն ժուժկալք՝ և ոչ անսացին բանից և աղաչանաց նոցա, այլ ելեալ գնացին առ իշխանս Մահմետականս, սուտ խօսեցան զՀայոց և ասացին. թէ Հայք գնացին առ Ֆռանկսն, և դարձան ի հաւատս նոցա, և առին[1] զգանձս զայս և բերեալ վճարեցին ձեզ։ Այլ և ինքեանք մատնիչք այլքն երկոքին ամենայն ընտանեօք իւրեանց դարձան յօրէնս Մահմետի, և պնդութեամբ կալան զայն հաւատն, զի ամենայն ընտանեօք իւրեանց թլպատեցան։

---

1 Ոսկ. առեալ.

Եւ ի վերայ այսր բանի յոյժ խոժոռեցան իշխանքն Մահմետականք՝ և ասելով զբանն ընդ միմեանս, մինչև եհաս բանն յունկն Թագաւորին, որոյ կարի ծանր և դառն թուեցաւ։ Որ և հրամայեաց բերել առաջի իւր զմելիքներն. և նախ զՂարապաշ մելիքն գտեալ տարան յայնմ աւուր, ընդ որում խօսեցաւ արքայ և ասաց մեղադրանօք և սպառնալեօք։ Ո՛վ ազգ ապերախտ և չար, արժանի բնաջինջ կոտորման, ես ողորմեալ ձեզ ետու այնքան գանձ, և զայսքան ամաց շահն ես շնորհեցի ձեզ, և խոստացայ այլ ես շնորհել, եթէ դառնայք ի հաւատս մեր, և դուք ասացիք. վասն գանձի ոչ դառնամք ի մերոց հաւատոց. և այժմ զի՞րդ դարձեալ էք ի հաւատն Փռանկաց, և առեալ էք ի Նոցունց գանձ. արդ՝ եթէ վասն գանձի դառնայիք հաւատոց ի հաւատս, զի՞նչ էր նուաստութիւն և արատ մերումս հաւատոյ՝ յոր ոչ դարձայք։ Պատասխանեալ մելիքն իւրովք ընկերովքն. ո՛վ հրաշազան և տիեզերակալ արքայ՝ քաւ լիցի մեզ դառնալ ի մերոյս հաւատոյ, ոչ եմք դարձեալ, այլ կամք ի հաւատն մեր որպէս և էաք յառաջն, և ոյք զբանս զայս ասացեալքն են զմէնջ առաջի քոյ տէրութեանդ՝ նոքա սուտ են ասացեալ. և զգանձն զոր ի Փռանկաց առաք՝ փոխ առաք, զոր և բերեալ տուաք ի տեղի պարտուցն։ Պատասխանեալ ասաց արքայ. ոչ է ճշմարիտ խօսքդ ձեր, քանզի պատճառանօք է փոխդ այդ, զի եթէ ստուգիւ փոխ էր՝ յայլոց ազգաց զի՞րդ ոչ առնուիք. այլ միայն ի Փռանկաց։

Եւ թէպէտ ի բազում աւուրս բազում կերպիւ խօսեցան ժողովուրդքն, այնուհետև բնաւ ոչ ետ տեղի բանից նոցա արքայ։ Այլ որպէս նախ էր ասացեալ, սոյնպէս և այժմ ասաց, եթէ դառնայք յօրէնս մեր յոյժ բարւոք առնէք, զի զոր ինչ և պարտիք զայն ամենայն շնորհեմ և ի վերայ այնր բազում և այլ ես

պարգեւս և զձիրս բաշխեմ ձեզ։ Ապա թէ ոչ դառնայք, մատնեմ զձեզ ի տանջանս անզերծանելի, զի ի մէջ տանջանաց վատնեալ սպառեսցին ոգիքն ձեր՝ և ընդ վայր սատակեսջիք։ Զոր և իսկոյն մատնեաց ի ձեռս դաՀճաց, զի թարց իմիք ներելոյ Հանապազ տանջեսցեն մինչ կամ դառնան կամ մեռանին։

Եւ այնուՀետև եկն և եՀաս ի վերայ ողորմելի ժողովրդեանն մեզ՝ մառախուղ՝ և խաւար անփարատելի, զի վաղվաղակի փութացեալ անօրէն դաՀճացն այսր և անդր դտին զամենայն արս ի ժողովրդենէ անտի՝ կալան, և սկսան յանխնայ չարչարել, Հարկանել և վիրաւորել, ի կախաղանի և յորսայս, ի շղթայս և ի կոճեղս, ի բանտս և յարգելանս, սովով և ծարաւով զբազում աւուրս, և աղաղակ ժողովրդոցն, լալ և կոծ արանց և կանանց ընդ իրեարս խառնեալ յերկինս Հասանէր։

Եւ զՂարապաշ մելիքն կախեալ գլխիվայր՝ այնքան բրածեծ արարին, որ ոտից ըղնգունքն թափեցան, և յարենէն ամենայն մարմինն թաթաւեցաւ՝ և եղև անշունչ իբրև զմեռեալ, վասն զի կարի յաւէտ անողորմ Հարին՝ յաՀ և յերկիւղ միւս քրիստոնէից ըմբռնելոց. և ընտանիք նորա տարեալ ծածկեցին ի մէջ փայտնի։ Եւ Պարսիկ զօրականքն, որք չարչարէին զժողովուրդսն, վասն խաբելոյ զայլ ժողովուրդսն, Համբաւ Հանին, թէ Ղարապաշ մելիքն տաճկացաւ։

Եւ Պարսիկքն, որ զայս ամենայն ածին ի վերայ նոցա՛ իմացան զՀաստատուն միտս նոցա՝ և ծանեան եթէ մեռանիլ կամին և ոչ դառնալ յօրէնսն ՄաՀմետի, այնուՀետև բռնութեամբ ի վայր կոխեալ թլպատէին, և ասել տային զդաւանութիւն Հաւատոյն իւրեանց, և բազումք ի քրիստոնէիցն կաշառս ետուն զօրականացն, և թլպատողացն, և զերծան ի թլպատութենէ։

Եւ ապա գնացեալ ասացին շաՀին, թէ Ղարապաշ

մելիքն և իւր ժողովուրդքն կատարեցին զհրաման Թագաւորին. զի Թլպատեցան, և դաւանեցին զմեր դաւանութիւնն, և եղեն մուսուլմանք:

Յայնժամ զուարճացեալ շահն հրամայեաց, թէ դոցա ամենեցուն՝ որք եկին ի հաւատ, թողէք զառաջին պարտսն, զորս տալոց էին. վասն զի շնորհեցի, և այլ ևս պարգևս նոր այժմ տուք, զի մխիթարեսցին ի վերայ վշտացն՝ զոր կրեցին: Եւ յայսմ հրամանէ Թագաւորին լուծին զնոսա զամենեսեան ի կապանաց, և ետուն նոցա պարգևս իւրաքանչիւր տան առանձին երեք Թուման դրամ, և առ սոսա այսպիսի կերպիւ վրճարեալ զկրակութիւն գործոյն, դարձան ի տունս իւրեանց, զի երեկոյացեալ էր օրն:

Եւ զկնի սոցա եհաս կարգն ի Ղրխեալան մելիքն՝ և ի ժողովուրդս նորա. և յայնմ երեկոյին եկեալ դահճացն կալան զՂրխեալան մելիքն և տարան, որում հրամայեցաւ ի Թագաւորէն թէ, դարձիր յօրէնս Մահմետի, և առ քեզ պարգևս, և մեծութիւնս. և պետական իշխանութիւնս, և մի մատներ անմտաբար զանձն քո տանջանաց և ի կեր. առիւծուց՝ և շանց, որ և զգազանս պատրաստական անդէն կապեալ ունէին: Իսկ Ղրխեալան մելիքն եթէ յահարկութենէ և յամօթոյ Թագաւորական ատենին՝ և թէ յերկիւղէ տանջանացն, և թէ ի պատրանաց խոստմանց, յանձն էառ կատարել զհրամանս Թագաւորին՝ որ և անդէն իսկ դաւանեցուցին նմա զդաւանութիւն հաւատոյն Մահմետի՝ և տաճկացաւ: Իսկ իշխանքն և այլ մահմետականքն սկսան գովել զնա և ասել. զայդ բարւոք արարեր՝ զի եկիր ի ճշմարիտ հաւատս, և ի վերայ այդր պարտ է քեզ, զի զժողովուրդսն քո զամենայն բերցես ի հաւատս յայս: Իսկ Ղրխեալան մելիքն սկսաւ անիմաստ և անդէտ բարբանջելով խօսիլ, և ընդ խօսիլն զտէր Բաղդասարն մատնել.

քանզի ասաց՝ կարծիս ունիմ թէ ժողովուրդքն ամենեքեան դառնան և ոչ դիմադարձին, և թէ դիմադարձի Բաղդասար երեցն միայն. և թէ նա դառնայ, ժողովուրդքն ամենեքեան դառնան:

Եւ մահահրաւէր լուրս՝ և դառնահամբաւ բօթս այս յայնմ խօլ երեկոյի եհաս առ Բաղդասար երեցն և առ ժողովուրդսն, որք և յահէն հասին ի դրունս դժոխոց:

Իսկ քահանայն Բաղդասար յայնմ գիշերի գլոյս և զհաւատ արիական հաստատութեամբ ժողովեալ առ ինքն, հաւաքեալ զամենայն ժողովուրդս քրիստոնեայս յաղօթանոց տունն՝ զոր ի քարվանսարայի անդ սահմանեալ էին և սկսաւ քարոզել ժողովրդեանն զմարդասէր գթութիւնն և զողորմութիւնն Աստուծոյ՝ զոր ինչ գիտէր, և յորդորեաց զամենեսեան յաղօթս և յաղաչանս բազմահառաչ և մեծակական ողբովք և աղբիւրահոս արտասուօք խնդրել ի Տեառնէ ի հեշտալուր և յանոխակալէ, զի դարձուսցէ զցասումն բարկութեան սրտի թագաւորին ի գութ ներողութեան ընդդէմ նոցա. և ամենայն ժողովուրդքն մեծաւ պաղատանօք կային մինչև յառաւօտն յաղօթանոցի անդ խնդրել ի Տեառնէ զգութ և զողորմութիւն:

Եւ ինքն Բաղդասար քահանայն, յերեկորեայ սկսաւ ցայգապաշտօն սաղմոսերգութեամբ զգիշերային աղօթան կատարել, և անդէն զժողովուրդսն խոստովանեցուցեալ և մատոյց զաստուածային պատարագն՝ հաղորդեաց զարժանաւորսն ի պատուական մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ: Եւ յայգ առաւօտուն՝ մինչչև էր բաժանեալ զմութն և զլոյսն, ամենայն աղօթական կարգացն աւարտումն արարեալ կատարեցին:

Իսկ ընդ լուսանալ առաւօտուն շեշտակի ձիընթաց արշաւմամբ եկին զինուորք և զօրականք իբրև զչար գազանք պատեցան շուրջ զտէր Բաղդասարիւ՝ քարշե-

ցին արտաքս, և ձգեցին առաջի երիվարացն՝ ընթացմամբ վարէին փութանակի հասանիլ ի դիւան Թագաւորին, Եւ ի հասանիլն ի դուռն Թագաւորին՝ շուրջ զնովաւ պատեալ մարդադէմ գազանքն կրճտէին զատամունսն, և խրոխտական բանիւք ջանային ատամամբք քանցել զմարմին նորա։

Իբրև նստաւ Թագաւորն յատեան, տարան առաջի զտէր Բաղդասարն· ընդ որում խօսեցաւ արքայ՝ վաս, դառնալոյ նմա ի քրիստոնական հաւատոյն, և թէ յամառեալ ոչ հաւանիս՝ շանց և առիւծոց կերակուր լինիս· որ և վասն զնոսա ահացուցանելոյ անդէն պատրաստական ունէին զգազանսն։

Եւ անշուշտ խոստումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աստանօր կատարեալ ցուցաւ՝ որ ասաց· յորժամ տանիցեն զձեզ առաջի դատաւորաց և Թագաւորաց՝ մի հոգայցէք, և մի զմտաւ ածիցէք, թէ զինչ պարտ իցէ ձեզ խօսիլ· զի տացի ձեզ բան և իմաստութիւն ի ժամուն յայնմիկ՝ զոր ինչ պարտ իցէ խօսիլ· զի ոչ եթէ դուք իցէք, որք խօսիք, այլ Հոգին Հօր ձերոյ խօսեսցի ի ձեզ։ Որով տուեալ պատասխանի Բաղդասար քահանայն Թագաւորին և ասաց· եթէ ասես ինձ իմովք կամօքն դառնալ յիմոցս հաւատոց ես կամովք իմովք ոչ դառնամ· և թէ բռնութեամբ դարձուցանես, ոչ է այդպէս հրամայեալ քեզ օրինագիրն քո· և թէ վասն պարտուցն քոց ասես և խնդրես, զյոլովն տուեալ եմք, և որ ինչ մնացեալ է, զայն ևս այսօր և ի վաղիւն վճարեմք։ Եւ զոր օրինակ ջուր ցուրտ հեղեալ ի մէջ եռանդնոտ կաթսայի՝ նոյնժամայն նստուցանէ զնորին փրփրալի եռանդն, այսպէս բանք տէր Բաղդասարին ցածոյց զբարկութիւն Թագաւորին· յորոյ պատճառէ այլ ոչինչ ասաց արքայ, բայց միայն զայս՝ թէ գնացեալ տուր զմնացեալ պարտսն քո։

Արդ՝ Տէրն Քրիստոս՛ որ ասաց. ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա, նոյն ինքն և այժմ ևս նայեցաւ ի ժողովս սոցա, և ի ցայգապաշտօն արտասուալի յաղօթս նոցա, և ցածոյց զբարկութիւն Թագաւորին, յորմէ զերծան տէր Բաղդասարն և ժողովուրդքն յերկուց վտանգից, ի տանջանաց, և յուրացութենէ: Այնուհետև վճարեցին զմնացորդս պարտուց Թագաւորին, առին գիր ազատութեան, և գոհանալով զՏեառնէ կային խաղաղութեամբ:

Իբրև այս ամենայն կատարեցաւ ի վերայ ժողովրդոցն՝ որք զմասն ինչ ի նոցունց և զմելիքներն դարձուցին ի դաւանութիւնն Մահմետի. այնուհետև վերոյասացեալ Փռանկ եպիսկոպոսն եկեալ առ Թագաւորն Շահաբաս ասաց. ունիմ ընդ քեզ դատաստանաւ խօսք ինչ, զի դու խնդրեցեր զտուեալ պարտսն քո ի Հայոց, և նոքա ոչինչ ունէին զի տուեալ վճարեսցեն, և ես վասն քրիստոսական հաւատոցն ետու նոցա դրամ, զի տացեն ի պարտսն քո, և կացցեն ի քրիստոսական հաւատս, զոր և բերեալ ետուն քեզ և վճարեցին զպարտսն քո: Իսկ դու յետ առնլոյ զդրամն ոչ Թողեր ի հաւատս Քրիստոսի, այլ դարձուցեր ի հաւատն ձեր՝ որովհետև այսպէս արարեր, իրաւունք դատաստանին վկայեն վասն իմոյ առեալ գանձին առ իս դառնալ. արդ խնդրեմ յարքայէ զի զգանձն իմ առ իս դարձուսցէ: Իսկ Թագաւորին մտախոհ եղեալ ետես զի իրաւամբք էր բան եպիսկոպոսին. զերկու հարիւր Թուման դրամն դարձուցեալ առ եպիսկոպոսն վճարեաց նմա:

Իսկ Ղարապաշ մելիքն և ժողովուրդքն՝ զորս բռնութեամբ դարձոյց շահն յօրէնս Մահմետի, այն միայն էր զի յատենի անդ ասացին զդաւանութիւն տաճկաց, զկնի այնորիկ այլուի կային ի վերայ քրիստոսական հաւատոց, և ևս առաւել հաստատուն քան զառաջինն,

վասն խղճմտանաց ուրացութեանն: Քանզի զողջոյն մըկըրտէին, զմեռեալսն քահանայիւք Թաղէին, և յեկեղեցին հանապազ գնացեալ աղօթէին՝ և խոստովանեալ հաղորդէին. և մահմետականացն ոչինչ փոյթ էր նոցին այնպէս առնելն, որոց զկնի որդիք նոցին ամենեքեան քրիստոնեայքն են այժմ և ի ժողովուրդս քրիստոնէից բնակեալք:

Իսկ խղճմտանք Ղրխեալան մելիքին առաւել սաստեալ յանդիմանեաց զնա. որ և զկնի ամաց ինչ անցանելոյ, էառ զկին իւր իրիք ինչ պատճառանօք՝ Թէ գնամ ի Թաւրէզ, և անցեալ զայնու՝ գնաց յԵրուսաղէմ կատարեաց զամենայն ուխտ տնօրինականացն Քրիստոսի. և մնացին անդէն ինքն և կինն իւր: Եւ վասն զի արուեստիւ քարագործ էր, վասն սուրբ Երուսաղէմայ գործէր առանց վարձու, ակն ունելով ի Տեառնէ վարձուցն հատուցման և [1] զամենայն ժամանակս կենաց իւրոց զոլս եկեաց, այնպէս եկաց [2] և անդէն ի քաղաքին Երուսաղէմ վախճանեցան, և Թաղեցան Ղրխեալան մելիքն և կինն իւր, որոց արասցէ Տէրն Քրիստոս զներումն և զԹողութիւն իւրով անբաւ ողորմութեամբն. ամէն:

---

1 Ոմն. չէ. և: 2 Նոյն. չէ. այնպէս եկաց:

ԳԼ. ԺԳ.

Միւս ևս պատմութիւն նեղութեանց՝ զոր կրեցին ազգն հայոց յառաջնոյ Շահաբաս Թագաւորէն:

Եւ եղև յաւուրս ժամանակաց յորում ամի էր Թուականն մեր ՌԿԹ. զի Թագաւորն Շահաբաս մեծն և առաջինն, ելեալ ի քաղաքէն Սպահանու գնաց յերկիրն Փարիայ և ի Բուրվարի, յորում զազգն Հայոց բնակեցուցեալ էր:

Եւ զի սովորութիւն էր այս Շահաբասին երբեմն երբեմն, զի այլակերպեալ զինքն՝ ձևանայր իբրև զմի ի զօրականաց՝ և գնայր ի տեղին ուր գնալոց էր, և ըստ այսմ սովորութեան յայսմ նուագի ևս արար, զի ինքն միայն և իւր յառաջընթաց փայեկն, նախ քան զամենայն զօրսն՝ եկին յառաջին գիւղն երկրին Փարիոյ՝ զոր Դարբնի գիւղ ասեն: Որում հանդիպեալ կին ոմն ի նոյն գեղջէն, և կինն ոչ գիտէր զնա թէ շահն իցէ, խօսեցաւ շահն ընդ կնոջն և ասաց. եթէ ունիս հաւ վաճառելոյ՝ բեր առ իս զի գնեցից. իբրև եբեր կինն զհաւն, և ի պատճառէ հաւին բազում խօսս և զբանս առաջարկեալ փորձ ի փորձ ընդ կնոջն, խօսէր զնանրութիւն և

ի սիրտս իւր ժողովէր զանօրէնութիւն։ Եւ ի կարգս խօսիցն ասաց շահն. տասն փող տամ քեզ ի գինս հաւիս՝ և թէ դու սիրես զշահն տուր մեզ զհաւս. և կինն ասաց. զինչ լաւագոյն բարիս և զերախտիս տեսաք մեք ի շահէն՝ որ վասն սիրոյ շահին տաց քեզ զհաւս։ Եւ շահն ասաց. զինչ այլ ևս բարիս արասցէ ձեզ շահն, զի յայսպիսում լաւ և վայելուչ երկրի բնակեցուցեալ և յապահով պահէ զձեզ յամենից նեղութեանց, և քաղցրութեամբ և գթով վարի ընդ ազգիդ ձերում։ Եւ կինն ասաց. երանի թէ ոչ էր բերեալ զմեզ՝ զի վտարանդի արարեալ եհան զմեզ ի նախնի աշխարհէն մերմէ, ի բնիկ տեղեաց, և ի հայրենի ժառանգութեանց, և բերեալ աստէն յօտար աշխարհի բնակեցոյց պանդխտութեամբ։

Իսկ այս բան կնոջն իբրև զերկսայրի սուր պատահեցաւ ի սիրտս շահին, վասն զի կարի ծանր և դառն թուեցաւ նմա, մինչև ի սիրտ և ի հոգի խոցեալ լինէր, և յառաւել բարկութենէն լռեալ կայր՝ և ոչինչ խօսէր. և ի ժամս յայս եկին և հասին առ շահն նորին նախապատիւ և փառաւոր նախարարքն, Սպանդիարբէկն և այլք, և ի տեսանելն զնա այնպէս զայրագին բարկութեամբ լցեալ՝ ոչինչ խօսեցան, այլ լռեալ կային ի բացեայ։

Եւ ահա գայր, և անցանէր առ նոքօք երեց գեղջն այնմիկ՝ որում անուն էր տէր Աւետիս, որ ի հողագործութենէ անդին եկեալ գնայր ի տուն իւր։ Իբրև ետես զնա շահն՝ կոչեաց առ ինքն՝ եհարց, թէ ինչ մարդ ես. ասաց երեցն. Հայ եմ. ասաց շահն՝ և ե՞ր վասն երկայն է մօրուսդ. ասաց երեցն. գեղիս երեցն եմ. ասաց շահըն. եկ մուսուրման եղիր. ասաց երեցն. ես այր գռեհիկ եմ, և մանաւանդ ծերացեալ եմ, և ոչ կարեմ կատարել զարարողութիւնս մուսուրման օրինաց. և զայրագին սրտմտութիւն թագաւորին կարի յորդեալ առաւելաւ՝ որ և ոչ հանդուրժեալ ի բարկութենէ իւրմէ

շահն, այլ էառ ի ձեռաց փայեկին զկացնակն, որ է նաջախն՝ և նովաւ ուժգին բախմամբ եհար զգլուխ երիցոյն և կարի պատառեաց։ Որոյ վիրացն և բախմանն չհանդուրժեալ տևել երիցոյն, այլ ուշաթափ և խելագնաց [1] եղեալ՝ անկաւ անշնչացեալ իբրև զմեռեալ. և ի սաստիկ բարկութենէ իւրմէ շահն անդէն ի նմին ժամու հրամայեաց մերձակայիցն թլպատել զնա, որ և վաղվաղակի թլպատեցին, թէպէտ երեցն իբր զմեռեալ անզգայ էր. և թողեալ զերեցն այնպէս ինքն անցեալ գնաց ի բանակետղն ի վրանն իւր։

Եւ այնուհետև բարձաւ գութ և ողորմ ի սրտէ թագաւորին ընդդէմ Հայոց, և կոչեաց առաջի իւր ըզվէզիրն, ընդ նմին և զշեխն, որում անունն էր Միր-Աւգուլայ, և հրամայեաց նոցա զօրականօք մտանել ի գաւառն յայնոսիկ, և ծագէ ի ծագ տանջացուցանել և թլպատել։ Եւ որ ոք կամօք և յօժարութեամբ հնազանդեսցի բարւոք է, և որ ոք ոչ հնազանդեսցի, տանջանօք և բռնութեամբ թլպատեսցեն, և դարձուսցեն ի կրօնս մոլար առաջնորդին. և բազում սաստիւք և սպառնալեօք պատուէր տուեալ նոցա կատարել զամենեսեան հրամանս իւր, և ինքն դարձեալ ի Փարիոյ եկն ի քաղաքն Սպահան։

Եւ յայսմ հրամանէ թագաւորին հալածումն մեծ եղև ի վերայ Հայոց, զի թողեալ զտունս և զընտանիս, և զինչս, և ելեալք ցրուեցան իւրաքանչիւր ոք հանդէպ երեսաց իւրոց, ի լերինս և յանապատս, և յանմարդաձայն տեղիս. և բազումք գնացեալ ի հեռաւոր գաւառս, փոխեալ զանունս և զձևս, և այնպէս կային անգիտելի ումեք, և ոմանք ի նոցանէ զբազում աւուրս քաղցեալ և սովալլուկ լեալ թափառական շրջէին ի լերինս, և ոչ

---

1 Ուղ. չէ+. և խելագնաց.

կարէին ի շէնս մտանել՝ կամ ումեք երեւել, վասն ահի Թագաւորին և Թլպատողաց։

Եւ իշխանքն, որք կարգեցան Թլպատողք՝ մտին ի գաւառսն, և զորս գտին, սաստիւ և սպառնալեօք տանջանաց՝ և բռնութեամբ զամենեսեան Թլպատեցին, եթէ աշխարհական և թէ երեց։

Ըստ ասացելումս օրինակի առնելով հասին ի Փառչիշ գիւղն, և անդ ևս կատարեալ զգործս իւրեանց անօրէնութեան, ելեալ անտի կամէին գնալ ի գիւղն Փահրան, և տանուտէր գեղջն Փահրանու՝ որում անունն էր Նուրիջան, ասաց ընդ իւրում գեղականացն, եկայք զինուորեսցուք և միաբանութեամբ զդէմ կացեալ պատերազմեսցուք ընդ այլազգի Թլպատողացն, և մի Թողուցուք մտանել ի գիւղս մեր. և գիւղականացն ոչ լեալ միաբան և ընկեր նմին, այլ փախուցեալք ցրուեցան ի լերինս։ Իսկ Նուրիջանն ինքն միայն ածեալ զիւրեաւ սուսեր, և առեալ նետ և աղեղն, և գնացեալ զկէս ճանապարհին, և ելեալ ի գլուխ փոքր և բոլորակ բլրի միոյ, առ որոյ ստորոտովն ճանապարհն անցանէր։ Եւ Թըլպատողքն ելեալք ի Փառչիշոյ յուղի անկեալ գնային ի Փահրան, իբրև մերձ եղեն առ ստորոտս բլրին, և ահա յանկարծակի ահագին գոչմամբ ձայն արձակեալ Նուրիջան՝ և յիւրում դարանեալ տեղւոջէն սկսաւ նետաձիգ լինել առ նոսա, և այնպիսի նետաձգութեամբ արգել՝ և կացոյց զնոսա ի գնալոյ, և ապա արտաքս եկեալ ի դարանէն ստէպ նետաձգութեամբ և հալածական առնելով յետս դարձուցեալ անդրէն ի Փառչիշ՝ ելից ի մէջ գեղջն, և ինքն դարձաւ ի գիւղն իւր ի Փահրան։

Իսկ Թլպատողքն՝ ոյք դարձան ի Փառչիշ, կացին մինչև ցերեկոյն, և ապա առաքեցին լրտես գիտենալ թէ ուրանօր իցէ Նուրիջանն, և լրտեսն եկեալ պատմեաց թէ յիւրումն տան կայ աւանիկ։ Ցայնժամ ամենայն

Պարսիցն սպառազինեալք զգիշերայն ելեալ գնացին ի Փահրան՝ և պատեցին զտունն Նուրիջանին․ և կալեալ կապեցին զնա, և ի լուսանալ աւուրն՝ արկին յոլսայս և սկսան բրածեծ առնել զնա, և այնքան հարին որ ամենեւին ողջ անդամ ոչ մնաց ի մարմնի նորա՝ և եղև իբրև զմեռեալ, որ և անդէն առ ժամայն թլպատեցին և ապա ի բաց կացին ի նմանէ։ Եւ գեղական կանայքն տարեալ թաղեցին ի մէջ փայենի մինչև ցերիս աւուրս․ և մնաց Նուրիջանն այնու ցաւով հիւծեալ մարմնով յանկողնի ամիսս չորս, որ ոչ կարէր կանգնիլ ի վերայ ոտից։

Եւ այսպէս թլպատող իշխանքն շրջեցան յերկոսին գաւառսն, ի Փարիայ և ի Բուրվարի, զորս և գտին թլպատեցին, թէ աշխարհական և թէ երեց, և ի զրաւել ամենայնի՝ դարձան յԱսպահան քաղաք՝ և պատմեցին թագաւորին։ Եւ շահն հրաման արար վասն թըլպատեալ երիցանցն թէ․ յարքունական գանձէ իւրաքանչիւր երիցու տացեն զքառասուն ոչխար, և արարին այնպէս։ Շահն զայս ոչխարքս վասն այնր ետ երիցանցն, զի ոմանք յերիցանցն ագահեալ յինչսն հեշտասցին այնու տրօք, և մի զրգռեսցին զժողովուրդս իւրեանց դառնալ ի տաճկութենէ․ և ոմանք, որք կերեալ և վատնեալ իցեն, յերկիւղէ վճարելոյն կացցեն ի տաճկութեան։

Յետ այսորիկ խորհրդով նախաչարին լցեալ շահն, առաքեաց այլ ևս իշխանս զօրականօք, և հրամայեաց նոցա գնալ յերկոսին գաւառսն, շրջիլ յամենայն գիւղօրայս, և ըմբռնել զամենայն երիցունս՝ և սպառնալեօք ահացուցանել զնոսա, և առնուլ ուխտ և պայման ի բերանոց նոցա, զի մի պահեսցեն զգիրս ինչ ի գրեանց իւրեանց․ և թէ իցէ ոք, որ պահեալ իցէ՝ և որ ոք զայն յայտնեսցէ, զգլուխն պահողին թագաւորական ե-

ղիցի. և ամենայն ինչք և ընտանիքն ցուցողին եղիցին։ Զայս հրաման առեալ զօրականացն գնացեալ շրջեցան յերկոսին գաւառսն, զգրեանսն և զեկեղեցական անօթսն՝ զորս և զտիրն՝ բռնութեամբ յափշտակեալ ի քրիստոնէից, և առեալ բերին յԱսպահան քաղաք՝ և ծանուցին շահին, և շահն ասաց պահել զամենայն։

Զկնի այսորիկ առաքեաց շահն բազում մոլլայ յաղգէն Պարսից ի Փարիայ և ի Բուրվարի, զի անդէն կացցեն, և զօրէնս Մահմետի ուսուսցեն Հայոց, և ժողովեսցեն յամենայն աւուր ի մաչիդ (մզկիթ) առ ի յաղօթել, և զմանկունս քրիստոնէից Պարսկերէն կարդացուսցեն։ Եւ մոլլայքն եկեալ ցրուեցան ի գեղօրայս գաւառացն, ուր երկու և ուր երեք, և բռնաբարէին զքրիստոնեայսն գալ ի մաչիդ՝ և մտանել յօրէնս Մահմետի մոլար առաջնորդքին։ Իսկ քրիստոնէիցն դժուարեալ ընդ այն՝ ոչ հնազանդէին, այլ դիմադրաւեալ բանավէճ լինէին, և օր աւուր առաւելեալ ի վէճս և ի բանս այնքան, մինչ զի ի մոլլայիցն զերիս և զչորս սպանին, և զայն տեսեալ այլոց մոլլայիցն երկուցեալք ի սպանմանէն՝ փախստական եղեն ամենեքեան՝ և գնացին ի տեղիս իւրեանց։ Եւ ողորմելի քրիստոնէիցն կացեալ ի հալածանս և ի չարչարանս ի ձեռս Պարսից զամս երկու։

Եւ ապա այր ոմն քրիստոնեայ՝ անուանն Գրիգոր, որ էր նախկին նա ի Վայոց ձորոյ՝ զոր Եղեգաձոր ասեն, ի գեղջէն Արփայու. և այժմ ի գաւառին Փարիոյ գոլով՝ բնակէր ի գիւղն զոր Ներքին Խոյիկան ասեն, և էր սա մարմնով պարթևահասակ և յաղթանդամ և սրտիւն արի, բանիւք և խելօքն հանճարեղ. և հաւատով և սիրով Քրիստոսի հաստատ և ջերմագոյն։ Այս Գրիգոր ելեալ շրջեցաւ ի գեղօրայս գաւառին՝ և քաջալերեալ յորդորեաց զամենայն ժողովուրդսն և եղև գլուխ և առաջնորդ նոցա. էառ ընդ իւր արս եօթն և եկն ի

քաղաքն Ասպահան, և գնացեալ եառ զբազում գանձս ի փոխ և բերեալ ետ իշխանաց շահին կաշառս, և հաւանեցոյց զամենեսեան, զի ի պատեհ ժամու բարիս խօսեսցին վասն նոցա առաջի Թագաւորին։

Ապա ինքն գրեաց արզայ աղաչանաց և մատոյց առ Թագաւորն ոչ թէ միանգամ կամ երկիցս, այլ հնգիցս և վեցիցս. այնքան խօսեցաւ յատեան և ի դիւան Թագաւորին՝ մինչև ձանձրանալ Թագաւորին և ասել՝ Թողի զձեզ ի կամս ձեր, գնացեալ պաշտեցէք զհաւատն ձեր. և Գրիգոր աղաչէր, պաղատէր, ի ծունր իջեալ լալով խնդրէր ի շահէն՝ և ասէր, թէ զհրամանդ, զոր բանիւ ասես, մատամբ միով թղթիւ շնորհեա մեզ.

Եւ յաւուր միում, յորում շահն ելեալ յապարանից իւրոց գնայր ի Հազարջրիպ այգին. ասացին թէ [1] հինգ անգամ եկեալ առաջի շահին և զնոյն թուղթն խնդրեաց, յորոյ անձանձիր խնդրոյն ձանձրացեալ շահին, գրեալ նոմոս Թագաւորական կնքով ետ ցԳրիգորն, թէ հրաման ետու ամենից քրիստոնէից բնակելոց ի գաւառին Փարիոյ և Բուրվարի՝ զի համարձակ պաշտեսցեն զքրիստոնէութեան հաւատն իւրեանց։

Այլ և յետ այսորիկ խնդրեաց Գրիգորն ի շահէն. զի այցելութիւն արարեալ ողորմեսցի Թագաւորն, և շնորհեսցէ նոցա զիւրեանց գրեանսն, զորս յափշտակեալ բերեալք էին. և զայն ևս շնորհեաց նոցա արքայ։ Եւ Գրիգորն և ընկերքն իւր առեալ զթուղթն և զգրեանսն իւրեանց և ուրախութեամբ գնացին յերկիր և ի ժողովուրդ իւրեանց։

Յաղագս պատճառիս այսմիկ Թագաւորն Շահաբաս էարկ տուգանս ի վերայ քրիստոնէիցն ասելով. որովհետև ոչ հնազանդեցան հրամանաց Թագաւորի, տա-

---

1 Ձեռ. չէ. ասացին թէ.

ցեն տուգանս ի դիւանն Թագաւորի հազար Թումանս։ Եւ յերեւելի իշխանաց իւրոց առաջակայից զոմն՝ զոր Խոսրով սուլթան կոչէին, կարգեաց վերակացու՝ զի առեալ ի ժողովրդենէն յանձնեսցէ ի գանձապահս Թագաւորին. որ և եկեալ Խոսրով սուլթանն բազում զօրականօք, արար և կատարեաց զհրամանս Թագաւորին։

Եւ ողորմելի քրիստոնեայքն վասն քրիստոսական հաւատոցն, զայս հազար Թումանս, և զայն պարտքն՝ զոր Գրիգորն և ընկերքն իւր յԱսպահան արարին, և այլ ևս զոր ինչ ծախք լեալ էին, զամենայն վճարեալ հատուցին, և եղեն չքաւորք՝ և աղքատք կարի յոյժ, բայց կալով ի հաւատս Քրիստոսի ուրախ են՝ և գոհանան զՏեառնէ Աստուծոյ։

Իսկ Գրիգոր այրս այս՝ օր յաւուր յաւելոյր ի հաւատս և ի բարեգործութիւնս, նա և հաստատէր զայլս ի վերայ հաւատոցն Քրիստոսի՝ և նախանձախնդիր լինէր վասն քրիստոսական օրինաց, առ որ նախանձաբեկ լեալ արինարբու մահմետականաց, և զրպարտեցին ի մահ զԳրիգորն՝ քանզի զոմն մահմետական յիւրեանց ժողովրդենէն ինքեանք սպանին, և բերեալ ի ծածուկ արկին յանդն Գրիգորին, եկին դատախազք և բերեալ կացուցին սուտ վկայս թէ Գրիգորն սպանեալ է զայս մեռեալս։ Եւ առեալ տարան յանուղղայ դատաստանն իւրեանց առաջի դատաւորաց, որոյ վերայ վճիռ հատին թէ, որովհետև զայդ արարեալ է դորա՝ կամ ուրասցի, կամ սպանցի. և այսու զրպարտութեամբս դատապարտեալ սպանին զքրիստոսասէր զայրն Գրիգոր։ Եւ բազումք վկայեցին վասն նորա թէ, Տէր փառաւորեաց զնա երկնաւոր նշանօք լուսոյ երկնից։ Որում տացէ Քրիստոս զխոստացեալ արքայութիւնն իւր, և զմեզ ևս ընկալցի ի մասնակցութիւն սրբոց իւրոց իւրով ողորմութեամբն. ամէն։

ԳԼ. ԺԵ.

Վասն էր ոչ գոյ ոչխարաց քողաւ յաշխարհին, որ Արաղստան կոչի:

Արքայն Շահաբաս առաջինն, յորժ սիրեաց զքաղաքն Փահրապատ, վասն որոյ յամենայն աշխարհաց ժողովեաց զժողովուրդ և եած անդ՝ որպէս զի մեծասցի քաղաքն։ Եւ ինքն որքան լինէր յապահովս ի Թշնամեաց պատերազմէ՝ զձմեռնային ժամանակս անդ գնացեալ անցուցանէր։ Եւ ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ Շահաբաս, որ գնայր ի Փահրապատ, եղև երբեմն մինչ գնայր՝ եկեալ եհաս ի սահմանս Ղազբին քաղաքին, ի գաւառն՝ որ ասի Թարիմ, ի գիւղն՝ որ կոչեն Խոռոմապատ, և անդ իջևանեալ բանակեցաւ բանակն արքունի։

Իսկ ինքն Շահաբաս ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ՝ որ այլակերպեալ զինքն ձևանայր, որպէս զմի ոք ի զինուորաց՝ և գնայր ի մէջ արանց և ժողովրդոց՝ իմանալ և գիտել զբան ինչ։ Այսպէս արար և յայսմ նուագի. զի ինքն և իւր փայեկն յառաջ քան զամենայն զօրսն եկին ի Խոռոմապատ ասացեալ գիւղն

իբրև զմի ոք ի զօրականաց հեծելոցն, ետես ի գլխաւորաց գեղջն զարս ոմանս, որք կային ի փողոցի՝ և ընդ հարկահանաց իշխանացն հոգային զհոգս կարեաց արքայի՝ և այլոց իշխանաց. խօսեցաւ ընդ նոսա շահն և ասաց. ես և ձիս և փայեկս միայն եմք՝ և ոչ եմք յոլովք, զի ծանրաբեռն թուիցուք ձեզ, խնդրեմ ի ձէնջ վասն սիրոյ շահին՝ տուք մեզ տեղի յայսմ գիշերի. իսկ արք գեղջն ոչինչ կալան փոյթ զնորին բանէն, քանզի հոգովք թագաւորական կարեաց պատաղեալք էին։

Ապա կին ոմն բազմամեայ պառաւ՝ որ ի նոյն գեղջէն էր, ասաց առ շահն. եկ որդեակ՝ եկ զի երթիցուք ի տունն մեր՝ և լեր մեզ հիւր. և առեալ կինն զշահն և տարաւ ի տունն իւր. եկաց անդէն շահն մինչև ցերեկոյ։ Իսկ ընտանիք պառաւին ամենեքեան մեռեալք էին՝ և ունէր միայն մի որդի՝ որոյ անունն էր Լալայ, և այն ևս վասն կարի աղքատութեան իւրեանց [1] նախրորդ էր մտեալ գեղջն, և ընդ ժամանել երեկոյին, Լալայն բերեալ զնախիրն էած ի գիւղն, և ըստ սովորութեան իւրում ի տանց գեղջն սկսաւ ժողովել յիւրաքանչիւրոցն մի մի հաց, և ժողովեաց տասն և հինգ հաց, զոր և ունէր ի վերայ բազկաց իւրոց, եբեր ի տունն իւրեանց. և իբրև ետես թէ հիւր կայ ի տանն՝ զամենայն հացսն բերեալ էարկ առաջի հիւրին. որ էր շահն ինքն. իսկ պառաւն բացեալ զթոնիրն եհան պուտկով եփեալ կորկոտապուր՝ զոր ոմանք վռօշ ասեն, և շահն այն հացոմն եկեր զայն կերակուրն, և խօսեցաւ և հարցումն արար ընդ նոսա բանս բազումս, և յերեկոյին ի մթանալ գիշերոյն՝ ելեալ գնաց ի տեղի իւր։

Անտի չուեալ շահն գնացեալ եհաս ի Փահրապատ, և յորժամ դարձաւ ի Փահրապատայ, և եհաս

---

1 Ռոչ. իւրոյ.

ի նոյն գիւղն՝ վերստին [1] այլակերպեաց զինքն՝ և խընդրեաց զիջևանս ի գեղականացն՝ և ոչ ետուն։ Իսկ նոյն պառաւն դարձեալ եկեալ առաջի նորա ասաց, դու մեր ես ծանօթ և հիւր, որդեակ, եկ և այժմ զի երթիցուք ի տունն մեր, և գնաց շահն ի տունն պառաւին, և պառաւն կերակրեաց զնա ըստ օրինակին որպէս և նախ պատմեցաք. Մնաց անդէն շահն մինչև յերեկոյ, զբաղում բանս՝ որ ինչ ունէր ի մտի, եհարց ի նոցանէ։

Ապա ասաց շահն ցնոսա, բան ինչ կամիմ հարցանել ի ձէնջ թէ սիրէք զշահն, զստոյգն ասացէք ինձ, ահաւասիկ այս տունս ձեր յորում նստեալ եմք, ինքն և որք զիւրև յարկք են՝ լայն և ընդարձակ և մեծաշուք երևին, որպէս [2] և ինքեանք իսկ ցուցանեն զինքեանս. այնպէս և ձեր խօսք՝ և բանք և շարժմունք իբր զմեծատան երևի, բայց տեսանեմ զձեզ կարի չքաւոր և զտունս բնաւին դատարկ, զսորին պատճառ խնդրեմ, զստոյգն ասացէք ինձ։

Իսկ պառաւն յոգւոց հանեալ հառաչեաց մեծապէս՝ և սկսաւ ասել. տեսանես որդեակ զայս ամենայն, ստոյգ է ասացեալն ի քէն, թէ տունս և որք ընդ սովաւ յարկք են մեծաշուք երևին, ստուգիւ՝ էաք մեծատունք և ընչեղք, որ բազումք կարօտեալք և պանդխտականք այս տամբս հովանաւորեալք ապրէին, և չքաւորք և աղքատք սովաւ լինէին ստացուածոց և գոյից տեարք, և ունէաք ջոկով ոչխար հազար և հինգ հարիւր գլուխ, և զերամակս մատակ ձիոց, և զբազում անդեայք լծկան և կթան, արտ և այգի, և ջրաղաց, զոսկի և զարծաթ, և զտան [3] կահս և զկարասիս յոլովս. և այն ամենայն մերժեալ ի մէնջ գնաց՝ և ոչ մնաց և ոչինչ. քան զի

[1] Ա–էփ. էրէց. այլ ի այնպէս. [2] Ռ–ձ. վէ+. որպէս . . . . .
[3] Ա–էփ. էրէց.. տան կահք և կարասիք յոլովք.

զմասն ինչ վաճառեալ տուաք յարքունական հարկն, և զմասն ինչ վաճառեալ տուաք պարտատուաց. և զմասն ինչ ի պէտս կարեաց մերոց, և եղաք յոյժ չքաւորք: Եւ յետոյ այրն իմ և իւր եղբարքն, և այլ ընտանիք, և որդիք նոցին ամենեքեան մեռան. և այժմ[1] մնացեալ եմք ես և որդին իմ, որոյ մերձ է գոլ երեսնամեայ, և վասն աղքատութեան ոչ կարեմ ածել զմա կին, և յայլմէ ուստեքէ ոչ ունիմք ապրելոյ ճար, վասն որոյ որդիս իմ արարի նախորդ գեղջս, որ յամենայն երեկոյի ժողովեալ զհաց վարձու իւրոյ բերեալ կերակրեմք որպէս և տեսեր, և այսպէս անցուցանեմ զաւուրս իմ, սպասելով մահու՝ զի թերևս նա հանգուսցէ զիս ի տառապանաց իմոց:

Զարմանք մեծ կալաւ զշահն ի վերայ ասացեալ բանից պառաւին, բայց ասաց շահն, զայդ զոր ասացեր, թէ այրն իմ և ամենայն ընտանիքն մեր մեռան, այդ ի ձեռին Աստուծոյ է՝ զի նա պահէ և մեռուցանէ. այլ վասն ձերոյ ընչիցն՝ զոր ասացեր թէ գնաց ի ձեռաց մերոց՝ և եղաք չքաւորք, սորին զինչ է պատճառն:

Ասաց պառաւն, ոչխարի քօղաւն է, [զոր թագաւորական հարկահանքն եկեալ ոչխարաց քօղաւ առնուն, զի տարէց տարի գնալով զկնի միմեանց՝ որքան գնաց, ծանրացաւ քօղաւն, և այնքան ծանրացաւ, որ զնոյն ինքն ոչխարսն զամենայն վաճառեալ տուաք ի քօղաւն, և այնու ոչ կարացաք զերծանիլ, զպարտս ևս առաք և տուաք քօղաւ, և ապա զինչս և զստացուածս օր յաւուր վաճառելով, զորս ի քօղաւն տուաք, և զորս պարտատեարցն վճարեցաք, ոչինչ մնաց, քանզի կարի յոյժ ծանր է հարկն քօղաւին: Եւ զայս ոչ գիտէ արքայն, և նորին նախարարքն, այլ գիեն զորքանութիւն քօղա-

1 Ուղ. չէ. այժմ

ւին և տան ի ձեռս զօրականաց, և նոքա եկեալ թէ կամայ թէ յակամայ բռնութեամբ առնուն, ասելով՝ ի դիւանէն թուղթն այնպէս գրեալ՝ և տուեալ՝ և հրամայեալ եղև մեզ, վասն որոյ այսպէս առնումք և ոչ պակաս. զի թէ պակաս առնումք, մեզ տան վճարել զպակասն, ասելով թէ՝ դուք գողացեալ էք: Եւ յայսմ պատճառէ չքաւորեցաք, ոչ միայն մեք զոր տեսանես, այլ և բազում մեծատունք այսպէս եղեն, ոմանք ի մեր դեղջևս՝ և այլք յայլոց գեղօրէից գաւառիս. որ և սկսաւ պառաւն զայնոսիկ զամենեսեան յանուանէ յիշել:

Ասաց շահն. ընդէ՞ր ոչ գնան դիտուն և ճարտարախօս մարդիկք յաշխարհէս ձերմէ՝ և ծանուցանեն շահին, և ես գիտեմ յորժամ վերահասու լինի շահն այդոցիկ՝ բառնայ զծանրութիւն հարկիդ այդմիկ, քանզի շահն աշխարհաշէն թագաւոր է՝ և ոչ կամի թէ ումեք զրկանք լինիլ: Ասաց պառաւն. բազում անգամ գնացեալ աղաղակեցին, այլ ոչ կարացին հանել ի դիւանական մատենից զորքանութիւն քօղաւրին: Եւ մնաց շահն ի տուն պառաւին մինչև ցառաւօտն, և յառաւօտուն ի մթին ժամու ելեալ գնաց ի վրանն իւր:

Եւ յետ աւուրց ինչ առաքեաց զքննիչս յերկիրն յայն՝ զի զամենայն որպիսութիւն աշխարհին գիտասցեն ստուգութեամբ. որոց գնացեալ տեսեալ՝ և եկեալ պատմեցին շահին ասելով [1] թէ կարի առաւել նեղութեան միջի կան բնակիչք աշխարհին այնորիկ, վասն պէս պէս պատճառի, և մանաւանդ վասն քօղաւրին. որով գտաւ իրաւ զոլ ամենայն ասացեալքն ի պառաւէն: Եւ այս եղև պատճառ զի անկաւ գութ և ողորմ ի սիրտ Շահաբաս թագաւորին, վասն որոյ և եբարձ զքօղաւն՝ ոչ միայն ի Ղազբինու աշխարհէն, այլ և յա-

1 Ուղ. չէ. ասելով.

մենայն Արաղստան աշխարհէ, ոչ դոյ այժմ քօղաւ յամենայն աշխարհ, որ Արաղստան անուանի։

Այլ և առաքեաց զիշխանս ի գիւղն Խոռոմապատ․ առ ի սպանանել զարսն, որք ոչ ընկալան զնա, և առ ինքն ածել զպառաւն, և զորդին իւր զԼալայն․ և իշխանն գնացեալ արար ըստ հրամանաց շահին՝ զի յարանց գեղջն զերիսն սպան, և զԼալայն և զմայրն առեալ էած առ շահն։ Իսկ շահն ետ Լալային փառս և պատիւ՝ և պետական զիշխանութիւնս, և ի դրան իւրում մեծապատիւ հաւատարիմ նախարար կարգեաց, որ յետ այնորիկ կոչեցաւ Լալաբէկ։ Այլ և յետ սորա որդիքն իւր էին հաւատարիմք և նախապատիւ ի դուռն Թագաւորացն Պարսից․ որ և միում յորդւոց սորա՝ որոյ անունն էր Մահմատղուլի բէկ․ ետ Թագաւորն իշխանութիւն խանութեան, որ կոչեցաւ Մահմատղուլի խան, և առաքեաց ի քաղաքն Երևան, որ եկեալ տիրեաց երկրին յամս ինչ։

Այս պատմութիւն վասն այս Լալաբէկիս, թէ ոմանք յառաջակայից Շահաբասին ի պատճառս նախանձու՝ չարախօսութիւն արարին վասն Լալաբէկին առաջի շահին, և շահն կամեցաւ կողոպտել զնա՝ և յառաջին աղքատութիւնն իջուցանել։ Որ և շահն ինքն եկեալ ի տուն Լալաբէկիս սկսաւ զամենայն գոյսն գրել՝ և յինքն գրաւել․ և ի գրելն՝ տեսին սնդուկ մի՝ ոսկի կողպայ (փականք) ի վերայ եդեալ և փակեալ, որոյ ասացին՝ թէ բա՛ց․ և Լալաբէկն ոչ եբաց, այլ ասաց շահին․ զայդ ամենայն, զոր գրեցեր՝ և զոր տակաւին գրելոց ես, բովանդակ ամենեքեան քո են՝ և ոչ իմ․ իսկ այս միայն է իմ; քանզի ի հայրենի տանէ իմմէ բերի զայս։ Արդ՝ խնդրեմ, զի զքոյն յորժամ առցես՝ զիմս ինձ շնորհեսցես։ Ապա հարկիւ բանալ ետուն զսնդուկն և տեսին զի ոչինչ կայր ի նմա, բայց միայն մէկ ջուխտ

մաշեալ և չորացեալ տրեխ՝ որ է չարուխ, և հնոտի և պատառոտեալ հեսկէք, և ամենեքեան եղեն զարմացեալք առ այն, վասն որոյ հարցանէին թէ զի՞նչ է այս. ասաց Ղալաբէկն. այս այն տրեխն է, զոր ի հայրենի տան իմում զգենուլի, և արդ՝ եղեալ եմ աստ՝ և հանապազ եկեալ տեսանեմ, և յիշեմ, և ասեմ, դու այն ես, որ զայս միայն ունէիր. և շահն բերեալ զքեզ յայդպիսի յաղքատութենէ յայսքան մեծութիւն հասոյց. արդ՝ զգոյշ լեր մի գուցէ գտցի նենգութիւն ի սիրտ քո վասն շահին. և այլոց չարախօսաց զնմանէ մի լիցիս համաձայն, և մի մոռանայցես զերախտիս նորա, զի մի այս ամենայն դառնայցէ քեզ հարամ, և լինիցիս սևերես առաջի Աստուծոյ և մարդկան։ Երբև լուաւ՝ և ետես զայս շահն՝ իմացաւ թէ վասն նախանձու չարախօսեցին զնա, զամենայն ինչս նորա ոչ էառ՝ այլ շնորհեաց իւրն, և ևս առաւել պատուով փառաւորեալ շքեղացոյց զնա, և գերագոյն հաւատարիմ ունէր ի դրան իւրում զնա՝ առաւել քան զամենեսեան, զամենայն աւուրս կենաց իւրեանց։

Գլ· ԺԶ·

Պատմութիւն վասն նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, թէ որպէս գտեալ եւ հանեալ եղեւ նա ի Փռանկաց. եւ թէ որպէս տարեալ եղեւ յԱսպահան քաղաք:

Ի ժամանակս առաջնորդութեան Մելքիսէթ կաթուղիկոսին, յետ մեծ սուրգունին, (աքսորանաց) եկին ի Ֆռանկաց աշխարհէն Ֆռանկ Պատրիկք յաշխարհս Հայոց, և մտին ի գաւառն Արարատու, և սկսան շրջիլ ի վանօրայսն Հայոց՝ որք կան ի գաւառին։ Եւ պարզամիտ ազգն Հայոց, ոչ գիտէին. թէ զինչ դիտաւորութեամբ շրջին նոքա, բայց նոքա ըստ մարդելոյզ և երեսահաճ և խաբուսիկ բարոյից իւրեանց զամենեսեան հաճեցուցանէին յինքեանս. որք և պատահեցան կաթուղիկոսին Մելքիսէթի՝ և ետուն նմա աղերս, և ոսկի դահեկանս, զի մի լիցի հետաքրքիր և կամ վրէժխնդիր գործոց նոցա. զոր առ յապայն առնելոց էին։

Ունէին Պատրիկքն ընդ իւրեանս գիրք մի որպէս զաշխարհացոյց իւրեանց գրովն և լեզուաւն, որ հաւաստեաւ և անվրէպ ցուցանէր թէ ուրանօր իցեն գե-

րեղմանք և դամբարանք սրբոցն՝ որք կան ի վանօրայս Հայոց, և զորպիսութիւն շինուածոց մատուռացն [1] և թէ յոր կողմն իցէ դուռն և լուսամուտն. և ի շրջիլն իւրեանց ի վանօրայսն, այն գլոմն գտանէին զնշխարս սրբոցն, և տային ինչս բնակչաց վանիցն՝ և զնշխարսն առնուին։

Եւ ի շրջագայիլն իւրեանց եկին ի գիւղն Կարենիս, իջին ի վանքն Առաքելոց, որ ի մէջ ձորոյն է շինեալ, և այն գլոմն գտին զգլուխն Անդրէի առաքելոյն, որ մինչև ցայն ժամանակն ոչ գիտէին բնակիչք վանացն՝ նա և ամենայն գաւառականքն, թէ ուրանօր իցեն գերեզմանք առաքելոցն. այլ միայն աւանդութեամբ լուեալ էին որդիք ի հօրէ և հաւուց՝ թէ անդէն կան գերեզմանք սուրբ Աւետարանչին Մատթէոսի և Անդրէի առաքելոյն, բայց զտեղին բնաւ ոչ գիտէին։ Իբրև գնացին Պատրիկքն ի վանքն, և փորեցին ի ներքոյ բեմին տեղի ինչ՝ ուր գիրն իւրեանց տայր զնշան. և ահա տեսին. բացեալ և յայտնեալ եղև գլուխ Անդրէի առաքելոյն որպէս և գիրքն տայր նշան յաղագս գլխոյն. և ընդ հանել գլխոյն, սոսկումն և զարհուրումն իմն անկեալ է ի վերայ Պատրեացն։ Իբրև հանեալ եղև գլուխն, նոյնժամայն եպիսկոպոս վանացն յափշտակեալ զգլուխն ի ձեռաց պատրեացն և ոչ է տուեալ, այլ զնոսա դատարկ արտաքս առաքեալ է ի վանացն։ Եւ սուրբ գլուխն Անդրէի առաքելոյն կայ այժմ ի նոյն վանքն, որ բազում անգամ ուխտ արարեալ և համբուրեալ եմք զնա։

Իսկ Պատրիկքն զկնի շրջագայութեանց յոլովից կամ սակաւուց եկին ի սուրբ Աթոռն Էջմիածին, և անդ օթևանս կալեալ կացին զբազում աւուրս, և ըստ մարդելոյզ հնարից իւրեանց հաւատարիմք երևեալք

---

1 Ուղ. մատրանացն.

յաչս վանականացն և գեղականացն՝ հաճեցուցեալ են զնոսա յինքեանս։ Եւ յամենայն աւուր զնային և գային Պատրիկքն ի տաճար սրբոց կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ. և երեքին տաճարքս այսոքիկ՝ եթէ Էջմիածնի, եթէ Գայիանեայ, և եթէ Հռիփսիմեայ, էին աւերեալ խախտեալ և խարխալեալ և անշքացեալ, իբրև զտաղաւար յայգւոջ մրգապահաց և իբրև զհովանի ի մէջ սեխենեաց ըստ մարգարէին Եսայեայ։ Եւ յԷջմիածին կային միայն միաբանք սակաւք, և այնք ևս յոյժ տգէտք և գռեհիկք։ Իսկ Գայիանեայ և Հռիփսիմեայ ամենևին անբնակ և անպարիսպ, նա և դրունք ևս ոչ գոյին եկեղեցեացն և խորանացն, և յարտաքուստ կողմանէ տանիսն բովանդակ և երեսք որմոցն քանդեալ, և հիմունքն խարխալեալ և խրամատեալ. և ի ներսի կողմանէ բեմն և յատակ եկեղեցւոյն քանդ.քանդեալ և բովանդակ եկեղեցին և խորանքն աղբովք անասնոց լցեալ, վասն զի յաւուրս ամառայնոյ և ձմեռայնոյ անասունք, որպէս եզինք և ոչխարք մակաղէին ի մէջ եկեղեցեացն, և Գայիանեայ տաճարի տանիքն բովանդակ իջեալ էր, և որմունքն միայն կային կանգնեալ և ոչ այլ ինչ։

Եւ ըստ սովորութեան իւրեանց Պատրիկքն անխափան երթային և գային ի տաճար սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ. և մատուռն գերեզմանին Հռիփսիմեայ խոր ի մէջ գետնոյն շինեալ կայր ի ներքոյ աւագ բեմին, և զբեմն ի վերուստ կողմանէ ի վերայ մատրանն կառուցեալ կազմեալ էին ի տեղւոջ իւրում ի մէջ աւագ խորանին։ Իսկ զդուռն կամ զլուսամուտ մատրանն ոչ ոք էր տեսեալ, զի ոչ էր յայտնի, քանզի շինող մատրանն և եկեղեցւոյն իմաստութեամբ էր արարեալ զառնելն իւր. զի զդուռն մատրանն և զնորին ճանապարհն ի կողմանէ էր թողեալ ի մէջ հիւսիսային խորանի եկեղեցւոյն. և ըստ չափու երկայնութեան և լայնութեան դրան

մատրանն, մեծ և անշարժելի վէմ մի, զոր ոչ ոք կարէր շարժել, կափեալ էին և սահմանեալ ի մէջ դրան մատրանն կափարիչ նմին. և այնպէս իմաստութեամբ հնարեալ էին, որ ոչ ոք իմանայր և կամ համարէր յայնմ տեղւոջ դոլ դրան կամ զվէմն կափարիչ նմին, այլ համարէին զվէմն իբրև զմի շարեալ վիմաց որմոյն։ Եւ ի մերս ազգէս ոչ ոք էր տեղեակ սոցա՝ ոչ մատրանն և ոչ դրան նորին. և Ֆռանկ Պատրիկքն գրով[1] իւրեանց գտեալք էին զդուռն մատրանն և զբազում երկս և զաշխատանս կրեալք են[2] ի վերայ կափարիչ վիմին թէ ի բաց բարձցեն, և ոչ են կարացեալք. և յետ բազում աշխատանաց խոկմանց և մտածութեանց, որ վասն բանալոյ դրանն, իբրև զփորձ առեալ են թէ ոչ լինի, ապա թողեալ են զդուռն մատրանն, և եկեալ ելեալ են ի բեմն ի յաւագ խորանն, և ի վերուստ կողմանէ բեմին առաջի և ի ներքոյ խորհրդանոցին, ըստ նշանակելոյ գրոյն իւրեանց զճանապարհ դրանն, հանդէպ նմին փորեալ են այնքան, մինչ ծակեալ են զառաստաղ ճանապարհի դրանն, և իջեալ ի ներքս ի մէջ ճանապարհին. և ապա այնքան աշխատեալ են ի ներքուստ և յարտաքուստ, մինչ որ զկափարիչ վէմն ոստուցեալ են ի տեղւոյն՝ և արտաքս ձգեալ ի մէջ հիւսիսային խորանին։

Յետ այսորիկ իջեալ են ի մէջ մատուռի գերեզմանին և զտապանաքար գերեզմանին թաւալեցուցեալ են ի բաց, և փորեալ զգերեզման կուսին Հռիփսիմեայ այնքան, մինչ հասեալ են ի տապան, յորոյ միջի կայր եդեալ սուրբ նշխարքն Հռիփսիմեայ. և առաւել ևս փորեալ են մինչ զտապան նշխարացն ոստուցեալ են ի բնական տեղւոյն և յամրութենէն։ Եւ ապա զտապանն լի

1 Ուղ. գրոց. — 2 Նոյն. էին.

նշխարօքն ի մատուռէն արտաքս բերեալ են ի մէջ մեծ եկեղեցւոյն՝ և կամեցեալ են առնուլ զնշխարսն։

Եւ ի խնամոց և յողորմութեանցն Աստուծոյ և յաջողթից սրբոյ Լուսաւորչին, ի նմին ժամու նոյն աւուրն երկուք ոմանք յեպիսկոպոսացն սուրբ Էջմիածնի, միոյն անուն Գրիգոր եպիսկոպոս, և միւսոյն՝ Վարդան եպիսկոպոս, ելեալ են ի զբօսանս շրջագայիլ. և շրջելով հասեալ են ի տաճարն սրբուհւոյն Հռիփսիմեայ, և յայնմ ժամու պատահեալ են ի վերայ՝ որ [1] Պատրիկքն զտապանն նշխարօքն բերեալ են ի մէջ եկեղեցւոյն՝ և կամէին առնուլ զնշխարսն, և ի հարցանելն եպիսկոպոսացն ընդ պատրեացն վասն իրացն՝ և [2] նոքա թէպէտ բանս ինչ յօդեալ և բարբանջեալ են, այլ անյարմար։ Իսկ եպիսկոպոսացն շրջեալ յեկեղեցին և զամենայն տեսեալ, ի վերուստ զծակն, և ի կողմանէ զդուռն, և զմատուռն, և թաւալեցուցեալ զտապանաքարն, և փորեալ զգերեզմանն. խռովմամբ և զայրացմամբ եկեալ են առ Պատրիկսն և արարեալ կագ և կռիւ և աղմուկ ընդ նոսա մինչ զմիմեանս հարկանել և վիրաւորել, որ և զգլուխ Վարդան եպիսկոպոսին հարեալ էին պատրիկքն և վիրաւորեալ. զի պատրիկքն երեք են լեալք, և եպիսկոպոսունքն երկու, և զսպի և զտեղի վիրացն եցոյց մեզ ի ժամանակս յայս, որ և զպատմութիւնս զայս նա պատմեաց մեզ, որոց ինքն ականատես էր, որոյ Տէր ողորմեսցի և թողցէ զյանցանս նորա։ Եւ եպիսկոպոսունքն ոչ են թողեալ առնուլ զմասն ինչ ի նշխարացն պատրիկքն յայնմ ժամու. և յետ մարանչելոյն և կռուելոյն, երկոքին եպիսկոպոսքն բարձեալ են զտապանն լի նշխարօքն՝ և բերեալ են յԷջմիածին, և պատրիկքն ևս եկեալ են ընդ նոսա յԷջմիածին։ Իսկ եպիսկոպոսքն զտա-

1 Ոսկ. մինչ. — 2 Նոյն. չէ· և.

պանն նշխարօքն լի եդեալ են ի մէջ հրապարակի, և ի լսել միաբանիցն ժողովեալ են ի վերայ. այլ և գեղականքն, և կաթուղիկոսն Մելքիսէթ ինքն իսկ։ Եւ որք եկեալ տեսանէին և իմանային, հիացեալ զարմանային և ասէին, մեք՝ որ ի հարց և ի հաւուց աստ ծնեալ եմք և սնեալ, յայսքան ժամանակս բնաւին ոչ եմք տեղեակ սոցա, [1] և սոքա այք օտարք նաև պանդուխտք, զիա՞րդ կարացին գտանել և առնել զայսպիսի գործ։ Եւ յաղագս եղելոց գործոյս եպիսկոպոսունքն և միաբանք վանացն յոյժ սրտմտութեամբ և սաստիկ բարկութեամբ վէճ եդեալ՝ և աղմուկ արարեալ կռուէին ընդ պատրեացն. և միայն կաթուղիկոսին, թէ դատապարտեսցէ զպատրիկսն, և վրէժխնդիր լինիցի նոցա. իսկ նա որ առեալ էր ի պատրեացն զոսկի դահեկանսն, ոսկեաւն այնու [2] կաշառակուր լեալ էր տեսարան մտաց նորա, ոչ եղև վրէժխնդիր, այլ թոյլ տուեալ անհոգ էր։

Եւ յայնմ ժամու պատրիկքն [5] ունէին ընդ ինքեանս՝ յառաջագոյն քսակս կազմեալ իմոյլաթէ՝ այսինքն ի մուշամբայէ. փութահացեալ յերեսպաշտութիւն կաթուղիկոսին. եկեալ յառաջ ի վերայ նշխարալի տապանին, և բացին զքսակն, և ոմն ի պատրեացն պատեաց զձեռն իւր մաքուր և սպիտակ դաստառակաւ՝ և առեալ ի նշխարացն ելից ի քսակն, և կամէին զամենայն նշխարսն առնուլ. և ի տեսանելն զայն եպիսկոպոսացն՝ լի եղեն ցասմամբ և բարկութեամբ, ի վերայ եկեալ հարին զպատրիկսն և ի բաց վարեցին. և ոչ թողին այլ ևս առնուլ ի նշխարացն՝ այլ յոլովն մնաց ի մէջ տապանին, և զգրլուխն ևս առեալ էին պատրիկքն, զայն ևս յափշտակեցին եպիսկոպոսքն և եդին ի մէջ տապանին։ Եւ ասէր

---

1 Ոսկ. չէ+. սոցա. 2 Ա.-Եփ. Երէց. այնմիկ 3 Նոյն. պատրիչք.

վերոյիշեալ [1] Վարդան եպիսկոպոսն, թէ ցորքան ոչ էին մերձեցուցեալ ձեռս ի նշխարսն, որակն և գոյն նշխարացն սպիտակ էր, [2] և յորժամ ձեռն մերձեցուցին՝ գոյն նշխարացն դարձաւ ի դեղնութիւն։

Եւ ի վերայ այսց ամենայնից սկսան լալ և ողբալ եպիսկոպոսունքն. և ասել առ կաթուղիկոսն բանս տըրտընջանաց և մեղադրանաց, թէ արդարադատն Աստուած լիցի քեզ վրէժխնդիր յաղագս նշխարաց սրբոցս, զի յաւուրցն սուրբ Լուսաւորչին մինչ ցայսօր ոչ էին խախտեալ կամ ուրեք ցրուեալ նշխարք սրբոցս այսոցիկ, և սոքա էին սկիզբն և հաստատութիւն հաւատոյս Հայաստանեայց, և լիութիւն և բարութիւն աշխարհիս, և դու այսօր ցրուեցեր։ Եւ յետ լալոյ և սգալոյն իւրեանց՝ եպիսկոպոսունքն բարձին զտապանն մնացեալ նըշխարօքն և դարձեալ տարան ի տաճար սրբուհւոյն Հռիփսիմեայ, և իջուցեալ ի մէջ մատուռին, և խորագոյն փորեալ զգերեզմանն եդին զնշխարալի տապանն ի մէջ գերեզմանին, և յամենայն կողմանց կրով և խճով մածուցեալք ամրացուցին. և ծածկեալ զգերեզմանն եդին ի վերայ զտապանաքարն։ Իսկ զդուռն մատուռին ո՛չ խցին, այլ մնաց ի բաց, որպէս և արդ տեսանի. և զծակն, զոր ի վերուստ ի բեմէն ծակեցին, զայն խցին, բայց խուզողացն յայտնապէս երևի ի ներքոյ ի ճանապարհէն. քանզի ի վերայ ծակին եդեալ քարինքն դեռ ևս սպիտակ են։

Իսկ պատրիկքն առեալ գ.քսակով նշխարսն սրբոյն Հռիփսիմեայ և գնացին ի քաղաքն Երևան, և խորհէին թէ ընդ որ ճանապարհաւ տարցեն յաշխարհն իւրեանց, քանզի հոռոմոց աշխարհաւն ոչ կարէին գնալ վասն երկիւղին Օսմանցւոց, զի մեծ թշնամութիւն և սաստիկ

1 Այլ. վերոյիշեցեալ. 2 Նոյն. չէր. էր.

մարտ պատերազմի գոյր յայնմ ժամանակի ի մէջ Օսմանւոց և ֆռանկաց, և [1] յայսմ պատճառէ ոչ կարէին Օսմանցւոց աշխարհաւն գնալ։

Եւ ապա եկին պատրիկքն Երևանայ և զնշխարն ընդ ինքեանս առեալ՝ եկին յերկիրն Նախչուանայ, ի գաւառն Երնջակու, ի գիւղն ֆռանկաց Ապարաներ. և անդ զնշխարսն արարեալ են երկու և երեք բաժին. և պատրիկքն ինքեանք մնացեալ են անդէն, և զերկու մասն նշխարացն կալեալ են առ ինքեանս և զմի մասն ընդ հաւատարիմ արս իւրեանց առաքեալ են ի քաղաքն Ասպահան, ի վանքն ֆռանկաց, զոր Հուսէնիա անուն կոչեն. քանզի երեք վանք կայ ֆռանկաց ի մէջ քաղաքին Ասպահանու. և բերողք նշխարացն բերեալ հասուցեալ են զնշխարսն ի Հուսէնիայ վանքն ֆռանկաց, և սնդկով ի տան միում պահեալ են, և սպասէին դիպող ժամու, զի առեալ տարցեն ի վերայ Բանդարու ի քաղաքն Գուայ՝ յերկիրն Փուրթուկէշին, զի անտի նաւով տարցեն ի բուն իսկ ի ֆռանկստան։

Եւ Պաւլիթ կաթուղիկոսն այս ամենայն եղելոցս ոչ էր գիտակ, քանզի յաւուրսս յայսոսիկ բնակեալ էր նա ի քաղաքն Ասպահան. ունէր և Պաւլիթ կաթուղիկոս ի Հայոց ազգէն՝ իւր [2] հաւատարիմ սպասաւոր այր մի՝ որում անունն էր Գրիգոր, ճարտար և զգոյշ ի սպասաւորութիւն և ի գործ իւր։ Եւ գիտէր այրս այս զլեզու ֆռանկաց՝ որ միշտ գնայր ի վանքն ֆռանկաց՝ և առնէր նոցա սպասաւորութիւն վասն մարմնաւոր օգտի իւրոյ. և յաւուր միում ի յըմպել գինւոյ, ի խնամոցն Աստուծոյ քաղցրացեալ են ի մէջ խօսիցն՝ և ընդ բազմաց բանիցն զայն ևս ասացեալ է նշխարաց բերող սպասաւորն ֆռանկաց ընդ կաթուղիկոսի սպասաւոր Գրի-

---

1 Ո–ն. չէ. և յայսմ . . . աշխարհաւն գնալ. 2 Նոյն. չէ. իւր.

գոլին, թէ գնացաք յաշխարհն ձեր՝ և տեսաք զաթոռն ձեր զէջմիածին՝ և անտի հանաք զնշխարս սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ և բերաք աստ, և ահաւանիկ կայ յայն իմն տան սնդկով, կամիմք տանիլ յերկիրն Փոր-թուկէշին, զի անտի տարցուք ի բուն իսկ ի Ֆռանկստան:

Իսկ իմաստուն և խոհական այրն՝ թաքուցեալ ըզ-բանն ի սրտի իւրում առ ժամուն՝ և հաճեալ չմիտս ասողին, բայց յերկրորդումն աւուր գնացեալ է առ կա-թուղիկոսն Դաւիթ՝ և յայտնեալ է զբանն՝ զոր լուաւ ի Ֆռանկացն:

Եւ ի ժամանակիս յայսմիկ յԱրարատու երկրէն բա-զում քրիստոնեայք ի Հայոց ազգէն և մանաւանդ Երե-ւանայ քաղաքի ժողովուրդքն բնակեալ էին ի մէջ քա-ղաքին Սպահանու, զերևելիս և զհաւատարիմ ոմանս ի նոցանէ կոչեաց Դաւիթ կաթուղիկոսն առ ինքն՝ և յայտնեաց նոցա զբանն. և նոքա յոյժ տրտմեցան, և շարժեցան ի նախանձ վրէժխնդրութեան: Եւ կաթուղի-կոսն և նոքա ի միասին գնացին ի մէջ Ջուղայեցւոց առ խօջայ Սաֆարն՝ որ էր աւագ Ջուղայեցւոց, ոչ միայն Ջուղայեցւոց, այլ և ամենայն ազգին Հայոց՝ որք կային ի ներքոյ թագաւորութեանն Պարսից. քանզի յոյժ ըն-դունելիք էին խօջայ Սաֆարս՝ և եղբայրն իւր խօջայ Նազարն առաջի Պարսից թագաւորին և իշխանացն նո-րա, և ծանուցին խօջայ Սաֆարին զայն գործ: Եւ խօ-ջայ Սաֆարն՝ և կաթուղիկոսն՝ և աղայ տէրտէրն, որ էր աւագ՝ Երևանեցւոց, ի միասին գնացին առ քաղա-քապետն՝ որում անունն էր Միրզայ Մահմատ, զոր շահն կարգեալ էր քաղաքապետ Սպահանու, վասն զի շահն ոչ էր Սպահան յայսմ ժամանակիս, այլ ի Թար-վէզ էր, նաև խօջայ Նազարն ևս անդ էր առաջի շա-հին: Եւ յետ ծանուցանելոյ քաղաքապետին՝ առեալ զօ-րականս ի նմանէ գնացին յանկարծակի ի վանքն Ֆռան-

կաց՝ և բացեալ զասացեալ տան դուռն՝ գտին զսնդուկն նշխարոցն։ Եւ առեալ բերին զնշխարալի սնդուկն առ քաղաքապետն, և նա կնքեալ է զսնդուկն իւրով մատանեաւն և տուեալ ցխօջայ Սաֆարն յաւանդ՝ առ ի պահել զնա մինչև ցգալն շահին և ի խնդրել զնա։

Զայս ամենայն գործոց անցուածք և որպիսութիւնք խօջայ Սաֆարն և Դաւիթ կաթուղիկոսն գրով ծանուցեալ են խօջայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ։ Եւ խօջայ Նազարն, քանզի համարձակ էր առաջի շահին, ծանոյց նմա, և խնդրեաց ի շահէն զթուղթ հրամանաց և ծառայ թագաւորական առաքել զկնի պատրեացն՝ որք զնշխարսն հանին, զի կալեալ զնոսա ածցէ առաջի թագաւորին, և շահն արար զամենայն կամս խօջայ Նազարին։ Բայց գործն այսպէս հանդիպեցաւ, զի զթագաւորական ծառայն, զոր պատրաստեցին ի գնալ՝ ազգաւ հայ էր և հաւատով քրիստոնեայ, դաւանութեամբն հայոց՝ որոյ բնական անունն էր Աւետիք, բայց միւս ևս մականուն մակագրեալ էին նմա Ալթուն. և զամենայն զոր ինչ պատշաճ էր գործառնութեանն այնմիկ, խօջայ Նազարն պատուիրեաց Ալթունին։ Եւ Ալթունս այս գնացեալ եհաս ի գաւառն Նախչուանու՝ և եմուտ ի գիւղն Փռանկաց Ապարաներ, և նոյնժամայն զեպիսկոպոսն և զերիցունսն և զերևելիս ի ժողովրդականացն Փրռանկաց կալեալ կապեաց՝ և արգել ի կալանս, և պահանջէր ի նոցունց ցուցանել զնշխարաց հանող պատրիկսն, իսկ նոքա ոչ-կամէին ցուցանել։ Բայց Ալթունն չարչարէր զնոսա և կախեալ բրածեծ առնէր, իսկ նոքա յակամայ ցուցին զնշխարաց հանող պատրիկսն, որոց անուանքն էին պատրի Գլէլուն, և պատրի Արքանջելի։ Այնուհետև կարի ստիպով պահանջէր զնշխարսն ի նոցունց, իսկ նոքա ոչ կամէին ցուցանել, բայց Ալթունն սկսաւ կախել և սաստիկ բրածեծ առնել, և խստագոյն

չարչարել, և տանջել զնոսա· և այնպէս զբազում աւուրս անողորմ չարչարէր զնոսա զի ոչ ցուցանէին զնշխարսն։

Եւ յաւուր միում մինչ կախեցին ի գեղական երիցանց գեղջն այնմիկ զոմն երեց, և զբազում ժամս հարկանէին անողորմ, կայր և երիցունն այնմիկ եղբօրորդի մի փոքրիկ տղայ, որ առ ընթեր նորա կանգնեալ աղիողորմ լայր· և տղայս այս ի հարցանել արանցն, որք անդր կային, թէ զի՞ վասն կախեալ հարկանեն զտէրտէրն իմ և արքն ետուն պատասխանի մանկանն, թէ նշխարք սրբոց բերեալք են ի գիւղս՝ և զայն խնդրեն ցուցանել, և մեք ոչ եմք տեղեակ ուր ցուցանեմք, վասն այնորիկ կախեալ են և հարկանեն։ Եւ տղայն կրկնեալ ասաց նոցա· ապա զի՞նչ է այն, որ կայ ի ներքսագոյն տան մերում, ուր յամենայն աւուր ճրագ վառեն առաջի նորա։ Եւ մինչ ցայս վայր Ալթունն բնաւ ոչ է խօսեցեալ Հայերէն, և կամ զինքն Հայ ձևացուցեալ, և ինքն ևս ի մէջ արանցն կանգնեալ էր, յորժամ տղայն ասաց զայն բանն։ Եւ ի լսելն իւր Ալթունն ի տղայէն զբանն զայն, ի նմին ժամու դարձաւ առ տղայն և խանդաղատանօք խօսեցաւ ընդ նմա՝ և ասաց· զի՞նչ ասացեր որդի, մեկ էլ [1] ասա· և տղայն կրկնեալ միւսանգամ ասաց զբանն։ Եւ ապա ասաց Ալթունն առ տղայն· եթէ զասացեալդ ցուցանես ինձ, զտէրտէրն քո արձակեալ թողում· և քեզ և քո տէրտէրին կապայ հագուցանեմ խլղաթ· ապա թէ ոչ՝ այնչափ ծեծեմ զտէրտէրն քո՝ ուր [2] ի ներքոյ փայտի մեռանի։ Ապա ինքն Ալթունն կալեալ զձեռանէ տղային· ասաց· եկ որդեակ՝ երթիցուք ի տունն ձեր և զասացեալդ ցոյց ինձ· և հասեալ ի տունն մտին տանէ ի տուն մինչև ցներսագոյն տունն՝ ուր կայր նշխարքն· և ետես Ալթունն ի բարձր

1 Ուղ. միւսանգամ· նոյն· մինչ զի։

տեղւոջ հանգուցեալ կին՝ և մաքուր զգեստուք ծածկեալ՝ և ճրագն առաջի նորա ի վառ կայր. և Ալթունն ի բաց էառ զամենայն ծածկոյթն և ետես, որ ստոյգ նշխարքն էր։ Եւ ինքնին առեալ ի գիրկն իւր ի դուրս եբեր. և ըստ իւրում խոստմանն որ առ տղայն, եթող զերէզն. և զխոստացեալ կապայսն պարգևաց երիցուն և տղային։

Եւ այնուհետև սկսաւ Ալթունն խստագոյնս չարչարել զայլ կալանաւորսն՝ և մանաւանդ զնշխարաց հանող պատրիկսն, և յոչ ըմբերել դառն տանջանացն, ասացին՝ թէ այլ ոչ գոյ բաց յայնմ միոյն, զոր ի լեառն պահեալ եմք, այժմ ի ցերեկի համբեր, զի ոչ լինի. և ի գիշերի գնացեալ ի տեղին՝ հանեալ տացուք քեզ։ Եւ [1] զանուն լերինն՝ յորում զնշխարս թաքուցեալ են՝ Բոլու կոչեն ամենայն աշխարհն այն, որ մերձ է գեղջն Ապարաններոու, որ է բարձր քարանձաւ լեառն։ Եւ յորում գիշերի գնացին պատրիկքն ի լեառն, գնաց և Ալթունն ևս ընդ նոսա։ Եւ յորժամ զնշխարն թաղեալ են անդ, նշանօք բևեռաստեղն թաղեալ են. և այժմ ևս սկսան նշանօք բևեռաստեղն երթևեկս առնել, և այնքան երթևեկս արարին այսր և անդր, մինչ հաւաստեաւ ի վերայ թաղեալ տեղւոյն եկեալ կացին. և ապա հրամայեցին սպասաւորացն փորել զտեղին. և ի զբաւ փորելոյն տեսին արծաթեայ թաս մի լի նշխարօք, և առեալ զայն ևս ետուն Ալթունին. և Ալթունն առեալ զնշխարսն և զպատրիկսն դարձաւ ի գիւղն Ապարաներ. և պահանջէր ի նոցանէ զայլ ևս նշխար. և նոքա առաջի անկեալ լային և սոսկալի երդմամբ երդնուին, թէ այլ ոչ գոյ։

Եւ ինքն Ալթուն էր ի գեղջէն Աստապատու՝ որոյ

---

1 Ոռ. զի.

և տունն անդ էր, ելեալ յԱպարաններ գեղջէն՝ ընդ իւր առեալ զնշխարքն և զնշխարաց հանող պատրիկսն, և եկեալ ի գիւղն իւր յԱստապատ։

Յաւուրս յայսոսիկ պատահեցաւ սրբոյ վարդապետին Պօղոսի լինիլ ի գիւղն Աստապատ, և զպատմութիւն այս վարդապետին արարեալ եմ յառաջիկայդ յայսմ շարադրութեանս, առ որ գնացեալ Ալթունին և տարեալ առաջի զամենայն նշխարսն և ասաց վարդապետին՝ առնուլ իւր բաժին, և վարդապետն առեալ ի նշխարացն մասն մի ի չափ մատին միոյ. և զայլն ժողովեաց Ալթունն առ ինքն։ Զայս ևս ասաց Ալթունն առ վարդապետն. եթէ ոչ լինիս ինձ մեղադիր վասն պատրեացս, զմարմինս սոցա աստէն թողեալ, և բարձեալ ի սոցունց զգլուխսն միայն տարայց առ Թագաւորն։ Իսկ վարդապետն սուրբ՝ իբրև ի վերայ քրիստոնէից՝ գթացեալ ի վերայ պատրեացն ոչ եթող Ալթունին առնել զասացեալն։

Եւ զմասն նշխարացն, զոր էառ վարդապետն յետ ամաց ինչ գնաց ի քաղաքն Նախչուան, և է մերձ նմին քաղաքի փոքրիկ գիւղ մի, զոր Քուլթափայ կոչեն. և մինչև ցժամանակն յայն ոչ գոյր ի գիւղն յայն եկեղեցի. և անդէն հիմն արկեալ եկեղեցւոյ և եդ ի հիմունս եկեղեցւոյն զնչխարն զայն. և ի վերայ նորա շինեալ աւարտեաց զեկեղեցին։ Եւ յաւուր օծման եկեղեցւոյն անուանեաց զանուն եկեղեցւոյն սուրբ Հռիփսիմեայ. և կան այժմիկ սակաւ հայազուն քրիստոնեայք ի գիւղն յայն՝ հաստատեալ ի վերայ եկեղեցւոյն։

Իսկ Ալթունն ելեալ յԱստապատու՝ առեալ ընդ իւր զպատրիկսն և զնշխարն և գնացեալ եհաս ի Թարվէզ՝ և մատոյց առաջի խօջայ Նազարին զնշխարսն և զպատրիկսն. և խօջայ Նազարն ծանոյց շահին, և խնդրեաց ի շահէն, և ասաց. յաջողումն բախտի Թագաւորիդ մե-

լոյ ո՛չ եթող գնալ նշխարացն այնոցիկ[5] ի Փռանկստան։ զի թէ գնացեալ էր, ամենայն ազգն Հայոց զկնի նորա գնային, քան զի ազգն Հայոց ամենեքեան կախեալ կան զնմանէ, և մանաւանդ ժողովուրդքն Ջուղայեցւոց և Գողթան գաւառին, յորոց բազումք են վաճառականութեամբ այժմ ի Փռանկստան, և հազիւ թէ դառնային նոքա յայս աշխարհ։ Եւ խնդիր մեր այս է յարքայէ, մի գուցէ բաժանեսցի մասն ինչ ի նշխարացս յայսցանէ, և թէ լիցին Փռանկունքն առեալ ի սմանէ, զայն ևս առեալ ի նոցանէ մեզ տացէ, զայս բան նախ քան զօր քննութեան դատաստանին ասաց խօջայ Նազարն ընդ շահին։ Իսկ շահն արար պատասխանի, թէ որովհետև յօժարութիւն կամաց Ջուղայեցւոց այդպէս է. յաղագս յօժարութեան նոցա, և ի շնորհ երեսաց քոց արարից որպէս ասացերդ։

Եւ յաւուր յորում նստաւ շահն ի դատաստան, եբեր Ալթունն զնշխարն և զպատրիկսն առաջի շահին, և շահին հարցեալ տեղեկացաւ ամենայնի. և զպատրիկսն եթող առանց պատուհասի, քանզի ի ժամանակին յայնմիկ դաշն խաղաղութեան ուխտեալ և հաստատեալ էին շահն և թագաւորն Փռանկաց ընդ միմեանս, և ի շնորհուկս առնելով նոցա ոչ պատժեաց ըզպատրիկսն, այլ ի բաց արձակեաց առանց պատժոց։ Իսկ պատրեաց զհամարձակութիւն առեալ ի ներողութենէ շահին, ասացին առ շահն. զայդքան աշխատութիւն և և զնեղութիւն՝ զոր կրեցաք մեք յաղագս նշխարացդ, խնդրեմք զի զմասն ինչ ի նշխարացդ պարգևեսցէ մեզ արքայ, պատասխանի արար նոցա շահն հիացական մեղադրութեամբ ասելով. զորո՞ց զինչսն առեալ տաց ձեզ, զի զայս նշխար՝ զոր խնդրէք, Հայոց է, և ո՛չ իրա-

5 Ա.—Էջ. Երէց.․ այնմիկ.

ունք վկայեն թէ զինչս նոցա առեալ ձեզ տաց, և ապա շահն արար զհրաման տալ զնշխարսն զամենայն ցխօջայ Նազարն, որ եղև այնպէս։

Յետ այսորիկ կամեցեալ է շահն առաքել զնշխարսն ի քաղաքն Սպահան՝ և խօջայ Նազարին ևս ասացեալ է թէ՝ այսպէս կամիմ առնել, և նա ևս հաւանութիւն տուեալ է այսմ։ Եւ ապա գրեալ է շահն թուղթ յՍպահան առ խօջայ Սաֆարն, թէ յաղագս շնորհի երեսաց ձերոց՝ և ըստ յօժարութեան սրտից ձերոց, առի զնշխարս. սրբոցն ձերոց ի Փռանկաց՝ և պարգևեցի ձեզ, և արդ՝ առաքեցի առ քեզ յաւանդ պահեստի. արդ՝ ընկա՛լ զդա և պահեա՛ ցորժամ խնդրեցից, բերցես առաջի իմ. և խօջայ Սաֆարն առեալ և ընկալեալ զնշխարսն և ի տան իւրում պատրաստեալ տեղի պատշաճաւոր, և անդ էր հանգուցեալ, և ըստ արժանւոյն սրբութեանցն յամենայն աւուր պաշտէր զնոսա անուշահոտ խնկօք և պայծառ մոմեղինօք, որքան ինքն և որդիքն կային, և այժմ թոռունքն իւր, և կայ անդէն մինչև ցայսօր։

Արդ՝ նշխարք սրբուհւոյն Հռիփսիմեայ այսպէս հանեալ եղև ի Փռանկաց, և այսպէս եկեալ եղև յՍպահան քաղաք։

Իսկ նշխարաց հանող պատրիկքն՝ զորս արձակեաց շահն, ելին ի Թարվիզու և գնացին միւսանգամ ի Նախչուան՝ զի վերստին գնասցեն ի գաւառն Արարատեան ի խնդիր նշխարաց սրբոց։

Եւ պատրիկքն մինչ տակաւին էին ի գաւառին Նախչուանու՝ յաւուր միում պատահեցան տեսութեան Մախսուտ սուլթանին՝ որ էր իշխան Նախչուան քաղաքին և ամենայն գաւառաց նորին, և ի յաճախել բանից և խօսից ի մէջ նոցա, որ վասն հաւատոց, ասացեալ է սուլթան ընդ պատրիկսն. ապա զպատգամաբերսն մեր

զՄահմետ ամենևին ո՛չ պատուէք և ընդունիք, և ի նմին ժամու հանդէպ նոցա նստեալ էր շուն մի. և ոմն ի պատրեացն ձգելով զձեռն հանդէպ շանն և ասաց, զի՞նչ է Մահմետ զի պատուեսցուք զնա՝ եթէ Մահմետ և եթէ շունն այն զուգահաւասարք են. և ի վերայ այսմ բանի՝ սուլթանն և ամենայն արք և ծառայք նորա ի խոր խոցեալ են և մահու չափ վիրաւորեալ, բայց զոխն ի սիրտս իւրեանց թաքուցեալ են առ ժամանն և ոչ բերեալ յերեսս,

Իսկ պատրիկքն յետ աւուրց յոլովից կամ սակաւուց՝ ելեալ ի Նախչուանայ գնացին յԵրևան, և անտի ելեալ են զի գնասցեն ի Գեղարքունի, և յորժամ հասեալ են ի լեառն զոր Սուլէյմանայ սար ասեն, յետուստ կողմանէ եկեալ են զկնի նոցա արք հինգ հեծեալ՝ ազգաւ Ղզլպաշ, հասեալ են պատրեացն, և մինչ խօսելով ընդ նոսա երթային զճանապարհայն, և անդէն յանկարծակի հարեալ են սրով և սպանեալ զերկոսին պատրիկսն՝ որք էին Հռիփսիմեանց նշխարաց հանողքն։

Կայր այլ և ոմն աշխարհական այր ընդ նոսա, որ էր սպասաւոր պատրեացն, և անուն նորա Աշամիր, յԱպրակունիս գեղջէն Փռանկաց, և այրս այս ի սպանմանն պատրեացն ինքն փախուստ առեալ է ի կողմն քարանձաւի միոյ, և ոմն ի Ղզլպաշ զինուորացն ընթացեալ զկնի նորա, և անդէն հարեալ է զնա սրովն ի գլուխն, ի պարանոցն, յուսն և ի յարմունկն. և վիրաւորեալ այրն անկեալ ի գետնի ձևացուցեալ զինքն թէ մեռայ. և զինուորին ևս համարեալ է զնա թէ ստուգիւ մեռեալ է, վասն որոյ հարեալ է զայրն ոտիւքն և ի բարձանց ի գլխոյ քարանձաւին արկեալ է զնա ի ներքոյ վիմին, և ինքն գնացեալ առ ընկերս իւր. և զինուորքն՝ որք զայս գործեցին, առին զինչս նոցա՝ որոց և հաւանեցան. և գնացին ուր և կամեցան։

Եւ այս Ղզլպաշ զինուորքս՝ որք զպատրիկսն սպանին՝ ոմանք ասացին, թէ ի Մախսուտ սուլթանի զօրականացն էին, որք վասն անարգանաց Մահմետին, զոր անարգեցին պատրիկքն՝ և ասացին, հաւասար գոլ զնա շան, առաքեաց Մախսուտ սուլթանն՝ թաքուն սպանանել զնոսա, և զինուորացն եկեալ այնպէս արարին։ Եւ ոմանք ասացին, թէ այն պատրիկսն սպանող զօրականքն էին ի զօրականաց Ամիրգունայ խանին, որ էր տէր գաւառին Էջմիածնի, առաքեաց զնի պատրեացն սպանանել զնոսա, վասն երկու պատճառի։ Նախ՝ ի վրէժխնդրութիւն Նշխարաց[1] սրբոյն Հռիփսիմեայ՝ որ յերկրէն Ամիրգունայ խանին հանին զնշխարսն և տարան յայլուր. և երկրորդ՝ ասացին թէ լուեալ էր Ամիրգունայ խանն, թէ ընդ պատրեացն այնոցիկ կան բազում գանձք ոսկւոյ և արծաթոյ, վասն գանձուցն առաքեալ զօրականս և սպան զնոսա և էառ զգանձն։ Արդ՝ եթէ ի Մախսուտ սուլթանէն, և թէ յԱմիրգունայ խանէն՝ և թէ ուստի և իցէ, եկին զինուորք ոմանք՝ և սպանին զպատրիկսն, և զսպասաւոր պատրեացն վիրաւորեալ արկին ի ներքոյ քարանձաւին։

Եւ մեք յորժամ եղեալ ի խնդիր պատմութեանց շրջէաք, գնացաք յերկիրն Նախչուանու ի գաւառն Երնջակ, և[2] ի գիւղն Ապարաներ. պատահեցաք և առնս այսմիկ Աշամիրխս, և տեսաք զինքն և զտեղիս, և զսպիսն վիրացն, և նա պատմեաց մեզ զպատմութիւնս զայս։ Եւ զնի ասաց՝ թէ յորժամ արկին զիս ի քարանձաւէն ի վայր՝ ընկեցայ ես ի մէջ Ջրոյ գետոյն և էր գետն այն[3], զոր Կոթայ գետ ասեն, և Ջուր գետոյն առեալ տարաւ զիս՝ և էարկ ընդ դէմ վիմի միոյ, և վէմն այն եղև ար-

1 Ոաչ. չիք. Նշխարաց. 2 Նոյն. չիք. և. 3 Նոյն. չիք. էր գետն այն.

գեղիչ ինձ, և արգել զիս մինչ ի մթանալ երեկոյին ցելս ատեղաց: Եւ այս ամենայն եկին ի վերայ իմ, և ես կայի կենդանի շնորհօքն Աստուծոյ, և գիտէի զամենայն, որ ինչ պատահէր ինձ. և ողորմութեամբն Աստուծոյ ոչ խեղդեաց զիս ջուր գետոյն. և ընդ մթանալ երեկոյին, ելի ի գետոյն, և գնացի. և ոչ գիտէի թէ ուր գնամ, բայց ի գնալն իմ պատահեցայ բազմագնաց ոտնակոխ ճանապարհի միոյ, և խորհեցայ յանձն իմ, թե ի վերայ ճանապարհիս կացից, զի ի յանցորդաց սորին հարցեալ գիտացից թէ զինչ պարտ է ինձ առնել. և եղև զի ընդ արշալոյս առաւօտուն, եկին արք ոմանք գրաստուք՝ Հայ ազգաւ, և գնային ի գիւղ ուրեմն. և ես ելեալ խառնեցայ ընդ նոսա. և նոցա գիտացեալ զամենայն պատահումն, որ առ իս, եդին զիս ի վերայ գրաստու՝ և հասուցին ի գիւղ մի՝ և ես պատմեցի գեղականացն զամենայն: Եւ ի գեղականացն ոմանք գնացին ի տեղի սպանման պատրեացն, և տեսին զպատրիկսն սպանեալ, և ամենայն զգեանք, և թուղթք, և զգեստք նոցա ցրուեալք ընդ երեսս անապատին: Եւ անդէն ի վերայ ճանապարհին փորեցին վիհ՝ և ընդ հողով արարեալ ծածկեցին զնոսա. և ես մնացի ի գիւղն մինչև ողջացան վէրքն իմ և ապա ելեալ եկի ի տուն իմ: Արդ՝ այս Աղամիր անուն այրս, որ տեսող էր ամենայն գործոցն՝ պատմեաց մեզ ի տեղւոյն, որ ելեալ են ի Նախչուանայ մինչև ցայս վայր:

Իսկ զկնիս, զոր արդ պատմեմք, Մարտիրոս անուամբ ոմն եպիսկոպոս պատմեաց՝ զոր ինքն էր աչօք տեսեալ: Ասէր՝ թէ յաշխարհէն Փռանկաց եկն [1] միւս այլ պատրի, անուն Մելքիոր. և պատահեցաւ տեսութեան շահին, որ էր յայնժամ ի Թարվէզ. և ի Թար-

[1] Անտ. Երեւ. եկեալ:

վիզու ելեալ շահն ամենայն բանակաւն իւրով եկն յերկիրն Գեղամայ, եկն ընդ նոսա և պատրիկն Մելքիոր, քանզի իբր զդեսպան եկեալ ձևանայր, և պատիւ ունէր ի շահէն, և էր այր մեծազգի և փառաւոր՝ և յոլովս խօսէր ընդ նմա շահն։ Եւ ի մէջ խօսիցն յաւուր միում ասացեալ է Մելքիորն ընդ շահին, թէ յառաջն ժամանակաւ ոմանք ի մերոց պատրեացն եկեալ են յայս երկիրս, և յաւազակաց սպանեալ են և թաղեալ կան ի լերինս, և արդ՝ յօժարի կամք իմ հանել զոսկերս նոցա և տանիլ ի հայրենի գերեզմանատունս իւրեանց։ Իսկ շահն հեթանոս գոլով օրինօք և ազգաւ, և ոչինչ ունելով փոյթ զոսկերաց մեռելոց, պատասխանեալ է նմա, դու գիտես։ Եւ ապա Մելքիորն առաքեալ է զոմանս ի տեղին, որ հանեալ են զոսկերս Գղէլումին և զընկերին, և առ ինքն բերեալ, և ինքն ընդ իւր տարեալ է ի բուն Ֆռանկստան յերկիրն իւրեանց՝ իբրև զնշխարս մարտիրոսի։ Եւ այս ևս այսպէս։

Եւ ժամանակս՝ յոր այժմս կամք մեք, է թուականն մեր Հայոցս ՌՃԼ· յորում և զպատմութիւնս շարադրեալ գրեցաք, պատահեցաւ մեզ գալ ի մեծահանդէս քաղաքն Սպահան. քանզի եկեալ էր աստ խոհական, և մեծահոգի, և արժանաժառանգ հայրապետն ամենայն Հայոց, կաթուղիկոսն սրբոյ էջմիածնի տէր Յակոբ առ ի տեսութիւն և յայցարարութիւն բանաւոր հօտին Քրիստոսի՝ որ հաւատացաւ նմա, այլ և ի նուիրակութիւն սրբոյ Էջմիածնի. այլ և ի գործոց մարմնականաց յարդարումն, որ ի դուռն արքունի. որոյ ի սպասաւորութիւն եկեալ էաք յոլովք. որով և գնացաք ի տուն խօջայ Սաֆարին յուխտ և յերկրպագութիւն նշխարաց սրբուհւոյն Հռիփսիմեայ, և այլ յոլով նշխարաց՝ որք կան անդր, և բացեալ զնշխարսն տեսաք զամենեսեան՝ և կատարեալ զուխտն՝ արժանացաք օրհնութեանց

սրբոցն։ Ոմանք յերևելի արանց Ջուղայեցւոց ասացին մեզ զայլ ևս պատմութիւնս սակաւս. և շարադրութիւնս պատմութեանց նոցա էր այսպէս։

Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ՝ զոր յառաջդ պատմեցաք, եկեալ է շահն յԱսպահան, և ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ի տուն խօջայ Սաֆարին, պատահեալ են և անդ ոմանք պատրիկք Փռանկաց՝ որք էին ի կարգէ վերոյասացեալ պատրիկ Գլէլումին. և ի մէջ խօսից յիշեալ են գնչխարս սըրբոց Հռիփսիմեանց, և բերեալ են զամենայն նշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ առաջի շահին ի տեսութիւն ամենեցուն։ Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատեհ ժամ գտեալ են պատրիկքն. և ի շահէն խընդրեալ են իբրև զպարգևս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ։ Եւ շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն, և զայն ևս դանակաւն հարեալ է և կտրեալ, զկէս ոսկերն դարձեալ ձգեալ է ի մէջ այլ ևս նշխարացն, և զկէսն տուեալ է ի պատրիկսն, և նոքա առեալ են և ամփոփեալ յինքեանս։ Եւ զայլ ևս նշխարսն զհասարակն, հրամայեալ է խօջայ Սաֆարին տանել և պահել. և նա բարձեալ ի միջոյ՝ և տարեալ ի տեղին ուր յառաջն եդեալ էր, և կայ անդէն մինչև ցայսօր։ Իսկ վասն մասին, զոր այժմ առին պատրիկքն՝ տարեալ են ի Բանդարայ աշխարհն՝ ի քաղաքն, որ կոչի Գուայ, շինեալ են վանք ի նմին քաղաքի, և զմասն այն եդեալ են ի հիմունս եկեղեցւոյ այնմ վանացն. և է վանքն այն այժմ կուսանաց վանք, յորում բնակեալ են բազում ճգնաւոր կանայք։ Արդ՝ օրհնեալ է Աստուած յամենայն ժամ [1]։

1 Ուղ. չէ+. Արդ՝ օրհնեալ է Աստուած յամենայն ժամ։

ԳԼ. ԺԼ.

Թէ որպէս կամ յինչ պատճառէ տարան յԱսպահան քաղաք զԱՋՆ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ զքարինքն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Մեծ Թագաւորն Պարսից առաջին Շահաբասն, որ զազգս Հայոց արտասահման արար ի բնիկ աշխարհէն Հայոց, և վարեաց յաշխարհըն Պարսից, այնու դիտաւորութեամբն՝ որպէս զի աւերեսցէ աշխարհն Հայոց՝ և շինեսցէ աշխարհն Պարսից, և նուազեսցէ ազգն Հայոց՝ և բազմասցէ ազգն Պարսից: Եւ զի էր Շահաբասն ինքն այր զգոյշ և նախահոգակ, և յար և հանապազ խորհէր՝ և խոկայր, թէ օրպիսի հնարս հնարեսցէ վասն ազգին Հայոց՝ զի մի դարձցին յաշխարհն իւրեանց, այլ մնասցեն յաշխարհն Պարսից: Վասն զի ժողովուրդքն Հայոց, այնք, որք յաշխարհին Հայոց ծնեալ էին, յոյժ բաղձային գնալ յաշխարհն Հայոց, վասն որոյ յաղագս գիւտի հնարից խոնարհեալ զիջանէր ի վեհական փառաւորութենէ իւրմէ Շահաբասն, և խօսէր ընդ ազգին Հայոց՝ որում և պատահէր, եթէ նշանաւոր երևելի արանց, և թէ փարթամաց՝ և եթէ աղքատաց, խօսեցուցանէր զժողո-

վուրդսն, և ինքն յակճիռս կացեալ մտօք ունկն դնէր բանից նոցա, և ի սիրտ իւր ժողովէր զանօրէնութիւն, և յղանայր զցաւս։

Եւ որպէս յառաջդ ասացաք. այլակերպէր զինքն շահն, և շրջէր ի փողոցս և ի պողոտայս ի լսել, թէ զինչ ասեն։ Մտանէր ի տունս տունս, և որում և պատահէր բանս ինչ առաջարկեալ խօսէր ի կողմանէ շահին՝ և ի կողմանէ ռիաթին (հպատակ), եթէ շահն խաղաղասէր և արդարադատ է, և ոչ թողու իշխանաց որ զուլում (հարստահարութիւն) առնեն ռիաթին։ Եւ մանաւանդ առաւել խնամակալ է ազգին Հայոց, որ զամենայն զգործ և զբանս նոցա ըստ կամաց նոցա կատարէ. և ընդէ՞ր ազգն Հայոց ոչ են ջերմադոյն և յօժար կալ ի յաշխարհիս Ասպահանայ. զի չէն աշխարհ է և իչէլի է. իսկ աշխարհն Հայոց Սահրատ է և բերան թշնամւոյ, և հանապազ աւար և գերութիւն։

Եւ բազում անգամ լուեալ է պատասխանի թէ յաշխարհին Հայոց ամենայն բարեաց լիութիւն և առատութիւն է և թեթևագին է, և աստ սուղ է և թանկագին. և անդ գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա. և վանօրայք, և ուխտատեղիք, ուր դամբարանք են սրբոց, և մանաւանդ մեծահանդէս Աթոռն սուրբ Էջմիածին, ուր կայ սուրբ աջն Գրիգորի Լուսաւորչին, որով օրհնի սուրբ մեռոնն. ուստի գնացեալ սփռէ յազգս Հայոց յամենայն աշխարհ, ուր և իցեն. վասն որոյ ամենայն ազգն Հայոց հնազանդին սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և կաթուղիկոսի նորա՝ որ անդ նստի։ Եւ զայս բանս ոչ թէ տգէտք և աննշանք ոմանք միայն ասացեալ են. այլ և նշանաւորք և գիտունք. Այլ և լուաք յոմանց թէ զայն ևս ասացեալ են, թէ կամի շահն որ հաստատուն մնան ազգն Հայոց յաշխարհիս Պարսից. պարտ է նմա բերել զաջն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին յԱսպահան,

և անդ շինել նոր Էջմիածին, զի լիցի օրհնել մեռոն, և անդ նստի[1] կաթուղիկոսն. և ապա ազգն Հայոց կայաւորեալ մնասցեն. քանզի ի վերայ Աջոյն և Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կան։

Արդ՝ օձն դարանակալ և խորամանկ թշնամին կենաց, և հոգւոց, և հաւատոց քրիստոնէից, որ յար հանապազ ի տարակուսի կայր վասն ազգին Հայոց. արդ ի նոցանէ լուաւ զատոյգ լուծումն տարակուսանացն։ Այնուհետև հաստատուն և անփոփոխելի եդ ի մտի իւրում քակել զսուրբ Էջմիածինն՝ և խափանել որ անդ զկաթուղիկոսութիւնն. և բերել զաջն Լուսաւորչին, և զքարինսն Էջմիածնի յԱսպահան, և անդ շինել նոր Էջմիածին. զի անդ նստցի կաթուղիկոսն, և անտի սփռեսցի մեռոն ընդ ամենայն աշխարհ. որպէս զի այնու մնասցեն ազգն Հայոց ի Պարսկաստան. այլ և շահք և մուտք ամենայն աշխարհաց ժողովեսցի ի քաղաք և յազգ իւր։ Վասն որոյ ի մէջ քաղաքին Ասպահանու նշանակեալ զատոյց տեղի՝ ուր շինել կամէր Էջմիածին. և էր տեղին այն մերձ այնմ այգւոյն որ բարբառովն Պարսից բաղիզրիշկ ասեն, այսմ այգւոյ[2] յարևմտից կուսէ յետուստ կողմանէ նորին, կից նմին այգւոյ։

Եւ յաւուր միում գնաց շահն ի նշանակեալ տեղին, էր ընդ նմա և խօջայ Նազարն՝ և այլք ոմանք ի Հայոց, ասաց շահն ընդ խօջայ Նազարին, վասն ձեր շինեմ աստ Էջմիածին, զի մի վասն այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, և հրամայեմ գնալ բազում ուղտ ջորի և սայլ, զի զքար և զհող այնր Էջմիածնի քանդեալ բերցեն աստ, զի այնու քարով և հողով շինեսցի այս Էջմիածինս, որպէս զի առանց իմիք երկբայութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վե-

1 Ոսկ. նստցի. 2 Նշն. չէ. այսմ այգւոյ.

րայ նոր շինեցելոյս։ Եւ այսու կերպիւ հնարեալ կամէր քանդել զսուրբ Էջմիածինն։ Իսկ խօջայ Նազարն քանդի ոչ կամէր զքանդումն սուրբ Էջմիածնի, զի կըսկիծ էր սրտի նորա. և առ ի խափանելոյ զխորհուրդ շահին, պատասխանեալ է այսպէս։ Թագաւորն ողջ կայցէ, եթէ կամք քո յօժարեսցի շինել զԷջմիածին գեղեցիկ և հաստատ, կարող ես յարծաթոյ և՛ յոսկւոյ շինել, թող թէ ի քարէ. և զինչ հարկ է յաղագս քարի և հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, և զայնքան ծախս ծախել ի վերայ նորա, որպէս զի ի հեռու և յօտար աշխարհէ քար և հող բերել։ Բաւական և բարւոք է այս աշխարհիս քարն և հողն, եթէ կամիս շինել, սրբօք շինեալ և ընդունելի է մեզ։

Իսկ ամենաթագաւորն Աստուած՝ որոյ թագաւորութիւնն միայն է յաւիտենական, որ և զանց առնէ զբազում խորհրդովք մարդկան, թագաւորաց, ազգաց և ազանց ըստ գրեցելումն թէ. «Տէր ցրուէ զխորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զխորհուրդս ժողովրդոց, և արհամարհէ Տէր զխորհուրդս իշխանաց։ Այլ խորհուրդ Տեառն յաւիտեան մնայ, և խորհուրդ սրտի նորա յազգէ մինչև յազգ», ոչ կամեցաւ զկատարումն խորհրդեան շահին յայնժամ, թէպէտ և անփոփոխելի գոյր հաստատեալ ի միտս նորա.[1] այլ[2] խափանեցաւ խորհուրդ նորա այսու պատճառաւ. զի հանդերձեալ էր նա գնալ յաշխարհն Վրաց ի վերայ թագաւորաց և ազգին նոցա, և բազում զօրօք, և յոյժ պատրաստութեամբ ելեալ յԱսպահանայ գնաց յաշխարհն Վրաց։ Եւ նախ ի Կախէթ եմուտ և զԹագաւորն Կախէթու զԹամրազ փախոյց և զերկիրն աւերեաց. և եկեալ եմուտ յերկիրն

1 Ոսկ. չէ+. անփոփոխելի գոյր հաստատեալ ի միտս նորա։

2 Նոյն. արդ.

Քառթլայ և բանակեցաւ ի վերին կողմն քաղաքին Գօրուս, ի վերայ ճանապարհին, որ գնայ ի Պաշիաչուխ. և խոկայր և սպասէր թէ որով հնարիւք ի բուռն ածեալ ըմբռնեսցէ զԹագաւորն Վրաց։ Զի [1] Թէպէտ Թագաւորն Կախէթու Թամրազ և Թագաւորն Թիֆլիզու Լաւասափ փախեան երկոքին ի Պաշիաչուխ, այլ Թամրազն ոչ խաբեցաւ և ոչ եկն առ շահն, իսկ Լաւասափ խաբեցաւ և հաւատաց շահին և եկն առ նա և նա տարեալ զնա ի Պարսկաստան՝ կորոյս, որպէս և յառաջագոյն զամենայն ուղխութիւնն պատմեցաք. արդ՝ այդքիկ այսպէս, Այժմ ասասցուք զպատճառ հակառակութեան կաթուղիկոսացն, զի նոցին հակառակութիւնն է պատճառ յԱսպահան տանելոյ քարանցն Էջմիածնի և Լուսաւորչի Աջոյն։

Ի ժամանակին՝ յորում շահն զմեծ սուրգունն արար և զազգս Հայոց վարեալ տարաւ յԱսպահան, գնաց ընդ նոսին և Դաւիթ կաթուղիկոսն յԱսպահան՝ և անդ կայր, Մելքիսէթ կաթուղիկոսն ևս գնաց ընդ սուրգունին, բայց կէս ճանապարհէն դարձաւ՝ և եկն յԷջմիածին՝ և առնէր զկաթուղիկոսութիւնն։ Բայց ինքն Մելքիսէթ կաթուղիկոսն ոչինչ բնաւ փոյթ ունէր վասն շինութեան, և պայծառութեան, և ժամակարգութեան, և հաստատութեան Էջմիածնի. այլ իւր [2] տեղի բնակութեան կալեալ յԵրևան քաղաքի ի Կաթուղիկէ եկեղեցւոջն, և ի վերայ իւր ժողովեալ զազգականս և զմերձաւորս իւր և նոքօք յօրանայր լոյծ և ընդարձակ կենօք, մտիւքն և արդեամբքն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։

Կային յայնմ ժամանակի և եպիսկոպոսունք ոմանք ի սուրբ Էջմիածին ի նոյն գեղջէն Էջմիածնի, որոց ան-

---

1 Յաւ. չէ. զի Թէպէտ , . . ի Պարսկաստան կորոյս.
2 Նոյն. ինքեան,

ուանքն էին Կարապետ՝ և Մարտիրոս և Յոհան, ընդ որս և այլք ևս եպիսկոպոսունք և աբեղայք, սոքա հոգային վասն Էջմիածնի և ցաւէին հանապազ՝ վասն անշքութեան, և ունայնութեան նորին, և զայրանային ընդ արարս Մելքիսէթ կաթուղիկոսին: Եւ բազում անգամ աղաչանօք՝ տրտնջմամբ՝ և զայրացմամբ ասացին, թէ մի թողուր զաթոռն այնպէս ունայն և անշուք, այլ յաթոռն նստելով կաց ըստ քում ախորժակաց, գոնեա զի միայն սատ լինիցիս, և այն ևս բաւական է մեզ և Աթոռոյս: Իսկ Մելքիսէթ յօրացեալ և ստուարացեալ գոլով պետական իշխանութեամբն՝ ստունգանէր և անկուշէր զամենայն ասացեալս նոցին: Իսկ եպիսկոպոսացն սրտնեղեալ ընդ աղօտութիւն և ընդ անշքութիւնն Էջմիածնի՝ և ընդ քամահանս բանից իւրեանց: Միակամ եղեալ ամենեքեան՝ ծանուցին իշխանի աշխարհին, Ամիրգունայ խանին, որոց ամբաստանութեամբն կալաւ խանն զՄելքիսէթ կաթուղիկոսն, և էառ վաթսուն թուման տուգանս, որոյ վերայ սրտամտեայ լեալ կաթուղիկոսն ի խանէն՝ ելեալ գնաց ի Վրացտուն իբր խռովեալ ի խանէն: Եւ յաղագս գնալոյ կաթուղիկոսին իշխանք և բարեկամք խանին մեղադիրք եղեն նմա, վասն որոյ և խանն զարս ոմանս առաքեաց զկնի Մելքիսէթին կոչնականս նմա, խոստանալով նմա պահել զնա պատուով՝ և կատարել զամենայն կամս նորա: Եւ ապա Մելքիսէթն դարձաւ՝ և եկն յԵրևան. և խանն առ ի շահել զսիրտ Մելքիսէթի՝ կալաւ զեպիսկոպոսունսն և էառ տուգանս: Այնուհետև Կարապետ եպիսկոպոսն եթող զաշխարհ և գնացեալ յանապատ կրօնաւորեցաւ, այս այն Կարապետ եպիսկոպոսն է զոր ի ճառի մեծ անապատին յիշեցաք. թէ եկեալ բնակեցաւ ի Սեւան կղզին: Իսկ վասն Մարտիրոս եպիսկոպոսին՝ Մելքիսէթ կաթուղիկոսն խնդրեաց ի խանէն, զի արտասահման արարեալ վարեսցէ յԵրա-

րատեան աշխարհէն, և խանն արար այնպէս. զի զգլխաւոր ոմն կարգեաց ի վերայ Մարտիրոս եպիսկոպոսին վարիչ, որ վարելով զնա տարաւ մինչև ցհին Ջուղայ, զգետն Երասխ անցոյց յայնկոյս, և ապա դարձաւ գլխաւորն։

Իսկ Մարտիրոս եպիսկոպոսն ոչ ուրեք արգելաւ՝ այլ գնաց յԱսպահան, և եմուտ, և յարեցաւ առ Դաւիթ կաթուղիկոսն, և օր աւուր ի ժամու և ի տարաժամու պատմէր առաջի նորա զարարսն Մելքիսէթի, և զաւերութիւն և զամայութիւն Էջմիածնի։ Սոյնպէս և առաջի ժողովրդականացն Ջուղայեցւոց և Երևանցւոց հանապազ խօսէր և ծանուցանէր. իսկ Ջուղեցիք, և Երևանցիք կարի վշտացան ընդ արարսն Մելքիսէթի և ընդ ամայութիւն Էջմիածնի, ժողովեցան առ Դաւիթ կաթուղիկոսն և հարկեցին զնա գնալ յԷջմիածին՝ տիրել և հոգալ զշինութիւն նորա. ասելով մեք օժանդակեմք քեզ յամենայն գործս և ի բանս, և Դաւիթ կաթուղիկոսն ելեալ յԱսպահանայ ընդ որում և Մարտիրոս եպիսկոպոսն եկին յԵրևան քաղաք և յԷջմիածին։ Եւ յաւուրս յայսոսիկ՝ յորում շահն ի Գօրի բանակ եդեալ նստեալ կայր, Դաւիթ կաթուղիկոսն և Մելքիսէթ կաթուղիկոսն երկոքեան ի միասին էին ի սուրբ Էջմիածին. բայց նախանձն, և ոխակալութիւնն, և հակառակութիւնն ոչ սակաւ յորդեալ առաւելաւ ի մէջ նոցա այսու պատճառաւ։

Քանզի Դաւիթ կաթուղիկոսն յառաջագոյն և նախ էր լեալ կաթուղիկոս քան զՄելքիսէթն. և աւուրբք և ալեօք ևս ծեր էր, նա և Դաւիթն էր օրհնեալ զՄելքիսէթն կաթուղիկոս, զի լիցի ինքեան ընկեր և ձեռնտու, բայց նա եղև խոչընդակն։ Եւ յետ ամաց ինչ, որ յառաջեաց Մելքիսէթն յանուն և ի գործ կաթուղիկոսութեան, միանգամայն յինքն կորզեալ գրաւեաց զիշխանութիւն կաթուղիկոսութեան և ինքն վարէր, և

զԴաւիթ հալածահարեալ և արտաքսեցեալ ի բացեայ արար յիշխանութենէ։ Իսկ որ Դաւիթն էր՝ ասէր ցՄելքիսէթն, Թէպէտ և ի բաց կացուցեր զիս յիշխանութենէ կաթողիկոսութեան, այլ զոնեա թերևս ծերութեան իմոյ գթա և խնայեա. և տուր ինձ օր աւուր դարման պիտոյից պարենի կերակրոց և զգեստուց, զի անցուցից զսակաւ մնացեալ ժամանակս ծերութեան իմոյ և մի վշտացուցաներ զծերութիւնս իմ։ Իսկ Մելքիսէթ զիրացեալ՝ և ստուարացեալ և յօրացեալ յիշխանութեան միջի, ոչ կամէր լսել Դաւթի. ըստ տէրունական առակին՝ որ վասն այրւոյն և անիրաւ դատաւորին պատմէ, զի զոր ինչ ասէր Դաւիթ՝ զբանիւ նորա Մելքիսէթն ստունգանէր։ Այլ և արք, որք Մելքիսեթեանք էին. եթէ խորհրդակիցք, և եթէ սպասաւորք, ի չմարդի կալեալ զԴաւիթ արհամարհանօք ունէին զնա, և բանս եպերանաց՝ և քամահանաց անգոսնելով ասէին նմա, ոչ թէ ի ծածուկ՝ այլ յայտնի, և յերեսս իւր [1] և ի վերայ սուղ ինչ կարեաց և պիտոյից վշտացուցանէին զնա ընդ վայր։ Եւ ընդ յոլով ժամանակաց տմարդութեան նոցա գործ, յայժ դառնացաւ Դաւիթ, զի բնաւ ոչ թուլանային ի բերտ բարուց իւրեանց. և մահու չափ վշտացեալ յոգի իւր. այնուհետև թախծեալ սրտիւ ելեալ գնաց ի Գօրի ի բանակն շահին. զի յանդիման եղեալ շահին ամբաստան լիցի զՄելքիսէթ կաթողիկոսէն։ Զի յայսմ ժամանակի տակաւին շահն իվրացտուն էր, մերձ քաղաքին Գօրու բանակեալ էր և նստեալ։ Եւ ինքն շահն զերկոսին կաթողիկոսքն կարի քաջ ճանաչէր, բայց զԴաւիթ առաւել ընդունէր քան զՄելքիսէթ, վասն զի ի ժամանակին՝ յորում զմեծ սուրգունն արար շահն երկոքին կաթողիկոսունքն գնացին

1 Ուղ. Նորին.

ընդ սուրգունին․ և յորժամ հասին յԱհար և ի Մուշկուն կոչեցեալ գաւառն, անտի Մելքիսէթ կաթուղիկոսն առանց գիտելոյ շահին դարձաւ յԵրևան և յԷջմիածին՝ և վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան թարց հրամանաց շահին։ Իսկ Դաւիթ կաթուղիկոսն գնաց ընդ սուրգունին յԱսպահան, և անդ յԱսպահան բազում անգամ հանդիպեալ շահին, և շահն ընդ նմա դլթով և քաղցրութեամբ խօսէր՝ մինչ որ հայր ես կոչէր զնա շահն․ եթէ կեղծաւորութեամբ և թէ ճշմարտութեամբ։ Արդ՝ դարձն Մելքիսէթին յԵրևան՝ ծանր թուեցաւ շահին, և գնալն Դաւթին յԱսպահան՝ դիւր թուեցաւ նմա [1] վասն այսորիկ առաւել ընդունէր շահն զԴաւիթ։ Իսկ Դաւիթ կաթուղիկոսն գնացեալ եհաս ի բանակն արքունի, և յաւուր միում եկեալ յանդիման եղեալ շահին, և ի տեսանելն զնա շահն ըստ նախկին սովորութեան գլթով և քաղցրութեամբ խօսէր ընդ նմա, և հարցանէր թէ զիա՞րդ կեաս ի կեանս քո դիւրութեամբ և անդորրութեամբ․ և Դաւիթն պատասխանեալ ասաց․ թագաւոր յաւիտեան կեցցես, թէպէտ և իցեն ինձ նեղիչք, և զառնացուցիչք, այլ տեսանելով զքաղցրութիւն և զվայելչութիւն երեսաց՝ և զմխիթարութիւն բանից քոց, մոռացումն և փարատումն լինի ամենայն վշտաց իմոց։ Եւ շահն հարցեալ է՝ ո՞վ է այն այր, որ զքեզ վշտացուցանէ․ պատասխանեալ է Դաւիթ բարբառովն այլազգաց՝ թէ սմուկ սաթան խալիֆէն․ որ է ոսկերաց ծախող խալիֆայ [2], սմուկ սաթան ասելով սկսեալ է յամբաստանութիւնն Մելքիսէթի՝ զի զարարս նորա յիշեալ է առաջի շահին, որ զնշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ յաղագս կաշառաց թոյլ ետ ֆռանկաց՝ զի տարան։ Այլ և արք ոմանք ասացին, թէ

1 Ոսկ․ չէ․ թուեցաւ նմա․ 2 Նոյն․ չէ․ խալիֆայ․

Դաւիթն զայս բանս ևս ասացեալ է առաջի շահին, եթէ ոչ երթիցէ Աջն Լուսաւորչին, և քարինքն Էջմիածնի յԱսպահան, անհնար է մնալ ազգին Հայոց յԱսպահան։ Իբրև լուաւ շահն զնշխարաց ծախելն՝ հետաքրքիր եղեալ տեղեկացաւ ամենայն ոլպխութեանցն. և ի վերայ արարմանցն Մելքիսէթի տխրեցաւ՝ և ի ցասումն և ի զայրացումն շարժեցաւ՝ այնքան մինչ ի պատիժս և ի տանջանս մատնեաց զՄելքիսէթ։

Ի սոյն ժամանակի տարաւ առ ինքն շահն զԱմիրգունայ խանն՝ մինչ էր ի Վրացտուն, ասելով՝ եկեալ ընդ մեզ կացցես ի գործս պատերազմիս ընդ դէմ Թըշնամեացս, և նա գնացեալ ի Վրացտուն կայր ի բանակի շահին։ Եւ շահն փոխանակ և տեղապահ Ամիրգունայ խանին առաքեաց զորդի նորին, որում անունն էր Թահմազղուլի բէկ, որոյ եկեալ յԵրևան քաղաք եմուտ ի բերդն՝ և անդ նստեալ պահէր զաշխարհն։

Եւ շահն ցասմամբ մեծաւ հրամայեաց գրել նոմոս արքունի հրամանաց ի վերայ Թահմազղուլի բէկին, և առաքել յԵրևան առ նա. և էր գոյացութիւն գրեալ բանին այսպէս։ Հրամայեալ է քեզ Թահմազղուլի. զի զՄելքիսէթ կաթուղիկոսն կալեալ տանջանօք չարչարեսցես, և զինքեան իսկ զմարմնոյ զմիսն կտրեալ ինքեան ուտեցուսցես։ Եւ ապա զՄելքիսէթն կապանօք, և զՀայոց ազգի Լուսաւորչի Աջն առիս առաքեսցես աստ։ Եւ զայս գիր ետուն իշխանի ումեմն Նազրի բէկ անուամբ, որ փութանակի հասոյց յԵրևան առ Թահմազղուլի բէկն։ Եւ Թահմազղուլի բէկն վաղվաղակի ի ձեռն ածեալ ըմբռնեաց զՄելքիսէթ կաթուղիկոսն՝ և սկսաւ չարչարել՝ և բազում սաստիւ խնդրէր զԱջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։ Իսկ կաթուղիկոսն և իւր միաբանքն անճար մնացին և ոչ գիտէին հնարել ինչ, վասն զի սաստիկ տագնապաւ խոշտանգէր զնոսա Թահմազ-

ղուլին· վասն որոյ ածին առաջի Թահմազղուլի բէկին զԱջն սուրբ Լուսաւորչին, այլ և ընդ նմին մէկ ոսկետուփ և մեծագին աւետարան, և մէկ արծաթեայ խաչ։ Եւ Թահմազղուլին առեալ զսոսա և զՄելքիսէթ կաթուղիկոսն, և եկն յԵրևան քաղաք։

Յետ այսորիկ բերին զՄելքիսէթն յԵրևանայ բերդի մէջն և ի վերայ գետնոյ տարածեցին զնա, և ի չորից կողմանց քարշեալ պրկեցին զնա՝ կապեալ ի ցիցս, և արկին յորսայս· և առեալ զբևեռաքաշս այսինքն քալբաթին, և այնու կտրեցին զմիսն ծղեացն, որ է թևերն, և զայն կտրեալ միսն եդին ի բերան նորին· և յերկուց կողմանց կանգնեալ փայտաւորք հարկանէին զնա և ասէին՝ ծամեա՛ և կուլ տուր· և Մելքիսէթն թէպէտ և ոչ կամէր՝ սակայն ի վտանգէն անճար մնացեալ՝ ծամեաց և եկուլ։ Եւ ապա աղաղակեաց մունետիկն՝ թէ կատարեցաւ հրաման թագաւորին ի վերայ խալիֆային, զի զմիսն իւր ծամեաց և եկուլ։ Զայս գործս և տանջանս արարին ոյլազգիքն ընդ Մելքիսէթին, յաւուրս պահոց փոխման Աստուածածնին։

Զկնի այսց գործոց, Թահմազղուլի բէկն պատրաստեաց զօրականս· որոց գլխաւորի անունն էր Նաջիրլու Ղուրաթ աղայ, և ետ ի նոսա զՄելքիսէթ կաթուղիկոսն կապանօք, ընդ նմին և զԱջն Լուսաւորչին, և զաւետարանն, և զխաչն։ Եւ նոքա տարեալ հասուցին ի բանակն արքային, և ծանուցին շահին, և նա հրամայեաց բերել առաջի իւր· և բերեալ բացին առաջի շահին զԱջն, և զաւետարանն, և զխաչն։ Եւ շահն մի մի ի ձեռս իւր առեալ տեսանէր· զաւետարանն, և զխաչն, և ապա զԼուսաւորչի Աջն· և հարցանէր թէ ստուգիւ ա՞յս է, և ապա համբուրեալ զԱջն եդ ի վայր։ Իսկ վասն Մելքիսէթ կաթուղիկոսին հաստատեալ էր շահն զկամս իւր զի սպանցէ զնա, բայց Ամիրգունայ

խանն յոյժ ընդունէր զՄելքիսէթն՝ զի բարեկամ էր նմա. յաղագս այնորիկ հնարեաց՝ զի զերեսին որդիսն իւր՝ որք էին նորաժամայն տղայք՝ առաքեաց առաջի շահին, որ առ ժամաւն անցանէր ընդ մէջ բանակին. և տղայքն զթուրս իւրեանց արկեալ էին ի վերայ պարանոցի իւրեանց՝ զորս ի տեսանելն շահին և ի հարցանելն՝ իմացաւ որ վասն Մելքիսէթին աղաչեն, զի մի սպանցէ, այլ և իմացաւ թէ Ամիրգունայ խանն հնարեալ է զայն. վասն որոյ զիջաւ ի կամաց սպանանելոյն: Զայս [1] գործ, որ արար Ամիրգունայ խանն յոլով աւուրբք յառաջ էր քան զբերելն Մելքիսէթին առաջի արքայի, որոյ աղագաւ ոչ արար շահն հրաման սպանանելոյ կամ տանջելոյ զՄելքիսէթ. յաւուրն յորում՝ յանդիման կացուցին զՄելքիսէթ, և զարբութիւնսն առաջի թագաւորին: Այլ [2] յետ տեսանելոյ սրբութեանցն, դարձուցեալ զբանս իւր շահն առ Մելքիսէթ կաթուղիկոսն ցասմամբ և զայրացմամբ՝ բազում բանիւ յանդիմանեաց զնա: Եւ ի զրաւ բանին ասաց. դատաստանն քո աստ ոչ լինի առնել, զի վնասն քո մեծ է, այժմ պարտ է քեզ գնալ յԱսպահան և անդ կալ մինչև ես եկեալ անդ՝ արարից զդատաստանն քո:

Արդ՝ աստանօր պարտ է մեզ սքանչանալ և հիացմամբ զարմանալ ընդ հատուցումն գործոցն՝ որ կատարեցաւ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին. զի սա [5] նախ՝ զԱստուծոյ օգնութիւնն անտես արարեալ՝ ի մարդ յուսացաւ, և ստունգանեաց զբանս օրինացն, որ ասէ անիծեալ որ դիցէ զյոյս իւր ի մարդ: Եւ երկրորդ՝ զի արհամարհեաց զՍրապիոն վարդապետն, որ վասն վճարելոյ զպարտսն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և վասն նորին նորոգութեան եկեալ էր ի Համթայ. այլ զյոյս

1 Ուղ. այս: 2 Նոյն. որև: 5 Նոյն նա:

իւր եղեալ ի շահն, ապաստան սրտի իւրոյ զնա արարեալ գնաց առ նա յԱսպահան, զի յապադայ ժամանակս բարութիւնս բազումս ընկալցի ի նմանէ, և [1] անտի բերեալ զնա յաշխարհս Հայոց զամենայն աշխարհ աւերեալ ծագէ ի ծագ անմարդաբնակ արար։ Եւ այսօր ինքն ևս զհատուցումն երախտեաց՝ և ակնկալութեան իւրոյ զայս չարչարանս ընկալաւ ի նմանէ՝ ըստ որում պատմեցաք, և տակաւին ևս պատմելոց եմք փոքր ի շատէ։ Եւ այսպիսեօք լինի կատարումն բանին որ գրեալ է թէ. որով և մեղանչէ ոք, նովիմք և տանջեսցի. կամ թէ մի յուսայք յիշխանս, և մի յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրրկութիւն ի նոսա։

Եւ դարձեալ աստանօր երևի լինիլ կատարումն բազմաժամանակեայ բաղձանաց շահին, քանզի նա՝ որ ի վաղուց ժամանակաց ցանկայր, խորհէր, և խոկայր, թէ որով հնարիւք քակեսցէ զսուրբ Էջմիածինն, և խափանեսցէ զանդ եղեալ կաթուղիկոսութիւնն, և յԱսպահան շինեսցէ զԷջմիածինն, և անդ կարգեսցէ զկաթուղիկոսութիւնն. արդ ահա եգիտ պատճառ ըստ յօժարութեան կամաց իւրոց։ Վասն զի դարձոյց զՄելքիսէթ կաթուղիկոսն յԵրևան առ Թահմազղուլի խանն, և գրեաց նամակ հրամանաց ի վերայ նորա այսպէս, և [2] ըստ այսմ օրինակի։ Ծանիր Թահմազղուլի, զի ահա դարձուցաք առ քեզ զՄելքիսէթ կաթուղիկոսն, և ըզԼուսաւորչի Աջն, և զաւետարանն, և զխաչն։ Այլ և գնասցես յԷջմիածին, և զնշանաւոր քարինս Էջմիածնի քակեալ հանցես ի տեղւոջէն. և զայն քակեալ քարինսն Էջմիածնի, և զԼուսաւորչի Աջն, և զաւետարանն, և զխաչն, և զՄելքիսէթ կաթուղիկոսն, զամենեսեան զսո-

1 Ոսկ. չէ. և անտի . . . անմարդաբնակ արար,
2 Նոյն. չէ. և ըստ այսմ օրինակի.

սա առաքեսցես գնալ ի քաղաքն Սպահան։ և ի հասանել հրամանաց Թագաւորին առ Թահմազղուլի խանն, կամակար մտօք պատրաստեցաւ՝ զամենայն անթերի կատարել, որպէս զի այնու հաճոյական ծառայ երեւեսցի առաջի շահին։

Եւ նախ քան զքարինսն Էջմիածնի՝ զԼուսաւորչի Աջն կամեցաւ Թահմազղուլի խանն յառաջագոյն առաքել, վասն զի մտօք դիտեալ նկատեաց՝ զի մինչ ի քակել քարանցն, և ի պատրաստել զամենայն կահս տանելոյ նորա, նա և գնացումն քարանցն յամրագոյն և ծանր լինի, բազում աւուրք ի վերայ անցանեն և անագանի, վասն այսր պատճառի կամեցաւ զԱջն յառաջագոյն առաքել։ Յաղագս որոյ պատրաստեաց զօրականս զի տարցեն զԱջն յՍպահան. այլ և Յովհաննէս անուամբ զոմն քահանայ աշխարհիկ, որ էր այր ճարտար և իմաստուն ի բանս և ի գործս, որ ի նոյն գեղջէն Էջմիածնի էր, զոր հրամայեաց Թահմազղուլի խանն գնալ ընդ զօրականացն վասն սպասաւորութեան Աջոյն։ Ապա կարգեալ զօրականքն և տէր Յովհաննէսն առին զԼուսաւորչի Աջն, և զայն ոսկետուփ աւետարանն և զայն արծաթեայ խաչն, զայս երեքս ի միասին առին և ելին յԵրեւանայ՝ և գնացին մինչ[1] որ հասին ի քաղաքն Սպահան։ Եւ յորժամ մերձ եղեն քաղաքին Սպահանու. ամենայն ազգն Հայոց, որք կային ի քաղաքն Սպահան. որոց և հրաման տարեալ էր շահն, ելին ընդ առաջ Լուսաւորչի Աջոյն՝ խաչվառով, և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք եղանակօք, և բազում պատուով բերեալ հանգուցին ի տուն խօջայ Սաֆարին, ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, և ընդ այլոց սրբութեանցն, որք անդէն կային։ Արդ՝ Աջն սրբոյն Գրիգորի մերոյ

1 Ու. ի. չէ. մինչ որ հասին.

Լուսաւորչին, այսպիսի պատճառաւ և կերպիւ գնաց յԱսպահան։

Իսկ Թահմազղուլի խանն՝ յետ Լուսաւորչի Աջոյն առաքելոյ, բազում ջանիւ հոգայր զքարինսն առաքել, վասն որոյ ինքն յոլովուք զօրականօք գնաց ի սուրբ Էջմիածին, և զնշանաւոր քարինսն Էջմիածնի քակեալ հանին ի տեղւոյն, որք են այսոքիկ. սուրբ սեղանն, յորոյ վերայ պատարագն սուրբ մատչէր, և այս սեղանոյս սիւնն. Քրիստոսի իջման տեղեաց քարն. Աւազանն, մէկ քար ի կողման հարաւային ատիճանէ բեմին. և մէկ քար ի կողման հիւսիսայնոյ ատիճանի բեմին, վասն զի աւագ բեմի ատիճանքն յերկուց կողմանց են՝ ի հիւսիսոյ և ի հարաւոյ. չորս քար ի չորից անկեանց եկեղեցւոյն՝ ի դրուց կողմանէ. երկու քարէ ժամդան (աշտանակ), որ մեծ իւղաբերից մոմ դնեն ի մէջն և վառեն. երեք այլ ուրիշ քարինք ի սալայարկ քարանց բեմին. ընդ ամեն տասն և հինգ քար։ Զայս քարինքս քակեցին, և հանին յԷջմիածնէ և եդին ի մէջ կաշւոյ և կարեցին։ Եւ ապա պատրաստեցին արս զօրականս, որոց գլխաւորի անունն էր Նազլի բեկ. և զայն տէր Յովհաննէսն, որ ընդ Լուսաւորչի Աջոյն առաքեցին վասն սպասաւորութեան Աջոյն, նա յԱսպահանայ դարձեալ էր և եկեալ, զնա միւսանգամ կարգեցին գնալ ընդ քարանցն վասն նոցին սպասաւորութեան։ Ապա պատրաստեցին ըստ բաւականի քարանցն սայլ, բարձին ի վերայ սայլի, լծեցին գոմէշ և քարշեալ տարան մինչ որ հասուցին ի քաղաքն Ասպահան։ Բայց ի քաղաքն ոչ մուծին, այլ արտաքոյ քաղաքին մերձ Թոխչի դարվազին, այլազգի Մահմետականաց գիւղ կայ, զորոյ զանունն Բաթուն կոչեն, ցայս գիւղս հասուցեալ զքարինսն՝ եդին ի մէջ գմբէթին որ մերձ ի գիւղն շինեալ կայր։ Եւ յորժամ քարինքն եկեալ մերձ եղեն գեղջն այնմիկ՝ ամե-

նեքեան որք ի Հայոց ազգէն բնակեալ կային ի քաղաքն Ասպահան՝ հրամանաւ քաղաքապետին ելին ընդ առաջ քարանցն, խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք եղանակօք, մինչ որ բերեալ ի գիւղն Բաթուն՝ եդին ի մէջ գմբէթին։

Եւ մնացին քարինքն անդէն ի մէջ գմբէթին, ոմանք ասացին երկու ամ, և ոմանք ասացին եօթն ամ, և ոմանք աւելի և պակաս ասացին։ Եւ ապա բնակիչքն Բաթունայ գեղջն արզայ տուլին շահին, թէ խնդրեմք յարքայէ, զի հրաման տացէ վասն քարանցն Էջմիածնի հանել ի գեղջէս մերմէ և տանել յայլ տեղի, վասն զի արք գեղջս մերոյ մեռանին, և անդք մեր ոչ ևս տան պտուղ որպէս առաջն տային, վասն որոյ հրամայեաց շահն, զի հանցեն անտի զքարինսն և տարցեն ի մէջ Ջուղայեցւոց, զոր և արարին այնպէս, և ի բերելն քարանցն յորժամ մերձ եղև Ջուղայու, ըստ առաջին օրինակի ամենայն եկեղեցականք և աշխարհականք խաչիւ և աւետարանաւ, խնկօք և մոմեղինօք, և երգօք հոգևորօք, բերեալ եդին ի Խօջենց եկեղեցին և կայ անդէն մինչև ցայսօր։ Զայս քարինքս յորժամ հանեալ յէջմիածնէ ուղևորեցին գնալ յԱսպահան՝ թուականն մեր ՌԿԳ. էր, և յորժամ եհաս յԱսպահան փոխեալ էր տարին և մտեալ էր ի ՌԿԴ. և յորժամ եկաք մեք յԱսպահան՝ տեսաք աչօք մերովք զքարինսն, և թուեցաք և ապա գրեցաք։

Սոյնպէս և զՄելիքսէթ կաթուղիկոսն բերին յԱսպահան քաղաք զօրականքն զոր նմա տանող էր կարգեալ Թահմազղուլի խանն և անուն աւագի նոցա Թահմազղուլի բէկ։ Յորժամ եհաս Մելքիսէթ կաթուղիկոսն յԱսպահան՝ շահն համարէր զնա թէ ի բանտի արգելեալ կայ ի կալանս, բայց նա կայր յընդարձակի և վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի վերայ հայազուն

քրիստոնէիցն բնակելոցն ի քաղաքին Սպահանու, և յամենայն շրջակայ գաւառս նորա։ Արդ՝ զքարանց տանելոյ Թուականն գտաք և գրեցաք, իսկ զԼուսաւորչի Աջոյն տանելոյն, և զՄելքիսէթ կաթուղիկոսի տանելոյն՝ ոչ գտաք, վասն որոյ և ոչ գրեցաք. և այս ևս այսպէս։

ԳԼ. ԺԲ.

Յաղագս հարիւր Թուման մուղաղային զոր շահն ետ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին:

Արդ՝ որպէս կանխաւ պատմեցաք վասն Դաւիթ կաթուղիկոսին թէ գնաց ի դուռն շահին և արար ամբաստանութիւն վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, և շահն բարկացաւ ի վերայ Մելքիսէթի, ընկէց ի կաթուղիկոսութենէ և առաքեաց յԱսպահան։ Իսկ Դաւիթ կաթուղիկոսն մնաց անդէն ի բանակին, ի դուռն շահին. անդ էր և Ամիրգունայ խանն, որ էր տէր և իշխան ամենայն գաւառին Արարատու և սուրբ Էջմիածնի։

Եւ յաւուր միում յորժամ հանդէս արարեալ էր շահն՝ և նստեալ կայր ի հանդիսին, առաջի նորա կային կանգնեալ ամենայն նախարարք և իշխանք իւր, էր յայնմ հանդիսի և Ամիրգունայ խանն և Դաւիթ կաթուղիկոսն։ Խօսեցաւ շահն առ Դաւիթ կաթուղիկոսն քաղցրութեամբ ասելով. շնորհեցաք քեզ զկաթուղիկոսական իշխանութիւնն Էջմիածնի, արդ գնացեալ նստա-

ցիս յԷջմիածին և վարեսցես զիշխանութիւն կաթուղիկոսութեանն։ Յայնժամ Դաւիթն խնդրանօք աղաչեալ է առ շահն, Թագաւոր իմ, զիս ի խանն ամանաթէ, զիս ի խանն ամանաթէ. ապա դարձուցեալ շահն զբանս իւր առ Ամիրգունայ խանն՝ յանձն արար նմա զԴաւիթ կաթուղիկոսն, թէ բարւոք խնամակալութեամբ պահեսցես զխալիֆայ հայրդ մեր։ Իսկ Ամիրգունայ խանն խոնարհեալ միջովք չափ, և եդեալ զձեռն իւր ի վերայ գլխոյ իւրոյ պատասխանեալ բանից շահին ասելով. ի վերայ գլխոյ իմոյ ունի դա տեղի հանգստեան։

Որքան շահն ի Վրացտուն էր՝ անդ էին կաթուղիկոսն և Ամիրգունայ խանն, և յորժամ շահն ելեալ գնաց յերկիրն Պարսից՝ դարձան և եկին Ամիրգունայ խանն և Դաւիթ կաթուղիկոսն յԵրևան, խանն ի խանութիւն իւր, և կաթուղիկոսն ի կաթուղիկոսութիւն իւր։ Որքան շահն յերկիրն Ատրպատականի էր՝ ի մերձակայ քաղաքս և յերկիրս, պատուէր Ամիրգունայ խանն զԴաւիթ կաթուղիկոսն և քաղցրութեամբ խօսէր ընդ նմա վասն երկիւղի շահին. և յորժամ հեռացաւ շահն բարձաւ երկիւղն ի սրտէ խանին, և սկսաւ խոշորիլ ընդ Դաւիթ կաթուղիկոսին, ոչ պատուէր, և ոչ խօսէր. և յորժամ խօսէր՝ խրոխտանօք խօսէր, քանզի զԴաւթի յԷջմիածին նըստիլն ոչ կամէր՝ այլ զՄելքիսէթին. վասնորոյ ձառադէմ երևէր և խօսէր խանն ընդ Դաւթին. և ոմանք ասացին, թէ ջանայր ևս խանն թէ ի ծածուկ հնարիւք իմն սպանցէ զԴաւիթ։ Եւ այս գործոյ խռովութեանս, զոր խանն առնէր ընդ Դաւթին, ոմանք ասացին պատճառ զծածուկ ներքնագործ հնարակերտութիւն Մելքիսէթ կաթուղիկոսին, քանզի թէպէտ նա կայր յԱսպահան այլ հանապազ ի ծածուկ թուղթ և աղերս՝ նշան սիրոյ ոչ պակաս առնէր ի խանէն՝ այլ միշտ առաքէր։ Նա և ի մէջ կաթուղիկոսական իշխանութեանն Մելքիսէթն ա-

ռաւել ձեռնբաց և բազմատուր էր դրամօք և այլ իրօք՝ իշխանաց և զինուորաց, և իւրոց համախոհից, վասն որոյ խանն և այլք ամենեքեան զՄելքիսէթի կաթուղիկոսութիւնն կամէին, և ոչ զԴաւթին։

Եւ ի ժամանակին՝ յորում եկն Սարդարն Օսմանցւոց՝ որում անունն էր Օքուզահմատ փաշայ՝ ի վերայ Երևանայ բերդին, եկն և շահն յԵրևան վասն օգնութեան բերդին, և կայր ի լերինս Գառնւոյ, և յորժամ դարձաւ Սարդարն յԵրևանայ յԱրզրում, և շահն տակաւին ի լերինս գաւառացն էր բնակեալ։ Իսկ Դաւիթ կաթուղիկոսն զանգիտեալ յերկիւղէ խանին, մի գուցէ թէ ի ծածուկ դաւեալ սպանցէ զնա, անճարակ լեալ ի վտանգէն թարց գիտելոյ խանին միւսանգամ գնաց առ շահն՝ և երևեցաւ նմա, և ի հարցանելն շահին զորպիսութենէ Դաւթին, ասաց Դաւիթն այլազգեաց բարբառովն, «փաթշահում ջանկի չայինտան մանայ պիր իշում սու վէրմատիլար»․ Ջանկիչայ Երևանայ մեծ գետն է, որ ի բերդի ներքևէն անցանէ։ Ի վերայ այսր ամբաստանութեանս գիտաց շահն, զի Ամիրգունայ խանն է՝ որ ոչ տայ հանգիստ Դաւթի, և ոչ ընդունէ զնա, և զայն ևս ծանեաւ, որ ի պատճառս Մելքիսէթին ոչ ընդունի խանն զԴաւիթ, վասն որոյ ոչ բարկացաւ խանին՝ սուղ ինչ ակնառութիւն ևս առնելով նմա, այլ Մելքիսէթ կաթուղիկոսին բարկացաւ յոյժ բարկութեամբ. զի զայն ևս ծանեաւ որ Մելքիսէթն յԱսպահան յընդարձակի կալով վարէ կաթուղիկոսական իշխանութիւնն առանց հրամանաց շահին։ Վասն որոյ հրամայեաց պատրաստել զօրականս՝ զի գնասցէ յԱսպահան և կալեալ զՄելքիսէթն կապանօք բերցէ առ շահն. զոր և իսկոյն առաքեցին զոմն թագաւորական ծառայ՝ անունն չարքազ Իբրահիմ, որոյ հասեալ ի քաղաքն Ասպահան, ոչ եգիտ անդ զՄելքիսէթ կաթուղիկոսն, վասն

զի գնացեալ էր ի Գանձիման գաւառն։ Եւ չարքաշ Իբրահիմն եւս գնաց ի Գանձիման, և եգիտ զկաթուղիկոսն ի գիւղն Քաթակ, զոր կալեալ կապանօք եբեր յԱսպահան, և անտի եբեր առ շահն, որ էր յայնմ ժամանակին եկեալ ի Վայոց ձոր, այսինքն յԵղեգաձոր. յորում տեղւոջ բերեալ չարքաշ Իբրահիմն զՄելքիսէթ կաթուղիկոսն ի բանակն արքունի, և ծանոյց շահին. բայց շահն անտես արարեալ զդատաստանս Մելքիսէթի՝ եթող մնալ ի կապանս. չուեաց շահն ի Վայոց ձորոյ և եկն ի Նախչուան։

Մինչ ցայս վայր Դաւիթ կաթուղիկոսն ընդ բանակի շահին էր ցգալն Մելքիսէթ կաթուղիկոսին. և յորժամ ետես Դաւիթ կաթուղիկոսն թէ շահն թողեալ անտես արար զՄելքիսէթն մնալ ի կապանս, իմացաւ յոգի իւր, թէ կարի երկարաձգի ի յոլով աւուրս [1] անտեսութիւնն այն, վասն որոյ խորհեցաւ հրաժարիլ ի կաթուղիկոսութենէն, և գնալ յԱսպահան. որ և մատուցեալ առ շահն և խնդրեաց հրաման գնալոյ իւրոյ յԱսպահան, և շահն ետ նմա հրաման. և գնաց Դաւիթ կաթուղիկոսն յԱսպահան, և կայր ի լռելեայն, քանզի շահն պարգեւեաց նմա գիւղ մի դարման կենաց նորա ի գաւառին Ջղախոռ՝ որում անուն կոչէին Փռընգիկան. զի կերիցէ զմուտս գեղջն այնմիկ և աղօթեսցէ վասն կենաց թագաւորին. և նա գնացեալ յԱսպահան կեայր այնպէս։ Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն մնաց ի բանակին արքունի, ի կապանս շղթայից։

Եւ շահն չուեալ ի Նախչուանայ գնաց ի գիւղաքաղաքն Ագուլիս, յորում ժամանակի նահատակեաց զտէր Անդրէաս քահանայն. և զՄովսէս վարդապետն՝

---

1 Ոմն. չէ. ի յոլով աւուրս։

և զՊօղոս վարդապետն՝ զոսա երկոսեան կալեալ [1] տարար ի կապանս, և [2] պահանջեալ տուգանս ի նոցունց՝ էառ երեք հարիւր թուման. և նոքա տուեալ զտուգանքն ազատեցան։

Արդ՝ որպէս կալեալ շահն զՄովսէս և զՊօղոս վարդապետսն, էառ երեք հարիւր թուման, սոյնպէս և զՄելքիսէթ կաթուղիկոսն կալեալ պահանջէր երեք հարիւր թուման տուգանս՝ վասն երից յանցանաց։ Նախ՝ վասն նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, որ թոյլ տալովն Մելքիսէթի տարան Ֆռանկքն, զոր բազումք ասէին թէ վասն կաշառացն՝ զոր էառ Մելքիսէթ [3], թոյլ ետ։ Երկրորդ՝ վասն դառնալոյն ի մեծ սուրգունէն. որ առանց հրամանաց շահին դարձաւ՝ և եկեալ յԷջմիածին վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեանն, և այն ևս առանց հրամանաց շահին։ Երրորդ՝ յորժամ շահն ընկէց ի կաթուղիկոսութենէ զՄելքիսէթն, և առաքեաց յԱսպահան, համարէր շահն զնա թէ ի կալանս կայ, բայց Մելքիսէթն յընդարձակի կալով վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան, և այն ևս առանց հրամանաց շահին։ Վասն այսքան յանցանաց կալեալ էր շահն զՄելքիսէթն և կամէր սպանանել, իսկ վասն բարեխօսութեան Ամիրգունայ խանին ներեաց և ոչ սպան. բայց պահանջէր երեք հարիւր թուման տուգանս, վասն որոյ ի կապանս երկաթեայ պահէր ի կալանի, զի զայն վճարեսցէ, և գնացեալ դադարեսցի յուրեք՝ լռեալ յիշխանութենէ կաթուղիկոսութեանն։

Ելեալ շահն յԱգուլեաց՝ գնալով եհաս ի Դանղի, յԱսպահանայ մինչև ցայսր կապանօք կայր Մելքիսէթ

1 Ուխ. ձե. զոսա երկոսեան կալեալ. 2 Նոյն. ձե. և պահանջեալ տուգանս . , . ազատեցան. 3 Նոյն. ձե. զոր էառ Մելքիսէթ.

կաթուղիկոսն, և այնպէս շրջէր ընդ բանակին արքայի։ Եւ յայսմ տեղւոջ երկիցս և երիցս Մելքիսէթ կաթուղիկոսն արզայ գրեաց՝ և հասոյց ի ձեռն շահին. և ծանոյց զտառապանս իւր՝ թէ յայսպիսում վտանգի կամ, խնդրեմ յարքայէ անդորրութիւն առնել իմոցս տառապանացս՝ եթէ մահուամբ և եթէ կենօք։ Իսկ շահն պատասխանի էր արարեալ Սպանդիար բէկոյն. ոչ սպանանեմ, և ոչ թողում։ այլ այնպէս կապանօք պահեմ, մինչև կամ [1] մեռցի, և զերծցի, և կամ տացէ զերեք հարիւր թուման դրամն՝ զոր հրամայեալ եմ նմա և ազատեսցի։

Իսկ ի ժամանակին յայնմիկ արք խորհրդականք և երևելիք, որք էին ի դուռն արքային, եթէ յայլազգեաց, որ էր Սպանդիար բէկն, եթէ Ուղուրլու բէկն, և այլք յոլովք, և եթէ ի քրիստոնէից մեծամեծք, որ էր խօջայ Նազարն, և խօջայ Սուլթանումն, և Միրվէլին, և մելիք Հայկազն, և այլք բազումք, ասացին ցՄելքիսէթ կաթուղիկոսն, անհնար եղև գործդ քո՝ այլ պարտիս տալ և զերծանիլ ի ձեռաց սորա.

Արդ՝ պատմութիւն ճառիս յաղագս հարիւր թուման մուղադային է, և մինչև ցայս վայր միաշաւիղ էր պատմութիւնս, զոր և անտարակոյս գրեցաք, այլ յայսմ հետէ յերկուս շաւիղս բաժանի և երկարութիւն պատմութեանս մեզ աշխատանս յաւելու, և վասն ոչ ումեք գիտելոյ զիսկն պատմութեանս՝ հարկ եղև մեզ զերկոսինն եւս գրել։ Քանզի ոմանք ի պատմողաց, մանաւանդ թէ բազումք, պատմեցին՝ թէ Մելքիսէթ կաթուղիկոսն ունելով իւրն ոսոխ զԴաւիթ կաթուղիկոսն՝ հանապազ առնէր իւրն ներհակութիւն, կանգնի ախոյեան, և դըրդեալ դայթակղէ զիշխանութիւնն Մելքիսէթի՝ և ոչ տայ

[1] Ոսկ. չէ. կամ

հանգիստ և անդորրութիւն, վասն որոյ խորհեալ Մելքիսէթն եմուտ ի ներքոյ ծանրաբեռն հարկի, զի վասն ծանրութեան հարկին ոչ ևս իշխեսցէ Դաւիթ կաթուղիկոսն յառաջ կալ դրդել և խառնակել զմէջն, այլ ի բաց կացցէ, որոյ ի բաց կալն՝ Մելքիսէթն անվրէպ վարեսցէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան. և յայսմանէ պատճառէ գրեաց Մելքիսէթն արզայ առ շահն։ Եթէ քաղցրասցի ի վերայ մեր կամք թագաւորին՝ և արասցէ մեզ այցելութիւն, և տացէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան մեզ, մեք տամք ամ յամէ ի դիւան թագաւորին յիւրաքանչիւր տարի հարիւր թուման ռոճիկս ծառայից թագաւորին։ Իսկ թագաւորին տեսանելով օգուտս յոլովս իւրոյն կողման, վասն որոյ խոնարհեալ զիջաւ ի բանս Մելքիսէթին և կատարեաց ըզխնդրուածս նորա, զի ետ նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ հանդերձ թագաւորական նոմոսիւ գրեալ և կնքեալ։ Որով ելեալ Մելքիսէթն յամենայն երկիր վարէր զկաթուղիկոսութիւնն ի վերայ ամենայն Հայազգուն ժողովրդոց, և Դաւիթ կաթուղիկոսն կայր ի բացեայ՝ մախալով նհանջեալ ի ներհակութենէ, և իբր զգազան կապեալ ի գառագեղի, սպասէր և ըղձայր դիպող ժամու։ Արդ՝ զոր ասացաք վասն պատմութեանս, թէ յերկուս ոճս բաժանեցաւ, մինն այս է, զոր գրեցաք զոր ոմանք և մանաւանդ թէ բազումք այսպէս պատմէին։

Իսկ այլք ոմանք ի պատմողաց ասացին, թէ շահն երեք հարիւր թուման տուգանս էարկ ի վերայ Մելքիսէթին, և զայն ևս ոչ կարէր տալ Մելքիսէթն, բայց զի մնաց յանհնարս և ի հարկէ նեղութեանցն ակամայ կամօք ասաց տամ, վասն որոյ գրեաց զթուղթ և առաքեաց առաջի շահին ըստ այսմ օրինակի։

Հրամայեալ է տէրութիւն ինքնակալիդ վասն մեր՝ թէ երեք հարիւր թուման տացէ, յանձին կալայ տալ

զերեք հարիւր թումանն, բայց յերեք տարին տամ, յիւրաքանչիւր ամի հարիւր թուման, մինչև ցերեք տարին վճարեմ և աւարտեմ, քանզի ի միում ամի ոչ կարեմ վճարել։ Իսկ շահն առեալ էր զայս ձեռագիրս Մելքիսէթ կաթուղիկոսին, և արձակեալ էր զնա ի կապանաց. և տուեալ էր նմա հրաման և իշխանութիւն կաթուղիկոսութեան։ Բայց ի բուն մատեան արքունական դիւանի ոչ ըստ օրինակին էր գրեալ՝ որպէս էր ձեռագիր կաթուղիկոսին, թէ երեք հարիւր թուման տամ, և ոչ այլ ինչ աւելի. այլ գրեալ էր շահն թէ, Մելքիսէթ կաթուղիկոսն խնդրեաց զԷջմիածնի կաթուղիկոսութիւնն, և խոստացաւ ի տարին հարիւր թուման մուղաղայ տալ ի դիւան թագաւորին, վասն որոյ և մեք շնորհեցաք նմա զիշխանութիւն կաթուղիկոսութեան, զի նա վարեսցէ։ Եւ զայսպիսի գրելս շահին ոչ ոք գիտէր, ոչ կաթուղիկոսն և ոչ այլ ոք ի Հայոց, և յորժամ գիտացին, ոչ ոք կարաց օգնել ինչ, զի անհնար էր եղծանել զհրաման այնպիսւոյ խրոխտ թագաւորի, և կամ արտահանել ի թագաւորական և ի դիւանական մատենից, յորս գրեալն էր։ Մինչև ցայս վայր երկրորդ ոճն պատմութեան՝ զոր ոմանք այսպէս պատմեցին, և դու ընկալ որոյ և հաւանիս, և կամ թէ[1] զոր ինչ տեսութիւն մտաց քոց յերկուցս պատմութեանցս արտաքերիցէ։

Արդ՝ եթէ այնպէս և թէ այսպէս. ստուգիւ և հաստատութեամբ, հարիւր թուման մուղաղայ եղաւ ի վերայ Մելքիսէթ կաթուղիկոսին, զոր տայր թագաւորին ամ յամէ, և ի նորին պատճառէ անկաւ մուղաղայն ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, և մնաց Աթոռն ի ներքոյ ղաբալի[2]։ Եւ այս եղև բեռն ծանր, և լուծ տաժանելի, և անուր անխզելի ի վերայ սրբոյ Աթոռոյն

1 Ոսկ. չկ. թէ։ 2 Նոյն. ղաբալայի։

Էջմիածնի ի զուր և ի տարապարտուց. և ամենայն ազին Հայկայ սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի եկեղեցականաց և աշխարհականաց։

Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն յետ արձակելոյն ի կապանաց և առնլոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ ջանայր բազում ջանիւ զի զխոստացեալ հարկն վճարեսցէ, որպէս զի ազատեսցի, վասն որոյ ելեալ է [1] *ի շրջագայութիւն յազգս Հայոց յաղագս ժողովքի, և նախ ի Տփխիս գնաց, և անտի ի Թարվէզ, և անտի յԱսպահան,*

Եւ յորժամ տարին բոլորեցաւ, շահն անմոռանալի ունէր զայն ի մտին, վասն որոյ ի Թագաւորական ծառայից իւրոց, արս չորս գլխաւորս [2]*, որոց անուանքն էին, Ջիալ բէկ, Ասաթ բէկ, Չրաղ բէկ, Բահրամ բէկ, առաքեաց ի վերայ Մելքիսէթին՝ թէ զմուղադայն՝ զոր խոստացար տալ ի դիւանն արքունի, տուր Թագաւորական ծառայից ի սակս կարգեալ ռոճկաց իւրեանց։ Եւ այս եղև վտանգ և աղէտ դառնագին, և անուր անլոզելի ի վերայ կաթուղիկոսարանին, զի բեռն ի վերայ բեռին բարձեալ եղև։ Քանզի ոչ գոյր առ ձեռն պատրաստ դրամ, զի տացեն ղուլերուն (ծառայից), ի սակս որոյ Մնային ղուլերն և նստէին ի վերայ կաթուղիկոսին, ծառայիւք և երիվարօք իւրեանց. և զամենայն պիտոյս իւրեանց զկերակրոց և զայլ կարեաց ի կաթուղիկոսէն առնուին։*

Իսկ կաթուղիկոսն վասն Թագաւորական մուղադային և վասն պիտոյից այս ղուլերոյս, ելանէր և շրջէր յազգս Հայոց, և ուր և շրջէր կաթուղիկոսն ղուլերն ևս ընդ նմա շրջէին. և ծանրանային ի վերայ ժողովըրդեանն վասն պէս պէս կարեաց, ինքեանց և երիվարաց իւրեանց. և սեղանք նոցա յամենայն աւուր ոչ էր ա-

---

5 Առեփ. Երէց.՝ չէ՛ է. 2 Ոսկ. չէ. *արս չորս գլխաւորս.*

ռանց զինուոյ, և ծախք նոցա ոչ թէ սակաւ, և ժամանակ զինկրթութեանն միշտ։

Եւ ի շրջագայիլն իւրում կաթուղիկոսն յամենայն երկիր ի մէջ ժողովրդեանն, ուր և լինէր իրաւամբք հասոյթք իւր զայն առնոյր. և իբրև ոչ լինէր այն բաւական ծախուց իւրոց և ղուլերոյն, և մուղադային, վասն որոյ զարս անպարտս, եթէ եպիսկոպոս լինէր, եթէ աբեղայ, եթէ երէց. եթէ աշխարհական, կալեալ զնոսա թարց իմիք պարտեաց և վնասու՝ անիրաւաբար յօդէր բարուրս ի վերայ նոցա և պահանջէր դրամ, և [1] մատնէր ի ձեռս զինուորաց ղուլերոյն, որք կախէին յոտից և բրածեծ առնէին, մինչև ըստ կամաց իւրեանց առնուին դրամս և ապա արձակէին։

Այլ և այսու պատճառաւ մտին բազում անկարգութիւնք և օրինազանցութիւնք յազգս Հայոց, կաշառօք անարժանից ձեռնադրութիւն տալ՝ եթե եպիսկոպոսաց, եթէ քահանայից, և կաշառօք զսեփհական վիճակն այսմ վանացս կտրել և այլում վանաց շնորհել. և չհասի, և մեղօքի, կնաթողութեան, և երկակնութեան համարձակ հրաման տալ ամուսնութեան։ Զայսոսիկ և որ սոյին նման բազում անկարգութիւնս գործէին, կաթուղիկոսն և եպիսկոպոսունքն իւր, և ոգւով չափ զուն գործեալ եթէ իրաւամբք և եթէ անիրաւութեամբ հնարէին ժողովել զինչս, զի թերևս բաւականասցի ծախուց իւրեանց և ղուլերոյն, և վճարման մուղադային, սակայն ոչ լինէր, զի ոչ Աստուծով, այլ մարդկային հնարով հնարէին կատարել գործ. վասն որոյ ոչ կատարիւր՝ ըստ վկայութեան Սաղմոսին, Թէ ո՛չ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա։

Բայց կաթուղիկոսն ոչ թուլանայր և դադարէր ի

---

[1] Ռուկ. չն+ և մատնէր ի ձեռս . . . . . բրածեծ առնէին։

շրջագայութենէ, զի թերևս վճարեսցէ ղխոստմունսն, վասն որոյ ելեալ յԱսպահանայ գնաց ի Փահրապատ, և անտի ի Նախչուան. և անտի դարձեալ յԱսպահան. և ապա ի բազում վշտացն՝ զոր ղուլերն վշտացուցանէին զկաթուղիկոսն և խնդրէին զանձս ի նմանէ, արզայով ծանուցեալ էր կաթուղիկոսն շահին զվիշտն իւր, և շահն անտես արարեալ էր զբանս կաթուղիկոսին, վասն որոյ մնացեալ էր յանհնարելի տարակուսանաց միջի. և ապա գնացեալ և անկեալ ի շահի թաւլէն (գոմ) և ծանուցեալ էր շահին՝ թէ ութն հարիւր թուման տուեալ եմ, այլ ո՛չ ունիմ կար տալոյ: Իսկ շահն ասացեալ էր թէ, ես յայդ հարիւր թուման մուղադայէդ մէկ փող ինչ է որ չեմ անցներ, այլ թէ մէկ այրի պառաւ լինի մնացեալ որ ես կառնեմ: Եւ ապա ելեալ Մելքիսէթն յԱսպահանայ եկն յԵրևան և յԷջմիածին, շահի ղուլերն ևս եկին ընդ կաթուղիկոսին, և խնդրէին զիւրեանց տօնլուղն (ռոճիկ), զոր շահն բարաթ էր արարեալ ի վերայ կաթուղիկոսին տալ նոցա՝ ի կողմանէ հարիւր թուման մուղադային. և ուր և շրջէր կաթուղիկոսն: ընդ նմա շրջէին և ղուլերն, և ծանրաբեռն լինէին ի վերայ ժողովրդեանն, վասն հարկաւոր կարեաց իւրեանց, և անխնայաբար շռայլութեամբ ցնդէին զինչս ժողովրդեանն. և այս վտանգ յոյժ էր ի վերայ ժողովրդեանն, զի զկենցաղավարութիւնս իւրեանց զեղխութեամբ և շռայլութեամբ վարէին, վասն որոյ ամենեքեան ձանձրացան և սրտիւ լքին զկաթուղիկոսն և զիւրսն՝ և ի բաց կացին ի նոցունց: Եւ այնուհետև ո՛չ ըստ իրաւանց և կանոնական կարգի, այլ այլազգեաց իշխանութեամբ և իբր ղաբալաւոր հարկատու բռնանային ի վերայ ժողովրդեանն, և առանց իրաւանց կեղեքեալ կողոպտէին զժողովուրդսն: Եւ թէպէտ կեղեքելով առնուին՝ և թէպէտ ըստ իրաւանց, սակայն ո՛չ լինէր բա-

ւական ծախուց իւրեանց, վասն որոյ ի կարեաց պակասութենէ, և ի հարկելոյ ղուլերոյն գնացին առ շահակեր փոխատուս, և յոլով տոկոսեօք առնուին փոխ ի նոցունց, յոլովակի յայլազգեաց՝ քան ի քրիստոնէից, քանզի քրիստոնեայք ոչ հաւատային ի տալն։

Եւ եղև այժմ ի ներկայիս յերկուց կողմանց յաւելուլ պարտուցն, նախ՝ ի կողմանէ հարիւր թուման մուղադային, զոր ոչ կարէին տալ, վասն որոյ մնաց ամ յամէ և եհաս մինչև ցվեց հարիւր թուման բաղի. և երկրորդ՝ իւրեանց արարեալ պարտսն, զոր ի պարտատուացն առեալ էին վասն կարեաց ղուլերոյն՝ և ինքեանց։

Արդ՝ վասն յաճախութեան պարտուցն և այլոց ևս նեղութեանցն, զոր կրէր կաթուղիկոսն, նա և անընդունակ լինելոյն՝ յազգէն Հայոց, խորհեցաւ ի միտս իւր զի բարձեալ յինքենէ յայլոյ վերայ դիցէ զանուն կաթուղիկոսութեան, ընդ նմին և զպարտսն. վասն որոյ ասաց ընդ Մովսէս վարդապետին, որ ի ժամանակին յայնմիկ բնակէր յԵրևան քաղաքի առ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ կայ յեզր քաղաքին։ Ահա ազգս Հայոց մեծ և փոքր երես դարձուցին յինէն, և զքեզ սիրեն, և ընդունին՝ և մանաւանդ զի ծերացեա եմ. և հարկն արքունի պարտք եղև, և բազմացաւ ի վերայ իմ. արդ՝ տամ քեզ զսուրբ Աթոռն Էջմիածին, և զկաթուղիկոսութիւնն, դու վարեա այսուհետև զկաթուղիկոսութիւնն [1], որպէս և եսդ արժան, և ինձ տուր ամ յամէ դարման պիտոյից, և զմի ի վանօրէիցդ, զի անդ նստայց լռելեայն, և վճարեցից զծերութիւնս իմ։ Իսկ Մովսէս վարդապետն ոչ էր յանձին կալեալ, այլ հրաժարելով հրաժարեալ էր։

Եւ էր եղբօրորդի մի Մելքիսէթ կաթուղիկոսին,

---

[1] Օրի. չէ+. ղկաթուղիկոսութիւնն.

որում անունն էր Սահակ, ի նմանէ եպիսկոպոս էր ձեռնադրեալ՝ և կայր ի սպասու նորին. որոյ հաւուցեալ բանս առ կաթուղիկոսն Մելքիսէթ, թէ կաթուղիկոսութիւնդ այդ քո է՝ եթէ առնես դու, յոյժ բարւոք է, արասցես, և եթէ ոչ առնես դու՝ ընդէ՞ր այլոց շնորհես և ոչ ինձ, որ եմ ժառանգ և որդի քո. յայսմ բան և բարեկամքն իւրեանց յորդորեալ էին զկաթուղիկոսն: Իսկ Մելքիոէթ կաթուղիկոսն հաճեալ ի բանս Սահակայ և բարեկամացն, և հաւանութեամբ և միաբանութեամբ բարեկամաց իւրեանց տարեալ էր զՍահակն յԷջմիածին և ի հրեշտակապետաց կիւրակէի օրն օրհնեալ էր զնա կաթուղիկոս, և առեալ եբեր ի քաղաքն Երեւան, և ծանուցումն արարեալ զայս բան ամենայն ժողովրդեանն: Այլ և գրեաց կոնդակ, և ետ ցՍահակ կաթուղիկոսն, թէ ծանուցումն լինի ամենայն ազգին Հայոց՝ զի ես ծերացեալ եմ և անկարացեալ, վասն որոյ հրաժարեցայ ի կաթուղիկոսութենէ, և օրհնեցի զՍահակ որդիս իմ կաթուղիկոս, և կարգեցի ի սուրբ Աթոռն Էջմիածին. արդ՝ ով ոք հնազանդէ մեզ և խնդրող օրհնութեան մերոյ, յօժարութեամբ հնազանդեսցի հրամանաց դորա. և այսպէս քարոզեաց զնա կաթուղիկոս ի մէջ ամենայն ազգին Հայոց, առաջի վարդապետաց, և եպիսկոպոսաց: Նա և տարաւ[1] առաջի Ամիրգունայ խանին կացոյց և ասաց, թէ ետու զկաթուղիկոսութիւնն սմա, որում խանն ևս հաւանեցաւ. և ի խանէն ևս խնդրեաց Մելքիսէթ կաթուղիկոսն, գրել խնդրանաց թուղթ առ շահն, զի նմա տացէ զկաթուղիկոսութիւնն. և ինքն Մելքիսէթ ևս գրեաց աղաչանաց թուղթ առ շահն՝ թէ ես ծերացեալ եմ, և ոչ

1 Ուղ. տարեալ:

եմ բաւական վարել զիշխանութիւնս. սա իմ որդի է՝ խնդրեմ զի սմա շնորհեսցես զկաթուղիկոսութիւնն։

Զկնի ամենայնի այսոցիկ, զի կարգեցաւ Սահակն կաթուղիկոս, և ընկալաւ հրաման ի Մելքիսէթ կաթուղիկոսէն և յԱմիրգունայ խանէն՝ այնուհետև սկսաւ Սահակն վարել զիշխանութիւն կաթուղիկոսութեանն. և շահի ղուլերն ևս ժողովեցան ի վերայ Սահակ կաթուղիկոսին և ընդ նմա շրջագայէին։

Զկնի աւուրց ինչ Սահակն առեալ զթուղթսն զՄելքիսէթ կաթուղիկոսին և զԱմիրգունայ խանին և գնաց ի դուռն շահին, առ ի սեպհականացուցանել ի վերայ ինքեան զկաթուղիկոսութիւնն։

Իսկ Մելքիսէթ կաթուղիկոսն մնաց յԷջմիածին, և պարտատուքն յոյժ ճշդիւ պահանջէին ի նմանէ զիւրեանց տուեալ պարտսն. և յամենայն աւուր եկեալ կանխէին առ նա, և անհանգիստ արարեալ խնդրէին զտուեալ պարտսն, և նորա ոչ գոյր ինչ զի տացէ. այլ և ոչ ոք հաւատայր տալ նմա պարտս, և ոչ յայլ ուստեք գոյր ակնկալութիւն. վասն որոյ զսպառսպուռ մնացեալ անօթսն սրբոյ Էջմիածնի, որ ինչ և գտանիւր, նա և զԱջն Արիստակէսի հայրապետին որդւոյ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, նա և զաջն Աղջուց վանից սրբոյն Ստեփաննոսի, զայսոսիկ զորս ասացի, բերեալ եդ գրաւ առ այլազգի մահմետականս՝ և առեալ դրամ ետ պարտատուացն, և զնոսա այնուկերպիւ ի բաց արար յինքենէ։

Եւ այնուհետև կասկած կրեալ յինքեան Մելքիսէթ կաթուղիկոսն, թէ զի մի գուցէ միւս այլ պարտատուքն ևս եկեալ նեղեսցեն զինքն։ Նա և վասն թագաւորական մուղադային գիտեալ ի միտս և ծանուցեալ հաւաստեաւ թէ ոչ կարէ վճարել, և այլ ևս նեղութեանցն վասն [1],

---

1 Ուն. չէ. վասն։

որք շրջապատեալ էին զինքեամբք, խորհեցաւ ի կողմն ինչ ճողոպրել Թագնաբար։ Վասն որոյ յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին՝ ելեալ յԷջմիածնէ, պատճառ արարեալ [1], թէ գնամ յԵրեւան, ինքն և սպասաւոր ոմն. և ի հասանելն իւր ի կէս ճանապարհին, դարձուցեալ զերասանակ երիվարին դէպ ուղիղ յերկիրն Սահաթայ՝ որ է յայնկոյս գետոյն Երասխայ ի կողմն Կողբայ, և անտի գնացեալ ի Կաղզուան, և անտի յԱրզրում։ Եւ այսպէս Թագնաբար գաղտագողի գնացութեամբ զերծաւ Մելքիսէթ կաթուղիկոսն ի մասն բաժնի աշխարհին Օսմանցւոց։ Եւ ելեալ ի Կարնոյ քաղաքէն կամէր գնալով եհաս ի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս։ Եւ անդ ևս ոչ ընկալան զնա ժողովուրդք և վարդապետք ժամանակին վասն իրիք ինչ պատճառի։ Ապա ելեալ անտի գնաց ի քաղաքն Իլով, և ժողովուրդք քաղաքին Իլովայ ընկալան զնա յոյժ պատուով և մեծաւ փառօք, և եկաց անդէն սակաւ ժամանակս, և պակասեալ աստի, յաւելաւ առ հարս իւր ի մերում Թուականիս ՌՀԵ. ամի. անդէն վախճանեցաւ և անդէն Թաղեցաւ. բայց մինչ կենդանի էր Մելքիսէթն ձեռնադրեաց Իլովացւոցն եպիսկոպոս Նիկողայոս (Նիկոլ) անուամբ զոմն, որ էր ի նոյն քաղաքէն Իլովայ. և Նիկողայոսս այս յետ սուղ ամաց բազում նեղութիւնս հասոյց ժողովրդեանն, զորոյ զորպիսութիւն ծանիցես ի նոցին պատմութենէ, զոր զկնի առնելոց եմք։

---

1 Սաէ. պատճառեալ։

ԳԼ. ԺԹ.

Պատմութիւն կաթուղիկոսութեան եւ փախստեան Սահակ կաթուղիկոսին:

Որպէս կանխաւ պատմեցաք թէ Սահակն ընկալաւ զաստիճան կաթուղիկոսութեան, նա և թուղթ աղաչանաց ի Մելքիսեթէն և յԱմիրգունայ խանէն առ շահն. և միւս ևս թուղթ գրեաց Ամիրգունայ խանն առ որդին իւր Թահմազղուլի խանն, որ հանապազ ի սպասու շահին կայր՝ զի մոհրդար (կնքապահ) էր շահին։ Այս այն Թահմազղուլին է, որ Էջմիածնի քարինսն հրամանաւ շահին հանեալ առաքեաց յԱսպահան, և յայսմ ժամանակիս առ շահն ի սպասու կայր. առ որ գրեաց Ամիրգունայ խանն, թէ զայս Սահակս երևեցուսցես արքայի, և զամենայն խնդրուածս սորա ծանուսցես նմա, և խնդրեսցես տալ սմա կաթուղիկոսութիւնն։ Եւ Սահակն առեալ զթուղթս զայսոսիկ և գնաց ի Ֆահրապատ, քանզի անդ էր շահն ի ժամանակին յայնմիկ։ Եւ իբրև եհաս առ Թահմազղուլի խանըն, բազում բանս յուսադրանաց լուաւ ի նմանէ՝ թէ

մի ինչ հոգար, զինչ և խնդիր ունիս յարքայէ՝ զամենայն կատարեցից։ Եւ յետ աւուրց ինչ յանդիման արքայի կացուցեալ է զՍահակն, և շահն հարցմամբ տեղեկացեալ էր վասն նորա. և ընթերցեալ էր զթուղթսն զԱմիրգունայ խանին և զՄելքիսէթ կաթուղիկոսին. նա և իմացաւ շահն թէ Սահակն եղբօրորդի է Մելքիսէթին։ Եւ ինքն ևս Սահակն ընծայ ինչ ըստ կարողութեան իւրոյ մատուցեալ էր առաջի արքայի, ընդ որս էր և ձի մի պատուական։ Իբրև մատուցին զպատարագն Սահակայ առաջի թագաւորին, եհարց թագաւորն թէ՝ զմնացորդս պարտուցն, զորս ի կողմանէ մուղադային տալոց է Մելքիսէթ կաթուղիկոսն ի դիւան արքունի, յանձն առնո՞ւս տալ՝ թէ ոչ, և Սահակն յանձին կալաւ զտալն. վասն որոյ արքայ հաճեալ և հաւանեալ էր բանից, խնդրանաց նոցա՝ և տուեալ էր Սահակայ զկաթուղիկոսական իշխանութիւնն, և ասացեալ էր՝ շնորհաւոր լիցի քեզ կաթուղիկոսութիւնդ, այլ և Սահակայ ընծայ բերեալ ձին՝ նմին պարգևօք [1] շնորհեալ էր։ Եւ հրաման արար շահն գրել րաղամ զոր և գրեցին, բայց մնաց կնքելոյ և սաֆթ առնելոյ, քանզի թագաւորն և իւր քարխանէն ելեալ ի Ֆահրապատայ գնաց ի Ղազբին։ Եւ յաւուրսն յայնոսիկ զՖահրապատու նուիրակն սկիզբն էր արարեալ և առնուլ Սահակն. ասաց Թահմազղուլի խանն Սահակայ, զռաղամն տուր ցիս, զի ընդ իս տարեալ ես կնքել տամ. և դու կաց ի Ֆահրապատ զնուիրակդ արա, յետոյ գաս և քեզ տամ։ Այսպէս արարեալ՝ Սահակն մնաց ի Ֆահրապատ, և զրաղամն Թահմազղուլին տարաւ ընդ իւր ի Ղազբին, և շահն և իւր օրդուն (բանակ) անտի եկին ի Սուլթանիա, և յԱրտաւիլ, և դարձեալ ի Սուլթանիա։ Եւ մինչ Սահակն

1 Անտ. Երև. պարգևք։

զՖահրապատայ ժողովն արար և եկն ի Սուլթանիա՝ Թահմազղուլի խանն յառաջագոյն գնացեալ էր յԵրևան, քանզի Ամիրգունայ խանն հիւանդ կայր ի վիրէն, զոր առեալ էր ի Վրաց ազգէն ի պատերազմի, վասն այսորիկ առաքեցին զԹահմազղուլին յԵրևան զի տիրեսցէ երկրին: Եւ յետ գնալոյ Թահմազղուլի խանին, եկն Սահակն ի Սուլթանիա, իբրև ոչ եգիտ զԹահմազղուլի խանն, հարցեալ զնորին ծառայսն և խնդրեաց զրաղամն, և նոքա ասացին թէ ոչ գիտեմք:

Եւ իբրև անճար մնաց Սահակ կաթուղիկոսն վասն րաղամին, հարկեալ ի նեղութենէ՝ վերստին արզայ ետ շահին այլ իմն հնարիւ թէ՝ հիւանդացայ հուքմն կորեաւ» և շահն ասացեալ էր թէ գնա առ Դիւան բէկին: Իսկ Դիւան բէկին վասն թամահի խստութեամբ էր պատասխանեալ Սահակայ, մինչ որ թամահն իւր լցեալ էր, և ապա գրեալ էր նոր րաղամ, բայց ոչ էր կնքեալ. և մինչ այսպէս կայր, դարձեալ՝ ելեալ թագաւորն և գնաց ի Բաղդատ, գնաց զկնի և Սահակն: Եւ իբրև մեծամեծք ոչ կատարէին զխնդիրսն Սահակայ, հարկ եղև նմա միւսանգամ տալ արզայ շահին, և իբրև ետես զարզայն թագաւորն, ասաց. վաղուրեմն տուեալ եմ քեզ զխալիֆութիւն և զրաղամ. ասաց Սահակն՝ այո՛, թագաւոր տուեալ ես, բայց զրաղամն ո՛չ կատարեն, քանզի նոքա յոլովս խնդրեն ինչս՝ և ես զի ոչ ունիմ կարողութիւն տալոյ, վասն որոյ և նոքա յապաղեն ի մուհրել և ի սաֆթ առնել: Յայնժամ կոչեաց շահն փայտակալ ծառայ մի առաջի իւր և ասաց. եթէ այսօր զամենայն գործ և որպիսութիւն րաղամի դորին պարտիս կատարել՝ և ի վաղիւն յինքն տալ: Իսկ զինուորն ըստ հրամանաց թագաւորին զամենայն որպիսութիւն զդոյն հոգաց, և ետ Իսահակ կաթուղիկոսին զրաղամն: Եւ Սահակն առեալ զթուղթն և եկն յԱսպահան ի մէջ Ջու-

ղայեցւոց, և ոչ ընկալան զնա Ջուղայեցիքն, ոչ միայն զնուիրակ ոչ ետուն, այլ և հարևանցի պատիւ ևս ոչ արարին նմա։

Ի սոյն ժամանակի Դաւիթ կաթուղիկոսն յԱսպահան էր, ասացին նմա Ջուղայեցիքն, թէ մեք ոչ կամիմք որ սա լինի կաթուղիկոս, այլ զքեզ, դու գնա ի դուռն շահին, և առ զիշխանութիւն կաթուղիկոսութեան, և զոր ինչ և խարջ լինի, քեզ ընկեր եմք։ Եւ Դաւիթ կաթուղիկոսն իբրև հաւանեցաւ խորհրդեանս այսմիկ, և պատրաստեցաւ գնալ ի Բաղդատ ի դուռն շահին. իմացաւ զայս խորհուրդս Սահակ կաթուղիկոսն, և նա ևս ել գնալ ի դուռն շահին, տեսանել զկատարումն գործոյն։ Եւ վասն այսր խորհրդոյ խօսեցաւ Սահակն ընդ Դաւթին թէ՝ ընդէ՞ր առնես զհակառակութիւն և գործես զչարդ՛ և Դաւիթն պատճառս յօդեալ էր թէ, ոչ վասն հակառակութեան ինչ քեզ՝ գնամ, այլ վասն գործոյ իմոյ. քանզի այն Չուլթլուկն (գիւղ) զոր շահն պարգևեալ է ինձ, ոմանք յիշխանաց բռնութեամբ և պատճառանօք իմն հարկ առնուն վասն նորա. վասն այնր երթամ ի դուռն թագաւորին, որ ազատութեան թուղթ առնում Չուլթլուկին։

Եւ ի հասանիլն նոցա ի Բաղդատ, յառաջ Սահակն գնացեալ երևեալ էր շահին, և ի հարցանելն շահին թէ զինչ կամիս. և Սահակն ասաց՝ թէ զհրաման թագաւորի ոչ ընկալան. եհարց շահն թէ ով. և Սահակն վասն երկիւղի յանուանէ ոչ յիշեաց՝ այլ միայն ասաց թէ՝ յայտնի է թագաւորին։ Եւ շահն իմացաւ, որ խօջայ Նազարն է, վասն որոյ ասաց՝ գիտեմ զի քոռն է, և քոռ անունս շահն խօջայ Նազարին ասէր։ Զկնի աւուրց և Դաւիթ կաթուղիկոսն ևս եկեալ երևեցաւ շահին, բայց վասն կաթուղիկոսական իշխանութեան ոչինչ խօսեցաւ, քանզի ի հոգւոջ իւրում ծանուցեալ գիտաց՝

թէ ոչ լինի, վասն[1] որոյ և ոչինչ խօսեցաւ։ Այլ խօսեցաւ վասն Զուլթլուկին, որ և էառ զհրաման տիրելոյ զնա[2] ազատ ի հարկաց արքունի։ Եւ յետ այսորիկ Սահակ կաթուղիկոսն և Դաւիթ կաթուղիկոսն ելեալք ի Բաղդատայ, դարձեալ եկին յԱսպահան, և Ջուղայեցիքն այլուի ևս ոչ ընկալան զՍահակ կաթուղիկոսն։ Եւ յորժամ՝ ելին երկոքեան կաթուղիկոսքն ի Բաղդատայ, շահն ևս յետ սակաւ աւուրց ելեալ ի Բաղդատայ գնաց ի Ֆահրապատ։

Եւ ամաւ միով յառաջ շահն առ ինքն էր կոչեալ զՄովսէս վարդապետն ի Բաղդատ․ վասն սպիտակացուցեալ մոմին, և հարցեալ տեղեկացաւ վասն արուեստին, թէ որպէս սպիտակացուցանեն զմոմն։ Եւ ապա ի թագաւորական ծառայից իւրոց երեք ծառայ տուեալ էր նմա յաշակերտութիւն, և հրամայեալ էր, թէ գնա յԱսպահան և զարուեստդ զայդ ուսո ծառայիցդ մերոց՝ և բեր առիս ուր և իցեմ ես։ Եւ Մովսէս վարդապետն եկեալ յԱսպահան՝ ուսոյց զծառայսն, և զբազում մոմս պայծառագոյնս սպիտակացոյց, և յորժամ լուաւ թէ, շահն գնաց ի Ֆահրապատ՝ առեալ ընդ իւր զսպիտակացուցեալ մոմսն, և զուսուցեալ ծառայսն գնաց ի Ֆահրապատ․ և մատոյց թագաւորին․ իբրև ետես թագաւորն զսպիտակացուցեալ մոմն կարի պայծառ և հրճուալի, այլ և վասն յարմարագոյն թափելոյն, յոյժ հաճեալ և հաւանեալ էր․ նա և վասն ուսանելոյ ծառայիցն առաւելապէս ուրախացեալ էր՝ և զուարթացեալ խնդայր։

Եւ յետ սուղ ինչ աւուրց հասեալ էր ի վերայ աւուրք մեծի տօնի յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Եւ յաւուրս յայսոսիկ Ջուղայեցի խօջայ Նա-

---

1 Ոմն. ընթ. վասն որոյ և ոչինչ խօսեցաւ։ 2 Նոյն. Նմա։

զարն ևս ի Փահրապատ էր, հրամայեաց շահն խօջայ Նազարին, թէ պատուիրեա՛ վարդապետին, լաւագոյն իմն հոգաբարձութեամբ տեսանել զպատրաստութիւն՝ որ վասն Ջրօրհնէքին, զի հանդիսաւոր լիցի։ Եւ յաւուր տօնին՝ յորժամ եկեալ էր վարդապետն Մովսէս ի վերայ գետոյն յօրհնել զջուրն. ընդ գեղեցիկ յարմարումն զարդուցն, և ընդ կարգաւորաբար շարժումն, և ի կանգնիլն պաշտօնէիցն, յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ, և խանդաղատեալ ի վերայ Մովսիսի։ Եւ զայս իմանամք առնել խնամ ամենակալին Աստուծոյ՝ որ զսիրտ ամենայն թագաւորաց ունի ի ձեռին, և ոչ թէ հաճոյական արարմունքն Մովսիսի. այլ և խօջայ Նազարն ևս բանս բարիս յոլով խօսեցեալ էր ընդ շահին՝ վասն Մովսէս վարդապետին։ Իսկ շահն հարցեալ էր ի խօջայ Նազարէն թէ, զի՞նչ խնդիրք ունի վարդապետն ի սրտի իւրում, զի կատարեսցուք. ոսկի, արծաթ, և այլ ինչ, զոր կամի. իսկ վարդապետն և ոչ միոյ իրաց հաճեալ էր, քան զի ասէր. ոչ ունիմ ես կարիս մարմնաւոր իրաց, զի զպէտս իմ Տէրն իմ հոգայ օր ըստ օրէ։

Եւ յետ աւուրց ասաց խօջայ Նազարն առ արքայ. զլուսարարութիւն Էջմիածնի եթէ շնորհես սմա. յոյժ բարւոք առնես, քանզի ինքն ևս զայն խնդրէ։ Եւ խնամօքն Աստուծոյ թագաւորն շնորհեալ էր զայն խընդիրն, այլ և գրեալ զհրաման՝ տուեալ էր Մովսէս վարդապետին. և Մովսէս վարդապետն ելեալ ի Փահրապատայ գնաց յԷջմիածին։

Իսկ Սահակ կաթուղիկոսն մինչ էր յԱսպահան՝ լուաւ թե Մովսէս վարդապետն էառ զլուսարարութիւնն Էջմիածնի, ելեալ եկն Սահակ[1] ի Փահրապատ ի դուռն թագաւորին վասն այսց իրաց, իբրև մատուցեալ առ

---

[1] Ո֊ղ. չէ. Սահակ.

դիւան բէկին ծանոյց նմա զվտանգն իւր՝ և ասաց թէ զուլմ արարեալ էք ինձ, որ զէջմիածինն տուեալ էք Մովսէսին. և դիւան բէկին արար զպատասխանի, թէպէտ տուաք նմա զէջմիածինն, զնորին լուսարարութիւնն տուաք՝ և ոչ զկաթուղիկոսութիւնն. կաթուղիկոսութիւնն քո է, և լուսարարութիւնն նորա, դու զքոյն վարեա՝ և նա զիւրն. այլ և ի դրունս մեծամեծաց բազում շրջեցաւ Սահակն, սակայն ոչինչ օգտեցաւ։ Իբրև ետես թէ ոչինչ օգնէ, ելեալ ի Փահրապատայ և եկն ի Թարվէզ. եկին ընդ Սահակայ և շահի ղուլերն, որ զմուղադայ հարիւր թումանն պահանջէին, և սոքօք ելեալ ի Թարվիզու եկին յերկիրն Խոյայ։

Եւ Սահակն խորհրդով ներտրամադրեալ մտացն հայեցեալ նկատեաց թէ, ամենայն ազգն Հայոց հեռացեալ ի բաց կացին յինքենէ. այլ և Աթոռն Էջմիածին այնու կերպիւ գրաւեցաւ ի ձեռն Մովսէս վարդապետին։ Եւ մուղադայ հարիւր թումանն որ ամ յամէ բաղի մնաց, մնացեալ բաղին մինչև յութն հարիւր թումանն եհաս, և տակաւին օր աւուր բազմանայ, գիտաց հաւաստեաւ, զի ոչ այլ ինչ իրօք լինի փրկութիւն նմա, եթէ ոչ փախստեամբ։ Վասն որոյ եկեալ է ի Խոյ, զի կամէր ի Խոյայ փախչիլ թաքուն ի ղուլերէն ի քաղաքն Վան յիշխանութիւն և յերկիրն Օսմանցւոց։

Մինչ Սահակն ի վերայ այսր խորհրդոյ մտայոյզ լինէր՝ և կայր ի վարանման՝ թէ որպէս արասցէ, ոմանք ի հին բարեկամաց նորա, յորոց էին Մանուէլ եպիսկոպոսն Խոր-Վիրապայ, և Մկրտիչ եպիսկոպոսն Հաւուց Թառայ. սոքա այլովքն հանդերձ, որք կային յերկիրն Երևանայ, առաքեցին զթուղթս յուսադրական բանիւ առ Սահակն ի Խոյ, թէ մի երկնչիր, այլ եկ յԵրևան քաղաք, քանզի Թահմազղուլի խանն զթով է ընդ քեզ, և մեք ամենեքեան համախոհք քո եմք, վասն որոյ եկ

առ մեզ աստ, և ապա զպատշաճն գործոց խորհեսցուք։ Եւ յայսց յուսադրական բանից քաջալերութիւն ընկալեալ Սահակ կաթուղիկոսն՝ յայնժամ ոչ փախեաւ, այլ եկն յԵրևան. և շահի ղուլերն ևս ընդ նմա։ Իբրև շըրջեցաւ ընդ երկիրն ամենայն յայս կողմն և յայն կողմն, ոչ ոք ընդունէր զնա. և հայէր յերեսս նորա՝ մինչ որ զհիւրընկալութիւնն նորա հարևանցի և վեր ի վերոյ առնէին։ Իսկ ղուլերն հանապազ նեղէին զնա, թէ զթագաւորական պարտսն վճարեա՝ և զմեր տօնլուղն տուր, և նա՝ զի ոչ ունէր ինչս և յամենից կողմանց վհատեալ էր և անճար մնացեալ. և յուսադրող բարեկամքն իւր ոչինչ կարացին օգնել նմա, վասն որոյ հաստատուն եդեալ ի մտի զի հնարիւք իմն զերծեալ փախիցէ։

Եւ յաւուրսն յայնոսիկ եկն եհաս տօն յայտնութեան Տեառն, որ յամենայն ամի Մովսէս վարդապետն զտօնն զայն մեծախումբ հանդիսիւ և հրաշալի փառաւորութեամբ կատարէր. և էին ամենեքեան յԵրևան քաղաքի, Մովսէս վարդապետն, և Սահակ կաթուղիկոսն, և շահի ղուլերն։ Գնացեալ Սահակն ասաց ընդ ղուլերուն՝ թէ խանն հրամայեաց զտօն Ջրօրհնեացն բազմազան և մեծահանդէս կատարել, վասն որոյ ասաց ինձ Մովսէս վարդապետն, գնա դու յԷջմիածին՝ և զամենայն պատուական և զվաղեմի անօթսն՝ զոր դուք պահեալ էք ի դարանի՝ բեր աստ, զի զտօնն կատարեսցուք. և զայս ասելով հաւանեցոյց զնոսա՝ զի թոյլ տաճեն նմա գնալ. և նոքա հաւատացին նմա և թողին։

Իսկ Սահակն՝ քանզի ունէր զպատուական ձին՝ զոր ահն նմա պարգև էր տուեալ, հեծեալ ուղղեցաւ ընդ ճանապարհն Էջմիածնի, իբր թէ գնալոց է յԷջմիածին և բերելոց է զանօթսն։ Եւ ի հասանելն ի կէս ճանապարհին՝ փոխեալ զձև զգեստոյն ի ձև և ի կերպ զօրա-

կանի, և դարձուցեալ զերասանակ երիվարին, և դիմեալ դէպ ի Նախչուան քաղաք և ի սահմանս նորա։ Իսկ ի մտրակել օդապարիկ և քաջաղօրեղ և բարձրապարանոց երիվարին, ո՛չ թէ զերեսօք երկրի, այլ ընդ երկինիւք և ի վերայ թեւոց ամպոց առեալ անձէր զնա շեշտակի ի սահմանս երկրին Նախչուանայ. և եկեալ ի Նաւատեղն Դարաշամբայ գեղջն՝ և նաւով անցեալ զգետն Երասխ, և գնացեալ ի Ջորս՝ յորմէ ի Խոյ, և անտի ի Վան քաղաք։ Եւ այսու կերպիւ ճողոպրեալ փրկեցաւ Սահակ կաթուղիկոսն ի ձեռաց ղուլերոյն, և գնաց ի մասն բաժնի երկրին Օսմանցւոց։

Յետ այսորիկ իբրև զգացին շահի ղուլերն զփախուստն Սահակայ՝ եկին առ Մովսէս վարդապետն, թէ դու առաքեալ ես զՍահակն յէջմիածին վասն անօթոյ. և Մովսէս ասաց՝ ես զՍահակն ոչ տեսեալ եմ և ոչ առաքեալ, այլ նա այդու բանիւդ զձեզ խաբեալ է և փախեալ։ Եւ ղուլերն թէպէտ բազմաւ կերպիւ կողմէ ի կողմ անկան, երբեմն առ խանն գնալով, և երբեմն առ շեխն, և երբեմն առ դատաւորն, և երբեմն առ Մովսէս վարդապետն, ոչինչ կարացին պատուաստել ի վերայ Մովսէս վարդապետին. այլ ամենայն կողմանց վհատեալք, դարձան և գնացին ի տեղիս իւրեանց ղուլերն ամենեքեան։ Եւ այս եւս այսպէս [1]։

---

1 Ի բնագրին էջին ծանօթութեան գրեալ է. Վերայ դառնիչ և որբի լեղի, ո՛չ էր դառն քան զաղքատութիւն. բարձի զաղ և զարճիճ ի վերայ, ո՛չ էր ծանր քան զպարտս մարդոյն. է մեռն օրէնքն չէ+։

Գլ. Ի.

Վասն հակառակութեան Սահակ կաթուղիկոսին, զոր արար ընդ սուրբ Էջմիածնի եւ ընդ Մովսէս կաթուղիկոսին:

Յետ փախստեան Սահակ կաթուղիկոսին յաշխարհ տէրութեան Օսմանցւոց, մեռաւ թագաւորն Պարսից Շահաբաս՝ որ զհարիւր թուման մուղադայն եդեալ էր ի վերայ կաթուղիկոսացն, և փոխանակ Շահաբասին թագաւորեաց թոռն նորին Շահսէֆի:

Իսկ ազգն Հայոց ամենեքեան արեւելեանք և արևմտեանք, հանապազ հեծէին, և երկնէին և յոգւոց հանէին վասն հարիւր թուման մուղադային, որ ի տարապարտուց եդաւ ի վերայ աթոռոյն, զի սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի կայր ի վերայ ամենեցուն, և միահաղոյն տրտմութեամբ զգածեալ ի տարակուսի կային, և որքան մտածէին, ո՛չ կարէին գտանել թէ որով հնարիւք բարձցեն զայսպիսի ծանր և զստուար լուծս ի պարանոցէ աթոռոյն: Եւ ի խնամոցն Աստուծոյ գտին ժամանակս զայս, յորժամ

թագաւորեաց Շահաէֆին, քանզի նոր թագաւոր էր և մանուկ տիօք. և ամենայն նախարարքն և իշխանքն՝ որք կային ի դուռն նորա, ճանաչէին ի քրիստոնէից զալս երևելիս, և մանաւանդ զխօջայ Նազարն՝ որ նախապատիւ էր քան զամենեսեան. զոր և այս խօջայ Նազարս գրէ յԱսպահանայ առ Մովսէս վարդապետն, և փայեկաւ հասուցանէ ի նա՝ որ էր ի սուրբ Էջմիածին յայնժամ՝ գալ փութանակի ի դուռն արքային, զի թերևս հնարեսցեն բառնալ զհարիւր թումայն մուղադդայն։

Յայնժամ Մովսէս վարդապետն աճապարեալ եհաս յԱսպահան, և միջնորդութեամբ խօջայ Նազարիս բազում դանձս ծախեալ, և յոգնակի աշխատութիւնս կրեալ, հազիւ թէ կարացին բառնալ զհարիւր թուման մուղադդայն, որ ծանր բեռն անկաւ ի վերայ կաթուղիկոսարանին. զի Շահաէֆին հրամայեաց և գիր ետ թէ՝ անցայ ի հարիւր թուման մուղադդայէն։

Յետ այսորիկ քրիստոնեայքն խնդրեցին ի Շահաէֆի թագաւորէն վասն Մովսէս վարդապետին հրաման կաթուղիկոսութեան, և շահն ետ զհրաման և թուղթ կաթուղիկոսութեան Մովսէս վարդապետին։ Ապա ամենայն ազգն Հայոց, որք յարևելս և յարևմուտս կային՝ միաբանեցան թղթով և բանիւ, և արարին զՄովսէս վարդապետն կաթուղիկոս, և հաստատեցին ի սուրբ Աթոռն Էջմիածին։

Իսկ չարն սատանայ՝ զՄովսէս վարդապետի կաթուղիկոսութիւնն ծանր թուեցոյց ի սիրտ Սահակ կաթուղիկոսին, զի համարէր ի սրտի իւրում՝ թէ Մովսէսն առանց իրաւանց հնարիւք իմն եհան զաթոռն և զկաթուղիկոսութիւնն ի ձեռանէ իմմէ, և յինքն կորզեալ ընկալաւ զերկոսեանն. և հանապազօր նախանձ կրեալ ի սրտի իւրում, վասն որոյ սկսաւ նախանձախնդիր լինել։

Եւ Մովսէս վարդապետն, որ եղև կաթուղիկոս,

ունէր միաբանս և աշակերտս բազումս, և վասն նորոգութեան սրբոյ Էջմիածնի՝ որ նոր էր սկսեալ, առաքեաց զաշակերտսն իւր ի նուիրակութիւն՝ զի բերցեն ինչս յօժանդակութիւն նորոգման սուրբ Աթոռոյն Էջմիածնի։ Եւ Փիլիպպոս վարդապետն՝ որ էր և սա մի յաշակերտացն Մովսիսի, որոյ հրամանաւ գնաց ի նուիրակութիւն յԱրզրում և ի Բաղէշ և ի Վան, և մինչ էր Փիլիպպոս վարդապետն ի Վան քաղաքի, գտաւ անդ և Սահակ կաթուղիկոսն՝ որ շրջագայէր այսր և անդր, և դեռ նոր սկսեալ էր յսկիզբն գործոց հակառակութեան և Փիլիպպոս վարդապետն և երևելի արքն՝ որք ի Վան քաղաքին կային, որ էր Խանենց խօջայ Ամիրխանն, և խօջայ Թումքն. այլ և խօջայ Շիրաքն, և խօջայ Միրաքն, և խօջայ Փօլատն, և խօջայ Սարուխանն. և այլք բազումք, խօսեցան ընդ Սահակ կաթուղիկոսին, զի զհակառակութիւն և զխռովութիւնն թողցէ, և մի ի դրուն այլազգեաց դեգերելով ցրուեսցէ զինչս քրիստոնէից։ Եւ Փիլիպպոս վարդապետն համակամութեամբ դոլվաթաւորացն միաբանեալ յանձն առին՝ որ ի սուրբ Էջմիածնէ տացեն ի տարին զերիս հարիւր ղուռուշս յամենայն ամի անխափան Սահակ կաթուղիկոսին, որքան ինքն կենդանի է՝ ի պէտս ծախուց իւրոց կարեաց. և զՂուռուպաշայ վանքն իւրովք մտիւքն ետուն նմա, զի անդէն նստեալ կացցէ ի խաղաղութեան. և թէպէտ Փիլիպպոս վարդապետն և խօջաներն ի բազում աւուրս բազմակի խօսեցան զխաղաղութիւն, այլ Սահակ կաթուղիկոսն ոչ հաճեցաւ, և ոչ դարձաւ ի չար դիտաւորութեանց խորհրդոց իւրոց, այլ գնաց ի դուռն վէզիրին՝ առ ի կատարել զխորհուրդս սրտի իւրոյ։

Մինչ շրջէր Սահակն ի մէջ ազգին Հայոց՝ որք կային ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, այսր և անդր յաշխարհս և ի քաղաքս, զարս ոմանս ի վարդապետաց

և յեպիսկոպոսաց եգիտ իւրոց խորհրդոցն կամակից. յորոց մի էր և Պօղոս անուն վարդապետ ոմն, որ ի Սսոյ կաթուղիկոսարանէն՝ եղբօրորդի Յովհաննէս կաթուղիկոսին Սսոյ. Թէպէտ յոլովք կային չարի խորհըրդեանն համախոհք, այլ կատարիչք չար գործոյն, սոքա երկոքեանս էին, Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն։

Եւ Պօղոս վարդապետն գնաց ի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս առ Զաքարիա վարդապետն, և էր Զաքարիա վարդապետս յերկրէն Վասպուրականի՝ և էր յայսմ ժամանակի առաջնորդ ազգին Հայոց՝ որք կային ի Կոստանդնուպօլիս, զի անուամբ պատրիարգութեան՝ և Թագաւորական մուղադայիւ և հրամանաւ նստեալ էր առաջնորդ ի Կոստանդնուպօլիս։ Եւ էր սա յոյժ ներհակ Մովսէս կաթուղիկոսին, և ձեռնտու և օգնական Սահակ կաթուղիկոսին, վասն որոյ գրեաց արզայ, և մատոյց առաջի Թագաւորին Սուլթան Մուրատի, որ ի նմին աւուրսն ի Կոստանդնուպօլիս էր։ Խնդիրք մեր հայազուն քրիստոնէիցս այս է ի Թագաւորէն, զի շնորհեսցէ հրաման կաթուղիկոսութեան Սահակ կաթուղիկոսին, զի հովուեսցէ մերովք օրինօք զամենայն քրիստոնեայս՝ որք լիցեն ազգաւ Հայ, որք կան ընդ իշխանութեամբ ինքնակալ Թագաւորութեանդ Օսմանցւոց։ Եւ Թագաւորն ետ հրաման և թուղթ կաթուղիկոսութեան Սահակայ, որպէս և խնդրեաց Զաքարիա վարդապետն, և զայս թուղթ իշխանութեան՝ Զաքարիա վարդապետն ետ ցՊօղոս վարդապետն, և առաքեաց առ Սահակ կաթուղիկոսն, և պատուիրեաց ոչ թուլանալ և ոչ կասուլ ի չար դիտաւորութեանցն, այլ ջանալ և աշխատել մինչև ցկատարումն։ Եւ ի ժամանակիս՝ յորում զայս թուղթս եհան Զաքարիա վարդապետն ի Թագաւորէն ոչ էր անդ առ Թագաւոր՝ Թագաւորի մեծ վէ-

զիրն, որում անունն էր Խոսրով փաշայ՝ այր բազմահանճար և խորխտ իշխան, և բնաւ ոչ էր տեղեակ վէզիրն այսմ գործոյ. և որպէս յայտ է ամենեցուն՝ զի կարգ և սահմանք է Օսմանցւոց, զի զամենայն գործ և զորպիսութիւն ազգաց և ազանց, իշխանաց և պետաց, կողմնակալաց և կուսակալաց, վէզիրն հոգայ, տայ և առնու, որոյ սակս և կարգեալ է, և սոքա զանց արարեալ զվէզիրաւն, և առ Թագաւորն գնացեալ՝ առին հրաման կաթուղիկոսութեան։ Եւ այնու Թղթովն Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն եկին ի քաղաքն Տիգրանակերտ՝ որ է Համիթ՝ առ մեծ վէզիրն Խոսրով փաշայ, զի ի նմանէ ևս առցեն հրաման և Թուղթ կաթուղիկոսութեան։

Իսկ բարեպաշտ քրիստոնեայքն՝ որք յազգէն Հայոց բնակեալ էին ի քաղաքն Համիթ, որ էր խօջայ Երեմիայն, և խօջայ Մախսուտն, և Վանեցի խօջայ Րօհիջանն, որ էր այս վէզիրիս քուրքչի պաշի և հաւատարիմ և հաճոյական սպասաւոր առաջի նորա։ Այլ և Բարսեղ վարդապետն, որ էր նոյն քաղաքին առաջնորդ, և էր սա բարեկամ սուրբ Էջմիածնի և Մովսէս կաթուղիկոսին, քանզի և սա յաշակերտաց Սրապիոն կաթուղիկոսին էր, վասն որոյ և յիշեցաք ի ճառի Սրապիոնին։ Եւ այլ ևս գօլվաթաւորք և վարդապետք բազումք ժողովեցան ի Համիթ քաղաք ի կողմանէ սուրբ Էջմիածնի՝ և ջանային խափանել զՍահակ կաթուղիկոսի չար դիտաւորութիւնն։

Վասն զի Սահակ կաթուղիկոսն և ամենայն համախոհքն իւր սահմանեալ էին ի մէջ իւրեանց, թէ Սահակ կաթուղիկոսն առցէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի վէզիրէն, և գնացեալ ի Մշու սուրբ Կարապետն՝ իւր աթոռ կալեալ անդ նստցի, և անդ օրհնեսցէ մեռոն, և անտի առաքեալ բաժանեսցէ յազգս Հայոց, որք կան

ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, և զվաղեմի սահմանեալ զԹեմն և զվիճակն սուրբ Էջմիածնի հատեալ շորթեսցէ յինքն, և ընդ իւրով իշխանութեամբ զրաւեսցէ բռնութեամբ Թագաւորական իշխանութեան. և խափանեսցէ զնուիրակն և զիշխանութիւն սուրբ Աթոռոյն Էջմիածնի։

Իսկ քրիստոնեայք ամենեքեան թէ եկեղեցականք՝ և թէ աշխարհականք ի բազում աւուրս գնային առ Սահակ կաթուղիկոսն, աղաչէին և խնդրէին, մի մատներ զտառապեալ ազգս Հայոց ի բերան այլազգի բռնաւորաց՝ և մարդադէմ գազանաց։ Եւ խոստացան Սահակ կաթուղիկոսին, թէ ի քաղաքաց կամ ի վանօրէից որում և հաճեսցի՝ ինքեան լիցի թեմօք և վիճակօք, որքան ինքն կենդանի իցէ. և նուիրակ Էջմիածնի մի մացէ ի նա, այլ և ընդ սմին հանապազ յամենայն ամի ի տարին հինգ հարիւր ղուռուշ Էջմիածնի նստողն տայ Սահակ կաթուղիկոսին վասն իւր օր աւուր խարջին։ Արդ՝ այսպէս և ըստ այսմ օրինակի բազմակի և յոլովակի՝ գուն գործեալ հնարեցան, և մաղթէին գալ ի խաղաղութիւն Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն, և նոքա ոչ եկին։

Եւ Մովսէս կաթուղիկոսն՝ որ յԷջմիածինն էր, և Փիլիպպոս վարդապետն՝ որ տակաւին ի Վան էր, սոքա ևս յիւրաքանչիւր տեղեաց գրեցին թուղթ մաղթանաց առ Սահակ կաթուղիկոսն, և երևելի արամբք առաքեցին՝ զի դադարումն արասցէ խռովական գործոյն։ Եւ այլ ևս թուղթ առ բարեկամս իւրեանց, որպէս թէ համոզել զՍահակն ի խաղաղութիւն և կատարել զհաճոյս կամաց նորա, զինչ և խնդրեսցէ։

Իսկ Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն բնաւին ոչ եղեն ունկնդիրք, այլ գրեցին արզայ յիւրեանց կողմանէ և միջնորդութեամբ Նազուբ փաշային

հաստուցին ի ձեռն վէզիրին, և գոյացութիւն բանի արզային էր ըստ այսմ օրինակի։ Յայտ լիցի մեծի և անպարտելի տէրութեան հզօրիդ, խնդրեմք զի շնորհեսցես մեզ զիշխանութիւն կաթուղիկոսութեան ազգին Հայոց, եթէ լիցի այս բան հաճոյ կամաց վեհիդ՝ և արժանացուսցես զմեզ այսմ սպասաւորութեան, մեք յաւելումք ի գանձարանն արքունի ամ՝ յամէ իւրաքանչիւր տարւոջ ԺՌ. ղուռուշ, որ ամ յամէ տամք։ Նա և յաղագս այսմ գործոյ ի Թագաւորէն ևս խնդրեցաք Թուղթ հրամանի և նա պարգևեաց, զոր ահաւասիկ ունիմք առ մեզ. և արդ՝ ի քումմէ մեծութենէ ևս խնդրեմք, զի հաստատուն լիցի գործս մեր քոյով հովանաւորութեամբն։ Զայս Թուղթս արզայի Նազուբ փաշայն մատոյց առաջի վէզիրին, և վէզիրն ընթերցաւ և մտօքն հաւանեցաւ, բայց բանիւ ի[illegible] ոչ ասաց։

Եւ յայլում աւուր՝ արքն, ովք ի կողմանէ Էջմիածնի էին, նոքա ևս գրեցին արզայ և մատուցին վէզիրին ի պատշաճ ժամու, և գոյացութիւն բանից արզային այս էր։ Խնդրեմք յաշխարհաշէն և ի խաղաղարար տէրութենէ հզօրիդ՝ զի մի մատնեսցես զաղքատ և զտառապեալ ժողովուրդս ի ձեռս դոցա, զի դոքա վասն փառամոլութեան և ագահութեան իւրեանց մատնեն զողորմելի ռայաթն ի ներքոյ ծանր հարկի, որ է ժողովրդեանն մեծ սիթամ (տուգանք) և գործողացն մեղք։ Եւ յետ ընթերցման զարզային՝ պատասխանեալ է վէզիրն արանցն մատուցանողաց արզային. անխելք Հայեր, զի՞արդ ոչ տամ նոցա զկաթուղիկոսութիւն, զի նոքա ի տարւոջն զԺՌ. ղուռուշ յաւելուն ի գանձարան Թագաւորին։ Իսկ խօջայ Յուհիջանն՝ որ վասն հաւատարմութեան իւրոյ համարձակութիւն ունէր առաջի վէզիրին, ասաց առ վէզիրն. փառաւոր տէր իմ, եթէ զողորմելի և զտառապեալ ազգն Հայոց վասն գանձի վաճառես նոցա, ինձ

վաճառեա, և ես ոչ թէ ԺՌ դուռուշ, այլ ԻՌ· դուռուշ տամ։

Եւ ամենաթագաւորն Աստուած՝ որ ունի ի ձեռին զսիրտ ամենից թագաւորաց և իշխանաց՝ ըստ Սողոմոնի, ի վերայ բանից Ռուհիջանին եբաց զտեսարան մտաց վէզիրին, որ կրկնակի հարցումն արար․ և խօջայ Ռուհիջանն զամենայն որ ինչ պատշաճ էր ծանուցանելոյ ասաց անդէն․ և վասն նախանձ արկանելոյ ի սիրտն վէզիրին՝ զայն ևս յուշ արարեալ է նմա, թէ ամենայն պետք, և իշխանք, կողմնակալք և կուսակալք ազգին Օսմանցւոց խոնարհին ընդ տէրութեամբ քով՝ և առ քեզ գան խնդրել և առնուլ պատիւ և իշխանութիւն, իսկ սոքա զանց արարեալ զքև առ թագաւորն գնացեալ՝ առեալ են զիշխանութիւն կաթուղիկոսութեան։ Եւ յետ վճարման ամենայն բանիցն արձակեցան խօջայքն ի վէզիրէն՝ և ի բաց գնացին։

Եւ յաւուրն՝ յորում նստաւ վէզիրն յատեան բազմախուռն հանդիսիւ, առնէր դիւան՝ Եաղուբ փաշայն, որ էր միջնորդ և յարդարիչ գործոց Սահակ կաթուղիկոսին, զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն ածեալ ի հանդէսն յանդիման կացոյց առաջի վէզիրին։

Եկին ի նոյն հանդէս և արքն՝ որք ի կողմանէ Էջմիածնի, էին արք բազումք․ որոց գլխաւորն էր խօջայ Ներեմիայն, և խօջայ Մախսուտն, և խօջայ Ռօհիջանն, և Բարսեղ վարդապետն։ Խօսել սկսաւ վէզիրն առ Սահակ կաթուղիկոսն և առ Պօղոս վարդապետն՝ և ասաց․ զի՞նչ է յօժարութիւն կամացն ձեր [1], ո՛վ արք, որք դեգերիք ի դրունս իշխանութեանս․ պատասխանեաց Սահակն, զոր ինչ արզայ թղթովն մատուցաք առաջի Տեառն մերում։ Եւ վէզիրն հրամայեաց զարզայն ընթեռնուլ,

1 Ուղ· ձերոց·

յորում գրեալն էր՝ թէ ի Թագաւորէն ընկալայք հրաման կաթուղիկոսութեան, և արդ՝ ի քէն ևս խնդրեմք։ Եհարց վէզիրն զՍահակն, թէ արդարև ընկալեա՞լ էք թուղթ կաթուղիկոսութեան ի Թագաւորէն. և նա ասաց այո. մատեայք առ Թագաւորն և առայք զհրամանն։ Ասաց վէզիրն. դուք յորո՞ւմ աւուր ծանուցիք մեզ զորպիսութիւն ձեր՝ և մեք անփոյթ արարեալ ոչ կատարեցաք զխնդրուածս ձեր, որ զանց արարեալ զմեօք գնացիք առ Թագաւորն ձանձրացուցանել զգլուխ նորա։ Եւ նոյնժամայն հրամայեաց վէզիրն որոց կային առաջի իւր, սպասաւորաց և դահճաց դնել զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն ի Փալախայ և բրածեծ առնել. և այնչափ հարկանել մինչև կամ դառնալ ի հաւատոց իւրեանց յանօրէն օրէնս Մահմետի, և կամ ի ներքոյ փայտի մեռանիլ։ Իսկ սպասաւորք վէզիրին առ ժամայն կատարեցին զհրամանն. զի զՍահակ կաթուղիկոսն և զՊօղոս վարդապետն եդին ի Փալախայ և յերկուց կողմանց կանգնեալ արանց հաստ բրօք սկսան անողորմ հարկանել, միշտ հարկանէին, և միշտ ասէին. արդ՝ դարձէք ի մոլար հաւատոց ձերոց՝ և մտէք ի ճշմարիտ օրէնս մեր՝ և զերծջիք ի տանջանաց՝ և ի դառն մահուանէ, ապա թէ ոչ՝ ոչ դադարիմք ի հարկանելոյ մինչև ցմահն ձեր։

Եւ իբրև եղև՝ զի մատնեցան ի հարուածս գանից Սահակ կաթուղիկոսն և Պօղոս վարդապետն, և զինուորքն անողորմ և ուժգին հարկանէին, զի թերևս ի վտանգէ տանջանացն դառնայցեն յիւրեանց հաւատոցն։ Յայնժամ խօջայ Երեմիայն և ընկերքն իւր՝ զի մի գուցէ ոչ կարիցեն տևել տանջանացն՝ և դառնայցեն ի հաւատոցն՝ և լինիցի նոցա խիղճ մտաց, և ազգին Հայոց մեծ ամօթ և նախատինք, որ և առ ժամայն նոքին խօջայքն այսր և անդր ընթացան առ Նախապատիւ իշխանս վէզիրին, և խոստացան նոցա արծաթս բազումս, զի բանս

մաղթանաց խօսեսցին առաջի վէզիրին վասն փրկութեան Սահակ կաթուղիկոսին և Պօղոսի վարդապետին։ Եւ իշխանքն ըստ պատշաճին խօսեցան առաջի վէզիրին բարեխօսութիւն, որով ցածեաւ բարկութիւն վէզիրին, և հրամայեաց արձակել ի տանջանաց, և ի բաց վարել ի դրանէ դիւանին. և զինուորքն յետ արձակելոյն, հարկանելով և ձաղելով զկառափունս նոցա վարեցին արտաքս ի հանդիսէն։

Եւ իբրև այսպէս եղև կատարումն գործոյ Սահակ կաթուղիկոսին և Պօղոսի վարդապետին, այնուհետև եկն ի վերայ նորա ամօթ և պատկառանք. և անկան երեսք նոցա, և ոչ ևս կարէին հայիլ յերեսս քրիստոնէից, և ոչ համարձակէին շրջիլ ի մէջ մարդկան վասն ամօթոյ։

Եւ ապա Պօղոս վարդապետն գնաց ի մեծ քաղաքն կոստանդնուպօլիս, և անտի յՈւռումէլի, և անտի յաշխարհն Իլախաց, և կացեալ ժամանակս ինչ և ապա վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ։ Սոյնպէս և Սահակ կաթուղիկոսն, սակաւ սակաւ գնալով եհաս ի գաւառն Կարնոյ, և անտի յաշխարհն Վրաց, և անտի յԱրարատ գաւառ և ի սուրբ Էջմիածին, և մնաց անդէն ի սուրբ աթոռն յԷջմիածին։

Եւ ըստ ցաւակիր բնութեանս մարդկան պատահեցաւ ցաւ իմն ոտից Սահակ կաթուղիկոսին, և օր աւուր յաւելաւ ցաւն, յորմէ պատճառէ ուռան երկոքին ոտքն նորա, և օր աւուր յաւելաւ ուռոյցն, և եհաս մինչև ի փորն և բազում աւուրս մնաց այնպէս, և ցաւն այն յոյժ ցաւէր, և կարի վշտացուցանէր զնա։

Իսկ ի նեղութենէ ցաւոյն՝ յաւուր միում ասաց Սահակ կաթուղիկոսն, բառնալ զինքն և տանել ի տաճար սուրբ Էջմիածնի, և անկեալ ի վերայ իջման տեղեացն Քրիստոսի, յորում տեղի Քրիստոսն իջեալ է. և

բազում հառաչանք և փղձկեալ սրտիւ և յորդաբուխ արտասուօք և ցաւագին անձամբ զերեսս ի գետին փարելով, ի բազում ժամս ելաց դառնապէս, և ընդ արտասուացն մաղթողական բանիւ ասաց. Ո՛վ Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս, դատապարտեալ ծառայ քո եմ և մեղուցեալ հոգւով և մարմնով, եթէ կամք քո հաճի կեալ ինձ կենդանի, փութով փրկեա զիս ի ցաւոյս՝ և տո՛ւր ինձ առողջութիւն. և եթէ կամք քո հաճի մեռանիլ ինձ, փութով տուր ինձ զմահ, զի հանգեայց ի տառապանաց ցաւոյս։ Եւ անդէն ի նմին տեղւոջ ի մէջ եկեղեցւոյն կոչեալ առ ինքն զոմն ծեր եպիսկոպոս և խոստովանեալ զամենայն յանցանս մեղաց իւրոց, և հաւատով և յուսով հաղորդեալ ի պատուական մարմնոյ և յարենէ Որդւոյն Աստուծոյ։ Եւ ապա բարձեալ տարան ի տունն յորում կայր հիւանդ, և ի գիշերին յայնմիկ հասանէ նմա մահ՝ և աւանդէ զոգին, և վճարէ զկեանս իւր, և հանգչի ի տառապանաց ցաւոյն ըստ խնդրանաց իւրոց՝ և կատարեալ զկարգ թաղմանն ի վերայ նորա՝ տարեալ թաղեցին ի դիրս գերեզմանացն։ Արդ [1] զրաւ կենաց Սահակ կաթուղիկոսին և Պօղոս վարդապետին այսպէս եղև, որոց ողորմեալ Տէրն Քրիստոս ներումն արասցէ նոցա՝ անբաւ մարդասիրութեամբն իւրով. ամէն։

---

[1] Ոսկ. ձեռ. Արդ՛ . . . . . մարդասիրութեամբն իւրով ամէն.

ԳԼ. ԻԱ.

Պատմութիւն առաքինազործ արանց, Սարգիս եպիսկոպոսին եւ տէր Կիրակոսին, որք եղեն սկիզբն շինելոյ եւ հաստատելոյ անապատաց: Որովք եւ պատճառք ամենայն[1] բարեկարգութեան, վանօրէից, եւ եկեղեցեաց, եւ նոցին բնակողաց:

Այս[2] Սարգիս եպիսկոպոս էր յաշխարհէն Արարատեան, ի գաւառէն Ամբերդոյ, որ է Արագածոտն, ի գեղջէն, որ ասի Ցաքենի, որ է մերձ ի գիւղն Կարփի, և այժմ է աւերակ, և անմարդաբնակ, բայց ի ժամանակս հարց մերոց էր շէն գիւղս յայս Ցաքենի, ուստի էր այս Սարգիս եպիսկոպոս: Որոյ եկեալ բնակեցաւ ի մեծափառ ուխտն Սաղմոսավանից, լեալ սպասաւոր բազմահաւաք սրբութեանցն՝ որք կան անդր, որ և զկնի ամաց ինչ եղև առաջնորդ նոյն վանացն:

Բայց գոյր մերձ այս վանիցս գիւղ մի փոքրիկ, ուստի այր ոմն քրիստոնեայ՝ որսորդ գոլով շրջէր աւուրց յաւուրս

---

1 Ոսկ. չէ. ամենայն: 2 Նոյն. Սարգիս եպիսկոպոս ոմն:

ի լերինս որսալ երէ վայրիս։ Եւ եղև յաւուր միում գնալ առնս այսմիկ ի մեծ լեառն Արագած վասն որսոյ, և ի շրջիլն իւրում ի գլուխս լերինն, պատահեցաւ առն ումեմն ճգնաւորի, որ ի խոռոջս վիմացն նստեալ կայր ձգկեալ, ունելով ի գլուխն վեղար և զիւրև` փիլոն. և մօտ եկեալ[1] առ ի ստուգիւ գիտել թէ զինչ իցէ այն, ետես զի մարդ էր հաւաստեաւ, և մեռեալ էր, և այնպիսի նստեալ կայր, և մարմինն անապական։ Եւ ի տեսլենէս յայսմիկ[2] անկաւ երկիւղ և սոսկումն ի վերայ առնս այս որսորդի. և ոչ ևս կարաց ժուժել ի տեղին յայն, այլ դարձ արարեալ անտի եկն ի տուն իւր։ Եւ եկեալ ի Սաղմոսավանք պատմեաց ամենեցուն զննջումն ճգնաւորին, որ պատահեցաւ նմա ի գլուխ լերինն. իբրև լուաւ զայս Սարգիս եպիսկոպոսն, և ստուգեալ վերահասու եղև` թէ յորում տեղւոջ իցէ։

Եւ յաւուր միում յանձնեալ զանձն իւր Աստուծոյ Սարգիս եպիսկոպոսն` յուսացեալ յառաջնորդութիւնն Աստուծոյ, ելեալ գնաց ի լեառն Արագած, և շրջեալ այսր և անդր յաւուրս երիս, եգիտ զվախճանեալ ճգնաւորն, և բազում փափագանօք և ջերմեռանդն սիրով համբուրէր զձեռս և զոտս նորա, և յետ հեղման բազում արտասուաց` ամփոփեալ թաղեաց զնա նորին զգեստիւն. դարձաւ և եկն ի վանքն։

Եւ եղև այս պատճառ. զղջման Սարգիս եպիսկոպոսին. և հրաժարելոյ յաշխարհէս, քանզի տաղտկալի թուեցաւ յախորժակս սրտի նորա պատիւ և ընդունայն, խենէշ և խառնակ վայելչութիւն աշխարհիս այսորիկ։ Եւ յայնմ օրէ և առ յապա խնդրէր Սարգիս եպիսկոպոս հեռանալ յաշխարհէ, և հետևել լուսաշաւիղ երկնաչու ճանապարհին առաքինական վարուց։ Բայց ոչ

---

1 Այլ. մօտեալ։ 2 Նոյն. յայսմանէ.

դոյր ի ժամանակին յայնմիկ անապատ և կամ գիտող կարգաց կրօնաւորական վարուց, վասն բազում հինից թշնամեաց եկելոց ի վերայ և վրդովմանց՝ և աւերանաց[1] աշխարհիս Հայոց, ամենեւին բնաջինջ եղեալ էր և բարձեալ նշոյլ և նշմարան առաքինի գործոց՝ և բարի կարգաց յաշխարհէս Հայոց։ Եւ մինչ կայր ի մէջ այսմ վարանմանս Սարգիս եպիսկոպոսն, եդ ի մտի իւրում գնալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ յերկրպագութիւն տնօրինականաց Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և ելեալ գնաց յԵրուսաղէմ։

Դարձեալ ի սոյն ժամանակի գտեալ եղև միւս ևս այլ ոմն այր[2], որում անունն էր տէր Կիրակոս, որ կամօք և յօժարութեամբ նման դոյր կամաց և յօժարութեան Սարգիս եպիսկոպոսին։ Եւ էր տէր Կիրակոսս այս ի քաղաքէն Տրապիզոնայ, մտեալ ի կարգ աշխարհի, բայց ոչ վայելեալ, քանզի զկնի սակաւ աւուր վախճանեալ ամուսնոյ նորա, և ինքն մնացեալ իբրև զտատրակ ողջախոհ, և հանապազօր խոկայր ի պատուիրանս Աստուծոյ, և անձանձիր ընթեռնոյր զգիրս աստուածայինս և ի միտ առնոյր զպատգամս նոցա, և ջանիւք և երկօք կրթէր զանձն ըստ հրամանի գրոցն կենցաղավարիլ։

Ի սոյն ժամանակի յայսպիսում խորհրդեան գոլով տէր Կիրակոսիս՝ լուաւ յումանց վասն Սարգիս եպիսկոպոսի, թէ՝ և նա զղջացեալ է յաշխարհէ, և կամի հրաժարել՝ և հետևել առաքինի վարուց, վասն որոյ տէր Կիրակոսն ելեալ ի Տրապիզոնայ և եկն յերկիրն Արարատու ի Սաղմոսավանք՝ առ ի միաբանիլ ընդ Սարգիս եպիսկոպոսին. և ոչ կարաց տեսանել զնա, զի գնացեալ էր յԵրուսաղէմ։ Վասն որոյ և սա եդ ի մտի իւրում

1 Ոսկ. աւերմանց. 2 Նոյն. չէ+ այր.

գնալ յԵրուսաղէմ, և դարձեալ ի Սաղմոսավանից եկն ի Տրապիզոն՝ վաճառեաց զամենայն ինչս իւր. զմասն ինչ ետ աղքատաց. և զտունն և զանդաստանն իւր աւանդեաց եկեղեցւոյն Տրապիզոնայ, և զմասն ինչ էառ ընդ իւր Թոշակ ճանապարհին, և ելեալ գնաց յԵրուսաղէմ. և պատահեցան նոքա երկոքեանս միմեանց, Սարգիս եպիսկոպոս և տէր Կիրակոս. և յետ աւուրց ինչ առ միմեանս կեցոյ, գտին զիրեարս միով դիտաւորութեամբ՝ և միով յօժարութեամբ և կրիւք ախտացեալս. և միակամ և միաբան և միախորհուրդ եղեալ յայնմ օրէ և առ յապա կենցաղավարիլ ի միասին։

Բայց խնդրէին տեղի անքոյթ և պատշաճաւոր անապատի, և հեռի ի շփոթմանց աշխարհի, և լուեալ յումանց գիտողաց թէ այդպիսի տեղիք բազումք գոն յարևելեայ մասն աշխարհին Հայոց, և մանաւանդ յերկրին Սիւնեաց՝ որ և ի հին ժամանակաց անապատ եղեալ է յաշխարհին յայնմիկ, որոց տեղիքն արդէն ևս երևին։ Եւ իբրև ստուգեցին զբանն, ելեալք յԵրուսաղեմէ յօժարութեամբ դիմեցին և եկին յաշխարհս արևելեան՝ յերկիրն Սիւնեաց, և հասին ի մեծափառ ուխտն Ստաթէ առաքելոյն՝ որ այժմ ասի Տաթևու վանք։ Եւ սուղ ժամանակս կացեալ անդ, գնացին ի տեղին, որ անուանի Զորոյ վանս, որ ասի Ցրուանց. և զկնի սուղ ժամանակաց գնացին անտի ի տեղին, որ անուանի Թանահատի վանք. և անտի ևս եկեալ որոնէին առաւել ևս անքոյթ և անշփոթ և յապահով տեղի, մինչև գտին զտեղին, յորում այժմ շինեալ կայ մեծ անապատն. և անդ շինեցին եկեղեցի և զխուցս ըստ պատշաճի անապատի, և միայնակեցի, որպէս ցուցանէ գիրք հարանց վարուց և այլ ճգնաւորաց, նսեմ և մթին փոքրագոյն. և սկսան անդ զետեղիլ։

Իսկ Տէրն տէրանց՝ և Աստուածն աստուծոց՝ որ

միշտ զբարին կամի և յառաջացուցանէ, յաջողէր և ուղղէր զգործս նոցա՝ և ինքն ձեռնտու և օգնական լինէր․ վասն զի ի վերայ բարի համբաւոյ նոցա եկին բազումք և յարեցան ի նոսա և եղեն նոցա միաբանք և բնակիչք տեղւոյն․ ոչ միայն աշխարհականք և աննշանք, այլ և եկեղեցականք և անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք, և քահանայք։ Որ էր Պօղոս վարդապետն Մոկացին, և Մովսէս վարդապետն Սիւնեցին, որ զկնի եղև կաթուղիկոս, որ և զերկուցս պատմութիւնսն և զարգիւնսն յայլում ճառի երկար պատմելոց եմք։ Եւ Ներսէս վարդապետն Մոկացին, որ զկնի գնաց ի Կղզին Լմայ և անդ շինեաց անապատ։ Եւ Թումայ եպիսկոպոսն Տաթևու, որ զկնի եղև վարդապետ, և գնաց յերկիրն Շամախու հովուել և առաջնորդել ժողովրդեան աշխարհին։ Եւ Կարապետ եպիսկոպոսն Էջմիածնեցի, որ զկնի գնաց ի Սևան կղզին, և զայն տեղին շինեաց անապատ՝ և կայ հաստատ մինչև ցայսօր։ Եւ Շամբեցի Արիստակէս վարդապետն, որ զկնի եղև առաջնորդ նոյն մեծ անապատին, և անդ եկաց մինչև ցվախճան կենաց իւրոց և անդէն թաղեցաւ։ Եւ միւս տէր Արիստակէսն, որ էր ի գաւառէն Բարկուշատայ, որ զկնի գնաց ի տեղին զոր անուանեն Տանձափարախ, և շինեաց անապատ՝ և անդ եկաց մինչ ցվախճան կենաց իւրոց՝ և անդէն թաղեցաւ և տեղին անապատ կայ հաստատուն մինչև ցայսօր։ Եւ Պաւլիթ եպիսկոպոսն՝ որ ի Շամքօռու ձորէն՝ և ի ցեղէ իշխանաց, զոր Ղարամանենց կոչեն, սա ևս եկեալ եկաց ի մեծ անապատս, և ապա ելեալ գնաց ի ձորն Շամքօռու՝ և անդ շինեաց անապատ, զոր կոչեն Ջարեքագետի անապատ, որ է բազմաժողով եղբարց բնակութիւն, և յոյժ հաստատուն ամենայն կարգօք և սահմանօք անապատի մինչև ցայսօր․ և ինքն Պաւլիթ եպիսկոպոսն անդ վախճանեցաւ, և անդէն թա-

ղեցաւ։ Եւ այլք բազումք և յոլովք՝ որք անդէն կացին՝ և առ տէր փոխեցան, և որք յայլ ուրեք գնացեալ շինեցին անապատս և վանօրայս,

Քանզի իբրև զմայրն Սիոն՝ զորմէ ասէ մարգարէն Եսայի թէ ի Սիոնէ ելցեն օրէնք՝ և բան Տեառն յԵրուսաղեմէ· սոքա երկոքին արքս եղեն սկիզբն անապատիս, և անապատս եղև մայր և ծնող ամենայն անապատաց, և առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց։

Վասն զի որպէս ասացի, աստ վարժեալ ուսաւ Մոկացի Ներսէս վարդապետն զվարս կրօնաւորական, և ելեալ գնաց ի գաւառն Վասպուրականի, և եմուտ ի կղզին Լմայ ի մէջ ծովուն, և անդ ժողովեցան առ նա բազմութիւնք եղբարց, և եղև անապատ հաստատուն ամենայն կարգօք և կրօնիւք միակեցութեան վարուց· և ինքն Ներսէս վարդապետն անդէն կացեալ կրօնաւորական ժուժկալութեամբ՝ կատարեաց զընթացս իւր առաքինի վարուք, անդէն վախճանեցաւ և անդէն թաղեցաւ, և վախճանն նորա եղև ի թուին մերում ՌՀԶ· ամի։

Եւ զկնի նորին յաջորդեաց զառաջնորդութիւն տեղւոյն ընկեր նորին Ստեփաննոս վարդապետն։ Եւ յայսմ ժամանակիս և ևս աճեցին միաբանք Լմայ անապատիս, վասն որոյ ոմանք ելեալ ի Լմայ՝ գնացին ի տեղին՝ որ անուանի Կտուց՝ որ և սա կղզի է ի մէջ նոյն ծովուն, և անդ ևս շինեցին անապատ և եղբայրանոց և է այժմ հաստատ ամենայն կրօնաւորական կարգօք։

Են և այլ ևս մանունք [1] անապատք շինեալք այսր և անդր, բայց մեք զնշանաւորսն յիշեցաք, որ յայս մեծ անապատէս ուսեալ և վարժեալ գնացին յայլ տեղիս՝ և հաստատեցին· որոց ամենեցուն եղեն սկիզբն և պատճառ վերոյասացեալ երկոքեան արքն։ Սարգիս եպիսկոպոսն

1 Առնփ. Երեց. մանր։

և տէր Կիրակոսն։ Քանզի միանգամայն յամենայն սրտէ լքին ի բաց զաշխարհ, և բարեաւ մեալ ասացին ամենայն կենցաղական հոգոց սորա, և արարին զինքեանս խաչեալ աշխարհի, և զաշխարհ ինքեանց, ըստ խրատու առաքելոյն. որով ինձ աշխարհ ի խաչ ելեալ է, և ես աշխարհի։ Վասն զի զցայգ և զցերեկ յինքեանս կրեալ ունէին զՔրիստոս յընդունարանս սենեկի հոգւոց իւրեանց, որ ոչ միայն ի ժամ աղօթից և յեկեղեցւոջ, այլ և ի խցի ժուժկալեալ արգելուին զինքեանս, պարապելով յաղօթս և ի խօսակցութիւնս Աստուծոյ, և յընթերցումն սուրբ գրոց, զաղօթս արարեալ կերակուր, և զարտասուս՝ ըմպելի։

Եւ Հոգին սուրբ՝ որ քննիչ է խորոցն Աստուծոյ՝ և վերակացու տեսութեան իմաստից գրոց, բանայր առաջի մաքուր մտաց նոցա զդրունս գիտութեան, և խելամուտ առնէր զնոսա շաւղաց գրոց, որովք լուսաւորեցան ինքեանք, և լուսաւորեցին զմերձակայս և նոքօք՝ զազգս Հայոց։ Քանզի մինչև ցայս վայր տգիտութեամբ խոպանացեալ և կորդացեալ էր ազգս Հայոց, և ոչ միայն ոչ ընթեռնուլին, այլ և ոչ զգիրս գիտէին, և ոչ զզօրութիւնս գրոց. վասն զի անպիտացեալ էր գիրքն յաչս մարդկան, և իբրև զկոճղս փայտից անկեալ յանկեան ուրեք՝ լցեալ հողով և մոխրով։ Եւ իբրև սոքա մտին ընդ լծով ծառայութեան առաքինի գործոց, յօժարութեամբ ընթեռնուլին զգիրս և կամակար մտօք կրթէին զինքեանս, գործովք կատարել զընթերցեալն բանին. վասն զի աներկբայ մտօք հաւատային գրոց բանիցն՝ թէ Աստուծոյ պատգամք են։ Եւ սոքա երկոքին այրքս վերոյասացեալ արամբքն, զորոց անուանս յիշեցաք, վարդապետաց և եպիսկոպոսաց, սկսան յընթերցմանէ և յուսուցանելոյ զգրոց վերստին նորոգել և յարդարել զամենայն կարգս բարիս, անապատաց՝ և վանո-

րէից, և ժամատեղւաց՝ օգնութեամբ և օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ, որ վերակացու է խորոց իմաստից գրոց, բանայր, և յայտնէր, և ծանուցանէր առաջի տեսութեան մտաց նոցա զիմաստութիւն, և զուղիղ կարգս, որում՝ ի խնդիր էին։

Որով սահմանեցին՝ թէ պարտ է անապատաւորաց միայն կալ՝ և ժուժել ի խցի. և պահել զմիտս և զխորհուրդս սուրբս ամենայն անմաքուր մտածութեանց հոգեկանաց և մարմնականաց. և թողուլ զկամս իւր և լինիլ հնազանդ և կատարող կամաց առաջնորդին, և ոչ լինիլ ումեք ստացուած առանձին, այլ ամենայն ինչ հասարակաց լինիլ. և առաջնորդն հոգասցէ զամենայն եղբարց պէտսն, և բաշխեսցէ ում և պիտոյասցի. և ինչ ոչ ունիլ ի խցի՝ և կամ ուտել. և հանապազօր ի տարին պահօք անցուցանել, բաց ի շաբաթէ և ի կիւրակէէ և ի տէրունական տօնից։ Իսպառ հրաժարեալք ի գինւոյ և ի մսոյ. և յամենայն աւուր յայգն և յերեկոյն խոստովանիլ անխափան զյանցուածս և զմտածութիւնս աւուրն. և յամենայն շաբաթ օր և ի կիրակի օր, և ի տէրունական աւուրսն զգիշերն պաշտմամբ անցուցանել մինչև ցառաւօտն, և ի սոյն աւուրս անխափան մատուցանել պատարագ. և հասարակ ամենեքեան մեծ և փոքր [1], ի միասին գալ ի մարմնաւորաց գործոց կոչնակն, և ի սեղանն մարմնաւոր, և ի տեղի աղօթից, և իւրաքանչիւրոց առանձին դնել զմարմնաւոր կերակուրն, և ի մեծէ մինչև ցփոքունս միաչափ. այնպէս և զբաժանեսն մրգաց՝ միաչափ։

Այլև զորպիսութիւն և զձև զզգեստուցն զոլին ի գրոց, զքուսիթայն, որ է գլխոյ թօփին, և զքառակուսին, և զզօքեմն, և զցպսին, որ է մազեղէնն, ի ներ-

5 Առեդ. Երէց.։ մեծ և փոքերք.

քոյ զգեստուցն ի վերայ մերկ մարմնոյն, և հասարակ ամենեցուն զգեստն բովանդակ ասուեղէն լինի՝ և ոչ բամբակեղէն. և զասուեղէն շապիկն երկայն պճղնաւոր առնել մինչ ի յոտն. և գօտի մաշկեղէն։ Եւ սահմանեցին ամենեցուն թէ իւրաքանչիւր ոք իւրովք զգեստուքն շրջեսցի, եթէ միայնակեաց իցէ՝ քուսիթային և քառակուսովն. եթէ երեց իցէ՝ փիլոնաւն, եթէ աբեղայ իցէ՝ փիլոնաւն և վեղարաւն։ Այս կրօնաւորական զգեստ ամենեւին անհետ լեալ էր, և այժմ սոքա դտին, իսկ վեղար և փիլոն թէպէտ գոյր, այլ միայն ի ժամ աղօթիցն զգենուին, և զկնի արձակման ժամուն ի բաց եդեալ յինքեանց, և իբրև զաշխարհականս շրջէին։

Այլև զկարգ ժամատեղացն սահմանեցին, զառաջին ժամ գիշերոյն պաշտամամբք կատարել ի տէրունի աւուրսն։ Եղանակաւ յիշեսցուք այլովքն. և երկու կանոն սաղմոս և ի վերջն կանոնագլուխ ձայնիւ. և հանգստեան շարական և աւետարան, պաշտօն վասն ննջեցելոց. և օրհնութիւն ըստ խորհրդոյ աւուրն, և ի վերայ՝ քաղուածք շարականաց. և Թագաւորք, և ալէլուք ձայնիւ. նոցին զկնի ընթեռնուլ զՅայսմաւուրք, և ի վերայ նորա շարական ըստ պատշաճի ճառին, որ ընթերցաւ. և զկնի երկու կանոն եւս սաղմոս. զհետ նորին հարցն իւրովք սարօքն. և զարևելից ժամն, իւրով կանոնաւ սաղմոսովն. և զկնի առաւօտու ժամուն, և երեկոյի ժամուն, յետ արձակելոյն՝ զիւս խրատականս ընթեռնուլ յամենայն աւուր։ Եւ զերրորդ ժամ ցերեկին, և զվեցերորդ ժամն, և զիններորդ ժամն, իւրեանց նշանակեալ սաղմոսովն, զատ և որոշ ի միմեանց յիւրաքանչիւր նշանակեալ ժամու տեղին. և զկնի զպատարագն սուրբ մատուցանէին. և զարարողութիւն պատարագին՝ դպրօք և սարկաւագօք, և իւրաքանչիւր ոք իւրովք նշանակեալ զգեստուքն. ամենեքեան խոստովանեալ և

ապա զգեստաւորեալ, ահիւ և դողութեամբ կալ առաջի պատարագին, և մտաւոր և սրտառուչ աղօթել և գիտել ի սրտի՝ թէ զինչ աղօթեն. և ի սկզբանէ պատարագին մինչև ի վախճան ցընթերցուածն, իբրև ճաշեցին աւետարանին, անդադար և անմիջոց հեղուլին արտասուս ի մէջ եկեղեցւոյն իբրև զբղխումն աղբեր: Եւ զկնի պատարագին, ոչ փաղփաղակի առնուլին կերակուր, այլ յելանելն յեկեղեցւոյն լռելեայն ընթանային իւրաքանչիւր ոք ի խուղսն իւր, զի զընկալեալ շնորհսն և զլուսաւորութիւն մտացն՝ զոր ընկալան ի սուրբ պատարագէն, մի գուցէ փարատեսցի ի մտաց նոցա, և անդ ևս ի խցին ժամ մի առանձին աղօթիւք անցուցանէին մինչև հանդարտէր բորբոքումն սրտից նոցա. և յորժամ հարկանէին զկոչնակ սեղանոյն՝ ապա ամենեքեան ժողովէին ի սեղանատունն՝ և միահաղոյն նստէին ի սեղան՝ և ուտէին լռելեայն, և յօրն միանգամ առնուլին կերակուր՝ ի բոլոր տարին. և յուտելն զկերակուրն սահմանեցին զիրս ընթեռնուլ, զի որպէս քիմք զհամս ճաշակեն, սոյնպէս[1] և միտք զբանս Աստուծոյ քննեսցեն:

Արդ՝ այս յայտնի կարգ և սահմանք նոցա, զոր վերոյասացեալ վարդապետքն սահմանեցին երկոքին արամբքս, իսկ զծածուկ առաքինութիւնս նոցա՝ զոր ունէին, նա միայն գիտէ, որ քննէ զսիրտս և զերիկամունս որդւոց մարդկան: Քանզի ամենեքեան զարդարեալք էին զանազան առաքինութեամբք, ոմանք ոտնակացութեամբ, ոմանք պահոց պնդութեամբ, ոմանք արթնակացութեամբ, ոմանք արտասուահեղութեամբ, ոմանք լռակացութեամբ, ոմանք հիւանդաց սպասաւորութեամբ, ոմանք այլ կերպիւ, մինչ զի ամենեքեան արժանացեալք էին շնորհաց սրբոյ հոգւոյն, առ որ հաճոյ լինէր սրբա-

1 Ոսկ. այնպէս.

նուէր աղօթք նոցա։ Որպէս պատմեն վասն տէր Կիրակոսի զայս ինչ։ Էր ոմն այր եկեալ յաշխարհէ և լեալ միայնակեաց, և ի սակաւ ժամանակս կացեալ յանապատին, թէպէտ և խոստովանեալ էր և զհանդերձս աշխարհականի փոխեալ, այլ ոչ էր հաղորդեալ. զի այնպէս էր կարգ անապատին, որ ի կատարել տարւոյն ապա զնորեկս հաղորդէին. և այս եկեալ այրս տակաւին ոչ էր լցեալ զտարին, վասն որոյ և ոչ էր հաղորդեալ. պատահեցաւ սմա հիւանդանալ և անհաղորդ մեռանիլ, և սորին անհաղորդ մեռանիլն՝ խղճմտանք մեծ եղև ի վերայ անապատաւորացն՛ և ոմանք կամեցան յայնմ աւուր թաղել զնա։ Իսկ տէր Կիրակոսն պատճառէր, և բարուրս յօգէր. և ոչ թողոյր ի թաղել, և ասէր թէ՝ այրս այս եկն առ մեզ՝ և եկաց յայսքան աւուրս՝ և ոչինչ օգտեցաւ ի մէնջ, և արդ անհաղորդ ես մեռաւ։ Եւ արդ՝ առանց պաշտաման և պատարագի թաղէ՞ք զսա, արդ՝ ողորմեցարուք սմա, և պահեցէք այսօր ես՝ և ի վաղիւն զպաշտօն և զպատարագ արարեալ վասն հոգւոյ սորա՝ և այնպէս թաղեցէ՛ք զդա. և միաբանքն հաւանեցան առնել այնպէս, և ոչ գիտէին զկիրս մտաց տեառն Կիրակոսի։ Իբրև էանց գիշերն, և ի վաղիւն տեսին զմեռեալն յարուցեալ և նստեալ, որ խօսէր և շարժիւր՝ և յիւրովի եղեալ ի մահճացն՝ գնաց յեկեղեցին, և հաղորդեցաւ ի սրբոյ մարմնոյ և յարենէ Տեառն, և գնաց ի տեղի հանգստեան իւրոյ, և ի գալ միւսում գիշերին դարձեալ վախճանեցաւ, զոր տարեալ թաղեցին ի դիրս եղբարցն. զայս պատմէին զտեառնէ Կիրակոսէն։ Եւ այլ բազում պատմութիւնս՝ արժանի լսելոյ, պատմեն ի միակեցաց անապատին. վասն զի Հոգին Աստուած վերակացու էր նոցա։

Եւ էր հոգաբարձու ի մարմնաւոր կողմանէ, անապատին Սարգիս եպիսկոպոսն, և գրոց ուսուցիչ տէր Կի-

րակոսն, և Պօղոս վարդապետն, և Մովսէս վարդապետն,
և Ներսէս վարդապետն, և Թումայ եպիսկոպոսն, որք
բազում ժամանակս կացին ի միասին սոքա ամենեքեան.
և ապա տէր Կիրակոսն և Թումայ եպիսկոպոսն գնա-
ցին յերկիրն Քշտաղս մերձ ի գիւղն Հօչանց, շինեցին
անապատ՝ և անդ բնակեցան: Իսկ Սարգիս եպիսկոպոսն
եկաց մնաց ի նոյն մեծ անապատին, և համբերութեամբ
տանէր ամենայն նեղութեանց եկելոց ի վերայ, մինչև
եհաս ի խորին ծերութիւն առաքինական վարուք, զըն-
թացսն կատարեալ՝ և զհաւատսն պահեալ փոխեցաւ
աստի յերկիրն կենդանեաց ի նոյն մեծ անապատին, որ
և անդէն կայ թաղեալ պատուական նշխարք մարմնոյ
նորա. որում վախճանն եղև ի թուականութեան մերում
ՌԿԹ: Իսկ տէր Կիրակոսն, որ գնաց ի Հօչանց՝ կացեալ
անդ կրօնաւորական ժուժկալութեամբ, ի նմին տեղւոջ
մերձ ի գիւղն Հօչանց՝ յիւրում անապատին եղև վախ-
ճան սորա ի թուականութեան մերում ՌՀ. և գնաց առ
սիրեցեալն իւր Քրիստոս, որում փափագեալ հանապազ
կրէր ի հոգին իւր. և ի նմին տեղւոջ կայ թաղեալ պատ-
ուական նշխարք մարմնոյ նորա, ի փառս Քրիստոսի Աս-
տուծոյն օրհնելոյն յաւիտեանս ամէն:

Գլ. ԻԲ.

Այլ եւս պատմութիւն վասն սոյն մեծ անապատիս:

Շարադրեսցուք [1] վասն սոյն մեծ անապատիս միւս եւս պատմութիւն. զի յետ շինութեան անապատիս, իբրեւ անցին ի վերայ ամք քառասուն եւ հինգ կամ աւելի, արեւմտեան կողմն անապատին, գետինն պատառեցաւ ընդ կողմն հիւսիսի, եւ եհաս մինչեւ ի կողմն արեւելից մինչ ի հանդիպոջ լեռնավէմն: Իսկ յարեւմտից կողմանէ անցեալ զգերեզմանօքն, եհաս մինչ ի լեառն արեւմտեայ կողմանն, եւ այնքան պատառեցաւ լայն եւ ընդարձակ եւ խորագոյն, զի թէ եզն եւ ձի եւ այլ անասուն դէպ լինէր անկանիլ ի խորափիտ պատառածին՝ ոչ կարէր ելանել. այլ եւ բաց ի սմանէ այլ եւս պատառուածք այսր եւ անդր յոլովք լինէին օր յաւուր: Եւ յայսմ պատճառէ երկիւղալից կասկած անկաւ ի սիրտս բնակչաց անապատիս, թէ գետինն յորոյ վերայ շինեալ կայ անապատն՝ սահելոց է ի տեղւոջէ իւրմէ: Նաեւ ամենայն զաւառա-

---

1 Ոսկ. չէ. Շարադրեսցուք վասն սոյն մեծ անապատիս միւս եւս պատմութիւն. զի յետ.

կանքն, որք անդ պատահէին, ի տեսանելն զպատառուածն զայն, զնոյն վկայէին։

Իբրև եհաս Թուականն մեր ՌԾԼ· և յԱպրիլ ամիսն, եղև անձրևային գարունն այն, և պատառուածքն սկսան օր յաւուր լայնանալ, և հաւաստեաւ հաստատեցաւ ի սիրտս ամենեցուն՝ թէ այսօր կամ վաղիւն սահեալ հոսելոց է ստորակայ գետին անապատիս։ Եւ եղև յաւուր աշխարհամատրան կիւրակէին, որ էր Ապրիլ ամսոյ քսան և հինգ, ընդ ժամանել ի ժամ երեկոյին՝ մերձ ի մուտս արևուն, սկսաւ պատառիլ գետինն ի հարաւայնոյ կողմանէ անապատին ի բարձունէ ի լեռնէ անտի, և իբրև զմրրկեալ ամպ դիմեալ գայր ի բարձանց լերին, ահագին դղրդմամբ և թնդմամբ, և որոտմամբ և ճայթմամբ, իբրև զորոտումն կայծակնացայտ ամպոց և այնքան ահագին էր որոտումն և թնդումն, մինչ զի ամենայն բնակիչք Շինահայր գեղջն, և Հալիձոր գեղջն, լուեալ զձայնն, և ելեալք յանդիմանակայ տեղւոջ գեղջն իւրեանց տեսանէին զարհաւիրն զայն։ Զի յաւիտենից հաստակառոյց լեռնական վէմք պատառեալք յինքեանց, ի միմեանց ի բաց տրոհէին, և իսկզբանց կառուցեալ վէմք՝ որք հիմն էին գետնոյն, եռացեալ ի վեր գային յերեսս գետնոյն, և յոլով ժամանակաց ծառք և տունկք ամենայն, եթէ ընկուզի, և թէ կաղնի և ընդ նոսին մեծամեծ վէմք՝ զառ ի ստորև սուզեալ ի ներքս յանդունդս կլեալք աներևութանային։ Եւ մեծամեծք վէմք հատեալք ի լեռնէն զկնի միմեանց հոլովեալ գային ի վայր, որոց ի բաղխելն ընդ միմեանս փշրեալ և խորտակեալ ի բաց ցնդէին. և ուժգնութիւն սոցին բախմանցն, թնդումն սաստիկ առնէր ամենայն վայրացն, և ձայն գոռալոյ և որոտման սոցա խլացուցանէր զլսելիս՝ և սրտամեռ առնէր զամենեսեան։

Եւ որովհետև երեկոյացեալ էր օրն և սակաւ մնա-

ցեալ ժամ աւուրն, և այն ևս էանց և ժամանեաց գիշերն ի վերայ սկսաւ անձրև թօրիլ և լինիլ սաստիկ մթնագիշեր, այնքան զի և առ ընթերակայ կացեալքն զմիմեանս ոչ տեսանէին։ Եւ ամենայն բնակիչք անապատին ելին յանապատէն. և գնացեալ ժողովեցան յարևելեան կողմն անապատին՝ ի քարեայ լեառն, և անդ գետեղեալ վառեցին լապտերս և մեծամեծ մոմս, կային ահարեկ պակուցմամբ, և մնային կատարածին, և ըղձային[1] լուսոյ առաւօտուն։

Բազումք համարեցան թէ անապատն միահաղոյն քանդեսցաւ ընդ այլ սահեալ գետնոյն, բայց արարչական խնամ զթածին Աստուծոյ հայեցեալ ի մշտապաղատ մաղթանս ողորմելի եղբարցն՝ ոչ եթող խապառ աւերիլ, այլ սակաւ. քանզի արևմտեան կողմն անապատին, պարիսպն և հիւրատունն, և ախոռք անասնոցն, և համբարանոցքն, և մասն ինչ ի սենեկէ եղբարցն, և արևմտեան կողմն մեծ եկեղեցւոյն՝ յետուստ կուսէ արևմտեան սեանցն, սոքա ամենեքեան աւերեցան։

Եւ յոյժ ահագին և ահընկէց էր գործեցեալ լինն, քանզի որպէս լեռնացեալ կոհակք ալեաց ծովու՝ որք զհետ միմեանց սահեալ ընթանան, սոյնպէս և հաստահիմ վէմք քար և հող փայլացն այնմիկ եղեն։ Զի ի սրտէ լեառն[2] յորոյ վերայ Թանահատի վանքն կայ շինեալ, ի խորոց անդնդոց բնական վէմք լերինն սկսան պատառիլ, և հողով և խճով և մեծամեծ վիմօք՝ իբրև զտունս եկեալ զառ ի վայր հօսին. և ի վերուստ եկեալ հօսինն՝ իւրոյ բռնութեամբ և ուժգին հօսմամբն զիւր առաջի փայլսն ի բնական տեղւոյն ի բաց ստուցեալ, առեալ[3] ընդ իւր ի միասին զկնի միմեանց ընթանային իբրև գլորձանս ծովուց ել և էջս առնելով։ Եւ այսպէս

1 Ոսկ. ըղձանային. 2 Նոյն. լերինն. 3 Նոյն. չիք առեալ։

սահելով գնացին և հասին ի գետն մեծ Որոտան, որ ի մէջ ձորոյն անցանէ, և արգելլին զգնացս ջուրցն իբրև ժամս ութն. և ջուր գետոյն, որ ի վերուստ իջանէր եկեալ ծովացաւ և լցաւ տեղին, և ապա ի կողմանէ ինչ եգիտ ինքեան զտեղիս գնալոյ՝ և գնաց[1] և քարինքն և հողքն. որք արգելան յեզր գետոյն, եղեն բլուր մեծ։

Իսկ գերեզմանատունք անապատաւորացն էր յարեւմտեան կողմանէ անապատին, և ընդ հոսիլ վայրացն այս գերեզմանատունքս ևս հասարակ միահաղոյն ամենեքեան ի միասին, խորագոյն և անդնդային յատակաւն իւրեանց[2] ոստեալ ի տեղւոջէ իւրեանց սահեալ գնացին[3] բազում հեռաւորութեամբ՝ ի վայրի ուրեմն զկայ առեալ կայացան։ Այլ և ի սոյն տեղւոջ էին թաղեալ սուրբ վարդապետն Պօղոս, զորոյ զպատմութիւնն արարեալ եմք յայլում ճառի և Սարգիս պարոնտէրն՝ որոյ սակս յանցեալ ճառիդ պատմեցաք. և Արիստակէս վարդապետն, որ զկնի Սարգիս պարոնտէրին նա եղև առաջնորդ անապատին. և ճգնաւոր և ընտիր և առաքինագործ աբեղայն տէր Բարսեղ. սոքա չորեքեանս առընթեր միմեանց թաղեալք կային, և ի վերայ իւրեանց շինեալ կայր մատուռն. և ի ժամ հոսելոյ տեղւոյ գերեզմանատանն խնամքն Աստուծոյ իբր զգործ ինչ սքանչելեաց արար ի վերայ սրբոցս. զի ամենեւին գերեզմանք սոցա ոչ խախտեցան, որ և քարինք տապանացն ոչ թիւրեցան, այլ զգլուխս իւրեանց դէպ ուղիղ ընդ արեւելս ընկալեալ կայացան, որպէս և նախկի թաղեալք էին. բայց մատուռն՝ որ ի վերայ սոցա կայր, փլուզեալ ցնդեցաւ։

Եւ ի լինելն այսմ ամենայնի գործոցս սոսկալի՝ խնամօքն Աստուծոյ ամենակալի՝ ոչ ումեք եղև վնաս մարդոյ կամ անասնոյ, այլ միայն եղբայր ոմն մնաց ի

---

1 Ոսկ. չէ. և գնաց. 2 Նոյն. իւրմէ. 3 Նոյն. գնաց.

մէջ իւրոյ խղին և անդէն մեռաւ ի ներքոյ հողոյն. զի ընդ սկսանիլ հոսմանն ի ժամ երեկոյին, ոմանք յեղ-բարցն գնացեալ ազդեցին նմա ելանել անտի՝ զի մի մնաս-ցէ ի ներքոյ հողոյ, և նա ի վաղ ժամանակաց ցանկանա-լով սպասէր մահու՝ ոչ եկն արտաքս, այլ մնաց անդէն՝ յուսով ակնկալեալ Տեառն, զի թերևս վասն անպարտ մահուան իւրոյ ընկալցի այցելութիւն հոգւոյ իւրոյ ի բազմագութ Տեառնէ Աստուծոյ։

Իսկ միւս այլք բնակիչք անապատին ամենեքեան ժողովեալք էին ի լեառն, որ կայ յարևելից կողմն անա-պատին, յորդաբուխ արտասուօք և մեծաւ հառաչանօք կոծէին զանձինս, և աղաչէին զԱստուած, զի թերևս զերծցին ի սատակմանէ, և փրկեսցի շինուածք անապա-տին ի փլմանէ. քանզի յուսահատեալ էին վասն ահագին արհաւրացն եղելոյ, և մինչև ցլուսանալ ի լոյս առա-ւօտու երկուշաբաթին, իբր զպաղատաւոր ոք՝ յերկունս կային։ Իսկ այն՝ որոյ գթութիւնն բնութեամբ է, աղ-բիւրն ողորմութեան Տէր Աստուած, ոչ միայն զնոսա փրկեաց ի սատակմանէն, այլ և զանապատն ևս ամբողջ պահեաց և ոչ եթող աւերիլ. զի ամենազօր Աջոյն իւրով անխախտ պահեաց զանապատն, բաց յառաջ ասացեալ աւերելոցն։

Նաև ոմն յեղբարց անապատին պատմեաց այսպիսի տեսիլ երազոյ. ասաց թէ տեսանէի զոմն չքնաղատես մեծաշուք, պայծառ զգեստուք՝ հեծեալ յըսպիտակ երի-վար, և կայր ի վերայ տանեաց եկեղեցւոյն, որում առաջի ժողովեալ եղբարցն, պատմէին զանցս ահագին վշտացն. իսկ երևեալ փառաւոր այրն զնոյն երկրորդեալ խօսէր ընդ եղբարցն։ Որ և ի կարգս խօսից իւրոց ասաց այրն փառա-ւոր, և ես վասն այդմ իրաց կամ և հոգամ, որոյ սակս սակաւ մի ցաւեաց ծունկս իմ, զի զոտս իմ եդեալ դէմ երեսաց քարանձաւին զդէմ կալեալ ունէի լերինդ,

զի մի փլուզեալ ծածկեսցէ զանապատս եղբայրանոց. և դուք մի ծուլանայք ի գործոց առաքինութեան, և հանապազ գոհութեամբ փառաւորեցէք զՏէր Աստուած՝ որ փրկեաց զձեզ. և առ յապայն ևս փրկեսցէ ողորմութեամբն իւրով. որում փառք յաւիտեանս ամէն:

Գլ. ԻԳ.

Պատմութիւն վարդապետութեան եւ վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի:

Սուրբ վարդապետն Պօղոս էր յերկրէն Մոկաց ի գեղջէն՝ զոր անուանեն Բար, եկեալ ի սուրբ և ի մեծահռչակ ուխտն Վարագայ յարեցաւ առ Կարապետ վարդապետն, զորոյ զմականունն Զագ վարդապետ ասէին. որում աշակերտեալ ուսաւ զամենայն գիրս Հին և Նոր [1] Կտակարանաց, և իբրև կատարեալ եղև գիտութեամբ և հասակաւ, ետ նմա Զագ վարդապետն իշխանութիւն վարդապետութեան, և նա գնացեալ ի մէջ քրիստոնէից քարոզէր զպատուիրանս Աստուծոյ: Եւ քարոզելով եկն ի Թարվէզ քաղաք, և անդ ի կիր արկեալ զգործ վարդապետութեան իւրոյ, և յամենայն աւուր քարոզիւ և դասիւ և յորդառատ վարդապետութեամբ լուսաւորէր զժողովուրդս քրիստոնէից՝ որք և պատահէին անդ: Քանզի յամենայն կողմանց եկեալ վաճառականքն, որք գային ի Թաւրէզ, իբրև պատահէին լրոյ քարոզութեան սրբոյ վարդապետին՝ մխիթարեալ

1 Աձ. Հնոց և Նորոց.

զուարճանային հոգւով, և օրհնութիւն մատուցանէին Աստուծոյ՝ տուողին այնպիսեաց շնորհաց։

Եւ ինքն Պօղոս վարդապետն էր վարուքն սուրբ և առաքինի, հանապազօր սաղմոսերգ, և արտասուօք և մտաւոր աղօթարար, որ զգիշեր շաբաթ աւուրն՝ յորում լուսանայր միաշաբաթ օրն, յերեկոյէ սկսեալ յոտին կանգնէր, և մինչ ի լուսանալն հսկումն առնէր, և զամենայն շաբաթու գիշեր այսպէս առնէր. զՅիշեսցուքն, զկանոն գլուխն, զալէլուն խազով ասէր՝ հանդերձ ութկանոնաւ սաղմոսիւն, և յառաւօտուն զփրկական խորհուրդ պատարագին մատուցանէր։ Այլ և հրաժարեալ էր ի գինւոյ և ի մսոյ ամենևին, ի շաբաթ օր և ի կիւրակէ միայն ճաշակէր ի նաւակատեաց կերակրոց. և զայլ ամենայն աւուրս տարւոյն պահօք կեայր. այլ և ոչինչ առնոյր ինչս և զստացուածս յումեքէ, զի անարծաթ քարոզէր։ Եւ թէ տային ժողովուրդքն ինչս, զայն ևս ի պէտս գերեաց և կարօտելոց և ի շինումն եկեղեցեաց ծախէր. այլ և՝ ուր և գնայր ի ճանապարհ թէ հեռաւոր և թէ ի մօտաւոր՝ հետիոտս գնայր, քանզի զգիրս քարոզին և զայլ գրեանս ինքն և աշակերտքն իւր բառնային շալակով՝ և գնային։ Եւ ի Խարվէզ քաղաքի թէպէտ գոյր ժամատուն, բայց տեղի պատարագի ոչ գոյր ի նմա, իսկ սա ի նմին ժամատան շինեաց գեղեցիկ խորան պատարագի։

Եւ ժողովուրդքն յոյժ սիրէին զնա վասն ճշմարիտ վարուց նորա. և վաճառականքն՝ որք էին յերկրէն Գողթնեաց։ աղաչէին զնա գնալ յերկիրն իւրեանց ի քարոզութիւն, յորոց մի էր Ցղնեցի խօջայ Հայրապետն և այլք ևս ընդ նմա. և զայս բան ի բազում աւուրս թախանձէին։ Իսկ վարդապետն հաճեալ ի բանս նոցա գնաց ի գաւառն Գողթնեաց, և եկեալ ի գիւղն Ագուլիս։

Կայր անդէն եկեղեցի մի առաքելաշէն՝ զորմէ ասէին

թէ՝ սրբոյ առաքելոյն Թադէոսի շինեալն է, որ և յետ բազմաց ամաց զկնի բանալոյ դրանն, մեք ևս տեսաք զեկեղեցին զայն։ Եւ էր դուռն եկեղեցւոյն այնմիկ ի բազում ժամանակաց ինքնին փակեալ առանց նգի և փակաղակի, և թէպէտ բազում անգամ աշխատեալ էին և ջանացեալ զի բացցեն, և ոչ էր լեալ հնար բանալոյ, վասն որոյ վհատեալ էին և ի բաց կացեալ. և փակումն դրանս այսմիկ ամենայն ուրախութեամբ պատմեալ եղև վարդապետին։

Եւ յորժամ եհաս գիշեր շաբաթուն ի լոյս միաշաբաթին, եկեալ վարդապետին ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ եկաց առաջի փակեալ դրան եկեղեցւոյն՝ զի հսկումն արարեալ զցայգապաշտօնն կատարեսցէ։ Եւ կացեալ առաջի փակեալ դրանն սկսաւ ի խորս սրտի իւրոյ ուժգին գոչմամբ և յորդահոս արտասուօք աղաչել՝ և խնդրել ի հեշտալուր Տեառնէ զբացումն դրան եկեղեցւոյն, զի ընկեալ սրտիւ հեղոյր զանձն առաջի Տեառն յորդահոս արտասուօք, զոր բղխէր յաչացն իւրև զաղբիւր։ Եւ նախ քան զսկսանել հսկմանն՝ արար դռնաբացեք, և իբրև բաղխեաց զդուռն երիցս անգամ և ասաց. բա՛ց մեզ Տէր, բա՛ց մեզ Տէր, բաց մեզ Տէր զդուռն ողորմութեան քոյ՝ որ ողբալով կարդամք առ քեզ. և շնորհօքն Աստուծոյ առանց ուրուք մերձենալոյ առ ժամայն ինքնին բացաւ դուռն։ Իսկ որք մերձն կային ի քահանայից գեղջն և յաշխարհականաց՛ հիացեալ զարմացեալ ապուշ կային, և ապա եկեալ ի միտ վաղվաղակի ընթացեալ ազդ առնէին ամենայն ժողովրդեանն, որոց ի լսելն՝ թողեալ զտունս և զընտանիս՝ ի խոր գիշերին փութանակի անդր ժամանէին մեծամեծք և փոքունք, և ի տեսանելն՝ օրհնութիւն ի բարձունս վերառաքէին Աստուծոյ։ Եւ իբրև բացաւ դուռն եկեղեցւոյն, մտեալ ի՛ներքս ամենայն ժողովրդեամբ՝ ուրա-

խութեամբ և ցնծութեամբ անդէն ի նմին եկեղեցւոջ սկիզբն արարին գիշերային կարգին, և յառաւօտուն մատուցին զփրկական խորհուրդ պատարագին, և ամենեքեան ի մի բերան օրհնէին զհրաշագործն Աստուած, որ արար զնոսա արժանի այնմ [1] պարգևաց. և հնչեաց հռչակ լրոյս այսմիկ ընդ ամենայն կողմանս գաւառին ի մէջ քրիստոնէից՝ և այլազգաց, և որք լսէին հիանալով օրհնէին զԱստուած:

Արդ՝ ի բանալ փակեալ դրանս այսմիկ, մեծ իմն խորհուրդ յայտնեալ ցուցաւ. քանզի ընդ նմին բացաւ և դուռն քարոզութեան Բանին կենաց յաշխարհս արեւելեան, ուր ցայն վայր ի խոր խաւարի անգիտութեան նստեալ կային, որպէս թէ ի ժամանակս կռապաշտութեան, եկեղեցականք և աշխարհականք, և որպէս Տէրն Քրիստոս՝ արեգակն արդարութեան ծագեցաւ յաշխարհ, և լուսաւորեաց զամենեսեան հաւատով աստուածգիտութեան, այսպէս և սուրբ վարդապետն Պօղոս զկողմնս արեւելեան. վասն զի եբարձ ի միջոյ զամենայն աւելորդ անկարգութիւնն յեկեղեցականաց և յաշխարհականաց, և կարգադրեալ շքեղագոյն զամենեսեան ուղիղ քարոզութեամբ: Վասն զի յետ բանալոյ դրան եկեղեցւոյն, բացաւ դուռն հաւատոյ աշխարհիս արեւելեան, քարոզութեամբ և ամբիծ և անկեղծ վարդապետութեամբ սորա, զի առաքելաբար շրջէր յամենայն տեղիս, քարոզէր զԲանն կենաց, կարգէր զքահանայս. շինէր զեկեղեցիս. և հաստատէր զբարի կարգս յեկեղեցիս և ի գիւղս, ժողովէր մանկունսն յուսումն սրբոց գրոց, և ի տեղիս տեղիս հաստատէր դպրատունս, և յիւրոց աշակերտաց կացուցանէր դպրապետս, և զոմանս ի մանկանց զպատշաճաւորս ընդ իւր շրջեցուցանելով ուսուցանէր. որ և

---

1 Ուղ. այնց.

ամենեքեան հասին ատեանի՝ աբեղայ և երեց, բաւական ինքեանց և ժողովրդեան։ Եւ յամենայն տեղիս՝ ուր և շրջեցաւ նա, շինեաց զեկեղեցի, քանզի յառաջ քան զնա յամենայն տեղիս ոչ գոյր եկեղեցի, և թէ ուրեք գոյր ևս, և այն ևս անշուք, և անճահ եկեղեցի անուան խրթին և նսեմ՝ խարխալեալ և բլբլեալ, լցեալ հողով և մոխրով, որով ձևն և դիրն թիւր և թեք։ Իսկ սա ուր և հասանէր, հիմնարկէր եկեղեցիս՝ պատշաճաւոր ձևով դէպ ուղիղ ընդ արևելս ունելով զդիրս՝ գեղեցիկ շինուածով խորանքն. և լուսամուտքն՝ և կաթուղիկէն և այլքն ամենայն։

Եւ ըստ այսմ սարասի քարոզելով և զեկեղեցի շինելով, եհաս մինչ ի գիւղաքաղաքն Աստապատ, և նախ զնոցին վանքն շինեաց՝ որ յանուն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային է՝ ամուր պարսպիւ, և երկաթապատ դրամբք. և յետ աւարտմանց վանիցն՝ սկսաւ զգեղջն եկեղեցին շինել ըստ թախանձանաց ժողովրդեան գեղջն, և վասն զի եկեղեցին փոքր էր, և ոչ էր բաւական տանիլ զժողովուրդսն, զի բազումք էր ժողովուրդն. ընդ որոյ կամեցան ի խցերոյն [1], որք շուրջ զեկեղեցեաւն էին, քակել և խառնել յեկեղեցին, զի մեծասցի։ Իսկ աբեղայքն՝ որք բնակէին ի գեղջն և էին տեարք խցերոյն, խածռեալ ըմբոստացան. և ոչ թողուլին քակել զխցերն, բայց ժողովրդոցն ոչինչ փոյթ արարին [2] զամբոխմանէ նոցա, այլ դիմեալք ի վերայ քակեցին զխցերն։ Առ որ դժուարեալ աբեղայիցն՝ գնացեալ ի վանքն առին զեպիսկոպոսունսն և եկին ի գիւղն և արարին աղմուկ մեծ, և բանս անպատշաճս ասէին վարդապետին։ Իսկ սրբոյն բերեալ յինքեան զնմանութիւն ճշմարիտ հեզոյն Յիսուսի, խոնարհելով ի մտի, թէ հալածեսցեն զձեզ ի քաղաքէ

1 Ուղ. ի խցէցն. 2 Նոյն. արարեալ.

յայսմանէ՝ փախիջիք ի միւսն. վասն որոյ զանխուլ յամենայնէ ելեալ ի գիշերի լռելեայն հեռացեալ գնալ յայլ գիւղ։ Իսկ ժողովուրդքն իբրեւ զգացին զգնալն վարդապետին, յանժամ դիմեալ ի վերայ աբեղայիցն, հարկանելով քարիւ եւ փայտիւ արտաքս վարեցին ի գեղջէն, եւ վաղվաղակի ընթացեալ զկնի վարդապետին՝ բազում աղաչանօք դարձուցեալ զնա ածին ի գիւղ անդր. եւ սկսան շինել զեկեղեցին լայն եւ ընդարձակ՝ եւ բարձր շինուածով, եւ կաթուղիկէ ի վերայ յօրինեալ. նոյնպէս եւ զայլ յարկս տանցն եւ զպարսպին [1]։ Իսկ աբեղայքն եւ եպիսկոպոսունքն իբրեւ տեսին թէ՝ ինքեանք ոչ կարացին ինչ ստանանել վարդապետին, գնացեալ ի Դարաշամբ եւ զամենայն եպիսկոպոսունս Նախավկայի վանացն միաբանեալ՝ [2] ընդ ինքեանս առեալ եկին ի վերայ վարդապետին, ըստ օրինակի Թագաւորացն Ամաղեկայ՝ որք միաբանեալ եկին ի վերայ [3] զօրավարին Աստուծոյ Յեսուայ. բայց որպէս նոքա անդ պարտեալ գտան, սոյնպէս եւ սոքա աստ. վասն զի թէպէտ բազում անգամ հակառակեցան վարդապետին, այլ նա ամենեւին ոչ լքաւ ի բարւոք յառաջադիմութենէն։

Իսկ միաբանեալ աբեղայքն առաւել եւս դրդեալք ի նախանձուէ՝ գնացին առ Մելքիսէթ կաթուղիկոսն, որ զիշխանութիւն կաթուղիկոսութեան դաբալաւ առեալ էր ի Պարսից թագաւորէն, եւ այնքան դրդեցին զնա ի բարկութիւն՝ մինչ զի բազում անգամ առաքեաց առ վարդապետն բանս սպառնականս եւ յանդիմանութեան. թէ ելցես յերկրէս մերմէ, եւ գնասցես յերկիր քո՝ ուստի եկեալ ես, զի ոչ է պիտոյ մեզ խաբեբայ եւ նորահանուկ քարոզութիւն քո եւ ոչ կեղծաւոր վարքն քո, ապա

1 Ոսկ. պարսպին։ 2 Նոյն միաբանեցուցեալ։
3 Աւէտ. Երեւ. չէ. ի վերայ։

թէ ոչ, առակ նշաւակի, և այպն կատականաց լինիցիս ի ձեռս իմ։ Իսկ վարդապետն բնաւ ոչինչ առնէր փոյթ զայնմանէ, վասն զի յոյս նորա հաստատուն էր ի Տէր, այլ հանապազ շրջէր, և քարոզէր, և շինէր զեկեղեցիս, և յարդարէր զամենեսեան ուղիղ կարգօք և սահմանադրութեամբք։

Իսկ յետ ամաց ինչ անցելոց՝ կաթուղիկոսն Մելքիսէթ և վարդապետն Պօղոս պատահեցան միմեանց ի Նախչուան քաղաքին, և կաթուղիկոսն զթոյնս և զմաղձս դառնութեան՝ զոր ի բազում ժամանակաց մթերեալ ունէր ի սրտի, յանժամ ժայթքեաց ի վերայ վարդապետին։ Եւ յետ բազմաց յանդիմանութեանց և կշտամբանաց և անպատեհ բանից՝ զորս խօսեցաւ կաթուղիկոսն յերեսս վարդապետին. և զայս ևս ասաց թէ՝ զամենայն եկեղեցիսդ, զոր դու շինեցեր, ի վերայ գլխոյ քոյ քակեցից։ Եւ հրամայեաց նմա ելանել յայսմ աշխարհէ, և գնալ ի տեղի իւր. և թէ այլ ևս յամի. այնուհետև մատնի ի ձեռս աշխարհական իշխանաց. և ոչ ոք գոյր օգնական ի կողմանէ վարդապետին, ոչ եկեղեցական և ոչ աշխարհական, վասն զի ամենեքեան երկնչէին ի կաթուղիկոսէն, զի թագաւորական իշխանութեամբ վարէր զկաթուղիկոսութիւնն։ Յաղագս որոյ անճար լեալ վարդապետին, ելեալ ի Նախչուանայ գնաց ի գիւղն Շամբ, զի գնասցէ ի տեղի իւր, և ըստ հանապազորդեան սովորութեան իւրոյ, որ ի մէջ գիշերի աղօթէր վարդապետն, և յայնմ գիշերին՝ յետ աղօթիցն խթեաց ի կողս աշակերտին՝ և զարթոյց զնա, զարթեան և այլք ոմանք ևս, սկսաւ հարցանել ցնոսա թէ, զինչ բարւոք թուի ձեզ, արիանալ ընդդէմ փորձութեանս, և զիմակայել խռովութեանս այսմիկ և քարոզել զբանն կենաց, թէ տեղի տալ և հեռանալ ի շփոթէ սոցա։ Իսկ աշակերտացն տուեալ պատասխանի. դու ինքնին տեսա-

նես զխաւար անգիտութեան, թէ որպէս սփռեալ է ի վերայ ժողովրդեանս, և զայն ևս թէ, որպէս եբաց Տէր զդուռն քարոզութեան. քանզի զոր ինչ և քարոզես՝ վաղվաղակի արդիւնանայ։ Արդ՝ մի գուցէ վհատիցիս, զի Տէր Աստուած ձեռնտու է քեզ, պարտ է քեզ արիանալ և համբերել փորձութեան վասն օգտի ժողովրդեանն և քարոզել զբանն կենաց։

Իբրև ընկալաւ զքաջալերս զայս ի նոցանէ սուրբ վարդապետն՝ յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. արդ՝ որդեակք իմ, որովհետև այդպէս ասացիք, պարտ է մեզ գնալ առ Թագաւորն և առնուլ ի նմանէ հրաման վասն շինութեան եկեղեցեաց և ես ակն ունիմ ի տեառնէ՝ զի տացէ Թագաւորն զխնդիրս մեր. արդ՝ եթէ առնումք ի նմանէ զհրամանս զայս՝ քաջութեան անուն է մեզ, և թէ սպանցեն զմեզ, վարձս բարեաց ընդունելոց եմք ի Քրիստոսէ ընդ վաստակաւոր ծառայից նորա, և աշակերտացն ևս վկայեալ, թէ յոյժ բարի է այդ խորհուրդ։

Եւ նոյն ժամայն ի նմին գիշերի յարուցեալք ելին ի Շամբայ՝ անցին զգետն Երասխ. և հետևեցան ի գնալ առ Թագաւորն, որ էր ինքն առաջին Շահաբասն, վասն առնլոյ ի նմանէ հրաման շինելոյ եկեղեցի։ Եւ յետ աւարտման կանոնի սաղմոսին, որ ասէին, զՃանապարհայն՝ մինչ երթային, պատահեցաւ լինել քարոզն այն որ ասէ. վասն ուղղելոյ զգնացս մեր ի Ճանապարհս խաղաղութեան զտէր աղաչեսցուք. և միւս տունն որ ասէ[1]. վասն խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք զտէր աղաչեսցուք։ Յայնժամ՝ ասէ վարդապետն ցայնոսիկ, ոյք ընդ նմա էին, տեսէք որդեակք իմ զի ուղիղ է Ճանապարհս մեր ըստ վկայութեան սաղմոսիս,

1 Ուղ. չիք. միւս տունն որ ասէ.

որով առաւել հաստատեցան և ուրախացան, և մեծաւ յուսով երթային։

Եւ եղև իբրև հասին ի գաւառն, զոր Արաղբար ասեն՝ և ի տարաժամել աւուրն մտին ի գիւղ մի այլազգեաց առ ի օթել զգիշերն զայն, և տեսին՝ զի այր ոմն մահմետական հաւատով եկն ընդ առաջ նոցա՝ աղաչէր և ասէր. խնդրեմ ի ձէնջ վասն Աստուծոյ՝ մի զարշիլ յայլազգութենէ իմմէ, այլ խոնարհիլ յաղաչանս իմ, և գալ ի տուն իմ, զի հիւրընկալ եղեց ձեզ. քանզի ուխտեալ եմ Աստուծոյ, զի յայսմ աւուր առանց հիւրի ոչ ճաշեցից ինչ. և մինչև ցարդ սպաս կալեալ կամ ի մէջ շինիս, և նայիմ վասն հիւրի, և արդ՝ զձեզ առաքեաց Աստուած, վասն որոյ յօժարութեամբ խնդրեմ զգալն ձեր ի տուն իմ։ Իսկ երանելւոյ վարդապետին տուեալ ցնծութեամբ պատասխանի առնն, և ասէ, այդպէս եղիցի որպէս ասացերդ. երթիցուք ի տուն քո։ Եւ զգիշերն զայն օթեցան ի տունն առն այնորիկ [1]. և այրն յոյժ բարւոք սպասաւորեաց նոցա ամենայն պիտոյիւք և հանգուցանելով. և յառաւօտուն մինչ կամեցան ի գնալ՝ եկեալ այլազգին աղաչէր, խնդրէր և ասէր թէ՝ ո՛չ գոյ ինձ զաւակ և յիշատակ յերկրի, խնդրեմ ի ձէնջ առնել զաղօթս վասն իմ. որպէս զի լիցի ինձ զաւակ, քանզի կին իմ ամուլ է։ Իսկ սրբոյ վարդապետին համբարձեալ զմշտատարած ձեռսն ի յերկինս, և անդառնալի աղօթիւքն խնդրեաց յԱստուծոյ տալ նմա զզաւակ. իսկ հեշտալուր Տէրն՝ որ խոստացաւ ծառայից իւրոց, թէ զամենայն զոր ինչ խնդրիցէք հաւատով՝ առնուցուք, աղօթիւք սրբոյ վարդապետին պարգևեաց առնն այնմիկ զաւակ, որպէս և յայտնեաց նոյն այրն։ (Քանզի [2] յետ

---

1 Առեր. Երեց. այնմիկ. 2 Ոսկ. պակասի սոյն ամբողջ հատուածս, որ ընդ փակագծով.

անցանելոյ ժամանակաց ինչ, այլազգի այրն այն եկեալ պատարագօք մատուցանէր ընծայ առաջի վարդապետին, երկրպագանէր, գոհանայր և շնորհս խոստովանէր զնմանէ, թէ աղօթիւք քո շնորհեաց ինձ Աստուած զաւակ, արդ՝ խնդրեմ զի աղօթեսցես, որպէս զի պահեսցէ զնա Աստուած ընդ երկայն աւուրս, և սրբոյ վարդապետին աղօթս արարեալ ի վերայ, և մխիթարեաց զնա բազում բանիւք, և առաքեաց ի տեղի իւր:

Արդ՝ պատահումն իրագործութեանս այսմիկ հանգոյն գտաւ այնմ, զոր Բանն Աստուած արար ընդ Աբրահամու մեծի նահապետին, զի որպէս նա էջ հիւր Աբրահամու և պարգևեաց նմա զաւակ· սոյնպէս և վարդապետն եկն հիւր այլազգոյն, և աղօթիւք խնդրեաց յԱստուծոյ պարգևել նմա զաւակ, որով փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ըստ անսուտ բանին իւրոյ, թէ տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայր ձեր՝ որ յերկինս է:)

Յետ այսորիկ ել անտի վարդապետն, և գնաց յերկիրն Աղուանից ի Ղարաբաղ, ի տեղին որ անուանի Քոթուկլու, քանզի անդ էր բնակեալ թագաւորն Շահաբաս ամենայն սպայիւն իւրով:

Իսկ յորժամ յանդիման եղև վարդապետն թագաւորին, երևեցոյց Տէր՝ շնորհաւոր զծառայն իւր առաջի ահարկու և այլազգի թագաւորին· և ի հարցանելն արքայի ցվարդապետն· թէ զի՞նչ խնդիր կայ քո ի թագաւորութենէս մերմէ, պատասխանեալ ասաց վարդապետն· Նախ՝ [1] երկարութիւն կենաց արքայի, և հաստատութիւն աթոռոյ նորա, և երկրորդ՝ զի խաղաղարար թագաւորութեամբ քով, արքա՛յ, ոչինչ գոյ [2] պա-

---

1 Ոսկ. չէ. Նախ՝ երկարութիւն . . . և երկրորդ.

2 Նոյն. կայ.

կաս յամենայն բարեաց ազգիս Հայոց, բայց միայն աղօթից, զի ոչ գոյ տեղի աղօթից՝ զի աղօթեսցեն առ Աստուած վասն աշխարհի՝ և վասն կենաց Թագաւորին. զայս խնդրեմ յարքայէ, զի տացէ ինձ զհրաման, և հրովարտակ շինելոյ զեկեղեցի, և այսմ եթէ իցէ վարձք ինչ, եղիցի Թագաւորին. և թէ իցէ մեղանք ինչ, եղիցի ինձ: Եւ ի լսելն զայս արքային՝ զուարճացաւ յանձն իւր. և բարձր բարբառով ասաց նախարարաց իւրոց. իշխանք և դատաւորք, զինչ արժան և ուղիղ թուի ձեզ, հրաման տա՞լ զեկեղեցի շինելոյ՝ թէ արգելուլ, դարձեալ ինքն փութանակի արար պատասխանի իւրոց բանիցն՝ թէ ոչ է պարտ արգելուլ, այլ արժան է տալ հրաման շինելոյ, քանզի և այնք ևս Աստուծոյ տունք են: Եւ առժամայն հրամայեաց գրել նոմոս՝ կնքել և տալ նմա: Եւ իբրև կատարեցին և ետուն ցվարդապետն զթուղթն, և նա տարեալ ի բացեայ՝ ետ ընթեռնուլ. և ետես զի ոչ էր այնպէս օգտակար, որ բաւական լինէր կարեաց ներկայ ժամանակին. վասն որոյ ի պատճառէս հարկեալ՝ կրկին անգամ կացեալ յանդիման արքային. և յուշ առնէ նմա զխնդրելին իւր զհրովարտակն. և իբրև վերահասու եղև Թագաւորն ամենայն դիտաւորութեան մտաց վարդապետին, և յայնմ ժամու Թագաւորն արտաքս ելեալ ի խորանէն երթևեկս առնելով ճեմէր, և նոյնժամայն կոչեաց զմի ոմն ի դպրացն, նստոյց ի գետնի առաջի իւր, և արքայ կացեալ յոտին՝ ինքն ասէր, և դրագիրն գրէր, մինչև կատարեաց զամենայն բանս գրոյն. և ապա հրամայեաց նոյն առնն դպրի շրջեցուցանել առ ամենայն իշխանս, զի ձեռնադրեսցեն և կնքեսցեն: Եւ իբրև կատարեցաւ ամենայն՝ բերեալ ետուն ցվարդապետն զհրովարտակն, և սրբոյ վարդապետին գոհացեալ զՏեառնէ, առեալ զհրովարտակն արքունական՝ եկն յարևելեայ երկիրս Հայոց, և այնուհետև աներկիւղ և ևս

վայելուչ սկսաւ շինել զեկեղեցիս, և համարձակ շրջիլ և քարոզել։

Իսկ կաթուղիկոսին Մելքիսէթի առաւել մախացեալ ընդ վարդապետին Պօղոսի, խօսի բանս զրպարտանաց ի կողմանէ վարդապետին ընդ մեծի և հզօր իշխանին Ամիրգունայ խանին, որ էր իշխան Երևանայ, և ասէ. այր մի ստամբակ և անհնազանդ և օտար՝ յաշխարհէն Մարաց, քանի ամք են զի շրջագայի յերկրիս Պարսից. և մանաւանդ ի քում իշխանութեան գաւառս. և սուտ և խաբեբայ քարոզութեամբ և կեղծաւոր վարուք հաւանեցուցանէ զամենայն մարդ ինքեան. և ոչ մնաց ոսկի և արծաթ և այլ ինչ ստացուած առ ոք՝ այլ զամենայն կողոպտեալ յամենեցունց և առեալ առաքէ յերկիր իւր։ Քանիցս անգամ պատուիրեցաք նմա բանիւ, նաև երես և երես ևս ասացաք նմա ելանել յաշխարհէ աստի և գնալ ի տեղի իւր, և նա ոչինչ արար փոյթ ի մերոց բանից, և կամ ակն էած թագաւորական հրամանին, որ կայ ի ձեռս մեր, այլ գործէ ըստ հաճոյից կամաց իւրոց, քանզի անհնազանդ է իշխանաց և պետաց

Վասն որոյ և խանին կոչեալ զոմն զինուոր առաջի իւր՝ և ասէ, հրաման է յիշխանութենէս մերմէ գնալ քեզ յերկիր տէրութեանն մերոյ շրջիլ և գտանել զվարդապետն Պօղոս և ածել այսրէն առ մեզ։ Իսկ զինուորին գնացեալ որոնելով գտանէ զնա ի գիւղն Ագուլիս, և անտի առեալ զնա ածէ յԵրևան քաղաք։ Եւ ի գալն՝ յորժամ եկեալ հասին ի Դուռին, զայն գիշերն անդէն օթեցան, և կայր ի գիւղն յայն այր ոմն քրիստոնեայ՝ որոյ որդւոյ ձեռն գօսացեալ էր, զոր ածեալ առաջի վարդապետին խնդրէր աղօթել ի վերայ նորա, որպէս զի բժշկեսցի ձեռն մանկանն։ Իսկ սուրբ վարդապետն կալեալ զձեռանէ մանկանն, և աղօթեաց ի վերայ նորա.

և ասաց՝ զՀայր մեր, որ յերկինս, և ետ ցՀայրն, որ առեալ գնաց։ Եւ յայգ յառաւօտուն առեալ զորդին և եկեալ առաջի վարդապետին երկիրպագանէր և համբուրէր զոտս նորա, գոհանայր և շնորհս խոստովանէր զնմանէ. և ցուցանէր զձեռն մանկանն՝ ամենեցուն, թէ աղօթիւք վարդապետին բժշկեցաւ ձեռն մանկան իմոյ։ Քանզի [1] շնորհօքն Քրիստոսի և աղօթիւք սրբոյ վարդապետին բնաւին բժշկեալ էր ձեռն մանկանն այնմիկ, որով փառաւորեցաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Ելեալ անտի եկին ի քաղաքն Երևան. և զինուորն՝ որ էած զվարդապետն, ի նոյնում աւուրն յանդիման կացոյց զնա խանին. իսկ խանն որպէս ընկալեալ էր զնիւթ ի կաթուղիկոսէն, բազում մախանս և դառնութիւնս ամբարեալ ունէր ի մտի, զի յոքնակի կիրս չարչարանաց անցուսցէ ընդ վարդապետն. այլ այն, որ թագաւոր է թագաւորաց՝ և Տէր տէրանց, որ ի ձեռին ունի զսիրտ ամենայն բռնաւորաց՝ ըստ իմաստնոյն Սողոմոնի, առ ժամայն դարձոյց զսիրտ խանին ի քաղցրութիւն, որպէս Արտաշէս արքայ ի վերայ Մուրտքէի, և բարկութիւն ի վերայ Համանայ, վասն զի ընդ ակնարկել խանին յերեսս վարդապետին՝ ոչ թէ զբանս բարկութեան ասաց կամ զայրագնեալ դէմս երևեցոյց նմա. այլ մեղմ և հանդարտ բանիւ ասաց նմա, այսօր կացջիր առ մեզ, քանզի մեզ հիւր ես, իսկ ի վաղիւն տարայց զքեզ ընդ իս առ կաթուղիկոսն և հաշտեցուցից զնա ընդ քեզ, քանզի Մելքիսեթ կաթուղիկոսն հրաւիրեալ էր զխանն իւրովք բարեկամօքն ի պատիւ յերկ-

---

1 Ուղ. չէ+. Քանզի . . . անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

բորբոքումն աւուր՝ սորին վասն ասաց խանն, թէ տարայց զքեզ ընդ իս առ կաթուղիկոսն և հաշտեցուցից։

Իսկ ի վաղուեան աւուրն մինչ երթայր խանն ի կոչն կաթուղիկոսին, տարաւ ընդ իւր զվարդապետն, և իբրև եհաս ժամ խօսելոյ՝ ասաց խանն ընդ կաթուղիկոսին. արդ՝ յօժարութիւն սրտի իմոյ զայս կամի ի քէն՝ զի դու հաշտեսցիս ընդ վարդապետին՝ և լինիք որպէս զՀայր և զՈրդի, զի թէպէտ և շրջի ի մէջ ժողովըրդեանն, ոչինչ առնէ զգործ կամ զվնաս արժանի դատապարտութեան, ոչ ինձ՝ ոչ քեզ՝ և ոչ ժողովրդեանն, և ես կամիմ զի ի մէջ ձեր խաղաղութիւն և և սէր հաստատեսցի։ Իսկ կաթուղիկոսն իբրև ետես, թէ զոր ինչ խորհեալ էր ի մտի, և խօսեալ էր ընդ խանին, այնպէս ոչ եղև, այլ նորին ներհակն. և թէպէտ ոչ կամէր հաշտիլ՝ այլ և ընդդիմանալ հրամանաց խանին անմարթ վարկանէր, զի ի շահել զսիրտն նորա կոչեալ էր, և մանաւանդ այնքան պատուաւոր արանց միջի, և ի վերայ իւրոյ սեղանոյ, և յիւրում տանն։ Վասն որոյ ակամայ կամօք վերերևութիւ և կեղծաւորեալ սրտիւ առնէ զհաշտութիւն ընդ վարդապետին ըստ հրամանաց խանին։ Եւ յետ խրախութեան՝ յորժամ հանդերձեալ էր ի գնալ խանն, ասէ ցկաթուղիկոսն. վարդապետս այս եղիցի քեզ յանձն յայսմ գիշերի, և ի վաղիւն ի գալն քո առ իս ընդ քեզ բերցես, զի ունիմ գործ ինչ ընդ դմա։ Իսկ ի վաղիւն կաթուղիկոսն ինքն ոչ գնաց, այլ զոմն յեպիսկոպոսաց իւրոց եդեալ ընդ վարդապետին՝ առաքեաց առ խանն, իսկ խանն պատուեալ խիլայեաց զվարդապետն, զի էարկ ի վերայ նորա պատուական և ոսկեհուռն կապայ։ Եւ դարձեալ կոչեաց զնոյն զինուորն, որ բերեալ էր զվարդապետն, և ասաց նմա. արդ՝ առեալ զվարդապետս զայս տարեալ հասուսցես ի տեղին, ուստի և դարձուցեր զդա, և յանձնեսցես արանց տեղւոյն

և ապա դարձցիս այսրէն։ Իսկ զինուորն և վարդապետն երկրպագեալ իշխանին ելեալք յերեսաց նորա, գնացին դէպ ի գաւառն Գողթան։

(Արդ՝ [1] կատարումն գործոյս այսմիկ, հանգոյն գտաւ իրացն որ առ Բաղակ Թագաւորն եղև՝ զի որպէս նա վարձեաց զԲաղայամ անիծանել զԻսրայէլ, իսկ Բաղայամու եկեալ օրհնեաց զԻսրայէլ. սոյն գունակ և կաթուղիկոսն Մելքիսէթ դրդեաց զխանն, զի պատժեսցէ զվարդապետն, իսկ նա բերեալ պատուեաց առաջի ամենեցուն, և խիլայեալ առաքեաց ի գործ իւր, և աստէն ևս կատարեալ տեսանի սաղմոսն Դաւթի։ Հայի մեղաւորն ընդ արդարն և խնդրէ սպանանել զնա, այլ Տէր ոչ թողու զնա ի ձեռս նորա և ոչ դատապարտէ զնա՝ յորժամ դատի զնա։

Յորժամ վարդապետն և զինուորն ելեալք յԵրեւանայ գնացին ի գաւառն Գողթան, հասին ի գիւղն Շոռօթ, և անտի ելեալք կամէին գնալ ի գիւղն Ցղնայ, և մինչ զճանապարհայն գնային՝ իբրև մերձ եղեն ի գետն, որ գայ ի Նորակերտու և գնայ ի Բըղեւի և տակաւին ոչ էին հասեալ ի գետն, տեսին ի հովտի անդ զի արածէին վայրի այծեմունք՝ որք էին երկոտասանք. կոչեաց զնոսա վարդապետն առ ինքն և այծեմունքն եկին առ նա, և ոչ գիտէր զինուորն թէ վարդապետն կոչեալ է զայծեմունսն. քանզի հեռի էր ի վարդապետէն, որ իբրև ետես զայծեմունսն կացեալ, վաղվաղակի լցեալ զաղեղն՝ զի նետիւ հարցէ զայծեմունսն, և այծեմունքն վաղվաղակի խրտուցեալ ի բաց ստեան ի տեղւոյն, ուր կանգնեալք էին, և սկսան փախչիլ ի կողմն լերին։ Իսկ վարդապետին յետս հայեցեալ ետես, զի զայն գործէր զինուորն, և սաստեալ զինուորին դադարեցոյց, ապա կրկին անգամ

---

[1] Աստ՝ պակասի սոյն ամբողջ հատուածս, որ ընդ փակագծով։

կոչեաց զայծեմունսն և ասէ, եկայք օրհնեալք Տեառն, եկայք առիս ոչ թողից ումեք մեղանչել ձեզ, և նոքա իբրև զմտացի մարդ և զբանաւոր, դարձեալ եկին առ վարդապետն և կացին առաջի նորա. իսկ վարդապետն մերձեալ նոցա՝ շփէր ձեռամբն ի վերայ նոցա և քորքորէր զպարանոցս և զքամակս նոցա. ողջագուրէր զնոսա գգուանօք և խօսէր ընդ նոսա իբրև ընդ բանաւորի: Եւ ընդ յոլով պահս կային առաջի նորա. և յետոյ ասաց նոցա, արդ՝ երթայք խաղաղութեամբ յարօտս ձեր և Տէր պաշտպանեսցէ ձեզ ըստ կարեաց ձերոց, և նոքա յուղի անկեալ գնային ընդ լեռնակողմն ի գնացս իւրեանց: Իսկ զինուորն այն կայր հիացեալ և ափշեալ ընդ այն. և սուրբ վարդապետն սկսաւ պատմել նմա զսրբոյ առաքելոյն Թադէոսի արարեալ զսքանչելիսն՝ որ զվայրի եղինսն եբեր առաջի Ոսկեանցն: Եւ զինուորն տարեալ զվարդապետն հասոյց ի գիւղաքաղաքն Ագուլիս և յանձն արար նոցա, և ինքն դարձաւ յԵրևան ի ծառայութիւն խանին, և պատմէր ամենայնի զսքանչելիսն զոր ետես՝ փառաւորելով զանունն Քրիստոսի Աստուծոյ մերոյ առաջի ամենեցուն):

Իսկ արքն, որք էին նախանձաւորք ընդ վարդապետին, իբրև տեսին թէ մատնութեամբն, զոր արարին առ Ամիրգունայ խանն՝ ոչինչ կարացին ստնանել վարդապետին, վասն որոյ սովիմբ օրինակաւ միւս ևս մատնութիւն արարին առ Ղառչղայ խանն, որ էր առաւել խրոխտ և մեծազօր փառօք՝ և ամենայն որպխութեամբ քան զԱմիրգունայ խանն. և էր Ղառչղայ խանն իշխող քաղաքին Թարվիզու, առ որ գնացեալ Մելքիսէթ կաթուղիկոսն ինքն և այլք ևս յեկեղեցականաց և յաշխարհականաց, և արարին ամբաստանութիւն զՊօղոս վարդապետէ, և Ղառչղայ խանն առաքեալ զզինուորս՝ տարաւ ի Թարվէզ զՊօղոս վարդապետն: Իսկ կատա-

րումն գործոյն եղև՝ որպէս և առ Ամիրգունայ խանիւն կատարեցաւ. և այսու ևս յամօթ լեալ պարտեցան Նախանձաւորքն։

(Այլ և [1] գոյ մի այլ պատմութիւն որպէս և գրելոց եմք յառաջիկայդ՝ ի ճառս պատմութեան Նահատակութեան [2] տէր Անդրէաս քահանային, թէ մատնեցին զՊօղոս վարդապետն և զՄովսէս վարդապետն Շահաբաս Թագաւորին. զորս կալեալ էառ երեք երեք հարիւր թուման տուգանք և ապա եթող. որոց զկնի արձակմանն ելեալ ևս առաւել համարձակ քարոզէին զԲանն կենաց, զի ինքն նորահայեացն Շահաբաս իւրովք մտօքն նկատեալ դիտեաց զնոսա, զի ոչ գոյ ի նոսա կեղծաւոր գործ ինչ. այլ են ճշմարիտ ծառայք Աստուծոյ։

Կան այլ ևս պատմութիւնք վարուց և սքանչելեաց սրբոյ վարդապետին Պօղոսի, որ զցաւագարս և զդիւահարս բժշկեաց, և այլ ևս սոյնպիսիս, այլ այսքանս բաւական է ծանուցանել զամենայն որպիսութիւն նորա։)

Եւ յետ անցից պատմելոցս ամենայնի և ևս գերագունից՝ մինչ շրջէր Պօղոս վարդապետ քարոզութեամբ ի մէջ քրիստոնէից ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ, պատահեցան նմա Սահակ կաթուղիկոսն եղբօրորդի Մելքիսէթի կաթուղիկոսին, և այլք ևս ի նոցին համախոհացն, և յոլով աւուրս խոշտանգեցին զնա ասելով՝ լռեա դու ի քարոզութենէդ. և Պօղոս վարդապետն ոչ կամէր լռել, զի կարի յօժար և փոյթ էր ի քարոզութիւնն։ Բայց ներհակքն կարի յաւէտ և բազմահնար պարաւանդիւք խորամանկութեան և զրպարտութեան մեքենայիւք ճմլեալ կորացուցին զնա ասելով. դու մի ևս յաւելցես ի շրջել առ ժողովուրդս և քարոզել, այլ տուր մեզ ձեռագիր վկայութեամբ մահմետականաց, թէ այ-

1 Ո-ջ. պակասի այն հատուածս. 2 Ա-եր. եչէջ. Նահատակ.

սուհետև քարոզես՝ լինիցիս թշնամի թագաւորին. և մահու և սպանման պարտական։ Եւ ի բազում աւուրս յոքնազան կերպիւ ճնշելոյ ներհակացն զվարդապետն՝ մնաց անճար. զի ինքն միայն էր ընդդիմակայ նոցա առանց օգնականի, թէպէտ ի քրիստոնէից բազումք կային բարեկամք և սիրողք վարդապետին, այլ վասն երկիւղի ներհակացն, ոչ ոք իշխէր օգնել վարդապետին, վասն որոյ մնաց անճար, ետ նոցա ձեռագիր այսպէս. ես Պօղոս վարդապետ ետու ձեռագիր այսուհետև ոչ շրջիլ և ոչ քարոզել. և թէ զայսոսիկ առնեմ, լինիմ ես թշնամի թագաւորին։ Իբրև առին ներհակքն զայս ձեռագիրս ի Պօղոսէն, ուրախ եղեն անճառելի խնդութեամբ. և այնուհետև Պօղոս վարդապետն գնաց ի մեծ անապատն՝ կայր միակեցութեամբ, լռեալ ի խցի, մշտամատոյց աղօթիւք խօսակցելով ընդ Աստուծոյ. եկաց անդէն և ոչ ել արտաքս յանապատէն մինչև ցվախճան կենաց իւրոց. որ հանգեաւ ի Քրիստոս, և անդեն թաղեցաւ։ Եւ եղև վախճան սորա ՌԿԹ. ամի թուականի մերում. որ և ի գերեզմանէ նորա բազում գործս սքանչելեաց լսեմք ի հիւանդս և ի ցաւագարս, որք յուսով երթան առ նա և առնուն զբժշկութիւնս իւրաքանչիւր ցաւոց՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, զօրացուցանողին [1] զնա. որում փառք յաւիտեանս, ամէն։

[1] Ուկ. ձե. զօրացուցանողին զնա, որում փառք յաւիտեանս ամէն.

ԳԼ. ԻԴ.

Վասն վարդապետութեան եւ կաթուղիկոսութեան տեառն Մովսէսի: Ընդ որում եւ յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Մեծահաւատ սրբասնունդ և բարեփառ հայրս մեր տէր Մովսէս կաթուղիկոս էր յաշխարհէն Սիւնեաց՝ ի գաւառէն Բաղաց, որ այժըմ ասի Աճանան, ի գեղջէն՝ որ անուանի Խոտանան։ Եւ մինչ էր նա ամաց հնգետասանից՝ աւելի կամ պակաս, ետուն նմա աստիճան քահանայութեան և օրհնեցին կուսակրօն աբեղայ։

Եւ դէպ եղև պատահիլ նմա տիեզերալոյս վարդապետին Սրապիոնի, և առ նա յարեալ աշակերտեցաւ նմա․, բայց վախճանն Սրապիոնի փութով ժամանեաց ի վերայ, յորում ժամանակի տհաս էր տէր Մովսէս՝ ուսմամբ և հասակաւ։ Բայց Սրապիոն վարդապետն մտօք նկատեալ՝ իմանայր յոգի իւր՝ զի շնորհք Աստուածային երևի առ տէր Մովսէսն՝ ընդ որոյ ցաւակցաբար հոգաց զնա, վասն զի կոչեաց առ ինքն զաւագ աշակերտն իւր՝ զկեսարացի Գրիգոր վարդապետն, և յանձն արար նմա զտէր Մովսէսն ասելով․ յանձն առնեմ զսա

քեզ, զի փոխանակ իմ հովուեալ պահեսցես զսա՝ և հաստուցեալ յարբունս հասակի, և վարդապետական ուսման, և տացես զգաւազան և զպատիւ վարդապետական. և եղիցի օրհնութիւն իմ ի վերայ քո և դորա։

Եւ յետ վախճանի Արապիոնին մնաց տէր Մովսէս առ Գրիգոր վարդապետն յաշակերտութիւն նորա, և զկնի սուղ ինչ ամաց խնդրեաց տէր Մովսէս զհրաման ի Գրիգոր վարդապետէն, զի գնասցէ յԵրուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն տնօրինական տեղեացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և նա ետ զհրաման, որ և եկեալ տէր Մովսէս՝ գնացեալ եհաս յԵրուսաղէմ. և կատարեաց զուխտ ամենայն տնօրինականաց Տեառն։ Ապա անտի գնաց յաշխարհն Եգիպտոսի՝ և շրջեալ յամենայն վանօրայս և յանապատս ազգին Ղփթոց, վասն զի վանօրայք և անապատք բազումք գոն, յորում բնակեալ են բազմահոյլ միաբանք, կարգօք և սահմանօք կրօնաւորականօք. որք ունին զկարգաւորութիւն ամենայն իրաց. ժամատեղաց և սեղանատեղաց, և զգեստուց, և խցակցութեան, և կրօնաւորական ժուժկալութեան, և այլ ամենայն գործոց։ Եւ ի մէջ նոցա շրջելով և հարցանելով և տեսանելով տեղեկանայր ամենայնի և սմին այսմիկ ինքն տէր Մովսէս՝ թէպէտ անհոգ և անփոյթ էր, այլ տնօրինէր …ուրբ Հոգին՝ յածեալ շրջեցուցանէր ի մէջ այսպիսի կրօնաւորական կարգաց առ ի ուսուցանել զնա, վասն ապագայից ժամանակաց՝ որպէս և պիտոյացաւ ի ժամանակս կարգադրութեան մեծ անապատին. և տէր Մովսէս յԵգիպտոսէ դարձեալ եկն յԵրուսաղէմ և եղև լուսարար սրբոյ Յարութեանն։

Յորում ժամանակի դէպ եղև անդ լինել Սարգիս պարոն տիրոջն, և տեառն Կիրակոսի, որոյ վասն շարագր… յաք, թէ եղեն սկիզբն անապատի, և կրօնաւորական կարգաց. որք կային յԵրուսաղէմ, և շրջէին յաշ-

խարհին յայնմիկ ի վանօրայսն Յունաց՝ և յեզերս Յոր-
դանան գետոյ, ի լեառն փորձութեան, և որոնեալ խընդ-
րէին զտեղի անապատի անփոյթ և անշփոթ, և ըստ
պատշաճին ոչ գտանէին։ Առ որս ասաց տէր Մովսէս,
զայդպիսի տեղի, զոր խնդրէք՝ յարևելեան յաշխարհին
բազում գոն, և մանաւանդ յերկրին Սիւնեաց, որոց ես
ականատես իսկ եմ. և յաշխարհին յայնմիկ կարի առաւել
պատշաճ է լինել զանապատ· զի բուն Հայաստան է,
վանօրայք, և գեղօրայք, և ժողովուրդք քրիստոնէից
բազում գոն, ուստի ամենայն պիտոյք անապատին լցեալ
լինին։ Այլ և ինքն տէր Մովսէս յանձն էառ, զի յոր-
ժամ նոքա ժամանեալ յերկիրն յայն, և ուրեք անդոր-
րացեալ զետեղեսցին, ուր և իջէ ինքն տէր Մովսէս՝
թողեալ զամենայն անդր՝ առ նոսա ժամանեսցէ, և ընդ
նոսին բնակեսցի միաբանութեամբ։ Արդ՝ այսպիսի յոր-
դորականաւ բանիւ զնոսա առաքեաց ի վերին աշխարհն
արևելից, ինքն մնաց յԵրուսաղէմ։ Եւ հրամանաւ Գրի-
գորի եպիսկոպոսին, որ էր առաջնորդ սուրբ Յակոբայ՝
գնաց ի նուիրակութիւն վասն Երուսաղէմի և զբազում
արդիւնս ժողովեալ ի քրիստոնէից եբեր յԵրուսաղէմ
առաջի Գրիգոր եպիսկոպոսին։

Ապա ելեալ յԵրուսաղէմայ եկն առ վարդապետն
իւր Գրիգոր Կեսարացի, որ էր ի Կոստանդնուպօլիս՝
քանզի թագաւորական հրամանաւ նստեալ էր առաջ-
նորդ քաղաքին՝ պատրիարք անուամբ։ Եւ կացեալ յա-
շակերտութիւն Գրիգոր վարդապետին յամս ինչ պար-
կեշտ և սրբակրօն վարուք՝ ոչ պաճոյճ և փափուկ հան-
դերձիւ որպէս և այլքն էին ի ժամանակին, այլ խոշո-
րազգեստ և պահեցող, որ ի շաբաթ օր և ի կիւրակէ օր
լուծանէր ի կերակուրս նաւակատեաց, զատեալ ի մսոյ
և ի գինւոյ, և հանապազ սաղմոսերգ և պատարագամա-
տոյց։ Առ որ հաճեալ և հաւանեալ ամենայն ժողովուրդքն

Կոստանդնուպօլսի, եկեղեցականք և աշխարհականք, և երևելի արք՝ որպէս Շահին չալապին, որ էր այր նշանաւոր ի դրան Թագաւորին, և այլք ևս յոլովք։ Նաև վաճառականք արևելեան աշխարհին, որք պատահեցան ի Կոստանդնուպօլիս, և մանաւանդ Ջուղայեցիք և Գողթնացիք. զի գիտէին թէ Մովսէսն յարևելեան աշխարհէն է. ամենեքեան մատուցեալ առ Գրիգոր վարդապետն խնդրէին տալ տէր Մովսէսի՝ վարդապետութիւն։

Իսկ Գրիգոր վարդապետն, էր այր ահարկու և յոյժ խրոխտ և դժուարահաւան, բայց տեսանելով ղքաղցր և զուրբասէր բարս, և զպարկեշտ վարս տէր Մովսէսի, նաև զվկայութիւն ժողովրդեանն, ոչինչ եղև անլուր, այլ ըստ վկայութեան անձին նորա, և ամենայն ժողովրդեան ետ նմա զաւազան վարդապետական մեծ հանդիսիւ։ Այնուհետև տէր Մովսէս վարդապետն անխափան քարոզէր յամենայն եկեղեցիս զաւետարանն Քրիստոսի վճիտ և պայծառ քարոզութեամբ։

Եւ յետ ամաց ինչ՝ հրամանաւ Գրիգոր վարդապետին առաքեալ եղև Մովսէս վարդապետն գնալ և ինքնագլուխ քարոզութեամբ շրջագայիլ. և ելեալ ի Կոստանդնուպօլսէ եկեալ հասեալ ի քաղաքն Տիգրանակերտ՝ ուր էր տապանն Սրապիոն վարդապետին, համբուրեալ զնա սրբով տապանաւն. և առեալ ի նմանէ զօրհնութիւն։ Ելեալ անտի անցեալ զՎասպուրական քաղաքաւն եկն ի Թարվէզ, և անտի ի հայրենի աշխարհն իւր, ի գաւառն Սիւնեաց ի վանքն Տաթևու. յորոյ գալստենէ եղև անպատում ուրախութիւն ամենեցուն եկեղեցականաց և աշխարհականաց։ Եւ զառաջինն սիրով ընկալան զնա միաբանք վանացն Տաթևու՝ եպիսկոպոսք և աբեղայք, բայց յետոյ յետս չոգան ի նմանէ, քանզի ոչ ընկալան զքարոզութիւն նորա։ Յաղագս որոյ ելեալ ի Տաթևու վանացն, և գնաց ի մեծ անապատն առ Սար-

գիս եպիսկոպոսն, և առ տէր Կիրակոսն, ըստ Նախկին ուխտադրութեանն իւրեանց՝ զոր պայմանեալք էին յԵրուսաղէմ, և անդէն յանապատին կալաւ իւր դադար բնակութեան, և ի ժամանակս ժամանակս ելեալ շրջէր ի մէջ քրիստոնէից՝ և քարոզէր զպատուիրանս Աստուծոյ, և վերստին դառնայր յանապատն· վասն զի որպէս ձուկն ելեալ ի ջրոյ մերձի ի մեռանիլ և անդրէն ի ջուր անկեալ կենդանանայ, սոյնպէս և սմա՝ յելանելն յանապատէն, և ի մտանելն յանապատն։

Իսկ զքարոզութիւն Մովսէս վարդապետին ամենայն ժողովուրդք խնդութեամբ ընդունէին և յօժարութեամբ կատարէին, և ուրախութեամբ փառաւորէին զԱստուած՝ զտուիչն այնպիսի շնորհաց մարդկան։ Բայց եպիսկոպոսք գաւառաց, և աբեղայք վանօրէից ո՛չ հաճէին ի քարոզութիւնն Մովսէսի, վասն զի Մովսէս վարդապետն որպէս ինքն մերկ էր յամենայն աշխարհական նիւթոց, և պահօք, և սրբութեամբ, և կրօնաւորական վարուք կեայր ըստ հրամանաց գրոց· սոյնպէս և քարոզէր լինել ամենայն վանականացն, և նոքա անգոսնեալ զբանս նորա՝ ո՛չ ընկալան։ Վասն զի ամենայն վանօրայք ազգիս Հայոց՝ իւրաքանչիւր սևագլուխ ունէր իւր զինչս առանձին, այգի և բուրաստան, փէթակ և տուն, և մարան, և համբարանոցս, և զմուտս ստացուածոց· նաև զմուտս հասարակաց վանիցն մասունս արարեալ՝ յինքեանս բաժանէին։ Եւ զայն ամենայն ինքեանց, և ազգայնոց՝ և իւրեանց հաճելեաց արանց ծախէին ի պէտս կարեաց։ Եւ զնուիրեալ տեղիսն Աստուծոյ՝ որք բնակարան են նշխարաց սրբոց և սքանչելագործ, և շնորհակիր նշանաց Աստուծոյ, լցեալ էին զայնոսիկ կանամբք և տանտիկնօք, և իւրեանց ազգայնօք։

Եւ բնաւ ո՛չ գիտէին թէ պարտ է կարգաւորի վեղար և փիլոն ունիլ զիւրեաւ, կամ հանդերձս խոշորս,

և սուրս զգենուլ. այլ որպէս աշխարհական, և զմարմնաւոր իշխանս փափուկ և ազնիւ զգեստիւ պճնէին. չաշխուր, և կապայ, և պատուական փակեղ ի գլուխս, և բալափուշ զիւրև առեալ։ Այլ և ոչ վարկանէին թէ պարտ է վանականաց պահօք և ծոմաջանիւք երկօք կենցաղավարիլ, այլ ի բոլոր տարին ուտէք և գինի և միս անխտիր։

Սոյնպէս և գեղական երիցունք՝ անուամբ միայն քահանայք, այլ ոմանք առեալ զիշխանութիւն մելիքութեան, և ոմանք տանուտէրութեան՝ և ոմանք պառնիկք և երկկանայք, ոմանք յարեցեալք յիշխանս այլազգեաց. արքանեակք չարեաց գործոց նոցա՝ և մատնիչք քրիստոնէից, ոմանք ի մարմնաւոր արուեստս և ի հողագործութիւնս պատաղեալ՛ իբրև զաշխարհականս. և բնաւին թողեալ զժամ և զպատարագ։ Ոչ կանխէին ի ժամ աղօթից յեկեղեցի, և ոչ լինէր լսելի ձայն ժամակոչի ի գեղօրայս, և բնաւին բարձեալ ի նոցունց շնորհ քահանայութեան, բայց տակաւին զինքեանս քահանայս անուանէին, և գործէին զգործ քահանայութեան, ոչ իբրև զքահանայ՝ այլ իբր զմարմնաւոր արուեստաւոր՝ վասն մարմնաւոր վարձու իւրոյ։

Եւ ոչ միայն գեղական երիցունք և աբեղայք ըստ ասացելումս անուղղայ կարգօք լեալ թափառականք, այլ և կաթուղիկոսքն՝ զի ոչ թէ մի էր, այլ երեք և չորք կաթուղիկոսք, վասն զի յաղագս փառամոլութեան, և ագահութեան իբրև զմաքսաւորս ղաբալայիւ և հարկիւ ի Պարսից թագաւորէն առնուին զիշխանութիւն կաթուղիկոսութեան՝ և զսուրբ Աթոռն Էջմիածին. և ի շրջագայութեան իւրեանց ի մէջ ժողովրդեանն, թագաւորական ծառայ և այլազգի զօրականս շրջեցուցանէին ընդ ինքեանս, և զիրաւունս և զհասս՝ որք ի ժողովըրդենէն՝ ճշգիւ և բռնութեամբ ուժգին առնուին որպէս

զորդիսն Հեղեայ. և կաթուղիկոսքն՝ որպէս ինքեանք արծաթով և կաշառօք ընկալեալք զաստիճան կաթուղիկոսութեան, սոյնպէս և ինքեանց ձեռնադրեալ եպիսկոպոսունքն և քահանայքն, տգէտք, խոտանք, և անպիտանք, ըստ սաղմոսին, որք էին լեալ պաշտօնեայք որովայնի՝ հանապազ ի գիներբուս դեգերեալք՝ գուսանօք իբր զմարմնաւոր իշխանս, յառաւօտէ մինչև ցերեկոյ հետևեալ կատակաց և լկտի բանից՝ և դատարկութեան։

Եւ սոցին ամենեցուն առիթ, ո՛չ այլ ինչ՝ եթէ ոչ հեռացումն ի սուրբ գրոց և յերկիւղէն Աստուծոյ, ոչ բնաւ ընթեռնուին գիրս, այլ էին փակեալ և լռեալ մատեանք աստուածայինք, վասն զի էր խափանեալ ընթերցումն սուրբ գրոց, որք էին արհամարհեալ յաչս նոցա, հողով և մոխրով լցեալ և անկեալ յանկեան ուրեք. վասն զի ոչ գիրս գիտէին և ոչ զօրութիւնս գրոց՝ ըստ Տեառն բանի։

Արդ՝ եթէ եկեղեցականք այսպէս, զի՞նչ ևս ասացից զաշխարհականաց, որք ոչ բնաւ գիտէին թէ պարտ է քրիստոնէից խոստովանիլ և հաղորդիլ. կամ յամենայն աւուր ի տեղի աղօթից կանխել, նաև զպահս ձիթով և գինեաւ ապականէին, ոմանք կնահանք, և ոմանք երկկանայք, և չհաս և մեղօք ազգաշաղախ պղծութեամբ։

Իսկ եկեղեցիք և վանօրայք, ամենեքեան անշուք և անպատիւք, բնաւին կողոպտեալք ի զարդուց և ի սպասուց, մինչ զի և սուրբ սեղանն ևս ամենևին մերկ և բաց։ Բազմաժամանակեայ փակեալ դրամբք, խաւար և անլոյս, լռեալ ի պաշտամանց և ի պատարագաց. աւերեալ և խախտեալ շինուածք նոցա, տանիք և որմունք, իբրև զանտէր և այրի զրկեալ ի փեսայէն և օտարացեալ յորդւոց՝ նստեալ թախծեալ ոգւով և անմխիթար լայր ընդ երեսս մարդոյ։

Արդ՝ բազմապատիկ յոլովութեամբ քան զոր շա-

րադրեցաք աղաւաղեալ եղծեալ էր բարեկարգութիւն ի վերին աշխարհէս Հայոց, և փոխանակ նորա արձանացեալ և արմատացեալ անկարգութիւն: Որոյ վասն վշտանայն և ցաւէին հոգւով չափ ընդ տգիտաբար մոլորութիւնս յայսոսիկ՝ երկոքին սուրբ վարդապետքն Մովսէս այս և Պօղոսն, զոր յանցելումն ճառի ծանուցաք զորպէսն: Եւ Պօղոս վարդապետն փոքր մի ժամանակաւ վաղագոյն եկեալ էր քան զՄովսէս՝ ի վերին աշխարհս, և ի սակս մեկնակութեան իւրոյ, հակառակորդքն հարստահարէին զնա. իսկ ի գալն Մովսէսի վարդապետին, իւրեանց զօրավիգն եղեալ համարձակ քարոզէին ընդ ամենայն գաւառս: Եւ սոքա երկոքին վարդապետքն, և Սարգիս պարոնտէրն, և տէր Կիրակոսն, այլովք յիշատակեալ արամբքն, զոր ի ճառին մեծ անապատին յիշեցաք, նախ զամենայն զկարգս և զսահմանս անապատի և կրօնաւորութեան սահմանեցին, զորս ի գրոց ընթերցմանէ գտին. և զորս Մովսէս վարդապետն յանապատս Գփլթոյն տեսեալ էր և ուսեալ. և ապա նոքա ամենեքեան յանապատին կալով աղօթէին վասն փրկութեան աշխարհի, և նովին աղօթիւ նպաստ լինէին վարդապետացն՝ խնդրելով ի սրբոյ Հոգւոյն օժանդակել նոցա ի քարոզութիւն Բանին կենաց: Իսկ երկոքին վարդապետքն Մովսէս և Պօղոս եղեն իւրեանց ընկերք իբրև զսուրբ առաքեալսն Պետրոս և Պօղոս, լեալք ամոլք հաւատոյ՝ շրջեցան յամենայն գաւառս արևելեայ աշխարհիս, քարոզէին ամենեցուն զճշմարտութիւն, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս, հաստատէին դպրոց, ուսուցանէին մանկունս, վասն զի առաքելաբար շրջէին հետիոտս գնալով, ոչինչ առնուին յումեքէ, այլ միայն զկերակուրս, և զբոլոր շաբաթն պահէին, միայն ի շաբաթ օր և ի կիւրակի օր լուծանէին նաւակատեաց կերակրովք ի բոլոր տարին, և ի գինւոյ և ի մսոյ մեկնեալք ամենևին:

Իսկ քրիստոնեայք վերին աշխարհիս տեսանելով զճշմարիտ քարոզութիւն նոցա, զի վկայէին բանից և քարոզութեան նոցա և գործք նոցա, ամենեքեան դարձան ի թիւր ճանապարհաց իւրեանց՝ և հնազանդեցան կարգաց և սահմանադրութեան նոցա, իշխանք, եպիսկոպոսունք, և երիցունք, և այլք նշանաւորք ռամկօք ամենիւ, Բայց յոլով այլք անուանիք՝ եկեղեցականք և աշխարհականք, ոչ միայն ոչ ընկալան զքարոզութիւն նոցա, այլ և ներհականային ևս, և կենցաղաւոր և խաբեբայ անուանէին. և զսահմանեալ կարգս նոցա խանգարէին ինքեանք և սրբանեակք իւրեանց, ուր և հասանէին և կարէին:

Այլ զայս գործ հակառակութեան առնէին այլք թիւրք և օրինազանցք, որք ոչ հաճէին ընդ ճանապարհս ճշմարտութեան, լինէին չարահամբաւք և ամբաստանք զվարդապետացն. և [1] մինչև եհաս լուր ամբաստանութեան նոցա առ այլազգի իշխանս աշխարհաց՝ ի խան և ի սուլթան, և մանաւանդ առ կաթուղիկոսն Մելքիսէթ, որ թագաւորական բռնութեամբ վարէր զիշխանութիւն կաթուղիկոսութեան: Եւ զի ինքն կաթուղիկոսն ևս ոչ էր ի ճանապարհս ուղղութեան, յայն սակս տեղի տայր ամբաստանութեան այնպիսեաց՝ և նիւթ առեալ ի նոցունց նեղէր զվարդապետսն: Բազում անգամ պատահեալ կաթուղիկոսն աստ և անդ զսահմանեալ կարգս նոցա խափանէր. և զ ի նոցանէ յառաջ կոչեալ զարսն յետս ընկրկէր, և նոցին՝ պատգամս սպառնականս խրոխտ բանիւ առաքէր:

Նա և պատահեցան վարդապետքն կաթուղիկոսին, զնոյն զսպառնական և զեպերական բանս լուան ի նմանէ, զի թագաւորական իշխանութեամբ խրոխտայր ի վե-

1 Ռոկ. չէ+: և.

րայ վարդապետացն, և այնքան վտանգեցին զվարդապետսն, մինչև առին զձեռնագիր ի Պօղոսէ վարդապետէն ոչ ևս շրջիլ ի մէջ քրիստոնէից և քարոզել, որպէս և յառաջդ պատմեցաք ի նորին ճառին։

Իբրև այն ինչ եղև՝ զի զՊօղոս վարդապետն հանին ի կողմն ինչ և միայն գտեալ զՄովսէս վարդապետն, սկսան սաստիկ մրցանօք մաքառիլ ընդ նմա, և այնքան ի նեղ արկին զնա ևս՝ մինչ որ ինքն Մովսէս վարդապետն զիւր փիլոնն և զգաւազանն և զխալիչէն առաքեաց առ Մելքիսէթ կաթուղիկոսն ասելով, որովհետև ոչ կամիս զքարոզութիւնն մեր, ահաւադիկ առ ի քեզ զիշխանութիւնն մեր, և մեք լռեալ դադարիմք ի քարոզելոյ, և ընդ այդ թէ իցեն մեղք ինչ՝ դու տացես զպատասխանի Աստուծոյ։ Իսկ բարեաց կամեցողն Աստուած, որ զամենայն տնօրինէ, ոչ արար հաճելի զարարս Մովսէսի՝ խորհրդակցացն Մելքիսէթի, վասն որոյ հաւանեցուցին զՄելքիսէթ ոչ առնուլ զիշխանութիւնն Մովսէսի, այլ զգաւազանն իւր առ ինքն դարձուցանել և տալ հրաման քարոզութեան. և Մելքիսէթն արար այնպէս։ Թէպէտ ետ հրաման քարոզութեան Մելքիսէթն Մովսէսի, այլ ի նենգելոյ ոչ դադարեաց, զի հանապազ հարստահարէր, դատափետեալ պարտաւոր առնէր, և զրպարտէր, ինքն և համախոհքն իւր անխնայաբար նեղութիւնս ի վերայ նորա ածէին։

Ընդ որոց արարս տաղտկացեալ և ոգւով չափ դառնացեալ վարդապետին Մովսէսի, ձանձրացեալ և իբր զսրտիւ վհատեալ և լքեալ, մտածելով զբանն Տեառն, թէ հալածեսցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք ի միւսն. խորհեցաւ հեռանալ յարևելեան աշխարհէս՝ և գնալ յարևմտեան աշխարհն, և անդ եղելոց քրիստոնէից քարոզել։ Որով [1] դիտաւորութեամբ ելեալ և եկեալ

1 Ուղ. Այսու.

ի քաղաքն Երևան՝ զի անցեալ ընդ այն՝ գնասցէ ի Թէոդուպօլիս, որ է Արզրում քաղաք։

Յորում ժամանակի տէր և իշխան էր Երևան քաղաքի և Արարատեան աշխարհին մեծ և հզօր իշխանն՝ Ամիրգունայ խանն, որում դէպ եղև պատահմամբ ինչ տեսանել զվարդապետն Մովսէս, որոյ վասն հարցումն արարեալ խանն իւրոց առաջիկայից քրիստոնէից, որոց պատասխանեալ զուստին և զորպէսն։ Եւ եղև զի այլ ևս պատահեցաւ խանն վարդապետին, և ոյքան տեսանէր և խօսէր՝ ախորժ Թուէր վարդապետն առաջի խանին. զի խնամքն Աստուծոյ շնորհալի ցուցանէր զծառայն իւր առաջի բռնաւորին, որ և ոչ եթող խանն զՄովսէս գնալ յաշխարհն արևմտից, այլ անդէն արգել յԵրևան քաղաքի։ Եւ օր աւուր գայր խանն, և տեսանէր զպատարագն, և զայլ արարողութիւնս ժամակարգութեանն, և խօսէր ընդ նմա երբեմն ի պատճառս իմաստութեան և երբեմն ի պատճառս հաւատոյ, և լսէր զպատասխանիսն վարդապետին, ախորժ և համեղ և լի շնորհօքն Աստուծոյ. և վասն պարկեշտ վարուց նորա սիրեաց զնա խանն, վասն որոյ պահեաց զնա յԵրևան քաղաքի՝ ի Կաթուղիկէ եկեղեցւոջն կացուցեալ զնա զամս երիս։

Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երևանայ ի մէջ այգեստանեայցն, և էր աւերակ և անմարդաբնակ, որոյ վասն ասաց խանն առ վարդապետն. տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ. արդ՝ լուր ինձ, և մի գնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն՝ և դադարեա աստէն, զի իւրեաց մերձակայութեամբ և տեսութեամբ մխիթարեսցուք, այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչելով զնոյն խնդրէին ի

վարդապետէն։ Յորոց բանս հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին, արդեամբք և ձեռնտուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային տուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին, զի բնակեսցէ ի մէջ իւրեանց. վասն որոյ փութանակի շինեցին, շուրջանակի պարիսպ և խցեր և զժամատուն, և սարաւութ, և զայլ տունս յոլովս. և կատարեալ զամենայն շինուածսն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ անապատն։ Առ որ ժողովեցան միաբանք բազումք, միայնակեացք և գրոց աշակերտք իմաստունք և սրբակեացք. կային ի միասին մեծք և փոքրք սիրով հանդարտեալք ի խցի, հանապազօր կանխեալ յաղօթս և յընթերցումն սուրբ գրոց։

Որոյ ուղիղ վարդապետութեան և բարի քաղաքավարութեան համբաւ հռչակեցաւ ընդ ծագս աշխարհի, ի Հոռոմաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, ի Պարսկաստան. զի յամենայն աշխարհաց վաճառականք գային անդր և տեսանէին, և զհամբաւն տանէին։ Զայս ամենայն յաջողութիւնս, զառաջադիմութիւնս Մովսէս վարդապետին տեսանելով Մելքիսէթ կաթուղիկոսին՝ զչարէր և հեղձամղձուկ լինէր ի սրտի, բայց ո՛չ կարէր զչար ինչ առնել Մովսէսի վասն երկիւղի խանին, զի նա յոյժ սիրէր զվարդապետն։

Եւ եղև զի Մելքիսէթ կաթուղիկոսն իւրովք խորհրդակցովքն արար այսպիսի խորհուրդ, ոչ վասն փառացն Աստուծոյ, և ոչ վասն օգտի Մովսէս վարդապետին, այլ վասն շահու և օգտի իւրեանց. զի մամոնայ և արծաթ բազում գումարեսցի ինքեանց։ Սահմանեցին, թէ, ի սուրբ Աթոռն Էջմիածին մեռոնօրհնէք առնեմք, և այն՝ ձեռամբ Մովսէս վարդապետին, որ-

պէսզի ի նորին համբաւ ի բազում աշխարհայ բազում [1] ժողովուրդք գումարեցին, յորոց լիցի մեզ շահ յոլովից ժամանակից արծաթոյ։ Վասն որոյ ոմանք յեպիսկոպոսացն Մելքիսէթ կաթուղիկոսին եկին առ Մովսէս վարդապետն, և մեծարեցին զնա բանիւ Մելքիսէթի կաթուղիկոսին, դալ յէջմիածին. և առնել մեռոնօրհնէք։ Եւ յայնմ ժամանակի տակաւին ոչ ունէր զաստիճան եպիսկոպոսութեան Մովսէս վարդապետն՝ վասն որոյ հրաժարէր ասելով. ես ո՛չ ունիմ զաստիճան եպիսկոպոսութեան՝ ոչ է այդ իմ գործ, այլ այնոցիկ՝ որք եպիսկոպոսք են։ Յորոյ պատճառէ ասաց Մելքիսէթ կաթուղիկոսն. եթէ զեպիսկոպոսութիւնն պատճառէ, ես օրհնեմ զինքն եպիսկոպոս և մի ևս պատճառ յօդեսցէ, այլ եկեալ օրհնեսցէ մեռոն. իսկ Մովսէս հրաժարէր յեպիսկոպոսական աստիճանէ, զանձն անարժան ասելով. բայց նորին աշակերտքն, և ամենայն քահանայք և ժողովուրդք՝ թախանձէին յանձն առնուլ զաստիճան եպիսկոպոսութեան, վասն որոյ յանձն էառ վարդապետն Մովսէս լինիլ եպիսկոպոս։

Ապա Մելքիսէթ կաթուղիկոսն եկեալ ի դամբարանս սրբոյ առաքելոյն Անանիայի, ուր էր բնակութիւն Մովսէս վարդապետին, զոր անուանեցին զտեղին [2] անապատ. և անդ օրհնեաց զնա եպիսկոպոս յաւագ երկուշաբաթ աւուրն։ Եւ ապա եկին յէջմիածին կաթուղիկոսն և վարդապետն, և ամենայն եկեղեցականք, և աշխարհականք. և յաւագ հինգշաբաթ աւուրն օրհնեցին մեռոն. յետ օրհնութեան մեռոնին փաղփաղակի արձակեցին զժողովուրդն, քանզի ի բազմաց աշխարհաց եկեալք էին ժողովուրդքն՝ որոց առեալ զօրհնութիւն սրբոյ մեռոնին, և զէջմիածնի, գնացին ի տեղիս իւրեանց։

---

1 Աօֆ. չէ+. բազումն. 2 Նոյն չէ+. զտեղին։

Իսկ վաճառականացն Ջուղայեցւոց հասեալք յԱսպահան քաղաքն առ համացեղս իւրեանց՝ ամենեցուն պատմէին զբարեփայլելուչ արարողութիւնսն, զոր տեսեալ էին ի Մովսէս վարդապետէն: Իսկ Ջուղայեցիք եկեղեցականք և աշխարհականք լսելով զայն, տենչային ի տես վարդապետին, և խանդակաթ սրտիւ փափագէին ի տեսութիւն նորին. որ և պատրաստեցին այս նշանաւորս քահանայս և աշխարհականս, և առաքեցին հրաւիրակ Մովսէս վարդապետին, գալ յԱսպահան ի մէջ իւրեանց: Նա և զլուխն Ջուղայեցւոց, ողորմութեանցն Քրիստոսի արժանին խօջայ Նազարն գրեաց ի վերայ որդւոյ իւրոյ խօջայ Սարֆրազին, որ յաւուրսն յայնոսիկ էր յաշխարհն Արարատական, մեծարել զվարդապետն Մովսէս յԱսպահան. որոց եկեալ և առեալ զՄովսէս տարան յԱսպահան: Եւ նա անդէն ըստ քրիստոսական վարդապետութեանն, և աւետարանական քարոզութեանն սփոփեալ արգահատէր զնոսա, և հաստատէր ի հաւատս քրիստոսական, ո՛չ միայն զբնակեալսն ի քաղաքին, այլ և զամենայն շրջակայս գաւառին. և կացեալ անդէն ժամանակս ինչ մեծաւ փառօք փառաւորեալ ի նոցունց, և ապա անտի դարձաւ յԵրևան քաղաք ի տեղի իւր:

Մինչ կայր Մովսէս վարդապետն անհոգ պարզմտութեամբ յԵրևան քաղաքի յիւրում տան, նիւթեաց նմա նենգութիւն Մելքիսէթ կաթուղիկոսն այսպիսի օրինակաւ, զի երևեցոյց թուղթ մի որպէս զԹամասուկ, յորում գրեալ էր թէ [1] ես Մովսէս վարդապետս տալու եմ Մելքիսէթ կաթուղիկոսին զհարիւր թումանս, գնամ յԱսպահան և անտի եկեալ տամ. զայս թուղթս տարան ի դիւան Ամիրգունայ խանին, և ճշդիւ պահանջէին հարիւր թումանն: Իսկ Մովսէս վարդապետն՝ որ-

---

1 Ա-է. չէ+. թէ.

պէս և էր անպարտ զնոյն պատասխանել թէ, անպարտ եմ ի դմանէ, վասն զի ոչ է իմ տուեալ զգիրդ զայդ՝ այլ դաւով և հնարիւք իմն գործեալ են զգիրդ։ Եւ-թէպէտ պատասխանի առնէր Մովսէս վարդապետն բանիւք բազմօք, սակայն ոչ լինէր փրկութիւն, զի կողմն գրպարտողացն ճարտասանք էին և փորձք ի չարիս։ Իսկ խանն իւրովք իշխանօքն և ամենայն քրիստոնեայքն վերահասու եղեն զի թուղթն այն հնար իմն է և Մովսէս անպարտ է, վասն որոյ ամենեքեան ջանային փըրկել զՄովսէս՝ և ոչ կարէին. զի երկարեցաւ գործոյս այսմիկ դատաստանն յերկուս ամիսս. այլ ազատարարն Աստուած փրկեաց զնա այսպիսի կերպիւ։

Մելքիսէթ և իւր եղբօրորդի Սահակ կաթուղիկոսն, ունէին ոխս նախանձու ընդ Համազասպ եպիսկոպոսին, որ էր Հաւուց Թառայ վանացն և Երևանայ քաղաքին առաջնորդ, և էր սա այր խորոխտ և ճարտարաբան, որ մեծաբանութեամբ պակուցանէր զկողմն Մելքիսէթեան։ և թևածէր ի վերայ նոցա. որ և Մելքիսէթեանք վասն այսմ քինու արկին զվնասն ի վերայ Համազասպ եպիսկոպոսին։ Եւ եղև զի յաւուր միում մինչ կային ի հանդէս դատաստանին, Սահակ կաթուղիկոսն եկաց առաջի խանին ի մէջ ատենին, և ասաց ի լուր հանդիսին. թուղթդ այդ բնաւին սուտ է՝ զի ոչ իմ հօրեղբայր Մելքիսէթ կաթուղիկոսն գիտէ՝ և ոչ ես. այլ ես գիտեմ, զի Համազասպ եպիսկոպոսն է արարեալ զայդ նենգութիւնդ։

Յայնժամ խանն և ամենեքեան՝ որք կային անդ, ի ձայն ցնծութեան օրհնեցին զԱստուած, որ ազատեաց զանպարտն ի ձեռաց գրպարտողացն, և ի նմին հանդիսի պատառեցին զթուղթն զայն, և գնացին Մելքիսէթեանքն կորագլուխ և ամօթով ի տեղիս իւրեանց։

Յետ այսորիկ անցին սակաւ ժամանակք ի վերայ՝

եկեալ եհաս հրովարտակ ի մեծ Շահաբաս արքայէն առ Ամիրգունայ խանն վասն Մովսէս վարդապետին, յորում գրեալն էր թէ, ծանիր Ամիրգունայ խան՝ զՄովսէս անուամբ վարդապետն՝ որ բնակի ի քում քաղաքի առ քեւ, փութանակի առաքեսցես զնա առ իս, և ուր և իցեմ ես՝ եկեալ գտցէ զիս։

Եւ պատճառ այսմ խնդրանացս սպիտակացուցեալ մոմն էր. վասն զի Մովսէս վարդապետն ի ժամանակին յորում էր ի քաղաքն Երուսաղէմ, անդ ուսաւ զարուեստն մոմ սպիտակացուցանելոյ, և արդիս ինքն յամենայն ամի սպիտակացուցանէր, և զսպիտակ մոմ վառէր յեկեղեցւոջն ի պատարագն, և յամենայն ժամակարգութիւնսն, զի զտօնս տէրունականս և զնշանաւոր սրբոց՝ մեծաւ հանդիսիւ կատարէր սպիտակ և պայծառ մոմեղինօք՝ և մեծաւ ցնծութեամբ. որպէս գրեալ է ի պատմութիւնս սրբոյն Յօհաննու Օձնեցւոյ։

Դարձեալ որպէս սովորութիւն է թագաւորաց՝ որ տղայս և աղջկունս ժողովեն յամենայն աշխարհաց, այսու սովորութեամբ և այս Շահաբաս թագաւորս ի նախարարաց իւրոց զոմն՝ որում անունն էր Բայինդուր բէկ. ընդ որում և այլ ևս ներքինիս առաքեաց յաշխարհն Արտպատականի ժողովել զտղայս և զաղջկունս վասն թագաւորին. և նոքա գալով եկեալ հասին ի քաղաքն յԵրևան։ Եւ յաւուր միում ի զբօսանս ելեալ շրջէին Բայինդուր բէգն և Ամիրգունայ խանն ի միասին, և զբօսնլով եկին յանապատն ուր բնակեալ էր [1] Մովսէս վարդապետն. և անդէն բերեալ Մովսէս վարդապետին յայն սպիտակ մոմէն աղերսեաց զեօթն մոմ Բայինդուր բէկին, և զեօթն մոմ Ամիրգունայ խանին։ Եւ Բայինդուր բէկին տեսեալ առաւել պայծառ՝ չքնաղ և հրաշ-

1 Ուղ. բնակէր.

ուալի զսպիտակութիւն մօմին, յոյժ սքանչացաւ՝ և հաճեալ հաւանեցաւ և ասաց. պահեմ զսա և տարեալ աղերս մատուցանեմ շահին։ Իբրև զայն լուաւ Ամիրգունայ խանն ասաց. որովհետև այդպէս ասացեր՝ և զիմս բաժին եղից ընդ քումդ, զի ընդ դմին աղերսեալ լիցի առաջի Թագաւորին։

Իսկ Մովսէս վարդապետն իբրև ետես զբանս և զգործս իշխանացն, ասաց. որովհետև այդպէս արարիք՝ զեօթն ևս մոմ բերեալ յաւելուք ի վերայ դոցա և այնպէս մատուսցես առաջի Թագաւորին։ Իսկ ի գլաւ գործոց իւրոց Բայինդուր բէկն գնաց առ Թագաւորն՝ և ընդ բազում և զանազան աղերսիցն, մատոյց և զսպիտակ մոմն առաջի Թագաւորին, որոց ի տեսանելն Թագաւորն առեալ զմոմն ի ձեռն իւր տեսանէր և զննէր, և հարցանէր թէ ուստի իցէ, և Բայինդուր բէկն ասաց զուստին։ Արդ՝ վասն այսորիկ Թագաւորն գրեաց հրովարտակ ի վերայ Ամիրգունայ խանին, զի առաքեսցէ զՄովսէս վարդապետն առ ինքն. զոր և առանց իրիք յապաղելոյ առաքեաց Ամիրգունայ խանն զՄովսէս վարդապետն առ շահն։

Վասն որոյ ելեալ վարդապետին Մովսէսի յԵրևանայ և գնաց ի քաղաքն Բաղդատ; զի անդ էր Շահաբաս Թագաւորն, զի կամէր զքաղաքն Բաղդատ յետ առնուլ յՕսմանցւոց, զոր և էառ յետ սակաւ աւուրց. և մինչ տակաւին ոչ էր առեալ զԲաղդատ այլ շուրջ նստեալ պատերազմէր, անդ Մովսէս վարդապետն յանդիման եղև Թագաւորին. յորում ժամանակի էր Թուականն մեր ՌՀԵ, և Թագաւորն հարցումն արարեալ վասն սպիտակութեան մոմին, իսկ վարդապետն առաջի կացեալ ըստ պատշաճին տայր զպատասխանին։

Ապա գրեաց շահն հրովարտակ և ետ ցՄովսէս վարդապետն՝ և առաքեաց յԱսպահան քաղաք առ Լա-

լա բէկ իշխանն, որ ի Թագաւորէն քաղաքապետ կարգեալ էր Սպահանու, զի տացէ հարիւր լիտր մոմ և երեք ծառայ ի ծառայից Թագաւորին՝ Մովսէս վարդապետին, և զամենայն ծախս նոցա հոգասցէ։ Եւ այգեստանեացն որոց և հաւանեսցի Մովսես վարդապետն, անպատճառ տացեն նմա, զի անդ սպիտակացուսցէ զմոմն, և ուսուսցէ[1] զծառայսն՝ տարցէ առաջի Թագաւորին, ուր և լիցէ նա։ Առեալ վարդապետին Մովսէսի զարքունի հրովարտակն և եկն ի քաղաքն Սպահան, եցոյց Լալա բէկին, և նա կատարեաց զամենայն հրամանս Թագաւորին, տուեալ ի Մովսէս զմոմն և ծառայս երիս, որոց անուանքն էին, Փառուխ, Ղարչղայ, Բէհզատ, և զայն այգին զոր Թիլիմ խանի այգի ասեն, և Մովսէս յամիսս ութն աշխատեցաւ անդ, սպիտակացոյց զմոմն՝ և ուսոյց զծառայսն, և ապա առեալ զսպիտակացուցեալ մոմն և զծառայսն գնաց ի քաղաքն Փահրապատ. քանզի անդ էր շահն, զի զԲաղդատ քաղաքն առեալ էր և դարձ արարեալ գնացեալ էր ի Փահրապատ առ ի ձմերել անդ, վասն որոյ անդ գնաց Մովսէս։

Ի նմին աւուրսն անդ էր մեծ և փառաւոր իշխանն Ջուղայեցի խօջայ Նազարն՝ որ յոյժ բարեկամ էր Մովսէսի, և յարգոյ առաջի Շահաբաս Թագաւորին, որոյ ձեռամբն Մովսէս վարդապետն մատոյց զսպիտակ մոմն և զուսուցեալ ծառայսն՝ առաջի Թագաւորին, որոց ի տեսանելն յոյժ զուարճացաւ արքայ՝ և ի ձեռս առեալ զբօնոյր ի նոսա, և բազմաւ յուսադրական բանիւ արձակեաց առ ժամուն զվարդապետն։

Յաւուրսն յայնոսիկ եկեալ եհաս տօն ծննդեան և Յայտնութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և որպէս

[1] Ա-ն. ուսուցեալ։

սովորութիւն էր Մովսէսի հանապազ մեծաւ հանդիսիւ կատարել զտէրունական տօնսն, և ես առաւել զտօնս զայս բազում պատրաստութեամբ և յարմարագոյն կարգաւորութեամբ. քանզի ինքն Թագաւորն ես հանդերձեալ էր ի տեսութիւն և ի զբօսանս տօնին գալ, որ և եկն. և վարդապետն Մովսէս Թափեաց զերկու սպիտակ մոմս մարդաչափ և ի ճրագալուցի գիշերին ի լուսանալ տօնին լուցեալ յերեկորեայ յանուն սրբոյ Աստուածածնին և ինքն յոտին կացեալ հսկելով յառաւօտն ջերմագոյն սիրով և հաստատուն հաւատով. յորդաբուխ արտասուօք աղօթելով առ Տէր, բարեխօս արկեալ առ միածին Որդին զտիրամայր սուրբ Աստուածածինն, զի շնորհալի ցուցցէ զտօնախմբութիւնն՝ այլահաւատ Թագաւորին, և արկցէ զգութ և զողորմ ի սիրտ նորա ի վերայ քրիստոնեայ ազգին: Որ և ողորմութեամբն Աստուծոյ եղև ըստ խնդրոյ վարդապետին, զի յաւուր տօնին մինչ նստէր արքայ ի զբօսանս տօնին՝ և վարդապետն զգեստաւորեալ իւրովք պաշտօնէիւքն կատարէր զկարգն Ջրօրհնեաց, յոյժ հաճեալ և հաւանեալ էր արքայ ընդ տօնախմբութիւնն. և գթացեալ ի վերայ Մովսէսի՝ որ և հարցումն ես արարեալ էր Թագաւորն յաղագս վարդապետին՝ ընդ խօջայ Նազարին, և նա զբանս բարիս և յոլովս խօսեցեալ էր վասն Մովսէսի առաջի Թագաւորին:

Իսկ զկնի աւուրց ասաց արքայ ընդ խօջայ Նազարին. զի՞նչ խնդիր ունի վարդապետն ձեր. զի կատարեսցուք, զգա՞նձ թէ զդաստակերտ, թէ այլ ինչ, զոր ինքն կամի. պատասխանեալ էր խօջայ Նազարն՝ թէ սա այնպիսի այր է, որ զաշխարհաւ և զընչիւք նորին զանց արարեալ է՝ և բնաւ մի ոք ի դոցանէ ոչ է կարիք սորա. այլ թէ շնորհ առնես տալ սմա զպարգևս, զլուսարարութիւնն Էջմիածնի տուր. զի անդ սպասաւորելով եկեղեցւոյն այնմիկ աղօթեսցէ վասն կենաց Թագաւո-

րին։ Ցորոյ խնդիր յոյժ հաճեալ և հաւանեալ էր ար-
քայ․ և տուեալ էր Մովսէսի զլուսաւորութիւնն սուրբ
Էջմիածնի Թագաւորական նոմոսիւ։

Ապա Մովսէս վարդապետն ելեալ ի Փահրապատու մեծաւ փառօք և անպատում՝ ցնծութեամբ, ոչ միայն իւր՝ այլ և ամենայն քրիստոնէից, եկեալ եհաս յԵրեւան քաղաք, որ և ի սուրբ Էջմիածինն, և առանց յապաղելոյ զձեռն ի գործ էարկ նորոգութեան սրբոյ Աթոռոյն, ի Թուականիս մերում ՌՀՁ ի վարդավառի պահոց երկուշաբաթ աւուրն [1] սկիզբն արարին շինութեան և նորոգութեան։

Արդ՝ լսեա [2] զնորոգութիւն և ոչ գիտես թէ որպէս էր աւերութիւնն․ վասն որոյ հարկիմ գրել զաւերութիւնն․ զի ծանիցեն զթշուառութիւն սրբոյ Աթոռոյն․ որով և զցաւլին և զկսկծալն զոր ունէին ամենայն ազգն Հայոց և վարդապետք ժամանակին վասն սրբոյ Աթոռոյն, ընդ նմին և զաշխատանս Մովսէս վարդապետին և զիւրոց աշակերտացն, և զտուրս և զողորմութիւնս քրիստոնէից ի նորոգումն սրբոյ Աթոռոյն։

Որպէս ասէ մարգարէն Դաւիթ թէ, [3] արարին զԵրուսաղէմ որպէս հիւղս մրգապահաց, և Եսայի մարգարէն ասէ վասն սիովնի, իբրև զհովանի ի մէջ սեխենեաց․ ըստ այսմ սարասի գոգցես և զաստուածաբնակ սուրբ Աթոռս․ զի ամենևիմբ ունայնացեալ էր ի ստացուածոց՝ և կողոպտեալ ի զարդուց, ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասել [4] և կամ ընթերցումն․ ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Քրիստոսի իջման տեղն՝ և սուրբ սեղանն ևս ոչ ունէին ծածկոց․ [5] ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս, այլ համա-

1 Օրին․ որ է Յունիս ամսոյ Իդ․ 2 Նոյն․ լսելով 3 Նոյն․ չէ․ թէ․
4 Օրին․ ժամասացութիւն 5 Նոյն․ զծածկոցս։

պաշ ի խաւարի, բայց այլազգի մահմետական ոմն վառէր զճրագ ձիթոյ և դնէր ի վերայ բեմին, և այն ևս երբեմն երբեմն, վասն անցաւոր ճանապարհորդաց. զի տեսանելով զայն՝ զողորմութիւն արասցեն նմա. ոչ խնկարկութիւն. զի ոչ գոյր բուրվառ և խունկ, և սալարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ, եղեալ որջ գեռնոց, և սողնոց, և մեծամեծ լուսամուտքն՝ զորս ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի, ուստի մտեալ ի ներքս թռչունք՝ նուլին զեկեղեցին ծառովք և ծղովք և այլ գաղխովք. զոր յամենայն աւուր հարկիւ սրբէաք. և ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալն, ձայնք թռչնոցն խափանէր զձայն ժամասելոյն։

Իսկ յարտաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին, և տանիքն ամենայն և երեսք որմոցն քանդքանդեալք և քարինքն թափեալք, և որմոց յատակաց վէմքն փշրեալ և ծակոտեալ։ Եւ ի վաղեմի ժամանակաց որ շուրջ զեկեղեցեաւն շինութիւն եղեալ էր, և դարձեալ աւերեալ և ի վերայ միմեանց փլուզեալ էր, այնքան բարձրացեալ էր հողն և մոխիրն, որ յամենայն կողմանց շուրջ զեկեղեցեաւն եօթն կանգուն բարձրացեալ էր. աղբիւսն և հողն՝ հկեալ և ծածկեալ էր զհիմունս և զաստիճանս եկեղեցւոյն, որք կան յարտաքուստ կողմանէ։

Իսկ զարդք՝ և սպասք, և անօթք եկեղեցւոյն, և կամ տան[1] բնաւ ոչ գոյր, զի զոր ինչ և լեալ էր ի հին ժամանակաց, կաթուղիկոսքն՝ զամենայն վաճառելով և զգաւ ընելով վատնեալ էին. և արդ՝ ևս զգաւ եղեալ անօթքն գոյին առ մահմետական իշխանս. զայս ազատեաց Մովսէս վարդապետն. որ էր աջն Առիստակէսի Հայրապետին՝ որդւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. այլև զաջ Աղջոց վանաց սրբոյն Ստեփաննոսի,

---

[1] Ոսկ. կամանս. Ներսէս Ճրեղակ դղածրս-Նեան:

ընդ որոց և խաչ՝ և սկիհ և բուրվառ՝ և շուրջառ՝ և այլ ևս ինչք։

Եւ ասացեալ բանքս՝ որք ի մէնջ ցուցանեն զտեղին անբնակ գոլ ի մարդկանէ, և ասեմ զիսկն, ոչ էր ամենևին անբնակ, այլ դու համարեա իբրև զանբնակս, վասն զի կաթուղիկոսունքն՝ անդ յԷջմիածին ոչ բնակէին, այլ յԵրևան քաղաք ի կաթուղիկէ յեկեղեցւոջն, և կամ թէ ի շրջագայութիւնս աշխարհաց. բայց սևագլուխք ոմանք սինլքորք (սինլքոր) և գռեհիկք, որպէս զգեղական հողագործս, որք վարնորդ մշակօք բնակէին յԷջմիածին, և զաւուրս տարւոյն զբաղումն ի գեղօրայսն անցուցանէին, քան թէ յԷջմիածին։

Եւ յորժամ Մովսէս վարդապետն սկիզբն արար նորոգութեան, տարակուսէին վասն հողոյն և մոխրոյն, որ բլրացեալ կայր շուրջանակի, թէ զիա՞րդ լինի պեղել. բայց որովհետև կամքն աստուածային քաղցրացեալ էր՝ և ձեռնարկութիւն գործոյն նորին հաճութեամբն էր, դիւրաւ հնարիւ եղև բարձումն հողոյն, վասն զի ածին զջուր ի գետոյն յորդ և վարար. և կապեցին ի կողմն ինչ հողոյն, և բազում մշակս արկին ի գործ, և սկսան մշակքն փորել զհողն և տալ ջրոյն, և այնպէս առնելով՝ ջուրն առեալ զհողն տանէր և քարն մնայր. որ ի սակաւ աւուրս փութանակի յամենայն կողմանց բարձաւ հողն, և բացաւ վայրն ամենայն. և եղև հարթայատակ գետին, և մնացեալ քարինքն շարեցան ի յորմն տանցն, լեալ ձեռնտու գործոյն. և ապա լայն և ընդարձակ պարիսպ պատեցին շուրջանակի, յօրինեալ բուրգս ութն ի նմա։

Եւ զպարիսպն զոր շինեցին, այսպէս ձևեցին։ Որպէս և տեսանի յեկեղեցւոջ անդ չորեքին խորանք եկեղեցւոյն. որք կան յօրինեալք ի նմա ընդ չորս կողմն աշխարհի, յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն ի ճակատաց

այս չորից խորանացս։ Նախ՝ [1] չափեցին ի ճակատէ արեւելեան խորանին ընդ արեւելս ԽԵ. գազ, որ լինի ԿԳ. հալաբի, եւ ապա արկին զարեւելեան կողման պարիսպն. այսպէս իմասցիս եւ արեւմտեան կողմանն։ Սոյնպէս եւ ի հիւսիսային կողման խորանի ճակատէն չափեցին ընդ հիւսիս Խ. գազ, որ լինի ԾԶ. հալաբի. եւ ապա արկին պարիսպ. այսպէս իմասցիս եւ զհարաւային կողմանն։ Եւ ապա ի մէջ պարսպին արեւմտեան կողմն շինեցին դարպասք եւ տունք ի պէտս ինքեանց եւ հիւրոց. եւ ի հիւսիսային կողմն եւ յարեւելեան կողմն շինեցին խցեր ի բնակութիւն միաբանից. եւ ի հարաւային կողմն շինեցին սեղանատուն, փռնատուն, տնտեսատուն, համբարանոց ցորենոյ եւ այլ նիւթոց։ Եւ ամենայն շինուածք այսոքիկ, միայն պարիսպն ի հողոյ եղեւ շինեալ, իսկ այլքն ամենեքեան լխտեալ քարիւ եւ թրծեալ աղիւսով եւ կրով եւ բռով շինեցան գեղեցիկ եւ վայելուչ յօրինուածով։

Յետ այսորիկ զեկեղեցւոյ զմբէթի տանիքն նորոգեցին, քանզի սալերն քանդեալ [2] եւ ի տեղւոյն ի բաց ոստեալք [3] էին։ Եւ թէ ոք տենչացեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց Քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի սուրբ Էջմիածնի, այսքան է. յիսուն հալաբի գազ երկայնքն է յարեւելից դէպ յարեւմուտս, ԽԸ. հալաբի լայնքն է, հիւսիսոյ դէպ հարաւ, ԼԵ. հալաբի բարձրութիւնն է ներսի կողմանէն կաթուղիկէի՝ պորտէն մինչեւ ի գետինն. այս չափերս եկեղեցւոյ մէջն է ներսի կողմն՝ թող զպատերն [4]։

Եւ օր յաւուր նորոգեալ հաստատէր սուրբ Աթոռն, որով եւ ամենայն կարգ եւ կրօնք հաւատոյս քրիստոնէ-

---

1 Աւչ. պակասէ Նախ՝ չափեցին . . . . . այսպէս իմասցիս եւ զհարաւային կողմանն. 2 Նոյն. քանդեցեալք. 3 Նոյն. ոստեցեալք. 4 Նոյն. այսոքիկ, չափքս, զպատսն.

թեան. վասն զի համբաւ նորոգման սրբոյ Աթոռոյս հռչակեալ ծաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ, ի Հռոմաստան, ի Պարսկաստան, ի Քրդաստան, ի Վրաստան, և ամենեքեան զուարճացեալք ցնծային։ Այլև յաշակերտաց իւրոց առաքէր Մովսէս վարդապետ ի քարոզութիւն յամենայն կողմանս, որք գնացեալ հոգեբուխ քարոզութեամբ և բարեկրօն վարուք հաստատէին ըզկարգս և զկրօնս քրիստոսական հաւատոյս, և եկեղեցական աւանդութեան, վասն զի ուր և գնային զճըշմարտութեան գործս ցուցանէին ըստ նմանութեան վարդապետին իւրեանց. շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս՝ և ընկրկեալ կործանէին զհակառակորդս ճշմարտութեան, որով զօրացեալ յառաջանայր ճշմարտութիւնն։ Այլև հոգելից սուրբ վարդապետս տէր Մովսէս կարգեաց դպրատուն ի մեծափառ սուրբ ուխտն Յօհանավանք, ուր ժողովեաց մանկունս յոլովս, և զամենեսուն զծախսն և զպէտսն ինքն հոգայր, և մանկունքն անզբաղ և անխափան ուսանէին զեկեղեցական ուսումն, և զգիրս Աստուածաշունչս, և զիմաստասիրականս, որք եղեն ամենեքեան այրք պիտանիք և օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք, և աբեղայք, և երիցունք, և ամենայն վանօրայք, որք ամայացեալք ի խաւարի կային, եղեն լցեալք միաբանօք, աբեղայիւք, և կրօնաւորօք, և գեղօրայք՝ վարժ երիցամբք։ Վասն որոյ ամենայն ժողովուրդք Հայոց՝ որք յընդհանուր աշխարհս բնակեալք են յառաջին կաթուղիկոսաց անկարգութենէն ձանձրացեալք՝ և ի սորին բարեկարգութենէն մխիթարեալք, կամօք և յօժարութեամբ կաթոգին սրտիւ կամէին զի ինքն սուրբ հայրս մեր Մովսէս վարդապետս լիցի կաթուղիկոս, որք գրովք և աղաչանօք թախանձէին յամենայն տեղեաց, վարդապետք և եպիսկոպոսք և երևելի այրք, զի յանձն առցէ զաստիճան կաթուղիկո-

ութեան, բայց նա հրաժարէր զանձն անարժան ասելով առաքելական աստիճանին։

Այլ և այլս Աստուծոյ տէր Մովսէս վարդապետ հանապազ ի սրտի իւրում վարանէր և տխրէր, և ցաւէր, վասն Ճ․ Թուման մուղաղային, որ անտանելի ծանր բեռն և անխղճելի անուր եդաւ՝ ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, ո՛չ միայն սա, այլ և ամենայն ազգն Հայոց։ Որ և վասն փրկութեան Քրիստոսաբնակ սրբոյ Աթոռոյն՝ Մովսէս վարդապետս [1] ոչ դանդաղեալ ծուլացաւ խնայելով յինքն կամ ի ծերութիւն տկարութեան, այլ ելեալ գնաց ի դուռն արքային ի քաղաքն Ղազբին․ քանզի անդ էր թագաւորն Շահաբաս ի ՌՀԼ․ ամի Թուականնիս մերում և մատուցեալ այսր և անդր առ նախարարս թագաւորին՝ աղաչէր զնոսա ծանուցանել արքայի առ ի բառնալ զՃ․ Թուման հարկն ի սուրբ Էջմիածնէ, և նախարարքն պատեհ ոչ համարեցան, ասելով այս թագաւորս յոյժ արծաթասէր և ագահ է, և յայդքան շահուց արծաթոյ ո՛չ զանց առնէ, և մանաւանդ զի գործդ այդ իւր է հաստատեալ, որով առաւել տեսանի զի ոչ զանց առնէ զդոլաւ, վասն որոյ պարտ է քեզ լռել ի ժամս և յաւուրս յայս․ այլ մեք գտեալ զպատշաճ ժամ, խօսեսցուք առաջի արքայի։ Վասն որոյ և թախծեալ սրտիւ դարձաւ ի Ղազբնոյ և եկն ի սուրբ Էջմիածին։

Իսկ արքայն Շահաբաս ելեալ ի Ղազբինոյ գնաց ի Ֆահրապատ ի քաղաքն, որ կոչի Աշրաւ, առ ի ձմերել անդ․ և ըստ հիւծական բնութեանս մարդկան հիւանդացեալ մեռաւ ի ՌՀԸ․ ամի Թուականութեանս մերում և Յունվար ամսոյ Է․ և կտակաւ հաստատեաց տալ զթագաւորութիւնն թոռին իւրոյ․ քանզի արատամիտ և բազմախորհուրդ արքայս Շահաբաս զորդիս

1 Ուղ․ չէ․ Մովսէս վարդապետս․

իւր [1] զոմանս սպան՝ և զոմանս կուրացոյց, վասն երկիւղի՝ զի մի գուցէ թագաւորեսցեն իշխանքն, և մնացեալ էր թոռն մի՝ որդի աւագ որդւոյ իւրոյ, վասն որոյ ետ զթագաւորութիւնն թոռին իւրոյ։ Եւ ժողովեալ ամենայն նախարարք՝ և հաւատարիմք տան թագաւորին, թագաւորեցուցին զթոռն, և կոչեցին զանուն նորոյ թագաւորին՝ Շահնէֆի, զի վիճակաւ եղին զանուն նորա, որ և վիճակն՝ և կոչումն անուանն ուղղակի դիպեցաւ, զի և անուն նորընծայ թագաւորիս հօրն Սէֆի էր. և նստաւ թագաւոր նորընծայ Շահնէֆի ի նոյն թուականին ՌՀԸ. ամին, և Յունվար ամսոյ ԺԹ։

Եւ եղև ի ժամանակս այս պատճառ և ըմբռն ժամ, վասն բառնալոյ Ճ. թուման մուղաղայլին. վասն որոյ ժողովուրդքն Ջուղայեցւոց բնակեալքն ի քաղաքն Սպահան, և մանաւանդ ողորմութեանցն Աստուծոյ արժանին քրիստոսասէր մեծ իշխանն խօջայ Նազար գրեալ թուղթ՝ սրընթաց փայեկաւ հասուցին յէջմիածին առ Մովսէս վարդապետն, փաղփաղակի հասանիլ ի դուռն նորընծայ թագաւորին, վասն բառնալոյ Ճ. թումանին. որ և անյապաղ ճեպով եկեալ Մովսէս վարդապետն գնաց յՍպահան քաղաք ի դուռն թագաւորին. և կացեալ ի դրան թագաւորին ամիսս ութ. և տեսեալ զամենայն նախարարս, զհինս և զնորս և հաճեալ զմիտս նոցա բազմաընծայ աղերսիւ։

Ապա սուրբ այրն Աստուծոյ պատրաստեաց զընծայ՝ որպէս վայել է թագաւորաց. սկուտեղամբ զուտ ոսկի դահեկան, և այլ ևս ինչս պատուականս, և գրեալ գիրս յօժարութեան՝ որ է արզայ. և վարդապետն և խօջայ Նազարն միջնորդութեամբ նախարարացն ձօնեցին առաջի թագաւորին, որ ի հարցանելն արքայի վասն վար-

---

1 Ո-ի. յորդւոյ իւրոյ.

դապետին, լիազգած արար զնա խօջայ Նազարն, պատմելով նմա զազնուականութենէ վարդապետին։ Այլ և թէ նախածանօթ և հաճելի ծառայ էր յառաջագոյն մեծի թագաւորին՝ հաւուն քում. և այժմ ես աղօթող է վասն կենաց թագաւորին. բայց զայս ինչ խնդիրս ունի, զի այց արարեալ զթասցի ի տառապեալ ժողովուրդս իւր ալքայ՝ և զծանր բեռն, որ ընդ վայր և ի տարապարտուց եդաւ ի վերայ մեր, այսինքն հարիւր թուման մուղադայն, հրամայեսցէ ալքայ բառնալ զայն։

Եւ ալքայ Շահսէֆի անդէն ի հանդիսին յոլով բանս խօսեցաւ ընդ խօջայ Նազարին. այլ և եհարց ի Մովսէս վարդապետէն վասն մուղադայ հարիւր թումանին, և ողորմութեամբն և շնորհօքն աստուածային՝ ամենայն բանք վարդապետին դիւրին և ախորժ թուէր առաջի թագաւորին։ Քանզի ամենաթագաւորն Աստուած, որ ունի ի ձեռին զսիրտս թագաւորաց, հաճեցոյց և քաղցրացոյց զկամս թագաւորին, որ ի լուր ամենայն հանդիսին ասաց թէ. անցայ ի հարիւր թուման մուղադայէդ՝ զոր տայիք ի դիւան թագաւորին, այսուհետև կացէք ազատ և աղօթեցէք՝ վասն մերոյս կենաց և յաջողութեան։ Յայնժամ խօջայ Նազարն՝ և Մովսէս վարդապետն՝ և ամենայն իշխանքն՝ որք կային առաջի թագաւորին, ամենեքեան խոնարհեալ երկիր պագին թագաւորին. և համբարձեալ զձեռս իւրեանց, ի ձայն գոհութեան օրհնեցին զԱստուած և զթագաւորն. և ուրախութեամբ արձակեալք յերեսաց ատենին գնացին ի տեղիս իւրեանց։ Այնուհետև Մովսէս վարդապետն և խօջայ Նազարն, հանապազօր շրջելով ի դրունս իշխանաց, և առ վերակացուս դիւանական մատենից, և առ գծագիրսն, և այնքան աշխատեցան, մինչ զի յամենայն մատենից ուր և գրեալ կայր բանն այն, յամենայնէ հանեալ արտաքսեցին։

Եւ ապա գրեաց միւս ևս արգայ խօջայ Նազարն և մատոյց առաջի թագաւորին խնդրելով՝ զի տացէ նոմոս թագաւորական կնքով վասն բառնալոյ հարիւր թուման մուղադային. այլ և ընդ նմին խնդրեաց յարքայէ տալ իշխանութիւն կաթուղիկոսութեան Մովսէս վարդապետին։ Եւ արքայ Շահսէֆի կատարեաց զամենայն խնդիրս նոցա. զի ետ նոմոս թագաւորական կնքով ազդու և հաստ. բանիւ, թէ բարձի զհարիւր թուման մուղադէն, զոր ի մերոց թագաւորաց եդեալ էր ի վերայ Աթոռոյն ձերոյ Էջմիածնի. այլ և ետու զհրաման կաթուղիկոսութեան Մովսէսի վարդապետին ըստ հայցուածոյ ամենայն ազգին Հայոց։ Արդ՝ այսպէս բազմաերկ աշխատութեամբ, և յոյժ բազում գանձս ծախելով իբր թէ Ռ. թուման, հազիւ թէ կարաց բառնալ զծանր բեռն հարկին ի սրբոյ Աթոռոյն. սուրբ վարդապետն Մովսէս առեալ զթագաւորական նոմոս՝ դարձաւ մեծ ուրախութեամբ և եկեալ եհաս յաստուածաբնակ յԱթոռն ի սուրբ Էջմիածին. և սփռեցաւ համբաւ ազատութեան սրբոյ Աթոռոյն յընդհանուր աշխարհ յազգս Հայոց, և ամենեքեան լցեալք անպատում ուրախութեամբ ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ։

Եւ այնուհետև յամենայն աշխարհաց արք երևելիք, եկեղեցականք և աշխարհականք, սկսան առաւելաբար առաքել թուղթս աղերսանաց առ Մովսէս վարդապետն՝ խնդրէին և աղաչէին զի մի ևս պատճառս յօդեսցէ, այլ վասն հաստատութեան հաւատոյ՝ և կարգի եկեղեցւոյ՝ յանձն առցէ զկաթուղիկոսութիւնն, և այս թուղթ աղաչանաց առաքեցաւ ի Պարսկաստանայ, ի Վրաստանայ, ի Քրդստանայ, ի Հոռոմաստանայ։ Եւ սուրբ հայրս մեր՝ ոչ թէ ի փառս անձին, որ փառաւորեալ էր յԱստուծոյ և ի մարդկանէ, այլ վասն օգտի ժողովրդեան Աստուծոյ՝ և հոգևոր կրօնից հաստատութեան, լսող

եղեալ աղաչանաց ամենեցուն ընկալաւ զաստիճան կա-
թուղիկոսութեան, և օծմամբ ամենասուրբ Հոգւոյն Ա-
տուծոյ օծաւ հայրապետ ամենայն ազինս Հայոց, պայ-
ծառ և պանծալի ժառանգորդ բարձրագահ Աթոռոյն
սուրբ Էջմիածնի՝ ի մերում թուականութեանս ՌՃԸ ?
ամի Յունվար ամսոյ ԺԳ. յաւուր տնօրէնութեան Տեա-
ռըն։ Եւ ըստ բանին Տեառն, ճրագ արփիաւորէչ եդաւ
ի բարձր աշտանակի ի գերագահ Աթոռս. լինել լուսա-
տու տանս Արամեան, և աստուածաշնորհ վարդապե-
տութեամբն իւրով մխիթարէր զամենեսեան քաղցր քա-
րոզութեամբ ուղղելով ի ճանապարհս արդարութեան։

Եւ էր սուրբ հայրս մեր մաքրակենցաղ՝ և սրբա-
սնունդ, երկայնամիտ և ողորմած, որ և բազում և ա-
ռաւել [1] գերիք ազատեցան ի գերչաց՝ ձեռամբ սորա,
վասն զի յաւուրս սորա անհաշտ խռովութիւն էր ի մէջ
Պարսից և Օսմանցւոց, որոյ սակս աւար և գերութիւն
կարի յոլով լինէր յերկուց կողմանց, և զորս և տեսա-
նէր ի գերեացն, անվրէպ առնոյր գնով և ազատէր։ Եւ
եկաց սա ի բարձրագահ Աթոռն ի սուրբ Էջմիածին՝ ու-
ղիղ վարդապետութեամբ նորոգեաց զաւերակսն նորոգ
շինութեամբ, և պայծառացոյց միաբանօք և վարդա-
պետօք, և յարմար և հաստատուն ժամակարգութեամբ,
և փարթամացոյց եկեղեցական անօթով՝ և մարմնական
ստացուածով. և եկաց սա կաթուղիկոս յերիս ամս և
ի կէս և ի թուականիս ՌՉԱ. ամին ի Մայիս ամսոյ
ԺԳ. վախճանեցաւ, պակասեալ աստի մահուամբ և յա-
ւելու առ Տէր հանգստեամբ. և գնաց առ անձկալին
իւր Քրիստոս, որ հանապազ մշտապաղատ և սրբանուէր
աղօթիւք կրէր յոգի իւր։

Եւ պատահեցաւ լինել վախճանի սորա յԵրեւան քա-

---

[1] Որ. չէ+։ առաւել.

ղաքէի ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, վասն որոյ և տարեալ ի հասարակաց գերեզմանատունն, ի Կողեռ կոչեցեալ բլուրն. զի վասն գերեզմանի Կողեռ վարդապետին, որ անդ է, այնպէս կոչեն զբլուրն [1], և յարահուպ գերեզմանի Կողեռ վարդապետին, և Մելքիսէթ վարդապետին, ի մէջ երկուցս այսոցիկ պատրաստեցին զիր հանգստեան սրբոյս այսորիկ, և անդէն ի մէջ երկուց կափուցեալ տապանաց եդին զսրբասնեալ նշխարք մարմնոյ նորա, մեծաւ պատուով և փառօք, ի փառս Քրիստոսի և ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէից։ (Եւ որպէս [2] կենդանութեամբ սորա զուարճացեալ ցնծայր ամենայն ոք, սոյնպէս և մահուամբ սորա սգազգեաց լեալ տրտմեցաւ ամենայն ոք. ոչ միայն քրիստոնեայք, այլ և մահմետականք. նա և քաղաքապետ ինքն Թահմազղուլի խան որդին Ամիրգունայ խանին, և ամենայն իշխանք իւր՝ որք և եկին ի Թաղումն Մովսէսի կաթուղիկոսին, և սգակից լեալ քրիստոնէից՝ ողբային զմեռանիլն նորին, զի այնպիսի աստուածահաճոյ և աշխարհաշէն այր պակասեցաւ յաշխարհէ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք սորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն։

1 Ա.ձ. չէ. այնպէս կոչեն զբլուրն. 2 Նոյն պակասի Եւ որպէս կենդանութեամբ . . . . . մինչ ցվերջ որ ընդ փակագծաւ. իսկ Ա.ձ.ա. Երեց.. գնէ էջմ. յաւելուած. և զտառապեալ գրչիս Աւետիս երիցու յԵրևանցի մէկ բերան Հայր մեղայիւ յիշեցէք ի Քրիստոս.

ԳԼ. ԻԵ.

Վասն վարդապետութեան եւ կաթուղիկոսութեան տեառըն Փիլիպպոսի: Ցորում՝ եւ վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ եւ Հռիփսիմեայ եւ յայտնելոյ նշխարաց նոցին:

Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն էր յերկրէն Բարմայ, որ այժմ ասի Աղբակ, ի գեղջէն՝ որոյ [1] զանունն կոչեն Էրնկան, գոլով սորա ի տիս տղայութեան չորեքտասան ամաց աւելի կամ պակաս, լուաւ զճգնողական վարս միայնակեցաց Մեծի անապատին. Մեծատենչ փափագմամբ ելեալ գնաց ի Մեծ անապատն՝ լինել կրօնաւոր, եւ հետեւիլ առաքինական վարուց մաքրակենցաղ սրբութեամբ, որում կարի փափագէր: Իսկ կրօնաւորք անապատին ոչ թողին զնա յանապատն, վասն տղայական հասակին եւ անմօրուք գոլոյն. սակայն նա ոչ դարձաւ [2] յաշխարհ՝, այլ անդէն եկաց արտաքոյ անապատին ի մէջ մայրեացն, որ շուրջ էր զանապատիւն, եւ եւ համբեր այնպէս զամիսս ութն:

Ընդ այն ժամանակս Մովսէս կաթուղիկոսն տակա-

---

1 Ա–եփ. Երեց. զորոյ. 2 Ո–կ. ոչ դարձաւ կրկին.

ւին վարդապետ գոլով՝ քաւորութեամբ շրջէր յաշխարհի, և լուսաւորէր զամենայն մարդիկ [1] իբրև զարեգակն. իսկ հայրն մեծի անապատին Սարգիս պարոնտէրն ետ զՓիլիպպոսն յաշակերտութիւն Մովսէս վարդապետին։ Առ որ կացեալ Փիլիպպոս եհաս յարբունս հասակի ի տիս երիտասարդութեան, օրհնեցին զնա աբեղայ կուսակրօն քահանայ. և նա ի տուէ և ի գիշերի հետևէր ճգնողական վարուց և գործոց առաքինութեան, և յընթերցումն և յուսումն աստուածային գրոց։ Զորոյ յառաջադիմութիւնն [2] տեսանելով վարդապետին Մովսէսի՝ իւրով հաւանութեամբն և վկայութեամբ ամենայն եղբարց, ետ նմա զիշխանութիւն վարդապետական, և յետ ամաց ինչ զգաւազան վարդապետական. և ի ՌՀԹ. թուին օրհնեաց զնա եպիսկոպոս։

Եւ ի ՌՁԱ. թուին՝ յորժամ եհաս վախճան Մովսէս կաթուղիկոսի, ժողովեցան առ նա եպիսկոպոսք և վարդապետք՝ և երևելի արք, նա և [3] Թահմազղուլի խանն՝ իշխան քաղաքին և ողբալով ասացին. որովհետև այդպէս հաճեցաւ վասն քո Տէրն, և տուողն կենաց, զի մեկնիս և գնաս ի մէնջ. այլ արդ՝ խնդրեմք ի հայրախնամ գթոյ քոյ, զի մի կարի թողուցուս զմեզ որբ՝ այլ յայտնեա մեզ թէ զո՞վ ոք տաս մեզ լինել հայր և հովիւ զկնի քո. և նա ասաց՝ դուք գիտէք, զո՞վ ոք և կամիք ընտրեցէք։ Իսկ բամք ժողովոյն ասացին, մեք, բոլոր աշխարհ զքեզ ընտրեցաք, և այժմ դու զով ոք և ընտրես՝ ընդունելի է մեզ. և նա ասաց. ես զՓիլիպպոս վարդապետն կամիմ լինել փոխանորդ իմ, և յաջորդ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. և նոքա ամենեքեան իբրև զայն լուան՝ յօժար կամօք հաճեցան, և ընկալան

---

1 Ռոչ. մարդ։ 2 Ա–ետ. էջէջ. զառաջադիմութիւն։

3 Ռոչ. չէ+. Նա և Թահմազղուլի խան իշխան քաղաքին.

զՓիլիպպոսն լինել կաթուղիկոս։ Իբրև ծաւալեցաւ համբաւ մահուանն Մովսէսի յամենայն աշխարհ յարևելս և յարևմուտս, նա և բանն այն թէ՝ վասն Փիլիպպոսի պատուիրեալ է առնել կաթուղիկոս. ամենեքեան կամօք և յօժարութեամբ հաճեալ հաւանեցան. վասն որոյ յիւրաքանչիւր տեղեաց առաքեցին զթուղթս վկայականս, զի Փիլիպպոս վարդապետն լիցի[1] կաթուղիկոս. և մինչ ի գալ թղթոցն էանց այն ամն, և եհաս ի վերայ թուականն ՌՁԲ. յորում ամի օրհնեցին զնա կաթուղիկոս օծմամբ Հոգւոյն սրբոյ, յամսեանն Յունվարի ԺԴ.. ի տօնի տնօրէնութեան Տեառն։ Եւ ազգս Հայկազեան՝ թէպէտ ի վերայ մահուան Մովսէսի վշտալիցք լեալ տրտմեցան, այլ ի յաջորդիլն Փիլիպպոսի բերկրեալ զուարճացան, զի փոխանակ հօր եկաց որդի իշխան հանուր ազգի. ըստ վկայելոյ[2] մարգարէին Դաւթի. և թէպէտ վախճանեցաւ Մովսէս, յաջորդեաց ընդ նմա Յեսու. և թէպէտ վերացաւ Եղիա, եկաց փոխանակ նորա Եղիսէոս նովին հոգւով։

Իսկ յորժամ ժամանեալ թուականն մեր եհաս ՌՁԴ. ամն՝ թագաւորն Ստամբօլայ սուլթան Մուրատ կոչեցեալ՝ այր կարի խրոխտ, հզօր, յաղթող և իմաստուն, ելեալ ի Ստամբօլայ եօթն հարիւր հազար հեծելազօրօք, և եկն յաշխարհս Արարատու. և շուրջ նստեալ զբերդիւն Երևանու՝ պատեալ պաշարեաց զնա. և յաւուրս ինն էառ զբերդն, և զիշխան բերդին զԹահմազղուլի խանն՝ զորդին Ամիրգունայ խանին կալեալ առաքեաց ի Կոստանդնուպօլիս, և ի նախարարաց իւրոց զոմն բարեբարոյ և խելացի իշխան՝ որում անունն էր Մուրթուզայ փաշայ, հաստատեաց իշխան ի մէջ բերդին

1 Ոսկ. լինիցի. 2 Նոյն. չէ. Ըստ վկայելոյ . . . . . Եղիսէոս նովին հոգւով.

տամն և հինգ հազար սպառազէն և ընտրեալ հեծելօք. և ինքն անցեալ գնաց ի Թարվէզ քաղաք, և անտի դարձաւ ի վերայ Վանայ և գնաց ի տեղի իւր։

Իբրև էանց այն ամառն, և ի գալ ձմրանն՝ յորում էր Թուականն մեր ՌՁԵ. ելեալ Թագաւորն Պարսից Շահաբասի հարիւր հազար հեծելօք եկեալ եմուտ յաշխարհս Արարատու, և նստաւ ի վերայ բերդին Երևանայ յաւուրս իննսուն և երեք. մեծաւ տաժանմամբ և բազում չարչարանօք, և բազում[1] արեանց հեղմամբ հազիւ Թէ կարաց յետ առնուլ զբերդն ի ձեռաց Օսմանցւոց։ Եւ ի շարժմանէ այս երկուց ինքնակալ Թագաւորաց, աւերեալ ապականեցան աշխարհք՝ արևելք և արևմուտք և մանաւանդ աշխարհն Արարատու իւր շրջակայ գաւառօքն. վասն զի երկոքին Թագաւորքն իւրեանց հեծելօք և հետևելովք անդր դումարեալ կատարեցին զգործս իւրեանց, և դարձան։

Իսկ սուրբ Աթոռն Էջմիածին բաց յեկեղեցւոյն՝ և ի զմբեթաշէն տանցն՝ ամենեքեան բնաւին աւերեցան, զի որ ինչ փայտակերտ շէնք կային[2] քանդեցան. վասն որոյ տէր Փիլիպպոս կաթուղիկոսն բազմաերկ վաստակօք զամենայն շինուածսն վերստին շինեաց բովանդակ. քանզի վասն միայն փայտեղէն շինուածոց Ոչ զուռուշ նաղտ դրամ Նորին արհեստաւորացն ետ։ Եւ ի մէջ սեղանատանն հացկերութի սեղանն՝ և որ ի Նմա այլ կահք էին, յառաջն՝ որ շինեցաւ ի ժամանակս Մովսէսի՝ փայտակերտ շինեցաւ. վասն որոյ դիւրաւ աւերեցաւ, այլ այժմ Փիլիպպոս կաթուղիկոսն քարիւ շինեաց զսեղան հացկերութին. և զտեղի նստելոյն և զսալարկ յատակս Նորին, զի մի դիւրաւ աւերեսցի ի ժամանակս հեծելաշարժութեան։ Եւ արևելեայ կողման

1 Ոսկ. չէ. բաղում. 2 Ա.-Էջ. Երեւ. կայր.

խցերն բովանդակ նոր շինեցաւ, վասն որոյ ոչ ըստ առաջին ձեւոյն է, այլ ուրիշ [1] ձեւով շինեալ է։ Նա և զեկեղեցւոյ տանիքն, զատ ի գմբեթի գդակէն, զբովանդակն նորոգեաց։ Եւ քարակապ փարշն, որ շուրջ զեկեղեցեաւն է, և միւս փարշն, որ առաջի խցերոյն և այլ տանցն է։ Եւ արտաքոյ պարսպին մերձ առ հարաւային դրանն երկու գմբէթաշէնք [2] ձիթահանք նոր շինեցան, զի ոչ գոյր ընաւ։ Զատ յայսցանէ և զայլ ևս մանաւոր շինուածս բազումս շինեաց աստ և անդ՝ զորս յանուանէ ոչ յիշեմք։

Իսկ Երեւանայ անապատն՝ զորմէ ասացաք դամբարան գոլ Անանիայի առաքելոյ, որ ինչ և շինուածք գոյր անդ բովանդակն փայտակերտ էր, զատ ի մատուռէն. և սոքա ամենեքեան քանդեալ աւերեցան ի գալ վերոյասացեալ երկուց թագաւորացն. որ և զայնս ևս զբովանդակն ամենայն վերստին շինեաց, ոչ թէ փայտիւ՝ այլ քարիւ և բռով գմբէթեայ՝ զժամատունն, զսեղանատունն, զխցերն, և զայլ ևս շինուածսն ամենայն։

Յետ կատարման ամենայն շինուածոց՝ որ յէջմիածին և որ յանապատն, ի թուին ՌՂԶ. գնաց սուրբ հայրն մեր տէր Փիլիպպոս կաթուղիկոս յԱսպահան քաղաք՝ ի մէջ քրիստոնէիցն, որ անդ՝ եկաց յամ մի և կէս՝ քարոզելով նոցա զօրէնս Աստուծոյ՝ և հաստատելով ի հաւատս քրիստոսական, այլ և ժողովէր ի նոցունց զնուիրակն սուրբ Էջմիածնի. և Ջուղայեցիք և ամենայն քրիստոնեայքն ընդունէին զնա մեծաւ և բազմազան փառօք իբրև զհրեշտակ Աստուծոյ՝ վասն ճգնազգեաց և առաքինական վարուց նորա։

Եւ վասն սրբոյ Լուսաւորչի Աջոյն՝ որ տակաւին յԱսպահան էր, որպէս յառաջագոյն պատմեցաք վասն

---

1 Ոմն. այլով. 2 Ա–Եփ. Երեր. գեռաշէն.

նորա, թէ հրամանաւ առաջին Շահաբասին տարան զԱՋն ի քաղաքն Սպահան։ Այս Փիլիպպոս կաթուղիկոս հանապազ ըղձատոչոր և խանդակաթ տենչմամբ փափագէր, թէ որո՞վ արդեօք իցէ հնար՝ զի առեալ զսուրբ ԱՋն բերցէ ի սուրբ Էջմիածին, որոյ վասն ի բազում աւուրս խնդրանօք խօսեցաւ ընդ քահանայս և ընդ ժողովուրդս Ջուղայեցւոց, և մանաւանդ ընդ մեծահաւատ և քրիստոսասէր իշխանին խօջայ Սաֆրազին՝ որդւոյ խօջայ Նազարին, որ յարդեանս ժամանակի էր աւագ Ջուղայեցւոց. խօսէր և աղաչէր Փիլիպպոս կաթուղիկոսս զի տացեն զԼուսաւորչի ԱՋն ի նա, որ տարցէ ի սուրբ Էջմիածինն, ի տեղի իւր։

Իսկ Ջուղայեցիք ոչ կամէին տալ զսուրբ ԱՋն և կամ հեռանալ նմին յիւրեանց միջէն, վասն զի ասէին յօտարոտի աշխարհի և յայլասեռ ազգաց միջի բնակեալ եմք. և մանաւանդ ի մէջ նենգժոտ և օձաբարոյ ազգին Պարսից, և ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաստատութեան հաւատոյս քրիստոսական, ոչ վանօրայք և տեղիք ուխտից, և ոչ քրիստոսական սրբոց նշանաց կառուցմունք, ոչ գերեզմանք և դամբարանք սրբոց Աստուծոյ, և կամ մերոց հարց և հաւուց նախնեաց, այլ միայն այս սուրբ ԱՋս է՝ զորոյ զհրաշագործութիւնս տեսանելով նորաժաման զաւակաց մերոց՝ մնան ի հաւատս քրիստոսական. և թէ զայս ես առեալ տարան [1], որո՞վ ես [2] մխիթարիցուք յերկրիս պանդխտութեան, յոր կամքս։ Արդ՝ այսու պատճառաւ ոչ կամեցան Ջուղայեցիք տալ զԱՋն. վասն որոյ պատճառս յօդեալ ասացին առ Փիլիպպոս կաթուղիկոս՝ թէ զԱՋս սրբոյ Լուսաւորչին՝ զոր դու խնդրես ի մէնջ, արքային Պարսից բերեալ և յանձնեալ է ի մեզ. և մեք զիա՞րդ կարեմք տալ

1 Ոսկ. տարցիս։ 2 Նոյն. չէ. ես։

զսա քեզ առանց Թագաւորական հրամանի. վասն զի երկնչիմք ի Թագաւորական պատժոց, և ի նենգութենէ մատնողաց։

Իսկ Տէր Փիլիպպոս կաթուղիկոսն. այնուհետև երևելի արամբքն Հայոց՝ որք էին յԵրևանցւոց ժողովրդենէն, զի սոքա կամէին զգնալն Աջոյն յէջմիածին, սկսաւ շրջել ի դրունս իշխանաց Թագաւորին, և առատաձեռն տուօք զսիրտս ամենեցուն հաճեցոյց։ Եւ ապա յետ ամենեցուն լցեալ զուտ ոսկի դահեկան յսկուտեղ՝ և ընդ նմին գրեալ Թուղթ արզայի՝ մատոյց առաջի Շահսէֆի արքայի, խնդրելով ի նմանէ հրաման տալոյ զԱՋ սրբոյ Լուսաւորչին։ Իսկ Տէրն և Աստուածն ամենայն յաւիտենից և ազգաց՝ որ ի ձեռին ունի զսիրտս ամենայն Թագաւորաց՝ և յոր կողմն կամի շրջէ զնա, ի ժամուս յայսմիկ քաղցրացոյց զսիրտ Թագաւորին, որ արար զշնորհս հայրապետին. և կատարեաց զխնդրուածս նորին, և ետ հրաման գրով և Թագաւորական կնքով. զի տացեն Ջուղայեցիք զԱՋն սրբոյ Լուսաւորչին ի տէր Փիլիպպոս կաթուղիկոսն։ Իբրև էառ Փիլիպպոս կաթուղիկոսն զնոմոս հրամանաց Թագաւորին՝ եբեր առ Թոռունսն խօջայ Սաֆարին, զի որդիքն վախճանեալք էին, և անուանք [1] Թոռանց էր Ջալալ, և Միքայէլ, և Սինան, և Պստիկ աղա և սոքա ոչ կամեցան տալ զԱՋն որոց սաստեաց կաթուղիկոսն բարկութեամբ մեծաւ. և նոքա երկուցեալք ի սրբութենէ նորա. և ի հայրապետական անիծիցն՝ Թուլացան ի պնդութենէ։ Եւ հայրապետն տէր Փիլիպպոս բազում քահանայիւք ինքնին գնաց ի տուն խօջայ Սաֆարին, էառ անտի զաջն և եբեր ի Խոջենց եկեղեցին, և յաւուր կիրակէի, մատոյց պատարագ և եբաց զԱՋն, յորոյ [2] համբաւ ժողովեցան

---

1 Ոսկ. չէ. և անուանք Թոռանց . . . . և Պստիկ աղա և սոքա։ 2 Ա–եպ. Երեց.՝ որոյ.

ամենայն Ջուղայեցիք և արարին զուխտ, և տակաւին ընդդիմանային Ջուղայեցիք, և ոչ Թողուին տանել զԱջն, վասն որոյ դաղտաբար հանեալ անտի զԱջն բերին ի վանքն Ջուղայու, և անտի ևս Թաքուն տարան ի քաղաքն՝ ի մէջ Երևանցւոց, և անտի ևս Թաքնաբար հանեալ տարան ի Բրինջլուի քարվանսարէն, և եդին ի մէջ բեռանց առն ումեմն քրիստոնեայ վաճառականի, որում անունն էր Մարգարայ, որ էր ի գաւառէն Գողթան, ի գեղջէն Ցղնոյ, որ վասն վաճառականութեան եկեալ էր յԱսպահան. և նա առեալ զԱջն բեռամբն հանդերձ՝ ըստ կարգի վաճառակաց յառաջագոյն գնացեալ եհաս ի Թարվէզ. և յայսցանէ ոչինչ բնաւ գիտէին Ջուղայեցիք։ Եւ ապա Փիլիպպոս կաթուղիկոսն ելեալ յԱսպահանայ գնաց ի Թարվէզ՝ էառ զԱջն ի մարգարէէն և բերեալ հասոյց ի սուրբ Էջմիածինն ի նորին սեպհական Աթոռն։ Եւ եղև [1] այս անպատում ուրախութիւն ամենայն Հայոց, զի ամենեքեան ի լսելն ի ձայն ցնծութեան մեծաւ գոհութեամբ օրհնէին զԱստուած զայցելուն քրիստոնէից)։ Եւ եղև գալն սուրբ Լուսաւորչի Աջոյն յԱսպահանայ ի սուրբ Էջմիածինն յաթոռ իւր ՌՁԼ. Թուականիս մերում ի Սեպտեմբերի ամսոյ քսան։

Եւ եղև սորոյ հայրապետիս Փիլիպպոսի կաթուղիկոսութեանն՝ օր յաւուր զօրանալ հաստատիլ, զի Տէր էր ընդ նմա. քանզի էր վարուք յոյժ ճգնող և պահող։ և մտօքն սրբախորհուրդ, և անձանձիր յաղօթս և ի խոսակցութիւնս Աստուծոյ, որ զինչ և խնդրէր յԱստուծոյ՝ զամենայն անթերի պարգևէր Աստուած։ Վասն զի մերով աչօք իսկ տեսաք, զի բազում դիւահարք նորին աղօթիւք ազատեցան, և հիւանդք. և պէս պէս ցաւագարք,

---

[1] Աւետ. էրեց. չէ. Եւ եղև այս անպատում . . . ցվերջ . . . . . որ ընդ ճակատիւն։

և անդամալոյծք առողջացան, և ամուլ կանայք աղօթիւք նորա ծնան զաւակս։ Յորոյ արարեալ բժշկութեանցն զերկուսն միայն աստանօր յիշեմ. մինչ էաք եղբարք յոլովք միաբանութեամբ բնակեալ ի սուրբ Էջմիածին առ Փիլիպպոս կաթուղիկոսիւս, պատահեցաւ ումեմն եղբօր այսահարիլ. և այնքան յաճախեաց չարն, մինչ զի առեալ վարէր զնա արտաքոյ շինութեան ի դաշտավայր և յանդսն և այսր և անդր յածեցուցանէր բացեայ ի մարդկանէ, զոր կալեալ ածէին միշտ ի վանքն, և ապա յետոյ եդին երկաթեայ ոտնակապ յոտս նորա, և այնպէս պահելով՝ յամենայն աւուր կարդային աւետարան քահանայքն. և երկարեցաւ այսպէս յաւուրս յիսուն։ Ապա յաւուր միում. որ էր կիւրակէ՝ յետ մատուցանելոյ փրկական խորհրդոյ սուրբ պատարագին, յորժամ ժողովուրդքն ամենեքեան ելեալք յեկեղեցւոյն գնացին, տէր Փիլիպպոս հայրապետն հրամայեաց ածել զայսակիր եղբայրն յեկեղեցին՝ ի մէջ ատենին՝ զի պատարագող քահանայն սրբութեան զգեստիւն աւետարան կարդասցէ ի վերայ նորա. զայս ասաց տէր Փիլիպպոս, և ինքն ելեալ գնաց ի տուն. զի ունէր գործ հարկաւոր. քանզի արք ոմանք պատուաւորք եկեալ էին հիւր նմա, գնացեալ առ նոսա էած առաջի նոցա զսեղան. և սուղ ինչ յամեալ առ նոսա յաղագս շահելոյ զնոսա, ապա եթող զնոսա ի սեղան հացկերութին, և ինքն եկն յեկեղեցին, և յարեւմտեայ դրանէ եկեղեցւոյն մտեալ հանդարտութեամբ և խաղաղիկ եկն մինչև մերձ ատենին, և անդ անկեալ ի վերայ ծնկացն իւրոց՝ ունելով զդէմս իւր հանդէպ սեղանոյն սրբոյ. և ի չափ միոյ Գործայի սաղմոսի սրտառուչ պաղատանօք և յորդ արտասուօք աղօթեաց. յայնժամ այսակիր այրն կամէր զերծանիլ և փախչիլ ի ձեռաց ունողացն, և իբրև ոչ կարաց զերծանիլ՝ յայնժամ ուժգին և բարձրաձայն գոչ-

մամբ աղաղակեաց և անկաւ ի գետին, և ժայթքեաց և եղև իբրև զմեռեալ. ապա այնուհետև դադարեաց տէր Փիլիպպոս յաղօթից, և մերձակայիցն հրամայեաց բառնալ զնա և տանիլ ի տուն, և մատուցեալ սպասաւորաց եկեղեցւոյն սրբեցին զտեղին ժայթքեալ, և յայնմ օրէ և առ յապայ շնորհօքն Քրիստոսի, և աղօթիւք առնն Աստուծոյ տեառն Փիլիպպոսի ազատեալ եղև այն եղբայրն յախտէն յայնմանէ. և ազատեալ եղբայրն ինքն պատմէր՝ թէ մինչ կալեալ ունէին զիս եղբարքն ի ներքոյ աւետարանին, զոր կարդայր ժամարարն, տեսանէի՝ զի կայր պատեալ զանձամբ իմով մեծ և ահագին վիշապ օձ մի սեաւ ընդ մէջս, և ընդ պարանոցս, և ամենայն մարմնովս, այլ և տեսի զՓիլիպպոս հոգևոր տէրն, զի ունէր ի ձեռին իւրում մերկ սուսեր յոյժ մեծ, և սրընթաց յարձակմամբ եմուտ ընդ դուռն եկեղեցւոյն, և եհաս մերձ առ իս, և այնու սրովն եհար զօձն, որ զինև պատեալ էր՝ և կտրատեալ ի վայր թափեաց յինէն, և գլուխ և կտորք օձին մեծաւ տագնապաւ փախուստ առեալ, ելին յեկեղեցւոյն, և կորեան։ Եւ ոչ միայն այս՝ այլ և զայսպիսիս բազումս բժշկեաց, բայց զայս միայն գրեցի առ յօրինակ այլոցն ևս։

Պատմեցից միւս ևս զսքանչելիս. մինչ քարոզութեամբ շրջէր տէր Փիլիպպոս կաթուղիկոս յաշխարհին Օսմանցւոց, այսպիսի գործ պատահեցաւ ի քաղաքին Ենկիւրիա, յաւուր կիւրակէի մեծի տօնի Զատկին, մինչ առանձնացեալ նստէր հայրապետն տէր Փիլիպպոս, և յաշակերտաց իւրոց ոմն Յովհաննէս անուամբ վարդապետ՝ այր երևելի կայր առաջի նորա։ Տեսին զի եկն պատանի մի իբրև հնգետասանամեայ և բարձեալ ունէր յողն իւր մանուկ փոքրիկ իբրև եօթնամեայ, զոր բերեալ եդ առաջի հայրապետին, այլ և ունէր նոյն պատանին ի ձեռին իւրում փակեղամբ միով խնձոր և ներ-

կեալ հաւկիթ, և զայն ևս եդ առաջի հայրապետին. և աղաչանօք և աղերսանօք խօսեցաւ առ նա, և ասաց. ծառայ քո եմ տէր հօգևոր, այս փոքրիկ մանուկս՝ զոր եդի առաջի սրբութեան քո՝ եղբայր իմ է, այսքան ամ է, որ ծնեալ է, ոչ կարէ խօսիլ, քանզի համր է, այլ և ոչ կարէ կանգնիլ քանզի ոտքն թոյլ են. վասն որոյ մեծաւ պաղատանօք խնդրեմք ի քումմէ սրբութենէ՝ զի արասցես զաղօթս ի վերայ սորա. և ես հաւատամ ի Տէր՝ զի աղօթիւք քո լիցի առողջութիւն եղբօրս իմոյ։ Իսկ հայրն մեր և հայրապետն սուրբ եկն ի վերայ ծնկաց իւրոց և համբարձեալ զձեռս ի վեր՝ և յինքն ամփոփեալ զխորհուրդս, և զտեսութիւն մտաց իւրոց յառեաց առ տեսողն ամենայն սրտից յԱստուած, թողլով արտաքուս յաչաց իւրոց արար աղօթս ի ժամս բաւականս. և յետ աղօթիցն իբրև կատարեաց զՀայր մեր յերկինս, եառ ի խնձորէն՝ գլորեաց ի բացեայ, և խանդաղատական բանիւ ասաց փոքրիկ մանկանն. ե՛լ որդեակ, ե՛լ և գնա զայն խնձորն բեր. յայնժամ շնորհօք և ողորմութեամբ բարերարին Աստուծոյ՝ ելեալ մանուկն ի վերայ ոտիցն, և գնացեալ ի վեր եառ զխնձորն և եբեր առ Հայրապետն։ Միւս անգամ ասաց հայրապետն ընդ մանկանն. առ՛ր զխնձորն որդեակ. յայնժամ շնորհօքն Աստուծոյ ետ պատասխանի համր մանուկն. այո՛ առի, և աչհաւասիկ. ասաց սուրբ հայրապետն. արդ՝ տո՛ւր փառս Աստուծոյ, որդեակ, և գնացեալ փոհացող լեր զնմանէ. ասաց մանուկն, փառք Աստուծոյ։ Եւ ապա ետ զմանուկն ցեղբայրն՝ որ առեալ գնաց փառաւորելով զսքանչելագործն Աստուած որ տայ զշնորհս զօրութեան ծառայից իւրոց։ (Կան և [1] այլ գործք սքանչելեաց բա-

[1] Ասկ. չէ. Կան և այլ գործք . . . ցվերջ որ ընդ փա-կագծաւ:

գումն զոր արար սուրբ կաթողիկոսն տէր Փիլիպպոս, զոր մերովք իսկ աչօք տեսաք, այլ այսքանս բաւականասցի։)

Այլ և էր այր կարի խորհրդական և հանճարեղ՝ աշխարհաշէն և արդիւնարար. և ի գիրս աստուածային՝ սրամիտ և նրբաքննին, և ի խրատս և ի քարոզս համեղաբան և արդիւնաւոր. և զայսոսիկ ի շնորհաց աղօթից ստացաւ սակաւ սակաւ յապայն, վասն զի յամենայն տեղիս ուր և քարոզէր՝ և կանոնադրէր, պտղաբերեալ արդիւնանայր ամենայն։

Այլ և էր յոյժ տօնասէր պայծառացուցանող տօնից՝ զարդարող եկեղեցեաց՝ և պատուիչ տօնից տէրունականաց, և սրբոց Աստուծոյ, որպէս և գրեալ է վասն Յօհաննու Օձնեցւոյ։ Վասն որոյ յոյժ հռչակեալ համբաւեցաւ անուն նորա յամենայն աշխարհ, ոչ միայն ի մէջ Հայոց, այլ և մահմետականաց և Վրաց. և ամենեքեան սիրէին և պատուէին զնա։ Եւ վասն առաւել ճգնութեանն և սրբութեանն և հաճոյական ծառայ գոլոյն Աստուծոյ՝ յոյժ երկնչէին ի նմանէ, ոչ թէ ռամիկք, այլ և աշխարհակալք՝ իշխանք և զօրագլուխք. քանզի զբազումս տեսին ի թշնամեաց նորա, որք կործանեալ բարձան ի միջոյ, և ի սիրելեաց նորա՝ որք զօրացեալ յառաջադէմ եղեն։

Եւ զդպրատունն զոր ի Յօհաննավանք հաստատեցին, սա ևս կարի հաստատեաց, և ուսմամբ և առաքինութեամբ վարժեալ հասոյց ի կատարելութիւն. և յետ ամաց ինչ փոխեաց ի Յօհանավանից և եբեր ի սուրբ Էջմիածինն, և անդ կարգեաց զդպրոցն, որ և ամենեքեան ուսան և եղեն այլք պիտանիք, վարդապետք, և եպիսկոպոսք, և քահանայք։ Եւ ի վաղնջուց խափանեալ վանօրայք լցան աբեղայիւք, և գիւղք, և քաղաքք երիցամբք, և դեռ ևս օր յաւուր աճէ նորին սահմանա-

դրութեամբն։ Եւ սովու բազում կիսաւեր և խախտեալ եկեղեցիք նորոգեցան, և ի գիւղս և ի քաղաքս յոլով եկեղեցիք նոր շինեցան հրաշազան յօրինուածովք՝ պայծառ և փառաւոր ամենայն ուղխութեամբ։

Եւ յետ ամենայն շինուածոցն Էջմիածնի, զոր սուրբ Հայրապետն Փիլիպպոս արար, այնուհետև ձեռն ի գործ էարկ, զի և զտաճարս սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ նորոգեսցէ։ Վասն զի որպէս սակաւ ինչ նշանակեցաք զաւերակս տաճարացն երկոցունց կուսանացն՝ ի ճառին Հռիփսիմէի, յորում վայրի պատմեցաք, թէ Փռանկպատրիկք եկին և զնորին նշխարսն գտին։ Բայց սրբոյն Գայիանեայ կուսի տաճարն առաւել աւերեալ էր, զի տանիքն բովանդակ իջեալ էր, միայն շուրջանակի որմունքն և չորեքին սիւնքն կային կանգուն, գլուխն ի բաց, և յատակք որմոցն աստ և անդ ծակոտեալ և խրամատեալ. որոց արար նորոգման սկիզբն կաթուղիկոսն տէր Փիլիպպոս, մեծարիղձ կարօտիւ և ջանիւ, և բազում գանձս ծախելով նորոգեաց զեղեցկաշէն, ի հիմանց մինչև ցգագաթն գմբէթին. յորոյ վերայ կառուցին զնշան տէրունական խաչին,

Եւ ի նորոգել զեկեղեցին սրբուհւոյ կուսին Գայիանեայ՝ գտեալ եղև սուրբ նշխարք նորին՝ և նորին ընկերացն, և եղև ուրախութիւն և ցնծութիւն անպատում ամենայն հայազգին տոհմի իբրև զկանգնումն կործանելոյ թագաւորութեան։ Վասն զի ամենեքեան խոկային և խորհէին վասն նշխարաց սրբոց կուսանացն իցէ՞ արդեօք ի տեղին՝ թէ ոչ. քանզի աւագ խորանի ներքոյ շինեալ մատուռն՝ որ է դիր հանգստեան նշխարաց սրբոցս, աւերեալ էր բնաւին, ոչ միայն մատուռն, այլ և ի վերայ նորին կառուցեալ աւագ բեմն աւերեալ և քանդեալ էր մինչև ցյատակն, և աղբիւսովք և գռեհօք լցեալ մինչև ի վեր։

Եւ յաւուրս նորոգմանս այս՝ էր աբեղայ ոմն տէր Յովհաննէս անուամբ, այր արդիւնաւոր և գործունեայ և խորհրդական խորհրդով, զոր և տէր Փիլիպպոսի կաթուղիկոսի կարգեալ էր զսա վերակացու և գործավար ի վերայ գործոյս այսորիկ։ Սա յաւուր միում պատճառանօք իմն յայլուր առաքեալ զամենեսեան գործողս՝ և առանձնացուցեալ զտեղին՝ գիշեր և ցերեկ մի, և ինքն իւրովի միայնակ պեղեաց զտեղին՝ ուր կարծիք մտաց ազդեալ նշանակէր, և այնքան պեղեաց զհողն մինչև եհաս յանշարժ հողն, յորոյ վերայ կառուցեալ էր հիմն եկեղեցւոյն, և անդէն եգիտ երիս տապանս ի ներքոյ հիման եկեղեցւոյն, որոց մինն էր ի կողմն հարաւոյ, և մինն ի կողմն հիւսիսոյ, և մինն ի կողմն արևելից. և ընդ բանալ կափարիչ վիմաց տապանացն, իսկոյն բուրեաց հոտ անուշութեան նորաքանչ և զարմանալի, զորոյ զանուշութեան որպիսութիւնն անկար է ումեք պատմել, որ և ծաւալեալ ելից զվայրն ամենայն. և տեսանէ զնշխարս իւրաքանչիւրոցն ի մէջ տապանացն՝ սպիտակ, փայլուն որպէս զձիւն և բովանդակ նշխարն անպակաս ի մէջ տապանացն. առ որ բերկրական ուրախութեամբ լցեալ տէր Յովհաննէսն անկեալ ի վերայ երեսաց իւրոց երկրպագանէր Աստուծոյ՝ և գոհանայր զնմանէ՝ զի արժանի արար զինքն այնպիսւոյ շնորհաց. և ապա առեալ զնշխար մի յոսկերաց սրբոցն առ ի նշան հաւաստութեան, և ապա խփեալ զկափարիչ վէմսն ի վերայ տապանացն, և խճով և կրով ամրացուցեալ փակեաց շուրջանակի զտապանսն, և անհետ արարեալ կորոյս զնշանսն, և յարանց գործաւորաց ոչ ոք իմացաւ զայն. և յետ կատարմանս այս՝ զառեալ նշխարսն բերեալ եցոյց վարդապետաց և եղբարց ամենեցուն, և պատմեաց զամենայն որպիսութիւնն. որոյ վասն ամենեքեան ի ձայն ցնծութեան գոհանային զԱստուծոյ և ուրախա-

նային անպատմելի զուարճութեամբ։ Եւ եղև գիւտ նշխարաց սրբուհւոյ կուսին Գայիանեայ և ընկերաց նորա, և նորոգումն նորին եկեղեցւոյն ՌՃԱ. թուին. Հոկտեմբեր ամսոյ ԺԹ. յաւուր երեքշաբաթի։

Իբրև կատարեալ աւարտեցան ամենայն շինուածք տաճարին Գայիանեայ կուսին, ապա գնացին ի տաճար սրբուհի կուսին Հռիփսիմեայ, և ձեռն ի գործ արկեալ սկսան և զայն ևս նորոգել։ Վասն զի յարտաքուստ կուսէ եկեղեցւոյն գլուխ կաթուղիկէին, և տանիքն բովանդակ, և երեսք որմոցն և յատակք նորին. իսկ ի ներսի կողմանէ բեմն, և սալարկ յատակն, և չորից խորանաց մէջն, այս ամենայն զոր յիշեցի, աւերեալ և քայքայեալ էին. վասն որոյ բազում ջանիւ և յոքնակի աշխատութեամբ, գուն գործեալ մինչև զամենայն նորոգեալ կատարեցին, և ի վերայ գագաթան եկեղեցւոյն կառուցին զնշան տէրունական խաչին։ Եւ շնորհօք և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի աստ ևս յայտ եկեալ գտաւ նշխար սրբուհի կուսին Հռիփսիմեայ՝ ոչ միայն ի միում տեղւոջ, այլ յերիս տեղիս, զոր բաժին բաժին էին արարեալ և ամփոփեալ ի զգուշաւոր տեղիս. զերկու տեղեաց նշխարքն ի մէջ վիմաց եդեալ էին, և զմինն որ և բազում էր նշխարքն եդեալ էին ի մէջ փայտեայ արկեղ, որ է սնդուկ, և տեղի փոքրիկ իբրև զմատուռն շինեալ վասն նշխարացն, և անդ եդեալ էին զսնդուկն լի նշխարօքն. և ի յորմն մատրանն գրեալ կայր գիր, գորոյ զօրինակն առեալ ահաւասիկ գրեցի աստ, որ է այս։

✠ Ո՛վ հրաշափառ և երջանիկ վկայ անբաժանելի ծոցածին Հօր՝ և համագոյգ Հոգւոյն կամողին ընդ ստորինս ասեմ, անոխակալ երկնաւոր փեսային հարսն, զբարեգործակ ալքայն ունող, գոլով գլուխ, միշտ և անընդհատ յաղագս ծանօթ քեզ սպասաւոր սուրբ Հոգւոյն։

✠ Ո՛վ սրբուհի աղաչեմ յիշատակողացս անուան քոյ բարեխօսութեամբ և աննուազ աղօթիւք լեր պահապան և անդ իսկ, որով հանդիսացիս ստորնոցս լինել սուրբ կոյս արագ օգնական, որ և պատսպարան եղիցիս յամենայնի յաղթող բարերան։

✠ Յիշեա՛ և զիս՝ զոր նուիրեցայց իսկապէս ըստ անուանս վերստին աստուածագործողին կամահաճոյ յարկիս, զոհն մասնատիպս՝ որոյ շնորհօքն բաւականացայց, աղաչեմ յանձն և յարանուն քեզ Հռիփսիմէ։

✠ Յակոբ քահանայ սուրբ կաթուղիկէ արհի եպիսկոպոսարանին։

✠ Ես Խօսրովիկ ծառայ սուրբ Հռիփսիմէի։

✠ Սուրբ Ոլոգին։

✠ Ստեփաննոս։

Արդ՝[1] այսքան բանքս՝ յորոց սկիզբն նկարեալ եմ նշան խաչի, ուրոյն ուրոյն գրեալք էին յորմն մատրանն, յորում եդեալ էին զանգուկն լի նշխարօքն, և մեր անտի առեալ զօրինակն գրեցաք ասա ի զուարճութիւն ձեր առ յապայն պատահեալ ընթերցողացդ, և յիշատակ և առիթ վարձուց բարեաց ի Քրիստոսէ մեզ աշխատողացս, աղօթիւք ձեր և բարեխօսութեամբ սրբուհւոյն Հռիփսիմեայ։

Եւ սկիզբն և կատարումն երկուց վկայարանացս սրբուհւոյն Գայիանեայ, և սրբուհւոյն Հռիփսիմեայ, եղև յամս երիս. զի ՌԾ. Թուին սկիզբն արարին նորոգութեան, և ի ՌԾԲ. Թուին զերծան ի գործելոյ. բազում ծախիւք և յոլով աշխատութեամբ շինեալ կատարեցին ի փառս Քրիստոսի և սրբոց վկայից նորա։

Սրբազան հօրս մերոյ տեառնս Փիլիպպոսի կամեցեալ գնալ յԵրուսաղէմ, որ և ելեալ գնաց բազում ամ-

[1] Ո-ւ. չէ+. արդ.

բոխիւ, վարդապետօք, և եպիսկոպոսօք, և քահանայիւք և սպասաւորօք՝ որք էին իւր միաբանք։ Իսկ ի քաղաքաց և ի գաւառաց արք նշանաւորք յոյժ, բազում վարդապետք, և եպիսկոպոսք, և իշխանք, որոց լուեալ զհամբաւ գնալոյ հայրապետին սրբոյ, փութացան և նոքա ի գնալ։ Եւ յորժամ եհաս Փիլիպպոս կաթուղիկոս ի քաղաքն Թէոդուպօլիս, որ է Էրզրումն և համբաւն գնալոյ եհաս ի մեծ քաղաքն Կոստանդնուպօլիս, իսկ հայկական ժողովրդոցն՝ [1] որք բնակեալ են ի Կոստանդնուպօլիս, յաղագս մեծաշուք փառաց հայրապետին իւրեանց, մատեան առ եպարքոս թագաւորին, որ է վէզիրն, և խնդրեցին ի նմանէ թագաւորական ծառայ ի դրանէ թագաւորին, ընդ նմին և նոմոս թագաւորական կնքով, որպէս զի ծառայ կոչեցեալ իշխանն եկեալ պաշտպանեալ սպասաւորեսցէ հայրապետին, յամենայն շրջագայութիւնս աշխարհաց՝ որք ընդ իշխանութեամբն Օսմանցւոց, զի մի դուցէ ոք յիշխանաց կամ յաշխարհակալաց, զրպարտեալ խուիցէ և բռնադատեալ վշտացուսցէ զհայրապետն։ Յորոց խնդիր հաճեալ եպարքոսին ետ նոցա նոմոս թագաւորական, և իշխան մի բարեպաշտօն, որ և եկեալ իշխանն առ հայրապետն, և կատարեաց զգործ իւրոյ պարտականութեան՝ սպասաւորելով հայրապետին յամենայն շրջագայութիւնս նորա։ Քանզի յամենայն քաղաքս՝ որք են ընդ իշխանութեամբն Օսմանցւոցն շրջեցաւ կաթուղիկոսն, և իշխանն ընդ նմին շրջագայեալ սպասաւորէր, մինչև բերեալ հասոյց զնա յաթոռն նորին ի սուրբ Էջմիածին, և յանձնեաց իշխանի աշխարհին, Մահմատղուլի խանին, և առեալ ի նմանէ թուղթ նշանի և ազատութեան՝ դարձաւ ի դուռն թագաւորին իւրոյ՝ ի Կոստանդնուպօլիս։

---

1 Ուղ. հայկականք ժողովուրդք.

Եւ տէր Փիլիպպոս կաթուղիկոս եկաց յԵրուսաղէմ ամիս չորս, և փաշայն քաղաքին և պատրիարգն Հոռոմոց, և վանաց պետն Ֆռանկաց, բազում սիրով և մեծաշուք փառօք ընդունէին և պատուէին զնա՝ որքան եկաց նա անդէն։ Եւ զյատակս եկեղեցւոյ սրբոյն Յակովբայ՝ գեղեցիկ յօրինուածով և նկարակերտ յարմարութեամբ երանգ երանգ վիմօք սալարկ արար. զի թէպէտ յառաջն գոյր սալարկ՝ այլ ոչ էր հաւասար և դիւր, այլ բարձր և ցած, և անյարմար, և կոպիտ՝ և զաւագ խորանի բեմն բարձրացոյց, զի յառաջն կարի ցած էր։

Ի սմին ամի՝ յորում գնացեալ էր յԵրուսաղէմ՝ տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, եկեալ էր անդ յԵրուսաղէմ և կաթուղիկոսն Սսոյ տէր Ներսէս, յորում ժամանակի էր առաջնորդ Երուսաղէմի Աստուածատուր վարդապետն։ Իսկ հոգիընկալ հայրապետն տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, որ նման առաքելոյն Պօղոսի հանապազ ցաւէր և հոգայր վասն հիւանդութեանց և անկարգութեանց եկեղեցւոյ։ Սա ամենայն ժառանգաւորօք իւրոյ վիճակին միակամ՝ եղեալ կամեցաւ բառնալ ի միջոյ զանկարգութիւնս, վասն որոյ հանապազօր դասիւ և քարոզիւ. և առանձին խօսելով յորդորէր զամենեսեան գալ ի միաբանութիւն և ի սէր, և բառնալ զանկարգութիւն և զատելութիւն։ Յորոյ քրիստոսածաւալ քարոզութիւնն և հոգեբուխ վարդապետութիւնն քաղցրացեալ հանուր ժողովն գումարեալ, եկեղեցականք և աշխարհականք, յորս էին գլխաւորք՝ կաթուղիկոսն Սսոյ տէր Ներսէս, և առաջնորդն Երուսաղէմի Աստուածատուր վարդապետն. միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս հայրապետին Փիլիպպոսի. և հաստատեցին կանոնական բանս երեքտասան գլուխս, զորս համառօտիւ նշանակեցից աստէն. որոց Առաջինն է սէր և միաբանութիւն երկուց աթոռոց կաթուղիկոսացն Էջմիածնի

և Սսոյ, և իւրաքանչիւր կաթուղիկոս զիւրոյ վիճակի նուիրեալն ձեռնադրեսցէ և մի զայլոյ. և թէ դէպ լինիցի զի ձեռնադրեսցէ յայլմէ վիճակէ զոք, յիւրում վիճակին տեղաւորեսցէ զնա. և ձեռնադրեալն՝ թէ յայնմ կաթուղիկոսի վիճակէ փոխեսցի յայլ կաթուղիկոսի վիճակ, անընդունելի լիցի:

Երկրորդ՝ զի ինքն նուիրեալն ևս մի համարձակեսցի առ այլ կաթուղիկոս գնալ՝ թողլով զիւրն, այլ առ իւր կաթուղիկոսն:

Երրորդ՝ զի թարց խնդրանաց ժողովրդեան և վկայական թղթոյ մի ձեռնադրեսցի ոք յեպիսկոպոսութիւն:

Չորրորդ՝ ամենևին զինչ և իցէ պատճառաւ ոք եպիսկոպոս զայլոյ վիճակ մի յափշտակեսցէ:

Հինգերորդ՝ միոյ վիճակի մի լիցին երկու եպիսկոպոսք, և երկու առաջնորդք, բայց թէ կարի մեծ ինչ պատճառ ի մէջ գայցէ:

Վեցերորդ՝ մի համարձակեսցի եպիսկոպոս՝ յայլմէ վիճակէ զոք ձեռնադրել, ապա թէ համարձակեսցի՝ լուծցի ինքն և իւր ձեռնադրեալն:

Եօթներորդ՝ զի եպիսկոպոս թէ ոչ հրամանաւ կաթուղիկոսին իւրոյ՝ այլ կաշառօք և այլազգեաց բռնութեամբ համարձակեալ իշխեսցէ այլոյ վիճակի. լուծցի ի կարգէն:

Ութերորդ՝ մի համարձակեսցի ոք վարդապետ անխտրաբար տալ իշխանութիւն վարդապետութեան ամենայն ումեք. եթէ ոչ իցէ նուիրեալն կատարեալ ուսմամբ՝ և առաքինութեամբ, և հասակաւ, և աստուածային երկիւղիւ՝ և վկայեալ յամենեցունց, զի այսու պատճառաւ բազում անկարգութիւնք և գայթակղութիւնք մտին յեկեղեցի. և թէ ստունգանեալ քամահիցեն զայս հրաման, տուող իշխանութեանն անկցի ի պատուոյն. և առող իշխանութեանն անընդունակ լիցի:

Իններորդ՝ քահանայ և այլ ժառանգաւոր յիւրմէ եպիսկոպոսէ ընկալցի ձեռնադրութիւն հաւանութեամբ իւրոյ ժողովրդեանն, և թէ ոչ այսպէս, լուծցի ի կարգէն։

Տասներորդ՝ զիրաւունս և զհասոյթս՝ որ ի ժողովրդենէն կարգեալ է եպիսկոպոսաց և երիցանց, ըստ հրամանի հայրապետական կանոնաց, առցեն եպիսկոպոսք և երիցունք, և մի զմիմեանս զրկեսցեն, որոց վասն տրտունջ և դժգոհութիւնս յոլովս լսեմք հանապազ։

Մետասաներորդ՝ երիցունք մի զրկեսցեն զիրեարս՝ զմիմեանց ծուխն և զհասոյթն յափշտակելով. կամ կեղծաւոր բարեձեւութեամբ և կամ այլազգեաց բռնութեամբ, այլ իւրաքանչիւր ոք իւրով բաժնաւն բաւականասցի, և թէ ոչ այսպէս, փտահողն լուծցի ի կարգէն։

Երկոտասաներորդ՝ յորժամ հանդերձեալ իցեն ձնել նշան ումեմն աղջկան յաղագս ումեմն երիտասարդի. մի իշխեսցեն առնել զայն կանայք, կամ ժողովրդականք, կամ երիցունք առանց բազում քննութեան. և կամ առանց գիտելոյ առաջնորդին. այլ քահանայքն քարոզեսցեն բազում աւուրս ի մէջ եկեղեցւոյն, և ծանուսցեն առհասարակ ամենեցուն, զի գուցէ ոք տեղեակ իցէ ազգակցութեան նոցա, որոյ ի լսելն՝ եկեալ յառաջագոյն ծանուսցէ. և այսպէս յետ բազում քննութեանց՝ թէ ոչ գտցի ազգակցութիւն ի մէջ նոցա, ապա յայտ յանդիման ամենայն քահանայից և ժողովրդոց՝ քահանայք օրհնեսցեն զնշանն զայն՝ և հաստատեսցի գործն։

Երեքտասաներորդ՝ այրի երիցունք, թէ իցեն պարկեշտք և ծերք, և կամ ունիցին մանկունս սնուցանելոյ՝ կացցեն յեկեղեցին, և թէ ոչ այսպէս, գնասցեն ի վանս և յանապատս. և թէ ոչ գնասցեն, ի բաց կացցեն ի ժառանգութենէ և ի կարգէ։

Զայսքան գլուխ խրատական բանից իբրև զկանոն կարգեալ սահմանեաց. և քարոզեաց յամենայն աւուր

առաջի ամենեցուն. առ որ հաճեալ և հաւանեալ և յօժարութեամբ յանձին կալեալ տէր Ներսէսի կաթողիկոսին Սսոյ, և Աստուածատուր վարդապետին՝ և ամենայն վարդապետաց, և եպիսկոպոսաց, և իշխանաց. ձեռնագրեցին և կնքեցին, և կամակար յօժարութեամբ առին զօրինակն և տարան յաշխարհն իւրեանց, որ և ի բազում տեղիս կայ լիակատար օրինակն այն, և տակաւին կան նովին ուխտիւն և սիրովն՝ շնորհօքն Քրիստոսի։ Եւ այլ ևս բազում արդիւնս և գործս ուղղութեան սահմանեաց անդէն յԵրուսաղէմ։

Ապա ելեալ յԵրուսաղեմէ եմուտ ի նաւ և ծովով գնաց ի Կոստանդնուպօլիս. և եկաց անդ ամ մի բոլոր, և անդ ևս արդիւնս և գործս ուղղութեան յոլովս հաստատեաց։ Եւ նախ քան զամենայն արար միաբանութիւն անջատեալ երկպառակութեան նոցա, քանզի ի ժողովրդականացն՝ որք բնիկ բնական[1] տեղացիք էին ի քաղաքէն Կոստանդնուպօլսէ, բարձրամիտ, բարձրայօն պանծանօք[2] հպարտահարեալ թևս ածէին ի վերայ եկամուտ ժողովրդոցն, և իբրև զգռեհիկ ի չմարդի ունէին զնոսա։ Եւ զամենայն իշխանական իրակութիւնս, զգործս և զբանս ի ձեռս իւրեանց գրաւեալ ունէին և գործէին. և զեկամուտսն ի բաց քեցեալ անհաղորդս պահէին։ Վասն որոյ և նոքա հոգւով չափ վշտանային ընդ քամահանս իւրեանց, և հանապազ խոցոտիչ և ատելութեան բանիւ դիմագրաւ լեալ ընդ միմեանս մաքառէին. և հաստատեալ արձանացեալ էր խռովութիւն ի մէջ նոցա անհաշտ և արեամբ չափ ատելութեամբ։

Իսկ ի գալ կաթուղիկոսին Փիլիպպոսի անդ՝ և այնպէս տեսանել զնոսա, կարևոր քան զամենայն գործոց իւրոց՝ վասն նորին տարաւ հոգս. ի բազում աւուրս

---

1 Ոմն. ձեռ. բնական. 2 Նոյն. պարծանօք.

բազմազան կերպիւ, երբեմն հասարակ, և երբեմն առանձին առանձին [1] խրատելով և ուսուցանելով, զամենեցուն զսիրտս և զկամս շահեալ էած ի հաւանութիւն բանից իւրոց, և հաշտեցուցեալ արար միաբան զնոսա, համապատիւ եղբարս լինել, և զամենայն զգործս և զբանս ի միասին հոգալ և կատարել։ Եւ այնուհետև ջերմագոյն սիրելիք և վշտակից եղբարք լեալ՝ կան ի սահմանադրութիւնս հայրապետին Փիլիպպոսի գեղեցիկ սիրով և միաբանութեամբ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ օրհնելոյն [2]։

Ապա յայնմ հետէ ձեռն ի գործ էարկ վճարել զպարտս եկեղեցեացն, վասն զի քառասուն հազար ղուռուշ պարտք կայր ի վերայ եկեղեցեացն Հայոց՝ որ ի Կոստանդնուպօլիս։ Եւ պատճառ պարտուցս էին, նախ սոսկ միայն կոչմամբ և եթ պատրիարգք անուանեալ առաջնորդքն, որ նստէին Թագաւորական իշխանութեամբ, և արծաթոյ ընտրութեամբ սպրդեալ ի ներքս մտանեն՝ յանձանց, և ի սուտակապասից ընծայեալք, և ոչ յԱստուծոյ։ Եւ երկրորդ՝ խազմասէրքն և խռովարարքն ի ժողովրդականաց, որք վասն փառասիրութեան, և վասն նախանձու, և վասն մարմնաւոր շահուց ակնկալութեան, գումարտակ լինէին, ոմանք ի վերայ այսմ առաջնորդի, և ոմանք այնմ առաջնորդի, և սուտակապաս արբանեակք, և զօրավիգք լինէին նոցա. և ապա գնացեալ առ դավթարդար, և առ վէզիր, և առ Թագաւորն, տային կաշառս յոլովս նոցա, և վանէին զախոյեանն, և առնուին զիշխանութիւն սոսկ անուն պատրիարգութեան և առաջնորդութեան։ Եւ այլ ևս բազմապատիկ կաշառս ի դրունս իշխանացն ցըրուէին աստ և անդ, և այսպէս առնելով բազմացաւ բարդեցաւ, և դիզացաւ պարտքն և եհաս մինչ ի ԽՌ.

---

1 Ուղ. չէ+: առանձին. 2 Նոյն. մերոյ.

ղուռուշն։[5] Եւ յայսմ պատճառէ լցաւ խռովութեամբ մեծաւ ի քաղաքն Կոստանդնուպօլիս, և իբրև զխռովեալ ծով անդնդապտոյտ յատակաւն, լեռնանման կոհակաւ՝ շարժմամբ՝ շաչմամբ՝ շառաչմամբ՝ և բարձրաձայն գոչմամբ. և իբրև զորոտումն կայծընկէց և հրացան ամպոց դողացուցանէր զամենայն մսեղիս։ Եւ համբաւ խռովութեանս այսմիկ ծաւալեալ տարածեցաւ յամենայն քաղաքս, և ի գիւղս, ընդ արևելս և ընդ արևմուտս, և ամենայն ոք զայն ի բերան առեալ խօսէր։ Եւ ի պատճառս այսմիկ [4] բազում անգամ արք երևելիք և անուանիք, երիցունք և երեցփոխանք և այլք ի Կոստանդնուպօլսէ ելեալք երկարաձիգ ճանապարհաւ եկին ի սուրբ Աթոռն Էջմիածին առ կաթուղիկոսն, առ ի հնարել ինչ վասն բառնալոյ խռովութեանցն և վճարելոյ պարտուցն։ Եւ կաթուղիկոսն յամենայն զօրութենէ ջան եդեալ հնարէր, երբեմն թղթով, և երբեմն մարդ ուղարկելով, և այլ կերպիւ հնարս հնարելով, և ոչ եղև խաղաղութիւն խռովութեանց ժողովրդեանն։ Եւ յայսմ պատճառէ՝ ժողովրդականաց քաղաքին բազմաց եղև վիշտ և վտանգ և վնաս, զի ոմանք եղեն տնանկք և աղքատք, զրկեալք յընչից և յապրանաց, ի տանց և ի հայրենեաց. և ոմանք ի բանտս և ի կալանս մեռան. և ոմանք վտարական լեալ՝ ի հեռաւոր քաղաքս նժդեհութեամբ շրջէին, հեռացեալք յընտանեաց և ի ծանօթից, և այնպէս զաւուրս կենաց վճարէին։ Եւ յամս ութ և տասն երկարեցաւ այս գործ դառնութեան, մինչև գնաց անդ ծառայն Աստուծոյ տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, և զի տէր էր ընդ նմա, որոյ շնորհօքն վճարեաց զայնքան պարտքն ի նոյն քաղաքի ժողովրդականացն, Վասն զի ժողովրդականացն ամենեցուն իւրաքանչիւր ումեք

---

5 Ա-է. այս,

ըստ իւրում կարողութեան հրամայէր օգնական լինիլ առ ի վճարել զպարտսն. և այլն՝ առ որ լինէր հրաման հայրապետին, ոչ բնաւ իշխէր բան ինչ ասել, այլ յօժարութեամբ և սիրով կատարէր զհրամանս հայրապետին վասն օրհնութեան նորին։ Եւ կացոյց հոգաբարձուս արս հաւատարիմս գործոյս այսմիկ, որք բազում ջանիւ և աշխատութեամբ ժողովեցին զնուէրս ժողովրդեան յամիսս ութ. և վճարեցին զամենայն պարտսն, և ազատեցին զեկեղեցին ի պարտուց, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, օրհնեալն յաւիտեանս ամէն [1]։

Եւ հաշակ համբաւոյ արդիւնական գործառնութեան և աստուածաբան վարդապետութեան, և առաքինական ճգնութեան տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, որպէս յամենայն երկիր սփռեալ տարածեցաւ, սոյնպէս և յԻլով քաղաք եհաս։ Եւ եպիսկոպոսն Իլովայ քաղաքին Նիկօղայոս անուանեալն՝ գիտաց յոգի իւր, զի թարց բնաւին կարծեաց և երկբայութեան դեղ և սպեղանի վիրաց իւրոց՝ և ուղղութիւն իւրոյ ձախորդեալ գործոցն ի սոյն հայրապետէ և ի հոգևոր բժշկէ լինելոց է։ Վասն որոյ առանց դանդաղելոյ՝ ելեալ յԻլովայ և եկն ի Կոստանդնուպօլիս առ ոտս հայրապետին, և հնազանդութեամբ յանձն էառ զկանոնս և զկարգս հրամանաց նորին, որով և զարձակումն կապանաց և զիշխանութիւն եպիսկոպոսութեան. և մեծաւ ուրախութեամբ դարձ արարեալ գնաց յԻլով ի քաղաքն իւր։ Եւ դու զամենայն որպիսութիւն այսմ պատմութեանս, եթէ կամիցիս՝ ի նոցին Իլովացւոց ճառէն ուսցիս, որ յառաջիկայդ կարգեալ եմ. զի անդ լիով շարագրեալ եմ ըստ պատշաճին իւրոյ։

Եւ տեառն Փիլիպպոսի կեալով ի քաղաքին Կոստանդ-

1 Ոչ. չէ. օրհնեալըն յաւիտեանս ամէն.

նուպօլսի, բազում գործս բարութեան և կարգս ուղղութեան հաստատեաց անդէն եկեղեցականաց և աշխարհականաց. և ապա բազում երևելի եկեղեցական անօթով, և մարմնաւոր կարասիւք. ելեալ ի Կոստանդնուպօլսէ՝ ճանապարհ արարեալ եկն եհաս ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին. ի տօնի փոխման սրբուհւոյ կուսին Աստուածածնի եմուտ յԷջմիածին։ Եւ եղև գընալն և գալն Փիլիպպոս կաթուղիկոսի յերիս ամս. զի ՌՃ. թուին գնաց յԵրուսաղէմ և ի ՌՃԱ. թուին եկաց ի Կոստանդնուպօլիս, և ի ՌՃԲ. թուին, եկն յԷջմիածին։

Իբրև եմուտ թուականն ի ՌՃԳ. յաւուրս աւագ պահոցն սկիզբն արար հիմն արկանել զանգակատան սըրբոյ Էջմիածնի, զի յառաջմէ ոչ գոյր զանգակատուն Էջմիածնի. բայց տենչումն բաղձանաց յոլովագոյն կայր ի սենեակ սրտի կաթուղիկոսին Փիլիպպոսի վասն զանգակատունն շինելոյ. և որ զկամս երկիւղածաց իւրոց կատարէ՝ կատարեաց զկամս սրտի նորա այսու կերպիւ։

Քանզի ի ժամանակին՝ յորում ի Կոստանդնուպօլիս էր տէր Փիլիպպոս կաթուղիկոսն, էր և անդ Հայ ազգաւ այր ոմն քրիստոնեայ՝ որոյ անունն էր Անտօն չալապի, և էր սա ի քաղաքէն Բուրսայոյ՝ որոյ տուն և տեղիք և բնակութիւնն անդ ի Բուրսայ էր։ Այլ և յԻզմիր քաղաքի ևս ունէր տունս և ապարանս, նա և ի Կոստանդնուպօլիս ունէր զտունս և զապարանս հոյակապս, և ոսկեզօծ զարդարեալ երանգ երանգ գունովք. և էր այրս այս Անտօն չալապի յոյժ երևելի և հռչակեալ այնքան, մինչ զի յայտնի էր ի դուռն թագաւորին Օսմանցւոց, նա և ի հեռաւոր աշխարհս ի Ֆռանկաց։ ի Պարսից, զի կարի ընչաւէտ և փարթամ էր ստացուածովք։ Եւ էր իւր գործ վաճառականութիւն, որոյ պատճառէ երբեմն ժամանակաւ ի Կոստանդնուպօլիս լինէր, և երբեմն ի Ջիւղին լինէր, որ էր Իզմիր։ (Եւ

յորժամ գայրն [1] կարաւանք վաճառականաց՝ յաշխարհէն Պարսից ի քաղաքն յՒզմիր, զամենայն բեռինս կարաւանին միանգամայն գնէր, զինչ և լինէր, թէ ապրեշում և թէ թաֆարից. և միանգամայն վճարէր զգինն։ Այնպէս և յաշխարհէն Փռանկաց՝ յորժամ գայրն ծովով նաւքն բարձեալ բեռամբ պատուական ստացուածովք. գնաւրն բեռն միանգամայն ինքն միայն գնէր և վաղվաղակի զգինն վճարէր)։

Եւ յաւուրսն՝ յորում էր Փիլիպպոս կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս, պատահեցաւ և ընդ լինիլ Անտօն չալապոյն, որոյ տեսանելով զառաքելաշնորհ վարդապետութիւնն, և զմաքրակենցաղ քաղաքավարութիւնն տեառն Փիլիպպոսի կապեալ եղև ի սէր նորին չալապին։ Ընդ որում ասաց առ Փիլիպպոսն, վասն զի յԱստուածպետականէ ամենայն ինչ անպակաս պարգևեալ է քեզ, եթէ ընչից յոլովութիւն, եթէ ծառայից բազմութիւն, եթէ անուան մեծութիւն. արդ՝ հարկ է քեզ զի ըստ արդեամբ անուան քում երևելի յիշատակ հոգևոր թողցես քեզ յերկրի, յորոց մինն այս է, որ առաջի կայ քեզ. որ է զանգակատունն Էջմիածնի, որ կարի հարկաւոր է, և ոչ գոյ. արդ՝ կամիմ զի զայն պակասութիւն սրբոյ աթոռոյն դու կատարեալ լցուցես։ Իսկ չալապին մեծաւ յօժարութեամբ և կամակար խոնարհութեամբ ի հրամանս հայրապետին յանձն էառ կատարել զհայցուածս նորին. զոր և ասաց առ հայրապետն. որովհետև այդպէս է յօժարութիւն քումդ կամացդ, նա և հարկաւոր է սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, յիմս կողմանէ դու լիցիս ինձ երեսփոխան և հայր։ Օգնութեամբն Աստուծոյ ի ժամանեալն քո ի սուրբ Էջմիածինն, ոլքան բաւ է և ախորժ է յօժարութիւն մտաց քոց,

---

1 Աոֆ. չէֆ. Եւ յորժամ գայրն . . . ցվերջ ոչ ընդ ֆօնոտեքստ։

լայն և ընդարձակ, հաստահեղոյս և բարձրաշէն, գեղեցկազան նկարակերտութեամբ ձեռնարկեալ շինեցես, և ամենայն ծախս գանձուց, որ անդ լինի, ես լիով և յօժարութեամբ նա և աւելեաւ հատուցանեմ։

Արդ՝ այսու պայմանաւ յորժամ եհաս Փիլիպպոս կաթուղիկոսն ի սուրբ Էջմիածին, սկիզբն արար շինութեան զանգակատանն, որոյ սկիզբն և հիմնարկութիւնն եղև ի Թուականիս մերում ՌՃԳ· յաւուրս աղուհացից· յարևմտից կողմն մեծի տաճարին Աստուծոյ սուրբ Էջմիածնի, ի վերայ արևմտեան դրան նորին հուպ և կից որմոյ նորին· և յամին յայնմիկ բարձրացաւ շէնքն մինչև կապեցան ներքին կամարքն· և ժամանեաց ի վերայ ձմեռն, և փոխեցաւ Թուականն ի ՌՃԴ· և յորժամ հասին ի մարտի ամիսն՝ ի հինգերորդում կիւրակէն աղուհացիցն, եղև վախճան մեծի հայրապետին, տէր Փիլիպպոսի կաթուղիկոսին· և խանգարեալ խափանեցաւ շինումն զանգակատանն։ Քանզի իշխան քաղաքին Երևանու՝ որ էր Լալա բէկի որդի Մահմատղուլի խանն· այս այն Լալա բէկն է, որ ոչխարի քօդաւի ճառի մէջն յիշեցաք· սորին որդին Մահմատղուլի խանս էր այր գոռոզ և բռնազլուխ, այլ և կուռէճ ընդ քրիստոնէից, Թէպէտ կաշառօք և բազում խնդրանօք խնդրեաց ի նմանէ կաթուղիկոսն Փիլիպպոս հրաման վասն շինութեան զանգակատանն, սակայն ոչ լուաւ նմա խանն վասն կուռէճութեանն, բայց կաթուղիկոսն՝ որպէս և էր յոյս նորա հաստատուն առ Աստուած՝ նովին յուսով էարկ հիմն զանգակատանն, և սկսաւ շինել· և յորժամ վախճանեցաւ կաթուղիկոսն Փիլիպպոս՝ մնաց կիսաշէն զանգակատունն վասն չարութեան խանին, զի հանապազ ասէր՝ թէ ոչ թողում շէն զզանգակատունն՝ այլ քակելոց եմ զնա։ Եւ յամին յայնմիկ նախախնամողն Աստուած պահեաց զզանգակատունն՝ և

գլխանն քակեաց, քանզի անուանի և մեծագոյն իշխանք առաքեցան ի Թագաւորէն ի յերկրորդ Շահաբասէն յաշխարհս Արարատեան վասն Թագաւորական գործառնութեանց. և վասն գոռոզ բարուց իւրոց Մահմատղուլի խանն, ի չմարդի համարեալ անպատիւ ունէր զիշխանսն, և զչարէր ընդ նոսա. և այնքան արար մինչ զայրացոյց զսիրտս իշխանացն. և նոքա յորժամ գնացին առ Թագաւորն՝ սկսան ամբաստանութիւն առնել զխանէն, վասն որոյ ցասեաւ Թագաւորն ի վերայ խանին, և ընկէց զնա յիշխանութենէն. և յափշտակեալ կողոպտեաց զամենայն ստացուածս նորա, և կապանօք տարաւ յԱսպահան քաղաք. և զայլ ոմն ի Թագաւորական ծառայից առաքեաց յԵրևան իշխող՝ որոյ անունն էր Նաջաֆղուլի խան: Առ որ մատուցեալ տէր Յակոբ կաթողիկոսն և ի բազում աւուրս երթևեկութիւն առնելով ի դուռն նորա. և բազում ոսկի և արծաթ տալով նմա և նորին իշխանացն, հազիւ թէ էառ զհրաման շինութեան զանգակատանն: Արդ՝ մինչև այս ամենայն լեալ գրաւեցաւ, փոխեցաւ Թուականն. և եհաս մինչև ի ՌՃՁ. և ցՅուլիս ամիսն, և ապա այնուհետև սկսան շինել մինչև ցկատարումն զարմանալի արուեստիւ, յոգնազան նկարակերտութեամբ քանդակեալ ի վէմսն յամենայն պատշաճաւոր տեղիս տեսակս զանազան կենդանեաց, գազանաց՝ անասնոց, թռչնոց, բուսոց և տնկոց. այլ և յօրինուած շինուածոցն յոյժ գեղեցկայարմար. խարիսխքն, և սիւնքն և խոյակքն, և կամարքն և այլքն ամենայն. և յաւուր օրհնութեան նորա անուանեցին սուրբ Հրեշտակապետ, խորհրդով Գաբրիէլեան փողոյն, որ ի բարձանց գոչէ: Եւ եղև [1] կատարումն զանգակատանն, եղև ՌՃԽ. Թուին և ի տօնի Խաչվերացին օրհնեցին զխաչն՝

---

1 Ըոչ. չէ+. եղև,

որ ի գլուխ զանգակատանն և քակեցին զխակալէն։ Արդ՝ սոյգ պատմութիւն զանգակատանն այս է, Թէպէտ ի վերայ նորին գրեալ Թուականքն այլապէս են։

Եւ որքան եկաց Փիլիպպոս կաթուղիկոսն ի վերայ երկրի, Թէ ի ժամանակս վարդապետութեան իւրոյ, և Թէ ի ժամանակս կաթուղիկոսութեան, անդադար և անխափան արար և գործեաց նա արդիւնս ի մէջ աշխարհի, և մանաւանդ՝ բարձրագահ աթոռն սուրբ Էջմիածին, սովաւ առաւել հաստատեցաւ և փարթամացաւ եկեղեցական անօթով, ոսկւով և արծաթով, և մեծագին զգեստուք, և պատուական գրենօք, վարդապետականօք բազմօք. սոյնպէս և մարմնաւորօք սպասիւք, և կահիւք պղնձեղինօք և բրդեղինօք, և այլովք այսպիսեօք. այլ և հոյլք անբան կենդանեաց, ուղտք, և ջորիք, և ջոլիրք մատակ ձիոց, և ջոկք խաշանց և անդէոց, այլ և արտս և այգիս և բուրաստանս։ Այլ և բազմազան կերպիւ հոգևոր և մարմնաւոր արդեամբ օգտակար լինէր աշխարհի. զի իբրև զբերդ. ամուր էր նա շուրջ զազգիւն Հայոց ընդդէմ մահմետականաց, որք ոչ կարէին ի հարստահարել և ի զզուել զՀայս, վասն զի ամենայն ներհակք, անխտրք՝ որք իբրև զխառն հզօր ընդդէմ կային, ամենեքեան խորտակեալք ի միջոյ բարձան. եԹէ եկեղեցականք, և Թէ աշխարհականք. և Թէ այլասեռ և այլազգի փառաւոր իշխանք։

Եւ եկաց նա ի վերայ երկրի մինչ ի ժամանակս ծերութեան, լեալ ամաց վաթսուն և երից, արգոյաւոր և մեծաշուք առաջի ամենայն ազանց, Հայոց, Հոռոմոց, Վրաց, Օսմանցւոց, և Պարսից մեծամեծ իշխանաց, նա և Թագաւորաց իսկ։

Եւ յօրէ յորմէ հետէ էառ իշխանութիւն վարդապետական, անխափան ի քարոզութիւն և ի խրատել եկաց, ի գիւղս և ի քաղաքս, ի վանս և յանապատս, և

յամենայն տեղիս, և զոր ինչ քարոզեալ խրատէր ոչ սխալէր, այլ ամենայն արդիւնացեալ պտղաբերէր։

Եւ ի մերձակայ աւուրս վախճանի իւրոյ տէր Փիլիպպոս կաթուղիկոս էր ի սուրբ Էջմիածինն. յաւուրս ազուհացից ի չորրորդում կիւրակէին, և ըստ հանապազորդ սովորութեան իւրում նստաւ յաթոռ և սկսաւ ասել քարոզ այնր կիւրակէին, որոյ բնաբանն էր։ «Այր մի էր մեծատուն՝ որոյ էր տնտես. և եղև զնմանէ ամբաստանութիւն. որպէս թէ վատնիցէ զինչս նորա»։ Եւ մեկնելով եհաս ի բանն յայն, որ ասէ. ո՛չ ևս կարես լինիլ տնտես, և աստէն վերջ արար բանին. և յաւուրն երկրորդի, որ էր երկուշաբաթ օր տկարացաւ՝ և անկաւ ի մահիճս։ Ժողովեցան առ նա ամենայն միաբանք և աշակերտք իւր, հարցանէին վասն տկարութեանն, որոց պատասխանեալ ասաց. այս է վերջին տկարութիւնն իմ, որ ոչ ևս յառնեմ յառողջութիւն. քանզի մինչ ասէի զքարոզն, իբրև հասի ի բանն, որ ասաց. ոչ ևս կարես լինել տնտես. թուեցաւ ինձ որպէս թէ յայլմէ յումեքէ ազդեցաւ ի սիրտս իմ, թէ ոչ ևս այլիս մարմնաւոր կենօք՝ և այլ ևս տնտեսես [1] ի տան Աստուծոյ, այլ վճարիս մահուամբ. (որպէս և բանդ [2] վկայեալ ասաց, ոչ ևս կարես լինել տնտես։ Եւ ի լսել բանիցս ամենեքեան մորմոքեալ մաղկատէին ի վերայ ասացեալ բանից նորա. և նա ըստ աստուածատուր շնորհաց իւրոց մխիթարէր զամենեսեան։) Եւ մնաց տկար մինչ եհաս ի հինգերորդ կիւրակէն և յայնմ գիշերի դէպ ի լոյս առաւօտուն սկսաւ հոգեվարիլ, ինքն ևս գիտաց որ հոգեվարի է, վասն որոյ հանապազ զաղօթս և զօրհնաբանութիւնս Աստուծոյ ունէր ի բերան իւր ասելով.

---

1 Այլ. ո՛չ անտեսես. 2 Նոյն. չէ+. որպէս և բանդ . . . ցվերջ որ ընդ փակագծով։

արդ՝ արձակեա՛ զծառայս քո տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն. աւանդեաց զորբասնեալ հոգին իւր ի ձեռս Աստուծոյ սուրբ հայրապետն Փիլիպպոս: Եւ հռչակեալ ծաւալեցաւ համբաւ վախճանի նորա յամենայն շրջակայ գաւառս Արարատեան աշխարհին. և ամենայն ոք, որ [1] լսէր, վհատեալ թալկացեալ յերկիր անկանէր. վասն զի ամուր պարիսպն՝ որ շուրջ զհայոց էր, փլաւ: Եկին ժողովեցան ժողովուրդք յոյժ բազում ի շրջակայ գաւառաց. վասն զի մնաց անթաղ յաւուրս վեց. քանզի միաբանքն Էջմիածնի և ամենայն վարդապետքն կամէին ի դրան սրբոյ Էջմիածնի ի մէջ իւր շինեալ զանգակատանն թաղել: Բայց իշխանն Մահմադղուլի խան՝ որ ոխս նախանձու յոլովս ունէր ընդ հայրապետին, վասն հզօր գոլոյ հայրապետին ի վերայ խանին, այլ և վասն զանգակատան շինելոյն. զի խանն ոչ թողոյր ի շինել զզանգակատունն, և կաթուղիկոսն առ բռնութեան ուժոյ իւրոյ հիմն էարկ և սկսաւ շինել, և արդէս ի վախճանել հայրապետին, իբրև լուաւ թէ ի մէջ զանգակատանն կամին թաղել, կարի սաստկացեալ չարացաւ՝ և ոչ թողոյր թաղել ի մէջ զանգակատանն, այլ մեծաւ խրոխտանօք ասէր թէ՝ զզանգակատունն քակեցից եմ ես: Եւ մնաց կաթուղիկոսն անթաղ յաւուրս վեց վասն այսմ պատճառի. և եդեալ կայր դագաղով ի մէջ տաճարին Էջմիածնի, և էր զուարթ երեսօք որպէս կենդանի մարդ ի քուն՝ և բուրէր ի նմանէ հոտ անուշութեան. և ամենեքեան որք հայէին ի համբուրել զնա՝ հիացեալ զարմանային ընդ յորդաբուղխ հոտոյ անուշութիւնն, և ընդ երեսացն զուարթութիւն. ոչ միայն քրիստոնեայք՝ այլ և այլազգի մահմետականք, և հիացեալ փառս վեր առաքէին Աստուծոյ՝ որ փառաւորէ զսուրբս իւր: Եւ վասն

1 Ա—ն—ր. Երեց. որև.

զի Մահմատղուլի խանն ոչ կասեցաւ ի բիրտ բարուց իւրոց՝ ոչ եթող ի սուրբ Էջմիածինն թաղել զկաթողիկոսն, վասն այսորիկ բարձեալ ի սուրբ Էջմիածնէ զպատուական նշխարս մարմնոյ նորա, խաչիւ և աւետարանաւ[1] և մոմեղինօք, և երգովք հոգևորօք, տարան ի տաճար սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, և անդ ի մէջ տաճարին ի հիւսիսային կողման խորանին հանգուցին զնա. և է բարեխօս առ Քրիստոս վասն ամենայն քրիստոնէից և հոգեծնունդ որդեկացս իւրոց։ Որև այժմ ամենայն բնակիչք աշխարհին՝ ցաւագարք և ախտաժէտք գան յուխտ և ի համբոյր սրբոյ տապանի նորա, և գտանեն զառողջութիւն ցաւոց իւրեանց. և փառաւորելով[2] զՔրիստոս գնան ի տեղիս իւրեանց։

Եւ եղև վախճան սրբոյ և տիեզերալոյս հայրապետին տեառն Փիլիպպոսի ի մերում թուականութեանս ՌՃԴ. ի Մարտի ամսոյ քսան և հնգին, ի հինգերորդ կիւրակէին աղուհացից պահոցն. և արար նա կաթուղիկոսութիւն քսան և երկու ամ և երեք ամիս, և ինքն էր վաթսուն և երեք ամաց, յորժամ վախճանեցաւ։ Եւ յաջորդեաց զկնի նորա զկաթողիկոսութիւնն սուրբ Էջմիածնի Ջուղայեցի Յակոբ վարդապետն. վասն զի ժողովեալ վարդապետքն, և եպիսկոպոսունքն, որք ի մահն Փիլիպպոսի ժողովեցան, կացին ի սուրբ Էջմիածինն մինչև ցտօն ծաղկազարդին, և ի նմին տօնին օրհնեցին զՅակոբ վարդապետն կաթուղիկոս ի նոյն թուին, և յԱպրիլ ամսոյ յութն, և ապա գնացին յիւրաքանչիւր տեղիս փառաւորելով զՀայր և զՈրդի և սուրբ Հոգին յաւիտեանս յաւիտենից ամէն։

1 Ոչ. չէ. խաչիւ և . . . . . հոգևորօք. — 2 Նոյն. չէ. և փառաւորելով . . . ի տեղիս իւրեանց.

Գլ. ԻԶ.

Վասն նորոգութեան անուանի վանօրէից, եւ շինութեան բազմածախ եւ մեծավայելուչ եկեղեցեաց:

Որպէս ի գարնայնոյ ժամանակի հարաւայնոյ հողմոյ շնչեալ ծննդագործէ զերկիր և բղխեցուցանէ յոքնազան ծաղկանց սեռս և տեսակս, որովք երփնազարդեալ վայելչանայ երես երկրի. նմին սարասիւ գոգցես և զժամանակս այսց երկուց կաթուղիկոսացս՝ Մովսէսի և Փիլիպպոսի. զի բազում վանօրայք և անապատք և եկեղեցիք շինեցան. յորոց մին է մեծ և անուանի վանքն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, որ ի Դարաշամբի ձորին է, որ յառաջագոյն էր անպարիսպ, նա և շինուածք տանցն և յարկացն խարխալեալ և բլրկեալ, և դիւք շինուածոցն յոռի և անպիտան: Իսկ Ջուղայեցի Յակոբ վարդապետն, որ յետ Փիլիպպոսի նա եղև կաթուղիկոս, սա ի ժամանակս կաթուղիկոսութեան Փիլիպպոսի սկսաւ նորոգել, և միանգամայն

զամենայն շինուածս քակեաց ի հիմանց, զեկեղեցին և զտներն, և զխցերն, և զայլն ամենայն, ապա ինքն զհիմն հարկ եկեղեցւոյն և շինեաց խաչանման եկեղեցի սրբատաշ վիմօք, վերամբարձ կաթուղիկէիւ, գեղեցկաշէն և զանազան արուեստակեալ նկարակերտութեամբ զարդարեալ։ Սոյնպէս և զպարիսպն շուրջանակի, և զտներն և զխցերն ամուր և հաստահեղոյս վիմօք շինեալ, որոց ձևն և դիրքն և յարմարութիւնքն կարի ըմբռն և պատշաճաւոր, զոր բազում աշխատութեամբ և յոլով ծախիւք յամս տասն ապա կատարեաց. զի զքարն և զկղմինտրն ի գեղջէն Աստապատայ բերէին տփով զերեսօք Ջուրց Երասխ գետոյն. և մասն ինչ ի քարանցն յԱրարդ գեղջէն բերին ձիով. սոյնպէս և զկիրն և զփայտն և զհացն ի հեռու վայրաց բերէին մեծաւ աշխատութեամբ և յոլով ջանիւ, կատարեալ յաւարտ ածին ի փառս Աստուծոյ և սրբոց նորա։

Սոյնպէս և Եսայի վարդապետն՝ որ էր ինքն ի Մեղրի անուանեալ գեղջէն, և սա ևս յաշակերտաց տեառն Մովսէսի կաթուղիկոսին էր, որ ի Փիլիպպոս կաթուղիկոսէ եպիսկոպոս և առաջնորդ կարգեցաւ սուրբ Կարապետի վանացն, որ ի գաւառին Երնջակայ։ Եւ սա ևս յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի սկսաւ նորոգել զնոյն ինքն սուրբ Կարապետի վանքն, զի միանգամայն զամենայն յառաջագոյն եղեալ շինուածս քակեալ եբարձ ի միջոյ, զեկեղեցին, և զտներն, և զխցերն, և զպարիսպն, և ապա շուրջանակի լայն և ընդարձակ, զհաստ և զբարձրագոյն պարիսպ էարկ. և ապա ի մէջըն տունք և ապարանք ի բնակութիւն ինքեանց և հիւրոց։ Եւ առաւել զեկեղեցին՝ ի տեղի հին եկեղեցւոյն, լայն և ընդարձակ և բարձրաբերձ կամարօք և կաթուղիկէիւ, ի վերայ չորից սեանց կառուցեալ սրբատաշ վիմօք, կատարեալ զամենայն եկեղեցին ի հիմանց

մինչև ցծայրս նորին, յոլով աշխատութեամբ և բազում ծախիւք կատարեցան ամենեքեան շինուածքն. և ի ՌՃԲ. Թուին, և Հոկտեմբեր ամսոյ ԺԷ. օրհնեցաւ եկեղեցին մեծահանդէս նաւակատեօք ի փառս Աստուծոյ։

Այսպէս և Զաքարիա վարդապետն, որ էր ի գեղջէն Էջմիածնի. և էր նա առաջնորդ մեծափառ ուխտին Յոհանավանուց, և սա ևս յաշակերտացն Մովսէսի կաթուղիկոսին էր, այր երևելի և փառաւոր ի մէջ աշխարհի, յոյժ հանճարեղ և ճոռոմախօս, խորհրդով և խելօք կորովի, և դիմօք ահարկու. և սա ևս յաւուրս Փիլիպպոսի ձեռն ի գործ էարկ նորոգել զեկեղեցին և զտներն Յոհանավանից. զի պարիսպն որ շուրջանակի, նա միայն էր պիտանի, իսկ այլքն ամենեքեան անպիտան և յոռի և եկեղեցեացն ամենեցուն տանիքն աւերեալ և քանդեալ. և Զաքարիա վարդապետն ժողովեաց բազում վարպետս՝ քարահատ և փայտատաշ, և դարբին, և զձեռն ի գործ էարկ սկսաւ նորոգել զվանքն. նախ զտներն և զխցերն ամենայն շինեալ աւարտեաց, և ապա զեկեղեցին, բայց փութանակի՝ քանզի յերկուս ամս աւարտեցաւ նորոգումն եկեղեցեացն. քանզի առատագոյն յերկիր եհեղ գանձս՝ որ տայր գործողաց, երեսուն քարտաշ հանապազ նստեալ քար տաշէին, և երկու ճարտար մէմար (որմնադիր) միշտ շարէին, և այլ վարպետք և գործաւորք յոյժ յոլովք. վասն որոյ փութով աւարտեցաւ. և զքարն և զկիրն յայնմ կողմանէ ձորոյն ձիով բերէին. և ի ՌՃԱ. Թուին զերծան ի գործոյ. և ի տօնի Խաչվերացին, օրհնեցին զխաչն, որ ի գլուխ կաթուղիկէին և գոհացան զԱստուծոյ։ Եւ ինքն Զաքարիա վարդապետն էր այր կատարեալ և յոյժ պիտանի աշխարհի, և Թէպէտ յոյժ ծերացեալ էր այլ տևեաց նա մինչ ի ՌՃԸ. Թիւ Թուականին մերում, յորում վախճանեցաւ. և նախ քան զվախճանն իւր

ինքն փորեաց զխուր գերեզման, և պատրաստեաց քար տապանի, և ի Յուլիս ամսոյ տասն՝ յաւուր տօնի Վարդավառին վճարեաց զայս կեանս մահուամբ, և յաւելաւ առ Տէր հանգստեամբ, զոր քիւրում պատրաստեալ գերեզմանին թաղեցին իւրով տապանաւն. և պատահեցաւ վախճան նորա լինել ի սուրբ Էջմիածինն, զի վասն ընտանեբար և ցաւակից հոգալոյ զպասաւորութիւնն սուրբ Էջմիածնի իւրով քաջագունով խորհրդովն և կորովի խելօքն, որով դիպաւոր և պատեհաւոր տըրամատեալ ընտրէր զամենայն խորհուրդս և զբանս, անդ ի սուրբ Էջմիածինն պահէին հանապազ վասն որոյ անդ վախճանեցաւ, և անդէն թաղեցաւ առաջի զանգակատանն յարեւմտից կուսէ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք[1] նորա մեզ ողորմեսցի:

Զայսու ժամանակաւ յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի, շինեցաւ վերստին և վանքն սուրբ առաքելոյն Թադէոսի, որ յԱրտազ գաւառին ի գիւղն Մակու. զի միանգամայն ամենայն շինուածքն աւերեալք էին, և ի սոյն ժամանակի եպիսկոպոս ոմն Մկրտիչ անուն իւրովք միաբանօքն՝ աբեղայիւք և սարկաւագօք, որք էին ամենեքեան ի նոյն գեղջէն Մակուայ. զի թէպէտ և աղքատք էին և յընչից թափուրք, այլ վառեցան ամենեքեան սիրով սրբոյ առաքելոյն Թադէոսի, յուսացան յողորմութիւն ամենազօրին Աստուծոյ և ի բարեխօսութիւն սրբոյն Թադէոսի առաքելոյն, ձեռն ի գործ արկին, և սկիզբն արարին շինութեան վանացն. և նախ զտաճարն սկսան շինել, որոյ արեւելեան և հիւսիսային կողման որմոցն մինչև ցկէսն միայն չէն էր մնացեալ, և այլ ոչինչ բնաւ. և սոքա զամենայն միանգամայն մինչև ցգլուխ կաթուղիկէին շինեցին, ներքուստ և արտա-

1 Առձ. չէ. և աղօթիւք նորա մեզ ողորմեսցի.

քուստ սրբատաշ վիմօք, ամուր և գեղեցիկ. և եղև կատարումն գործոյ տաճարին ՌՂԹ. Թուին։ Յետ կատարման տաճարին նոյն յուսովն, որ առ Աստուած՝ ակսան զժամատունն շինել խրատեալ քարամբք և մածուցեալ կրով, և սորին կատարումն եղև ի ՌճԲ. Թուին։ Ջկնի սորին շինեցին զվկայարան սրբուհւոյ կուսին Սանդխտոյ։ Ապա զնահատակ անուանեալ եկեղեցին, որ է տեղի նահատակութեան սրբոյ առաքելոյն Թադէոսի. և կատարեալ զամենայն շինուածս զայսոսիկ շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ, նոյն եպիսկոպոսն Մկրտիչ և միաբանքն իւր կան անդէն և պաշտեն զԱստուած և զսուրբս նորա՝ ակնկալեալք ողորմութեանն Աստուծոյ՝ որում փառք յաւիտեանս ամէն։

Սոցին նման շինեցաւ. յաւուրս տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, և վանքն սրբոյն Գէորգայ զօրավարին, որ է ի գիւղն Մուղնի, որոյ մերձ գոլով գիւղաքաղաքին Կարփու, սպասաւորութեամբ և արդեամբք Մարտիրոս եպիսկոպոսին, որ էր ի նոյն Մուղնի գեղջէն եպիսկոպոս նոյն վանացն. որոյ եկեղեցին յոյժ փոքրիկ էր՝ և այլ[1] ամենայն շինուածքն անպէտ և անդէպ. վասն որոյ այս Մարտիրոս եպիսկոպոս զեղեալ եկեղեցին, և զայլ ամենայն շինուածս միահաղոյն ի բաց եբարձ, և զնոր պարիսպ պատեաց շուրջանակի չափաւոր, և եկեղեցի վայելուչ ի մէջ պարսպին ի վերայ չորից սեանց կառուցեալ. և առ պարսպօքն տներ և խցեր, զամենայն շինեալ աւարտեաց և եթող իւր յիշատակ բարի առաջի Աստուծոյ և մարդկան, և ինքն ևս անդէն Թաղեցաւ, բարեխօս կալեալ զսուրբն Գէորգ վասն իւր և վասն ամենայն քրիստոնէից։

---

1 Ա-եր. երէց. դաչառէ ամենայն շինուածք . . . . և վասն ամենայն քրիստոնէից.

Այսպէս և վանքն սրբոյն Սարգսի զօրավարին՝ որ է ի գիւղն Ուշի՝ շինեալն ի սրբոյ Մեսրովբայ մեծ վարդապետէն մերոյ[1] որ և սա մերձ է ի գիւղն Կարբի, որ ի ստորոտս Արագած լերինն. այս վանքս նորոգեցաւ ձեռամբ Ոսկան վարդապետին, որ էր ինքն յԵրևան քաղաքէն և յաշակերտաց Փիլիպպոսի կաթուղիկոսին։ Զի թէպէտ կայր եկեղեցին վայելուչ և սրբաշէն և բարձրաբերձ կաթուղիկէիւ, այլ տանիք եկեղեցեացն ամենեցուն քանդեալք և աւերեալք էին, եկեղեցիքն միայն կային ի տեղւոջն, և շուրջանակի շինութիւն ոչ բնաւ. այլ սաստիկ քարուտ։ Իսկ Ոսկան վարդապետս թէպէտ ոչ կարաց նորոգել զտանիքն եկեղեցեացն, զի ոչ ունէր այնքան գոյս, այլ մեծաւ տաժանմամբ և բազում աշխատութեամբ պեղեաց զշորս կողմն եկեղեցւոյն, և պատեաց շուրջանակի պարիսպ յոյժ ամուր, և ի մէջ պարսպին շինեաց ըստ պատշաճին խցեր և տներ և ինքն կայ անդէն բարւոք կարգաւորութեամբ յուսացեալ յողորմութիւնն Աստուծոյ բարեխօսութեամբ սրբոյն Սարգսի զօրավարին։

Այլ և զհոյակապ և զլայնանիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զհանգստարան մեծի վարդապետին սրբոյն Մեսրովբայ այնորիկ, որ եգիտ զգիրս Հայոց, որպէս և բանք պատմութեան նորա ճառեն թէ՝ տարեալ հանգուցին զնա ի գիւղն՝ որ անուանի Օշական. արդ՝ այս տաճար հանգստարանի սրբոյն Մեսրովբայ վարդապետին ի վաղ ժամանակաց բովանդակ տանիքն փլլուզեալ իջեալ էր, և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթուղիկոսութեան իւրոյ սուրբ հայրապետն Փիլիպպոս սկսաւ զայն ևս նորոգել՝ որ և կատարեաց բազում ծախիւք և աշխատութեամբ,

---

1 Ուղ. չէ+. մերոյ.

խրատեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զբովանդակն ի Թուականիս մերոյ ՌՂԴ. ի փառս Աստուծոյ։

Այլ և բարձրաբերձ և գլխանիստ և զմեծաշուք տաճարն՝ որ յանուն սրբուհւոյ Աստուածածնին շինեալ կայ ի Նախկին և ի վաղ ժամանակաց ի գիւղն Բջնի. որոյ տանիքն ամենայն աւերեալ և քայքայեալ էր, նորոգեցաւ հրամանաւ տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, ծախիւք և արդեամբք քրիստոսասէր մեծի պատրկի Ջուղայեցի խոջայ Պետրոսին, զոր մականուամբ բդուղ Պետրոս ասէին, և անուն եպիսկոպոսի վանացն էր Փիլիպպոս, յորում ժամանակի էր Թուականն մեր ՌՂԲ։ Եւ յետոյ եղև առաջնորդ նոյն վանացն Մովսէս վարդապետն, աշակերտ տեառն Փիլիպպոս կաթուղիկոսի, որոյ շուրջանակի պատեալ պարիսպ վանացն գեղեցիկ յարմարութեամբ և ախորժ տեսողացն։

(Իսկ կամուրջն[1] որ է ի վերայ Քասախ գետոյն ի մէջ խորագոյն ձորոյն, որ մերձ է ի գիւղն Աշտարակ, որ էր մեծակն և բարձրաշէն, կրով և գործուն քարիւ շինեալ, սա հնացեալ էր և խախտեալ և ական կէսն եւս փլուզեալ. բայց կարի հարկաւոր էր. քանզի բազում գաւառաց և բազում ճանապարհաց անցուրդ է։ Վասն որոյ բարեպաշտ և քրիստոսասէր այրն՝ մահտեսի խոջայ Գրիգորն՝ զոր մականուամբ մոծակենց Գրիգոր ասէին որ է բուն տեղացի յԵրևան քաղաքէն։ Սա զհին կամուրջն՝ որ մերձեալ էր ի փլանիլ, քակեաց և ապա փոխեաց զտեղն և սկսաւ ի հիմանէ նոր շինել, ամուր և հաստատուն կրով և գործուն քարիւ՝ ըստ պատշաճի և բարեվայելուչ, յօրինեալ ի հիմանէ մինչև ցկատա-

---

1 Ոսկ. Առաք. Երեց. պակասի սոյն ամբողջ հատուածս որ ընդ փակագծով.

րումն՝ վասն հոգւոյ իւրոյ փրկութեան և վասն առ Աստուած յուսոյն, բազում աշխատանս կրեալ. և բազում գանձս ծախեալ մինչև ցկատարումն հասուցեալ, ի Թուականիս մերում ՌՃԺԳ. (ի փառս Աստուծոյ):

Կան և այլ բազում վանօրայք նորոգեալ, և բազում եկեղեցիք ի հիմանց նոր շինեալք՝ ի քաղաքն Տփխիս, և ի գաւառն Լոռւոյ, և յաշխարհն Արարատու, ի գաւառն Սիսակայ, և յաշխարհն Ղափանայ, ի քաղաքն Նախչուան, և ի գեղօրայս նորա. որպէս Չրքնաղ և մեծաշուք և վայելուչ եկեղեցին Աստապատու, և քաղաքին Նախչուանու, և Ճահկայ գեղջն, և Շահկերտու գեղջ և Գաղ գեղջ, որք շինեցան յաւուրս տեառն Յակոբ կաթուղիկոսի. և Շոռօթու եկեղեցին, և Ագուլեաց վանքն և գեղջ չորս եկեղեցիք, և Թարվիզու քաղաքի եկեղեցին, և Դարաշամբայ եկեղեցին, և Ցղնայ եկեղեցին, սոքա և այլք յոլովք՝ զորս ոչ յիշեմ, ոմանք յաւուրս Մովսէս կաթուղիկոսին շինեցան, և ոմանք յաւուրս Փիլիպպոսի կաթուղիկոսի, զորս Տէր Աստուած պահեսցէ անսասան մինչև յաւիտեան:

Գլ. ԻԷ.

Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային։

Եւ եղև զի մեծ և առաջին Շահաբաս Թագաւորն Պարսից ունկնդիր լեալ զրպարտողաց արանց՝ որք խօսեցան բանս չարս վասն բնակչացն Նախչուան քաղաքին, որ և բարկութեամբ մեծաւ ցասեաւ ի վերայ նոցա շահն և հրամայեաց հանել զամենայն բնակիչս քաղաքին, և արտասահման արարեալ վարել և տանել ի քաղաքն Ֆահրապատ. և զքաղաքն Նախչուան աւերել, զտունսն և զամենայն շինուածսն քանդել, և զայգեստանսն կոտորել, որ անխափան կատարեցաւ առ նոսա հրաման Թագաւորին. զի զամենայն բնակիչսն հանեալ վարեցին ի Ֆահրապատ։ Իսկ ի բնակչացն Նախչուանայ արք աննշանք և անլիքորք փախուցեալք ի շրջակայ գեղօրայսն՝ Թաքեան աստ և անդ, յորոց մի էր և ծնօղքն տէր Անդրէասին, որք գնացեալ ի գիւղն Ագուլիս, և անդէն զետեղեցան, և մինչ էր ի տիս մանկութեան տէր

Անդրէասն՝ եաուն նա յուսումն դպրոց, և ուսաւ զամենայն եկեղեցական ուսմունս։ Իբրև զարգացաւ՝ և եհաս ի չափ հասակի, մուծին զնա ի կարգ աշխարհի և արարին նմա հարսանիս։ Եւ որպէս գրեալ է թէ ըստ վկայութեան անձին իւրոյ, և ամենայն ժողովրդեանն, օրհնեցին զնա քահանայ, և նա պաշտէր զքահանայութիւնն որպէս և վայելէ կարգի քահանայութեան։

Եւ ի սոյն ժամանակս վարդապետն Մովսէս՝ որ յետոյ եղև կաթուղիկոս Էջմիածնի, և վարդապետն Պօղոս՝ որ ի վերոյ պատմեցաք, յայտնեալ եղեն յարեւելեան աշխարհն Հայոց, ամբիծ և պարկեշտ վարուք, զի շրջէին յերկրէ յերկիր և անխափան քարոզէին, շինէին զեկեղեցիս, կարգէին քահանայս ըստ կարգի առաքելոցն։ Եւ վասն հաստատութեան հաւատոյս և կրօնիցս մերոյ հաստատեցին դպրատուն ի պատշաճաւոր տեղիս՝ ի գիւղն Աստապատ, և ի Շոռօթ. զի ի շրջակայ գեղօրէիցն անդր ժողովեսցին մանկունք առ ի յուսումն։ Այնպէս և ի գիւղն Ագուլիս հաստատեցին դըպրատուն, և կարգեցին ի վերայ մանկանցն դպրապետ զտէր Անդրէասն, յորում տեղւոջ ժողովեցան մանկունք որպէս թէ յիսուն կամ վաթսուն, և տէր Անդրէասն էր վերակացու, որ հովուէր զմանկունսն և ուսուցանէր զուսումն հասարակաց մերս եկեղեցւոյ։

Եւ եղև գալ Շահաբաս թագաւորին ի գիւղն Ագուլիս յայսպիսի իմն պատճառէ, զի յազգէն Օսմանցւոց ելեալ ոմն սարդար՝ անուամբ օքուզ Ահմատ փաշայ, բազում՝ զօրօք եկն ի վերայ բերդին Երևանայ, զի առեալ[1] ի Պարսից դարձուսցէ ի կողմն Օսմանցւոց. վասն որոյ թագաւորն Պարսից Շահաբաս ժողովեալ զամենայն զօրսն Պարսից՝ եկն յԵրևան յօգնութիւն բեր-

---

1 Ոռ. նէ+. զի առեալ . . . . ի կողմն Օսմանցւոց։

դին. և նստաւ սարդարն ի վերայ բերդին և պատե-րազմեցաւ մինչև ցերկու ամիս և կէս՝ և ոչ կարաց առնուլ: Ժամանեաց ի վերայ ցուրտ աշունն՝ և վշտա-ցեալ ի ցրտէ և ի սովէ, դարձ արարեալ ամենայն բա-նակաւն իւրով՝ և չուեալ գնաց ի քաղաքն Կարին, յաշխարհն Օսմանցւոց: Զկնի դառնալոյ սարդարին, շահն ևս դարձաւ յերևանայ և գնաց ի Նախչուան, և անտի յԱգուլիս. Արդ՝ այսու[1] պատճառաւ եկն շահն յԱգուլիս: Եւ սովորութիւն էր շահին, զի ուր և մտա-նէր թէ ի քաղաք թէ յերկիր, ամենայն բնակիչք տեղ-ւոյն միահաղոյն ընդ առաջ ելանէին, իշխանք, և ժո-ղովուրդք, արք և կանայք և աղջկունք, երիտասարդք և մանկունք, ամենեքեան զարդարեալք ազնիւ և մե-ծագին զարդուք. քաղցրահամ մրգօք, և համադամ ճաշակելեօք և անուշահոտութեամբ և ծաղկեհամ գի-նեաւ. և վայելչահասակ և գեղեցկատես մանկունք և աղջկունք և կանայք ի ձեռս առեալ զգինին ոսկի բա-ժակաւ մատուցանէին շահին: Այլ և մարմնաւոր գու-սանք և երգեցողք առաջի ընթանալով, և արուեստա-կան երգարանօք քաղցրանուագ երգէին: Այլ և եկեղե-ցականք՝ քահանայք և պաշտօնեայք, զգեցեալ շուրջառ և շապիկ, և առեալ զխաչ և զաւետարան, և ամբար-ձեալ խաչալամ, խնկօք և մոմեղինօք, և զանգակօք և ծնծղայիւք ելանէին ընդ առաջ շահին, և երգելով գը-նային մինչև հասուցանէին յիւր իջևանն:

Արդ՝ յորժամ Ագուլիս գեղջ քահանայքն եկին ա-ռաջի շահին՝ զգեցեալ զգեստուք, կային ընդ նոսա և ոմանք ի մանկանց դպրատանն՝ որք զգեցեալ էին շապիկ և բարձեալ շամադան և մոմ, և երթային առ ընթեր խաչալամին. և մինչ երթային քահանայքն երգելով ա-

1 Ոռ. չէ. արդ այսու պատճառաւ եկն շահն յԱգուլիս.

ռաջի շահին, և շահն հայէր այսր և անդր. և ըստ չարայուշ մտաց և բարոյից խուոց զննէր զամենեսեան, և ի զննելն հայեցեալ ի մանկունսն՝ ետես զի ածելեալ էին կուլակք մանկանցն, և այն յոյժ ծանր և դժուարին թուեցաւ ինքեան. զի համարեցաւ թէ վասն ինքեան արարեալ իցեն զայն. որպէս զի մի վայելչագեղ երևեսցին մանկունքն յաչս նորա, և հաճեալ ի նոսա առցէ ի նոցանէ։ Եւ անդէն շարժեցաւ ի ցասումն բարկութեան շահն ի վերայ առնն՝ որ ածելեալ իցէ զկուլակս մանկանցն։ Այլ և արք ոմանք մահմետական հաւատով՝ որք բնիկ բնակիչք են Ագուլեաց գեղջն՝ երևելի իշխանք, որք ընդ շահին շրջէին, և մերձ նմին ի սպասու կային նորա,[1] և վասն բնական նախանձուն, զոր ունէին ընդ քրիստոնէից առաւել ևս գրգռեցին և զայրացուցին զսրտմտութիւն թագաւորին ի վերայ քրիստոնէիցն, վասն որոյ սէպ յուղմամբ հրամայեաց շահն զննել և գտանել, որ զայն արարեալ իցէ և սպանանել. և թէ ծնօղք մանկանցն արարեալ իցեն զայն, զնոսին սպանանել՝ և զինչսն յափշտակել՝ և զմանկունսն դրաւել ի ծառայութիւն թագաւորին։ Իսկ առաջիկայք թագաւորին սկսան զննել և հարցանել ի սմանէ, և ի նմանէ, թէ ո՞ զայն արարեալ իցէ, և ամենեքեան զոչ գիտելն պատասխանէին. ապա ի մէջ առեալ զտէր Անդրէասն և ստիպելով[2] պահանջէին, թէ ասա մեզ զի ես վերակացու մանկանցն, և դու ես գիտակ։ Իսկ տէր Անդրէասն խոկայր ի մտի. թէ զծնօղսն պատճառեմ, զնոսա սպանանեն, և զմանկունսն յափշտակեն. և թէ զայլ ոք պատճառեմ, զնա սպանանեն, և լինի այն ինձ խիղճ մտաց և ստգտանք անփարատելի. ըստ վկայութեան սրբոյ Աւետարանին թէ, լաւ է զի այր մի մե-

---

1 Սոփ. չիք. Նորա։ — 2 Րոփ. չիք. ստիպելով.

ռանիցի և մի ամենայն ժողովուրդս կորիցէ. վասն որոյ լաւ համարեցաւ մատնել զանձն և փրկել զբազումս, վասն որոյ ի կարի ստիպելն զինուորացն, տէր Անդրէասն առ ի փրկելոյ զայլս ասաց, թէ ես եմ արարեալ զայն. և զինուորքն ծանուցին զբանն նորա շահին, և շահն հրամայեաց՝ ունել զնա և պահել ի կալանս։ Եւ զկնի աւուրց՝ հրամայեաց շահն ածել զնա առաջի իւր, և հարցանէր. թէ՝ զստոյգն ասա՝ ով ոք է արարող այդմ գործոյ. և տէր Անդրէասն ասաց. ո՛չ ոք, այլ ես միայն։ Իբրև ետես շահն թէ զայլ ոք ո՛չ մատնեաց, յոյժ բարկացաւ ի վերայ նորա, և հրամայեաց տարածել ի վերայ գետնոյ և բրածեծ առնել անխնայաբար. և զկնի յոլով հարուածոցն՝ ասաց շահն. զայդպիսի վնաս և զպարտաւորութիւն արարեալ է քո, եթէ կամիս զկենդանութիւն անձին քոյ, ուրացե՛ր զհաւատն քրիստոնէութեան ձերոյ, և լեր օրինօքն մերովք՝ դաւանութեամբն մոլար[1] առաջնորդին մերոյ, և ես տաց քեզ պատիւս և մեծութիւնս, և թէ ո՛չ հաւանիս, շանց և գազանաց առաջի արկանեմ զքեզ։ Եւ նա ո՛չ կալաւ յանձն զուրանալն, այլ ետ պատասխանի թէ, քրիստոնեայ եմ և Քրիստոսի ծառայ. և թագաւորն իբրև լուաւ զայն, զայրագին բարկութեամբ հրամայեաց դարձեալ ի բանտ արկանել։

Եւ ի վաղիւն վերստին եած առաջի իւր. և հարցանէր թէ ուրանա՞ս զհաւատն քո. և տէր Անդրէաս ասաց, ո՛չ ուրանամ։ Կրկին անգամ ասաց արքայ, տամ քեզ պատիւս և մեծութիւնս՝ թէ ուրանաս զհաւատն ձեր. և նա ո՛չ հաւանեցաւ. և դարձեալ հրամայեաց ի բանտ արկանել։

Իսկ քրիստոնեայքն մատեան առ նախարարս Թա-

---

1 Ոռ. չէ. մոլար.

դաւորին, եւ խոստացան գանձս բազումս, զի գուցէ ազատեսցեն զնա. եւ Թէպէտ նախարարքն խնդրեցին երկիցս եւ երիցս, ոչ լուաւ արքայ։ Այլ եւ Ցղնեցի խոջայ Անձրեւի կինն՝ որում մայր էր ասացեալ շահն, եւ ունէր պատիւ առաջի շահին, սա մեծաւ աղաչանօք անկեալ առաջի շահին, խնդրեաց արձակել զնա. սմա եւս ոչ լուաւ։

Եւ դարձեալ ածին զտէր Անդրէաս առաջի արքային, յետ բազում անգամ հարց եւ փորձ առնելոյ, խոստմամբ պարգեւաց եւ սպառնալեօք տանջանաց. իբրեւ ետես Թագաւորն Թէ, ոչ հաւանի, հրամայեաց սպանանել։ Իսկ քաջ նահատակն եւ ճշմարիտ քահանայն տէր Անդրէաս հաստատուն հաւատով կայր ի վերայ անշարժ հիման հաւատոյս քրիստոնէութեան։

Իսկ զինուորացն առեալ զտէր Անդրէասն կապանօք տարան ի տեղի կատարման, եւ նա ուրախութեամբ եւ յօժար կամօք գնայր. եւ յորժամ եհաս ի տեղի կատարմանն՝ իւրովի արձակեաց զգօտին իւր. եւ մերկացաւ զհանդերձն իւր, եւ ասէր դահճացն կատարել ի վերայ ինքեան զհրամանս Թագաւորին. բայց դահիճքն յամեցուցանէին, զի գուցէ հաւանեսցի հրամանաց արքային։

Եւ մինչ կայր սուրբն ի տեղի կատարմանն, առաքեաց առ նա Թագաւորն ի նախարարացն զոմանս երկիցս՝ Թէ մի՛ կորուսանէր զգեղ եւ զմանկութիւն քո, եկեալ հաւանեաց իմոց բանից. եւ առ յինէն պարգեւս եւ զմեծութիւնս։ Իսկ քաջ նահատակն՝ ամենայն բանից նոցա տայր պատասխանի Թէ, ընդունայն խոստմանց ձերոց ոչ հաւանիմ, եւ զճշմարիտ հաւատն իմ ոչ ուրանամ։ Եւ դահճացն հանեալ զսուրն խաղացուցանէին ի վերայ նորա՝ եւ ածէին ի վերայ ուռովայնին առ ի երկուցանել զնա՝ եւ նա ոչ երկնչէր։

Եկին ի տեղի նահատակութեան ծնողք սրբոյն և կային առ ընթեր՝ և աղիողորմ և յորդաբուխ արտասուօք լային, և աղաչանօք ասէին առ սուրբն, քաղցրիկ որդեակ մեր, որ առեր զկարգ քահանայութեան և եղեր զինուոր Քրիստոսի, մի երբէք լիցի քեզ ուրանալ զՔրիստոս և լինել զինուոր տիրատեաց, մի թողուցուս զլուսապայծառ հաւատս Քրիստոսի, և մի վասն առժամանակեայ կենացս զրկեսցիս ի յաւիտենական կենացն. այլ յիշեա զճշմարիտ վկայսն Քրիստոսի, զորոց զպատմութիւնսն հանապազ ընթերցեալ պատմէիր մեզ. համբեր որպէս և նոքայն, զի և նոցին պսակացն արժանասցիս. զայս և որ սոցին նման փղձկեալ սրտիւ, և յորդաբուխ արտասուօք աղերսալի ասէին ծնողք սրբոյն առ նա: Իսկ դահճացն զբազում ժամս յամեցուցին անդէն. զի թերևս երկմտեալ թուլասցի. և սուրբն անդրդուելի կայր ի վերայ ճշմարիտ հաւատոյս. և ի խաչակնքելոյ զդէմս ոչ դադարէր: Իբրև տեսին զհաստատութիւն մտաց նորա դահիճքն, թէ ոչ դառնայ, յայնժամ ձգեալ զսուրն պատառեցին զորովայնն նորա, և վաթեցաւ աղիքն արտաքս ի փորէն, և սուրբն միով ձեռամբն ժողովէր զաղիսն ի փորն, և միով ձեռամբն խաչակնքէր զերեսն, և յիշէր զանունն Քրիստոսի. և ապա ծակեալ զջիլս սրունից ոտիցն, և պարանօք բարձրացուցեալ ի բարձունս, և կախեցին զսուրբն գլխիվայր. և նա կայր կենդանի մինչև ի մուտս արևուն. և ընդ երեկոյն աւանդեաց զմաքուր հոգին ի ձեռս Աստուծոյ. որպէս զխունկ անոյշ և ճշմարիտ զոհ ընդունելի: Եւ յետ մահուան սրբոյն հրամայեաց շահն ձգել զմարմին նորա արտաքոյ շինութեան, զի կերակուր լիցի գազանաց և թռչնոց: Իսկ քրիստոնէիցն բարձեալ անտի և բերեալ յԱգուլեաց Ներքին եկեղեցին, որ այժմ ասի Խցաձորի եկեղեցի, և անդ թաղեցին. և այժմ անդէն կայ թաղեալ պատուական

նշխարք ոսկերաց նորա՝ ի բարեխօսութիւն[1] ամենայն քրիստոնէից։

Եւ եղև կատարումն և մարտիրոսական մահ սրբոյ քահանայիս Աստուծոյ տէր Անդրէասիս ի մեծ Թուականիս Հայոց ՌԿՁ. Տրէ ամսոյ ի տասն. և Նոյեմբեր ամսոյ ի տասն և յութն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և աղօթիւք նորա տէր մեզ ողորմեսցի. ամէն։

Եւ յետ կատարման տէր Անդրէասի, իբրև անցին ի վերայ ամիսք երեք կամ չորք՝ ի մէջ խօսից և զրուցաց վերստին յիշեալ եղև առաջի Շահաբասին որպիսութիւնք և իրակութիւնք անցուածոց տէր Անդրէասի։ Եւ անդէն ոմն ի նախկի չարախօսացն ի բնակող մահմետականացն Ագուլեաց՝ զորոց վասն կանխաւ յիշումն արարաք. և սորա անունն էր Շահռուզ բէկ. ասաց առաջի շահին, թէ տէր Անդրէասն, որ զկուլակս մանկանցն ածեալ էր, ոչ թէ յիւրոց մտաց ինչ, այլ խրատով վերակացուին իւրոյ. քանզի ունի ինքեան խրատիչ. և անդէն արարին հարցումն վասն խրատողին թէ ով ոք իցէ։ Եւ որպէս ի համեմատութիւնս մարդկան և անասուն կենդանեաց՝ համեմատին Տաճկաց ազգն ի յօձ, վասն նախանձուն և նենգութեան, զոր բնական ունին ընդ ազգս և ընդ հաւատս քրիստոնէից. յորոց և ոմն այս Շահռուզ բէկս նովին կրիւքն ախտացեալ մատնեաց շահին զՄովսէս վարդապետն ասելով. է ոմն այր, որոյ է անունն Մովսէս, որ է վարդապետ օրինաց քրիստոնէից, որոյ բնակութիւնն է ի վանքն Տաթևու, և է ինքն յերկրէն Սիւնեաց, և նա է օրէնսուսոյց և դաստիարակ տէր Անդրէասին։ Յաղագս որոյ հրաման եղև ի Թագաւորէն առաքել զզօրականս և ունիլ զՄովսէս՝ և կապանօք ածել առ Թագաւորն. և զօրականացն գնացեալ

---

1 Ուղ. չէ+. ի բարեխօսութիւն ամենայն քրիստոնէից.

կալան զՄովսէս վարդապետն, ընդ նմին և զՊօղոս վարդապետն՝ և եղին զօղամանեակ զուգեալ ի փայտից ի պարանոցս նոցա. և երկաթ ոտնակապ յոտս նոցա. յաւուրս ցրտութեան ձմերայնոյ, և բերին զերկոսեան վարդապետսն ի բանակն շահին, և ծանուցին նմա։ Եւ ի խոհարանս խորհրդոց իւրոց քննեալ էր շահն, թէ սպանանեմ արս երկուս՝ սակաւ լինի վնաս քրիստոնէից և օգուտ մեզ, այլ առից զյոլով տուգանս արծաթոյ ի նոցանէ, որով լինի աւելի օգուտ մեզ և վնաս նոցա։ Եւ այսպէս վասն ագահութեան և արծաթսիրութեան, էարկ տուգանս ի վերայ վարդապետացն թէ, հինգ հարիւր թուման տան և ապա գնան ազատ. բայց քրիստոնէիցն աղերս մատուցեալ առ նախարարս արքայի, զի խնդրեսցեն յարքայէ թեթևացուցանել զտուգանսն, և վասն միջնորդելոյ նախարարացն իջաւ մինչ յերեք հարիւր թումանն, և անդէն վճիռ եհատ թէ անպատճառ տացեն. որ և կարգեաց ի վերայ նոցա զզօրականս, զի առցեն, Իսկ վարդապետքն վասն ոչ ունելոյ ինչս, զի տացեն ի տուգանս, վասն որոյ [1] ելին ի շրջագայութիւնս և ի խնդիր ողորմութեան յամենայն ազգս Հայոց։

Իսկ աստուածասէր քրիստոնեայքն, թէպէտ աղքատք և չքաւորք էին, այլ ըստ կարողութեան իւրեանց աղքատք և հարուստք, արք և կանայք, անխնայաբար թափէին զինչս և զողորմութիւնս առաջի վարդապետացն։ Եւ նոքա առեալ զողորմութիւնն՝ ուր և լինէր, գերի և բանտարգել, և անզերծանելի պարտատէր, և այլ պակասաւոր, նախ նոցա տային և ազատէին, և յայսմ պատճառէ բազում գերիք, և բանտարգելք, և պարտատեարք ազատեցան, և ապա զմնացեալն տային իւրեանց ունող զօրականացն ի սակս տուգանին

---

1 Ուղ. ընդ վասն որոյ.

իւրեանց։ Եւ այսպիսի շրջագայութեամբ մինչեւ ի չորս եւ ի հինգ ամիս վճարեցին զերեք հարիւր Թումանն․ եւ ինքեանք զերծան ի կապանաց ողորմութեամբն Աստուծոյ եւ տրոց քրիստոնէից։ Բայց մինչ զերեք[1] հարիւր Թումանն վճարեցին ի գանձարանս արքային․ չորս հարիւր Թուման նա եւս աւելի գնաց, որ այսր եւ անդր խարճ գնաց, եւ ապա զերծան վարդապետքն։

Իսկ Շահուող բէկն՝ որ մատնեաց զՄովսէս վարդապետն, յետ սակաւ աւուրց սպանեալ եղեւ սրով ի զօրականաց շահին, ընկալեալ աստէն զհատուցումն վաստակոց իւրոց զսատակումն մարմնոյ, եւ անդէն զկորուստն հոգւոյ եւ զտանջանսն յաւիտենից․ յորոց փրկեաց[2] զմեզ Քրիստոս Փրկիչն մեր, որում փառք յաւիտեանս․ ամէն։

Գլ․ ԻԸ․

Պատմութիւն նեղութեանց եւ վշտաց, զոր կրեցին հայ ազգաւ քրիստոնեայքն․ որք բնակեալք են ի քաղաքն Իլով։

Ի վեր անդր ի կարգի պատմութեան, զոր գրեցաք վասն Մելքիսէթ կաթուղիկոսին, թէ գնաց նա յաշխարհն Իլախաց։ Արդ՝ յորժամ եհաս նա անդր, եւ եմուտ ի քաղաքն Իլով․ յետ անցանելոյ աւուրց ինչ,

---

1 Ոսկ․ չէ+․ Բայց մինչ զերեք . . . . զերծան վարդապետքն։ — 2 Նոյն․ է+․ յորոց փրկեաց . . . . ամէն։

ի նոյն Իլով քաղաքէ ոմն աբեղայ, որում անունն էր Նիկօղայոս, զարս ոմանս միջնորդս և բարեխօսս արարեալ առաքեաց առ Մելքիսէթ կաթուղիկոսն, զի օրհնեսցէ զինքն եպիսկոպոս ազգին Հայոց, որք կան յԻլով քաղաքին և որոց շուրջ զնովաւ, վասն զի ի ժամանակին յայնմիկ ոչ գոյր եպիսկոպոս նոցա։ Եւ միջնորդացն մատուցեալ առ կաթուղիկոսն ընծայեցին ոսկի բազում, և խնդրեցին առնել զՆիկօղայոս աբեղայն եպիսկոպոս. և կաթուղիկոսն տեսանելով զյօժարութիւն առ ձեռն պատրաստ ոսկւոյն, նա և ակնկալութիւն ևս յոլովից ոսկւոյ առ յապայն, հաճեցաւ օրհնել զՆիկօղայոսն եպիսկոպոս Իլովայ։

Իսկ քահանայք և ժողովուրդք քաղաքին՝ իշխանք և ռամիկք, ի վաղ ժամանակաց գիտելով զորպիսութիւն վարուց Նիկօղ աբեղային, գումարեցան միահաղոյն ամենեքեան, և եկեալ առ կաթուղիկոսն ծանուցին զբանս իւրեանց նմա, և ասացին. մեք գիտեմք զդա, և զորպիսութիւն վարուց զորա, վասն որոյ ոչ է դա մեզ ընդունելի. մի զդա՝ այլ զայլ ոք արասցես մեզ եպիսկոպոս։

Իսկ կաթուղիկոսն քամահեալ անարգեաց զժողովուրդն և զբանս նոցա. և արտաքսեալ յերեսաց իւրոց յետս դարձոյց զնոսա. բայց ժողովուրդքն՝ ոչ թուլացան ի բանից իւրեանց, այլ ի բազում աւուրս՝ բազում բանիւք խօսեցան ընդ կաթուղիկոսին. և ոչ թողին օրհնել զՆիկօղն եպիսկոպոս։

Ապա կաթուղիկոսն ելեալ ի քաղաքէն գնաց ի վանքն, որ անուամբ սրբուհւոյ Աստուածածնին կայ շինեալ արտաքոյ քաղաքին, զոր Իլովացիք Հաճկատար Աստուածածին ասեն, և անդէն առանց գիտելոյ ժողովրդոցն՝ մկուսի յամբոխէ [1] ի մէջ գիշերի սկսաւ օրհ-

[1] Ձեռ. չէ. մեկուսի յամբոխէ.

նել զՆիկօղ արեղայն եպիսկոպոս․ որում իրազգաց լեալ ժողովրդականաց քաղաքին, առ ժամայն ի նոյնում գիշերոյ իշխանք և ռամիկք վաղվաղակի գումարեցան ի միասին և ընդ փոքր դուռն քաղաքին ելեալ փութանակի հասին ի տեղին, աղաղակէին առ կաթուղիկոսն․ մի՛ օրհնէր զդա, և մի մատնէր զմեզ և զեկեղեցիս մեր ի ձեռս անիրաւ այդմիկ․ զի մեք գիտեմք զդա՝ և զորպիսութիւն վարուց դորա, վասն որոյ ոչ է մեզ ընդունելի։ Եւ կաթուղիկոսն նստեալ ի վերայ աթոռոյ օրհնէր զՆիկօղ արեղայն եպիսկոպոս, և խաչիւն՝ որ ի ձեռին էր, սաստէր ժողովրդեանն, և բանս տգեղս, զոր ոչ է պարտ յիշել՝ ասէր նոցա․ և թէպէտ ողորմելի ժողովուրդքն ամբոխեալ և աղմկեալ՝ յոգնակի աղաղակեցին, ոչ լուաւ նոցա կաթուղիկոսն, այլ օրհնեաց զՆիկօղն եպիսկոպոս։

Եւ յետ սուղ ինչ աւուրց կամեցաւ Մելքիսէթ կաթուղիկոսն ելանել յԻլովայ և գնալ ի քաղաքն Կամենից, և ժողովուրդքն հնարէին, զի թերևս զՆիկօղն ընդ կաթուղիկոսին ուղևորեսցեն ի գնալ․ իբրև խօսեցան ժողովուրդքն ընդ Նիկօղին վասն գնալոյ ընդ կաթուղիկոսին, և նա խաբեաց զնոսա ցուցանելով զինքն կամայօժար ի գնալն։ Եւ [1] իբրև գնացին աւուրց ինչ ճանապարհ, ասաց կաթուղիկոսն ընդ Նիկօղին․ բաւական է այսքան գալն քո՝ այսուհետև խաղաղութեամբ դարձիր ի տեղին քո, և ի գործ եպիսկոպոսութեան քոյ․ ասաց Նիկօղն՝ քո իսկ աչօք տեսեր զի այնքան հակառակեցան քեզ՝ և ոչ հաճէին յիս, և այժմ զիա՞րդ իշխեմ գնալ ի մէջ նոցա։ Եւ այնքան հնարեաց Նիկօղն, մինչ որ կաթուղիկոսն գիրս բանադրանաց՝ նզովից և կապանաց գրեալ ի վերայ ժողովրդեանն ետ ի ձեռս Նիկօղ եպիսկոպոսին, որպէս զի թէ ոք ընդդիմակայեալ

1 Առեղ․ Երեց․ չիք և․

հակառակեսցի և ոչ ընկալցի զնա ի պատիւ եպիսկոպոսութեան, լիցի ի ներքոյ բանադրանաց։ Եւ Նիկոլին առեալ զայս թուղթս և եկն յԼվով, ասաց ժողովրդեանն. դուք ամենեքեան ժողովեցարուք յաւուր կիւրակէի յեկեղեցին՝ քանզի ունիմ խօսք ինչ խորհրդական հասարակապէս ասել ձեզ ամենեցուն։ Եւ յաւուր կիւրակէին յորում և ժողովուրդք ժողովեալ էին յեկեղեցին՝ հանեալ զթուղթն բանադրանաց ետ ընթեռնուլ ի լուր ամենեցուն, իբրև զայն տեսին և լուան ամենեքեան ժողովուրդքն՝ տրտմեալ մեծաւ ոգով՝ վհատեալ[1] սրտիւ ապուշ մնացին, և ափ ի բերան եղեալ լռեցին։ Իսկ կաթուղիկոսն Մելքիսէթ՝ որ գնայր ի Կամենից, իբրև եհաս անդր, զկնի սուղ ինչ աւուրց հիւանդացաւ՝ և[2] մեռաւ իսկ՝ յաղուհացից պահոցն, ի ծաղկազարդի շաբաթ օրն, ի տօնի յարութեան Ղազարու, ի մերում թուականին ՌՀԵ. և անդէն թաղեցաւ։ Յետ այսորիկ զկնի անցանելոյ աւուրց և ամաց ինչ, դէպ եղև Նիկոլ եպիսկոպոսին գալ ի քաղաքն Կամենից, և ի նոյն քաղաքէն զոմն սարկաւագ՝ որոյ անունն էր Խաչկօ, օրհնեաց աբեղայ, փոխեաց զանունն նորա և կոչեաց Ոնոփրիոս։

Եւ Կեսարացի Գրիգոր վարդապետն, որ տուեալ էր գաւազան վարդապետական Մովսէս կաթուղիկոսին, էր այր երևելի, զի վարուքն կարի պարկեշտ էր և չորակաց, և իմաստութեամբն փարթամ, բանիբուն և յոյժ հանճարեղ, վասն որոյ անուանի էր նա ի մէջ աշխարհի, որ ամենայն աշխարհ կախեալ կային զնմանէ. և եղև այս Գրիգոր վարդապետիս յաւուրսս յայսոսիկ գալ յաշխարհն Իլախաց, և նախ եմուտ ի քաղաքն Կամենից, անդ ի Կամենից էր և Նիկոլ եպիսկոպոսն, և կամեցան Նիկոլ եպիսկոպոսն և այլք ոմանք զնորընծայ ա-

---

1 Ոսկ. և վհատեալ. 2 Նոյն. որ և.

բեղայն զՈնոփրիոս արտաքս բերել ի քառասնից։ Վասն որոյ և եկեալ առ Գրիգոր վարդապետն՝ մեծարանօք հրաւիրէին գալ ի միւս եկեղեցին. յորում զպատարագն մատուցանելոց էր Նորընծայն, և Նորընծայն դեռ ևս ոչ էր լիով պահեալ զքառասունքն. քանզի տասն և հինգ աւուր օրհնած էր՝ զոր կամէին արտաքս բերել. վասն որոյ ասաց վարդապետն՝ որովհետև ոչ է լցեալ զԹիւ քառասուն աւուրն, ո՛չ է պարտ հանել ի քառասնիցն, այլ պարտ է լիով պահել զքառասունքն ըստ աւանդութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, և ըստ [1] կանոնաց Հայրապետաց մերոց, և ապա հրաման է Նորընծային մատուցանել պատարագ և արտաքս ելանել ի քառասնից, վասն որոյ և նոքա լռեցին զայն շաբաթն և ո՛չ բերին արտաքս զՆորընծայն։ Եւ ի գալ միւսում կիւրակէին՝ կամեցան Նիկօղն և այլք արտաքս բերել զՆորընծայն, վասն որոյ ի շաբաթոջն աւուր միւսանգամ եկին, հրաւիրեցին զվարդապետն, և վարդապետն ոչ գնաց, այլ ասաց. խօսքն մէկ կուլինի, (որքան չէ լցեր [2] զքառասունքն՝ չէ պարտ որ պատարագ մատուցանէ, այլ կացէք մինչ որ կատարի քառասունքն, ապա առնէ պատարագ, և դուրս գայ ի քառասնիցն, որպէս որ աւանդութիւն է Հայոց ազգին, և կանոնած է ի մեր Հայրապետացն։) Իսկ նոքա ոչ եղեն ունկնդիր բանից վարդապետին, և ո՛չ համբերեցին, այլ գնացին ի յայնմ կիւրակէին արտաքս բերին զՆորընծայն. որ մատոյց զպատարագն, և յայս կիւրակէիս՝ յորում զպատարագն մատոյց Նորընծայն, դեռ ԻԲ. օր էր նորա, որ քառասունք էր պահեր։

Այլ և եպիսկոպոսն Նիկօղ արար յոյժ յանդուգն և անպատշաճ գործ ի կիւրակէիս յայսմիկ, յորում զպա-

1 Ո-ֆ. չէ+. ըստ։ 2 Նոյն. չէ+. որքան չի լցեր . . . . ցվերջ որ ընդ ֆ-ֆ-ֆ-ֆ։

տարագն մատուցին, քանզի եկեղեցւոյն այնմիկ՝ յորում էր վարդապետն՝ զգուռն փակեաց եպիսկոպոսն և զբանալին առ ինքն կալաւ. (ոչ յիշելով [1] զհրաման Տեառն՝ եթէ մատուցանիցես զպատարագն քո և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի խէթ ինչ զքէն՝ թող զպատարագն քո ի վերայ սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո:) Ի վերայ այսմ գործոյ որ եպիսկոպոսն փակեաց զեկեղեցին՝ [2] յոյժ վշտացաւ վարդապետն, վասն որոյ ասաց. այն մարդն անիծեալ լինի, որ այսօր զնայ յայն եկեղեցին. և եպիսկոպոսն յետ կատարելոյ պատարագին, և արտաքս բերելոյ նորընծային, զայնր եկեղեցւոյն դուռն ևս փակեաց, և եղեն փակեալք երկուց ևս եկեղեցեաց դրունքն. և էին աւուրք աւագ տօներոյն՝ որ զկնի նոյն կիւրակէին յետագայ երկուշաբաթոջ աւուրն Դաւթի մարգարէին և Յակովբայ Տեառն եղբօրն էր տօն, և յերեքշաբաթւոջն աւուր [3] Ստեփաննոսի Նախավկային էր տօն, և մնացին յայս աւուրքս եկեղեցիքն փակեալ առանց ժամի և պատարագի:

Ի վերայ այսոցիկ յաւել Նիկօլն այլ ևս նենգութիւն գործել առ վարդապետն և վշտացուցանել զնա. վասն զի գնաց առ վօյթն Կամենից քաղաքին, որ ի մեծ իշխանէն վերակացու էր կարգեալ Կամենից քաղաքին, որում անունն էր Լուքաշ, խօսեցաւ եպիսկոպոսն ընդ նմա և հաւանեցոյց զնա՝ զի արգելցէ զվարդապետն, և մի թողցէ գնալ յԻլով և կամ յայլ քաղաքս, այլ ի Կամենից քաղաքէն դարձուսցէ զնա, յետ դառնալ ընդ իւր եկեալ ճանապարհն և գնալ յայլ աշխարհ: Վասն որոյ

1 Յաւ. ձեռ. Ոչ յիշելով . . . ցվերջ որ ընդ փակագծաւ է:

2 Նոյն. ձեռ. որ եպիսկոպոսն փակեաց զեկեղեցին.

3 Նոյն. ձեռ. յերեքշաբաթւոջն աւուր Ստեփաննոսի Նախավկային էր տօն, այլ ընդ և այլ ըստ կարգին.

և Լուքաշ անուամբ վօյթն առաքեաց պատգամս առ վարդապետն ասելով թէ, [1] մեծ իշխանն մեր թուղթ է ուղարկել մեզ թէ, այդ վարդապետդ, որ ի թուրքի աշխարհէն եկեր է, չաշուտ է եղեր, հրաման չկայ որ ի քաղաքէդ ելանէ, մի թողուք որ երթայ, թէ ոչ ձեր գլուխն կերթայ. և այսպիսի բանիւք արգելեցին ի գնալոյ զվարդապետն, և վարդապետն կայր անդէն իբրև ի գերպահոջ: Ապա այք ոմանք բարեպաշտօնք ի ժողովըրդոց քաղաքին մատեան առ վօյթն և ծանուցին զանմեղութիւն վարդապետին նմա, [2] ապա թէ հրաման եգև վասն վարդապետին, զի ելեալ գնասցէ ոչ թէ յԻլով այլ դէպ ի յետ՝ ընդ որ եկեալն էր. և վարդապետին ելեալ ի Կամենիցոյ և եկն ի Բուղդան և ի յԱւռումելի, և ի Ճանապարհէն գրեաց գիր բանադրանաց, նզովից և կապանաց ի վերայ Նիկօլին՝ և առաքեաց յԻլով. և Նիկօլն ոչինչ հոգաց ի կողմանէ բանադրանացն, այլ կայր ի կարգի իւրում և ի քահանայագործութեան: Բայց քահանայք և ժողովուրդքն այնք՝ որք յառաջմէ ներհակ էին Նիկօլին, ի բերան առեալ խօսէին. նա և յերեսաց ընդդէմ բերէին նմա, նա և ոմանք ներհականային ևս, և օր յաւուր զօրանային ներհակքն ի վերայ Նիկօլին: Այլ և Գրիգոր վարդապետն, զամենայն որպիսութիւն անցուածոցս այսմիկ, այլ և զանուղղայ վարս Նիկօլին թղթով ծանոյց Մովսէս կաթուղիկոսին ի սուրբ Էջմիածնի, և խնդրեաց ի նմանէ զի և նա բարձր հրամանաւ սուրբ Էջմիածնի և կաթուղիկոսական իշխանութեամբն բանադրեսցէ զՆիկօլ եպիսկոպոսն, և Մովսէս կաթուղիկոսն ևս գրեաց գիր բանադրանաց, և առաքեաց ի վերայ Նիկօլ եպիսկոպոսին. և այսու պատ-

---

1 Ձեռ. չէ. թէ: 2 Նոյն. չէ. նմա:

ճառաւ առաւել ևս զօրացան ներհակքն ի վերայ Նիկօլին և ի չմարդի ունէին զնա։

Ապա ոմանք ի ժողովրդականացն հարցումն արարին ընդ Նիկօլին թէ ընդէ՞ր ոչ գնաս առ Գրիգոր վարդապետն և առնուս զարձակումն ի նորին կապանացն, և նա պատճառեաց թէ ոչ ունիմ թոշակ ճանապարհի, և ժողովուրդքն ժողովեցին երեք հազար ղուռուշ և ետուն նմա թոշակ ճանապարհի։ Այնուհետև եպիսկոպոսն՝ եթէ յիւրոց ինչ մտածութեանց, և եթէ ի սադրելոյ յիւրոց բարեկամացն, և թէ ի հարկելոյ ժողովրդոցն ելեալ յՊլովայ գնաց ի կողմանս Կոստանդնուպօլսի, և Կեսարիոյ. զի թերևս ուրեք գտեալ զԳրիգոր վարդապետն՝ տացէ մեղայ և առցէ արձակումն ի նորին կապանացն։ Եւ գալով եկեալ եհաս ի քաղաքն Բուրսայ, պատահեցաւ զի յաւուրսն յայնոսիկ անդ էր և Խարբերդցի Արիստակէս վարդապետն. արդ՝ այս Արիստակէս վարդապետս և այն Կեսարացի Գրիգոր վարդապետն ունէին ընդ միմեանս ոխս նախանձու յոյժ սաստիկ, և թէ զինչ էր պատճառ նախանձու և ոխակալութեան սոցին, բազում ժամանակաւ որոնեցի և զհաւաստին ոչ գտի, և զանհաւաստին ոչ գրեցի։ Եւ ի պատճառէ այսր նախանձու՝ բազում բանիւք և պէսպէս կերպիւ խօսեցաւ Արիստակէս վարդապետն ընդ Նիկօլ եպիսկոպոսին, և արգել զնա ի գնալոյ առ Գրիգոր վարդապետն. երբեմն ասէր, դու եպիսկոպոս ես և նա վարդապետ՝ չունի իշխանութիւն ի վերայ քո. երբեմն ասէր, ի զուր և ի նախանձուէ բանադրեալ է զքեզ, երբեմն ասէր. և ես վարդապետ եմ իբրև զնա, ես արձակեմ զքեզ ի կապանաց. և այլ բազում կերպիւ խօսեցաւ և ոչ եթող գնալ ի Կեսարիայ առ Գրիգոր վարդապետն։ Այնուհետև Նիկօլն ինքն ոչ գնաց՝ այլ գրեաց թուղթ խնդրանաց և աղերսանաց առ Գրիգոր վարդապետն, թէ մինչ

ի Բուրսայ եկի, և ատեն հիւանդացայ և անկեալ կամ ի մահիճս, վասն որոյ ոչ կարեմ գալ, խնդրեմ զի բարձցես յինէն զբանադրանքն և արձակեսցես ի կապանաց, և առաքեսցես ինձ և ժողովրդեանն թուղթ օրհնութեան, զի թերևս աղօթիւք և օրհնութեամբ քով սատի դարձայց և ողջութեամբ հասից ի տեղին իմ: Իսկ վարդապետն ի տեսանելն զգիրն անկեղծ մտօք հաւատաց խօսից եպիսկոպոսին իբրև ճշմարիտ խօսից, գրեաց թուղթ արձակման և օրհնութեան եպիսկոպոսին, այլ և գիր օրհնութեան Իլովայ քաղաքին և առաքեաց առ Նիկօլն, որ ի Բուրսայ էր. և Նիկօլն առեալ զթուղթն զայնուսիկ դարձաւ և գնացեալ եհաս յԻլով, և Իլովացիք իբրև տեսին զթուղթն Գրիգոր վարդապետին, ուրախացան և միաբանեցան ընդ եպիսկոպոսին: Իսկ Գրիգոր վարդապետն ի ձեռն ճանապարհորդաց և յարանց գիտողաց, հաւաստեաւ ի վերայ եհաս թէ, Նիկօլ եպիսկոպոսն յորժամ եկեալ է ի Բուրսայ, ոչ հիւանդացեալ է և ոչ տկարացեալ, այլ խորհրդակցութեամբ Արիստակէս վարդապետին զկայ առեալ կացեալ է ի Բուրսայ, և հնարիւք և պատրողական բանիւք արձակման թուղթ առեալ է և գնացեալ ի տեղի իւր: Եւ ի վերայ այսր խաբէութեանս՝ զոր արարեալ է եպիսկոպոսն ընդ վարդապետին, կարի վշտացեալ է վարդապետն, և զամենայն խաբէութիւն գործոց նորա գրով ծանուցեալ է Իլովացւոց. այլ և գրեալ է թէ զնոյն առաջին նզովքն և բանադրանքն տակաւին կայ ի վերայ այդր եպիսկոպոսիդ. վասն որոյ և Իլովացիք յետս կացին յեպիսկոպոսէն, և ոչ ընդունէին զնա, և անկաւ հակառակութիւն ի մէջ եպիսկոպոսին և ժողովրդոցն յոյժ սաստիկ:

Եւ մնացին այսպիսի հակառակութեամբ մինչև հասին ի թուականն մեր ՌՀԹ. յորում ժամանակի առաքեաց Մովսէս կաթուղիկոսն մեծ աշակերտն իւր, զԿե-

սալացի Խաչատուր վարդապետն վասն Նուիրակութեան սուրբ Էջմիածնի յաշխարհն արեւմտական՝ յԱսորեստան և ի Հոռոմաստան։ Եւ էր Խաչատուր վարդապետն այր հեզ և հանդարտ և քաղցրաբարոյ, ոչ անիմաստ և անբան, այլ իմաստուն և բանիբուն, որ լոկ տեսութեամբ միայն շահէր զառ ինքն պատահեալսն, որոյ վասն զնա կարգեցին Նուիրակ. և Խաչատուր վարդապետն անցեալ զամենայն տեղեօք՝ եկեալ եհաս ի Կեսարիայ, և անդ պատահեցաւ մեծ վարդապետին Գրիգորի. և Գրիգոր վարդապետն բազում բանս հրամայականս պատուիրեաց Խաչատուր վարդապետին։ Թէ ի հասանիլն քո յԽլով՝ մի գուցէ թէ ընկալցիս զՆիկօլն ի կարգ և ի պատիւ եպիսկոպոսութեան։ Եւ Խաչատուր վարդապետն Նուիրակեալ զամենայն տեղիս եկեալ եհաս յԽլով, առ որ մատուցեալ ժողովրդականացն սկսան բազմօրինակ և կսկծալի ամբաստանութիւն առնել զՆիկօլէն վասն պէսպէս անցուածոց և գործոց, որ ի նմանէ տեսեալ էին և կրեալ։ Իսկ վարդապետն ըստ իւրում քաղցր և հեզ բնութեանն ոչ առ երեսս յանդիմանէր զՆիկօլն, այլ մեղմ և խրատօրէն ինքն և նա միայն խօսէր ընդ նմա, ըստ պատուիրանին Տեառն թէ, ասասջիր նմա, յորժամ դու և նա միայն իցէք։ Իսկ Նիկօլն բնաւ ոչինչ հոգայր յամենայնէ, զի ոչ ի վարդապետէն ամաչէր, և ոչ ի ժողովրդոց ամբաստանութենէն երկնչէր, այլ իբրև զանշարժ լեառն արձանացեալ կայր ի կամս իւր։

Եւ եղև երբեմն յաւուր կիւրակէի աւետարան կարդալ, և Նիկօլ եպիսկոպոսն հրամայեաց իւրում աբեղային թէ, գնա՛ աւետարան կարդա, իսկ Խաչատուր վարդապետն ասաց, Թող նա չկարդա՝ այլ այն ոմն. իսկ Նիկօլն ո՛չ անսաց բանից վարդապետին, այլ իւրում աբեղային ետ կարդալ զաւետարանն, իբրև ետես վարդապետն թէ ի մէջ քահանայիցն և ժողովր-

դոցն յայտնի և համարձակ քամահեաց զբանս իւր, և ի չմարդի ունի զինքն, դարձաւ առ ժողովուրդն և ասաց, այն մարդն անիծեալ լինի, որ սորա յետևն ծունր դնէ այս ասաց վարդապետն, և ելեալ յեկեղեցւոյն գնաց ի տեղի իւր ի վերնատունն, ուր լինէր ի հասարակ աւուրսն։ Իսկ ժողովուրդքն իբրև զայն լուան և տեսին՝ ինքեանք ևս ամենեքեան միահաղոյն զրոհ տուեալ ելին արտաքս յեկեղեցւոյն, և մնացին յեկեղեցին Նիկօլն և այլք ոմանք. և զկնի արձակելոյ ժամին նոքա ևս գնացին ի տեղիս իւրեանց. իսկ ժողովըրդոցն Հայոց՝ դատաւորք և իշխանք եկին ի նոյն ցերեկին. և փակեցին զդուռնն եկեղեցւոյն և առին յինքեանս զբանալին՝ և մնաց եկեղեցին փակեալ աւուրս ինչ։ Այլ և դատաւորքն և իշխանք Հայոց խօսեցան ընդ Խաչատուր վարդապետին, և հաւանեցուցին զնա՝ զի նստցի յաթոռ և կարգեսցէ ատեան դատաստանի, առ ի դատել զՆիկօլն վասն յանդգնութեանն, և այլ ևս անկարգութեանն և յանցանացն. իբրև իմացաւ եպիսկոպոսն զգործս զայս, եբեր առ ինքն զերկուս ոմանս ի վկայից Ֆռանկաց՝ որ ի մէջ ամենայն դատաստանի նոքա գան և տան զվկայութիւն, և ըստ նոցին վկայութեանցն դատաւորքն տան զվճիռ դատաստանին. քանզի այսպէս կարգ ունին աշխարհն Իլախաց ի մէջ իւրեանց։ Խօսեցաւ Նիկօլն ընդ վկայիցն այնոցիկ, և հաճեցոյց զկամս նոցա, զի յորժամ կոչեսցէ զնոսա, և նոքա անյապաղ եկեսցեն ի կոչ նորա. և յաւուր դատաստանին՝ յորում նստաւ վարդապետն ի դատաստան, նստան ընդ նմա և իշխանքն և դատաւորքն Հայոց, կոչեցին և զՆիկօլն առ ի դատել, բայց Նիկօլն յառաջագոյն զվկայսն զայնոսիկ բերեալ էր ի տունն յայն, և ի տեղի թաքուն կացուցեալ էր զնոսա առանց գիտելոյ արանցն Հայոց։ Իբրև կոչեցին զՆիկօլն ի ներքս և նա

եկեալ հրամայեաց իւրոց սպասաւորացն դնել զաթոռն իւր ի հանապազորդեան տեղին իւր, զի անդ նստցի ինքն. իսկ իշխանքն ասացին առ Նիկօլն՝ զի՞նչ առնես, զի՞ նստիս՝ զի ի դատել կոչեալ են զքեզ, կաց ի յոտին այդր, և Նիկօլն ասաց՝ և ով է դատողն իմ. ասեն իշխանքն, եկեալ նուիրակս՝ զոր տեսանես, և դատաւորքս որք աստ կան։ Յայնժամ բարձր ձայնիւ գոչեաց Նիկօլն առ թաքուցեալ վկայսն, թէ եկա՛յք արտաքս, և նոքա առժամայն եկին, և կացին ի մէջ հանդիսին, առ որս ասաց Նիկօլն, վասն Աստուծոյ՝ ձերովք աչօք տեսէք՝ և լերուք ինձ վկայք, զի ես եպիսկոպոս եմ, և սոքա աշխարհականք գոլով ժողովեալ են առ ի դատել զիս, և վարդապետս այս՝ որ ի Թուրքաց աշխարհէն եկեալ է աստ, ի չաշուտութիւն եկեալ է յայս երկիրս՝ ի գիտել զամենայն որպիսութիւնս մերոյ աշխարհին, և սա այժմ սոքօք նստեալ են առ ի դատել զիս։ Եւ վկայքն ասեն. զոր ինչ մերովք աչօք տեսաք, սմին վկայեմք, և ուր և տանիս զմեզ. տամք վկայութիւն. յայնժամ ամենայն ժողովեալքն ի Հայոց եթէ քահանայք, և եթէ իշխանք և դատաւորք, եղեն պակուցեալք, և զարհուրեալք յերկիւղէն Փռանկաց, և սկսան մի մի ելանել և փախչել, և վարդապետն ևս ելեալ գնաց ի տեղի իւր։

Զկնի այսորիկ Նիկօլ եպիսկոպոսն սկսաւ ստութեամբ և կեղծաւորութեամբ առաքել միջնորդս, և պատգամաւորս առ վարդապետն, և առ քահանայսն, և առ իշխանսն վասն հաշտութեան՝ ասելով. բաւական է այսքան հակառակութիւնդ ձեր, և այլ մի ևս հակառակիք, և մի փակէք զեկեղեցին. այլ բացէք զդուռն եկեղեցւոյն, իսկ Խլովացիք ամենեքեան գիտելով զխարդախութիւն նորա՝ ոչ հաւատային նմա։ Բայց վարդապետն նկատեալ իւրովք մտօքն ետես զի, ցորքան զըրգռեն ի խռովութիւնն, և վէճ և պայքար դնեն ընդ

եպիսկոպոսին, առնել և բազում յորդեալ յառաջադայի ի նմանէ գործ չարութեան, վասն որոյ յաղագս վտանգիս այսորիկ ակամայ կամօք կամեցաւ առնել հաշտութիւն ընդ եպիսկոպոսին, զոր և խօսեցաւ ընդ քահանայիցն, և ընդ իշխանացն, զի արասցեն հաշտութիւն՝ և նոքա ոչ կամեցան. ասաց վարդապետն վասն ապագայից չարեացն, որ հանդերձեալ է գալ յեպիսկոպոսէդ, երկնչիմ ես և կասկած կրեմ, թէ մի գուցէ ի վերջ յամառութեանս մերոյ մեծագոյն ինչ վնաս կրիցեմք ի դմանէ: Նտուն պատասխանի. ամենևին մի երկիցես վարդապետ, զի մեք ունիմք բազում նոմոսք յառաջին և ի վաղեմի թագաւորաց՝ զի ցորքան պատահիցի դատաստան իրիք ինչ գործոյ, մեր Հայոց ազգի դատաւորքն արասցեն զդատաստանս Հայոց, և ոչ թէ դատաւորք ազգին Փռանկաց. այլ և ունիմք ապրանք ընդ ապրանաց նոցա, և խելք ընդ խելաց նոցա, և դու զի՞ ես երկնչիս: Եւ վարդապետն ոչ բնաւ հաճեցաւ ի բանս յայսոսիկ, այլ երբեմն հասարակ, և երբեմն առանձին խօսէր ընդ նոսա գալ ի հաշտութիւն, և նոքա ո՛չ կամեցան, յայնժամ հետէ կալեալ վարդապետին իւրով ձեռամբն զփողպատն (օձիք) իւր, թօթափելով ասաց, անպարտ եմ ես ի մեղադրութենէ դորին, դուք գիտասջիք:

Իսկ Նիկոլ եպիսկոպոսն իբրև ետես թէ միջնորդութեամբ իւրոց առաքելոց՝ սուտ և կեղծաւոր պատգամաւորացն Իլովացիք ոչ գան ի հաշտութիւն, և ոչ բանան զեկեղեցին, այնուհետև գնաց առ եկեղեցականս Փռանկաց, որք կան ի մէջ քաղաքին Իլովայ, և մանաւանդ առ այնոսիկ որք ի կարգէն Եզվայիթայ (ժիզուիթ) են, միաբանեցաւ ընդ նոսա՝ և ետ ձեռագիր անլուծանելի թէ. [1] ես Նիկօլայոս եպիսկոպոս Հայոց, իմովս կա-

---

[1] Ա—է. չէ. թէ.

մաւ միաբանեցայ ընդ եկեղեցւոյն Հռոմայ, և մտի ի հնազանդութիւն փափին ամենայն հետևելովքն իմովք՝ կատարել զամենայն հրամանս, որ առ ի նմանէ։ Ի վերայ այսորիկ յարեաւ գլխաւորն Եգվայիթայ կարգին, էառ և այլ ևս եկեղեցականս յայլ ևս կարգացն. առին ընդ ինքեանս և զՆիկօղ եպիսկոպոսն Հայոց, և տարան առ արքեպիսկոպոսն իւրեանց, և նա սոքօք առաքեաց պատգամս առ իշխան քաղաքին, զի հրամայեսցէ ժողովրդոցն Հայոց, զի [1] կամ հնազանդեսցին եպիսկոպոսին իւրեանց և բացցեն զեկեղեցին, և կամ եկեալ յատեան դատաստանի՝ միմեանց յանդիման լիցին. և ըստ հրամանի արհի եպիսկոպոսին արար իշխանն. բայց ժողովուրդքն Հայոց ոչ զեկեղեցին բացին, և ոչ ի դատաստան եկին, մինչև երեք անգամ այսպէս կրկնեաց իշխանն. և Հայք ոչ զեկեղեցին բացին, և ոչ ի դատաստան եկին։

Ապա յաւուր միում ժողովեցան բազում եկեղեցականք յԵգվայիթայ կարգէն, նա և յայլոց ևս կարգացն, առին և զբազում տղայս ի դպրոցացն, գնացին առ արքեպիսկոպոսն իւրեանց, առին և կարգաւորս ի նմանէ, գնացին առ իշխան քաղաքին և առ դատաւորս, առին ի նոցանէ զզօրականս և զդատաւորս ընդ իւրեանս, սոքա ամենեքեան եկին ի դուռն եկեղեցւոյն Հայոց՝ զոր իշխանք Հայոց փակեալ էին, և առաքեցին առ իշխանս Հայոց, զի կամ ինքեանք եկեալ բացցեն զդուռն եկեղեցւոյն, և կամ զբանալին առաքեսցեն, և նոքա ոչ ինքեանք եկին և ոչ զբանալին առաքեցին։ Յայնժամ նոքա՝ որք եկեալք էին, հարեալ խորտակեցին զդուռն եկեղեցւոյն, և առեալ զՆիկօղ եպիսկոպոսն մուծին յեկեղեցին, և ի նա յանձնեցին զեկեղեցին ամենայն ընչիւք,

---

1 Այլ. չիք զի.

որ վերաբերի առ եկեղեցի։ Այնուհետեւ եղեալ զօրականացն Փռանկաց ի ձեռնիր երիցանց եւ իշխանաց Հայոց, զի իշխանական բռնութեամբ կալեալ արկանիցեն ի բանտս եւ ի տուգանս, եւ նոքա փախուցեալ թաքեան եւ ոչ բնաւ երեւեցան։ Եւ ի մէջ եկեղեցւոյն կայր գանձատուն, եւ ի նմա գիրք եւ անօթք յոյժ բազում. գրեանք աւելի քան զՌ. փերթ. (հատոր), ամենեքեան ընտիրք եւ պատուականք եւ վարդապետականք, յորս էին ոսկէտուփ աստուածաշունչք, եւ աւետարանք, եւ շարակնոցք, եւ այլք գրեանք բազում։ Նոյնպէս եւ անօթք, սկիհք, եւ խաչք, քշոցք եւ բուրվառք, կանթեղք եւ աշտանակք, շուրջառք եւ եմիփորոնք, թագք եւ վակասք, սուրբ նշշանք եւ սրբոց նշխարք, եւ որ ի հարց եւ ի հաւուց ի վաղեմի եւ ի նախկին թագաւորաց ունէին մուրհակք եւ նամակք, եւ այլ եւս ինչ յոյժ բազում. սոքա ամենեքեան ի մէջ եկեղեցւոյն էին ի նոյն գանձատանն, զորս գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբն Նիկօլն։ Ոչ միայն զայս եկեղեցիս՝ այլ եւ զայլ եկեղեցիսն եւ զվանօրայսն, որ ի քաղաքին, եւ որք շուրջ զքաղաքաւն էին. եւ զամենայն աւանդս նոցա, զտունս եւ զանդաստանս, զաղօրիս եւ զխանութս, կալաւ եպիսկոպոսն ընդ իւրով իշխանութեամբն՝ ասելով. ես եմ եպիսկոպոս, իմ են եկեղեցիք ամենեքեան եւ աւանդք իւրեանց. Իսկ Խաչատուր վարդապետն եւ ամենայն ժողովուրդքն Հայոց որ յԽլով կային՝ մնացին արտաքոյ եկեղեցւոյ, քանզի թէ մտանէին յեկեղեցին, հարկէր նոցա մտանել ընդ իշխանութեամբ փափին, եւ ընդունիլ զնորին դաւանութիւնն. այլ եւ պարտ էր հնազանդել Նիկօլ եպիսկոպոսին, եւ Խլովացիք ոչ ախորժէին զայսօսիկ. վասն որոյ եղեն վարանեալք եւ տարակուսեալք, եւ ոչ կարէին գտանել ճար ինչ, եւ մնացին ժողովուրդքն Հայոց՝ որք յԽլով քաղաքին էին, առանց եկեղեցւոյ։

Եղև [1] զի վարդապետն Խաչատուր ել ի քաղաքէն, և գնաց ի Սուրբ Խաչ կոչեցեալ վանքն, իսկ ի ժողովըրդոցն ով ոք որ կամէր գնալ առ նա, համարձակութեամբ գնայր և գայր. և ահա տեսին զի [2] յաւուր միում եկին բազում զինուորք և զօրականք զինուք և պատրաստութեամբ, և շուրջանակի պատեցին զվանքն, և ի հարցանելն տեսողացն պատասխանէին զինուորքն, թէ ի Թուրքաց աշխարհէն չաշուտ է եկեր՝ և ահա յայս տեղս է, կամիմք ըմբռնել զնա։ Եւ իբրև սուղ ինչ ժամն էանց ի վերայ, և տեսին զի ահա եկն Նիկօլ եպիսկոպոսն իւրովք սպասաւորօքն և փառօք, և ի մերձենալն իւր առ զինուորսն՝ հարցանէր ցնոսա, թէ վասն է՞ր ժողովեալ էք աստ, ասեն զինուորքն. ի Թուրքաց աշխարհէն չաշուտ եկեալ է աստ, կամիմք ըմբռնել զնա, առ որս ասաց Նիկօլ, ոչ է մարթ և պատշաճ ըմբռնելն ձեր զնա, այլ դուք դարձարուք և գնացէք ի տեղիս ձեր, և ես գնացեալ տեսանեմ և խօսիմ ընդ նմա, և զինուորքն ամենեքեան իսկոյն ցրուեցան և գնացին։ Իբրև այսպէս եղև զրաւ գործոյն, որոյ վասն կարծեցեալ եղև ի ժողովրդոցն Հայոց թէ, ի հնարից եպիսկոպոսին եկեալ էին զինուորքն վասն երկեցուցանելոյ զվարդապետն, իսկ եպիսկոպոսն գնաց առ վարդապետն՝ էառ զնա անտի, և եբեր զնա ընդ իւր ի քաղաքն։ Եւ մինչ էր վարդապետն ի քաղաքին, հանապազ գային առ նա աբեղայք և այլք ոմանք ի Փռանկաց, և առնէին հակառակութիւն ընդ վարդապետին ի վերայ երկու բընութեան և մէկ բնութեան, և իբրև զՆեստորեական հերձուածովք խոտորեալ զՀայս, և ի տգիտութենէ և յիմարութենէ մոլորեալ։ Իսկ վարդապետին մտածելով զգործս անցելոյն, և խորհելով զապառնւոյն, և տեսա-

1 Ա—ձեռ. Երեց. Եւ եղև։ 2 Ոսկ. չիք տեսին զի։

նելով զներկայլին, գիտաց զի ոչ գոյ ինչ օգուտ, այլ զուր աշխատանք և ի նանիր վաստակ, վասն որոյ ելեալ յԻլովայ՝ և գնաց զճանապարհ իւր մինչև եկեալ եհաս յԷջմիածին առ Մովսէս կաթուղիկոսն, և առ այլ վարդապետսն, որ ամենեքեան ցաւագին սրտիւ՝ արտասուաթոր աչօք ողբային վասն ազգին Հայոց, ուր էին յԻլով քաղաքին՝ թէ զիա՞րդ լինի փրկութիւն նոցա։

Եւ որպէս Տէրն Քրիստոս ասաց՝ նախ զհզօրն կապիցէ և ապա զտուն նորա աւար հարկանիցէ. այսպէս արար և Նիկօլ եպիսկոպոսն, զի յետ գնալոյ վարդապետին, որպէս զգազանն տեսլեանն Դանիէլի՝ սկսաւ զամենայն ժողովուրդսն և զգանձս և զամենայն ինչս եկեղեցւոյն ուտել և մանրել և զմնացորդսն առ ոտս արկանել։ Քանզի որպէս ի ժամանակս կռապաշտ թագաւորացն ունէին քրիստոնեայքն զհալածանս, այսպէս և յայսմ ժամանակի եղև ի վերայ ազգին Հայոց բնակելոցն յԻլով քաղաքին. քանզի կարի զօրութեամբ զօրացաւ Նիկօլ եպիսկոպոսն և բռնացաւ ի վերայ ժողովրդեանն Հայոց։ Կալնոյր զերիցունս առ ով ոք և գտանէր սուղ ինչ վնաս, և արկանէր ի բանտ, և առնոյր ի նոցանէ զտուգանս զերիս հարիւր և չորս հարիւր ղուռուշս, սոյնպէս և զիշխանս, որք և դատաւորք էին կարգեալք՝ կալեալ տուգանէր։ Եւ հասարակ զամենայն ժողովուրդսն վտանգէր, ոչ թողոյր ի թաղել զմեռեալսն՝ վասն գանձի, և յորժամ առնոյր գանձս ըստ հաճոյից կամաց իւրոց, ապա տայր զհրաման թաղելոյ և տեղի գերեզմանի առ ի թաղել։ Եւ յետ թաղելոյն յորժամ զտապանաքարն ի վերայ գերեզմանին կամէին դնել, յայնժամ պատճառէ միւսանգամ առնոյր գանձս, և ապա հրաման տայր դնել զքարն։ Այն պատճառի վասն, և պսակք և մկրտութիւնք խափանեցան, զորս տարեալ յայլ քաղաքս պսակէին և մկրտէին, և

զմեռեալս յայլ քաղաքս տարեալ թաղէին. և զայսոսիկ առնէին ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին. և յորժամ իմանայր՝ մեծաւ ցասմամբ զայրանայր, և ըմբռնէր զերեցն և զարարօղ արսն բազում խոշտանգանօք չարչարէր՝ և ծանրագոյն տուգանս առնոյր։

Եղև երբեմն զի զոմն երիտասարդ կամեցան պըսակել ի ծածուկ թարց գիտելոյ եպիսկոպոսին, որոյ վասն երեք քահանայք բերին, զի ի տան անդր արասցեն զպսակն. և ծանուցեալ եղև այս եպիսկոպոսին, որոյ առաքեալ զօրականս ունիլ զերիցունսն և զտեարս հարսանեացն և արկանել ի բանտ. սմին իրաց իրազգած եղեալ տեարց հարսանեացն և երիցանցն, առ երկիւղին սկսան թաքչիլ՝ զոմն յերիցանցն եղին ի մէջ սնդուկի կողպայեցին իբր թէ կահք և զարդք կանացի գոլ. և երկուքն յերիցանցն մտին ի մէջ սօրային, որ շինեալ էին ի մէջ տանն վասն հրավառութեան։ Իսկ զօրականացն ի յուզելն և ի խնդրելն զերիցունսն՝ գտին ի մէջ սօրային, հանին զնոսա ի սօրայէն և կապեցին ձեռս ի յետս գլխիբաց և բոկոտամբ[1] սևացեալ երեսօք և մարմընով, զի մուր սօրային սևացուցեալ էր զնոսա. և այնպէս տարան զնոսա առաջի եպիսկոպոսին։ Եւ եպիսկոպոսն յետ բազմաց անարգանաց և սպառնալեաց էարկ զերիցունսն և զտեարս հարսանեացն ի բանտ. և էառ զչորս հարիւր. ղուռուշ յերիցանցսն և զչորս հարիւր ղուռուշ ի տեարց հարսանեաց, և ապա եթող, որք գնացեալ արարին զհարսանիսն։ Եւ բազում տըղայք մեռանէին առանց մկրտութեան, և բազումք տղայք կային անմկրտեալք հնգետասան և վեշտասանամեայ. բազում հիւանդք[2] առանց հաղորդութեան

1 Ուղ. բոկոտն. 2 Նոյն ընթ. բազում հիւանդք . . . մեռանէին և.

մեռանէին, և բազում մեռեալ մնացին անթաղք յամս բազումս, դնէին զմեռեալսն ի մէջ փայտեայ տապանի և լնուին զտապանսն կպրով մինչև որ ծածկէր զմեռեալսն, և դնէին ի ցուրտ տեղիս և պահէին. սպասելով այցելութեան Տեառն: Եւ բովանդակ եօթն Խորհուրդ եկեղեցւոյ և ամենայն ժամակարգութիւն խափանեցաւ. և մնացին ողորմելի ժողովուրդքն ի մէջ անհնարին նեղութեանց, առաւել քան զոր ի ժամանակս կռապաշտութեանն:

Ապա ժողովուրդքն յաղագս յոգնակի նեղութեանց իւրեանց բողոք բարձին ի սուրբ Աթոռն Էջմիածին. վասն զի տէր Սիմոն անուամբ զոմն քահանայ և երեւելի այր մի աշխարհական առաքեցին առ կաթուղիկոսն տէր Մովսէս, զի հոգասցէ և հնարեսցէ նոցա զփրկութիւն, և կաթուղիկոսն գրեաց գնամակս խոհեմականս՝ և լի իմաստութեամբ, խոնարհ և մաղթողական բանիւ առ Թագաւորն Լէհաց և առ նորին իշխանսն, և առ արքեպիսկոպոսն քաղաքին Լվովայ՝ որ յազգէն Ֆռանկաց, նա և առ փափն. և խնդրեաց թէ ողորմեցարուք տառապեալ ժողովրդեանն. և շնորհեցէք զեկեղեցին յինքեանս՝ և մի խափանէք զեօթն Խորհուրդ եկեղեցւոյ. զոր ոչ է պատեհ առնել քահանայից Քրիստոսի: Իբրև հասին նամակքս այսոքիկ յԼվով քաղաք, և ժողովուրդքն Հայոց տարեալ մատուցին իւրաքանչիւր տեարց՝ Թագաւորին և այլոց. և նոքա հրամայեցին թարգմանել ի գիր և ի բարբառ Լեհաց, որոց յընթեռնուլն հաճեալ հաւանէին ամենայն բանից և ուրախութեանց. որոց բանից վերայ գթացաւ սիրտ Թագաւորին, որում անունն էր Վլատիսլաւ, որ և հըրամայեաց թէ տուք զեկեղեցին Հայոց յինքեանս, բայց Եզվայիդայք ընդդիմացան և ոչ թողին՝ ասելով Թագաւորին. այս եկեղեցական և հոգևորական գործ է, որ

վերաբերի առ փափն, և առ արքեպիսկոպոսն. և նոքա պարտին հոգալ զսա՝ որոց անկ է և պատեհ, և ոչ քեզ, որ մարմնաւոր թագաւոր ես, վասն որոյ ոչ է քեզ պատեհ խառնել յայս գործ՝ որ է հոգևոր և թագաւորն վասն գթալոյ ի տառապանս ժողովրդեանն Հայոց, խնդրեաց յարքեպիսկոպոսէն իւրեանց տալ զեկեղեցին Հայոց. սմին ևս ընդդիմացան Եզվայիդայքն, և ոչ թողին տալ։ Եւ վասն առաւել գթալոյ թագաւորին ի վերայ Հայոց, ինքն թագաւորն յարեաւ և գնաց յեկեղեցին Հայոց՝ զի տացէ զեկեղեցին Հայոց՝ յինքեանս ի Հայս. իբրև զայն գիտաց Նիկոլ եպիսկոպոսն, իսկոյն զգեցաւ զգեստս պատարագի, և բարձեալ զհաղորդպատարագին ի վերայ գլխոյ իւրոյ՝ և ելեալ եկն ընդ առաջ թագաւորին, որում ի տեսանելն թագաւորին զարհուրեցաւ ի տերունական խորհրդոյն. և ոչինչ զօրեաց առնել, այլ թողեալ զամենայն՝ դարձաւ ի տեղի իւր և յապարանս։

Ապա հարկ եղև Հայոց գնալ ի Հռոմ առ փափն, զոր և բազում աղաչանօք առին թուղթս բարեխօսութեան ի թագաւորէն և յարքեպիսկոպոսէն առ փափն, և գնացին ի Հռոմ. ետուն ի փափն նախ զխնդրանաց թուղթն Մովսէս կաթուղիկոսին, և ապա զթագաւորին և զարքեպիսկոպոսին։ Իբրև ետես Նիկոլ եպիսկոպոսն թէ ժողովուրդքն գնացին ի Հռոմ, գնաց ինքն ևս ի Հռոմ, և անդ ևս անիրաւ Եզվայիդայքն ներհակացան Հայոց և ձախեցին զբանս նոցա՝ որ ոչ եղև տուեալ եկեղեցին Հայոց, որ և ունայն դարձան ողորմելի ժողովուրդքն, և եկին յԼվով։ Դարձաւ և Նիկոլ եպիսկոպոսն ի Հռոմայ և եկն յԼվով. և կայր ըստ առաջին կարգին՝ վտանգելով զժողովուրդսն և ևս անառակութեամբ։

Թող զառաջինն՝ երկիցս և երիցս ևս առաքեցին

Իլովացիք քահանայս և զերեսփոխանս յԷջմիածին առ կաթուղիկոսն Փիլիպպոս, զի Մովսէս կաթուղիկոսն վախճանեալ էր, և Փիլիպպոս կաթուղիկոսն բազում անգամ զանազան կերպիւ թուղթս գրեաց յԻլով. և յիւրոց աշակերտաց և վարդապետաց առաքեաց յԻլով. սակայն այնու ևս ոչ եղև օգտութիւն ինչ Հայոց ժողովրդեանն: Այլ և յԻլովայ քաղաքէն եկեղեցական արք բարեպաշտօնք, որք էին աբեղայք և երիցունք, զրոց աշակերտք, վասն այսց հալածանացս եկին յԷջմիածին՝ և անդէն բնակեալ կացին, որք էին որդիք նշանաւոր արանց յորոց զոմանս ձեռնադրեաց Փիլիպպոս կաթուղիկոսն եպիսկոպոս յԻլովայ, և առաքեաց անդ առ ի հովուել զժողովուրդն, սակայն և այնու ևս ոչ եղև օգտութիւն ինչ ժողովրդեանն Իլովայ: Այլ և ի սոյն ժամանակի՝ ի կարգէն Դոմինիկոսի Պօղոս անուամբ վարդապետ ոմն, այր իմաստուն և երևելի՝ յազգէն Ֆռանկաց, եկն յերկիրն Նախչուանայ ի մէջ ախթարմայիցն, որք անդ կան, և Փիլիպպոս կաթուղիկոսն բազում սէր և բարեկամութիւն արար ընդ Պօղոսին այնր. վասն օգտի ժողովրդեանն մերոյ և փրկութեան եկեղեցւոյն Իլովայ. և Պօղոսն այն յետ կատարման գործոյ իւրոյ կամեցաւ գնալ ի Հռօմ, և գնալով զճանապարհս իւր հանդիպեցաւ յԻլով քաղաք. և Իլովացիք ևս բազում՝ աղաչանօք խնդրեցին ի Պօղոսէ և բազում մեծարանս արարին նմա, և գանձս ևս յոլովս առ ի թոշակ ճանապարհի ետուն նմա. զի թերևս օգնութիւն ինչ հնարեսցէ նոցա ի դուռն փափին: Եւ յորժամ եհաս Պօղոս ի Հռօմ, և մինչ նա բանս ինչ բարեխօսութեան վասն Հայոց առաջարկեալ էր, և խօսէր ի դուռն փափին՝ վաղվաղակի գնաց զկնի նորա և Նիկօլ եպիսկոպոսն ի Հռօմ ի դուռն փափին. և խափանեաց զօգնութիւնն Պօղոսի՝ ձեռնտուութեամբ Եզ-

վայլեթացն։ Եւ այսպէս յամենայն կողմանց խափանեցաւ փրկութիւն և օգնութիւն տառապեալ ժողովրդեան Ուռհայ քաղաքին, և ընդ Պօղոսին գնացողքն տրտում և ունայն դարձան անտի։ Եւ Նիկօլ եպիսկոպոսն ևս դարձաւ ի Հռոմայ և եկն յՈւռհայ քաղաք. և կեայր ըստ առաջին վարուց իւրոց. և ևս առաւել անառակ։ Եւ զվերոյասացեալ գրեանսն, և զսրբութեան անօթսն, և զամենայն աւանդս եկեղեցւոյն, զորս վաճառեաց, և զորս կաշառս բաշխեաց, և զորս ձեռամբ հրէից խորտակեալ արար արծաթ և վաճառեաց. և զայնքան զբազում և զանթուելի զինչսն և զգանձսն ցիր և ցան արարեալ բնաւին վատնեաց՝ որ ոչինչ մնաց, միայն լոկ դատարկ քարեայ եկեղեցին, զի կեայր անառակ և զեղխ և շուայտ վարուք՝ յայտնի և համարձակ յոչ ումեքէ վեհերելով։ Եւ բազում գրեանք և անօթք ի նորին վաճառելոցն եկին յերկիրս Հայոց՝ և առ մեզ հասին. զորս վաճառականք գնով առեալ բերին, որ սքանչելի էր տեսողացն։

Եւ ողորմելի ժողովուրդքն Ուռհայ, վտանգս և չարչարանս բազումս կրեցին, վասն զեօթն Խորհուրդս եկեղեցւոյ խափանելոյն. և բազում այք երկիւղածք, և վրէժխնդիրք հայրենի օրինաց՝ մեկնեցան ի տանց և ի տեղեաց, և ելեալ ի բնիկ աշխարհէն հեռացան, անջատեալք յընտանեաց և յազգաց, պանդուխտք, և նշդեհք շրջագայեալք յօտար աշխարհի. և այնպէս կենօք հեծելով և յոգւոց հանելով վախճանեցան։ Եւ այլ ևս չարչարանս և նեղութիւնս յոգնակի կրեցին ժողովուրդքն Հայոց՝ զի հալածումն մեծ էր ի վերայ նոցա, որք և զրկեցան յեկեղեցւոյն իւրեանց, և յայնքան ստացուածոցն. և զիւրեանց ևս զգանձս վատնեցին ի դրունս իշխանաց և թագաւորաց, և աստ և անդ յուղեգնացութիւնս։ Եւ այնքան աշխատեցան երկաքին կողմանքն.

այսինքն Նիկօլն և ժողովուրդքն, զի լքան ի բազմօրակի հնարագործութեանց և ի բազմաժամանակեայ ներհակութեանց. քանզի սկիզբն խռովութեանս եղև ի ՌՀԹ. թուին. որ զեկեղեցին յափշտակեաց Նիկօլն, և մնացին այնպէս մինչև որ հասին ի ՌՃԲ. թիւն մեր։

Յորում ժամանակի տէր Փիլիպպոս կաթուղիկոսն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի գնաց յԵրուսաղէմ, և անտի եկն ի մեծահանդէս քաղաքն ի Կոստանդնուպոլիս, որոյ դալստեան համբաւն հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, նա և յԻլով քաղաք ևս եհաս։

Ի սոյն ժամանակի հանճարեղ խորհրդական Նիկօլ եպիսկոպոսն, նկատեալ տեսութեամբ իւրոց մտաց, թէ ժողովուրդքն այսքան չարչարեցան, և ոչ կասեցան ի բիրտ կամաց իւրեանց, այլ տակաւին ի նոյն կամս յամառեալ կան, վասն որոյ խորհեցաւ գնալ ի Կոստանդնուպօլիս առ կաթուղիկոսն Փիլիպպոս, զի թերևս բարձցի յինքենէ անուն բանադրեցելոյ, նա և ընկալցի ի նմանէ ի վերայ ժողովրդեանն թուղթ օրհնութեան, և առ ինքն հնազանդութեան։ Բայց զի էր դատարկ և ունայն ի գոյից, և ոչ ունէր պաշար ճանապարհի, վասն որոյ խորհէր գտանել սմին հնար, զոր և եգիտ այսպիսի կերպիւ։ Եւ էր ի Թօխաթ քաղաքի յազգէն Հայոց այր ոմն երևելի և անուանի, որում անունն էր մահդեսի Մարկոս. որ ետ գանձս յոլովս Սիմոն անուամբ որդւոյ իւրոյ՝ և առաքեաց յաշխարհն Իլախաց վաճառականութեան աղագաւ։ Եւ Սիմոնս այս եկեալ եհաս յԻլով քաղաք՝ հանապազ ուտէր և ըմպէր և կեայր ի խրախութեան, նա և եղև ծանօթ և բարեկամ ընդ Նիկօլ եպիսկոպոսին, զոր և խոստացաւ եպիսկոպոսին, և ասաց, թէ ունիս զկամս գնալոյ առ կաթուղիկոսն, մի հոգար վասն պաշարի, զի որքան և պիտոյասցի քեզ դրամ վասն ճանապարհի, զամենայն ես

տամ. զոր և ըստ իւրում խոստմանն ետ եպիսկոպոսին զերկու հազար դուռուշ նաղդ դրամ. իբրև զայն էառ եպիսկոպոսն, ապա ելեալ յՒլովայ եկն ի Բուղդան և գնայր առ կաթուղիկոսն Փիլիպպոս։

Զայս տեսեալ ժողովրդականացն Հայոց՝ որ յՒլով, թէ գնաց Նիկոլ եպիսկոպոսն առ կաթուղիկոսն, սահմանեցին և նոքա զայր ոմն երևելի յիւրեանց կողմանէ, որ էր մի ի դատաւորացն Հայոց, որում անունն էր Խաչքօ, գնալ առ կաթուղիկոսն Փիլիպպոս, տուեալ նմա գրեալ թուղթս և պատուիրեալ բանս բազումս. և Նիկոլ եպիսկոպոսն և Խաչքօ դատաւորն՝ որիշ ի միմեանց գնացեալ հասին ի Կոստանդնուպօլիս՝ և պատահեցան կաթուղիկոսին։

Եւ ի յոլով աւուրս զկնի բազում խօսից և գործոց, կատարումն գործոյն այն եղև՝ զի կաթուղիկոսն Փիլիպպոս հրամայեաց, որ բանս չորս գլխով յանձն առցէ Նիկոլ եպիսկոպոսն, և զայնս ձեռնագրով իւրով դրոշմեսցէ, և տացէ Փիլիպպոս կաթուղիկոսին։ Նախ՝ զի զդաւանութիւն Լուսաւորչին, և զնորին աթոռակալ հայրապետացն դաւանեալ խոստովանեսցի Նիկոլն, և իւր հետևողքն՝ եկեղեցականք և աշխարհականք։ Երկրորդ՝ զի զարարողութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ արասցէ ինքն և իւր հետևողքն։ Երրորդ՝ զի զկնի վախճանի Նիկոլին՝ ի տեղի Նիկոլին եպիսկոպոս նըստողն, ի կաթուղիկոսէն Էջմիածնի լինիցի օծեալ եպիսկոպոս, և նորին Հրամանաւն նստցի ի նոյն վիճակին, և նոյն կաթուղիկոսին հնազանդ և հետևող լիցի։ Չորրորդ՝ զի ինքն Նիկոլն միայն յիշեսցէ զանուն փափին, և զայն ևս ի պատարագն միայն, և ոչ յայլ ինչ բանս և յարարողութիւնս։ Նա և մի խառնեսցէ ջուր ի բաժակ սրբոյ պատարագին, իսկ յեկեղեցական ժառանգաւորաց և ի կղերիկոսաց՝ ոչ ոք բնաւ յիշեսցէ զա-

նուն փափին։ Այնպէս և մի՛ յիշեսցէ զկնի Նիկօլին նստող եպիսկոպոսն զանուն փափին ամենևին. ո՛չ ի բանս և ո՛չ ի գործս՝ այլ միայն Նիկօլն, և զայն ևս ի պատարագն միայն։

Եւ վասն յիշելոյ զանուն փափին, Նիկօլն ինքն խնդրեաց ի կաթուղիկոսէն, զի այնմ միայն ներումն տացէ, քանզի Նիկօլն ասաց թէ, ձեռնագրաւն, զոր ես տուեալ եմ Ֆռանկաց՝ ի կարգէ լուծանեն զիս, գուցէ մահապարտ ևս առնիցեն, վասն այսորիկ ներեաց կաթուղիկոսն։ Եւ զայս չորս բանս գրեալ ի քարտիսի, ինքով կնքեալ և ձեռնագրով դրոշմեալ Նիկօլն ետ կաթուղիկոսին Փիլիպպոսի, և կաթուղիկոսն ետ Խաչքօ դատաւորին, զի ընդ իւր տարեալ ի քաղաքն Իլով ի պահեստի ունիցին վասն առ յապայն զգուշութեան։ Եւ ապա կաթուղիկոսն արձակեաց զՆիկօլն ի կապանաց բանադրանաց, և ետ նմա նոմոս եպիսկոպոսական իշխանութեան՝ իշխել ի վերայ ժողովրդոցն Իլովայ և պատուիրեաց նմա, զի զգաստասցեալ ի թափառական և ի խենէշ վարուց իւրոց՝ եկեսցէ ի կրօնս և ի բարեշաւիղ ճանապարհս արդարութեան, որ վայել է անուան և աստիճանի եպիսկոպոսութեան։ Եւ Նիկօլ եպիսկոպոսն զամենայն հրամանս կաթուղիկոսին հոգւով չափ և յօժար կամօք յանձին կալեալ, և արձակեալ ի նմանէ եկեալ եհաս յԻլով քաղաք։

Եւ ժողովուրդքն Իլովայ համարէին թէ զղջացեալ և թողեալ իցէ Նիկօլն զթիւր վարս իւր. բայց տեսանէին զի ի նոյն վարս կայ անփոփոխ. այլ և յիշէին զանչափ զանձուցն իւրեանց և զանօթոցն վատնումն, և զբազմապատիկ նեղութիւնսն՝ զոր հասոյց նոցա եպիսկոպոսն Նիկօլ, այրեալ, խորովեալ տոչորէին սիրտք նոցա։ Վասն այնորիկ ո՛չ կամէին միաբանիլ ընդ նմա, նա ևս առաւել փախչէին և կամէին նզով լինել ի նմանէ։

Եւ մինչ տակաւին ոչ էր գնացեալ Նիկօլ եպիսկոպոսն ի Կոստանդնուպօլիս, Փիլիպպոս կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլսոյ զոմն վարդապետ յիւրոց աշակերտաց՝ որում անունն էր Յօհան վարդապետ, որ էր տեղեաւ յԱրդնւոյ, այր փարթամ իմաստութեամբ, և հանճարեղ բանիւ, առաքեաց գնալ յԻլով. զի թերևս գուն գործեալ հնար իմն փրկութեան գտանիցէ եկեղեցեաց նոցա և ի գնալն Յօհան վարդապետին յԻլով, և ի գալն եպիսկոպոսին ի Կոստանդնուպօլիս ի ճանապարհին պատահեցան միմեանց, և Նիկօլ եպիսկոպոսն ի Յօհան վարդապետէն ևս էառ թուղթ առ կաթուղիկոսն, վասն ինքեան յանձնարարութեան. և գնաց առ կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս։ Իսկ Յօհան վարդապետն հասեալ յԻլով, մնաց անդէն մինչ որ Նիկօլ եպիսկոպոսն և Խաչքօ դատաւորն ի Կոստանդնուպօլսոյ դարձան և եկին յԻլով։

Իբրև ետես Յօհան վարդապետն թէ ընդդիմանան ժողովուրդքն եպիսկոպոսին, և ոչ կամին հնազանդիլ նմա, սկսաւ միջնորդել ի մէջ ժողովրդեանն և Նիկօլին՝ վասն բառնալոյ զբազմաժամանակեայ զաղմուկն և զխռովութիւնն, և զբազում աւուրս բազում խրատով, քարոզիւ, և դասիւ և առանձնակի խօսելով ընդ ժողովրդեանն և ընդ եպիսկոպոսին, բազում ջանիւ և յոլով աշխատութեամբ հազիւ թէ կարաց հաւանեցուցանել զժողովուրդն հնազանդիլ եպիսկոպոսին։ Ապա ի միասին առեալ Յօհան վարդապետն զժողովուրդն և զեպիսկոպոսն եբեր[1] եմոյծ յեկեղեցին իւրեանց, զոր յափշտակեալ էր եպիսկոպոսն։ Եւ եղև ի մտանել ժողովրդեանն յեկեղեցին, որպէս զխառնումն գառանց ի հօտ ոչխարաց մարց իւրեանց, գոռումն, և դոչումն, և ողբումն, և աղիողորմ լաց և փղձկեալ սրտիւ յորդառատ

[1] Ուղ. բերեալ.

արտասուս հեղուլ ժողովրդոցն յաչաց իւրեանց, մեծաւ հառաչմամբ վասն տարփալի կարօտանաց և փափաքանաց՝ որ առ եկեղեցին իւրեանց։ Եւ անդէն յեկեղեցւոջն ի նոյնում ժամու սկսաւ Յօհան վարդապետն մխիթարել զժողովուրդն յաստուածային գրոց և ի վարուց և յօրինակաց սրբոց, յորոյ բանից վերայ զմանայր սիրտ ժողովրդոց, և ածեալ ի համբոյր հաշտութեան զամենեսեան ընդ եպիսկոպոսին. և ժողովուրդքն և եպիսկոպոսն [1] մխիթարեալ ուրախացան ընդ արարս վարդապետին և գոհութեամբ օրհնէին զԱստուածն ամենայնի։

Եւ եհաս համբաւ հաշտութեանս առ Թագաւորն Լեհաց՝ որում անունն էր Եանգեաժիմիր. քանզի ի քաղաքն Իլով էր Թագաւորն յաւուրսս յայսոսիկ, որ և կոչեաց Թագաւորն առ ինքն զՅօհան վարդապետն և առանձին ի սենեկի խօսեցաւ ընդ նմա բանս բազումս. և լուաւ պատասխանիս հանճարեղ և համեղ բանիւ։ Եւ սիրեաց Թագաւորն զվարդապետն և զշնորհակալութիւն արար նմա վասն միջնորդութեան և հաշտեցուցանելոյն զժողովուրդն և զեպիսկոպոսն, և զբազմաժամանակեայ խռովութիւնն բառնալոյն։ Եւ մնաց անդէն վարդապետն Յօհան ամ մի ողջոյն և ապա դարձաւ և եկն ի սուրբ Էջմիածինն։ Իսկ ժողովուրդքն Իլովայ և Նիկօլ եպիսկոպոսն, կան ի վերայ նոյն պայմանագրութեանն, զոր սահմանեցին Փիլիպպոս կաթուղիկոսն, և Յօհան վարդապետն մինչև ցայսօր՝ յորում զպատմութիւնս շարադրեցաք ի Թուականիս մերում ՌՃԹ, ի Մայիս ամսոյ Փ. և [2] խնդրեսցուք ի Քրիստոսէ, զի առ յապայն ևս խաղաղութեամբ և սիրով պահեսցէ ի հաճոյս բարեսէր կամաց իւրոց և ի գովեստ անուան իւրոյ օրհնելոյն յաւիտեանս. ամէն։

---

1 Ոսկ. չէ. և ժողովուրդքն և եպիսկոպոսն . . . զԱստուած ամենայնի. 2 Նոյն. չէ. և խնդրեսցուք ի Քրիստոսէ . . . յաւիտեանս ամէն.

Գլ. ԽԹ.

Թէ ո՞րք եւ որպէ՞ս եղեն պատճառք գտանելոյ զոճս եւ զգիտութիւնս արտաքին գրոց՝ եւ զարուեստս քերականութեան՝ եւ նորոգեալ սփռեցին ի վարդապետս հայոց՝ որ ընաւին քարձեալ եւ աննետ էր լեալ:

Արդ՝ ի հին և ի վաղեմի ժամանակաց կայր դասատուն վարդապետաց ի քաղաքն Բաղէշ՝ ի վանքն՝ որում անուն Ամրդօլ ասեն,[1] որ յաջորդելով մի զմի եհաս մինչև ի ժամանակս հարց մերոց։ Յորում ժամանակի էր յաջորդ և առաջնորդ՝ պետ և գլուխ վարդապետաց տեղւոյն այնմիկ ումն վարդապետ Բարսեղ անուն, որ էր այր երևելի և մեծանուն, և յոլով աշակերտաց տէր. և նոյն վանքն Ամրդօլու յառաջագոյն խրթին և յոռի շինեալ էր և այն ևս խարխալեալ էր ի հնութենէ, սա զամենայն շինուածն միահաղոյն քակեաց, և ինքն վերստին հիմնարկեալ շինեաց և կատարեաց զբովանդակն, զեկեղեցին և զտներն և զայլն, որ ի նոսա։

1 Առք. չն+. ասեն.

Այլ և էր ինքն Բարսեղ վարդապետն ի գաւազանէն՝ որ ի Տաթևացւոյն յառաջ եկեալ և սերեալ, այսպիսի կարգաւ։ Նախ՝ Գրիգոր Տաթևացին, նորին աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշէնցին. նորին՝ չորթան Գրիգոր Արճիշեցին. նորին՝ Ներսէս, որ մատաղ ասի. նորին՝ Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին՝ Բրդուտ Յովհաննէս Ոստանցին. նորին՝ Բարսեղ Գաւառցին, որ է այս Բարսեղս, [1] որոյ վասն բանս է։ Սորին աշակերտ Մոկացի Ներսէս ի գեղջէն Ասկնջաւայ, զորոյ մակ անուն բեղլու ասեն, զի մեծ էր բեղն։ Սորին աշակերտ Մելքիսէթ Երևանցի, ի գեղջէն՝ որում անուն էր [2] Վժան։

Արդ՝ այս Բարսեղ վարդապետս յինքենէ իսկ գիտակ էր թէ, գիտութիւն արտաքին իմաստից և քերականութեան ո՛չ գոյ ի մէջ վարդապետացն Հայոց, և ինքն մեծաւ տարփանօք ըղձայր թերևս հասանել այնմ գիտութեան, ոչ միայն վասն իւր, այլ մանաւանդ վասն ազգին, զի արծարծեալ սփռեսցի ի մէջ ազգիս Հայոց, որպէս զի ամենեքեան հասցեն այնմ շնորհաց և գիտութեան։ Վասն որոյ յարաժամ առեալ ի ձեռս իւր զարտաքին գիրքն, և թէպէտ ոչ գիտէր, այլ անյապաղ և անձանձիր ընթեռնոյր. էր զի ուրեք ուրեք հասանէր ի վերայ տեսութեան, և մտաց բանին, և էր զի ոչ. բայց նա ամենայն ջանիւ առանց ձանձրանալոյ միշտ ընթեռնոյր։

Եւ որպէս Տէրն Քրիստոս յառակս երեք նկանակին ասաց, թէ ոչ տացէ վասն բարեկամութեան, սակայն վասն ժտութեան յարուցեալ տացէ նմա զինչ և խնդրեսցէ։ այսպէս և սմա ետ. որ անդադար և անձանձիր տքնութեամբ յար հանապազ կացեալ ի դուռն ի-

---

1 Ուղ. չէ+. որ է այս Բարսեղս. 2 Նոյն. չէ+ր որում անուն էր.

մաստից գիտութեան բաղխէր զցայգ և զցերեկ աղօթիւք և ընթերցմամբ։ Իսկ աղբիւրն և տուողն ամենայն իմաստութեան սուրբ Հոգին Աստուած, որ բերանով Իակցին իւրոյ խոստացաւ. Թէ խնդրեցէք, և տացի ձեզ, բաղխեցէք, և բացցի ձեզ, հայցեցէք, և առնուցուք, տեսեալ զանդանդաղելի զկանխելն և զբաղխելն սորա, շնորհեաց սմա զխնդրելին. զի ետ տեսութիւն և հանճար մտաց սորա՝ խելամուտ լինել բառին և ոճոյն, և շաւղաց արտաքին գրոց, առանց ուրուք առաջնորդելոյ և ցուցանելոյ բնաւ։ 1)

Քանզի նախ սկիզբն արար սահմանաց գրոցն, կարդայր մինչև ցվերջ պրակին, և դարձեալ դառնայր ի սկիզբն պրակին, այնքան կարդայր և դառնայր, մինչև ամենայն որպիսութեանցն տեղեկացեալ լինէր՝ և ապա անցանէր ի միւս պրակն, այսպէս առնելով մինչև ի տասն պրակն սահմանացն կարդաց, և վերահասու եղև՝ որ այլոց ևս կարէր ուսուցանել։ Եւ ապա թողեալ զսահմանքն էանց ի Պորփիւրն, տեսանել և փորձել զնորին ևս զորպիսութիւն, և սկսաւ մեծաւ ջանիւ ընթեռնուլ և մտածութեամբ խոկալ. և ի բազում աւուրս յոգնակի աշխատութեամբ ընթեռնլով և դառնալով ի Պորփիւրէն՝ զսեռն և զտեսակն ևս եգիտ շնորհօք սուրբ Հոգւոյն։

Եւ յաւուրս ծերութեան իւրոյ այս Բարսեղ վարդապետս կոչեաց զամենայն աշակերտս իւր առաջի իւր, և զոր ինչ և գտեալն էր իմաստութիւն յարտաքին գրոց, դաս ասաց նոցա, զոր նոքա ամենեքեան ի միտ առին, և ուսան, և ապա սկսաւ խօսել ընդ նոսա և պատուիրել։ Որդեակք իմ սիրեցեալք, զորս հոգևոր երկամբք ծնայ ի Տէր, զի նախնի վարդապետաց գրեանց մէջն՝ զորս

1 Ա-կ. չէ. բնաւ.

յիշեն Սեռ, Տեսակ. և Տարբերութիւն, և Յատուկ, և Պատահումն, և ստորասութիւն, և Բացասութիւն, որոց բազմաց և յոլովից պատահեալ էք ի մէջ Պարապմանց գրոցն, և զանձուց գրոցն, և առ որս գրոցն, և այլոց այսպիսեաց, թէպէտ և ընթեռնումք, և անցանեմք, այլ թէ զի՞նչ են սոքա, և սոցին հետեւմունքն, և բոլորն և մասունքն, և այլ որպիսութիւնքն մեք ոչ գիտեմք. և հարկ է վարդապետաց՝ որ[1] սոցին ամենեցուն քաջ գիտակ գոլ, զի թարց սոցին գիտութեան, թէպէտ ընթեռնու ոք, զինչ և ընթեռնու, և կարծէ իմացեալ զնա, այլ ոչ է իմացեալ ըստ պատշաճին և պարտին. զի ամենայն իմաստութեանց և գրոց, ներածութիւնք սոքա են, եթէ նրբից և թէ արտաքնոց։

Վասն որոյ իբրև զանդառնալի կտակ մահու պատուիրեմ ձեզ, և մանաւանդ ծանր և անբառնալի հարկ ի վերայ ձեր դնեմ, զի որպէս զիս տեսիք, զի հանապազ ընթեռնուի զայս գիրս, և բազում խոկմամբ մտածէի, և երկնէի, այնքան մինչև գտանէի զտեսութիւն բանին. և զոր ինչ և գտի շնորհելովն Տեառն, զայն ամենայն ահաւասիկ դաս ասացի ձեզ։ Եւ այժմ մեծաւ հարկիւ պատուիրեմ ձեզ, զի և դուք այսպէս առնիցէք, որքան և իցէք կենդանի. և զայս՝ զոր ես դաս ասացի ձեզ, հանապազօր կարդացէք, և ի վերայ սորին դուք ևս աճեցուցէք, ընթեռնլով և յառաջ դնալով. և զոր ինչ և տացէ ձեզ Աստուած սուրբ Հոգին զլինէն ուսեալն և զձեր գտեալն, ձեր աշակերտելոցն դաս ասացէք. և միշտ վարժեցէք զնոսա ի նոյն՝ մինչև ունակացի ի միտս նոցա, և դուք ևս պատուիրեցէք ձերոց աշակերտելոցն՝ զի ըստ այսմ օրինակի արասցեն. և այսպէս յորդւոց որդիս առնելով՝ հաւատամ ի Տէր, զի

---

1 Այլ. չէ+ որ.

բանայ և ցուցանէ զամենայն ճանապարհս և զդրունս չքնաղ և պանծալի գիտութեանս այսմիկ։ [1] Արդ՝ լուսընկալ հոգի Բարսեղ վարդապետս ըստ ասացելումս պատճառ եղև գտանելոյ արտաքին դրոց գիտութեան, և այսպէս պատուիրելով յաւելաւ առ հարս իւր և հանգեաւ ի Քրիստոս, և եդին զնա ի հանգիստ գերեզմանի ի նոյն վանքն Ամրդօլայ, զոր ինքն նորոգեաց, որոյ [2] հանգստեան տեղի ընդ սրբոց և երանելեաց եղիցի. ամէն։

Եւ ըստ պատուիրելոյ երջանիկ վարդապետիս Բարսղի՝ երեք ոմանք յաշակերտաց սորին արարին, որք էին ի Մոկաց գաւառէն, միոյն անունն Յովսէփ, ի գեղջէն որում անունն է Ոզմի. և միւսոյն՝ Հայրապետ և սորին եղբօրորդւոյն՝ Ներսէս, որք էին ի գեղջէն որոյ անունն է Ասկնջաւս։ Եւ այս Ներսէսս, բեղուն Ներսէսն է, զոր ի կարգ վարդապետացն յիշեցաք ի վեր անդր։ Այս Ներսէսս յոլով աշխատեցաւ՝ և առաւելացոյց քան զԲարսեղ վարդապետն և քան զընկերս իւր։ Եւ ապա ի միտս իւր եկեալ Ներսէս վարդապետս և խոկմամբ ի միտ ածեալ զամենայն ունայնութիւն կենցաղոյս, և զպատաղմունս սորա՝ և զպատրանս մեծութեան, զզջացաւ յաշխարհէ՝ և լքեալ թօթափեաց յինքենէ զաշխարհս, և զամենայն վայելչութիւնս սորին. քանզի մեծ անապատն նոր էր շինեալ և հաստատեալ, զորոյ զպատմութիւնն կանխաւ ճառեցաք, և ի նմին պատմութեան Ներսէս վարդապետի յիշումն արարաք, և այն յիշեալ Ներսէսն այս է. և սորա լուեալ զառաքինական ճգնութիւնս միաբանից մեծ անապատին, ելեալ գնաց անդ։ Եւ ի միաբանից մեծ անապատին ոմանք աբեղայք սկսան դաս առնուլ զարտաքին գիրքն ի Ներսէս վարդապետէն. և

---

1 Ոսկ. այսորիկ. 2 Նոյն. չէ+. որոյ հանգստեան . . . . . եղիցի ամէն։

վասն զի գործնական առաքինութիւնն յարգոյ, և նախապատիւ էր առ նոսա, զի հոգիս զարգարելոյ փոյթ ունէին և ոչ զբանս, սորին վասն ումանք ի դաս առնողացն յետս կացին. բայց ոմն աբեղայ տէր Մելքիսէթ անուամբ՝ որ էր յԱրարատեան աշխարհէն, ի գեղջէն զոր Վժան ասեն։ Սա ոչ թուլացաւ յընթերցմանէ արտաքին գրոց, և ոչ մեկնեցաւ ի Ներսէս վարդապետէն, այլ ցորքան ժամանակս եկաց Ներսէս վարդապետն ի մեծ անապատն, եկաց անդէն և տէր Մելքիսէթն. և յորժամ ելեալ Ներսէս վարդապետն գնաց յերկիրն Վասպուրականի ի Լիմ կոչեցեալ կղզին, որ է ի մէջ ծովուն, և շինեաց անդ անապատ, այս տէր Մելքիսէթս ևս գնաց ընդ Ներսէս վարդապետին ի Լիմ։

Եւ յորժամ ժողովեցան յոլովք՝ և բազմացան միաբանք տեղւոյն, հինգ այլ ևս եղբարք միաբանեցան ընդ տէր Մելքիսէթին՝ և ամենեքեան ի ձեռս առին զիրս արտաքինս՝ և սկսան ջանիւ կարդալ։ Եւ յայտ արարեալ նշանեցին յաւուրն ժամ մի առ ի միասին ժողովելոյ, որպէս զի ուրաքանչիւր ոք ի նոցունց՝ զոր ինչ և գտեալ իցէ ի բանից գրոց անդէն ամենեցուն յայտնեսցէ, զի այլքն ևս ուսցին, որով աճեալ և արծարծեալ առաւելասցի գիտութիւնն այն, և այսպէս արարին զամս երկուս, և յայնմ հետէ միաբանեալ եղբարցն ձանձրացեալք յետս կացին յընթերցմանէ արտաքին գրոց, զի աշխատութիւնն յոլով էր, և մխիթարութիւնն սակաւ, զի տակաւին ոչ էին թագաւորեալ ի վերայ բանին, և զճաշակ քաղցրութեան ոչ էին առեալ. որով ամենայն աշխատութիւնքն նուաստ և երկրորդ նմին տեսանի, ըստ վկայելոյն Դաւթի Փիլիսոփային։

Բայց տէր Մելքիսէթ՝ ոչ եթող զարտաքին գիրքն, և ոչ թուլացաւ ի նորին ընթերցմանէ, այլ անդադար տքնութեամբ զցայգ և զցերեկ ընթեռնոյր և մտածէր,

և բերեալ առ Ներսէս վարդապետն ցուցանէր, և հարցանէր թերևս ուղիղ իցէ գտեալն բան։ Եւ ընդ բազմաջան ընթերցմանն, զոր առնէր և խոկայր ցանդ. հանապազ ի տեսական իմաստութիւնն. և զգործնական առաքինութիւնն ևս ընդ նմին[1] ի միասին բարձեալ տանէր. զի զկարգ անապատին հաւասար ընդ հասարակ եղբարցն անպակաս կատարէր. նա և գերագոյն քան զնոսա, ի գիշերի կանխէր յաղօթս և ի պաղատանս առ Տէրն և տուողն ամենայն իմաստութեան ի Տէր Աստուած, բանալ նմա զդուռն իմաստութեան գրոց՝ և խելամուտ առնէր նորին հանճարոյ։

Եւ զոր ինչ վասն նախ ասացեալ վարդապետացն պատմեցաք, սա բազմապատիկ առաւել քան զնոսա, երկս և աշխատութիւնս կրեաց ի վերայ արտաքին գրոց, զի թող զայլ ժամանակն զոր ընդ ընկերացն, և կամ չափաւոր ճգնութեամբ զաքնութիւն կրեալ էր, այլ յատուկ տասն ամ առանց թուլանալոյ և ննջելոյ ինչ, զմարմինն իւր ի խաչ բարձեալ՝ կարեօք և ցանկութեամբ հանդերձ ըստ Պօղոսի. և քան զայս ևս առաւել յամն երկուս յօրն մէկ հաց ճաշակեալ և ոչ այլ ինչ։ Եւ յայն երկու ամն ամենևին լուռ եկաց և ընդ ումեք ոչ խօսեցաւ, այլ ընդ Աստուած՝ և ընդ գրոց իմաստութեան. և ամենևին մերձ հրոյ ոչ գնաց, և ճրագ և կամ լոյս ի խուցն իւր ոչ տարաւ, այլ միշտ ի տուէ գիրս վերծանէր և ի գիշերի խոկայր։

Իսկ անքննելին յամենայն էից սուրբ Հոգին Աստուած՝ որ քննէ զամենայն և զխորս Աստուծոյ, հայեցեալ յանդառնալի՛ յոյսն և յանձանձիր խնդրելն նորա, եհեղ առ նա զշնորհս իմաստութեան և գիտութեան, և պարգևեաց զխնդրելին, յաղագս սակս ժտե-

---

[1] Ուղ. չէ. ընդ նմին

լոյ նորա, և ըստ առակելոյ իւրոյ Նակցին Տեառն Յիսուսի։

Քանզի գիտութեան ամենայն արտաքին գրոց անտարակոյս ի վերայ հասեալ գիտող եղև. Սահմանացն, Պորփիւրին, Ստորոգութեան, Պերիարմենիասին, Աշխարհացն, Առաքինութեան, Վերլուծականին։

Այլ և զամենայն ազգաց տոմարն՝ որոց պատճէն գրեալ կայ ի միջի մերում, քաջ և անտարակոյս եհաս ամենայնի, գիտելով զսկիզբն և զպատճառն և զամենայն հետևմունս նոցա։ Այլ և քերականութեան գիտութեան եղև տեղեակ և գիտող առաւել քան որք էին ի ժամանակին։

Արդ՝ ոչ թէ այս միայն է շնորհք և գիտութիւն նորա՝ զոր պատմեմք, քանզի յաստուածաշունչ գրոց, և ի բանից վարդապետաց, կարի յոլով բան ի բերան առեալ էր որ հանապազ քաղէր։ Այլ զայս արտաքին գրեանս յայն սակս յիշեմ և շնորհակալ լինիմ նմա, զի զայսպիսի այլաշաւիղ, և այլատեսակ, և այլանուն, և անընտել բանս, առանց վարժողի և թարց ուրուք ուսուցանողի՝ իւրովի եգիտ զամենայն իսկզբանէ մինչև ցկատարածն։

Եւ ի կատարել մարմնոյ հասակին քան զոր առաւել կատարեալ էր իմաստութեան և հոգւոյ հասակն, կամօք իւրովք վարդապետն Ներսէս և վկայութեամբ ամենայն եղբարց անապատին, յառաջ կոչեաց զնա ի բարձրագոյն տեղի և ի պատիւ ըստ հրամանի Տեառն, թէ բարեկամ ի վեր մատիր, և շնորհեաց նմա զգաւազան վարդապետութեան, որ յարաժամ քարոզութեամբ աղբերաբար իմաստութեան ջրով մխիթարեալ զովացուցանէր զլսողսն։

Եւ յաւուրս ժամանակին այնմիկ,[1] Մովսէս վար-

---

1 Օրի. այնորիկ.

դապետն՝ որ եղև կաթուղիկոս Էջմիածնի, այն ինչ նոր սկսեալ էր նորոգութիւն սուրբ Աթոռոյն Էջմիածնի և շինութիւն պալատին, և համբաւ նորոգութեան սրբոյ Աթոռոյն Էջմիածնի,[1] և Մովսէս վարդապետի կաթուղիկոսութեանն հրատարակեալ էր ընդ ամենայն աշխարհ, առ որ ամենեքեան տենչացեալ գային ի տեսութիւն նոցին. այսու աղագաւ Մելքիսէթ վարդապետ ելեալ ի Լմայ անապատէն և եկեալ ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին. և երկրպագեաց Քրիստոսակոխ սրբոյ տեղւոյն և տաճարին, և հանդիպեցաւ տեսութեան Մովսէս կաթուղիկոսին, և նորին աշակերտացն, յորոց գալստենէ ուրախութիւն անպատում եղև ամենեցուն։

Եւ լինէր յորժամ Մելքիսէթ վարդապետն կանխէր ի դաս և ի քարոզ, իբրև գյորձանս ուղխից և հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային և բաղձային։

Եւ յաւուրսն յայնոսիկ Մովսէս կաթուղիկոսն զմեծ աշակերտն իւր զԿեսարացի Խաչատուր վարդապետն՝ եղբարբք ոմամբք առաքեաց ի Լեհաց աշխարհն յաղագս նուիրակութեան սուրբ Էջմիածնի. և վասն զի ոչ ընդդիմակայ ախոյեանի պատահեալք էին եղբարքն՝ որք ընդ Խաչատուր վարդապետին, վասն որոյ ի միտս իւրեանց կարծէին զինքեանս գիտնականս և կարողս ոմանս գոլ։ Եւ անդ յԻլով քաղաքի՝ յազգէն Փռանկաց պատրիկք ոմանք եկին առ աշակերտսն Մովսիսի վասն հակաճառութեան, և հարցին նոքա ցմերսն նախ ի քերական արհեստէն, և ասացին՝ վ ա ր ե մ բառս անո՞ւն է թէ բայ, և մերքն անհմուտ գոլով զայլ և այլ

---

[1] Ոչ. չէ. Էջմիածնի.

պատասխանիս տային. յայնժամ նոքա քամահելով և ծիծաղելով այպն արարեալ են զմերովքն. և ի բազում աւուրս վասն հակաճառութեան այսպէս են արարեալ. յայնժամ մերքն ի սիրտ և յոգի լոցեալք են. և իմացեալ թէ զայն, զոր գիտեն, ոչ է գիտութիւն, այլ պարտ է նոցա զարտաքին գիրքն կարդալ, և անդէն ի մտի եդեալ են հաստատութեամբ, թէ գնամք յէջմիածին առ Մելքիսէթ վարդապետն, զայլ ամենայն ինչ թողեալ՝ արտաքին գիրքն կարդամք ի նմանէ։ Եւ յորժամ հասին յէջմիածին առ ժամայն սկսան ի նոյն գործն ձեռն արկանել, և ոմանք ևս յեղբարց ի միաբանից էջմիածնի։ Ընդ նոսին յարեցան ի դաս առնուլ. և յորժամ միաբանեալ եղբարքն եկին առ Մելքիսէթ վարդապետն, և սկսան դաս առնուլ, նախ՝ զքերականութիւնն դաս առին, զկնի նորա[1] զՍահմանքն սկսան,[2] և ապա զՊորփիւրն, զՍտորոգութիւն, զՊերիարմենիասն, զԱշխարհացն, զԳովելին. զկնի սոցա ամենեցուն զամենայն ազգաց տոմարսն։

Եւ ի վրայ այսմ ամենայնի, զոր դաս տայր Մելքիսէթ վարդապետն աշակերտեալ եղբարցն, յայնժամ[5] մեծաւ ցնծութեամբ և բերկրեալ հոգւով համբարձեալ զձեռս իւր յերկինս սկսաւ գոհանալ զԱստուծոյ՝ և փառաւորէր և շնորհս խոստովանէր զՏեառնէ, և ասէր աշակերտեալ եղբարցն։ Ոչ այլ ինչ խոկումն կամ մըտածութիւն գոյր ի սիրտս իմ, բայց միայն վասն իմաստութեանս այսմիկ[4] զոր բազում և անթուելի չարակրութեամբ հազիւ թէ[5] գտի, և այն ևս շնորհելովն Տեառն, երկնչէի թէ առանց ումեք ուսուցանելոյ մե-

1 Ոսկ. չէ. զքերականութիւնն . . . նորա։ 2 Ա.–եր. երէց. չէ. սկսան։ 5 Ոսկ. չէ. յայնժամ։ 4 Նոյն. այսորիկ։ 5 Նոյն. չէ. թէ։

ռանէի, և այս պանծալի և չքնաղ գիտութիւնս ընդ իս ի հող մտեալ ամփոփիւր. բայց արդ՝ որովհետև դաս տուացի ձեզ, և զընկալեալն ի Տեառնէ զարծաթ բանին արկի ի սեղանաւորս, այսուհետև փոխանակ տրտմութեան՝ ունիմ մխիթարութիւն, զի թէպէտ ես մեռանիմ՝, այլ սերմանեալն առ ձեզ բան Տեառն մնայ յաշխարհի. և զոր ինչ ես յամս հնգետասան, և այլ աւելի, մեծաւ տաժանմամբ հազիւ թէ[1] կարացի գտանել, արդ՝ հեշտ և դիւրին յամիսս ութ ձեզ ընձեռեցի։ Բայց խնդրեմ ի ձէնջ եղբարք իմ սիրեցեալք ի Տէր, որպէս պատուիրեցին մեզ նախնի վարդապետքն մեր կտակ արարեալ և հարկ եդեալ ի վերայ մեր, նոցին նման և ես այսօր ձեզ պատուիրեմ, և զնոյն հարկ դնեմ ի վերայ ձեր, զի մի՛ թուլանայցէք՝ և մի տայցէք հանգիստ աչաց կամ ննջ արտևանաց, այլ բուռն առեալ զշաւիղս իմաստութեանս այսմիկ, և յաւուրս կենաց ձերոց անդուլ և անդադար աշխատեցէք ի վերայ սորին մինչև ցօր վախճանի ձերոյ։ Եւ ես յուսամ ի սուրբ Հոգին Աստուած, յաննախանձ պարգևատուն, զի բազմապատիկ առաւելեալ արդիւնաւորեսցէ զձեզ շնորհօք քան զմեզ, և զոր ինչ պարգևեսցէ ձեզ, աննախանձաբար ուսուցէք այլոց խնդրողաց՝ ով ոք և իցէ։

Յետ այսորիկ անկաւ ի մահիճս հիւանդութեան Մելքիսէթ վարդապետս, քանզի վասն առաջին վըշտամբեր ճգնութեանցն, զոր ի Լմայ անապատին դիմակայեալ տևեալ էր ցրտոյ և սառնամանեաց ձմերայնոյ. ցուրտ քամի ունակացեալ էր ի մարմնոջ նորա, յորմէ պատճառէ ստէպ ստէպ հիւանդանայր. յայն սակս հաճեցուցեալ եղբարքն զՄելքիսէթ վարդապետն, և բերին ի վերայ նորա բժիշկ, զի թերևս բժշկական դեղօք փա-

[1] Նոյն. չէ+. թէ.

րառեսցէ զցուրտն ի նմանէ. իսկ բժշկին անհմուտ զօլով՝ յոլովագոյն ի գործ էարկ զջերմ դեղն ի մարմին նորա, յորմէ պատճառէ չորացեալ խշկեցան ամենայն մասունք ներսին փորոտեաց նորա. քանզի ուժգին ջերմութիւն դեղոյն այրեաց զմասունս ներքին անդամոց նորա, զսիրտ, զլեարդ, և զթոքս, և զայլ մասունս, որով հիւծեալ մաշեցան ամենայն միսք անդամոցն, և այնու հիւանդութեամբ վճարեաց զկեանս զայս, և գնաց առ վերին իմաստութիւնն՝ ի Տէրն Քրիստոս։

Եւ եղև վախճան բազմաշխատ վարդապետիս Մելքիսեթի յԵրևան քաղաքի, ի վանս դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի, և տարեալ գնա ի հանգիստ հասարակաց՝ ի բլուրն, զոր անուանեն Կոզեռ. զի վասն գերեզմանի Կոզեռ վարդապետին, որ անդ է՝ այնպէս կոչեն զբլուրն, և անդ մերձ գերեզմանի Կոզեռ վարդապետին պատրաստեցին հանգիստ, և անդ հանգուցին զպատուական և զսրբասնունդ նշխարս մարմնոյ նորա, և գրեցին զանունն ի վերայ տապանին. և եղև վախճան սորին ի ՌՁ. թուականիս մերում։ Եւ ի սկիզբն ճառիս զոր ի կարգս վարդապետացն յիշեցաք զՊաւառացի Բարսեղ վարդապետն, և սորին աշակերտ Մոկացի բեղլու-Ներսէսն, և սորին աշակերտ Երևանցի Մելքիսէթն ի Վժան գեղջէ. այն Մելքիսէթն այս է՝ զորոյ զպատմութիւնն ճառեցաք. որոյ յիշատակն [1] օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն։

Իսկ այնք եղբարք՝ որք միաբանեցան և դաս առին զարտաքինն ի Մելքիսէթ վարդապետէն, թէպէտ և ամենայն ոք ջանաց և աշխատեցաւ և կարդաց ըստ իւրում կարի, բայց մի ոմն ի նոցանէ Սիմէօն անուամբ աբեղայ, նորոգ երիտասարդ, որ էր ազգաւ Ջուղայեցի,

---

1 Ոսկ. չէ. որոյ յիշատակն . . . ողորմեսցի ամէն.

որք այժմ բնակեալ են յԱսպահան քաղաքի. այս Սիմէօնս յայժ առաւելացոյց: Վասն զի այն զոր կանխաւ պատմեցաք, թէ աշակերտքն Մովսէս կաթուղիկոսի գնացեալ յԻլով քաղաք պատահեցան հակաճառութեան Փըռանկաց, ընդ որս էր և այս տէր Սիմէօնս. որոյ վասն և այժմ ի ժամանակս առնլոյ դասին կարի յօժարութեամբ և ջերմեռանդ սրտիւ և պասքատոչոր կարօտիւ առնոյր զդասն՝ և յարաժամ կարդայր: Իբրև վերջ եղև դասին՝ ելեալ տէր Սիմէօնս յէջմիածնէ գնաց յԱսպահան քաղաք. քանզի տէր Սիմէօնիս վարդապետն, որ էր Կեսարացի Խաչատուր վարդապետն, որ յոլով հարանց վարք և ժամագիրք տպագրեաց, այս Խաչատուր վարդապետս, ի Մովսէս կաթուղիկոսէն առաջնորդ կարգեալ էր Ջուղայեցւոց ժողովրդեանն, որք յԱսպահան քաղաքին էին: Յետ աւարտման դասին էառ զտէր Սիմէօնն և գնաց յԱսպահան քաղաք ի վանս իւր՝ զոր ի մէջ Ջուղայեցւոցն շինեալ՝ և Խաչատուր վարդապետս զամենայն աշակերտս իւր ի մարմնական գործոց յապահով պահէր, վասն որոյ և աշակերտքն միշտ և հանապազ ի կարդալ և յընթեռնուլ կային: Եւ մանաւանդ ի վերայ տէր Սիմէօնիս առաւել գութ և խնամ ունէր, որոյ խնամարկութեամբն տէր Սիմէօնս կարի առաւել աճեցոյց զուսումն իւր, զի զարտաքինն՝ զոր դաս էր առեալ՝ յառաջ եբեր և սկսաւ կարդալ կարգաւ, և մտախոհ լինէր զցայգ և զցերեկ անդուլ և անդադար տըքնութեամբ, ոչ տալով հանգիստ աչաց, և ոչ նինջ արտեւանաց: Այլ և ինքն տէր Սիմէօնս ի բնէ ունէր միտս սուր և ծննդական; և այս արտաքին իմաստութեանս կարդալն ևս պատահեցաւ նմա ի տիս երիտասարդական հասակին՝ որ առնու և պահէ և աճեցնէ.[1] և ջան, և

---

[1] Ձեռ. աճեցուցանէ.

երկն, եւ վաստակն անչափ էր, զոր կրէր յընթեռնուլն, զի բերանն յընթերցմանէ, եւ միտքն ի խոկմանէ ոչ կայր պարապ ամենեւին, ի տան, ի ժամատեղ եւ ի դուրս՝ ուր եւ լինէր։

Եւ զամս երիս ի յընթերցումն եւ ի խոկումն կապեալ ունէր զինքն բազում ջանիւ եւ յօժարութեամբ, այլ եւ մեծաւ պաղատանօք եւ արտասուօք խնդրէր ի Հեշտալուր Տեառնէ, զի արժանի արասցէ զինքն այնպիսւոյ չքնաղ եւ պանծալի եւ գերազրական իմաստութեան. զի իբր զմոլի իբն առայն իմաստութիւն բեւեռեալ ունէր զտարփումն ցանկական մասին։

Եւ ի բազմաժամանակեայ եւ ի մշտաջան աշխատութենէն, յաւելաւ տեսական իմաստութիւն ի միտս սորա շնորհօքն սրբոյ Հոգւոյն Աստուծոյ, որ հանապազ զարդարէ զեկեղեցիս Քրիստոսի ըստ բազմազան շնորհաց իւրոց. որպէս ուսուցանէ նորին առաքեալն սուրբն Պօղոս, թէ ումեմն ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում՝ բան գիտութեան, եւլն։ Արդ Նոյն սուրբ Հոգին պարգեւեաց սմա բան վճիտ եւ գերապանծ եւ շնորհալի ի քարոզութիւնս, ի հակաճառութիւնս, ի մեկնութիւնս Աստուածաշունչ գրոց, կամ արտաքին գրոց, ի բնական քննութիւնս, եւ ի փիլիսոփայական արուեստս, անհամեմատ եւ գեր ի վերոյ եղեւ քան զամենայն վարդապետս ժամանակիս այսր, որ ամենեքեան խոնարհեալ առ նա ուսանէին ի նմանէ դասիւ եւ այլ կերպիւ։ Եւ վասն զի ի մայրաքաղաքն յԱսպահան գոլով սոցա, որ բուն մայրաքաղաքն է Պարսից, յորմէ ազգէ արք փիլիսոփայք գային եւ հարցաքննութիւն, եւ հակաճառութիւն առնէին. եւ տէր Սիմէօնս զամենայն եկողս հիացուցանէր փիլիսոփայական արուեստիւ եւ բնական քննութեամբ՝ տալով նոցա պատասխանի։ Եւ ամենայն նախապատիւ արանց Ջուղայեցւոց տեսանելով զարժանաւո-

րութիւն սորա՝ վկայեցին առաջի Խաչատուր վարդապետին, այլ և իւր իսկ Խաչատուր վարդապետին տեսանելով զնա ի շնորհս աստուածայինս, գովեաց զնա, յես գերագոյն պատիւ և յաստիճան, և ետ սմա զաւազան վարդապետութեան, զոր [1] յորդառատ բանիւ քարոզութեանն բերկրեալ զուարճացուցանէր զմիտս լսողացն, և ոչ ունէր կարիս քարոզ գրքի կամ հարցնատետի, այլ առ ձեռն պատրաստ զինչ և պատշաճ պիտոյանայր ժամուն, բնաբան ինչ առեալ յԱստուածաշունչ գրոց. գեղեցիկ և կարգաւոր և պատշաճաւոր շարագրութեամբ յօրինեալ յարդարէր զբանն, ի փառս Աստուծոյ Հոգւոյն տուողին շնորհաց: (Եւ [2] քանզի յար և հանապազ զխոկումն մտացն ունէր ի գիտութիւնս և յիմաստութիւնս ի խցի և յարտաքոյ և ի ժամատեղ, և ասէր ինքն Սիմէոն վարդապետս, թէ յաւուր միում կայի յեկեղեցին կանգուն, և բանս ինչ գրոց խոկայի, և քուն ծանրացեալ ի վերայ իմ կանգուն կալով ննջէի և ոչ գիտէի, տեսի թէ ի վերայ բեմին կայր կին մի որպէս թագուհի և շքեղ փառօք. և ունէր ի ձեռին իւրում գիրք մի, որ թուէր ինձ թէ Աստուածաշունչ իցէ. ձգեաց կինն զգիրքն ի գիրկս իմ և ասաց. առ զդա ի քեզ, ընդ նմին և ազդեցաւ ինձ թէ այն կինն Աստուածածինն է: Եւ այնուհետև յաղագս որոց բանից և խոկայի զիւրաւ գտանիւր խնդրելին. և համարիմ ես, թե հրամայեաց ինձ սուրբ Աստուածածինն. այսուհետև զԱստուածաշունչ գիրքն առնուլ ի ձեռս և ի նա խոկալ. և սովահանդերձ ասէր ինքն Սիմէոն վարդապետս, թէ ոչ է այս իմաստութիւնս յինէն, այլ ի սուրբ Աստուածածնէն, որ ետ ինձ զայս:) Եւ մինչև էր յԱսպահան քաղաքին, ե-

---

1 Ուղղ. զի. 2 Նոյն օրինակ. Եւ քանզի . . . . . . ցմերձ որ ընդ ծոխաթեռվ:

րեք անգամ զարտաքինն և զքերականութիւնն դաս ասաց ընկերաց իւրոց աշակերտակցացն (Եւ [1] յաղագս անկիրթ և անհմուտ մանկանց և բռնամիտ արանց, արար նոր քերականութիւն դիւրաւ հասկանալի, իբրև զներածութիւն հնոյ քերականութեանն, որ ի թարգմանչացն թարգմանեալ է. զի սովաւ դիւրաւ հասցին հնոյն գիտութեան, որոյ օրինակն բազմացաւ, քանզի բազումք գաղափարեցին։

Եւ ապա ելեալ յԱսպահանայ եկն ի գերադրական և ի բարձրագահ և Քրիստոսաբնակ սուրբ Աթոռն Էջմիածին, յորոյ գալստենէ ուրախութիւն անպատում եղև անդ եղեալ աշակերտացն, և առ ժամայն պատրաստեցան ի դաս առնուլ, ոչ միայն Էջմիածնի միաբանքն, այլ և բոլորի վանօրէից գլոց աշակերտեալ աբեղայքն. և միահամուռ ժողովեցան անձինք երեսուն, և սկսան առնուլ դաս։ Նախ՝ սկիզբն արարին ի քերականութենէն, և ապա զարտաքին գիտանքն բովանդակ մինչև ցվերջն)․ զկնի նորին զԹուղթն Պօղոսի՝ զԵբրայեցւոց գլուխն. և ամենեքեան օգտեալք և լուսաւորեալք յիմաստից սորա, որք էին բաւական ինքեանց և այլոց։

Եւ Երևանայ քաղաքի քահանայքն և ժողովուրդքն, յոյժ հաճեալ ի բարս և ի բնութիւնս սորա, զի յոյժ բարեբարոյ և հեզահոգի և անընչասէր բարս ունէր, եկին առ Փիլիպպոս կաթուղիկոսն և մեծաւ թախանձանօք խնդրէին զնա իւրեանց առաջնորդ կարգել։ Եւ նա ըստ խնդրոյ նոցա արար այնպէս, առաքեաց ի վանս նոցա, որ է ի գաւառին Գառնւոյ, անուամբ Ամենափրկչին, որ մականուամբ ասեն Հաւուց թառ։

Եւ յետ ամաց ինչ արար գիրք մի և անուանեաց

---

[1] [illegible] Եւ յաղագս անկիրթ . . . ցվերջ [illegible]

տրամաբանութիւն, և է այս գիրքս իբր ներածութիւն արտաքին գրոցն, քանզի շարադրեալ բառքն՝ և բանքն՝ և միտքն՝ և ոճն՝ արտաքին գրոցն դժուարաւ ըմբռնի մտաց մարդկան և բազում աշխատութեան պէտք են։ Իսկ այս, որ Սիմէոն վարդապետս արար, իբր ներածութիւն արտաքին գրոցն ամենեցուն, և որ ինչ այլ ևս՝ որ առ սոսա վերաբերին։ Զի թէ գայցէ ժամանակ յապագայս, որ գիտութիւն արտաքին գրոց սպառեսցի յազգէս Հայոց, զոր օրինակ յանցեալ ժամանակս և ի մերս՝ էր լեալ, որպէս պատմեցաք, այս Սիմէոն վարդապետիս արարեալն՝ զոր անուանեաց տրամաբանութիւն, առանց ուսուցանողի՝ եթէ ոք կարդայ կարէ դիւրաւ հասկանալ և ի վերայ հասանիլ, և ապա սովաւ յարտաքին գիրքն ձեռնարկել։

Այլ և զգիրքն Պրոկղի իմաստասիրի, զոր ի Վրաց լեզուէն թարգմանեալ է ի մեր լեզուս, այլ ոմն նախագոյն եղեալ Սիմէոն անուամբ քահանայ, և այս Սիմէոն վարդապետս զայն գիրքն ևս ուղղեաց։ Վասն զի առաջին թարգմանութիւնն աշխատութիւնս բազումս տայր կարդացողին, զի հոլովք անուանցն և խոնարհմունք բայիցն, և շարադրութիւնք բառիցն, ոչ էր ըստ պատշաճին, և ըստ քերական արհեստին, յաղագս որոյ և միտք բանին ընդ նմին այլայլիւր. այլ ևս յոլով տեղիս կրկնաբանութիւնք կային միոյ բանի, և ընթերցողն բազում աշխատութիւնս կրէր և օգուտս սակաւ գտանէր։ Իսկ սա ըստ քերական արհեստին զամենայն ուղղեալ յարդարեաց, որ դիւրաւ իմանի կարդացողին, և բազում օգտութիւն շնորհէ մտաց մարդոյ։

Յետ այսոցիկ ձեռն էարկ հոգեաց գրքին, զի և զնա ևս ուղղեալ դիւրացուսցէ, և մինչդեռ նոր սկսեալ էր զայն՝ քարոզութեան աղագաւ եղեալ գնաց յաշխարհն Յունաց, և եհաս ի քաղաքն Եւդոկեայ՝ որ այժմ ասի

Թօխաթ. և անդէն տկարացաւ ըստ[1] հիւծական բնութեանս մարդկան, և այնու հիւանդութեամբն վախճանեցաւ՝ և անդէն թաղեցաւ. (և[2] պակասիլն նորա յազգէս Հայոց՝ եղև սուգ անմխիթար և տրտմութիւն անփարատելի ամենայն Հայոց, և մանաւանդ ընկերաց և աշակերտելոց նորա. զոր այժմ հոգւոց հանելով յիշեն և խնդրեն և ոչ գտանեն):

Եւ եղև վախճան սորա ի մերում թուականիս ՌՃՁ. ի Փետրվար ամսոյ քսան և եօթն, յաղուհացից պահոցն. որոյ[3] յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա Տէր մեզ ողորմեսցի. ամէն:

Զկնի սորին պատմեսցուք զայլոյ ումեմն զմաքրակենցաղ զառնն զարդիւնաւորութիւնն, որոյ անունն Ստեփաննոս վարդապետ յորջորջիւր:

Որ էր ինքն ի մայրաքաղաքէն Իլօվայ և յազգէն Հայոց, յազատ և ի փարթամ տանէ, բարեպաշտ ծնողաց զաւակ, որ ի տիս տղայութեան իւրոյ վարժեցաւ ի դպրատունս Իլօվացւոց՝ գրով և լեզուաւն Լատինացւոց, և ուսաւ զարուեստ քերականութեան[4] և զարտաքին գիրս փիլիսոփայից:

Եւ ի ժամանակին՝ յորում Նիկօլ եպիսկոպոսն Իլօվայ նեղէր և վտանգէր զհայազգուն ժողովուրդսն՝ որ[5] յԻլօվ էին, ծնողք Ստեփաննոսին՝ վասն բարեպաշտութեան և վասն ուղղափառութեան, հանեալ զսա յԻլօվայ՝ առաքեցին ի սուրբ Աթոռն Էջմիածին ի ժամանակս Փիլիպպոս կաթուղիկոսին: Եւ յորժամ եհաս Ստե-

---

1 Ուղ. ձեռ. ըստ հիւծական բնութեանս մարդկան և այնու հիւանդութեամբն. 2 Նոյն. ... և պակասիլն նորա · · · · [illegible] 3 Նոյն. ըէ+. որոյ յիշատակն · · · ողորմեսցի ամէն. 4 Նոյն. զճարտասանական. 5 Նոյն. ըէ+. որ յԻլօվ էին.

փաննոս յէջմիածին, ուսաւ զլեզու և զգիր Հայոց, և ի բերան էառ զսաղմոս և զշարական, և զայլ եկեղեցական ուսմունս:

Այնուհետև սկսաւ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս և զերկոտասան վարդապետաց, և զփիլիսոփայից. և վասն զի յառաջմէ գիտէր զլեզու և զգիրս Լատինացւոց, յետոյ ուսաւ և զմերս, և զերկոսեանն առ միմեանս համեմատելով խոկայր ի նոյնն և մտավարժէր, վասն որոյ առաւելաւ քան զայլ ընկերս իւր. այլ և էր մտօքն սուր և ծննդական, առնող և պահող և միշտ ընթերցող. և վարուքն մաքրակենցաղ՝ և պարկեշտ: Զորոյ զուսումն և զմաքրութիւն վարուց տեսանելով ամենայն վարդապետաց՝ վկայեցին առաջի Փիլիպպոս կաթուղիկոսին. այլ և ինքեան իսկ տեառն Փիլիպպոսի տեսանելով զարժանաւորութիւն նորա, կոչեաց յես զերադրական ի փառս, զի յետ օրհնելոյ զնա կուսակրօն քահանայ, ետ նմա իշխանութիւն վարդապետական, ասելով [1] բարեկամ ի վեր մատիր՝ ըստ տէրունական առակին:

Եւ ինքն Ստեփաննոս վարդապետ օր ըստ օրէ վարժէր և կրթէր զանձն ուսմամբ, և պարկեշտ վարուք. վասն որոյ ընկալաւ զշնորհս ի Հոգւոյն սրբոյ, և ի նորին պարգևացն՝ Թարգմանեաց չորս գիրք ի Լատին գրոյ և ի լեզուէ՝ ի Հայ գիր և ի լեզու: Որոց մինն է Յօսէպոս պատմագիրքն, բայց ոչ զբովանդակն, այլ զայն միայն, զոր ի վերայ Երուսաղէմ քաղաքին, և Հրէից ազգին պատերազմունք յարեան, որ է վեց հատոր: Եւ երկրորդ՝ Դիոնէսիոսի Արիսպագացւոյ գիրքն. զի թէպէտ առաջին Թարգմանեալն Ստեփաննոսի Սիւնեցւոյն գոյր ի մէջ մեր, այն համառօտախօս և դժուարահասկանալի

---

1 Օձ. Ձե. ասելով բարեկամ ի վեր մատիր՝ ըստ տէրունական առակին.

էր. իսկ սորայս Թարգմանեալն այլուր [1] նոյն ինքն է. բայց դիւրահասկանալի է՝ որ ոչինչ մնայ անհաս յընթերցողէն, զի մեկնութիւն յաճախ է և դիւրահաս։ Եւ երրորդ գիրք մի է [2]. որոյ անունն է գիրք պատճառաց, այլ և կոչեն զնա ի վեր քան զբնականս, որ է ինքն [3] աստուածաբանութեան գիրք, զի աստուածաբանութիւն է ամենայն բանք նորա, և է ինքն պրակք, երեսուն և վեց։ Չորրորդն գիրք՝ բանք առակաւորք, որ զվարուց և զկենցաղավարութենէ մարդկան պատմէ, իբր թէ օրինակ ամենայն մարդկան, որոյ մակագրութիւնն էր Լատին լեզուաւն, հայելի վարուց. և յորժամ Թարգմանեցին ի Հայոց լեզու, այլուր զնոյն մակագրութիւնն մակագրեցին հայելի վարուց. և յոյժ համեղ և անոյշ են բանք այս գրոյս։

Արդ՝ մինչև ցարդ, այսքան արդիւնս արար սա յեկեղեցիս Հայոց. (խնդրեսցուք [4] ի բարեպարգև Տեառնէ Աստուծոյ, զի ընդ երկար կենօք պահեսցէ զսա Թարց իմէք վտանգի. զի այլ ևս արդիւնս յաւելցէ յազգս և յեկեղեցիս Հայոց։

Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլովք ևս շնորհալից արամբք. Թէպէտ և են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք և յազգէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի, որոց անուանքն են վարպետ Մինաս և վարպետ Յակոբջան, և են սոքա երկոքեանս ի ցեղէն Ջուղայեցւոց։

Այս վարպետ Մինաս ստացաւ իւր արուեստ պատկերահանութեան և ծաղկարարութեան. քանզի ի տիս տղայութեան իւրոյ ի պատճառէ իմեքէ եղև սմին գնալ

---

1 Նոյն. չէ+. այլուր նոյն ինքն է։ 2 Նոյն. չէ+. մի է։ — 3 Ոսկ. չէ+. ինքն։ 4 Նոյն. առաջ պակաս. ցվերջ գլխոյս։

ի քաղաքն Բէրիոյ, որ է Հալապ. և անդ եգիտ զայր ոմն պատկերահան վարպետ, որ էր ազգաւ Ֆռանկ, աշակերտեցաւ Ֆռանկ վարպետին և ուսաւ ի նմանէ. և յետ ուսանելոյն ինքնագլուխ եղև. և եկեալ ի քաղաքն Սպահան բնակեցաւ ի տան իւրում, որ էր ի մէջ Ջուղայեցւոց, և գործէր զարուեստն իւր զպատկերահանութեան: Եւ վասն կարի առաւել վայելչակերտ գեղեցկատիպ չքնաղատես յօրինուածոյ արուեստին, մեծամեծքն Ջուղայեցւոց տանէին ի ծաղկել և ի պատկերագրել գյարկս ապարանից և տանց իւրեանց. այսպէս և խօջայ Նազարի որդի խօջայ Սարֆրազն տարեալ ի տուն իւր առ ի զարդարել զապարանս իւր ծաղկօք և պատկերօք: Եւ մինչ տակաւին ոչ էր աւարտեալ զտունն ի ծաղկելոյն, պատահեցաւ զի Թագաւորն Պարսից Շահսէֆի եկն ի տուն խօջայ Սարֆրազին, որոյ նստելով իբրև զննեալ հայէր ի ծաղիկս և ի պատկերս՝ զոր նկարեալ կայր տեսանէր զի չքնաղ և գեղապանծ և յոյժ նմանակի կերպագրեալք են ամենեքեան. սկսաւ հարցանել Թագաւորն ի խօջայ Սարֆրազէն վասն նկարիչ վարպետին, թէ ուստի իցէ, և նա ասաց ի մերմէ ժողովրդենէս և ի Հայոց ազգէս, և ահաւանիկ այժմ յայն իմն տան ի գործի կայ, զոր և հրամայեաց Թագաւորն կոչել զնա. և իբրև եկն՝ հարցեալ Թագաւորն տեղեկացաւ ամենայն ուրախութեանցն: Եւ անդէն ի նմին խրախութեան՝ որ բազմեալ կային, հրամայեաց արքայ՝ Մինաս վարպետին՝ և եցոյց ի նախարարաց իւրոց զոմն՝ որոյ անունն էր Չրաղ խան. որոյ կերպարանքն էին յոյժ անգեղ և ըժպատեհ, և ասաց. զպատկերս սորա այժմ աստէն նստեալ նկարեա. վասն իւրեանց զբօսանաց ծաղու և խրախութեան: Իսկ Չրաղ խան իբրև ետես թէ առ ի կատակս առնելոյ նկարեն զպատկերն իւր. վասն որոյ սկսաւ թէքմէքել զաչս և զբերանն և այլայլել

զկերպարանն և շրջմրջել կողմէ ի կողմն, զի թերևս նկարեալ պատկերն ոչ իցէ ամենևին համանման։ Բայց Մինաս վարպետն ըստ հրամանաց թագաւորին առժամայն ի նմին տեղւոջ ի մէջ խրախութեանն նկարեաց զասացելոյ զառնն զպատկերն, որ այնքան յար և նման էր համեմատութեամբ, որ ընդ թագաւորին ամենեքեան ի հանդիսին եղեալքն, մեծաւ հիացմամբ զարմացեալք եղեն վասն առաւել նմանութեանն, և փառս վեր առաքէին Աստուծոյ՝ տուողին այնպիսւոյ շնորհաց մարդկան։ Եւ յայնմ օրէ և առ յապայ թագաւորն և Նախարարքն իւր ոչ թողին զնա ի ձեռաց, այլ հանապազ ի տունս իւրեանց պահէին վասն նկարակերտութեան։

Եւ եղև զի թագաւորն Ռուսաց սիրոյ աղագաւ հրեշտակ խաղաղութեան առաքեաց առ Շահսէֆի Պարսից թագաւորին, և ընդ բազմազան աղերսանացն կայր հաւք մի բազայ, զոր ազգն Պարսից իւրեանց բառիւն շունղար ասեն. այլ և կայր ոմն այր, որ և նա էր յազգէն և աշխարհէն Ռուսաց, որ վասն սպասաւորութեան հաւքին եկեալ էր. այս հաւքս և սորին սպասաւոր այրն յոյժ առաւել հաճելի և ախորժ թուեցաւ կամաց Շահսէֆի թագաւորին. յաղագս որոյ թագաւորն հրամայեաց Նաղաշ Մահմատ բէկին, թէ զկերպարանս սոցա երկոցունցն նկարեա՛ զբազային և զիւր պահող սպասաւորին, որպէս և են որ տեսանես։ Եւ այս Նաղաշ բէկս էր ազգաւ Պարսիկ, և գլուխ ամենայն պատկերահան և նկարիչ արուեստաւորաց, և անուանի յամենայն ազգս Պարսից, որ միայն ի տան թագաւորին և մեծամեծ իշխանացն ի գործի կայր, և այս Մահմատ բէկս ի բազում աւուրս նկարեաց, բայց ոչ ըստ որակին և անդամոցն համեմատ և նման։ Եւ ապա հրամայեաց արքայ՝ Մինաս վարպետին նկարել զկերպարանս բազային և զնորին սպասաւորին. և նա ըստ աստուածատուր շնորհացն ի

սակաւ աւուրս նկարեաց զկերպարանս նոցա, և այնքան համեմատ՝ որ Թագաւորն ինքն և ամենայն նախարարքն իւր անպատմելի հիացմամբ սքանչացեալք՝ զարմացեալք կային ի վերայ նորա. և յաղագս այնմ որ կարի առաւել հաւանեցաւ Թագաւորն հրամայեաց պարգևս տալ վարպետ Մինասին տասն և երկու Թուման դրամ ինամ և յոտից մինչև ցգլուխն խլղաթ. այլ և գրել ի կարգս զինուորաց Թագաւորին, զի ամ յամէ տացեն նմա օլոֆայ (ռոճիկ) յարքունական գանձէ, որպէս և այլոց զինուորաց Թագաւորին. և նա վասն Քրիստոսական հաւատոց՝ հրաժարեալ էր ի զինուորութեան անուանէն և ի նորին յարդեանցն և ի մերձակայութենէ այլազգեացն, և եկեալ ի տան իւրում գործէր զարուեստն իւր։

Եւ վասն առաւել չքնաղ և նմանագիր պատկերահանութեանն՝ յոլովք ոմանք աշակերտեալ ուսան ի նմանէ. բայց ոչ ոք հաւասարեաց նմա, զի բնական ունէր շնորհս և տեսութիւն մտաց, որ յառաջագոյն զորպէսն և զհանգամանս, զորակս, և զքանակս կերպարանաց ամենայն իրաց, կերպացուցեալ ճշգրդապէս ի միտս իւր և ապա նկարէր։ Եթէ բուսոց և տնկոց, եթէ անասնոց և գազանաց, և թէ Թռչնոց և մարդոց։ Եւ թէ մարդոց՝ որոց ազգաց և իցէ, թէ Պարսից, թէ Հայոց, թէ Եբրայեցւոց, թէ Հնդկաց, թէ Փռանկաց, թէ Ռուսաց, թէ Վրաց, քանզի որում ազգի կերպարան, որ նկարէր, ամենևին յար և նման նկարէր. սոյնպէս և ի ներգործութիւնս և ի կիրս մարդկան, յոր ներգործութիւնս և ի կիրս լինէր մարդն. թէ ի ծիծաղել, թէ ի բարկանալ, թէ ի տրտմութեան, թէ յարբեցութեան, թէ յօրանջել, թէ ի խրախութեան, թէ ի մարտ պատերազմի և թէ որ և իցէ կրիւք նկարէր զկերպարանս մարդոյ, որում ազգի և լինէր, ամենևին յար և նման նկարէր։ Այլ և զժամանակն կենաց մարդոյն նկատեալ մտօք իւ-

րովք, ըստ նմին և նկարէր զգեղն և զգոյնն, և զկերպարան հասակի մարդոյ նկարէր, ըստ իւրում տրոհութեան՝ որպէս տրոհեալ զանազանեն ի միմեանց, Փ. ամեանն, և Ի. ամեան, և Լ. ամեան. և Խ. ամեան. և յորում հասակի լինէր գաղափարն, այնմ հասակի յարմարեալ նմանեցուցանէր զնկարեալ պատկերն. եթէ ձիթով պատկեր, և թէ առանց ձիթոյ, ի քարտէսի, ի կտաւի, ի տախտակի, ի պղնձի, ի յորմն և այլ ինչ կերպիւ յոր և պիտոյանայր: Այլ և գրոց էր ծաղկող, զինչ և զիւք հանդիպէր՝ ոսկով և լաջվարդով ծաղկեալ զարդարէր, քանզի զամենայն մասնաւոր արհեստ, որ այսմ նկարակերտ արուեստիս հետևի, զամենայնն անթերի գիտէր:

Այլ և հմուտ էր բժշկական արուեստի, մարդկայնոց ներհակ կրից և հիւանդութեան և չորից տարերաց խառնուածոց, և դեղօրէից բնութեան և կազմելոյն. ևս առաւել սպեղանեաց կազմելոյ և զվէրս բժշկելոյ: Նւայլ ևս բազում և զանազան արուեստից հմուտ գոլով սորա. վասն որոյ յիշատակի արժանի համարեալ գրեցաք, զոր տէր Աստուած պահեսցէ հաստատուն հաւատով քրիստոնէութեան, և անփորձ կենօք իւրովք զաւակօքն ընդ երկայն աւուրս. ամէն:

ԳԼ. Լ.

Պատմութիւն վասն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի Աջոյն։

Որպէս աւանդութեամբ կայ կարգ և սահման ի մէջ ազգիս Հայոց, զի հայրապետ ազգին, որ է կաթուղիկոսն յերկիրս ամս միանգամ հանէ նուիրակ յԱթոռոյն, որ գնայ առ ամենայն ազգս Հայոց նուիրէ զմեռոնն և առնու զտուրս ողորմութեան ժողովրդեանն և բերէ ի սուրբ Աթոռն։ Այսպէս և մեծ [1] հայրապետն տէր Փիլիպպոս, որ էր կաթուղիկոս սուրբ Էջմիածնի՝ առաքեաց զմեր նուաստութիւնս, որ էաք ձեռնասուն աշակերտ նորին, ի գործ նուիրակութեան սուրբ Էջմիածնի յաշխարհն Յունաց, որ է ընդ իշխանութեամբ Օսմանցւոց։ Եւ եղև հասանել մեր ի քաղաքն Ամասիա, յորում ամի էր և թուականն մեր ՌՂԴ. պատահեցաւ անդ լինիլ և Սեբաստացի Ներսէս վարդապետին, որ յետոյ

---

1 Ռօկ. չէ+. մեծ.

եղև կաթուղիկոս Սսոյ։ Եւ որ ի բազում աւուրս ի կարգս զլուցատրութեան, յաւուր միում ասաց Ներսէս վարդապետն առ մեզ. յորժամ օրհնէք զմեռոն՝ զո՞ր սրբութիւն բերէք ի վերայ. և մեք ասացաք, զԱջն սըրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և զԱջն Թադէոսի սրբոյ առաքելոյն. և սուրբ նշանն, որ ի կենաց փայտէն, և զԳեղարդն, որ մխեցաւ ի կողն Տեառն. և նորա թողեալ զամենայն ասաց, վասն Լուսաւորչի Աջոյն. զայդ՝ որ Լուսաւորչի Աջ ասես, աջո՞յ Աջն է թէ ձախոյ. մեք ասացաք թէ աջոյ Աջն է. ասաց Ներսէս վարդապետն, ընակիչք կաթուղիկոսարանին Սսոյ ասեն՝ թէ ստուգիւ և հաւաստեաւ Աջն սուրբ Լուսաւորչին այն է, որ ի Սիս է, և բերեն վկայ ստուգութեան նորին զայն բանն՝ որ ի շարադրութիւնս հայրապետաց գրեալ է վասն Ստեփաննոսի հայրապետին և վասն Լուսաւորչի Աջոյն, որ գրեալ պատճէն այս է։ Տէր Ստեփաննոս ամս չորս՝ ի սորա աւուրս եղև անհնարին աղէտ, զի անօրէն գոռոզ սուլթանն Եգիպտոսի քանդեալ աւերեաց զաթոռ Լուսաւորչին սրբոյն Գրիգորի՝ զկլայն Հռոմկլան և ի սուր սուսերի մաշեաց զամենայն. և զմնացեալսն խաղացոյց ի գերութիւն, ընդ որս և զհայրապետն սուրբ, և անդ վախճանի։ Եւ զԱջ սուրբ Լուսաւորչին Գրիգորի անդ տարեալ. և յորժամ եմուտ ընդ ապարանս նոցա, պատժեաց զնոսա մահուամբ, որպէս ի ձեռն տապանակին զայլազգիսն, մինչ զի անհամար և անթիւ էին մեռեալքն, մինչև դարձուցին զԱջ ձեռն սուրբ Լուսաւորչին Գրիգորի յերկիրն Կիլիկիոյ առ բարեպաշտ թագաւորն Հեթում, և ապա դադարեաց ցասումն ի նոցանէ։ Արդ՝ նոքա այսու վկայութեամբս ասեն, թէ այն Աջն, որ ի Սիս էր, ստուգիւ այն է Աջն սրբոյ Լուսաւորչին, իսկ զայդ Աջդ, զոր արդ ունիք յէջմիածին. ո՞րպէս գիտէք թէ արդ Լուսաւորչի Աջն է. եթէ ունիք

մանտր ձկունք եղանեն, ընդ հովանեաւ պատերազմի սուրբ Նշանիս, և ամենամաքուր սուրբ Աստուածածնի կաթուղիկէիս, ի հայրապետութեան մեծ աթոռոյն՝ որ էր ի Սիս, խափանեցաւ. զի Աջն սուրբ Լուսաւորչին անտի գողացան, և յամս երկու ազգս Հայոց անտերունջ մնաց, ի դառն և ի չար ժամանակիս՝ յորում շարժեալ էր պիղծ Ջհանշահն, զի Թուականս Հայոց, ՊՂ. էր. որ այս ամենայն բանս եղև:

Գնացեալ յԱսպահան քաղաք ի մէջ Ջուղայեցւոց, գտաք Յայսմաւուրք մի՝ որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ: Եւ արդ՝ գրեցաւ Յայսմաւուրքս ի Թուականութեանս Հայոց մեծաց ՊՂ. ամին, ի յերկիրս Վասպուրական, ի քաղաքն Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս և այլ սրբոցս, ի հայրապետութեան մեծի Աթոռոյն Սսոյ՝ որ յայսմ ամի Լուսաւորչի Աջն գողացեալ տարան, և Աթոռն ունայն մնաց, ի դառն և ի չար ժամանակի, ի պարոնութեան Ջհանշահին, որ չարութեամբ խուռով լցեալ գնաց ի Վրրացտուն, և Վրացիքն զինչ քրիստոնեայք, որ կային ի Հայոց ազգէն, զամենեսեան բռնութեամբ ի Շամշուլտայ բերդն արգելեցին, և այլ ամենեքին նոցա ո՛չ օգնեցին. և չար Ջհանշէն չար զօրօքն խուռովք գնացեալ ի վերայ, և էառ զգղեակն Շամշուլտայ, և ինն հազար անձինք քրիստոնէից և այլ աւելի՝ հանդերձ քահանայիւք ի սուր սուսերի մաշեցին, և զկանայքն և զտղայքն գերեվարեցին. զորոց աղէտ տարակուսանացն ո՞վ կարէ պատմել կամ գրել, և [1] այս ամենայն վասն մեղաց գան ի վերայ աշխարհիս:

(Յետ [2] այսորիկ եկաք յԱսպահանայ, գնացաք ի Նո-

---

1 Ոսկ. չէ. և այս ամենայն . . . աշխարհիս. — 2 Նոյն. չէր Յետ այսորիկ եկաք . . . ցվերջ որ ընդ ձեռագրով:

մանր ձկունք ելանեն, ընդ հովանեաւ պատերազմի սուրբ նշանիս, և ամենամաքուր սուրբ Աստուածածնի կաթուղիկէիս, ի հայրապետութեան մեծ աթոռոյն՝ որ էր ի Սիս, խափանեցաւ. զի Աջն սուրբ Լուսաւորչին անտի գողացան, և յամս երկու ազգս Հայոց անտերունջ մնաց, ի դառն և ի չար ժամանակիս՝ յորում շարժեալ էր պիղծ Ջհանշահն, զի Թուականս Հայոց ՊՂ. էր. որ այս ամենայն բանս եղև։

Գնացեալ յԱսպահան քաղաք ի մէջ Ջուղայեցւոց, գտաք Յայսմաւուրք մի՝ որոյ յիշատակարանն էր այսպէս գրեալ։ Եւ արդ՝ գրեցաւ Յայսմաւուրքս ի Թուականութեանս Հայոց մեծաց ՊՂ. ամին, ի յերկիրս Վասպուրական, ի քաղաքն Վան կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս և այլ սրբոցս, ի հայրապետութեան մեծի Աթոռոյն Սսոյ՝ որ յայսմ ամի Լուսաւորչի Աջն գողացեալ տարան, և Աթոռն ունայն մնաց, ի դառն և ի չար ժամանակի, ի պարոնութեան Ջհանշահին, որ չարութեամբ ի սրով լցեալ գնաց ի Վրացտուն, և Վրացիքն զինչ քրիստոնեայք, որ կային ի Հայոց ազգէն, զամենեսեան բռնութեամբ ի Շամշուլտայ բերդն արգելեցին, և այլ ամենեւին նոցա ոչ օգնեցին. և չար Ջհանշէն չար զօրօքն ի սրովք գնացեալ ի վերայ, և էառ զգղեակն Շամշուլտայ, և ինն հազար անձինք քրիստոնէից և այլ աւելի՝ հանդերձ քահանայիւք ի սուր սուսերի մաշեցին, և զկանայքն և զտղայքն գերեվարեցին. զորոց աղէտ տարակուսանացն ո՞վ կարէ պատմել կամ գրել, և [1] այս ամենայն վասն մեղաց գան ի վերայ աշխարհիս։

(Յետ [2] այսորիկ ելաք յԱսպահանայ, գնացաք ի Նո-

---

[1] Ոսկ. չէ. և այս ամենայն . . . աշխարհիս. — [2] Նոյն. չէր Յետ այսորիկ ելաք . . . ցվերջ որ ընդ փակագծով.

րին գաւառն զոր Գանդիման կոչեն, ի գիւղն որ անուանի Վաստիկան, գտաք անդ Յայսմաւուրք մի՛ որոյ յիշատակարանն էր այսպէս, Աւարտեցաւ սուրբ գիրքս Յայսմաւուրացս յամի ՊՂԱ· Թուականութեանս Հայոց, ձեռամբ յոգնամեղ գրչի Կարապետ երիցու, ի խնդրոյ մահդեսի Մխիթարայ: Եւ գրեցաւ սուրբ գիրքս ի քաղաքս Վան, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, և սուրբ Ստեփաննոս Նախավկայի, և Սահակայ հայրապետի· ի կաթուղիկոսութեան տեառն Կիրակոսի, որ ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց, ի մայրաքաղաքն ի վաղարշապատ· որոց էր գլուխ մեծ րաբունապետն Թովմայ, և Յովհաննէս վարդապետն, և եդին զտէր Կիրակոսն յէջմիածին կաթուղիկոս ամենայն Հայոց· և նոր նորոգեցաւ աթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, ըստ տեսլեանն մեծին Ներսէսի հայրապետին և Սահակայ Պարթևին, և մերոյս առաջնորդի սուրբ ուխտին Վարագայ Յովհաննէս եպիսկոպոսին· ի Թագաւորութեանն Ջհանշահի, որ ի յայսմ ամի էառ զանառիկ բերդն Ջռել և զՋուլամերկ· և այս այսպէս:)

Այլև գնացաք մեք ի քաղաքն Ուռհայ, և ի վանքն Ուռհայոյ ուր կայ տապանն սրբոյն Եփրեմի խուրին Ասորւոյ· տեսաք Ճաշոց մի՛ որոյ յիշատակարանն էր ըստ այսմ օրինակի:

Եւ արդ՛ եղև սկիզբն ճաշոցիս ի սուրբ ուխտս Մատնավանք, և աւարտեցաւ ի քաղաքն Արծկէ, յամի ութհարիւրերորդի, իննսուներորդի, և երկրորդ ամի· ի Թագաւորութեան՛ Ջհանշահի որդւոյ Ղարայիւսուֆին· և ի հայրապետութեան Աթոռոյ Լուսաւորչին մերոյ տեղապահի տէր Կիրակոս ընդհանուր Հայոց կաթուղիկոսի· զի մինչ ի սոյն ամս Աջն Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Սիս էր· և ամենայն ազգս Հայոց հնազանդեալ

նաք Աթոռոյն Կիլիկիոյ, և այժմ շնորհիւ նորին, և օժանդակութեան Հոգւոյն սրբոյ, վերստին եկն, ի նոյն Վաղարշապատ Էջմիածին շողակաթի տաճարին, և հաստատեցաւ Աթոռ հայկազեան սեռի, գերապատիւ և հրաշափառ, զոր պահեսցէ հաստատուն Տէր Յիսուս ամէն. և [1] այս ևս այսպէս:

Այլ և գտաք աւետարան մի, իբրև ընթերցաք զյիշատակարանն, և էր գրեալ այսպէս: Եւ արդ՝ սկսեալ եղև սուրբ աւետարանս յԱրղնի, ի վերադիտողութեան հայկազեան սեռի երկուց կաթուղիկոսաց տէր Գրիգորին և տէր Կիրակոսին, զի յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս այս Դ. ամէր, որ Լուսաւորչի Աջն կորեր էր ի Սսոյ՝ և եղ համբաւն ի Վաղարշապատ, վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք, եօթն հարիւր անձն, և հաստատեցին զԱթոռն յԷջմիածին, և եդին զոմն Կիրակոս անուն այր առաքինի և ճգնաւոր կաթուղիկոս, և հաստատեցին զաթոռ սուրբ Լուսաւորչին. (արդ [2] աւարտեցաւ սուրբ աւետարանս ի յամուր դղեակս յԱրղնի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Նշխարացս, որ աստ կան հաւաքեալ. յառաջնորդութեան սուրբ ուխտիս, յեպիսկոպոսութեան տէր Մկրտիչ արքեպիսկոպոսին, և յերեցփոխանութեան Յոհաննէս կրօնաւորին ի դառն և ի նեղ ժամանակիս, ձեռամբ յոքնամեղ գրչի Աւետիս աբեղայի անարժանի,) ի յաշխարհակալութեան Համզայ սուլթանին. ի թուականութեան Հայոց, ՊՂԳ. ամին. և այս այսպէս:

Եւ յետ գրելոցս այսոցիկ ունիմք այլ ևս հաստատագոյն պատմութիւն վասն գալստեան Լուսաւորչի Աջոյն ի սուրբ Աթոռն Էջմիածին, զոր իմ պատահեալ

---

1 Ոսկ. չէ․ և այս ևս այսպէս. — 2 Նոյն. չէ․ արդ՝ աւարտեցաւ . . . ցվերջ որ ընդ փակագծով:

ի քաղաքն Անկիւրիոյ, գտի Յայսմաւուրք մի յեկեղեցին, զոր սուրբ Հոգի անուանեն, որ ունէր յիշատակարան կարի երկարաբան, բայց վասն կարեւոր գոլոյ բանին զամենայն բանն նոյն շարադրութեամբն անպակաս գրեցի աստ. և վասն երկարութեան ոճոյն մի ինձ լիցիս մեղադիր և մի առաջին շինողին, զի ոճ պատմութեան այնպէս պահանջէ. քանզի երկար է պատմութիւն որոյ սկիզբն է այս։ Արդ՝ գրեցաւ սուրբ գիրքս յամի Թուականութեանս Հայոց ՋԺ. ամին, յերկիրս Քաջբերունւոյ, ի քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ ամենօրհնեալ սուրբ Աստուածածնի տաճարիս, ի հայրապետութեան տեառն Զաքարիայ կաթուղիկոսի ամենայն Հայոց, և ի բռնակալութեան ազգին նետողաց Ջհանշահ փատշահին, որ և բազում հենիւք և անթիւ զօրօք. և գնացեալ եմուտ ի տունն Իրաղայ և զամենեսեան գրաւեաց ընդ ձեռամբ իւրով, և հասեալ ի մեծ քաղաքն Ասպահան, որ է Շօշ քաղաք, յոր մարգարէն Դանիէլ զտեսիլն ետես, որ էր ամուր և բազմամարդ, որոց ընդդիմացեալ նմա պատերազմեցան, և յաղթեալ նոցա էառ զքաղաքն, և զամենայն զօրսն սրոյ ճարակ տուեալ և ի սուր սուսերի մաշեալ. քանդեալ և աւերեալ, և զջուր գետոյն կապեալ ի վերայ քաղաքին, զի որք ի նղմունս և ի ներքնատունս և ի դարանս մտեալ էին և թաքուցեալ, ամենեքեան ջրասոյզ և հեղձամղձուկ եղեալ սատակեցան, որ և քաղաքն ամենայն տապալեցաւ ի վերայ նոցա զի հողաշէն էր։ Եւ անտի գնացեալ եմուտ ի Հրէ և ի Խորասան, և զամենայն տունն Թաթարաց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով, և դարձեալ եկն ի թախտն իւր, ի քաղաքն Շահաստան ի Թաւրէզ։ Որոյ ընդ առաջ գնացեալ մեծ հայրապետն տէր Զաքարիայն աթոռակալ սուրբ Խաչին Աղթամարայ, որ էր թագաւորազն ի թոռանց և ի շառաւիղէ արքային Գագկայ, բազում ընծայիւք և

պատարագօք. զոր յոյժ սիրով ընկալաւ զնա [1] արքայն արքայից Ջհանշահ փատշահն և դշխոյն Բէկում խաթունն, և պատուեալ մեծարեցին զնա, և ետուն նմա խլայ և պարգև զԱՋ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի. և զպատիւ պատրիարքութեան։ Որոյ առաջնորդութեամբն Աստուծոյ և կամաւ սուրբ Լուսաւորչին և հրամանաւ փատշահին, եկեալ յաստուածարեալ և յաստուածանկար սուրբ Գրիգորաշէն և երկնահանգէտ կաթուղիկէ սուրբ Էջմիածինն, յառաջելաշնորհ աթոռ սրբոյն Գրիգորի, և նստաւ ինքնակալ պատրիարք ընդհանուր ամենայն քրիստոնէական ազգի, որք են ընդ ամենայն ոլորտս տիեզերաց, և արարեալ զաշխարհ ամենայն լինել մի հօտ և մի հովիւ ըստ բանին Տեառն. և հովուէր զամենեսեան ի հաւատս ուղղափառ Նիկիական սուրբ դաւանութեան։ Ընդ այնմ ժամանակին եղև ցասնուլ փատշահին ի վերայ ամիրային Բաղիշու. և բարկութեամբ առաքեաց Դ. զօրագլուխս երկոտասան հազար հեծելազօրօք ի վերայ քաղաքին Խլաթայ, և գնացեալ աւարեալ քանդեցին զնա՛ և բազում աւար ի մի ժողովեալ նստան ի վերայ բերդին և նեղէին յառնուլ զնա, և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ՝ և ի Մուշ, ի Խութ և ի Սասունք և յամենայն գաւառսն նոցա։ Զոր տեսեալ նորընծայ պատրիարքն տէր Զաքարիայ զտարակուսանս աշխարհին այնորիկ զգերեվարիլն և [2] մատնիլն ի ձեռն անօրինաց, զաւերիլն և զքանդիլն. զխախտումն եկեղեցեացն, և զապականումն սուրբ սեղանացն. զգերեվարիլ սրբութեանցն, և զխափանումն փառաբանութեանցն Աստուծոյ, և զտարաշխարհիկ լինիլն ամենայն խառնիճաղանճ ժողովրդեանն՝ զգերիլն և զտատանիլն։ Զայս

1 Ոսկ. չէ+. զնա։ 2 Նոյն. չէ+. և մատնիլն ի ձեռն անօրինաց. զաւերիլն։

ամենայն զմտաւ ածեալ մեծ հայրապետն տէր Զաքարիայն, և ի միտս իւր բերեալ զբանն տէրունական. որ ասէ՝ թէ, ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց, և կատարեալ գործով զբանն, եդ զանձն իւր ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի ի վերայ ամենայն ժողովրդեանն Բաղիշու, և զօրացեալ ի Հոգւոյն սրբոյ, և արարեալ զսիրտ իւր իբրև զկարծր վէմ, և մտեալ առաջի Թագաւորին, ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց. տուեալ ձեռագիր և մտեալ դաման առնուլ հարկս յամիրայէն Բաղիշու և տալ կայսերն առ ի մնալ երկրին ի խաղաղութեան՝ և առնել աղօթս վասն կենաց Թագաւորին և որդւոց նորա: Որոյ հաւանեալ արքայն և դշխոյն ետուն նմա նշանագիր և հրաման առնել զինչ և կամեսցի, և նորա ելեալ յերեսաց նոցա վաղվաղակի ձիընթաց արշաւմամբ գնացեալ եհաս ի քաղաքն Բաղէշ: Որոյ ընդ առաջ ելեալ ամիրայն հանդերձ ամենայն մեծամեծօքն իւրովք, և մեծարեալ փառօք տարաւ զնա ի գլուխ բերդին, և խոստացան առնել զկամս նորա և տալ զինչ և խնդրեսցէ. բայց միայն զի յետս դարձուսցէ զամենայն հեծելազօրսն ի բերդէն Խլաթայ: Եւ նա առեալ զվկայութիւն ի բերանոց նոցա գնաց ի Խլաթ, և ետ զօրագլխոցն կրկին ձեռագիր, և ցուցեալ նոցա զնշանագիր փատշահին, և համոզեաց զնոսա՝ որք խաղաղութեամբ գնացին ի տեղիս իւրեանց, և ինքն դարձաւ ի Բաղէշ և նստաւ ամիսս երիս և առեալ զխոստացեալ հարկն կայսերական, և տարեալ մատոյց առաջի փատշահին, և արար խաղաղութիւն ի մէջ նոցա, և ազատեաց զամենայն խառնիճաղանճ ժողովուրդն զՀայ և զՏաճիկ ի ձեռաց անօրինաց և ի դառն գերութենէ. զոր Տէր Աստուած ազատեսցէ զնա յամենայն փորձութենէ հոգւոյ և մարմնոյ. ամէն: Եւ նորա դարձեալ ի փատշահէն նստաւ յաթոռն իւր ի սուրբ Էջ-

միածինն, և մեծարանօք խիլայեալ եղև յերկուց գոռոզաց յայլասեռից՝ ի Թուրքման փադշահէն և ի Քուրդամիրայէն, որպէս զզօրաքարէլ ի Դարեհէ՝ առ ի հովուել զհաւատացեալ ժողովուրդս իւր։ Եւ եղև կրկին անգամ գնալ Ջհանշահ փադշահին ի տունն Իրաղայ՝ ի Շիրազ և ի Քրման, և էր նորա որդի մի Հասանալի անուն, որ շրջէր Թափառական զվերին կողմամբ գաւառին Արարատեան, և նա նենգութեամբ չարախօսաց ոմանց կամեցաւ ըմբռնել զմեծ պատրիարքն զտէր Զաքարիայն՝ և պահանջել ի նմանէ գանձս և ինչս. զոր իմացեալ մեծ հայրապետն զնենգութիւն նորա, և առեալ զԱջն սուրբ Լուսաւորչին հանդերձ այլ սպասիւք յաւուրս ձմերայնոյ և գնացեալ մինչ ի Բագուան և անտի եկեալ ի բերդն Բայազիտի, և անտի[1] իջեալ ի սուրբ ուխտն Արգիլան, ուր հանգուցեալ կայ պատուական նշխար սուրբ վարդապետին Ստեփաննոսի տէր Յուսկայ որդւոյն։ Եւ անդ հասեալ յայտնեաց զգանձն աստուածային, զԱջն սուրբ Լուսաւորչին մերոյ զսրբոյն Գրիգորի, հանդերձ խաչալամօքն, որ նկարեալ կայր ի մի կողմն պատկերն Տէրունական, և ի միւս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և Թագաւորին Տրդատայ, և չքնաղագեղ կուսին սրբոյն Հռիփսիմեայ, այլ և ոսկեթել յօրինուածով և ազգի ազգի գունով, երանգ երանգ զարդարեալ սուրբ ուրարօքն. որ զարմանալի է տեսողացն։ Եւ դէմ եդեալ գալ ի հայրենի աթոռն իւր ի գեղեցկայարմար զմբեթայարկ սուրբ Խաչն Աղթամարայ, և ել համբաւ գալոյ նորա հանդերձ սուրբ Աջովն և Խաչալամօքն, որ բարձրացեալ կայր ի ծայրս ձողոյ, և խաչ ոսկի կառուցեալ ի գլուխ նորա, ընդ որ գլոհ տուեալ ամենայն բնակչաց գաւառացն, ընդ որ գայր հայրապետն և ամենեքեան ընդ

1 Ո-ջ. չէ+. և անտի.

առաջ ընթանային խնկօք և մոմեղինօք և զենմամբ
խոյոց և զուարակաց և երկրպագութիւն մատուցանէին
սուրբ Աջոյն և Հայրապետին և համբուրէին զնա մե-
ծաւ փափագանօք, մինչև եկեալ եհաս ի գաւառն Տոս-
բոյ, և մտեալ ի քաղաքն Վան, բազում եպիսկոպոսօք,
և վարդապետօք, քահանայիւք և բազմամբոխ ժողովըր-
դօք՝ ձիօք և ձիաւորօք, և խաչալամն առաջի, և քա-
հանայքն յառաջ և յետոյ երգէին քաղցր եղանակօք։
և այնպէս պերճ և փառաւոր եմուտ ի քաղաքն Վան։
Իսկ պարոնն՝ այն որ նստէր յաւուրն Շամիրամայ ի բերդն
Վանայ Մահմուտ բէկ կոչեցեալ, որ էր կաթնեղբայր
Ջհանշահ փատշահին. ետես զպայծառութիւն քրիստո-
նէից և ցանկացաւ տեսութեան սուրբ Աջոյն, և յղեալ
տարաւ ի գլուխ բերդին, և եղև ընդ մտանել մեծ Հայ-
րապետին սուրբ Աջովն ընդ դուռն վերին բերդին, ընդ
առաջ ել գոռոզն Մահմուտբէկ, ամենայն մեծամեծօքն
իւրովք, տամբ և Ամիրզայ որդւովքն, և ամենայն ըն-
տանեօքն. և երկրպագութիւն մատուցանէին սրբոյ Ա-
ջոյն և համբուրէին, և աղերս պատարագաց նուիրէին,
և մեծարեալ խիլայեաց զՀայրապետն՝ և դարձոյց յօ-
թևանս իւր. զոր տեսեալ բազմութեան քաղաքին և
գաւառին օր ըստ օրէ գային յերկրպագութիւն սուրբ
Աջոյն, և յողջոյն մեծ Հայրապետին բազում ընծայիւք
և պատարագօք։ Եւ յետ աւուրց ինչ առեալ հրաման
ի պարոնէն գնալ ի Հայրենի աթոռն իւր ի յԱղթամար.
իբրև ել ի քաղաքէն՝ ելին ընդ նմա բազմութիւնք ե-
պիսկոպոսաց, վարդապետաց, և քահանայից և ամենայն
ազատագունդ խօջայքն Վանայ, ձիօք և ձիաւորօք ապա-
ռազինեալք. և եկեալ հասին մերձ ծովահայեաց քա-
ղաքին Ոստանայ, որում ընդ առաջ ելին ամենայն բնա-
կիչք քաղաքին քահանայիւք և բազմամբոխ ժողովըր-
դօք ի մեծամեծաց մինչև ցփոքունս, խնկօք՝ և մոմեղի-

նօք, և բարձրաձայն եղանակօք, մինչ գրեթէ քան զհազար մարդ աւելի կայր յառաջ և յետոյ մեծ Հայրապետին. և խաչալամն առաջի գնայր ունելով ի գլուխն խաչ ոսկի փայլեալ լուսոյ նման. և այնպէս շքեղ փառօք եմուտ ի քաղաքն յՈստան, իբրև տեսին այլասեռ բնակիչքն որ յՈստան, զխրախութիւնն զայն՝ ի խոր խոցեցան ընդ պայծառութիւն և ընդ համարձակութիւն Հայրապետին, որ ի գաւառէն Ցորբերունեայ մինչ ի քաղաքն յՈստան, խաչալամով էր եկեալ, եպիսկոպոսօք, և վարդապետօք, և բազում կարգաւորօք և ժողովրդօք, վասն որոյ ժողովեցան ի միասին առ իշխան քաղաքին, որ էր ազգաւ Քուրդ, ժանտ և անագորոյն ամենևին Թշնամի քրիստոնէից, և խորհեցան խորհուրդ չար զի գաղտագողի նենգեսցեն Հովուապետին. զոր իմացեալ զչարութիւն նոցա քաջ դիտապետն, և ընդ լուսանալ առաւօտուն առեալ զսուրբ Աջն գնալ ի յեզր ծովուն ուր նաւահանգիստն լինէր։ Զոր իմացեալ ամենայն եկելոցն ընդ նմա. ոմք ի Վանայ, և ոմք յայլ գաւառացն եկին զհետ նորա և եկին հանդէպ աստուածապահ կղզւոյն Աղթամարայ մեծ բերդին Մանածիհրի, որ է քարադաշտ։ Եւ անդ զտեղի առեալ օրհնեաց զամենեսեան շնորհաբաշխ սուրբ Աջովն և համբուրեալ զամենեսեան ի համբոյր սրբութեան, և արձակեաց զնոսա խաղաղութեամբ և օրհնութեամբ գնալ ի յարկս իւրեանց։ Եւ ինքն էառ զսուրբ Աջն Լուսաւորչին և եմուտ ի նաւն և գնաց յԱստուածաբնակ կղզին յԱղթամար ի հայրենի ժառանգութիւն իւր. զոր իբրև եկին ի ցամաք ընդ առաջ եկին նմա ամենայն բնակիչք տեղւոյն յեզր ծովուն խնկօք և մոմեղինօք՝ և քահանայիւք, քաղցրաձայն եղանակօք և առեալ տարան զսուրբ Աջն և եդին ի գեղեցկայարմար սուրբ խաչն Աղթամարայ, և երկրպագութիւն մատուցանէին սուրբ Աջոյն և Հայրապետին. և

օրհնութիւն և փառաբանութիւն վերառաքէին հրաշագործողին Աստուծոյ, որ արժանի արար զամենեսեան տեսութեան շնորհաբաշխ սուրբ Աջոյն Լուսաւորչին, եմուտ ի յամուր կղզին Աղթամար և հանգեաւ ի գմբէթայարկ սուրբ Աջն ի բուն տեղին իւր. ի Թուականութեանս մերում ՋԺԱ. ամին. ի սկիզբն տարւոյն, որ էր Նաւասարդի ամսոյ ԺՁ. յաւուր ուրբաթի սուրբ Յակոբայ պահոցն եմուտ սուրբ Խաչն յԱղթամար, ի պահպանութիւն մեզ ամենայն հաւատացելոց, որոց եղև ուրախութիւն ամենեցուն ոչ սակաւ: Եւ զայս լուեալ ամենայն բնակչաց գաւառացն օր ըստ օրէ գային յերկրպագութիւն սուրբ Աջոյն՝ և յողջոյն մեծ հայրապետին բազում ընծայիւք և պատարագօք, և օրհնութեամբ, մեծաւ ուրախութեամբ դառնային ի յարկս իւրեանց՝ փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնն, զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արդ՝ այս պատմութիւն մինչև ցայս վայր ծանոյց մեզ թէ՝ Լուսաւորչի սուրբ Աջն հաւաստեաւ և ստուգիւ դարձեալ է ի Սսոյ և եկեալ է յԷջմիածին, այլ և գնացեալ է յԱղթամար: Այլև ի կարգս Թուականացն ևս գրեալ կայ թէ ՋԺԱ. Թուին Զաքարիայ կաթուղիկոսն էառ զԼուսաւորչի Աջն ընդ իւր և տարաւ յԱղթամար:

Արդ՝ թէպէտ գոն և այլ ևս այսպիսի բանք և պատմութիւնք, զորս ժողովեցաք ի գրոց՝ վասն սուրբ Լուսաւորչի Աջոյն, թէ հաւաստեաւ եկեալ է Աջն ի սուրբ Էջմիածին, սակայն զամենայն ոչ շարագրեցաք աստ, զի մի գուցէ լիցի երկայնութիւն բանիցն, ձանձրութիւն ընթերցողացն, այլ զայսքանս բաւական համարեցաք շարակարգել աստ, յայտ առնել անխարդախաբարոյ և ճշմարտասէր արանց իմաստնոց զորպիսութիւն անցուածոց ժամանակաց: Այսուհետև ժամ է մեզ պատմել վասն

սուրբ Լուսաւորչի Աջոյն, թէ ո՛րպէս դարձաւ յԱղթամարայ և եկն ի սուրբ Էջմիածին։

Մերձ մայրաքաղաքին Նախչուանու կայ գաւառ մի, զոր անուանեն Շահբունուց ձոր, և յայսմ գաւառի կայ գիւղ մի՝ զոր անուանեն Օձոպի, և մերձ այսմ գեղջս կայ շինեալ ի վաղեմի ժամանակաց վանք մի յանուն սուրբ Աստուածածնին՝ զոր անուանեն Օձոպու վանք. և ի միաբանից այսմ վանիցս եպիսկոպոս մի որում անունն էր Վրթանէս եպիսկոպոս, այր խորագէտ և խելամուտ ի գործս իւր, և ճարտարաբան ի խօսս. սա գնացեալ յաղթամար գողացաւ զԱՋն սուրբ Լուսաւորչին և եբեր դարձեալ ի սուրբ Էջմիածինն. զայս արար Վրթանէս եպիսկոպոսն խորհրդով և կամօք կաթուղիկոսացն Էջմիածնի, որոց անուանքն էին, Սարգիս և Յօհաննէս։ Եւ նախ գնաց Վրթանէս եպիսկոպոս յանծանօթ աշխարհ և անդ այլափոխեաց զանունն և զգեստն, և հարթեալ թեթևացոյց զմօրուքն. և եղև ի կերպ մուղդուսոյ՝ անգէտ գրոց և կարդալոյ. այլ և ի վերոյ քան զծունկն կապեաց պարանաւ զբարձն և կաղացոյց զՋիլն, և եղև իբրև զբնական կաղ, որ ի գնալն իւր կաղայր։ Եւ ապա գնացեալ ի կղզին Աղթամարայ՝ և անդ բնակեցաւ, և առնէր սպասաւորութիւն վանացն. և օր աւուր ընտելացաւ նոցա վասն բարւոք սպասաւորութեան, մինչ որ կարգեցին զնա լուսարար եկեղեցւոյն. և պահող անօթոցն և սրբութեան վանիցն, և մնաց նա ի լուսարարութիւն եկեղեցւոյն յամս եօթն։ Եւ ի ժամանակին յայնմիկ պատահեցաւ ի միում աւուր, զի եկին յոլովք արք վաճառականք՝ զոր Հայոց բառիւ փօրէզիկ ասեն, և այլազգեաց բառիւ չարչի ասեն, այս չարչիքս գրաստուք և իշովք շրջելով գիւղէ ի գիւղ՝ եկին և հասին մինչ ի նաւահանգիստն Աղթամարայ. և այնպէս իշովքն և գրաստովքն իւրեանց մտին ի կղզին Աղթամար, վա-

ճառել կտաւ և ստուար, չիթ և ալաջայ՝ և այլ ինչ։ Եւ-էին այս չարչի արքս ի գիւղաքաղաքէն Ջուղայոյ, քանզի ի ժամանակին յայնմիկ տակաւին չէն էր Ջուղայ, և մնացին երկու և երեք օր անդէն ի կղզին։ Իսկ Վրթանէս եպիսկոպոսն հերձեաց զխշոյ միոյ կուրդինն, որ է պաղանն, և բերեալ զլուսաւորչի Աջն ընդ նմին և զվառն, որ է խաչալամն, և զուրալն, զոր և ի մէջ անցեալ պատմութեանդ յիշեաց, և զայս երեքեանս եդ ի մէջ իշոյ կուրդնին և դարձեալ կարեաց, որպէս և էր յառաջագոյն. և զայս արար Թաքուն և անգիտելի յամենայն մարդկանէ, բայց միայն իշոյ տիրոջն յայտնեաց. որում և պատուիրեաց [1] բարւոք պաշտպանեսցէ, դի մի վնաս ինչ պատահիցի Աջոյն. այլ և մի ես ուրեք յամեսցի, այլ փութանակի առեալ հասցէ ի Ջուղայ։ Եւ զկնի գնալոյ չարչոցն՝ յետ աւուրց ինչ՝ և ինքն Վրթանէս եպիսկոպոսն պատճառանօք ինչ ելեալ ի կղզւոյն և գնաց ուրեք. և իբրև հեռացաւ ի վայրացն յանծանօթ տեղիս, ապա արձակեալ զկապ ոտիցն՝ զոր յառաջագոյն կապեալ էր, և յուղի անկեալ գնայր բազում ճեպով։ Իսկ բնակիչք Աղթամար կղզւոյն իբրև տեսին թէ անցին պայմանեալ աւուրքն, և ոչ եկն լուսարարն իւրեանց, գնացեալ աստ և անդ հարցին և ոչ գտին. և իբրև ծանեան թէ ոչ է Աջն ի տեղւոջն իւրում, յայնժամ սկսան յամենայն ճանապարհս և յուղիս կարի ստիպով հետամուտ լինել, զի թերևս հասցեն. իսկ գնացող խնդրակքն իբրև պատահէին եկող ճանապարհորդաց և հարցանէին, թէ զկաղ այր մի տեսի՞ք. և եկողքն պատասխանէին, թէ չիք մեր տեսեալ զայր. կաղ, և այսու կերպիւ զերծաւ Վրթանէս եպիսկոպոսն, և եկեալ եհաս ի գիւղաքաղաքն Ջուղայ, և որոնմամբ եկեալ եգիտ զտուն առնն՝ որ էր

---

1 Օրի. պատուիրեաց զի.

տէր լիցի։ Եւ բազում տագնապաւ հոգայր վասն Աջոյն, թէպէտ ամբողջ հասեալ իցէ Աջն ի Ջուղայ, իբրեւ լուաւ յառնէն, և ետես զպաղանն, յորում ինքն եդեալ էր զԱջն, զի ամբողջ կայր Աջն, յայնժամ մեծաւ ցնծութեամբ ուրախ եղեւ և փառս ետ Աստուծոյ։ Ապա գնացեալ Վրթանէս եպիսկոպոսն առ առաջնորդսն և առ քահանայսն Ջուղայոյ, և ծանոյց նոցա զարարն իւր, և նոքա զարմացան ընդ արարեալ գործն նորա, և լցան երկնային խնդութեամբ, և գնացեալ հանին զԱջն, և և զխաչալամն և զուրարն, և բերին յեկեղեցին. և վաղվաղակի առաքեցին աւետաւորս ի սուրբ Աթոռն Էջմիածին առ կաթուղիկոսն Սարգիս և Յօհաննէս, որոց կամօք և խորհրդակցութեամբն գնացեալ էր Վրթանէս եպիսկոպոս յայս գործ։ Իբրեւ լուան նոքա ևս առաւել ցնծացեալ զուարճացան և լցան երկնային խնդութեամբ, և վաղվաղակի եկեղեցականօք և աշխարհականօք և ամենայն երեւելի արամբք աշխարհին Արարատու յուղի անկեալ գնացին ընդ առաջ սրբոյ Աջոյն. և գտին զԱջն ի Նախչուան քաղաքի՝ զի մինչ ի գալ կաթուղիկոսացն, Ջուղայեցիք և Վրթանէս եպիսկոպոսն զԱջն բերեալ էին ի Նախչուան քաղաք։ Եւ անդ ի Նախչուան քաղաքին պատուեալ փառաւորեցին զսուրբ Աջն լուցմամբ պայծառ մոմեղինաց՝ և բուրմամբ անուշահոտ խնկոց, և զենմամբ խոյոց և զուարակաց. և կատարեցին անդէն ուխտս և համբուրեցին մեծատենչ փափագանօք զսուրբ Աջն, և ապա աշխարհախումբ բազմութեամբ առին զսուրբ Աջն և բերին ի սուրբ Աթոռն Էջմիածին. և հանգուցին ի սեպհական և ի բնական աթոռն իւր։ Իսկ կաթուղիկոսունքն և ամենայն արք աշխարհին եկեղեցականք և աշխարհականք բազում և անթուելի պարգեւս բաշխեցին Վրթանէս եպիսկոպոսին. այլ և որքան նուէրք և աջահամբոյր՝ զոր նուիրեցին ժողովուրդքն սրբոյ Ա-

Ջոյն, զայն ևս զբովանդակն շնորհեցին Վրթանէս եպիսկոպոսին· այլ և կարգեցին կաթուղիկոսունքն և ամենայն ժողովն՝ զի Վրթանէս եպիսկոպոսն լիցի աթոռակալ կաթուղիկոսացն, որ ոք և իցէ կաթուղիկոս ի մէջ սուրբ Աթոռոյն՝ որքան և իցէ Վրթանէս եպիսկոպոսն կենդանի· որ և արար աթոռակալութիւն մինչ ի ժամանակս ծերութեան իւրոյ· և ապա վասն անկարութեան մարմնոյն գնաց ի վանքն Օծոպու մերձ իւրոց ազգականացն վասն պաշտպանելոյ իւրոյ ծերութեանն, և անդէն վախճանեցաւ և թաղեցաւ ի թուին ՋԽԲ· որպէս և գրեալ է ի վերայ տապանին իւրոյ։ Իսկ կաթուղիկոսունքն Էջմիածնի իբրև զհայրենապատուէր կտակ, աւանդութիւն ունէին ի մէջ իւրեանց, զի յամենայն ամի ի տարւոջն միանգամ գնային ի վանքն Օծոպու մատուցանէին պատարագ, և պաշտաման դրամ բաժանէին վանականացն, և կերակրէին զաղքատս վասն հոգւոյ Վրթանէս եպիսկոպոսին· և մինչ ի ժամանակս Դաւիթ կաթուղիկոսին, և Մելքիսէթ կաթուղիկոսին կայր այս աւանդութիւն՝ որ գային կաթուղիկոսունքն և կատարէին։ Իսկ վերայ ճառեալ պատմութիւնս՝ որ վասն գալստեան սրբոյ Աջոյն է, որ յԱղթամարայ դարձաւ և եկն ի սուրբ Էջմիածին, ոչ թէ հարևանցի բանք և զրուցք են, այլ հաստատուն և հայրենատուր աւանդութեամբ պատմի յամենայն գաւառս՝ որք են շուրջ զՆախչուան քաղաքաւն, և մանաւանդ ի գաւառին Շահբունուց ձորոյ, և որք մերձ նմա վանօրայք են, զի ամենեքեան եկեղեցականք և աշխարհականք միաբանութեամբ պատմեն զայս պատմութիւնս, թէ ձեռամբ Վրթանէս եպիսկոպոսին եկն Լուսաւորչի Աջն յԷջմիածին, յորոց առեալ մեր զհաւաստին գրեցաք աստ։ Եւ կայր սուրբ Լուսաւորչի Աջն անդ ի սուրբ Էջմիածինն մինչև ի ժամանակս առաջին Շահաբասին, որ տարաւ ի քաղաքն Սպահան, և ի ժա-

մանակս Շահնէֆի թագաւորին գնացեալ Փիլիպպոս կաթուղիկոսն յԱսպահան քաղաք խնդրեաց ի Շահնէֆի թագաւորէն, և առեալ երեք դարձեալ ի սուրբ Էջմիածինն ի սեպհական Աթոռն իւր, որպէս և գրեալ կայ ի պատմութեան Փիլիպպոս կաթուղիկոսին։ Եւ կայ նոյն սուրբ Աջն աստէն ի սուրբ Էջմիածինն մինչև ցայսօր՝ և պատուի ըստ արժանւոյն իւրոյ փառաւորութեամբ բազմաւ, ի փառս իւր և զօրացուցանողին զնա Քրիստոսի։ Եւ այն զօր ի մէջ անցեալ պատմութեանդ յիշեաց զխաչալամն և զուրարն՝ ահաւասիկ սոքա երկոքին ընդ սրբոյ Աջոյն կան ի սուրբ Էջմիածինն պահեալք, հաստատուն վկայ սրբոյ Աջոյն, և մանաւանդ սքանչելագործութիւնքն՝ որք լինին ի սրբոյ Աջոյն ևս առաւել վկայ։

Եւ յարդարեալ շարակարգեցաք զպատմութիւնս զայս ի թուականիս մերում ՌՃԺԱ· ամին, Յուլիս ամսեանն ի մէկն, ի սուրբ Աթոռն յԷջմիածին, ի ժամանակս կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ, և ի թագաւորութեան Պարսից երկրորդ Շահաբասին, և Օսմանցւոց թագաւորին սուլթան Մահմատին՝ որդւոյ սուլթան Իբրահամին, բարեխօսութեամբ [1] և աղօթիւք նոյն սրբոյ Աջոյն երջանիկ Հօր մերոյ սրբոյ Լուսաւորչին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս· ամէն։

[1] Ուղ· չէ+· բարեխօսութեամբ . ։ . յաւիտեանս ամէն։

ԳԼ· ԼԱ·

Ցարադրութիւն կաթուղիկոսացն մերոց առեալ եւ սկսեալ ի սրբոյն [1] Ներսիսէ Կլայեցւոյ, եւ կարգաւ ածեալ եւ հասուցեալ մինչեւ ցժամանակս մեր:

Զկարգս կաթուղիկոսացս վասն այնր ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն ոչ առեալ գրեցաք, զի ի բազմաց սրբոց և իմաստնոց, և հաւատարիմ արանց գրեալ է այն՝ որպէս և յայտ է ամենեցուն· իսկ որ յետ սրբոյն Ներսիսի Կլայեցւոյն է, ոչ կայ բովանդակն ի մի վայր գրեալ, այլ մասն մի աստ՝ և մասն մի անդ· իսկ մեք զբովանդակն հաւաքեցաք աստ ի մի վայր։

Եւ զանուանքս կաթուղիկոսացս ամենեցուն՝ զորոց հաւաքեցաք, եթէ զՍսոյ կաթուղիկոսացն, և թէ զէջմիածնի կաթուղիկոսացն, յերից տեղեաց հաւաքեցաք, մասն մի ի Թուականաց՝ որք նախ քան զմեզ գրեալ էին, որոց ինքն Քրիստոս լիցի վարձահատոյց· և մասն մի ի

---

1 Ոչ· չէ· սրբոյն·

կոնդակաց վանօրէից՝ զոր շնորհեալ էին կաթուղիկոսունքն իւրաքանչիւր վանօրէից. և մասն մի ի յիշատակարանաց գրոց, որ յիւրաքանչիւր կաթուղիկոսաց ժամանակս գրեալք էին. և մեր ժողովեալ զամենայն կաթուղիկոսաց անուանսն, սկսաք շարադրել զնոսա ըստ կարգի թուականին, զի որ ի նախնի թուոջն էր նախադաս կարգեցաք, և որ յերկրորդում թուոջն էր՝ երկրորդ դաս կարգեցաք. և որ յերրորդում թուոջն էր՝ երրորդ դաս կարգեցաք.[1] և այսպէս առնելով հասուցաք մինչև ի մեր ժամանակս։ Եւ զայսպէս առնելով սկիզբն Ոի. թուէն սկսաք, և մինչ ի Պ. թուին ուղիղ էր. և յետ այնորիկ խառնակ և շփոթեալ և մանաւանդ զի բազումն և յոլովն ոչ կայր, զորս բազում աշխատութեամբ շարակարգեալ հասուցաք ի մեր ժամանակս։

Իսկ այն թուականն՝ որ իւրաքանչիւր կաթուղիկոսացն սկիզբն գրեալ կայ, ոչ թէ զնոցին կաթուղիկոսացն նստելոյ զառաջին ամն նշանակէ, այլ միայն նշանի վասն կարգեցաք, զի այն թուովն դիւրեաւ ճանաչեմք զայն կաթուղիկոսն. այլ և թէ իցեն երկու Կարապետ կամ երկու Պօղոս՝ ժամանակաւ մերձակայ միմեանց, այնու թուովն դիւրեաւ բաժանեմք յիրերաց, և ոչ ևս տարակուսիմք արդեօք մի՞ են սոքա թէ երկու։

Իսկ այն թիւքն որ զկնի կաթուղիկոսացն գրեալ կայ՝ որ ցուցանէ թէ այս անուն կաթուղիկոս, այսքան ամ յաջորդեաց. յայս թուոցս զբազումն ոչ գրեցաք, միայն զոմանս, քանզի երկու և երեք օրինակ ի միասին բերեալ՝ տեսաք՝ զի ոչ զուգաբան ասէին, վասն որոյ և ոչ գրեցաք. և որոց վասն[2] զուգաբան ասացին զնոցին թիւսն գրեցաք և այս ասացեալ երկոքին թիւքս ի

---

1 Ոսկ. և Անեց. Էջէց. և որ ի չորրորդում թուոջն էր՝ չորրորդ դաս կարգեցաք. 2 Նոյն. բայց որք.

վերայ Սսոյ կաթուղիկոսացն կայ գրեալ. իսկ ի վերայ Էջմիածնի կաթուղիկոսացն ոչ ի սկիզբն գտաք գրեալ՝ և ոչ ի վերջն. քանզի զԷջմիածնի կաթուղիկոսաց անուանսն զամենեցուն, ի յիշատակարանաց գրոց հաւաքեցաք, որ զկաթուղիկոսաց ոչ զսկիզբն և ոչ զվախճանն ցուցին։ Նա և՝ Էջմիածնի կաթուղիկոսունքն՝ որ ի մէջ միոյ Թուի, երկու և երեք և չորք կաթուղիկոսք կան գրեալ, այս է՝ զի յիշատակարանք գրոցն և կարգ Թուականին այնպէս ցուցին. այլ և ի կարծիս մեր Թուեցաւ Թէ այնքան կաթուղիկոսք լեալ են ի միում ժամանակի, և ի միում Թուականի. այլ և ոչ եղաք հասու, Թէ ո՞ր ոք ի նոցանէ իցէ առաջին ամանակաւ՝ և ո՞ր ոք վերջին, այլ և ոչ այնմ Թէ ո՞ր ոք իցէ ի նոցանէ ինքնակալ, և ո՞ր ոք ընդ ձեռամբ, և կամ լռեալ. այլ զայն միայն ցուցին մեզ յիշատակարանք գրոց, վասն որոյ և մեք այնպէս կարգեցաք։

Այլ արդ՝ օժանդակութեամբ Հոգւոյն սրբոյ ըստ խոստման մերում, արդէն այժմիկ սկսցուք զկարգ կաԹուղիկոսացն ի սրբոյն Ներսիսէ Կլայեցւոյ կարգաւ, և հասուսցուք մինչև ի ժամանակս մեր։

ՌԺԴ. Թ. մեռաւ Գրիգորիս կաթուղիկոսն, և նըստաւ եղբայր նորին Ներսէս ամս Է։

ՌԻԱ. Թ. մեռաւ տէր Ներսէս, և նստաւ տէր Գրիգոր եղբօրորդի նորա, յՕգոստոսի ԺԳ. յաւուր հինգշաբաթի։ Տէր Գրիգոր Քարավէժն. Տէր Գրիգոր Ապիրատն. Տէր Յոհան Մեծաբարոյն. զսա ընկեցին և փոխանակ սորա եդին կաթուղիկոս զտէր Դաւիթ Արքակաղնեցին ամս Բ. մեռաւ տէր Դաւիթս և դարձեալ նստաւ կաթուղիկոս նոյն տէր Յովհան, յառաջ և յետոյ ամս ԺԵ։

ՌԿԹ. Տէր Կոստանդին Բարձրբերդցին ամս ԽԷ։

ՉԺԷ Թ. Տէր Յակոբ գիտնականն ամս ԺԸ։

ՉԼԶ Թ. Տէր Կոստանդին պրօնագործն Կեսարացի ախթարմայ ամս Գ։

ՉԼԸ. Թ. աքսորեցին զԿոստանդին պրօնագործն, և եդին կաթուղիկոս զտէր Ստեփաննոս Հռոմկլայեցին ամս Դ. զսա և զԼուսաւորչի Աջն գերի տարան ի քաղաքն Մսըր։

ՉԽԲ Թ. Տէր Գրիգոր Անաւարզեցին ամս ԺԳ։

ՉԾԶ. Թ. Տէր Կոստանդին Կեսարացին Հերձուածող, ամս ԺԵ։

ՉՀ. Թ. Տէր Կոստանդին Լամբրոնացին ամս Դ։

ՉՀԶ. Թ. Տէր Յակոբ Սսեցին ամս ԺԴ. զսա ընկեցին և եդին զտէր Մխիթար ի Թուին ՉՂԶ.[1] ամս ԺԴ. մեռաւ այս Մխիթարս, նստաւ դարձեալ աքսորեալս տէր Յակոբ Սսեցին ամս Դ։

ՊԺԳ. Թ. Տէր Մեսրոպ ամս ԺԳ։

ՊԻԳ. Թ. Տէր Կոստանդին։

ՊԻԵ. Թ. Տէր Պօղոս։

ՊԻԹ. Տէր Թէոդորոս ամս Ը։

ՊԽԳ. Թ. Տէր Կարապետ։

ՊԽԶ. Թ. Տէր Դաւիթ։

ՊԾԲ. Թ. միւս տէր Կարապետ։

ՊԿԷ. Թ. Տէր Գրիգոր. զայս տէր Գրիգորս, որ մականուն Խանձողաթ կոչի, աքսորեցին, և ի նոյն Թուին եդին զտէր Պօղոսն, վասն որոյ զնոյն Թիւն ի վերայ նոյն տէր Պօղոսին կրկին անգամ գրեմք։

ՊԿԷ. Թ. Տէր Պօղոս։

ՊՀԹ. Թ. Տէր Կոստանդին։

ՊՉԶ. Թ. Տէր Յովսէփ։

ՊՉԹ. Տէր Գրիգոր, որ մականուն Մուսաբէգենց կոչի։

---

1 Ուղ. ՉԼ.

Մինչև ցայս վայր՝ զոր գրեցաք կաթուղիկոսունք Սսոյ էին, որ ի Սիս նստէին և վարէին զկաթուղիկոսութիւնն. զի տակաւին ոչ էր նորոգեալ սուրբ Աթոռն Էջմիածին, և յայսմ ժամանակի նորոգեցաւ, քանզի Աջն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ի սուրբ Էջմիածինն յայտնեցաւ, վասն որոյ ժողովեցան ի բազում աշխարհաց այք իշխանք և նշանաւորք եկեղեցականք և աշխարհականք. և օրհնեցին զտէր Կիրակոսն կաթուղիկոս, և հաստատեցին զկաթուղիկոսութիւնն ի սուրբ Էջմիածինն, որպէս և պատմէ Թովմայ վարդապետն։ Վասն որոյ յայսմ հետէ զայն կաթուղիկոսունսն շարագրեմք, որք ի սուրբ Էջմիածինն նստան, որոց առաջինն է տէր Կիրակոս։ Եւ եղև նորոգումն սուրբ Էջմիածնի, ՊՂ. թուին. վասն որոյ գրեմք թուական ՊՂ։

ՊՂ. Թ. կաթուղիկոս տէր Կիրակոս։

ՊՂԲ. Թ. զտէր Կիրակոսն հանին ի կաթուղիկոսութենէ, և նստաւ Մակուեցի Գրիգորն ղաբալով. այս Գրիգորս նորոգումն աւարեալ է սուրբ Էջմիածնի մասամբ ինչ։

ՋԴ, Թ. նոյն տէր Գրիգոր այլ և եղև կաթուղիկոս տէր Արիստակէս։

ՋԺ. Թ. նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս, այլ ևս եղև կաթուղիկոս տէր Զաքարիայ։

Այս տէր Զաքարիայս նախ կաթուղիկոս էր Աղթամարայ, և ի ՋԺ. թուականին յորժամ եկն Ջահանշահ փատշահն ի Թարվէզ, սա բազում ընծայիւք գնաց ընդ առաջ փատշահին ի Թարվէզ. և փատշահն ետ սմա պարգևս զկաթուղիկոսութիւնն սուրբ Էջմիածնի և զԱՋ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, այլ և ընդ նմին զխաչալամն, և զուրարն. վասն որոյ Զաքարիայ կաթուղիկոսն ընդ իւր ունելով զԱՋՆ՝ եկեալ ի սուրբ Էջմիածին նստաւ կաթուղիկոս Էջմիածնի. և նոյն խաչալամն

և ուրարն ահաւասիկ պահեալ կան ի սուրբ Էջմիածինն. վկայ սուրբ Աջոյն՝ թէ անդ է։

ՋԺԱ. Թ. տէր Զաքարիայ կաթուղիկոսն առեալ ընդ իւր զԱջն սուրբ Լուսաւորչին գնաց յԱղթամար. Նաւասարդի ԺԶ, յաւուր ուրբաթի սուրբ Յակոբայ պահոցն։

ՋԺԵ. Թ. նոյն տէր Գրիգոր և նոյն տէր Արիստակէս. այլ և եղև կաթուղիկոս տէր Սարգիս։

ՋԻԳ. Թ. նոյն տէր Սարգիս. այլ և եղև կաթուղիկոս տէր Յօհաննէս։

ՋԻԵ. Թ. նոյն տէր Յօհաննէս. այլ և եղև կաթուղիկոս միւս այլ տէր Սարգիս։ Այս Յօհաննէս և Սարգիս կաթուղիկոսաց ժամանակին Լուսաւորչի Աջն դարձեալ է յԱղթամարայ՝ և եկեալ է ի սուրբ Էջմիածինն ձեռամբ Վրթանէս եպիսկոպոսին։

ՋԽԲ. Թ. նոյն տէր Սարգիս. այլ և կաթուղիկոս տէր Արիստակէս։

ՋԽԸ. Թ. նոյն տէր Սարգիս. այլ և եղև կաթուղիկոս տէր Թադէոս։

ՋԾԳ. Թ. նոյն տէր Սարգիս՝ այլ և եղև կաթուղիկոս տէր Եղիշէ,

ՋԾԵ. նոյն տէր Սարգիս՝ և նոյն տէր Եղիշէ. այլ և եղև կաթուղիկոս տէր Ներսէս։

ՋԿԴ. Թ. կաթուղիկոս տէր Զաքարիայ։

ՋԿԹ. Թ. կաթուղիկոս տէր Սարգիս։

ՋՀԲ. Թ. կաթուղիկոս նոյն տէր Սարգիս։

ՋՁԵ. Թ. կաթուղիկոս տէր Գրիգոր։

ՋՂ. Թ. նոյն տէր Գրիգոր. այլ և եղև կաթուղիկոս տէր Ստեփաննոս Սալմաստեցի։

ՋՂԴ. Թ. նոյն տէր Ստեփաննոս. այլ և եղև կաթուղիկոս տէր Միքայէլ։

ՌԶ. Թ. նոյն տէր Ստեփաննոս՝ և նոյն տէր Մի-

քայէլ· այլ և եղեն կաթուղիկոսք տէր Բարսեղ և տէր Գրիգոր։

ՌԺԶ· Թ· Նոյն տէր Միքայէլ և Նոյն տէր Բարսեղ և Նոյն տէր Գրիգոր· այլ և եղև կաթուղիկոս տէր Ստեփաննոս Առընջեցի։

ՌԻԵ· Թ· Նոյն տէր Գրիգոր այլ և եղեն կաթուղիկոսք տէր Թադէոս՝ և տէր Առաքեալ։

ՌԼԵ· Թ· Նոյն տէր Գրիգոր, և Նոյն տէր Առաքեալ· այլ և եղև կաթուղիկոս տէր Դաւիթ։

ՌԽԲ· Թ· Նոյն տէր Դաւիթ· այլ և եղև [1] կաթուղիկոս տէր Մելքիսէթ։

ՌԾԲ· Թ· Նոյն տէր Դաւիթ և Նոյն տէր Մելքիսէթ· այլ և եղև կաթուղիկոս տէր Սրապիոն։

ՌՀԳ· Թ· Նոյն տէր Դաւիթ, և Նոյն տէր Մելքիսէթ· այլ և եղև կաթուղիկոս տէր Սահակ։

ՌՀԸ· Թ· կաթուղիկոս [2] տէր Մովսէս ամս Գ· և կէս։

ՌՁԲ· տէր [5] Փիլիպպոս կաթուղիկոս ամս ԻԲ· և կէս։

ՌՃԳ· Թ· Տէր Յակովբ կաթուղիկոս Ջուղայեցի, որ կայ այժմ յաւուրս մեր, և վարէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան։

Արդ՝ ի ՌԽԲ· Թուին· եղեալ կաթուղիկոսունքն, որք են Դաւիթ և Մելքիսէթ, այս Դաւիթ և Մելքիսէթ կաթուղիկոսունքն են, զորս ի պատմագրիս սկիզբն գրեալ եմք· թէ առաքեցին առ Սրապիոն վարդապետն

1 Ոսկ· չէ· եղև։ 2 Նոյն· Նոյն տէր Դաւիթ և Նոյն տէր Սահակ այլ և եղև կաթուղիկոս — 5 Նոյն· Նոյն տէր Դաւիթ և Նոյն տէր Սահակ այլ և եղև կաթուղիկոս տէր Փիլիպպոս ԻԲ· և կէս· ի սորին յառաջնեբորդում ամի մեռաւ Դաւիթ յամսեանն Օգոստոսի։

գալ և լինել կաթուղիկոս․ որ եկեալ եղև կաթուղիկոս սուրբ Էջմիածնի ի ՌԾԲ․ թուականին մերում և ի ՌԾԳ․ թուին Արապկոնս դարձաւ և գնաց ի Համիթ․ և ի ՌԾԵ․ թուին․ և ապրեալ ԻԳ․ վախճանեցաւ։ Եւ յետ գնալոյ Արապկոնին՝ զիշխանութիւն կաթուղիկոսութեան նոյն Դաւիթն և նոյն Մելքիսէթն ունէին և վարէին․ Բայց նախանձ և գրգռութիւն և հակառակութիւն ոչ սակաւ անկաւ ի մէջ Դաւթի և Մելքիսէթի վասն կաթուղիկոսական իշխանութեան․ վասն որոյ Մելքիսէթն եմուտ ի ներքոյ ծանր զաբալի, և ի բաց եհան զԴաւիթն՝ և ինքն միայն վարէր զկաթուղիկոսութիւն․ և յաղագս ծանրութեան զաբալին՝ ոչ կարաց վճարել, եւ զկաթուղիկոսութիւնն Մելքիսէթն իւր եղբօրորդի Սահակայ, և ինքն փախեաւ յաշխարհն Օսմանցւոց․ և գնաց յԻլով՝ և անդ վախճանեցաւ․ և զիշխանութիւն կաթուղիկոսութեան վարէր Սահակ կաթուղիկոսն, և վասն ծանրութեան զաբալին, որ ոչ կարաց վճարել, նա եւս փախեաւ յաշխարհն Օսմանցւոց։ Յետ փախստեան սորին ամենայն ազգն Հայոց արևելականք և արևմտականք միաբանեցան և արարին զՄովսէս վարդապետն կաթուղիկոս սուրբ Էջմիածնի ի մերում թուականիս ՌՀԸ․ Յունվարի ԺԳ․ և ի ՌՁԱ․ թուին ի Մայիս ամսոյ ԺԴ․ վախճանեցաւ։ Եւ ի ՌՁԲ․ թուին և Յունվարի ԺԳ․ զՓիլիպպոս վարդապետն օրհնեցին կաթուղիկոս սուրբ Էջմիածնի․ որ վարեաց սա զիշխանութիւն կաթուղիկոսութեան ի ժամանակս իւր ճոխ և փառաւոր, մինչ ի ժամանել թուականին մերոյ ի ՌՃԴ․ ամն․ և ի նմին ամի, ի մարտի ԻԵ․ վախճանեցաւ սա։ Եւ զկնի սորա յաջորդեաց զաթոռ կաթուղիկոսութեան Ջուղայեցի Յակոբ վարդապետն․ քանզի ի ՌՃԴ․ թուականին և յԱպրիլ ամսոյ ութն օրհնեցին զՅակոբ վարդապետն կաթուղիկոս սուրբ Էջմիածնի․ և այժմ սա վա-

րէ զիշխանութիւն կաթուղիկոսութեան, մինչև ցայսօր, որ է Թուականն մեր ՌՃԺԱ․ Յուլիսի ամսոյ Դ․ որ և հայցեմք ի Տեառնէ, զի երկար ամօք պահեսցէ զսա յուրախութիւն սրտից մերոց և ի փառս անուան իւրոյ․ ամէն։

ԳԼ․ ԼԲ․

Կարգ վարդապետաց սկսեալ ի Գօշէ Մխիթարայ գաւազանաւն որ իջանէ յԷջմիածնի դասատունն։

Նախ եռամեծ վարդապետն Մխիթար՝ որ մականուն [1] Գօշ կոչի․ նորին աշակերտ Յովհաննէս՝ որ է վանական, նորին աշակերտ Վարդան․ նորին աշակերտ Ներսէս․ նորին աշակերտ Եսայի, որ ի Նիչ գաւառէ․ նորին աշակերտ Յօհան Որոտնեցին․ նորին աշակերտ Գրիգոր Տաթևացին․ նորին աշակերտ Դանիէլ Ճգնաւոր․ նորին աշակերտ Յօհաննէս Համշէնցին․․ նորին աշակերտ Թորոս․ նորին աշակերտ Գրիգոր Տարօնացի․ նորին աշակերտ Յօհաննէս, որ մակ անուն Շիրակ ասի․ նորին աշակերտ Ղուկաս Կեղեցի․ նորին աշակերտ Սրապիոն Ուրհայեցի, որ եղև կաթուղիկոս սուրբ Էջմիածնի․ նորին աշակերտ Գրիգոր Կեսարացի․ նորին աշակերտ Մովսէս Սիւնեցին, որ եղև կաթուղիկոս սրբոյ Էջմիածնի և նորոգող նմին․ նորին աշակերտ Փիլիպպոս կաթուղիկոս սուրբ Էջմիածնի․ նորին աշակերտ անարժան և մեղապարտ գրիչս Առաքեալ․ և իմ աշակերտ Մակուեցի Վարդան։

---

[1] Ոսկ․ մակ անուամբ․

Այլ եւ կարգ վարդապետաց:

Այսոքիկ են կարգ վարդապետաց մերոց՝ ոչ առաջնոցն այլ վերջնոցն։ Նախ՝ Գրիգոր Տաթեւացին. և նորին՝ աշակերտ Դանիէլ. նորին՝ Յովհաննէս Համշենցին. նորին Գրիգոր յԱրճիշոյ, որ մակ անուն Չորթան ասի. և միւս աշակերտն Թորոս վարդապետն. իսկ Չորթանի աշակերտն Ներսէս՝ որ Մառաղն ասի. նորին Ներսէս Բաղիշեցին. նորին՝ Ներսէս Ամկեցին. նորին աշակերտքն երկու՝ Յովհաննէս Ոստանցին ի գեղջէն Վառնուշատայ, և Ազարիա ի Հայոց մեծաց ի գեղջէն Շահկերտայ, որ է մերձ քաղաքին Նախչուանու։ Իսկ աշակերտքն Յովհաննէս Ոստանցւոյն՝ Սիմէոն Ապարանցին, և Բարսեղ Գաւառցին. Սիմէոնի աշակերտն Կարապետ կայոն. և նորին միւս փոքր Սիմէոն Ճգնազգեացն. և Բարսեղի աշակերտքն բուժիկ Յովհաննէս Բաղիշեցին, և այլք բազումք. և Յովհաննիսիս աշակերտ Խաչատուր Բաղիշեցին, և այլ արեւելեանքս ամեն ի Չորթանէն սերեցան։

Դարձեալ նոր սկսայց ի Յովհաննէ Համշենցւոյն. նորին միւս աշակերտն Թորոս, որ ի վերոյ ասացաւ. Թորոսի աշակերտն Գրիգոր Տարօնեցին. նորին՝ Յովհաննէս Շիրաքն. նորին՝ Ղուկաս, որ էր ի Խորձունեաց գաւառէն, որ է Կեղի. նորին Պետրոս Կարկռցին, և Սրապիոն Ուրհայեցին, որ եղև կաթուղիկոս սրբոյ Աթոռոյն Էջմիածնի տարի մի և վեց ամիս. և փոխեցաւ առ Քրիստոս։ Այլ և նորին աշակերտքն Բարսեղ, որ է ի Սասնոյ ի Նիճ գաւառէն ի գեղջէն որ ասի Մարման. և Յովսէփ Հզուեցին. և ես նուաստ Կարապետ բանի սպասաւոր Բաղիշեցի ի գեղջէն Փարխնդոյ. զոր լուաք ի պատմագրացս, և զոր աչօք մերովք տեսաք. զի չէին ինչ պակաս յառաջնոց վարդապետացն՝ ուսմամբ՝ և զոր-

ծովք, այլ եւ գերագոյն։ (Այլ և [1] երկու անուանի վար-դապետ այլ գրեցին, Յովհաննէս Անթափեցին, որ է կաթուղիկոս Կիլիկեցւոց, և Գրիգոր Ղասարցին յԱ-ռաջին Հայոց, բանիբուն և սիրող իմաստասիրական հան-ճարոյ, Յովհաննէս ի մերոյ Ներսէսեանցն է և Գրիգոր ի Թորոսի աշակերտացն։)

ԳԼ. ԼԳ.

Թէ վասն որոյ պատճառի զհայազուն քրիստոնեայս հա-նին ի քաղաքամիջէն Սպահանու, եւ տարեալ յեզր քա-ղաքին յայնկոյս գետոյն բնակեցուցին։

Ի ժամանակս Թագաւորութեան երկրորդ Շահա-բասին, որ ունէր զգահոյս Թագաւորութեան իւրոյ ի մեծահանդէս քաղաքն Սպահան։

Եւ եղև այս Շահաբաս Թագաւորիս ելանել ի քա-ղաքէն Սպահանու ամենայն զօրօքն իւրովք և գնալ ի քաղաքն Ղազբին. և կարգեաց վերակացուս և իշխանս զոմանս յերևելի արանց ի վերայ քաղաքին Սպահանու, զի հովուեսցեն զքաղաքն ըստ պայմանի քաղաքական կարգաց։ Եւ ընդ բազում պատուիրանացն, առաւել և կարևոր քան զամենեսին զայս պատուիրեաց հրամայեաց նոցա, զի արգելումն և խափանումն արասցեն գինւոյ, զի բնաւ մի երևեսցի ի քաղաքին գինի, մի բնաւ ոք

---

[1] Լոն. չէ. Այլ և անուանի . . . ցվերջ որ ընդ փակա-գծով.

ճմլեսցէ խաղող՝ և տրպասցէ զգինի, և մի ոք վաճառեսցէ զգինի, և մի ոք արբցէ զգինի. և բնաւ մի երևեսցի նշան կամ հոտ գինւոյ. ոչ առ ռամիկս և ոչ առ իշխանս, կամ սպայազօրս հեծելոց. և թէ առ ոք գտցի՝ թէ առ վաճառողս, և թէ առ գնողս, խրատեսցեն զայնպիսին տուգանաւ. և հատցեն զունչս և զականջս, և թէ յեւս յանդգնութիւնս գտցեն յաճախեալ, զայնպիսեան զգլուխն սպանցեն, զորովայնն պատառելով և զլուխն կարելով. և այլ ևս ազգի ազգի տեսակս տանջանաց ի վերայ ածելով. քան զամենայն բան զայս առաւել կարեւոր պատուիրեալ շահին իւրոց կարգեալ քաղաքապետացն, և ինքն ելեալ յԱսպահանայ գնաց ի Ղազբին։

Եւ յետ ամաց ինչ անցանելոյ՝ եպարքոս Թագաւորին, զոր ինքեանք Իհտիմալ-Դոլվաթ ասեն, որում անունն էր Մահմատ բէկ. էր ի Ղազբին քաղաքին ի սպասու Թագաւորին, հարցանէր յեկողացն յԱսպահանայ վասն որպիսութեան քաղաքին, և վասն պէսպէս ինչ իրաց, և մանաւանդ վասն գինւոյ. և քանիցս որ եհարց ի սմանէ և ի նմանէ, ամենեքեան միապէս ասացին թէ, ոչ հաստատեցաւ արգելումն գինւոյ. զի հանապազ շրջին արբեալ արք գինւով՝ ի հրապարակս և ի փողոցս և յամենայն տեղիս։ Իսկ Իհտիմալ-Դոլվաթն յոյժ հոգալով հարցանէր ի սմանէ և ի նմանէ, թէ ընդէ՞ր ոչ հաստատի արգելումն գինւոյ յԱսպահան քաղաքի. և ամենայն ոք ըստ իւրում կարծեացն առնէր պատասխանի։ Բայց ոմանք՝ որք ոխս ունէին ընդ Ասպահանայ քաղաքի տարուղին՝ զմեղսն ի վերայ նորա բարդելով ասացին. թէ դուցէ տարուղին թոյլ տայ վասն շահու իւրոյ, որպէս զի ինքն կալեալ զվաճառողսն և զգնողսն տուգանեսցէ և կաշառս առցէ, և յոլով գանձս շահեսցի ի նոցանէ։

Իսկ Իհտիմալ-Դոլվաթն՝ զայս բանս ընդ այլոց

եւս բանից, զոր լուեալ էր ի պատմողաց՝ ծանոյց Թագաւորին. եւ ի մէջ զրուցաց Թագաւորն եւ Էհտիմալ-Դոլվաթն, որ ընդ միմեանս, ասաց Էհտիմալ-Դոլվաթն ընդ Թագաւորին. եթէ հրամայիսցէ արքայ, զոմն հաւատարիմ ի ծառայից Թագաւորին առաքեսցուք ի քաղաքն յԱսպահան, զի վերստին մունետիկ բարձր աղաղակաւ շրջեցուսցէ ի մէջ քաղաքին՝ եւ արասցէ արգելումն գինւոյ, եւ ինքն անդէն կացեալ ծածկապէս զննեալ դիտեսցէ, թէ ստո՞յգ են բանքն, որք վասն տարուղին ասացան. եւ առ այս բան հաւանեալ Թագաւորին հրամայեաց Էհտիմալ-Դօլվաթին՝ թէ արասցես ըստ ասացելումդ։ Իսկ Էհտիմալ-Դօլվաթն ընտրեաց ի Թագաւորական ծառայից զոմն յառաջակայ սպասաւորաց Թագաւորին՝ այր զգաստ եւ փոյթ ի գործս իւր՝ ի տիս երիտասարդութեան՝ որում անունն էր Նաջաֆղուլի բէկ. եւ պատուիրեաց նմա գնալ ի քաղաքն Ասպահան, զի վերստին արգելումն արասցէ գինւոյ, որպէս զի բնաւ մի երեւեսցի գինի ի քաղաքն Ասպահան. այլ եւ ծածկաբար քննեալ տեղեկասցի ամենայն բանից, որ վասն տարուղին ասացան։

Իսկ Նաջաֆղուլի բէկ՝ պատուիրանաւ Էհտիմալ-Դօլվաթին փքացեալ մտօք եւ գոռոզացեալ սրտիւ ելեալ ի Ղազբինու եւ եկեալ եմուտ յԱսպահան քաղաք. եւ սաստիկ տագնապաւ եւ բազում սպառնալեօք՝ եւ ահարկու բանիւք զարհուրեցուցանելով զամենայն, արգելումն արար գինւոյն. եւ եհան յամենայն հրապարակս մունետիկ, որ է ջառչի, որ ելեալ քարոզեցին բարձր աղաղակաւ թէ, հրամանաւ Թագաւորին արգելեալ է գինի, եւ առ ով եւ գտցի թշնամի է Թագաւորին եւ մահապարտ, որ[1] անպատճառ զայնպիսին սպանանեն։ Այլ եւ ինքն

---

1 Ուղ. չէ. որ.

Նաջաֆղուլի բէկն՝ պատրաստեաց այս բազումս. պատուիրեալ և հնարաւոր գործս ցուցեալ նոցա առաքեաց յամենայն տեղիս քաղաքին. և ուր և կարծիս ունէին լինել գինւոյ, զի արքն այնոքիկ անդ յակճիռս կացեալ դցայգ և զցերեկ զննեալ զխտեսցեն զամենայն երթևեկս, և այսպէս առնելով յոլով արբեցելոց արանց արար խրատու տուգանել, և զունչս և զականջս՝ և զձեռս և զոտս հատանելով. սակայն և այնու ևս ոչ կարաց խափանումն առնել գինւոյ։ Եւ վասն բազում և զանազան հնարագործութեանց ի վարանս խորհրդոց մտանէր, նաև հարցանէր ի սմանէ և ի նմանէ թէ, որպէս պարտ լինիլ կատարումն գործոյն։

Յայսմ վայրի ոմանք երևելի արք ի Թագաւորի ծառայից՝ որք նախածանօթք էին այս Նաջաֆղուլի բէկիս. յաւուր միում հրաւիրեցին զնա ի տունս իւրեանց ի պատիւ սիրոյ աղագաւ, այլ և երևելի արք բազումք կային յայնմ խրախութեան։ Ընդ որս էր և իշխան ոմն՝ որ էր գլխապան Թագաւորական գրեանց, զի ամենայն գրեանք Թագաւորին նմա յանձնեալ է, զի պահեսցէ, և [1] ում և պիտոյասցի, տացէ և առցէ. և ի մէջ հանդիսին այնմիկ ընդ բազում խօսիցն եկեալ խառնեցաւ և զրոյց գինւոյն, որոյ վասն բանս հարցողականս առաջարկեալ Նաջաֆղուլի բէկս, թէ զարմանամ զի ընդէ՞ր ոչ հաստատի արգելումն գինւոյ, զոր այսքան հրամայէ Թագաւորն, և մեք և զայսքան չարչարանս և զպատիժս ի վերայ ածեմք, և տակաւին ոչ կարեմք խափանումն առնել գինւոյ, և նստեալ արքն՝ ամենայն ոք ըստ իւրում [2] կարծեացն խօսէր և առնէր պատասխանի։

Իսկ գլխապան իշխանն արար պատասխանի Նաջաֆղուլի բէկին թէ, ի զուր է աշխատանք ձեր, և ոչ հաս-

---

1 Ոսկ. չէ+. և։ — 2 Նոյն. իւրոց։

տալ արգելումն գինւոյդ, զի պատճառք բազումք գոն, և մանաւանդ այս, զի ամենայն ազգք ի միասին խառն ի խուռն ընդ միմեանս բնակեալ են, մահմետականք, որք ոչ ըմպեն գինի և այլ ևս ազգքն՝ որք ըմպեն գինի, այսինքն, Փռանկք, Հայք, և Ջհուտք: Արդ՝ դուք եթէ ըմբռնէք զոմն, որ ունի ընդ ինքեան գինի, և ի հարցանելն ձեր թէ ուստի՞ բերես, և ու՞ր տանիս, նա պատճառէ յայս [1] ոմն Հայոց տանէ և [2] յայն ոմն Հայոց տուն տանիմ, յայնժամ խափանի հրամանն ձեր՝ և արգելումն գինւոյ: Այլ և ամենայն այք մահմետականք՝ որոց և յօժարի կամքն գինի ըմպելոյ, մտանէ ի տունս նոցա և ըմպէ գինի. նաև ի նոցունց գնէ յոլով գնով՝ և տանի յայլուր և ըմպէ, և այս ամենայն պատճառ է խառնիխուռն բնակիլն ազգացդ: Արդ՝ եթէ հաւատեաւ կամիցի Թագաւորն, զի վերասցի գինըմպութիւն ի քաղաքէս, բաժանեալ արոհեսցէ զազգս զայսոսիկ ի միմեանց, զմահմետականսն անխառն յայլոց ազգաց բնակեցուսցէ ի քաղաքամիջի աստ. և զայլ միւս ազգսն, զՀայք և զՋհուտ հանեալ ի քաղաքէն տարեալ յեզր քաղաքին ի պաշտաճաւոր տեղիս բնակեցուսցէ, և իւրաքանչիւր ազգաց ըստ իւրում պաշտաճին կարգս և սահմանս կարգեսցէ. ապա յայնժամ զոր ինչ հրամայեսցէ Թագաւորն և իշխանքն իւր՝ անխափան կատարի ամենայն:

Եւ բանս այս՝ զոր խօսեցաւ զլապան իշխանն, հաճոյ թուեցաւ բազմականացն: ԵՒս և Նաջաֆղուլի բէկին. զոր և ամփոփեալ պարուրեաց ի պահարանս մտաց իւրոց, և խորհէր թէ ի պատշաճ ժամու ծանուցից Էհտիմալ-Դօվլաթին. բայց ինքն բազում հօգաբարձութեամբ փոյթ յանձին կալեալ ջանայր կատարել զհրաման Թագաւորին և արգելել զգինին:

---

1 Ոսկ. յայն: — 2 Նոյն. չիք. և:

Իսկ յաղագս բանին, զոր խօսեցաւ զբապան իշխանն ի Հանդիսին յայն. ասացին ոմանք՝ ոչ յիւրոց մտաց յառաջարկեալ, այլ յայլոց յառաջարկութենէ, որ է այսպէս։

Վասն զի որպէս սովորութիւն է Թագաւորաց ունել ներքինիս ի տան իւրեանց ի սպասաւորութիւն ինքեանց և կանանց իւրեանց, զայս կարգս այս երկրորդ Շահաբաս Թագաւորս յոյժ առաւել բազմացոյց. քանզի բազում կանայս ժողովեաց յամենայն ազգաց, ըստ այսմ և բազում ներքինիս ստացաւ իւր. և ի բազմութենէ ներքինեացն, զոմանս ի նոցանէ վասն ծերութեան, և զոմանս վասն անհաճելութեան, և զոմանս յայլ ինչ պատճառէ հանեալ ի տանէ Թագաւորին ի բաց արձակէին, գնալ յայլ ուրեք ինքեանք զատ առանձին կեալ։

Եւ այս ներքինիքս, որք հանեալք լինէին ի տանէ Թագաւորին, եկեալ բնակէին ի մէջ քաղաքին, ի Շամշապատ անուանեալ Թաղն, վասն այսց պատճառաց։ Նախ զի այս Թաղս մերձ է տան Թագաւորին, զի եթէ ինքեանք կամեսցին գնալ ի տուն Թագաւորին, և թէ յընկերաց իւրեանց ի տանէ Թագաւորին կամեսցին գալ առ սոսա, դիւրին լինի և փոյթ վասն մօտակայութեան։ Երկրորդ՝ սոյնպէս և շուկային և վաճառանոցին մօտակայ է Թաղն այն։ Երրորդ՝ և մանաւանդ վասն ջրոյն, որ ի բոլոր տարին անպակաս է ջուր տեղւոյն այնմիկ. քանզի մեծ առու մի ջրոյ, սակաւ ինչ փոքր քան զգետ՝ գայ յայն Թաղն և գնայ ի Ջարբաղն, որ է Թագաւորական այգի. և անտի գնայ ի տուն Թագաւորին՝ որ ամենայն գործ և կարիք նոցա այսու ջրովս կատարի, մարդոց և անասնոց, այգեստանաց և ծաղկոցաց, և այլ գործոց։ Արդ՝ այսոքիկ այսպէս։

Այլ և զայս ես պարտ է գիտել. զի մեծ և առաջին Շահաբասն՝ աւերողն Հայաստան աշխարհին և կոր-

ծանօղն Հայոց ազգին, ի ժամանակին յորում ազգն Հայոց քշէր և տանէր ի Պարսկաստան, յայնմ[1] ի Հայոց ազգէն բաժին մի քրիստոնեայք, զոր Դաշտեցիք անուանեն, վասն լինելոյ նոցին ի Դաշտ անուանեալ գեղջէն՝ որ է ի գաւառին Գողթան՝ բերեալ բնակեցոյց յայսմ տեղւոջ ի Շամշապատ կոչեցեալ Թաղս ի մէջ մահմետականաց։ Եւ վասն լաւութեան տեղւոյն յայլ տեղեաց քաղաքին մահմետականք բազումք եկեալ ի Թաղս այս բնակեցան. սոյնպէս և ի Թագաւորի տանէն ելեալ ներքինիքն, եկեալ աստէն բնակեցան։ Եւ յամենայն տեղեաց աստի և անտի անդր ժողովելոյ մարդկանց, ոչ բաւէր տեղին տանել զամենեսին. այլ նեղութիւնս յոլովս կրէին վասն տեղւոյ. վասն որոյ միաբանեալ միւս մահմետականացն ընդ ներքինեաց Թագաւորին, սկսան հարստահարել զԴաշտեցի քրիստոնեայսն, զի արտաքսեսցեն զնոսա ի տեղւոջէն, որպէս զի ինքեանց ընդարձակութիւն լիցի։ Եւ յայսմանէ պատճառէ բազում բանս ամբաստանութեան ասէին նոքա զՀայոցն Դաշտեցւոց՝ զորս ի զուր՝ և զորս իրաւ։

Եւ քանզի հրաման Թագաւորին վասն արգելման գինւոյ էր, և 'այժմ ևս Պարսիկք յայնմանէ կողմանէ սկսան ամբաստանութիւն առնել զքրիստոնէից, եթէ նոքա գինարբու ազգք են և հանապազ գինեաւ պղծեն զՋուրն, զի յորժամ զխաղողն ճմլեն զքաղցուն զինի առնեն և զկնճիռն վաթեն ի ջուրն՝ որով պղծի ջուրն. և յորժամ քաշեն զարաղ, զմնացեալ մրուրն վաթեն ի ջուրն՝ որով պղծի ջուրն, և յորժամ կամին լուանալ զկարաս գինւոյն, բերեալ դնեն ի մէջ առուին մէկ և երկու օր ի թրջոց, և ապա լուանան, և լուացունք ջուրն դարձեալ թափի ի յառուն ի մէջ ջրոյն՝ որով պղծի ջուրն։

---

[1] Ուղ. չէ+. յայնմ.

Արդ զայսպիսի ամբաստանութեան բանս և զայն բանն ևս՝ զոր գրապան իշխանն ասաց Նաջաֆղուլի բէկին, և այլ բազում բանս զորս ի զուր և զորս իրաւ, աստ ի Շամշապատ Թաղն եկող և աստէն բնակող ներքինիքն ասացեալ էին գրապան իշխանին. զոր յայնմ ժամու գրապանն ասաց Նաջաֆղուլի բէկին։

Եւ յորժամ շահն և Իհտիմալ-Դօլվաթն դարձան ի Ղազբինու և եկին յԱսպահան. հարցումն արարին վասն գինւոյ արգելմանն՝ կատարեցաւ թէ ոչ, յայնժամ Նաջաֆղուլի բէկն վշտագնեալ սրտիւ ասաց, թէ որքան ունէաք կար՝ ջանացաք, և ոչ եղև խափանումն գինեըմպութեան։ Եւ ի բազում վարանս խորհրդոց մտայոյզ լինէր Իհտիմալ-Դօլվաթն սակս արգելման գինւոյ. քանզի ըստ անօրէն [1] օրինաց իւրեանց և ըստ առասպելաբան գրեանց իւրեանց անսուրբ համարին զգինին, և ինքեանց մեղք՝ զըմպելն նորին։

Իսկ Նաջաֆղուլի բէկն ի դիպող ժամու զգրապան իշխանի բանն խօսեցաւ առաջի Իհտիմալ-Դօլվաթին, և բանն հաճոյ թուեցաւ նմա, և այլոց ևս բազմականաց. և Իհտիմալ-Դօլվաթն ի պատշաճի ժամու զխօսեցեալ բանն գրապան իշխանին խօսեցաւ առաջի Թագաւորին։ Ո՛չ միայն ի միում աւուր, այլ յամենայն դիպող ժամու Իհտիմալ-Դօլվաթն և այլ նախարարքն՝ որք խօսողք էին առաջի շահին, հանապազ այնու կերպիւ խօսէին առաջի Թագաւորին. վասն զի Իհտիմալ-Դօլվաթն և այլք նախարարքն բազում փոյթ ունէին հանել զքրիստոնեայսն ի քաղաքամիջէն։ Եւ այնքան խօսեցան մինչև հաւանեցուցին զկամս Թագաւորին, որ գրով հրաման արար. Թէ ով ոք գինարբու ազգք են,

---

1 Ուղ. չէ. անօրէն,

ելեալք բաժանեսցեն ի մահմետականաց, և գնացեալ յերկիր քաղաքին ուրիշ բնակեսցին։

Յետ ընդունելոյ զայս հրամանս ի Թագաւորէն Էհտիմալ-Դօլվաթին, կոչեաց զՊաշտեցիսն առաջի իւր, և ծանոյց նոցա զհրամանս Թագաւորին, և հրամայեաց նոցա ելանել ի քաղաքամիջէն և գնալ յերկիր քաղաքին. և թէպէտ նոցա դժուարին էր ելանել ի բնակութեանց իւրեանց, յաղագս որոյ գնացին ի դուռնս մեծամեծաց և յոլովս աղաչեցին՝ զի գուցէ մնայցեն ի տեղիս իւրեանց՝ և ոչ ոք լուաւ բանից նոցա. զի իշխանքն՝ որք էին մահմետականք, ամենեցուն կամք և դիտաւորութիւնք միաբան էին առ ի հանել զնոսա։ Արդ՝ այսպիսի կերպիւ, եթէ ի հրամանէ Թագաւորին, եթէ ի բռնութենէ իշխանացն, եթէ ի հարստահարութենէ իւրեանց [1] մերձակայ մահմետականացն, անճար մնացին Պաշտեցի Հայքն ելին ի տանց և ի բնակութեանց իւրեանց. և գնացեալ ոմանք ի Ջուղայ, և ոմանք ի Գաւռապատ՝ տուն վարձեցին և անդէն հօվանաւորեցան ընչիւք և ընտանեօք իւրեանց։

Իբրև եղև որ զՊաշտեցի ժողովուրդսն ի բաց հանին մահմետականքն, այնուհետև սկսան զմիւս այլ ժողովուրդսն Հայոց հանել ի քաղաքէն։ Եւ էին սոքա յազգէն Հայոց ժողովածու ժողովուրդք, որք յիւրաքանչիւր աշխարհաց վտարանդի եղեալ էին և եկեալք յԱտրպատականի աշխարհի բնակեալք. որք էին ի Համթայ, ի Գազկու, ի Բաղիշոյ, ի Մշոյ, և ի Բերկրոյ, յԱրճիշոյ, ի Վանայ, յԱրծկոյ, յԵրզնկոյ, ի Դերջանայ, ի Բաբերդոյ, յԱրզրումայ. ի Սպերոյ, ի Բասենոյ, ի Կաղզուանայ, ի Շիրակուանայ, յԱրարատեան մասնաւոր գաւառացն յամենեցունց, յԱլաշկերտոյ, ի Մակուայ, ի Խոյայ,

---

1 Ռոմ. չիք. իւրեանց.

ի Սալմաստայ, յՈրմեայ, և այլ ևս իւրաքանչիւր աշխարհաց։ Որոց վասն հրամայեաց առաջին Շահաբասն, զամենեսեան ժողովել և վարել յաշխարհն Պարսից. զոր և բերեալ յԱսպահան քաղաք. և ի մէջ քաղաքին բնակեցուցին ի Թաղսն որոց՝ Թորոսկան, և Շխշաբանայ ասեն զանուանսն։ Նման սոցին հրամայեաց նոյն մեծ Շահաբասն, որ զԵրևանայ քաղաքի բնական տեղացի Հայս հանին յԵրևանայ և վարեալ տարան յԱսպահան քաղաք, և բնակեցուցին ի մէջ քաղաքին խառնիխուռն ընդ մահմետականաց, ի Թաղսն, զոր Թաղթիզարաջայ, և բազաթ կոչեն։

Եւ ի ժամանակիս յայսմիկ ի Թագաւորութեան այս երկրորդ Շահաբասիս, յետ հանելոյ զԳաշտեցւոց ժողովուրդսն, սկսան զԵրևանցւոց. և զՇխշաբանցւոց ժողովուրդսն ևս հանել. քանզի կոչեաց Էհտիմալ-Դօվլաթն առաջի իւր զաւագն Երևանցւոց՝ որում անունն էր խօջայ Յակոբջան, ընդ այլ ևս արանց, և ծանոյց նոցա զհրաման Թագաւորին, թէ պարտիք ելանել ի քաղաքամիջէ աստի և գնալ յեզր քաղաքին բնակել։ Եւ բազում բարութիւնս խոստացաւ ունիլ նոցա. քանզի կարի քաղցրութեամբ խօսեցաւ ընդ Երևանցւոց։ Իսկ ժողովուրդքն Հայոց թէպէտ ոմանք հաւանեցան, այլ ոմանք ոչ հաւանեցան, սոսա և բիրտ ազգս Հայոց. և սկսան դժկամակ և դիմադարձ լինիլ, և աղաղակ և շփոթս և զխռովութիւնս յարուցանել՝ որոյ կատարումն եղև վնաս ինքեանց։ Քանզի ամենեքեան ի միասին եկեալ ժողովեցան յանգս գնացից Թագաւորին՝ և ի մերձիլ առնոսա Թագաւորին՝ սկսան ամենեքեան բողոք բառնալ առ Թագաւորն, որոց այնպէս առնելն յոյժ դժուարին և ծանր թուեցաւ Թագաւորին. վասն որոյ ցասեաւ զայրացմամբ Թագաւորն ի վերայ ժողովրդեանն Հայոց. և ի պատճառէս յայսմանէ՝ որ ցասեաւ Թագաւորն ի վերայ

Հայոց, քաջալերութիւն ընկալեալ և զօրացեալ առիւ-
ծացան այլազգիքն ի վերայ Հայոց և սկսան բռնութեամբ
վարել զնոսա։ Քանզի կարգեաց Ըհտիմալ - Դօլվաթն զիշ-
խանս հանդերձ զօրականօք ի վերայ ժողովրդեանն Հա-
յոց, զի մի ևս տացեն նոցա զներումն ժամանակի՝ որ
օր յաւուր կամկար ելանիցեն, այլ փութանակի առանց
ներելոյ ժամանակի՝ ուժգին բռնութեամբ հանցեն ի քա-
ղաքամիջէն։

Եւ յայսմ վայրի անճար մնացին ժողովուրդքն Հա-
յոց, զի յամենայն կողմանց հատաւ տեղի յուսոյ և ա-
պաստանի նոցա թէ ի թագաւորէն և թէ յիշխանացն·
զի զամենեսեան ցասուցին ի վերայ ինքեանց, և նոցին
ի վերայ կարգեալ իշխանքն և զօրականքն յոյժ նեղու-
թեամբ ստիպէին զնոսա ելանել ի քաղաքէն։ Արդ յոր-
ժամ յաճախեաց բիրն ի վերայ գլխոցն Հայոց, ապա
թողին զբնական գոռոզութիւնն իւրեանց՝ զոր ի բնէ
բնաւորեալ ունէին յինքեանս· և զխելս և զգօնութիւնս
յինքեանս բերեալ սկսան յողոք անկանել առ իշխանս·
քանզի գրեցին արզայ և հասուցին ի ձեռն Ըհտիմալ -
Դօլվաթին, որպէս զի մի ևս նեղեսցեն զինքեանս, այլ
ներումն և ժամանակ տացեն, զի կամկար ելանիցեն։ Եւ
այսմ բանի հաւանեցաւ Ըհտիմալ - Դօլվաթն և հրա-
մայեաց այնպէս լինել, և ապա ի բաց կացին ի նոցանէ
հանող զօրականքն։

Զկնի այսոցիկ շահն, Ըհտիմալ - Դօլվաթն, և այլ
նախարարքն, խորհուրդ արարեալ հաճեցան տալ նոցա
տեղի բնակութեան յայնկոյս գետոյն մերձ առ Ջուղա-
յեցւոց։ Քանզի նստուածք քաղաքին Սպահանու այն-
պէս է· զի մեծ գետն՝ որ գայ և մտանէ ի քաղաքն Ս-
պահանու՝ յարևմտից գայ, և գնայ ի կողմն յարևելից·
իսկ քաղաքն, և ամենայն մահմետականքն՝ և տուն թա-
գաւորին, և վաճառանոցքն, և այլ ամենայն ինչ և իցէ,

որ առ քաղաք վերաբերի՝ սոքա ամենեքեան ի հիւսիսային կողմն գետոյն է։ Իսկ Ջուղայեցիք ի հարաւային կողմն յայնկոյս գետոյն են տեղաւորեալ, զատ և ուրոյն յայլոց ազգաց, և այժմ զտեղին՝ զոր կամեցան տալ այսմ ի քաղաքէ հանեալ ժողովրդեանս, այլուր մերձ Ջուղայեցւոց հաճեցան տալ. մերձ և հուպ և կից Ջուղայեցւոց առ եզերբ գետոյն, և այսմ խորհրդոյ ամենեքեան հաւանեցան, Թագաւորն, և իշխանքն, և Հայոց ժողովուրդքն, և այլք ամենեքեան՝ որք լուան։ Եւ ապա հրամանաւ Թագաւորին, Ընտիմալ-Դօլվաթն առաքեաց այս երկրաչափս՝ որ զնշանակեալ տեղին չափեցին և տուին ժողովրդեանն. և ժողովուրդքն բաժանեցին յինքեանս իւրաքանչիւրոց ըստ իւրում սակի։ Եւ սկսան շինել տունս և տեղիս բնակութեան ինքեանց՝ եթէ Երեւանցիք, եթէ Դաշտեցիք, եթէ միւս այլ խառնիճաղանճ ժողովեալ ժողովուրդքն, ամենեքեան ի միասին յայսմ տեղւոջ զետեղեալ բնակեցան։ Արդ՝ պատճառ հանելոյ քրիստոնէիցն ի քաղաքամիջէն Սպահանայ այրումն գինւոյ եղև. ըստ այսմ օրինակի որպէս և պատմեցաք։

Բայց ժողովուրդքն քրիստոնէից՝ զառաջինն ի հանելն զինքեանս ի քաղաքէն դժուարէին, զի ծանր Թուէր ինքեանց ելանելն ի բնակութեանց իւրեանց. բայց այժմ յոյժ դիւրասիրտք են և գոհանան զԱստուծոյ, զի խնամարկութեամբն Աստուծոյ եղեալ կատարեցաւ այս գործ ի վերայ քրիստոնէից. և է գոհանալն քրիստոնէից վասն բազում պատճառի։ Նախ՝ զի անդէն ի մէջ քաղաքին քրիստոնեայքն և մահմետականքն խառնիխուռն ընդ միմեանս բնակեալ էին, և ոմանք ի Թերահաւատ արանց քրիստոնէից հանապազօր տեսանելով զդիւր և զվայրահաս [1] և զմարմնապաշտ օրէնս մահմետականաց, և միշտ

---

1 Ուղ. զվայրասահ.

զքաղաքս և զպատմութիւնս օրինաց նոցա լսելով, թերանային ի քրիստոնէական հաւատոցս, մինչև իսպառ վերջացեալ դառնային ի քրիստոնէութենէ ի կրօնս մահմետականս, և լինէին մահմետականք։ Երկրորդ՝ եթէ ուստերք քրիստոնէից հաճէին դստերաց մահմետականաց, կամ թէ ուստերք մահմետականաց հաճէին դստերաց քրիստոնէից, այնքան ի ծածուկ և ի գաղտնի հնարէին և խօսէին մահմետականքն ընդ քրիստոնէից ուստերացն և դստերացն, մինչ զի զամենայն [1] կամս նոցա և զյօժարութիւն ինքեանց հաւանեցուցեալ դարձուցանէին ի կրօնս մահմետի։ Եւ զայսպիսիս բազումս տեսաք մերովք աչօք, որք գնացեալ անկան ի տունս մահմետականաց. և թէպէտ բազումս ջանային քրիստոնեայք հանել զնոսա անտի, ոչ լինէր՝ այլ ուրանային։ Երրորդ՝ զի անդէն ի քաղաքամիջին տեղիք քրիստոնէիցն նեղ էր և անձուկ, և սակաւաջուր, որ վասն ջրոյ սղութիւնս յոլովս կրէին. և աստէն ի նորումս տեղւոջ ընկալան տեղի լայն և ընդարձակ, յորում շինեցին [2] տունս մեծամեծս և վայելուչս. լայն և ընդարձակ զանազան յօրինուածովք. վերամբարձ վերնայարկօք [3] և ամարասուն հովանոցօք, որոց առաջի տեղիք զբօսանաց, պարտէզք, և ծաղիկք, և ծառք մրգաբերք։ Չորրորդ՝ զի անջատեալ տրոհեցան յօձաբարոյ ազգէն մահմետականաց, որ հանապազօր խածատեալ նենգէին և զզուէին զքրիստոնեայսն, և այժմ ամենայն քրիստոնեայքն ի միում տեղւոջ գումարեալ կան և ուրախութեամբ գոհանան զՏեառնէ Աստուծոյ. ուրում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Գիտելի է՝ զի յորժամ սկիզբն արարին ի հանել

1 Ոֆ. չէ. զամենայն. 2 Նոյն. չէ. շինեցին. 3 Նոյն. յարկօք.

զՔրիստոնեայսն ի Քաղաքէն, Թուականն մեր Հայոցս [1] էր ՌՃՊ. յորժամ հանին զՊաշտեցիսն. և ՌՃԾ. Թուին. հանին զԵրևանցիսն. և այժմ որ զպատմութիւնս գրեցաք, է Թուականն մեր ՌՃԸ. ուր եղին ի Քաղաքամիջէն, և ժողովեցան ի նոր տեղին, ուր շինեցին յարկ բնակութեան, և ոչ միայն ի Քաղաքէն ի ժողովրդենէն Քրիստոնէից, այլ ամենեքեան ժողովեցան ի նոր տուեալ տեղին։

Այլ եւս պատմութիւն ըստ յեղանակի անցելոց պատմութեանց:

Զի որպէս յոլով տեղիս պատմեալ եմք, եթէ մեծ և առաջին Շահաբասն, ոչ թէ երկիցս և երիցս վարեաց զազգս Հայոց յԱտրպատական աշխարհէ՝ ի Պարսկաստան, այլ յոլով անգամ, որպէս և այժմ։ Զի յորժամ էր Թուականն մեր ՌԿԼ. միւսանգամ հրամայեաց վերոյասացեալ Թագաւորն առաջին Շահաբասն, վասն ազգին Հայոց արտասահման առնել զամենեսեան յԱտրպատական աշխարհէն, և վարել յաշխարհն Պարսից։

Յորոյ հրամանէ եկեալ գնացին նորին իշխանքն բազում զօրօք ի Քաղաքն Երևան և ի գաւառս նորա, ի Գանձայ և ի գաւառս Թարվէզ և ի գաւառս նորա, յՈւրտաւիլ և ի գաւառս նորա, և սկսան քննութիւն և որոնումն առնել ի մէջ ազգին Հայոց, թէ որ ոք իցէ բնիկ բնական ի հարց և ի հաւուց տեղական, և որ ոք ոչ, այլ յայլմէ աշխարհէ եկամուտ և ժողովածու. զբնիկսն թողին, և զեկամտացն զամենեցուն զանուանսն գրեցին

---

1 Ռ-ն. չէ+. Հայոցս.

ի քարտէսի, և կացուցին ի վերայ նոցա յազգէն Հայոց պետս և վերակացուս և անուանեցին զնոսա Մելիք, և նոցա յանձնեալ աւանդեցին զամենայն ժողովուրդսն, զի թէ ոք պակասեսցի ի գրեալ ժողովրդոցն փախստեամբ կամ այլով կերպիւ, նոքա գտեալ ածցեն ի գումարս ժողովրդոցն, և թէ ոչ գտցեն, ինքեանք լիցին պարտաւորք թագաւորին և արժանիս սպանանելոյ։ Արդ՝ այսպիսի օրինակաւ զամենեսեան հանին ի բնակեալ տեղեացն, և վարեալ տարան ի Պարսկաստան։

Եւ բաժանեալ տրոհեցին ի նոցունց զքարագործ արուեստաւորսն զամենայն, և տարան ի քաղաքն Ասպահան վասն արուեստին, որ պիտոյանայր անդ ի գործս շինութեանց տան թագաւորին, և համօրէն ազգին Պարսից. և անդ յԱսպահան բնակեցուցին։

Եւ զայլսն զամենայն վարեցին և տարան ի քաղաքն Ֆահրապատ, և անդէն զոմանս ի քաղաքին, և զոմանս ի գեղօրայսն բնակեցուցին, որք ոչ մնացին և ոչ աճեցին, այլ օր յաւուր պակասեալ և վատնեալ սպառեցան, վասն դաժան և մգռահոտ և վնասակար օդոյն, որում ո՛չ էին ընտել. և թէպէտ բազումք կամեցան փախչել՝ ոչ կարացին, քանզի պատուէր ունէին ի թագաւորէն ճանապարհի պահողքն, զորս ռահդար կոչեն, թէ որք գան և մտանեն յաշխարհն Ֆահրապատու՝ թողուլ, և որք ելանել և գնալ կամին՝ ոչ թողուլ. և թէ գտանիցեն զոք թաքուն գնացեալ ըմբռնեալ սպանցեն. վասն որոյ ոչ ոք կարաց փախչել, և անդէն մնացեալ վատնեցան մահուամբ և կոտորմամբ, զի առաւել քան զԺԲ. տուն հայք գնացեալ էին. և այժմ Դ.Ճ. տուն հազիւ թէ մնացեալք են։ Եւ այժմու ժամանակիս եթէ պատահի ումեք քրիստոնէի գործ ինչ կարևոր ճանապարհորդութեան կամ այլ ինչ իրաց, պարտի գնալ առ քաղաքապետն և խնդրել թուղթ հրամանի և նշա-

նի առ ռահվային, զի մի արգելցեն, և մի դարձուսցեն զնա, զի [1] թէ ոչ լինի թուղթ, ոչ թողուն գնալ, և քաղաքապետն նախ առնու ի գնացողէն փոխանակ ան-ձին նորա զայլ ոք յերաշխի, և ապա տայ նմա թուղթ, և ապա ճանապարհորդն գնայ զճանապարհս իւր։

Իսկ զքարահատ արուեստաւորսն, զոր բերին ի քա-ղաքն Ասպահան, ի հարաւային կողմն քաղաքին յայն-կոյս գետոյն բնակեցուցին, ի տեղին ուր զԳաւրի ազգն էին բնակեցուցեալ, հուպ նաև [2] խառն ընդ նոսին բնա-կեցուցին զքարահատ Հայս։

Եւ այժմ ի թուականիս Հայոց ՌՃԸ. յամսեանն Մայիսի հրամայեցաւ ի թագաւորէն յերկրորդ Շահա-բասէն, զի այս Հայոց ժողովուրդքս, և ընդ սոցին ևս ազգն Գաւրի ելանիցեն յայսմ տեղւոջէ և գնայցեն ի տեղին ուր Երևանցիք՝ և Շիշաբանցիք, և Դաշտեցիք բնակեցան. սոքա ևս անդ բնակեսցեն, զի ամենայն այ-լասեռ և այլահաւատ ազգ որոշեսցին ի մահմետականաց, զի մահմետականք անխառն ի նոցունց բնակելով սուրբ գտա-նիցին. վասն որոյ և ազգն Հայոց և ազգն Գաւրաց ելեալ գնացին և մերձ վերոյասացեալ քրիստոնէիցն բնակեցան։

Իսկ թէ ոք հարցումն արասցէ վասն ազգին Գաւ-րի այս է։ Զի մեծ ՝և առաջին Շահաբասն անվթար կամարարն սատանայի [5] որպէս զազգն Հայոց յԱրարա-տական աշխարհէն վարեալ էած ի Պարսկաստան, սոյն-պէս և զազգն Գաւրաց արտասահման արարեալ յիւր-եանց բնիկ աշխարհէն, ի Քիրմանայ, և յՅեզդայ, ի Շի-րազայ, և յայլոց տեղեաց իւրեանց և բերեալ էած ի հիմն աւերն [4] յԱսպահան, և նոքօք լցուցեալ շինեաց

---

1 Ոսկ. չէ. զի թէ ոչ լինի թուղթ, ոչ թողուն գնալ։

2 Ոսկ. չէ. հուպ նաև. 5 Նոյն. չէ. կամարարն սատանա-յի. այլ ներնգախոհ. 4 Նոյն. չէ. ի հիմն աւերն.

և մարդաշատ արտը զԱսպահան։ Եւ այս Գաւրերս այսպէս եկեալ էին յԱսպահան և անդ բնակեալ, և այժմ զնոսա ևս հանեալ յայնմ տեղւոջէ, և [1] տարան մերձ Հայոց ազգին ի կողմն ինչ, և անդ բնակեցուցին։ Այս ևս այսպէս [2]։

ԳԼ. ԼԴ.

Պատմութիւն վասն ազգին Եբրայեցւոց բնակելոցն յԱսպահան քաղաքի. եւ այլոց եւս Եբրայեցի ազգին, որք են բնակեալ ընդ իշխանութեամբ թագաւորութեանն Պարսից, թէ վասն որո՞յ պատճառի դարձուցին յիւրեանց օրինացն ի կրօնս մահմետի։

Յետ հանելոյ ազգին Հայոց ի քաղաքամիջէն Ասպահանու, սկիզբն արարին և զազգն Եբրայեցւոց հանել։ Վասն զի ի ժամանակս թագաւորութեան այս երկրորդ Շահաբասին, և ի թուականութեանս Հայոց ՌՃԶ. յաւուր միում որ էր ուրբաթ օրն այն ընդ մերձենալ երեկոյին, որ լուսանայր ի վաղուեան օրն շաբաթ, նոյն Իհտիմալ-Դօվլաթն՝ որում անունն էր Մահմատ բէկ, որ և զազգն Հայոց եհան ի քաղաքամիջէն Ասպահանու, և այժմ կամի զի և զազգն Եբրայեցւոց հանել. վասն որոյ պատրաստեաց զօրականս և առաքեաց ի վերայ ազգին Եբրայեցւոց, որք են Ջհուտ ազգն, թէ դուք ամենայն ազգք Եբրայեցւոց պարտիք ելանել ի քաղաքամիջէ աստի և գնալ արտաքոյ քաղաքին ի միում յեզերաց քաղաքիս բնակել. զի որովհետև

1 Ոսկ. չէ. և։ 2 Նոյն. չէ. այս ևս այսպէս։

ոչ էք հաւատոյն Մահմետի. անսուրբ ազգ էք, ելէք ի քաղաքէս, և արտաքոյ քաղաքիս բնակեսջիք, քանզի այսպէս հրամայեցաւ վասն ձեր ի Թագաւորէն։

Առ որս աղերս արկեալ Եբրայեցւոց ասելով. որովհետև այսպէս հրամայեցաւ վասն մեր ի Թագաւորէն, հրաման Թագաւորին ի վերայ գլխոյ մերոյ՝ կատարեմք անպակաս զհրաման Թագաւորին, բայց խնդրեմք ի ձէնջ ներումն յաւուրս երիս, զի ուստերօք և դստերօք, և ամենայն ընչիւք և ստացուածովք մերովք ելեալ գնասցուք։ Եւ մանաւանդ տեսանէք իսկ, զի օրս տարաժամեալ է, այլ և հիւանդք և ցաւագարք, ծերք և մատաղ մանկտիք յոլովք գոն, որք ոչ կարեն այժմ զգիշերայն գնալ, վասն որոյ խնդրեմք ի ձէնջ ներումն զերիս աւուրս։

Իսկ եկեալ զօրականքն ոչ տային թոյլ և ներումն կելոյ մինչ ի վաղուեան օրն, այլ ստիպէին տագնապաւ և փութով ելանել յայնմ երեկոյի. քանզի այնպէս էր հրամայեալ նոցա Էհտիմալ-Դօվլաթն, ոչ ներել և ոչ թուլացուցանել մինչև ցառաւօտն, այլ ի նոյնում երեկոյի և ի նոյնում գիշերի հանել զնոսա զամենեսին ամենայն ընտանեօք իւրեանց. և թէ ոք մնասցէ ի վաղուեան օրն, գանս, և բանտս, և տանջանս ածիցեն ի վերայ այնպիսւոյ առնն, զի ոչ հնազանդեցաւ հրամանաց Էհտիմալ-Դօվլաթին՝ և ոչ գնաց։

Զայս արար Էհտիմալ-Դօվլաթն առ Եբրայեցիսն, որպէս զի նովաւ Եբրայեցիք լուծողք և անցաւորք դատանիցին շաբաթուն իւրեանց՝ զոր դատարկացեալք պահէին։

Եւ զօրականքն Էհտիմալ-Դօվլաթին, որք եկեալ էին ի հանել զԵբրայեցիսն, տանջելով և հարկանելով, և սրօք և բրօք վիրաւորեալ բռնութեամբ արտաքս վարեցին զամենայն Եբրայեցիսն յիւրաքանչիւր բնակութեանց, զկահ և զկարասիս նոցա ցրուեցին, և զդրունսն խորտակեցին։ Եւ Եբրայեցիքն ճիչ և կական բարձեալ աղա-

ղակաւ լալով և ողբալով. իւրաքանչիւր ոք կալեալ զձեռանէ ուստերաց և դստերաց իւրեանց, և զանկողինս և զձորձս բարձեալ յողն իւրեանց ելին ի տանց իւրեանց ի գիշերի ի տարադէպ ժամու. և շրջէին ի դրունս մահմետականաց, ի փողոցս և ի պողոտայս՝ և ոչ ոք էր՝ որ գթայր ի նոսա:

Ապա ելեալ Եբրայեցւոցն ի քաղաքէն և գնացեալ ի մէջ Ջուղայու և Գաւրապատու, և անդէն և ոչ գտին տեղի կելոյ, քանզի եկին զօրականք ոմանք որպէս թէ յԷհտիմալ - Դօլվաթէն առաքեալ, և պատուիրեցին Ջուղայեցւոց և Գաւարապատցւոց մի տալ նոցա տեղի, վասն որոյ և ոչ ետուն, և մնացին արտաքոյ յարկաց ամենայն ազգն Եբրայեցւոց:

Եւ եկն ի վերայ նոցա վտանգ և վիշտ մեծ, քանզի ժամանակն էր ցուրտ աշունն և սկիզբն ձմրան, և ցուրտն կարի վշտացուցեալ վտանգէր զնոսա, զի արտաքոյ յարկաց բացօթեայք կային: Եւ բազումք կային ի մէջ նոցա արք և կանայք ողորմելիք. (վասն զի [1] ոմանք էին ծերք և բազմօրայք, հիւծեալք և պակասեալք զօրութեանց. և ոմանք հիւանդք և ցաւագարք և վտիտք մարմնով որք ոչ զօրէին ի շրջել: Եւ յոլով կանայք մանկամարք ունելով մանկունս դիեցիկս ի ստինս իւրեանց, և ոմանք կանայք յղիք և ծանր ոտք. և ոմանք աղջկունք երիտասարդուհիք, և տղայք վայելչատեսք, առ որս տարփացեալ պիղծ և վավաշոտ և շնաբարոյ արք յազգէն Պարսից, խօսէին առ նոսա բանս տգեղս, աղտեղիս և ախտակիրս և ամօթս մեծամեծս ածէին ի վերայ նոցա:) Նա և այլք մահմետականք որք հանդիպէին՝ հայհոյէին, անարգէին, զզուէին, հարկանէին, և բազում նեղութիւնս հասուցանէին ողորմելեացն այնոցիկ:

---

1 Որէ. Նէր. վասն զի . . . . . ցվերջ ու ընդ ճոխութ.

Զկնի այսորիկ իբրև ետես Ըհտիմալ-Դօլվաթն թէ՝ անհնար է նոցա կամաւ տաճկութիւն, խորհեցաւ բռնութեամբ ածել ի տաճկութիւն. քանզի հրամայեաց ազգին մահմետականաց, և մանաւանդ արանց զինուորաց, զի ուր և գտցեն զայր Եբրայեցի կալեալ բերցեն ի դուռն Ըհտիմալ-Դօլվաթին։ Վասն որոյ ամենայն արք մահմետականաց ուր և գտանէին զայր Եբրայեցի՝ կալեալ կապեալ ածէին առաջի Ըհտիմալ-Դօլվաթին. և նա զառաջինն մեղմով խօսէր ընդ նոսա և ասէր, եկայք դուք մարդիկք, դարձարուք յունայն օրինաց ձերոց, և ծաներուք զարարիչն և զՏէր Աստուածն երկնի և երկրի՝ և լերուք մեզ եղբարք։

Իսկ Եբրայեցիք պատասխանեալ ասէին, զՏէրն և զԱստուածն երկնի և երկրի ճանաչեմք և պաշտեմք, բայց ձեզ եղբայր լինել ոչ կամիմք, և յօրինաց մերոց ոչ դառնամք, զի օրէնքն մեր ճշմարիտ է՝ և աստուածատուր, զի ձեռամբ Մովսէսի մարգարէին ետ Աստուած, որում դու իսկ գիտակ ես։

Ասաց Ըհտիմալ-Դօլվաթն- եթէ գայցէք ի հաւատս մեր՝ լինիք մեզ եղբարք սիրելիք, այլ և բազում գանձս և պարգևս և մեծութիւնս տամք ձեզ։

Առ այս բան՝ ոմն այր Եբրայեցի, որում անունն էր Յովսէփ պատասխանեալ ասաց, յորժամ աշխարհիս հողագործ արանցն ոք գայ առ մեզ ի գնել զաղբ մարդոյ վասն պարտիզաց, մեք նախ զգինն աղբին առնումք և ապա տամք զաղբն նոցա, իսկ դուք գանձս և պարգևս եդեալ ի վերայ ձերդ հաւատոյ ձգէք ի վերայ մեր. զայս ասաց այրն Յովսէփ՝ զի թերևս առ այն բան զայրասցի Ըհտիմալ-Դօլվաթն ի վերայ նորա և սպանցէ զնա։ Սոյնպէս և ամենայն հրէայքն ասէին, սպան զմեզ զամենեսեան. զի լաւ է մեզ ամենեցուն մեռանիլ քան թէ յօրէնս ձեր մտանել։

Եւ Էհտիմալ-Դօվլաթն ասաց՝ գիտեմ զի այդպիսի զայրացուցիչ բանսդ այնր [1] աղագաւ ասէք՝ զի ես զայրացեալ ի վերայ ձեր սպանից զձեզ, բայց այնպէս գիտակ լերուք՝ զի բնաւ ոչ զոք ի ձէնջ սպանանեմ, այլ մեղմագոյն և երկար չարչարանօք այնքան տանջեմ զձեզ՝ մինչ զի յամենայն կողմանց վհատեալք դառնայք յօրէնս մեր:

Իսկ արքն Եբրայեցիք համախորհուրդ եղեալ բանս աղաչանաց մատուցին առ Էհտիմալ-Դօվլաթն խնդրելով տեղի բնակութեան՝ և ասացին. որպէս զազգն Հայոց հաներ ի քաղաքամիջէ աստի, և յայլուր ետուր նոցա տեղի բնակութեան: Սոյնպէս և մեզ տուր տեղի բնակութեան կելոյ ի վայրի ուրեք յեզերս քաղաքիս, զի առ սակաւ սակաւ շինեսցուք մեք իւրաքանչիւր ոք մեզ տուն բնակութեան, և ելեալ ի քաղաքէս անդ գումարեալ բնակեսցուք:

Իսկ Էհտիմալ-Դօվլաթն համախորհուրդ եղեալ ընդ այլ ևս իշխանացն Պարսից՝ ցուցին նոցա տեղի ուրեք հեռի ի քաղաքէն. և զանուն տեղւոյն Գօզալդարայ կոչեն, որ է մերձ Մուսալաս իմամին և տեղիս այս էր անպատեհ և անձեռնտու. նախ՝ զի կարի հեռի էր ի քաղաքէն. և երկրորդ՝ առանց ջրոյ էր, և թէ ի հեռուստ ջուր բերէին ոչ գայր, և ոչ հասանէր, վասն վայրացն հեռաւորութեան, և թէ ի տեղին ջրհոր փորէին,, ոչ բղխէր ջուր զի լեռնական և վիմային էր տեղին: Զայս անպատշաճ տեղիս յայն սակս ցուցին, զի այսու ևս յանճար և ի տարակուսի մնայցեն Եբրայեցիքն, վասն որոյ Եբրայեցիքն ոչ կարացին գնալ ի տեղին յայն, այլ մնացին արտաքոյ և բացօթեայ:

Յայսմ հետէ մտախոհ եղեալ Էհտիմալ-Դօվլաթին առ սակաւ սակաւ ի տանջանս մատնել զԵբրայե-

---

1 Ուղ. այնու:

ցին։ Եւ ի վաղ և ի հին ժամանակաց ի միում տեղւոջ յեզերս քաղաքին արտաքոյ շինութեանց և բնակութեանց ի վայրի ուրեք, կայր տեղի ինչ բարձր պարըսպեալ և դուռն ի վերայ, բայց ի ներքս ի պարսպին տուն կամ բնակութիւն բնաւին ոչ գոյր, այլ լոկ միայն պարիսպ շուրջանակի բոլորեալ։

Հրամայեաց Էհոտիմալ-Պօլվաթն պարսիկ զօրականացն, զի երկու Եբրայեցի առն՝ մէկ զօրական կայցէ ի վերայ չարչարիչ, և զամենայն ըմբռնեալ և առ ձեռն գտեալ Եբրայեցիսն կապանօք տանիլ և լնուլ ի մէջ պարսպին այն, և ջուր ցանել յատակս նոցա ի վերայ երեսաց երկրի. և [1] զամենեցուն ձեռս ի յետս կապել և և հանել զվարտիս նոցա, և ի վեր հաւաքել զգլոշակս զգեստուցն և մերկ մարմնով նստուցանել ի վերայ երկրի։ Եւ էր ժամանակն ցուրտ աշունն, որ ի ցանել ջրոյն զերեսօք երկրի տամկանայր երեսք երկրի և մանաւանդ թէ սառնոյր և [2] ողորմելի Եբրայեցիքն մերկ մարմնով նստէին ի վերայ երեսաց երկրի սառուցելոյ, և Պարսիկ զինուորքն ի վերայ կացեալ հարկանէին. և զերիս տիւս և զերիս գիշերս այնպէս մնացին Եբրայեցիքն անօթի և անսուաղ, զի ոչ ոք տայր նոցա կերակուր, և ազգականք Եբրայեցւոց, եկեալ արտաքոյ կացեալ յետուստ կուսէ պարսպին բերեալ հաց ձգէին ի մէջ պարսպին առ ի լինել կերակուր Եբրայեցւոցն. և զայն ևս զինուորացն յափշտակեալ ուտէին՝ և ոչ տային Եբրայեցւոցն. վասն որոյ [3] անսուաղ մնացին զաւուրս երիս մինչև հրամայեաց Էհոտիմալ-Պօլվաթն՝ որ հանեալ անտի բերին ի քաղաքն և արկին ի բանտ։

1 Ոսկ. չէ. և զամենեցուն . . . . զգլոշակս զգեստուցն.

2 Նոյն. չէ. և ողորմելի . . . կացեալ հարկանէին։

3 Նոյն. չէ. վասն որոյ անսուաղ մնացին զաւուրս երիս մինչև.

Յաղագս Եբրայեցւոց հարցումն արար Ըհտիմալ-Դօլվաթն ընդ առաջնորդն և գլուխն օրինաց իւրեանց, զոր Սաղր ասեն ինքեանք թէ սոքա կամաւ ոչ գան ի հաւատս մեր՝ զինչ արասցուք. մարթ է բռնութեամբ դարձուցանել թէ ոչ. պատասխանի արար Սաղրն. ոչ գոյ հրաման յօրինաց մերոց զոք բռնութեամբ դարձուցանել։ Կրկին եհարց Ըհտիմալ-Դօլվաթն. ապա զի՞նչ արասցուք. ասաց Սաղրն, ինձ ոչ է փոյթ դու գիտես։

Դարձեալ կոչեաց Ըհտիմալ-Դօլվաթն զԵբրայեցիսն առաջի իւր և ասաց գալ ի հնազանդութիւն՝ և մտանել յօրէնս մահմետի. զի ով ոք գայ յօրէնս մեր տամք նմա զպարգևս երկու թուման՝ և նա ազատի ի տանջանաց և նստի հանդարտութեամբ ի տան իւրում. և ով ոք յառաջագոյն գայցէ ի հաւատս, տամք նմա պետութիւն և իշխանութիւն։

(Եւ էին [1] յազգէս Եբրայեցւոց արք ոմանք՝ որք էին թերահաւատ առ օրէնս իւրեանց, և խոտորեալք ի գործս թիւրս գողութեան և բոզութեան այլ և սոյնպիսի չարեաց, և ի ներտրամադրեալ խորհուրդս իւրեանց հաճեալք էին օրինաց մահմետի։ Իբրև տեսին զայս ամենայն անցս՛ որ առ Եբրայեցիս. այլ և լուան զյորդորական բանս Ըհտիմալ-Դօլվաթին, ոմն յայսց թերահաւատ արանցս որ կարի անհաւատ և պիղծ էր,) որում անունն էր Աւատիայ. նախ քան զամենեսեան սա եկեալ եկաց առաջի Ըհտիմալ-Դօլվաթին, և յօժարութեամբ յանձն էառ ուրանալ զհրէութիւն և դաւանել զտաճկութեան հաւատն։ Յորոյ բանից վերայ յոյժ ուրախացեալ բերկրեցաւ Ըհտիմալ-Դօլվաթն, և նստի գթով յարգեալ գովեաց և սիրեաց զնա. և կոչեաց զնա իւր եղբայրագիր, և զամենայն զգեստ անձին իւրոյ՝ զոր

---

1 Ոսկ. չէ. Եւ էին յազգէս . . . ցվերջ որ ընդ փակագծով։

զգեցեալ էր, հանեալ զգեցոյց նմա, և մինչև ցմատանիս մատանցն հանեալ եդ ի մատունս նորա, և այլ ևս ինչս յոլովս պարգևեաց նմա և յինքն հանգոյց զմիտս նորա։

Եւ այս ուրացող այրս Աւատիայ, եղև հնարացոյց իշխանացն Պարսից, քանզի ասաց զայս Երբայեցիս բազումս ի միասին մի պահէք, և կամ թէ զչորս և զհինգս ի միասին յատեան մի բերէք. զի քաջալերեալ հաստատեն զսիրտս իւրեանց, [1] այլ երկու և երեք միայն բերէք. և բռնութեամբ դարձուցէք, զի նոքա կամաւ ոչ դառնան։ Այլ և նախ կալարուք զքահանայն նոցա՝ զոր խախամ ասեն, և ի վերայ նորա բազում ջանիւ ջանացէք, խոստմամբ պարգևաց և սպառնալեօք տանջանաց, թերևս դարձուցանիցէք զնա զի թէ նա դարձաւ, ամենեքեան դառնան. ըստ այսմ օրինակի յոլով հնարս եցոյց Պարսից պիղծն և ուրացողն այն [2] Աւատիայն։ Որոյ խրատովն սաէպ յուզմամբ որոնեալ Պարսիցն գտին զխախամն, որում անունն էր Սայիտ՝ և բերեալ կացուցին առաջի Էհտիմալ-Փօլվաթին, առ որ ասաց հաւանեալ բանից իմոց և կատարեաց հրամանս թագաւորին, եկ դարձիր յօրէնս մեր մահմետականս, և առ յինէն պարգևս և բարութիւնս յոլովս. իսկ խախամն ոչ էր յանձին կալեալ, այլ հրաժարեալ էր. և այլ ևս բանս բազումս խօսեցան իշխանքն ընդ խախամին, և նա ոչ հաւանեցաւ. այլ խնդրեաց հրաման գնալոյ ի տունն իւր, և իշխանքն ետուն նմա հրաման գնալոյ. և անդէն առժամայն ուրացողն Աւատիայ, ազդեալ իշխանացն ոչ թողուլ զնա գնալ ի տուն իւր, այլ առ ինքեանս պահել և այնպէս արարին իշխանքն։ Եւ ի վաղիւն դարձեալ կացուցին յատենի և ի նոյն բան հրամայեցին դառնալ յօրէնս մահմետի. և յայնմ ևս նուագի ոչ հաւանեցաւ խա-

1 Այլ. իւրեանց. 2 Նոյն չէ+. պիղծն և ուրացողն այն.

խամն։ Եւ յերրորդումն աւուր ևս այսպէս կատարեցաւ գործն։ Իսկ յաւուր չորրորդի յետ բազում բանից, զոր խօսեցան ընդ խախամին, հատին ի վերայ նորա վճիռ, զի թէ ոչ դառնայ յօրէնս մահմետի պատառեսցեն զորովայնն և կախիցեն յուղտէ և շրջեցուսցեն ի մէջ քաղաքին և զինչսն և զընտանիսն առցեն յաւարի։ Զայս վճիռ հատին, և զուղտն բերեալ առ ժամայն նստուցին անդէն, և եկեալ դահճացն բացին զորովայնն, և հանեալ զսուրն իւրեանց հարկէին զխախամն կամ ուրանալ կամ զորովայնն պատառել։ Եւ խախամն յահէ սպանմանն, այլ և առ ի զութս ընտանեացն թուլացաւ. վասն որոյ դաւանեցուցին նմա զդաւանութիւն հաւատոյն իւրեանց՝ և դարձուցին յօրէնս իւրեանց մահմետի, և ուրախացան ի վերայ նորա անպատում ուրախութեամբ։

Յետ այսորիկ՝ որ զխախամն դարձուցին ի հաւատս իւրեանց, յարանցն Եբրայեցւոց ածէին յատեան մի և երկու և ասէին ցնոսա. զի՞նչ ևս ունիք ասել, զի ահա խախամն ևս եկն ի հաւատս, և դուք զի՞ ևս յամառեալ դիմադարձիք. և Եբրայեցիքն ոչ հաւանէին։ Վասն որոյ հրամայէին իշխանքն զօրականացն տանիլ զԵբրայեցիսն ի բանտ. և նոյնժամայն միւսանգամ բերել և այնպէս բազում անգամ տանէին և բերէին. և ի տանիլն և ի բերելն՝ զօրականք և ծառայք և սպասաւորք իշխանացն, որք կային ի տեղիսն, թքանէին, հայհոյէին, հարկանէին, ապտակէին, զարկուցանէին զգետնի, և ընդ քարշ տանէին. և բերեալ կացուցանէին առաջի իշխանացն և Էհտիմալ-Դօլվաթին, և բռնութեամբ դաւանեցուցանէին զդաւանութիւն հաւատոյն մահմետի, և Եբրայեցիքն առ վտանգի տանջանացն ակամայ կամօք դաւանէին։ Եւ յետ դաւանելոյն բերէին Պարսիկքն ագուցանէին դաւանողաց նոր կապայ, և տային նոցա պարգև յարքունական գանձէ իւրաքանչիւր առնն երկու թուման

դրամ. և Թողուլին գնալ ի տունս իւրեանց. և որք ոչ ուրանային դարձուցեալ ի բանսն պահէին. և ապա կրկին և երեքկին և բազմակի բերեալ յառաջ կացուցանէին և հարկէին ուրանալ: Եւ այնպէս առնելով զամենայն կալեալ արսն դարձուցին ի կրօնս մոլար առաջնորդին [1] Մահմետի, և ամսաչափ միոյ աւուրս երեք հարիւր և յիսուն այր դարձուցին յօրէնս Մահմետի:

Այսուհետև Եբրայեցիքն տկարացան առաջի Պարսից, զի կէս մասն ի նոցունց դարձան յօրէնս Պարսից, և Պարսիկքն զօրացան ի վերայ Եբրայեցւոց, և այլ ոչ ևս անսացին նոցա կալ, այլ բռնութեամբ կալեալ զԵբրայեցիսն օր յաւուր ածէին առաջի Իհտիմալ-Դօլվաթին, և բռնութեամբ դարձուցանէին ի կրօնս Մահմետի:

Եւ այնքան հետևեցան Պարսիկք և բռնացան ի վերայ Եբրայեցւոց առ ի դարձուցանել զնոսա և ո՛չ արարին ներումն և ո՛չ սակաւ մի, մինչև զամենայն ազգն Հրէից զբնակեալսն ի մէջ քաղաքին Ասպահանու դարձուցին ի կրօնս Մահմետի, վասն զի սակաւք էին ազգն Հրէից բնակեալք յԱսպահան քաղաքի, իբրև երեք հարիւր տուն, պակաս և ոչ աւելի:

Եւ ի զրաւել ամենեցո՛ւն կարգեցին ի վերայ նոցա Մահմետական մօլլայ, որ ուսուցէ նոցա զօրէնսն Մահմետի, և համապազ տարցի յաղօթանոցն Պարսից. զի պարսկօրէն աղօթեսցեն. և մանկանց նոցա ուսուսցէ գիրս և զաւանդութիւնս մահմետականս. այլ և օրինադրեցին Հրէից զի զդստերս իւրեանց տացեն մահմետականաց, և ի դստերաց նոցա ինքեանք առցեն. այլ և մի՛ արասցեն զենումն կենդանեաց, որպէս յառաջն ունէին, այլ ի շուկայէն ի մահմետական զենողաց առ-

1 Ոմն. ձեռ. մոլար առաջնորդին.

ցեն միս. և այլ ևս այսպիսի օրինադրութիւնս բազումս կարգեցին Պարսիկ ի վերայ Եբրայեցւոց։

(Այնուհետև [1] Նոցա վերակացու մօլլայն հանապազ ժողովէր զնոսա և ի միասին գնային ի մաչիթ, և աղօթէին Հրէայք առ հաճուկս լինելով Պարսից ի սուղ ինչ աւուրս, և վասն զի ոչ էին կատարեալ կամօք մտեալ ընդ աւանդութեամբն Մահմետի, ի սակաւ աւուրս գնացին և այնուհետև թուլացեալ սակաւ սակաւ յետնեալ եղեն։ Եւ յորժամ վերակացու մօլլայն հարցանէր Հրէից, թէ ընդէ՞ր ոչ գայք յաղօթանոցն, Եբրայեցիք զայս և զայն պատճառեալ անցուցանէին. և մօլլայն խրատէր զնոսա. և նոքա այնմ ևս ոչ անսացին. և ապա բարկացաւ մօլլայն ի վերայ նոցա, և այնմ ևս ոչ անսացին. և յայնմհետէ մօլլայն մատեաւ առ իշխանս մահմետականս և եղև ամբաստան զՀրէից, թէ ոչ մտանեն ընդ օրինօք մերովք։ Եւ Եբրայեցիք ևս ամբաստան եղեն զմօլլայէն, թէ կաշառաց ակն ունի առ ի մէնջ, և յայն սակս ընդվայր չարչարէ զմեզ և մեք զի ոչ տամք, վասն այն ամբաստան լինի զմէնջ։ Եւ այնքան կերպակերպ կեղծիւք և հընարիւք վարեցան Եբրայեցիքն ընդ Պարսից՝ մինչ զի ձանձրացան Պարսիկ, իշխանքն և մօլլայն և ի բաց կացին ի նոցունց. այլ և Պարսից ամենեցուն յայտնի եղև, որ Հրէայք ոչ կամին մտանել յօրէնս Մահմետի։)

Իսկ որք Հրէայքն էին՝ ոչ գնային ի մաչիթն Պարսից, նա և ոչ բնաւ մօտանային նոցա. և ոչ գնէին միս ի շուկայէն, այլ ծածուկ ի տունս իւրեանց զենուին ոչխարս, և կամ թէ առանց մսոյ անցուցանէին աւուրս բազումս։ Եւ լինէր զի երբեմն երբեմն վասն [2] ահի և երկիւղի մատնողացն և Պարսիցն՝ գնային Եբրայեցիքն ի

---

1 Ոսկ. պակասի Այնուհետև . . . ցվերջ որ ընդ փակագծով։

2 Նոյն. չէ. վասն.

շուկայն և գնէին զեններս միս ի Պարսիկ զենողաց, և ակներև բաց և համարձակ առաջի ամենեցուն բերէին ի տունս իւրեանց՝ որպէս թէ իւրեանց ուտելոյ վասն. և ոչ ուտէին. այլ ի ծածուկ ձգէին առաջի շանց՝ և շունքն ուտէին։ Եւ այլ բազում այսպիսի գործս ունէին ազգն Եբրայեցւոց, որովք յայտնեալ ստուգեցաւ թէ ոչ կամին թողուլ զօրէնս հրէութեան։

Բայց անօրէն և ուրացողն այն [1] Աւատիայ և իւր գործակից չար ընկերքն՝ որք ընդ նմա ուրացան, սոքա յոյժ ուրախ և հաստատ էին ի վերայ իւրեանց նորագիւտ հաւատոյն՝ կրօնիցն Մահմետի, վասն որոյ շրջագայեալ ի մէջ Եբրայեցւոց յուզէին, զննէին, տեղեկանային, թէ ո՞ր ոք կամակար մտօք իցէ հաւանեալ օրինացն Մահմետի, և ո՛ր ոք ոչ. այլ տակաւին ունի ի ծածուկ զօրէնս Հրէութեան։ Եւ յայսմ պատճառէ բազում նեղութիւնս հասուցանէին ազգին Հրէից, զոլս կրաւ և զոլս անկրաւ. քանզի կալեալ զոմանս ի Հրէից հարստահարեալ և բանավէճ լեալ դատափետ առնէին, և ասէին, ընդէ՞ր դու ոչ գնաս ի մաչիթն յաղօթել՝ այլ գնաս ի ժողովարանն Հրէից։ Եւ ոմանց թէ զորդին քո առ խախամն առաքես յուսանիլ՝ և ոչ առ մօլլայն. և ոմանց թէ միս ոչ առնուս ի շուկայէն, այլ ի տան քում զենումն առնես. և այլ այսպիսի գործս բազումս առնէին ընդ Հրէից՝ ուրացողքն ի նոցունց. և Եբրայեցիքն՝ վասն երկիւղին Պարսից բազում աղաչանս արարեալ նոցա և կաշառս տուեալ, հազիւ ուրեմն կարէին զերծանիլ ի ձեռաց նոցա։

Այլ և [2] այս ուրացողքս պատճառք եղեն զի զերից Եբրայեցի արանց զդստերսն առին Պարսիկք իւրեանց

[1] Ուղ. չէ. անօրէն և ուրացողն այն։ 2 Նոյն. Այլ և . . . ցվերջ որ ընդ ծանօթովն։

ի կնութիւն. քանզի յանուանէ յիշեցին զաղջկունսն առ ի Պարսից և յոլովս գովեցին, և գրգռեցին զՊարսիկսն առնուլ զաղջկունսն ի կանայս, այլ և ինքեանք վրէժխնդիր լեալ հարկէին զտեարս աղջկանցն տալ Պարսիցն ի կնութիւն, իսկ Եբրայեցիքն ոչ կամէին տալ և տեարք աղջկանցն բազում կերպիւ հնարս գործեցին և կաշառս ետուն, զի գոնեա ազատեսցեն զաղջկունսն, և ոչ կարացին, այլ առին Պարսիկք զբռնի աղջկունս.) և ազգն Հրէից յոյժ վշտացեալ ի սիրտ և յոգի՝ խոցեցան ի վերայ արարմանց ուրացողացն. և զայրագին սրտմտութեամբ և նախանձու լցեալք եղեն, և եդին հաստատութեամբ ի միտս իւրեանց սպանանել զուրացողսն, և նախ զԱւատիայ, զի նա կարի չարագոյն էր։

Եւ [1] էր այր մի յազգէն Հրէից յոյժ վրէժխնդիր օրինացն հրէութեան, որում անունն էր Փինհաս, սա նախանձախնդիր գոլով օրինացն հայրենի, եռայր ի սիրտ և յոգի սպանանել զԱւատիայ. և հանճարեալ հնարիւք եգիտ այլ ևս այրս երիս յազգէն Հրէից խորհրդակից և ընկեր ինքեան, վասն սպանման պղծոյն Աւատիայի, անուն միոյն Իսահակ՝ և երկրորդին՝ Մասիհ, և երրորդին՝ Յուդայ, սոքա չորքեան միաբանեալ և հաստատութեամբ պայմանեցին ի միջի իւրեանց ի դէպ ժամու սպանանել զԱւատեայ [2],

Իսկ ի խնամոցն [3] Աստուծոյ պատահեցաւ յաւուր միում գործ այսպիսի, զի Աւատիայն ըստ հանապազորդ սովորութեան իւրում շրջէր ի տունս Հրէից յաղագս զննելոյ և դիտելոյ զնոսա, և հանդիպեցաւ քահանային Հրէից, զոր խախամ կոչեն. և ասաց նմա ահացուցանելով զնա, դու ո՞չ թողուս զՀրէայսն դառնալ ի տաճկու-

---

1 Ոսկ. չէ. և։ 2 Նոյն. զոր և սպանին։ 3 Նոյն. պակասէ իսկ ի խնամոցն . . . ցվերջ ող ընդ փակագծով։

Թիւն, վասն զի շրջիս ի տունս նոցա խրատեալ՝ քաջալերես հաստատուն կալ ի հրէութեան. այլ և զննումն կենդանեաց առնես ի տունս նոցա. և խախամն թէպէտ յուրաստ կայր և բազում բանիւք դնէր վկայութիւն և երդնոյր, զի գոնեա զերծցի ի ձեռաց նորա և ոչ կարաց։ Ասաց Աւատիայ, եթէ իրաւ է ասացեալն ի քէն, որ ոչ առնես զննումն կենդանեաց, և ընդէ՞ր պահես առ քեզ զսուրն զննման. արդ՝ բե՛ր և տուր ցիս։ Եւ սուրն զննման՝ զոր խնդրեաց Աւատիայ, այս է. զի ոչ է սուրն այն որպէս զայս հասարակ սուրքս, որ ամենայն ոք կրէ առ ինքն, այլ այն սուրն այլ իմն սուր է, մեծ և երկայն և կարի անուեալ սուր, որ յառաջնում նուագին ի քարշելն ի պարանոցս ոչխարին հատցէ զգլուխն, և թէ ևս յաւելցի երկիցս՝ և ոչ ևս, իսկ թէ երիցս կրկնեսցէ, անընդունելի է զենեալն, և զայս սուրս յատուկ վասն զննման շինեն և քահանայն ունի առ ինքն վասն զենլիս առնելոյ և ոչ այլ ոք. վասն այսորիկ ասաց Աւատիայ, քահանային թէ, տուր ցիս զսուրն զննման։ Եւ խախամն՝ զի ոչ կարաց զերծանիլ ի նմանէ, վասն որոյ ետ ի նա զսուրն զննման. և առեալ զայն Աւատիայ եհար ի միջաց գօտին իւր, և թողեալ զխախամն սկսաւ գնալ ընդ պողոտայն՝ յորում պողոտայի էր և տունն Փինհասին. և գալով եկեալ եհաս մինչ ի դուռն տան Փինհասին, և ի նմին ժամու պատահեցաւ, զի Փինհաս ևս դուրս գայր ի տանէ իւրմէ, և առժամայն պատահեցաւ Աւատիային, և երկոքին սկսան բարևել ընդ միմեանս և հարցանել զողջունէ իրերաց, և Փինհաս խորամանկ նենգութեամբ սկսաւ կեղծիւք և առ աչս բարեկամ և սիրելի ձևանալ՝ և լրջամիտ յօժարութեամբ և բազում թախանձանօք մեծարել զնա ի տուն իւր ի պատճառս պատուոյ, յորոյ պատճառէ Աւատիայ գնաց ի տունն Փինհասին։ Եկին անդ և ե-

րեքին ընկերքն և ուխտադիրքն Փինհասին, Իսահակ և Մասիհ և Յուդայ, բերին յառաջ սեղան, կերակուր և գինի, և զի էր ժամանակն գարնանային․ վասնորոյ կայր ի մէջ սեղանին վարունգն, որ է խիար․ և Փին-հաս խնդրեաց ի մօրէն դանակ վասն կեղևելոյ զվա-րունգն․ և մայրն՝ քանզի գիտէր թե վասն սպանանելոյ զԱւատիայ՝ պատճառանօք խնդրէ զդանակն, վասն որոյ ոչ ետ, այլ ասաց թէ ոչ գոյ ի տան աստ դանակ․ և Փինհաս երկիցս և երիցս կրկնեալ խնդրեաց ի մօրէն դանակ և նա ոչ ետ։

Յայնժամ Աւատիայ զսուրն զայն զոր առեալ էր ի քահանայէն և ընդ իւր ունէր, հանեալ ետ ի Փինհաս, ահա դանակ, առ և դովաւ կեղևեա․ և Փինհաս իբրև էառ զսուրն ի ձեռն իւր՝ նոյնժամայն յարուցեալ ի վե-րայ Աւատիային, կալաւ ձախու ձեռամբն զմօրուացն նորա և ասէ․ դո՞ւ ես որ ուրանաս զաստուածատուր օրէնս Մովսիսական․ նաև բռնադատես զորդիս Իսրայէլի զնոյն գործել։ Եւ Աւատիայ թէպէտ զբազում աղա-ղակեաց, սակայն ոչ լուաւ նմա Փինհաս, այլ նոյնժա-մայն սրովն այնմիկ եհատ զգլուխն Աւատիայի և ի բաց ընկէց ձեռնտուութեամբ երից ընկերաց իւրոց։)

Զկնի սատակման պղծոյն Աւատիայի խորհեցան չո-րեքին արքն կորուսանել զպիղծ գէշ նորա․ և թէպէտ բա-զում կերպիւ խօսեցան, ոչ կայացաւ խորհուրդն նոցա, այլ հաւանութեամբ չորիցն այսպէս արարին, զի իբրև եհաս գիշերն, և ի մէջ գիշերին բարձեալ զդին պղծոյն Աւա-տիային և տարեալ հեռացուցին ի տանց իւրեանց և ի մէջ պողոտային ի կողմն ինչ ընկեցին զնա և ինքեանք աներևութացան։

(Եւ վասն [1] այսպէս առնելոյն ի բազմաց Հրէից հար-

---

1 Ս. Ն. Դաւանն յերես 472—475 ցվերջ ու ընդ Յովսեփոս։

ցաք, թէ ընդէ՞ր այդպէս անմիտ և անպատշաճ գործս գործեցէք, որ յետ սպանանելոյն ի վայրի ուրեք ծածկաբար ոչ կորուսէք, այլ տարեալ ի մէջ պողոտային յայտնի ընկեցէք։ Եւ ամենեքեան զայս ասէին պատճառ. օրէնք է ի մէջ ազգին Հրէից, եթէ դէպ լինիցի առն ումեմն մեռանիլ, պարտ է զի կին նորա ինքն ականատես իցէ մահուան առն իւրոյ։ Իսկ թէ ի տար աշխարհի իցէ մեռեալ այր կնոջն, հարկէ զի ականատես այր ոք եկեալ վկայեսցէ վասն մահուան առն նորա, և կամ հաւաստի համբաւ, և կամ վկայական թուղթ եկեալ ծանուսցէ զմահ առնն, և ապա հրաման տայ օրէնքն՝ կնոջն այնմիկ այլոյ ումեմն առն զուգաւորիլ, և թէ ոչ այսպէս իցէ, ոչ ունի հրաման կինն այն զուգաւորելոյ, այլ նստի այրի և անտէր, վշտօք և տառապանօք, մինչև ցօր մահուան իւրոյ։ Եւ չորեքին արքս այսոքիկ ողորմելով կնոջն Աւատիայի, ընկեցին զդէշ նորա ի պողոտայն, զի տեսանելով կնոջն նորա, հրաման լիցի նմա զուգաւորիլ ընդ առն այլում։

Եւ ի գիշերին յորում զդին պղծոյն Աւատիայի արկին ի մէջ պողոտային, ընդ լուսանալ առաւօտին տեսեալ զդին՝ ի վերայ ժողովեցան բազումք, և ծանուցեալ եղև թէ ո՞վ ոք է. ազդ եղև Եբրայեցւոցն և ազգականաց սպանելոյն, որք ժողովեցան ի վերայ նորա և մեծաւ աղաղակաւ և խռովութեամբ յուզէին և խնդրէին զարարողն նորին։ Իսկ մայր և կին Աւատիային վաղվաղակի ընթացան ի դուռն Էհտիմալ-Դօվլաթին լալով և հառաչանօք կական բարձեալ ծանուցին նմա ասելով, զեղբայրն քո զԱւատիայ սպանին. նոյնպէս և գնացին առ դիւան-բէկին Թագաւորին, և նմա ևս ծանուցին։ Եւ նոյն ժամայն Էհտիմալ-Դօվլաթն և դիւան-բէկին հրամայեցին զօրականաց բազմաց զի վաղվաղակի հասցեն ի թաղն Եբրայեցւոց, և ի տունս, և ի պողոտայս,

և ի շուկայս, և յորում և իցէ վայրի, զամենայն Եբրայեցի արս գտեալս, կալեալ կապեալ ածցեն առաջի դիւան-բէկոյն. զոր և առժամայն կատարեցին զօրականքն. և զգէշն Աւատիայի հրամանաւ իշխանացն բարձեալ անտի և բերեալ արկին ի քաղաքի մեծ մէյդանի մէջն։

Եւ ապա սկսան յառաջ բերել յատեան յարանցն Եբրայեցւոց զերիսն և զչորսն և հարցանէին թէ ո՞վ ոք իցէ սպանողն, և Հրէայք ամենեքեան միապէս ասէին, թէ ոչ գիտեմք, և թէպէտ զբազումս հարցին, սակայն ոչ կարացին գտանել. բայց գտին այսպիսի կերպիւ։

Եւ զի էր այր մի յԵբրայեցւոց ժողովրդենէն, որում անունն էր Սասուն, որում գոյր ինչս և ստացուածս յոլովս, և էր սա քեռի ուրացողին և սպանելոյն Աւատիային. բայց ինքն Սասուն ոչ էր ուրացեալ. և մինչ կենդանի էր Աւատիայ և ուրացեալ, հանապազ մեծաբանէր ի վերայ քեռոյն իւրոյ Սասունի. թէ որովհետև ես տաճկացեալ եմ, ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի, զոր առնելոց եմ ի քէն օրինօքն և դատաստանօքն Պարսից։ Եւ Սասուն ի լսելն զայսպիսի բանս ի նմանէ յոյժ երկնչէր, և հանապազ սպասաւորեալ պաշտէր զնա ուտելեօք և ըմպելեօք, և պատուական ինչս և արծաթս իբր թէ պարգևս կաշառս տալով նմա հաճեցուցանէր զկամս նորա, զի մի գուցէ գործով կատարեսցէ, զոր բանիւ ասէ. և այսպէս անցուցանէր զաւուրս իւր. և յաւուրս և ի ժամս յայս՝ յորում խնդրէին զսպանողսն Աւատիայի, և ոչ գտանէին, յայսմ պատճառէ կարծիս տարեալ կալան զՍասուն և ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք արանց ասելով. դու ես սպանեալ զԱւատիայ, վասն ընչիցն քոց զի մի առցէ. և Սասուն թէպէտ զբազումս խօսէր և վկայութիւնս դնէր և երդնոյր, սակայն ոչ կարէր հաւանեցուցանել։ Յայսմ պատճառէ յանհնարս անկեալ Սասուն՝ սկսաւ

ինքն և բարեկամքն իւր սակաւ յուզմամբ որոնել ի մէջ հրէից և հարցանել ի սմանէ և ի նմանէ, և այսպիսի յուզմամբ պատահեցաւ ումեմն յընկերաց Փինհասին և ցաւագին պաղատանօք հարցանէր ի նմանէ ինքն Սասուն․ և մեծամեծ երդմամբ և բազում դաշամբ հաստատէր, թէ ոչ ումեք յայտնեմ․ արդ՝ հնարեա գործ ինչ առ ի փրկել զիս․ զի թէ զիս կալնուն, տուգանս և ինչս բազումս առնուն յինէն վասն հարուստ համբաւեւոյ իմոյ անուանս, իսկ ի քէն չափաւորս առնուն տուգանս․ և զայն ևս զոր ի քէն տուգանք առցեն, զամենայն ես ինձէն վճարեմ քեզ, միայն զայս խնդրեմ ի քէն, յայտնեա ինձ զորպէսն գործոյն։ Եւ ի բազում թախանձանաց և աղաչանաց Սասունի, մեղկեալ թուլացաւ այրն և յայտնեաց Սասունայ զսպանումն պղծոյն Աւատիայի․ և Սասուն վասն ինքեան փրկութեան ծանոյց Պարսից․ և Պարսիկք վաղվաղակի կալան զերեսին ընկերսն Փինհասին, որք ընդ Փինհասին սպանին զԱւատիայ, և զՓինհաս ոչ կարացին գտանել, թէպէտ բազում ջանիւ որոնեցին, վասն զի ի գիշերին՝ յորում զգլին Աւատիային արտաքս ընկեցին ի պողոտայն, ընդ լուսանալ առաւօտին անդառնալի փախստեամբ ելեալ Փինհաս ի քաղաքէն և գնաց ի տար աշխարհ, վասն որոյ ոչ գտին։

Յետ այսորիկ դիւան-բէկին Նատաւ յատեան դատաստանի, և ածին առաջի նորա զերիս սպանողսն Աւատիայի․ եհարց ի նոցանէ վասն սպանութեանն․ և նոքա յանձին կալեալ զարարսն իւրեանց․ որոյ սակս վճիռ եհատ դիւան-բէկին և հրամայեաց վասն երեցս այս սպանող արանց, զի տարեալ ի մէջ մեծ մէյդանին առընթեր գիշոյ Աւատիայի սպանանել զերեսին և արկանել մերձ առ նմա, զոր և արարին այնպէս։

Եւ ի ժամուն յորում եկեալ դիւան-բէկին Նատաւ

ի դատել զսպանողսն ընդ որոց և ամենայն արք ազգին Հրէից, որք ըմբռնեալք էին ի ձեռս Պարսից, զամենեցուն նոցա ձեռս ի յետս կապեալ էին և պահէին զօրականքն Պարսից։ Նաև անդէն ժողովեալ էին ամենայն դահիճք և զինուորք և զօրականք և զօրագլուխք Պարսից. նաև գրեթէ միահաղոյն ամենայն ազգն Պարսից, ոչ թէ իբրև զերամս հաւուց տարմից, այլ իբրև զշիթս անձրևաց և զբազմութիւն աւազոց որ ոչ թուին, ժողովեալ էին անդէն ի դուռն դատարանին, որ ոչ բաւէր վայրն տանել զբազմութիւնն։ Եւ յորժամ դիւան-բէկին հրաման արար տանել զերեսին արսն և սպանանել, յայնժամ բազմութիւնք ազգին պարսից մահմետականաց, դահիճք և զօրականք, ազատ և ռամիկք սկսան ձեռս արկանել ի Հրէայս, հարկանել և կառափնատել և սրօք և բրօք և թրի քամակով և թուանքի ղոնդաղով, և ընդ երկիր ի քարշս տանել և ի լիճս ջրոց հեղձուցանել և դարձեալ հանել և հարկանել. և այնքան չարչարանս ածին ի վերայ ողորմելի Հրէիցն, զորս ո՛չ բաւեմ թուել. և զերեսին արսն զսպանողսն Աւատիայի տարան ի մեծ մէյդանն մերձ գիշոյ պղծոյ Աւատիային սպանին. և յետ սպանանելոյ երից արանցն ինքեանք Պարսիկքն ի բազում առնելեաց իւրեանց ձանձրացան, զմնացեալ Հրէայսն լքին և ի բաց գնացին։ Եւ գէշք սպանելոցն յաւուրս երիս մնացին անդէն ի մէջ մէյդանին, և յետ երից աւուրց հրամանաւ իշխանացն Պարսից բարձեալ անտի տարեալ թաղեցին։

Եւ այնուհետև ազգն Պարսից, ոչինչ խօսեցան և կամ արարին ընդ ազգին Հրէից, ոչ պահանջէին ի նոցունց հարկս արքունի, և ոչ այլ ինչ ծառայութիւնս իշխանականս, այլ իբրև զազգն Պարսից համարեալ ունէին զնոսա և մտեալ յօրէնս Մահմետի, քանզի թողին զնոսա ի կամս իւրեանց կեալ. թէպէտ և գիտէին

Պարսիկք զի ոչ են մտեալ Հրէայք յօրէնս մահմետի, այլ առ ժամանակաւն այնպէս թողին։

Այլ և Հրէայք ի ժողովս և յազգս իւրեանց զօրէնս և զաւանդութիւնս Հրէականս կատարէին և ոչ զմահմետականս։ Նա և ասէին թէ մեք զամենայն ամի հարկն՝ զոր տալոց եմ արքունի, ամ յամէ ուրոշեալ զատեմք և արկանեմք ի գանձանակ և պահեմք զի յորժամ խնդրեսցեն, վաղվաղակի տամք և զերծանիմք։ Այլ և ասէին. զայն երկու թումանն՝ որ յաւուր ուրացութեան ետուն մեզ պարգևս, զայն ես պահեալ եմք, և հանապազ իւրաքանչիւր տարուայ շահն լնումք ի վերայ, զի յորժամ խնդրեսցեն՝ տուեալ զերծանիմք ի նոցանէ։ Եւ մինչև ցամն այս՝ յորում զպատմութիւնս շարադրեցաք, որ է թուականն մեր ՌՃԹ. և մարտի ամսոյ Ժ. այսպէս ըստ ասացելումս կան Պարսիկք և Հրէայք, և ապագայն Աստուծոյ է գիտելի։

Այլ և այս ևս գիտելի է, զի յաւուրս՝ յորում զՀրէայսն, որք էին յԱսպահան քաղաքի, զամենեսեան թէ կամաւ թէ յակամայ դարձուցին յօրէնս Մահմետի, այնուհետև Էհտիմալ-Դօվլաթն հրովարտակ հանեալ ի թագաւորէն առաքեաց ընդ ամենայն աշխարհս տէրութեանն Պարսից, առ իշխանս աշխարհաց, զի ուր և իցեն ազգք և ժողովուրդք Հրէից թէ ի գիւղս և թէ ի քաղաքս ամենեքեան թողցեն զօրէնս հրէութեան և ստասցին զօրէնս Մահմետի. որք կամաւ հնազանդեսցին բարւոք է, և որք ընդդիմասցին՝ բռնութեամբ և տանջանօք ածցեն իշխանքն զայնպիսիսն ի հաւատն պղծոյն անապատի [1]։ Եւ իբրև հասանէր

1 Ուղ. չէ+. պղծոյն անապատի, այլ ի հաւատն Մահմետի.

հրամանն արքունի ի տեղիսն՝ առժամայն որպէս հուր բորբոքեալ ընդ էգն՝ գումարէին զամենայն Հրէայսն. և հարկէին կատարել զամենայն հրամանսն Թագաւորին. և ամենայն ազգն Հրէից՝ ուր և կային, ոչ կամէին մտանել յօրէնս Մահմետի. այլ ոմանք կաշառօք, և ոմանք փախստեամբ, և ոմանք՝ այլ ինչ հնարիւք զերծանէին։ Իսկ որք յանհնարս Ճնային՝ ակամայ կամօք և առ երեսս կեղծաւորութեամբ մտանէին յօրէնս Մահմետի, և Թէպէտ առ յաչս Պարսից ձևանային մահմետական գոլ, այլ ոչ էին, այլ հրէութեան օրինօքն կային ամենեքեան ի ծածուկ։

Եւ ի ժողովրդականացն Հրէից՝ որ յիւրաքանչիւր քաղաքս Պարսից բնակեալք էին, որք[1] անհնար լեալք ակամայ կամօք և առ երեսօք մտին յօրէնս Պարսից, այսոքիկ են. որք ի Քաշան, ի Ղում, ի Թարվէզ, յԱրտաւել, ի Ղազբին, ի Լառ, ի Շիրազ, ի Բանդարիքում. և որք կաշառօք, և փախստեամբ, և կամ յայտնի ընդդիմակայելով ոչ մտին յօրէնս Պարսից՝ այսոքիկ են, որք ի Գուլփէքան, ի Խունսար, ի Բանդար, ի Շուշտար, ի Համադան, յԵզդ, ի Քրման, ի Խորասան, ի Դումաւանդ, յԱստարապատ յերկիրն Գիլանու, ի գեղօրայսն Ֆահրապատու։

Իսկ ի Ֆահրապատ քաղաքի բնակեալ Հրէայքն յայտ յանդիման կացեալ ընդդիմացան հրամանաց արքունի՝ և ոչ մտին յօրէնս Մահմետի, և նոցա վերակացու իշխանն՝ որում անունն էր Միրզա Սադղ, իբրև լուաւ թէ զՀրէայսն՝ որք յԱսպահան քաղաքին էին ածին յօրէնս Մահմետի, այն իշխանն ես սկսաւ ձեռն արկանել ի Ֆահրապատ քաղաքի բնակեալ Հրէայսն և բռնութեամբ ածել ի տաճկութիւն. և զայս արար իշխանն նախ քան զգալն Թագաւորական հրովարտակին,

---

1 Ոռչ. չէ. որք.

և Հրէիցն վշտացեալ ի նորին բռնութենէն՝ խօսեցան առ երեսս իշխանին, թէ ո՛չ է հրամն տալ քեզ ի Թագաւորէն վասն այդպիսի իրաց, և զի՞ր. ընդ վայր տանջես զմեզ. և յայսմ բանէ սակաւ ինչ թուլացոյց իշխանըն զբռնութիւնն, բայց յոյժ ոխընկալ եղև ի սրտի իւրում և համբեր ցորժամ եկն հրովարտակն արքունի. այնուհետև կոչեաց իշխանն զՀրէայսն և ասաց. զինչ ևս ունիք ասել, զի ահաւասիկ հրովարտակ հրամանաց Թագաւորին. արդ եկեալ կատարեցէք զհրամանս Թագաւորին, և կալարուք յանձին զօրէնս Մահմետի։

Եւ Հրէայքն յայտնի և համարձակ կացին ընդդէմ ասելով. ոչ ընդունիմք զօրէնս Մահմետի, և ոչ թողումք զհայրենի օրէնս մեր, և դու զոր ինչ կամիս, արա ընդ մեզ։

Իսկ իշխանն զբազում չարչարանս էած ի վերայ նոցա. բազում անգամ ի կախաղանի կախեալ բրածեծ առնէր զնոսա այնքան՝ մինչև անշնչանալ նոցա. և բազում անգամ ի ջուր լճին հեղձամղձուկ առնելով, և հանեալ դարձեալ բրածեծ առնէր. այլ և զօրականս ի տունս նոցա առաքէր առ ի զինչս նոցա յաւարել՛ և զկանայս նոցա խայտառակել, զոր և կարի առաւել և անպատկառաբար արարին զայս գործ ընդ Հրէից կանանցն, ուստերաց և դստերաց։ Եւ Հրէայքս այսոքիկ հարուստք և ընչեղք էին, որք յոլովք ի սոցանէ ունէին ի մէջ շուկային խանութս՝ որ է դուքան, յորում վաճառէին պատուական կումաշս և արծաթեղէն անօթս, որոց վասն հրամայեաց իշխանն ազգին մահմետականի, զի ամենայն ինչս խանութացն Հրէից յաւար հարցեն, զոր և առ ժամայն կողոպտեցին. և ոչ [1] թէ չափաւոր էր ինչք խանութացն, այլ յոլովք։

---

[1] Օրն. ըն. և ոչ թէ չափաւոր էր ինչք խանութացն այլ յոլովք.

Եւ ի Հրէից արանցն կալանաւորք էին ըմբռնեալք քան զհարիւր արս աւելի, որոց ամենեցուն պարանոցն արկեալ շղթայս երկաթեայ, ծանր և երկայն, և զամենեսեան այնու շղթայիւն կապեալ զկնի միմեանց շար ի շար. քանզի մի էր շղթայն, և հանապազօր բերէին ի դուռն իշխանին ի դատել, և տանէին ի բանտն ի պահել:

Եւ երկարեցաւ գործս այս մինչ յերիս և ի չորս ամիսս. և ի բազում չարչարանացն, զոր էած ի վերայ նոցա իշխանն՝ ինքն ևս ձանձրացաւ, ապա հրամայեաց նոցա, թէ որովհետև ոչ կամիք մեկնիլ ի Հրէութենէն, առէք ի վերայ ձեր զնշան ինչ յայտնի, որով ամենայն տեսողք ծանիցեն զձեզ, թէ Հրէայ էք. և զայս հրաման յանձին կալան Հրէայք մեծաւ յօժարութեամբ: (Իսկ իշխանն[1] առ ի այպանել զնոսա, հրամայեաց շարանօք կապել ի միում լարանի բօժօժս պղնձի, կտորս երկաթից և պղնձեայ, և ունկունս ջրեմիկ փարչից և պուտուկաց, և կախել ի պարանոցէ ամենայն արանց Հրէից, և այնպիսի նշանաւ շրջիլ Հրէից ի փողոցս և ի հրապարակս և ի շուկայս և յամենայն տեղիս: Եւ Հրէայ՝ որ ոչ ունիցի զնշանն զայն, պարտաւոր լիցի գանից և բանտից և տուգանաց. և Հրէայքն յանձին կալեալ զայս հրաման, կախեցին ամենեքեան ի պարանոցս իւրեանց զասացեալն իշխանին, և այնպէս շրջէին յամենայն տեղիս:)

Եւ այլ ևս նեղութիւնս և տանջանս բազումս կրեցին Հրէայք, այնքան մինչ զի նեղիչք նոցա Պարսիկք ձանձրացան ի նեղելն զնոսա և յետս կացին, և ի բաց լքին զՀրէայսն ի չարչարելոյ: Եւ նոքա այսպէս ազատեալք եղեն ի ձեռացն Պարսից, և տակաւին կան ի հայրենի հաւատս իւրեանց Հրէական, իսկ յապագայն Աստուծոյ է գիտելի. որում փառք յաւիտեանս ամէն:

---

1 Ոսկ. չէ. Իսկ իշխանն . . . ցվերջ ու ընդ փակագծով:

ԳԼ. ԼԵ.

Վասն շարժման մեծի քաղաքին Թարվիզու։

Ի թուականութեանս Հայոց ՌԴ. Փետրվար ամսոյ ի հինգն՝ յաւուր ուրբաթու ի քաղաքն Թարվէզ, և ի շրջակայ գաւառսն իւր, եղև յանկարծակի և յեղակարծում ժամու ահագին գետնաշարժ ուժգնակի բախմամբ, զի հաստակառոյց թանձրութիւն երկրի դողայր որպէս զտերև ինչ, զոր ունելով ոք ի ձեռին խաղացուցէ, կամ զջուր ինչ յամանի այսր և անդր տարաբերիցէ. քանզի ահագին որոտմամբ թնդաց երկիր գոռալով ի սանդարամետէ անդնդոց, և զկնի եղև շարժն և արար կործանումն և տապալումն և զքայքայումն ամենայն շինուածոց քաղաքին։ Զի մեծամեծ և լայնանիստ և բարձրաբերձ և զարմանատես շինուածք՝ որ կային ի մէջ քաղաքին, որ ի հին ժամանակաց և ի թագաւորաց մնացեալ էին որպէս և տեսողացն յայտ է, զբազումս ի նոցանէ ի վայրկեան ժամու փլուզեալ հողաբլուր առնէր։

Որպէս և անուանի շինուածն՝ զոր Ուստաշագիրտ

տեղին, այսու շարժմամբս փլաւ, և զբազում ուղտս և այլ անասուն ի ներքոյ իւր եառ, որք ի ցրտոյ և ի ձիւնոյ ձմերանն հովանաւորեալք էին ի մէջ նորա։

Այլ և բարձրաբերձ յօրինեալ եղջիւրք և մինարայք մաչիթաց ի բարձրադիտակ և յերկնաբերձ բարձուէ բարձանցն խորտակեալ, բեկեալ, տրամատեալ զառ ի ստորև սորեալ ի վայր դիմեալ, և զարկուցեալ յերկիր ի բաց ցնդէին։

Նա և անուանի և լայնանիստ և բարձրաբերձ և հոյակապ և հռչակաւոր շինուածն, որում Շամղազան ասեն, որ է ի քաղաքէն սակաւ ինչ հեռի ի կողմն Շօր գետոյն, սորա առաստաղն ամենայն փլաւ, և մնաց շուրջանակի որմունքն, և այն ևս ի հիմանցն խախտեցաւ. և ի չորից կողմանց պատառեցաւ. և բաժանեցաւ ի չորս մասունս, որ կայ այնպէս կանգուն մինչև ցայսօր։

Իսկ վասն տանց և ապարանից, բաղանեաց և փուլթկայից, որ է քարվանսարայ, ո՞վ կարէ թուել, ուր հիմն ի վեր տապալեցան, և բազումք կենդանիք, մարդք և անասունք, կահք և կարասիք, գանձք և ստացուածք մնացին ի ներքոյ հողոյ, որոց խոյզ արարեալ աւուրս քան, կամ երեսուն, պեղեալ զհող և զքար հազիւ կարէին գտանել զմեռեալս կամ [1] զինչս։

Թէպէտ եղև վնաս բազում քաղաքին Թարվիզու շարժմամբս այսու, այլ առաւելապատիկ վնաս շրջակայ գաւառին եղև, որպէս Խօսրով շահ, և Ուսկու կոչեցեալ գաւառացն, և Դուխուրկան գեղջն, քանդումն և տապալումն, և մարդոց և անասնոց կորնչումն։

Եւ ի սաստիկ և յուժգնակի շարժմանէ պատառեցաւ հաստակառոյց թանձրութիւն երկրի, և ելին սեաւ ջուրք բխեալ իբրև աղբիւր, և գնայր ջուրն [2] զգնացս

---

1 Ուղղ. և զինչս։ Նոյն. չէ. ջուրն.

լուր։ Եւ յետ երից աւուրց դարձեալ եղեւ շարժ ուժգնակի, եւ կորեան այն [1] աղբիւրքն. եւ յայլ տեղիս երեւեցան այլք աղբիւրք մանունք, եւ ժողովք ջրոց որպէս զառաջին սեաւ ջուրն, եւ որքան ժամանակս կայր շարժն՝ կային եւ աղբիւրք սեաւ ջուրցն եւ յետ դադարման շարժին կորեան եւ նոքա։

Այլ եւ ասացին ոմանք թէ խաշնարած ոմն հովիւ, որոյ առաջի հօտք ոչխարաց արածէին ի վայրի ուրեմն, եւ յաւուր միում ընդ լինել շարժին՝ իսկոյն պատառեցաւ թանձրութիւն երկրի, եւ բացաւ խորութիւն անդնդոց, յորում սուզեալ ընկղմեցաւ հովիւն եւ մասն ինչ յոչխարացն, եւ կենդանոյն կլեալք յերկրէ, եւ ոչ եւս երեւեցան։

Նա եւ գիւղ մի ողջոյն՝ որ շինեալ կայր ի ներքոյ քարանձաւ լեռան միոյ, եւ յորժամ եղեւ շարժն՝ պատառեալ բաժանեաց զկարծրութիւն վիմաց լեռանն, եւ խորտակեալ քայքայեաց զնա, եւ իբրեւ զհողաբլուր սորեալ խճով քարով եւ հողով [2] ի վերայ գեղջն եւ ծածկեալ զգեղն ողջոյն, կորուսեալ անյայտ արար բնաւին։

Եւ ժամանակ շարժմանս էր ժամանակ ձմերան եւ սաստիկ ցուրտ. քանզի ձիւնամեծ եղեւ ձմեռն այն եւ ոչ թէ միանգամ կամ երկիցս եւ երիցս շարժեցաւ եւ դադարեցաւ, այլ երկարացաւ շարժումն մինչեւ ի վեց ամիս։ Բայց մինչ ի յերկուս ամիս ստէպ ստէպ լինէր շարժն. քանզի լինէր որ ի միում աւուր ընդ տիւ եւ ընդ գիշեր, հինգ անգամ եւ վեց անգամ շարժ լինէր, եւ էր որ աւելի եւ պակաս լինէր. եւ մինչեւ յերկուս ամիս այսպէս լինէր յամենայն աւուր, եւ զկնի երկու ամսոյն, ի տասն աւուրն միանգամ, եւ ի քսան աւուրն, եւ երեսուն աւուրն միանգամ գայր շարժն։

---

1 Ոսկ. ըէ+. այն. 2 Նոյն. ըէ+. եւ հողով.

Եւ յայսմ պատճառէ ահաբէկք և սրտամեռ և խելաթափ էին լեալ ամենեքեան յահէ շարժին, որ յանկարծակի գայր, և թէպէտ բազում փախստեամբ ճողոպրեալք ելանէին ի տանց, նոքա զերծանէին ի փլմանէն և ի մեռանելոյն, այլ յոլովք մնացին ի ներքոյ փլուզեալ յարկացն և հեղձամղձուկ լեալք սատակէին։ Վասն որոյ ոչ կարէին հանդուրժել և ընդ յարկաւ բնակիլ, այլ ելեալք իւրաքանչիւր ոք ի բացեայ արտաքոյ յարկաց, ոմանք առ դուրս տանց, և ոմանք յայգիս, և ի բուրաստանս, և ոմանք[1] յայլ պատշաճաւոր տեղիս վրանօք և տաղաւարօք կային զձմեռն զայն, մինչև ցանցանել բարկութեան Տեառն. քանզի յայտնի եղև բընակչաց աշխարհին, նա և ամենայն տիեզերաց, թէ ոչ էր այն ըստ կարգի սովորական շարժման, այլ յայտնի պատիժ պատուհասի բարկութեան Տեառն հասեալ էր ի վերայ նոցա ըստ նմանութեանն Նինուէացւոց։

Իսկ բնակիչք քաղաքին և գաւառացն, իբրև տեսանէին զինքեանս պատժապարտս առաջի Տեառն, զի հանապազօր խրատէր զնոսա գաւազանաւ բարկութեան, և նոքա եկեալ ի միտս մշտապաղատ աղօթիւք և խընդրուածովք, ուխտիւք և պատարագօք, դիմեալ կարդային առ այն, որ կարողն էր ապրեցուցանել զնոսա ի վտանգէն, զի թէպէտ վասն պարտեաց մեղաց՝ բարկութեամբ խրատէ և սրտմտութեամբ յանդիմանէ, այլ արարչական գթութեամբն և նախախնամական ողորմութեամբն ողորմեցաւ նոցա. որոյ բնութեամբ իսկ է ողորմիլն արարածոց իւրոց, ըստ մարգարէին բանի, գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ։ Որ և ոչ իսպառ մնաց ի բարկութեան և ոչ յաւիտեան պահեաց ոխս. այլ հեռի արար ի սոցանէ զմեղս նոցա՝ ըստ

---

1 Ուղ. չէ+. և ոմանք . . . վրանօք.

բացատրութեան երկնի և երկրի, և գթացաւ ի ստեղծուածս իւր որպէս զհայր զմայր ի վերայ զաւակաց՝ վասն զի յիշեաց թէ մարդիկք են և բաղկացեալք ի հողոյ։ Սփռեալ տարածեաց ի վերայ նոցա զգութ և զողորմութիւն իւր, և եբարձ ի նոցանէ զպատուհասն և ետ հաստատութիւն երկրի և հանդարտութիւն աշխարհին, և խաղաղութիւն մարդկան, որք կեան՝ գոհանալով զնմանէ յամենայն ժամ, զի թէպէտ խրատելով խրատեաց, այլ ի մահ ոչ մատնեաց։ Որովք յայտնեալ ցուցաւ ամենակարող զօրութիւնն անմահ թագաւորութեան նորա, և գութ և ողորմութիւն մարդասէր կամաց նորա. վասն որոյ ամենեքեան[1] առհասարակ ի ձայն գոհութեան փառաւորեն զքաղցր տէրութիւն Աստուծոյ մերոյ, որհնելոյն ի բարձունս յաւիտեանս յաւիտենից. ամէն։

1 Ո֊ն. չէ+. վասն որոյ ամենեքեան … յաւիտենից ամէն։

Գլ. ԼԶ.

Պատմութիւն վասն գերեզմանին եւ ոսկերացն Վարդ պատրկայ:

Որպէս գրեալ է պատմութիւնս Վարդ պատրկայ, որ նենգութեամբ և հնարիւք ետ կոտորել զազգն Հոռոմոց՝ Պարսից ազգին. և զայս նախանձս և ոխս տակաւին ունին ի մտի ազգն Հոռոմոց, և մինչև ցայսօր հնարեն վրէժխնդիր լինել նախանձուն այնմիկ: Եւ ամաց յամս գան մարդիկք ի Հոռոմոց ազգէն առ ի գողանալ զնշխարս ոսկերաց Վարդ պատրկայ, զի տարեալ ի մէջ իւրեանց կատարեսցեն ի վերայ նորա զչար կամս իւրեանց որպէս և յօժարի սիրտք իւրեանց:

Եւ եղև զի յամս և ի ժամանակս յետինս՝ ի թուականիս Հայոց ՌԺԳ. դարձեալ եկին յազգէն Հոռոմոց արք երկու գողանալ զոսկերս Վարդ պատրկայ, որ թաղեալ կայ ի մէջ եկեղեցւոյն ի գիւղն Խորգոմ ի Հայուձոր կոչեցեալ գաւառին՝ ի Վասպուրական աշխարհին: Արդ՝ զոսկերսն Վարդ պատրկայ թաղեալ է ի մէջ եկեղեցւոյն որ նախկի շինեալ է ի վերայ երեսաց երկրի ի վերայ բնական գետնոյ. և ապա հողով ծածկեալ են զայն եկեղեցին և կուտեալ են բազում հող ի վերայ նորա, որ եղեալ է մեծ բլուր, որ կարծի ի տեսողացն թէ իսկզբանէ յաւիտենից աստուածաստեղծ բլուր է և ոչ շինովի. և հողն ծածկեալ է զեկեղեցին և առաւել ևս բարձրացեալ, և ապա յետոյ ի գլուխ բլրին միւսանգամ

նոր եկեղեցի են շինեալ ի վերայ գագաթան ներքին եկեղեցւոյն. և յայսմ եկեղեցւոջ կատարեն քահանայքն զժամակարգութիւնն և զեօթն խորհուրդս եկեղեցւոյ. նաև գիւղականքն անդ գան և աղօթեն։ Եւ գիւղն ոչ է շուրջ բոլոր զեկեղեցեաւն՝ այլ յարևելից կողմն եկեղեցւոյն ի սիրտ բլրին և յարևմտից կուսէ եկեղեցւոյն և բլրին ծովն է՝ զոր Վանայ ծով կոչեն, իբրև քսան կանգուն հեռի յեկեղեցւոյն։ Այլ և գետ ջրոյ ի յարևելից կողմանէ գեղջն և եկեղեցւոյն գայ, և ի հարաւային կողմանէ նոցին անցանէ և խառնի ի ծովն։ Եւ եկեալ երկոքին հոռոմքն նախ՝ ձևացուցեալ են զինքեանս իբր զայր առաքինի և հաւատարիմ և հրաժարեալք յաշխարհական իրաց. այնքան մինչ որ քահանայք և ժողովուրդք հաւատացեալ են նոցա և զբանալին եկեղեցւոյն ի նոսա տուեալ և զնոսա լուսարար եկեղեցւոյն և ժամկոչ են կարգեալ։ Եւ նոքա թէ յետ յոլովից և թէ յետ սակաւուց ժամանակաց, ի դիպող ժամանակի յարևմտից կուսէ յեկեղեցւոյն իբրև տասն և հինգ կանգնաւ հեռի յեկեղեցւոյն ծակեալ են զգետինն, փորեալ են նաղմ, և այնպէս նաղմն փորելով յառաջ գնացեալ են զի թերևս մտցեն ի ներքին եկեղեցին, յորում ոսկերքն Վարդ պատրկայ թաղեալ կան. և զփորեալ հողն նաղմին բերեալ են ի ծովն թափեալ ի գլխոյ փլլին. քանզի եզր ծովուն փուլ է՝ զոր ալիք ծովուն արարեալ է։ Եւ որովհետև գիւղն ի յարևելից կողմն բլրին էր՝ և յարևմտից կողմն անբնակ էր, յայսմ պատճառէ անքոյթ էր ի մարդկանէ տեղին. վասն այսորիկ արքն վստահացեալ զայս գործէին։ Արդ՝ ի թափեալ հողոյն և ի հարելոյ ալեաց ծովուն՝ պղտորեալ են ջուրքն և պղտորութիւն ջուրցն խառնեալ է ընդ ջուրց գետոյն և զառ ի վեր ընդ գետն գնացեալ, քանզի ջուրք գետոյն ուռկան տուեալ կանգնեալ կան յեզր ծովուն։ Իսկ գեղ-

կանքն տեսանէին զի ջուրն, որ հանապազօր պարզ և յստակ էր, այժմ պղտոր է, ասէին, անձրև ոչ է եկեալ և հեղեղ ոչ է եղեալ՝ և վասն է՞ր են ջուրքս պղտոր, ասէին ընդ միմեանս և հիանային և խնդրէին զպատճառն, և շրջելով և որոնելով պատահեալ են Թափած հողոյն, և ապա գտեալ են զծակն և զնաղմն. ապա կալեալ են զարսն զայնոսիկ և ի ծածուկ և ի ներսագոյն տան արգելեալ և այնքան հնարեալ են գեղականքն մինչ արքն այնոքիկ զստոյգն ասացեալ են. Թէ եկեալ եմք զի զոսկերսն Վարդ պատրկայ հանցուք՝ և տարցուք. ապա ի գեղականացն, ուք խորհրդականքն են լեալ Թաքուն ի խառնիճաղանճ արանց ի գիշերի միում զերկոսին զարսն զայնոսիկ եդեալ են ի վերայ ափոյ և հանեալ ի վերայ ծովուն և յառաջ խաղացուցեալ տարեալ ի մէջ ծովուն և կապեալ են քար ի պարանոցս նոցա, և այնպիսի Թողեալ են ի խորս ջուրց ծովուն: Արդ՝ կատարումն գործոյս այսպէս եղեալ է, զոր ծերք և վաղեմի մարդիկք պատմեցին, իսկ գեղականքն այնուհետև առաւել զգուշութեամբ պահեն զեկեղեցին զայն. ի հանապազորդեայն ժամանակի. իբր զաւանդութիւն ստացեալ յորդիս ի հարց, ի փառս Աստուծոյ: Եւ այս ևս այսպէս:

ԳԼ. ԼԻ.

Ցաղագս շարժին որ եղեւ ի Վան քաղաքին, եւ ի լրում շրջակայ երկրին:

Արդ ի Թուականութեանս Հայոց ՌՂԷ. յԱպրիլ ամսոյ յերկուսն, յաւագ ուրբաթու գիշերն՝ որ լուսանայր ի լոյս աւագ շաբաթ աւուրն. անցեալ հասարակ գիշերոյն և ժամանեալ ժամ առաւօտուն որ և զառաւօտու աղօթսն կատարէին: Եղև յանկարծակի թնդիւն և գոռումն՝ ուրոյ զկնի շարժ ահագին, որ ի բնակչաց այնքան դաւառացն ոչ ոք էր տեսեալ այնպէս ահագին շարժ:

Յորմէ շարժմանէ փլաւ Ներքին բերդի պարիսպն Վանայ քաղաքին ի Թարվիզու դարգահէն մինչ Իղարի բուրջն, և այլ ևս այսր և անդր բազում տեղիք ի պարսպէն փլուգան և փլան, և որք ոչ փլան խախտեցան, զորս յետոյ քակեցին զամենայն և նոր շինեցին:

Եւ եկեղեցիքն Վանայ քաղաքին ոմանք խախտեցան, և ոմանք աւերեցան, սուրբ Սահակ անուամբ եկեղեցին բնաւին աւերեցաւ, զոր յետոյ խօջայ Ախիջանն շինեաց: Եւ Էջմիածին անուամբ եկեղեցին խախտեցաւ,

զոր սոյն խօջայ Ախիջանն զայն ևս նորոգեաց առաւել քան զառաջինն։ Եւ սուրբ Առաքելոց եկեղեցին ներսի կողմանէն առաստաղն փլաւ, զոր խօջայ Ատոմեանք նո-րոգեցին։ Եւ սուրբ Պօղոս եկեղեցւոյ կաթուղիկէն փլաւ, զոր Գերաքենց Ձիրաքն շինեաց։

Եւ ի մաչիթներացն, միայն Մուստաֆայ փաշայի մաչիթն մնաց և սորա մինարէն, իսկ այլ մաչիթներն և իւրեանց մինարէքն ամէն փլան։ Եւ վերին բերդի մա-չիթի մինարայն ևս փլաւ։

Իւ բազում տունք և ապարանք և շինուածք փլան, և ի ներքոյ իւրեանց առին բազում մարդ և անասուն, և այնքան բազումք էին մեռեալքն՝ որ սայլիւ բարձեալ տանէին արտաքս ի քաղաքէն. և ի թաղելն ոչ բաւէին հատանել գերեզման, այլ պատառեալ զերկիր վիհ մեծ առնէին և ի մեռելոցն զութն և զտասն պատեալ կտա-ւով դնէին ի վիհն և հողով ծածկէին։

Եւ յաւուրս ութն անդադար ի շարժման եկաց եր-կիրն, որ ոչ կարէին ի տունս բնակել, այլ ի բացեայ վայրի վրանով կային. զի յայն ութն օրն անդադար ի շարժման եկաց երկիրն, որպէս զնաւ ի վերայ երեսաց Ջրոյ. և զկնի այնորիկ սակաւ հանդարտեցաւ որ ի չորս օրն, և ի հինգ օրն, և ի տասն օրն միանգամ շարժէր, և այնպէս մնաց մինչ որ Յունիս ամիսն լմնցաւ, և ապա հաստատեցաւ երկիր ողորմութեամբն Աստուծոյ։

Եւ զկնի առաջին շարժին իւրաքանչիւր ոք, որք զերծան ի մեռանելոյ, եկին ի տունս իւրեանց սկսան պեղել զհողն, և ի ներքոյ հողոյն հանէին զինչս և զմարդս՝ որք ի ներքոյ հողոյն մնացեալք էին. թէպէտ մեռեալքն անթիւք էին, այլ և բազումք ևս կային՝ որք խնամօքն Աստուծոյ կային կենդանի, զորս հանէին ի ներքոյ հո-ղոյն. վասն զի յետ տասն և տասն հինգ աւուր կենդանի մարդ հանէին ի հողոյ։

Այլ և յաւուրս այսմ շարժմանս եղև գործ ինչ, յորոյ վերայ բաղումք զարմանային, այր ոմն աղքատ և չքաւոր, ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ՝ ի նոյն քաղաքէն Վանայ. այրս այս նախ քան զշարժն ելեալ ի քաղաքէն գնաց ի Քարափոս անուանեալ գիւղն վասն մուրանալոյ, և կային այսմ առն երկու որդիք, փոքրն իբրև տասն ամաց աւելի կամ պակաս. և այս երկու տղայքն մնացին ի տունս իւրեանց և հասեալք ի յերեկոյն ըստ հանապազորդեան սովորութեան ննջեցին, և ի գիշերին յորում շարժն եղև՝ սոցա տունն ևս փլաւ, և ի ներքոյ մնացին մանկունքն։ Եւ սոցա հայրն՝ որ գնացեալ էր ի Քարափոս գիւղն, ննջեալ էր ի տան ուրումն, և ի լինելն շարժին անկեալ էր զերան տանն և խորտակեալ զոտս առնն, և յայսմ պատճառէ մնաց այրս այս ի գիւղն Քարափոս մինչ ի Համբարձումն, որ ողջացան բեկեալ ոտք նորա. ապա ելեալ եկն ի քաղաքն և ետես փլուզեալ զտունն իւր, և համարէր ինքն և այլք ամենեքեան թէ մանկունքն ի ներքոյ տանն մնացեալ մեռան։ Եւ ապա ժողովեալ զարս ոմանս եբեր անդր՝ ուր պեղեցին զհողն ամենայն, տեսին զմանկունսն կենդանի ի ներքոյ հողոյն, և հիացեալ փառս մատուցին Աստուծոյ. վասն զի էր անցեալ աւուրք քառասուն և չորք զկնի շարժին՝ ուր մնացին մանկունքն ի ներքոյ հողոյ. և շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ կենդանի արտաքս եկին մանկունքն. և ուր լուան և տեսին հիացեալ զարմանային, որոյ լուրն եհաս մինչև ի փաշայն քաղաքին, զոր [1] տարեալ փաշային զմանկունսն առաջի իւր և հարցեալ ստուգեաց զամենայն, և գրեալ ի քարտիսի զայս գործ՝ որ կատարեցաւ ի վերայ մանկանցն. և պահեաց առ իւր ի յիշատակ սքանչելեացն Աստու-

1 Ուղ. և տարեալ։

ծոյ։ Այլ և հարցին ցմանկունսն վասն կերակրոց՝ թէ զի՞նչ ուտէիք, և նոքա ցուցին սակաւ փշրանս հացի, թէ զայս ուտէաք երբեմն երբեմն, և վասն ջրոյ ցուցին աման ինչ, յորում կայր բաղկի թթու, որ ի ծարաւին զայն ուտէաք և զովանայաք. բայց զտիւ և զգիշեր ոչ գիտէաք։ Եւ մանկունքն այնոքիկ կան ցարդ ևս կենդանի շնորհօքն ամենակարողին Աստուծոյ։

Այլ և ամենայն վանօրայք երկրին Վանայ փլուզեալք աւերեցան, վերին Վարագ՝ և ներքին Վարագ՝ և եկեղեցի սրբոյ Հօրն Թոդկայ, և մեծ եկեղեցին Ցանապատայ վանից, Շուշանից վանքն, Ղուռուպաշայ վանքն, Խէքուց վանքն, Էրէմերայ վանքն, Արխու վանքն, Բերդակու վանքն, Կենդանանից վանքն, Կռնկու վանքն, Անգուսներու վանքն, Ալերու վանքն, Արջակու վանքն։ Եւ յայս ասացեալ վանօրէիցս երկու Վարագ՝ և Կռնկու վանքն, և Խէքուց վանքն միայն շինեցան, իսկ այլքն մնացին աւերակ։ Եւ գեղօրայք՛ որք ի Վանայ բոլորն կային ամենեցուն շինուածքն փլան, և նոցին եկեղեցիքն ևս ընդ նոսին աւերեցան։ Իսկ Նորագեղի եկեղեցին մէկ արտաչափ յիւր տեղւոյն ի բաց ոստեալ հեռացաւ և ապա փլաւ։

Եւ յայս շարժմանէս բազում աղբիւրք՝ որք յաւիտենից ժամանակաց բղխէին, ցամաքեցան, որպէս և Եղնաբերդի աղբիւրքն, որք վեց ջաղաց կուրանեցնէին, ամենեքեան ցամաքեցան, որ զբերդն անտի փոխեցին վասն չգոլոյ ջուրց՝ և տարեալ ի Ղասրիկ շինեցին։ Սոյնպէս և զներքին Փագախ անուանեալ գիւղն՝ որոյ աղբիւրքն ցամաքեցան և առ ի չգոյէ ջուրց, տարան զայս ևս ի Խասրիկ շինեցին։ Եւ աղբիւրք Աւանայ գեղջն՝ որք էին աղբիւրք երկոտասանք, ամենեքեան ցամաքեցան, որք ոչ երևին այժմ։

Եւ ի ձորն մեծափառ ուխտին Հոգւոց վանից կայր

լեառն մի մերձ վանիցն, որև զանուն լերինն Արեղներ կոչէին. ի գիշերին՝ յորում շարժն եղև, հաստակառոյց արարչակերտ, կարծրագոյն վիմական լեառնն այն՝ յահագին շարժմանէն խախտեալ բեկբեկեալ քայքայեալ զառ ի ստորև սորեալ ի ձոր անդր փլուզեալ զձորն ամենայն լնոյր. և երկս արս ի ներքոյ իւր առեալ սպան. և զճանապարհն խափանեաց, որ յայլ կողմանէ արարին ճանապարհ, և զջրաղացն խափանեաց որ յայլ տեղի շինեցին. և զձորն լցեալ զբազում աւուրս արգել զգնացս ջուրց գետոյն, որ յետոյ զկնի բազում աւուրց առ սակաւ սակաւ ապա արար ջուրն ինքեան գնալոյ ճանապարհ՝ և գնայ զգնացս իւր: Եւ ի գաւառն Հայոց ձորոյ մերձ ի վանքն Նրէմերու արտաչափ տեղ մի գետինն սուզեալ յերկիր կլաւ. և եղև խոր և ահագին փոս մինչև յանդունդս, և ի միջոյ փոսոյն ի յանդնդոց ելեալ սեաւ ջուր և ծովացաւ անդէն ի մէջ փոսին, և կայ այնպէս մինչև ցայսօր:

Եւ Վանայ քաղաքի փաշայն և այլ իշխանքն, զամենայն եղեալ գործս զայսոսիկ գրով շարագրեալ առաքեցին ի քաղաքն Կոստանդնուպօլիս, և ծանուցին Թագաւորին Սուլթան Իբրահիմ խոնդքարին, թէ այսքան շինուածոց քաղաքաց և գեղօրէից, մզկիթաց և եկեղեցեաց աւերումն եղև: Այլ և Վանայ քաղաքի խօջէքն առաքեցին առ խօջայ Ռոհիջանն՝ որ յաւուրսն յայնոսիկ ի Կոստանդնուպօլիս էր, հրաման առնուլ ի Թագաւորէն վասն վերստին շինութեան աւերեալ վանօրէիցն և եկեղեցեացն, զոր և խօջայ Ռոհիջանն առեալ հրաման ի Թագաւորէն և առաքեաց ի Վան առ խօջայսն, և նոքա սկսան շինել զեկեղեցիսն զքաղաքին, որպէս նախ պատմեցաք և զՎարագայ վանից: Եւ նախ՝ Կիրակոս վարդապետն, որ էր առաջնորդ Վարագայ վանիցն՝ յանձն էառ շինել զժամատունն՝ զոր և շինեալ

կատարեաց, և խօջայ Ամիխան զսուրբ Խաչի եկեղեցին.
և Մարխաս չալապի՝ զԱստուածածնի եկեղեցին. և
խօջայ Դիլանչին՝ զսուրբ Սիօնի եկեղեցին. և խօջայ
Յովհաննէսն՝ զսուրբ Նշանի եկեղեցին։ Զայս եկեղեցիսն
շինեցին՝ և մնաց բերդով եկեղեցին, և քառասուն աբե-
ղայից եկեղեցին, և զվանից պարիսպն ևս շինեցին շուր-
ջանակի բովանդակ։ Եւ կատարեցաւ շինումն ներքին
Վարագայ վանացն՝ և այլ վանօրէից և եկեղեցեաց. և
կան իւրաքանչիւրք ի տեղիս իւրեանց ողորմութեամբն
Աստուծոյ. որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼ. ԼԸ.

Պատմութիւն եւ պատճառք կողոպտելոյ զանուանի վանքն Վարագ կոչեցեալ. եւ տանելոյ զաւագ սուրբ Նշանն ի բերդն Խօշաբայ, եւ դարձուցանելոյ անտի ի Վան քաղաք:

Տէրն Խօշաբայ բերդին որում Սուլէյման բէկ ա-
սէին, եղև երբեմն զի զճանապարհորդ կարա-
ւանսն որ ի Վանայ գնային ի Թարվէզ և ի Թարվիզու
ի Վան, սա զկարաւանաց բեռինսն բռնութեամբ բա-
նայր և որ ինչ իրաց և հաւանէր, սուղ ինչ գին ձգէր
ի վերայ տիրոջն և կորզեալ ի տիրոջէն յինքն առնոյր
զինչսն , և պատճառէր թէ գնով գնեցի։

Այլ և ի սոյն ժամանակի էր իշխան և հրամանա-
տու Վանայ քաղաքին ոմն մեծագոյն իշխան, զոր Հիւ-
սէյն աղայ ասէին. որ էր ի նոյն քաղաքէն Վանայ, առ
որ մատուցեալ արանցն, որոց ինչքն և ապրանքն յա-
փշտակեալ էր Սուլէյման բէկն, և արարին բազում
ամբաստանութիւն զՍուլէյման բէկէն. իսկ Հիւսէյն ա-

զայն զսպարեալն Սուլէյման բէկին՝ ծանոյց ի դուռն Թագաւորին յՍտամբօլ. վասն որոյ հրաման եղև ի Թագաւորէն առ Հուսէյն աղայն վասն Սուլէյման բէկին, թէ զառեալ ինչսն դարձուսցէ առ տեարսն՝ և Սուլէյման բէկն ոչ դարձոյց։ Վասնորոյ և Հիւսէյն աղայն առեալ զամենայն զօրս Վանայ, այլ և ժողովեալ զամենայն շրջակայ իշխանսն ազգին Մարաց, ընդ որս էր և մեծ իշխանն Մարաց Եզդիշէր, որ էր տէր Ջուլամերկայ, և Շատախայ, և այլ բազում գաւառաց և բերդօրէից, և նոքօք գնացեալ նստաւ ի վերայ Խօշաբայ բերդին՝ յորում ամրացեալ նստէր Սուլէյման բէկն, և յերկս ամիս նստեալ մնացին՝ և զերկիրն ամենայն աւերեցին։ Վասն որոյ Սուլէյման բէկն անճար և ի տարակուսի լեալ անհնար մնաց, բազում կաշառս ոսկւոյ և արծաթոյ տուեալ Եզդիշէր մեծ պարոնին, զի թերևս զՀուսէյն աղայն և զայլսն զամենեսեան առեալ ի բաց գնասցէ. որ և կատարումն գործոյն եղև այնպէս, զի առին ինչս բազումս ի Սուլէյման բէկէն և ի բաց գնացեալ ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս։

Զկնի գնալոյ նոցա իբրև սակաւ ինչ աւուրք ի վերայ անցին, յայնժամ եկն առ Սուլէյման բէկն այր ոմն գոռոզ արիւնարբու և արիւնահեղ, յաղթող պատերազմող և անպարտելի ախոյեան՝ զորոյ անունն Չօմար ասէին։ Որում պարգևեալ էր խոնդքար Թագաւորն Օսմանցւոց պատիւ և իշխանութիւն փաշայութեան, և առաքեալ էր երկիցս և երիցս ի քաղաքս և յաշխարհս իշխել նոցա ըստ կարգի օրինացն Օսմանցւոց, բայց սա ի գնացեալ տեղիսն կարի բռնութեամբ և անիրաւութեամբ վարեալ էր զիշխանութիւնսն կեղեքելով, կողոպտելով յափշտակելով, և ընդ ամենեսեան անիրաւութեամբն վարելով, եթէ ընդ սպայից եթէ ընդ ռամկաց։ Եւ ուր և գնացեալ էր յամենայն տեղեաց

համբաւ անիրաւութեան և ամբաստանութեան եկեալ էր առ Թագաւորն և առ վէզիրն։ Վասն որոյ յորժամ լուծեալ ի փաշայութենէ քաղաքաց՝ և եկն ի դուռն Թագաւորին ոչ ևս յաւելին տալ նմա իշխանութիւն և փաշայութիւն. և այս գործս յոյժ ծանր և վշտագին երևեցաւ Ջօմարին. վասն որոյ ապստամբեալ ի կողմանէ Թագաւորին ել ի Կոստանդնուպօլսէ. և եկեալ ի կողմանս Բուրսայու և Անկիւրիոյ։ Առ որս յարեցան արք սրիկայք և ելուզակք. որք էին ամենեքեան գողք և աւազակք, և աշխարհաւերք և նմանողք նմին չարագործութեամբն. և նոքօք բնակէր ի լերինս և յանապատս՝ և այնպէս անցուցանէր զկեանս իւր։ Եւ յորժամ յօժարէր կամք իւր նոքումբք իջանէր ի լեռնէն՝ և դարանամուտ լինէր ի վերայ ճանապարհաց՝ երթևեկ կարաւանաց և ի վերայ բախեալ՝ զորս կոտորէր, և զորս փախստական առնէր, և զոսկի և զարծաթ և այլ զոր ինչ և կամէր առեալ գնայր։ Եւ ոչ թէ ի սակաւ աւուրս և ի ծածուկ զայս առնէր, այլ յայտնի և համարձակ և ի բազում աւուրս, այնքան մինչ զի երթևեկութիւն ճանապարհաց խափանեցաւ, որոյ համբաւն գնաց ի Կոստանդնուպօլիս և եհաս առ Թագաւորն։ Վասն որոյ հրաման ել ի Թագաւորէն կանգնել զօրագլուխ բազում զօրօք և գնալ պատերազմիլ ընդ նմա և սպանանել. և կարգեալ զօրագլուխն յոլով զօրօք եկեալ պատերազմեցաւ ընդ նմա, ոչ կարացին սպանանել՝ սակայն փախուցին ի տեղւոջէն։ Եւ Ջօմարն ուր և գնայր զնոյն գործն գործէր. վասն որոյ հրաման եղև ի Թագաւորէն առ իշխանս և զօրագլուխս ամենայն աշխարհաց, զի ուր և գնասցէ Ջօմարն, այնր աշխարհի իշխանքն և զօրքն մարտուցեալ պատերազմեսցին ընդ Ջօմարին և սպանցեն և թէ իցէ ոք որ բերցէ զգլուխն և զնշանն Ջօմարին, բազում պարգևս և մեծութիւնս առնելոց է ի

Թագաւորէն. քանզի աջոյ ձեռաց ճկիկ մատն ի մէջ ձեռաց ափին մածեալ կպած էր անմեկնելի, սորին վասն ասացին զնշանն բերցէ: Եւ յաղագս այսպիսի հրամանաց Թագաւորին ուր և գնաց Զօմարն, ամենայն զօրք և իշխանք աշխարհացն հալածական արարին զԶօմարն. և յոչ գտանելն տեղի դադարման ի հալածիլն իւրում Զօմար, և գալով եկն և եհաս մինչ ի Սուլէյման բէկն: Եւ յաղագս առիւծասիրտ արիութեան նորա և յաղթական պատերազմին ընկալաւ զնա Սուլէյման բէկն, և ասաց եղիցուք երկոքեանս եղբարք, և պահեսցուք զհայրենի իշխանութիւնս մեր, և ի միասին վայելեսցուք:

Դարձեալ այլ ևս պատմութիւն որ պիտոյ է ի մէջ այսր պատմութեանս: Այն վերոյասացեալ Հուսէյն աղայն ի պատճառէ իմեքէ արար սէր և միաբանութիւն ընդ մեծ իշխանին Մարաց Եզդիշերին՝ զի զդուստր եղբօր իւրոյ ետ ի կնութիւն եղբօր Եզդիշերին, որում անուն էր Խօսրով փաշայ. և սոքա երկոքեանս Եզդիշերս և Հուսէյն աղայս կարի սիրով միաբանեցան, եղեն խնամիք և բարեկամք:

Դարձեալ այլ ևս պատմութիւն: Այս Հուսէյն աղայս, յոյժ զօրացաւ և մեծացաւ ի մէջ քաղաքին Վանայ այնքան որ սորին հրամանաւն լինի փաշայն և ղադին, և ենկիչար աղասին, և ղուլար աղասին և այլքն ամենեքեան. և սպան յիշխանաց քաղաքին տասն իշխանն, ընդ որս էր և ղուլար աղասին. իսկ այլ իշխանքն փախստականք եղեն յահէ սորա:

Այլ և պատահեցաւ գործ ինչ այսպիսի: Որպէս սովորութիւն է Օսմանցւոց ազգին, որ զհին փաշայն մանզուլ առնեն և ի տեղի նորա ի դրանէ Թագաւորին նոր փաշայ առաքեն. այսպէս և զՎանայ քաղաքի հին փաշայէն մանզուլ արարին, և նոր փաշայի Մուսալիմ ուղարկեցին ի Վան ի դրանէ Թագաւորին: Իսկ Հուսէյն

աղայն և հին փաշայն միաբանեալ ոչ ընկալան զեկեալ Մուսալիմն նոր փաշային, այլ յետս դարձուցին ի Ստամբօլ։ Իսկ Վանայ քաղաքի պարոնայքն, որք վշտացեալք էին ի Հուսէյին աղայն, գաղտ ի նմանէ և ի ծածուկ յոլով բանս ամբաստանութեան գրեցին զնմանէ, և ընդ դարձուցեալ Մուսալիմին ուղարկեցին ի դուռն թագաւորին։

Եւ յետ սուղ ինչ աւուրց՝ ի դրանէ թագաւորին եկն Սինան անուամբ իշխան ոմն ենկիչարի Աղասի ի քաղաքն Վան, եմուտ ի բերդն և տիրեաց վերին բերդին, և ամենայն ենկիչարացն։ Եւ յետ սուղ աւուրց՝ այս նոր եկեալ Սինան աղայս՝ որ ենկիչար Աղասի էր, ի վերին բերդէն սկսաւ թօփ ձգել ի վերայ ապարանից փաշային՝ ասելով թէ, հրաման է թագաւորին ի վերայ քո՝ գնալ. վասն որոյ ելեալ գնասցես ի քաղաքէս. այլ և ձգէր թօփ ի վերայ տան Հուսէյն աղային և առաքեր պատգամս առ նա, թէ մի պահեր զփաշայն, այլ ուղևորեա։ Իսկ Հուսէյն աղայն և փաշայն երկուցեալք ի թօփէն, ելեալ գնացին ի ներքի բերդի հիւսիսային կողմն մերձ Թարվիզու դրանն, և մտին ի տեղին, զոր ասեն Պալթի տներ և անդ ամրացան, զի թօփն՝ որ գայ ի վերին բերդէն, ոչ պատահի այնմ տեղւոյ, զի քարափ լեառնն ի վերուստ հովանի է ի վերայ նորա, իսկ Վանայ ղուլն թէպէտ և թշնամիք էին Հուսէյն աղային և ատէին զնա. այլ զի կարի երկնչէին ի նմանէ, վասն որոյ ժողովեցան և նոքա անդ առ Հուսէյն աղայն։

Իսկ ենկիչար Աղասին առաքեաց արս ի բերդն Խօշաբայ և զեկոյց Սուլէյման բէկին զեկեալ հրաման թագաւորին, և զղօղելն զՀուսէյն աղային և զփաշային. իսկ Սուլէյման բէկն վասն անցելոյ քինուն՝ և նախանձուն վրէժխնդրութեան, բազում ցանկութեամբ ցան-

կայր այնպիսւոյ լրոյ, ոչինչ դանդաղեալ, այլ շեշտակի յարուցեալ ինքն յոլով զօրօք, առեալ ընդ իւր և զՉօմարն՝ զոր յառաջդ յիշեցաք. և գնացեալ հասին ի Վան քաղաք. և ի շրջակայ գեղօրայս քաղաքին այսր և անդր շրջէին հանապազ, զի զուցէ ի ձեռս անցեն զՀուսէյն աղայն, որ և շրջելով գնացին ի գիւղն Արջակ, և անտի ի գիւղն Խառակոնիս. և գիւղս այս Հիւսէյն աղային էր, և առ ի վրէժխնդրութիւն քինու Հուսէյն աղային՝ զգեղի տանուտէրն ի ձող բարձրացուցեալ սպան Սուլէյման բէկն։

Եւ անտի ելին Սուլէյման բէկն և Չօմարն զօրօքն իւրեանց գնացին ի Վարագայ վանքն, և զոր ինչ համբաւ յառաջմէ լուեալ էին զմեծահանդէս ուխտէն Վարագայ, այժմ աչօք տեսեալ և մտօք նկատեալ զննէին զամենայն, և մտախոհ եղեալ խոկային, թէ այսպիսի հոյակապ և հռչակաւոր մեծաշէն վանից գոն բազմաժամանակեայ մթերեալ ինչք և ստացուածք, կահք և կարասիք պղնձեղինաց, արծաթեղինաց և ոսկեղինաց, և արդ՝ ժամ է մեզ, զի ի ձեռս մեր գրաւեսցուք զամենայն։ Եւ յայսմ պատճառէ յանկարծակի կալան զամենայն բնակիչս վանացն, կապեցին և պահէին ի կալանս, և մի մի բերեալ առաջի իւրեանց հարցանէին վասն ստացուածոց վանացն՝ և խնդրէին ի նոցանէ. և նոքա զոր ինչ յայտ էր ցուցանէին, և վասն այլոցն ասէին թէ, ի քաղաքն են տարեալ զամենայն և անդ պահեն, զի վասն ահի գողոց և աւազակաց աստէն ինչ ոչ թողուն։

Իսկ ի բնակչաց վանիցն, թէպէտ չարչարեցին զոմանս առաւել՝ և զոմանս սակաւ, այլ զնոսա զամենեսեան թողին, և ի նոցանէ ով ոք եգիտ հնար փախչելոյ՝ փախեաւ անդառնալի։ Բայց երեք աբեղայք ծերք ի միաբանից վանացն, որոց անուանքն էին տէր Յովհաննէս և Տէր Սահակ և տէր Մովսէս, զոսա կալան և պա-

հէին կապանօք և բազում զգուշութեամբ, և ասէին․ այլ բնակիչքն մանկագոյնք են՝ ոչ են տեղեակք պահարանաց վանիցս, սոքա հին աւուրբք և ծերք են, սոքա գիտակք են ամենեցունց։ Եւ բերեալ առաջի՝ նախ հաւանական բանիւք, և ապա սպառնալեօք խնդրէին ցուցանել նոցա զպահարանս վանացն, և աբեղայքն ասէին․ մեք բնաւ ոչ եմք գիտակք, յորոց դուքդ ասէք․ քանզի կամօք և յօժարութեամբ սրտի յանձին կալան զմահ և մեռանիլ և ոչ ցուցանել։

Եւ յետ բազում հարցման և պատասխանւոյ՝ սկսան չարչարել զնոսա․ և նախ կախեցին զնոսա յոտից նոցա և խստագոյն հարին բրօք կարի անողորմ և անչափ։

Եւ ապա իւրաքանչիւր աբեղայից զերկոսին ձեռսն տարան յետս կոյս, և զերկու բոյթս ձեռացն կապեցին ի վերայ իրերացն, և արկին պարանս ի մէջ երկուց ձեռաց նոցա, և ի բարձր տեղւոջէ կախեցին զնոսա, և բերեալ ծանր վէմս եդին ի վերայ թիկանց նոցա։ Եւ թողին այնպէս ի կախաղանին, որ մնացին մինչև ցերեկոյ, որով քակտեցան յօդուածք երկոցունց ձեռաց նոցա, և աբեղայքն ողբալով աղաղակէին, թէ ոչ գիտեմք զխնդրելին ձեր՝ և անօրէնքն ոչ անսային։

Յետ այսորիկ արկին կալարան չուան ի գլուխ աբեղայիցն, որ է այսպէս․ զի զպարանս կանթեղին, որ բարակ է և պինդ, կապեցին և արկին ի գլուխս աբեղայիցն բոլոր իբրև զօղ, և անցուցին փայտ ի մէջ պարանին, և սկսան կանել[1] (ոլորել) զփայտն, և ի կանել փայտին՝ պարանն ևս ոլորեալ և մանեալ եղև սաստիկ պնդութեամբ, և թաղեցաւ ի մէջ մսոյ և մորթոյ գլխոց աբեղայիցն, և իբրև ի մամուլս պնդեալ սեղմեալ եղեն գլուխք նոցա, և ամենայն միսք և մորթք և երակք ղըլ-

---

1 Ուղ. մանել։

խոցն և պարանոցացն, այտուցեալ ալխնըռուշտ եղեն, և երկոցունց աչաց նոցա համարէին ի բաց ոստել ի տեղեացն, և արեղայիցն անշնչացեալ և ուշագնաց եղեալ իբրև զմեռեալ անկանէին ի գետնի։

Եւ ապա բերին զպարանս բարակ և պինդ՝ և կապեցին յերանս արեղայիցն, և քարշեալ ի վեր՝ կախեցին ի բարձր տեղեաց զիւրաքանչիւրսն՝ և շուրջ զնոքօք բոլորեալ անօրէնքն և զօրքն խուրեանց հայհոյէին, Թքանէին, այպանէին ասելով. զայդքան չարչարանօք կրէք՝ և ընդէ՞ր ոչ ցուցանէք զդարանսն վանացն. և արեղայքն ոչ ցուցանէին, վասն զի զմահ յանձն առեալ էին։

Զկնի սորա եկեալ Զօմարն ինքն եբաց զծածուկ մարմինս արեղայիցն, և էարկ դաստառակ ի վերայ առնացի անդամոց նոցա, և ինքն ի բերան իւր առեալ՝ ատամամբն ծամէր զայն, յորմէ յոյժ վշտացան արեղայքն և անշնչացեալ անկան իբրև զմեռեալս։

Արդ՝ զայսքան սաստկելի տանջանս կրեցին ողորմելի արեղայքն, և գրեթէ յիւրաքանչիւր չարչարանս յատուկ յատուկ մեռանէին և կենդանանային, և մանաւանդ ի վերջին չարչարանս յայս, որ կարի սաստկելի տանջանք էր և ի բազում տանջանացն ճնշեալ մաշեալ և վատեալք եղեն մարմնով, որք ոչ զօրէին ի վերայ ոտից կանգնիլ։ Զայսքան չարչարանս, զորս յանուանէ յիշեցաք երևելիք և յայտնիք էին, զորս ի շարադրութիւնս բանի բերեալ գրեցաք. իսկ որք փոքրագոյնք էին, զորս մեք Թողաք, դու զայն մտօք քովք իմասցիս, և զայս ամենայն հնարեալ ներգործէր անիծեալ և անողորմ, անաստուած և մարդադէմ գազանն այն Զօմարն։

Եւ յետ այսքան վշտաց և նեղութեանց, իբրև գիտաց Զօմարն, Թէ արեղայքն ոչ ցուցանեն զդարանսն, ինքնին իսկ յարուցեալ ի խնդիր. որոնել և յուզել զդարանս վանիցն. քանզի էառ ի ձեռն իւր մուրճ, որ է

քլունկ և սկսաւ շրջագայիլ ի մէջ վանիցն յեկեղեցիսն և ի տներն և յամենայն տեղիս. կանգնէր և հայէր, և դիտեալ նկատէր զամենայն տեղիս, ապա ուր և համարէր գոլ կարծիք և նմանութիւն դարանի, մրճովն այնուիկ՝ զոր ի ձեռին ունէր, բաղխէր զտեղիսն, և այսպէս շրջագայելով եկին և մտին ի մի յեկեղեցեացն, և յորժամ եհար զկարծեցեալ տեղին, նոյնժամայն ել ձայն թնդման. վասնորոյ վաղվաղակի քակեցին զտեղին և գտին խոր մի լի պղնձեղինօք. վասն զի զամենայն պղնձեղէն անօթս վանիցն անդ լցեալ թագուցեալ էին, զորս զամենայն արտաքս բերեալ ժողովեցին ի մի վայր։ Եւ ի գտանելն այսմիկ առաւել յորդորեցան բազմաց այնպիսեաց գոլ կարծիս տարան, և կարի որոնմամբ սկսան հարկանել զամենայն տեղիսն։ Եւ անտի գնացին յայլ եկեղեցի, և ի բաղխելն՝ թնդաց տեղին. և վաղվաղակի քակեցին, և գտին դարան մի դատարկ, զի ոչինչ գոյր ի նմա։

Եւ թողեալ զայն՝ գնացին ի միւս այլ եկեղեցին, և ի բաղխելն՝ պատահեցաւ տեղին, ուր էր մեծ դարանն, յորում պահեալ էին զաւագ սուրբ Նշանն և զամենայն անօթս եկեղեցեացն. և վաղվաղակի քակեցին և գտին զդուռն դարանին, և մտեալ ի ներքս տեսին լի գանձիւ, և զաւագ սուրբ Նշանն բազում դաստառակօք պատեալ և ի մէջ գեղեցկաշէն արկեղ եդեալ. և ի վերոյ քան զամենեսեան անօթսն բազմեցուցեալ, զոր Սուլէյման բէկն ինքնին ի գիրկն իւր առեալ զսուրբ Նշանն և եբեր արտաքս։ Եւ ապա արտաքս բերին զայլ ևս անօթս, որ էին բազում արծաթեղէնք, սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ. որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր, և ի վերայ իւր գրեալ ունէր, Դաւթի խաչ. և [1] բազում ոսկետուփ և արծաթապատ աւետարանք,

---

1 Ուղ. չէ+. և.

և այլ գլխանք և արծաթեղենք, քշոցք և բուրվառք և կանթեղք, և պատուական և մեծագին շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլ ևս կահք և կարասիք բազումք, զորս անդէն պահեալ էին․ զամենայն հանեալ բերին արտաքս։ Զոր ինչ արծաթեղէնք իւք էին, եղին ի մէջ սնդկի և զոր ինչ պղնձեղէն էր խորտակեցին, և այլ զոր ինչ և գտին՝ բարձին ձիոց, նա և զսուրբ Նշանն իւրով զարդուքն․ և կալեալ երէց մի բերին և կարգեցին գնալ ընդ սրբոյ Նշանին վասն սպասաւորելոյ նմա․ և Սուլէյման բէկն և Զօմարն զօրօքն իւրեանց առեալ զայն ամենայն և [1] գնացեալ հասին ի Խօշաբ։

Արդ՝ ամենայն անօթք և ինչք Վարագայ այսպիսի կերպիւ գնաց ի Խօշաբ, յորում ժամանակի էր Թուականն մեր ՌՃ։

Իսկ երեքին աբեղայքն՝ որք այնքան տանջեցան, թէպէտ և տևեալ ապրեցան զամ մի, այլ իբրև զմեռեալ զեռուն, զի ճլլամահ կենօք կային և ըղձային մահու, որ և զկնի ամի միոյ հասեալ ի վերայ նոցա մահ հանգոյց զնոսա ի տառապանաց իւրեանց։

[1] Ռոչ. ձէ. Ե.

Գլ. ԼԹ.

Վասն գնալոյ Հուսէյն աղային ի Ջուլամերկ։

Իսկ Հուսէյն աղայն և փաշայն՝ որք ի Պալթի տներն մտեալ էին և զօղեալ, մնացին անդէն այնպիսի մինչև յերկուս ամիս, և Թօփն ի վերին բերդէն հանապազ գնդերքին բերդն և զքաղաքն ծեծեր և աւերեր։ Ապա Հուսէյն աղայն նկարեալ խորհրդով գիտաց զի, ոչ ուստեքէ գոյ նմա փրկութիւն, եթէ ոչ ի խնամոյն իւրոյ յԵզդիշէր մեծ պարոնէն. վասն որոյ յիւրոց հաւատարմաց զոմանս Թարց բնաւին ումեք գիտելոյ առաքեաց առ Եզդիշէր ասելով. յայտ է քեզ զի, իշխանքն Վանայ և Սուլէյման բէկն իմ թշնամիքն են, արդ՝ ոչ ուստեքէ գոյ ինձ հնար փրկութեան, եթէ ոչ ի քէն. վասն որոյ վաղվաղակի պարտիս հասանել ինձ յօգնութիւն։ Իսկ մեծ իշխանն Եզդիշէր հրաման արար իւրոյ իշխանի ումեմն՝ որոյ անունն էր Միրաբէկ, առնուլ զզօրս և գնալ. և նա առեալ ընդ իւր զզօրս հազար և հինգ հարիւր, պատրաստութեամբ յոլով զինուց և մանաւանդ թֆանքով. որոց փութանակի հասին յերկիրն

Վանայ և ի պատեհաւոր տեղիս և ի մերձակայս քաղաքին շրջէին, զի թերևս զՀուսէյն աղայն ի ձեռս ածեալ, առեալ գնասցեն։

Իբրև զայս ետես փաշայն թէ, զօրքն Եգիլիշերին եկին ի տանել զՀուսէյն աղայն, խորհեալ ի միտս իւր գիտաց զի, յետ գնալոյ նորա ինքն միայն մնայ. վասն որոյ փութացաւ ինքն և յառաջ քան զՀուսէյն աղայն ելեալ ի Վանայ քաղաքէն իւրովք պաշտօնէիւք, և գնաց՝ յո՛ և կամեցաւ։

Բայց Թօփն հանապազ ի վերին բերդէն ծեծեր զներքին քաղաքն և աւերեր, զի յառաջին շաբաթու աղուհացից սկիզբն արարին թօփ ձգելոյ՝ և մինչև ի Հոգւոյ գալուստն ձգեցին, որոյ վասն ձանձրացան ամենայն քաղաքացիքն՝ իշխանք և սպայք և ռամիկք. խորհուրդ արարին մեծամեծքն և ղուլլար աղասիքն, թէ վասն առն միոյ ընդէ՞ր է այսքան չարչարանս կրել մեզ, կալցուք զՀուսէյն աղայն և տացուք ի ձեռս իւրոյ խնդրողացն. և ոմանք զայս խորհուրդ ծանուցին Հուսէյն աղային, և նա կամեցաւ զի, զգլխաւորս այնմ խորհրդեանն, որք էին ղուլլար աղասիքն հնարիւք իմն սպանանել. և այս խորհուրդ ևս յայտնեցաւ ղուլլար աղասոցն և այլ գլխաւորացն։ Վասն որոյ ընդ լուսանալ առաւօտուն, ղուլլար աղասիքն և այլ գլխաւորքն իւրաքանչիւր ոք առեալ զդրօշն նշանաց իւրեանց և գնացին ի ներքին բերդի յայն դուռն, զոր Իսկալի դուռն ասեն. տնկեցին զդրօշն ի վերայ պարսպին և աղաղակեցին թէ ղուլն դարձաւ թէ ղուլն դարձաւ, իբրև զայն լուան սպայազօրքն, ամենքեան առեալ զզէնս իւրեանց ընթացան ի ներքոյ դրօշին իւրեանց, և մնաց Հուսէյն աղայն ինքն միայն և որդիք և ծառայք իւր, որ և երկուցեալ Հուսէյն աղայն զի մի գուցէ ըմբռնեսցեն զինքն, յայնժամ ծառայքն Հուսէյն աղային պարանաւ կախե-

ցին զնա ի ներքի բերդի պարիսպէն, որ իջեալ՝ գնացեալ խառնեցաւ ի զօրս Եզդիշէրին և զօրքն Եզդիշէրին առեալ զՀուսէյն աղայն գնացին ի Շագախ և անտի ի Ջուլամերկ առ Եզդիշէր. և այս եւս այսպէս։

Գլ. Խ.

Պատմութիւն վասն սատակման պիղծ Ջօմարին.

Յորժամ Սուլէյման բէկն և Ջօմարն աւարեալ կողոպտեցին զվանքն Վարագայ և առեալ գնացին ի Խօշաբ, անդէն մնացին մինչև ի Յայտնութեան յիսնակն, ապա եկեալ լրտեսացն պատմեցին նոցա, թէ ահաւանիկ Հուսէյն աղայն յայս նիշ աւուր ելանէ ի Ջուլամերկայ և գնայ առ խոնդքար թագաւորն. յայնժամ կամօք և խորհրդակցութեամբ Սուլէյման բէկին, առեալ Ջօմարն հարիւր այր և ի վերայ Բերկրու և Արճիշու գնաց ի պահել զճանապարհն Հուսէյն աղային, զի թերևս սպանցէ զնա։

Իսկ այն հրաման թագաւորին՝ որ ի վաղ ժամանակաց ելեալ էր վասն Ջօմարին, թէ ուր և երևեսցի Ջօմարն այնմ աշխարհի զօրապետքն զօրօքն իւրեանց մարտիցեն ընդ նմա և սպանցեն, որոյ սակս և փաշայն Արզրումայ ի լսելն իւր զգալն Ջօմարին, զոմն իշխան չորս հարիւր արամբք առաքեաց զկնի Ջօմարին. որոց եկեալ հանդիպեցան Ջօմարին ի գաւառին Կեղւոյ, ուր և մարտուցեալ կռուեցան ընդ Ջօմարին և յաղթեցին նմա. քանզի զօրքն Ջօմարին հարիւր էր և նոքա չորս

հարկուր։ Վասն որոյ զզօրսն Զօմարին զոմանս սպանին և զոմանս փախուցին, և ինքն Զօմարն ութն միայն արամբք ելեալ ի կողմն ինչ և զերծաւ ի նոցունց, և կամեցաւ դառնալ գնալ ի Խօշաբ առ Սուլէյման բէկն, և յուղի անկեալ եկեալ մինչև եհաս ի կապն Ոստանայ։

Իսկ բաջ առնողն Ոստանայ որ զճանապարհն պահէ և զբաջն առնու ի ճանապարհորդաց, ետես զԶօմարն ի հեռաստանէ և իմացաւ որ Զօմարն է, և փաղփաղակի ինքն զխանջալն իւր ի բաց ձգեաց յինքենէ, և սկսաւ այսր և անդր որոնել, շրջագայիլ. զայս արար պատճառանօք, զի մի գիտասցեն զնա Ոստանցի գոլ և սպանցեն։ Այլ և Զօմարն ևս ետես զայրն ի հեռաստանէ և ասաց իւրոց արանցն, մեզ թէ վնաս ինչ հասանէ՝ յա[illegible]նէս յայսմանէ հասանէ, վասն որոյ ի հասանելն ձեր առ նա, սպանջիք զնա և մի թողուք. իբրև եկեալ հասին առ այրն Զօմարն և արքն իւր, հարցին զայրն, թէ վասն է՞ր [1] շրջիս, և նա խաբեաց զնոսա և ասաց. ճանապարհորդ եմ և աստ եկեալ կորուսի զխանջալն իմ և շրջելով որոնեմ, զի գուցէ գտայց զնա, և ի լսելն զայս յառնէն սկսան ինքեանք ևս շրջագայել առ ի իմանալ զստոյգն, և փոքր ինչ շրջեալ այսր և անդր գտին զխանջալն, և այնու համարեցան իրաւացի ճանապարհորդ գոլ զայրն, վասն որոյ ոչ սպանին, այլ թողին ի գնալ. և այրն քանզի հմուտ էր վայրացն, ընդ թագնագնայ ձորակ ինչ, նախ քան զանցանելն Զօմարին ընդ կապն, փութանակի եհաս ի գիւղն, զեկոյց զօրականացն թէ, ահաւանիկ Զօմարն եկեալ է ի կապն, և այս համբաւ փաղփաղակի հռչակեցաւ առ ամենայն զօրականս, որոց ամենեցուն շեշտակի ձիարշաւ ընթացմամբ գնացին ոմանք դէպ ի կապն, և ոմանք դէպ ի վերին ճանապարհն. և

1 Ուղ. զի՞.

զերկուսին ճանապարհսն կալան։ Իսկ Զօմայն ոչ գնաց ընդ վերին ճանապարհն այլ ընդ ճանապարհս կալին եկեալ եմուտ ի կապն, և ընդ այն կամէր անցանել։

Եւ է կապս այս այսպիսի ինչ, զի է քարանձաւ բարձրագոյն, և ի ներքոյ քարանձաւին ծոցն է ծովացեալ անհուն խորութեամբ, որ Աստուծոյ միայն է գիտելի որքանութիւն խորութեան նորա. բայց ի հին և ի վաղեմի ժամանակաց զսիրտ քարանձաւին իմաստութեամբ և բազում աշխատութեամբ քարահատ արուեստաւորօք հատեալ են զքարն և արարեալ են ճանապարհ ընդ որ ուղևորք գնան, բայց ոչ թէ լայն, այլ այնքան՝ որ միայն մի բեռնատար գնայ և ոչ երկու։

Իսկ Զօմայն՝ որ ճանապարհաւ կապին մտեալ էր և գնայր, ոչ գիտէր թէ ժողովեալ են անդ մարդիկք վասն ինքեան՝ և պահեն զբերան կապին, վասն որոյ և անհոգ գայր։ և յորժամ եհաս յայ· կոյս յեզր կապին, իմացաւ զայն և յանհնարին վտանգս աղետից և տարակուսանաց ըմբռնեալ եղև, զի յառաջ ընդդէմ նոցա գնալ երկնչէր՝ թէ մի գուցէ թֆանքով հարեալ սպանցեն, և յետս դառնալ ընդ որ եկեալն էր ոչ կարէր, զի յոյժ նեղ էր տեղին, վասն որոյ յամենայն կողմանց անճար լեալ մնաց յանհնարինս։ Եւ հայեցեալ Զօմայն տեսանէ մերձ ինքեան փոքր ինչ զառ ի վայր տեղի, և սուրք վիմաց իբր զսուղ ինչ ձորակ իջեալ յեզր ծովուն, և թէպէտ դժուարին էր այլ ի տագնապէ սպանմանն՝ Զօմայ իջեալ ի վայր ի ձիոյն, կալաւ զպախուցն և ընդ այն ինքն և ձին իջին յեզր ծովուն. ապա հեծաւ ի վերայ ձիոյն և կռլեալ զպախուց երիվարին, քաջագոյն պատրաստութեամբ զսպեաց զինքն՝ և ուղղեալ վարեաց զերիվարն ի մէջ ծովուն. և յորժամ վարեաց զերիվարն ի մէջ ծովուն, զառաջինն խորասուզեալ ընկղմեցաւ, և գրեթէ եհաս մինչ ի յատակս ծովուն. քանզի բազում

ժամս անյայտ լեալ ոչ երևեցաւ։ Եւ իբրև անցին ի վերայ պահք ինչ, տեսին աչքն, որք զբերան կապին պահէին, զի հեռու վայրի եղին յերեսս ջրոյն երիվարն և Զօմարն, և յայնքան հեռի վայրի եղեն և երևեցան մինչ զի Թփանք ոչ հասանէր, քանզի կամեցան ձգել Թփանք և սպանանել զնա, և զի ոչ հասանէր վասն որոյ և ոչ ձգեցին։ Եւ բազում գովութեանց արժանին այն երիվար բարձեալ զվերելեակն իւր և տանէր՝ ոչ թէ իբրև զցամաքային կենդանի, այլ իբրև զջրային կենդանի գնայր լողալով, շնչէր, փնչէր, փռնգայր, զամբաւ խորութիւն ջուրց ծովուն յուզմամբ հատանէր, և գնայր լողալով և եկեալ եհաս յեզր ծովուն և ել ի ցամաք ի կողմանս Ռստանայ։

Եւ յորժամ ել Զօմարն ի ցամաք, ոչ գիտէր զսահմանս և զճանապարհս, կամ զցամաքային և զտղմային տեղիս վայրացն, և առ տագնապէ երկիւղին վարեաց զերիվարն հանդէպ երեսացն և գնայր, ոչ թէ ի վերայ երկրի այլ ի վերայ օդոյ. որ և ի գնալն հանդիպեցաւ յոյժ սաստիկ տղմային տեղւոջ, ուրում լայնութիւնն և խորութիւնն բազում էր։ Այլ և գիտէր ինքն Զօմար նաև տեսանէր իսկ, զի բազմութիւնք զօրաց գաւառին դրոհ տուեալ ընթանալով միտեն զկնի ինքեան, եթէ դառնայ գնայ ընդ ցամաքային վայրս՝ երկնչէր անկանել ի ձեռս նոցա. վասն որոյ անդէն եւս մտրակեալ զերիվարն վարեաց ի մէջ տղմոյն, և թէպէտ ի սակաւ ինչ տեղի գնաց, այլ յոլովութիւն տղմոյն արգել զնա ի մէջ իւր զբազում ժամս, և բազում ջանիւ և աշխատութեամբ այսր և անդր տարաբերելով հազիւ ուրեմն ել ի տղմոյն երիվարն և ընդ իւր եհան զԶօմարն։ Եւ յորժամ ել ի տղմոյն Զօմարն, միւսանգամ վարեաց զերիվարն հանդէպ երեսաց առ ի փախչել, և որպէս ասացաք անհմուտ էր որպիսութեան վայրացն, ոչ գնաց ի

կողմն ճանապարհին և կամրջին, որ և մօտ իսկ էր նա և զերծանէր իսկ, թէ գնացեալ էր, այլ գնաց հանդէպ երեսաց իւրոց։ Եւ ի գնալն իւրում պատահեցաւ Շամիրամայ առուին. որում ոչ գոյր հնար անցանելոյ բաց ի կամրջէն, զի յոյժ լայն է և խոր և երկուց կողմանց թմբերն բարձր՝ ընդ որ մարդ և ձի ոչ կարէ իջանել և ելանել, և առ եզերբ այս առուխս գնաց Զօմարն սակաւ ինչ զառ ի վեր և դարձաւ՝ և եկն ի գիւղն Կեմ կոչեցեալ։

Մինչ այս ամենայն անցք անցին ընդ Զօմարին՝ զօրք երկրին, որ գրոհ տուեալ շեշտակի ընթանային զկնի Զօմարին, եկեալ հասին յառուն Շամիրամայ, և փութացեալ կալան զանցս կամրջին, քանզի հմուտ էին վայրացն։ Եւ ոմանք ի նոցանէ եկին ի գիւղն Կեմ և գտին անդ զԶօմարն՝ որ իջեալ էր ի ձիոյն և յանդաստանի ուրեք զօղեալ, որք և շուրջանակի պատեալ պաշարեցին զնա. և Զօմարն ունէր ընդ ինքեան չորս տապանչայ թֆանք, զորս ուղղեաց ի ձգել և ոչ էառ հուր, քանզի բարութն թրջեալ էր ի մէջ ջուրց ծովուն և տղմոյն, և կայր ի տարակուսի, զի քաղէին ոգիք նորա. և զօրք երկրին՝ որք շուրջ զնովաւ պատեալ կային, ոմն ի նոցանէ, որում անունն էր Շեխուբէկ՝ քաջութեամբ աճապարեալ ուղղեաց զթֆանքն հանդէպ Զօմարին և ձգեալ եհար զգլուխն և անդէն սատակեաց զչարն և զանիծեալն զայն Զօմար, Եւ նոյն ժամայն կտրեցին զգլուխն և զաջոյ ձեռն, առին և զձին և տարան առ Եզդիշէր պարոնն իւրեանց։ Եւ Եզդիշէրն զձին պահեաց առ ինքն, և զգլուխն Զօմարին և զաջոյ ձեռն նշան ընդ նմին առաքեաց ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն։ Եւ թագաւորն տեսեալ զգլուխն և լուեալ զորպիսութիւն սպանմանն, և ուրախացեալ ընդ այն՝ պարգևեաց բազում պարգևս պատուականս Եզդիշէրին. այլ

և զերկիրն Սղերտու նմա խնամ ետ. որ և արդէն իսկ Եգգիշէրն տիրէ երկրին Սղերտու, և որքան ինքն կենդանի է՝ տիրէ։

(Բայց պատմողքն [1] ասացին թէ տիկ մի գինի կապեալ ունէր Զօմարն ի փոր երիվարին, յորժամ վարեաց ի մէջ ծովուն և տղմոյն։ Այլ և ջուլ ձիոյն հանապազ ի վերայ ձիոյն պահէր Զօմարն, ուր և գնայր, և յորժամ վարեաց զձին ի մէջ ծովուն և տղմոյն, ի վերայ ձիոյն էր ջուլն, և բամբակն՝ որ ի մէջ ջլին եդեալ էին և կարեալ, ասացին թէ երեք լիտր էր։) Եւ է ձին [2] հսկայաձև, բարձրահասակ, հաստաբազուկ, լայնալանջ, երկայնավիզ, կապուտագոյն, գեղեցկատես, սիգաճեմ, իբրև զբանաւոր ընտրող ժամանակին, և դիպուածոյն, և ճանաչող տեառն իւրոյ. և կայ նա այժմ առ Եգգիշէր պարոնն. և ստացեալ են ի նմանէ հինգ քուռակ։

Արդ՝ ստակումն պղծոյն Զօմարին այսպէս եղև, որպէս և պատմեցաք. ժամ է մեզ այսուհետև զստակումն Սուլէյման բէկին, և զդարձումն սրբոյ Նշանին պատմել ի Վանայ քաղաքն. քանզի և պատմութիւնս մեր վասն սրբոյ նշանին է, և ոչ վասն ամբարիշտ արանց։

1 Ռուկ. ընթ. Բայց պատմողքն . . . ցվերջ որ ընդ փակագծով։

2 Նոյն. Բայց էր ձին.

ԳԼ. ԽԱ.

Պատմութիւն վասն սատակման Սուլէյման բէկին։

Որպէս պատմեցաք յառաջ՝ թէ Սուլէյման բէկն կողոպտեաց զվանքն Վարագայ, առեալ զամենայն անօթսն և զաւագ սուրբ Նշանն և տարաւ ի բերդն Խոշաբայ՝ և անդ պահէր։

Եւ զի Հոգւոց վանքն՝ որ յիշի ի մէջ պատմութեան վերափոխման սըրբուհւոյ Աստուածածնին, որ ի սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսէ շինեալ է, և անդ ամփոփեալ զկենդանագիր պատկեր սրբուհւոյ Աստուածածնին, այս վանքն յերկիրն Խօշաբայ է ընդ իշխանութեամբն Սուլէյման բէկին։ Սորին վասն յորժամ եկն Սուլէյման բէկն ի Խօշաբ, կոչեաց առ ինքն զառաջնորդն Հոգւոց վանից զտէր Պետրոս եպիսկոպոս, և իբրև երախտաւոր ձևանալով նմա ուրախութեամբ ասէր, բերի ի Վարագայ զձեր մեծ սուրբ Նշանն, արդ՝ տամ զնա քեզ, զի տարեալ դիցես ի վանքն մեր՝ զի անդ կացցէ։ Իսկ եպիսկոպոսին նկա-

տեալ մօտք՝ և խորհեալ թէ ոչ է մնալոյ այն իւրեանց, վասն որոյ պատասխանեալ էր ոչ դոյ հնար այդմ սրբոյ Նշանիդ առ մեզ մնալոյ, զի ի բնէ հարց և ի հաւուց նոցա է այդ ստացուած՝ և ոչ մեր. և ոչ էր տարեալ Պետրոս եպիսկոպոսն՝ զսուրբ Նշանն ի Հոգւոց վանքն, թէպէտ Սուլէյման բէկն բազում անգամ ասացեալ էր։ Այլ և ասացեալ էր Սուլէյման բէկն, թէ դու ոչ տանիս, ես այլոց քահանայից տամ և առաքեմ ի վանքն, պատասխանեալ էր եպիսկոպոսն, յորժամ դու զսուրբ Նշանն առաքես ի վանքն, ես զմիաբանս իմ առեալ ելանեմ անտի և գնամ դու գիտես և քո վանքն. ապա Սուլէյման բէկն թոյլ էր տուեալ՝ և ոչ էր առաքեալ։

Իսկ Հայազունք քրիստոնեայքն՝ որք ի Վան քաղաքի և ի գաւառս նորա էին, միահաղոյն սրտաբէկ և միջակտոր, տրտմաթախիծ անմխիթար լեալ գյաւխտենից[1] սուգ զգեցան. վասն կողոպտելոյն Վարագայ, և մանաւանդ վասն սրբոյ Նշանին, և հանապազորդ հաշէին, մաշէին, հեծէին, և հառաչէին, թէ զիարդ արդեօք իցէ հնար փրկութեան սրբոյ Նշանին։ Յորոց այր ոմն երևելի և բարեպաշտօն քրիստոնեայ ի խօջայից քաղաքին Վանայ, որ է սա Ինքն Խաննեց խօջայ Թումայի որդին, որոյ անունն էր Մարխաս Չալապի, այս Մարխաս Չալապիս առեալ բազում աղերս և եկեալ ի Խօշաբ առ Սուլէյման բէկն, մատոյց զաղերսն, և զբազում աւուրս կացեալ անդէն. նա և բազում արս միջնորդս արկեալ աղաչէր զՍուլէյման բէկն վասն փրկութեան սրբոյ Նշանին. և նա ոչ հաւանեցաւ զի տացէ։ Եւ ի հազար ղուռուշէն սկիզբն արար Մարխաս Չալապին տալով, և եհաս մինչ յեօթն հազար ղուռուշն, զի տացէ զսուրբ Նշանն, և Սուլէյման բէկն ոչ ետ. և յետ յոլով աւուրց անդէն կելոյ

[1] Ուղ. չէ. գյաւխտենից.

Մարխաս Չալապունն, իբրև ոչ ետուն զսուրբ Նշանն, ելեալ ի Խօշաբայ տրտմեալ և Թախծեալ սրտիւ գնաց ի Վան քաղաքն։

Եւ որպէս ասէ մարգարէն Թէ, զայր մեղաւոր՝ չարիք իւր որսան ի կորուստ, սոյնպէս և չարիք Սուլէյման բէկիս որսացին զինքն ի կորուստ, այսպիսի կերպիւ. քանզի իշխանքն Սուլէյման բէկին՝ արք տասն կամ ևս աւելի, խորհեցան ի միասին սպանանել զՍուլէյման բէկն, զի ասէին Թէ, որքան Սուլէյման բէկն պարոն եղեալ է՝ երկիր և աշխարհ մեր բնաւին աւերեցան, զի ոչ երբէք դադարեցաւ հեծել շարժուԹիւն՝ և հինահարուԹիւն, և աւար, և կռիւ, և վրդովուԹիւն, և որքան սա կենդանի է, գիտեմք զի ոչ լինի խաղաղուԹիւն, վասն որոյ սպանցուք զսա՝ զի խաղաղասցի խռովուԹիւն աշխարհիս մերոյ։

Զայս խորհուրդս արք ոմանք իմացեալ զգացուցին Սուլէյման բէկին, Թէ երեքին փառաւոր իշխանքն քո՝ որ է Մօլլայ Ղասում, և Մուստաֆայ բէկ, և Իբրահիմ բէկ, գլուխ եղեալ են և այլովք իշխանովք խորհեալ են առ ի սպանանել զքեզ, և Սուլէյման բէկն կալեալ զերեսին զիշխանսն զայնոսիկ էարկ ի բանտ՝ կապեալ երկաԹի շղԹայիւք, և ըմբռնումն երից իշխանացս եղև յառաջին շաբաԹին աղուհացից, իսկ կապեալ իշխանքս Թղթով և միջնորդով, բազում կերպիւ աղաչանս և խնդրուածս արարին առ Սուլէյման բէկն զի արձակեսցէ զինքեանս, և նա ոչ արձակեաց։

Իբրև գիտացին իշխանքն Թէ ոչ արձակէ, այլ սպանանէ, խորհեցան այլ ևս հնարս, զի բերին առ ինքեանս զաներն Սուլէյման բէկին. որում անունն ևս Մուստաֆայ բէկ էր. և ի բազում աւուրս յոլով կերպիւ խօսեցան ընդ նմա, զի Թերևս կարասցէ զհնար ինչ գտանել վասն փրկուԹեան նոցա։ Եւ ի խորհիլն և

ի խօսիլն ասացին իշխանքն ընդ աներոջ Սուլէյման բէկին, թէ կարէիր դու փրկել զմեզ, մեք զքեզ իշխան և պարոն կարգէաք մեզ ի տեղի Սուլէյման բէկին. քանզի և որդի իշխանի ես դու. և արդարև որդի իշխանի է այս Մուստաֆայ բէկս. արդ՝ եթէ դու սպանցես զՍուլէյման բէկն, անպատճառ զքեզ կացուցանեմք իշխան ի տեղի Սուլէյման բէկին. և յոչ հաւատալն աներոջն բազում երդմամբ և պէսպէս բանիւ ուխտ հաստատեցին, այնքան մինչ որ հաւանեցաւ բանից իշխանացն. քանզի ոչ էր այր խորագէտ այլ պարզամիտ, վասն որոյ հաւանեցաւ։

Զկնի սորին հնարեցին գործ այսպիսի. զի երից իշխանացս այսոցիկ կապելոցս՝ ումեմն որդին և երկոցունցն երկու ծառայք, թաքուցին զսուրս ի ներքոյ հանդերձից իւրեանց, և յարտաքուստ զգեցան զգեստ կանացի՝ և ածին սաւանս ի վերայ իւրեանց, և ձևացան որպէս հաւաստեաւ կին [1]։

Այս երեքին արքս՝ որք և կերպացան կանայք, և Սուլէյման բէկի աներ Մուստաֆայ բէկն, յաւուր միում ընդ ծագել լուսոյ աւուրն ելին և ուղղեցան՝ և գնացին ի բերդն. եկին և հասին յառաջին դուռն բերդին, և դռնապանքն բերդին և այլ արքն տեսանէին զի Սուլէյման բէկի աներն գնայ՝ և ունի առաջի իւր զփոքրիկ մատաղ մանուկ որդին իւր, և երեք կանայք զկնի նորա։ Իբրև եկեալ հասին ի դուռն բերդին, յայնժամ դռնապանքն հարցումն արարին ի Մուստաֆայ բեկէն վասն կանանցն, և նա ասաց թէ կանայք կապելոց իշխանացն են, և երթան առ կինն Սուլէյման բէկին աղաչել զնա, զի և նա բարեխօս լիցի առ Սուլէյման բէկն վասն արանց սոցա։ Զայս բան իբրև լուան դռնապանքն

---

1 Ո՛չ. զհաւաստի կանայք.

Թոյլ ետուն ի գնալ, և նոքա անցանելով ընդ ամենայն դըռունս բերդին հասին մինչև ի վերին դուռն, և անդ ևս հարցումն արարին դռնապանքն, և Մուստաֆայ բէկն սոցին ևս արար զպատասխանի ըստ առաջին կերպին, վասն որոյ դռնապանքն թոյլ ետուն. քանզի ով ոք և տեսանէր զՄուստաֆայ բէկն՝ և առաջի նորա զտղայն, և լսէին զպատասխանին, աներկբայ հաւատացին, զի համարէին թէ որպէս յերեկն և յեռանդն գնայ և գայ Մուստաֆայ բէկն առ Սուլէյման բէկն, սոյնպէս և այժմ, վասն որոյ թողուին ի գնալ։

Եւ նոքա անցանելով զամենայն դըռունս եկեալ հասին յապարանս Սուլէյման բէկին, և եկեալ կային ի դուռն տանն՝ յորում Սուլէյման բէկն ննջէր ի գիշերի, որ և յայնմ ժամու տակաւին ի մէջ անկողնոյն կայր՝ բայց էր արթուն, և կինն Սուլէյման բէկին և երկու աղախինքն ևս ի տան անդ։ Եւ նախ եմուտ ի ներքս ի տունն Մուստաֆայ բէկն, եբաց Սուլէյման բէկն զերեսսն և ետես զաներն իւր ի տանն՝ և երեք կանայք արտաքոյ դրան տանն, և դարձեալ ծածկեաց զերեսսն անկողնաւն. զի համարեցաւ զկերպացեալ կանայսն ստուգիւ կին գոլ, և կարծեաց թէ վասն կապելոց իշխանացն բարեխօսելոյ գան, վասն որոյ ծածկեաց զերեսն իւր։ Եւ առ ժամայն շեշտակի ընթացեալ կերպացեալ կանանցն, և անկան ի վերայ Սուլէյման բէկին. և սրովն իւրեանց ծակոտեալ խողխողեցին և սպանին. և սատակումն Սուլէյման բէկին եղև յաղուհացից հինգերորդում շաբաթու յուրբաթ օրն. վասն զի յորում աւուր Սուլէյման բէկն զՎարագ կողոպտեաց, ի բոլորել տարւոյն ի նոյնում աւուր և ինքն սպանաւ։

Յետ սպանման Սուլէյման բէկին, եկին երեքին արքն սպանողք Սուլէյման բէկին, փութանակի բացին զդուռն բանտին, և հանին ի կապանաց և ի բանտէ զե-

րեալին կապեալ իշխանին. որոց ելեալ ի բանտէն եկին ի դուռն բերդին, եկին և ժողովեցան առ նոսա և այլ ևս ուխտադիրք ընկերքն իւրեանց, և այլ ևս արք յոլովք, և աղմկեալ խօսէին։ Իսկ երեքին սպանող արքն դարձեալ մտին ի բերդն, և գնացին ի տունն, յորում սպանին զՍուլէյման բէկն, և առին զգլի մարմնոյ նորա՝ պատեցին ձորձով ինչ. և բերին արտաքս ի դուռն բերդին ի մէջ ամբոխեալ արանցն թէ տեսէք ձերովք աչօք և հաւատացէք, զի անկարծիք և ստուգիւ սպանաւ Սուլէյման բէկն, իբրև արկին զգէշն ի մէջ նոցա, նոյնժամայն նոքա երեքին սպանողքն և աներն Սուլէյման բէկին, փութանակի դարձան և մտին ի բերդն՝ և փակեցին զդուռն բերդին, և յինքեանս կալան զբերդն. այնու մտօք թէ մեք սպանաք զՍուլէյման բէկն. վասն որոյ մեք լինելոց եմք իշխան ի տեղի նորա։

Իսկ կինն Սուլէյման բէկին ելեալ ի գլուխ պարսպի բերդին բազում աղաղակեաց դէպ ի քաղաքն, և յաղագս բարձրութեան ոչ ոք լուաւ. իբրև ետես կինն թէ ոչ եղև լուեալ ձայն նորա ի քաղաքին, էառ զգլխոյ ղաւուխն Սուլէյման բէկին և զքիշմիրի շալն նորա, զի յորժամ սպանին զնա, ի գլուխն էր՝ և էր արինաթաթախ, պատեաց զղաւուխն շալոմն և ձգեաց ի մէջ քաղաքին, և ղաւուխն գնացեալ անկաւ առաջի տան ումեմն Հայոց քրիստոնէի, որոյ անունն էր խօջայ Վասօյ, որ ի տեսանելն ծանեաւ, զի պարոնի ղաւուխն էր, բայց վասն արինաթաթախ գոլոյն երկիւղակարծ եղև թէ մի գուցէ սպանեալ իցեն զպարոնն. որք և առժամայն փութացեալ հասին ի դուռն բերդին, և տեսին զի հաւաստեաւ սպանեալ էր Սուլէյման բէկն։

Այս խօջայ Վասօյ ասացեալս, վասն զի բարեկամ էր Սուլէյման բէկին, զի զսիրալի խնամս և զայցելութիւնս բազումս տեսանէր ի նմանէ, սա ծածկաբար ա-

ռաքեաց զարս՝ և զեկոյց եղբարց Սուլէյման բէկին, որոց անուանքն էին, աւագին Իբրահիմ բէկ, և կրտսերոյն Էվլիայ բէկ. քանզի նոքա իւրաքանչիւր ոք յիւրեանց բերդւոջն կային, որք և ոչ կարի հեռի էին ի Խօշաբայ, որոց ի լսելն փութանակի զօրականօք հասին ի Խօշաբ: Իբրև եկին ի դուռն բերդին, ոչ բացին նոցա զդուռն սպանող արքն՝ որք մտեալ էին ի մէջ բերդին, և ի սակաւ աւուրս մնացին այսպիսի աղմկաւ ամենեքեան արք. և յաւուր միում աղմկեալ ժամու եղբայրն Սուլէյման բէկին Էվլիայ բէկ, եհար սուսերբ զՄալաղասումն և սպան զնա, քինախնդիր լեալ արեան Սուլէյման բէկին:

Ապա զկնի անցելոցս այսոցիկ՝ կինն Սուլէյման բէկին, որ տակաւին ի մէջ բերդին էր, ի միում գիշերի Թարց բնաւին ումեք գիտելոյ ինքն միայն կախեալ պարան ի բերդէն և ի վեր քարշեաց այր մի յարանցն Իբրահիմ բէկին ի վեր ի բերդ անդր, և նոքա քարշեցին ի վեր այլ ևս տասն այր, ընդ որս և զԻբրահիմ բէկն, ապա այս Իբրահիմ բէկս և արքն իւր հետամուտ եղեն սպանող արանցն Սուլէյման բէկին՝ որք անդ ի բերդին էին, և նոքա փախուցեալ մտին ի Ջաքախանէն, և Իբրահիմ բէկն հուր էարկ ի Ջաքախանէն, յորմէ հրոյ հրդեհեալ բարութն ի վեր էառ զտունն՝ ընդ նմին և զարսն, և ընդ յօդս ցնդեաց՝ որք և փերթ փերթ եղեալ հոսեալ ի վայր իջանէին:

Այնուհետև Իբրահիմ բէկն տիրացաւ բերդին և ամենայն երկրին, և սորին եղբայր Էվլիայ բէկն գնաց ի տեղի իւր յառաջին բերդն, ուր և նախ բնակէր, զորոյ անունն Ապաղայ·սաէին, Արդ՝ զպատակումն Սուլէյման բէկին պատմեցաք, այսուհետև պատմեսցուք զպարոնութիւն Իբրահիմ բէկին, և դարձն սրբոյ Նշանին ի Վան քաղաք:

ԳԼ. ԽԲ.

Պատմութիւն վասն պարոնութեան Իբրահիմ բէկին եւ դարձի սրբոյ Նշանին ի վան քաղաք:

Արդ ի վրայ այսմ ամենայնի, որ Էմլիայ բէկն դարձաւ և գնաց յառաջին բերդն իւր՝ յԱպաղայ կոչեցեալն. և Իբրահիմ բէկն եմուտ ի բերդն Խօշաբայ, և ընդ իւրով իշխանութեամբ նուաճեաց զբերդըն և զամենայն գաւառս նորա, և յաւուրց յաւուրս առ սակաւ սակաւ հարցեալ տեղեկացաւ ամենայն թշնամեաց իւրեանց. նաև այնոցիկ՝ որ ի սպանումն Սուլէյման բէկին համախոհք էին։ Եւ օր յաւուր սակաւ սակաւ զամենեսեան զնոսա կոտորեաց, և ոչ ումեք խնայեաց, ո՛չ ծերոց [1] և ո՛չ տղայոց, ո՛չ արանց և ոչ կանանց, այլ զամենեսեան իսպառ ջընջեաց։ Այլ և կալաւ զկինն և զքոյրն Սուլէյման բէկին և եդ ի բանտի, և բազմակերպ չարչարանօք չարչարեաց զնոսա, զի ցուցանիցեն զմնացուածս գանձուց Սուլէյ-

---

1 Ոսկ. չէ. ո՛չ ծերոց և ոչ տղայոց . . . իսպառ ջնջեաց.

ման բէկին. իբրև էառ զոր ինչ եգիտ՝ և յետոյ զնոսին ևս սպան։

Այն այս Իբրահիմ բէկս վերստին կոչեաց առ ինքն զառաջնորդն Հոգւոց վանից զՊետրոս եպիսկոպոսն և ասաց. տամ ի քեզ զսուրբ Նշանն, տար ի վանքն մեր, և անդ պահեա զնա, զի անդ կացցէ. և Պետրոս եպիսկոպոսն սմին ևս արար պատասխանի որպէս և արար Սուլէյման բէկին. և ոչ տարաւ զսուրբ Նշանն ի վանքն, այլ մնաց ի բերդն Խօշաբայ,

Եւ յորէ յորմէ հետէ Սուլէյման բէկն զսուրբ Նշանն հանեալ ի Վարագայ եբեր ի Խօշաբ, գրեթէ ցասումն և պատուհաս տեղացեալ լցաւ յերկիրն Խօշաբայ, զի երկիրն ոչ տայր պտուղ, և թէ լինէր՝ հազիւ զսերմն առնուին, և հեծիլ շարժութեամբ և խռովութեամբ լցաւ գաւառն, այլ և կենդանիքն ոչ աճէին, այլ տակաւին պակասէին. այլ և յաւուրս ամառան ի սուրբ Գրիգորի պահոցն սաստիկ և անչափ ձիւն եկն՝ որ բազումք ասէին թէ, երկու կանգուն նստաւ, և անասունք ամենեքեան առանց արօտի մնացին վասն ձեանն յոլովութեան. և այնու պատճառաւ անասունք յոլովք սովամահք եղեն։ Զկնի այսորիկ անկաւ մահ անասնոց յերկիրն նոցա, և որում գոյր հազար գլուխ ոչխար, հարիւր գլուխ ուրեմն մնաց. վասն որոյ բնակիչք երկրին Խօշաբայ ժողովեցան առ Իբրահիմ բէկն՝ և ծանուցին զաւերումն աշխարհին, և աղաչէին դարձուցանել զսուրբ Նշանն ի տեղի իւր, զի վերասցի պատուհասն ի նոցանէ։ Այլ և ինքն Իբրահիմ բէկն գողեցաւ, զի ցաւ գողութեան յայտնեցաւ ի մարմինն. այլ և ցաւ իմն որպէս թէ քամի գոյացաւ ի նա, որ կալաւ զմէջքն և զբարձսն և զսրունսն և հանապազ տանջէր զնա. այլ և կինն Իբրահիմ բէկին հանապազ թախանձէր զնա. և պէս պէս բանիւք խօսէր ընդ նմա, զի դարձուսցէ զսուրբ

Նշանն ի տեղի իւր, և վասն վերոյասացեալ պատճառացն՝ հաճեցաւ Իբրահիմ բէկն, զի դարձուսցէ զսուրբ Նշանն ի տեղի իւր։

Որ և ազդեցաւ այս՝ Վանայ քաղաքի ժողովրդոցն, և նոքա լցան երկնային խնդութեամբ, և նոյնժամայն վերոյասացեալ Մարխաս Չալապին առեալ ընդ իւր զոմանս ի ժողովրդականացն, և փութանակի հասին ի բերդն Խոշաբայ, մատեան առաջի Իբրահիմ բէկին, խօսեցան առ նա բանիւք աղաչանաց, և եդին առաջի նորա գրամ երկու հազար ղուռուշ նաղտ, և առին զսուրբ Նշանն և զմնացորդս անօթոցն, եթէ խաչ և եթէ այլ ինչ, եկին ի Վան քաղաք. Վասն որոյ զլոհ տուեալ ամենայն բնակչաց գաւառին քրիստոնէից զային յերկրպագութիւն սրբոյ Նշանին, և արտասուօք գոհանային զԱստուծոյ, որ եբեր զսուրբ Նշանն միւսանգամ առ նոսա։ Իսկ ի շուրջառացն զերկուսն առեալ էր Չօմարն, և վասն իւրն կարեալ էր չընթեան և զգեցեալ։ Իսկ զսուրբ Նշանն ոչ ևս տարան ի վանքն Վարագայ, կասկած և երկիւղ կրեալ, մտաւ ածելով զանցեալ արհաւիրքն, այլ պահեցին ի Վան քաղաքին ի Տիրամայր անուանեալ եկեղեցին։ Եւ եղև դարձ սրբոյ Նշանին ի Վան քաղաք ՌՃԳ. թուականիս մերում շնորհօք և մարդասիրութեամբ [1] Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որում փառք յաւիտեանս. ամէն։

---

1 Ոսկ. չէ. մարդասիրութեամբ.

ԳԼ. ԽԳ.

Պատմութիւն վասն նշխարաց սրբոյն Յովհաննու Կարապետին որ յայտնեցաւ ի ժամանակս յետինս որ ի հին Ջուղայ պահեալ կայր ի վաղուց ժամանակաց։

Արդ՝ ի ժամանակին յորում Թագաւորն Պարսից Շահաբաս կոչեցեալն, մեծն առաջինն՝ եհան զժողովուրդսն Ջուղայեցւոց ի հին Ջուղայոյ, և վարեալ տարաւ զնոսա յերկիրն Պարսից ի քաղաքն Ասպահան։ Իսկ ժողովուրդք Ջուղայեցւոց ոչ կարացին զինչս և զստացուածս իւրեանց զամենայն բառնալ և տանել ընդ ինքեանս. քանզի հրաման Թագաւորին սաստիկ էր ի վերայ իշխանացն, որք սրով փութացուցանէին զնոսա ճեպով ելանել ի տեղւոյն և գնալ. վասն որոյ ոչ կարացին առնուլ ընդ ինքեանս զինչս իւրեանց, այլ իւրաքանչիւր ոք պահելով թագուստ և գաղուստ արարեալ ի յարկս, և ի խորս, և ի վիհս և ի պատշաճաւոր տեղիս, և այնպիսի թողեալ գնացին։ Իսկ շրջակայ գեղօրէից բնակիչքն և գաւառականքն՝ որք մերձ էին հին Ջուղայոյ, գիտէին զպահուստն, զոր Ջուղայեցիքն արարին. վասն որոյ գային նոքա յարաժամ և յուզէին, որոնէին, և պեղէին զհող և զքար յաղագս գիւտի ընչից, և բազումք բազում ինչս գտանէին։

Եւ եղև՝ զի այր ոմն այլազգի և կրօնիւքն մահմե-

տական, ի գեղջէն՝ որում անուն ասեն Մեհրամն եկեալ ի Հին Ջուղայ, ի յորմնումն և ի յուզումն ընչից. և եկեալ յեկեղեցին՝ զոր վերին Կաթան ասեն, անդ ի յորմնեն իւրում ի յարևելեան որմն աւագ խորանին եգիտ աման ինչ խնցեղէն՝ եդեալ և ի մէջ ամանոյն զփայտեղէն արկղ մի փոքրիկ, որ է ղուլթի. իբրև եհան զարկղն փայտեայ ի միջոյ խնցեղէն ամանոյն՝ և եբաց զփայտեայ արկղն, իսկոյն բուրեաց ի նմանէ յորդագոյն անուշահոտութիւն, և այնու զգաց ի յոգի իւր այրն այլազգի թէ՝ նշխարք սրբոց է այն, և էր ի մէջ արկեղն մասունք ոսկերաց մանր և մեծ, և ընդ նոսա կտոր մի մագաղաթ, և ի վերայ գիր ինչ գրեալ: Եւ առեալ այրն զարկղն զայն ոսկերբն և մագաղաթիւն և տարաւ ի տուն իւր, տեսանել թէ զինչ պարտ է խորհել վասն նորա, և մնաց նշխարքն ի տան նորա աւուրս բազումս, և սկսաւ ինչք և ստացուածք նորա օր յաւուր նուազիլ, և կենդանիքն և անասունքն մեռանիլ, և ամենայն ինչք նորա ջնջեցան մինչև որդիքն ևս մեռան: Եւ եկեալ այրն ի միտ իւր գիտաց թէ՝ ի նշխարացն է պատահումն այն, որ դիպեցան նմա. վասն որոյ հանեալ զնշխարսն ի տանէ իւրմէ այնուհետև և տարեալ ի վայրի և ի բացեայ տեղիս ի մէջ քարակուտաց ինչ պահեաց զնա, զի թերևս վերասցի ցասումն Տեառն ի տանէ նորա, և ոչ եղև վերացեալ:

Յետ այսորիկ եկեալ այլազգի այրս այս, ի հռչակաւոր ուխտն ի վանքն սրբոյ Նախավկային, որ ի Դարաշամբ կոչեցեալ գեղջն է, և անդ յայտնեաց զամենայն որպիսութիւնն եպիսկոպոսի ումեմն, որում անունն էր Շմաւօն, որ էր նախածանօթ այլազգւոյն այնորիկ ի վաղ ժամանակաց, իսկ եպիսկոպոսն պատուիրեաց բերել զայն առ ինքն. և իբրև եբեր այլազգին զարկղն և ետ ցեպիսկոպոսն, և ի բանալն առժամայն բուրեաց հոտ անուշ և ելից զտունն, և ետես զմասունս նշխարացն,

և առեալ զկտոր մագաղաթն և ընթերցաւ՝ և էր գրեալ ի վերայ նորա այս ինչ.

«Այս է մասն նշխարաց սրբոյն Յովհաննու կարապետին, զոր Գրիգոր Լուսաւորիչ եբեր ի Հայս, և եդ ի քաղաքն Խրամ, իսկ ի յաւերման Խրամ քաղաքին, ի ՆԻԱ· թուին Հայոց բերին ի Ջուղայ»: Այսքան բանքս գրեալ էին ի վերայ մագաղաթին, և եպիսկոպոսն Շմաւօն գոհացեալ զԱստուծոյ ընդ գիւտ նշխարաց սրբոյն Յօհաննու, և լցեալ ուրախութեամբ մեծաւ, և հաճեալ զմիտս այլազգւոյն՝ տուեալ նմա ինչս, և առեալ զնըշխարսն ի նմանէ, և այրն գնաց ի տեղի իւր:

Եւ յետ աւուրց ինչ յայտնի եղև այս ժողովրդականացն Ջուղայեցւոց գնացելոցն յԱսպահան, որոց պետ և գլուխ էր խօջայ Նազարն, ոչ միայն Ջուղայեցւոց այլ և ամենայն հայազգւոյն քրիստոնէից բնակելոցն ընդ թագաւորութեամբն Պարսից, քանզի յոյժ հզօր և երևելի էր խօջայ Նազարն, նաև սիրելի թագաւորին Պարսից Շահաբասին: Եւ այս խօջայ Նազարս առաքեաց զարս ոմանս ի Ջուղայեցւոց առ եպիսկոպոսն Շմաւօն՝ և խնդրեաց ի նմանէ զմասն նշխարացն. այլ և բանս սպառնականս և երկիւղալիս. և առաքեալքն ի խօջայ Նազարէն եկեալ պահանջէին յեպիսկոպոսէն զմասն նշխարացն, յորոյ երկիւղէ զանգիտեալ եպիսկոպոսին, ոչ կարաց թագուցանել կամ զերծանել ի Ջուղայեցւոց, խորհեցաւ տալ ի նոսա զնշխարսն: Բայց ի մասանց զմեծ կտորն պահեաց առ ինքն թաքնաբար, որ էր գլուխ թիակին՝ որ է տեղի բոլոր ոսկերն, որ է ի վերայ ուսին, իսկ զայլ ևս մասունսն և զմագաղաթն գրեալ՝ եդին ի նոյն յարկեղն, և ետուն Ջուղայեցւոց, որք տարան յԱսպահան քաղաք առ խօջայ Նազարն,

Իսկ եպիսկոպոսն Շմաւօն պահեաց զնշխարն զայն առ ինքն մինչ ի ժամանակս յայս, յորում է թուականն

մեր Հայոց ՌՃԳ. և ի սոյն ժամանակի մեծ վարդապետն Յակոբ, որ էր և սա Ջուղայեցի, նորոգէր զնոյն վանքն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, բազում և անթիւ ծախիւք և մեծաւ աշխատութեամբ. սկիզբն արար եկեղեցւոյն ի հիմանէ մինչև ցկատարումն կոփածու վիմօք, այլ և զպարիսպն ամենայն և զամենայն շինուածսն որք ի նմա, զամենեսեան ի հիմանէ ձեռնարկեալ վերստին նորոգեաց։ Եւ եպիսկոպոսն Շմաւօն եկեալ առ մեծ վարդապետն Յակոբ ծանոյց նմա վասն նշխարացն, և ասաց թէ կամիմ խաչ շինել յաղագս իմոյ յիշատակի, և անդ հանգուցանել զնշխարսն զայն, իսկ վարդապետն ծանոյց եպիսկոպոսին թէ ոչ գոյ հրաման ի կանոնաց՝ դնել զնշխարս սրբոց ի մէջ խաչին, այլ յայլ տեղի. վասն որոյ կազմեցին վասն նշխարացն զայլ իմն տեղի արծաթեայ աղիւսաձև, և արարեալ ոսկեզօծ և ընդելուզեալ ականբք պատուականօք, և անդ հանգուցին զնշխարս սրբոյն Յօհաննու Կարապետին։ Եւ գրեցին ի վերայ պահարանի համառօտ բանիւ զամենեսեան անցուածս պատահմանցս այսոցիկ, և եդին ի նոյն վանս սրբոյ Նախավկային ընդ այլ բազմահաւաք սրբութեանցն՝ որք կան անդէն, որք են բարեխօս վասն ամենայն քրիստոնէից, մանաւանդ պահապանք և պարծանք աշխարհիս Հայոց, որք կատարեն զամենայն բժշկութիւնս առ ամենայն նեղեալս, որք դիմեն առ նոսա. որովք փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼ. ԽԴ.

Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսի:

Այս երանելի նահատակս Նիկողայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտու, որ այժմ ասի Յամիթ, ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին, և էր մանուկ տիօք իբրև տասն և հնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից, և ազգաւ ի Հայոց:

Եւ յաւուր միում մինչդեռ շրջէր Նիկողայոս ի մէջ շուկային ըստ հանապազորդ սովորութեան իւրոյ: յայնժամ այր ոմն հաւատովն մահմետական, որոյ այլև անունն Մահմետ էր, մերձեալ առ Նիկողայոս ձեռն անէր զերեսօքն՝ և փարէր ախտաւոր ցանկութեամբ՝ որպէս հանապազ տեսանի ունակացեալ առ մահմետականս. իսկ Նիկողայոս սաստիկ բարկութեամբ դժուարացեալ ընդ այն ի բաց վարէր յինքենէ. և էր այլ ոմն այր, որ նա ևս անուամբն Մահմետ էր և հաւատովն մահմետական, այս Մահմետ, որ այժմ խաղայր ընդ Նիկողայոսին, ասաց նմա վասն այնմ Մահմետի, թէ զիա՞րդ է զի ընդ այն Մահմետն առնես զսէր և յարակցութիւն, և ընդ իս ոչ առնես, և Նիկողայոս ասաց, զքո մայրն և զնորա մայրն այսպէս առնեմ: Եւ նոյն ժամայն այս Մահմետս ասաց մերձակայ արանցն, և խանութպանացն վասն

Աստուծոյ վկայք լերուք՝ զի դուք ձեզէն լուայք, որ հայհոյեաց զօրէնսդիրն մեր և զմարգարէն Մահմետ, և ժողովեցան բազում մահմետականք իբրև զշուն կատաղիք անդր ի վերայ նոցա, և յափշտակեցին զՆիկողայոս և տարան ի դատարանն առ դատաւորն, և ի նոցանէ լինէին ոմանք դատախազք, և ոմանք վկայք, և ոմանք վրէժխնդիրք, և դատապարտէին ի մահ զՆիկողայոս։

Եհարց դատաւորն ի Նիկողայոսէ՝ թէ արդարև հայհոյեա՞ց զպատգամաբերն զՄահմետ, ետ զպատասխանի Նիկողայոս, ես ոչ հայհոյեցի, և ոչ բան ինչ ասացի պատգամաբերին Մահմետի, այլ այրս այս ախտաւոր ցանկութեամբ փարէր զինև ի մէջ մարդկանց՝ և ամօթով առնէր զիս, վասն որոյ և ես զմայր սորա քֆրեցի։ Իսկ այս Մահմետս՝ որ խաղայր ընդ Նիկողայոսի, դատախազ լինէր թէ, զՄահմետ զպատգամաբերն քըֆրեաց։ Այլ և ասաց ունիմ ահաւասիկ երկու այր վկայ, զոր և ածեալ կացոյց զարսն առաջի դատաւորին, միոյն անուն [1] ասէին պաղալ Ալլահվերտի և միւսոյն հալվաչի Մէիդ, որոց եկեալ առաջի դատաւորին վկայեցին թէ՝ մեք լուաք ի դմանէ, որ քֆրեաց Մահմետին։ Ասաց դատաւորն Նիկողայոսին՝ որովհետև այդքան մահմետականք ժողովեալ են ի վերայ քո և այդու կերպիւ դատապարտեն զքեզ, գիտեմ զի ոչ թողուն զքեզ կենդանի՝ այլ սպանանեն, վասն որոյ լուր բանից իմոց և լեր մուսուլման՝ զի զերծցիս ի մահուանէ, և Նիկողայոս ոչ կալաւ յանձին լինել հաւատոյն մահմետի։ Բազում անգամ ասաց դատաւորն, տամ քեզ բազում գանձս և ստացուածս պատուականս, և կին գեղեցիկ, եթէ գաս ի հաւատս Մահմետի, և Նիկողայոս ասաց, ես զլոյս

---

1 Ուղ. չէ+. միոյն անունն . . . հալվաչի Մէյիդ.

հաւատս իմ ոչ թողում, և զուղիղ օրէնս Քրիստոսի Աստուծոյ իմոյ ոչ փոխանակեմ ընդ ձերդ օրինաց, և դուք թէ անպարտ սպանանէք զիս՝ դուք գիտէք։ Իսկ որք վրէժխնդիր մահմետականքն էին հարկէին զդատաւորն առնել սիճիլ մահուան ի վերայ Նիկողայոսի՝ զի սպանցեն զնա, և դատաւորն արար սիջիլ։

Իսկ մահմետականքն, որք իբրև զչար գազան ծարաւի են արեանց քրիստոնէից, առին զսիջիլն և զՆիկողայոսն տարան առաջի փաշային, որում անունն էր Մուստաֆայ փաշայ, և ծանուցին նմա զամենայն՝ յոլով ամբաստանութեամբ. և փաշայն ասաց առ Նիկողայոս. լո՛ւր բանից իմոց և դարձիր ի պայծառ հաւատս Մահմետի, որով պայծառացեալ է ամենայն աշխարհ, որպէս և տեսանես, և ես կարգեմ զքեզ ինձ հանապազորդ առաջակայ սպասաւոր, և իբրև զորդի ընդունիմ զքեզ, և տամ քեզ բազում գանձս և պատուական ստացուածս, և կին գեղեցիկ զդուստր իշխանաց՝ զորոյ և կամիս, և պետական իշխանութիւնս, և այլ բարութիւնս բազում։ Նա պատասխանի Նիկողայոս. ի բարութեանցդ այտի ոչինչ պիտոյ է ինձ ամենևին, այլ թէ առնես ինձ բարութիւնս, թող ինձ կեալ իմովս հաւատով, և թէ ի զուր դատապարտէք զիս և սպանանէք՝ դուք գիտէք։ Բազում անգամ ասաց փաշայն, տամ քեզ մեծութիւն, և փառս՝ եթէ դառնաս ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի, և Նիկողայոս ոչ դարձաւ։ Իսկ մահմետականքն բազում բանիւ թախանձէին զփաշայն տալ հրաման և վճիռ սպանանել զՆիկողայոս, իբրև գիտաց փաշայն թէ ոչ դառնայ Նիկողայոս, ապա [1] ետ վճիռ և հրաման սպանանել զնա։

Յայնժամ ժողովեցան՝ գունդք դահճացն ի վերայ

---

1 Ոռ. չէ. ապա։

նորա, և մերկացուցին զնա ի հանդերձից՝ և գլուխ ի բաց և բոկոտն, և ձեռս ի յետս կապեալ, և առեալ տարան զնա ի շրջեցուցանել յամենայն տեղիս քաղաքին, և մունետիկն առաջի նորա հրատարակելով գնայր. և բերին զնա ի մէջ մեծ մէյդանին, ի տեղին ուր զմահապարտաց զոտս և զձեռս խորտակեն ի վերայ վիմին՝ որ կայ հաստատեալ անդ, և անդ ևս բազում անգամ ասացին դահիճքն, դարձիր ի քոյդ հաւատոց ի հաւատս Մահմետի՝ և մի ևս յամառիր, զի ահաւասիկ այժմ խորտակեմք զձեռս քո և զոտսդ. սոյնպէս և այլ մահմետականքն ասէին, և Նիկողայոս ոչ ումեք հաւանեցաւ բնաւ: Եւ յայնմ պահու յերիցանց քաղաքին Մարտիրոս անուամբ ոմն քահանայ եկեալ հաղորդ ի մէջ արմաւոյ և բերեալ ետ ցՆիկողայոս, զոր առեալ ճաշակեաց, և ի տեսանելն զայն դահճացն, աղմկեցան, և սկսան հարցումն առնել. թէ զինչ էր այն, զոր երեցն ետ ցՆիկողայոս, և երեցն փութով լոյս տուեալ փախեաւ ի տեղւոջէն՝ և փրկեցաւ: Իսկ դահճացն ի բազում անգամ ասելն ցՆիկողայոս թէ ե՛կ, դարձիր յօրէնս Մահմետի, և փրկիր ի մահուանէ. իբրև ոչ դարձաւ, ապա ասացին դահիճքն ցՆիկողայոս, որովհետև ոչ լսես մեզ՝ և ոչ հաւանիս մտանել յօրէնս Մահմետի, արդ՛ տարածեա՛ զձեռս քո ի վերայ վիմիդ զի խորտակեսցուք: Եւ երանելին Նիկողայոս ինքն իւրովի տարածեաց զերկոսին ձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբազուկս երկոցունց ձեռացն, և ապա խնդրեցին զոտսն, և նա տարածեաց, և դահիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտիցն: Եկաց Նիկողայոս այնպէս խորտակեալ անդամօք յայնմ աւուր անդէն ի մէջ Թէատրոնին անկեալ, և յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ դատաւորն, և խնդրեցին տալ հրաման բառնալոյ զնա ան-

տի և տանել ի տունն իւրեանց, և նոքա ետուն հրաման, և եկեալ քրիստոնէից բարձեալ զնա տարան ի տունն իւրեանց, և մնաց կենդանի Նիկողայոս յետ խորտակելոյ ղձեռսն և զոտսն աւուրս երիս, և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր իբրև զխունկ անոյշ ի ձեռս Աստուծոյ։

Եւ ի գիշերին այնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն, որ էջ ի վերայ նորա, զոր քրիստոնեայքն ամենեքեան, որք անդր էին ժողովեալք, ակներև տեսին և ուրախացան մեծաւ խնդութեամբ և ցնծութեամբ փառաւորէին զԱստուած. այլ և ինքն սուրբն Նիկողայոս մինչ կենդանին էր պատմեաց թէ՝ ի ժամուն յորում խորտակեցին զձեռս իմ և զոտս, տեսի զի լոյս պայծառ շողացեալ յերկնից իջեալ եմուտ ի բերանս իմ։ Եւ յետ մահուան սրբոյն, ի վաղիւ անդր ժողովեցան բազմութիւնք քրիստոնէից բարձեալ զնահատակն Քրիստոսի սաղմոսիւք և օրհնութեամբ և տարան ի դիրս գերեզմանացն Հայոց, և անդ ի կարգս սուրբ նահատակացն հանգուցին ի գերեզմանի. և այժմ ցաւագարք և հիւանդք գնան ի սուրբ գերեզման նորա, և գտանեն զառողջութիւն իւրաքանչիւրոց ցաւոց՝ աղօթիւք սուրբ նահատակին Նիկողայոսի և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որում փառք յաւիտեանս ամէն։ Եւ եղև կատարումն նահատակութեան սրբոյն Նիկողայոսի ի Թուականութեան Հայոց ՌՂԱ. յԱպրել ամսոյ տասն հինգ, ի Թագաւորութեան ազգին Օսմանցւոց սուլթան Իբրահիմին, որ նստէր ի մեծ քաղաքն Ստամբօլ, և ի կաթուղիկոսութեան բարձրագահ աթոռոյն սրբոյ Էջմիածնի տէր Փիլիպպոսի պատուական հայրապետի։

Այլ և մինչ կենդանի էր սուրբն Նիկողայոս, պատահեցաւ անդ ի Յամիթ քաղաքի վարդապետ ոմն, զո-

րոյ զանուննն ոչ գտաք· որոյ եկեալ առ սուրբն Նիկողայոս, և կալեալ զջախջախեալ աջն նորա և համբուրեաց, և խնդրեաց ի նմանէ թէ սուրբ աջ քո զայս շնորհեա ինձ, զի ես հանդերձեալ եմ եկեղեցի շինել, և դնեմ ի հիմն եկեղեցւոյն այնմիկ զսուրբ աջս, և սուրբն Նիկողայոս յօժարութեամբ ետ· քանզի ասաց արդէն իսկ կտրեա և առ ի քեզ, և մինչ կենդանի էր ոչ կտրեցին՝ այլ յետ մահուանն կտրեցին, և վարդապետն յինքն էառ զսուրբ աջն Նիկողայոսի մեծաւ փափագանօք և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն, զոր շինեաց։ Այլ և զվէմն զայն ևս յորոյ վերայ խորտակեցին զձեռս և զոտս սրբոյն Նիկողայոսի, զայն ևս գողացաւ վարդապետն և տարեալ եդ ի հիմն եկեղեցւոյն՝ զոր շինեաց, որով փառաւորի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Գլ. ԽԵ.

Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն[1] Խաչատրոյ:

Այս երանելի նահատակս Խաչատուր[2] էր ի քաղաքէն Տիգրանակերտու՝ որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նմին քաղաքի, և էր ինքն յազգէն Հայոց, և կային սմա ծնողք և եղբարք և այլ ընտանիք բազումք. և էր ինքն իբրև ամաց քսանից՝ աւելի կամ պակաս, գեղեցկատես և վայելչահասակ. այլ և էր յոյժ աղօթասէր և ունկնդիր գրոց ընթերցման, զոր ինչ և կարդան քահանայքն յեկեղեցիս աւետարան և ճաշու գիրք, և մանաւանդ թէ յայսմաւուրք և պատմութիւնք վկայից, և յամենայն աւուր անպակաս էր նա յեկեղեցւոյն և յաղօթից իւրաքանչիւր կարգեալ ժամու. և մերձ առենին՝ ուր ընթեռնուն զամենայն գիրս, կալեալ էր իւր ի տեղի աղօթից, և յորժամ ընթեռնուին զպատմութիւն նահատակութեան վկայից, իբրև զյորդառատ աղբիւր

1 Ոսկ. չէ. սրբոյն. 2 Նոյն. չէ. Խաչատուր.

բղխէին արտասուքն յաչացն, և ցանկայր ինքն մեծա-
յօժարութեամբ նահատակակից լինել սրբոց վկայիցն.
և հանապազ ի տան իւրեանց իւրոց ընտանեաց, և ար-
տաքոյ ընդ իւրում յարակից ընկերացն ասէր թէ, ես
ոչ կամիմ իմով բնական մահուամբ մեռանիլ, այլ կա-
միմ նահատակիլ, և ի վերայ իմոյս ճշմարիտ հաւատոյս
մեռանիլ։ Եւ էր սա աշակերտեալ առն ումեմն քրիս-
տոնէի որ ունէր արուեստ չինկարութեան, որ շինէ կապ-
ղայս և այլ այսպիսի մանր իրք, և հանապազ ընդ իւ-
րում վարպետին նստեալ ի խանութն ի մէջ շուկային
գործէին զարուեստն իւրեանց, և էր խանութ սոցա
մերձ մեծ մզկթին՝ զոր Ջումայ մաչիթ ասեն։

Եւ յաւուր միում ի մէջ խանութին ասաց Խաչա-
տուրն ընդ իւրում վարպետին թէ, աւասիկ իջեալ ի
խանութէս գնամ, բայց կարծեմ թէ այլ ոչ ևս գամ ի
խանութս. և ոմանք ասացին թէ ասաց Խաչատուրն,
յայսմ գիշերի տեսիլ երազոյ երևեցաւ ինձ, և հրամայե-
ցաւ ինձ նահատակութիւն, և երթամ ես ի նահատա-
կիլ, վասն այն ասեմ թէ ոչ ևս դառնամ ի խանութս.
ապա յետ այսց բանից իջեալ ի խանութէն գնաց ի մեծ
մաչիթի բակն, և կացեալ առ ընթեր ջրոյն լուանայր
զձեռն ջրովն՝ որ հեղանի ի բարձր տեղւոջէն. և յայնմ
ժամու եկեալ այր ոմն մահմետական, որ էր ինքն ամիր
և կանաչագլուխ հայհոյեաց զԽաչատուրն, և ասաց. ի
բաց գնա ի տեղւոջէդ, զի և ես լուացայց, և Խաչա-
տուրն հայհոյեաց զնա և զկանաչն նորա. և ի խօսիլ սո-
ցա երկոցունց ընդ միմեանս, ժողովեցան բազում մահ-
մետականք ի վերայ նոցա, և յափշտակեցին զԽաչատուրն
և տարան առ դատաւորն, և սկսան ոմանք դատախազ
լինել՝ և ոմանք վկայք, և ոմանք վրէժխնդիրք, և դա-
տապարտէին ի մահ զԽաչատուր։ Եւ ի մէջ դատարա-
նին խօսեցաւ դատաւորն ընդ Խաչատրոյն և ասաց, որ-

դեռակ դու մանուկ ես՝ և նորոգ երիտասարդ, խնայեա ի մանկութիւն քո, և փրկեա զանձն քո. քանզի այսքան մահմետականք՝ որ ժողովեալ են ի վերայ քո, ոչ թողուն զքեզ մնալ կենդանի, այլ հաւանեա բանից իմոց, դարձիր ի ձեր [1] մոլար օրինացն, և մուտ ի հաւատս մահմետի, որ բարի է և երանելի, որպէս և տեսանես, զամենայն մահմետականս, ոյք բարգաւաճեալք են բարեկեցիկ կենդանութեամբ՝ և հզօրացեալք են թագաւորութեամբ, և ժառանգողք են աստի կենաց և հանդերձելոյն: Իսկ երանելի Խաչատուր ետ պատասխանի և ասաց՝ մոլար օրէն ձեր օրէնքն է, որպէս և է մարգարէն և պատգամաբերն ձեր սուտ մարգարէ, իսկ մեր օրէնս ճշմարիտ է և Քրիստոսադիր, որպէս և ինքն Քրիստոս ճշմարիտ է՝ որում դուք ևս վկայէք, և ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, և զլոյս հաւատս իմ ոչ թողում, և սուտ օրինաց ձերոց ոչ հաւանիմ, եթէ թողուք զիս և եթէ սպանանէք, և թէ իբրև զՆասիմի քերթէք զիս՝ ես ի հաւատոյս իմոյ ոչ դառնամ. և դատաւորն բազում բանս խօսեցաւ ընդ նմա, և բազում բարութիւնս խոստացաւ տալ նմա՝ գանձս և ստացուածս, և կին, և պետական իշխանութիւնս, և Խաչատուրն բնաւ ոչ հաւանեցաւ: Եւ ոմանք ի մահմետականացն գնացեալ առ մուֆթին ծանուցին թէ այր, որ զպատգամաբերն զՄահմետ և զնորին հաւատն հայհոյէ՝ զի՞նչ պարտ է նմա առնել, և մուֆթին ետ ֆաթվայ, որովհետև զպատգամաբերն զՄահմետ, և զնորին հաւատն հայհոյեաց, և ինքն ասաց, թէ իբրև զՆասիմի քերթէք զիս, յիմոյս հաւատոյս ոչ դառնամ, պարտ է զնա քերթել: Եւ զայս ֆաթվայս առեալ մահմետականացն բերին առ դատին, և սիջիլ արարին. և

1 Ձեռ. չէ. ձեր.

ապա առեալ զԽաչատուրն տարան առ փաշայն և ծանուցին նմա զամենայն։ Իսկ փաշայն իբրև ետես զվայելուչ մանկութիւն Խաչատրոյ, բազում խանդաղատական բանիւք խօսեցաւ ընդ նմա և ասաց. տամ քեզ բազում գանձս, և զպատուական ստացուածս՝ և պետական իշխանութիւնս. և կին գեղեցիկ դուստր իշխանաց, որում և դու հաւանիցիս. եթէ դառնաս ի քոյդ հաւատոյ և ընդունիս զհաւատս մահմետի, լինիս այսքան բարեաց տէր՝ նաև զանձն քո փրկես ի մահուանէ։ Իսկ երանելին Խաչատուր ետ պատասխանի. զայդ ամենայն բարիքդ, զոր խոստացար տալ ինձ՝ սուտ է և ընդունայն. քանզի անցաւոր է. նա և հաւատն ձեր սուտ է՝ զի սուտ մարգարէի է կարգեալ, իսկ իմ հաւատ ճշմարիտ է՝ և սուրբ, զի ի Քրիստոսէ է կարգեալ, որոյ ճշմարտութեան դուք իսկ վկայ էք. ոչ թէ հարևանցի սպանանէք զիս, այլ թէ կենդանւոյն քերթէք զիս, ես զՔրիստոս Աստուածն իմ և զնորին ճշմարիտ հաւատն ոչ ուրանամ. ասաց փաշայն դուցէ բանդագուշեալ և ի խելաց թափեալ իցէ. տարեալ պահիցէք, զի թերևս ի խելս և ի զգօնութիւնս դարձցէ, և տարեալ պահեցին ժամս երկու. և մահմետականքն ամենեքեան առ նա եկեալ աւաղէին, և խնայէին, և ասէին, մի կորուսաներ զվայելուչ մանկութիւն քո. և նա ոչ հաւանեցաւ բանից նոցա։ Դարձեալ կոչեաց փաշայն զԽաչատուրն առաջի իւր, և քան զառաջին բարութիւնս աւելի խոստացաւ տալ նմա, միայն թէ ուրանայ զքրիստոսական հաւատն, և դաւանի զՄահմետական հաւատն, և Խաչատուր ոչ ուրացաւ. ապա այնուհետև փաշայն ետ հրաման և վճիռ սպանանել զնա։

Յայնժամ եկեալ դահճացն իբրև զգազան արիւնախանձ պատեցան շուրջ զնովաւ, և մերկացուցին զնա ի զգեստուցն և կապեցին ձեռս ի յետս. և առեալ տա-

նէին ի տեղի սպանման, և մունետիկն՝ որ է ջառչի՝ հրատարակելով գնայր առաջի նորա։ Եւ ժողովեցան ի վերայ նորա բազմութիւնք մահմետականաց իբրև զաւազ ծովու անթուելի, որ ոչ բաւէր վայրն տանիլ զնոսա. և իբրև զգազան կատաղի կրճտէին զատամունս իւրեանց ի վերայ նորա. հարկանէին, կոփահարէին, և ընդ քարշս տանէին, և այնպիսի հանին զնա ի միջին բերդէն, և իբրև եկին ի դրանէ բերդին, անդէն առաջի դրան միջին բերդին, որում Նոր դուռն ասեն, ասաց սուրբն Խաչատուր դահճացն թէ, քերթեցէք զիս վասն հաւատոյ իմոյ և սիրոյ՝ զոր ունիմ առ Քրիստոս Աստուածն իմ։ Յայնժամ անօրէն և մարդադէմ գազան դահիճքն պատառեցին զմորթ մարմնոյ նորա յաջոյ ուսէն մինչև ցձախոյ ուսն. և քերթեցին զկաշին թիկանցն և իջուցին մինչև ցքամակն, և շրջեցին զկաշին ի վերայ միջացն, այլ և յառաջուստ կողմանէ քերթեցին զմորթ լանջացն մինչ ի ներքոյ ստեանցն, և շրջեցին զմորթն ի վերայ փորին, և ապա տարեալ շրջեցուցանէին ի մէջ քաղաքին ի շուկայս և ի պողոտայս, ի փողոցս և ի հրապարակս, և ի տեսիլ զարմանալի գործոյն ամենայն ոք ճեպով ընթանայր, այր և կին՝ ծեր և տղայ, միանգամայն և [1] անարգել աղջկունք, և ամենայն տեսողաց մարմինքն սոսկացեալ սարսռէին։ Իսկ տեսիլ կերպարանաց սրբոյն Խաչատրոյ զուարթ էր և պայծառ իբրև զհրեշտակի Աստուծոյ, և ոչինչ կասիւր յայնքան տանջանացն։ Այլ և ինքն Խաչատուր յառաջագոյն ուսեալ էր բազում Նասիմի խաղեր, զոր Նասիմին ինքն ասացեալ է ի վերայ իւրում նահատակութեանն և ի վերայ տնօրէնութեան Քրիստոսի աստուածաբանութիւն, զայն խաղերն արդէն այժմ այս Խաչատուրս ի վերայ իւրում

---

[1] Ձեռ. չիք. և.

քերթեղոյն բարձրաձայն եղանակաւ երգէր և շրջէր ի մէջ քաղաքին յամենայն տեղիս, ուր և տարան զնա դահիճքն։ Իբրև աւարտեցաւ շրջեցուցանելն, ապա ածին զնա դահիճքն ի մէջ մեծ մէյդանին, ի տեղին՝ յորում զմահապարտաց զձեռս և զոտսն խորտակեն. և մահմետականքն պահէ ի պահ առաւել ևս ժողովէին և բազմանային. այլ և քրիստոնեայք ևս բազումք եկին, և ժողովեցան ի տեղին՝ և տեսանէին զայն։ Խօսեցան դահիճքն ընդ Խաչատրոյն թէ մի՛ ևս յամառիր և դիմանար հրամանաց իշխանաց՝ դարձիր յօրէնս մեր, և փրկեա զանձն քո ի մահուանէ, զի տակաւին գոյ քեզ հնար կելոյ և դեղօք բժշկելոյ. սոյնպէս և այլ մահմետականքն, և իշխանք ասէին, թէ զոնեա բան միայն ասա ի դաւանութենէ մերոյս հաւատոյ, և այն բաւական է մեզ առնել զպատճառ՝ և այնու ապրեցուցանել զքեզ. այլ և ոմանք ի մոլլաներացն ասէին ցԽաչատուր, Թէպէտ և մեռանիս, և կորուսանես զմանկութիւն քո և զկեանս յայսմ կենացս, այլ զի մի և զհոգի քո մեռուցես, և յայնմ կենաց ևս զրկեսցիս. արդ՝ ի զրաւ քոյոյ կենացդ տուր դաւանութիւն հաւատոյն Մահմետի. զի կեցցէ հոգի քո, և ժառանգեսցէ զանանց կեանսն։ Եւ սուրբն Խաչատուր բնաւ ոչ ումեք հաւանեցաւ, այլ իւրաքանչիւրոց ըստ պատշաճին տայր պատասխանի, և անշարժ կայր ի վերայ հաւատոյս քրիստոնէութեան, և համարձակ և անխափան զՔրիստոս Աստուած դաւանէր։

Եւ յառաջ ժամանակաւ հաստատեալ էին ի մէջ մէյդանին վէմ մի՝ յորոյ վերայ խորտակէին զձեռս և զոտս մահապարտաց, ասացին դահիճքն ցԽաչատուր, որովհետև յամառիս՝ և ոչ լսես մեզ, արդ՝ տարածեա զձեռսդ քո ի վերայ վիմիդ՛ զի խորտակեսցուք. և նա յօժար կամօք իւրովք տարածեաց զձեռսն ի վերայ վիմին, և դահիճքն հարին կացնաւ և խորտակեցին զբա-

զուկսն երկոցունց ձեռացն. ապա խնդրեցին զոտսն, և նա տարածեաց զերկոսին ոտսն, և դաՀիճքն խորտակեցին զոլոքս երկոցունց ոտանցն. և սուրբ արիւն նորա՝ որ յորդառատ Հեղանէր յանձնէն, թաթաւեալ էր զամենայն մարմինն, և թացեալ էր զվայրն ամենայն, այնուՀետև ոչ ես կարաց նստիլ, այլ անկեալ պարզեցաւ ընդ երեսս գետնոյն: Իսկ քրիստոնեայք, որք շրջապատեալ Հայէին աղիողորմ ողբօք և արեան արտասուօք լային, սոյնպէս և մաՀմետականք բազում լային արտասուօք՝ և Հայհոյէին զօրէնս և զառաջնորդս և զիշխանս և զդատաւորս իւր, և ամենեքեան սոսկացեալք զարմացեալք ապուշ մնային. և Հարցանէին ցմիմեանս թէ արդեօք լցէ՞ ուժք ի ձէնջ տեսեալ այսպիսի գործ. քանզի յոյժ սարսռելի էր տեսիլ գործոյն: Եւ այնուՀետև սուրբն Խաչատուր յոյժ նուաղեցաւ ի սաստիկ և ի կարծրագոյն տանջանացն. և տապէր, և պապակէր ի ծարաւոյ. վասն որոյ աղաչեաց զարսն, որ շուրջն կային, և խնդրեաց ի նոցանէ ջուր, և գթացեալ առ նա ոմանց գնացեալ բերին նմա ջուր խեցեաւ ամանոյ ինչ՝ և այնու խեցեաւն էարբ զջուրն. այլ և աղաչեաց սուրբն Խաչատուր զմերձ կացեալ քրիստոնեայսն գնալ առ քաՀանայս և բերել ինքեան Հաղորդ, և քաՀանայքն վասն երկիւղի մաՀմետականաց ինքեանք ոչ եկին, այլ զՀաղորդն եդին ի մէջ Հացի, և ետուն ցքրիստոնեայսն՝ և նոքա բերեալ ետուն ցԽաչատուր, և նա առեալ ճաշակեաց զՀացն Հաղորդաւն՝ և գոՀացաւ զԱստուծոյ, և այնպիսի խողխողեալ անդամօք անկեալ կայր ի մէջ թէատրոնին մինչ ի նսեմանալ երեկոյին: Իսկ Բաղիշեցի Խաչատուր վարդապետն, և Բալուեցի Սամուէլ աբեղայն ի նսեմանալ երեկոյին եկին առ սուրբն Խաչատուր, և ի վերայ սրբոյ մարմնոյն անկեալ կսկծագին այրմամբ լային և Համբուրէին զսուրբ զլուխն նորա, և

արդահատեալ մխիթարէին զնա յուսադրական բանիւք՝ և հաստատէին ի հաւատս։ Ասաց սուրբն Խաչատուր ցԽաչատուր վարդապետն. գիտես իսկ, զի ոչ ունիմ ձեռն որով կալեալ զսուրբ աջն քո համբուրեմ. վասն որոյ խնդրեմ ի քէն մատո զսուրբ աջդ քո ի շրթունս իմ, զի համբուրեցից, և վարդապետն մատոյց զաջն իւր ի սուրբ շրթունս Խաչատրոյ. որ համբուրեաց փափագանօք, այլ և ասաց սուրբն Խաչատուր առ վարդապետն. խնդրեմ ի քէն աղօթել վասն իմ. պատասխանեաց վարդապետն, որդեակ, մեք թէպէտ ունիմք զկարգ և զաստիճան քահանայութեան, այլ մեղաւոր եմք և պարտական առաջի Աստուծոյ. իսկ դու շնորհօքն Քրիստոսի և քոյով նահատակութեամբն գտեր ողորմութիւն ի Տեառնէ և բացեր քեզ զճանապարհ արքայութեան Աստուծոյ, և ունիս համարձակութիւն առաջի Քրիստոսի, վասն որոյ դու բարեխօսեա վասն մեր. և վասն երկիւղի մահմետականացն ոչ կարացին յոլով ժամս կալ առ նա, այլ առին զաղօթս սրբոյն և փութանակի դարձան ի տեղիս իւրեանց։

Եւ մնաց սուրբն Խաչատուր այնպէս խողխողեալ մարմնով կենդանի, մինչ որ էանց ի մէջ գիշերոյն, և ապա աւանդեաց զսուրբ հոգին իւր առ Աստուած որպէս խունկ անոյշ։ Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ նորա, և եկաց յօգուտ ժամս. զոր և տեսին զօրականքն, որ մերձն կային և պահէին զնա. այլ և խանութպանք յոլովք, որք մերձ էին և արթունք. այլ և այքն՝ որք ի մէջ մէյդանին ի վերայ տախտակացն ննջեալք էին, զի ամառնային էր ժամանակն, ամենեքեան տեսանէին զլոյսն, և փառաւորէին զԱստուած, և երանի տային սրբոյն Խաչատրոյ, և վկայէին վասն հաւատոյս քրիստոնէութեան ճշմարիտ գոլ, որոյ վասն

այսպիսի նշան յերկնից երևեցաւ. և ի ծագել լուսոյ առաւօտուն ընդ ամենայն տեղիս հռչակեցաւ համբաւս այս և որք լսէին, փառաւորէին զԱստուած, իսկ ի լուսանալ աւուրն քրիստոնեայքն մատեան առ ղաղին՝ և առ փաշայն, և խնդրեցին հրաման տալ, թաղել զսուրբն. և նոքա ետուն հրաման, այլև [1] տասն հինգ ղուռուշ էառ սուպաշին, և այլ քահանայ մի և ութն աշխարհական եկին և բարձին զմարմին սրբոյ նահատակին ի վերայ դագաղի. և տարան ի գերեզմանատունս Հայոց. ուր ժողովեցան անթիւ բազմութիւնք քրիստոնէից, ոչ միայն Հայք՝ այլ և Հոռոմք, և Ասորիք և Նաղուրիք, այլ և յոլովք մահմետականք ոմանք ի զբօսնուլ, և ոմանք ի զննել. և քրիստոնեայք ամենեքեան ջերմեռանդ փափագանօք համբուրէին զսուրբն, որ և պահեցին զնա մինչև ցվերջին աւուրն վասն համբուրելոյ ժողովրդոցն, զի գրեթէ ոչ էր մնացեալ ժողովուրդ ի քաղաքին, որ ոչ էր եկեալ ի թաղումն սրբոյն, որք ողբային զինքեանս և երանէին զսուրբն, և մխիթարէին զծնողս նորա, և մեծաւ փառօք թաղեցին զսուրբն ի կարգս նահատակացն: Իսկ ի գիշերին յայնմիկ միւսանգամ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնահատակն իւր, զի միւսանգամ լոյս պայծառ էջ յերկնից ի վերայ սրբոյ գերեզմանին նորա, զոր տեսին պահնորդ քրիստոնեայքն, որք վասն խորամանկելոյ մահմետականացն զգուշացան գերեզմանին՝ զի մի նենգեսցեն. այլ և բազում այլք քրիստոնէից որք վասն սիրոյ սրբոյն մնացին զգիշերն զայն անդէն ի գերեզմանատունսն, տեսին զլոյսն, և յառաւօտուն եկեալ պատմէին ամենեցուն: Եւ արդէն իսկ բժշկութիւնք բազում կատարին ի սրբոյ գերեզմանէ նորա ի վերայ ցաւագարաց՝ և հիւանդաց, որք հաւատով

---

[1] Ուղ. բայց.

զլխեն առ նա. այլ և խեցին այն, որով ջուր էարբ սուրբն Խաչատուր՝ բժշկութիւն կատարէ, զի հիւանդաց որոց վերայ հեղուն ջուր խեցեաւն այնուիկ, գտանեն առողջութիւն աղօթիւք սրբոյ Խաչատրոյն, և շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. որում փառք յաւիտեանս ամէն:

Այլ և շնորհքն աստուածային վասն պատուոյ և սիրոյ նահատակին իւրոյ սրբոյն Խաչատրոյ՝ արար այսպիսի խնամս ի վերայ ժողովրդեան իւրոյ քրիստոնէից, զի յաւուր Թաղման սրբոյն՝ մահմետականք՝ որք եկեալ էին անդ ի գերեզմանատունսն, ոմանք ի նոցանէ զչարացան և նախանձաբեկք եղեն ընդ փառաւոր Թաղումն սրբոյն Խաչատրոյ, և գնացին առ փաշայն և չարախօսք եղեն զքրիստոնէիցս, թէ ժողովեցան քրիստոնեայքն ամենեքեան ի վերայ սպանելոյն այնորիկ, և իբրև զվկայ և զնահատակ բազմախումբ հանդիսիւ և մեծաւ փառօք Թաղեցին զնա, և այնու ցուցանեն զիւրեանց հաւատն ճշմարիտ զոլ, և զմեր հաւատս սուտ: Վասն որոյ հրամայեաց փաշայն, թէ զգոյշ կացցեն զօրականք յանցս ճանապարհաց, զի ի վաղուեան աւուրն՝ յորժամ գնասցեն քրիստոնեայք ի գերեզման սպանելոյն վասն [1] այգահող կատարելոյ, յայնժամ զամենեսեան կալեալ և բերեալ արասցեն ի կալանս, զի ես դատապարտեալ զնոսա տուգանեցից. և զայս չարախօսութիւնս և զխորամանկութեան խորհուրդս ոչ գիտէին բնաւ քրիստոնեայքն, այլ Աստուած փրկեաց զժողովուրդն իւր սուղ ինչ պատճառաւ: Զի յայնմ աւուր այր մի փաշալու, և այր մի քաղաքացի սպահի պատուաւոր կռուեցան ընդ իրեարս, և որք քաղաքացի սպահիք և ենկիչարիք էին զինուորական դասք, քամահանս ինքեանց համա-

1 Ուղ. չէ. վասն:

րեալ զայն՝ վրէժխնդիրք եղեն, և կանգնեցան ի կռիւ ընդ փաշային, և արգելեալ փակեցին զփաշայն զօրօքն իւրովք ի մէջ միջին բերդին շաբաթ մի. և փաշայն և քաղաքացիքն այնու խռովութեամբն պատաղեալք եղեն, և քրիստոնեայքն ազատեցան բարեխօսութեամբ սրբոյն Խաչատրոյ և ողորմութեամբն Աստուծոյ բարերարին, Եւ եղև նահատակութիւն սրբոյն Խաչատրոյ ի թուականութեանս Հայոց ՌՃԱ. յՕգոստոս ամսոյ Ի. ի կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի՝ որ ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստէր ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։ Եւ արդ խնդրեսցուք [1] մեք հաւատացեալքս, զի զամենայն քրիստոնեայս ազատեսցէ ի մարդադէմ գազանաց և յանիրաւաց, բարեխօսութեամբ սրբոց իւրոց Տէրն մեր Յիսուս Քրիստոս. որում փառք յաւիտեանս. ամէն։

ԳԼ. ԽՋ.

Պատմութիւն նահատակութեան Միրոնի անուամբ քրիստոնէին:

Այր ոմն՝ որում անունն էր Միրոն, և էր սա յաշխարհէն Վասպուրականի ի գաւառէն Գնունեաց՝ որ այժմ ասի Ամուկ, ի գեղջէն՝ որ կոչի Ալիւր. և էր ինքն ազգաւ Հայ և հաւատով քրիստոնեայ, և քրիստոնէից զաւակ, ունէր մայր և եղբայր,

---

1 Ռոկ. չէ. Եւ արդ խնդրեսցուք . . . փառք յաւիտեանս ամէն.

որք մուծին զնա ի կարգ աշխարհի, և ածին նմա կին. և վասն մարմնաւոր կարեաց իւրոց այրս այս Սիրուն յարեցաւ առ այլազգի մահմետական ոմն, առնոյր ի նմանէ վարձս, և ծառայէր նմա պաշտականութեամբ վասն վարձուն: Եւ եղև յաւուրս գարնայնոյ, զի տէրն Սիրունին առաքեաց զնա ի քաղաքն Ղլաթ, զի բերցէ միրգ վասն ընտանեաց իւրոց առ ի ուտել. և նա գնացեալ էառ կեռաս եբարձ ձիոյն, և եբեր ի Վան քաղաք, և մինչդեռ ի մէջ քաղաքին Վանայ քարշէր զձին բեռամբն ի մէջ պողոտային, եկին ժողովեցան ի վերայ նորա մանկունք մահմետականաց, և իւրաքանչիւր ոք ընթացեալ յափշտակէր կեռաս ի բեռանէ անտի, իսկ Սիրուն ոչ թողոյր յափշտակել, այլ հալածէր զմանկունսն. և ոմն ի մահմետականաց մանկանցն առեալ բրանաքար և եհար զՍիրուն քարիւն. իսկ Սիրուն առեալ զքարն ձգեաց առ ձգողն, և դիպեցաւ քարն ի գլուխ տղային և վիրաւորեաց, և այնու պատճառաւ անկաւ մանուկն ի մահիճս և հիւանդացաւ յամիսս երկու, և յետոյ սատակեցաւ տղայն ի պատճառէ վիրացն: Իսկ տէրն Սիրունին փախոյց զՍիրունն, զի թերևս փրկեսցի ի ձեռաց մահմետականաց, իսկ Սիրունն գնաց ի գիւղն իւր յԱմիւր ի տուն իւր:

Իսկ Ամիւր գեղջ շահնէքն՝ որք էին մահմետականք, ըմբռնեցին զՍիրուն և արարին ի կալանս. իսկ քրիստոնեայք գեղջն յոլով կաշառս ետուն շահնոցն, զի թողցեն զՍիրուն, և նոքա ոչ թողին, այլ զգացուցին ընտանեաց սատակեալ մանկանն, և նոքա լեալ վրէժխնդիր արեան մեռելոյն՝ գնացին առ փաշայն, առին զօրականս և առաքեցին զկնի Սիրունին, որոց գնացեալ ածին զՍիրունն ի քաղաքն Վան առ փաշայն: Իսկ փաշայն առաքեաց առ դատաւորն և առ մուֆթին, և եհարց թէ զի՞նչ հրամայեն օրէնքն մահմետի վասն առնս

այսօրիկ, մահապարտ գոլ և մեռանիլ, թէ անպարտ գոլ և ազատիլ. և նոքա ոչ համարեցան զՄիրոնն մահապարտ, այլ անպարտ և ազատ, վասն որոյ և փաշայն ոչ սպան զՄիրոնն։

Բայց սուխտէք քաղաքին, որք ծարաւիք են արեան քրիստոնէից, ոչ անսացին փաշային և դադուն և մուֆթոյն, այլ գումարեալք ի միասին երկու և երեք հարիւր սուխտայք և գլուխ տուեալ ժողովեցան ի վերայ անպարտ երիտասարդ Միրոնին, ամենեքեան մերկացուցեալ զսուրս իւրեանց ի վերայ Միրոնին՝ թուր և խանջար, մեծաբան խրոխտանօք ահացուցանէին զնա թէ դարձիր ի հաւատս Մահմետի և տաճկացիր, ապա թէ ոչ սրախողխող և քարկոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց։ Այլ և բերին բարակ պարան, և նովաւ ամրագոյն պատեցին զերկոսին բազուկսն ուսոցն մինչև ցթաթք ձեռացն՝ սաստիկ պնդութեամբ, և ի սաստիկ պնդութենէն պայթեալ հերձան բերան եղնգացն, յորոց հոսեալ արիւնն հեղանէր ի ձեռացն. այլ և զբազմագոյն տեսակս տանջանաց ածին ի վերայ նորա, հարկանել և կառափնատել և ընդ քարշս տանել, և անսուաղ պահել ի կալանս, և ամենեքեան իբր զկատաղի գազան զատամունս ի վերայ կրճտել, և իւրաքանչիւր ոք զսուր իւր ի վերայ նորա շողացուցանել, և ասել թէ տաճկացիր, ոչ միայն փրկիս ի մահուանէ, այլ և բազում ալդիւնս և բարութիւնս հասուցանեմք քեզ։ Իսկ Միրոնն ոչ հաւանէր ասելով. զլոյս հաւատոս իմ ոչ թողում, և խաւար օրինաց ձերոց ոչ հաւանիմ. այլ և մայրն և եղբարքն և այլք բարեկամք նորա հանապազ ասէին նմա լալով, թէ այժմ վասն փրկելոյ զանձն քո առ երեսս դաւանեա զնոցա դաւանութիւնն, և յետոյ գնասցես յայլ աշխարհս և յիշխանութիւնս քրիստոնէից, և անդ պաշտեսցես համարձակ զքրիստոնէական հաւատն քո։ Եւ

թէպէտ բազում աղաչեցին, սակայն նա ոչ էառ յանձն ասելով, թէ առօրեայ մահս՝ որ արդ հասեալ է ի վերայ իմ նաև անդէն ուր և լինիմ պատահելոց է ինձ, և վասն սուղ ինչ ամաց կենացս զիմ՞րդ կորուսից զհաւատս իմ և եղէց դատապարտեալ յԱստուծոյ։ Եւ ինքն Սիրուն ուրախ էր և բերկրեալ սրտիւ վասն իւրոյ խոստովանութեանն և նահատակութեան, և վկայ էր գոյն երեսացն, որ օր յաւուր առաւել պայծառանայր տեսիլ երեսացն և դիմացն։

Իսկ մարդադէմ գազանք սուլտայքն յաւուրս քսան կապեալ զձեռս ի յետս գլուխ ի բաց շրջեցուցանէին ի մէջ քաղաքին Վանայ, զի փաշայն և ղադին և մուֆթին ոչ տային հրաման սպանանելոյ. և վասն քինունոցին միակամ եղեալ սուլտայիցն ամենեցուն՝ յաւուրս երիս արգելեալ խափանեցին զկանչելն, զոր ի գլխոյ մինարային կանչեն ի ժամ աղօթիցն իւրեանց, ասելով թէ, խանգարեալ խափանեցաւ, և յերկիր սուզաւ հաւատս մահմետական, զի անհաւատ Հայ զմուսուլման սպանեալ է։ Եւ ըստ հանապազորդ սովորութեան, զոր կապեալ շրջեցուցանէին զՍիրուն, բերեալ հասուցին ի նալբանդնոցի շուկայն, և անդէն ի սուլտայիցն ոմն չարագոյն, որ ի ձեռին իւրում ունէր մերկ զխանջալն, ուժգին բախմամբ եհար ի թուլակուշտն Սիրունին, և նա անկաւ ի վերայ երեսացն. և այլ ոմն սուլտայ առեալ ծանր վէմ մի եզարկ ի վերայ գլխոյ Սիրունին և ջարդեաց զգլուխն, և ի բաց ցնդեցաւ ուղեղ գլխոյն, և այնու էառ Սիրուն զվախճան կենաց, և մեռաւ։ Ապա եդին պարան յոտսն, և քարշեցին տարան արտաքոյ քաղաքին ի տեղին ուր զմահապարտսն սպանանեն, և անդէն զմեռեալ մարմինն քարկոծեցին, այնքան՝ մինչ որ ծածկեցաւ ի քարանցն, և ապա թողեալ ի բաց գնացին արեանարբու գազան սուլտաքն։

Եւ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա լուսովն երկնայինն, որ էջ ի վերայ նորա, զոր ոչ միայն քրիստոնեայք, այլ և յոլով մահմեդականք տեսին՝ և առ ամենեսին պատմէին. մինչև եհաս համբաւն առ նորին սպանող սուխտայսն, յորոց ոմանք եկեալ հաւաստեաւ տեսին՝ և գնացեալ պատմեցին այլոցն. և նոքա առաքեցին ի սպասաւորաց իւրեանց արս, որոց եկեալ գտին զմարմինն շանց մեռելոց, և բերեալ արկին ի վերայ սրբոյ մարմնոյ Միրոնին, զի թերևս ամփոփեսցի լոյսն, այլ լոյսն ոչ ամփոփեցաւ մինչև ցլուսանալ տունջեան՝ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Իսկ ի վաղուեան աւուրն մատուցեալ քրիստոնէիցն առ փաշայն և առ ղադին խնդրեցին հրաման թաղելոյ, որոց հրամանաւ եկին քրիստոնեայքն և բարձեալ տարան ի դիրս հասարակաց քրիստոնէից, և անդ թաղեցին զՄիրոնն անուն խոստովանողն հաւատոյ քրիստոնէութեան։ Եւ եղև նահատակութիւն Միրոնին ի ՌԺԴ. թուականիս մերոյ, յամսեանն, որ օր հինգն էր ամսոյն, ի կաթուղիկոսութեան տեառն Յակոբայ, որ ի գերագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստէր ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։ Իսկ վէմն այն՝ որով ջարդեցին զգլուխ սրբոյ Միրոնին, այժմ լուանան և ի վերայ հիւանդաց հեղուն զջուրն, և հիւանդն առողջանայ շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս. ամէն։

Գլ. ԽԷ.

Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին:

Այր ոմն Մխիթար անուամբ քրիստոնեայ՝ որ էր ի քաղաքէն Վանայ և յազգէն Հայոց, քրիստոնեայ ծնողաց զաւակ, և էր այրս այս Մխիթար երևելի ի մէջ քաղաքին Վանայ առաջի փաշային, և ղադուն և ենկիչար Աղասուն և այլոց իշխանացն ամենեցուն, վասն զի կարի ձիավարէր և զինախաղաց և ուժնդակ, այլ և խելօք, կորովի, և խօսիւք քաղցրաբան, վասն որոյ ամենայն ենկիչարիքն և սպահիքն և յոլովք յիշխանացն նմա բարեկամք էին։

Եւ եղև զի ասացեալ Մխիթարս յաւուր միում ընդ իւրոց յարակից արանց նստեալ ի տան իւրում քնարիւք և երաժշտական նուագարանօք զինի ըմպեալ ուրախանային, և ի լուր երաժշտական եղանակին ժողովեալ յոլով տղայք մահմետականաց ի դուրս և յերդիս և ի վերայ որմոց զբօսնուին։ Իսկ հայրն Մխիթարայ ելեալ առ տղայսն ի բաց վարէր ի տեղւոջէն, և

ոմանք ի տղայոցն հակառակեալ հարին զնա, և նա գնացեալ ի տուն պատմեաց՝ թէ տղայքն հարին զիս. յայնժամ Մխիթար ըստ արիական քաջութեան իւրոյ շարժեալ ի ցասումն բարկութեան՝ ելեալ ի տանէն մերկ ունելով զխանջալն ի ձեռին իւրում և [1] սկսաւ հետամուտ լինել զկնի մանկանցն, և հալածելով հայհոյութեամբ անարգէր զհաւատս և զօրէնս մահմետականաց։ Եւ ի նմին ժամու այր ոմն մահմետական անունն Հաջի Էիբ, որ էր մերձակայ դրացի Մխիթարին, տեսանէր, և լսէր զհայհոյանս և զանարգանս, զոր տայր Մխիթար մահմետական մանկանցն, ասաց մեղադրանօք առ Մխիթար, լռեա՛ ի հայհոյանացդ, զի անպատեհ է զայդքան հայհոյանս ասել մանկանց, որք են մահմետական հաւատոյ։ Իսկ Մխիթար թողեալ զմանկունսն, և սկսաւ հետամուտ լինել զկնի Հաջի Էիբին և հալածելով հայհոյէր, և ի հալածելն պատահեցաւ անդէն եղբայր ղուլլար Աղասուն, և նա ևս մեղադրանօք ասաց Մխիթարին, մի՛ առնէր զայդպիսի անպատեհ գործդ. իսկ Մխիթար դարձեալ ի նա, և սկսաւ բարկութեամբ զնա ևս հայհոյել։

Իսկ որ Հաջի Էիբն էր գնացեալ առ սուլտանն և ամբաստան լինելով զՄխիթարէն, սկսաւ վշտագին սրտիւ պատմել նոցա զբանս և զգործս Մխիթարի, յայնժամ ժողովեալ բազում սուլտանք ի միասին եղեն վրէժխնդիրք անարգանացն հաւատոյ Մահմետի, գնացեալ ծանուցին փաշային, և առին ի նմանէ զզօրականս և եկեալ կալեալ կապեցին զՄխիթարն և տարան ի բանտն փաշային, և արարին բանտարգել։ Իսկ Վանայ վերին բերդի ենկիչարիքն՝ որք էին բարեկամք Մխիթարին, անտեղեակք էին այսոցիկ, և յորժամ լուան թէ կալան

---

1 Ոսկ. չէ. և.

զՄխիթար և արկլին ի բանտ, յայնժամ յիսուն ենկիչարի և երկու շօրվաչի եկեալ ի դուրս հանին ի բանտէն զՄխիթար և առեալ տարան ի վերին բերդն ի մէջ իւրեանց, և անդ պահեցին աւուրս երկուս, իբրև տեսին թէ հանդարտեցան սուխտայքն՝ և այլ մահմետականքն, և ոչինչ ասեն զՄխիթարէն, թողին զնա, որ գնաց ի տուն իւր։

Իսկ անօրէն սուխտայքն վերստին ժողովեցան՝ և գնացեալ կալան զՄխիթար, կապեցին և տարան առ փաշայն, և փաշայն առաքեաց առ մուֆթին և առ ղադին, թէ զինչ հրամայեն օրէնքն Մահմետի վասն առնս այսմիկ՝ սպանանիլ թէ ոչ, և նոքա ոչ ետուն զհրաման սպանման. վասն որոյ և փաշայն ոչ սպան, այլ հրամայեաց թողուլ ազատ։ Իսկ որ սուխտէքն էին ոչ թողին, այլ կապեալ զձեռսն ի յետս և գլուխ ի բաց և բոկոտն, այսր և անդր շրջեցուցանէին ի դրունս իշխանաց, հարկանէին, կառափնատէին, թքանէին, և պէսպէս կերպիւ տանջէին, և ասէին — ուրացի՛ր զհաւատն քո՝ և պաշտեա զմեր հաւատս, ապա թէ ոչ սրախողխողեալ և քարակոծ լեալ մեռանիս ի ձեռաց մերոց. զայսպիսի բանս ասելով մերկացուցեալ զսուրս իւրեանց, զոր ի ձեռսն ունէին, խաղացուցանէին ի վերայ նորա։ Իսկ Մխիթար յամենայն տեղիս ուր և շրջեցուցին զնոսա, բարձրաձայն և համարձակ առաջի ամենեցուն հայհոյէր զՄահմետ՝ և զնորին հաւատն, և զօրէնսն. և բազում բանիւք անարգէր, ոչ թէ զմի օր՝ այլ յամենայն աւուր, և արիութեամբ սրտի իւրոյ ասէր. վասն սնոտի և դուզնաքեայ մահուան միթէ երկուցեալ ի ձէնջ ուրանա՞մ զհաւատն իմ ճշմարիտ, և զՏէր Աստուածն իմ զՔրիստոս։ Այլ և ամենայն բարեկամք Մխիթարին և ծնողքն և յարակիցք երիտասարդքն եկեալ առ նա մաղթելով ասէին թէ. առ ի հաճել սուխտայիցն առ

երեսս և առ ժամուս ասա՛ զբան ինչ, և յետոյ գնացեալ յայլ աշխարհ պաշտեսցես զհաւատն քո։ Իսկ Մխիթար ամենևին ոչ հաւանեցաւ բանից նոցա, այլ արիական սրտիւ և. պայծառ դիմօք և համարձակ դաւանէր զՔրիստոս Աստուած առաջի սուլտայիցն՝ և անարգէր զօրենս Մահմետի։ Այլ և փաշայն և ենկիչար Աղասին առաքեցին առ Մխիթար և խոստացան տալ նմա բազում գանձս և ստացուածս. և պատուական ձիս և զէնս, և պետական իշխանութիւնս. զի թերևս ասասցէ զբան ինչ ի հաճոյս սուլտայիցն, և զերծուսցէ զանձն իւր ի մահուանէ. քանզի կարի յօժար կամօք խնայէին ի նա վասն արիագոյն և զարմանալի քաջութեան նորա, և Մխիթար ոչ հաճեցաւ ի բանս նոցա վասն քրիստոսական հաւատոցն։ Իսկ սուլտաքն հանապազօր այսր և անդր ի դրունս իշխանացն շրջեցուցանէին, քանզի փաշայն, և ղադին, և Մուֆթին ոչ ետուն հրաման սպանանելոյ, որոյ վասն զայրացան սուլտաքն, և զամենայն մաչիթաց կանչելն արգելին, զոր[1] ի ժամ աղօթից իւրեանց ելեալ ի գլուխ մինարային կանչեն. զայս կանչելս յաւուրս երիս խափանեցին[2] ասելով. հաւատն Մահմետի խանգարեալ խափանեցաւ՝ և յերկիր սուզաւ, զի այր անհաւատ զհաւատն մարգարէին Մահմետի յայտնի և համարձակ հայհոյէր։

Եւ յաւուր միում մինչդեռ շրջեցուցանէին ի պողոտայս քաղաքին, ոմն չարագոյն ի սուլտացն, որ և մերկ ի ձեռին ունէր զխանջալն, ուժգին բաղխմամբ եզարկ ի թիկնամէջն Մխիթարին, և թռուցեալ ցայթեցաւ արիւնն ընդ երեսս որմոյն՝ որ մերձ էր, յորմէ

---

1 Ոմն. ձե. զոր ի ժամ աղօթից . . . զայս ի կանչելս.
2 Նոյն. ձե. խափանեցին.

բախման. անկաւ Մխիթար ի վերայ երեսացն, և միւս ես սուխտայիցն [1] դիմեալ ի վերայ՝ սրախողխող արարեալ ծակոտեցին զնա՝ և անդէն մեռաւ։ Եւ ապա եղին զպարան յոտս նորա և քարշեալ տարան արտաքս ի քաղաքէն ի տեղին, յորում զամենայն մահապարտսն սպանանեն, և անդէն ժողովեալ բազում անթիւ մահմետականաց քարկոծեցին զմեռեալ մարմինն, այնքան, զի ի ներքոյ քարանցն ծածկեալ աներևոյթ եղև մարմինն և [2] ապա թողեալ ի բաց գնացին արիւնարբու և մարդադէմ գազան սուխտէքն։

Իսկ ի նմին գիշերի գիշերապահ ենկիչարիքն, որ ի վերին բերդին էին, տեսանէին զի լոյս մեծ փայլատակեալ և ճառագայթեալ կայր ի վերայ նորա, որոց ընդլուսանալ առաւօտուն եկեալ ի մէջ քաղաքին ամենեցուն պատմէին զտեսիլն զայն, և յերկրորդումն աւուր մատուցեալ քրիստոնեայքն առ փաշայն, և առ դատին խնդրեցին հրաման թաղելոյ զսուրբն, և նոքա ետուն հրաման. վասն որոյ գումարեալ ամենայն եկեղեցւոյ քահանայք և ժողովուրդք բազմախուռն հանդիսիւ, բարձին զպատուական մարմին նորա, և տարեալ ի դիրս Հայոց, ի կարգս քրիստոնէից թաղեցին զնա սաղմոսիւք և օրհնութեամբ ի փառս Քրիստոսի պսակողին զնա։ Եւ եղև նահատակութիւն սորա ի թուականիս մերում ՌՃԵ. ի Նոյեմբեր ամսոյ ԺԲ. ի կաթուղիկոսութեան մեծափառ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի տէր Յակոբայ, և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որ նստի ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։ Արդ՝ խնդրեսցուք [5] ի Քրիստոսէ, զի բարեխօսութեամբ սրբոց

---

1 Ուղ. *այլ ես սուխտայքն.* 2 Նոյն. չէ+. *և.*

5 Նոյն. չէ+. Արդ՝ *խնդրեսցուք . . . փառք յաւիտեանս ամէն։*

իւրոյ ողորմեացի ամենայն քրիստոնէից և նմա փառք յաւիտեանս ամէն։

ԳԼ. ԽԸ.

Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին։

Այր ոմն ազգաւ Հայ և հաւատովն քրիստոնեայ, որում անունն էր Աւետիս, և էր յերկրէն Ոստանայ, և վասն կարեաց աղքատութեան իւրեանց ամենայն ընտանեօք իւրեանց, ելեալ գնացին յերկիրն Բարմայ, որ այժմ ասի Ախբակ. և բնակեցան ի գիւղն Բաբլասան։ Եւ այրս այս Աւետիս վասն մարմնաւոր կարեաց իւրոց յարեցաւ առ քուրդ իշխան ոմն, որում անունն էր Բաքդար աղայ, որ էր իշխան բերդին, որ Լօռիքան կոչեն, և եկաց Աւետիս ի սպասաւորութիւն Բաքդար աղայ իշխանին ամս երկուս։

Եւ եղև զի ոմանք ի ծառայից Բաքդար աղային, որք էին հաւատով մահմետականք և ազգաւ քուրդ, և ծառայակիցք Աւետսի, նախանձեալ ընդ նմա, յաւուր միում կային առաջի Բաքդար աղային ասելով զԱւետսէ, թէ մեք բազում անգամ լուաք ի դմանէ, զի ասէր դառնամ ի քրիստոնէական հաւատոցս՝ և լինիմ մահմետական հաւատով, կարի ճշդիւ լինէին վրէժխնդիրք. և ստիպէին զպարոնն դարձուցանել զԱւետիսն ի քրիստոսական հաւատոյն։ Իսկ իշխանն Բաքդար աղայ եհարց յԱւետսէն վասն ճշմարտութեան իրացն, և լուաւ պա-

տամանի թէ, ոչ ուրանամ զքրիստոնական հաւատս իմ. այլ դոքա զուր ասեն ի վերայ իմ զբանդ զայդ: Վասն որոյ ոչ լուաւ Բաքդար աղայն վկայութեանց իւրոց ծառայիցն, այլ սաստեաց իւրոց ծառայիցն լռել, և ներեաց Աւետսին ասելով, թոյլ տուք դմա կեալ ի հաւատս իւր. և թէպէտ Բաքդար աղայն սաստեաց չարախօսացն, զի խանգարեսցի բանն, սակայն ոչ խանգարեցաւ, այլ օր յաւուր առաւել ճարակեցաւ բանն մինչև եհաս առ մեծ իշխանն Խոսրով փաշայ:

Եւ էր Խոսրով փաշայ եղբայր Եգդիշէր մեծ պարոնին՝ և. տէր աշխարհին, և իշխան ի վերայ Բաքդար աղային, զոր և վկայքն չար կալեալ զԱւետիսն տարան առաջի Խոսրով փաշային, որ բնակէր ի բերդին՝ որ կոչի Փիզան, և զնոյն վկայութիւն վկայեցին առաջի նորա: Եհարց Խոսրով փաշայ զաւետիսն վասն իւրացն ճշմարտութեան, և նա դաւանեաց զքրիստոսական հաւատն, և Խոսրով փաշայ հրամայեաց ունել զնա ի կալանս. և զկնի աւուրց բերեալ առաջի իւր եհարց զնա, և եգիտ հաստատուն ի հաւատս Քրիստոսի, դաւանելով զինքն քրիստոնեայ: Եւ ասէր ի պատասխանիսն իւր թէ, զիա՞րդ մարթ է ինձ թողուլ զլոյս և գնալ զհետ խաւարի, զի Քրիստոս ինքն լոյս է, սոյնպէս և հաւատն՝ որ առ ի նա. իսկ առաջնորդն ձեր՝ զոր մարգարէ ասէք, ինքն պատրիչ է և խաբեբայ, և ամենայն բանք իւր սուտ են: Այնուհետև կամեցան նախ ողոքական բանիւք և հնարիւք՝ որսալ զնա. զի ասաց Խոսրով փաշայ. տամ քեզ պարոնութիւն և գիւղ, և զդուստր իշխանի, որում և դու հաւանիս, և բերեալ զպատուական երիվարն իւր ամենայն ոսկիակազմ սարուքն և կացոյց առաջի նորա, և ասաց, ընդ իս հանապազ պահելով փառաւոր, և մեծապատիւ. իշխան ունիմ զքեզ եթէ հաւանեսցիս իմոց բանից, և Աւետիս ոչ հաւանեցաւ:

Ապա կոչեաց Խոսրով փաշայն զառաջնորդս ընդունայն օրինաց իւրեանց հարցանէր ցնոսա թէ, զիա՞րդ հրամայեն օրէնքն գրոց ձերոց վասն առնս այսորիկ, որոց պատասխանի արարեալ՝ թէ ասացեալ բանքն, որ զդմանէ իրաւացի, և հաստատեսցի վկայիւք, անհնարին է կեալ դմա, եթէ ոչ հաւատովն Մահմետի, և կամ թէ անպատճառ մեռանիլ։ Եւ առ այս բան նախկին սուտ վկայքն եկեալ անդէն առաջի նոցա ևս վկայեցին զառաջին սուտ վկայութիւնն իւրեանց, և Խոսրով փաշայն բազում անգամ առաջի իւր բերեալ զԱւետիսն և զնոյն բանն հրամայեաց նմա, թէ ուրացի՛ր զքրիստոնէական հաւատն քո, և ընկալ զմահմետական հաւատն, և ես զոր բարիս և խոստացեալ եմ առաւելաբար տամ քեզ. և Աւետիս ոչ ուրացաւ զքրիստոսական հաւատն իւր։ Իսկ Խոսրով փաշայն իբրև ետես թէ Աւետիս պինդ կայ ի հաւատս քրիստոսականն, և ոչ կամի դառնալ ի նմանէ, վասն որոյ հրամայեաց արձակել ի կապանաց և թողուլ ի կամս իւր՝ կեալ հաւատովն Քրիստոսի։ Իսկ կարդացողք օրինացն Մահմետի մոլլայք և մուդառիսք ժողովեցան առ Խոսրով փաշայն, և ի բանից գրոց իւրեանց խօսէին ընդ նմա թէ, պարտական ես դու բռնութեամբ ածել զնա ի ճշմարիտ հաւատս մեր, և թէ ոչ հաւանեսցի սպանանել, և Խոսրով փաշայն թօթափելով զօձիսն իւր ասաց, անպարտ եմ ես յարենէ առնդ այնմիկ, և անմասն յայդմ դատաստանաց, եթէ լսէք բանից իմոց, թողէ՛ք զդա, զի անպարտ է. և թէ ոչ թողուք դուք գիտէք։

Իսկ մոլլայք և մուդառիսք ամենեքեան դումարեալք ի վերայ Աւետիսին, յափշտակեցին և տարան ի մէջ իւրեանց, և սկսան զարդարել զնա ազնիւ և պատուական հանդերձիւ և անուշահամ կերակրօք և ըմպելեօք, և ախորժ բանիւք զուարճացուցանել զնա, և

զամենայն խոստացեալն Յոսրով փաշային և կրկնակի տալ նմա խոստացանս, և Աւետիս ոչ դարձաւ ի քրիստոսական հաւատոյն, այնուհետև իբրև տեսին թէ ոչ դարձաւ, սկսան չարչարել զնա պէս պէս օրինակաւ. և մանաւանդ զի ի պարանոցէն մինչև ցոտսն զամենայն փափուկ տեղիս մարմնոյն ծակոտեցին ծայրիւ սրոյ, յորոյ մարմինն ոչ մնաց ձեռնաչափ տեղի մի անծակ, յորոյ յարենէն ներկեցաւ ամենայն մարմինն և զգեստ անձինն, որ զտեսողաց մարմինսն սոսկացուցանէր։ Իսկ Յոսրով փաշայն միւսանգամ խնդրեաց զԱւետիսն, իբրև ածին զնա առաջի նորա, տեսեալ զնա այնպիսի արիւնաթաթաւ մարմնով, սոսկացեալ զարմացաւ, և սաստիկ բարկութեամբ մեղադիր եղև մօլլայիցն. և յայնժամ ես հրամայեաց թողուլ զԱւետիսն կեալ ի հաւատս իւր, իսկ արիւնարբու մօլլայքն ոչ թողին։ Այլ առեալ տարան ի մէջ մէյդանին արտաքոյ բերդին, և անդ ես բազում անգամ ստիպեցին զնա ասելով, ուրացիր զքո հաւատն՝ և ընկալ զմեր հաւատն, ապա թէ ոչ հատանեմք զգլուխ քո. և նա ոչ հաւանեցաւ և ոչ ուրացաւ. վասն որոյ սրով հատին զգլուխ երանեալ առն Աւետսի. և ի ժամ նահատակութեան իւրոյ Աւետիս զերեսն իւր դէմ ընդ արևելս ունէր. և չարեաց արբանեակ մօլլայքն բռնութեամբ դարձուցանէին զդէմս նորա ի կողմն հարաւոյ, և սուրբն ոչ անսաց նոցա, այլ ուղղեաց զդէմս իւր ընդ արևելս, և այնպէս կատարեցաւ ի վերայ քրիստոսական հաւատոյ՝ դաւանելով զՔրիստոս Աստուած ճշմարիտ:

Եւ ի գիշերին յայնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զվկայսն իւր նշանաւ երկնային լուսոյ, որ էջ ի վերայ նորա, որում եղեն ականատեսք ամենեքեան բնակիչք Փիզանայ բերդին, և որք շուրջ զնովաւ էին, այլ և ինքն Յոսրով փաշայ՝ որ ի բարձրաւանդակէ տան իւրոյ հա-

յեցեալ տեսանէր զսիւնաձեւ ճառագայթեալ լոյսն ի վերայ նորա․ այլ և սպանող մօլլայքն․ վասն որոյ սպանող մօլլայք փութացեալ բարձին անտի զմարմինն Աւետսին, և տարան յայլ իմն տեղի ի տան ուրուքն պահեցին մինչև լուսացաւ օրն, և ապա կոչեցին զեղբայր Աւետսին, որում անունն էր Թաթառուկ, հրամայեցին նմա բառնալ զմարմին Աւետսին և տանել թաղել։ Որոյ ժողովեալ արս քրիստոնեայս, քահանայս և աշխարհականս՝ բարձեալ զնահատակն տարան ի գիւղն, զոր անուանեն Առակ, և անդ հանգուցին զնա ի դիրս տապանին սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք։ Եւ եղև կատարումն նահատակութեան երանելի առնս Աւետսիս ի թուականութեան մերում ՌՃԵ․ յամսեանն մարտի Ի․ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս յաւիտենից ամէն։

Գլ. ԽԹ.

Ցաղագս սքանչելեացն [1] Աստուծոյ, որ եղեւ ի վերայ առն ումեմն, որ ի ժամ մահուան իւրոյ ուրացաւ։

Ի ժամանակս յետինս՝ յամս թագաւորութեան Պարսից արքային մեծ և առաջին Շահաբասին, ի Նախչուան քաղաքի, որում քաղաքի իշխան էր Մախսուտ սուլթան․ եղև սքանչելիքն Աստուծոյ ի վերայ առն ումեմն քրիստոնէի, [2] որոյ զա-

1 Ոսկ․ պատմոյն․ 2 Ն–յն ուրացողի․

նունն ասէին Ղարաչօրակ։ Եւ էր այրս այս հաւատովն քրիստոնեայ, և քրիստոնեայ ծնողաց զաւակ, բայց էր ինքն ծոյլ և պղերգ յօրինացն Աստուծոյ, և հեռացեալ յամենայն կարգաց և կրօնից քրիստոնէութեան, ոչ երթար ի ժամատեղ և յաղօթս ոչ խոստովանէր՝ և ոչ հաղորդէր, ոչ խոկայր թէ մահկանացու է և մեռանելոց, ոչ յիշէր զհատուցումն ըստ գործոց, որպէս և պատմեն աստուածային գիրք. այլ էր հեռացեալ յամենայն պատուիրանացն Աստուծոյ, և զամենայն աւուրս կենաց իւրոց շրջէր ի կրպակս և ի շուկայս, ի փողոցս, և ի հրապարակս, ի դրունս այլազգեաց և իշխանաց վաճառել ինչս. քանզի արուեստ իւր ստացեալ էր դալալութիւն, որ այլոց ինչս առեալ վաճառէ այլոց, և այսպէս մնաց նա զամենայն ժամանակս կենաց իւրոց. քանզի ասեն պատմողքն՝ որք ականատեսք են գործոյս թէ, մինչ ի վաթսուն ամն եհաս նա, աւելի և կամ պակաս։

Եւ եղև զի հիւանդացաւ այրս այս Ղարաչօրակ զհիւանդութիւն մահու, և կոչեցին առ նա քահանայ՝ որ խոստովանեցոյց զնա, բայց վասն զի գիտէր քահանայն զանուղղայ վարս նորա և զմոլար կենցաղավարութիւն նորա. և յաղագս փրկութեան հոգւոյ նորա ասէ ցնա քահանայն. եղբայր դու ինքնին գիտես զկեանս քո՝ զի ծոյլ և պղերգ անցուցեր, և ոչ երբէք յիշեցեր զօրս զայս, թէ մահ կամ դատաստան կայ քո առաջի. արդ՝ եկեալ այսօր եհաս քեզ, խնդրեմ ի քէն լուիցես ինձ, և սակաւ ապաշխարանք յանձն առցես, որպէս [1] պահս և աղօթս, և եթէ մեռցիս այսու հիւանդութեամբս, Աստուած ինքն թողութիւն շնորհելոց է քեզ, զի խոնարհեցար կամօք քովք, և զապաշխարութիւն յանձն

1 Ոռձ. չէ. որպէս.

առեր, նաև վարձս բարեաց ընդունիս դու յԱստուծոյ, ապա եթէ ողջացիս, և ելցես ի հիւանդութենէ անտի, յայնժամ կատարեսցես զուխտեալ ապաշխարանս քո, և ես հաւատամ յԱստուած, որ վասն այս սակաւ ապաշխարանացս՝ զոր յանձն առնուս, տացէ քեզ Աստուած առողջութիւն կատարել, զի ելցես ի հիւանդութենէդ։ Զայս ամենայն խօսեցաւ ընդ նմա քահանայն զի թերևս զղջասցի։

Իսկ նա ոչ միայն ոչ զղջացաւ, այլ և մեծագոյն մեղս և չարիս գործեաց, դժուարեալ և խոժոռեալ ընդ բանս քահանային. քանզի վաղվաղակի կոչեաց առ ինքն զոմանս ի մահմետականաց, և ասաց նմա բերել առ ինքն մօլլայ և մուղրի. և իբրև բերին, յայնժամ ձեռամբ նոցա ուրացաւ զՔրիստոս և զհաւատս նորա, և եղև մահմետական հաւատով և դաւանութեամբ, և իբրև զայս գործեաց ողորմելի և թշուառական այրն այն Ղարաչօրակ, ամենեքեան քրիստոնեայք՝ որք էին ի քաղաքին, սուգ անմխիթար զգեցան, ոչ միայն վասն կորըստեան նորա, այլ և վասն քրիստոսական հաւատոցս, զոր ծաղր և այպն արարեալ քամահանօք հայհոյէին մահմետականքն. այլ և մահմետականքն ուրախացեալք ի ձայն ցնծութեան հրճուէին, և խայտային վասն ուրանալոյ առնն այնմիկ, վասն զի երևելի ոք էր ուրացողն։ Եւ յետ ուրանալոյ նորա անցին ի վերայ աւուրք չորք՝ մեռաւ ուրացող հիւանդն, և ժողովեալ ամենայն բազմութիւն մահմետականաց քաղաքին, ոչ միայն կարդացողք և հասարակ մարդիկք, այլ և երևելի և անուանի արք և իշխանք, և զարդարեցին զինքեանս ի զէնս և ի զարդս երևելիս և պայծառ հանդերձից, և զդագաղ նորա առաւել պճնազարդեալ պաճուճեցին, և ի պատիւ նորա արտաքս բերին ալամ և բարձրացուցին թուղ աւելի քան զքսան, և բազմաշուք և երևելի

փառօք տարան ի դիրս մեռելոց իւրեանց, Թաղեցին զնա և դարձան ի տունս իւրեանց [1],

Իսկ արդարադատն Աստուած՝ ոչ իսպառ անտես արար զժողովուրդս իւր, և զհաւատս քրիստոնէութեան, այլ իսկոյն շարժեալ ի նախանձ արար դատաստան և վրէժխնդրութիւն, զի որպէս յետ չորից աւուրց ուրանալոյ իւրոյ․ ապա սատակեցաւ Ղարաչօրակ, սոյնպէս և յետ չորից աւուրց Թաղման իւրոյ, յաւուր միում ընդ մերձենալ երեկոյին տեսին զՂարաչօրակ ուրացողն, զոր Թաղեցին մահմետականքն, զի ելեալ էր ի վհէն՝ յորում Թաղեալն էր, մերկ և խայտառակ, և զարշադէմ և այլադունակ, իբրև զշուն կատաղի, և զպատանն իւր արկեալ ի վերայ ուսոց իւրոց և գայր ընդ մէջ քաղաքին, ի շուկայն և ի կրպակն շրջէր, և ոյք տեսանէին զահի հարեալ ահարեկ լինէին․ քանզի ամենեքեան ճանաչէին զնա, և ի զարհուրելի տեսլենէ նորա ամենայն ոք Թողեալ զգործս և զխանութս իւրեանց հապճեպ տագնապաւ հազիւ ճողոպրեալք փախչէին ի տեղւոջէն անդառնալի գնացիւք։

Եւ ոմանք յայլազգեացն բանս ինչ արկին ի մէջ հրապարակին, Թէ ոչ է սա Ղարաչօրակն, այլ իմն նոր երևեալ ինչ․ յայսմ պատճառէ և վասն ստուգելոյ զիրն, միաբանեցան արք տասն ևս աւելի, և դիտեալ նկատեցին զժամն՝ յորում Ղարաչօրակն եկն ի շուկայն, յայնժամ միաբանեալ արքն գնացին ի վիհն՝ յորում եդեալ էր Ղարաչօրակն, տեսին զի ոչ էր անդ, և այսպէս արարին ոչ միանգամ այլ չորս անգամ որով առաւել ստուգեցաւ Թէ, նա է։ Եւ յամենայն աւուր ելանէր ընդ մերձենալ երեկոյին, նոյնպէս [2] զպատանն ի յուսն արկեալ և գար ի շուկայն, և մինչ ի լուսանալ առաւօ-

1 Ոսկ․ չէ․ դարձան ի տունս իւրեանց։ 2 Նոյն չէ․ նոյնպէս։

տուն դարձեալ գնայր ի դիրն իւր մտանէր. և յաւուրս խօթն այսպէս առնէր, յորոյ զարհուրելի տեսլենէն սարսեալ սասանեցաւ քաղաքն ամենայն, և ընդ մերձենալ յերեկոյին յորում պահու ժամանէր ժամ գալստեան նորա, թողին ամենեքեան զխանութս և զգործս իւրեանց, և փախչէին ի տունս իւրեանց. այլ և դասք զիշերապահ զինուորացն, որոց հասաս ասեն, նոքա ևս լռեցին ի գիշերի շրջելոյ, քանզի երկնչէին։

Իսկ [1] մահմետականացն զամօթի հարեալք շառագունեալ, կորագլխեալք, կարկեալք, ապշեալք, յերկիր նայէին. ապա խորհրդականքն ի նոցանէ զկնի խօթն աւուրց եկեալ ի միասին խորհուրդ արարին. քանզի ընտրեցին արս արիասիրտս, և քաջազօրս, և կորովիս աւելի քան զերեսուն և վառեցին զնոսա զրահիւք և պատերազմական զինուք, նետիւք, և աշտէիւք, սուսերօք և այլ զինուք, և պատուիրեցին նոցա սպանանել զՂարաչօրակն և կորուսանել, և պատրաստեալ արքն դէտ ակնկալեալ կային զգուշութեամբ և երկիւղիւ տագնապեալ սպասէին գալստեան ուրացող մեռելոյն։ Եւ յերեկոյեան պահուն ի մերձենալ հանապազորդեան ժամուն տեսին զի գայր, և պատրաստեալ արքն ընթացան առաջի նորա զի սպանցեն, իսկ նորա ընդ կրունկն դարձեալ, փախուստ առեալ և գնացեալ եմուտ ի յորջն, յորմէ ելեալն էր, յորում թաղեցին զնա։ Իսկ զինակիր արանցն հասեալ ի տեղին անդէն խողխողեցին զնա սրով, և կտրեցին զգլուխն, տարան յայլ հեռաւոր տեղի և կորուսին. և այսպիսի օրինակաւ բարձաւ չարն ի միջոյ, և ամենայն այլազգիքն սկսան հայհոյել զուրացողն Ղարաչօրակ, և վկայէին վասն հաւատոյ քրիստոնէութեան ճշմարիտ գոլոյն։ Եւ զայս ամենայն գործեաց սա-

---

[1] Յոհ. և.

տանայ, զի խախտեսցէ զհաւատս քրիստոնէութեան. բայց սովաւ առաւել հաստատեցաւ ճշմարիտ հաւատս քրիստոնէութեան, և բարձրացաւ անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ամենայն քրիստոնեայք առաւել հաստատեցան ի վերայ հաւատոյս Քրիստոսի, և մեծաւ գոհութեամբ փառաւորէին զԱստուած վասն յայտնելոյն զճշմարիտն, որով փառաւորի [1] Աստուած յաւիտեանս յաւիտենից ամէն։

Գլ. Ծ.

Յաղագս մասնական հրկիզութեան, որ եղեւ ի Կոստանդնուպօլիս մեծ քաղաքին։

Այսմ հրկիզութեան ոչ էաք մեք ականատեսք, քանզի մեք ի սուրբ Աթոռն Էջմիածին էաք յայնս աւուրսն. այլ յեղբարց մերոց վարդապետաց պատահեցաւ ոմն անդ ի Կոստանդնուպօլիս լինել, [2] որոյ անունն յորջորջիւր Ստեփաննոս վարդապետ, տեղեաւ գոլով ի գեղջէն Մեղրւոյ, որ իւրոց կենցաղավարութեանց զիրակութիւն գրեաց առ եղբարս, որք էին յԷջմիածին, յորում քարտիսի և Կոստանդնուպօլսի մեծ քաղաքի հրկիզութիւնն էր գրեալ, որում ինքն անդէն էր լեալ ականատես։ Զորոյ զքարտէսն առեալ զնոյն գրեալն նովին շարադրութեամբ արդէն աստ գծագրեցի այսմ պատճառաց վասն՝ նախ՝ զի զառ ձեռն պատրաստ գրեալն ոչ ի դէպ համարեցայ երկրորդել. և

1 Ոսկ. չէ․ որով փառաւորի Աստուած յաւիտեանս յաւիտենից ամէն. Նոյն չէ․ լինել.

երկրորդ՝ վասն իմոյս բազմակի աշխատանացս, որով ձանձրացեալ եմ, զի արդէն ի մետասան ամ̃ մտի· որ աշխատիմ ի վերայ այսր պատմագրիս, վասն զի հարիւր թուին սկիզբն արարի գրել, և արդ ի հարիւր և ի տասն և մէկ թիւն մտի, և տակաւին աշխատիմ ի վերայ սորա. և երրորդ՝ զի ծերացեալ եմ և կարի պակասեալ ի զօրութեանց, և մահն եկեալ հանապազօր յանդիման իմոյս աչաց կանգնեալ է, և գիտեմ թէ ես մեռանիմ և այս գիրքս մնայ կիսակատար, կրեալ աշխատանքն իմ ամենայն ընդ վայր կորնչին, զի ոչ ումեք փոյթ է մտանել յաշխատութիւն և ի զբաւ հանեալ կատարել, վասն որոյ փութամ, ճեպիմ, զի թերևս հանից յաւարտ՝ զի մի անկատար մնասցէ, և աշխատանքն իմ կորիցէ։ Եւ գրեցելոյն Ստեփաննոս վարդապետին, զոր ի Կոստանդնուպօլսէ առաքեալ էր, այս է սկիզբն, որ զնոյն շարագրութիւն գրեմ։

«Բայց սակայն յաղագս Բիւզանդիոյ իրագործութեանց և վշտաքերականաց եղելութեանց, անքերելի տառապանաց, և վսերական դիպուածոց, ո՞վ կարէ արտայայտել վիպասանութեամբ ի ձեռն ներտառական քարտիսի ըստ նոյն տեսակի. վասն զի աստուածասաստ էր այն բարկութիւն, և ստգտանք մեղանաց ամենայն անձանց ներհակ շարժութեանց։ Վասն որոյ ըստ նախախնամութեան էին հասարակական վճիռ առ մի ենթակային, իբր առ ի զգաստութիւն բոլորին, ապա թէ ոչ և զընդհանրականացն շահեցին պատիժ յերկու կեանս, ըստ տէրունական հրամանի և պայմանին, ըստ աւուրց Նոյին գոլ. և ըստ ապագային առ վախճանականաւ յաւիտենին. ուստի իրք զարհուրականք և տեսութիւնք երկիւղալիք, ձայնք սաստկաբեղունք, և ճայթմունք յոգնորակք, աղաղակք բազմազանք՝ և տարակոյսք անսպառականք։ Այսպէս և ըստ այսմ եղանակի արդիս նշա-

նագործեցաւ, որոյ վասն տկարանամ առ այս վիպասանութիւն։ Քանզի յամսեանն Յուլիսի ի քսաներորդի և նախկնորդի ըստ Յունական [1] տումարի. և ի Թուականութեանս Արամազեան վիճակի, հազարերորդի և հարիւրերորդի և յիններորդի կալուածի՝ յաւուր շաբաթու, յիններորդում պահու պատահի իրս չարաբաստութեան, և գործ կսկծալիս յայսմիկ քաղաքի մեծի։ Զի ի հիւսիսական կողմանէ քաղաքին՝ մերձ առ ծովունորին լինի հրաձգութեան դիպուած յոյժ յոյժ անընդհատ երևակայութեամբ ըստ վախճանի նշանի, քանզի սկսեալ ի նորակերտ պալատէն ալքայի զառ ի վեր, լայնատարած և բազում միջոցաւ և սահմանաւ առնուլ զբոյրոքումն վառման հրայրեցութեան, մինչ ի կամարն ջրաբերական, և անտի ապա դարձեալ լայնանալ և երկայնանալ զառ ի վայր մինչ ի նոյն տեղին ուստի սկսաւն, սաստիկ վօռէասական հողմոյն նպաստութեամբ։ Եւ այսպէս յառաջս երկուս բաժանեալ ճարակմամբ և սպառնամբ հասանէր մինչև ի գագաթ բլրին, ուրանօր ժողովարանք մեծամեծք այլազգեաց կառուցեալք երևէին, առ արտաքին տեսութիւնս պատշաճագործեալք արժանի գոլ [2] հիացման ըստ նոյն դիտաւորութեան։ Եւ անդուստ հապա իսկոյն և կանխագոյն յառաջս երիս բաժանէր, և ըստ իւրաքանչիւրոց ծայրից բաժանելոց փութացեալք լինէին առաջի եղեալս ինքեանց յիրին կատարագործութիւն, ըստ ստիպման և բաղխման յաջողակ հողմոյն. իբր պայմանաւ սահմանաւ և տարազու իմն՝ ըստ բանականացն որակութեան։ Քանզի և որպէս գրեցաւն ճախր առեալ երկուց եզերաց հանդերձ առ միջոցաւն համանգամայն ի մի վայր կողոպտէին լրապէս տապալմամբ և ապականութեամբ ամենայն շինուածոց զկառուց-

---

1 Ռուս. Հռոմայական։ Նոյն. չէ. գոլ.

մունս․ [1] այսինքն բարձրաբերձ աշտարակաց, և ոսկեզօծ պալատաց, գեղեցկադիր սարավանդակաց, և յօգնածախակերտ ապարանից և տանց։ Եւ զի երկուց ծայրից, որպէս ասացաւ, միոյն իջանելոյն ի գագաթանէ անտի առ արևելս կոյս՝ պարառեալ ընդ ծովեզերօքն, և անցանելոյն ընդ դրունս Մաքսապետականին, և Աւաղակոչականին վախճան առեալ առ տունն վանից։ Իսկ ծայրն երկրորդի առ արևմուտս ձեմեալ սաստիկ ըստ իւրոյն զօրութեան, շառաչմամբ և պարփակմամբ ըստ նոյն եղանակի դիմեալ առ աշտարակօքն եօթնակերտեան և դոյզն ինչ բացակայութեամբ միջոցին, առ ծովու ստորակայեալ և անցեալ ընդ դուռն Նորակոչին, հանդերձ միջոցական եզերբն զետեղանան առ ծայրն առաջին։ Այսպէս և ըստ այսմ օրինակի վեցից տասանց և երից ժամու յամենայն զարդուց իւրոց ունայնացեալ գտաւ մայրաքաղաքն երեւելի ըստ հողմոց այլայլականաց պատահմանց, վօռէասականաց և նոտոսաց, փոթորկաց և այլոց բազմաց․ մինչ զի զքարինս այրեալ բնաւին յաճիւն կացոյց։ Եւ արդ՝ անդ էր տեսանել զտագնապ հասարակաց, զվիշտ բոլորից և զկականումն ընդհանրից, անդ էր տեսանել զբաղխումն կրծից, զաղաղակ բարբառից և զարտօսր աչաց։ Անդ էր տեսանել զգալարումն աղեաց, զմորմոք սրտից, և զճիչ ձայնից։ Անդ էր տեսանել զանուրաձեւութիւն անձանց, զբեկումն միջաց՝ և զթափումն մտաց, զի հուրն ստիպէր, յաւէտ բորբոքէր և զարհուրեցուցանէր, ապարանք փլանէին, որոտմունք լինէին, և ցոլմունք երևէին։ Ուստի փարթամք տարակուսէին, ռամիկք յուսահատէին՝ և աղքատք վարանէին․ վիրաւորք գոչէին, ծնողք սգային, և որդիք դառնապէս լային,

---

1 Ա.-եա: Երեւ. չէ. զկառուցմունս։

վասն զի բարձաւ յոյս նոցա, վերացաւ օգնութիւն յին-քեանց, և մերկացան յամենայն ընչից իւրեանց։ Տե՛ մի-անգամայն մեկուսացան, ի միմեանց հեռացան՝ և ան-յայտ եղեն. զի քայքայեցան, փեռեկտեցան և բաժա-նեցան, հայրք յորդւոց, և որդիք ի հարց, մարք ի դստե-րաց և դստերք ի մարց, բարեկամք ի բարեկամաց, և սիրելիք ի սիրելեաց իւրեանց. անգիւտ լեալ տակաւին ի միմեանց ըստ տէրունական հրամանի։ Նա և ճանաչել ոչ կարէին զմեռեալս ի թաղումն դիականց, զի ըստ ե-րից հազարաց ասացին գոլ արանց մեռելոց, ըստ յայտ-նի տեսութեանց, ըստ զննողաց հոգաբարձութեանց կար-գեցելոց։ Ուստի տրտմութիւնք, ուստի հեծութիւնք, ուստի խռովութիւնք առաւելապէս ներ տարածեցաւ ընդհանուրս. ըստ գրոյն թէ՝ տարեկանք ձեր ի սուգ դարձցին։ Ահա կատարեցաւ այս ամենայն վասն մեղաց մերոց, ի խրատ և ի զգուշութիւն անձանց հաւատա-ցելոց, ի կորուստ և ի կործանումն հակակայեն ծայրից։ Եւ արդ՝ սիրելիք, ոչ անկ վարկանիմ արկանել ընդ-տուիք զայսպիսի իրագործութիւն, մանաւանդ արժանի առնել պատմութեան՝ ապա թէ ոչ, դուք ողջ լերուք ի տէրն ամենի ամէն։ »

ԳԼ. ԾԱ.

Պատմութիւն Օսմանցւոց Թագաւորաց. Օսման օղլու կարգն այս է, որ կոչի խոնդքար:

Օսման օղլու կարգն և սկիզբն, որ եղեալ են և բազմացեալ, բազում քաղաքաց և գաւառաց տիրեալ և Թագաւորեալ։ Հայոց Թուին ՈՁԱ, ի յՕսմանճուկ գիւղաքաղաքէն, ոմն Օսման անուն մեծատուն ժողովեալ զիւր նմանիսն և եղեալ պատերազմեցաւ ընդ իւր բոլորի պարոնայսն, և էառ զնոսա. և փոքր փոքր մեծացաւ, և եղև Թագաւոր բազում քաղաքաց և գաւառաց։ (Յետ վախճանելոյ [1] սուլթան Օսմանին, նստաւ յաթոռն որդի նորա երկրորդն սուլթան Օրխանն։ Երրորդն՝ սուլթան Մահմատն։ Չորրորդն՝ սուլթան Մուրատն։ Հինգերորդն՝ Իլտրում Պայազիտն։ Վեցերորդ՝ սուլթան Մուրատն։ Եօթներորդ՝ սուլթան Մահ.

---

1 Ուղ. չէ. (Յետ վախճանելոյ . . . ցվերջ որ ընդ փա- կագծ-ն:

մատն։ Ութներորդ՝ սուլթան Բայազիտն։ Իններորդ՝ սուլթան Սելիմն։ Տասներորդ՝ սուլթան Սըլէյմանն։ Մետասաներորդ՝ սուլթան Սէլիմն։ Երկոտասաներորդ՝ սուլթան Մուրատն։ Երեքտասաներորդ՝ սուլթան Մահմատն։ Չորեքտասաներորդ՝ սուլթան Ահմատ ի Ջհանգիրն տղայ հասակաւ։ Մանրամասն ոչ կարեմ պատմել զհանգամանս սոցա. այլ կարճ ի կարճոյ ասացից։) Յորժամ որ Լանկթամուրն եկեալ է, նա Իլտրում Պայազիտն ի Բուրսայ եղեալ է աթոռն, որ է Թախտն։ Յետոյ որդի նորա սուլթան Մուրատն առեալ է զԱտրանայ։ Յետոյ սուլթան Մահմատն առեալ Ստամբօլ ի Թուին Հայոց ՋԲ. էառ զՔաֆան և զԱղ-քրման, և զՏրապիզոն. և բազում քաղաքս և գաւառս անցեալ սուլթան Մահմատն։ Եւ սուլթան Պայազիտն հասեալ ի սուլթան Սէլիմն. ի Թուին ՋԿԳ. սուլթան Սէլիմն յորժամ թագաւորեաց՝ ել բազում զօրօք գնաց ի վերայ Շահիսմայիլին և պատերազմեցաւ ի Չալտրանն, և ոչ կարաց առնուլ զնա։ Դարձաւ յետ և էառ զԿամախ ՋԿԴ. Թուին. ՋԿԵ. Թուին էառ զԱմիթ։ Եւ յետոյ ՋԿԶ Թուին էառ զՄսր բազում ջանիւ. ՋԿԷ Թուին առին այլազգիքն ի յԱմիթ զՄեծ կաթուղիկէն զսուրբն Թէոդորոս ի Հայոց. և արարին իւրեանց աղօթանոց. ՋՀ. Թուին մեռաւ սուլթան Սէլիմն, նստաւ սուլթան Սլէյմանն։ ՋՁԳ. Թուին սուլթան Սլէյմանն բազում զօրօք էլ և գնաց ի վերայ Շահթահմազին ի Թարվէզ, և ոչ կարաց յաղթել զնա. դարձաւ և էառ զԲաբիլոն, որ է Բաղդատ։ Բայց ի ճանապարհին բազում նեղութիւնս կրեաց, քանզի հանդիպեալ եղեն ահագին մեծ գետի մի, որ Թուրքի բառիւ Տօղուզօլում ասի, որ է ինն ճիւղ. և տարեալ բազում մարդ և շատ խազինայ գետն այն։ ՌԵ. Թուին բացին զնոր դուռն Ամթայ, որ հայի ընդ արևելս, զի առաջին շինողն չորս դուռն էր բացեալ, և անցեալ էր

բազում ժամանակ ի վերայ, յետ ժամանակաց էառ Թուրքի Թագաւորն զԱմիթ, ետես որ մէկ դուռն ի մէջ բերդին էր, եղ և մուտն խցեալ զնա որ անուանի Ջըր-դուռն՝ հրամանաւ Թագաւորին։ Ռ. Թուին նորոգեցաւ յԱմիթ սուրբ Կիրակոս, ՋՂԹ. Թուին սուլթան Սէյ-մանն կրկին եղ բազում զօրօք և գնաց ի վերայ Շահ-Թամազին ի Թարվէզ և ոչ կարաց առնուլ, դարձեալ ի վերայ Շամիրամակերտին, որ է Վան և էառ զնա։ Յետոյ մեռաւ սուլթան Սէյմանն, նստաւ որդի նորա սուլթան Սէլիմն. Ի ՌԺԹ. Թուին սուլթան Սէլիմն բազում զօրս առաքեաց ի վերայ Կիպրոս կղզոյն, եր-կու ամ պաշարեաց զնա և էառ, բազում քրիստոնեայս կոտորեաց. այս Թագաւորս ութն ամ Թագաւորեաց։ Յետոյ որդին սորա Թագաւորեաց սուլթան Մուրատն։ Ի ՌԻԹ. Թուին նեղացաւ Թագաւորն ի Հրէից համար-ձակութենէն և վերացոյց զփակեղն ի գլխոց Հրէիցն, և քրիստոնէիցն ամենայն. ապա ի տեղիս տեղիս դաշա-ետուն և առին հրաման, փակեղ եդին յետ ԺԸ. ամաց. ապա ի Կոստանդնուպօլիս և յայլ բազում քաղաք մնա-ցին գդակով։ Եւ այս Թագաւորս սուլթան Մուրատս առաքեաց բազում զօրս ի վերայ Պարսից աշխարհին և էառ զԹարվէզ և զԵրևան, զԳանձայ, և զԱրշար, և զՇամախի, մինչ ի դուռն Ալանաց, զոր եդեալ է Աղէք-սանդր Մակեդոնացին, Լ. աւուր ճանապարհ գլայնու-թիւնն և զերկայնութիւն տիրեաց աշխարհացն, ԺԵ. ամ հեծելակոխ եղեալ, ի սովու և ի սրոյ բազումք մե-ռան, և բազում երկիր աւերեցան, յետոյ սակաւ մի խաղաղութիւն եղև։ Յետ մեռանելոյ սուլթան Մուրա-տին, նստաւ որդի նորա սուլթան Մահմատն, ի Թուին Հայոց ՌԽԴ. և ոչ արար խաղաղութիւն։ Ի սորա ժա-մանակն բազում քաղաք և երկիր աւերեցաւ, զի ոչ կարէր վարել Թագաւորութիւն, ծառայքն և պարո-

նայքն ամենեքեան ապստամբեցան և երես դարձուցին ի նմանէ։ Քանզի ինքն միայն ոչ էր իշխանաւոր, յորժամ որ տայր քաղաք մի փաշայի մի, կամ պարոնի մի, յետ Փ. աւուր կամ Ի. աւուր մայրն կամ քոյրն, կամ իւր կինն, կամ վէզիրն տային այլ փաշայի և առնէին բազում կարմիր դահեկան։ ԶՏիգրանակերտն Ամիթ ի վեց ամիսն՝ ինն փաշայի ետուն, կայր որ փաշայն կուգայր, կայր որ փաշի վաքիլն կուգայր, նոքա որ կուգային, գիտէին որ բանի յետքն փուչ էր, նոքա այլ կու սկսանէին ի կողոպտել և ի թալանել զքաղաքն և զերկիրն։ Զինչ երկարեմ որ գրով ոչ կարեմ պատմել, ի յԱմիթ աստի և անտի շինութիւն կայր. ապա ի յԱմթայ կէս աւուր հողէն որ ելնաս, մինչ ի մեծ քաղաքն Ստամբօլ աւերութիւն է, ուր ուրեք գտանի շինութիւն, ի յայս սուլթան Մահմատի ժամանակն ի Զօռում գիւղաքաղաքին յառնեցաւ Եադիչի անուն, և ունէր եղբայր մի Հասան անուն, ոչ ի թագաւորական տոհմէ էր և ոչ ի մեծ ազգէ, այլ դռեհիկ և ոչինչ քան զամենայն մարդիկ, բազում աւերութիւն արար. և հարկապահանջութիւն ձգեաց ի գիւղ և ի քաղաք մինչ ի դուռն Բիւզանդիոյ քաղաքին։ Փողեցան դանգատաւորք և գնացին առ սուլթան Մահմատն թէ երկիր և քաղաք ամենեքեան աւերեցան ի յոչինչ ումէքէ։ Թագաւորն հրաման արար ժողովեցան ի յԱմիթ քաղաքի ԾՌ. մարդ աւելի և ոչ պակաս, զօրագլխաւն գնացին ի վերայ նորա և ոչ կարացին յաղթել. այլ ինքեանք յաղթեցան։ Ի յՈւրհայ էր խըսարլեալ և զՈւրհայոյ բերդի մեծաւորն ի բերդէն ձգեաց, և տիրեաց բերդին և քաղաքին, և գլուխ քահանայ մի և տանուտէր մի նահատակեաց վասն դանձ ժողովելոյ, և մեծամեծք ի Տաճկաց շատ սպան և շատ վնաս արար Ուրհայ քաղաքին ի պատմել չի գայ, երեք ամ ի վերայ գնացին և յաղթեցան զօրագլխաւն իւրեանց

և ոչնչացան։ Յետոյ նեղացաւ Թագաւորն և հնարք իմացաւ, առաքեաց բազում գանձս և խիլայս և կոչեաց զնա և անցոյց զմեծ ծովն, և արար զօրագլուխ զօրացն իւր ընդդէմ Ֆռանկին և Մաճառին․ այնքան տկարացաւ այս Թագաւորս, որ ոչ կարաց յաղթել, այլ հնարք իմացաւ և արար զայս, ինն տարի Թագաւորութիւն արար սա․ ի սորա ժամանակն խանգարեցաւ Օսման օղլու Թագաւորութիւնն։ Ի ՌԾԳ․ Թուին մեռաւ սուլթան Մահմատն, նստաւ որդին սուլթան Ահմատն Ջհանգիրն տղայ հասակաւ։ Թուին ՌԿԼ․ մեռաւ սուլթան Ահմատն և Թագաւորեաց եղբայր նորին սուլթան Մուստաֆայն․ արարին բեզամայ, կեցեալ չորս ամիս Թագաւոր, և հարկիւ նստուցին ի վայր և Թագաւորեցուցին զեղբօրորդի նորա զսուլթան Օսման տղայ հասակաւ ԺԴ․ ամեայ, և յայսմ ամի Թուին ՌԿ2 գնաց ի վերայ Լեհաց ի պատերազմ սուլթան Օսմանն հանդերձ Թաթար խանիւն, և դարձան բազում գերեօք, և բեզամայ արարին ամենայն երկիր նորա, ի յայսմ ամի Աստուած էառ զվրէժ գերեացն ի սուլթան Օսմանէն, յարեան զօրքն ի վերայ իւր և սպանին և Թագաւորեցուցին զսուլթան Մուստաֆայն, զհօրեղբայր նորին հանեալ ի յարգելանոցէն։ Աւարտ եղև այսմ պատմութեանս։

Կարգ Օսմանցւոց Թագաւորաց։ [1]

Ա․ Օսման․ Բ․ Օրհան․ Գ․ Մուհամատ․ Դ․ Մուրատ․ Ե․ Բայազիտ․ Զ․ Մուրատ․ Է․ Մուհամատ․ Ը․

---

[1] Ուղ. նշ. սոյն ցուցակ, և կարգ պատմութեան սոյն գլխոյ վեր ի վայր եդեալ է։

Բայազիտ։ Թ․ Սէլիմ․ Ժ․ Սուլէյման․ ԺԱ․ Սէլիմ Հրէի որդի․ ԺԲ․ Մուրատ․ ԺԳ․ Մահմատ․ ԺԴ․ Ահմատ․ ԺԵ․ Մուստաֆայ․ ԺԶ․ Օսման․ ԺԷ․ այլուն նոյն Մուստաֆայ․ ԺԸ․ Մուրատ․ ԺԹ․ Իբրահիմ․ Ի․ Մահմատ։

Վասն Օսմանցւոց Թագաւորաց Թէ ո՞յք են մի զկնի միոյ:

Այսոքիկ են [1] Թագաւորք Օսմանցւոց, զոր գիրք աստուածայինք ոչ կոչեցին զնոսա, որք յոլով ժամանակաւ յառաջ տիրեցին աշխարհի, և այս է նոցա զարմն մէկն ի մէկէն մինչև ցայսօր ժամանակիս։ Այս է Օսմանցւոց Տաճկաց Թագաւորաց սկիզբն և պատճառն որ Օսմանցի կոչեցան։) Առաջին անունն Օսման որ էր ի ճոխ գեղջէն [2] այր մի շինական հողագործ տաճիկ, որ Թողեալ զհողագործութիւնն, և ժամանակ մի գող եղև․ և սակաւ սակաւ զօրացաւ, և գնացեալ յարեցաւ ի սուլթան Ալադինն, և առեալ զօրս ինմանէ գնաց էառ զԲուրսայ քաղաքն։ Բ․ Եւ յետ նորա Թագաւորեաց որդի նորա սուլթան Օրհան, և սա էառ Ջենկիշէհէրն և երաց։ Գ․ Եւ յետ նորա Թագաւորեաց որդին իւր սուլթան Մուհամատ։ Դ․ Եւ յետ նորա որդին իւր Մուրատ Թագաւորեաց։ Եւ յետ Մուրատին որդին նորա Պայազիտ, որ Իլտրում կոչիւր, զսա Լանկթամուրն յերկաթի ղափասն եդ։ Զ․ Եւ յետ նորա միւս այլ Մուրատ։ Է․ Եւ յետ նորա միւս այլ Մուհամմատ, որ էառ զՍտամբօլ քաղաք ի Թուականիս մերոյ․ ՋԲ։ Ը․

---

1 Ուղ․ չէ․ Այսոքիկ են Թագաւորք . . . ցվերջ ոչ ընդ փակագծով։ 2 Նոյն չէ․ ի ճոխ գեղջէն․

Եւ յետ նորա Թագաւորեաց սուլթան Բայազիտ. ի սորա ժամանակն էր Մատթէոս վարդապետն ի Սևաստուվանքն: Թ. Եւ յետ սորա որդին իւր Սէլիմ, որ սահմանեաց զտղայ ժողովելն: Ժ. Իւ յետ նորա Թագաւորեաց որդին իւր Սուլէյման խոնդքարն, որ քան զամենն շատ Թագաւորեաց և շուրջ եկն զերկրաւ: ԺԱ. Եւ յետ սորա Թագաւրեաց որդի իւր միւս այլ Սէլիմ: Զսա ասեն թէ Հրէի որդի էր, քանզի սորա հայրն անզաւակ էր և մայրն ծնաւ աղջիկ մի, և ջհուտ կին մի ծնաւ տղայ և գանձիւք Թագուհին հաւանեցոյց զջհուտն և փոխեաց զաղջիկն ընդ տղային և անուանեցին Սէլիմ, այս է սորա պատճառն: ԺԲ: Եւ յետ սորա որդին իւր Մուրատ, որ զսև գդակներն հագոյց քրիստոնէից ազգին: ԺԳ: Եւ յետ սորա որդին իւր միւս այլ Մուհամատ: ԺԴ. Եւ յետ սորա որդին իւր Ահմատ: ԺԵ. Եւ յետ սորա Թագաւորեցուցին զիւր եղբայրն զՄուստաֆայն երեք ամիս: Եւ յետ երեք ամսոցն մանզուլ արարին իշխանքն զՄուստաֆայն և Թագաւորեցուցին զԱհմատին որդին զՕսմանն: ԺԶ: Եւ յետ չորս տարւոյ ենկիչարիքն սպանեցին զՕսմանն և Թագաւորեցուցին միւս անգամ զՄուստաֆայն, որ ասէին թէ, պակասախելք էր, ի Թուականիս մերում ՌՀԱ. Թագաւորեաց մէկ տարի և վեց ամիս. և վերացուցին և Թագաւորեցուցին զՕսմանին որդին զՄուրատն. ի Թուին ՌՀԲ: ԺԷ. Ի սորա ժամանակն և ի սոյն ամին կարմիր գդակներն, որք են Ղզլպաշներն, առին զԲաղդատ: Այս սուլթան Մուրատիս հայրն սուլթան Օսմանն հանապազ Թաղբիր սուրաթ եղեալ շրջէր ի մէջ քաղաքին Ստամբօլայ, ի ղահվախանէքն և ի մէյխանէքն, և յայլ տեղիս լսէր և տեսանէր զանկարգութիւնս, և զանիրաւութիւնս ենկիչարացն և սպայոցն և անխնայ կոտորէր զնոսա զմեծս և զփոքրս: Վասն որոյ միաբանեցան դաւք են-

կիշարոյն և սպանին զսուլթան Օսման թագաւորն։ Եւ ի նմին ժամանակի էր ի յԱրզրում քաղաքին Ապազա փաշայն, յոյժ այր և քաջ պատերազմող և բազմահնե-ծել, սա վասն թագաւորի արեան վրէժխնդրութեան սկսաւ կոտորել զենիկիչարիսն, և յԱրզրումայ սկսեալ յամենայն քաղաքս և ի գաւառս կոտորելով գնաց մինչ ի յԱնկիւրեայ, և յոյժ անխնայ և սաստիկ չարչարանօք սպանանէր մինչև սպառել ամենայն ենկիչարաց, և յԱն-կիւրիոյ դարձաւ և եկն դարձեալ յԱրզրում զքերդն ամրացոյց և նստաւ ի մէջն։ Այլ և զկարաւանսն՝ որ յարևելից և յարևմտից գային յԱրզրում և գնային, արգել զամենեսեան հնարիւք և խաբէութեամբ՝ մինչ որ բազում կարաւանք ժողովեցան, ապա յաւուր միում զամենեցուն զստացուածսն յափշտակեաց, եթէ նաղտ և եթէ վէճ. և յետոյ ապստամբեցաւ ի թագաւորէն և եղև ջալալի. այլ և կամեցաւ միաբանել ընդ Պարսից, զի զքուէր որդին իւր բազում զօրօք առաքեաց առ Շահաբաս թագաւորն Պարսից։ Իսկ սուլթան Մուրատ թագաւորն առաքեաց ի վերայ այս Ապազա փաշայիս զիւր վէզիր Խօսրով փաշայն. որ եկեալ էառ զքերդն Արզրումայ և զԱպազայ փաշայն կալեալ տարաւ ի Ստամբօլ ի ՌՀԷ. թուին մերոյ. և թագաւորն ետ զԱ-պազայ փաշայն ի բանտի և յետոյ սպան ի ՌՁԳ. թուին յՕգոստոս ամսոյ։ Այս սուլթան Մուրատս առաքեաց զիւր վէզիրն զԽօսրով փաշայն թէ, գնայ ի վերայ Բաղ-դադայ յառնուլ զնա, և Խօսրով փաշայն գնացեալ եմուտ յերկիրն Պարսից ի կողմն Համադանայ, և եհաս մինչ ի քաղաքն Դարգազին, ձմեռն և ցուրտն եհաս ի վերայ, դարձաւ և եկն ի Թօխաթ։ Վասն որոյ թագաւորն սուլթան Մուրատ առաքեաց զՄուրթուզայ փաշայն՝ սպանանել զԽօսրով փաշայն, և նա եկեալ ի Թօխաթ՝ սպան զԽօսրով փաշայն ի ՌՀԹ. թուին։ Այս այն սուլ-

թան Մուրատն է և վէզիր Խօսրով փաշայն է, զոր Սահակ կաթուղիկոսի ներհակու թեան ճառին յիշեալ եմք։ Թուին ՌՁԲ․ յՕգոստոս ամսոյ սուլթան Մուրատն սաստիկ եասախ արար թութունին ընդ ամենայն աշխարհս տէրութեան իւրոյ, զամենայն ղահվայխանէք, որ յամենայն քաղաքս կային, քակեալ աւերեաց և խափանեաց․ վասն զի ի ժամանակին՝ յորում ենկիչարիքն զսուլթան Օսմանն սպանին՝ ի ղահվախանէքն նստեալ սպանման խօսքն խօսէին խմելով զղահվայն և քաշելով զթութունն։ Թուին ՌՁԳ․ սուլթան Մուրատն գնաց ի վերայ Լեհաց ի պատերազմ․ և Լեհացիք հնազանդեալ նմա դարձուցին յինքեանց։ Թուին ՌՁԳ․ ի ժամանակս այս սուլթան Մուրատիս ծառազատիկ արարին ազգն Յունաց, յորում ժամանակի էր վէզիր Բայրամ փաշայն, որ էր ինքն յազգէն Յունաց։ Վասն որոյ արար երեսպաշտութիւն ազգին Յունաց, և զազգն Հայոց՝ թիւր ծանոյց թագաւորին, որոյ վասն բարկացաւ թագաւորն և սպան ի Հայոց մէկ քահանայ և երկու աշխարհական։ Թուին ՌՁԴ․ յամսեանն Մարտի ել սուլթան Մուրատն ի Ստամբօլայ, և գնաց ի վերայ Երևանայ ի պատերազմ, յամսեանն Օգոստոսի եհաս անդ, և ունէր ընդ իւր եօթն հարիւր հազար պատերազմող հեծեալ, թող զծառայականս և զբեռնակիրս, և մեծաւ զօրութեամբ ծեծեաց զբերդն, որ ի մէկ օրն ընդ տիւ և ընդ գիշեր վեց հարիւր և այլ աւելի թօփ զարնուլին բերդին․ վասն որոյ յինն օրն էառ զբերդն և զիշխան բերդին՝ զորդին Ամիրգունայ խանին զԹահմազղուլի խանն իւրովք իշխանօքն առաքեաց ի Ստամբօլ, այնքան պահեաց, որ անդէն մեռան, այս այն Թահմազղուլին է՝ որ զէջմիածնայ քարերն առաքեաց յԱսպահան․ ապա սուլթան Մուրատ զՄուրթուզայ փաշայն ԺԵՌ․ քաջ պատերազմող զօրօք եդ ի մէջ բերդին Երևանայ, և ինքն էանց գնաց

մինչ ի Թավրիզ, ձմեռն և ցուրտն եհաս ի վերայ, այլ և համբաւ եկն ի Ստամբօլայ, վասն որոյ անտի դարձաւ ի վերայ Վանայ և գնաց ի Ստամբօլ։ Թուին ՌՉԵ. յամսեանն Դեկտեմբերի, ի ժամանակս այս սուլթան Մուրատին, Թագաւորն Պարսից Շահսէֆի եկեալ պատեաց զբերդն Երևանայ, և ունէր ընդ իւր զօրս պատերազմողս հարիւր հազար, Թող զբռնակիրս և զայլս. երեք ամիս նստաւ ի վերայ բերդին, և բազում ջանիւ և չարչարանօք հալիւ կարաց առնուլ զբերդն, և ի զօրաց Օսմանցւոց կարի բազում կոտորեաց, և յինքն կալաւ զաշխարհն ամենայն. և յՕսմանցւոցն երեք փաշայ և այլ նշանաւոր իշխանս ընդ իւր տարաւ յԱսպահան, որք և անդէն մեռան։ Թուին ՌՉԷ. Ապրելի ԻԸ նոյն սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղդատայ, և ի Նոյեմբերի Զ եհաս ի Բաղդատ, և ծեծեաց զբերդն հզօր զօրութեամբ ԼԸ օր, և ի Դեկտեմբերի Դ էառ զբերդն. և զզօրսն Պարսից, որ անդ էին, իսպառ կոտորեաց քինախնդրութիւն արարեալ վասն իւրոց զօրացն, զօրս կոտորեցին Պարսիկք յԵրևան, և զփառաւոր իշխանն Պարսից, որ էր ի մէջ բերդին, որում անունն էր Խալաֆ բէկ, բազում իշխանօք առաքեաց ի Ստամբօլ, և անդ մեռան. և յիւրոց իշխանացն կարգեաց իշխան ի Բաղդատ, և զամենայն աշխարհն յանձն արար նմա. ապա դարձաւ ի Բաղդատայ և գնացեալ եմուտ ի Ստամբօլ մեծաւ փառօք ի Թուին ՌՉԸ. Յունիս ամսոյ յերկուսն։ Թուին ՌՉԹ. եղև բարիշութիւն ի մէջ երկուց ազգացն, և Թագաւորացն Օսմանցւոց և Պարսից. զի Թագաւորն Պարսից Շահսէֆի զԵրևան էառ, և Թագաւորն Օսմանցւոց սուլթան Մուրատն զԲաղդատ էառ, յետ առնլոյ զքաղաքս զայսոսիկ միաբանեցան երկոքին Թագաւորքն և արարին բարիշութիւն, պայման եդեալ մինչև ցերեսուն տարի պահել զբարիշութիւնն։ Վասն

որոյ ամենայն աշխարհք արևելեայք և արևմտեայք օրհնեն և ողորմի տան երկուց Թագաւորացն, զի կեան ի խաղաղութեան. զի նախ քան զբարիշութիւնն ի փախըստեան և ի Թաքստեան կային, ի յափշտակութեան և յաւարառութեան, ի գերութեան և ի սպանութեան, ի սով և ի սուր, և մանաւանդ ողորմելի ազգս Հայոց։ Այս սուլթան Մուրատ Թագաւորս կարի առաւելաւ արիութեամբ և քաջութեամբ, և սրտեղութեամբ և խելոք և յոյժ հնազանդեցոյց զՕսմանցիսն, որ ի յիշել զանունն սարսէին, զի Թաղբիր սուրաթ եղեալ հանապազ շրջէր ի մէջ քաղաքաց և ի մէջ բանակի զօրացն և ի մէջ ենկիչարոցն և սպայոցն, և տեսանէր և լսէր զչարութիւնս և զանիրաւութիւնս նոցա. այլ և ի մէջ գռեհիկ շինականաց շրջեալ հարցանէր և տեղեկանայր ի նոցանէ զանիրաւութիւնս և զյափշտակութիւնս փաշաներաց և իշխանաց. և ի վաղուեան աւուրն առժամայն չարամահ արարեալ սատակէր, և բազում զօրեղ և նշանաւոր փաշայք և իշխանք, և շեխ և ղադի և մուֆթի կոտորեաց, և անխնայ կոտորէր իբրև զոչխար, վասն որոյ ամենեքեանքն սարսեալ դողային ի նմանէ։ Այլ և որ զիւրև շրջակայ ազգք և Թագաւորք կային, սարսեալ դողային ի նմանէ. զի որպէս զառիւծ յաղթող և զօրեղ էր ի վերայ ամենեցունց. և այսպէս մեծաւ փառօք և յաղթող զօրութեամբ վարեաց սա զԹագաւորութիւնն ի կեանս իւր. իսկ ի Թուին ՌՉԹ. ի սուրբ Մարգսի շաբաթու հինգշաբաթոջ աւուրն մեռաւ այս սուլթան Մուրատ Թագաւորս և ամենայն աշխարհ կսկծաց ընդ մեռանելն նորա. և մինչ տակաւին յոգւոջ կայր սուլթան Մուրատս՝ էած առաջի իւր զեղբայրն իւր, որում անուն էր սուլթան Իբրահիմ. և կացոյց զնա Թագաւոր ի տեղի իւր՝ և ինքն մեռաւ ի նոյնում աւուր։ ԺԲ. Թուին ՌՉԹ. նստաւ Թագաւոր սուլթան

Իբրահիմն. և ոչ արար գործ ինչ արժանի յիշատակի, ոչ արիութիւն և ոչ ուղղութիւն։ Բայց ի սորա ժամանակն ազգն Օսմանցւոց կազմեցին բազում նաւս և լցին պատերազմող արամբք, և համբաւեցին թէ գնամք ի վերայ Մալթայու կղզւոյն. և խաբ տուեալ գնացին ի վերայ Կրիտէ կղզւոյն, որ էր ի ձեռն Վենէտիկցւոց, և դիւրաւ առին զնա, զի բնակիչք կղզւոյն յօժարէին յառնուլն Օսմանցւոց, և առին Օսմանցիք զԿրիտէ կղզին ի Վենէտիկցւոց ի թուին ՌՂԸ։ Այս սուլթան Իբրահիմս հետևեցաւ զորովայնս և զախտս բուծանել, քանզի խոտորեցաւ յախտս իգամոլութեան կարի առաւել. զի թող զկանայս և զհարճս իւր՝ բոզս ևս պահէր առ ինքն, այլ և զկանայս և զդստերս իշխանաց բռնութեամբ ածեալ կատարէր զկամս իւր յայտնի և համարձակ, վասն որոյ վշտացան ազգ և իշխանքն իւր, և միաբանեալ՝ զորդին նորա, որում անունն էր Սուլթան Մահմատ, եդին ի տեղի նորա թագաւոր. և ապա զսուլթան Իբրահիմն սպանին ի թուին ՌՂԷ։ ԺԹ. Թուին ՌՂԷ. Յուլիս ամսոյ ԻԷ նստաւ սուլթան Մահմատ թագաւոր և ոչ արար գործ ինչ յիշելոյ արժանի, զի տկար է զօրութեամբ այլ և մարմնով, նաև հասակաւ տղայ և հազիւ թէ զաշխարհ տէրութեան իւրոյ նուաճեալ պահէ, և այնպէս կայ մինչև ցայսօր, յորում է թուականն մեր ՌՃԺԱ. և ապագայն Տեառն Աստուծոյ է գիտելի. որում փառք յաւիտեանս ամէն։

Այլ եւս բան վասն Օսմանցւոց թագաւորաց [1] :

Տաճկաց թագաւորութիւնն։ Օսման որ առաջին եղև թագաւոր մեր [2] թուականին ՈՂԱ. նստաւ, ծԸ ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին ՈԼԹ. նստաւ, Կ. ամ թագաւորութիւն արար։

Օրխանն՝ մեր թուականին ՉԽԹ. նըստաւ, ԻԹ ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին ՈՂԹ նստաւ, Լ. ամ թագաւորութիւն արար։

Մուրատն՝ մեր թուականին ՉՀԸ. նստաւ, ծԸ. ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին ՉԻԹ. նստաւ, Կ. ամ թագաւորութիւն արար։

Պայազիտն՝ մեր թուականին ՊԼՁ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին ՉՁԹ. նստաւ, ԺԴ. ամ թագաւորութիւն արար։

Մահմետ՝ մեր թուականին Պծ. նստաւ, ԺԹ. ամ թագաւորութիւն արար. և յիւրեանց թուականին ՊԳ. նստաւ Ի. ամ թագաւորութիւն արար։

---

1) Ուղ. չէ. այն ամբողջ հատուած.—2) Թուականք առանց ի նախադրի եդեալ են յերկուսին օրինակսն եւ.

Մուրատն՝ մեր թուականին ՊԿԹ· *նստաւ,* ԻԹ *ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին* ՊԻԳ, *նստաւ,* Լ· *ամ թագաւորութիւն արար։*

Մահմետն՝ մեր թուականին ՊՂԸ· *նստաւ,* ԼԱ· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՊԾԳ· *նստաւ,* ԼԲ· *ամ թագաւորութիւն արար։*

Պայազիտն՝ մեր թուականին ՋԻԹ· *նստաւ,* ԼԱ· *ամ թագաւորութիւն արար և յիւրեանց թուականին* ՊՁԵ· *նստաւ,* ԼԲ· *ամ թագաւորութիւն արար։*

Սէլիմն՝ մեր թուականին ՋԿ· *նստաւ* Թ· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՋԺԷ· *նստաւ,* Թ· *ամ թագաւորութիւն արար։*

Սուլէյմանն՝ մեր թուականին ՋԿԹ· *նստաւ,* ԽԶ· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՋԻԶ· *նստաւ,* ԽԷ· *ամ թագաւորութիւն արար։*

Սէլիմն՝ մեր թուականին ՌԺԵ· *նստաւ,* Թ· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՋՀԳ· *նստաւ,* Թ· *ամ թագաւորութիւն արար։*

Մուրատն՝ մեր թուականին ՌԻԴ· *նստաւ,* Ի· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՋՁԲ· *նստաւ,* ԻԱ· *ամ թագաւորութիւն արար։*

Մահմետն՝ մեր թուականին ՌԽԴ· *նստաւ,* Ժ· *ամ թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՌԳ· *նստաւ,* Ժ· *ամ թագաւորութիւն արար։*

Ահմատն՝ մեր թուականին ՌԾԴ· *նստաւ,* ԺԳ· *ամ թագաւորութիւն արար, և յիւրեանց թուականին* ՌԺԳ· *նստաւ,* ԺԳ· *ամ թագաւորութիւն արար։*

Մուստաֆայն՝ մեր թուականին ՌԿԷ· *նստաւ* Գ· *ամիս թագաւորութիւն արար· և յիւրեանց թուականին* ՌԻԷ· *նստաւ,* Գ· *ամիս թագաւորութիւն արար։*

Օսմանն՝ ի նոյն թուին նստաւ, մեր և նոցա հաշուովն Դ *ամ թագաւորութիւն արար։*

Դարձեալ նոյն Մուստաֆայն մեր Թուականին ՌՀԱ․ *նստաւ․ և յիւրեանց Թուականին* ՌԼԱ։

Եւ դարձեալ այս ստոյգ։ ՈՂԲ․ *Թուականին մերում Օսմանն նստաւ․ և* ԾԸ․ *ամ Թագաւորեաց։*

ՉԾ․ *Թուին Օրխանն նստաւ․* ԻԹ․ *ամ Թագաւորեաց։*

ՉՀԹ․ *Թուին Մուրատն նստաւ․ և* ԾԸ․ *ամ Թագաւորեաց։*

ՊԼԷ․*Թուին Պայազիտն նստաւ․* ԺԴ․ *ամ Թագաւորեաց։*

ՊԾԱ․ *Թուին Մահմետ նստաւ․* ԺԹ․ *ամ Թագաւորեաց։*

ՊՀ․ *Թուին Մուրատն նստաւ․* ԻԹ․ *ամ Թագաւորեաց։*

ՊՂԹ․ *Թուին Մահմետ նստաւ․* ԼԱ․ *ամ Թագաւորեաց։*

ՋԼ․ *Թուին Պայազիտն նստաւ․* ԼԱ․ *ամ Թագաւորեաց։*

ՋԿԱ․ *Թուին Սելիմ նստաւ․* Թ․ *ամ Թագաւորեաց։*

ՋՀ․*Թուին Սուլէյման նստաւ․* ԽԵ․ *ամ Թագաւորեաց։*

ՌԺԵ․ *Թուին Սէլիմ նստաւ* Թ․ *ամ Թագաւորեաց։*

ՌԻԴ․ *Թուին Մուրատ նստաւ․* Ի․ *ամ Թագաւորեաց։*

ՌԽԴ․ *Թուին Մահմետ նստաւ․* Ժ․ *ամ Թագաւորեաց։*

ՌԾԴ․ *Թուին Ահմատ նստաւ․* ԺԴ․ *ամ Թագաւորեաց։*

ՌԿԷ․ *Թուին Մուստաֆայ նստաւ․* Գ․ *ամիս Թագաւորեաց։*

ՌԿԷ․ *Թուին Օսման նստաւ* Դ․ *ամ Թագաւորեաց։*

ՌՀԱ․ *Թուին դարձեալ նոյն Մուստաֆայ նստաւ։*

Այս են բան եւ կարգ Օսմանցւոց Թագաւորացն։

ՈՂԲ․ Թագաւորեաց Օսման յազգէ Տաճկաց, ամս ԾԸ, որոյ անուամբն Օսմանլու կոչեցան։

ՉԾ․ մեռաւ սուլթան Օսմանն և թագաւորեաց Օրխանն որդի նորա ամս ԻԹ։ ՉԿԱ․ էառ սուլթան Օրխանն զԱտրանայ։ ՉՀԹ․ Թագաւորեաց Մուրատ ամս ԾԹ։

ՉՀԹ․ [1] Թագաւորեաց Մուրատ ամս ԾԸ։

ՊԼԷ․ Թագաւորեաց Պայազիտ ամս ԺԴ։

ՊԼԸ․ [2] Թագաւորեաց Պայազիտ ամս ԻԸ։

ՊԾԱ․ մեռաւ Պայազիտն և Թագաւորեաց Մահմետ որդի նորա ամս ԺԹ։

ՊԾԱ․Թագաւորեաց Մահմետ ամս ԺԹ։

ՊՀ․ Թագաւորեաց Մուրատ ամս ԻԹ։

ՊՀԲ․ [5] Թագաւորեաց Մուրատ ամս ԻԹ։

ՊՂԹ․ ԹագաւորեացՄահմետ ամս ԼԱ։

ՋԲ․ էառ սուլթան Մահմետն զԲիւզանդիայ։

ՋԼ․ մեռաւ սուլթան Մահմետն, և Թագաւորեաց Պայազիտ որդի նորա։

ՋԼ․ Թագաւորեաց Պայազիտ ամս ԼԱ։

ՋԿԱ․ Թագաւորեաց Սէլիմ ամս Թ։

ՋԿԱ․ Սէլիմն սպան զՀայրն իւր զսուլթան Պայազիտն և ինքն Թագաւորեաց ամս Թ։ Եւ եղև խռովութիւն ի մէջ երկու եղբարցն սուլթան Սէլիմին և Ահմատին, և եղև սուլթան Ահմատի որդին Մուրատն Սօֆի։

ՋԿԱ․ [4] եղև խռովութիւն ի մէջ որդւոցն սուլթան

---

1 Ուղ․ չէ․ ՉՀԹ․ Թագաւորեաց Մուրատ ամս ԾԸ․

2 Նոյն չէ․ ՊԼԸ․ Թագաւորեաց Պայազիտ ամս ԻԸ․

5 Նոյն չէ․ ՊՀԲ․ Թագաւորեաց Մուրատ ամս ԻԹ․

4 Նոյն․ չէ․ ՋԿԱ․ եղև խռովութիւն . . . Սէլիմ փոքր որդի նորա․

Պայազիտին. և թագաւորեաց Սէլիմ փոքր որդի նորա։

ՋԿԲ. [4] Սէլիմն սպան զհայրն իւր զսուլթան Պայազիտ և ինքն թագաւորեաց։

ՋԿԲ. առաւ սուլթան Ահմատն որդւովք և դստերօք իւրովք և փախստական եղեն զօրք նորա։

ՋԿԲ. սուլթան Սէլիմն կոտորեաց զզօրս Շահիսմայիլին։

ՋԿԳ. կամ ՋԿԴ. սուլթան Սէլիմն գնաց ի վերայ Շահիսմայիլին. և պատերազմեցան ի Չալդրան, և ոչ կարաց առնուլ զնա։

ՋԿԴ, էառ սուլթան Սէլիմն զԿամախ։

ՋԿԵ. էառ զԱմիթ. ՋԿԶ. էառ զՄսըր. ՋԿԶ. էառ զՇամ և զՄսըր։

ՋԿԸ. չարացաւ Սէլիմն և արար զառաջին տղայ ժողովումն ի քրիստոնէից.

ՋՀ. մեռաւ Սէլիմն, և թագաւորեաց Սուլէյման որդի նորա ամս ԽԵ։

ՋՀ. [2] մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց Սուլէյման որդի նորա։

ՋՀԵ. գնաց սուլթան Սուլէյման ի Պուտունի թախտն Ընկռուզաց և էառ զնա։

ՋՀԷ. [5] գնաց սուլթան Սուլէյմանն ի Պուտուն յաթոռն Ընկռուզաց և էառ զնա։

ՋՁԴ. էառ սուլթան Սուլէյման զԲաղդատ։

ՋՁԵ. [4] էառ սուլթան Սուլէյման զԲաղդատ։

ՋՂԲ. Մաղաքիա վարդապետն Դերջնցի գնաց առ

---

1 Ոսկ. չէ. ՋԿԲ Սէլիմն սպան . . . և ինքն թագաւորեաց. 2 Նոյն չէ. ՋՀ. մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց Սուլէյման որդի նորա. 3 Նոյն չէ ՋՀԷ գնաց . . . և էառ զնա. 4 Հմմ. չէ. ՋՁԵս էառ սուլթան Սուլէյման զԲաղդատ.

սուլթան Սուլէյմանն, և վերացոյց զտղայ ժողովեալն, հրամանաւ նորին ի Պերջնայ և ի Բաբերդու։

ՌԺԵ· գնաց սուլթան Սուլէյմանն ի վերայ Փէջայ և անդ մեռաւ ի Սէյիթվար։

ՌԺԵ· մեռաւ սուլթան Սուլէյմանն և թագաւորեաց Սէլիմ որդի նորա ամս Թ։

ՌԺԵ· [1] Թագաւորեաց Սէլիմ։

ՌԺԶ· Թագաւորեաց սուլթան Սէլիմն։

ՌԻԳ· մեռաւ սուլթան Սէլիմն և թագաւորեաց Մուրատ որդի նորա ամս Ի·

ՌԽԳ· Յունուարի Զ· մեռաւ սուլթան Մուրատն, և թագաւորեաց Մահմետ որդի նորա, Յունվարի ԻԲ· ամս ԺԲ· սա էառ երկու բերդ ի Մաճարէն։

ՌԽԳ· Դեկտեմբերի ԼԱ· մեռաւ սուլթան Մուրատ, և թագաւորեաց Մահմետ որդի նորա Յունվարի ԺԷ։

ՌԽԳ· [2] մեռաւ սուլթան Մուրատն և թագաւորեաց որդի նորա ամս Թ։

ՌԾԳ· մեռաւ Մահմետ, և թագաւորեաց Ահմատ որդի նորա ամս ԺԳ։

ՌԿԷ· առաքեաց սուլթան Ահմատն զԹաթար խանն և զԽալիլ փաշայն ի վերայ Շահաբասին, և ոչ կարացին առնուլ զնա, այլ և աւերեալ զԹարվէզ և զշրջակայս նորա՝ դարձան յետս։ Եւ յայսմ ամի մեռաւ սուլթան Ահմատն և թագաւորեաց Մուստաֆայ եղբայր նորա Նոյեմբերի ԺԹ· օրն Չորեքշաբաթի· յամիսս երեք։ Եւ ի սոյն ամի ընկեցին իշխանքն զսուլթան Մուստաֆայն, և թագաւորեցուցին զՕսման զորդի սուլթան Ահմատին, Փետրվարի ԺԶ· օրն երկուշաբաթի, որ թագաւորեաց ամս Դ։

---

1 Ուղ. չէ. ՌԺԵ. Թագաւորեաց Սէլիմ։ 2 Դոյն չէ. ՌԽԳ. մեռաւ սուլթան Մուրատն . . . ամս Թ։

ՌԿԷ. *Թագաւորեաց Մուստաֆայ ամիսս երեք. և ի սոյն ամի Թագաւորեաց Օսման ամս* Դ. *տասներեք ամաց, Փետրվարի* ԺԶ. *օրն երկուշաբաթի։*

ՌՀԱ. *սպանաւ սուլթան Օսմանն ի զօրաց իւրոց, և հանեալ ի բանտէն զսուլթան Մուստաֆայն զեղբայր սուլթան Ահմատին, վերստին Թագաւորեցուցին Մայիսի* ԺԲ։

ՌՀԲ. *ընկեցին զսուլթան Մուստաֆայն և Թագաւորեցուցին զսուլթան Մուրատն յՕգոստոս* ԼԱ *յաւուր կիւրակէի։*

ԳԼ. ԾԲ.

Ազգաբանութիւն պարսից Թագաւորացն:

Սկիզբն Շեխսաֆին է, որ է իշխան Արտաւիլու, որոյ որդի է Շըխ-Հայդար. այս Հայդարս էառ իւր կին զքոյր Եաղուբ Թագաւորին Թարվիզոյ, որ էր Թոռն Ջահնշահ Թագաւորին. և ի Շըխ-Հայդարէն և ի քուերէն Եաղուբ Թագաւորին ծնանի որդի և անուանի Իսմայէլ։ Այս Հայդարս և իւր կինն խորհին սպանանել դեղով զԵաղուբ Թագաւորն, զի ինքեանք առցեն զԹագաւորութիւնն, և սիրոյ պատճառանօք կոչեն զԵաղուբ Թագաւորն ի ճաշ, և տան ուտել նմա զդեղեալ կերակուրն. և յետ ուտելոյն զգաց թէ դեղեալ է կերակուրն, և բռնութեամբ նոցունց ևս տայ ուտել ի կերակրէն։ Եւ սոքա երեքեանքն մեռանին ի միասին՝ Եաղուբ Թագաւորն և քոյրն իւր և Շըխ-Հայդարն, և ապա անտէրանայ աշխարհն և լինին խռովութիւնք և

պատերազմունք. և զմանուկն Իսմայէլ փախուցանեն ի կղզին Աղթամար և անդ սնանի և հասանէ յարբունս հասակի. յայնժամ առեալ զնա ազգականաց իւրոց բերեալ յայտնեն ամենեցունց, թէ սա է երկուց կողմանց ժառանգն, քանզի որդի է Շըխ-Հայդարին, և քուեր որդի Եաղուբ Թագաւորին։ Վասն որոյ ամենեքեան հաւանեալ կացուցանեն զնա Թագաւոր ի տեղի Եաղուբ Թագաւորին. և այս Իսմայէլս ծնանի զՇահԹամազն, և նա՝ զերկրորդ Շահիսմայէլն, և զՇահխուտաբանտէն, զկնի ՇահԹահմազին Թագաւորէ երկրորդ Շահիսմայէլն, և զկնի այս Իսմայէլիս՝ Շահխուտաբանտէն։ Զկնի սորա Թագաւորէ որդի սորա առաջին Շահաբասն. զկնի սորա Թագաւորէ Թոռն սորա Շահսէֆի. զկնի սորա Թագաւորէ որդի սորա երկրորդ Շահաբասն։ (Եւ[1] ի ՌՃԺԵ. Թուին մերոյ յամսեանն Սեպտեմբերի Ժ. մեռաւ այս երկրորդ Շահաբասն, և ի նոյն Թուին և ի ի նոյնում ամսեանն, եդին ի տեղի նորա Թագաւոր զնորին որդին զՇահսէֆին, ըստ անուան իւրոյ պապոյն, վասն որոյ զսա անուանեմք երկրորդ Շահսէֆի։[2] Եւ յետ նստելոյ Շահսեֆոյս Թագաւոր ինքս հանապազ ցաւագար կայր, այլ և շրջակայ Թշնամիք ապստամբեցին յերկիր սորա, վասն որոյ հմայողք ասացեալ են, օրն և ժամն, յորում նստեալ էր Թագաւոր՝ ոչ է լեալ օր բախտաւոր. վասն որոյ հմայելով ընտրեցին օր բաղդաւոր և վերստին եդին յաթոռ, և փոխեցին զանունն և անուանեցին Շահ-Սուլէյման, և այժմ Շահ-Սուլէյման ասեն սմա։)

---

1 Ուղ. կր. Եւ ի ՌՃԺԵ. Թուին մերոյ . . . ցվերջ որ ընդ փակագծաւ։ 2 Ա–էջմ. եղեց. պակասի աստի ցվերջ.

ԱՆՈՒԱՆՔ ԱԿԱՆՑ

Հայերէն.	Արաբերէն.	Թուրքերէն.	Փարսերէն	Յունարէն.	Եբրայեցերէն
Կայծ Եաղութ ԺԶ. գոյն ունի, կարմիրն Գ. գոյն. լուրջն Գ. գոյն. դեղին Գ. գոյն. սիպտակն Գ. գոյն. բայց կայծագոյնն լաւ է կարկեհան ասեն.		Եաղութ քարբուկ	Եաղութ	Րուբինի	Ռուբէն
Սարդիոն դեղին լինի և սեւագոյն կարմիր	Դեղին սէյլան [1]		Պիճայի	Տպազիօ	
Տպազիոն բացագոյն կարմիր	Րավաղ սէյլան, բաց կարմրագոյն	Պիճաաի և տպազիօ			
Զմրուխտ ֆրանկի սիտի կանաչագոյն	Զմրուտ			Ծըմըռալօ	
Հափիւղայ ծիրանգոյն	Ճապալաղում			Ամեթովս	Կրկէհան
Յասպիս դեղնագոյն կանաչ	Զապարճատ			Յիասպ	Յիասպիսէ
Լիգրիոն ԺԲ. գոյն, սպիտակն լաւ է	Ալմաս			Տիոմանթօ	

[1] Սէյլան ասելն ի Հնդուստան մէկ քաղաքի անուն է.

Հայերէն.	Արաբերէն.	Թուրքերէն.	Փարսերէն	Յունարէն.	Եբրայեցերէն.
Ակատ բաղում գոյն է սեւն լաւ է	Ցայնըլհըր				
Ամէթիուստոս ալ գոյնըն լաւ է.	Լալ.			Պալաշխ	
Ոսկեքար խոր ու դեղին և սաֆըն լաւ է	Թիլիա և կամ դեղին եաղութ			Սաֆիր	
Բիւրեղ սպիտակ և սաֆն լաւ է	Պըլօր.	Նաճաֆ			
Գոճաղմ.	Լազուարտ որ է լաճուարտ				

վասն անուանց եւ որպիսութեանց պատուական ականց։

Փայծ, որ է եաղութն, խասխաթն [1] այն է, որ թէ մարդ ի բերանն առնու զծարաւն կտրէ, և թէ զոսկին հալես և զեաղութն ի մէջ հալած ոսկւոյն ձգես, նա չի այրեր և գոյնն չի աւերէր և ոչ պայծառութիւնն, այլ և ասացեալ են. թէ ով որ ի հետն պահէ՝ նա մօտ ի մարդիկ ընդունելի լինի, և զարկուածի լաւ է։

Սարդիոնն, որ է սէյլանն, արիւն որ երթայ լինքենէ, ի քթէն կամ յայլ տեղեաց, որ երկաթի կամ քարի եարայ չլինի. նա զսէյլանն ի յետն պահելն զարիւնն կտրէ, և ի կրակ չի այրէր որպէս զեաղութն՝ որպէս որ ի կրակն մտանէ՝ նոյնպէս և ելանէ, և ոչ գոյնն աւերի և ոչ ճիլայն։ Նոյնպէս և դեղին սէյլանն, որ է թիլայ և պիճատի և տպազիոն ասեն։

Զմրութին ըզսյիտին, թէ որ օձին դէմ բռնես, նա տեսանելուն պէս օձին աչացն ջուր կու իջանէ՝ և կուրանայ օձն, և բազումք են վկայած այս բանիս փոր-

1 Ուձ. բաքըն։

ձեւով բազում անգամ, և թէ զահվարանաւ ի վերայ սմաղի քար լաւ լոսես և յաչքն քաշես՝ զաչաց լոյսն աւելցնէ․ և թէ զմրուխթն ի մատն լինի կամ ի հետն, նա մեասակար թունաւորք չմերձենան ի նա․ այլ և սեաւ խաղ ասեն, որ այլ ի յայն խաղալուն մարդ չի ազատիլ՝ և արիւն ձգելոյ, փորցաւութեան լաւ է, փորձած է։

Յասպիս, որ է զապարճատ կանաչ դեղնագոյն է սակաւ մի, խասիաթն այն է, որ ի յինքն շատ հայիլն զաչաց լոյսն աւելցնէ, և կամ թէ սղկեն ի յաչքն քաշեն զաչաց բորն տանի՝ և ճուտամ զահմաթին լաւ է։

Լիգլոն՝ որ է ալմազ, որ հին և նոր լինի, հինն լաւ է՝ և զամենայն քար ուտէ՝ և կտրէ և ոչ մաշի․ և եաղութի և սէյլանի պէս ոչ կրանայ ի կրակն, որպէս մտանէ՝ նոյնպէս ելանէ ի կրակէն․ և թէ կտրեն զինքն, թէ մեծ կարի և թէ փոքր, նա եռանկիւնի կտոր լինի, կամ քառանկիւնի, կամ վեց անկիւնի․ և սէրթիզ փէրթիզ․ այսինքն գլուխն սուր և թևն սուր․ և արճճով կտրի, զի նօսրացնեն զարճիճն և դնեն զալմաստն ի մէջ արճճին, և բլլեն[1] և. դնեն ի վերայ երկաթի օսրին և երկաթի կռանով հարեն ի վերայ արճճին որ ալմաստն ի մէջն է, կտորի ալմաստն և մնայ ի մէջ արճճին, և չի սփռիլ այսինքն տալլմիշ լինիլ․ այսինքն արճճի գիջութիւնն զինքն ժողով կու պահէ․ յետոյ բանան զարճիճն և հանեն զկտորեալ ալմաստն և բան տանին․ և թէ արճիճ չի գտանի, նա դնեն ի մէջ մեղրէ մոմի, և տասն երկու տակ թղթով բլլեն և հարեն կռանով ի բլած թղթին վերայ, ուր է ալմաստն․ ի մէջն կտրտի ալմաստն, ձգեն զթուղթն մոմովն ի մէջ եռացեալ ջրոյն, հալի մոմն և թուղթն յերեսն ելանէ․ և մնայ կտրած ալմաստն ի ջրոյ տակն, յետոյ հանեն և

---

1 Ուղ․ պատատեն։

ծեծեն ի պողպատ ալմաստի հաւանն և ի բան տանին զի այս լոսած ալմաստովն զմեծագին ալմաստն թրաշ կու անեն հագագներն. և ի հետ պահելն ուրախութիւն բերէ: Այլ և ասացեալ են ի խասիաթի գիրքն թէ, երկու պատերազմողի՝ որ կողմն որ աւելակշիռ ալմաստ լինի, այն կողմն յաղթող լինի, և զստոյգն Աստուած գիտէ. և թէ կինն՝ որ ի ծնունդն յամենայ, զալմաստ քարն ի բազուկն կապեն արձակի Աստուծով: Եւ զայս գործս ունի անդամանդեայ քարն, որ ի ձախ ձեռն բռնէ ծնող կինն. և բազում փորձեալ են զայս:

Ակատն՝ որ է յանըլհըլ, խասիաթն զինչ որ ի յեաղութն խասիաթ կայ ամենն յակատն կայ. զի ի հետ վերցնողն նակբէթ [1] գողութիւն և քոր և այլ այսպիսիք չի լինիր. մալն և շնորհքն չի պակասիր. և մօտ ի մարդիկ ինքն և խօսքն ընդունելի լինի՝ և խեւլաց շահ ունի. և թէ որչափ գինի խմէ նա խելքն զինքն չի թողուր, ասեր են. և ես չեմ հաւատար. զի գինին առիւծի կաթն է, ով որ ըմպէ ագահութեամբ, ի փառաց, ի խելաց, և յապրանաց թափի:

Ամէթիօստոս՝ որ է լալն. խասիաթն այն է, որ թէ ի բերանդ առնուս նա զծարաւն տանի, որպէս եաղութն ունի զայս. և ի յուրախ արար մաջունն թէ ծեծեն և խառնեն նա սրտին ուրախութիւն, և զհոգն և զցնորքն տանի ի սրտէն, և յաչաց դեղերն խառնեն, նա աչաց լուսոյն լաւ է՝ սրատես առնէ:

Ոսկէ քարն՝ որ է թիլայ. խասիաթն այն է, որ թէ բարակ շորով փաթաթես և կայծ դնես ի վերայ՝ չի այրեր շորն. և ով որք որ ի հետն վերցնէ գիշերավախ և յերազոյ անհոգ կենայ և ի չար պատահմանէ ազատի Աստուծով::

---

1 Ուէ. գարշ.

Բիւրեղն՝ որ է պիլօրն, խասիաթն այն է՝ որ ծեծեն և հին խոց լինի ցանեն ի վերայ՝ ողջանայ, և թէ զակռան սրբեն՝ ակռին զժանկն տանի. և ի հետ պահելն վատերազ և գիշերախաբ չի լինի. և ներկուի կարմիր, և կանաչ, և դեղին և զամենայն գոյն ընդունի. և ի կրակն կրանայ՝ և չի դալարիր, և կրացեալն յաչաց դեղերն մտանէ։

Գոճազմն՝ որ է լազուարդ, երկնից գունոյն է կապոյտ, և լաւն այն է՝ որ տամարոտ և սպիտակ չլինի, և ի կրակն զգոյնն չփոխէ՝ և ոսկի նօղտաներ ունենայ, և թէ ի թեզապի ջուրն ձգես զլազուարտն նա նոյն ժամն սպիտակի և լինի որպէս զձիւն. և ի ֆռանկն մաղպուլ է. և մեծ մեծ կտոր լինի. և հազար դրամ կտոր տեսի. և վեց հարիւր դրամն ծախուեցաւ ի Ռժ. թուին ծախուեցաւ ի Հալապ՝ տասն և հինգ ռիալ. և յառաջմէ քառասուն ռիալ էր ծախուեր. յՕզբեկէն կուգայ։

Մարգարիտն յայտնի է և երկու ցեղ է. մէկ ցեղն փուրթղալ, և մէկ ցեղն հարմուզի. և հարմուզի մարգարիտին, շիրին ասեն. լինի և դիւր և փայլուն և ծակն փոքր, այդ է մարգարիտին լաւն. բոլոր հարմուզին, այսինքն շիրին. և փուրթղալն դուր չի լինիր և փայլուն չէ՝ որպէս զշիրինին. և փուրթղալն զշիրին մարգարտին ռուպ գինն արժէ, այրի ի կրակն և կրանայ։

Մարջան՝ որ հայերէն բուստ ասեն, լաւն խոր ու կարմիրն է. և լինի բաց կարմիր, և լինի սպիտակ, և ծառի պէս ի ծովն բուսանի. և փայտի պէս ցեցկերուի, և որդնոտի, և ծակծակի. և թէ ի թթուն ձգեն՝ սպիտակի. և ի կրակն կրանայ և սպիտակի։

Ցեամանի՝ լաւն սեալին է, այսինքն որ թափանցնի, խոր ու կարմիր է՝ և միջակ կարմիր, և բաց կարմիր լինի, և քառասուն դրամէն աւել մարդ չէ տեսեալ,

և ասեն թէ տուն փլելոյ կամ պատ անկանելոյ լաւ է, որ չէ տեսեալ յեամանի հագնողն ի տան ներքեն կամ պատի ներքև մնացեալ. և մօտ Օսմանցիք և Պարսիկք և յամենայն Ռումիք մախպուլ է այս քարս, զի զանունն գրեն ի վերայ և ի մատնին դնեն. բայց լինի սպիտակ գոյն՝ և դեղին, և մայի այլ լինի. բայց խոր ու կարմիրն՝ որ միագոյն լինի և առանց տամարի՝ այն լաւ է. և մատնու քարն՝ որ լաւ լինի երկու ռեալ կամ երեք արժէ։

Աշեղն կարմիր լինի՝ բաց կարմիր, և ալ լինի. լաւն մէկ գոյն լինի և առանց տամարի, գինն յեամենուն ռուպ գինն արժէ։

Օձի քարն չորս ցեղ է՝ սև և դեղին և կարմրագոյն է և այլ գոյներ. լինի որ բոլոր բոլոր վարդ լինի, որ նօղտայ լինի, և լինի որ երկայն և նաղաշ լինի, և ամենայն ցեղն ի յօձու խոլխ կու նմանի, և ամենայն ցեղ օձու քար թէ որ ի դուլ քարի վերայ քացախ կամ լիմունի ջուր դնես, և զայս քարն ի վերայ քացխին դնես և երկու քար լինին օձու քարն, զէտ[1] կենդանիք շարժին՝ և գան ողջուննեն զմիմեանս և հեռանան ի միմեանց. և խասիաթն այն է, որ թէ օձ որ թունէ զմարդ, նա ի վերայ լեսանին սրբեն, պուտ մի խմցնեն և սրբեն ի վերայ թոյնին, նա ի նոյն օրն ազատի Աստուծով. և Հնդիկքն խիստ խիստ կու խնդրեն զայս քարս, և գնով առնուն, և իւրեանց թագաւորն ի թագն և ի մատն զայս քարս կու դնէ, և մէկ մսխալն երկու ոսկի արժէ։

Եւ է քար մի, որ օձի քար ասեն, և Թուրքերէն խարեյիաղ աղշասի ասեն, բոլոր և սպիտակ լինի, ի սատաֆի ջրնսէն է, մէկ երեսն ղուբայ է և մէկէլ երեսն

---

[1] Ուղ. որպէս.

գուր․ և ի գուր երեսն ունի մարղուրայ բարակ սև թել, և է այսպէս խասիաթն նորա այն է, որ թէ ռուպ, որ է պէգմազով ի վերայ օձիկ ցաւոյն կարմիր տեղին դնես, նա կպի ի վերայ կարմիր տեղին, և ութն օր չի փրթիր ի վերայէն մինչև որ ողջանայ Աստուծով։

Եասբ՝ որ է գոյնն կանաչ փէրփէրի գոյն, և կայ ի յինքն կարմիր կէտեր շատ, և մօտ Փռանկն մախպուլ է, և պինդ է ի բանելն, և շատ է, ամեն տեղ կայ։

Խամահլի՝ որ է երկաթ չինի․ որ է սանկհատիտ՝ և Հայերէն սղուն քար ասեն, և ծիրանի գոյն է ամենն․ և երբ որ ի լեսանն սրբես նա կարմիր ելնէ, և կայ որ ալ ելնէ սրբածն, և կայ որ մուխ լինի, որ է ծիրանին, և դեղին ելնէ, և սպիտակ ելնէ, բայց կարմիրն՝ որ ի սրբածէն ելնէ, ուռուցի լաւ է, թէ վարդի ջրով ի լեսանն սրբես և զսրբածն ի վերայ ամենայն ցեղ ուռուցին սրբես, նա օգտէ Աստուծով։

Ճզահ՝ որ Թուրք պապաղօրի ասէ յամեն գունեըուն շաղկապեալ է յինքն և յՅամանու երկրէն ելանէ․ և ի Փռանկն մախպուլ է և մեծ մեծ լինի՝ և չոր է և պինդ։

Մղնադիս՝ Թուրքերէն մըլատուզ՝ Հայերէն անդամանդ՝ սևագոյն է, և յայտնի է, թէ որ ի հետն պահեն նա ջղացաւին լաւ է․ և այլ զբևեռն ցուցիչին զխաղիչն այսով առնեն․ և Թուրք ղպլայ նումայի ասէ՝ որ է հարաւացոյց․ և զերկաթն յինքն քաշէ և անշարժ հօգի են ասացեալ այսոր․ և թէ որ մէկ գիշեր դնես զայս քարս և զԹուրն կամ զդանակն ի մէկ տեղ, նա վաղուն այն Թուրն և դանակն զերկաթն ի յինքն կու քաշէ, և արժան է ամեն տեղ։

Յեաշմ՝ ամեն լեզուաւ յեաշմ ասեն՝ լաւն սպիտակ թղթի գոյն է, և այլ ցածն պաղլամին՝ և ախմարաց փերփերի գոյնն և ձիթապտղի գոյն՝ և այլ ցածն սևն՝

և տամարոտն ամէն գոյն լաւ չէ, և լինի, որ երեք հազար դրամ և այլ աւելի լինի մէկ կտորն. և մօտ Թուրքն մախպուլ է՝ և սպիտակն ի Պարսիկն մախպուլ է, և սպիտակին խաթայի ասեն, ի յաշխարհու Հնդկաց երկրէն գայ. և ասեն թէ կայծակի լաւ է՛ որ տեղ որ լինի կայծակ չի ընկներ. սպիտակին սաֆն՝ որ հարիւր դրամ լինի, չորս ռեալ արժէ. և այլքն ցած գին արժեն։

Նիլում. յարապի՝ ֆըհամ ասեն. լաւն սաֆի է՝ լուրջ գոյն ունի՝ և ի Թափանձի՝ և ի լուրջ եաղութ նմանի. բայց ջուրն չի խաղալ զերդ եաղութ, և մեծ երկու և երեք մսխալ այլ կուլինի՝ և արժան է։.

Սէյլմանի՝ որ է տակ տակ, մէկ տակն սպիտակ և մէկ տակն սև. և մաւրին և սպիտակն լաւ է. և խիստ պինդ է ի բանիլն, և մօտ ի ֆռանկ պատուական է այս քարս։

Սեպաճ. է սև քար և թեթև և խիստ խորուս, սև է գոյնն, և թէ ի ջուրն ձգես նա ի ջրին երեսն եղնէ. և իւր խասիաթն այն է՝ որ թէ ի փոքր տղեկան աչաց դէմն կախեն ի օրանն, նա զփոքր տղեկան լուրջ աչքն սևացնէ. փորձած է՝ և հայիլն ի յայս քարս զաչաց լոյսն աւելցնէ։

Տէհնէ ի ֆռանկի, որ արապի տըհնէճ ասեն, թէ քացխով կամ լիմնի ջրով ի վերայ ջօհարդար դանկին որբես՝ նա ոսկեգոյն կամ արծաթի գոյն ելնէ ի դանակն, ինքն քար է կանաչ և ֆսթուղի գոյն նօղդա մի կանաչ, և ոսկեգոյն որ ելանէ սրբածն՝ լաւ այն է, և ի յաչաց դեղերն կումռանէ, մէկ մսխալն երեք ռեալ, և չորս ռեալ արժէ՝ և ի կրակն չեմ փորձեր։

Փիրուզայ, երեք ցեղ է՝ իսհաղի՝ նշապուրի, և շպապէճի, լաւն սաֆն է՝ որ առանց տամարի լինի, և գունով իսհաղինէ, և այլ բացագոյն նշապուրին է, և շպապեքին սպիտակագոյն, շուտ ծերանայ և կանաչի.

ասացեր են վասն փիրուզայէն՝ թէ ով որ ի մատն հագնի՝ ի դրամէ պակասութիւն չքաշէ. և խօսքն ընդունելի լինի, և չէ պարտ հագնողին որ անպատեհ խօսք խօսի, և մտածէ, թէ փիրուզայ եմ հագել, խօսքս ընդունելի է, և կու այրի ի կրակն. և իսհաղին՝ որ թէ միջակ բակլայի չափ լինի, յիսուն ռեալ արժէ, և նշապուրին կէս գին արժէ, և շպապեքին երկու դրամ արծաթ արժէ։

Մղնադիս Փզայ՝ որ է արծաթի քաշօղ, որ զարծաթն ի յինքն քաշէ, թէ հանց որ ոսկւոյ և երկաթի և պղնձի և այլ խարդուք որ ի մէկ տեղ լինի, նա այս քարս զարծաթն կմբռնէ՝ որպէս մղլադուզն զերկաթն. և ժանկահարի գոյն է այս քարս. և Թափանցնի, և սուղ է, և Հապաշու երկրէն կուգայ. ապա Հընդիկքն խիստ կուղեն զայս, և ասեն մղնադիս Փզայ, որ է արծաթի անդամանդ, և զարծաթն քաշէ յինքն որպէս զագահ մարդ, որ միշտ արծաթասէր և արծաթքարշող է։

Զայս բանքս, ոյք վասն ականց են՝ զոր ահաւասիկ գրեցաք, այժմու ժամանակին ժամանեալ ոմն քահանայ Սարգիս անուամբ ի մերս ազգէ, հմուտ և տեղեակ բանից գրոց, որ բնակեալ էր ի քաղաքն Բերիայ՝ որ այժմ ասի Հալապ։ Եւ էր կարի վարժ ի լեզուն Արապի, և Օսմանցւոյ և Ֆռանկին. այլ և ծանօթ Հոռոմի լեզուին և Ջհտի լեզուին. և էր ինքն արուեստիւ ակնագործ՝ որ զպատուական ակունս հարթէ և շինէ. այլ և գնող և վաճառող սոցին. և եղև ի գնալն մեր յերուսաղէմ յորժամ հասաք ի Հալապ՝ պատահեցաք այս Սարգիս քահանային, որ ի կարգս զրուցաց հանապազ խօսէր ընդ մեզ զօրպիսութենէ ականց՝ և բանք նորա իբր զհաւաստի թուելով ի միտս մեր աղաչեցաք զնա թէ զայդոսիկ՝ զոր բանիւ ասես, գրով շա-

րադրեալ տո՛ւր մեզ վասն օրինակի, և նա վասն մերոյ խնդրոյ գրեալ ետ, և մեք վասն հասարակաց օգտի ի մէջ այս պատմագրիս շարակարգեալ գրեցաք։ Նախ զի մեր է խնդրեալ. և երկրորդ՝ զի նորագիւտ է բանս. և ի ձէնջ պատահող՝ այդ խնդրեմք, նախ՝ մի առնել մեզ ժամահանս, և երկրորդ՝ ասել Աստուած ողորմի Տէր Սարգսին այնմ և մեզ. ասեմք և մեք՝ և ձեզ ամէն։

Իսկ որք զկնի գրեալ բանքս են՝ որ վասն ականց, յառաջ ժամանակաց կայր օրինակն, զայն ևս ի սոյն կարգ դասեալ գրեցաք վասն օգտի ընթերցողաց, ի փառս Աստուծոյ։

ԳԼ. ԾԴ.

Այս Է գիրք Ջօհարներուն որ կան ի վերայ աշխարհի՝ Թէ յոր տեղաց հասլ կու լինին՝ նախ եւ առաջին ալմաստն:

Ալմաստն, տասն և երկու ազգք են. յերկուց տեղաց կու ելանէ, ղատիմին ի Ջուլումաթէն է։ Ասացին թէ Աղէքսանդր գնաց ի Ջուլումաթն ի լեռան մի տակ հասաւ, յանկարծ ձիոյն նալն զլղաւ, հարցաւ թէ զի՞նչ լինի այս. իմաստունքն, որք կային ի հետն՝ ասացին թէ ալմաստ է, յերկնից ցօղէն հասլ լինի։ Աճամն խուդայի կասէ դորա. ասացին Աղէքսանդրի՝ թէ այս լեռան յետևն աւազուտ դաշտ է, ամէնն ալմաստ է և անմարդաբնակ է, և թռչնոց ի զատ այլ իրք չկայ ի հոն։ Աղէքսանդր ուզեց ի յայն ալմաստէն. ասացին թէ հեծեալքն թող ի լեռան գլուխն ելնեն՝ և ի լեռան գլուխն անասնոց լաշ ձգեն. նա ի հոն

մեծ Թուշունք կան, ալմաստն կու կպնայ ի լաշերն, կառնուն Թուշունքն ու կելնեն լեռան գլուխն նստեն ուտեն, նա հեծեալքն երթան Թռուցաննեն՝ ինչ որ կպեր է ի լաշերն, ամէն ի հոն կու մնայ, և այնպէս առարին որչափ կարացին. այն ալմաստն խիստ ղիմաթով է, և այլ մարդ ի հոն չէ գնացեր. և այժմուս ժամանակիս ինչ որ հին ալմաստ կայ, յայն ալմաստէն է։ Ի Հնդկաց երկիրն կասեն Թէ խիստ ղիմաթ ունի. ապա ի ամէն աշխարհ ղիմաթ չունի մօտ ի Ջուհարիք. կրակէն կու ելնայ, քան զնորն աղէկ է, ու վեց Թարկ է յոր կողմն շրջես երեք Թարկ կու երեւնայ, Ջօհարիքն ասացին Թէ քան զտասն և մէկ ղէրատն ի վեր չի լինիր, շատ սուտ է, քսան և երկուսն էլ կու լինի՝ չեն տեսեր Ջօհարիքն հին ալմաստ։ Ապա նոր ալմաստն ի Կուծրաթ, ի Տաքան, ի Քալբարկայ, ի մէջ Մահուռոյ Տելեպեճանայ, Կարուճանի, Փոռայ կելնայ, երեսուն ու քառասուն ղիրաթ կելնայ, կու փորէն քանց խոր, ու տամար ունի, ի մէջ տամարին կու լինի՝ կու հանեն լուանան, ի հողի միջեն կու ելնայ, եօԹ ռանկ կու լինի՝ հինգ ցորենն մէկ մանճալի կասեն, կու ելնայ Նաբաթի, ղէյթի, Ֆստղի, պիլօրի, դեղին, կարմիր, սեւ, քանց ամեն աղեկ Նաբաթին է. ու պիլօրին, յետև նորա՝ զէյթին, Ֆստղին, այլ պաղկքն քան զեսոնք չեն, ալմաստին ղիրաթն հինգ ցորեն է՝ ճօհարներուն Թագաւորն ալմաստն է, երկու ղիրաթ Նաբաթի կամ պիլօրի աղեկ ջրով՝ որ լաքա չի լինի ի Քալպարկայ, երկու Ֆլօրի առնուլ կու լինի. ու Ֆռանգի քառասուն Ֆլօրի ծախել կու լինի. Թէ մուշտարի լինայ՝ այլ աւելի. Թիրաշէն ելնու ծակելն, զատ ի Ֆրանկն էլ մարդ չի գիտնար։ Թրաշ եղածն՝ չորս ղիրաթն տասն հազար օԹմանի ծախել կու պիտի։ Ֆրանգն ի Հալապ կարչի ճոհարներու Թագաւորն է ալմաստն, ամա առանց Թիրաշի իրք մի չէ, էնոր համար որ ի քարերն խառնակ շատ կել-

նայ․ հաղի թրաշ չեղնայ մալում չի լինար, թէ խա-
սիալթն հարցանես՝ նա մարդ որ ըռանկն մաստանայ լի-
նի, նա ալմաստն տանի, ու թագաւորաց քաղցր երե-
նայ, ու խօսքն ղապուլ լինի, ի չարէ չվախենայ, փոր-
ցաւութիւն չքաշէ կամ քեր չի ժաժի․ մոռացկոտ չլի-
նի, տայիմ կենայ, թէ ուզեն որ մանրեն ի վերայ սալի
ու տան մարդոյ, մահադեղ է։

Եաղութի գիրաթն չորս ցորեան է, եաղութն յեր-
կու իրաց հալ կու լինի․ դաղիմի ի սէյլան հալ կու
լինի, կղլի մի է Դ․ ֆարսանք լայնքն է, Դճ․ ֆար-
սանք երկայնքն է, այն լեռանն Սալանդիբ տաղի կասեն։
Ադամ ի յայն լեռանն՝ կասեն ի դլխատէն իջաւ, ասեն
այն շնորհիւն եաղութն ելաւ, յայն լեռնէն ի զատ այլ
տեղ չի լինիր․ հանց իմացիր որ չորս գոյն ունի, կար-
միր ու լուրջ դեղին ու սպիտակ․ կարմիրն եօթն գոյն
է, ծովագոյն, նռնագոյն, արղաւանի, տուլտի, խըմրի,
քացխի գոյն, պալխի։ Ու լուրջն հինգ գոյն է․ երկնից
գոյն է, լեղկի կանանչ կուզարկէ, նախ դեղինն չորս գոյն
է՝ մոմի, թուրնճի, յերդի, պլօրի, այսոնք շատ հալ
կու լինի, ապա ղիմաթ չունին, է նոր որ դեռ խամ է․
Ծովագոյն կարմիրն թամամ այարն ջրով որ Ի․ ղիրաթ
լինի, ԲՌ․ ֆլօրի արժէ․ զատ ի Սէյլանայ մադանէն այլ
տեղ չկայ, և ոչ ի Խորասան, եաղութ լուրջ գոյն թա-
ւուսի ունի ու Օսմանի ի Հնդստան ղիմաթ ունի․ զե-
րայ Հնդիկքն թագպանտի գլուխն կապեն․ ու դեղինն
ի Շրվան գին ունի, ուշտկի խիստ աղեկ է, ու դեղնի
ճանաչելն դժար է․ զէրայ ֆռանկն զպլորն կու ներկէ,
որ եաղութէն չի ճանչուէր, աղէկ մարդ պիտի որ ճանչ-
նայ, հանց իմացիր յայնըլհըր իւր ջընս եաղութ հալ
կուլինի, ու թիրմիլ կանաչ կարմիր հալ կու լինի, կա-
սեն թէ զապրաճաթն այլ յիւրմէն հալ կու լինի․ այն
տեղն՝ որ եաղութն հալ կու լինի, ջրոտ տեղ մի է,

մարդիկ քանց խոր կու փորեն, աւազուտ տեղ մի է, կու լուանան, կահ կահ քար կու ելնայ՝ որ կանաչ ու սպիտակ թէլերես, տամար կու լինի փայլուն իմացիր այն հուր։ Ա. մարդ ղունար կանաչ ջրով, որ ամէն դեհ շրջեն հանց կասես որ ամէն դեհաց ջուր կու կաթէ, նորա գինն Գժ. ֆլորի է, մինի ու սէյլանի մատանէն հալ կու լինի, ղիմաթ չունի, Ժ. ֆլօրին ի յԱրապըստան գին ունի։ Ապա եաղութի նոր մաղանն մօտ ի Պանտալին Պանկալայի ծովեզերն հալ կու լինի։ Պանկաւ կու ասեն ճզիրա մի է, եաղութն որ աղէկ ջրովն կանաչ գոյն ու նռան գոյն, ի յայն ճզերայն հալ կու լինի, մանրուր է ըրքնակի որ քարպիկ կակուղ է, ի կրակէ ի դուրս չի ելնար, սէյլանն քանց այն այլ աղեկ է, մօտ ի Ֆռանկն պինդն ու կակուղն մէկ է, համան լաւռանկ թող լինի, զեաղութն ջրով ու նռան գոյն կուզեն, ի կակուղն չեն հայիր։

Լալն՝ իմացիր որ յառաջ ժամանակն լալ չկար։ Թագաւոր մի Ջէմշէտ անուն՝ ի նորա ժամանակն ժաժք եղաւ, որ շատ մարդիկ մեռան, մօտ ի Պալաշխանէ բարձր լեառն մի կայր, ի ժաժքէն պատառեցաւ այն լեառն՝ Աստուծոյ սքանչելեօքն լալն ի հօն երեւեցաւ, այս աղեկ լալերս որք կան ի մարդիկ ի մօտ, ի յայն լեռնէն այլ տեղ չկայ այնոր պէս, օր ամեն Գժ. տարի ապա մէկ անգամ ի դուրս կուգայ. ապա լալն եօթն գոյն ունի, ասֆուռի, ռամանի, աթաշի, յունանի, խմրի, աղրապի, պասալի, գիտացիր, որ ԺԱ. ղիրաթ թամամ այար լինի, նա Խ. ֆլորի արժէ, ապա թէ Գ. կամ Դ. ղիրաթ թամամ այար այս վառան լինի, փաք ղիրաթն Ե. ֆլօրի արժէ, ըռամանին ու աթաշին ի դորա կէս գին արժէ, ու պասալին էլ։ Գիտացիր, որ լալի խասիաթն տաք ու չոր է, ասացած են իմաստունքն՝ թէ ով որ ի հետն լալ պահէ, ամեն մարախլի աղէկ է, միջացաւի լաւ է.

մարդկանց աչքին աղէկ երևնայ, վատ երազ չտեսնու, տղայոց հետ պահելն չէ լաւ, դիւաց այլ աղէկ է, ի մաջուն խառնեն ուրախ առնէ, երեսի գոյնն կարմիր լինի, մատայ բանայ։

Զմրուխտն, երեք ցորենն մէկ ըռթլ է, ըռթլըն կու ծախուի, իմացիր որ յառաջ ՌՇ. տարի յերկու բանէ հասլ լինէր, և իւր մատանն Մսրա մօտն է, էն զըմրուխտի գինն ՇԺՋ. ըռիթլ լինի՝ ֆլօրի է, ապա այս զմրուխտս որ ի մարդկանց ձեռն է, ի Ֆռանգստան հասլ կու լինի, այլ տեղ չկայ։ Գ. գոյն է, ըռզիանի, ռեհանի, բանջարի, ռեհանին ու բանջարին աւելի գին չունին. ապա ըռզիանին մէկ մթղալն ի Հնդստան ԲՃ. ֆլօրի գին ունի, ռամանին այլւի այն գինն է։ Հանց ասացին թէ զմրուխտի թապիաթն պաղ է և չոր, և այլք ասացին թէ աղէկ է, ով ոք ի հետն պահէ աչաց ցաւ տեսանէ, լոյսն աւելնայ, երկարաժամանակ լինի, հաւկուր չլինի։ Ասացին թէ զմրուխտն փանիզահրն քանց ամեն զահր է, մարդոյ որ զահր տուած լինի։ Բ. զիրաթ ռամանի ուղտի կաթնով տան, նա ազատուի Աստուծով, քրտունքն ի դուրս ձգէ՝ և թէ վիշապ օձ տեսնու, ի դիմաց բռնէ, աչքերն պատառի, կարիճ կամ օձ խայթէ, վարդեջրով հմնեն ի վերայ քսեն ողջանայ, ցնորք չքաշէ կամ հոգայ։

Իմացիր որ մարգարիտն Գ. բանէ ի դուրս չէ, ի պահրի ղատիֆ հասլ եղաւ. Ճզիրայ մէլ կայ Ղեսիմալաքան մօտ, ի ղատիֆ լաւ մարգարիտն ի յայն Ճզիրայն է, մէկ այլ Դահլթեռեհ մօտ ի Պանկալայ Քապուլ, մանշուր է ի՛հոն շատ հասլ կու լինի, ապա մէկ մթղալ կամ կէս մթղալ պակաս կու գտնուի, ապա մանր շատ կու գտնուի, մէկ այլ ի Մսրայ մասն կայշաման ծով կայ, բոլորն բանտարներ ունի, շատ կու բերեն. իմացիր որ դորա Ջանավարն քանց հաւ է, ու սերմն

քանց ձկան կու ձգէ ի ծոծն, սաղափն ի նորա սերմանէն հասլ կու լինի. երբ անձրև գայ, ի Մայիս ամիսն լինի, ելնան ի ծովու երես տաքնան ու գոյանան, և գիշերն երթան ի ծով, մինչ ի Խ. օրն հանց առնեն, ապա գոյանան, խացակն ու դեղինն ի տարէն եղանակէն է, գիտացիր, որ Ը. ղիրաթ դումաշ լինի, արժէ Ջ. Փլօրի. թէ մէկ մթղալ լինի սպիտակ քաֆուրի, ՌՇ. Փլօրի արժէ, չորս ղիաթն Կ. արժէ, Բ. ղիրաթ սպիտակ քաֆուրին Խ, արժէ, դեղին գոյնն մոմին գոյնն գին չունի, թէ հարցանեն այս ծանրութեան մարգարիտն ինչ արժէ, հարի չտեսնուս գին չգնես, խասիաթն սուր է ու թաց է, շաւքօռին աղէկ է. աչից եռալուն, թէ ալաջայ լինի մարդ, սղկեն ու քացախով քսեն ողջանայ Աստուծով:

Իմացիր՝ որ փերուզայն, ի Դ. ելաց դուրս չէ, իւր մադանն ի Նշաւուր է, աղէկն ու ղիմաթոծն ի հոն կու լինի: Բ. մադանն ի Խոճանտէ, այն էլ Հանց որ Ե. Փլօրին պակաս չի լինիր: Գ. քանն ի Քիրման ի գեղն Շահպուաքէ քանց առաջինքն չեն արմուխ ամեն Դ. քանն իսպիրէ ղիմաթ չունի՝ քանց նշանաւոր այդ աղէկ չկայ. աղէկն սաֆին՝ Ի. ղիրաթն ՌՃ. Փլօրի արժէ. ու սաֆի աղէկն մէկ ղիրաթն մէկ Փլօրի արժէ, ապա զաւալն ի մչկէն է, ի թացէն, ի կրակէն, ի քաւուրէն թէ պահեն, իւր գոյն չի երթայր. Ջօհարիք ասացին թէ քանց ամեն քարերը աղէկ է, շատ խասիաթ ունի, ով որ հետ պահէ խշմ թագաւորաց չտեսնու, վաղմնէքն ի նա հայի, հոգ չի քաշէ, աչաց ցաւի աղէկ է, ժամանակ երկայն՝ պարաքաթի, մալի, վատ վատ երազ չի տեսնու:

Փանզահր ի հետ պահելն շնորհաւոր է, մաթօլի հայաթ կասեն, որ շաբաթն վեց ղիրաթ հարնէ ի վերայ քարին ուտէ իւր ժամանակն ՃԻ. տարի լինի, ցաւ չտեսնու. ով ուտէ կամ ի հետ պահէ սրտով լինի, վատ

աչք չբանի, օձ կամ իժ չխայթէ, ուտողն վարդի ջրով հարնէ ուտէ էլմով՝ յակռան չի հասնի, զարար է, թէ ասես ուստի՞ հասլ կու լինի. նա լեռն մի կայ Շիրազայ մօտն՝ Շապան քար կասեն, այն լեռանն որձ եզան կու լինի, մեծ կոտոշներ ունի, այլ խոտ չի ուտէր՝ Շապան քար կասեն այն խոտէն ի զատ այլ խոտ չի ուտէր, այն ունի զփանզահրն ի փորն։ Խաս մոմիայն այլ յայն լեռն կու լինի, խոր ու ձոր մի կայ յայն քարերուն կու կաթէ, տարին Ռ. մսխալ անճախ հասլ կու լինի, խասիաթն այն է՝ որ ի բարձր տեղաց անկեալ լինի ու խորտ, նա կէս մսխալ խմցնեն ողջ լինի։ Այն տեղն թագաւորական է. Ճ. ղօչէն ապա մէկ ղօչ հասլ կու լինի, այն որ ունի, լաղար է ու մեծ կոտօշներ ունի, և ի մէջ ծրորվին կու լինի ու կակուղ է, երբ ի բերան դնեն քար կու դառնայ, թէ Ժ. մսղալ լինի Բճ. Ֆլօրի արժէ, և թէ երկու կամ երեք մսղալ լինի ԺԵ. Ֆլօրի արժէ։ Շատ կան որ ամալի կանեն, կամիս որ գիտնաս՝ հարէ ի վերայ քարի, թէ սպիտակ ելնայ՝ ամալի է. թէ այլ գոյն ելնայ՝ նա հաւան է։ Փանզահրի տեղն առ նա վէտաճրիպան կրով քսէ ի ձեռնդ, դեղինն աղէկ է, կրակն թէ ծուխ եղաւ, ի տեղն իրք չմնաց, աղէկ է, թէ հող մնաց վատ է։

Այլ եւ բան վասն փանզահրին։

Հաջար ըլլթէս՝ որ է Փանզահրն և հայք թունադեղ ասեն, և ասոր բնութիւնն զաւագ թրիաքի բնութիւնն ունի, և կերպն նման է կաղնւոյ պտղի, և երկայնուկ և բոլոր լինի մէկ մէկի ներքև տակվի տակ է, մէջն որպէս կուտ է և գոյնն այս քա-

րիս հողի գոյն է, և ի սևութիւն զարնէ և քիչ ի կարմրութիւն, լաւն այն է յորժամ կաթնով ի վերայ քարին քսեն կարմրագոյն լինի, և այն որ լաւ չէ երբ որ տրորեն գոյնն կանաչ կու լինի, և զինքն ի վայրի քոշի փորն կու գտնուն, ի Շիրվանու դեհն կու լինի. և բժշկապետերն խօսք շատ են ասեր, և հաքիմարանիս շինողն ասեր է թէ այն եղին կերակուրն քան զօձ քան զմուխալ ասեն՝ այլ կերակուր չունի. և այս պատճառաւս այս քարս կու կապվի յեղին փորն, և այնոր համար թիրեաք Ֆառուխ կասեն, և այս քարիս հարելոյ գոյն շատ կու լինի չէ լաւ. ապա լաւն այն է, որ հարեն կարմրախառն սևագոյն զարնէ, և ի Շամ զերդ զայդ փանզահրդ կու զուգեն հանց որ մէկմէկից բռանց կու ճանչվի, և իւր փորձելն այն է՝ որ զասեղն ի կրակն դնեն որ կարմրի, ապա կոխեն ի վերայ այն քարին, թէ շինուածու է, սեաւ ծուխ կու ելանէ, թէ սայդ փանզահրն է նա, դեղին ծուխ կու ելանէ։ Թէ զինքն բռաղիանի ջրով տրորեն և օծեն օձահարի օգտէ, և յայն պահն զցաւն խաղաղցնէ, և օգտէ ամենայն գազանահարի և զչարութիւնն խափանէ, և թէ ԺԲ. գարէ քաշ տան օգտէ սրտին վատուժութեան և անձինն ուժ տայ լաւ, և իւր առնելուն չափն կէս դանկ է. ով ամեն օր ասկից կէս դանկ ուտէ, խլսի յամենայն չար վտանգէ՝ և յամենայն մահացու դեղոց և տաք բնութեան էլ օգտէ. այն պատճառովն որ այս խասիաթն կու գործէ զբանն ոչ բնութիւնովն և այս դեղիս բնութիւնն խիստ տաք է՝ գիտացիր։

Հանց իմացիր որ ամպարն ի ջօհարի կարգ չէ, ապա ի ջօհարի կարգ բան ածի, յՆամանի ծովերեսն կու լինի։ Զուլումաթն քանի մի կղզի ի հոն ծառեր կան, յայն ծառերուն քանց տըփս քանց մեղր իջնու. խիստ շատ ճանճ կիջնու ի վրան, կու իջնու ի ծառերուն շատ

որ քանց առաւելնայ ելթայ ի ծովն, ի ծովու երեսն քան զմոմ բռնէ, յեզր զորկէ, մարդիկ ի շուռ գան ի ծովեզրն, ու ժողովեն Ե. լիտր ու Ժ. անգամ մի պազրկաներն քանց քար մի գտան, որ մարդ չէր հանդիպէր ի վրան քան զքար էր դարձեր։ Գիտացիր՝ որ ամպարն Դ. ազգ է, շամամի, խաշխաշի, ու Թափաղի, և Ֆստղի։ Շամամին բոլոր կու լինի, երբ կոտրեն ի վերայ նա քանց խաշխաշ կու լինի. և խաշխաշին էլ այնպէս. Թափաղին էլ սպիտակ է մէջն ու ամուր է։ Ֆըստաղին կակուղ է. շամամին իմանամք Ժ. մսղալ Ե. Ֆլօրի առնուլ կու պիտի, և յայլ տեղ ծախես նա ԺԵ. և այլ աւելի կու բերէ, Խաշխաշին չորս Ֆլօրի առնուս ԺԲ. կու ծախուի. Թափաղին ու Ֆստղին Բ. Ֆլօրի գնես վեց արժէ յայլ տեղ. ամպարն անոյշ հոտ ունի, զմարդոյ դամաղն անուշ պահէ, սաւդան տանի, աչաց աղէկ է, քերի գլխացաւի աղէկ է։

Լաջվարդի քանն ի պալաշխանն է. ի Քաշէլ կու լինի՝ ամայ ամայի է, ինչ որ ի տներն կու բանին Քաշի է. ի Շամիշայդ սևագոյն քար մի կայ սղկեն ու բերեն ծախեն, ի կրակէն ի դուրս չելնայ. պալաշխին Ժ. օր ի կրակն կենայ չի աւերիր՝ զէրայ ջօհար է. հանց իմացիր՝ որ աղէկն քանց հաւկիթ կեղև ունի սպիտակ ու կակուղ. Ճ. մսղալն ԻԵ. Ֆլօրի արժէ. խամն էլ վալայ վալայ կու լինի. Ճ. մսղալ լուանան ԻԵ. մսղալ կենայ. ով գիտէ լուանալ շատ շահ ունի, անլուայն քանց Քաշի է. ամալին ու պալաշխին կրակն գիտէ. աչաց աղէկ է քանց ծարիր քաշելն յիստակ պահէ. Ճինար ցաւի աղէկ է. միջացաւի ի Թարքիպ ձգէ։

Մարջանն Գ. տեղ կու լինի՝ ի քաղաքն Թուսէ ի Մղրիպայ դեհն է. այլեւ ի ծովէն կու հանեն քանց մարգարիտ, քանի որ ի ծովն է՝ կակուղ է, երբ հանեն ի դուրս ամրանայ. քաղաք մի էլ կայ ի Ֆռանգստան

Քիսայ կասեն ի հոն էլ կու լինի։ Ի Հրմզայ պանտարներն էլ կու ելնայ սև կու ելնայ, ուսր կասեն. նորա սպիտակն իրք մի չէ. կարմիրն նա Թրաշն ի Կուճրաթ գլին ունի. Թրաշ եղածն ի յարևելք արծաթի հետ բարեբար առնուն. խասիաթն մոռացկոտին աղէկ է. գլուխն չժաժի. սրտի ուժ տայ, Թուլթիայն խառնեն աչաց աղէկ է։

Աղեղն յերկք տեղ կու լինի, յԵաման Բ. ի Կուճրաթ, Պարվաճ շատ հասլ կու լինի, Գ. ի Քալպարկայ. քանց յԵամանին չեն. եամանի խասիաթն յինքն հայիլն չար կամին աղէկ է, դղացկանի հետն աղեկ է։

Ցեաշմ ի մէջ Խաթայու և Չինայ գետ մի կայ իւր քարերն յեաշմ՝ Ե. գոյն ունի. սպիտակ, զէյթի, կանաչ, սև, ըռզխանի. զէյթին քանց ամեն աղեկ է ջօհար է. յայնտեղն ով որ ի հետ չի պահէ նորա էհտիպար չեն էներ. տարին ԵՌ. Փլօրի հասիլ կու լինի, ով հետ պահէ ժաժք չի լինի, մարդոյ սիրտ չի Թռնայ, կայծակի աղէկ է։

ԳԼ. ԾԵ.

Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ ծարեցի Յովհաննէս վարդապետին։

Իսկ արդ յետ երկոտասան ամի կենաց իմոց նուաստս Յօհաննիսի՝ որ ծանեայ զիս. բայց վայ ինձ զի զպատուիրանաւն Աստուծոյ ոչ գնացի։ Եւ ի մերս Հայոց Թուականի ՌԻԱ. էր ամն Թագաւոր Ասորպատականի ի յայլ ազգաց Դահման անուն շահ կոչեցեալ կարմիր գլխոց. յոյժ խաղաղասէր և անագահ մինչ ասիւր ի ծերագունից Թէ զհնգետասան ամի հարկն ոչ

է առեալ յերկրէ իւրմէ, այլ և զբաջ վաճառականաց, և զմաքս, զոր վասն իւր ի գանձի իւրում ժողովեալ լինէր. եբարձ յաշխարհէ տէրութեան իւրոյ: Այլ և կանայք լկտիք՝ որք ի քաղաքին նստէին և հրապարակայայտ զբազում խոտորեցուցանէին, և հարկս տային յարքունիս, և զանասելի ոճրագործութիւն սոդոմական ախտիցն բնաւորեալ ի պարսիկս, զայն ամենայն վճիռ հրամանաւ խափանեաց և ուր ուրեք թէ երևէր՝ չարաչար տանջանօք սպանանել հրամայէր, և ի մերում թուիս ՌԻԴ. մեռաւ ասացեալ շահն, թագաւորեալ ամս ԾԱ:

Եւ ոմն ի յորդւոց նորա Իսմայիլ անուն, զոր յառաջագոյն ի հօրէ իւրմէ արգելեալ կայր ի Կլայ վասն իւրաց ինչ յանդգնութեան, և այժմ ելեալ թագաւորեաց ի տեղի հօր իւրոյ. և սուր ի գործ արկեալ սպան զեղբայր իւր հարազատ՝ թուով եօթն. և սկսեալ զնախարարս զօրաց իւրոց սպանանել, զոմն յայտնի և զոմն գաղտնի. մինչ գրեթէ սպառել ջնայր զամենայն ազգն Պարսից. և զայս ծանուցեալ տիրատեաց Պարսիցն թէ հասեալ է կորուստ անձանց իւրեանց: Ոմն Ամիրխան անուն իշխան Թարվիզու, և Մահմետ ոմն իշխան Արարատեան գաւառին, մականուամբ Թոխմախ կոչեալ. և այլք ոմանք՝ զորոց ոչ գիտեմ հաւաստեաւ զանուանս նոցա, միաբանեալ ընդ արբանեկաց Իսմայիլի սպանին զնա ի գաղտնի. ոչ գիտելով զօրաց նորա զմահ նորին Իսմայիլի. և ի դիւան դատաստանի յոչ նստիլն ասացեալ լինէր յոմանց, թէ ի լրտեսութիւն գնացեալ է յայլոց թագաւորար վիճակ դառնալոց է մինչև ի յամ մի, զայս կարծեցեալ լինէր. և յետոյ ստուգիւ իմացեալ ամենեցուն զկորուստ նորին:

Եւ դարձեալ ամենեքեան միաբանեալ գնացին ի Խորասան, և բերին զոմն Խուդաբանդայ կոչեցեալ շեխ

գոլով եղբայր Իսմայէլին, և որդի նոյն Թահմազ շահին կարգեալ ի Հօրէն իւրմէ տէր աշխարհին Խորասանայ, զնա Թագաւորեցուցին ի տեղի Իսմայիլին. բայց անարի և վատթար ի գործ թագաւորութեան և պակասեալ ի լուսոյ ևս։

Ի սորա յերկու ամի իշխանութեան թագաւորն Բիւզանդիոյ ազգաւ Օթմանի Մուրատ անուն որ և խոնդքեար ասի, հրաման եհան զօրաց իւրոց գալ ի վերայ աշխարհիս կարմրագլխոյն. և ելեալ ոմն զօրագլուխ Լալայ կոչեցեալ բազում զօրօք եկն և եհաս յերկիրն Արարատեան, և գերեաց ընդ Հայ և ընդ Տաճիկ՝ թուով ԿԸ. և տարեալ խաղացոյց յերկիրն Հոռոմոց. և ի միւս ամին դարձեալ շարժեալ խաղաց ի վերայ Վրաց և հասեալ ի Փայտակարան քաղաքն, որ է Տփխիս, և շինեաց բերդս ի նմա և ամրացոյց, և եդ անդ արս բազումս պատերազմողաց։ Եւ զոմն Բագրատունի թագաւոր Վրաց Սիմոն կոչեցեալ, որ երբեմն վասն անհնազանդութեան ըմբռնեալ էր ի յառաջ ասացեալ Թահմազ շահէն՝ և տկարացեալ ի հաւատոցն, և կայր առ նա ընդ ձեռամբ։ Իսկ ի թագաւորելն Իսմայիլին շնորհեաց զհայրենի իշխանութիւնն և զտեղիքն Սիմոնին գնալ իշխել իւրոցն, և օրինօքն մնալ Մահմետի. և նա գնացեալ ի տեղի իւր ի Տփխիս յանդիմանեալ եղև յառաջնորդաց և ի քահանայից իւրոց, մանաւանդ ի կնոջէն և ի յընտանեաց իւրոց, ուրացող և ապերախտ կոչելով զնա, և ոչ հաղորդելով ընդ նմա։ Ի յայսմանէ ստրջացեալ նորա զղջացաւ ի տաճկութենէ և դաւանեաց վերստին զխաչն Քրիստոսի երկրպագելի, և զխաչեալն Քրիստոս Աստուած ամենայնի, և լուր եղև համբաւս այս առ Պարսիկքն. և զի մեռեալ էր Իսմայիլն և այլքն ոչինչ կարելով առնել նմա, շնորհուկս եղեն կալ ի քրիստոնէութեան, գոնեայ միայն հաւատարմութիւն և մտերմութիւն արասցէ ընդ տանն շահին։ Եւ այժմ Լալայն փախոյց զՍի-

մօնն զայն. և շինեաց յերկիր նորա բազում բերդս, զոր ոչ գիտեմ զոճն գրել վասն անտես լինելոյն մեր տեղեացն. սակայն լուաք թէ ի Տփխիս, ի Դումանիս, ի Գօրի, ի Լոռի, և յայլ տեղիս շինեաց բերդս, և եթող ի նմա զօրս. և ինքն անցեալ ի յԱլանս՝ գնաց ի դուռն երկաթի, և շինեաց անդ ևս բերդս, և ասի Դամուր-ղափի և եդ զզօրս ի նմա բազումս: Եւ զօրագլուխ ոմն Օսման անուն յոյժ հնարաւոր և անողորմ, և ինքն դարձաւ առ Թագաւորն իւր, և սատակեցաւ ի նմանէ ի խոսս քսուացս, բայց վրէժխնդրութիւն Աստուծոյ ոչ ետ նմա կեալ վասն արեանց անմեղաց:

Իսկ ի Թուին ՌԻԸ. եղև սաստիկ և մեծ տարաժամ մահ ի յԱտրպատական և յամենայն Աղուանս, և կոտորէր զբազումս յամենայն ազգաց. մինչ բազում տունք անտերունչք, և բազում հարք և մարք անզաւակք մնացին. և երկիրս Աղուանից ի մէջ այսպիսի վտանգի գոլով զմեռեալսն սգալով, և զկենդանի զանկեալսն և զինքեանս ևս հոգալով մտածմամբ ասէին, ո՛հ թէ զերծանիմք ի տարաժամ մահուանէս՝ թէ ոչ: Ի յայս յեղակարծ ժամուս յանկարծակի եկն և եհաս վիրագն և զօր մահուն մոռացեալ Օսմանն այն, զոր յառաջագոյն ձեռնարկեալ առ Թաթարսն՝ որ Ղայթաղ ասի, և զամենայն Կովկասային լեռնական Լակզիքն ժողովեալ առ ինքն ի Դամուր-ղափի. բազում և անթիւ արիւնարբու հեծելովք. և նոքօք ել և եկն յայսկոյս Կուր գետոյն, և զԻշխանսն Գանջայս և Պարտաւոյ փախստական արարին, և ինքեանք սփռեալ ընդ դաշտս և ընդ լերինս, զԳեանջայ և զՊարտաւ, զճարաբերդ, և զԽաչէն, և զՎարանդայ, և զԴիզակ, ի Չարեքի կոչեցեալ գետոյն մինչև ի գետն Երասխ, ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին, զանհաճոյսն սրով սպանին. և զկնի չորս և հինգ աւուրց դարձան ի տեղիս իւրեանց:

Դարձեալ ի սոյն ամի ընդ երկուց պատժոցս մահուն և սրոյն, եղև ահագին և անտանելի սով սաստիկ. այնքան՝ մինչ զի մարդիկ գազանապէս անկան ի հմակերութիւն, վասն որք մեռլոյն ի մահուն, և վասն անինչք և անյարկք շրջելոյն ի գերչացն. քանզի ամենայն գաւառք Հայոց, որք ընդ իշխանութեամբ կարմրագլխոցն կային, քակեալք աւերեցան. և թէ ուրեք յանկեան մնացեալ լինէր շինութիւն, զետեղէին տնակք, և մերկք, արք և կանայք, ծերք և երիտասարդք, տղայք և աղջկունք, և առանց օթևանի արտասուալից դիմօք շրջէին ի դրունս օտարաց, և յերդս այլոց առ ի խնդրել զկերակուր անձանց իւրեանց: Եւ ի յոչ բաւելն կերակրոց, ուժեղքն ի նոցանէ մտանէին գաղտ ի փարախս խաշանց և ի գոմս արջառոց, և յոչ կարելն զենուլ զմեծամեծսն յանասնոցն առ ի չունելոյ զսուր ընդ ինքեանս. և յուժ անձանց ըմբռնէին զոլթս գեղեցիկս և զառինս մատաղս և ուլունս. և պատառէին զկողս նոցա և հանեալ զսիրտ և զփորոտի նոցա ուտէին հում և. ելեալք գաղտ զընային, և ոչ ոք կարծիս ունելով զայս ի նոցանէ լինել. մինչ տեսեալ ոմանց զնոսա յայնպիսիս գործս, և հաւաստեալ գիտացին զայս: Իսկ անզօրքն ի նոցանէ ի կոյտս աղբից անասնոց և ձիոց, որոնեալ գտանէին հատս գարւոյ և ուտէին: Այլ և ոչ գիտելով զսրբոյ և զանսրբոյ ի հերուն հետէ և ի վաղ ժամանակէ ի փողոցի անկեալ ոսկերք, վեր առեալ ի քարի եդեալ և քարիւ փոշի առնէին ի բերանս իւրեանց արկանէին և յոդւոց հանեալ մռնչէին: Այլ և զհնացեալ փոկ կաշեայ, և զմաշեալ տրեխ ի բեկոր ինչ խեցւոյ ի յեփոցի եդեալ և առեալ ուտէին: Վա՜յ տեսողութեանս եղբարք. Եւ իբրև եղև գարունն, սփռեցան աղքատքն յերեսս դաշտաց, սևացեալ մարմնով որպէս զերամակս այծեաց. և իբրև զջոլիրս հօտից ուտելով զբանջարս վայրի և զխոտս կա-

նաչս՝ և ոչ յագենային. քանզի կոչեալ էր յերկիր սով, և զօրութիւն հացի բեկեալ ըստ մարգարէին, մնաւանդ ուռուցեալ ի գլխոցն մեռանէին. ոմանք ի տեղի արօտից՝ որք ոչ կարէին դառնալ. և ոմանք եկեալ ի գեղամիջի ի տակս որմոց, և ի յանկիւնս տանց աւերածոց մեռանէին։ Եւ թէ լինէր ոք երկիւղած Աստուծոյ՝ առեալ ի դիականցն ինն և տասն և այլ աւելի ի վիհ ինչ, և կամ խոր արկեալ զհողն ի վերայ փլուցեալ ծածկէր, և թէ ոչ՝ մնայր անթաղ։ Եւ լուր լինէր բազմաց, թէ այս անուն տանուտէր, կամ մեծատան որդի մեռեալ է, և դի նորա ահաւանիկ յայս նիշ տեղի է. և լուեալ բազումք ի սիրելեաց և ի ծանօթից նորա, եղուկ և վայ կարդային անձանց իւրեանց, եւս և զթաղելն ի վաղն ձգէին, և ի վաղուէն ի միւս վաղն՝ վասն բազում ձանձրութեանցն. և դարձեալ լսէին յոմանց թէ դին այն պատառեալ ի գազանաց ցրուեցան ոսկերք նորա. և զայս լուեալ անհոգ լինէին, և այսպէս մնայր անթաղ։

Եղո՜ւկ թշուառականիս և պատմութեանս եղբարք, քանզի բազումք ի պիղծ մսէ զազիր շանց և կատուաց կամաւ յագեալք եղեն, և մարմնոց մարդկան եւս։ Քանզի ի սահմանս Ամարասայ յերկիրն Վարանդայ և Դիզակայ ի գեղջ միում, ումեմն մեծատան միամօր որդի մի գոլով եօթնամեայ, և կանայք այրիք ի մերձակայ գեղօրէից ժողովեալ բնակելով մերձ մեծատանն, կերակրելով ըստ պատահմանն ի մեծատանէն, յաւուր միում պատրանօք զտղայն ի տունս իւրեանց կոչելով կանանցն և սպանեալ՝ զմի ոտն հանդերձ անդամօքն կերեալ, և յերեկոյին ծնօղք տղային որոնեալ զտղայն և ի տուն այրի կանանցն գտեալ զկիսակտուր դիակ տղային իւրեանց։ Այլ և լուաք եւս թէ ծեր ոմն զմարմին դստերն իւրոյ կերեալ է ի նոյն երկրին. և այլ յամենայն տեղիս այսպէս եղև միշտ սովուն, ի ՌՃԻԸ. և ի ՌՃԻԹ. թուականիս։

Վա՜յ ինձ պատժապարտիս, զի մահուամբ և սրով և սովու կոտորեալ մարդկան մարմնոց գազանք այնքան կերեալ, մինչ զի անասուն շունք վայրենացեալ արտաքոյ շինի զկենդանի մարդիկս ուտային։ Եւ գայլք ի ճանապարհի, եւս և ի շինամիջի ի տունս մտեալ զմարդիկք ի ննջման արտաքոյ քարշէին և ուտէին. և ի մէջ խաշանց մտեալ զխաշնարածն ուտէին և խաշանցն ինչ ոչ մեղանչէին։ Եւ զԹիւ մահուամբ և սովու և սրով մեռելոցն և գերելոցն բնաւ ոչ կարեմ ընդ Թիւ բերել՝ և գրով արկանել, բայց Թէ իմ զքարտէզս և զմելանս առաջի ձեր արկից, ըստ դպրացն Պաւղի որ առ Երուսաղէմիւ։

Իսկ ի ՌԼԲ. Թուին, դարձեալ հրաման եղև ի Մուրատ խոնդքարէն, զօրապետացն և զօրաց իւրոց ելանել ի վերայ Երևանայ և առնուլ զնա. և եկին իսկ և աւերեցին, և բազում եկեղեցիս քակեալ զքարինս ի շինուածս բերդին տանէին. որ և կամեցան զմեծ եկեղեցին ևս, որ երկու երեսի ասի, քակել, իսկ ոմն վարդապետ Առաքել անուն, որ և յետոյ կաթուղիկոս եղև, յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի, եմուտ առաջի Ֆահրատին զօրապետի զօրուն, և ոչ ետ Թոյլ քակելոյ զեկեղեցին։ Բայց վա՜յ լսելեացս և պատմութեանս, զի յաւուրս երեսուն Ջորիք և երիվարք և բազում Տաճիկք յինքեանց անծանօԹք բնակեցան յեկեղեցին։ Եւ եղև ասացեալն ի մարգարէէն, զի մտին հեԹանոսք ի ժառանգուԹիւն Աստուծոյ, և պղծեցին զտաճար նորա սուրբ։

Ի սոյն Թուին եղև վախճան մեծ և երանաշնորհ վարդապետին մերոյ Յովհաննիսի, և զի էր նա յերկրէն ծարայ փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանիցն Թադէոս սրբոյ առաքելոյն. որդի ուրումն ազատի և բարեբարոյի Ջհանշահ կոչեցելոյ, յազգէ Պօփեայ և Հասանայ, և էր նա աշակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախպատեցւոյ,

յոյժ սրբասէր և աստուածասէր, հեզ և աղօթող, քարոզ ուղղափառաց, և յանդիմանող ստահակաց, սիրող ուղղութեանց և պատուող տօնախմբութեանց, յոյժ ընթերցասէր և գրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել յիւրն յիշատակ, և այլ սպասք և զարդք եկեղեցւոյ յոլովք, և ալևորեալ և լի աւուրբք հանգեաւ ի Քրիստոս ՌՂԲ. Թուականիս մերոյ. որոյ պատուական մարմինն եդեալ կայ ի յերկիրն Գեղամայ ի գիւղն Վասակաշէն, հուպ դամբարանի վարդապետին Սարգսի. յիշատակ նոցա [1] օրհնութեամբ եղիցի և աղօթք նոցա ի վերայ ձեր և մեր եղիցի և Տէրն տէրանց ի վերայ ամենայն աշխարհիս գթասցի ամէն։

Իսկ ի ՌՂԴ. Թվին ի խրոխտէն Մուրատայ հրաման եղև ի Դամուր-ղափի առ Օսմանն՝ գնալ առ ինքն ի Կոստանդնուպօլիս, որ և գնաց իսկ, և պատուեցաւ ի նմանէ՝ զօրապետ և իշխանաց իշխան կարգելով զնա բոլոր արևելեանս ի Բիւզանդիոյ մինչ ի յԱլանս. և ետ ի ձեռս նորա զօրս բազումս թուով վեց հարիւր հազարաց՝ և առաքեաց ի վերայ շահաստան քաղաքին Թաւրիզու, որ և եկն իսկ յոյժ խրոխտանօք և առ զնա. և աւերեաց աւար առնելով զամենայն ինչ որ ի նմա. և շինեաց բերդ, այլ ոչ ժամանեաց աւարտման բերդին, անդէն սատակեցաւ, ոչ եղեալ արժանի լսել աստէն ի Թագաւորէն իւրմէ զգովութիւն իւրոյ յաղթութեան, և ի հատուցմունք հանդերձելումն նմա՝ դատողին ամենեցունց է յայտնի։ Իսկ ի յայլ իշխանացն և գլխաւորացն բազում պատերազմաւ ընդդէմ կացեալ կարմրագլխացն և աւարտեցին զբերդն, և կարգեցին ի նմա զօրս ծառայ անուամբ, և կացուցին զօրապետ նոցա զոմն ներքինի Ջաֆար անուն, և ինքեանք դարձան

---

1 Ոսկ. վ+. յիշատակ նոցա . , . . . գթասցի ամէն.

ի տեղիս իւրեանց տանելով ընդ ինքեանս զանմաքուր
շաւիղ նորա։

Այսուհետեւ դարձցուք ի կարգ պատմութեան կարմ-
րագլխացն, քանզի էր զայսու ժամանակաւ թագաւոր
նոցա՝ յառաջ ասացեալ Խուդաբանդայն, եւ սորա գուն
գործեալ ընդ զօրաց Օսմանին յոյժ ջանիւ՝ յաճախ վըշ-
տօք, բազում աշխատութեամբ, յոլով աւուրց պատերազ-
մաւ, եւ յերկոցունց կողմանց անչափ արեանց հեղմամբ,
եւ ոչ կարաց խափանել զնոսա ի գործոյ շինութեան բեր-
դին Թաւրիզու։ Եւ յայնժամ դեռեւս ունէր ընդ ձե-
ռամբ զՍեաւ այգի կոչեցեալն, եւ զԳանձակ, որ է Գան-
ջայ։ Եւ շահն գնացեալ անդ հանդերձ պատանի որդւովն
իւրով Ամիրհամզայ կոչեցելով, եւ զօրաժողով եղեն անդ
ամենայն կարմրագլուխքն խորհել ինչ վասն Թաւրիզոյ եւ
Օթմանի զօրացն. եւ տիրատեաց կարմրագլուխքն յաւելլին
վէրս ի վերայ վիրաց Խուդաբանդային. մանաւանդ ին-
քեանց իսկ կրկլին եւ երեքկլին. վասն զի այն եղեւ բեկումն
նոցա վերատին, զի սրախող ի գաղտնի սպանին զորդի շա-
հին. քանզի շուք թագաւորի ի տղայն երեւէին. եւ ինմանէ
կարմրագլուխ պարսիկքն յոյժ երկնչէին, եւ իբրեւ այս այս-
պէս եղեւ, ցրուեցան պարսիկքն իւրաքանչիւր ոք ոչ գիտե-
լով զտեղի իւր իբրեւ գիշատեալ հօտ՝ որոց ոչ իցէ հովիւ։
Եւս եւ զի խրոխտ հրաման թագաւորին Մուրատի Օթման-
ցւոյ պատեալ էր զնոսա որպէս զկղզի նման ծովու։ Եւ շահն
Խուտաբանտայ յոյժ հեծեծանօք թախիծ սրտիւ եւ լի
տրտմութեամբ գնացեալ ի Խորասան առ միւս որդին իւր
Աբաս, անդէն թողեալն ի գալն իւր յԱտրպատականս տի-
րել Խորասանայ, առ նա հասեալ Խուտաբանտային, եւ
յետ սակաւ ամաց ինքն մեռաւ, ոչինչ քաջութիւն ցուց-
եալ յազգին իւրում անարին այն։

Եւ թագաւորեաց Աբաս որդի նորա ընդ նմա յոյժ
քաջ եւ յաղթօղ ի պատերազմի, վասն զի զԳիլան՝ որ եւ է

Ջօրջանէթ ապըստամբեալ ի հօրէն սորա, Արսան քաջութեամբ նուաճեաց զնոսա ընդ ձեռամբ։ Ալ և Օղբէկն կոչեցեալ՝ ի Բալխայ և ի Բուխարայէ ելեալ էառ զՀերի քաղաքն՝ և այլք ի տեղեաց շահին ընդ ձեռամբ արար, մինչդեռ նա ի յԱրտաւեղ էր գնացեալ վասն նուիրանաց և ընծայից բաշխելոյ առ շիրմի հարցն իւրոց և հաւուց։ Եւ լուեալ դարձաւ անտի, և գնացեալ Ջօղբէկն զոմն կոտորեաց՝ և զոմն փախոյց՝ և զտեղիքն իւր՝ դարձեալ հաստատեաց, այլ և երկիցս և երիցս անգամ զօրս արձակեաց ի վերայ նոցա․ և յետոյ ինքն գնացեալ զբազումս ի նոցանէ սպան յոյժ պատերազմաւ, և զորդի Թագաւորի նոցա ըմբռնեալ դարձաւ ի տեղի իւր ի Ղազուին, և այսպէս նուաճեաց զնոսա։ Եւ այժմ է իշխանութիւն նորա ի Խորասանայ մինչև ի յԱրտաւեղ և ի յԵրասխ գետ։

Իսկ ի ՌԼԵ․ Թուականին դարձեալ հրաման ել Մուրատ խոնդքարէն ումեմն Փահրատ կոչեցելոյ առողի, և շինողի Երևանայ, զոր յառաջ քան զՕսմանն նա ունէր զզօրապետութիւն կողմանս արևելից յետ Լալային․ և այժմ վերստին զիւր առաջին իշխանութիւնն շնորհեաց նմա, և առաքեաց ի վերայ Գանջայոյ հեռացուցանել զսակաւ մնացեալ կարմրագլուխքն՝ որք անդ, և շինել ի նմա բերդ և դառնալ․ որ և եկն իսկ ծանր զօրու և արար ըստ հրամանի խոնդքարին, հերքեաց, մերժեաց, հեռացոյց տարակացոյց, ուրոյն կացոյց, զատոյց, ի բաց կացոյց, հալածեաց, փախստական արար, վարեաց, մեկուսացոյց, և ինքն զհետ մտեալ մինչ ի գետն Երասխ և զբազումս գերեաց, և զօրս ետ ճարակ սրոյ․ այլ և գետահեղձ արար զյոլովս՝ և ինքն դարձաւ և շինեաց բերդ ի Գանջայ և կարգեաց ի նմա զօրս ըստ օրինի իւրեանց ծառայ կոչմամբ, և ինքն դարձաւ առ կայսրն իւր։

Իսկ Շահաբասն յորժամ ետես զեղեալքս ամենե-

քեան առ աշխարհն իւր, երկեաւ ևս վասն տեղւոյ շիրմի հարցն իւրոց և հաւուցն զԱրտաւեր, գուցէ առցեն.[1] և ևս յառաջ ի ներս ի պարսիկս ճեպեսցեն. զեսպանս արձակեաց. Հրեշտակութիւնս[2] առաքեաց առ Մուրատ խոնդքարն. առ ի խաղաղութիւն համոզել՝ և սէր ընդմիմեանս առնել, և ընդ այս ոչ եղև լսելի գոռոզին. պատանդս խնդրելով ի նմանէ։ Եւ Շահաբասն յաւել ևս առաքել զեղբօր իւրոյ զորդին. հանդերձ մեծ իշխան դայեկաւ և երկերիւր զինակիր սպասաւորով առ խոնդքարն մնալ պատանդս անդէն ի Ստամբօլ վասն խաղաղութեան ի միջի իւրեանց. որ և խաղաղութիւն եղև իսկ։

Եւ ի ՌԽԴ. Թուին մեռաւ Մուրատ խոնդքարն և թագաւորեաց սուլթան Մահմետ որդի նորա ընդ նմա։ Եւ յաւուրս այս Մահմետի, յարեան ֆռանկք՝ որք Մաճարք կոչին՝ ի վերայ ծովու բազում նաւուք, և են ի պատերազմ ընդ սոցա ամս հինգ և յամենայն ամի յառնելն ընդ միմեանս ահագին և սաստիկ պատերազմաւ և կոտորմամբ իրերաց որպէս տապարաւորս և կացնաւորս մայրահատաց հատանեն սպառելով զմիմեանս հրով և սրով. և ի միւսում ամի երկաքանչիւր կողմանց յարքայէ իւրեանց դարձեալ զօրս հասեալ լինի ի Թիկունս՝ և լինի նոր նորոգեալ պատերազմն՝ յետինս ամին կրկին ևս քան զառաջին ամն։ Եւ ի Թուականիս ՌԽԹ. յորում եմք, է այսպէս. և ապագայն Տեառն Աստուծոյ է յայտնի, Թէ զինչ լինելոց է յայնմ, որում շնորհելոց է կողման ինչ պարտութիւն, և կողման ինչ յաղթութիւն, զի գրեալ է՝ ոչ Թէ իւրով զօրութեամբ զօրանայ հզօրն՝ այլ Տէր տկար առնէ զհակառակորդս իւր, Տէր սուրբ է,

---

1) Ոսկ. և զնա առցեն։ 2 Ա.-Էջլ+ Երեց. Հրեշտակ խաղաղութիւնս։

և նա կարողացուսցէ զհաւատացեալս խաչին իւրոյ։

Այժմ դարձեալ երկրորդեսցուք վասն Սիմօնի Թագաւորին Վրաց, թէ զինչ եղև. քանզի Սիմօնն յորժամ փախեաւ ի Լալայէն, գնացեալ ի յանկեան ուրեք ինչ իւրոյ աշխարհին բնակէր ի մացառս և ի կապանատեղիս, և ի սիրտ իւր խոցեալ լինէր վասն առման իւրոյ երկրին՝ և հնար իրացն ինչ ոչ գտանել կարէր, վասն յոյժ խրոխտ լինելոյ համբակին իւրոյ՝ սպասէր խնամոցն Աստուծոյ. պատգամս յղէր՝ և հարկս խոստանայր Մուրատին, երբեմն տալով և երբեմն ոչ տալով. և երբեմն ոչ տալով, ապստամբէր ի նմանէ և զաւազակս ի վերայ բերդին արձակէր՝ պատճառն զզօրօք բերդիցն արկանէր՝ առ Մուրատ Թագաւորն համբաւէր, և ի նմանէ զնեան նմա շնորհեալ լինէր։

Եւ յորժամ Թագաւորեաց սուլթան Մահմետն՝ Սիմօնն զխորհուրդ ապստամբութեան իւրոյ յայտնեաց այսպէս, զհարկսն ոչ տալով՝ և զաւազակսն յոյժ բազմացուցանելով. յաւել ևս, և ինքն զօրաժողով եղև՝ և յարեաւ ի վերայ բերդին Գօրւոյ, և յամիսս ութն նեղեաց զնոսա և առ զնա. և քակեալ զքարինսն բերդին ողամբ այլազգեացն տանել հրամայեաց ի Կուր գետն արկանել՝ և ապա զարսն կոտորեաց սրով, և զկանայս և զորդիս նոցա աւար բաշխեաց զօրաց իւրոց Վրաց։ Ի յայսմանէ ամենայն ազգն Հագարու ի սիրտ և ի խոր խոցեցան, և յոյժ սրտմտեալ և ի բարկութիւն ցասման հարեալ Մահմետ խոնդքարին՝ և յոյժ տագնապաւ հրաման եհան, և զտեղի Ֆահրատին և զիշխանութիւն նորին տալով Ներքինւոյն Ջաֆարի՝ որ ի Թարվէզ, և առաքեաց ի վերայ Սիմօնին առնուլ զվրէժ անարգանաց և զարեան Օթմանական և Իսմայէլական գնդին։ Եւ յորժամ ի Թագաւորէն էառ զհամարձակութիւնս այս երկրորդ վիրագ չեզոքն այն Ջաֆար, յոյժ խրոխտացաւ

և արձակեաց հրաւիրակս ընդ կողմանս իշխանութեան իւրոյ, և ինքն ել ի Թաւրիզոյ եկն յԱրարատ. և ժողովեցան անդ ամենայն հրաւիրեալքն առ նա զօրք բազումք, և սուրհանդակս արձակեալ, ի հեռաւոր տեղիս գիւղից և քաղաքաց տանել զկերակուր ինքեանց և ձիոց, պատրաստել յանգս ճանապարհաց իւրեանց: Այլ և թիւս քան հազարաց արանց արկեալ ռամկաց Հայոց և տաճկաց ամենայն աշխարհաց ունելով ի ձեռս իւրեանց որթուց և թիաց, տապարաց, և կացնաց, բահաց, և փայտատաց, բրիչ տանց հիմանց, այլ և խիստ նառ. հարկս ի ժողովրդենէ արտաքոյ նոմոսաց իւրեանց: Եւ ապա եկեալ գնաց յոյժ երկիւղիւ, զի վաղուց հետէ զփորձ առեալ էին բազում անգամ ի քաջութենէ Սիմոնի և ի հնարիմաց պատերազմաց նորա, և ի նմանէ պարտեալ ամօթալի դիմօք յետս էին դարձեալ. և այժմ իբրև հասին յերկիրն Վրաց զնոյն կարծելով երկնչէին, և զտեղի առին աւուրս երեք՝ և չև ևս էր եղեալ զմարտ ճակատուն և ոչ պատգամս և դեսպանս առ իրեարս գնաց:

Եւ վրացեացն խորհեալ ընդ միմեանս ասեն ընդ Սիմոնին, Թոյլ տուր՝ զի տարցուք այսօր և զտունս և զընտանիս մեր առ լերամբք, և մեք դարձցուք յամենայն սրտէ և յամենայն զօրութենէ մերմէ արեան չափ և մահու՝ պատերազմեսցուք ընդ թուրքացն՝ և յաղթեսցուք նոցա զօրութեամբ Աստուծոյ: Բայց վասն բնաւին բառնալոյ զսահման աղօթից ի յազգէս քրիստոնէից՝ մինչ զի ի բոլոր տարին ամենևին ի դուռն եկեղեցւոյ ոչ ընթանան ի փոքունց մինչև ի մեծամեծս, վասն այսր իրաւունքն Աստուծոյ ոչ ետ թոյլ կատարել խորհրդոցն Վրաց, զի ասէ Աստուած մարգարէիւն. ապա թէ ոչ դառնայք առ նա, զսուր իւր սրեալ է՝ և զաղեղն լարեալ. և կամ թէ ասէ, միթէ վերանայցէ փայտատ առանց փայտա-

հարի, և սղոց առանց ուրուք ձգելոյ։ Եւ դարձեալ ասէ․ ես սպանանեմ և ես կեցուցանեմ հարկանեմ և ես բժշկեմ․ և կամ ասէ՝ զի զոր կամի Տէր կորուսանել, նախ յիմարեցուցանէ։ Վասն որոյ յիմարեալ Սիմոնին՝ այժմ նստի ի գինի սակաւ արամբք։

Եւ յայնմ կողման՝ յորում էր Սիմոնն՝ Թուրքացն ամենեքին ոչ ունելով կարծիս զՍիմոնին անդ լինելն, բայց աւարի պատճառաւ Թուրքացն ամենեքին գունդ ինչ բաժանեալ և ի կողմն այն գնացեալ, և տեսեալ զՎրացի ոմն ըմբռնեն՝ և յառաջ ինչ գնացեալ սակաւ՝ զՍիմոնին գունդն տեսանեն, և ի յըմբռնելոյն հարցեալ զոմն լինել այնմ․ և լուեալ ի նմանէ թէ նա ինքն իսկ է Սիմոնն․ և Տաճկացն յոյժ երկուցեալ յետս կանգնին, և փաղփաղակի արս զօրաւորս արագընթաց երիվարօք առ բանակն հաստուցանեն և Ջաֆար զօրապետին յայտնեն, և նորա յոյժ զուարճացեալ և բազում քաջ արանց խրախոյս տուեալ առաքէ, և գնացեալ ըմբռնեն զՍիմոնն՝ և բերին առ նա․ և ի գալն՝ ելեալ Ջաֆարն ընդ յառաջ յողջունել զՍիմոն, և ապա ի լեզուս իւրեանց մեծաձայն հնչմամբ օրհնեցին զԱստուած՝ ի լուր բանակին, և Սիմոնին զնոյն երկրորդեալ ասէ՝ օրհնեալ է Աստուած և անփոփոխ Տէրութիւն նորա, զի Տէր մեռուցանէ, և Տէր կեցուցանէ, իջուցանէ ի դժոխս և հանէ։

Եւ Ջաֆարն անդէն սուրհանդակ արձակեալ առ խոնդքարն աւետել նմա, և ինքն առեալ զՍիմոնն ժամանէ ի Թաւրէզ․ և հրաման ի խոնդքարէն յամենայն տեղիս տէրութեան իւրոյ զարդարել զփողոցս քաղաքաց, և ամենայն ոք․ յաւուրս երիս նստել ի խրախութեան ընդ տիւ և ընդ գիշեր, և եղև այնպէս, և զՍիմոնն առ խոնդքարն տանել․ և Ջաֆարին պահեալ զՍիմոնն ի Թաւրէզ յաւուրս ձմերան և գարնան, և յամարան ժամու առաքեաց առ կայսրն՝ որ ի բիւզանդիայ։

Եւ ի գնալն հասեալ ի Կարնոյ քաղաք՝ զտեղի առին, վասն ումեմն իշխանի հրովարտակաց դպրի, որ ի լեզուս իւրեանց եազիճի ասեն, ընդ իւր ունելով արանց՝ աւելի քան քսան հազարաց, ապստամբեալ ի յաւագէն իւրմէ՝ և ի Թագաւորէն ևս, և այս երկու ամ է՝ որ զգըլխահարկ ժողովրդեանն՝ որ վասն Թագաւորաց է, յինքն կորզեալ ժողովէ։ Սա վասն Սիմոնին զգուշութեամբ պատուէր տուեալ է զօրաց իւրոց յափշտակել ի տանողացն՝ և առ ինքն հասուցանել, յաղագս այս պատճառի Սիմօնն արգելեալ կայ ի յԱրզրում քաղաքի։ Արդ՝ օրհնեալ է Աստուած՝ զի վերջքն նմա է գիտելի։

Բանք համառօտք նշանակեալք Թուականաւ յսկզբանէ մինչեւ ցմեր ժամանակս։

Թուականաւ նշանակեալ համառօտ բանիցս՝ Թէպէտ օրինակն յառաջնոյ ժամանակաց գտայր, այլ ոչ էր կարգաւ ըստ կարգի Թուականին, և մեք կարգաւորեցաք. Երկրորդ՝ ոչ էր ժողով ի մի վայր՝ այլ մասն ինչ անդ, և այնպէս ցիր և ցան. իսկ մեք ժողովեցաք ի մի վայր զորս և գտաք. Երրորդ՝ և զոր ինչ ի մեր ժամանակս գործեցաւ նշանաւոր բանք՝ զայնս ևս ընդ սոցին դասաւորեալ գրեցաք զիւրաքանչիւրսն յիւրում տեղւոջ և հոգալով զայս տքնութիւնս յոլովս կրեցաք. և յայն սակս ի գիրս մեր դասակարգեալ գրեցաք, և զպատճառս զայս գիտելով քո անմեղադիր լիցիս մեզ, և մանաւանդ յիշեսցես ի մասն բարի առ Տէրն ամենի ողջ լեր ի Տէր.

ԳԼ. ԾԶ.

Ի Հայոց Թուականին Ժ. կարգեցաւ հինգ հարիւրակն՝ որով ուղղեցաւ զատիկն։ Թուին ԾԲ. քաղրդայ շրթունքն էր զլուխ Իսմայելացւոց։ Թուին Կ. երևեցաւ Մահմետ։ Թուին ԿԲ. բաժանեցան Վիրք ի միաբանութենէ Հայոց։ Թուին ՀԲ. Ջարճէշ եառ Թուրքն։ Թուին ՀԶ. Տէր Կոմիտաս շինեաց զՀռիփսիմէի վանք՝ և ասաց զԱնձինքն։ Թուին Ղ. տիրեցին Ապուպարքն, Օմարն, Օսմանն, ամս ԼԸ։

Թուին ՂԸ. եկն տաճկաց ի Հայս։ Թուին ՃԲ. Տէր Ներսէս հայրապետն զսուրբն Սարգիս շինեաց ի Դուին, և զՎիրապն սուրբ։ Թուին ՃԺԳ. երևեցաւ սուրբ խաչն Վարագայ։ Թուին ՃՀԱ. Յօհան Օձնեցին պայծառացաւ ի Հայս։

Թուին ՄԻԳ. շրջի Տէր Եսայի մուրացիկն։ Թուին ՄԼԵ[1]. Տէր Սողոմոն շինէ զմաքենիս։ Թուին ՄԽԷ. Սահակ և Յովսէփ կատարեցան ի Կարնոյ քաղաքն՝ որ է յԱրզրում։

---

1 Ուղ. ՄԼԷ՝

Թուին ՅԽԱ· Տէր Մաշտոցն տաս ճգնաւորաւ պայծառանայր։ Թուին ՅՂԹ· Սմբատ տիեզերակալն հիմնարկեաց զկաթուղիկէն ի յԱնի։

Թուին ՆԺԴ· շինեցաւ Հախպատ և Սանահին։ Թուին ՆԻԸ· Թագաւորն Սմբատ պարսպէ զԱնի։ Թուին ՆԽԲ· կատարեաց Կատրամիդէ զկաթուղիկէն յԱնւոյ։ Թուին ՆԿԵ· զարթեաւ Աստուածաստ բարկութիւնն՝ և եկին ազգն Թուրքաց ի վերայ քրիստոնէից՝ և կոտորեցին անխնայ ի Վասպուրական յաւուրս Սենեքերիմայ, և Սենեքերիմ նեղեալ յայլազգեաց ետ զաշխարհն իւր ի Վասիլ Թագաւորն Յունաց, և ինքն եկեալ ի Սեբաստիա հինգ որդւովքն, որք են Դաւիթ, Ատոմ, Կոստանդին, Վեստ, Ապուսահլ։ Թուին ՆՀ· ի սոյն ժամանակս վախճանի Տէր Սարգիս կաթուղիկոսն՝ և գերեզման նորա կայ ի Հոռոմոսի վանքն՝ որ եկաց հայրապետ Լ· ամ, բայց ի կենդանութեան իւրում ձեռնադրեաց զՊետրոս հայրապետն, զգետադարձն՝ որ եկաց ամս ԼՋ· և ինքն Սարգիս զկնի երկու ամի վախճանի։ Սա այս Սարգիս խնդրեաց ի Ստեփաննոսէ Տարօնեցւոյ գրանս բազմավէպ պատմութեան, որ և արար· սկսեալ ի նախահայրն Ադամայ, յորժամ եւ նա արտաքս ի վայրէն վայելչութեան, երեք հատոր· և հասոյց մինչ ի ՆԾԲ· ամ Թուականիս՝ յորում ամի վախճանեցաւ Գրիգոր Նարեկացի այրն սքանչելի։ Եւ զկնի նորա սկսանի Արիստակէս Լաստի վարդեցի, և պատմէ լալագին դառն ողբովք զամենայն աղետս անցիցն՝ որք անցին ընդ հայս ի շրջակայ ազգացն՝ և զաղանդն Թոնդրկացւոցն· և հասուցանէ մինչ ի ՇԼ· Թուականն աւելի կամ պակաս։ Թուին ՆՀԸ· արձակումն սատանայի, Ռ· ամն լցեալ եղեն՝ և ահաւոր նշանք եղեալ բազում, զի երկինք հերձաւ յարևելից յարևմուտս՝ և լոյսն ի վայր հոսեցաւ, և եղև խաւար, և երևեցան աստեղք և ձայնք ահաւորք։ Թուին

ՆՂԹ․ Սմբատ Մագիստրոսն զբղնայր դղեակ Հինեաց։ Թուին ՆՂԴ․ շարժ եղև յԵզնկան, և փոխեցաւ գոյն լուսաւորաց ի կարմրութիւն, և մառախուղն պատեալ էր զերեսս երկրի․ և ի շարժիլն եկեղեցիք և մեծամեծ շինուածք խախտեցան՝ և քաղաքն առ հասարակ փլաւ՝ և պատառեցաւ գետինն և եկուլ բազում արս և կանայս, և շատ օր գայր ձայն յանդնդոց։

Թուին ՇԱ․ տէր Պետրոս կաթուղիկոսն երեր զկենաց փայտն ի Պոնտոս՝ որ է Տրապիզոն, ի ժամանակս Վասիլ Թագաւորին արար զՋրօրհնէք՝ և գետն արգելաւ ի յետս ժամ մի․ և անտի գնաց տէր Պետրոս ի Կոստանդնուպօլիս՝ և կացեալ անդ ամս չորս՝ և անտի եկեալ ի Սեբաստիա առ որդիսն Սենեքարիմայ, և ի Սեբաստիա վախճանի։ Թուին ՇՋ նստաւ տէր Խաչիկն, որ է քեռորդի տէր Պետրոս կաթուղիկոսին, մինչև ի յայս տէր Պետրոս ԺԵ կաթուղիկոսք անցեալ են, այս ԾՋ․ զսա աքսորեցին ի տարապարտ, և կացուցին զայրն Աստուծոյ զԴիոսկորոս զհայրն հռչակաւոր վանիցն Սանահնայ, և ապա դարձեալ կաթուղիկոսն Ագուանից ընկէց զտէր Դիոսկորոսն յաւուր մկրտութեանն Քրիստոսի պատառեցին զքօղն Հայրապետական, և դարձուցին զտէր Պետրոսն ի տեղի իւր։ Ի սորա աւուրսն առին զԱնի ի Թուրքէն, կոտորեցաւ Թագաւորն Ստամբօլայ Տուկիծ անուն, տարեալ ի մօտն զտէր Խաչիկն էարկ ի բանտ երեք ամ և պահանջէր ի նմանէ զգանձն տէր Պետրոսի կաթուղիկոսին։ Թուին ՇԺԳ․ բարձան Թագաւորք յԱնւոյ, որ էր վերջին Թագաւորն Յովհաննէս։ Թուին ՇԽԵ․ Փռանկն էառ զԵրուսաղէմ։ Թուին ՇԽԹ․ Յոյնք ծառագատիկ են արարեալ։ Թուին ՇԾ․ ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ յաւուր շաբաթու՝ այլ

---

1 Ուղ․ Տէր Խաչիկ։

ի կիւրակէ, յիննն ժամ կիւրակէին։ Թուին ՇԾԱ. ի տօնի ծառազարդարին ծռազատիկ արարին՝ Փ. ազգք, Հայք և Ասորիք ուղիղ կացին։ Թուին ՇՀԱ. Թագաւորն Դաւիթ էառ զՏփխիս։ Թուին ՇՀԳ. Թագաւորն Դաւիթ էառ զԱնի ի տաճկէն՝ և մեռաւ. և Թագաւորեաց որդի նորա Դիմետրէ։

Թուին ՌԷ. փոխեցաւ առ Քրիստոս Թագաւորն Դիմետրէ։ և նստաւ որդի նորա Դաւիթ։ Թուին ՌԺ. Թագաւորեաց մեծն Գորգի, և եհար զՇահի - Արմէնն սատիկ պատերազմաւ։ Թուին ՌԺԲ. ել գուզ Աթաբակն ի յԱնի, մեծն Գօրգի էառ զնա։ Թուին ՌԺԵ. շարժ եղև յԵզնկան։ Թուին ՌԺԷ. ահագին շարժ եղև յԵզնկան. ԺԲՌ. մարդիկ մեռան։ Թուին ՌԻԵ. Թագաւորն Երուսաղէմի եհար զՍալահադին սուլթանն ի դուռն Երուսաղէմի՝ որ եկեալ էր ճԽՌ. հոգւով առնուլ զԵրուսաղէմ։ Թուին ՌԼՋ. Թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայ կաթուղիկեցի զպատճառս խաւարման արեգական և լուսնի, ի պարսկէ միջէ Ոծիքէ անուննն, զոր աւեր Թարգմանեալ Յունաց ի Պարսս։ Դարձեալ ի սոյն Թուին խաւարեցաւ արեգակն։ Դարձեալ ի սոյն Թուին Մարա սուլթան Սալահադինն էառ զԵրուսաղէմ ի Փռանկէն։ Թուին ՌԽԵ. Թագաւորեաց Հայոց Լևոն։ Դարձեալ ի սոյն Թուին Յոյնք ծռազատիկ են արարեալ։ Թուին ՌԽԹ. խանդարումն զատկին սուտ դտան Վիրք և Յոյնք, բացի Հայոց։ Թուին ՌԾԲ. Փռանկն էառ զԹագաւորութիւնն Հոռոմին։ ՌԾԹ. զԻւանէ Աթաբակն կալան ի Խլաթ։ Թուին ՌԿԲ. վախճանեցաւ Մխիթար վարդապետն. որոյ մականունն Գօշ կոչեցաւ։ Թուին ՌՀԱ. մեռաւ Թագաւորն Լևոն։ Թուին ՌՀԷ. Խորազմն ել ի Հայս, որ Հայրն Յօհաննու հաւատաց ի Քրիստոս։ Թուին ՌՁ. Թագաւորն զԽորազմն կոտորեաց և էառ զԳանձակ։ Թուին ՌՁԵ. Թաթարն էառ զԱնի և զա-

մենայն տիեզերս։ Դարձեալ ի սոյն Թուին շարժ եղև յԵզնկան, եկեղեցի մի փլաւ։ Թուին ՈՁԷ. էառ Թագաւորն զԼօռի և զԱնի։ ՈՁԸ. խաւարեցաւ արեգակն։ Դարձեալ ի սոյն Թուին մեռաւ Աւագն։ Թուին ՈՂԱ. Պաչօն էառ զԿարնոյ քաղաքն, հռոմք՝ զԵրզնկան։

Թուին Չ. վանական վարդապետն վախճանեցաւ։ Դարձեալ ի սոյն Թուին Մանգու խանն Թագաւորեաց։ Թուին ՉԳ. շարժ եղև յԵրզնկան։ Դարձեալ ի սոյն ամի Արղուն խանն նստաւ. սա համարեաց զաշխարհ, և եդ հարկ ի վերայ ամենայն գլխոց։ Թուին ՉԷ. Հուլաւու խանն նստաւ։ Թուին ՉԸ. Դաւիթ Թագաւորն Վրաց յԱփխազն եմուտ։ Թուին ՉԹ. սուլթան Մսրայ կոտորեաց զզօրս Թաթարին, որ էր գլխաւորն Իթբուղայն։ Դարձեալ ի սոյն Թուին, Հուլաւու խանն էառ զՀալապ։ Թուին ՉԺ. սպանաւ Զաքարիա։ Դարձեա ի սոյն Թուին Բաղտատ աւերեաց։ Թուին ՉԺԱ. Հուլաւու խանն նստաւ։ Թուին ՉԺԳ. Շահպանտինն տարաւ զվարդապետն Վարդան ի մօտ Հուլաւու խանին. բազում բանս իմաստութեան հարցումն արար. և մեծաւ պատուով պատուեաց զվարդապետն։ Թուին ՉԺԴ. Աբայ խանն նստաւ։ Թուին ՉԺԵ. Կոստանդին կաթուղիկոսն բերաւ ի Ֆռանկաց զհիւանդ օծանելոյ կարգի օրինակն, ձէթ օրհնելոյն և հիւանդ օծանելոյն։ Թուին ՉԺԶ. Արղուն խանն նստաւ։ Թուին ՉԺԷ. շարժ եղև յԵրզնկան յաւուր կիւրակէի ԺԵ. Ռ. մարդիկ մեռան։ Դարձեալ ի սոյն Թուին մոլորեցան Ժ. ազգ քրիստոնեայք։ Հայք և Ասորիք ուղիղ կացին։ Դարձեալ ի սոյն Թուին Մսրցին էառ զԱնտիոք։ Թուին ՉԻ. Լևոն Թագաւոր նստաւ։ Թուին ՉԼ. շարժ եղև յԵրզնկան, Աստուած պահեաց, որ ոչ փլաւ։ Թուին ՉԼԶ. Մայիս ամսոյն ահագին շարժ եղև յԵրզնկան, բազում մարդիկք մեռան, որ զԹիւն միայն Աստուած գիտէ։ Թուին ՉԼԸ. մեռաւ Լևոն և աքսորեցաւ

Կոստանդին կաթուղիկոսն՝ և մեռաւ Յովհաննէս կաթուղիկոսն, և նստաւ տէր Ստեփաննոս կաթուղիկոսն, և զՏրապօլիս էառ Թուրքն։ Թուին ՉԼԹ. սաստիկ շարժ եղև յԵրզնկան, Աստուած պահեաց որ ոչ փլաւ։ Թուին ՉԽ. մոլորեցան Յոյնք և արարին ծառազատիկ, և ի յայնմ ժամանակին ի Կիլիկիոյ երկիրն կային Թագաւորք Հայոց [1] մեր Հայոց ազգս երկու են բաժանուեր կէսքն ընդ Յունաց են կացեալք, և կէսքն ուղիղ են կացեալք։ Թուին ՉԽԱ. զՀռոմկլայն առին Մսրցիք, և զտէր Ստեփաննոսն գերի տարան, ի նոյնս էր ծառազատիկն։ Թուին ՉԽԳ. նստաւ տէր Գրիգոր Անաւարզեցին. գնաց Հեթում ի Ղանղազան, ել հրաման ի խանէն աւերել զեկեղեցիս. մեռաւ Հեթում ՉԿ. թուին։ Թուին ՉԾԵ. ի գաւառիս Տարօնոյ ի հրեշտակացոյց ուխտիս և ի սրբոյ մենաստանիս Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոց առաքելոցն՝ ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, և ի թագաւորութեան Կիլիկեցւոց նահանգին Լևոնի որդւոյ Թորոսի, և յեպիսկոպոսութեան սրբոյ ուխտիս Ղազարու վանիցս Տէր Աբրահամու, ի կայսերական բռնակալութեան ազգին նետողաց Ղարբանտայ խանին. որ էր այր չար, և ատեցող քրիստոնէից, և պատրեալ ի դիւթական, և յաղանդաւորաց չեխերուն. և խորհուրդ չար ի մէջ բերելով գործակցաւն իւրեանց սատանայիւ, սկսան մարտնչիլ ընդ անյաղթելի վիմին Քրիստոսի՝ և հանել զհրովարտակ ընդ ամենայն տիեզերս, որ ընդ իւրով իշխանութեամբ էին՝ ի վերայ քրիստոնէից, այնու կամ դառնալ ի մոլար դաւանութիւն Մահմետի, և կամ տալ խարաճ ամէն մարդ իւր գլխոյն՝ զութն դահեկան, և թուք և ապտակ ի յերեսն՝ և զմուրուսն ճողել, և սև կարկտան մի ի վե-

---

[1] Յերեսին օրինակս եւ պակասի բառ ինչ։

րայ աջոյ ուսին կարել, նախատինք վասն Քրիստոսի, և չար դեսպանքն իբրև զարիւնարբու գազան արձակեցան ի վերայ ամենայն քրիստոնէից՝ ընդ ամենայն քաղաքս և ի գաւառս, ի վանօրայս՝ և յամենայն տեղիս. քննայոյզ լինէին ահացուցանելով զամենեսեան. քանզի այսպէս գրեալ էր ի մահաբեր հրովարտակին. ոչ ժամ օրհնել, և ոչ եկեղեցի մտանել՝ և ոչ մանկունս մկրտել. կամելով միահաղոյն բառնալ զամենայն կրօնս քրիստոնէից: Իսկ բանաւոր հօտքն Քրիստոսի անխախտելի հնացին ի հաւատս քրիստոնէութեան, քաջալերելով Տէրունական հրամանաւն, որ ասէ. երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ՝ և որոշեսցեն. ետուն զամենայն հարկսն՝ զորս խնդրէին. և յանձն առին յօժարութեամբ զնախատինս և զտանջանս վասն երկնաւոր յուսոյն՝ և զթեթև լուծն Քրիստոսի ի վերայ աջոյ ուսոյն: Իսկ անօրէն և ամբարիշտ Ղարբանդայ խանն իբրև ետես թէ այնու ոչ կարաց յաղթել բանաւոր հօտին Քրիստոսի, յաւել այլ ևս հարուածս ի վերայ Քրիստոնէից, կամ զամենեսեան ներքինիս առնել կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի պիղծ դաւանութիւնն Մահմետի: Լսեմք թէ բազումք մեռան յայսմանէ հարուածոյ, վասն անուանն Քրիստոսի, այլ առ մեզ դեռ ևս ոչ է հասեալ մահաբեր հրաման պիղծ Ղարբանտայ խանին, և զառաջիկայն Աստուած գիտէ: Արդ՝ եթէ այց արասցէ ողորմածն Աստուած՝ և անցուսցէ զանպլրոպ խռովութեան ի քըրիստոնէից, և լիցի համարձակութեամբ զքրիստոսական պաշտօնս կատարել առաջի Քրիստոսի, զսա ազատամայր որդիք լուսոյ աւազանին մաքրագործի դասք սրբազգեստից, և ընդ երջանիկ արժանաւորումբ ձեր սուրբ հանդէսդ:

Թուին ՊԵ. շարժ եղև յԵզնկան՝ ի յօրն Է. և Թ. հեղ երերայր. Աստուած պահեաց որ ոչ փլաւ: Թուին ՊԶ. զԱշրաֆն սպան Ջանիբէկն. և ախին նստաւ: Թուին

ՊԻԳ. դեկտեմբերի Ը. օրն Ուրբաթ շարժ եղև յԵրզնկան. ժամ մի եկաց, կարծեցին թէ այլ ոչ շարժի. կրկին շարժեցաւ՝ պարիսպն փլաւ: Թուին ՊԼ. Թուղթամ իշխան Ղրիմին առաքեաց զզօրս ի Դաւրէժ և զքսան բիւր գերի տարաւ: Թուին ՊԼԳ. Քեղայոյ խանն նստաւ: Դարձեալ ի սոյն Թուին, Բուրհան ղաղին սպան զտէրն Սեբաստիոյ, և զՍտեփաննոս եպիսկոպոսն Սեբաստիոյ Նահատակեաց, և զսուրբ քառասնից վանքն քակեաց: Թուին ՊԼԴ. Թուրքն էառ զՌոտն, և Կախիկ վարդապետն և Երեմիա վարդապետն մեռան: Թուին ՊԼԵ. Թամրազ խանն գնաց մինչ ի Դիմիշխ, և եկն եհաս [1] եկաց ամս ԺԷ. գնաց ի Սմրղանդ մեռաւ: Դարձեալ ի սոյն Թուին Լակթամուրն եկն ի Դաւրէժ, և ի Նախչուան, և զՎան կոտորեաց աւելի քան զԳՌ. մարդ: Թուին ՊԼԶ. եղաւ Լանկթամուրն ի Սմրղանդայ բազում զօրօք և եկեալ աւերաց զՍեբաստեայ, և գնաց ի յԱնկիւրիա, զԽոնդքարին եղբայրն զԻլդրում Պայազիթն եդ ի Ղաֆասն: Թուին ՊԽԱ. դարձեալ եկն ի Բաղդատ, և արար բազում աւերս ի միջագետս, և դարձաւ յաշխարհն իւր. և էր սուլտան Ահմատի որդին սուլտան Տահիրն ի յԱլնջոյ բերդն, և Վրաց Թագաւորն եկն ի վերայ բերդին և էառ զսուլտան Տահիրն տարաւ ի Տփխիս, և Թամուրն իբրև լուաւ զայս. ՊԽԹ. Թուին դարձեալ եկն ի վերայ Վրաց և էառ շատ գերի, և գնաց յաշխարհն իւր, և սատակեցաւ ՊԾԳ. Թուին: Թուին ՊԽԲ. զտէր Թորոսըն և զտէր Զաքարիայն սպանին: Թուին ՊԾԵ. Ղարայ Իւսուֆն՝ որ ի Թամուրէն փախեաւ և էջ ի Շամ, և կապանօք տարան ի Մըսր, և անտի եկն ի Կարփոյ երկիրն և գնաց ի Դավրէժ և էառ մինչ ի Սուլթանիա: Թուին ՊԾԷ. դարձաւ ի յԱրճէշ և ի յԱրծկէ և Շմեզդին ըն-

---

1) Ցերեւոյն օրինակս պակասէ բառ ինչ.

կերեալ նմա արարին զշատ աւեր Վանայ և Ոստանայ, և միւս տարին Շմեզգնի հենձեալքն եկին և այրեցին զԼատուան, և բարկացեալ Ամիրեզդին գնաց և այրեաց զԿ․ գիւղ ի Բաղիշոյ։ Առաջին գալն Շահռուխին ՊՀ․ Թուին, և Խոյն տանուտէր՝ յաղթեաց Թուրքմանին և գնաց։ Երկրորդ՝ գալն ՊՀԸ․ Թուին․ և Աղեղնաւորն տանուտէր․ կոտորեաց զԹուրքն ի Սալամաստ․ և զԲուսայիտն Ղան եդ և գնաց յաշխարհն իւր։ Երրորդ գալն ՊՁԵ․ Թուին՝ և Խեցգետինն տանուտէր։ Թուին ՊՀ․ Ջաղաթէն եկն յաշխարհն Հայոց։ Թուին ՊՀԱ․ Շարուխն եկն ի Ղարաբաղն։ Թուին ՊՀԲ․ Ըլէքսանդրն եկն։ Թուին ՊՀԸ․ Ջահանշէն զՇամշուլտոյ բերդն էառ։ Թուին ՊՀԹ․ դարձեալ եկն Շահրուխն․ Դեմետրէն դէմ գնաց ի Ղարաբաղըն։ Դարձեալ ի սոյն Թուին մահ տարածեցաւ։ Թուին ՊՁԷ․ Ղուլն եկն ի յԵզնկան և սպանաւ Սքանդարն յորդւոյն, և նստաւ Ջահանշէն։ Թուին ՊՁԹ․ Շամշուլտէ առաւ, և ԳՌ․ այր կոտորեցաւ, և ԹՌ․ գերեցաւ։ Թուին ՊՂ․ զԼուսաւորչի Աջն ի Սսոյ գողացան և բերին յէջմիածին, և զԽոր-Վիրապայ հայր տէր Կիրակոսն կաթուղիկոս օրհնեցին և եդին յէջմիածին՝ և անդ հաստատեցին զկաթուղիկոսութիւնն։ Թուին ՊՂԲ․ զտէր Կիրակոս կաթուղիկոսն փոխեցին վասն նախանձու, և Մակուեցի Գրիգոր եպիսկոպոսն նստաւ կաթուղիկոս ղաբալով և Թուրքով, և զիս և զՍարգիս վարդապետն տուգանել ետուն, և ինչ վատութիւն, որ արարին Կիրակոս կաթուղիկոսին և Սարգիս վարդապետին և ինձ, Աստուած թողու զմեղս նոցա իւրեանց [1] ։ Թուին ՊՂԳ․ Ջահնշէն զԱխլցխայ գերեցոյց։ Թուին ՊՂԵ․ Ջաղաթէն գընաց ի վերայ   [2] Շահրուխն իւր մահուամբն մեռաւ։

---

1 Ուղ․ չէ․ իւրեանց․ *) Ցերեւին օրինակի պակաս բառ ինչ․

Թուին ՋԱ· եկն Ջիհանշայն էառ զԾզնկան։ Թուին ՋԲ· Սուլթան Մահմատն էառ զՍտամբօլ ի ձեռաց թագաւորին Յունաց Մանուէլի։ Թուին Ջէ· շարժ եղեւ յԾզնկան ԼԲՌ· մարդիկք մեռան։ Թուին ՋԺ· Ջիթախն էառ զՏրապիզոն։ Թուին ՋԺԶ· Հասանբէկն գնաց ի Վրացտուն եւ գերեցոյց։ Դարձեալ ի սոյն թուին զպարոն Լոյսն նահատակեցին ի Կաֆայ։ Թուին ՋԺԸ· մահ անկաւ ամենայն աշխարհ· Նաղաշ վարդապետն զողբն ասաց։ Թուին ՋԻԳ· զտէր Գրիգոր քահանայի որդին զԴաւիթ նահատակեցին ի Խարբերդ։ Թուին ՋԼԱ· մեռաւ սուլթան Մահմատն՝ եւ նստաւ որդի նորա սուլթան Պայազիթն։ Դարձեալ ի սոյն թուին շարժ եղեւ յԾզնկան ԼՌ· հոգիք ներքեւ հողին մնացին։ Թուին ՋԼԲ· Աղուր բէկն [1] րիայ տաղն էառ։ Թուին ՋԼԳ· Եաղուբ բէկն Շեխ-Հայդարին էառ։ Թուին ՋԼԹ· Եաղուբ բէկն մեռաւ, Սունխուրն կանգնեցաւ։ Թուին ՋԽԸ· Սպահան կանգնեցաւ, եւ յետ նորա Ալվանտն։ Թուին ՋԾ· կարմիրգլուխ Շահիսմայէլն պատերազմեցաւ ընդ Ալվանտին եւ փախոյց զնա· եւ ինքն էառ զթախտն եւ նստաւ։ Թուին ՋԿԲ· սուլթան Սէլիմն սպան զհայրն իւր զՊայազիթն եւ ինքն նստաւ։ Թուին ՋԿԳ· Սալիշմէն շահի հեծելն կոտորեաց· այլ եւ թագաւորեաց Շահն։ Թուին ՋԿԴ· սուլթան Սէլիմն գնաց ի Չալտրան, կռուեցաւ ընդ շահին, եւ կոտորեաց զՇահն։ Թուին ՋԿԶ· սուլթան Սէլիմն գնաց էառ զՇամ եւ զՄըսր։ Դարձեալ ի նոյն թուին սուլթան Սելիմն արար զմանչ ժողովելն։ Թուին ՋԿԸ· սուլթան Սելիմն չարացաւ՝ տղայ ժողովեաց ի քրիստոնէից։ Թուին ՋՀ· մեռաւ Սէլիմն եւ նստաւ սուլթան Սուլէյմանն։ Դարձեալ ի սոյն թուին ի Սեբաստիայ բաղանիս շինեցին։ Թուին ՋԱՀ· այրեցին զՊեխին որդին

---

1 Յերեւոյն օրինակս պակասէ տառքն քանի բառս։

Սաֆարն։ Թուին ՋՀԵ․ Սուլթան Սուլէյմանն գնաց էառ զԹախտն Ընկռուզաց, որ է Բուտուռմ։ Դարձեալ ի սոյն Թուին Աթմաջայ խալիֆայն եղաւ։ Դարձեալ ի սոյն Թուին մեռաւ Շահիսմայիլն և Թագաւորեաց որդին իւր Շահ-Թահմազն։ Թուին ՋՀԶ․ Տօռխլըշ հոռոմքն գլուխ քաշեցին, և Հուսէյն փաշայն ի վերայ գնաց զհոռոմքն ջարդեաց և գերեաց։ Թուին ՋՁԲ․ զՏևու վանաց Հայրապետ արեղայն այրեցին։ Թուին ՋՁԴ․ ի Շնքուռկու գիւղէն էրէց մի այրեցին։ Թուին ՋՁԵ․ զխօջայ Կոզջայն[1] նահատակեցին ի Սեբաստիայ։ Թուին ՋՁԸ․ Յոյնք Ծաղկազարդին զատիկ են արարեալ։ Թուին ՋՂ․ Շահ-Թահմազն գնաց ի Վրացտուն և աւերեաց զՏփխիս և զերկիր ամենայն, զբազում գերիս արար անթիւ և անհամար։ Դարձեալ ի սոյն Թուին Հումայ փաթշահն եկն յոտն Շահ-Թահմազին և գնաց։ Թուին ՋՂԵ․ Ալխասն եկն և հանեալ տարաւ զխոնդքարն ի Թաւրէզ իւր եղբօրն վերայ, որ աւերեաց զԹաւրէզ։ Իսկ տէրն Թաւրիզու Շահ-Թահմազն եկեալ աւերեաց զԽնուս՝ զԲասեն՝ զԱրզրում՝ զԴերջան՝ զԿեղի՝ զԲաբերդ՝ զԵզնկան՝ զԸսպէր։ Թուին ՋՂԸ․ մահ եկն։ Թուին ՋՂԹ․ յԱրզրում քաղաքի զազատ որդիսն եօթանասուն հոգիս ջարդեցին ի մէկ գիշերի՛ և մեծ աղէտ եղև։

Թուին ՌԳ․ խոնդքարն եկն ի վերայ Շահ-Թամազին, Նստաւ ի Նախչուան զՍահաթն աւերեաց, և զբազում գերիս արար։ Թուին ՌԶ․ Կեղեցի Ղուկաս վարդապետն զՀռօմայեցւոց տօմարն ի յոտք հանեաց։ Թուին ՌԸ․ որդիք Խոնդքարին կռուեցան ի Ղօնեայ․ Սէլիմն զՊայազիթն փախոյց մինչև յԱրզրում, և նա գնաց ի Շահն երեք որդւովքն՝ և անդ սպանին զնոսա։ Թուին ՌԹ․ Սուլթան Պայազիթն չորս որդւովքն՝ երեսուն հազար

---

1 Ուղ․ Օգջայն,

մարդով եկն Շահ-Թամազի յոտն։ Թուին ՌԺԲ․ մահ տարածեցաւ։ Թուին ՌԺԵ․ Սուլթան Սուլէյմանն գնաց ի վերայ Փէջայ և անդ մեռաւ։ Թուին ՌԺԶ․ նստաւ Սուլէյմանի որդին Սէլիմն։ Թուին ՌԺԷ․ Սիմոն եկն Շահ-Թահմազի յոտն։ Թուին ՌԺԹ․ աղջկան բողն եղեր յԵ-զրնկան։ Թուին ՌԻ․ առին զԿիպրոս կղզին։ Թուին ՌԻԲ․ Շահ-Թահմազն մեռաւ։ Թուին ՌԻԳ․ Շահիսմայիլն Թախտ նստաւ երկու տարի։ Թուին ՌԻԴ․ մեռաւ Սէ-լիմն և նստաւ Սուլթան Մուրատն։ Թուին ՌԻԵ․ ազևոր աստղն ելաւ և երևեցաւ։ Դարձեալ ի սոյն Թուին շարժ եղև յԵզնկան յոյժ ահագին ի Նոյեմբերի հնգին ի մէջ գիշերի․ մարդ ի շէն չկարաց պառկիլ չորս ամիս՝ և ապա դադարեցաւ։ Դարձեալ ի սոյն Թուին Շահիսմայլն մեռաւ։ Դարձեալ ի սոյն Թուին՝ զՇահ-Թահմազն ի մէջ համա-մուռ [1]) խեղդեցին․ յետ նորա զսուլթան Հայդարն ըս-պանին, զպզտիկ Շահիսմայիլն ի բերդէն դուրս բերին ի Թախտ ելաւ, յետ նոցա Ամիրհամզայ միրզէն։ Թուին ՌԻԷ․ Խուտաբանտայն եկեալ Թախտն նստաւ։ Թուին ՌԻԸ․ զԵրևան առին։ Թուին ՌԻԹ․ Լալայ փաշայն եկն զԵրևան գերեցոյց։ Դարձեալ ի սոյն Թուին մեծ և առա-ջին Շահաբասն ի Մաշատումն ի Թախտ նստաւ։ Թուին ՌԼ․ նեղացաւ սուլթան Մուրատ Թագաւորն ի հրէից համարձակութենէն․ և վերացոյց զփակեղն ի գլխոց հը-րէից և քրիստոնէից ամենայն, և սահմանեաց զգդակ դնել։ Թուին ՌԼԲ․ յԵրևան բերդ շինեցաւ։ Թուին ՌԼԳ․ շարժ եղև յԵզնկան՝ յունիսի ԺԷ․ սուրբ Լուսաւորչի երկուշաբաթի երեք ժամն, յանկարծ դողումն եղև, քա-ղաքն առհասարակ փլաւ, ԺԵՌ․ այր և կին մեռան․ ԵՌ, մարդ այլ ի ներքև հողոյն մնաց, զորս կիսամահ հանեցին, որն ապրեցաւ՝ որն մեռաւ [2], և որն սախատ

---

1 Ուղ․ ի մէջ բաղանեացն

2 Ն․-յն․ չէ․ որն մեռաւ։

մնաց։ Թուին ՌԼԴ. Օսման փաշայն գնաց առաւ զՇիրվան և զԹաւրէզ։ Թուին ՌԼԵ. Ֆահրատ փաշայն զԳանձայ էառ։ Թուին ՌԼԹ. քուրդն գլուխ քաշեաց եկեալ յՆ-գընկայ։ Թուին ՌԽ. Գզիրօղլին ելաւ, Ջալալի քուրդ-ազգաւ։ Թուին ՌԽԱ. Սեստու տաճիկն չարացաւ՝ և էառ սրբոյ Լուսաւորչի եկեղեցին։ Դարձեալ ի սոյն թու-ին Իբրահիմ փաշայն աւերեաց զԱմիթ հարկապահան-ջութեամբ։ Թուին ՌԽԳ. մեռաւ սուլթան Մուրատն՝ և նստաւ սուլթան Մահմատն թագաւոր։ Թուին ՌԽԶ. Ղարայեազչին ելաւ Ջալալի։ Թուին, ՌԽԷ. ապստամ-բեցաւ Ղարայեազչին։ Դարձեալ ի սոյն թուին Ներքինի Ջաֆար փաշայն ելաւ Ջալալի նստաւ ի Թաւրէզ։ Դար-ձեալ ի սոյն թուին ի Մայիսի ամսոյ խաւարեցաւ արե-գակն։ Դարձեալ ի սոյն թուին ահագին շարժ եղև յԱ-մասեայ, և ի Զօռում. և շատ շինուածոց տապալումն եղև մինչ ի Դ. ամիսն՝ և ապա դադարեցաւ երերումն։ Դարձեալ ի սոյն թուին մահ անասնոց եղև սաստիկ։

Թուին ՌԽԸ. Մարտի ամսոյ ԺԷ. այնպէս դառ-նաշունչ ձմեռն եղև, որ զորբոց քառասնից բազմահան-դէս ուխտն խափանեաց, որ չկարացաք զսովորական տօ-նախմբութիւնն առնել։ Դարձեալ ի սոյն թուին զօրա-ցաւ Ղարայեազիչին, և էառ զՈւրհայու բերդն Հոկտեմ-բերի Թ. յաւուր յերեքշաբաթի, որ և յառաջագոյն ի քաղաքն էր. այս Նազիչիս աշխարհաւ էր Կապադովկիոյ, սուխթայ գոլով՝ և ժամանակս ինչ եկաց ի յՈւրհայ առ-մօլլայ մի ուսման աղագաւ և յետոյ եղև թֆանքչի՝ և եկաց զինուորութեամբ ի սպասաւորութիւն այլոց իշ-խանաց, յաղթող ի պատերազմունս, և յետոյ ինքնա-գլուխ եղեալ ժողովեաց զընկերս՝ ապստամբեալ ի թա-գաւորէն, բազմացոյց զզօրս իւր, մինչ զի ասէին թէ, զերեսուն և զվեց հազարապետս ունէր, որ բօլուկբաշի կոչէին. և ասէին թէ յամենայն աւուր զայս չափ ծախս

ունէր, այս է ի մի օրն, զերեսուն մոթ գարի տայր երիվարացն, և այս միջագիտաց մոթն է, որ ամէն մոթ՝ երկու հարիւր քսան և չորս լիտրն գայ հոռոմանց լտրովն, և չորս հարիւր լիտր հաց, հարիւր և տասն ոչխար, ԼԵ· լիտր բրինձ. տասն լիտր իւղ, և Շ· ղուռուշ ռոճիկ, զի օրն Ռ· ղուռուշ ծախք ունի ասէին: Դարձեալ ի սոյն Թուին Հուսէյն փաշայն ապստամբեցաւ ի Թագաւորէն՝ և կողոպտեաց զբազում տեղիս՝ և եկեալ պաշարեաց ըզկեսարիա. և ի նոյն ամին գնացեալ յՈւրհա միաբանեցաւ ընդ Եազիչուն: Եւ եօթն մարդ ի գլխաւորաց քաղաքին սպան Եազիչին. զոմանս կախելով՝ զոմանս խեղդելով. զի որն պարոն էր, և որն չաւուշ. և ինքն տիրեաց քաղաքին. և յուրմէ փախուցեալ էր փոխանորդն փաշային: Դարձեալ ի սոյն Թուին, Հոկտեմբերի ԺԵ·ին, յաւուր երկուշաբաթի Փիալայ փաշայն և Մախսուտ բէկն եկին ի վերայ Եազիչուն յՈւրհա, և սաստիկ պատերազմ արարին ի դիմաց սուրբ դաստառակին՝ և ոչ կարացին առնուլ զնա: Դարձեալ ի սոյն Թուին Հոկտեմբերի տասն և ութին, եկն վէզիրն, որ փոխանորդ է Թագաւորին, Մահմետ փաշայ կոչեցեալ՝ սա եկն ի վերայ Եազիչուն յՈւրհայ և խսարեցաւ ի քաղաքն, եօթանասուն և երեք օր: Դարձեալ ի սոյն Թուին Ղարայեազիչին եկն ի Զօռում և նստեալ անդ աւերեաց զշրջակայ երկիրն հարկապահանջութեամբ: Դարձեալ ի սոյն Թուին ապստամբեցաւ քօսայ Սաֆարն: Թուին ՌԽԹ Հուսէյին փաշայն ապստամբեալ էր ի Թագաւորէն և աւերեալ բազում երկիր և միաբանեալ ընդ Եազիչուն. Եազիչին ըմբռնեալ զնա ըստ խնդրոյ վէզիրին ետ ի ձեռս նորա, և այս պատճառաւս հաշտութիւն արարին ընդ միմեանս, մանաւանդ ի ծածուկ կաշառօք կուրացոյց զաչս վեզիրին՝ և դարձաւ ի նմանէ չուեաց յՈւրհայ, ի Դեկտեմբերի քսան և չորս յաւուր շաբաթի՝ և գնաց

յԱմիթ կուրացեալն կաշառօք։ Դարձեալ ի սոյն թուին Ղարայեազիչին չարչարեաց զՊուրհա սաստիկ հարկապահանջութեամբ. և գլխատեաց քահանայ մի Աբրահամ անուն, և զայր մի տանուտէր Սքանդար անուն, Ցունվարի քսան և երկու, յաւուր երեքշաբաթի։ Դարձեալ ի սոյն թուին Ղարայեազիչին տիրեաց Թօխաթոյ՝ և Ըմասիոյ՝ և Մարզուանու՝ Զօռումու՝ և եղև սով, որ մէկ լիտր ալիւրն երեսով փլօրի մի եղև, և մէկ քիլայ գարին՝ մէկ ղուռուշ։ Դարձեալ ի սոյն թուին ապստամբեցաւ Ղարաղաշն։ Թուին ՌԾ. աւերեաց Ղարայեազիչին զՍեբաստիա կողոպտելով և այրելով, և զբազումս կոտորելով, և եղև սով մեծ։ Դարձեալ ի սոյն թուին Ղարայեազիչին յաղթեաց Իբրահիմ փաշային ի Կեսարիայ։ Դարձեալ ի նոյն թուին թալնեաց և կողոպտեաց Լաւանդն՝ որ Սաթրչի կոչիւր, զՍիս քաղաք Կիլիկեցւոց։ Դարձեալ ի սոյն թուին ապստամբեցաւ Ահմատ փաշայն։ Դարձեալ ի սոյն թուին Հասան փաշայն եկն ի յԱմիթ։ Թուին ՌԾԱ. Հասան փաշայն խաղեցաւ ի Թօխաթ։ Դարձեալ ի սոյն թուին սատակեցաւ Ղարայեազիչին։ Դարձեալ ի սոյն թուին այրեաց Ջալալին զԹօխաթ քաղաք։ Դարձեալ ի սոյն թուին Ներքինի Խոսրով փաշայն նեղացոյց զԱմիթ հարկապահանջութեամբ։ Թուին ՌԾԲ. ապըստամբեցաւ Թաւուլն։ Դարձեալ ի սոյն թուին առաջին Շահաբասն եկն ի Թաւրէզ պատերազմեցաւ ընդ Օսմանցւոյն և էառ ի նոցունց զԹաւրէզ և զՆախչուան։ Թուին ՌԾԳ. նոյն այս Շահաբաս էառ զԵրևան քաղաք պատերազմաւ ի յՕսմանցւոց։ Դարձեալ ի սոյն թուին Ջղալօղլի Սարդարն եկն՝ զինչ որ Ջալալի կայր զամէնն ժողովեաց և զՂարաղաշն այլ եբեր ի հետն, տարաւ ի Շահին վերայ։ Դարձեալ ի սոյն թուին մեռաւ Սուլթան Մահմատ խոնդքարն և նստաւ Սուլթան Ահմատն թագաւոր։ Դարձեալ ի սոյն թուին ապստամբեցաւ Ինջաղան։

Թուին ՌԾԴ· ապստամբեցաւ Ցուլաղատին։ Դարձեալ ի սոյն թուին ապստամբեցաւ Ջանփօլատցի Ալի փաշայն, որ էր ամիրայ Քիլիսու, և զօրացեալ սա էառ զՀալապ քաղաքն, և տիրեաց նմա ամս երկու և կէս, ապըստամբեալ ի թագաւորէն։ Դարձեալ ի սոյն թուին Ջղալօղլի սարդարն բազմօք զօրօք եկն յԵրևան, այս գալս սորա առաջին գալն է, որ եկն ի վերայ շահին. և յայսմանէ պատճառէ նոյն առաջին Շահաբասն զԱտրպատական աշխարհի բնակիչսն զհայ՝ զտաճիկ՝ զջհուտ ի միասին քշեաց և տարաւ յԱսպահան, այս է մեծ սուրգունն։ Դարձեալ ի սոյն թուին մինչդեռ Ջղալօղլին ամրացեալ էր ի բերդն Վանայ, պաշարեցին զնա զօրքն պարսից, նա ի գաղտ դրանէն ելեալ եմուտ ի նաւ և փախուցեալ գնաց յԱրծկէ և անտի անկաւ ի բերդն Խնուսայ. և ապա գնացեալ յԱրզրում ժողովեաց առ ինքն զզօրս իւր. և զօրքն Պարսից ժողովեալ զերկիրն Ուշտունեաց գնացին յաշխարհն իւրեանց։

Թուին ՌԾԵ· Ջղալօղլի սարդարն երկրորդ անգամ եկն ի վերայ Շահին ի Թաւրէզ պատերազմեցան. և կոխվեցաւ Ջալօղլին և փախեաւ, և Ղզլբաշն զնոցա խազնէն էառ, տասն և երկու փաշայ իւրով հեծելովն ջարդեաց, այս պատերազմն Հոկտեմբերի քսան և հինգին եղև, և ինքն Ջղալօղլին գնաց ի յԱմիթ և անդ մեռաւ ի Փետրվարի վեցն, և խիստ սով եղև ի Վան՝ և յԱրզրում, հայր զորդին եկեր և որդին՝ զհայր, ոչ շուն մնաց՝ ոչ կատու, որք կերին զամէնն, այնչափ մարդ ջարդեցաւ ի սովուն, որ զլուխ չելան թաղելով, խոր փորեցին և ներս լցին։ Դարձեալ ի սոյն թուին նոյն առաջին Շահաբասն գնաց ի վերայ Գեանջայու և էառ զնա յՕսմանցւոյ։ Դարձեալ ի սոյն թուին սաստիկ սով եղև յՍտանբօլէ մինչև ի Թաւրէզ՝ և ի Բաղդատայ մինչև ի Դամուր-ղափին, զշուն՝ և զկատու՝ զմեռեալ մարդ և ըզ-

կենդանի մարդ կերին ի սաստիկ սովէն։ Դարձեալ ի սոյն Թուին յայս սովուս պատճառէն գայլքն զօրացան ի վերայ մարդկան և զկենդանի մարդիք պատառեալ ուտէին, վասն որոյ մարդագայլ անուանեցին զայն գայլսն։

Թուին ՌԾԶ. առաջին Շահաբասն գնաց ի Շամախի և պատերազմաւ էառ զնա յՕսմանցւոց։ Դարձեալ ի սոյն Թուին Ջալալին եկն յԱրզրում. Մայիսի տասն և եօթն. օրն կիւրակի. Յուլիսի հինգ, օրն կիւրակի եւ՝ շատ անողորմ բան արար։

Թուին ՌԾԷ. առաքեաց սուլթան Ահմատ զՄուրատ փաշայն ի վերայ Ջանփոլատցի Ալի փաշային ի Հալապ, և եկեալ կոտորեաց զզօրս նորա ի դաշտին, որ կոչի գոգարչինլուկ. և զինքն փախստական արար։ Դարձեալ ի սոյն Թուին աւերեաց Թաւուլ անուն Ջալալին զԽարբերդու գաւառն և զԲալուայ։ Դարձեալ ի սոյն Թուին Սօֆին եկն յԱրզրում Յուլիսի երեսունն, օրն շաբաթ՝ երկիրս ամէն Թէ գիւղ է Թէ քաղաք վաստակն խիստ այրեաց, Օգոստոսի մէկն՝ գնաց օրն երեք երեքշաբաթի։

Թուին ՌԾԸ. Մուրատ փաշայն սուրգուն արար։ Թուին ՌԾԹ. եւ Մուրատ փաշայն ի Ստամբօլու բազում զօրօք և գնաց ի Թաւրէզ և խիստ ձիւն եկն ասկարին վերայ խիստ զապուն ձգեաց, Չիլ փաշայն և ֆռանկին ընկան, յետև դարձաւ եկն ի յԱմիթ, ձմեռեաց ի յԱմիթ։ Դարձեալ ի սոյն Թուին Յուլիսի երեսուն և մէկն, օրն երեքշաբաթի, Սօֆին եկն յԱրզրում խիստ կռիւ արար հետ Թուրք Ջաբիլմազին՝ հետ Թաթարին. եւ Օգոստոսի երեքն՝ գնաց օրն ուրբաթ, տեղւոյս տէրն Հասան փաշայն էր։

Թուին ՌԿԱ. Մուրատ փաշայն մեռաւ ի յԱմիթ, և էառ զվէզիրութիւն Նասֆ փաշայն։ Դարձեալ ի սոյն

թուին Նասուֆ փաշայն ել ի յԱմիթայ և զելչին ի հետն տարաւ ի Ստամբօլ՝ և արար զբարիշութիւն հետ Դզըլ-բաշին՝ և ելչին յետ դարձոյց հետ Հասան փաշային՝ և Դարսեցիքն, որ կոտորեցին։ Թուին ՌԿԲ. առաջին Շահաբասն գնաց զՎրաց տունն գերեցոյց։

Թուին ՌԿԳ. առաջին Շահաբասն զսուրբ Էջմիածնի քարերն, և զսրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչի աջն հանեալ յԷջմիածնէ. բարձեալ տարաւ յԱսպահան։ Դարձեալ ի սոյն թուին ի գիւղաքաղաքն ի յՈւլաշ զսուրբ Փրկիչ եկեղեցին շինեցաք։ Թուին ՌԿԵ. Օքուզ-Ահմատ փաշայն եկն ի վերայ Երևանայ, երկու ամիս և կէս նստաւ չկարաց առնուլ, ջարդեցաւ և յետս դարձաւ։ Դարձեալ ի սոյն թուին Ռուռուսն կոխեաց զՏրապիզօն։

Թուին ՌԿԶ. սուլթան Մուստաֆայն նստաւ թագաւոր երկու ամիս՝ այլ և ի նոյն ամին փոխեցին զնա՝ և նստուցին զսուլթան Օսմանն թագաւոր։ Դարձեալ ի նոյն թուին և ի Տրէ ամսոյ տասն և ի Նոյեմբերի ամսոյ տասն և ութն, առաջին Շահաբասն ի գիւղն Ագուլիս զտէր Անդրէաս քահանայն նահատակեաց, վասն Քրիստոսական հաւատոյս՝ և անդ յԱգուլիս ի Խցաձորի եկեղեցին թաղեցին զտէր Անդրիաս։

Թուին ՌԿԷ. Խալիլ փաշայն եկն ի Թաւրէզ, ջարդեցաւ՝ և յետ դարձաւ։ Դարձեալ ի սոյն թուին մահ անկաւ, հարիւր և քառասուն տղայ մեռաւ ի Գումիշխանէն ի մէկ օրն։ Դարձեալ ի սոյն թուին մեռաւ սուլթան Ահմատն, նստաւ եղբայրն սուլթան Մուստափայն յաթոռ թագաւորութեան հարիւր օր։ Թուին ՌԿԷ. և կէս. մազուլ արարին զսուլթան Մուստաֆայն, և եդին թագաւոր զսուլթան Ահմատի որդին զսուլթան Օսմանն։ Թուին ՌԿԸ. ի Նաւասարդի ամսին՝ շող թրաձև երևեցաւ յարևելից դէմ յարևմուտս. և զկնի շողոյն յարևելից աստղ մի երևեցաւ միշտ ընթանայր ի հիւսիս։

Թուին ՌԿԹ. սուլթան Օսմանն գնաց ի պատե-
րազմ ի վերայ Լեհին և ոչ կարաց առնուլ։ Դարձեալ
ի սոյն թուին թագաւորն Օսման ի վերայ Լեհին էր,
ի կողմն հիւսիսոյ երկինքն վառեցաւ կէս գիշերին, որ-
պէս թէ արեգակն ի յամպն վազէ, ի ծագել ժամուն
այրի, նոյնպէս եղև։ Եւ յորժամ թագաւորն դարձաւ
ի պատերազմէն և գնաց ի Ստանբօլ՝ իւր զուլն չարա-
ցաւ թէ, մեզ այսպէս թագաւոր ոչ է պիտոյ. զարկին
սպանին զթագաւորն։ Թուին ՌՀ. ծովն Ստանբօլայ
պաղեցաւ Յունվար ամսոյ տասն և չորս՝ որ մարդ շրջէր
ի վերայ։ Թուին ՌՀԱ. նոյն սուլթան Մուստաֆայն
կրկնակի նստաւ թագաւոր, և կալաւ զաթոռ թագաւո-
րութեան հարիւր և յիսուն օր. և կրկնակի մազուլ
արարին զնա՝ զի ի խելացն պակաս էր։ Դարձեալ ի սոյն
թուին առաջին Շահաբասն գնաց զՂանդահար քաղաքն
էառ պատերազմաւ։ Դարձեալ ի նոյն թուին Իմամղու-
լի խանն գնաց՝ զՀուրմուզ քաղաքն էառ պատերազմաւ։
Թուին ՌՀԲ. նստաւ Սուլթան Մուրատն թագաւոր ի
Սեպտեմբերի ամսոյն։ Դարձեալ ի սոյն թուին Ապազայ
փաշայն, որ նստէր յԱրզրում քաղաքի. ելեալ յԱրզ-
րումայ և գնաց մինչև յԱնկիւրիա, և շատ ենկիչարի
ջարդեաց զանազան և չար տանջանօք, վրէժխնդիր լի-
նելով արեան Սուլթան Օսման թագաւորին. և դարձեալ
եկն ի յԱրզրում։ Դարձեալ ի սոյն թուին մանչ ժողո-
վողն ել։ Թուին ՌՀԳ. Բաղդատայ նստող Բաքիր փա-
շան մարդ ուղարկեց առաջին Շահաբասին. Թէ եկ, որ
զԲաղդատ քեզ տամ, Շահաբասն գնաց. իսկ փաշան
ստեաց, և ոչ ետ, իսկ Շահն իւր թրովն էառ զԲաղ-
դատ։ Թուին ՌՀԴ. յՕգոստոսի ամսոյն՝ ի յԱմթայ գիւ-
ղըն, որ կոչի Քապիկ, եղև նշան մեծ. որ ծնաւ կին մի
մեռած զաւակ՝ երկու գլխէն. մէկ գլուխն մարդոյ և մէկ
գլուխն հորթու, և մարմինն անարատ հորթու՝ ոտքն՝

կճղակն՝ աղին ամենն հորթու նման՝ բայց մին գլուխն մարդոյ։ Դարձեալ ի սոյն Թուին, Ուռուսն եկն զՏրապիզօնայ զնկրքին բերդն էառ, Ապրելի քսան և երեքն օրն կիւրակէ, եկաց չորս օր՝ և ապա գնաց. երկու հարիւր և քառասուն ղայեխ էր. հազար և հինգ հարիւր Ուռուս Ջարդեցաւ։ Դարձեալ ի սոյն Թուին՝ վրացի մովրովն պատերազմեցաւ ընդ Ղզլպաշին. և ի նոցանէ կոտորեաց զբազում հեծեալս. և զՂարչղայ խանն. զՈւսուֆ խանն. զՂազախ խանն սպան։ Դարձեալ Ղզլպաշքըն յետ երկուց ամսոց միւս անգամ զօրաժողով եղեն ի վերայ վրացւոց, և գլուխ Վրաց էր նոյն մովրովն. որ և յայսմ պատերազմի ևս կոտորեաց մովրովն զզօրս Ղզլպաշին. և զԱմիրգունայ խանն, զՇահբանտայ խանն. զՍէլիմ սուլթանն սպան։ Դարձեալ ի սոյն Թուին յԱրզրում նստող Ապազա փաշայն զկարաւանսն, որ յարևելից և յարևմտից գային յԱրզրում և գնային, հնարիւք և խաբէութեամբ արգել զամենեսեան, և մինչ որ բազում կարաւանք ժողովեցան, և ապա յաւուր միում ամենեցուն զինչսն և զստացուածսն յափշտակեաց, եթէ նաղտ և թէ վէճ, և յետոյ ապստամբեցաւ ի Թագաւորէն և եղև Ջալալի. այլ և կամեցաւ միաբանել ընդ Պարսից, զի ղքուերողլին իւր բազում զօրօք առաքեաց առ Շահաբաս Թագաւորն Պարսից։

Թուին ՌՀԵ. Հաֆիս-Ահմատ փաշայն ՅՌ. մարդով եկն ի վերայ Բաղդատայ, ոչ կարաց առնուլ. հեծելն Ջարդեցաւ և յետս դարձաւ։ Դարձեալ ի սոյն Թուին Օսմանցիք Գ. ոսկի խարաջ առին ի Հայոց։ Թուին ՌՀԶ. Խալիլ փաշայն վէզիր եղև, եկն յԱրզրում ի վերայ Ապազին, իսկ Ապազէն գլուխ քաշեաց այլուր[1] զենկիչերիսն Ջարդեաց, Զ. փաշայ ըմբռնեաց՝ զերկուսն

---

1 Ուղ. Վերստին.

ի դուրս սպանեաց. և զԴ. փաշայն ի բերդն տարաւ, և բերդի դուռն փակեց. և Խալիլ փաշայն նստաւ ի վերայ բերդին՝ Բ. ամիս և կէս. Է. նաղուս բանալ ետ, յետքն չկարաց առնուլ, ել և գնաց, և ի կէս ճանապարհին զԹօփերն ի վայր ձգեաց, և Ապազայն յետևն վազեաց, Ձ. ղաթար ուղտ, և Կ. ղաթար ջորի, ամէնն բեռնով, շատ մարդ ըմբռնեաց, և շատ այլ ջարդեաց. վազիրն գնաց ի Թոխաթ։ Դարձեալ ի սոյն Թուին, յառաջին Շահաբասէն Մովսէս վարդապետն էառ զհրաման լուսարարութեան սրբոյ Էջմիածնի, որ և եկեալ յԷջմիածին զսկիզբն արար նորոգութեան սրբոյ Աթոռոյն, եկեղեցւոյն՝ և պարսպին. և այլ շինուածոցն ամենայնի։

Թուին ՌՀԷ. Խոսրով փաշայն վէզիր եղև, և եկն յԱրզրում ի վերայ Ապազային, վրացի մովրովն ի հետըն էր. ԺԵ. օրն, ՌՇԳ. Թօփ կպոյց, երեք դիմաց բըլուց զբերդի պարիսպն, ըմբռնեաց զԱպազայն և տարաւ ի Ստամբօլ։ Թուին ՌՀԸ. առաջին Շահաբասն մեռաւ ի Ֆահրապատ ի յԱշրաւ քաղաքի, և փոխանակ նորա, նորին Թոռն Շահսէֆին յԱսպահան Թախտ նստաւ Թագաւոր։ Դարձեալ ի սոյն Թուին և Ցունվարի ամսոյ ԺԳ. յաւուր տնօրինութեան Տեառն զՄովսէս վարդապետն օրհնեցին կաթուղիկոս սրբոյ Էջմիածնի։ Դարձեալ ի սոյն Թուին այս Մովսէս կաթուղիկոս գնաց յԱսպահան առ Թագաւորին Շահսէֆի. զբազում գանձս ծախեաց ի դուռն Թագաւորին և զբազում աշխատութիւնս կրեաց, և հազիւ եբարձ զՃ. Թուման մուղադէն. որ եդեալ էր ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի. յայնմ հետէ եղև սուրբ Աթոռն ազատ։ Թուին ՌՀԹ. ի Հայոց ազգէն քրիստոնեայք՝ որք էին յԻլով քաղաքին. ոչ ընկալան զեպիսկոպոսն իւրեանց. որոյ անունն էր Նիկոլայոս. հակառակեցան և ոչ

Հնազանդեցան նմա· իսկ եպիսկոպոսն յարեցաւ յարեգայսն Փռանկաց· որք էին յեղփայլիթայ կարգէն և ետ զձեռագիր նոցա, եմուտ ի Հնազանդութիւն և ի դաւանութիւն փափի· և եղև ինքն Փռանկ· և նոցին օգնականութեամբն յափշտակեաց զեկեղեցիսն Հայոց, յոյժ բազմաւ անօթիւ և վախմերով· և զամենայն անօթս եկեղեցեացն և զվախմերն վաճնեալ կորոյս և ոչ ինչ մնաց՝ միայն դատարկ եկեղեցին, և այնպէս մնաց մինչ ի ՌՃԱ· թիւն մեր։ Դարձեալ ի սոյն թուին Խոսրով փաշայն վէզիրն առաքեցաւ ի սուլթան Մուրատ թագաւորէն գնալ ի վերայ Բաղդատայ· և նա գնաց դէպ ի Համադան· եհաս մինչի Դարգազին· և անտի դարձաւ և եկըն ի Թօխաթ ձմերեաց· իսկ սուլթան Մուրատ թագաւորն առաքեաց զՄուրթուզայ փաշայն ի Թօխաթ, որ զԽոսրով փաշայի գլուխն կտրեաց։ Թուին ՌՁԱ մոխիր տեղաց ի վերայ Սէլէնիկու Գ· օր, Գ· գիշեր։ Դարձեալ ի սոյն թուին Լէհայ երկիրն մէկ մարդոյ խաշանց մէջ մահ անկեր է· նա Աստուծոյ քուֆր է արեր թէ երր կու սպանես նա ենկ և կեր, Աստուած նմա պատուհաս կուտայ՝ որ ինքն շուն կու լինի և զստակած խաշինան կուտէ։ Դարձեալ ի սոյն թուին վախճանեցաւ մեծահաւատ սուրբ հայրապետն Մովսէս կաթուղիկոսն յԵրևան քաղաքի, ի Մայիսի ամսոյ ԺԴ· և թաղեցին զնա ի կողեռ կոչեցեալ բլրին՝ հուպ գերեզմանի կողեռ վարդապետին։ Թուին ՌՁԲ· ի Բէլրղատ քաղաքի տաճիկ մի խոզ է եղեր։ Դարձեալ ի սոյն թուին՝ և Յունվարի ԺԳ· յաւուր տնօրէնութեան Տեառըն Մովսէս կաթուղիկոսի աշակերտ զՓիլիպպոս վարդապետն օրհնեցին կաթուղիկոս սուրբ Էջմիածնի։ Դարձեալ ի սոյն թուին· և Օգոստոսի ամսոյն Սուլթան Մուրատ թագաւորն կարի սաստիկ եասախ արար պիղծ թութունին· և իւր տէրութեան աշխարհն զամենայն

ղահֆախանայսն խափանեաց։ Թուին ՌՉԳ. մոլորեցան Ցոյնք և արարին զծառազատիկ. իսկ Հայոց ազգն, Հապաշն, Ասորին, և Ղփտին ուղիղ կացին և ճշմարիտ։ Դարձեալ ի սոյն Թուին[1] սուլթան Մուրատն գնաց ի Լէհայ վերայ ի պատերազմ, և հնազանդեալ դարձուցին։ Դարձեալ ի սոյն Թուին և յՕգոստոսի ամսոյ զվերոյ ասացեալ զԱպազա փաշայն սպան Թագաւորն սուլթան Մուրատ։ Թուին ՌՉԴ. սուլթան Մուրատ Թագաւորն ՉՌ. մարդով եկն ի վերայ Երևանայ բերդին նըստաւ. Թօփով ծեծեաց զբերդն մեծաւ զօրութեամբ՝ և յինն օրն էառ զբերդն. և զիշխան բերդին զԹահմազղուլի խանն իւրով պարոններովն ղրկեց[2] ի Ստամբօլ, ԺԲՌ. մարդ քաջ պատերազմօղ եդ ի մէջ բերդին, և ինքն էանց գնաց ի Թաւրէզ և անտի դարձաւ ի վերայ Վանայ և գնաց ի Ստամբօլ։ Դարձեալ ի սոյն Թուին զՄանօղլին բերեալ ի Ստամբօլ սպան զնա Թագաւորն։ Այլ և Ջէլ[5] փաշայն սպան ի նոյն ամի։ Դարձեալ ի սոյն Թուին զՀուսէյն աֆանդին մուֆտին սպան Թագաւորն։ Դարձեալ ի սոյն Թուին ի Մայիսի ամսոյ ԺԴ. օրն Չորեքշաբաթ, սուրգուն արար Թագաւորն Հայոց, Հոռոմոց, և Ցաճկաց։ Դարձեալ ի սոյն՝ յՕսմանցւոց յաշխարհն մէկ լիտր լեղակն ութսուն և եօթն ռեալ եղև։ Թուին ՌՉԵ. Թագաւորն Պարսից Շահսէֆի ՃՌ. մարդով եկն ի վերայ Երևանայ՝ նստաւ Գ. ամիս բազում աշխատութեամբ և պատերազմաւ զբերդն էառ յՕսմանցւոց. և զիշխան բերդին զՄուրթուզայ փաշայն և այլ բազում զօրս ի նոցանէ սպան, և զՇխիջան փաշայն և զԻբրահիմ փաշայն՝ և զՄուսին փաշայն ըմբռնեաց՝ տարաւ յաշխարհն Պարսից. և յԵրևան կարգեաց իշխան զՔալպիալի խանն։

---

1 Ոսկ. Դարձեալ ի սոյն Թուին յՕգոստոսի ամսոյն։
2 Նոյն. առաքեաց. 5 Նոյն. և Ա-էջէ+ էջէջ. Ջէլէզ.

Դարձեալ ի սոյն Թուին, Սօխորդ գիւղն վերուստ ի վայր իջաւ. և վանիցս փագախն անդ շինեցաւ։ Թուին ՌՁՋ. Սօխարդու աղբիւրն վերակացութեամբ Բաղիշեցի մահտեսի Սիմէօնին ի գիւղն իջաւ։ Թուին ՌՁԷ. Ապրիլի ԻԸ. օրն շաբաթ սուլթան Մուրատն գնաց ի վերայ Բաղդատայ ի պատերազմ, և ի Նոյեմբերի վեցն եհաս ի Բաղդատ. և ծեծեաց զբերդն ԼԸ. օր մեծաւ զօրութեամբ. և ի Դեկտեմբերի ԺԴ. օրն ուրբաթ էառ զԲաղդատ քաղաք. և դարձեալ եկն յԱմիթ [1]. Դարձեալ ի սոյն Թուին Փիլիպպոս կաթուղիկոսն զԼուսաւորչի աջն խնդրեաց ի Շահսէֆի Թագաւորէն, և հանեաց յԱսպահանայ և եբեր ի սուրբ Էջմիածին։

Թուին ՌՁԸ. Յունիսի Բ. Հոգւոյ գալստեան կիրակին դարձաւ սուլթան Մուրատն և եմուտ ի Ստամպօլ մեծաւ փառօք։ Թուին ՌՁԹ. սուրբ Սարգսի շաբաթու հինգշաբաթ օրն՝ մեռաւ սուլթան Մուրատն, և նստաւ ի տեղի նորա Թագաւոր՝ նորին եղբայրն սուլթան Իբրահիմն։ Թուին ՌՂ. Փետրվար ամսոյ Ե. յաւուր ուրբաթու սաստիկ և ահագին շարժ եղև ի Թաւրիզ քաղաքն, և ի շրջակայ գաւառսն իւր, բազում տունք և շինուածք կործանեցան, և բազում մարդիկք ներքոյ հողոյ մնացին, և Շամղազան ամարաթն. և Ուստաշագիրտ ամարաթն փլան. և ի մէկ օրն՝ Ե. և Զ. անգամ շարժ կու լինէր մինչև Բ. ամիսն։ Յետ նորա ԺԵ. օրն, և ի Ի. օրն, և Լ. օրն մի անգամ շարժ կու լինէր. այսպէս եկաց մինչև ի Ե. ամիսն. ապա դադարեցաւ ողորմութեամբն Աստուծոյ։ Դարձեալ ի սոյն Թուին, Ուռուսն եկաւ Ղազախու բերդն էառ և շատ մարդ ջարդեց յՕսմանլուէն։

---

1 Ոսկ. Դարձեալ ի սոյն Թուին Թաթարն եկաւ յերկիրն Արարատու։

Թուին ՌՂԱ. Մայիս ամսոյ Գ. մեռաւ Թագաւորն Պարսից Շահ-սէֆի։ Դարձեալ ի սոյն Թուին և ի Մայիսի Ջ. փոխանորդ Շահ-սէֆուն եղին Թագաւոր ի տեղի նորա զնորին որդին զերկրորդ Շահաբասն։ Թուին ՌՂԲ. Դարձեալ Օսմանցին յետ էառ պատերազմաւ զքաղաքն Ազախ ի Ռուսէն [1]։ Թուին ՌՂԲ. ի Թագաւորութեան սուլթան Իբրահիմին Օսմանցիք սաֆար արին ծովով և համբաւեցին՝ Թէ գնամք ի վերայ Մալթայ կղզւոյն և խափ տուեալ գնացին ի վերայ Կրէտէ կղզւոյն, որ էր ի ձեռն Վենետիկցւոց, և զիւրաւ առին զնա՝ զի բնակիչք կղզւոյն յօժար էին յառնուլն յՕսմանցւոց։ Թուին ՌՂԵ. յԱպրիլ ամսոյ Բ. յաւագ ուրբաթու գիշերին ի լոյս աւագ շաբաթ աւուրն. սաստիկ և ահագին շարժ եղև ի Վանայ քաղաքն և յիւր երկիրն, և փլաւ կէսն պարսպի քաղաքին, և յոլով եկեղեցիք և մաչիտներ և բազում շինուածք կործանեցան և բազում մարդիկ առին ի ներքև, և եկեղեցիքն Վարագայ վանիցն աւերեցան, և այլ ևս վանօրայք որք ի գաւառին՝ աւերեցան, և յաւուրս Ը. ի շարժման եկաց երկիրն, որպէս զնաւ ի վերայ երեսաց ջրոյ՝ և ապա հանդարտեցաւ, որ ի Դ. օրն՝ և ի Ե. օրն՝ և ի Ժ. օրն մի անգամ շարժէր, և այնպէս մնաց մինչ որ Յունիս ամիսն կատարեցաւ. և ապա զհաստատութիւն էառ երկիր ողորմութեամբն Աստուծոյ։ Դարձեալ ի սոյն Թուին ազգն Օսմանցւոց մազուլ արարին զսուլթան Իբրահիմն ի Թագաւորութենէ՝ և յետոյ սպանին, և եդին ի տեղի նորա Թագաւոր զնորին որդին զսուլթան Մահմատն Յուլիս ամսոյ ԻԸ։ Դարձեալ ի սոյն Թուին՝ երկրորդ Շահաբասն գնաց ի վերայ Ղանդահար քաղաքին

---

1 Ուկ. Դարձեալ ի սոյն Թուին եկն մարախ յերկիրն Արարատու։

և էառ զնա․ և զՂալաբխտն ղաթլամ արար։ Դարձեալ ի սոյն թուին զօրքն Պարսից, որք էին ի Թիֆլիս քաղաքին․ զօրաժողով եղեալ գնացին ի վերայ Կախեթուտիրոջն Թամրազ թագաւորին Վրաց, և ի մէջ պատերազմին սպանաւ որդին Թամրազին, որոյ անունն էր Դաւիթ՝ որ էր ժառանգ թագաւորութեանն․ իսկ Պարսիկք առին զգլուխն Դաւթին, ընդ նմին և զբայդաղն՝ որ էր խաչալամ․ և զԴաւթի գլուխն ի ձող ցցեցին, և զխաչն գլխիվայր ի բայդաղէն կախեցին, և այնպէս ի Թիֆլիս քաղաքէն մինչ ի յԱսպահան տարան առաջի թագաւորին իւրեանց երկրորդ Շահաբասին, և յամենայն քաղաքս Պարսից մեծաւ ցնծութեամբ խրախութիւն առնէին, և քրիստոնէիցն էր մեծ սուգ և տրտմութիւն՝ զի քրիստոնէից թագաւորութիւնն անկաւ։

Թուին ՌՃ․ Փիլիպպոս կաթուղիկոսն սուրբ Էջմիածնի գնաց յԵրուսաղէմ․ բայց ամ մի բոլոր ի քաղաքն Հոռմստանայ շրջեցաւ, և ի մտանել ՌՃԱ․ թուին՝ եմուտ յԵրուսաղէմ․ զսուրբ Յակոբայ մէջն գոյնզգոյն քարերով և մուտախիններով սալեաց, և զաւագ բեմն բարձրացոյց․ քանզի կարի ցած էր։ Թուին ՌՃԱ․ Փիլիպպոս կաթուղիկոսն ելաւ յԵրուսաղէմայ և գնաց ի Ստամբօլ՝ անդ եկաց մէկ տարի, զքաղաքի եկեղեցեաց պարտքն վճարեաց․ որ էր ԼՌ․ ղուռուշ․ և այլ բազում ուղղութեան կարգս հաստատեաց անդ։ Դարձեալ ի սոյն թուին Խլովայ քաղաքի Նիկօլ եպիսկոպոսն եկն ի Ստամբօլ առ Փիլիպպոս կաթուղիկոսն, մեղայ ասաց․ արձակեալ ի կապանաց բանադրանաց, և զեպիսկոպոսական իշխանութիւն ընկալեալ ի նմանէ գնաց յԽլով քաղաք, ի տեղի իւր։ Դարձեալ ի սոյն թուին՝ Հնդստանայ թագաւորն Շահիջան Ն․ լաք մարդ ուղարկեց Ղանդահարայ վերայ, Ովրզանկէլ, փաշահզատէն, Սայդուլէ խանն սարդար կարգեց, որք գնացին Բ․ ամիս և կէս նստան

ԻՌ. ապահէք վայր անկան, Թող զբաշխիփաթիարի օրղուբազարի հալալ խօրն։ Թուին ՌճԲ. Փիլիպպոս կաթուղիկոսն ելաւ ի Ստամբօլայ և մեծաւ փառօք եկեալ եհաս յԷջմիածին յաթոռն իւր։ Դարձեալ ի սոյն Թուին Դարիշուքուրն Է. լաք մարդով եկաւ Ղանդահարայ վերայ, Գ. ամիս Նստաւ երիշ արար, ԼՌ. մարդ վայր անկաւ՝ ոչ կարաց առնուլ, յետ դարձաւ։

Թուին ՌճԳ. զէջմիածնայ զանգակատան հիմն արկին և սկսան ի շինել։ Դարձեալ ի սոյն Թուին՝ յՕգոստոսի ամսոյ Բ. յաւուր Չորեքշաբաթի. աւուրք լուսնին Լ. և արեգակն յԱռիւծ կենդանակերպն էր. կէս աւուրն անցեր էր. Գ. մասն արեգական խաւարեցաւ և աստեղք երկնից երևեցան՝ որպէս ի գիշերի։ Թուին ՌճԴ. ի մարտի ամսոյ ԻԵ. յԱղուհացից հինգերորդ կիւրակէին վախճանեցաւ տէր Փիլիպպոս կաթուղիկոսն ի սուրբ Էջմիածինն և տարեալ թաղեցին ի սուրբ Հռիփսիմէ եկեղեցւոյ մէջն։ Դարձեալ ի սոյն Թուին և յԱպրիլի ամսոյ Ը. ի տօնի Ծաղկազարդին զՋուղայեցի Յակոբ վարդապետն օրհնեցին կաթուղիկոս սուրբ Էջմիածնի։ Դարձեալ ի սոյն Թուին Բաղիշու տէր Աւդալ խանն չարացաւ և Ջալալի կամէր լինել. մալաք Մահմատ փաշայն Վանայ բազում զօրօք եկն ի Բաղէշ քաղաք զԱւդալ խանն փախուցին՝ և ի տեղի նորա եդին խան զնորին որդին՝ որում անունն էր Դիադին։ Եւ յետ միոյ ամի եկն Աւդալ խանն և խորամանկութեամբ սպան զորդին իւր Դիադինն, և դարձեալ ինքն Նստաւ խան։ Դարձեալ ի սոյն Թուին զՊաշտեցի հայերն յԱսպահան քաղաքի մէջէն հանին և յեզր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահաբասին։ Թուին ՌճԵ. զԵրևանցի և զայլ ևս հայերն հանին յԱսպահանայ քաղաքի միջէն, և յեզր քաղաքին բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահաբասին։ Դարձեալ ի սոյն Թուին ազգն քըր-

դաց նահատակեցին զայր ոմն քրիստոնեայ Աւետիս անուն՝ հայ ազգաւ՝ յաշխարհէն Մարաց՝ ի բերդն որ կոչի Ժիզան, և տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսով, որ էջ ի վերայ նորա։ Թուին ՌճԶ. զՋը-հուտ ազգն՝ որ ի մէջ Սպահան քաղաքին բնակեալ էին, բռնութեամբ և չարչարանօք տաճկացուցին զնոսա ազգն Պարսից. ընդ սոցին և զայլ ևս ջհտներն, որ յայլ քաղաքս Պարսից բնակեալ են, բռնութեամբ տաճկացուցին։ Դարձեալ ի սոյն թուին Դատիանայ թագաւորն մեռաւ և թագաւորութիւնն խանգարեցաւ՝ զի ոչ գոյր նմա որդի ժառանգորդ թագաւորութեան նորա։ Դարձեալ ի սոյն թուին և ի Փետրվարի ամսոյ ԻԵ. վախճանեցաւ Ջուղայեցի Սիմոն վարդապետն ի Թօխաթ քաղաքի՝ և անդէն թաղեցաւ. սա կարի վարժ էր քերականութեան արուեստին. և հանճարոյ արտաքին գրոց՝ և քաջաբան հակաճառող ընդդէմ ամենայն ազգաց։

Թուին ՌճԷ. Ղարադալխանի տէր մեծ երիսթաւն, որոյ անունն էր Ջալ, գնաց յԱսպահան ի դուռն շահին և ձեռնտուութեամբ շահի էհտիմալ դօլվաթին ոչ սպանաւ, այլ կենդանի դարձաւ յաշխարհն իւր։ Թուին ՌճԹ. Մարտի ամսոյ Ա. Պաշխաչուխի թագաւոր Աղէքսանդրն մեռաւ՝ և իւր փոխանակ որդին թագաւորեաց, անուն Բագրատ։ Դարձեալ ի սոյն թուին այս Բագրատս՝ որ փոխանակ հօր իւրոյ Աղէքսանդրին թագաւոր նստաւ, իւր խորդ մայրն զսորին զերկոսին զաչսն խաւարեցոյց՝ զի ներհակութիւն անկաւ ի մէջ նոցա. այլ և իշխանքն իւրեանց անմիաբանք եղեն, երկիրն աւերեցաւ, և թագաւորութիւնն խափանեցաւ։ Դարձեալ ի սոյն թուին և յԱպրիլի ամսոյ Ա. աղուհացից հինգերորդ կիւրակէին գործեցաւ այս, քանզի կարի ցրտային ծանր ձմեռն եղև՝ և պաղեցաւ ծովն Գեղամայ և Սևան կղզին, որ է ի մէջ ծովուն, սորին բնակիչքն՝ որքան

ամուր էր պաղն՝ զերեսօք պաղին երկթային և գային, և յորժամ թուլացաւ պաղն՝ որ ոչ բառնայր մարդ, յայնժամ կամեցան ջարդել զսառն, զի ճանապարհ արարեալ արտաքս գայցեն ի ծովէն, վասն որոյ առաջնորդվանից կղզւոյն Բարսեղ անուամբ վարդապետ, էառ ընդ իւր մէկ աբեղայ, և մէկ սարկաւագ, և երեք աշխարհական, մտին ի տուփ և սկսան կոտորել զպաղն, և կոտորելով հասին ի կէս ծովուն, յայնմհետէ սկսաւ շնչել հողմն ուժգին, և կամեցան յետս դառնալ ի կղզին՝ ոչ ևթող հողմն, որ ալեօք ջուրցն զկոտորեալ սառսն բերեալ բառնայր ի վերայ ափոցն, որով ծանրացեալ տուփքն անցին ի ներքոյ սառին, և սուզան ի ծովն, վարդապետն և աբեղայն և մէկ աշխարհական, իսկ սարկաւագն և մէկ աշխարհական փրկեցան ի հեղձմանէ, ողորմութեամբն Աստուծոյ: Դարձեալ ի սոյն թուին և յԱպրիլ ամսոյ Լ. յերկուշաբաթ աւուր, կայծակն եհար մէկ ձի սպան, զոր մերով աչօք տեսաք: Դարձեալ ի սոյն թուին և Յուլիս ամսոյ ԻԱ. յաւուր շաբաթու կրակ անկաւ ի մեծ քաղաքն Ստանբօլ մինչ ի վաթսուն և վեց ժամս այրեցաւ յոյժ բազում տեղի: Դարձեալ ի սոյն թուին հրաման արար թագաւորն Պարսից երկրորդ Շահաբասն, որ յազգէն մահմետականաց, ՌՇ. տուն թուրք տարան ի Կախէթ լցին՝ որ անդ բնակին:

Թուին ՌԾԺ. Կովկաս լերան բնակեալ Վրացիք՝ ազգն, որ ասի Թուշ, և փշաւ ?՝ եկին ի գիշերի, և զայս ՌՇ. տուն թուրքս ի սուր քաշեցին ի ծերոց մինչև ցստընդեայն: Դարձեալ ի սոյն թուին շահն զէհտիմալ դոլվաթն ընկեց յիշխանութենէ վասն արձակման երեսթաւին, քանզի ասացաւ առաջի խաներուն նաև առաջի շահին, թէ թելադրութեամբ երիսթաւին կոտորեցին Վրացիքն ՌՇ. տուն թուրքսն: Դարձեալ ի սոյն թուին նոյն երիսթաւի եղբօր որդիքն զիւր գլուխն

կտրեցին և տարան առ ոտն շահին. այս գործեցաւ թելադրութեամբ Շահնաւազ խանին Թիֆլիզու, որ և ինքնն ևս յազգէն Վրաց էր, որպէս զի ինքն հաւատարիմ երևեսցի առաջի շահին։ Դարձեալ ի սոյն Թուին Թամրազ Թագաւորին, որ էր տէր Կախէթու, ելեալ ի Վրաստանեայ՝ գնաց յԱսպահան առ երկրորդ Շահաբաս հնազանդ նմա, և որպէս սովորութիւն է նենգաւոր ազգին Պարսից, զառաջինն սիրով և մեծարանօք ընկալան զնա, բայց յետոյ վասն Քրիստոսական հաւատոյն և օրինացն՝ բանիւ իշխանացն նենգեաց զնա շահն և ձգեաց յերեսաց, և առաքեաց յաքսորս յաշխարհն Փահրապատու, ի քաղաքն Աստարապատ, և անդ մեռաւ, և բազումք ասէին, թէ կամօք շահին դեղեալ մեռուցին զնա։

Ի Թուին ՌճԺ. գնաց Թամրազն յԱսպահան, և ի ՌճԺ, մեռուցին զնա, այլև յարանցն, որք ընդ Թամրազիս էին, զընտիրսն սպանին, բայց զմարմին Թամրազին հրամանաւ շահին տարան յերկիրն իւր Կախէթ առ Թոռն նմին Թամրազի։ Թուին ՌճԺԴ. յամսեան Դեկտեմբերի, յետ անցանելոյ մէջ գիշերին, ի խոր առաւօտուն, երևեցաւ վարսաւոր աստղ մի յերկինս ի մէջ յարևելից և հարաւոյ, և զվարսն իւր դէպ յարևմուտըս ունէր ձգեալ՝ և յելանելն իւրում, որ աւուր՝ շուտ[1] ելանէր, և այնպէս շուտ[2] ելանելով գնաց մինչի յերեկոյն, և յորժամ էանց զմէջ գիշերոյն դարձոյց զվարսն իւր և ձգեաց դէպ յարևելս, և այնպէս գնալով եհաս մինչ ի յերեկոյեան լոյսն՛ և ապա անյայտ եղև։ Այլև ի սոյն Թուին, և յամսեանն Ապրիլի, դարձեալ երևեցաւ աստղ մի գիսաւոր ընդ արևելս ի կողմն հիւսիսոյ՝ առաւօտու պահուն, և ըզվարսն իւր ունէր ձգեալ ի կողմն արևմտեան, և յելանելն իւրում որ

---

1 Ոսկ. ուշ. 2 Նոյն. ուշ.

աւուր յուշ ելանէր, և այնպէս գնալով եհաս մինչև ի լոյս առաւօտուն, և անյայտ եղև։

Թուին ՌՃԺԵ.[1] ի Սեպտեմբերի ամսոյ Ժ. վախճանեցաւ Պարսից Թագաւորն երկրորդ Շահաբասն, սա յոյժ բարեբաստ էր, որ իւր շրջակայ Թշնամիքն ինքեանց կամօք գային ի սէր և ի հնազանդութիւն սմա այլ և ունէր խնամս բարեգութ ի վերայ ազգիս Հայոց։ Եւ յետ սորա Թագաւորեաց որդին սորա, զորոյ զանունն կոչեցին Շահսէֆի, ըստ անուան պապոյն իւրոյ, վասն որոյ զսա անուանեմք երկրորդ Շահսէֆի։ Եւ յետ նստելոյ Շահսեֆոյս Թագաւոր՝ ի շրջակայ ազգաց Թշնամիք յարեան և ասպատակեցին զերկիր սորա, այլ և ինքն ·հանապազ հիւանդ և ցաւագար մարմնով կայր, վասն որոյ ըռամ ձգողք և այլ հմայողք հմայելով ասացել են, Շահսէֆի անունն, որ ի վերայ դորա՝ ոչ է բախտաւոր. այլ և օրն և ժամն, յորում եղեալ են յաթոռ Թագաւորութեան, ոչ է լեալ բախտաւոր. վասն որոյ փոխեցին զանունն և անուանեցին Շահ-Սուլէյման, և հմայելով ընտրեցին բախտաւոր օր. և վերստին եդին յաթոռ Թագաւորութեան, և այժմ առողջ կայ և բարւոք, և զանունն Շահ-Սուլէյման ասեն և գրեն յամենայն տեղիս։

[1] Ս–է. Աստի պակասի մինչ ցվերջ գլխոյս։

Պատմութիւն անցից Հրէից ազգին եւ Սապէթայ անուն ջհտին, որ ասէր թէ ես եմ քրիստոսն փրկիչ Հրէից ազգին. եւ արդ՝ եկի եւ յայտնեցայ՝ զի փրկեցից զնոսա, եւ այլոց իրակութեանց, որք սոցունց հետեւեցան [1]

Ի թուին կենարարին մերոյ Քրիստոսի Աստուծոյ ՌՈԿԷ. ամին. և ի Հայոց թուականիս ՌՃԺԵ. ի կաթուղիկոսութեան գերագոյն և բարձրագահ աթոռոյն սուրբ Էջմիածնի տեառն Յակոբայ Ջուղայեցւոյս և ի թագաւորութեան Օսմանցւոց սուլթան Մահմատին, որդւոյ սուլթան Իբրահիմին։ Յայտնեցաւ ճարտար հրէայ մի և անուն նորա Սապէթայ, ի Զմիւռին քաղաքի ծնեալ և սնեալ և յոյժ վարժեալ դրօքն և ուսմամբն Հրէից, այլ և ինքն ի բնէ կորիճ արտասանէր. և օր աւուր յառաջանայր, յաւելոյր ուսմամբ, զորոյ զառաջադիմութիւնքն տեսեալ բազումք աշակերտին նմա. և նա բանս արուեստակեալս և հնարաւորս ուսուցանէր իւրոց հետեւելոցն. քանզի զանունն Աստուծոյ անդրադարձ գրէր և իւր աշակերտելոցն ուսուցանէր ընթեռնուլ։ Ապա գրեանս բանայր և ատեան և հանդէս յարդարէր և ընդ գիտունս օրինաց իւրեանց ի քննութիւն մտանէր և ճարտասանութեամբ բանից զնոսին յաղթահարէր. և զանունն Աստուծոյ որ անդ-

1 Սոյն պատմութիւն ամբողջ՝ զոր վասն հետաքրքիր գոլոյն, եդաք աստ, միայն յօրինակին Աւետիք երիցու գրեալ կայ և այն՝ այլով գրչաւ.

րադարձ գրէր՝ դնէր առաջի նոցա առ ի յընթեռնուլ, և նոքա ոչ կարէին, ապա զաշակերտսն իւր կոչէր և հրամայէր ընթեռնուլ, և նոքա՝ քանզի յառաջագոյն ուսեալք էին, պերճ բանիւ և խրոխտ ձայնիւ համարձակ ընթեռնուին, առ որ հիացեալ՝ զարմացեալ ապուշ մնային ամենայն ժողովք հանդիսին։ Եւ յետ ընթեռնլոյ գրեցելոյ գրին՝ ընթերցող գրին սկսանէր սարսափիլ և դողալ և լլկիլ զգետնի հարկանիլ և խեղդդիլ, և այլ ընդ այլ ձայն արձակել։ Իսկ Սապէթայն յարուցեալ սրսկման ջուր՝ զոր ունէին հրէայք, առեալ սրսկէր ի վերայ անտացելոյն և անդրէն վաղվաղակի բուժէր զնա յախտէն, վասն որոյ ամենայն տեսողքն հիանային և ապուշ մնային, և զարմանալի և մեծագոյն սքանչելեաց գործ համարէին լեալ զայն ի Սապէթայն զինքն հրաշագործ երևեցուցանէր նոցա և յԱստուծոյ առաքեալ և օծեալ, և զվկայութիւնս մարգարէիցն՝ զորս վասն գալստեանն Քրիստոսի ասացեալ են, զորս և կարէր՝ առեալ ի վերայ իւր մեկնէր. և ասէր թէ Մեսեայն զոր գուշակեցին մարգարէքն, թէ գալոց է և փրկելոց է զԻսրայէլ, այն ես եմ, որ եկեալ եմ փրկել զԻսրայէլ։ Եւ ասէր ժողովրդեանն լուծանել զշաբաթս և զպահս և հանապազ կեալ յուրախութեան, և իմզայ և դրոշմ իւրոյ անուանն հաշակեցուցանել և զինքն փառաւորել, և օծեալ յԱստուծոյ և առաքեալ փրկիչ ազգին Հրէից։ Եւ բազում փառօք մեծարանօք պատուէին զնա և տանէ ի տուն ի պատիւ, ի կոչունս հրաւիրէին զնա, և ի գնալն՝ ի ճանապարհին հովանի ի վերայ գլխոյն նորա կալնուին, և ոմանք զգլօշակս հանդերձիցն ի վեր կալեալ ի ձեռս ունէին և առաջի և ի ներքոյ ոտիցն բեհեզս և կտաւս տարածանէին՝ և երեք կոյս աղջիկ նմա մատուցին և նա ժամանակս ինչ առ ինքն կալաւ և ապա արձակեաց, և ազգն իւրեանց ամենեքեան զկնի նորա ըն-

Թանայինն, և զբանս ախտացելոցն՝ զոր կանխաւ յիշեցաք, թէ անկանէին և խեղդէին և ըստ Ակելոյ դիւրին և բարբառեցուցանելոյն դիւահարքն այլ ընդ այլոյ բարբանջէին. զայն դիւահարաց բանսն և այլ ինչ աչքախաւր գործք՝ զոր ինքեանք տեսեալ էին ի մոլորեցուցիչ Սաբէթայէն, և այլ ևս ինչ զոր ինքեանք յինքեանց յօդէին, զամենայն ի թուղթ գրեալ և ի քարտէզ տողեալ՝ գրեալ առաքեցին ի հեռաւոր տեղիս բանս աւետաւորս, թէ աւետիս ձեզ ցրուեալք տառապեալք, Սաբէթայ փրկիչ ազգիս, արդ՝ ցուցեալ, թագաւոր գոլով յԻզմիր՝ երևեալ օրէնս նորոգեալ, գաւազան ծաղկեալ, զմեզ ազատեալ, ազգօք ճոխացեալ և զԻսրայէլի ցրուեալս ժողովեալ: Իսկ ոյք ի Հրէից ազգէն գիտունք և իմաստունք և կարդացողք էին՝ տեսանէին, զի ազգն ամենայն զկնի նորա գնաց, և ոմանք ի նոցանէ յակամայ և առականէ գնացեալ եղեն իբրև զհնազանդեալս նմա. և ոմանք պատճառանօք գնացեալ յօտար աշխարհ՝ հեռացան ի նմանէ, և ամենեքեանք՝ որ խելացիքն էին, երկնչէին թէ մի գուցէ համբաւս այս ի լսելիս այլազգի մահմետականաց անկցի և համայն ազգաւ ջնջեսցեն զմեզ. և խաժամուժ ամբոխ ազգին այնոքիկ ընդ միմեանս ասացին մինչ որ եհաս համբաւն ի լսելիս մահմետական իշխանաց Իզմիր քաղաքին. և իշխանքն խորհեցան ընդ միմեանս թէ գրեսցուք և ծանուսցուք վեզիրին. և ապա թեթև ինչ և վեր ի վերոյ համարեալ զայն՝ թոյլ ետուն և ոչ ծանուցին վէզիրին, այլ կալեալ զհրեայն և ծանրագոյն տուգանս առեալ՝ ի բաց թողին: Բայց հռչակ համբաւոյ սուտ մեսիային օր աւուր առաւելոյր և հասանէր ի հեռաւոր աշխարհս, մանաւանդ ի Կոստանդնուպօլիս. և ոյք լսէին ջերմեռանդն սիրով վառեալ բորբոքէին, ոմանք ինքնին յուղի անկեալ գային նմա յընծայաբերութիւն, յուխտ և յերկրպագութիւն,

և ոմանք պատուական ինչս՝ ոսկի և արծաթ նմա ըն-
ծայս առաքէին, և ոմանք զտունս և զկարասիս թեթև
գնոյ վաճառէին և ասէին, թէ գնամք յԵրուսաղէմ.
քանզի ասէին թէ, անդ գալոց է Սապէթայն և թագա-
ւորելոց է զցուցեալ ազգն ժողովելոց է. և ընդ առա-
ւել տարածանիլ համբաւոյս այս, ամենայն ոք զարմա-
նայր, վասն որոյ մանկունք և փոքունք հանուրց ազգի,
մահմետականաց և քրիստոնէից, փարթամք և ռամիկք
Ստանբօլ քաղաքի հարցանեն նեղեն զազգն հրէից, «չըր-
ֆուտ կէլտի մի՞, խախամ կէլտի մի՞»: Կանայք ընդ
արանց և երիտասարդի, մեծամեծք, փոքունք, ծերք
ընդ տղայի հարցանեն ցհրեայսն, ուր որ հանդիպի,
«նաւի կէլտի մի՞, թէճալ կէլտի մի՞»: Զայս յառակ ար-
կեալ համայն աշխարհի, ծաղեն, կատակեն յռահ ի փո-
ղոցի, բերան և լեզու ի յայս սովորի «նէպի կէլտի մի՛,
մըսեհ կէլտի մի՞»: Ի տուն և ի փողոց այս յիշեալ ճա-
ռի, երգս և խաղս շինեալ առ սոյն յարմարի, ծաղր և
շշնջումն սուտ մարգարէի զհրէայս կշտամբեն «թէճալ
կէլտի մի՞»:

Այլ և Նաթան անուն ոմն այր հրէայ, որ էր յա-
ռաջագոյն ուխտադիր և դաշնադիր և ընկեր ընդ այս
Սապէթայիս, և էր ինքն ի Գազայ քաղաքին, որ և
անտի գրէ առ հրէայսն՝ որ ի Կոստանդնուպօլիս վասն
Սապէթային և տայ վկայութիւն, թէ նա է Մեսիայն
և Օծեալն, որ արդ Իզմիւռին կայ. և առ այս բան յոյժ
բորբոքեցան հրէայքն Կոստանդնուպօլսի, և հռչակեալ
բարձրացաւ համբաւն, որ զնմանէ, մինչև եհաս առ
մահմետական իշխանս Ստանբօլ քաղաքին: Իսկ ղադին
և սարդարն Ստամբօլու պատրաստեցին արս գնալ ունիլ
զՍապէթայն և բերել: Եւ Սապէթայն լուեալ զայն ելեալ
ի փախչել գնալ ի Թեսաղոնիկէ, իսկ պահապանք ճա-
նապարհին կալան զնա ի ծովին և բերեալ ի Ստանպօլ՝

հանէին ի ցամաք առաջի Գօմրուկ խանին. իբրև հռչակեցաւ թէ զՄեսիայն հրէից բերին, հազարք հազարաց և բիւրք բիւրուց ի տես փութային. և ի տեսանելն զՍապէթայն՝ ամենեքեան հայհոյէին, այպանէին, կատակ և ծաղր առնէին զհրէայսն վասն մոլորութեան իւրեանց։

Եւ ապա տարան առ վէզիրն, զոր և հարցանէր վասն անուանն և համբաւոյն. և նա յամենայնէ հրաժարի և յուրաստ լինի, և ասէ ինքն վասն իւրն, թէ այր մի եմ վերծանող և օրինապահ և աղօթարար. իսկ վէզիրն պատասխանէ, թէ կաց ի կալանս մինչև առցուք վասն քո վկայութիւնս յԻզմիրէ, և ծանիցուք զստուգութիւն բանից քոց։ Յայնժամ սուպաշին ածեալ ապտակ յերեսն Սապէթային և կառափնատելով տարեալ արգել ի բանտի. ի ՌՃԺԵ. Թուին Հայոց, և Յունվար ամսոյ ԻԸ. արկին զնա ի բանտ։ Իսկ Հրէից ազգն յամօթոյն ոչ ի շուկայ ելին և ոչ ի խանութ նստան, և մանկունք մահմետականաց ուր և հասանէին, այպանելով ասէին «Ջուհուտ կէլտիմի՞, Թէճալ՝ կէլտի մի՞». և վասն այսր եպերանացս հրէայք կաշառս յոլովս ետուն ենկիչէր աղասոյն, զի հրամայեսցէ իւրոց պաշտօնէիցն և զինուորացն, զի արգելցեն զայնոսիկ, որ ասեն զկէլտին. իսկ աստղքն հազարապատիկ և ես յաւելին ասել։ Իբրև զՍապէթայն ի բանտի արգելին, արս առաքեալ զինչս նորա բերին, քանզի ինչս բազումս ժողովեալ էր, զոր հրէայք կարի առաւել նմա մատուցանէին. և յորժամ զինչս նորա ի Խաս-քօյն բերին, մոլորեալ ազգն հրէից ամենեքեան ընդ առաջ ընթանային և ողջագուրէին՝ ի հեռուստ և ի մօտոյ զձեռս տարածեալ փըրկութիւն անձանց խնդրէին։ Յետ այսոցիկ ի մահմետական իշխանաց նայիպ և Թէթիշչի գնացին ի բանտն և հարցին ի Սապէթայէն, թէ ասա՛ մեզ զստոյգն, արդարև Թագաւո՞ր ես, որպէս և ազգն քո ասեն զքէն, զստոյգն

ասա, զի՞նչ ասես վասն քո· և նա յամենայնէ յուրաստ լինի, թէ ոչ եմ Թագաւոր և ոչ մարգարէ և ոչ ի նշանաւորաց, այլ այր գռեհիկ եմ և արուեստիւ ընթերցող։ Իսկ նոքա զբանս Սապէթային գրեցին և սիջիլ և հօճաթ արարին և տարան՝ վէզիրին ծանուցին։ Իսկ որ հրէայքն էին, ոչ դադարէին յերթևեկութենէ առ Սապէթայն, և քանզի բանտն ի մէջ Ստանբօլ քաղաքին էր՝ ոչ կարէին հրէայքն համարձակ գնալ առ նա և գալ. վասն որոյ կաշառեցին զսուպաշին, զի թերևս հնար իմն գտանիցէ նոցա, զի համարձակ լիցին ի գնալն և ի գալն· և նա խօսի ընդ վէզիրին, թէ հրէայք զբանտն ի կոխ առին վասն յաճախ երթևեկութեան· յայնժամ սաստիւ հրամայէ վէզիրն, թէ տարէք ի Բօղազն, ի մէջ բերդին և անդ ի բանտի պահեցէ՛ք զնա· և յետ աւուրց ինչ ելեալ վէզիրն ի Ստամբօլայ գնաց ի յարևմուտս, զի պատերազմ մեծ կայր առաջի նորա· իբրև գնաց վէզիրն՝ և ևս համարձակութիւն գտեալ հրէիցն՝ սկսան կալի յաճախագոյն երթևեկութիւն առնել առ նա կանամբք և որդւովք· ծերք և տղայք, աղքատք և հարուստք, մինչև անարգել աղջկունք և հարսունք գնային յուխտ և յերկըրպագութիւն նմա· ոչ միայն ի մերձակայ գաւառաց՝ այլ և ի հեռու աշխարհաց· ի Բուղդանայ, յԻլովայ, ի Կաֆայոյ յԵրուսաղէմէ, յԱնատօլէ, ևս առաւել ի Ստանբօլէ գային առ նա և առնուէին զօրհնութիւնս նորա, և արտասուօք աղաչէին, թէ ե՞րբ իցէ զի ելցես և թագաւորեսցես և զմեզ փրկեսցես· և վասն յաճախ երթևեկութեան նոցա ի նախանձ շարժեցան մահմետականքն, և իշխանն զոր բօստանչի պաշի ասեն՝ զճանապարհն նոցա սկսաւ պահել և զերևելի ոմանս ի հրէիցն, որ գնային առ Սապէթայն, կալեալ էած առ ղայմաղամն և ի հարցանել ղայմաղամին, թէ վասն է՞ր երթայք առ նա, զստոյգն ասացէք· մարգարէ ո՞մն է նա, թէ Թա-

դաւոր ոմն է նա, և թէ զինչ է, զստոյգն ասացէք. և Հրէայքն թագուցին և ոչ ասացին զստոյգն, այլ պատճառս յօդեցին, թէ անմեղ է և ի տարապարտուց դատապարտեալ և ի բանդ մտեալ աղօթաւոր և ընթերցող ոմն ի մերս ազգէ, վասն մխիթարելոյ զնա և զօրհնութիւնս նորա շահելոյ գնամք առ նա. և առ այս բան զայմաղամն ոչինչ ասաց նոցա, այլ արձակեաց, որ ելին և գնացին, իսկ առ դրան կացեալ մահմետականքն բարկութեամբ և այպանօք ասեն Հրէից, թէ մոլորեալք, զի՞նչ շահ ձեզ յառնէն յայնմանէ, որ այդքան մոլորեալ էք առ նա. և Հրէայքն պատասխանեն, թէ յետ սակաւ ինչ աւուրց աչք ձեր տեսցեն. և մահմետականքն իսկոյն զեկուցին զայմաղամին, զոր և փութանակի դարձուցին զՀրէայսն և սաստիկ գան հարին և ապա թողին. Թէպէտ զայս գործ լուան այլ Հրէայքն և երկեան՝ այլ յընդունայն յուսոյն իւրեանց ոչ թուլացան։

Եւ ի ժամանակս նախնեացն Հրէից յորժամ Նաբուգոդոնոսոր արքայն Բաբելոնի գերեաց զՀրէայսն և տարաւ ի Բաբելոն, զայն օրն նախնիքն իւրեանց մեծագոյն տօն սգոյ կարգեալ են, յայնմ օրէ մինչև ցարդ պահօք և ծոմով, սգով և աշխարանօք և զանձինս կոծելով կատարեն զաւուրս սգոյն այնորիկ, նա և զողբն Երեմիայ մարգարէին ընթեռնուն յաւուրսն յայնոսիկ, որ ի յՕգոստոս ամսոյ յորժամ լուսինն ԺԵ. աւուր լինի, կատարեն զտօնն զայն, և մահմետականք զանուն տօնին այնմիկ զարաբայրամ ասեն. իսկ դիւաբնակն Սապէթայն իբրև ետես զկուրացեալ ազգն յոյժ մոլեալ առ ինքն, սկսաւ ևս առաւել մոլորեցուցանել առ ինքըն. քանզի գրեաց թուղթս յոլովս և առաքեաց առ Հրեայսն յամենայն տեղիս և չքնաղ իմն համբաւեալ նոցա և ասէ. եմ որդի Աստուծոյ ծնեալ, ձեզ ազատող յարդենիս հասեալ, և է պատճէն և օրինակն գրոց նորին այս։

«Միածին որդի և անդրանիկ Աստուծոյ Եօսամպէսէվի Մեսիա փրկիչ Իսրայէլի։ Առ համայն որդւոցդ Իսրայէլի սիրելեացդ Աստուծոյ, խաղաղութիւն։ Որպէս աւուրն ածի Տեառն, որում ցանկային երանելին Աբրահամ և Իսահակ և Յակոբ տեսանել, յաւուրս յայսմիկ արժանաւորեցայք տեսութեան, զիս ընկալեալ վասն ազատութեան և փրկութեան Իսրայէլի, ըստ ուխտին Տեառն մերոյ, զոր ուխտեաց բանիւք մարգարէից և հարցն մերոց սիրելեացդ Իսրայէլի։ Արդ՝ ամենայն սուգ ձեր դարձցի յուրախութիւն, և պահք ձեր եղիցի ի տօն և ի բանայիրս. քանզի այսուհետև այլ ևս ոչ լացջիք, ո՛ մանկունք իմ Իսրայէլ, և զանցեալսն ձեր մի՛ ևս հոգասջիք. քանզի տուաւ փրկութիւն ուրախութեան, որ է անպատմելի. արդ՝ ի ժամանակս աղօթից ձերոց Թըմբկօք և Նուագօք երաժշտական արուեստից բարձր ցընծութեամբ գոհացարուք զնմանէ, որ կատարեաց զուխտն իւր յաւիտենից, զոր ուխտեալ էր ընդ հարսն մեր, և յամենայն աւուր և ի գլուխս ամսոց ըստ նոյն օրինի ցնծասջիք։ Եւ զսուգ տխրութեան զաւուր և զգիշերոյն ձերոյ, որ կոչի բուրիմ՝ զայն դարձուսջիք ի յօր լամբրան, ուրախութեան լուսաբեր, որ ի յայտնութեանս իմում. և մի՛ ոք ի ձէնջ յայլ գործ ինչ պատաղիցի, այլ միայն յուրախութիւն և ի ցնծութիւն, քանզի տուաւ ձեզ ի վայելչութիւն ամենայն աւուրք ազգաց և հեթանոսաց, և ոչ միայն որ յերեսս երկրի տեսանի այլ և որ ի խորս ծովու վասն ձեր պահեալ կան ի վայելչութիւն խնդութեան. ողջ լերուք»։

Մոլորեալ և դիւաբնակ Սապէթայն զգիրս զայս լեզուաւն և գրովն հրէից գրեաց և առաքեաց յամենայն տեղիս. բայց յետոյ թարգմանեցաւ ի Հրէից լեզուէ ի Հռոմ լեզու և ի Հռոմ լեզուէ թարգմանեցաւ ի յՕսմանցւոց լեզու ձեռամբ ուրեմն իմաստնոյ և մեծ թարգ-

մանի սուլթան Մահմատ թագաւորին՝ որդւոյ սուլթան Իբրահիմին. այլ և ի Հռոմ լեզուէն թարգմանեցաւ ի Հայ լեզու և ի գիր ձեռամբ ումեմն ճարտար դպրի Երեմիա կոչեցելոյ, որ ի նոյն Կոստանդնուպօլիս քաղաքն էր։ Իսկ գիր մոլորելոյն յոր վայր և հասեալ, զոր սգոյն այնմիկ ցնծութեամբ տօնեալ. մինչ թմրկօք, նուագօք էին յանգգնեալ. որ երբէք զհրէայս չիք այնպէս տեսեալ։ Վասն զի հրամայեաց Սապէթայն՝ զօր և զյիշատակ մեծի սգոյն այնմիկ՝ զոր նախնիքն նոցա կարգեցին վասն գերի գնալոյն ի Բաբիլովն՝ դարձուցանել ի տօն ցնծութեան և ուրախութեան ուտելով և ըմպելով, պէսպէս զարդուք զարդարելով, ի խրախութեան եկեալ և կատարեալ, զի աւուրք սգոյ բարձաւ՝ և արդ՝ աւուրք ուրախութեան եկեալ հասաւ։

Եւ ոմանք ի մերս ի Հայոցս ազգէ խորհրդաբար հարցումն արարին ընդ գիտունս և ընդ խախամս ազգին հրէից վասն Սապէթային, թէ զի՞նչ ասէք, թերևս մարգարէ ո՞մն իցէ, կամ առուգիւ Մեսիա՞յն իցէ, կամ Քրիստո՞սն իցէ. և կամ այլ ոք ի յարժանաւոր ծառայիցն Աստուծո՞յ իցէ. և նոքա ասացին, թէ ամենևին սուտ է և խաբեբայ և մոլորեցուցիչ և դիւաքնակ, և ահա արք Զ. և աւելի ի մէնջ, որ միաբանեալ եմք և ոչ ընդունիմք զնա, զի հակառակ է հայրենի օրինացն մերոց, և միաբանեալ արքս այսոքիկ գնացին առ ազգն հրէից և սկսան կագիլ և վիճել և յանդիմանել վասն Սապէթային և ասել, զի՞ ընդունիք զնա, և զի՞ անսաք նմա և զիա՞րդ հետևեալ էք զկնի նորա, զի խաբեբայ է և մոլորեցուցիչ և հակառակ հայրենի օրինաց մերոց. զի այսքան ժամանակ է որ նախնիքն մեր եկին յաշխարհս և գնացին և ոչ ոք ի նոցանէ կարգ ինչ խախտեաց և կամ եղյծ՝ ի փռօֆիդաց օրինաց կարգեալ. իսկ դա պշաբաթս և զտօն մեծի սգոյն լուծանել հրա-

մայէ, և զինչ խօսի և գործէ առաջօք և ստութեամբ լի է. զի՞նչ նշան մարգարէական և կամ զի՞նչ գործաքանչելեաց տեսէք ի դմանէ։ Թէպէտ սոքա այսպէս հակառակէին ընդ հրէից, սակայն ազգն հրէից ըմբոստացան ընդդէմ նոցա և զնոսա հայհոյէին և վիճէին և ի հարկանել եւս մտաբերէին. և գնացեալ առ Սապէթայն ամբաստան լինէին զնոցանէ և հակառակութիւն և հերձուած մեծ անկաւ ի մէջ հրէից, ոմանք ընդունելի գոլ ասէին և ոմանք ոչ, և բաժանեցան որդի ի հօրէ և եղբայր յեղբօրէ և սիրելիք ի միմեանց. իսկ որք ընդունողք էին, սիրով կապեալ էին առ նա, երթային և գային և ողջունէին. և բազումք ի ցերեկի ոչ կարէին առ նա մտանել՝ բազում տքնութեամբ սպաս կալեալ ի գիշերի մտանէին և ողջունէին և անտի ելեալ զարմացուցիչ և հիացական բանս տողեալ հռչակեցուցանէին, և միմեանց աւետիս տային, թէ Սապէթայն, Մեսիհ և ազատիչ և փրկիչ եկեալ հասեալ մեզ. զիւրովի պատրաստի նմա գահոյք թագաւորութեան և ուղղի աթոռ դատողութեան և աջողի գաւազան արքայութեան, զ քրիստոնեայս իսպառ ջնջէ, և զմահմետականս հարկատու առնէ. և այսպիսի սուտ և սնոտի յոյսով ակնկալեալ սպասէին նմա. և վասն գալստեան նորա ոմանք ընդ երկինս պշուցեալ հայէին, և ոմանք ընդ ծովն միշտ հայէին և ոմանք ընդ երեսս ծովու ի գիշերի նաւով շրջէին, և ոմանք ասէին, թէ երկնիւք թռչի և գայ և մեզ լոյս ծագէ, և ամենայն ոք զնա մեծ ոմն համարէր և յԱստուծոյ առաքեալ. քանզի առ նա վերաբերէին զբանն Յովելեայ մարգարէին, որ ասէ։ Յաւուրս յետինս, ասէ Աստուած. հեղից յոգւոյ իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցին ուստերք ձեր և դստերք ձեր. և երիտասարդք ձեր տեսիլս տեսացին և ծերք ձեր երազովք երազեսցին և այլն։ Այլ և

յայսմ ամի Յունիս ամսոյ երկուսն արեգակն խաւարեցաւ, և այն բնական խաւարումն էր, որ ի ծնունդլուսնի հանդիպի. իսկ մոլար ազգն հրէից զայն նշան համարեցան և ասէին տեսէք, զի յերկնից ևս նշան երեւեցաւ վասն սորա. և զմիմեանս ի հացկերութ և ի կոչունս հրաւիրէին. և ոմանք ասացին, թե հրէայք զէնս և սուրս ի պատրաստի ունէին, զի յելանել Մեսիային ջնջեսցեն զայլ ազգսն։

Եւ իբրև կարի յաճախեցաւ համբաւն սուտ Քրիստոս Սապէթային և եհաս յաշխարհ Թագաւորութեան քրիստոնէից, վասնորոյ ընդ հրէից, որք յայն երկիրսն էին, մաքառեալ վիճէին քրիստոնեայքն, որք յայնմ աշխարհին էին, և ի մէջ իւրեանց գրաւս կապէին. քրիստոնեայք ասէին, թէ իբր Սապէթային ճշմարտասցի, մեք ամենեքեան դառնամք ի հրէութիւն, և հրէայք ասէին, եթէ սուտ լինի բանք Սապէթային, զմեզ զամենեսեանս ազգաւ ջնջեցէք սրով սուսերի. և զայս ուխտեալ պայմանեցին և ժամանակ կարգեցին. և դատողական յատենի կացեալ գրեցին և վճռեցին, և դատաւորաց և իշխանաց կնքով կնքեցին և սպասէին պայմանին։ Բայց յաշխարհին Իլախաց զբազումս ի հրէից կոտորեցին, յորոց բազումք փախեան և գնացին յայլ աշխարհ. և ոմանք եկին առ նոյն ինքն առ Սապէթայն։ Ի սոյն աւուրս յաշխարհին Իլախաց կայր ոմն հրէայ, որ էր ինքն խախամ, որ լսէր զհամբաւն Սապէթային և ոչ հաւանէր, այլ ասէր, գնամ ես առ Սապէթայն այն և ամենայն իրաց նորա ստուգաբար հասու լինիմ. որ և եկեալ մտանէր առ Սապէթայն և ի յոլով աւուրս դիտեալ նկատեաց և խօսեցաւ ընդ նմա և հաւաստեաւ վերահասու եղև, որ ստութեամբ էին բանք նորա. վասնորոյ համարձակեալ ասէ. ընդէր զտառապեալ և զողորմելի ազգս մեր մոլորեցուցեր, և զքեզ Քրիստոս և

Մեսիա քարոզեցեր, զո՛ր նշան ցուցեր դու ի յերկնէ կամ ի յերկրէ. զի՞նչ գործ փրկութեան ներգործեցեր, որպէս և բանք նոմոսաց մերոց վկայեն. և զի՞նչ հրաշք ի ծնունդ և ի սնունդս քո եղեն. ահա ծնողք քո և սնունդ քո, ահա եղբարք քո, ահա կին քո և որդիք, զորս զարդուք լցեր. ահա կեանք և վարք քո հաւասար մեր, ուտես և ըմպես, երկնչիս, ըմբռնիս, որպէս և ելեր ի փախչիլ և եղեր ըմբռնեալ. ի բանտ մտեալ և ի կապանս արգելեալ, և այլ բազում բանիւք զՍապէթայն կշտամբեալ։ Իսկ հետևեալքն Սապէթային ըմբոստացեալ ընդ դիմացան խախամին այն, և ի վերայ յարեան հայհոյանօք և անարգանօք և կամէին ի ներքոյ ոտից առնուլ, և բազում և բազում կսկծալի բանս նմա ասացին, և ի ժողովոյն իւրեանց նզովեցին և արտաքս հանին։ Իսկ խախամն այն կսկծալի սրտիւ զայրացեալ ընդ կուրութիւնն և ընդ արարս հրէից, և այնպիսի զայրագին սրտիւ գնաց առ մահմետականս ուրացաւ զհրէութիւն և եղև դաւանութեամբն Մահմետի. և սաստիկ զայրագին սրտիւ ամբաստան լինի զհրէից և զՍապէթայէն. և մահմետական իշխանքն զամբաստանութիւնն նորա ծանուցանեն ղայմաղամին։ Ի վերայ այսմ ամբաստանութեան, զոր խախամն արար զՍապէթայէն և զհրէից, յաւել և այլ ևս մեծագոյն ամբաստանութիւն զՍապէթայէն Մահմուտ անուամբ ոմն շեխ, որ ի Բօղազն բնակէր։ Սա հանապազ տեսանէր զհամարձակութիւն հրէից, որ երթային և գային առ Սապէթայն, նաև զփառս և զպատիւս, որ կանամբք և սիրելեօք ի հանգստեան կեայր, գնաց առ ղադին և ծանոյց զիրս Սապէթային և մեծամեծ տաճիկ բերեալ վկայս կացոյց, արզ և մահսար էառ ի ղադոյն և զայն մահսարն և այլ ևս արս ի տաճկաց էառ և գնաց ի քաղաքն յԱտրանայ. քանզի անդ էր յաւուրսն յայնո-

սիկ Թագաւորն և ղայմաղամն և այլ ամենայն մեծամեծքն. մտանէ առաջի ղայմաղամին և լինի ամբաստան զՍապէթայէն և զհրէիցն. վասնորոյ զայրանայ ղայմաղամն, և հրամայէ ղափուչի պաշի գնալ և անդէն ի բօղազն կախել զնա. և զի այլք ոմանք այլ ինչ ծանուցին ղայմաղամին վասն Սապէթային, վասն որոյ կըրկնակի և փութանակի միւս ևս ղափուչի առաքէ զկնի Սապէթային ոչ կախել այլ բերել յԱտրանայ. զոր և արարին այնպէս, քանզի առեալ տարան ի յԱտրանայ առ ղայմաղամըն. և նա ոչինչ խօսեցաւ ընդ նմա ի ժամուն յայնմիկ, այլ առաքեաց ի դուռն արքային, զի պահպանեսցեն զնա մինչև գիտասցէ արքայն և բան ինչ հրամայեսցէ վասն նորա:

Եւ իբրև ծանուցին զիրս Սապէթային Թագաւորին որ էր ինքն սուլթան Մահմատ խոնդքարն որդին սուլթան Իբրահիմին. և Թագաւորն ինքն նստաւ ի դատաստան. կային ի յատենին և ղազիասքարն և մուֆթին և ղայմաղամն և այլ ամենայն իշխանքն արքայի:

Իսկ ի հեծելոց և ռամկաց բազմութենէ զի՞որդգոյր Թիւ այլ որպէս զաստեղս երկնից և զաւազ ծովու, որք ժողովեալ էին ի զբօսանս: Անդէն կացուցին և բազում զօրականս աղեղամբ և նետիւք և Թուանքով, և հուր բորբոքեալ և ղամբարս վառեալ, և այլ պատրաստութիւնս տանջանարանաց վասն Սապէթային. յառաջածին ի մէջ հանդիսին և զայր ումն, որոյ անուն կոչէին Հայաթի զատայ. այս այր յառաջագոյն էր ազգաւ և հաւատով հրէայ. բայց յետոյ Թողեալ զհրէութիւն և մտեալ յօրէնս Մահմետի և եղեալ տաճիկ, զսա յառաջածին զի լիցի Թարգման ի մէջ Սապէթային և Թագաւորին, և անդ ի հանդիսին ասէ Հայաթի զատայն առ Սապէթայն. տեսանես զայս ամենայն պատրաստութիւնս զինուց և տանջանարանաց, զայս ամենայն վասն քո

պատրաստեալ են. արդ, որպէս դուն որ իմն համբաւ հաներ և զաշխարհս դղրդեցուցեր. նորագոյն տանջանօք և մահուամբ նշաւակեալ սպանելոց է զքեզ արքայ. արդ եթէ ունիս զօրութիւն ինչ և քարամաթ՝ արա սքանչելիս և ցոյց զզօրութիւնդ քո և փրկեա զքեզ և զազգն քո: Իսկ Սաբէթայն յահէն և երկուղէն այնքան երկեաւ որ համարեա թէ սիրտն յարիւն դարձաւ վասն որոյ սկսաւ ուրանալ և ազգին իւրոյ մեղադիր լինել թէ, ազգն իմ կոյր և մոլորեալ զայս անդէպանունս վասն իմ համբաւեցին և ես ոչ եմ որպէս նոքայն ասեն այլ ես մի եմ վերծանող և զամենայն գիրս ընթերցայ և հասու եղէ որ միայն մարգարէն ձեր ճշմարիտ մարգարէ է և վասն ուղղութեան ամենայն մարդկան եկեալ է յաշխարհ. և այս Ի. ամ է որ ես նմա հետևեալ եմ և զնա ընկալեալ. և անդէն ի մէջ ատենին ուրացաւ զհրէութեան հաւատն և դաւանեցուցին զհաւատն Մահմետի. և այսպէս եթող զհաւատն իւր և տաճկացաւ: Յայնժամ ամենայն ազգք և ազինք զՍապէթայն զայն և զամենայն ազգն հրէից սկսան անարգել և հայհոյել, նախատել և թքանել, այլ և ինքեանք իսկ հրէայք եղեն ամաչեցեալք կորագլխեալք և ի տանց իւրեանց ոչ ելանէին վասն ամօթոյ: Իսկ Սապէթայն՝ որ երբեմն պարծէր թէ յերկինս ելանեմ, արդ էջ ի յանդունդս, և որ ի յԱբրահամ և յԻսահակ և ի Յակոբ և ի Մովսէս խրախուսէր՝ արդ ուրացաւ զնոսա և եղև ժողովուրդ Մահմետի, և որ ասէր թէ զաշխարհս ամենայն դարձուցանեմ ի հաւատս, ինքն զհայրենի և զաստուածատուր հաւատն իւր ուրացաւ. քանզի կառավարն նորին մտացն սատանայ զնա յայսպիսի փառս հասոյց. և որ սուտ համարէր զեկեալ ճշմարիտ Քրիստոսն մեր, ինքն խայտառակեցաւ զօրութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, և կատարեցաւ բան Քրիստոսի որ և ասաց թէ, գայ-

ցեն քրիստոսք և սուտ մարգարէք, և աՀաւասիկ տեսաք ի մերում ժամանակիս. և փառաւորեցաւ անունն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի իւրով շնորՀօքն և զօրութեամբն, որ և եղիցի անունն Նորա յամենայն ժամ օրՀնեալ և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից ամէն։

Թուին ՌՃԺԶ. Նոյեմբերի ԺԴ. յաւուր չորեքշաբաթի յիններորդ ժամու. շարժ եղև ի յԸզնկայն քաղաքի. յառաջ ի խորոց անդնդոց գոռալոյ ձայն եկն, ապա յանկարծակի ի Թարթել ական շարժ եղև, բազում շինուածք տունք և մզկիթներ և եկեղեցիք և բաղանիքներ և փութկաններ, և քաղաքի պարիսպն, և այլ շինուածք փլան, և բազում մարդիկք սպանին, զորոց որքանութիւնն Աստուած միայն գիտէ։

Թուին ՌՃՁԷ. Յունվար ամսոյ Դ. սաստիկ և աՀագին շարժ եղև յամենայն սաՀմանս Արարատականի, ի յառաւօտուն մինչ զՀարցի ժամն ասէաք, եղև Թընդումն և զկնի նորին եկն շարժն. և այնքան ուժգին եղև մինչ զի կանթեղք և ջաՀք որք կախեալք էին յեկեղեցւոջն ամենեքեան տարաբերեալք երթային և գային. և մարդիկք ոյք ընդ երեսս որմոց յեցեալք կանգնեալք կային ի տեղւոյն ի բաց ձգեաց, և եղև շարժս այս յԱրտաւել քաղաք, ի Թաւրէզ, յԵրևան, ի Տփխիս ի Գանձայ, ի Շամախի, ի Դամուրղափուն, և յամենայն սաՀմանս իւրեանց, և. յայսմ շարժմանէ Հախպատայ վանից եկեղեցւոյ Ներսի երեսէն որմոյ քարինքն Թափեցան, և եկեղեցին որում անուն Տես և անց ասէին, որ ի մէջ Հաղպատայ և ՍանաՀնոյ կայր շինեալ՝ բնաւին փլաւ, և ի Տփխիս քաղաքին մէկ նոր շինեալ եկեղեցւոյ որմն, և վերին բերդի որմն խախտեցաւ։ Իսկ Շամախի քաղաքն Հիմն ի վեր լեալ ամենևին տապալեցաւ որ բնաւին ոչ մնաց շինուածք, և անթիւ մարդիկք մեռան, զորոց զԹիւն Աստուած միայն գիտէ։

ԳԼ. ԾԶ.

Պատճառ առնելոյ զգիրս պատմութեանց յոլում՝ եւ յիշատակարան առնողին:

Օրհնութիւն՝ գոհութիւն՝ բարեբանութիւն՝ Տեառն իմոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ետ զկարողութիւն ինձ նուաստի և տկարի և չանարգի բանի սպասաւորի Առաքեալ կոչեցելոյ, ի վերջին դարուս և յերեկոյացեալ ժամուս. ի բնէ նորոգ սկսանել յառնել և ի շարագրել զնորոգ յառաջ ածեալ զգիրս զայս, որ կոչի Պատմագիրք. նա և հասանիլ յաւարտ սորին, որ կատարեցաւ: Վասնորոյ զերեսս ի գետնի եդեալ արտասուալից աղաչանօք կարդամ առ նա և ասեմ, գոհանամ զՔէն Քրիստոս Աստուած իմ, և օրհնեմ զքեզ և զսուրբ ծնօղն քո, և զլուսակառոյց տաճարն քո և զբնակարան քո սուրբ Էջմիածին: Տէր իմ և Աստուած իմ Յիսուս Քրիստոս, քո և քոյոցն է ամենայն պարգևական բարիքս՝ դու ես բան և տուող բանի, գիր և գրող, և ամենայն պատրաստութիւն գրոյ, եղիցիս Դու օրհնեալ ընդ Հօրդ ստեղծողի, և ընդ

Հոգւոյդ զարդարողի, յամենայն արարածոց և յամենայն յաւիտեանս. ամէն։

Այսուհետև դարձուցից զբանս իմ և յայտ արարից, յարգոյապատիւ և վեհական անձանց, և յօքնաջան արուեստի փիլիսոփայականաւ յղփացեալ իմաստասիրաց, և գործնական առաքինութեամբ մաքրազարդեալ սրբոց և համօրէն ծննդոց սրբոյ աւազանին ի Քրիստոս հաւատացելոց եղիցի ծանուցեալ. նաև մեծաւ աղերսանօք խնդրեալ, ուպէս զի մի լինիցիմ մեղադրանօք քամահեալ իբրև ի վեր քան զկար ձեռնարկեալ. և որպէս զմտահաճ յանդգնեալ՝ և յանձին քաջութիւն յուսալով ձեռներէց լեալ, և յայս գործ՝ որ յաւէտ ի վեր է քան զկար մեր՝ ձեռն մխեալ։ Այլ ի հարկեցուցիչ հրամանէ երից երջանկի և Քրիստոսապսակ հայրապետի և սրբոյ Աթոռոյ Էջմիածնի յաջորդի Տեառն Փիլիպպոսի ամենայն Հայոց կաթուղիկոսի, վասն զի ինքն բազմահանճար Հայրապետս Տէր Փիլիպպոս, և ամենայն արք իմաստուն և առաքինիք և ծերագոյնք, որք զկեանս իւրեանց ձգեցին յառաջ ժամանակաւ և առ սովաւ. որոց և տեսեալ էին զամենայն իրակութիւնս և զանցուածս՝ որք ճառեցան ի գիրս պատմութեանս այսմիկ, այսինքն զաւերիլն աշխարհին Հայոց՝ և զգերիլն և զվատնիլն քրիստոնէից, այլև զնուաղիլն և զպակասիլն եկեղեցական կարգաց, և զանշքանալն և զաւերն բարձրագահ և Քրիստոսաբնակ Աթոռոյն սրբոյ Էջմիածնի, այլև զսոցին նորոգութիւն և այլ ևս բանք պատմութեանց՝ որք և գրեցան յայսմ շարադրութեանս, որոց վասն այնք մարդիկք ամենեքեանքն մեծաւ տարփանօք և յաւէտագունիւ ըղձիւ բաղձային արձանացուցանել ի գիրս յիշատակի ի գիտութիւն յապայ եկելոց, որք յանցնիւր դարս և ժամանակս յառաջագային, նաև հանապազ մաղթական բանիւ խնդրէին ի Փիլիպպոս կաթուղիկոսէ՝ զի

հրամայեսցէ ումեք կատարել զայս գործառնութիւն պատմագրութեանս։ Նաև ինքն կաթողիկոսն Փիլիպպոս զառաւելագոյն փոյթ ունէր քան զամենեսեան սակս սմին իրաց, վասն որոյ հարկէր երբեմն զայս՝ և երբեմն զայն՝ զի կատարեսցեն զայս գործս, և յոլովից ոմանց իւրոցն աշակերտաց եղև հարկադիր, զի թերևս ոք յանձն առեալ կատարեսցէ։ Իսկ նոքա հմուտ գոլով գիտէին զբազմազան աշխատութիւնսն. որ ի սմա. ոչ ետուն զանձինս ի տաժանումն յայս, այլ յինքեանց ի բաց քեցեալ ճողոպրեցան։ Իսկ Նուաստս և տրուպս յամենեսին Առաքեալ կոչմամբս՝ սպասաւոր բանի, գոլով իմ տեղեաւ ի քաղաքէն Թաւրիզու, և յաշակերտութենէ սոյն տեառնս Փիլիպպոսի կաթողիկոսի, և ի միաբանութենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ Էջմիածնի, որ և աստէն իսկ սնեալ և վարժեալ, և յաւուրս ծերութեան ժամանեալ, նաև ակն ունիմ զի ընդ հովանեաւ սորին ամփոփել ի հող, զի թերևս որ ի սմա խորհրդակատարութեանցն լինիմ հաղորդեալ։ Վասն որոյ յետ ամենեցունց իբրև անարգի միոջ եղև ահեղ հրաման հայրապետին ի վերայ ինձ տկարիս, և որպէս զտկար կենդանի ոմն ըմբռնեալ ի վարմից և յորոգայթից և ոչ կարիցէ զերծանիլ, սմին սարասիւ գոգջիք և զեղկելիս ըմբռնեալ ի վարմ գործոյս այսմիկ, և այս յաղագս այսքանեաց պատճառաց։

Առաջին՝ որպէս ի վերդ ցուցաւ, զի ոչ կարացի զերծանիլ ի հրամանէ հայրապետին, թէպէտ և բազում միջնորդօք յայտարարեալ խոստովանեցայ զիմ տկարութիւն՝ ոչ գոլ բաւական այսմ իրագործութեանս։ Երկրորդ՝ ոչ միայն ի հարկելոյ Փիլիպպոսի կաթողիկոսին, այլ մանաւանդ ի հարկելոյ մեծահոգ և երկայնամիտ հայրապետիս տեառն Յակոբայ կաթողիկոսիս Ջուղայեցւոյ, որ զկնի Փիլիպպոսի կաթողիկոսին յաջորդեաց

զգահն հայրապետական, զաթոռն սուրբ Էջմիածին, սա ես հարկեաց զիս յայս գործ՝ որ զկնի վախճանի Փիլիպպոս կաթուղիկոսին ի բաց թողեալ էի, զի կարի բազմախոնջ և աշխատաւոր և արժանի թուեցաւ ինձ այս գործ, վասն որոյ ի բաց կացի և հրաժարեցայ ի սորին առնելոյն. և մնաց խափանեալ այս գործառնութիւնս ի ժամանակս ինչ։ Ապա այնուհետև սրբազան հայրապետն մեր Յակոբ կաթուղիկոսն վերստին յիշումն արար այսմ գործոյ՝ և եած զիս իւր առաջի և բազմազան կերպիւ բանից, միւսանգամ զիս եմոյծ ի սոյն յայս գործ։ Եւ այնուհետև յոգնակի վշտամբեր կրիւք հալիւ թէ զայսքան պատմութիւնս հաւաքեցի և գրեցի։ Երրորդ և ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին, և զնուաղիլն մերոյս ազգին, և զչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին։ Չորրորդ՝ և մանաւանդ յաղագս առ Տէր յիշատակի ի մասն բարի, զի հայելով ի յոլովութիւն յանցանաց, և ի ստգտանս խղճի մտաց և բնաւին ոչ ունելոյ ներանձին մասն ինչ նշուլից բարեաց, յուսալով յառատ ողորմութիւն մարդասիրին Աստուծոյ՝ որ և զվարձս բաժակի միոյ ջրոյ ոչ անտես արար, հոգացի զսա, և իբրև ․զլումայս այրւոյն արկի ի գանձանակն Տեառն, զի թերևս սովաւ գտայց ներումն աններելեաց իմոցս պարտեաց, որ զտէրականն պատկեր տգեղացուցի ի տղմալի գայռի։ Նա և մեծաւ յուսով ապաւինեալ ի բարեխօսութիւն ընդունական ձերդ մաղթանաց, զի սրտի մտօք խնդրիցէք յապէնիազ Տեառնէ զի ինձ չանտրդիս պարգևեսցէ զիւրն զողորմութիւն և զմեղացն իմոց զթողութիւն, որպէս և զքերցն Ղազարու մաղթանօք շնորհեաց նմին զյարութիւն։ Վասն զի և ես այսու դիտաւորութեամբ և յուսով յանձն առի զայս-

պէսի յոգնաշխատ և բազմաերկ և զտաժանելի գործս՝ և աւուրս յոլովս ի սմին դեգերելով և ի յոլով երկիրս և յաշխարհս շրջագայելով ի խնդիր գրուցաց պատմութեան, ոչ միայն ի քրիստոնէից, այլ և յայլոց ազանց հարցանելով, և ամենեցունց զասացեալսն գրելով, և վասն զստուգութիւն բանին գտանելոյ, եղև զի զմի պատմութիւն, տասն անգամ և այլ աւելի կրկնելով գրեցի, և զամս ինն ի սմին դեգերելով, և զինչս ծախելով, հազիւ թէ զայսքան պատմութիւնս ի մի վայր հաւաքեցի և գրեցի, և բնաւ ոչ ոք եղև ինձ ձեռնտու, այլ միայն Տէր իմ Քրիստոս էր ինձ օգնական։ Այլ և յորժամ հրամայեաց ինձ Փիլիպպոս կաթուղիկոսն առնել զայս գործ, և ես սկսայ առնել. էր թուականն մեր ՌՃ. և յամս չորս աշխատեցայ, և հաւաքեցի զմասն ինչ պատմութեան. իսկ զկնի վախճանի Փիլիպպոսի կաթուղիկոսի լքեալ թողի և ի բաց կացի ի սմանէ՝ տեսանելով գյոգնակի վտանգն և զմտատանջ երկն աշխատանաց որ ի սմա, որ ի վեր քան զկարն իմ ծանր թուեցաւ իմում տկարութեանս, և մնաց խափանեալ այս գործ ցժամանել թուականին մեր յամս ՌՃԷ. և այնուհետև հրամանաւ Յակոբայ կաթուղիկոսին կրկնակի մտաք յայս գործ՝ և սկսաք առնել մինչև ցհասանել թուականին մերոյ ՌՃԺԱ. ամի, և յայսմ վայրի եղև դադարել մեզ ի գործառնութենէս այսմիկ։ Այլ և թէպէտ ի շրջագայութիւնս աշխարհաց ի բազում տեղիս մասնաւորաբար եղև գրեալ ի սմանէ, սակայն սկիզբն սորին եղև ի բարձրագահ աթոռն ի սուրբ Էջմիածին, և կատարումն ևս ի նոյն տեղին, շնորհօք սմին [1] սրբոյ և Աստուածաբնակ տաճարիս։ Եւ ունի գիրքս այս պատմութիւնս ամաց վաթսնից, և այն ևս որ ինչ եղև գտեալ

---

1 Ու-ն. սորին.

և ի սեղանաւորս արկեալ՝ շնորհօքն Քրիստոսի. իսկ Թերլին և Թիւրն և այլ սոյնպիսիքն յիմս տգիտութենէ և ի տկարութենէ, վասնորոյ աղաչանօք խնդրեմ ի ձէնջ ներումն: Այլ և դիպեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առողջ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի. նաև յոյժ ցաւագար մարմնով, և ի լուսոյ աչքս պակասեալ և ի պնտութենէ ձեռքս Թուլացեալ դողայր. սոյնպէս և յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ, և մահու հրաւէրք ամենեքեան հանդէպ աչաց եկեալ կացեալ, և սպառնալիք գեհենին ևս քան զևս ի վերայ իմ յաճախեալ: Վասըն որոյ զերեսս իմ առաթուր ձեր եդեալ և զսէրն Քրիստոսի առ ձեզ բարեխօս ածեալ, մի՛ ստուգանեալ անտես առնիցէք զաղաչանս իմ. այլ հայցեմ, մաղթեմ, խնդրեմ, ժտեմ մեծաւ պաղատանօք, զի շնորհեցէք մեզ զաստուած ողորմին և զՔրիստոս որդին զհայր մեր որ յերկինս ի նոյն կարգին: Եթէ նստեալ կայք Թէ կանգուն ի յոտին, խնդրեմ ոչ դանդաղիլ և ծուլանալ յասելոյ սոցին. և զոր դուք մեզ ընձեռէք՝ և ձեզ լիցի մասն և բաժին յաւուրն ահեղին, առաջի արդարոյ դատաւորին Յիսուսի Փրկչին: Որում պատիւ և երկրպագութիւն և անզրաւ փառաբանութիւն՝ յամենայն արարածոց. յիմանալեաց և ի զգալեաց, անլռելի արտադոչութեամբ. Ամէն:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՔԻՍ *.

Փառք անբաժանելի և միասնական սուրբ Երրորդութեան. Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս ամէն։ Որ ետ կարողութիւն անարժան մեղսամած և փծուն գրչի՝ Աթանաս դպրի՝ աւարտել զգիրքս ի յետին ժամանակս. շարադրեալ յԱռաքեալ վարդապետէն, որ այժմ կոչի Առաքեալ պատմագիր։ Ի թուաբերութեանս մերում՝ ՌՃԺԲ. թուին. ի Հայրապետութեան ընդհանուր ազգիս Հայոց Տեառն Յակոբի սրբազան հայրապետի. ի թագաւորանիստ քաղաքէն Շօշ կոչեցեալ որ այժմ Ասպահան ասի. և էր ազգաւ Ջուղայեցի։ Ի թագաւորութեան Պարսից երկրորդ Շահաբասին, յիշխանութեան Արարատեան երկրին, Ամիրգունայ խանի որդի Աբասղուլի խանին, որ յայսմ ամի զՆաջաֆղուլի խանն ձգեցին, և տուին զԵրևան Աբասղուլի խանին։ Արդ՝ գրեցաւ գիրքս ի յերկիրն Արարատեան ի գիւղաքաղաքն Կարբի ընդ հովանեաւ Գաբրիէլի և Միքայէլի հրեշտակապետացն և ամենայն սրբոց որք աստ հաւաքեալ կան։ Թէմ և վիճակ մեծափառ ուխտին Յոհանուվանից սուրբ Կարապետին սուրբ Ստեփաննոսի աջին և սուրբ Աստուածածնի Վարշամակին. ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս հեզահոգի խոհեմ հնազանդ Յովհաննէս արհիեպիսկոպոսի, ի բնիկ գիւղաքաղաքէն Կարբու, զոր Տէր Աստուած զուխտն իւր հաստատ և զինքն անփորձ պահեսցէ մինչև ի խորին ծերութիւնըն ամէն։

* Յիշատակարան Աւետիք երեցու գրով հետաքրքիր, արժան համարեցաք դնել աստ ի վերջ գրոյս իբրև ծանօթութիւն։

Փառք ամենասուրբ Երրորդութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ամէն։

Շնորհօք և ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, գրեալ եղև գիրքս որ կոչի պատմագիրք. ի մեծ Թուականիս Հայոց, ՌՃԺԵ. ի մայրաքաղաքս Երևան, ի դուռն սրբոյ եկեղեցւոյս, որ կոչի Կաթուղիկէ, հոգաբարձութեամբ, ծախիւք և արդեամբք՝ Առաքել վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինողն և արարողն, Թաւրիզեցի Առաքել վարդապետն՝ որ վասն զօրինակն բազմացուցանելոյ ետ գրել զայս գիրքս, որ և այս հինգերորդ գիրք է որ ինքեան Առաքել վարդապետի ձեռագիր օրինակէն գաղափարեցաւ. որ յոլով ջանիւ և բազում հոգաբարձութեամբ ծախէ ինչս և ձեռամբ գրչաց գրել տայ. առաջին վասն օրինակին բազմանալոյ. և երկրորդ վասն առ տէր յիշատակի։ Արդ՛ ով հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, կամ զբօսնլով, սրտի մտօք յիշեցէք ի Քրիստոս զվերոյ յիշեալ զԱռաքել վարդապետն, որ զանազան և պէսպէս կերպիւ բազում աշխատանս կրեաց վասն պատմագրքիս, և տակաւին ևս ի նոյն աշխատանս կայ, վասն որոյ աղաչեմք, յիշել ի տէր զինքն իւրայնօքն, և զամենայնսն որք ունին աշխատանս ի սոյն գործառնութեանս։ Ընդ սոցին մաղթեմ յիշել ի Քրիստոս զիս զփանաքի գրիչս զԱւետիս երեցս որ հրամանաւ Առաքել վարդապետին գրեցի զգիրքս վասն հասարակաց օգտի։ Արդ՝ որք յիշէք զմեզ ի Քրիստոս և բաշխէ՛ք մեզ Աստուած ողորմի, և Քրիստոս որդի և Հայր մեր որ յերկինս միոյն հազարապատիկ առնուցուք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս. Ամէն. Հայր մեր որ յերկինս ես սուրբ եղիցի անուն։

ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ·

Ա·

Աբայ խան 624·
Աբաս 613՝ 614·
Աբասղուլի խան 672·
Աբդուռահման 81
Աբեղներ լեառն 493·
Աբուլթարաբ բէկ 46·
Աբրահամ 275՝ 634՝ 658՝ 664·
Ագուլեաց վանք 353՝ 360·
Ագուլիս 16՝ 217՝ 218՝ 267՝ 277՝ 281՝ 354—357՝ 361՝ 637·
Ադամ 621·
Ազախ քաղաք 644·
Ազարիա 441·
Աթաբէկ 16՝ 58՝ 99՝ 623·
Աթանաս դպիր 3՝ 672·
Աթոռ Ս. Էջմիածնի՝ 4՝ 6՝ 8՝ 11՝ 13՝ 179՝ 198՝ 209՝ 221՝ 289՝ 295՝ 303՝ 306—308՝ 311՝ 315՝ 317՝ 336 339՝ 429՝ 431՝ 551՝ 561՝ 667·
Ալադին սուլթան 571·
Ալահվէրտի 30՝ 33՝ 35՝ 46՝ 72՝ 74՝ 75՝ 527·
Ալանաց դուռն 568·
Ալանք 608՝ 612·
Ալաշկերտ 35՝ 53՝ 450·
Ալերու վանք 492·
Ալէքսանդր 98՝ 99—105՝ 596 628·
Ալթուն 187—191·
Ալի փաշայ 18՝ 20՝ 87՝ 94՝ 193—195՝ 634՝ 636·
Ալիւր գիւղ 542՝ 543·
Ալխաս 630·
Ալնջան 46·
Ալնջոյ բերդ 627·
Ալվանոտն 629·
Ախալցխայ 85՝ 628·
Ախբակ 53՝ 552·
Ախիջան խօջայ 155՝ 489՝ 490·
Ախստև գաւառ 96՝ 111·
Ահար 46·
Ահար գաւառ 206·
Ահմատ 34՝ 86՝ 355՝ 567՝ 570—572՝ 579՝ 580՝ 582—584՝ 627՝ 634՝ 636·
Աղաշահաբ 149·
Աղաջգանփիրի 87·
Աղասի 547՝ 548՝ 550·
Աղասի ենկիչարի 498·
Աղէքսանդր թագաւոր 647·
Աղէքսանդր թագաւոր Կախէթու 16՝ 96·
Աղէքսանդր Մակեդոնացի 568·
Աղթամար 420՝ 426· 428՝ 428՝ 430՝ 436՝ 437· 585·
Աղուանից աշխարհ 16՝ 275·
Աղջողալայ 38՝ 41՝ 81·
Աղսաղ Մահմատ 95·
Աղջուց վանք 7՝ 227՝ 304·
Աղուբ բէկ 629·
Աղիրման 567·
Աճանան գաւառ 284·
Ամաղեկ թագաւոր 271·
Ամասիա 632՝ 634·
Ամարաս 610·
Ամբերդ գաւառ 249·
Ամիկ գիւղ 441·
Ամիթ 29՝ 567—569՝ 582՝ 632՝ 634—638՝ 643·
Ամիրգունայ խան 27՝ 35՝ 40՝ 45՝ 47՝ 48՝ 72՝ 194՝ 207—209՝ 214—216՝ 218՝ 226 227՝ 229—231՝ 277՝ 281՝ 294՝ 297՝ 299՝ 300՝ 313՝ 316՝ 574՝ 638՝ 672·
Ամիրխան 240՝ 606·
Ամիրհամզայ 613՝ 631·

Ամուկ գաւառ 542·
Ամստերդամ 3·
Ամրխան խօջայ 494՝
Ամրտօլու վանք 390՝ 394·
Անանիա առաքեալ 225՝ 294՝ 296՝ 313՝ 318·
Անատօլ 656·
Անգոսներու վանք 492·
Անդրէաս առաքեալ 179·
Անդրէաս քահանայ 217՝ 282՝ 345՝ 354՝ 358· 637·
Անի 621 624·
Անկիւրիա 86՝ 420՝ 496՝ 573՝ 627՝ 638·
Անկիւրիա քաղաք 323·
Անտիոք 624·
Անտօն Չալապի 338՝ 339·
Ատրան Թագաւոր 581·
Աշրաւ քաղաք (Փահրապատ) 308· 640·
Աշրաֆ 626·
Ապաղայ բերդ 518՝ 519·
Ապաղայ փաշայ 573՝ 638—640՝ 642·
Ապարան 53՝ 81՝ 441·
Ապուպաքր 620·
Ապուսահլ 584՝ 621·
Ապրակունիս 193·
Առակ գիւղ 556·
Առաջին Հայք 442·
Առաքելոց եկեղեցի 490·
Առաքել կաթուղիկոս 42՝ 438·
Առաքելոց վանք 179·
Առաքել վարդապետ Դաւրիժեցի 1՝ 3՝ 440՝ 611՝ 666՝ 668· 672
Առինճ 80·
Ասաթ բէկ 292
Ասիա 74·
Ասկնջաւս գիւղ 391՝ 394·
Ասորեստան 372·
Ասպահան 16՝ 17՝ 46՝ 64՝ 123՝ 124՝ 134՝ 135՝ 140՝ 148՝ 149՝ 154՝ 165—170՝ 178՝ 183՝ 186՝ 192՝ 196՝ 198—221՝ 224՝ 232՝ 234՝ 239՝ 300՝ 301՝ 309՝ ··· ·318՝ 321՝ 341՝ 377՝ ·· 402· 405՝ 410 416՝ 430՝ 431՝ 442—444՝ 449՝ 452՝ 456՝ 457՝ 459՝ 467՝ 478՝ 522՝ 524՝ 574· 635՝ 640՝ 645—647՝ 649՝ 672·
Աստապատ 56՝ 189՝ 190՝ 270՝ 347՝ 353՝ 355· 478·
Աստարապատ 649·
Աստուածածնայ վանք 352·
Աստուածածնի եկեղեցի 60՝ 494·
Աստուածատուր եպիսկոպոս Գեղարդայ 12· 17՝ 47·
Աստուածատուր վարդապետ ·· ·· 331՝ 334·
Ասուփաս 135·
Ատոմ 621·
Ատոմեանք 490·
Ատրանայ քաղաք 567՝ 662՝· ·663·
Ատրպատական 3՝ 15՝ 148՝··· ·· 149՝ 215՝ 297՝ 299՝ 450՝ 455 457՝ 605՝ 608՝ 613՝· 635՝ 665·
Արագած լեառն 250·
Արագածոտն գաւառ 449·
Արամազեան վիճակ 563·
Արամեան տուն 312·
Արգելան վանք 416՝
Արաղստան 171՝ 176·
Արաղբար գաւառ 274·
Արապստան 599·
Արարատ 26՝ 37՝ 40՝ 47՝ 53՝ 79 83՝ 88՝ 186 ՝249՝ 250՝ 429՝ 450՝ 617·
Արարատեան գաւառ 1՝ 178՝ 192՝ 203՝ 214· 247՝ 294՝ 316՝ 317՝ 341· 344· 353՝ 606՝ 607՝ 672·
Արարգ գիւղ 347
Արզուն խան 624՝
Արզրում 30՝ 31՝ 35՝ 37՝ ·· ·74՝ 75՝ 89՝ 216՝ 228՝ 240՝ 294՝ 330՝ 450՝ 506՝ 573՝ 619՝ 620՝ 630՝ 636՝ 638՝ 639՝ 640·

Արիստակէս Բարկուշատայ 621:
Արիստակէս Լաստիվերդեցի ··
· 621·
Արիստակէս Հայրապետ 227, 304, 436, 437·
Արիստակէս վարդապետ 264, 370, 371·
Արիստակէս վարդապետ Համբեցի 253·
Արիստակէս վարդապետ Տարօնացի 11·
Արծկէ քաղաք 30—35, 53, 74, 416, 418, 627, 635·
Արծն քաղաք 450·
Արղն 388, 419·
Արճէշ 11, 30, 33, 35, 53, 306, 420, 441, 450, 620, 627·
Արշար 568·
Արջակ գիւղ 492, 499·
Արտաշէս արքայ 278·
Արտաւիլ 88, 148, 230, 455, 488, 614, 615 665·
Արփա գիւղ 168·
Արքանջելի 187·
Աւագ 624·
Աւզալ խան 646·
Աւստրիա 464, 465, 469, 470—476·
Աւետիս արեղայ 419·
Աւետիք 3, 184, 187, 552, [illegible]—556, 647·
Աւիքուրան 140, 142·
Ափխազ 624·

Բ·

Բաբելոն 567, 657, 659·
Բաբերդ 450, 583, 630·
Բաբլասան գիւղ 522,
Բագրատ Թագաւոր 647·
Բագրատունիք 607·
Բաթուն գիւղ 212, 213·
Բալխայ 614·
Բալու 538·
Բահրամ բէկ 222·
Բաղակ Թագաւոր 280·
Բաղպյամ 280·
Բաղաց գաւառ 284·
Բաղդասար քահանայ 154-161·
Բաղդատ 87, 92, 231-233, ·300, 567, 572, 575, 624, 627, 635, 638, 639, 641, 643·
Բաղէշ 240, 390, 421, 422, ·450, 441, 538, 628, 643, 646·
Բայազիտ բերդ 423·
Բայազիտ Թագաւոր 570, 571·
Բայազիտ սուլթան 567, 572·
Բայինդուր բէկ 299, 300·
Բայրամ փաշայ 574·
Բանդար 185, 197, 478·
Բանդարիքում 478·
Բասեն 30, 35, 53, 90, 450, 630·
Բար գիւղ 266·
Բարդուղիմէոս առաքեալ 512·
Բարմայ երկիր 314, 552·
Բարսեղ արեղայ 264·
Բարսեղ գաւառցի 391, 401, 441·
Բարսեղ կաթուղիկոս 438·
Բարսեղ վարդապետ 242, 245, 390, 391, 394, 441, 648·
Բաքդար աղայ 552, 553·
Բաքիր 638·
Բեհմոլթ 635·
Բերդակու վանք 492·
Բերի քաղաք 75·
Բերիա քաղաք (Հալապ) 410, 595·
Բերկրի 33, 35, 53, 450, 506·
Բէլրղատ քաղաք 641·
Բէհզատ 301·
Բէքտաշխան 132·
Բըղլէի 280·
Բիւզանդիա 562, 607, 612·
Բոլու 636, 689·
Բուխարայ 614·
Բուղդան 88, 147, 369, 386, 656·
Բուսայիտ 628·
Բուտում 630·

Բուրհան ղատին 627։
Բուրսայ 86, 371, 567, 496։
Բուրսայ քաղաք 338, 571։
Բուրվարի 46, 163, 167-169։
Բջնի 89, 352։
Բրգուտ Յովհաննէս Ոստանցի 391։
Բրինձլուի քարվանսարայ 321։
Բրիտին գիւղ 16։
Բօղազ 650, 662, 663։

Գ.

Գաբրիէլ 672։
Գագիկ արքայ 420։
Գաղայ քաղաք 654։
Գաղիկ քաղաք 450։
Գազ գիւղ 353։
Գայիանէ վանք 180։
Գայիանէ կոյս 314, 326, 328, 329։
Գանդիման 46, 217։
Գանդիման գաւառ 418։
Գանձակ 27, 93—95, 118, 613 623։
Գանջայ 5, 27. 93—95, 97, 105, 114, 116, 138, 148։
Գառնի 40, 47, 81, 216։
Գառնի գաւառ 6, 49, 405։
Գառնու ձոր 53, 81։
Գաւառ 441։
Գաւրաց ազգ 457։
Գաւարապատ 460։
Գաւռապատ 450։
Գեղամայ երկիր 83, 84, 96, 196, 612։
Գեղամայ լիճ 53։
Գեղամայ ծով 647։
Գեղարդ 47. 48, 415։
Գեղարքունի 81, 83, 193։
Գզիր օղլի 87, 632։
Գէչրունի 148։
Գիլանու երկիր 478, 613։
Գլէլուն 187, 196, 197։
Գնունեաց գաւառ 542։
Գուգարչինլուկ դաշտ 636։
Գողթան 448։
Գորգի 623։
Գուլփէքան 478։
Գումիշ խան 637։
Գօշ Մխիթար 440, 623։
Գուայ քաղաք 185, 197։
Գրիգոր 168—170, 185։
Գրիգոր Ապրիտ կաթուղիկոս 434։
Գրիգոր եպիսկոպոս 182, 286, 628։
Գրիգորաշէն 421։
Գրիգոր լուսաւորիչ 70, 182, 184, 198—200, 207—214, 227, 304, 318, 319, 320, 321, 414, 428, 430, 432, 436, 524, 628, 631, 632, 637։
Գրիգոր կաթուղիկոս 13, 419, 434, 437, 438։
Գրիգոր կաթուղիկոս Անաւարզեցի 435, 625։
Գրիգոր կաթուղիկոս Խանձողաթ 435։
Գրիգոր կաթուղիկոս Մուսաբէկեանց։
Գրիգոր Կեսարացի 440։
Գրիգոր Ղայսարցի 442։
Գրիգոր կաթուղիկոս Մակուեցի 435։
Գրիգոր Նարեկացի 621։
Գրիգոր վարդապետ 366, 367, 370, 372։
Գրիգոր վարդապետ Կեսարացի 11, 284—287։
Գրիգոր վարդապետ Արճիլեցի 441։
Գրիգոր Տաթևացի 391, 440, 441։
Գրիգոր վարդապետ Տարօնացի 440, 441։
Գրիգոր քահանայ 629։
Գրիգոր Քարավէժ կաթուղիկոս 434։
Գրիմ 115, 123, 132։
Գոգարչին ղալասի 19։
Գոզալդարա 462։
Գոկապախան Չըփլախ 87։

Գոմրուկ խան 655·
Գորգի 98—106·
Գօրի 120, 127, 202, 204, 608, 616, 205·

Դ·

Դաղխանու երկիր 109, 137·
Դալու Նասիպ 87·
Դահթեւեհ 600·
Դահմանշահ 605·
Դամուր ղափի 5, 87, 92, 608, 612, 635, 665·
Դանիէլ 71, 391·
Դանիէլ ճգնաւոր 440·
Դանիէլ մարգարէ 420·
Դանիէլ վարդապետ 441·
Դանղի 218·
Դաշտ 16, 646·
Դաշտեցիք 448, 450, 451, 453, 455, 457·
Դաշտ գիւղ 448·
Դատիան 647·
Դարաշամբայ գիւղ 237, 271, 353, 523·
Դարընի գիւղ 163·
Դարդաղին քաղաք 573, 641·
Դարիշուքուր 646·
Դաւթի խաչ 502·
Դաւիթ 98, 101, 102, 105, 611, 621, 645·
Դաւիթ Արքակաղնեցի կաթուղիկոս 434·
Դաւիթ եպիսկոպոս 253·
Դաւիթ թագաւոր 623, 624·
Դաւիթ կաթուղիկոս 6, 7, 14, 71, 22, 185—187, 202, 204—207, 214—220, 232, 233, 430, 435, 438, 439·
Դաւիթ մարգարէ 303, 316, 368·
Դաւիթ փիլիսոփայ 395·
Դաւրէժ 3, 627·
Դերջան 450, 582, 583, 630·
Դեմիտրէ թագաւոր 623·
Դիատին խան 646·
Դիզակ 608, 610·
Դիլանչին խօջայ 494·
Դիմիշխ 627·
Դիոսկորոս 622·
Դիւան բէկ 231·
Դուին 277, 620·
Դուխորկան գիւղ 482·
Դումանիս 608·
Դումաւանդ 478·
Դօփի ազգ 611·

Ե·

Եաղիչի 569·
Եալթուզ սար (Կովկաս) 120·
Եախըշխան այր 50·
Եաղուբ 540, 584·
Եաղուբ բէկ 629·
Եաղուբ փաշայ 243—245·
Եաման 605,
Եամանի ծով 603·
Եանգաժիմիր թագաւոր Լեհաց 389·
Եբրայեցիք 458—465, 470, 473, 474
Եգիպտոս 285
Եզդ քաղաք 478·
Եզդիշէր իշխան 495, 497, 504—506, 510, 511, 553·
Եզեկիէլ 44·
Եզիդ՝ երկիր 457·
Եզնկան 622—624, 629, 630—632, 665·
Եղիգաձոր 53, 168, 217·
Եղիա մարգարէ 316·
Եղիշէ կաթուղիկոս 437·
Եղիսէ մարգարէ 316·
Եղնաբերդի աղբիւր 492·
Եսայի 55, 180, 440·
Եսայի մարգարէ 254, 303·
Եսայի վարդապետ 347·
Երասխ գետ 40, 42, 43, 45, 55, 56, 60, 61, 273, 608, 614·
Երեմիա 44, 242, 245, 246·
Երեմիաս 55·
Երեմիա դպիր 659·
Երեմիա մարգարէ 657·

Երեմիա վարդապետ 627։
Երզնկան 450, 624—627։
Երնջակ գաւառ 185, 194, .. 347։
Երուանդակերտ 38։
Երուսաղէմ 162, 251—255, 286, 299, 303, 329, 331, 334, 338, 385, 408, 611, 622, 623, 645, 654, 656։
Եւա 129։
Եւդոկիա քաղաք 406։
Եփրեմ Խ. Ասորի 418։
Երևան 21, 22, 26—37, 40, 53, 71, 72, 79, 86, 87, 99—101, 106, 114, 138, 148, 176, 184, 185, 188, 193, 202, 203, 204—208, 210, 211, 215, 216, 224—231, 235, 236, 277, 278, 280, 281, 294, 297—300, 303, 305, 312, 316, 318, 320 321, 340, 341, 351, 352, 355, 356, 401, 405, 451, 455, 457, 574, 575, 611, 631, 642, 646, 665։
Եօլայըրղմազ 87։
Եօսամ պէնէկ 658։

Զ.

Զարիլմազ 636։
Զակամ 16։
Զանկի չայ 216։
Զարիշատ 53։
Զաքարիա 624։
Զաքարիա կաթուղիկոս 420, 422, 426, 436, 437։
Զաքարիա վարդապետ 241 .. 348։
Զէլ փաշայ 642։
Զըլֆիղար 20, 22—24, 75, 97։
Զընջիլ ղուան 94։
Զիաշբէկ 80, 222։
Զենկի շէհիր 571։
Զիրաքն Գիրաքենց 490։
Զմիւռնա 651։
Զմիւռին քաղաք 338։
Զուլամաթ լեառն 596։
Զօղբէկն 614։
Զօրաբաբէլ 44։

Է.

Էիբ Հաճի 548։
Էջմիածին 3, 6, 11, 12, 36, 40, 180, 182, 186, 196, 197, 199—215, 218, 224—229, 234—247, 296, 303 302, 305, 306, 308, 311, 312, 318—322, 330, 325, 326, 329, 338, 339, 340, 342, 343, 344, 345, 348, 349, 355, 369, 372, 379, 381, 383, 385, 386, 389, 398, 405, 407, 408, 418, 426, 427, 428, 430, 431, 432, 434, 436, 437, 439, 440, 441, 446, 489, 503, 530, 542, 546, 561, 574, 637, 640, 641, 643, 651, 666, 668, 669, 670։
Էջմիածնի գաւառ 194։
Էհդիմալ դօլվաթ 443, 444, 446, 449, 450—452, 458, 459, 461—467, 473, 477։
Էրեմիրու վանք 492, 493։
Էրնկան գիւղ 314։
Էվլիայ բէկ 518, 519։

Ը.

Ընկռուզաց աթոռ 582։
Ընկռուզաց թախտ 630։

Թ.

Թաքառուկ 556։
Թադէոս առաքեալ 268, 281, 349, 350, 415։
Թադէոս կաթուղիկոս 437 438։
Թադէու վանք 611։
Թաթար խան 570, 583։
Թահմազ շահ 607։

Թահմազղուլի 16, 17, 58, 59, 61, 62, 207, 208, 210, 211, 213, 229, 230, 231, 235, 313, 315, 316, 574, 642.
Թամրազ 95, 101, 105, 115—121, 126—129, 134—137, 143—146, 201, 202, 627, 645.
Թամրազ Թագաւոր 649.
Թանահատի վանք 252, 263.
Թանղրի Թանիմազ 87.
Թարիմ 171.
Թարում Խալխուլ 45, 46.
Թարվէզ 18, 20—22, 24, 27, 36, 45, 53, 55, 62, 63, 71, 72, 74, 76, 79, 88, 92, 93, 97, 99, 140, 148, 162, 186, 187, 190, 192, 195, 222, 235, 266, 267, 281, 287, 317, 321, 353, 455, 472, 478, 481, 489, 494—567, 575, 583, 606, 613, 616, 617, 630, 632, 634, 635, 636, 665.
Թաւուլ 634, 636.
Թաւրէզ 612, 642, 643, 668.
Թեսաղոնիկէ 654.
Թէոդորոս կաթուղիկոս 435.
Թէոդորոս սուրբ 567.
Թէոդուպօլիս քաղաք 294 330.
Թիլիմ խանի այգի 301.
Թիփլիզ 16, 95, 96, 98—100, 111, 115, 120, 131, 138, 202, 645.
Թոդկայ եկեղեցի 492.
Թոխչի դարվազ 212.
Թումայ եպիսկոպոս 253, 260.
Թումայ խօջայ 513.
Թումէն խօջայ 240.
Թոնցրկացւոց աղանդ 621.
Թուշ ազգ 648.
Թորոս 442.
Թորոս աշակերտ Յովհաննու Համշէնցւոյ.
Թորոս վարդապետ 441, 440.
Թովմայ վարդապետ 436.
Թուղթամ իշխան 627.
Թուսէ քաղաք 604.
Թօխաթ քաղաք 86, 407, 573, 634, 640, 641, 647.

Ի.

Իբրահիմ 216, 217, 632, 634, 651, 659.
Իբրահիմ բէկ 221, 514, 518, 519, 520.
Իբրահիմ Թագաւոր 571.
Իբրահիմ սուլթան 431, 530, 643, 663.
Իբրահիմ փաշայ 642.
Իզմիր 338, 339, 653, 655.
Իթբուղայ 624.
Իլախաց բարբառ 381.
Իլախաց երկիր 147, 247, 363, 366, 373, 661.
Իլով քաղաք 228, 337, 363—365, 370, 371, 377, 379, 381, 384, 385—387, 389, 398, 402, 407, 439, 640, 645, 656.
Իլտրում 571.
Իլտրում Պայազիտ 566, 567, 627.
Իշարի բուրջ 489.
Իմամղուլի 143.
Իմամղուլի խան 638.
Իմամռուզի 34.
Ինջաղան 87, 634.
Ինջայու երկիր 96.
Իսահակ 470, 472, 658, 664.
Իսահակ կաթուղիկոս 231.
Իսկալի դուռն 505.
Իսմայէլ 584, 585, 606, 607.
Իսմայելացիք 620.
Իսրայէլ 43, 44, 55, 70, 280, 472, 652, 653, 658.
Իւանէ Աթաբէկ 623.

Լ.

Լալա 172, 176, 177, 607, 614, 616.
Լալա փաշայ 100, 631.
Լալաբէկ իշխան 300, 301, 340:

**

Լանկթամուր 567, 571, 627·
Լառ 478·
Լատուլան 628·
Լաւանդ 634·
Լաւասափ 101, 106—142, 202·
Լէհաստան 381, 398·
Լիբանան 52·
Լիմ անապատ 398·
Լիմ կղզի 253, 254, 395·
Լնջան 46·
Լուքաշ 368, 369·
Լևոն թագաւոր 623, 624·
Լոռի 53, 608, 624·
Լոռիքան բերդ 532·
Լոռուոյ գաւառ 352·

Խ·

Խաթայի 605·
Խալխեաղ 90·
Խալիլ փաշայ 533, 637, 639, 640·
Խալիֆալու 45
Խան Աւդալ 15, 18·
Խանածախ գիւղ 16·
Խաչալամ 423·
Խաչատուր 541 542·
Խաչատուր վարդապետ 372,.. 373, 377, 378, 398, 402, 539·
Խաչատուր վարդապետ Բաղիշեցի 441, 538·
Խաչեն 16, 608·
Խաչիկ 25·
Խաչկօ սարկաւագ 366·
Խաչվերաց տօն 341·
Խաչքօ դատաւոր 386, 388·
Խառակունիս գիւղ 499·
Խասրիկ գիւղ 492·
Խաս—քոյ 655·
Խարբերդ 629, 636·
Խէքուց վանք 492·
Խլաթ 33, 421, 422, 623·
Խոճանտէ 601·
Խոյիկան 168·
Խնուս 30, 35, 53, 74, 630· 635·
Խոյ 53, 235, 237 450·
Խոռումապատ 171, 176·
Խոսրով շահ 482·,
Խոսրով սուլթան 170·
Խոսրով փաշայ 54· 55, 242, 497, 553, 573, 574, 634, 640·
Խոտանան գիւղ 284·
Խորասան 34, 329, 420, 478, 598, 606, 607, 613, 614·
Խորգոմ գիւղ 486·
Խորձուն գաւառ 441·
Խոր—վիրապ 235, 628·
Խուդաբանտայ շահ 613, 631·
Խուտաֆրին 6·
Խուլթ 421·
Խուն սար 478·
Խրամ քաղաք 524·
Խցաձոր 637·
Խցաձորի եկեղեցի 360·
Խօշաբ 503, 506, 507, 512, 513, 514, 518, 519·
Խօշաբայ բերդ 498, 494, 495, 520, 521·
Խօջայ Յակովբջան 451·
Խօջայ Սարֆրազ 410·
Խօջայ Սաֆար 64·
Խօջենց եկեղեցի 213, 320·

Ծ·

Ծաղկունու ձոր 53, 81·
Ծարայ երկիր 611·

Կ·

Կաթան եկեղեցի 60, 523·
Կաթուղիկէ եկեղեցի 202, 305·
Կախէթ 16, 93, 98, 102, 103, 105, 115, 118, 119, 121—125, 132, 143, 201,... 202, 648·
Կախիկ վարդապետ 627·

Կակիթ 645·
Կաղզուան 35, 53, 228, 450,
Կամախ 567, 582·
Կամենից քաղաք 366, 368·
Կայլամին ծով 600·
Կապադովկիա 632·
Կատրամիտէ 621·
Կարապետ եպիսկոպոս 203, ·· 253·
Կարապետ կաթուղիկոս 433, · 435·
Կարապետ վարդապետ 266, ·· 441·
Կարապետ բաղիշեցի 441·
Կարբի գիւղ 672·
Կարկառ 441·
Կարին 74, 228, 356, 619, ·· 620, 624·
Կարինես գիւղ 179·
Կարնոյ գաւառ 37, 38, 53, · 247·
Կարուճան 597·
Կարս 35, 37, 41, 53·
Կարփի գիւղ 80, 81, 84, 85, 350, 627·
Կաֆայ 88, 147, 629, 656·
Կեղի գաւառ 441, 506, 630·
Կեմ գիւղ 510·
Կենդանանից վանք 492·
Կեսարիա 370, 633, 634·
Կիլիկիա 415, 442, 625, 634·
Կիպրոս կղզի 147, 568, 631·
Կիրակոս 249, 251, 252, 255, 259, 260, 285, 288, 291·
Կիրակոս կաթուղիկոս 418, ·· 419, 436, 628·
Կիրակոս վարդապետ 493·
Կլայ 606·
Կրետէ կղզի 577, 644·
Կոբայ գետ 194·
Կոգջայ խօջայ 630·
Կողբու գերեզմանատուն 313·
Կողբու վարդապետ 313, 401, 641·
Կողբ 81, 228·
Կոմիտաս կաթուղիկոս 620·
Կոստանդին 16, 98, 99, 102, 105, 334, 621·
Կոստանդին կաթուղիկոս 435, 624, 625·
Կոստանդին Բարձրբերդցի կաթուղիկոս 434·
Կոստանդին Կեսարացի կաթուղիկոս 435·
Կոստանդնուպօլիս 5, 30, 36, 39, 87, 92, 100, 131, ··· 147, 228, 241, 247, 286, 287, 316, 330, 335,—338, 370, 385, 386, 493, 496, 510, 542, 546, 551, 561, 562, 568, 622, 653, 654, 659·
Կովկաս 648·
Կովկաս լեռն 120·
Կուճրաթ 597, 605·
Կուր գետ 138, 608, 616·
Կռնկու վանք 492·
Կտուց կղզի 254·
Կօլբայ 120·
Կօտէից գաւառ 80·

Հ·

Հագար 616·
Հազարաջրիպ 169·
Հաթերք գիւղ 16·
Հալապ 75, 410, 595, 597, 624, 635, 636·
Հաղպատ 611, 665
Համան 278·
Համազասպ եպիսկոպոս 298·
Համադան 478, 573, 640·
Համդան աղայ 63·
Համզաչիման 53·
Համզայ սուլթան 419·
Համիթ 10, 11, 27, 74· 75, 78, 93, 209, 439, 450·
Համշէն 441·
Հաճկատար Աստուածածին Եկեղեցի 364·
Հայաստան 1, 3, 286, 447, ·· 451, 457·
Հայաթի զատայ 663·
Հայբաթ բէկ 19·

Հայու ձոր գաւառ 486·
Հայրապետ արեղայ 630·
Հայրապետ խօջայ 267·
Հայք 1, 3, 4, 5, 446·
Հաննես Թահմազղուլի բէկ 58, 61, 99·
Հալիձոր գիւղ 262·
Հասանայ ազգ 611·
Հասան բէկ 629·
Հասան փաշայ 634, 636·
Հաւուց թառ 405·
Հաւուց Թառայ վանք 298·
Հաֆիս—Ահմատ 639·
Հեթում 625·
Հեթում թագաւոր 415·
Հերովդ 145·
Հզի 11·
Հզի գիւղ 441·
Հնդկաստան 412, 592, 597·
Հնդստան 598, 600, 645·
Հռոմ 5, 11, 487, 540, 607·
Հռոմոց ազգ 486·
Հռոմաստան 311, 295, 372·
Հռոմոսի վանք 621·
Հուլաւու խան 624·
Հումայ փաթշահ 630·
Հուսէյն աղայ 494, 495, 497, 498, 504, 506·
Հուրմուզ քաղաք 638·
Հռիփսիմէ կոյս 178, 180 -184 186, 190, 192- 196, 197, 206, 211, 21?, 314, 326, 328, 329, 345, 620·
Հռոմ 376, 372, 658·
Հռոմկլա 625·
Հոգւոց վանք 492, 512, 513, 520·
Հուսէյն 499, 505, 630· 633·
Հուսինեայ վանք 154, 185·
Հրէ քաղաք 420·
Հօղանց գիւղ 260·

Ձ·

Ձորոյ վանք 252·

Ղ·

Ղազար 669·
Ղազախ 111, 643·
Ղազախ խան 638,
Ղազարու վանք 625·
Ղազրին քաղաք 63, 132,.... 140, 171, 175, 230, 308, 442—444, 449, 478·
Ղազի խան 15, 18, 19·
Ղազուին 614·
Ղայթաղ 609·
Ղանդահար քաղաք 638, 645, 646·
Ղանջագան 625·
Ղասրիկ 492·
Ղասում գինի 56·
Ղարայ 86·
Ղարաբաղ 114, 275, 628·
Ղարախուսուֆ 627·
Ղարաղաշ 87, 634·
Ղարաղալխան 647·
Ղարամաննենց ցեղ 253·
Ղարաեազիչի 632, 634·
Ղարաչօրակ 557—560·
Ղարայիւսուֆ 418·
Ղարասահար 87·
Ղարբանդայ խան 625, 626·
Ղարչղայ խան 75, 76, 281,. 301, 639·
Ղափան աշխարհ 353·
Ղեսիմալաբան 600·
Ղզլպաշ 23, 24, 193·
Ղզլաղաճ 111·
Ղրխիալան 148, 151, 154—162·
Ղրիթուլաղ 53, 80, 81·
Ղրիմ 627·
Ղրաթ քաղաք 543·
Ղուլար աղասի 77·
Ղուկաս վարդապետ Խորձունեցի (Կեղեցի) 10, 440, 441, 630·
Ղուկաս վարդապետ Հախբատեցի 611·
Ղում քաղաք 478·
Ղուռուպալյայ վանք 240, 492·

Ղփիթոց ազգ 285·
Ղփիթոց անապատ 291·
Ղօնիա 630·

Ճ·

Ճահուկ գիւղ 353·
Ճարաբերդ 608·
Ճոխ գիւղ 571·

Մ·

Մաղրայ 96·
Մախսուտ բէկ 633·
Մախսուտ խօջայ 242, 245·
Մախսուտ սուլթան 192, 194, 551, 556,
Մալաղասում 518·
Մալթա կղզի 577, 644·
Մակու 35, 53, 628, 450·
Մակու գաւառ 440·
Մաճար 570, 583, 615·
Մատենադարան Մայր Աթոռոյ 3·
Մատթէոս 179·
Մատթէոս վարդապետ 572·
Մատնավանք 418·
Մահուռ 597·
Մահմատ 79, 80, 87, 458, 569, 651, 659, 662, 663·
Մահմատղուլի խան 176, 330, 340, 344, 345·
Մահմատ սուլթան 30, 33·
Մահմատ փաշայ 30—32, 646·
Մահմետ 66, 67, 69, 133—135, 144, 145, 150, 153—161, 168, 193, 194 246, 459, 467—469, 476—479, 526—529, 534, 537, 544, 548, 549, 554, 578, 579, 580, 581, 583, 606, 607, 615, 616, 620, 625, 626, 663, 664·
Մահմետ թագաւոր 578·
Մահմուտ բէկ 424·
Մահմուտ սուլթան 431, 542, 546, 566—568, 570, 629, 632, 634·
Մահտեսի խօջայ Գրիգոր 352·
Մահտեսի Մարկոս 385·
Մահտեսի Մխիթար 418·
Մաղաքիա վարդապետ 582·
Մանազկերտ 35·
Մանուէլ թագաւոր 629·
Մանուէլ եպիսկոպոս Հաւուց 2, 17, 47, 48, 235·
Մանազկերտ 53·
Մանուել եպիսկոպոս Խորվիրապեցի 12, 13, 17·
Մանօղլի 87, 642·
Մաշատի 631·
Մասիհ 470, 472·
Մարաց ազգ 15·
Մարաց աշխարհ 15, 257·
Մարգարայ 321·
Մարխաս Չալապի 494, 513, 514, 521·
Մարզուան 634·
Մարիամ 144·
Մարման գիւղ 441·
Մարտիրոս եպիսկոպոս 195, 203, 204, 350·
Մարտիրոս քահանայ 529·
Մարք 647·
Մաքսապետական գրունք 564·
Մելիք աղայ 64·
Մելիք բաբէ 16·
Մելիքշադայ գիւղ 16·
Մելիք Հայկազ 16, 219·
Մելիք Ղարաբաղ 148, 150, 154, 161·
Մելիք Սուջում 16·
Մելիք փաշիկ 16·
Մելքիսէթ արեղայ 395·
Մելիքսէթ Երևանցի 391·
Մելքիսէթ եպիսկոպոս 16·
Մելքիսէթ վարդապետ 313, 399, 400, 401·
Մելքիսէթ կաթուղիկոս 6, 7, 14, 17, 22, 27, 28, 178, 183, 202—230, 271, 272, 277, 278, 280—282, 292, 293, 296—298, 363—365, 430—439·
Միքիօր 195, 196·
Մեծ Հայք 441·

Մեղրի գիւղ 347, 561·
Մեսրովբ կաթուղիկոս 435·
Մեսրովբ մեծ վարդապետ 351·
Մելիք Յովսէփ 148·
Մըսր 567, 629·
Մինաս վարդապետ 409, 411, 412·
Միրաք խօջայ 240·
Միրզա Սաող 478·
Միրաբէկ 504·
Միրզա Մահմատ 186·
Միր Աւգուլայ 165·
Միջագետք 74·
Միհրամ գիւղ 523·
Միրշարաֆ 74, 76·
Միրվիլին 219·
Միքայէլ 320, 672·
Միքայէլ կաթուղիկոս 437, 438·
Մխիթար կաթուղիկոս 435·
Մխիթար 547—551, 623·
Մկրտիչ արքեպիսկոպոս 419·
Մկրտիչ եպիսկոպոս 235, 349, 350·
Մկրտիչ վարդապետ 416·
Մղրիպայ 604·
Մոծակենց Գրիգոր 352·
Մոկաց երկիր 266·
Մոկացի Ներսէս 391·
Մովսէս 664·
Մովսէս աբեղայ 499·
Մովսէս կաթուղիկոս 217, ... 218, 225, 233—240, 253, 260, 282—299, 291, 293, 313—315, 317, 332, 346, 348, 353, 355, 366, 369, 371, 379, 381, 383, 398, 438, 439, 640, 641·
Մովսէս կաթուղիկոս Սիւնեցի 11, 238, 284, 440·
Մովսէս մարգարէ 43, 55, 70, 316, 461·
Մովսէս վարդապետ 246, 297—299, 300—305, 308— 311, 315, 316, 352, 361—363, 398, 640·
Մուհամմատ թագաւոր 570, 571·
Մուղնի գիւղ 350·
Մումին փաշայ 642·
Մուշ 32, 421, 450·
Մուշկան գաւառ 206·
Մուշկուն 46·
Մուսալաս խման 462·
Մուսալիմ փաշայ 81, 498·
Մուստաֆա 571, 572, 579, 580, 583, 584, 637, 638·
Մուստաֆայ բէկ 87, 490, 514—516, 528, 570·
Մուրատ 148—241, 572, 574, 579, 580—584, 607, 611, 616, 632, 643·
Մուրատ թագաւոր 570, 571, 578·
Մուրատ սուլթան 316, 566—568, 573, 579, 631, 632, 638, 641—643·
Մուրատ Սօֆի 581·
Մուրատ փաշայ 636·
Մուրթուզայ փաշայ 316, ... 573, 574, 641, 642·
Մուրդքէ 278·
Մուսալիմ փաշայ 497·
Մսր քաղաք 435, 627·
Մսուր 624·
Մցխի 117·
Մօլայ Ղասում 514·
Մօրիկ 47·

Յ·

Յաբենի 249·
Յակոբ 658, 664·
Յակոբ կաթուղիկոս 341, 353, 546, 551, 646, 651, 668, 669, 670, 672·
Յակոբ կաթուղիկոս Սսեցի .. 435·
Յակոբ կաթուղիկոս Ջուղայեցի 3, 196, 431, 438, 439·
Յակոբ վարդապետ 345, 346, 525·
Յակոբջան վարդապետ 409·
Յակոբ Տեառն եղբայր 368·
Յակովբ քահանայ 329·

Յամիթ 526, 530, 532։
Յեսու 27, 43, 44, 316։
Յոհան եպիսկոպոս 203, 418,
Յոհանավանք 81, 307, 325, 348, 672։
Յովելիա մարգարէ 660։
Յովհան Մեծաբարոյ կաթողիկոս 434։
Յովհաննէս արեղայ 327, 499։
Յովհաննէս Անթափեցի Կիլիկիոյ կաթողիկոս 442։
Յովհաննէս արքեպիսկոպոս 672։
Յովհաննէս Թագաւոր 622։
Յովհաննէս—Կարապետ 145, 522, 524, 525։
Յովհաննէս Կաթողիկոս 241, 427, 437, 625։
Յովհաննէս Շիրակ 440։
Յովհաննէս Ոստանցի վարդապետ 441։
Յովհան Որոտնեցի 440։
Յովհաննէս վարդապետ Համշէնցի 394, 440, 441։
Յովհաննէս վարդապետ Ծարեցի 605։
Յովհաննէս վարդապետ Նղուց 11։
Յովհաննէս վարդապետ Շիրաք 441։
Յովհաննէս վարդապետ Ուրհայեցի 11։
Յովհաննէս վանական 440։
Յովհաննէս վարդապետ 11, 323, 611։
Յովհաննէս վարդապետ Քաջբերունի 11։
Յովսէփ 68, 461, 620։
Յովսէփ աշակերտ Բարսղի 394։
Յովսէփ կաթողիկոս 435։
Յովսէփ Նղուեցի վարդապետ 441։
Յովսէփ վարդապետ ի Նղուց 11։
Յովհաննէս քահանայ 211, 212։
Յորդանան գետ 286։
Յօհան 623։
Յովհաննէս կաթողիկոս 429։
Յօհանջան 42։
Յօհան վարդապետ 388, 389։
Յօհան Օձնեցի 299, 325, 620։
Յօսէպօս պատմագիր 408։
Յուդա 29, 155, 470, 472։
Յուլադատի 87, 635։
Յուսիկ 416։

Ն։

Նազար խօջայ 16, 64, 186, 187, 190, 192, 200, 201, 219, 232, 234, 239, 297, 301, 302, 309—311, 319, 524։
Նաթան 654։
Նախավկայ վանք 523։
Նախչուան քաղաք 21, 22, 23, 24, 25, 36, 44, 53, 55, 56, 72, 78, 99, 185, 187, 190—195, 204, 217, 237, 272, 354, 383, 427, 429, 430, 441, 556, 627, 630, 634։
Նաղալ Մահմատ—բէկ 411։
Նաղտի բէկ 207։
Նաղի բէկ 212։
Նաղաշ վարդապետ 629։
Նաջաֆ Ղուլի խան 341, 444, 445, 446, 449։
Նաջէրլու Ղուբաթ աղայ 208,
Նասիմ 534—536։
Նասիֆ փաշայ 75։
Նասֆ փաշայ 636, 637։
Ներսէս 394, 442։
Ներսէս՝ աշակերտ Վարդանայ 440։
Ներսէս կաթողիկոս 434, 437, 620։
Ներսէս կաթողիկոս Սսոյ 331, 334։
Ներսէս Կլայեցի կաթողիկոս 432, 434։
Ներսէս վարդապետ Մատաղ 391, 441։

Ներսէս վարդապետ Մոկացի · 253, 254, 260·
Ներսէս վարդապետ 395, 396, 414·
Ներսէս վարդապետ Ամկեցի ·· 391, 441·
Ներսէս վարդապետ Բաղիշեցի 391· 441·
Նեսար 39·
Նիկօլ արեղայ 365·
Նիկօլ (Նիկողայոս) եպիսկոպոս 228, 335, 337, 364, 367, 370—373, 375, 376, 377, 378, 382, 384, 385, 386—389, 526, 527, 528—531 640, 645·
Նիճ գաւառ 441·
Նինուէացիք 484·
Նիչ՝ գաւառ 440·
Նշաւուր մագան 60,,
Նոյ 562,
Նորագեղի եկեղեցի 492·
Նորակերտ 280·
Նորակոչիկ դուռն 564·
Նոր Ջուղա 402·
Նուրիջան 166, 167·

Շ·

Շատախ 495, 506·
Շահաստան ի Թարվէզ 420·
Շահաբաս 4· 14, 15, 17, 22, 24, 25, 27, 28, 32, 34· 39, 40, 45, 46· 57, 58, 61· 64, 66, 68, 69, 72, 75, 78, ·· 85, 88, 93· 95· 96, 98, ·· 99, 102, 105, 106, 111—114, 116, 121, 124, 126, 127, 139, 142—149, 163, 169, 171, 175, 198, 238, 273, 275, 282, 299—301, 308, 319, 341, 354, 355, 361, 430, 431, 442, 447, 451, 455, 457, 458, 522, 524, 556, 573, 583, 585, 614, 615, 631, 634—640, —650, 644—646, 648, 672·
Շահ Բանդայ խան 639·
Շահբունուց ձորի գաւառ 430·
Շահ Թամազ 98—100, 567, · 568, 585, 630, 631·
Շահի—Արմէն 623·
Շահիսէվան 121·
Շահ Իսմայիլ 99, 567, 582, · 585, 629, 630, 631·
Շահիջան Թագաւոր 645·
Շահխուտաբանտայ 99, 585·
Շահկերտու գիւղ 353, 441·
Շահռուզ բէկ 361, 628·
Շահսէֆի Թագաւոր 69, 238, 239, 309—311, 317, 320, 410, 411, 431, 575, 640, 942—644, 650·
Շահ—Սուլէյման 585, 650·
Շամ 603, 627, 629·
Շամախի 5, 93, 97, 103, ··· 104, 111, 253, 568, 636, 665·
Շամբի 253, 272, 273·
Շամիշայտ 604·
Շամիրամ 510,
Շամիրամակերտ 568·
Շամղաղան 482, 643·
Շամշապատ քաղաքի Թաղի անուն 447—449·
Շամշուլտէ բերդ 417, 628·
Շամքոռու ձոր 253·
Շահին Չալապի 287·
Շահնազար 96·
Շահնաւազ խան 649·
Շահպուլաքէ գիւղ 601·
Շարաչխանէ 53·
Շեխու բէկ 510·
Շըխ—Հայտար 584, 585, ··· 629·
Շինահայր, այժմ Շնհէր 262·
Շիրազ 30, 46, 135, 140, ·· 141, 143, 145, 423, 457, 478, 602·
Շիրաք 240, 441·
Շիրակուան 37, 53, 450·
Շիրվան 603·
Շխիջան փաշայ 642·
Շխլըբան Թաղ 451·
Շխլըբանցիք 457·

Շխիջան փաշայ 642.
Շխըսբան Թաղ 451.
Շխըսբանցիք 457.
Շխսաֆի 584.
Շմաւոն եպիսկոպոս 523—525.
Շմիդտին 627, 628.
Շնքուռկու գիւղ 630.
Շուշանից վանք 402.
Շուշտար 478.
Շրվան 598, 632.
Շօշ քաղաք 672.
Շօր գետ 482.
Շօռօթ 280, 355.
Շօռօթու եկեղեցին 353.

Ո.

Ողմի գիւղ 394.
Ոլոգին 329.
Ոճիքէ 623.
Ոնոփրիոս արեղայ 366, 367.
Ոսկան վարդապետ 3, 351.
Ոսկանապատ գիւղ 16.
Ոսկեանք 281.
Ոստան քաղաքն 24, 425, ... 441, 507, 509, 628.
Ոստանայ երկիր 552.
Որմի 19, 53, 451.
Որոտան գետ (Որոտն) 264, .. 627.
Ուլամայ օղլի Հայբաթ բէկ 15, 19.
Ուղուրլու բէկ 149, 151, ... 153, 219.
Ուշի գիւղ 351.
Ուշական 81, 88.
Ուսկու գաւառ 482.
Ուռումէլի 88, 147, 247.
Ուսուֆ խան 639.
Ուստաշագրտ 481, 643.
Ուրծաձոր 53, 81.
Ուրհա քաղաք 9, 11, 86, 418, 441, 569, 632—634.

Ջ.

Ջալտրան 567, 582, 629.
Ջարբաղ Թագաւորի այգի 447.
Ջարեք գետ 608.
Ջարեքագետի անապատ 253.
Ջիթախ 629.
Ջին 605.
Ջիլ փաշայ.
Ջրաղ խաղ 410.
Ջրաղ սուլթան 21, 222.
Ջորս գիւղ 237.
Ջօմար 495—497, 499, 501, 503, 506—511.
Ջօռում գիւղաքաղաք 569, .. 632—634.

Պ.

Պալաշխան 599.
Պայազիտ սուլթան 567, 571, 578—582, 629.
Պանկալայ 599, 600.
Պանտար 599.
Պալիաչուխի աշխարհ 120, .. 126—130, 135, 137, 202.
Պաչօ 624.
Պարսկաստան 131, 132, 134, 137, 143, 200, 202, 295, 307, 311, 448, 455—457.
Պարվաճ 605.
Պարտաւ 608.
Պեխի 629.
Պետրոս առաքեալ 291, 418.
Պետրոս եպիսկոպոս 512, 513, 520.
Պետրոս խօջայ Ջուղայեցի 352.
Պետրոս կաթուղիկոս 621, 622.
Պոնտոս 88, 148, 622.
Պորփի՛ր 392, 399.
Պու տունի 582.
Պրոկղ իմաստասէր 406.
Պօղոս առաքեալ 418.
Պօղոս եկեղեցի 331, 384, 396, 403, 405, 433, 490.
Պօղոս կաթուղիկոս 435.

* * *

Պօղոս վարդապետ 190, 218, 241—248, 253, 260, 264, 266, 267, 269, 272, 277, 281—283, 291, 293·

Ջ·

Ջալալ 16, 80, 320, 634, ·· 636·
Ջալալիք 34, 79—86, 94, ·· 147·
Ջահանշէն 628·
Ջահնշահ 584, 628·
Ջաղաթէ 628·
Ջանիբէկ 626·
Ջանփօլատ 87, 635, 636·
Ջաֆար 30, 100, 612, 616, 618, 632·
Ջէմշէտ թագաւոր 599·
Ջէկիլու 95·
Ջէրդուռն 568·
Ջիհանշահ 629·
Ջհանգիր 567, 570·
420, 421—424, 436, 611·
Ջհանշահ փատշահ 417, 418,
Ջղախոռ 46, 217·
Ջղալօղլի 37, 38, 41, 55, 56, 71, 72—79, 93, 634·
Ջորջանէթ 614·
Ջուլամերկ 504, 506, 418, · 495·
Ջուղայ 12—14, 21, 24, 25, 27, 29, 41, 55—65, 68, 70, 72—74, 204, 232, 297, 301, 309, 318—321, 345, 428—450, 522—525·
Ջումայ մաչիթ 533·
Ջոիլ բերդ 418·

Ռ·

Ռշտունիք 635·
Ռօհիջան խօջայ 242, 244, ·· 245, 493·

Ս·

Սաբիւռոս 52, 57·
Սադր 464·
Սաթրչի 634·
Սալահադին 623·
Սալամաստ 53, 628·
Սալանդի լեառն 598·
Սալիշմէն շահ 629·
Սալմաստ 18, 19, 451·
Սալնապատայ վանք 492·
Սահաթայ երկիր 81, 228·
Սահակ աբեղայ 499·
Սահակ կաթուղիկոս 226—248· 282, 418, 438, 439 574, 620·
Սաղմոսավանք 249—252·
Սամուէլ աբեղայ Բալուեցի 538,
Սայդուլէ խան 645·
Սայիտ 33, 34, 465·
Սանահին վանք 621, 622, 665·
Սանջախ բէկ 77·
Սանդուխտ կոյս 350·
Սապէթ 651—656, 658—660, 662—664·
Սասուն 421, 441· 475, 474·
Սարգիս 90·
Սարգիս եպիսկոպոս 249—252 254, 259, 287·
Սարգիս զօրավարի վանք 351·
Սարգիս կաթուղիկոս 427, 437·
Սարգիս պարոնտէր 264, 285, 291, 315·
Սարգիս վարդապետ 612, 628·
Սարգիս քահանայ 595, 596·
Սարդար 71, 72, 76—79, 86, 93, 100, 634·
Սարդիոն քաղաք 588·
Սարուխան բէկ 16·
Սարու խօջայ 126—128·
Սարուխան խօջայ 240·
Սարֆրազ խօջայ 64, 297, 319·
Սաֆար խօջայ 86, 186, 187, 192, 196, 197, 201, 320, 630, 633·
Սեաւ ծով 92·

Սեբաստիա 86, 91, 414, 621, 622, 627, 629, 630, 634·
Սելիմ 132, 567, 579—583·
Սենեքերիմ 621, 622·
Սէիդ 527·
Սէլէնիկ 641·
Սէլիմ սուլթան 567, 571, 572, 629, 631, 639·
Սէյլան քաղաք 585·
Սէյլանայ մադան 598·
Սէյթվար 583·
Սիմէօն մահտեսի 643·
Սիմէօն Ապարանցի վարդապետ 401, 406, 441, 647·
Սիմէօն վարդապետ Ճգնազգեաց 441·
Սիմոն Թագաւոր 607, 616—619, 631·
Սիմոն խան 16, 30, 98—100, 131, 132·
Սիմոն քահանայ 381, 402, 406·
Սինան իշխան 320, 498·
Սինան փաշայ 35, 38·
Սիս 246, 331, 332, 334, 415, 416, 426, 432, 434, 436, 628, 634·
Սիսական գաւառ 353·
Սիրուն 542—546·
Սիւնեաց գաւառ 13, 287·
Սիւնեաց երկիր 361·
Սիւնիք 252, 253, 286, 611·
Սիօն 13, 254·
Սիօնի եկեղեցի 494·
Սիֆի 309·
Սղերդու երկիր511·
Սմբատ Մագիստրոս 622·
Սմբատ Տիեզերակալ 621·
Սմրղանդ 627·
Սողոմոն 244, 278·
Սոմխէթ 16·
Սպահան 15, 20, 46, 49, 63, 64, 88, 97, 112, 114, 116, 629·
Սպանդիար բէկ 164, 219, 450, 630·
Սպիտակ ծով 92·
Ստաթէ առաքեալ 252·
Ստամբօլ 16, 131, 316, 376, 495, 498, 530, 567, 569, 571, 572, 574, 615, 622, 629, 635—637, 640, 642, 643, 645, 646, 648, 656·
Ստեփաննոս 329·
Ստեփաննոս եպիսկոպոս 627·
Ստեփաննոս կաթուղիկոս 625·
Ստեփաննոս կաթուղիկոս Առընջեցի 438·
Ստեփաննոս կաթուղիկոս Հռոմկլայեցի 435·
Ստեփաննոս Նախավկայ 81, 270, 368, 418, 525·
Ստեփաննոս կաթուղիկոս Սալմաստեցի 437·
Ստեփաննոս Սիւնեցի 408·
Ստեփաննոս վարդապետ 254, 407, 408, 423, 561, 562,
Ստեփաննոս Տարօնեցի 621·
Սրապիոն կաթուղիկոս 13, 22, 27—29, 36, 242·
Սրապիոն վարդապետ 8—17, 209, 284, 285, 287·
Սրապիոն կաթուղիկոս Ուրհայեցի 440·
Սրապիոն վարդապետ Ուրհայեցի 438, 439, 441·
Սրխու վանք 492·
Սուլէյման 33, 34, 494—499, 502—507, 511—513, 514—520, 567, 568, 571, 572, 579, 580, 582, 583, 629—631·
Սուլէյմանայ սար 193·
Սուլթան Իբրահիմ 576, 577·
Սուլթանիա 230, 231·
Սուլթան Մահմատ 577·
Սուլթան Մուրատ 575, 576·
Սուլթանում 64, 219·
Սունխուր 629·
Սուրբ Գէորգայ զօրավարի վանք 350·
Սուրբ խաչ վանք 378·
Սուրբ Յակոբ 286, 331, 437, 645·

Սուրբ Կարապետ 242, 672։
Սուրբ Կարապետի վանք 347։
Սուրբ Սարգիս 576, 620, 643։
Սուրբ Ստեփաննոս 227, 304, 672,
Սքանդար 634։
Սևան կղզի 203, 253, 647։
Սօխորդ գիւղ 642։
Սօֆի 636։
Սօֆիան գիւղ 19, 75, 78, 93։

Վ։

Վաղարշապատ 419։
Վայոց ձոր 168, 217։
Վան 12, 29—31, 33, 35, 53, 54, 56, 71—76, 78, 235, 237, 240, 243, 317, 418, 424, 425, 450, 489, 491, —495, 497—499, 504, 505 511, 513, 518, 519, 521, 543, 545, 547, 548, 575, 628, 635, 642, 644, 646։
Վանայ ծով 487։
Վառնուշատ գիւղ 441։
Վասակաշէն գիւղ 612։
Վասիլ Թագաւոր 621, 622։
Վասպուրական 72, 241, 254, 287, 395, 486, 542, 621։
Վաստիկան գիւղ 418։
Վասօ խօջայ 517։
Վարագ 266, 418, 492, 493, 503, 512, 513, 516, 620։
Վարագայ վանք 494, 495, .. 506, 520, 521, 644։
Վարանդ 608, 610։
Վարդ պատրիկ 486—488։
Վարդան 440։
Վարդան վարդապետ 624։
Վարդան եպիսկոպոս 182, 184,
Վարդան Մակուեցի 440։
Վենետիկ 577։
Վեստ 621։
Վժան գիւղ 391, 395, 601։
Վիրապ 620։
Վիրք 607, 620, 623։
Վլադիսլաւ Թագաւոր 381։
Վրաստան 6, 295, 307, 311։
Վրացտուն 115, 132, 203, 205, 207, 215, 629, 630։
Վրթանէս եպիսկոպոս 427—430, 437։

Տ։

Տաթև 17, 253, 391, 441։
Տաթևու վանք 12, 14, 252, 287, 361։
Տահիրն 627։
Տանձափարախ 253։
Տարբերունի գաւառ 425։
Տարօն 625։
Տաքան 597։
Տիլիպեճան 597։
Տէր Անդրէաս քահանայ 357, 361։
Տէր—Առաքեալ կաթուղիկոս 6
Տէր—Դիոսկորոս 622։
Տէր—Եսայի 620։
Տէր—Զաքարիա 27։
Տէր—Թորոս 627։
Տէր—Խաչիկ 622։
Տէր—Մաշտոց 621։
Տեր—Յակովբ կաթուղիկոս 434։
Տէր—Յովհաննէս 39։
Տէր—Պետրոս 622։
Տէր—Սարգիս 621։
Տէր—Սողոմոն 620։
Տիգրանակերտ 11, 12, 74, 75, 242, 526, 532, 569։
Տիրամայ եկեղեցի 521։
Տուկիծ 622։
Տրապիզոն 251, 252, 567, 622, 629, 637, 639։
Տրապօլիս 625։
Տփխիս 101, 113, 116, 128, 130, 135, 142, 292, 352, 433, 607, 608, 623, 627, 630, 665։
Տևու վանք 630։
Տօղուղօլում 567։
Տօսիլ 630։

Ց·

Ցղնայ 267, 280·
Ցղնոյ եկեղեցի 353·
Ցրուանց վանք (Ձորոյ վանք) 252·

Փ,

Փաղախ գիւղ 492·
Փահրան գիւղ 166, 167·
Փաշայ 77·
Փայտակարան 607·
Փառշիշ գիւղ 166·
Փարաւոն 43·
Փարի 117, 163· 165, 167·
Փարիս 46·
Փարխունի գիւղ 441·
Փէջ 631·
Փիալայ փաշայ 633·
Փէքար 132·
Փիղան բերդ 553, 555·
Փիլիպպոս 383·
Փիլիպպոս եպիսկոպոս 352·
Փիլիպպոս կաթուղիկոս 3, 314—323, 325—327, 329—331, 334—340, 342—350, 352, 353, 385—387, 389, 405, 407, 408, 414, 431, 438—440· 542, 643, 645, 646, 667 670·
Փիլիպպոս վարդապետ 240, 243, 315, 316, 641,·
Փինհաս 470—472, 475·
Փիրպուտաղ 75·
Փուրթուկէշին 185, 186·
Փօլատ խօջայ 240·
Փօռայ 597·

Ք·

Քալպարկայ 597, 605·
Քալպրալի խան 642·
Քանաքռլու 79, 80·
Քաշան 478·
Քաշէլ 604·
Քապիկ 638·
Քասախ գետ 352·
Քառթլայ 115, 124, 125, 202·
Քասաքիաս 87·
Քարափոս գիւղ 491·
Քաֆան 567·
Քեղայ 627·
Քէհիա 77·
Քըլու 87·
Քիրման աշխարհ 457·
Քշտաղս երկիր 16, 260·
Քրդարան 75, 295, 311·
Քրման 478·
Քիրման 601·
Քիսայ 605·
Քուլթափայ 190·
Քուրդ Միրշարաֆ 76·
Քսթակ գիւղ 217·
Քօթուկլու 275·
Քօշեղ գիւղ 16·
Քօռօղլի 87·
Քօռադարայ 50, 83·

Օ·

Օզբէկ 614·
Օթման 613·
Օթմանական գունդ 616·
Օթման ազգ 607·
Օծօպու վանք 430·
Օմար 620·
Օշական գիւղ 351·
Օսման 572, 573, 580—584, 608, 612, 614, 620·
Օսման թագաւոր 570, 571·
Օսմանճուկ գիւղաքաղաք 566·
Օսման սուլթան 570, 574·
Օսման օղլի 566·
Օսման փաշայ 578, 632·
Օրխան 578, 580, 581·
Օրխան սուլթան 566·
Օրհան թագաւոր 570·
Օրհան սուլթան 571·
Օքուզ Ահմատ փաշայ 637·

Փ.

Փահրապատ 88, 132—134, 140, 148, 170—172, 224, 229—235, 301, 303, 308, 354, 456, 478, 640, 649.
Փահրատ 611, 614, 616, 632.
Փառուխ 301.
Փռանգստան 185, 191, 600, 604.
Փռանկպատրիկք 326.
Փռընգիկան 217.

ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳՐՉԱԳԻՐ ՕՐԻ-ՆԱԿԻ (*ԱԹԱՆԱՍ ԴՊՐԻ* №1714) ԵՒ ՏՊԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԻ (*ՎԱՂԱՐՇԱՊԱՏ* 1884 *Թ.*) ՄԷՋ ԵՂԱԾ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՏԱՐ-ԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ԷՋ–ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
5—11	(վեր.)	Թուին	Թվին (ամեն տեղ)
»—14	»	Թարվէզ	Թավրէզ (ամեն տեղ)
»—15	»	Օսմանցւոց	Օսմանցոց (ամեն տեղ *)
6— 4	»	Էջմիածնի	Էջմիածնայ (ամեն տեղ)
»—15	»	անուն	անունն
»—15	»	գաւառէն	ի գաւառէն
»—18	»	խոչնդակն	խոչընդական
»— 1	(ներք.)	փախչէր	փաղչէր
7— 1	(վեր.)	առնել զոմն ընկեր ինքեան	առնել զոմն ինքեան ընկեր
»— 7	»	օրհնեաց	աւհրնեաց
»—11	»	յորոյ պատճառէ	որոյ պատճառէ
8—14	»	եհաս	էհաս. (ամեն տեղ անց. կատարեալի եզակի երրորդ դէմքի վրայ աւելացրած է Է և ոչ թէ Ե)
»—16	»	տուողք	տըւողք
10— 1	»	Ղուկասու	Ղուկասոյ
»— 8	»	ի Համիթ	ի Ցամիթ.
»— 5	(ներ.)	կենդանւոյ	կենդանոյ
11— 7	(վեր.)	Ցովհաննէս	Ցովհաննէս (շատ տեղ)
»—20	»	Ասորւոց	Ասորոց
»— 3	(ներք)	ի տիրողութենէ	ի տիրութենէ.
12— 7	»	ի խօսն	ի խօսսն.
»— 4	»	զեկեղեցին	զեկեղեցիս
13— 6	(վեր.)	նստէին	նստէինն
»— 5	(ներք)	մակագրեցին	մակադրեցին
14— 7	(վեր.)	Սրապիոն	Սերապիոն
15— 1	»	ի Սպահան	Իսպահան
16— 2	»	ըմբռնմանն	ըմբռւմանն
»— 6	»	պատանդք	պագանդք

*) Ի գրչագիր օրինակի՝ յամենայն տեղիս վերջաւորութիւն սեռ. հո լ.(եզ. եւ յոգ.) գրեալ է ոյ եւ ոց փոխանակ ւոյ եւ ւոց.

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
16—8 (վեր.)	Սիմօն	Սիմոն
»—10 »	Կախեթու	Կախէթու
»—11 »	յոլովք յազ-գէն	յոլովք կային յազգէն
»—17 »	ի Խաչենայ	ի Խաչենոյ
»—18 »	ի Բրիտիս	ի Բրետիս
»—7 (ներք)	տեղին	գեղին
»—3 »	դաշտեցւոյ	դաշտեցոց
»—4 (վեր)	զոր	զորս
»—4 »	ամենկքեան	ամենքեանքն
17—11 »	Հաճաբաս	Հաճապաս (շատ տեղ)
18—15 »	փութագնաց	փութագնաց
19—1 »	ի Սալմաստ	ի Սալամաստ (ամեն տեղ)
»—5 »	Որմւոյ	Որմոյ
21—10 »	Զուղայու	Զուղայոյ
22—1 (ներք)	խօսիլ	խօսել
»—1 »	բանս	բան
»—1 »	իրաւամբ	իրաւամբք.
23—7 (վեր.)	մնայք	մնաք.
»—10 »	ժամադրեալ	ժամադրեալք
24—11 »	մօրուսն	մուրուսն
»—14 »	մուներտիկ	մունեդիկ
25—3 »	զանուշահամ	անուշահամ
25—10 »	կումաշս	կումաշք
»—12 »	ոսկւով	ոսկով
»—14 »	Զուղայու	Զուղայոյ
»—19 »	յինքեան	յինքն
»—23 »	զթոյնսն	զթունսն
26—16 »	յուստեքէ	ուստեքէ
»—19 »	Արարատու	Այրարատու
»—22 »	որոյ	որոց
»—26 »	առնէին	անէին
27—8 »	հասանիլ	հասանել
»—19և26	Սրապիոն	Սերապիոն
28—5 »	լինիլ	լինել
»—13 »	զթուղթ	թուղթ
29—20 »	անմխիթար ոգով	անմխիթար սգով
»—21	եկեաց	եկաց
»—24 »	վախճան	վաղճան
»—5 (ներք)	Որոյ միշա-տակն....ամէն	գրչագրի լուսանցքումնէ գը-րուած.
30—6 (վեր.)	գերեցուցեալ	գերացուցեալ
»—8 (ներք)	փաշայն	փաշէն (շատ տեղ)
31—11 »	հասանին	հասին

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՁԱԳԻՐ
31—12 (ներ)	աւուրսն	յաւուրսն
» — 3 »	տէրութիւն	տէրութիւնդ
32— 7 (վեր)	գերեցուցեալ	գերացուցեալ
33—12 »	ինչ կամեցաւ	ինչ և կամեցաւ
» —10 (ներ)	Սուլէյման	Սուլէման
34—10 (վեր)	սորին	սովին
» — 6 (ներ)	Շահիսէվան	Շահիսեւան
35— 6 »	յԱրճշու	յԱրճշոյ
37— 2 (վեր)	Արարատու	Արարադու (ամեն. ուրեք)
» —13 »	Ջղալօղլւոյն	Ջղալ օղլոյն.
38—19 »	ընդ մեծամեծս	ընդ մեծամեծսն
39—15 »	շահին ասացին	շահին և ասացին
» — 9 (ներ)	մեզ	զմեզ
42— 7 (վեր)	առն	առնն
» —16 »	յանցանել	ցըանցանել
44— 5 (ներ)	Բաբելացւոց	Բաբիլացւոց
45— 2 »	անցուցեալ ըզ-ժողովուրդն	անցուցեալք զժողովուրդսն
46—12 (վեր)	ի Լնջան և յԱ-ընջան	ի Լընջան և յԱլընջան
47— 2 »	Գառնւոյ	Գառնոյ (յաճախակի)
47—13 »	և ոչ	և կամ թէ ոչ
» —15 »	լինիլ	լինել
» —12 (ներ)	տանիլ	տանել
» — 9 »	որք	որ
» — 7 և 2	ամրացեալք	ամրացեալ
» — 3 »	մտեալք են	մտեալ են
48— 3 (վեր)	ելեալք	ելեալ
» — 7 »	որք	որ
» —12 (ներ)	լերինն	լեռանն
» — 5 »	այլ ափշեալ	քանզի ափշեալ
49—12 (վեր)	այոց	այս
» —13 »	գնացեալք	գնացեալ
» —14 »	որք	որ
» —16 »	ինքեանց	իւրեանց
» — 7 (ներ)	և այլ ազգի	և այլ ևս ազգի
50— 8 (վեր)	ժողովեալ	ժողովեալք
» —17 »	վէմք	վէմքն
» —17 »	գօտի գօտի	գօտի և գօտի
» —21 »	գօտւոյն	գօտոյն
» —21 »	բերեալ	բերին
50— 6 »	թուր	թիւր
» —15 »	զընտանիսն	զնդանիսն
52— 9 »	ոմանց ևս ընդ	զի ոմանց ընդ
» —11 »	Սղքա ևս	Եւ սղքա ևս

****

ԷՋ — ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
53— 2 (վեր)	Լուռոյ .	Լոռոյ
» — 6 »	զՍալամաստու	զՍալմաստու
» —11 »	զՈւրծածորն	զՈւրծայձորն
54— 2 »	քանդակեալք	քանդակեալ
» — 7 »	Հոգւոյ .	Հոգոյ
55— 7 »	ողբովք .	աղբովք
» —12 »	Մովսիսի .	Մովսէսի
» —15 »	բարձեալ .	բարձեալք
56—15 »	Ղասում գիւնի	Ղասում գունի
» — 2 »	Վան բանակաւն	Վան ամենայն բանակաւն
57— 2 »	Ջուղայու	Ջուղայոյ (յաճախակի)
» — 3 »	ամենից .	ամենայնի
» — 9 »	անուանւոյ	անուանոյ
58—13 »	մունետիկ	մունեդիկ
59— 5 »	ի տանիլ .	ի տանել
» —12 »	որք . .	որ
» —13 »	գեղօրէիցն	գեղորէիցն
» —11 (ներ)	և յընչիցն	և ի յընչիցն
» — 4 (վեր)	իւրաքանչիւր ոք	իւրաքանչիւրք
60—13 (վեր)	Աստուածած-նին	Աստուածածին
» —12 (ներ)	այսոքիկ .	այս
» —11 »	յանձն լիցի	յանձին լիցի
» — 4 »	ի գեղջէն .	ի գեղէն
» — 3 »	յեղր , .	ի յեղր
61— 1 (վեր)	յաւուրս	յաւուրսս
» — 4 (ներ)	յոլովք .	յոլով
» — 3 »	զայլոց	զայլ
» — 1 »	նաւթիւ .	նօթիւ
62— 9 (վեր)	Թողուսցուս	Թուղուսցուս
» —10 (ներ)	ի քաղաքն Թարվէզ	ի քաղաքն Դավրէժ, որ է Թավրեզ
62— 8 (ներ)	զբանս .	բանս
» — 4 (վեր)	պատճառեալք	պատճառեալ
63— 3 »	սկսանիլ .	սկսանել
» — 5 »	զՀրովարտակ	Հրովարտակ
» — 8 »	աղային .	աղէն
» —10 »	անսայք .	անսաք
» —10 (ներ)	ընդ նոսա	ընդ նոսին
» — 8 »	յորոյ	որոյ
» — 1 »	շինուածօք	շինուածովք
64— 3 (վեր)	ըստ արժան-ւոյն	ըստ արժանոյն
» — 6 »	ոսկւով .	ոսկով

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
» — 9 (վեր)	ի պսակ	ի պսակս
» —12 (ներ)	եղբօրն	եղբաւրն
» — 9 »	գայր ի տունս	գնայր ի տունս
65—12 (վեր)	զեկեղեցի	եկեղեցի
66— 5 »	ի տեսանելն	ի տեսանել
» — 2 (ներ)	բանս	բանքս
69— 4 (վեր)	զվարիլն	զվարելն
» — 9 »	զորդւոյ անուն	զորդւոյ զանունն
» —13 »	արեանարբուք	արիւնարբուք
» —11 (ներ)	կեանս	կեանք
73— 2 (վեր)	փաշայն	փաշէն (յաճախակի)
» — 3 »	պատերազմիլ	պատերազմել
» —10 »	Օսմանցւոց	Օսմանցոց (ամեն. ուրեք)
» —16 »	զորս	որ
» — 9 »	Ջղալօղլւոյն	Ջղալօղոյն
74— 8 »	Հասանիլ	Հասանել
» — 8 (ներ)	Հասանիցի	Հասանիցէ
» — 6 »	պատերազմիլ	պատերազմել
75—12 (վեր)	գիւղն	գեօղն
» — 9 »	Իսկ ինքն	Եւ ինքն
76—14 (ներ)	փախիցի	փախիցէ
» — 6 »	զօրացն	զզօրսն
77—12 (վեր)	գաղտագողի	գաղագողի
78— 3 »	առ ժամայն յափշտակեալ	առ ժամայն իսկոյն յափըշ-տակեալ
» —13 (ներ)	առաջնոյ	առաջին
79— 8 »	ձեռնհաս	ձեռնահաս
80— 1 »	այսց	այս
81 1 (վեր)	վանիցն	վանացն
» — 8 (ներ)	զընտանիս	զընդանիս
» — 5 »	զ'Նրխբուլաղայ	զ'Նրբուլաղայ
82— 2 (վեր)	փախուցեալք	փախուցեալ
» — 6 »	իւրոց	իւրեանց
» —13 »	հոտն	զհոտն
» —13 »	ի ներս	ի ներքս
» —13 (ներ)	զոր	որ
83— 3 (վեր)	զապրանս	ապրանք
» —10 »	զի	որ
» —14 (ներ)	զձիւն և զջուր	ձիւն և ջուր
» — 2 »	Գեղարքունի	Գեղագունի
83— 1 »	գարւոյ	գարոյ (բազում անգամ)
84—16 (վեր)	վարեալք	վարեալ
85— 4 »	ի ցրտոյն նըքողեալ	ի ցրտոյն սառուցեալ և ի քաղցոյն նքողեալ
» —11 (ներ)	որպէս	այսպէս

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
86— 9	(ներ)	զՍուրհոյ · ·	զՍուրհայ
87—12	(վեր)	Քեասպքեաս	Քասպքաս
» —16	»	զհամբաւ	համբաւ
» —11	(ներ)	զորս	զոր
» — 4	»	Լինիլ · ·	Լինել
88—14	(վեր)	քրիստոնեայս քշեաց	քրիստոնեայ քշեց
89— 4	(վեր)	ի գեղջէն	ի գեղէն
» —12	»	Նոքա · ·	կանայքն
90— 5	»	սովուս ·	սովոյս
» —12	(ներ)	սովալլուկ	սովալըլուկ
» — 6 և 1		կերին · ·	կերան (յաճախակի)
» — 5	»	բազմաց ·	բազում
» — 2	»	որք կալան ըզ-փոքր	որ կալան զփոքր
91— 3	(վեր)	որսացեալք	որսացեալ
» — 8	»	որդիս · ·	որդին
» —13	»	Նուալով ·	Նըվալով
» —16	»	ի գեղջէ ի գիւղ	գեղէ ի գեղ
» — 7	(ներ)	անընդելք	անընդել
92—12	»	Կոստանդնու-պոլսոյ	Կոստանդնուպոլսի
92—11	(ներ)	ի Բաղդատոյ	ի Բաղտադայ
93— 1	(վեր)	Գանձայոյ և Շամախւոյ	Գանձայու և Շամախու
» — 2	(ներ)	խուել · ·	խւել (յաճախակի)
94—14	(վեր)	ուժգնաբաղխս	ուժգնաբախս
» — 5	(ներ)	որոյ · ·	որում
95—15	»	Սունի ·	Սուննի
» —10	»	փախչիլ ·	փախչել
96— 8	(վեր)	ջրոյն · ·	ջրին
» —12	(ներ)	իջևանեցաւ	իջաւանեցաւ
97—11	(վեր)	զընտանիս	զընդանիս
99—10	(ներ)	կոչնական	կոչնականս
» — 6	»	կոչնակս առ Թագաւորսն	կոչնականս Թագաւորացն
101— 8	(ներ)	պատանդս	պադանդս
102— 6	»	զնոր · ·	նոր
103— 2	(վեր)	և գնա ·	և գնասցես
103—14	»	Շամախւոյ	Շամախու (յաճախակի)
103—10	(ներ)	Վրաց ·	Վրացեացն
104— 5	(վեր)	Նորա · ·	Նոցա
» —13	»	Վրաց ·	Վրացւոց

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐԶԱԳԻՐ
105—11 (վեր)	ի Թուականութեան	ի Թվականութեան *
» — 7 (ներ)	սպանանել	սպանել
107— 5 (վեր)	զՀաւատոխ	զՀաւատոին
108—10 (ներ)	Նաւասափու	Նաւասափին
» —10 »	աղջկանն .	աղչկանն (մեծ մասամբ չ է)
» — 5 »	զի ինձ .	որ ինձ
109 — 4 (վեր)	ժամանակի	ամանակի
» —10 »	և յողջոյն միոյ	և յողջոյն աղչկան միոյ
» —12 »	առնուլ իւր զկին	առնուլ իւր կին
» — 6 (ներ)	քուերէն .	քըւերէն
» — 3 (վեր)	զեօթն .	եօթն
110— 6 »	խնդրէր՝ զի	խնդրէր՝ թէ զի
111— 3 »	դանդանավան	դանդանավանդ
» — 6 »	այնպէսի .	այնպիսի
» —18 »	էարկ զգուլթ և զողորմ	էարկ գուլթ և ողորմ
112—16 (վեր)	զպատճառս	պատճառս
113— 7 »	գրեաց .	գրեալ
» —10 »	գոյութիւն	գոյացութիւն
» —10 (ներ)	այսորիկ .	այս
115—16 (վեր)	ձիովք .	ձեօք
118— 1 »	կոչեաց զմովրովն	կոչեաց Հաշն զմովրովն
» — 9 (վեր)	այլ յօդ յօդ	այլ յօդ և յօդ
» —11 (ներ)	ի գիւղօրայս	ի գեղորայս
120— 5 (վեր)	զարարմունսն	զարարմունքն
» — 9 »	պալխաչուխի	պալխաչուղի
121—14 »	մունետիկք	մունեդիկք (ամեն. ուրեք)
122— 9 և 10 (վեր)	զփառս և զպատիւս և զպարգևս բազումս	փառք և պատիւ և պարգևք բազում
» —12 (ներ)	զսպանութիւն և զգերութիւն	սպանութիւն և գերութիւն
» — 3 (վեր)	ընտանեաց	ընդանեաց
123— 1 »	փախիցի .	փախիցէ
» —14 »	զմանկունս	զմանկտիս
» —11 (ներ)	անօթսն .	անօթքն
» —10 »	զսրբութիւնսն	զսրբութիւնքն
» — 9 »	զայլ անօթս և զսրբութիւնս	այլ անօթք և սրբութիւնք

* Մեծաւ մասամբ ի գրչագիր օրինակի գրեալ է Թվին եւ ոչ Թուին:

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
» — 1 (ներ)	այլոց սրբութեանց	այսց սրբութեանցս
125—15 (վեր)	վտանգ	վտանգ ինչ
» — 4 (ներ)	իւրեանց և ամենայն	զիւրեանց և զամենայն
126— 8 (վեր)	յարեաց	Արեաց
127—15 »	զմիաբանութիւն և զդաշնադրութիւն	միաբանութիւն և դաշնադրութիւն
128— 5 (ներ)	այսր	այսմ
129— 2 (վեր)	այսր	այսմ
131— 8 »	մեռելոյն	մեռելոցն
132— 9 »	զզօրս	զօրս
» —10 »	զբերդորայս	բերդորայս
» — 4 »	մինչև	մինչ
133— 3 (վեր)	ետուն	տուին
» — 8 »	ընտելք	ընդել
» —13 (ներ)	ի նժդեհութենէ	ի նշդեհութենէ
» — 3 (ներ)	անձինք	անձին
134— 1 (վեր)	քրիստոնէասէր	քրիստոնեասէր
» — 6 (ներ)	կուռէճք և դահիճք	կուռէճ և դահիճ
135— 3 (վեր)	յԱսպահան	ի Սպահան (յաճախակի)
137— 6 (ներ)	յուզմունս	ի յուզմունս
139—15 (վեր)	ի գնալն	ի գալն
» —11 (ներ)	Լաւասափու	Լաւասափին
» —10 »	այլ ես	զայլ ես
» — 1 »	ափսոսայր	ափսոսէր
140— 7 (վեր)	զայնպիսի իսկ երևելի	զայնպիսի երևելի
» —12 (վեր)	յամենայնի	յամենայն
» —14 »	պատահիցէ	պատահեսցի
» — 6 (ներ)	ի Ռուսաց	յԸռուսաց (ամեն. ուրեք)
» — 2 »	Ասպահանայ	Ըսպահանայ
141— 2 (վեր)	Եւ դեսպանքն	Եւ եկեալ դեսպանքն
» — 8 (ներ)	զձուկն	ձուկն
143— 1 (վեր)	Թամրազի	Թամրազու
» — 2 »	Կախեթու ի նոյն Ղահարասէ	Կախէթու ի նոյն Ղահարաս
» —13 (վեր)	պատանդ	պադանդ
» — 4 (ներ)	լիցի	լինիցի
144— 1 (վեր)	որդ	որում
» — 4 »	հաւատոցս	հաւատոյս
» —10 (ներ)	տացին	տան

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
145— 4	(ներ)	աղախնեայք	աղախնայք
146—14	»	ռամկաց	ըռամկաց
» —11	»	նշխար	նշխարքն
» — 3	»	զմռօք	զմռսօք
147—10	(վեր)	զօրս	զօր
» — 6	(ներ)	վտարանդիք	վտարանդի
148— 1	(վեր)	ի ծովեզերսն	ի ծովերսն
149—20	»	դասու	դասուց
» —21	»	զգանձս	գանձս
150— 4	»	զղաբս	ղաբըղ
151—17	»	ի գանձարանս	ի գանձապանս
152— 5	»	զինէն	զյինէն
154—11	»	Հուսինիայ	Հուսէնիայ
» —17	»	ձերոց	ձեր
157—15	»	ընդ իրեարս	ընդ իրար
» —17	»	ոտից	ոտաց
158— 3	»	մուսուլմանք	մուսուրմանք
» — 6	»	պարտսն՝ զոր տալոց էին	պարտքն զոր տալոյ
» — 4	(ներ)	այդր	այդմ
158— 1	»	խօսիլ	խօսել
159— 3	(վեր)	երեցն	էրէցն
» —19	»	յառաւօտն	ցառաւօտն
160—22	»	կամօքն	կամովքս
161— 4	»	նոցա	սոցա
» —20	»	զդրամն	դրամին
» — 2	(ներ)	այնորիկ այլուի	այնմիկ այլւի
162— 3	(վեր)	Հանապազ գնացեալ աղօթէին	գնացեալ Հանապազ աղօթէին
» — 2	(ներ)	զներումն և զթողութիւն	ներումն և թողութիւն
163— 2	(վեր)	յառաջնոյ	յառաջին
» — 2	(ներ)	առաջարկեալ	յառաջ արկեալ
164— »	»	և էր վասն	և զի՞ վասն
165— 2	(վեր)	երիցոյն	իրիցոյն
» — 6	»	իւրմէ	իւրոյ
166—14	»	գիւղականացն	գեղականացն
» — 6	(ներ)	գեղջն	գեղին
167— 9	(վեր)	ցաւով	ցաւօքն
» —18	»	զքառասուն	քառասուն
» — 3	(ներ)	զգիրս	գիրք
169 - 15	(վեր)	եկեալ	եկաւ
» — 8	(ներ)	գրեանսն	գրեանքն
170— 2	(վեր)	առաջակայից	յառաջակայից
171—14	»	Խոռոմապատ	Խօռոմապատ

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
171—19	(վեր) գիտել	գիտենալ
» — 6	» Թուիցուք	Թուեսցուք
» —15	» որդ	որում
173— 4	(ներ) զերամակս	երամակս
» — 2	» զտան կահս և զկարասիս յոլովս	տան կահ և կարասի յոլով
174— 1	և 2 (վեր) տուաք	տվաք
» — 9	(վեր) գեղջս	գեղիս *
» — 7	(ներ) ոչխարսն	զոչխարսն
» — 6	» զպարտս ևս	պարտք
» — 4	» յաւուր	աւոր
176— 8	» կողպայ	կոպղայ
178— 1	(վեր) սրբուհւոյ կու-սին Հռիփսիմեայ	սրբուհոյ կուսին Հռիփսիմայ
178— 8	(վեր) պատրիկք	պատրիք (յաճախակի)
179—11	(ներ) պատրեացն	պատրոցն
180— 3	(վեր) Գայիանեայ	Գայիանայ (ամեն. ուրեք)
» — 4	» Հռիփսիմեայ	Հռիփսիմայ (ամեն. ուրեք)
» — 6	(ներ) մատրանն	մատուռին (ամեն. ուրեք)
182— 5	(վեր) սուրբ Էջ-միածնի	սրբոյն Էջմիածնայ
182—11	(վեր) զնշխարսն	զնշխարքն
» — 2	(ներ) պատրիկքն	պատրիչքն (յաճախակի)
183— 3	(վեր) Մելքիսէթ	Մելիքսէթ
» — 9	» եղելոց գործոյս	եղելոյ գործոցս
» —11	» պատրիացն	պատրոցն (յաճախակի)
185— 6	» ի գիւղն	ի գօղն
» — 3	(ներ) ընդ բազմաց	ընդ բազում
186— 8	(վեր) առ ժամուն	առ ժամաւն
» —14	(ներ) աւագ	աւաք (ամեն. ուրեք)
187—18	(վեր) մակագրեալ	մակադրեալ
188—10	» ի գիւղս	ի գեօղս
191— 1	» այնոցիկ	այնմիկ
192— 4	» այսորիկ	այսոցիկ
193—12	» ի Գեղարքունի	ի Գեղագունի
194— 1	» զպատրիկսն	զպատրիսն (ամենայն ուրեք [պակասի)
» — 8	(ներ) Երնջակ	Էրնջակ
195— 3	(վեր) Աստուծոյ	Քրիստոսի
» —11	» արշալուսոյ	արշալուս
196— 1	» եկն	եկաւ
197— 5	(ներ) Գուայ	Գըւայ
198— 2	» Նշանաւոր ե-րևելի	Նշանաւոր և երևելի

* Ի ձեռագրի յամենայն տեղիս փոխանակ գեղ՝ գրեալ է գեղի։

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
199—16 (վեր)	Թշնամւոյ	Թշնամոյն
» —21 »	ուխտատեղիք	ուխտատեղք
» —24 »	յաղգս .	յաղագս
200— 1 »	զի Լիցի .	զի անդ լիցի
» — 3 »	Աջոյն .	Աջին
202— 4 »	զԹագաւորն	զԹագաւորսն
203—12 »	ասացեալս	ասացելովք
208— 3 (ներ)	ստուգիւ ա՞յս է	ստուգիւ այս է (Լուսաւորչի ազն և պատասխանեալ ասացին թէ ստուգիւ այդ է)։ *
209— 9 (վեր)	զիջաւ .	իջաւ
213—13 (ներ)	քարինքս	քարերս
» —11 »	յԱսպահան	ի Սպահան
214— 2 (վեր)	զքարանց	զքարերաց
» — 8 »	կանխաւ .	կանխեաւ
217— 8 (ներ)	Ջղախու .	Ջղախու
229—10 (վեր)	մոհրդար	մուհրըրդար
» —11 »	Էջմիածնի քա-րինսն	զԷջմիածնայ քարերն
229— 4 (ներ)	զԹուղԹս	զԹուղԹքս
230—15 (վեր)	Սահակայ	Սահակին
» —17 »	Սահակայ .	զՍահակի
231—12 »	հուքմն :	հումքն
» —15 »	Սահակայ	Սահակին (ամեն. ․ուրեք)
» — 7 (ներ)	առնել .	անել
» — 2 »	կաԹուղիկոսին	կաԹուղիկոսն
232—10 (վեր)	գնալ . .	ի գնալ
» —13 »	այսր . .	այսմ
233— 7 »	երկոքեան	երկոքին
» — 9 »	ի Փահրապատ	ի Փահրատապատ (յաճախակի)
234—10 »	խնամ . .	խնամք
» — 1 (ներ)	այսց . .	այսմ
235— 1	ամենեքեան .	ամենեքեանքն
239— 9 (վեր)	մուղադայն	մուղադայէն
240—20 »	զերիս . .	երեք
» —23 »	իւրովք .	իւր
242—16 »	Ռօհիջանն	յԸռօհիջանն (ամեն. ուրեք)
» —22 »	վասն որոյ	որոյ և վասն
243— 6 (ներ)	իւրեանց .	իւրոց
244— 6 »	ի տարւոջն	ի տարին
245— 4 (վեր)	ամենից .	ամենայն
247— 2 »	Պօղոսի .	Պօղոս
249— 8 »	Ամբերդոյ	Անբերդոյ

* պակասէր ի տպագիր օրինակի։

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
249— 9	(վեր)	Ցաբենի	Ցաբենի (ամեն. ուրեք)
250— 5	»	զիւրև	զիւրեաւ
251— 5	»	Նշմարան	Նշմարանք
252—18	»	յԵրուսաղիմէ	յԵրուսաղէմայ
» —20	»	Ստաթէ	Ըստաթէի
» — 8	(ներ)	եկեալ	ելեալ
« — 5	»	զխուցս	խցեր
253—16	(վեր)	ի Սևան	ի Սէվան
255— 7	»	հոգւոց	ոգւոջ
256— 9	(ներ)	մեծ և փոքր	մեծք և փոքերք
257— 7	(վեր)	երէց	էրէց
» —10	(ներ)	իւրով կանո-նաւ սաղմոսովն	իւր կանոն սաղմոսովն
257— 1	(ներ)	զգեստուքն	զգեստովն
258— 3	(վեր)	իսկզբանէ	յըսկզբնէ
259— 9	(ներ)	ի սրբոյ	ի սուրբ
» — 6	»	զտեառնէ	զտէր
260— 4	»	իւր Քրիստոս	իւր առ Քրիստոս
» — 2	»	Աստուծոյն	չկայ
262— 4	(վեր)	և պատառ-ուածքն	և այն պատառուածքն
262—10	(վեր)	ի հարաւայնոյ	ի հարաւային
» — 2	(ներ)	զամենեսեան	զամենեսեանսն
263— 9	(վեր)	առաւօտուն	առաւօտին
264—16	»	սակս	յաղագս
» — 9	(ներ)	գերեզմանա-տանն	գերեզմանատանցն
265— 1	(ներ)	հողոյն	հողին
» — 6	»	յուսով	յուսալով
267— 9	(վեր)	ութ կանոնաւ	ութն կանոն
» — 7	(ներ)	Գողթնեաց	Գողթնաց
268— 2	(վեր)	բաղմաց	բազում
272—15	»	ի վերայ գլխոյ	ի վերայ քումդ գլխոյ
274— 3	»	Արաղբար	Արագբար
» —11	»	Ճաշեցից	Ճաշակեցից
» —14	»	երանելւոյ	երանեալ
282— 8	»	երեք երեք	երեք
283—14	»	կայր	կեայր
285—16	»	կրօնաւորակա-նօք	կրօնաւորական
285—18	(վեր)	խցակցութրան	խցակացութեան
» — 9	(ներ)	զնա	Նմա
289— 5	(վեր)	ծոմաջանիւք	ծոմաջան
» —11	»	յարիցեալք յիշխանս	յարիցեալ իշխանաց

ԷՋ—ՏՈՂ	ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
289— 7 (ներ)	ղարալայիւ	ղարալաւ
290— 3 (վեր)	ինքեանց .	իւրեանց
» —11 (ներ)	երկկանայք	երկականայք
292— 7 (վեր)	ամենիւ .	ամենայնիւ
293 — 4 (ներ)	ի քաղաքիս յայսմիկ	ի քաղաքէս յայնմանէ
294— 7 (ներ)	այգեստան-եայցն	այգեստանացն
295—15 (ներ)	ի Հոռոմաստան	ի Հոռմաստան (բազում ան-[գամ)
297— 2 (վեր)	Համացեղս	Հոմացեղս
301— 3 (ներ)	ժամուն .	ժամաւն
311—17 (վեր)	եկեալ .	եկն
315— 4 (վեր)	Փիլիպպոս	Փիլիպոս (ամեն. ուրեք)
» —11 (ներ)	տուողն .	տվողն
» —10 »	Ստամբօլայ	Ըստըմբօլայ
317— 2 »	զսալարկ .	զսալայարկ
318— 7 (վեր)	գմբէթաշէնք	տիրաշէն
319— 7 »	Ջուղայեցւոց	Ջուղեցոց *
» — 9 »	ժամանակի	ամանակի
» —18 »	քրիստոսական	քրիստոնէական
» — 6 (ներ)	մխիթարիցուք	մխիթարեսցուք
320— 9 (վեր)	յսկուտեղ	յըսկուտեղ
325—14 »	Յօհաննու Օձ-նեցւոյ	Յովհաննու Օձնեցոյ
326— 9 (ներ)	Հայազին .	Հայազուն
331— 7 (վեր)	սալարկ արար	սալայարկ արար
» —13 »	Սսոյ . .	Սսայ (բազում անգամ)
333—15 »	աղջկան .	աղչկան
339— 4 »	Թափարիզ	Թափարիդ
» — 7 (ներ)	խոնարհու-թեամբ ի հրամանս	խոնարհութեամբ խոնարհեալ ի հրամանս
346— 7 (վեր)	երկնի .	երկրի
349— 3 (ներ)	որմոցն .	որմանց
352—14 (վեր)	պարիսպ վա-նացն	զվանաց պարիսպն
352— 7 (ներ)	մահտեսի	մահտասի
354— 4 »	անլիքորք .	անիլքորք
356— 5 »	առաջի .	ընդ առաջ
362— 5 »	բանտարգել	բանտարգեալ
363— 8 »	փրկեաց .	փրկեսցէ
365— 3 (վեր)	ռամիկք .	ըռամիկք
366—20 »	Ոնոփրիոս	Օնոփրիոս (բազում անգամ)

* Յամենայն տեղիս փոխանակ Ջուղայեցի՝ գրեալ է ի ձեռագիր օրինակի Ջուղեցի:

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՋԱԳԻՐ
368—10	(վեր)	անիծեալ լինի	անիծած եղնի (բազում-ան-[գամ)
369—3	»	ուղարկել	ուղարկեր
370—16	»	Խարբերդցի	Խարբերդացի
376—12	»	արհի	արք
»—14	»	չաշուտ	չուշուտ
380—19	»	սևացեալ	սևացեացեալ
384—1	»	Եզվայիթացն	Եզվայիտացն
397—3	(ներ)	աղբերաբար	աղբիւրաբար
401—11	»	զԳաւառացի	զԳաւառցի
404—10	(վեր)	շարագրու-թեամբ	շարագրութեամբ
405—2	(ներ)	Հաւուց	Հաւոց
406—16	»	ելեալ	եղեալ
»—4	(ներ)	գրքին	գերքին
410—1	(վեր)	Բէրիա	Բերիա
413—5	»	գաղափարն	Նախագաղափարն
414—2	»	Աջոյն.	Աջին
»—6	»	յերկս ամս	յամէն երեք տարին
416—10	(ներ)	Արգելան	Արգիլան
417—7	(վեր)	Ջհանշահն	Ջիհանշայն
420—1	»	Անկիւրիոյ	Անկիւրիայ
428—4	»	ի կղզին	ի կղզոջն
432—14	»	ամենեցուն	ամենեցունց
435—1	»	պրօնագործն	պրօնգործն
»—4	»	Հռոմկլայեցին	Հռոմայեցին
»—10	»	Լամբրոնացին	Լամբրոնեցին
436—8	(ներ)	Ջահանշահ	Ջահընշահ
438—2	»	զորս ի պատ-մագրիս	զոր ի պատմագրքիս
441—2	(վեր)	Այսոքիկ	Այս են
»—4	(ներ)	Հզուեցին	Հզուեցին
»—3	»	լուաք	լուայ
»—1	»	յառաջնոց	յառաջին
443—5	»	տարուղին	տարուղէն
444—6	»	զամենայն	զամենեսեան
448—13	»	զՀայոցն Դաշ-տեցւոց	զԴաշտեցի հայերուն
450—5	(ներ)	ի Բաղիշոյ	ի Բաղըշու
»—»	»	ի Մշոյ	ի Մշու
»—»	»	ի Բերկրոյ	ի Բերկրու
»—»	»	յԱրճիշոյ	յԱրճըշու
»—4	»	յԱրծկոյ	յԱրծկու
»—»	»	յԵրզնկոյ	յԵրզնկու
»—3	»	ի Սպերոյ	յԸսպերու
»—»	»	ի Բասենոյ	ի Բասենու

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՉԱԳԻՐ
450— 3	(ներ)	ի Կաղզուանայ	ի Կաղզվանայ
» — 2	»	ի Շիրակուա-նայ	ի Շիրակ վանայ
» — 1	(ներ)	ի Խզայ	ի Խզյեայ
451— 1	(վեր)	յՈրմեայ	յՈրմու
454— 9	(ներ)	կամին	կամին յաշխարհէն
460— 6	»	տարփացեալ	տռփացեալ
462—10	(վեր)	ետուր)	տվեր.
» — 8	(ներ)	ջրհոր)	ջրխոր
465—10	(վեր)	խախամ	խաղամ (ամեն. ուրեք)
466— 5	»	կախեցին	կախեսցին
482— 4	»	մինարայք	մընիրայք
484— 1	(ներ)	ի սոցանէ	ի Նոցանէ
486 8	(վեր)	ի Հոռոմոց	ի Հոռոմ
489—13	»	փլաւ	բլաւ (բազում անգամ)
490— 9	»	մինարայն	մնիրայն
492—12	»	Երեմերայ	Երըմերայ
» — 4	(ներ)	Խասրիկ	Ղասրիկ
496— 3	»	մարտուցեալ	մատուցեալ
497— 4	»	մանզուլ առնեն	մազուլ անեն
508—11	»	յանհնարինս	յանհնարս
514—15	»	Մօլլայ Ղասում	Մալաղասում
518— 8	(վեր)	ամենեքեան	ամենայն
529—17	»	ցնիկողայոս	ցնիկողոս
532— 2	»	Խաչատրոյ	Խաչատուրին
537— 1	(վեր)	քերթելոյն	քերթուելոյն
» —16	»	ի մօլլաներացն	ի մօլաներացն
538—11	»	իւր	իւրեանց
539— 2	(ներ)	Խաչատրոյ	Խաչատրի
541— 3	(վեր)	պյնուիկ	պյնմիկ
» — 2	(ներ)	էնկիչարիք	ընկիչարիք
542 3	»	Ամուկ	Ցամուկ
» — 1	»	եղբայր	եղբարք
544— 1	(վեր)	պյսորիկ	պյսմիկ
545— 1	(ներ)	արեանարբու	արիւնարբու
» —12	»	հասարակաց	հասարակ
548— 1	(վեր)	ի տղայոցն	ի տղոցէն
» —10	(ներ)	սուխտայսն	սուխտաներն
549—13	»	քարակոծ	քարկոծ
» — 1	»	առ ի հաճել սուխտայիցն	առ ի հաճել զկամս սուխտա-յիցն
550— 1	(վեր)	ժամուս	ժամաւս
551— 2	»	սուխտայիցն	սուխթայիցն
552— 7	(ներ)	կային	կացին
555— 4	(վեր)	դարձաւ	դարձաւ Աւետիսն

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐԶԱԳԻՐ
558— 1	(վեր)	*ընդունիս*	*ունիս*
» —10	»	*գործեաց*	*գործեաց, քանզի*
561— 9	»	*հրկիզութեան*	*հրակիզութեան*
564— 9	»	*շառաչմամբ*	*սառաչմամբ*
567—12	»	*զՏրապիզոն*	*զՏպազիոն*
568— 2	»	*զԱմիթ*	*զՑամիթ (ամեն. ուրեք Ցամիթ)*
569— 3	(ներ)	*սպան ,*	*սպանեց*
570— 1	»	*Բայազիտ*	*Բայազիթ*
571—11	(վեր)	*Օսման*	*Ուսման*
571—11	(ներ)	*ի նմանէ*	*ի սմանէ*
578—15	(վեր)	*Պայազիտն*	*Պայազիթն (ամեն. ուրեք)*
588— 9	(ներ)	*ի քթէն*	*ի քնթէ*
» — 4	»	*տպազիոն*	*տպազիօ*
» — 2	»	*տեսանելուն*	*տեսնալուն*
589 -11	»	*ալմազ*	*ալմաս*
» —10	(ներ)	*ալմաստն*	*ալմասն*
591— 1	»	*չէ տեսեալ*	*չէ տեսել*
592 13	»	*լիմոնի*	*լէյմոնի*
593—12	(վեր)	*մոռի լինի*	*մոռ ելնէ*
» — 3	(ներ)	*Ձեաշմ*	*Ձիաշմ*
594—11	»	*տըհնէճ*	*տէհնէճ*
» — 8	»	*ֆսթազի*	*ֆստուղի*
» — 4	»	*փիրուզայ*	*փիրզայ (յաճախակի)*
595— 7	(վեր)	*շպապեքին*	*չպապեքին*
» — 9	»	*մղնագիս*	*մղնաղիս*
» —12	»	*մղլադուզն*	*մղդալուզն*
» —15	»	*մղնագիս*	*մղնադիս*
596— 6	»	*ժամահանս*	*քամահանս*
» —12	(ներ)	*ազգք են*	*ազգ է*
» — 6	»	*լինի*	*կուլինի*
597—18	»	*Տելեպեճանայ*	*Տիլիպէճանայ*
» —17	»	*կարուճանի, փօռայ*	*կարու ճանիփօռայ*
597—11	(ներ)	*ֆստղին*	*ֆստըխին*
598— 1	(վեր)	*խասիաթն*	*խասլիաթն*
» —10	»	*ֆարսանք*	*ֆարսանկ*
» —16	»	*նռնագոյն*	*նռանգոյն*
» — 6	(ներ)	*ճանաչելն*	*ճանչնալն*
» — 2	»	*զապրաճաթն*	*զապարհաթն*
600— 9	(վեր)	*զմրուխտս*	*զմրութն (ամեն. ուրեք)*
» —17	»	*փանիզահրն*	*փայիզահրն*
601— 3	(վեր)	*ելնան*	*ելանին*
» —16	»	*ի նշաւուր*	*ի նաշաւուր*
» — 4	(ներ)	*փանզահր*	*փայզահր*
602— 1	»	*տակվի տակ է*	*տակվէ տակ է*

ԷՋ—ՏՈՂ		ՏՊԱԳԻՐ	ԳՐՁԱԳԻՐ
603— 3	(ներ)	Զուլումաթն	Զուլումութն
604—10	(վեր)	մտղալ ·	մթղալ (բազում անգամ)
605— 2	(ներ)	կարմիր գլխոց	ի կարմիր գլխաց
607— 7	»	ի տաճկու-թենէ	զտաճկութիւն
608— 7	(ներ)	Գանջայս ·	Գանջայոյ
611— 4	»	Թադէոս ·	Դադիոս
617—14	»	գնաց · ·	գնացեալ
619— 8	»	մասն ինչ անդ	մասն ինչ անդ և մասն ինչ անդ
620— 8	(վեր)	Կոմիտաս ·	Կումիտաս
» — 9	»	զՀռիփսիմէի վանք	զՀռիփսիմէն
621— 5	(վեր)	Սմբատ ·	Սմպատ
» —10	»	Սենեքերիմ	Սենեքարիմ
622—18	»	զԴիոսկորոս	զԴէոսկորոս
624— 3	»	զՆօռի · ·	զՆօռէ
» — »	»	ՈՉԸ · ·	Թվին ՈՉԸ
625— 9	»	կացեալք ·	կացիր
626— 12	(ներ)	յայսմանէ հարուածոյ	յայսմ հարուածոցս
628— 7	(վեր)	ի Սալամաստ	ի Սալմաստ
» —12	»	Ջահանշէն	Ջահընշէն
» —15	»	Սքանդարն	Իսքանդարն
630— 2	»	Ընկոուզաց	Ընկուզաց
631—14	»	ի մէջ համա-մում	համամումն
631—17	(վեր)	յետ նոցա	այնոց յետնէ
» — 1	(ներ)	սախատ ·	շախատ
632— 8	»	սուխթայ ·	սովթայ
635 1	(վեր)	Ցուլաղստին	Ցուլարղստին
640—17	»	ըմբռնեաց	բռնեց
641 3	»	զձեռագիր	զձեռնագիր
» — 6	»	բազմաւ անօ-թիւ	բազում անօթիւ
644— 6	(վեր)	ՌՂԲ ·	ՌՂԵ
646—12	(ներ)	մալաք ·	վասն որոյ մալաք
» — 3	»	յԱսպահանայ	յԻսպահանայ
647 3	(վեր)	ժիզան— ·	փիզան
651—15	»	ուսմամբ ·	ուսմամբ գրոց և հակաճառու-թեամբ
» —18	»	իւր · ·	իւրոց
655—11	»	յԻզմիրէ ·	յԻզմիրում
659— 6	(ներ)	զի խաբեբայ է	զի նա խաբեբայ է

Մայր Աթոռի տպարանում վաճառւում են հետեւեալ գրքերը։

		Ռ.	Կ.
1.	Բագրեւանդ եւ Ջրաբաշխ գաւառ, աշխ. Ս. Հայկունի . .	1	40
2.	Դեօլլինգերի նամակները, թարգ. Խաչվանքեան . .	—	50
3.	Էլիզէ Ռէկլի, Ռուսական Հայաստան, թարգ. Միաբան . .	—	30
4.	Նոյնը, Լազիստան—Հայաստան եւ Քիւրդիստան, թարգ. Միաբան . .	—	50
5.	Խանգարմունք հայկաբանութեան, աշխ. Գ. Եպիս. Այվազեան . .	—	20
6.	Կիրակուայ հանգստութիւնը եւ նորա նշանակութիւնը առողջութեան համար, Դոկ. Նէէարի թարգ. բժ. Մ. Ջորգարեան .	—	20
7.	Մարգարիտ Արքայութեան Երկնից, գրեց Խրիմեան Հայրիկ . .	—	30
8.	Խաչի ճառ, գրեց Խրիմեան Հայրիկ ,	—	30
9.	Դատաստանագիրք Հայոց, Մխիթար Գօշի	3	—
10.	Մանկական պարտէզ, թարգ. բժ. Լ. Տիգրանեան . .	—	20
11.	Պապիկ եւ Թոռնիկ, գրեց Խրիմեան Հայրիկ.	—	60
12.	Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ աշխ. Ա. Եպիս. Մխիթարեան	—	20
13.	Պատմութիւն Սամուէլ քհ. Անեցւոյ, հրատ. Ա. Տէր Միքելեան . .	1	20
14.	Ջամբռ, Սիմէօն կաթուղիկոսի. ,	1	—
15.	Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ Ա. հատ. աշխ. Յ. Եպիս. Շահխաթունեան . .	2	—

Ռ· Կ·

Նոյնը Բ· հատոր· . . 2 —

16· Տօմար և Տօնացոյց, աշխ· Գ· քհ· Աղանեան — 50

17· Ուսումնասիրութիւն Խորենացու, աշխ· Գ· Տ· Մկրտչեան . . . . — 35

18· Յաճախապատում, հրատ· Ա· Տ· Միքելեան 1 —

19· Գեղարքունի, աշխ· Մ· արքեպիսկ· Սմբատեան 2 —

20· Համամ Արևելցի, հրատ· Կ· Կոստանեան — 20

21· Յովհաննէս Իմաստասէր, հրատ· Կարապետ վարդապետ . . . . — 15

22· Երուս· Յովհ· եպիս· Թուղթն առ Աբաս — 15

23· Առակք Կռիլովի յինն գիրս Բ· տպ· Թարգմ· Գաբ· Արք-Եպիս· Այվազեան . — 80

Գինն է 2 ռ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220032981

ЦЕНА
А II / 32981